ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ

ԵՄ

ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2016

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Մ 710

Հրատարակվել է պետական պատվերով
Издано по государственному заказу

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնը և
պատմության ֆակուլտետի գիտխորհուրդը

Խմբագիրներ՝ բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան
պ.գ.դ., պրոֆ. Արտակ Մովսիսյան
պ.գ.թ., դոց. Հովիկ Գրիգորյան

Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ. Հրանտ Աբրահամյան
պ.գ.դ., պրոֆ. Աշոտ Ներսիսյան
պ.գ.դ. Արման Եղիազարյան

Մինասյան Էդիկ Գարեգինի
Մ 710 **Հայ հերոսուհի կանայք:** Էդիկ Գարեգինի Մինասյան. -Եր.:
ԵՊՀ հրատ., 2016, 782 էջ + 16 էջ ներդիր:

Минасян Эдик Гарегинович
Армянские героические женщины. Эдик Гарегинович Минасян.
-Ер.: Изд-во ЕГУ, 2016, 782 с. + 16 с. вкладыш.

Գրքում անդրադարձ է կատարվում հայուհիների հերոսական գործունեությանը 20-րդ դարասկզբի հայոց ազատամարտի տարիներին: Առանձին քննության նյութ են հայդուկային (ֆիդայական) պայքարի, Երկրորդ աշխարհամարտի, ինչպես նաև Արցախյան հերոսամարտի մասնակից հայ կանանց սխրագործությունները:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2143-1

© ԵՊՀ հրատարակչություն, 2016
© Էդիկ Մինասյան, 2016

Գիրքը նվիրվում է մորս՝ Լուսիկ Մինասյանի և
նրա տատի՝ հերոսուհի Ռպեի (Հռիփսիմե Հակոբյանի)
անմար հիշատակներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....7

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ 38

Ա. Հայոց ազատամարտի հայդուկային (ֆիդայական) պայքարի մասնակից հերոսուհի կանայք 38

Բ . Հայ հերոսուհի կանայք 1915-1923 թթ. ինքնապաշտպանական հերոսամարտերում.....117

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՈՒՀԻՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939-1945 ԹԹ.) 332

Ա. Հայ կանանց սխրագործությունները ռազմաճակատներում ...332

Բ. Հայուհիները պարտիզանական և դիմադրական շարժման շարքերում.....405

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻՆ (1988-1994).....497

Ա. Հայուհիները Արցախյան համաժողովրդական գոյապայքարի սկզբնափուլում.....497

Բ. Հայ կանանց մասնակցությունը Արցախյան ազատամարտի ռազմական գործողություններին (1991-1994) 619

ՎԵՐՋԱԲԱՆ 758

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....765

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թե ձեռքը զենք վերցրած հայ կին տեսնեք, ուրեմն վերջ, հարկավոր է ամեն ինչ թողնել ու փախչել[1]*:*

Հայ կինը հայոց պատմության դժվարին և ճակատագրական պահերին անմասն չի մնացել մեր գոյապայքարից, ինչը վկայում է հայուհու քաջության ու հերոսության մասին: Բազմաթիվ հայուհիներ ֆիդայիների հետ կողք կողքի պայքարել են թշնամու դեմ, արհավիրքի ժամին դարձել են քաջ զինվորներ՝ ձգտելով պահպանել հայի՝ հայոց լեռնաշխարհում ազատ և ինքնուրույն ապրելու իրավունքը:

Նշանավոր գրող, ազգային գործիչ ու դիվանագետ Ավետիս Ահարոնյանը, բնութագրելով հայ հերոսուհիների գործունեությունը, գրել է. «Դուք էիք, որ ազատության տատասկոտ ճանապարհին ցավոտ ու բոսոր մշուշի մեջ ամենից գեղեցիկ, ամենից խիզախ երազներ հյուսեցիք:

Դուք էիք, որ ըմբոստության ժայռերի բարձությունից գահավեժ նետվեցիք ժողովրդի մեծ տառապանքի ծովը, որ ուռած ու մրրկածուփ եռում էր ձեր ոտքերի տակ:

Դուք էիք, որ բռնության և արհավիրքի խեղդող խավարի մեջ բոցավառ աչքերի փայլով մոլորված ու լքված հոգիների ուղիները լուսավորեցիք: ՓԱ՛ՌՔ ՁԵԶ»:

Հայոց հազարամյակների պատմությունը հարուստ է իրենց կյանքը հայրենիքի ազատության համար նվիրաբերած անձնվեր, խիզախ ու համարձակ, հայրենասեր հայուհիների գործած սխրանքներով: Այդ նվիրյալ հայուհիները, սեփական ժողովրդի փրկությունը բարձր դասելով անձնական երջանկությունից, սիրով ու անտրտունջ գնացին գերագույն զոհողության՝ իրենց կյանքը նվիրաբերելով ազգի փրկությանը:

---

[1] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, Երևան, 2004, էջ 3:

Նրանք, հեթանոսական ժամանակներից սկսած, առաջնորդվելով հայոց «լույսի սրբության մարմնացում» հանդիսացող աստվածուհի մայր Անահիտի անձնազոհության, նվիրվածության, ամուսնական հավատարմության և բարոյական մաքրության սկզբունքներով, իրենց ամուսինների, եղբայրների կողքին ազատագրական պայքարի դուրս եկան թշնամի ոսոխների դեմ՝ խորտակելու համար գերության ու ստրկության շղթաները:

Ընտանեկան արժանապատվությունը բարձր դասող, զավակների մեջ հայրենասիրության ոգի դաստիարակող հայ մայրը միշտ էլ ազգի համար օրհասական պահերին կռվի է դուրս եկել անարգ ոսոխի դեմ: Դրա լավագույն օրինակը «Սասունցի Դավիթ» հազարամյա էպոսն է, դյուցազներգություն, որտեղ լիովին բացահայտված է հայ կնոջ դերը: Հայ մոր խորհուրդները, հայրենիքը պաշտպանելու, ընտանիքի արժանապատվությունը բարձր պահելու, իր սեփական ուժի արժեքը գիտենալու և մինչև վերջ թշնամու դեմ քաջությամբ կռվելու պատրաստակամությունը հաջողություն են բերում սասունցուն: Էպոսում հայ կինը տղամարդուն ինքնավստահություն, թափ ու թռիչք, անպարտելի քաջության, վճռականորեն մինչև հաղթանակ պայքարելու ոգի է ներշնչում:

Հայ կնոջ դիրքի ու կոչման մասին բարձր ըմբռնումը հասկանալի է դարձել մեր անցյալի պատմության մի շարք նշանավոր հայուհիների անձնական սխրագործություններից, որոնք հպարտության աղբյուր են դարձել սերունդների համար: Մեր պատմության ամբողջ ընթացքում բարեպաշտության, կրոնասիրության, հայրենասիրության կողքին ողորմածությունը, առատաձեռնությունը, ուսումնատենչությունը եղել են հայ կնոջ առաքինությունները: Սակայն դրանց կողքին անգնահատելի արժանիքը ազգի ազատության համար պայքարելու վսեմ գաղափարի նվիրվածությունն է, անձնական նվիրումը կամ զոհողության ոգին: Զոհողություն՝ ոչ միայն իր հարազատների, այլև նախնիների օրենքով նվիրագործված այնպիսի սկզբունքների համար, որոնց թվում

են ընտանեկան սրբությունը, պատվախնդրությունը, հայրենասիրությունը, անձնազոհությունը, ազատ ու ինքնիշխան կյանքը և այլն: Հենց ընտանիքի հանդեպ պարտականությունն ու հավատարմությունն այն անսասան հանձնառությունն են, որ սերնդեսերունդ կորով, տոկալու, դիմանալու, գոյատևելու և պայքարելու կամք են ներշնչել հայ կնոջը՝ նրան դարձնելով ընտանիքի միասնականությունն ապահովող շաղախը:

Հայ կնոջ վեհ գաղափարներն ու ձգտումները չեն խեղդվել նրա կրոնական հավատարմության ու համբերության մեջ, այլ վտանգի պահին, հատկապես օրհասական օրերին, հայ կինը միշտ էլ գիտակցել է ու մարտնչել, հերոսացել է կամ հերոսներ ծնել ու դաստիարակել:

Սկսած 5-րդ դարում Եղիշեի և Ղազար Փարպեցու նկարագրած «Հայոց աշխարհի փափկասուն տիկնանց» սխրանքներից մինչև Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկի, հայոց թագուհիներ Փառանձեմի, Զարմանդուխտի, Ջալալ իշխանի դուստր Ռուզանի, Ռուբինյան Հեթում սպարապետի կին Զարմանուհու, Այծեմնիկ Անեցու, քաջակորով, հայրենասեր, ազատատենչ մյուս անհատ հայուհիների քաջագործությունները, թշնամու դեմ մինչև վերջ կռվելու և նահատակվելու անձնազոհության օրինակներից մինչև 1724 թվականին՝ Երևանի ինքնապաշտպանության ժամանակ, տղամարդկանց կողքին թուրքական 60 հազարանոց բանակի դեմ կռվող հայ կանանց հավաքական սխրագործությունները հայրենասիրության ուղեցույց են դարձել սերունդների համար:

Այս ամենը լավագույնս ցույց է տալիս, թե հայ կինն ինչպես է դարերի ընթացքում ըմբռնել ու յուրացրել այն վեհ սկզբունքը, որ ոչ ոք իրավունք չունի ժողովրդի ազատությունը զոհաբերելու իր անձնական խնդիրներին:

Օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում թվում էր, թե հայ կնոջ առաքինությունները հետզհետե կվերանան, ֆիզիկական գոյությունը պահպանելու ձգտումը կգերակշռի նրա վարքում, և հոգու

վեհ ձգտումներն աստիճանաբար կանհետանան: Սակայն այդպես չեղավ հայ կնոջ պարագայում: Նույնիսկ հայոց պատմության ամենամռայլ ու դաժան տարիներին նա հավատարիմ մնաց իր դարավոր կոչմանն ու զենքը ձեռքին պաշտպանեց իր և ազգի պատիվն ու արժանապատվությունը, այլ կերպ ասած՝ ազգի մութ տան ճրագը եղավ:

Անգամ բռնի տեղահանությունների ու գաղթի ժամանակ հայ կինն իր թոնիրն էր համբուրում արցունքոտ աչքերով, աղոթում ու խնդրում էր Աստծուն, որ երկար չտևի իրենց բացակայությունը պապենական օջախից: Կրոնական հավատի անսասանությանը փարված հայ կինը երբեք հույսը չկտրեց՝ սպասելով, որ մի օր արդար դատը պիտի հաղթանակի, և տոկալով ու գոյատևելով՝ իր հավատն ու հույսը փոխանցեց սերնդեսերունդ:

Հայ կնոջ քաջակորով ոգու մի հուզիչ ապացույց է տալիս Վարդան Շահրազը՝ իր հուշերի գրքում գրելով, թե ինչպես հայ գյուղերից մեկում 90 տարեկան մի հայ կին, ձեռնափայտին հենված, մոտեցել է իրենց ու դժվարությամբ ծնկի գալով, դողդողացող ձեռքերը վեր պարզելով՝ դիմել է Աստծուն՝ ասելով. «Փա՜ռք քեզ, Աստվա՛ծ, որ հայն էլ թվանք ունի, փա՜ռք քեզ, որ ինձ արժանի արիր այն տեսնելու»[2]: Սա փաստում է, որ այդ մեծահասակ կնոջ մեջ ազատության սերը մեռած չէր, և նա, անկասկած, այդ սերը փոխանցել էր իր զավակներին ու թոռներին:

Երբ կոթուրցի քրդախոս հայ պառավ կինը՝ **Զմոն**, որը տարիներ շարունակ հոգ էր տարել հեղափոխական գործիչների մասին՝ նրանց պատսպարելով, կերակրելով ու ոգևորելով, հիվանդացել էր ու կուրացել, նրան առաջարկել էին իր ծառայությունների դիմաց 20 թուման, վերջինս նեղացած ու վիրավորված առարկել էր՝ ասելով. «Ես Ձեզ համար չեմ աշխատել, այլ ազգի համար եմ արել»[3]: Սա վկայում է, թե ինչպես էին ազգի գաղափարն ու նրա համար զոհաբերվելու պատրաս-

---

[2] **Զէյթլեան Ս.,** Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լոս Անճելլըս, Քալիֆորնիա, 1992, էջ 13:
[3] Տե՛ս նույն տեղում:

տակամությունը կենդանի մնացել նույնիսկ այդ քրդախոս հայ կնոջ մեջ:

Պատահական չէ, որ 19-րդ դարի վերջին՝ հայ ազատագրական պայքարի շրջանում, հայ կանայք տղամարդկանց կողքին էին, նրանց ոգևորում և աջակցում էին բոլոր հարցերում: Հայ ընտանիքը դարձել էր ազգային դիմադրության կիզակետը: Հենց այստեղ էր դարավոր վրեժը բռունցքի վերածվել. կինը, կռվելով տղամարդու կողքին, նրան ներշնչեց ինքնիշխան ապրելու կամք, խոր հավատ՝ ազատության և անկախության վերջնական հաղթանակի հանդեպ:

Հեղափոխական, ազատագրական պայքարի այս շրջանում հայ կինը մեծարժեք աշխատանքներ տարավ տարբեր ոլորտներում, առաջին հերթին՝ կրթական գործում: Հեղափոխական ազգային-ազատագրական պայքարի նվիրյալ հայուհիների մեծ մասը ուսուցչության նվիրվեց: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գավառներում հայը անգրագետ էր, իսկ մեծ քաղաքներում հայությունը միալեզու չէր, կային թրքախոսներ, ռուսախոսներ, չերքեզախոսներ և այլն, ուստի ուսումն ու հայեցի դաստիարակությունն անհրաժեշտ էին ոչ միայն մտքերը լուսավորելու, գիտելիքներ տալու, այլև լեզվի պահպանման, դարավոր արժեքների ճանաչման ու մտավոր պատրաստության համար: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի, հոգևոր զարթոնքի շրջանում մտավոր պատրաստությունը անհրաժեշտ էր ազատագրական գաղափարներն ըմբռնելու և յուրացնելու համար:

Կրթական գործին նվիրված հայուհիների դերը անփոխարինելի էր հեղափոխության ծավալման ազատագրական պայքարի կազմակերպման ասպարեզում: Նվիրյալ շատ հայուհիներ, ազգային մշակույթի արժեքները ժողովրդի մեջ տարածելով, մշակութային զարթոնքից դեպի հեղափոխական, ազատագրական պայքարի երկարող ճանապարհը հարթեցին: Ազգային արժեքների ժողովրդականացումը ոչ միայն հայության կամքը կոփեց, այլև երկարատև ստրկությանն համակերպվելու փոխարեն ազգային ինքնագիտակցություն արթնացրեց

նրա մեջ՝ դաստիարակելով ազատագրական պայքարին պատրաստի մարտիկ: Հայրենասիրության և հեղափոխության առաջին սերմնացանները դարձան *Թամարա Ադամյանը (Ներսիսյան), Ժենյա Ադամյանը (Քալանթարյան), Նատալյա Ամիրխանյանը (Մուրադյան), Դարիա Գոլոշյանը (Թադևոսյան), Նատալյա Մատինյանը, Սաթենիկ Մատինյանը (Արղության Ծաղիկ), Մարիամ Մակարյանը (Մարո), Մարիամ Վարդանյանը (Նազարբեկյան Մարո), Կարմիր Իրիցու տան Գյուլեն, Սրբուհի Եգանյանը (Ասպղիկ)* և ուրիշներ[4]: Կային նաև մեծ թվով հայուհիներ, որոնք, աղջիկների և կանանց խմբեր կազմելով, խրճիթներում, ընթերցարաններում, տարբեր վայրերում Ռաֆֆու, Ռ. Պատկանյանի, Ծերենցի, Մուրացանի, Ահարոնյանի և այլ գրողների գործերից հուզիչ հատվածներ էին կարդում, «Դրոշակից», «Արմենիայից», «Հնչակից» ընթերցումներ կատարում, հեղափոխական մտքեր էին քննարկում, պարզաբանում և իրենց շրջաններում մատչելի դարձնում հանրությանը: Այս ձևով ժամանակի ընթացքում առաջացան ազգային ընդհանրական գաղափարներ, որոնք ցրված ու հաղորդակցության միջոցներից զրկված հայության կենտրոնները իրար կապեցին:

1896-1898 թվականներին, երբ ցարական կառավարության հրամանով փակվել էին կովկասահայ բոլոր դպրոցները՝ հայությանը ռուսացնելու մտադրությամբ, հայոց լեզուն ու գրականությունը մոռացության տալու նպատակով, հայ կանայք տղամարդկանց կողքին պայքարեցին այդ անարդարության դեմ: Կանայք սկսեցին իրենց տների մեջ հավաքել երեխաներին՝ մայրենի լեզուն սովորեցնելու, նրանցից արժանավոր հայեր դաստիարակելու համար:

Ազգային զարթոնքի կենտրոն Պոլսի մեջ զարկ էր տրվել հայուհիների դաստիարակության գործին: Ահա թե ինչու *Զապել Ասատուրը* (գրական ծածկանունը՝ Սիպիլ), *Զապել Եսայանը*, *Հայկանուշ Մարկը*,

---

[4] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 19-48, 212:

Նեկտար Զունդը և ուրիշներ 1879 թվականին հիմք դրեցին «Ազգանվեր հայուհիների ընկերության»[5]: Այս ընկերության նպատակը ազգային վերանորոգումն էր և արևմտահայ կանանց ու աղջիկների դաստիարակությունը:

Սրբուհի Գալֆայանը (Մայրապետ), հավաքելով անպաշտպան որբերին ու այրիներին, 1866 թվականին հիմնադրեց Գալֆայան որբանոցը, որը, լինելով դաստիարակության կենտրոն, իրականացնում էր բազմաթիվ ազգանվեր կրթական ձեռնարկներ[6]: Երբ 1903 թվականին ցարական կառավարությունը հրամայեց Անդրկովկասում հայկական եկեղեցիների կալվածքները բռնագրավել, հայ կինը վերստին ծառացավ բռնության դեմ: Մեծ թվով հայուհիներ, խռնվելով վեհարանի բակում, ցույց կազմակերպեցին՝ բղավելով «Կեցցե՛ հայ ժողովուրդը, կորչի՛ բռնակալությունը»:

Անկախություն և ազատություն ձեռք բերելու համար հայ ժողովուրդը պետք է ուժ ունենար, իսկ դրա համար առաջին հերթին անհրաժեշտ էր զենք ունենալ: Դրան մեծապես նպաստեց Բեռլինի վեհաժողովից ձեռնունայն վերադարձած Խրիմյան Հայրիկի կոչը. «Ժողովուրդ հայոց, անշուշտ լավ հասկացար, թե զենքը ինչ կրնար գործել և կը գործե: Ուրեմն սիրելի և օրհնյալ հայաստանցիներ, երբ հայրենիք վերադառնալու լինեք, ձեր բարեկամներին և ազգականներին իբրև պարգև մեկ-մեկ զենք տարեք, զենք առեք և դարձյալ զենք: Ժողովուրդ, ամենից առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին ու բազկին ուժ տուր»[7]:

Առաջնորդվելով նշված կոչով՝ հեղափոխական, ազատության նվիրյալ շատ հայուհիներ օգտակար եղան զենքերի փոխադրության ու պահեստավորման գործում: Նրանք տարածեցին նաև հեղափոխական համարվող արգելված գրականություն, պատրաստեցին ու խնա-

---

[5] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., 19-48, 212:
[6] Տե՛ս նույն տեղում:
[7] **Խրիմյան Մ.,** Երկերի ժողովածու, Երևան, 1991, էջ 18:

մեցին հեղափոխական գործիչների, ֆիդայիների: Կանանց այս աշխատանքը կենսական անհրաժեշտություն էր, քանի որ տղամարդկանց ներկայությունը հաճախ կասկածի տեղիք էր տալիս, և շատ դեպքերում նրանց մի մասը կա՛մ փախստական էին դառնում, կա՛մ էլ բանտարկվում: Կրթական ու հասարակական նման գործերի, հեղափոխական ձեռնարկների մասնակից ու նվիրյալ հայուհիներ էին *Իսկուհի Պալճյանը (Թիրաքյան), Սոֆի Արեշյանը (Օհանջանյան, Ռուբինա), խիզանցի քույրերը, Մոմճյան քույրերը, Թամար Զապնյանը (Տեր-Հակոբյան), Արաքսի Ճեպեճյանը, Սաթենիկ Օհանջանյանը, Հորթանս Բերշիէ-Դավթյանը, Եղիսաբեթ (Լիզա) Մելիք-Շահնազարյանը (Զորյան), Մարիամ Թումանյանը, Մարիամ Էնկեյանը (Մանյա), Տիրուհի Ազարյանը (Միսակյան), Հեղինե Մեծպայանը, Զապել Պալճյանը, Հեղինե (Էլյա) Արեշյանը, Իսկուհի Էմիրյանը (Դավթյանը), Հռիփսիմե (Լոլա) Մեծապուրյանը (Սասունի)* և ուրիշներ[8]:

Մարտական խմբերի առաջնորդ հայուհիներից էր Ակնի շրջանի կանանց առաջնորդը՝ ուսուցչուհի **Յուղաբեր Պահլավունին**, որը հայտնի էր **«Վարժուհի»** անունով: Նա ոչ միայն կազմակերպում էր զենքի փոխադրությունը, այլև սուրհանդակի պարտականություններով շրջում էր Դերսիմի Խոզաթի, Արաբկիրի և Տևրիկի շրջաններում: 1895 թվականի ինքնապաշտպանական կռիվների ժամանակ, առաջավոր դիրքերի վրա կռվելով, նա նահատակվեց[9]:

Երբ 1890 թվականի սեպտեմբերին կազմակերպվեց հեղափոխության, ազատագրական շարժման առաջին ձեռնարկը՝ Սարգիս Կուկունյանի արշավանքը, Էրզրումում մի կին իր տղային՝ Ստեփանին, հանձնեց Ս. Կուկունյանին՝ ասելով, որ իր տղան պետք է նրա հետ գա, որպեսզի իր քույրերի վրեժը լուծի թուրքերից: Նույն ձևով մի քանի գյուղերի կանայք իրենց տղաներին հանձնեցին Ս. Կուկունյանին[10]:

---

[8] **Խրիմյան Մ.,** նշվ. աշխ., էջ 49-64, 139-192:
[9] Տե՛ս նույն տեղում, էջ 15:
[10] Տե՛ս նույն տեղում:

1895 թվականին Զեյթունի ինքնապաշտպանական հերոսամարտում հայ կանայք, զենքը ձեռքներին, տղամարդկանց հավասար կռվել են ոճրագործ թուրքերի դեմ: Այդ կռիվներին իր հերոսությամբ աչքի է ընկել ու անմահացել հայուհի **Զմրուխտը**:

Հայուհիների՝ հանուն հայրենիքի անձնական կյանքն ու ապագա երջանկությունը զոհաբերելու, սխրանքների, անձնազոհության օրինակները անչափ շատ են: Ահա մեկ օրինակ ևս: Հայ օրիորդը, նկատելով, որ ինչ-որ տեղ իր սիրեցյալը փորձում էր կյանքը պահպանել հանուն իրենց ապագա միության, երջանկության, թուրքերի դեմ կռվում համարձակություն չէր ցուցաբերում, վերջ է տալիս իր կյանքին՝ մահվանից առաջ գրելով իր սիրեցյալին. «…Դու, որ Հայաստանի ազատության գործը չգերադասեցիր, քան իմ ու քո անձնական երջանկությունը, դու, որ սերդ զոհեցիր ավելի բարձր գաղափարական սրի, կատարիր խոսքդ. անձդ զոհ դիր հայրենյաց սուրբ սեղանի վրա: Լցվի՛ր թունավոր վրեժխնդրությամբ Բաբկեն Սյունիի նման: Կատարի՛ր վերջին կտակս, դրանով միայն կհանգստանան ոսկորներս գերեզմանի մեջ… Ների՛ր ինձ»: Նամակն անմիջական հասցեագրում չուներ որևէ մեկին, սակայն հասցեատերն այն ըմբռնեց և այդ վայրում՝ Խանասորի դաշտի կռիվներում, հերոսաբար մարտնչեց թշնամու դեմ: Չնայած ուներ հնարավորություն կենդանի մնալու, սակայն հրաժարվեց մարտի դաշտից հեռանալ և մինչև վերջին փամփուշտը մխրճեց ոճրագործների սիրտը, ու հերոսի մահով ինքն էլ անմահացավ: Նամակի հեղինակը մեծ հայրենասեր **Մարիամ Մակարյանն** էր, նրա նամակը հասցեագրված էր իր սիրեցյալ Արիստակես Զորյանին, թվագրված էր 1896 թվականի դեկտեմբերի 2-ով[11]:

Սասունի Խուլբի շրջանի Ահրոնք գյուղում 1847 թվականին ծնված Մակոյենց Աննայի, որին համագյուղացիները **Աննա Մայրիկ** էին ասում (Կարո Սասունու մայրը), հերոսական գործերի փառքը տարածվել էր գյուղի, շրջանի սահմաններից շատ հեռու: Նա ոչ միայն զենքով,

[11] **Ավանեսյան Ս.,** Նշանավոր հայուհիներ, Երևան, 2006, էջ 12:

այլև դիվանագետի հեռատեսությամբ շատ համագյուղացիների կյանք էր փրկել[12]:

1904 թվականի Սասունի կռիվներում Գելիեգուզանի մի խումբ հայուհիներ, փախչելով իրենց հետապնդող թուրքական արնախում մարդակերների ճանկերից, բարձրացել են լեռան վրա: Երբ թուրքական ոհմակը մոտեցել է նրանց, **կույր Հռիփսիմեն (Ըռփո Տայո)**, աղջկա ձեռքը բռնած, մյուս ձեռքում՝ տոպրակով ամուսնու աճյունահողը, գոչել է. «Հերիք է, որքան ստրուկի պես ապրեցինք, և թե… մեզ կմնա գերադասել պատվավոր մահ՝ անարգ թշնամիեն ձեռքը իյնալեն», ապա ժայռից ցած է թռչել: Նրա օրինակին հետևել են շատերը:

Ֆիդայական կռիվներում սխրանքով են անմահացել *Սոսե Մայրիկը* (1868-1953), *Մակոյենց Աննա Մայրիկը* (1847-1915), հերոսուհի *Մաքոն, Մարիամ Մակարյանը*, հայտնի ֆիդայուհի *Մարինոսը*, Գևորգ Չաուշի խմբից՝ *Զարուհին (Զըրե)*, ալվառինջցի *Խանիկը*, *Ագապին*՝ Տուրբախի կինը, Մոկունք գյուղից՝ *Եսթերը*, *Մոկունաց (Միրզոյան) Լուսին,* ցրոնքցի *Շուշանը* և ուրիշներ: Զինատար կին հայդուկների շարքում էին Սևքարեցի Սաքոյի կինը՝ *Մարո Ղարաքեշիշյանը*, *Շողերը, Սաթենիկ Մատինյանը (Ծաղիկը)*, Ուզունլուծի (Յոզղաթ) հերոսուհի *Գոհարիկ Մարգարյանը,* Գևորգ Չաուշի զինակից, կին հայդուկ *Եղսոն*: Հայտնի են եղել նաև *Հայո-Հայաստանը, Սաթո Օհանջանյանը, Սատան Սիմեյանը, Գայլ Շահենը, Խազալը, Մավին, Աղավնի Վարպետյանը* և ուրիշներ[13]:

Սասունի ինքնապաշտպանական կռիվներում աչքի են ընկել հերոսաբար կռվող շենիկցի *Շաքեն,* նրա հերոսուհի քույրը՝ *Շուշանիկը, Հռիփսիմեն (Ռպե, Ռպո, Ռբե)*, *Հեզիկը* և *Ալթունը*, շատախցի *Սրբուհին, Իսկուհի (Սևո) Համբարձումյանը,* Ուրֆայի հերոսամարտում՝ *Խանում Քեթենջյանը, Մարիամ Չիլինգարյանը*, Շապին Գարահիսարի հայտնի կռիվներին մասնակցել են *Վերոնիկա Թանջուտյանը*, օրիորդ

---

[12] **Ավանեսյան Ս.,** Նշանավոր հայուհիներ, Երևան, 2006, էջ 12:

[13] «Լրաբեր հասարակական գիտությունների», N1, Երևան, 2016, էջ 146-147:

Մարիամ Աշճյանը, Ծաղեր Տեր-Մովսիսյանը և հարյուրավոր հայ կանայք:

1920 թվականի գարնանը քեմալական Թուրքիան, շարունակելով օսմանյան հայակուլ քաղաքականությունը, լայնածավալ հարձակում սկսեց Կիլիկիայի հայկական բնակավայրերի վրա: Հաճընի, Մուսա լեռան և այլ վայրերի ինքնապաշտպանական կռիվներին ակտիվորեն ու անձնազոհ մասնակցում էին նաև հայուհիները: Նրանցից *Նվարդ Թելյանը, Եսթեր Մայյանը, Ագուլինե Խանջյանը* և ուրիշներ հերոսաբար զոհվեցին և փառքով պսակվեցին թուրքերի դեմ կռիվներում: Անցած հարյուրամյակը հայ ժողովրդի լինել-չլինելու ժամանակաշրջան դարձավ, ազգային-ազատագրական պայքարի դար, թուրքական սպանդից, նրանց ստեղծած գեհենից փրկվելու, ազգն ու ազգայինը պահպանելու դար:

Հայ կնոջ հերոսացումները շարունակվեցին ոչ միայն 1915-1923 թվականներին թուրքական հրոսակների դեմ մղվող ինքնապաշտպանական մարտերում, այլև Հայրենական մեծ պատերազմի ժամանակ գործող ռազմաճակատներում ու թիկունքում, նաև 20-րդ դարավերջին Արցախում ազատագրական շարժման ու պատերազմի տարիներին: Հայ կինը, ոգևորված հայդուկ կանանց օրինակով, դարձյալ իր դերի մեջ էր. հերոսաբար մաքառում էր՝ իր տուն ներխուժած թշնամուն դուրս վռնդելու և հայրենի տանն ու հողին տեր կանգնելու համար:

Մեր հայրենիքի ազատության և անկախության ծանր փորձության օրերին՝ ֆաշիզմի դեմ մղված պայքարում, ինչպես ռազմաճակատում, այնպես էլ թիկունքում հայ կանայք իսկական սխրագործություն գործեցին՝ ցուցաբերելով անձնազոհություն, քաջագործություններ, վճռականություն, հաստատակամություն և բարձր հայրենասիրություն ու նվիրվածություն: Հայ հերոսուհի կանայք թշնամու դեմ կատաղի մարտերում մարտնչեցին որպես օդաչուներ, հրետանավորներ, հրաձիգներ, կապավորներ և բժշկասանիտարական աշխատողներ՝ նպաստելով անարգ թշնամու ուժերի ջախջախմանը:

Նույնպիսի հերոսությամբ հայուհիների նոր սերունդը ոտքի կանգնեց՝ իր հայրերի ու պապերի, մայրերի ու տատերի օրինակով սեփական հայրենիքը «ադրբեջանցի» հնարածին անունով թուրք զավթիչներից ազատագրելու և մայր Հայաստանին միացնելու նպատակով:

1988 թվականին ծավալված ազատագրական շարժման առաջին շարքերում էին մերօրյա ֆիդայի-մահապարտներ, այդ թվում՝ նաև հերոսուհի կանայք, որոնք հոգով և էությամբ հայդուկների նոր սերունդն էին, նախորդ սերնդի հայդուկների՝ Արաբոյի, Հրայրի, Գևորգի և Անդրանիկի պատգամները և գաղափարները կրողները: Արցախյան ազատամարտի հայդուկները սրբությամբ երդվեցին և պահպանեցին իրենց նախորդների պատգամները:

Չնայած հարյուրամյա ժամանակահատվածին՝ շատ նմանություններ կան 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայդուկային շարժումների ու մերօրյա Արցախյան ազատամարտի միջև: Պատահական չէ, որ մինչև ազգային կանոնավոր բանակի ձևավորումը հայդուկային ջոկատների մեծ մասը կրում էր 19-րդ դարավերջի անմահ հայդուկների անունները: Հարյուր տարի անց հայն ու հայուհին կրկին հայդուկ դարձան՝ բարձր պահելով հայդուկի ազգային ոգին: Մերօրյա ֆիդայիների, այդ թվում հայուհիների սխրանքով և հաղթանակով պսակվեց և ազատագրվեց դեռևս 20-րդ դարասկզբին խորհրդային ամբողջատիրական վարչակարգի կողմից անարդարությամբ Ադրբեջանին բռնակցված Արցախը: Արցախյան ազատամարտի մասնակից կանանցից մեկը, բնութագրելով խիզախ հայուհիների սխրագործությունները պատերազմի տարիներին, գրել է. «Լինում են պահեր, երբ կինն ավելի խիզախ է մարտադաշտում, քան տղամարդը: Հիշում եմ՝ մի անգամ Մարտակերտի բարձունքներից մեկում էինք: Ես վիրավորին դուրս բերեցի դաշտից, Կարինեն բարձունքի վրա էր: Թեժ մարտեր էին գնում: Մերոնք նահանջում էին՝ թողնելով բարձունքը, որովհետև թուրքերը թվով ավելի շատ էին: Կարինեն, տեսնելով դա, սկսեց կրակել հրանոթից: Տղաները, լսելով, որ մեր հրանոթը կրակում է, շրջվեցին, տեսան՝

Կարինեն է կրակում, վերադարձան ու կարողացան պահել բարձունքը: Եթե բարձունքը տայինք թուրքերին, ապա հետո միայն սարսափելի զոհերի գնով կկարողանայինք հետ նվաճել: Երբ տղամարդկանց շրջապատում կին կա, նրանք ավելի զուսպ են, ավելի կոկիկ, իրենց արտաքինին ավելի մեծ ուշադրություն են դարձնում: Կնոջ ներկայությունը անհրաժեշտ է առավել ևս ռազմի դաշտում: Եթե ես զգայի, որ իմ ներկայությունը պատերազմի դաշտում անհրաժեշտ չէր, ես կթողնեի, կվերադառնայի: Մեր խիզախ տղաները վախենում էին անգամ մի փոքր ասեղից, ներարկումից: Մի անգամ պետք է ներարկեի մի ծանր վիրավորի, նա խնդրեց. «Դոխտո՛ր, խոսա՛, մի՛ սրսկիր: Երբ խոսում ես, լոխ ցավերս թողում ա»: Իմ խոսքը զինվորների համար ավելի մեծ սպեղանի էր, քան ցավազրկումը»[14]:

Այսպիսով՝ խիզախ տղամարդկանց կողքին քաջասիրտ հերոսուհի հայուհիների ներկայությունը, նրանց ցուցաբերած սխրագործությունները Արցախյան ազատամարտի տարիներին ապահովեցին մեր ժողովրդի հաղթանակը, Արցախի ազատագրումը և ՀՀ երկրորդ անկախ պետության՝ ԼՂՀ հռչակումն ու կայացումը:

Մինչ օրս հրապարակի վրա չկա մի ամփոփ գիտական ուսումնասիրություն, որտեղ լուսաբանված ու վերլուծված լինեն հայոց հերոսական պատմության տարբեր փուլերում՝ ֆիդայական պայքարի, ինքնապաշտպանական հերոսամարտերի, Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների, նաև Արցախյան շարժման ու ազատամարտի մասնակից և հերոսական սխրագործություններով աչքի ընկած հայուհիների՝ աղջիկների, կանանց ու մայրերի գործունեությունը: Սույն ուսումնասիրությունը գալիս է լրացնելու հայոց պատմության մեջ եղած այդ բացը:

Հարկ է նշել, որ հայոց գոյապայքարի տարբեր փուլերում հայուհիների մասնակցությունը հայոց ազատագրական պայքարին շատ քիչ

[14] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, Երևան, 2000, էջ 145:

ուսումնասիրված, առանձին դեպքերում գրեթե չուսումնասիրված թեմաներից է: Նախ, առանձին պատմաշրջանների բացառություններով հանդերձ, գրեթե չկան պատմագիտական բնույթի հատուկ ուսումնասիրություններ, եղած նյութերն էլ հաճախ կրում են ընդհանրական բնույթ և համակարգված չեն[15]: Սույն ուսումնասիրությունը առաջին աշխատանքներից է, որտեղ հրապարակի վրա եղած և նորահայտ արխիվային փաստաթղթերի, հրապարակված սկզբնաղբյուրների, պարբերական մամուլի և թեմային առնչվող առկա գիտական ու կենսագրական տիպի գրականության հետազոտման հենքի վրա ամփոփ ձևով ներկայացվում է հայ հերոսուհիների սխրագործությունը 20-րդ դարի հայոց հերոսամարտերի պատմության տարբեր փուլերում՝ սկսած ֆիդայական (հայդուկային) ազատամարտից և վերջացրած Արցախյան ազատամարտով:

Հենվելով բազմաթիվ արխիվային նյութերի, մի շարք այլ փաստաթղթերի ու ուսումնասիրությունների վրա՝ աշխատության մեջ առաջին անգամ հայ հերոսուհի կանանց դերակատարությունը նորովի ներկայացնելու փորձ է կատարվել՝ գնահատելով նրանց հերոսական գործողությունները հայոց ազգային-ազատագրական պայքարի տարբեր փուլերում: Միաժամանակ համապարփակ լուսաբանության է արժանացել կին-ազատամարտիկի, հատկապես մայր-ազատամարտիկի ֆենոմենը:

Աշխատության գիտական նշանակությունն ու արդիականությունը պայմանավորված են նրանով, որ հայուհիների հերոսական սխրագործությունների նկարագրությամբ հնարավոր է դառնում պարբերացման ենթարկել կանանց նախաձեռնություններն ու հերոսապատումը ազգային-ազատագրական պայքարի տարբեր ժամանակահատվածներում, արձանագրել կանանց մասնակցությամբ իրականացված ձեռքբերումները և ներկա ու ապագա սերնդի մեջ արմատավորել ազգային

[15] Ավելի մանրամասն տե՛ս գրականության տեսության վերլուծությունում:

ոգին մշտարթուն, վառ պահելու և հայրենասիրական դաստիարակության խիստ հրատապ ու կարևոր գաղափարը:

Հայոց հազարամյա պատմության մեջ հայ մայրը մշտապես եղել է իր ամուսնու կողքին, ամեն կերպ ջանացել է ամրապնդել ընտանիքը, ընտանեկան հարաբերությունները, օգնել ամուսնուն բարեկեցության հասնել, իսկ վճռական պահերին էլ, զենքը ձեռքին, կանգնել է ընտանիքի և սուրբ հայրենիքի անկախության և ազատության պաշտպանության դիրքերում: Այդ մասին ասել են ու գրել նաև օտարերկրացի ուղեգիրները, որոնք անձամբ տեսել ու համոզվել են դրանում:

Մեր պատմիչները, պատմաբաններն ու գրողները, հասարակական, քաղաքական գործիչները շատ են գրել հայ կնոջ առաքինության, ճկուն մտքի, հարուստ երևակայության, աշխատասիրության, ընտանիքին, հայրենիքին ու ազգին նվիրված լինելու մասին: Այդ է վկայում նաև հայ ժողովրդական բանահյուսությունը: Հայ կանանց, այդ թվում մայրերի մասին գրվել են բազմաթիվ հոդվածներ, հրատարակվել են կենսագրական բառարաններ, գրքեր, ալբոմներ և այլն: Հայուհուն, հատկապես հայ մորը համահունչ է «Առյուծն առյուծ է, լինի էգ, թե արու» հանրահայտ ասացվածքը:

Ցավոք, չափազանց քիչ է գրվել առյուծ ու առյուծածին հայուհու մասին: Ավելին, «հակառակ այդ իրողության, որ մեր պատմագիրներն ու հուշագիրները ժլատ եղած են կիներու գործունեությունը ներկայացնելու տեսակետեն, հայ կնոջ ունեցած տիրական դերին ապացույցները կուգան մեր պատմության նույնիսկ ամենավաղ շրջանեն»,– գրում է Ս. Զեյթլյանը իր «Հայ կնոջ դերը հայ հեղափոխական շարժման մեջ» (Լոս Անճելլես, 1992) աշխատության մեջ:

Թեմայի ուսումնասիրության համար գրեթե աղբյուրագիտական նշանակության ունեն կենսագրական բառարանները, որտեղ ներկայացված է հայ կանանց գործունեությունը հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում՝ հեղափոխական, ազատագրական պայքարի շրջանակներում: Նման հրատարակություններ-

ից թերևս իրականությունում առաջինը Մաթևոս Մաղաքյանի (1767-1847)՝ 1839 թվականին Վենետիկում լույս ընծայած «Կենսագրութիւն երևելի արանց զոր ծաղկաքաղ համառօտեաց յընդարձակ բառարանէն իւրմէ յերկուս հատորս» (Ա հատոր, 964 էջ) աշխատությունն է: Ապա 11 տարի անց՝ 1850 թվականին, Մինաս Բժշկյանը՝ Մխիթարյան հայ միաբաններից, Վենետիկում հրատարակել է «Յամառօտ նկարագիր վարուց երեւելի արանց» աշխատությունը, որտեղ բերված են հայ և օտարազգի նշանավոր մարդկանց կենսագրական տեղեկությունները:

Հետագա տարիներին կենսագրական բառարանների հեղինակների աշխատություններն ավելի նպատակային են դառնում. հիմնականում ներկայացնում են հայազգի երևելիների կենսագրականներ՝ համառոտ բնութագրելով նրանց գործունեության բնագավառները[16]: Այդ տեսակետից Ն. Ճիվանյանի՝ 1879 թվականին Կոստանդնուպոլսում հրատարակված «Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցաբանական հատուկ անձանց» աշխատությունը մոտ է նպատակին: 1904 թվականին Հ. Տեր-Աստվածատրյանի՝ Թիֆլիսում հրատարակած «Բառարան հայ կենսագրությանց» գրքում ներկայացվում են հայ նշանավոր մարդկանց (կին թե տղամարդ) համառոտ կենսագրությունները:

1838 թվականին Ռումինայի մայրաքաղաք Բուխարեստում Մ. Պոտուրյանի հրատարակած «Հայ հանրագիտակ» աշխատությունում նույնպես նշված են հայ կին գործիչների համառոտ կենսագրականներ:

1939 թվականին Փարիզում հրատարակվել է Ա. Գյուլխանդանյանի «Հեղափոխական հայուհիներ» աշխատությունը, որտեղ ներկայացված է հեղափոխական շրջանի անվանի հայուհիների, ինչպես նաև Վասպուրականի, Տարոնի, Տրապիզոնի, Կ. Պոլսի և Անդրկովկասի տարբեր շրջաններում աշխատող հեղափոխական կանանց գործունեությունը:

---

[16] **Ավագյան Ա.,** Նշանավոր հայուհիներ, Երևան, 2006, էջ 3:

1950 թվականին Ա. Մեզպուրյանը Ստամբուլում հրատարակել է «Հայ և ծագումով հայ բժիշկներ» կենսագրական բառարանը, սակայն այստեղ կին բժշկուհիները փոքրաթիվ են[17]: 1973 թվականին Գ. Ստեփանյանը Երևանում լույս է ընծայել «5-րդ դարից 20-րդ դարավերջի նշանավոր հայերի կենսագրականներ» աշխատությունը (2-րդ և 3-րդ հատորներ, (1981-1990)):

1988 թվականինի Ն. Տեր-Միքայելյանը Բեյրութում հրատարակել է «Նշանավոր հայազգի մարդիկ» կենսագրական բառարանը: Նշանակալից է Ռ. Փաշինյանի հրատարակած «Հայ ռևոլյուցիոն կանայք» (Երևան, 1963) կենսագրական բառարանը, ապա 1971 թվականին՝ Վ. Եղյանի «Հայաստանի առաջավոր կանայք» կենսագրական բառարան գիրք-ալբոմը:

Հետագայում Վ. Աբրահամյանի, Տ. Գրիգորյանի, Վ. Տարախչյանի և Ռ. Փաշինյանի հեղինակությամբ հրատարակվել են «Մեծ պատերազմի հերոսուհիները» ժողովածուն (Երևան, 1985) և Հ. Մաթևոսյանի՝ նույն վերնագրով և նույն թվականին հրատարակված «Մեծ պայքարի հերոսուհիները» (Երևան, 1985), Հ. Խաչատրյանի «Հայոց թագուհիներ» (1985 և 1998), «Հայուհիներ» (պրակ Ա, Երևան, 2001) գրքերը:

1993 թվականին Արծվի Բախչինյանը հրատարակել է «Ծագումով հայ են» հետաքրքիր ու ծավալուն կենսագրական բառարանը, որտեղ ներկայացվել են 1000-ից ավելի հայերի և ծագումով հայերի համառոտ կենսագրականներ: Արժեքավոր հրատարակություններ են նաև Ասատուր Փաշայանի՝ 2001 և 2002 թվականներին Երևանում հրատարակած «Տիտղոսակիր հայեր. 15-րդ-19-րդ դարեր» և «Հայ մշակույթի վաղամեռիկ գործիչներ» կենսագրական բառարանները:

Հարություն Մինասյանը 2001 թվականին հրատարակել է «16-19-րդ դարերի լեհահայ բժիշկներ», ապա՝ «100 հայ հոգեբույժներ» երկհատորյակները (2002, 2004): 2004 թվականին լույս է տեսել նաև Ալ-

[17] **Ավագյան Ա.,** նշվ. աշխ., էջ 3:

բերտ Փարսադանյանի «Հայը, կենսագրություն մեկ տողով» գիրքը, որտեղ հիշատակված են մի քանի հարյուրի հասնող հայուհիներ:

Կենսագրական հանրագիտարան է Տիգրան Հայազնի «Տիկնայք փափկասուն հայոց աշխարհի» աշխատության առաջին հատորը, որը հրատարակվել է 2005 թվականին: Նույն թվականին տպագրվել է նաև Անահիտ Հարությունյանի՝ 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին հայ կանանց հասարակական գործունեությունը լուսաբանող «Երևելի տիկնանց դարը» կենսագրական բնույթի աշխատությունը:

Սերգեյ Ավագյանը 1998 թվականին հրատարակել է «Շարուր», նաև «Սուրմալու» պատմազգագրական, կենսագրական աշխատությունները, ապա՝ «Գյուղատնտեսության հայ նշանավորները» երկհատորյակը ու «Հայ իրավաբաններ 7-21-րդ դդ.» կենսագրական բառարանները: Սակայն ինչպես վերը նշված, այնպես էլ կենսագրական այս բառարանները հիմնականում վերաբերում են առանձին բնագավառներում գործունեություն ծավալած նշանավոր հայուհիներին: Նշենք նաև, որ բոլոր աշխատություններում հայ կինը, հայուհին ներկայացվել է որպես հայ ընտանիքի, հայրենիքի և ազգի պահպանման ու բարգավաճման, հզորացման ակտիվ գործիչ[18]:

2006 թվականին հրատարակվել է նաև Ա. Ավագյանի «Նշանավոր հայուհիներ» (Երևան, 2006) աշխատությունը, որտեղ տրված են 300-ից ավելի հայուհիների համառոտ կենսագրականներ, հայուհիներ, որոնք իրենց գործունեությամբ նպաստել են հայ ժողովրդի, Հայաստանի բարգավաճմանը, հայ մարդու գոյատևմանն ու փառաբանմանը: Նրանք մեծ դերակատարում են ունեցել տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի, ռազմական, սպորտի, բարեգործության և այլ բնագավառներում: Կենսագրականները դասակարգված են ժամանակագրական, իսկ ցանկում՝ այբբենական կարգով:

Հայ հերոսուհի կանանց, այդ թվում մայրերի հերոսական գործունեության ուսումնասիրման համար չափազանց արժեքավոր կենսագ-

[18] **Ավագյան Ա.,** նշվ. աշխ., էջ 4:

ական տվյալներ են պարունակում 2011 թվականին հրատարակված «Հայուհիներ» հանրագիտարանի երկու հատորները: Այստեղ տրված են կենսագրական տեղեկություններ հին ժամանակներից մինչև մեր օրերը Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և Սփյուռքում հայտնի հայ կանանց մասին, ներկայացված են նաև կին գործիչների, այդ թվում՝ կին ազատամարտիկների կենսագրությունները, մայրերի հերոսական գործունեությունը ոչ միայն ազատագրական պայքարի համատեքստում, այլև հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում: Չնայած համազգային պայքարին մասնակից քիչ թվով կանայք են ներկայացված, այնուամենայնիվ աշխատությունը լուրջ ներդրում է հայուհիների գործունեության ուսումնասիրության ոլորտում:

Հայ հերոսուհի կանանց, այդ թվում մայրերի հերոսական գործունեության ֆիդայական շրջանի ազատագրական պայքարի և 1915-1923 թվականների ինքնապաշտպանական հերոսամարտերի մասնակից հայուհիների գործունեության լուսաբանման համար սկզբնաղբյուրի նշանակություն ունի ամենածավալուն ու համեմատաբար ճշգրտված աշխատությունը՝ «Յուշամատեան հայ յեղափոխական դաշնակցութեան հարիւրամեակ» ալբոմ-ատլասի Ա հատորը՝ «Դիւցազնամարտ 1890-1914» նշանակալի հրատարակությամբ, որը «ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի կեդրոնական կոմիտէի» կողմից է լույս ընծայվել Լոս Անջելեսում 1992 թվականին:

«Յուշամատեան հայ յեղափոխական դաշնակցութեան» ալբոմ-ատլասի Բ հատորը հրատարակվել է Լոս Անջելեսում 2001 թվականին: Աշխատանքը նվիրված է 1914-1925 թվականների գոյամարտին, և գրքում տեղ է գտել ինքնապաշտպանական հերոսամարտի մասնակից հերոսուհի հայուհիների գործունեությունը:

Խիստ կարևոր են տպագիր սկզբնաղբյուրներն ու ֆիդայական պայքարի մասնակիցների հուշերը, հիշատակարանները, նամակները, ականատեսների վկայությունները, զանազան պատմություններ:

Աղբյուրագիտական կարևոր արժեք ունի դաշնակցական նշանավոր գործիչ Ռուբենի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» յոթ հատորներում ամփոփված աշխատությունը[19]: Հայդուկային պայքարի ակտիվ մասնակցի և հայ ժողովրդի փրկության գործի նվիրյալի ներկայացրած մեծ մասամբ հավաստի տեղեկությունները լույս են սփռում տվյալ պատմական դարաշրջանի ու դեպքերի վրա:

Ուսումնասիրության համար կարևոր են նաև Անդրանիկի, Գևորգ Չաուշի, Աղբյուր Սերոբի, Նիկոլ Դումանի, Սմբատի, Խանասորի Վարդանի և մյուս հերոսների թողած հուշերն ու հիշատակարանները, Հ. Երամյանի, Ա. Ալպոյաճյանի, Կ. Սասունու, Սարգիս և Միսաք Բդեյանների, Սիրվարդի և ուրիշների աշխատությունները[20]:

Որպես դեպքերի անմիջական արձագանք և փաստական աղբյուր՝ ուսումնասիրության համար օգտագործել ենք նաև պարբերական մամուլում, ամսագրերում հրապարակված տասնյակ հոդվածներ և վկայություններ:

20-րդ դարասկզբի ֆիդայական պայքարի մասնակից հայ հերոսուհի կանանց ու հատկապես մայրերի գործունեության մասին պատմող աշխատությունները հուշագրություններ են և պատմական վավերագրերի հիման վրա գրված առանձին աշխատություններ, հոդվածներ և այլն[21]:

---

[19] **Ռուբէն,** Հայ յեղափոխականի մը յիշատակները, հհ. Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Թեհրան, 1982:

[20] **Բդէեան Ս., Բդէեան Մ.**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962, **Սասունի Կ.,** Սարերու Ասլանը, (Գէորգ Չաուշի կենսագրավէպը), Պէյրութ, 1966, Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ, Պէյրութ, 1964, Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1956, **Սիրվարդ,** Արամ Աչըգպաշեան (Հերոս Փոքր Հայքի), Փրովիտէնս, 1957, **Ալպոյաճեան Ա.,** Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ, 1937, **Ալպոյաճեան Ա.,** Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ 1961, **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952, **Մեհրաբյան Ս.**, Խանասորա Վարդանի (Մեհրաբյան Սարգիս) յիշատակարանը (Խանասորա Վարդան, Շատախի Առյուծ), Երևան, 1992, **Երամեան Ա.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, Աղեքսանդրիա, 1929, հ. Ա, «Հայրենիք», Բոստոն, 1958:

[21] Յեղափոխական ալպոմ, Տուրբախ (Յարութիւն Այվազեան), Պէյրութ, 1965, **Սասունի Կ.,** Աննա մայրիկը, «Հայրենիք», Բոստոն, N 11, 1953, էջ 8-9, նույնի՝ Արշակ,

1915 թվականի Հայոց ցեղասպանության տարիներին ինքնապաշտպանական դյուցազնամարտերին հայուհի հերոս կանանց մասնակցության մասին առանձին դրվագներ են պարունակում Հայաստանի ազգային արխիվի հրապարակած փաստաթղթերի երեքհատորանի ժողովածուները, որոնք աղբյուրագիտական նշանակության ունեն, պարունակում են վերապրածների վկայություններ[22]:

Թեմայի ուսումնասիրության համար սկզբնաղբյուրի նշանակություն ունեն նաև Հարություն Իսկանդարյանի, Վերժինե Սվազլյանի և ուրիշների հեղինակությամբ հրատարակված ականատես-վերապրողների վկայությունները:

Հերոսուհի կանանց ու մայրերի ֆիդայական պայքարում և ինքնապաշտպանական մարտերում ցուցաբերած հերոսությունների առանձին դրվագներ են ներկայացված Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության կողմից Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր նահանգների և Կիլիկիայի պատմության վերաբերյալ հրատարակված մեծարժեք ու-

---

Հայ յեղափոխութեան արշալոյսի հսկաներէն: Պիթլիսցի Մուշեղ, Կ. Պոլիս, 1919, **Սապահ-Գիւլեան Ս.**, Փոքր-Հայքի յիշատակներ, մասն առաջին, Չիկագո, 1917, էջ 129-130, **Դարբինյան Վ.,** Կին ազատամարտիկներ, «Ասպար», փետրվար, N 2, Պէյրութ, 1993, **Համբարյան Ա.,** Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում 1898-1908 թթ., Երևան, 1999, **Ալպոյաճեան Ա.,** Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, 1961, **Առաքելյան Կ.,** Հայ կնոջ դերը հայդուկային պայքարում, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, Երևան, 2016, էջ 144-150:

[22] Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, Վանի նահանգ, հ. 1, Երևան, 2012, նույնը՝ Բիթլիսի նահանգ, հ. 2, նույնը՝ Էզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, հ. 3, Վկայարան Հայկական ցեղասպանութեան, գիրք Ա, պատրաստեց Արութիւն Իսկահատեան, Պէյրութ, 2010, նույնը՝ գիրք Բ, Պէյրութ, 2011, նույնը՝ գիրք Գ, Պէյրութ, 2011, նույնը՝ գիրք Դ, Պէյրութ, 2012, նույնը՝ գիրք Ե, Պէյրութ, 2013, Մարաշի Տէր Ղեւոնդ քահանայի յուշերը, Երևան, 2013, **Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան),** Իմ հիշողությունները, Երևան, 2015, **Սաքայան Դ.**, Զմյուռնիա – 1922, բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը, Երևան, 2011, **Հովհաննիսյան Ղ.,** Սասունը բոցերի մեջ, Երևան, 1987, **Գևոնյան Ա.**, Գյուլիզար, Երևան, 1992, **Բուրանյան Ե.**, Իմ անցյալի հուշերից, Վասպուրականի ողբերգությունը, Երևան, 2013, **Գրքաշարյան Հ.**, Հաճըն, եթե քեզ մոռանանք..., հուշագրություն, Երևան, 2012, **Հեբոյան Ա.**, Մորուք Կարո, հայ ընտանիքի իրապատում, Երևան, 1998:

սումնասիրությունների բազմահատորյակում՝ նվիրված Հայկական ցեղասպանության 100-ամյակին[23]:

Նմանատիպ արժեքավոր ուսումնասիրություններ են նաև այլ նահանգների պատմությանը նվիրված աշխատանքները[24]:

Ֆիդայական ազատամարտին և ինքնապաշտպանական հերոսամարտերին մասնակցած և իրենց խիզախությամբ ու անձնազոհությամբ աչքի ընկած մի խումբ կանանց ու մայրերի, հայ հերոսուհիների սխրագործություններին անդրադարձել են առանձին ուսումնասիրողներ Հայոց ցեղասպանության մասին իրենց ուսումնասիրություններում[25]: Դրանցից կարելի է առանձնացնել 1992 թվականին Լոս Անջելե-

---

[23] Ատանայի Հայոց պատմութիւն, մատենաշար, N1, Անթիլիաս, 2012, Պատմութիւն Տարօնի աշխարհի, N 2, Անթիլիաս, 2013, Պատմութիւն Անթէպի Հայոց, N 3, հ. Ա, Անթիլիաս, 2013, Պատմութիւն Անթէպի Հայոց, N 4, հ. Բ, Անթիլիաս, 2013, Հաճընի ընդհանուր պատմութիւն, N 5, Անթիլիաս, 2014, Դիւցազնական Ուրֆան եւ հայորդիներ, N 6, Անթիլիաս, 2014:

[24] Պատմագիրք Եոզկատի և շրջակայից (Գամիրք) Հայոց, խմբագրութիւն Արմէն Դարեան եւ Անդրանիկ Երկանեան, Պէյրութ, 1988, Պատմութիւն Հայոց Արաբկիրի, կազմեց եւ երկասիրեց Անդրանիկ Լ. Փոլատեան, Նիւ Եորք, 1969, Յուշամատեան Մուսա լերան, խմբագրեցին Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուռեան, Պեյրութ, 1970, Նյութեր Եգիպտոսի Հայոց պատմութեան համար, հ. Գ, գրեց **Արտաշես Գարտաշեան Հ.**, Վենետիկ - Ս. Ղազար, 1987, **Պալաքեան Գ.**, Հայ գողգոթան, Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն, հ. Բ, Անթիլիաս, 2003:

[25] Մեծ եղեռնի հերոսապատում. 1915 թ. ինքնապաշտպանական հերոսամարտերը, Թեհրան, 1982, Վան-Վասպուրականի հերոսամարտը - 75 (ժողովածու), Երևան, 1990, **Սահակյան Ռ.**, Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005, **Սահակյան Ռ.**, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը 1914 թ. հուլիս - 1917 թ. փետրվար, Երևան, 2015, **Գասպարյան Ռ.**, Հայկական կոտորածները Կիլիկիայում, Երևան, 2005, **Սիմոնյան Հ.**, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009, **Դևրիկյան Տ.,** Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915-1923 թթ., Երևան, 2005, **Շերպեթճեան Ս.**, Պատմութիւն Սուեւտահայերու, Այնճար, 2010, **Պուրսալեան Յ.**, Մուսա լերան հերոսամարտը, Այնճար, 2004, **Պողոսյան Ս.**, Հայոց ցեղասպանության պատմություն, պատմագիտական ուսումնասիրություններ, հ. 1, Երևան, 2008, նույնը՝ հ. 2, Երևան, 2008, նույնը՝ հ. 3, Երևան, 2011, **Կարապետյան Մ.**, Հայաստանը 1912-1920 թթ., ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2003, **Պետոյան Վ.**, Սասուն, Երևան, 2016, **Թադևոսյան Ռ.**, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից. XIX-XX դարեր, Երևան, 2012, **Վոլֆգանգ Գ.**, Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Երևան, 2002:

սում (ԱՄՆ) Սոնա Զեյթլյանի հրատարակած «Հայ կնոջ դերը հայ հեղափոխական շարժման մեջ» աշխատությունը: Հեղինակը գրքում ներկայացրել է հայ կին մարտիկներին, հայոց ազատության ու արժանապատվության համար մարտնչող, նաև հերոսաբար զոհված հայուհիներին:

Արժեքավոր ուսումնասիրություն է նաև Հ. Վարդան Վ. Հացունու «Հայուհին պատմութեան առջեւ» աշխատությունը (Թեհրան, 2009), որտեղ առանձին գլխով ներկայացված են քաջագործ կանայք, հերոսուհի ազատամարտիկների սխրագործությունները:

Երկրորդ համաշխարհայինի տարիներին և Հայրենական մեծ պատերազմում Հայաստանի կանանց մասնակցությանը վերաբերող արժեքավոր ուսումնասիրություններ են Լիզա Մարտիրոսյանի հեղինակությամբ 1961 թվականին Երևանում հրատարակված «Հայ կանանց սխրագործությունները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում» (1941-1945) գրքույկը և 1968 թվականին հրատարակած «Սովետական Հայաստանի կանայք Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945)» աշխատությունը, որը առաջինի լրացված և լրամշակված տարբերակն է: Այստեղ բազմաթիվ արխիվային, պարբերական մամուլի նյութերի հիման վրա հեղինակին հաջողվել է ներկայացնել հայ կանանց մասնակցությունը ոչ միայն ռազմաճակատային մարտական գործողություններին, այլև թիկունքի աշխատանքներում հայ բանվորուհիների, կոլտնտեսուհիների, մշակույթի և գիտության գործիչների հերոսական աշխատանքները, նրանց ցուցաբերած համաժողովրդական օգնությունը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ բժիշկների կողքին գործունեություն ծավալած բժշկուհիների հերոսություններին է

Հայ կանանց՝ այդ թվում մայրերի հերոսության առանձին դրվագներ են ներկայացրել նաև օտարերկրացի ականատեսները: Այդ առումով ուշագրավ են **Վ. Միքայելյանի** «Գերմանացի դիվանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին» (1915), (Երևան, 1997) և **Յան Վան Դեր Դյուսենի** «Հայկական օրագիր» (Երևան, 2008) աշխատությունները:

նվիրված Ա. Գրիգորյանի և Բ. Մելքումյանի հեղինակած «Հայաստանի բժիշկները Մեծ հայրենականում» (գիրք առաջին, Երևան, 1983) աշխատությունը: Ներկայացված բժշկուհի հայուհիները ոչ միայն որպես զինվորներ կռվում էին Մեծ հայրենականի ռազմաճակատներում, այլև ծառայում էին հոսպիտալներում՝ չխնայելով իրենց կյանքը հայրենիքի ազատագրության գործում:

Թիկունքում և ռազմաճակատում հայ ժողովրդի հերսական պայքարին է նվիրված Ա. Մնացականյանի «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում (1941-1945)» ծավալուն մենագրությունը, որտեղ հեղինակը համառոտ ներկայացրել է նաև կանանց հերոսական աշխատանքը ժողովրդական տնտեսության մեջ և մյուս բնագավառներում:

Ա. Մնացականյանի հեղինակությամբ հրատարակված «Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները» գրքում (1947) որոշ նյութեր կան հայ կանանց ռազմական գործունեության վերաբերյալ: Ուսումնասիրվող թեմայի առանձին հարցերին են անդրադարձել «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում» մեծածավալ ժողովածուն (1985), Կ. Միրզախանյանի «Հայաստանի կոմերտմիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» (1956), Ս. Հարությունյանի «Երևանը՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին» (1958), Հ. Սարկիսովի «Героические дочери Кавказа» (Баку, 1965) և ուրիշների աշխատությունները:

Կ. Հարությունյանի հեղինակած՝ Հայրենական մեծ պատերազմի վերաբերյալ աշխատություններում առանձին էջեր են նվիրված Մեծ հայրենականում հայուհիների, հատկապես կանանց և մայրերի սխրագործություններին[26]:

---

[26] **Арутюнян К., Погосян Г.,** Вклад армянского народа в победу в Великой отечественной войне, Москва, 2010, **Арутюнян К., Саакян М.,** Участие сотрудников Национальной академии наук Республики Армения в Великой отечественной войне (1941-1945), Ереван, 2001, **Հարությունյան Կ.**, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Երևան, 2002:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ հերոս հայուհիների սխրագործությունների որոշ նկարագրություններ են պարունակում նաև առանձին քաղաքների ազատագրության համար նրանց մասնակցության վերաբերյալ կենսագրական տեղեկատուները, ինչպիսին է 2014 թվականին Սանկտ Պետերբուրգում հրատարակված «Армение в битве за Ленинград. Биографический справочник» մեծածավալ աշխատությունը: Հայրենական մեծ պատերազմում հայ կանանց մասնակցության մասին նշվում է նաև ՀՀ ԳԱԱ հրատարակած «Հայոց պատմություն» աշխատության IV հատորում (գիրք առաջին, Երևան, 2010), ինչպես նաև «Հայոց պատմություն» (ԵՊՀ, 2012) բուհական դասագրքում:

Աշխատանքը գրելիս մեզ համար աղբյուրագիտական հիմք են ծառայել Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) առկա բազմաբնույթ փաստական նյութերը, վավերագրերը, որոնցից շատերը զետեղված են 1-ին ֆոնդում, բազմաթիվ այլ ֆոնդերում, որոնց մասին տվյալները պահպանված են նյութերի շարադրանքում:

Ուսումնասիրված թեմայի վերաբերյալ հարուստ նյութեր են պարունակում հայկական և ռուսական մամուլում տպագրված բազմաթիվ հոդվածներ, հրապարակումներ, հուշամատյանների վկայագրություններ, հերոսուհիների սխրագործությունների առանձին դեպքերի նկարագրություններ և այլն: Դրանք կարելի է գտնել տողատակերում: Հարուստ նյութեր է պարունակում նաև Արցախյան ազատամարտի տարիներին Արցախյան գոյապայքարի վերաբերյալ (շարժումից մինչև ազատամարտ) օգտագործված գրականությունը: Այս առումով հատկապես կարևորում ենք մի շարք հեղինակների հուշագրությունները, մենագրությունները, գրագրություններն ու փաստագրությունները, որոնք, պարունակելով մի շարք մանրամասներ, օգնում են բացահայտել կանանց գործունեությունը հիշյալ ժամանակահատվածում: Օգտագործված մի շարք սկզբնաղբյուրների շնորհիվ հնարավոր է դառնում մանրամասն ներկայացնել ծավալված իրադարձություններում հայ կանանց

(այդ թվում՝ մայրերի) կատարած հսկայածավալ աշխատանքները, նրանց կրած զրկանքների ու մարտական հերոսական ուղու պատմությունը[27]:

Թեմայի ուսումնասիրման տեսանկյունից ուշագրավ են Իսկուհի Ավանեսյանի «Կանանց մասնակցությունը Արցախյան գոյապայքարին (1988-1994 թթ.)» թեմայով ատենախոսությունն ու սեղմագիրը (Երևան, 2016): Այն վերաբերում է հայ հերոսուհիների՝ աղջիկների, կանանց ու մայրերի մասնակցությանը ինչպես Արցախյան գոյապայքարի սկզբնափուլին, այնպես էլ ռազմական գործողությունների տարիներին: Չնայած օգտագործված բազմաբնույթ և հարուստ նյութերին՝ հեղինակի ուշադրությունից դուրս է մնացել առանձին հերսուհիների գործունեությունը, որը լրացվել է մեր կողմից սույն աշխատանքը շարադրելիս:

Ուսումնասիրվող թեմայի լուսաբանման համար առաջնահերթ կարևորություն ունեն Հ. Վարդումյանի աշխատանքները[28], որոնցում բացառապես առաջին անգամ կին ազատամարտիկները ներկայացվել են որպես կապավոր, բուժքույր ու զինվոր և մասնակցել են մարտական գործողություններին: Հեղինակն իր ուսումնասիրություններում փորձել է ներկայացնել ոչ միայն կին ազատամարտիկների մարտական ուղին, այլև նրանց կենսագրությունները:

---

[27] Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991-1992 թթ.), փաստաթղթեր (կազմող՝ Աբրահամյան Հ.), Երևան, 2011: Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ.), Երևան, 2011: Պատմական նստաշրջան, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանի 1988 թ. փետրվարի 20-ի նիստի արձանագրություն, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Բալայան Վ., Հակոբյան Տ.), Ստեփանակերտ, 2008:
Итого всесоюзной переписи населения 1989 г. численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономной области, таблица 2, Москва, 1989. Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах (сост. Товмасян В., Стаджанян В., Нерсисян Ю., Балаян В.), Степанакерт, 1991.

[28] **Վարդումյան Հ.,** Կին ազատամարտիկները, Երևան, 2003, նույնի՝ Ճանապարհ անմահության, Երևան, 2002 և Աստվածների կանչը, Երևան, 2004:

Հետազոտության հիմնական սկզբնաղբյուրներից է «Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում» ուսումնասիրությունը[29], որտեղ ներկայացված են կանայք համակարտության ժամանակ, և պատումների տեսքով արժևորվում է Արցախյան գոյապայքարին մասնակից մի շարք կանանց գործունեությունը: Աշխատանքում փորձ է արվել ներկայացնելու շարժման սկիզբն ու զարգացումը այն կանանց կյանքի ու պատմությունների միջոցով, որոնք կա՛մ անմիջապես մասնակցություն են ցուցաբերել ռազմական գործողություններին, կա՛մ պարզապես պատերազմի ժամանակ ապրել են Արցախում՝ հույս ու հավատ ներշնչելով բոլոր նրանց, ովքեր կռվում ու պայքարում էին ռազմի դաշտում:

Աղբյուրագիտական մեծ արժեք ունի «Հայուհիներ» հանրագիտարանը[30], որի մասին վերը նշվել է:

Արժեքավոր ու ամփոփ ուսումնասիրություն է «Ղարաբաղի ազատագրական պատերազմ 1988-1994 թթ.» հանրագիտարանը[31], որտեղ ոչ միայն տրված են Արցախյան հերոսամարտի մասնակիցների կենսագրականներ, այլև ռազմական գործողությունների ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև Արցախյան շարժման սկզբնավորման պատմությունը:

Խնդրո թեմայի լուսաբանման համար կարևոր են հրատարակված պատմագիտական աշխատությունները, որոնցում համառոտ տվյալներ կան ազատագրական պայքարի տարիներին կանանց գործունեության վերաբերյալ: Այդ առումով հատկանշական է Բ. Ուլուբաբյանի աշխատությունը[32]: Ղարաբաղյան շարժման տարեգիրը հանրահավաքներին մասնակից կանանց մասին ոչ միայն իր տպավորություններն է շարա-

---

[29] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում (խմբագիրներ՝ Մխիթարյան Ա., Օհանյան Մ.), Երևան, 2000:

[30] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, Երևան, 2011:

[31] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (1988-1994), հանրագիտարան, Երևան, 2004:

[32] **Ուլուբաբյան Բ.,** Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:

դրել, այլև վեր է հանել հայ ժողովրդին սատարող օտարազգի կին գործիչների նախաձեռնությունները, նրանց կատարած քայլերը:

Աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն Հ. Աբրահամյանի՝ Արցախի հիմնահարցի ակունքների բացահայտմանն ու վերլուծությանը նվիրված մի շարք աշխատություններ[33]: Հեղինակը ուսումնասիրել և գիտականորեն ընդհանրացրել է Արցախի ազատագրական պայքարի նախադրյալները, դրա սկզբնավորումը, պայքարի շուրջ հայության համախմբման և տարած հաղթանակների արդյունքները և համառոտ անդրադարձել է նաև այն կանանց, որոնք մասնակցել են ընդհատակյա աշխատանքներին, ընդգրկվել են Մոսկվա մեկնող պատվիրակությունների կազմում, ելույթներ են ունեցել հանրահավաքներում, մասնակցել են ազատամարտին:

Կ. Ղահրամանյանի Հյուսիսային Արցախի գոյապայքարի պատմությանը նվիրված մենագրություններում[34] անդրադարձ կա ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի՝ 1988 թվականի փետրվարի 20-ի պատմական որոշումից հետո Լեռնային Ղարաբաղում ծավալված իրադարձություններին, որոնք լայն արձագանք գտան Շահումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում:

Աղբյուրագիտական առանձնակի նշանակություն ունի Բ. Սիսյանի, Ռ. Չիլինգարյանի համատեղ աշխատությունը[35], որտեղ լուսաբանված են Գետաշենի դեպքերը, ինչպես նաև համառոտ տվյալներ կան կանանց վերաբերյալ:

Ականատեսի վկայություններ են Վ. Բաղրյանի աշխատանքները[36], որտեղ իրական փաստերի հիման վրա ներկայացված է Արցախյան

---

[33] **Աբրահամյան Հ.,** Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, 1997, նույնի՝ Մարտնչող Արցախը, հ. Գ, Երևան, 2007, Մարտ կրակագծի մատույցներում, Երևան, 2008, «Կռունկ», Ստեփանակերտ, 2013:

[34] **Ղահրամանյան Կ.,** Հյուսիսային Արցախ, գիրք Բ, Երևան, 1993, Օջախի գիրք. Հողը կանչում է, գիրք Բ, Երևան, 2005:

[35] **Սիսյան Բ., Չիլինգարյան Ռ.,** Գետաշեն, Երևան, 2007:

[36] **Բաղրյան Վ.,** Ֆենոմեն, Ստեփանակերտ, 1998: Տե՛ս նաև Տեսադաշտ 1988-1994: Ղարաբաղյան ազատամարտ, Ստեփանակերտ, 2013:

ազատամարտը՝ խաղաղ ցույցերից մինչև զինադադար: Աշխատությունում հեղինակը անդրադարձ է կատարել համահավաքներում հնչած կին ակտիվիստների ելույթներին, առանձին ներկայացրել է ռազմական գործողություններին միացած կանանց հետ ունեցած հարցազրույցները, արձանագրել միջազգային ասպարեզում հայկական կողմին համակրող ու սատարող կանանց մասին:

Աղբյուրագիտական արժեք ունեն փաստերով հարուստ նյութեր պարունակող մի շարք ծավալուն աշխատություններ, որոնցում որոշակի չափով տեղեկություններ են հաղորդվում նաև դրան մասնակից դարձած կանանց մասին: Նման աշխատանքների թվում են Վ. Խոջաբեկյանի[37], Կ. Դանիելյանի[38], Գ. Առստամյանի[39], Ա. Արշակյանի[40], Ս. Կապուտիկյանի[41], Հ. Բեգլարյանի[42], Թ. Հակոբյանի[43] և մի շարք այլ հեղինակների աշխատանքներ:

Փաստերով նյութեր են պարունակում նաև օտարազգի հեղինակների, մասնավորապես Ա. Սախարովի[44], Ի. Բուրկովայի[45], Թ. դե Վաալի[46] և մյուսների աշխատանքները:

Վ. Կրիվոպուսկովն իր գրքում[47] փաստավավերագրական ճշմարտությամբ նկարագրում է ռազմական գործողության նախապատրաստական ընթացքը, «Օղակ» ռազմական գործողության ժամանակ

---

[37] **Խոջաբեկյան Վ.,** Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:

[38] **Դանիելյան Կ.,** Արցախը չսանձված նժույգ, Երևան, 2001:

[39] **Առստամյան Գ.,** Սպասում, Ստեփանակերտ, 1996, Իմ պատիվ, իմ ցավ, Ղարմետաքսկոմբինատ, Ստեփանակերտ, 2013, Իմ սերը ձեզ հետ է, ողջեր և նահատակներ, Երևան, 1998:

[40] **Արշակյան Ա.,** Արցախյան գոյապայքարը (1985-1992 թթ.), Երևան, 2004:

[41] **Կապուտիկյան Ս.,** Էջեր փակ գզրոցներից, Երևան, 1997:

[42] **Բեգլարյան Հ.,** Արցախ-Նամե, Ղարաբաղյան շարժում, գիրք Գ, Ստեփանակերտ, 2006:

[43] **Հակոբյան Թ.,** Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008:

[44] **Сахаров А.,** О Нагорном Карабахе, Ереван, 1996.

[45] **Буркова И.,** Геноцид карабахских армян, Рязань, 1995.

[46] **Ваал де Т**., Черный сад. Армения и Азербайджан между миром и войной, Москва, 2014.

[47] **Кривопусков В.,** Мятежный Карабах, Москва, 2007.

հայերի նկատմամբ կատարված բռնությունները, այնուհետև համառոտ տվյալներ հաղորդում ինքնապաշտպանական աշխատանքներին կանանց մասնակցության մասին:

Քննության առարկա հիմնախնդրին այս կամ այն չափով առնչվել են Զ. Բալայանը[48], Ռ. Ազիզբեկյանը[49], Ռ. Պետրոսյանը[50], Մ. Աղաջանյանը[51], Է. Մինասյանը[52] և ուրիշներ: Նշված հեղինակները, քննության առնելով Արցախի ազգային-ազատագրական պայքարը, թռուցիկ անդրադարձել են նաև կանանց:

Հայության, հատկապես կանանց նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների իրագործած բռնություններին, ջարդերին փաստերով, վկայությունների տեսքով անդրադարձել են մի շարք հեղինակներ: Այս տեսակետից կարևոր են Ի. Մոսեսովայի, Ա. Հովնանյանի[53], Ս. Շահմուրադյանի[54], Ք. Քոքսի, Ջ. Այբերի[55] և մյուսների աշխատանքները:

Թեմայի ուսումնասիրման տեսակետից ուշագրավ են նաև մի շարք ուսումնասիրություններ[56]:

---

[48] **Բալայան Զ.,** Դժոխք և դրախտ, Երևան, 1995:

[49] **Ազիզբեկյան Ռ.,** Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992:

[50] **Պետրոսյան Ռ.,** Արցախ, պատերազմ, զինադադար, Երևան, 2001, Արցախի պաշտպանության դիրքերում, Երևան, 1997:

[51] **Աղաջանյան Մ.,** Հաթերք, Ստեփանակերտ, 2012:

[52] **Մինասյան Է.,** Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2013:

[53] **Մոսեսովա Ի., Հովնանյան Ա.,** Բաքվի ջարդերը, Երևան, 1992:

[54] **Шахмурадян С.,** Сумгаитская трагедия в свидетльствах очевидцев, Ереван, 1989.

[55] **Кокс К., Айбнер Д.,** Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998.

[56] **Բալայան Վ.,** Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012: **Գևորգյան Ռ.,** Հավաքական ուժ, Երևան, 2005: **Գրիգորյան Ա.,** Հաղորտին գոյամարտի բովում, Ստեփանակերտ, 2012: **Ջանիկյան Գ.,** Մահապարտներ, Երևան, 2002: **Մկրտչյան Ա.,** Մաճկալաշենի քառուղիներով. Հուշապատում, Ստեփանակերտ, 2002: Արցախապատում, գիրք 3, Քարինտակի հերոսամարտը, (խմբագիրներ՝ Հովհաննիսյան Մ., Բաղրամյան Վ.), Ստեփանակերտ, 2013: Ձորավարը (խմբագիր՝ Հակոբյան Հ.), Երևան, 2006: Կյանքի էջերը (կազմողներ՝ Գրիգորյան Պ., Գրիգորյան Գ., խմբագիր՝ Աբրահամյան Հ.), Երևան, 2011: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Պետականության կայացումը դարերի սահմանագծում (կազմողներ՝ Ավետիսյան Հ. և ուրիշներ), Երևան, 2009: Հավերժական ջրբաժան (խմբագիր և կազմող), Երևան, 2003: **Բարսեղյան Ի.,** Ինքնապաշտպանական մարտեր

Գրքում, բնականաբար, փորձել ենք ընդգրկել բոլոր նշանավոր հայուհիներին: Կատարված աշխատանքը վկայում է, որ նշանավոր հայուհիների պակաս մեր ազգը չի ունեցել, և նրանք բոլորն էլ արժանի են փառքի և բարձր գնահատականի:

Գալիս են հայուհիների նոր սերունդներ, նոր ժամանակներում կատարվում են քաջակորով սխրանքներ: Ծանոթանալով անցյալի հերոսուհիների, ինչպես նաև նախնյաց ժառանգների, նաև ներկա նշանավոր հայուհիների գործելակերպին, ցուցաբերած սխրանքներին, նրանց հայրենապաշտ, հայապահպան գործունեությանը՝ այսօրվա հայուհիները, անշուշտ, հնարավորինս կաշխատեն և կփորձեն նմանվել նրանց, ինչը կնպաստի, որ հայ կանայք ազգի ոգին մշտապես վառ կպահեն: Այդ կապակցությամբ երիցս ճիշտ են մարգարեական Մեծն հայի՝ Գարեգին Նժդեհի հետևյալ խոսքերը. «Մայրերի ափի մեջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը»: Հետևապես հայուհիների դաստիարակությունից է կախված նրանց զավակների հայ լինելը:

Թող ներող լինեն նրանք, ում կենսագրությունները տեղ չեն գտել գրքում: Եթե ունեք լրացուցիչ տեղեկություններ հայ հերոսուհիների կյանքի և գործունեության վերաբերյալ, պատրաստ ենք վերահրատարակության ժամանակ հաշվի առնել և համալրել աշխատությունը նոր փաստերով: Նաև հայցում ենք ներողամտություն նկատված բացթողումների, անճշտությունների և վրիպակների համար:

Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանում (1988-1991 թթ. մայիս), ատենախոսության սեղմագիր, Երևան, 2015:

Арцах-Карабах, Энциклопедия, А-Е, Санкт-Петербург, 2007, Нагорный Карабах: Историческая справка, Ереван, 1988. **Агаджанян М.,** Нагорно-Карабахский конфликт в свете защиты прав человека: политические и правовые аспекты, Ереван, 2009. **Барсегов Ю.,** Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и коментарии, том 1, Москва, 2008. Нагорный Карабах: Историческая справка, Ереван, 1988. О некоторых политико-прововых аспектах проблемы, сборник статей, Ереван, 1994.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ա. ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ (ՖԻԴԱՅԱԿԱՆ) ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ

Մայրերի ափի մեջ պիտի
փնտրել ազգերի ճակատագիրը:
Գարեգին Նժդեհ[57]

Հայ կինը, առավելապես հայ մայրը, հայոց պատմության դժվարին, ճակատագրական ու վճռական պահերին անմասն չմնալով հայոց գոյապայքարից, իսկական հերոսուհի հայուհուն վայել կեցվածքով ու նմանությամբ խիզախության, քաջության, հերոսության և նպատակասլացության բազմաթիվ օրինակներ է ցույց տվել: Հայ մայրը համարվել է սրբություն սրբոց, եղել է առաքինի, ազնիվ ու համբերատար, ինչի համար միշտ մեծարվել, սրբացվել ու պաշտվել է հայության կողմից: Հայուհիներից շատերը ֆիդայիների հետ կողք կողքի պայքարել են թշնամու դեմ, գոյամարտի պահերին դարձել քաջ զինվոր, հերոսացել և կյանքի գնով պաշտպանել են իրենց տունն ու երեխաներին: Դարավոր ընդմիջումից հետո ազատ ապրելու համար պայքարը իրեն երկար սպասեցնել չտվեց. հայ կնոջ սխրանքները երևացին Սասունի, Զեյթունի, Վանի և այլ հերոսամարտերի ընթացքում: Հայ կինը ոչ միայն աչքի է ընկել իր սխրագործություններով կռվի դաշտում, այլ

[57] **Նժդեհ Գ.,** Ընտիր երկեր, Երևան, 2007, էջ 100:

նաև թիկունքում: Այստեղ նրա մասնակցությունը առավել նշանակալից է եղել: Նա ոչ միայն հսկել է հայդուկի թաքստոցը, անհրաժեշտ տեղեկություններ, հաց ու ջուր է հասցրել նրան, այլև վիրավորների վերքերն է բուժել ու գաղտնի նամակներ հասցրել, միաժամանակ զբաղվել է հետախուզությամբ և այլն:

Հայտնի ֆիդայապետ Սեբաստացի Մուրադի գեղջկուհի մայրը որդուն պատգամում էր քաջ լինել, նույնիսկ սպառնում էր՝ ասելով. «Հարամ կանեմ տուած կաթս, թե որ իյնաս թուրքերու ձեռքը»[58]: Նշված խոսքերը մեծ խորհուրդ ու բովանդակություն պարունակող հայրենասերի խիստ պատասխանատու խոսքեր են:

Հայտնի փաստ է, որ հայդուկային կռիվներին, ըստ ֆիդայական գործող կանոնների, հայ կանանց մասնակցությունն արգելված էր: Հայ տղամարդիկ դա համարել են անթույլատրելի՝ վտանգի չենթարկելով օջախի և ընտանիքի պահապանին: Բայց մյուս կողմից հայ կնոջ մասնակցությունը ավելի շատ ոգևորել է տղամարդուն՝ նրան մղելով անզիջում ու հերոսական կռիվների: Շատ հաճախ չգրված, բայց սրբորեն պահպանվող կանոնները չխախտելու նպատակով հայ կանայք կռիվներին մասնակցել են տղամարդու ծպտյալ հագուստով:

Հայ հայդուկային պայքարի հայտնի դեմքերից է եղել անզուգական հերոսուհի **Սոսեն՝ Սոսե Մայրիկը (Սոսե Վարդանյան)**՝ հայոց հերոսամարտի տարեգրության մեջ իր անփոխարինելի տեղն ունեցող հայդուկային պայքարի քաջակորով ասպետ, ֆիդայապետ Սերոբ Աղբյուրի կյանքի ու զինակից ընկերը:

Սոսե Մայրիկը ծնվել է 1868 թվականին Սասունում՝ Նեմրութ լեռան փեշերին գտնվող Թեղուտ գյուղում՝ բազմանդամ ընտանիքի տեր Մարգար Դրո-Աստանտուրի հարկի տակ[59]: Հազիվ 13 տարեկան էր, երբ սասունցի հայերի ավանդության համաձայն՝ ծնողները որոշել են

---

[58] **Դարբինյան Վ.,** Կին ազատամարտիկները, «Ասպար», փետրուար, N 2, Պէյրութ, 1993, էջ 3:

[59] **Աւո**, Սոսէ Մայրիկ, Յեղափոխական ալպոմ, Պէյրութ, 1965, էջ 38-39:

ամուսնացնել Սոսեին: Սակայն բարձրահասակ և գեղադեմ Սոսեն ըմբոստացման իր առաջին և բախտորոշ քայլն է կատարել, երբ ծնողների առաջարկած թեկնածուներին մերժելով՝ որոշել է կյանքը կապել Խչեենց Սերոբի հետ, որի անձն ու հայրենասիրությունը հեղափոխական տրամադրություններ ունեցող հայուհու համար մինչ այդ արդեն ներշնչման աղբյուր էին դարձել: Այդ տարիները քրդերի և թուրքերի անիրավությունների ու շահատակությունների դեմ հայկական ըմբոստացման առաջին բռնկումների, ինչպես նաև ապրուստի ապահովման դժվարին պայմանների հաղթահարման համար նաև պանդխտության մեկնելու ժամանակաշրջան էին:

1890-ականների սկզբին կնոջն ու անդրանիկ զավակին՝ Հակոբին թողած՝ Սերոբը մեկնել է պանդխտության: Ընտանեկան օջախի պաշտպանության հոգսը, անհրաժեշտության դեպքում նաև զենքով քրդական ամենօրյա գողությունների ու թալանի դեմ պայքարը Սոսեի մեջ կոփել են դիմադրողականության ոգի[60]: Այդ շրջանում երիտասարդ կինը խորապես տպավորվել է ամուսնու հորեղբոր՝ Առաքելի հայրենասիրական պատմություններից: Վերջինս մասնակցել է պատրիարք Ներսես Վարժապետյանի օրոք տեղի ունեցած ազգային եռուն կյանքին: Առաքել հորեղբոր հայրենասիրական խոսքերը նոր եռանդ ու նվիրում են ներշնչել կորովի, աշխույժ ու վառվռուն Սոսեին: 1895 թվականին, երբ Սերոբը Ախլաթ է վերադարձել, սկսել է քարոզել՝ ասելով. «Տղաք առանց հացի մնացեք, առանց զենքի մի՛ մնացեք»: Նա, կտրիճ երիտասարդներին հավաքելով, խումբ է կազմել, իր ունեցածը ծախել է և կնոջ ու զավակների հետ լեռ բարձրացել[61]:

Սոսեն միշտ եղել է ամուսնու գաղափարակիցն ու գործակիցը: «Դրոշակի» 1899 թվականի խմբագրականում կարդում ենք. «Սոսեն, որ կենսական ուժն ու զորավիգն էր իր ամուսնուն, նրա բացակայու-

---

[60] **Աւո**, Կին ազատամարտիկները, «Ասպար», փետրուար, N2, Պէյրութ, 1993, էջ 3:

[61] **Չիլինկիրեան Ե.**, Յիշատակներ Բաղէշի առաջնորդութենէս, Երուսաղէմ, 1925, էջ 45-46:

թյան ժամանակ հաճախ կղեկավարեր քաջամարտիկ խմբին»[62]:

Չնայած ֆիդայական պայքարի օրենքներով ֆիդային չպիտի ամուսնանար կամ ամուսնանալու դեպքում պետք է հեռու մնար ընտանիքից, սակայն Սոսեն, հակառակ ֆիդայիների առարկությանն ու Սերոբի հասցեին հնչած մեղադրանքներին, հավատարիմ մնաց ամուսնու՝ վտանգներով լի աստանդական կյանքին:

1898 թվականի հոկտեմբերին Բաբշենի կռվից հետո Սերոբը Սոսեի և մի խումբ ֆիդայիների հետ Մշո դաշտից անցել է Սասուն և հաստատվել Գելիեգուզան գյուղում[63]: Այդ խումբը հասել է ջարդի սպառնալիքի ենթարկված շրջանները և հերոսական խոյանքներով թշնամուն ցրել: Խմբի գործունեության ծիրը հետզհետե ընդարձակվել է Բաղեշից մինչև Ախլաթ: Լեռների բազե Սոսեի և նրանց ֆիդայական խմբի օրինակը վարակիչ է դարձել ոչ միայն տարոնահայության, այլև ամբողջ արևմտահայ երիտասարդության համար, որոնք նրանց հայրենյաց փրկության կոչին պատասխանել են և Սերոբի խմբի մեջ իբրև պայքարող մարտիկներ թրծվել:

1899 թվականին, երբ Սերոբը հայ դավաճան Ավեի կողմից թունավորվել և մատնությամբ շրջապատվել է քուրդ ցեղապետ Բշարե Խալիլի զինվորների կողմից, կնոջ՝ Սոսեի աջակցությամբ 8 ժամ անընդմեջ կռվել է: Այն բանից հետո, երբ թշնամու գնդակը վերջ է դրել Սերոբի կյանքին, Սոսեն վերցրել է նրա հրացանը և շարունակել է կռվել մինչև վերջ նույնիսկ այն բանից հետո, երբ իր աչքի առաջ սպանվել է անդրանիկ զավակը՝ 18-ամյա Հակոբը, նաև Սերոբի եղբայրները՝ Զաքարն ու Մխոն[64]: Սոսեն, արցունքները կուլ տալով, շարունակել է կրակի տարափը թշնամու վրա, մինչև ծանր վիրավորվել է: Երբ Ալի փաշայի զինվորները փորձել են սպանել վիրավոր Սոսեին, թուրք հրամանատարը, զարմացած հայ կնոջ հերոսությունից, արգելել

---

[62] **Չիլինկիրեան Ե.**, նշվ. աշխ., էջ 45-46:
[63] **Սասունի Կ.**, Պատմութիւն Տարօնի աշխարհի, Անթիլիաս, 2013, էջ 546-547:
[64] Տե՛ս նույն տեղում, էջ 558-559:

է՝ ասելով. «Այդ կինը իսկական դյուցազուն է»[65]: Նա նույնիսկ կառավարության ծախսերով բուժել է տվել նրա վերքերն ու նետել Բաղեշի բանտը:

Բանտից ազատվելուց հետո Սոսեն այցելել է ամուսնու գերեզմանին, չի հեռացել երկրից, մնացել ու ապրել է Վանում: Նա հաճախ է կրկնել հետևյալ խոսքերը. «Ինչպե՞ս այստեղ թողնեմ իմ Սերոբի որբ գերեզմանը… Այն ինչպե՞ս թողնեմ մեր թշնամու ձեռքում»[66]:

«Երիտասարդ, խարտյաշ ու գեղեցիկ այդ կինը՝ սլացիկ ու վայելուչ հասակով, թարմ ու վարդագեղ դեմքով, ուներ շատ հետաքրքիր մի նայվածք, պատկառազդու ժպիտ՝ պարզ, բայց հպարտ, քաղցր ու հեղինակավոր»,– այսպես է նրան բնութագրել Կարո Սասունին «Պատմություն Տարոնի աշխարհի» աշխատության մեջ[67]:

Ամուսնու, հրամանատարի և անվեհեր հայդուկապետի կողքին ազատասեր հայուհին կարողացել է դիմակայել բոլոր դժվարություններին և փառքի արժանի էջեր գրել հայ ֆիդայական շարժման պատմության մեջ:

Ի վերջո Սոսեն տարագիր հայության հետ անցել է Կովկաս, հետո՝ Արևելյան Հայաստան, տեսել ամուսնու երազանքի իրականացումը՝ Հայաստանի անկախ առաջին հանրապետությունը, ապա մեկնել Կ. Պոլիս, այնտեղից էլ՝ Եգիպտոս: Հայոց ազգային-ազատագրական պայքարի դյուցազնուհին վերջնականապես հաստատվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, որտեղ էլ 1953 թվականին կնքել է իր մահկանացուն:

«Սոսեն նույնպիսի ֆետայի մըն էր, ինչպէս իր խմբի որևէ զինվորը: Եւ ինչո՞ւ չէ, առաւելութիւն մը մեր յեղափոխական շարժման, որուն նուիրումով կը մասնակցեր հայ կինն ալ՝ Սօսէի եւ Շաքէի տիպարներ տալով Հայոց արիւնալի ազատամարտին»,– ասված է «Պատմություն

---

[65] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 559-560:
[66] Տե՛ս նույն տեղում, էջ 560:
[67] Տե՛ս նույն տեղում:

Տարոնի աշխարհի» աշխատության մեջ[68]:

Տարոն աշխարհի դյուցազունների կողքին մեր նորագույն պատմության այս դյուցազնուհին իր պատվավոր տեղն ունեցավ: Նրա վրիժառության բռունցքը միացավ մեր ազգային պահանջների համար մյուս հերոս հայուհիների բռունցքներին, և նրա օրինակով շատ կանայք ու աղջիկներ հերոսական մաքառումների ելան նենգ ոսոխի դեմ հայ գողգոթայի ճանապարհներին: Նման հերոսուհիներից էին Սասնո կռիվներում անմահացած կանայք, որոնք, ինչպես գրում էր Կարո Սասունին, «միշտ էլ աչքի են ընկել իրենց մարտունակությամբ, քաջությամբ, պատվախնդրությամբ, ազատատենչությամբ ու գաղափարական նվիրվածությամբ: Հնարավոր չէ ընկճել սասունցի կնոջ հոգին, որը ուզում է ապրել իր ազատ կամքով: Նույնիսկ դժբախտության ժամանակ, փոխանակ ողբ ու կոծի, զենք է վերցնում և կռվում է թշնամու դեմ»[69]:

Նշանավոր ֆիդայապետ Գուրգենը, Տարոնում տեսնելով սասունցի կնոջ բացառիկ առաքինությունները, յուրաքանչյուր գյուղում կանանց կազմակերպություններ էր հիմնել և խմբապետուհիներ նշանակել[70]:

Սասունցի կանայք լավ կազմակերպված էին ու իրար հետ մշտապես հաղորդակցության մեջ էին: Ահա թե ինչու, երբ 1900-ական թվականների սկզբներին թուրքերը որոշել էին Սասունի մի քանի գյուղերում, այդ թվում՝ Տալվորիկի, Շենիկի և Սեմալի մոտ զորանոցներ կառուցել, թուրք կամ քուրդ բանվորներ ու վարպետներ չգտնելով Մուշում՝ փորձել էին 500 զինվորների պաշտպանությամբ դրսի հայեր բերել Սեմալ, անմիջապես սասունցի կանայք մեծ ցույց էին կազմակերպել, հարձակվել էին արհեստավորների վրա, անեծք ու սպառնալիք թափել նրանց գլխին՝ ասելով, թե «եկել եք Ձեր ազգակիցների գերեզ-

---

[68] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 556:

[69] Տե՛ս նույն տեղում:

[70] **Ռուբէն,** Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 3, Թեհրան, 1982, էջ 228:

մանը փորելու»[71]:

Նրանց գործիքները ջարդելով՝ բանվորներին ու արհեստավորներին թույլ չէին տվել աշխատել և ետ էին ուղարկել: Զինվորները զարմացել էին՝ տեսնելով իրենց դեմ ելած անզեն կանանց: Կանանց այս համարձակ քայլը տվել էր իր արդյունքը, և ծրագրավորված զորանոցները չէին կառուցվել: Սասունցի կանայք համոզված էին, որ առանց ուժի ազատությունը անհասանելի երազ է, իսկ զենքն անհրաժեշտ է՝ ուժ ունենալու և իրենց ամուսինների կողքին կռվելու համար:

Սասունի 1894 թվականի ինքնապաշտպանության հերոսուհիներից էր Շենիկի իշխան Մոսե Գրքոյի մեծ եղբոր՝ Մարդոյի կինը՝ **հարս Շաքեն** (պապիս՝ Սիմոն Հակոբյանի հարազատ մորաքույրը – ընդգծումը իմն է՝ Մինասյան Է.): Նրա գլխավորությամբ դեռևս 1891 թվականին շենիկցի կանայք, տղամարդկանց կողքին կռվելով, քրդական ուժերին ստիպել էին նահանջել: Նրանց նշանաբանն էր «Մահ կամ ազատություն»: Տալվորիկցիները իշխան Գրքոյի ղեկավարությամբ գրոհի էին նետվել թշնամու դեմ: Կանայք քաջալերանքի խոսքերով իրենց ամուսիններին ու եղբայրներին մարտի էին մղել: Մի տեղում հրացանային կռիվ էր մղվել, մյուսում՝ սրի ու դաշույնի: Թշնամու դիակույտերը փռվել էին ամենուր[72]: Քրդական փոքրիկ նահանջը կարճ ժամանակում վերածվել էր խուճապահար փախուստի: Հաջորդ տարվա կռիվներում Անդոքի շրջանի այլ գյուղեր ևս օգնության էին հասել: Դիրքերը վերագրաված հերոսուհի կանայք հերոս տղամարդկանց հետ միասին հետապնդել էին թշնամուն՝ նրան քշելով Սպիտակ սարից հարավ[73]:

1994 թվականի օգոստոսին, ամիսներով կռվելով թշնամու գերազանց ուժերի դեմ, ռազմամթերքի սպառվելուց հետո նրանք շարունա-

---

[71] **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. 3, էջ 228:

[72] Տե՛ս նույն տեղում:

[73] Մինչև 1894 թ. ինքնապաշտպանական մարտերը կանայք Տիգրանակերտից զենք ու կապար տեղափոխելու գործում ևս իրենց մասնակցությունն են բերել և մեծ քանակությամբ սննդամթերք ամբարել:

կել էին դիմադրել՝ քարեր գլորելով, որի հետևանքով թշնամին շատ զոհեր էր տվել, չէր կարողացել դիրքերը գրավել: Երբ թշնամին պաշարել էր հայ կանանց, և փախուստը անհնարին էր դարձել, Շաքեն բարձրացել էր քարաժայռի վրա և խոսքն ուղղելով իր քույրերին՝ հորդորել էր լավ մտածել և գերի չընկնել քրդերի ձեռքը կամ ընդունել մահմեդական պիղծ օրենքները: Նա, վեհ գաղափարի համար նահատակվողի պայծառ ժպիտը դեմքին, զավակին կրծքին սեղմած, ժայռից իրեն նետել էր դեպի անհատակ անդունդը: Նրան հետևել էին հինգ տասնյակի հասնող կանայք: Ահա թե ինչպես է նկարագրում Ա. Նազարբեկը (Լեռնենց) հերոսուհի շենիկցի Շաքեի նահատակությունն իր «Սասուն» պոեմում.

«Նետում է իրան այն ժայռից անդունդ՝
Սեղմած իր գրկին իր սիրոյ ծնունդ
Եւ մէկն է, միւսը, երրորդն, յիսուն կին,
Որ հետեւում են նրա սուրբ քայլին…
Ո՛չ, դրանք, այդ կիներն մահկանացու չեն,
Դիցուհիներն են սրբացած արդէն»[74]*:*

Սասունցի շատ կանայք հետևեցին Շաքեի արարքին նաև 1904 թվականի Սասունի ինքնապաշտպանության օրերին և 1915 թվականի Մեծ եղեռնի ժամանակ: Նրա օրինակին հետևելով՝ քրդերի ձեռքը չընկնելու համար Շենիկ գյուղի մոտով հոսող Գելի գետն էին իրենց նետել Շաքեի երկու գեղատեսիլ քույրերը՝ Հեզիկն ու Ալթունը: Զայրացած քրդերը փորձել էին անգամ ծաղրուծանակի ենթարկել քույրերի դիակները[75]:

Շաքեի մյուս քույրը՝ Շուշանը, նույնպես հերոսուհի էր իր քույրերի նման: Սիմոն պապիս վկայությամբ՝ 1902 թվականին Տիգրանակերտ գնալու ճանապարհին, երբ 5 զինված քրդեր հարձակվել են նրա վրա, վերջինս խլել է նրանցից մեկի զենքը, տապալել է նրան գետնին, սպա-

---

[74] «Գաղափար», N 2, Ա տարի, սեպտեմբեր, Աթէնք, 1894, էջ 166:
[75] Սիմոն Հակոբյանի հուշերի անձնական արխիվից:

նել է մեկին, երկրորդին՝ դաշունահարել, ինչը տեսնելով՝ մյուսները փախուստի են դիմել: Պատահական չէ, որ հերոսուհու դիմապատկերը քանդակել են Տիգրանակերտի պարիսպների վրա, որը, պապիս վկայությամբ, իր մոր՝ անվեհեր ֆիդայի Հռիփսիմեի (Ռպե) հետ ամեն այցելության ժամանակ իրենք դիտել են մեծ հպարտությամբ[76]: Այդ անվեհեր հայուհին նահատակվել է 1904 թվականի Սասունի ինքնապաշտպանական մարտերում:

Հայ հայդուկային պայքարի հայտնի դեմքերից է **Աննա Մայրիկը**՝ ազգային և պետական նշանավոր գործիչ Կարո Սասունու մայրը: Նա ազգային-ազատագրական պայքարի շրջանում Խուլբի ամբողջ շրջանի, մասնավորապես Ահրոնք գյուղի ոգին էր: Աննա Մայրիկը Սասնա լեռնաշխարհի այն խիզախ կանանցից էր, որն իր ողջ կյանքը նվիրաբերել էր ժողովրդի ազատագրական պայքարին՝ մասնակցելով Սասունի 1894, 1904 թվականների ինքնապաշտպանական մարտերին: Այդ հերոսուհին իր ազդեցությունն ուներ լեռնաշխարհի բնակչության վրա. նրան հաշվի էին առնում ոչ միայն հայ իշխաններն ու քուրդ աշիրեթապետերը, այլև շրջանի թուրք կառավարիչները:

Մանկոյենց Աննա Մայրիկը ծնվել է 1847 թվականին Խուլբի շրջանի Ահրոնք գյուղում: Նա նշանավոր հայդուկապետ և հայ ազատագրական շարժման ականավոր ու առաջատար գործիչ Հրայրի (Արմենակ Ղազարյան) ազգականն էր:

Աննան Ահրոնքի իշխաններից Խաչեենց միակ աղջիկն էր, և նա բոլորի ուշադրությունը գրավել էր իր խելացիությամբ, կամքի ուժով և նախաձեռնությամբ: 1865 թվականին ամուսնացել է Մակոյենց իշխանական տան Ղազարի հետ[77]:

Ժամանակակիցների վկայությամբ՝ 1875-1915 թվականների ընթացում Աննա Մայրիկն առնչություն ուներ Տարոնի բոլոր վանահայրերի, աշիրեթապետերի և թուրք կառավարիչների հետ: Աննան իր զո-

---

[76] Սիմոն Հակոբյանի հուշերի անձնական արխիվից:

[77] **Սասունի Կ.,** Աննա Մայրիկը, «Հայրենիք», N 11, Բոստոն, 1953, էջ 8-9:

ռավոր նկարագրով, համարձակախոսությամբ և խելքով գրավել էր բոլորի ուշադրությունը: Հերոսուհու իսկական տիպար էր նա: 1880-1890-ական թվականներին բարենորոգումների հարցի շուրջ հաճախ քննարկումներ ու վեճեր է ունեցել Վարդան վարդապետի, Մ. Տամատյանի, հոգևոր առաջնորդ Ն. Խարախանյանի և նշանավոր այլ այրերի հետ:

1880 թվականին հայերը հրաժարվել էին քուրդ աղային վճարել «10 փարա» կոչվող հակաօրինական տուրքը, որի համար Միրզա աղան խաբեությամբ սպանել էր Ահրոնքի իշխան Գրգոյին[78]: Աննա Մայրիկի կոչով և գլխավորությամբ ոտքի ելած ահրոնքցիները հարձակվել էին Միրզա աղայի տան վրա և այրել ու հողին էին հավասարեցրել այն: Թեև Միրզա աղան, խույս տալով հայերի վրեժխնդրությունից, փախել էր լեռները, սակայն հայերի բարձրացրած աղմուկն ու ըմբոստությունն այնքան ուժեղ ու ազդու էին եղել, որ թուրքական իշխանությունները ստիպված բանտարկել և կախաղան էին հանել նրան: Այս դեպքերից հետո Աննա Մայրիկը դարձել էր պատմական անձնավորություն. նրա մասին տարբեր պատմություններ էին շրջանառվում և նույնիսկ երգեր հյուսվում: «Իշխան Գրգոյի մահէն ետք, Մանկոյենց տունն էր գիւղին առաջաւորը եւ ամենահարուստը: Երբ Միացեալ Ընկերութիւնը Տալորիկի եւ Խուլբի շրջաններուն համար Ահրոնքի մէջ դպրոց բացաւ, Աննա Մայրիկը իր վրայ առաւ ուսուցիչները եւ դուրսէն եկած աշակերտները տեղաւորելու գործը եւ գիւղացի կիները կազմակերպեց՝ անոնց կարիքները հոգալու համար: Մեծ նուիրում ունէր կրթական գործին հանդէպ եւ ուսումը հրամայական պահանջ կը նկատեր հայկական գիւղերուն համար:

Մեծ հետաքրքրությամբ կը հետեւեր ազգային կեանքին, կը մտածէր պատահող դէպքերուն մասին եւ իր առողջ դատողութեամբ կը վերլուծէր զանոնք»,– գրում է Կ. Սասունին:

---

[78] **Սասունի Կ.,** Աննա Մայրիկը, «Հայրենիք», N 11, Բոստոն, 1953, էջ 9:

Թուրքական բարենորոգումները անհասկանալի էին Աննա Մայրիկի համար:

1894 թվականին՝ Սասունի ապստամբության պարտությունից հետո, երբ իշխան Գրգոն սպանվել էր, իսկ Հրայրը ձերբակալվել, Աննա Մայրիկն անմիջապես գործի էր անցել: Խուլբի հայ գյուղերի մեջ տեղավորել էր նահանջող ուժերին, հալածվող ընտանիքներին ու որբերին, և այդ ձմեռ ինքն անձամբ էր հոգացել նրանց կարիքները:

Աննա Մայրիկը վայելում էր բոլորի վստահությունը, մեծապես հարգված ու սիրված էր իր վճռականության, քաջության ու հանդգնության շնորհիվ: Հնարավոր չէր ընկճել նրա ազատ, հպարտ, ըմբոստ ոգին: Այդ հայրենասեր կնոջը բնութագրող փաստարկներ և վկայություններ է բերում Կարո Սասունին: «1894 դէպքերուն ընթացքին,– գրում է նա,– ահրոնքցիներ լուր առին, թէ զինուած քիւրտերու խումբ մը Ահրոնքէն պիտի անցնէր եւ ճաշի պիտի մնար: Աննա Մայրիկ կարգադրեց, որ գիւղը ամբողջովին դատարկուի, եւ ժողովուրդը լեռ ապաստանի: Գիւղի մէջ ինք եւ իրեն օգնական 20 կիներ մնացին միայն: Հիւրասիրութեան պատշաճ պատրաստութիւնները տէսնելէ ետք, երբ զինեալ քիւրտերու խումբը հասաւ, առանձին, առանց երբեք ընկրկելու, Մայրիկը դիմաւորեց զանոնք: Ճաշէն ետք, երբ տեսաւ, որ զինուորներէն մէկը թանի պղինձէ թասը գաղտագողի ծոցը կը դնէր, օձիքէն բռնեց, եւ երբ քիւրտը գողութիւնը ուրացաւ, Աննա Մայրիկ շառաչուն ապտակ մը զարկաւ եւ աշիրէթապետին խիստ դիտողութիւն ըրաւ: Քիւրտ պարագլուխը յանկարծակիի եկաւ հայ կնոջ ցուցաբերած այս վարմունքէն եւ հիացումով դիտեց հպարտ հայուհիին իրաւունքի պաշտպանութեան կորովի կեցուածքը:

Ուրիշ առիթով մը Բիթլիսի նահանգապետը Ահրոնք եկավ տեղացի իշխանները կալանաւորելու համար: Իջեւանեցաւ Աննա Մայրիկենց տունը եւ առանց այլեւայլի շղթայի զարնել տուաւ իշխանները: Հիւրասիրութեան աւանդական օրէնքները յարգելէ եւ ընթրիքի սպասարկութիւնը կատարելէ ետք Աննա Մայրիկ հիւրերուն խնդրեց, որ ազատ

արձակէ իշխանները, բայց երբ նահանգապետը իրեն պատասխան անգամ չտուաւ, կատղած հայուհին վրան խոյացաւ, համրիչը ձեռքէն քաշեց, կտոր-կտոր ըրաւ, նետեց թուրքին երեսին եւ ապա օճախէն բոցավառ փայտ մը խլելով՝ պատրաստուեցաւ կրակի տալ վրայի շարուած վերմակները: Իր արժանապատուութիւնը բարձր պահելու համար կը նախընտրեր իր տունը այրել, քան թէ ընկրկիլ անարգ թշնամիին դիմաց: Սակայն ամուսինը՝ իշխան Ղազար, միջամտեց, եւ կինը, ամուսինին հնազանդելով, ակամայ հեռացաւ: Մայրիկին բուռն բողոքը բարերար ազդեցութիւն ունեցաւ. իշխանները ազատեցան, եւ յաջորդ օրն իսկ նահանգապետը գիւղէն հեռացաւ»[79]:

Աննա Մայրիկ նշանաւոր էր նաեւ գաղտնի գործեր գլուխ հանելու տեսակէտէն,– մեկ այլ տեղում գրում է Կ. Սասունին,– առասպելական էին վտանգի րոպէին իր վճռականութիւնն ու քաջութիւնը: Հրայր Դժոխքը յաճախ իրեն կը վստահէր գաղտնի գործերը, ինչպէս, օրինակ, Խուլբի շրջանին, պատուհաս Շաւէշ Չաւուշի մաքրագործումը: Բիթլիսի բանտէն ազատելէ ետք, Հրայր Ահրոնք եկաւ եւ Աննա Մայրիկին հետ երկարօրէն խորհրդակցեցաւ: Հրայրի մեկնումէն ետք, Մայրիկը զէնքի եւ կապարի փոխադրութեան իր երկու գործակատարները՝ Մանոն եւ Առքոն, կանչեց եւ իր թելադրութիւները ըրաւ: Անոնց անվրէպ գնդակն էր, որ Շաւէշ Չաւուշ տեղն ու տեղը սպաննեց»[80]:

Աննա Մայրիկն իր վեց որդիներին էլ դաստիարակել էր նախնիների սրբազան սկզբունքներով և ազգային գաղափարներով, որոնցից ամենանվիրականը հայրենիքի ազատությունն էր: 1900 թվականին՝ ամուսնու մահից հետո, Աննա Մայրիկը կարգադրել էր, որ անդրանիկ որդին՝ Աբրահամը, գյուղապետ դառնա, Գալուստը հեղափոխական գործերով զբաղվի, երրորդ տղան՝ Գևորգը, ուսուցչություն անի Ահրոնքի մեջ, իսկ երեք կրտսերները, այդ թվում՝ Կ. Սասունին, Պոլիս մեկնեն՝ ուսանելու: Զգալով թուրք-քրդական հարձակումների վտանգը՝ նա

---

[79] **Սասունի Կ.,** Յուշեր և վկայություններ, Պէյրութ, 1972, էջ 96-97:
[80] Տե՛ս նույն տեղում:

խորհուրդ էր տվել զենք կուտակել:

Աննա Մայրիկը ակտիվորեն մասնակցել էր նաև 1904 թվականին Սասունի ապստամբությանը իր Գալուստ և Աբրահամ որդիների հետ միասին: Ապստամբության պարտությունից հետո, երբ Գալուստը ձերբակալվել էր, շրջանի ղեկավար էր դարձել Աննա Մայրիկը և տղայի վրեժը լուծել: Նրա հրահանգով Ահրոնքի սահմաններին մոտեցող թշնամին կանգնեցվել ու հետ էր շպրտվել, որից հետո շրջակա հայկական գյուղերը ևս մնացել էին անձեռնմխելի:

Աննա Մայրիկը կազմակերպել էր նաև շրջանի կանանց, քանի որ նրանց տղամարդկանց մեծ մասը կա՛մ բանտարկված էին, կա՛մ ապաստանել էին լեռները, ուստի գործելու դեպքում անմիջապես կասկած կառաջացնեին: Այդ ժամանակներում կանանց գործունեության մասին Կ. Սասունին վկայում էր. «Այդ դաժան տարիներուն կիները գործի լծուած էին: Անոնք բնազդօրեն բռնուած էին իրենց կորսնցուցած կամ բանտարկուած այր մարդոց տեղը: Այդ կեանքի ընթացքին, ոչ միայն իրենց գիւղին մէջ դեր մը կը կատարէին, այլեւ կօգնէին յեղափոխական գաղտնի գործին՝ ամէն վտանգ աչք առնելով: Եւ այս երեւոյթը ուշագրաւ է Տարօնի բոլոր շրջաններում մէջ»: Կ. Սասունին ավելացնում է. «Աննա Մայրիկը Գալուստի բանտարկութենէն ետք, աւելի ընդարձակեց իր ժողովրդական գործունեութիւնը կիներու օգնութեամբ: Տղամարդիկ հեռու կը մնային կառավարական գործերէն. ոմանք իբր թե ուրիշ վայրեր մեկնած էին աշխատելու համար, ոմանք ալ լեռը գիւղական աշխատանքներ ունէին: Կը մնային քիչ թիւով ծերեր եւ պատանիներ: Կիները մէջտեղ կուգային տուրքը վճարելու կամ պատասխան մը տալու:

Այդ տարիներուն Աննա Մայրիկը շատ յաճախ կիներու ընկերակցությամբ բողոքի կերթար Փասուր՝ կառավարական կեդրոնը, երբեմն ալ այս ու այն պաշտօնեային դէմ բողոքի հեռագիրներ կուղղեր Պոլիս: Եւ երբ կը պատահէր, որ գայմագամը պաշտօնանկ ըլլար, ասիկա կը վարագուրէր Աննա Մայրիկի հեռագիրներուն:

Կիներու այս ժխորը ցոյցի բնոյթ կառնէր: Անոնք շատ յաճախ կը պոռային պաշտօնատարներու երեսին, *թե «Մեզ կախեցէք կառավարության շէնքին առջեւ, որպէսզի ազատուինք այս անտանելի վիճակէն...»*: Ու այսպիսով, երբեմն գիւղերու ծանր վիճակը կը թեթեւցնէին»[81]:

1908 թվականի ապստամբությունից հետո Գալուստը բանտից ազատվել էր: Մոր թելադրանքով տղան շարունակել էր շրջանների զինելու գործը՝ ինքնապաշտպանության պատրաստ լինելու նպատակով: Աննա Մայրիկի և Վարդան վարդապետի վեճերը շարունակվել էին: Աննա Մայրիկը մեղադրել էր վարդապետին, որը, թուրքերին հավատալով, ժողովրդին հեռու էր պահել մարտական վիճակից, կոչ չէր արել զինվելու, թեկուզ գաղտնի չէր հրահանգել նրանց: Վարդապետը պատասխանել էր, որ ժամանակները փոխվել են, պետք չէ կատաղեցնել գազանին, պետք է սպասել, մինչև որ նոր լույս կբացվի[82]:

Ինչպես վկայեցին հետագա դեպքերը, Աննա Մայրիկը երիցս ավելի ճիշտ էր ու հեռատես: 1915 թվականին այդ հերոսուհի հայուհին ու մեծ մայրը երեխաների հետ ձերբակալվեց: Մեծ եղեռնի օրերին չհամաձայնելով Վարդան վարդապետի հնազանդության կոչերին՝ որոշել էր իր 6 որդիների հետ կռվել մինչև վերջ: Սակայն զենքի բռնագրավումից հետո բանտ էր նետվել և իր երեք որդիների հետ Բիթլիս տանող ճանապարհին նահատակվել չարագործ ու արնախում թուրքերի ու քրդերի կողմից[83]:

«Ինչպէս փարաւոնական տաճարի մը մէջ օպելիքս մը բարձր ու անհասանելի կոթող մըն է, նոյնպէս ալ Աննա Մայրիկ մեր գաւառական յեղափոխական հայուհիներու փաղանգին անուրանալի մեծութիւններէն է: Ան իր հայրենասիրութեամբ, քաջութեամբ, ինչպէս նաեւ ամուսինին ու զաւակներուն կողքին իր գաղափարական նուիրումին

[81] **Սասունցի Կ.**, նշվ. աշխ., էջ 96-97:
[82] Տե՛ս նույն տեղում:
[83] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 83:

համար միշտ օրինակ պիտի ծառայէ գալիք սերունդներուն»,– գրել է Կարո Սասունին:

Հայոց գողգոթայի ճանապարհին մահացավ հայդուկ Սաքոյի կինը՝ **Մարիամը**: Վերջինս աչքի է ընկել 1894 և 1904 թվականների Սասունի ինքնապաշտպանական կռիվների ժամանակ: Ականատեսների վկայությամբ՝ քաջալերել է հայ կռվող ֆիդայիներին՝ դիպուկ կրակելով, դիրքից դիրք թռչելով, երկար լաչակը օդի մեջ ծածանելով և հեղափոխական երգեր երգելով[84]: Մարիամի տունը ապահով թաքստոց էր ազատագրական պայքարի մարտիկների համար: Բազմիցս անվախ հայուհին նրանց պատսպարել, մահից փրկել է, նույնիսկ ուղեցույցի դեր կատարելով՝ նրանց ապահով վայրեր է առաջնորդել:

1904 թվականի Սասունի ինքնապաշտպանական կռիվների հերոսուհիներից էր գելիեգուզանցի **Հռիփսիմե տատիկը (Ըռփո Տայո):** Նա 70-ն անց, կուրացած կին էր: Ամուսինը՝ Ավոն, Աղբյուր Սերոբի հայտնի ֆիդայիներից էր, որը սպանվել էր քրդերի կողմից: Իր նահատակ ամուսնու փափագի համաձայն՝ Հռիփսիմեն կամ Ըռփոն բոլոր ֆիդայիների Տայոն կամ Մայրիկն էր[85]: Նա շատ սուր լսողություն ուներ: Ականջը միշտ լեռների կողմն էր, որտեղից գալիս էին ֆիդայիների ձայներ: Նրա կյանքի իմաստը ֆիդայիներին ծառայելն էր: Յուրաքանչյուր ֆիդայու ճանաչում էր իր ձայնից: Նա բոլոր ֆիդայիների սիրելի և հոգածու մայրն էր: 1904 թվականի Սասունի ապստամբության օրերին, երբ կռիվը մոտեցել էր Տալվորիկին, Ըռփոն ուշադրությամբ հետևել էր հրացանաձգությանը և զանազանել ֆիդայիների և թշնամիների հրացանների ձայները: Քաջասիրտ Տայոն կարգադրել էր, որ կանայք ապահովության համար լեռ բարձրանան, վիրավորներին տեղափոխել էր տվել ձորակի մեջ՝ ապահով վայր, որտեղ իր պատրաստած դեղերով խնամել էր նրանց[86]: Կռիվների օրերին կա-

---

[84] **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. 3, էջ 72-73:
[85] **Զէյթլեան Ս.**, նշվ. աշխ., էջ 84:
[86] Տե՛ս նույն տեղում:

նանց հետ միասին սննդամթերքի պաշար էր հավաքել ու բարձրացել Սիմ (Կուրտիկ) լեռը՝ միանալով ինքնապաշտպանության կազմակերպիչներին: Նա որոշել էր ոչինչ չթողնել թշնամու ձեռքը: Հրդեհելով իր տունը և քանդելով մահացած ամուսնու հողաթումբն ու տոպրակի մեջ լցնելով նրա աճյունի մնացորդները՝ պաշարված վիճակում, մի ձեռքով աղջկա ձեռքից բռնած, մյուսով՝ ամուսնու նվիրական աճյունը՝ իրեն ցած էր նետել բարձր ժայռից: Նրան հետևել էին ուրիշ կանայք, որոնց համար ընտանեկան պատիվը վեր էր ամեն բանից[87]:

Սասունցի հերոսուհիներից էր Մշո Ղարս գյուղացի **Զրեն**, որը Սիմոն պապիս եղբոր՝ Խաչոյի կինն էր: Նա աչքի է ընկել քաջությամբ, հանդգնությամբ և վճռականությամբ, կազմակերպել է շրջանի կանանց խմբեր՝ մարզելով նրանց[88]:

Պատահական չէ, որ նրանցից յուրաքանչյուրն իր անելիքը գիտեր և երբեք խուճապի չէր մատնվում: 1905 թվականին Ղարսի կռվի ժամանակ, երբ Գևորգ Չաուշին թակարդի մեջ էր գցել պաշարող թշնամին, կռվի մասնակցող Զրեն, նկատելով թուրք սպա (կապիտան) վիրավոր Սուլեյմանին, որը փորձել էր Գևորգ Չաուշի վրա կրակել, կայծակնային արագությամբ հարձակվել էր թուրքի վրա, խլել թուրը՝ տեղն ու տեղը սպանելով նրան[89]: Ապա թուրը գլխավերևում պահած՝ ոգևորել էր ֆիդայիներին, կանանց խմբին նոր գրոհի տարել և հաղթանակով ավարտել մարտը: «Ամբողջ գիւղը ոտքի վրայ էր. նույնիսկ կիները տուներէն դուրս ելած՝ կռուին կը մասնակցէին: Օրիորդ Զրէն սպանուած Սիւլէյման կապիտանին թուրն առած կը հարձակէր թշնամիին վրայ: Այս իրարանցումը 15 րոպե չէ տեւած, բայց գիւղացիները խլէր են 100-ի չափ հրացաններ, փողոցներուն մեջ պառկեցուցեր են

[87] **Զէյթլեան Ս.**, նշվ. աշխ., էջ 84:
[88] **Ռուբէն,** նշվ. աշխ. հ 3, էջ 344-345:
[89] Տե՛ս նույն տեղում, էջ 345:

224 սպայ և ոստիկանական բարձր պաշտոնեայ եւ 60-ի չափ ալ պարզ զինուոր»,– գրում է Ռուբենը իր հուշերում[90]:

1915 թվականին Մեծ եղեռնի օրերին նա մասնակցել է ինքնապաշտպանական մարտերին: Զրեն խմբապետուհի Ռպեի (Ռբեի) հետ միասին (նրա հարսն էր՝ տղայի կինը) կռվել է թուրքական զորքերի և քրդական խուժանի դեմ և նահատակվել Անդոկ լեռան փեշերին թշնամու արկի պայթյունից[91]:

Իրենց մարտունակությամբ աչքի են ընկնել ոչ միայն սասունցի, հատկապես շենիկցի երիտասարդ կանայք ու աղջիկները, այլև տարեց կանայք: Այսպես, օրինակ, կանայք ամռանը Կուրտկ (Սիմ) լեռն են բարձրացել՝ անասունները ամառանոց տանելու, իսկ տղամարդիկ մեծ մասամբ մնացել են գյուղում՝ զբաղվելով դաշտային աշխատանքներով:

1914 թվականի ամռանը զինված 35 քուրդ եկել էր շենիկցիների ամառանոցը: Ըստ սովորության՝ կանայք նրանց հյուրասիրել էին կաթով, մածունով, թանապուրով ու պանրով: Ուտել-խմելուց հետո քըրդերն անպատվել էին հայ կանանց հյուրասիրությունը՝ 7 գդալ գողանալով: Այս նկատելով՝ տանուտեր Մոսեի ծերունի մայրը, զինված քրդերի առջև ընկրկելու փոխարեն, խիստ խոսքերով հանդիմանել էր գդալները գողացող քրդերին և պահանջել վերադարձնել, սակայն վերջիններից մեկն ապտակել էր ծեր կնոջը: Այս տեսնելով՝ կանայք հարձակվել էին քրդերի վրա, զինաթափել ու ստիպել էին վերադարձնել գդալները: Դրանից հետո էր միայն հաշտություն կնքվել: Սասունցի կանանց համար անհանդուրժելի էր դարավոր սրբությունները ոտնահարող պիղծ թշնամին: Զարմանալի չէ, որ նրանք պատվավոր մահը գերադասում էին գետնաքարշ կյանքից:

---

[90] **Ռուբէն,** նշվ. աշխ. հ 3, էջ 345:

[91] Սիմոն Հակոբյանի հուշերի անձնական արխիվից:

Երբ թուրք պաշտոնյաները սպանված իշխան Գրգոյին փոխարինած Միքայելին Մուշի բանտ են նետել, զայրացած շենիկցի կանայք Մուշ են ներխուժել՝ ստիպելով իրենց իշխանին ազատ արձակել:

Հայդուկային պայքարի հայուհիների մի մասի վերաբերյալ մեզ քիչ տեղեկություններ են հայտնի: Հայտնի են միայն նրանց անունները և գործելու վայրերը[92]: Այսպես՝ Սարգիս Կուկունյանի խմբում կռվել է հերոսուհի **Մաքոն**, Էյոփրի Քյոյում երկար տարիներ գործող Գրիգոր Տեր-Մկրտչյանի հայդուկային խմբում կռվել է **Մարիամ Մակարյանը**: Վերջինս հայտնի էր *Մարո* անունով, Մարզվանում հայտնի ֆիդայուհի էր **Մարինոսը**, ով գործել է Շմավոնի հետ[93]:

Հայտնի հայդուկ էր **Ագապին**: Նա քաջասիրտ Տուրբախի կինն էր: «Ագապի,– նկարագրում էր նրան ժամանակակիցը,– յեղափոխական խառնուածքով նուիրեալ հայուհի մըն էր..., իր արիութեամբ եւ հայրենասիրութեամբ արժանի զոյգն էր Տուրբախին: Ան իր ամուսնոյն պէս զէնքի սիրահար, գիտէր, նաև գործածել զայն յարմարն վայրկեաններուն»[94]:

Արևմտյան Հայաստանում ոչ մի քայլ, ոչ մի աշխատանք չէր կարող կատարել հայ ֆիդային՝ ազատագրական պայքարի գործիչը, եթե հայ կինը իր կյանքի գնով հանձն չառներ անսահման զոհաբերություն և տանջանք՝ պաշտպանելու համար ազատագրական պայքարի նվիրյալի կյանքը:

Հայտնի ֆիդայուհիներ էին Մոկունք գյուղից *Մոկունաց (Միրզոյան) Լուսոն*, Ցրոնք գյուղից՝ Քեռի Բարսեղի խմբում կռված *Շուշանիկը (Ցրոնքի Շուշան)*, Ալվառինջ գյուղից՝ *Խանիկը* և ուրիշներ:

Աչքի ընկնող կին հերոսուհիներից էր Մշո Մոկունք գյուղից **Եսթերը**: Նա կոչ է արել ոտքի ելնել թուրքի դեմ հանուն ազատության: Ես-

---

[92] **Սապահ-Գիլեամ**, Փոքր Հայքի յիշատակներ, մաս առաջին, Չիկագո, 1917, էջ 129-130:

[93] Տե՛ս նույն տեղում:

[94] Յեղափոխական ալպոմ, Տուրբախ (Յարութիւն Այվազեան), էջ 317:

թերը հանդգնորեն հրապուրել է քուրդ աղաներին, և կա՛մ ինքն է սպանել, կա՛մ էլ իրենց ցեղակիցների ձեռքով սպանել է տվել նրանց:

Եսթերը փոքր տարիքից որբ է մնացել և ապրել է իր փոքր եղբոր՝ Քյարիմի հետ: Ծայրաստիճան աղքատ լինելու պատճառով ստիպված իրենց տան արտերը գրավ էին դրել Քոթանենց Շերիֆ աղայի մոտ: Երբ վավաշոտ թուրքը Եսթերին տեսել է, ամեն միջոց գործի է դրել՝ նրան իր ձեռքը գցելու և հաճոյանալու համար[95]: Եսթերը, չկարողանալով հանդուրժել այս կացությունը, դիմել է հայտնի հայդուկներ Քեռի Ղազարի և Մկրտիչի խորհուրդներին: Երեկոյան, երբ Շերիֆ աղան հյուր է գնացել Եսթերի մոտ՝ գիշերը անցկացնելու, պատվախնդիր հայուհին, թուրքի քնելու ժամանակ դաշույն վերցնելով, ամբողջ ուժով հարվածելով, սպանել է նրան[96]: Երբ լուրը գյուղի ռեսին է հասնել, բոլոր գյուղացիները հավաքվել են և երդում տվել, թե ինչ էլ պատահի, Եսթերի գաղտնիքը պետք է հարգեն: Այդ հանդգնությունը ոգևորել է գյուղացիներին, որոնք, չնայած բազմապատիկ վնասներին, հպարտացել են Եսթերի հերոսությամբ: Նույն օրը Շերիֆ աղայի սպանության համար գյուղից 80 հոգի բանտարկվել են, որոնց մեջ էր նաև Եսթերը[97]:

Չնայած իրենց կրած չարչարանքներին և բանտի մեջ տարածված բծավոր տենդին՝ ոչ ոք որևէ խոստովանության չի արել: Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո Եսթերը և մյուս բանտարկյալներից ողջ մնացածները ազատ են արձակվել: Դրանից հետո Եսթերը միացել է թուրքերի և քրդերի դեմ զինված ելույթներին և նահատակվել Անդոկում 1915 թվականի ինքնապաշտպանական հերոսամարտերի օրերին: Այս դեպքը ևս ցույց է տալիս հայ կնոջ բարոյական բծախնդրությունը՝ ընդգծելով սեփական կամքի դեմ ամեն մի բռնություն արյունով սրբելու կարևորությունը:

---

[95] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 571:
[96] **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. 3, էջ 227:
[97] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 88:

Ցրոնքցի Շուշանը ազատագրական պայքարի ուխտյալ մարտիկներից էր՝ ազատամարտիկ ղեկավար Խուշոյի քույրը: Տարիներ շարունակ կազմակերպել էր շրջանի կանանց: Իրենց դեմքը յազմայով, բերանակապով ծածկող այդ կանայք առաջնակարգ սուրհանդակներ, լրտեսներ, հիվանդապահներ և ֆիդայիների համար զգեստներ կարողներ էին, որոնց պատրաստողն ու կազմակերպիչը Շուշանն էր[98]: «Ան չէր ամուսնացեր: Եթե շատեր ուխտ կ'ընեն և կոյս կը մնան յանուն կրօնի եւ վանքերու, այս աղջիկը նուիրուեր էր յեղափոխութեան, եւ այդ յետամնաց երկրին մէջ տեղ չունենալով տղամարդոց մէջ, կը գործէր գլխաւորաբար կիներուն հետ: Կիներէն սուրհանդակներ, լրտեսներ, եւ այլն կը պատրաստէր»,– գրել է Ռուբենն իր հուշերում[99]:

Շուշանը, ատրճանակը ձեռքին, մասնակցել է Ցրոնքի առաջին և Կուրավոյի կռիվներին: Երբ Աղբյուր Սերոբի հին զինվորներից Քեռի Բարսեղը, Սեդրակն ու Սարոն, 1901 թվականի հուլիսին իրենց ապահով թաքստոցից դուրս գալով, Կուրավո գյուղ են գնացել, մատնվել են և շրջապատվել ոստիկանության կողմից: Կացությունը օրհասական է դարձել ֆիդայիների համար: Երբ դարանակալ ցրոնքցի Շուշանը, տեսնելով այս ամենը, անսպասելիորեն հանել է ատրճանակը և կրակելով՝ պարպել այն ոստիկանների վրա, վերջիններս շփոթվել են: Այդ ժամանակ Քեռի Բարսեղի խումբը, դուրս գալով հարազատ գյուղի թաքստոցից, կռվի է բռնվել թշնամու դեմ: Սեդրակը սպանվել է գյուղի մեջ, Սարոն կռվելով հասել է Եփրատի եզերքը և այնտեղ նահատակվել, իսկ Քեռի Բարսեղն ու Շուշանիկը, կռվելով և իրենց հետքը կորցնելով, ազատվել են[100]. «Միակ մխիթարութիւնը այն էր, որ անոնք կրցած էին սպանել Եուսուֆ Չաուշը և Ֆեդուլլահը (Բդօ), որոնք Ցրոնքի կռուին Գուրգէնի եւ Մկրոյի սպանման մէջ մեծ դեր էին կատարած»,–

---

[98] **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. 2, Թեհրան, 1982, էջ 262:
[99] Տե՛ս նույն տեղում:
[100] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 578-579:

գրում է Ռուբենը[101]:

Մի այլ պատմության մեջ, երբ Գևորգ Չաուշն իր հավատարիմ հայդուկներից մեկի հետ Ցրոնք գյուղ է ժամանել, այնտեղ մեծ զարմանքով նկատել են, որ կանայք կարգապահ են և կազմակերպված: Նրանք իրենց երեսները յազմաններով ծածկել են, բերանները բերանակալով կապել: Նրանց ղեկավարն էր Շուշանը՝ հայտնի ֆիդայի Խուշոյի քույրը: Նրանք վճռական պահերին գիտեին առյուծի պես կռվել, սիրտ տալ տղամարդկանց, որպեսզի նրանց մարտական թափը կրկնապատկվի, իրենց շրջանի պատիվը միշտ բարձր մնա, և թշնամին չհամարձակվի մոտենալ նրա սահմաններին[102]:

Շուշանի կազմակերպած կանայք 1904 թվականի Սասունի ինքնապաշտպանության ընթացքում բոլորին հիացմունք էին պատճառում իրենց քաջությամբ ու նվիրվածությամբ: Նրանք ֆիդայիներին սիրտ էին տալիս և մղում խիզախումների: Շատ հաճախ քաջությամբ և ցուցաբերած խիզախություններով նրանք գերազանցում էին միմյանց: «Անոնք զէնք, ջուր եւ պաշար կը հասցէին կռուողներուն եւ իրենց ճերմակ սաւանները օդին մէջ շարժելով, կը գոչէին. – Հալլա, հալլա, դէհ խըպըտէք, դէհ խըպըտէք, յաճախ ալ կռիւին կը մասնակցեին»[103]:

Շուշանը անուրանելի հեղինակություն է վայելել ամբողջ շրջանի մեջ և մասնակցել է կուսակցական բոլոր կարևոր ժողովներին: Ս. Կարապետի անտառի մեջ 1906 թվականի հուլիս-օգոստոսին կայացած Դուրան-բարձրավանդակի շրջանային ժողովի 200-ից ավելի մասնակից պատգամավորներին թվարկելիս Ռուբենն առանձնացրել է 4 հայդուկ կանանց՝ «Ցրոնքի Շուշան, Մոկունաց Լուսօ (Միրզոյեան), Ալվառինջի Խանիկ եւ Խարսի Զըրէ»[104]: Նա, շարունակելով իր միտքը, նշում է. «Ասոնք սակայն փափուկ կընիկներէն չեն, եղած են կռիւներու

---

[101] **Ռուբէն**, նշվ. աշխ., հ. 3, էջ 228-229:
[102] Տե՛ս նույն տեղում, էջ 16, 267:
[103] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 86:
[104] **Ռուբէն**, նշվ. աշխ., հ. 4, Թեհրան, 1982, էջ 16:

մէջ, բազմաթիվ արկածներ տեսած, ու տղամարդոց չափ գործեր կատարած»[105]: Քննարկելով ընդհանուր ապստամբության և հայդուկային պայքարի հարցերը՝ ընդհանուր ժողովը «…սկզբունքով ընդունեց ուժերի կենտրոնացումը երկրի մեջ, ցույցը՝ Պոլիս և ծովեզրյա քաղաքները և մարտական-զինավարժական խմբեր կազմակերպելու ծրագիրը»[106]:

Այս վերջին խնդրի իրականացման էլ ձեռնամուխ են եղել ժողովին մասնակից կանայք, այդ թվում՝ Շուշանը: Նա իր հերոսական գործունեությունը շարունակվել է նաև ժողովից հետո՝ մինչև 1915 թվականը: Մինչև վերջ Շուշանը մնացել է ազատագրական կռիվների պատնեշի վրա և նահատակվել է 1915 թվականի Մեծ եղեռնի օրերին:

Հարյուրավոր են եղել այնպիսի կանայք ու մայրերը, որոնք լուռ ու մունջ, անվախ ու անտրտունջ պահել, պաշտպանել, խնամել ու անքուն գիշերներով հսկել են, ոչ մի չար աչք ու ոտք չթափանցի ազատագրական պայքարի մարտիների թաքստոցները, սուրհանդակների դեր են կատարել, զենքեր են փոխադրել, և այդ բոլորը՝ այնպիսի դժոխային պայմաններում, երբ ամեն քայլափոխի կարող էին զոհ տալ իրենց և իրենց ամբողջ ընտանիքի կյանքը:

Նշանավոր հայդուկ էր Ալվառինջ գյուղից **Խանիկը**: Նա աչքի է ընկել որպես իր շրջանի կանանց կազմակերպիչ: Խանիկն իր կանանց խմբով մասնակցել և մեծ հեղինակություն է ձեռք բերել Տարոնի՝ 20-րդ դարասկզբի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Նա ոչ միայն զենքով կռվել է դարավոր ոսոխի դեմ, այլև աչքի է ընկել հատկապես հետախուզական աշխատանքներում: Գիշերային հետախուզություններից մեկի ժամանակ Խանիկի խումբը մթության մեջ թշնամու մի ջոկատ է նշմարել, որը գաղտագողի շտապել է ֆիդայիների դիրքերին հասնել: Հերոսուհի կանանց հետ Խանիկի ջոկատը շրջապատել է թշնամուն և համազարկի տակ առել: Նրանցից ոմանք սպանվել են,

---

[105] **Ռուբէն**, նշվ. աշխ., հ. 4, էջ 16:
[106] Տե՛ս նույն տեղում:

իսկ մի մասն էլ՝ վիրավորվել, շատերն էլ գերի են ընկել[107]: Ահա նման հերոսուհի կանայք ետ չեն մնացել տղամարդկանցից: Նույնիսկ, երբ վտանգը մեծ է եղել, մահը անխուսափելի թվացել, նրանք երբեք չեն երկյուղել, այլ գերադասել և վճռել են կենաց ու մահու կռիվ տալ ու կռվելով մեռնել:

Ալվառինջի արյունալի կռվում Գևորգ Չաուշի տասը ֆիդայիները սպանվել են, և միայն ինքն է ողջ մնացել, քանի որ թուրք սպայի համազգեստ էր հագել, որի պատճառով թշնամին չի ճանաչել նրան: Գևորգ Չաուշը մեծ դժվարությամբ հասել է Խանիկի տուն և խնդրել, որ փախուստի ճանապարհը ցույց տա: Առանց խուճապի մատնվելու՝ խիզախ ու անվախ հայուհին ֆիդայապետին նախ գետնափոր թաքստոց է առաջնորդել, ապա այնտեղից հարևան գոմով անցկացնելով՝ անվնաս մի քրդի ուղեկցությամբ հասցրել է Մարինկա սարը՝ Մակարի մոտ[108]:

Ինչպես վերը նշվեց, Խանիկը ևս մասնակցել է ՀՅԴ կուսակցական կարևոր ժողովներին, շատ հերոսական կռիվներով է անցել հայտնի խմբապետների հետ միասին: Այդ ժամանակ նա իրեն երջանիկներից երջանիկ էր համարում: Ինչպես Արևմտյան Հայաստանի բոլոր կանայք, նա նույնպես թշնամուց հաշիվներ ուներ մաքրելու: Երբ հայ հերոս մարտիկները հավաքվել են, Խանիկն ավելի է գոտեպնդվել՝ զգալով իր տառապած ժողովրդի վերածնունդը, մտածելով, որ ազատությունը երազ չէ, այլ ուխտյալների արյամբ ձեռք բերվելիք իրականություն: Այս հերոս հայուհին ևս նահատակվել է 1915 թվականի Մեծ եղեռնի օրերին Սասունի ինքնապաշտպանական մարտերում:

Հայդուկային պայքարում իր նվիրվածությամբ աչքի է ընկել Մշո դաշտի սուրհանդակ **Մարիամը**: Նա Մշո դաշտի գյուղերից էր: Շատ փոքր տարիքից սիրել է իրենց գյուղի քուրդ Բեկի տղային՝ 17-ամյա

---

[107] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 87:
[108] **Ռուբէն**, նշվ. աշխ., հ. 4, էջ 350-351:

Սմոյին, որի հետ էլ փախել է դեպի Ալադաղի[109] լեռները՝ լքելով իր հայրենի տունն ու ծնողներին: Վերջիններս դեմ են եղել այդ ամուսնությանը: Սակայն քուրդը աստիճանաբար փոխվել է, հատկապես իրենց զավակի ծնունդից հետո: Նա սկսել է Մարիամին հալածել՝ «կեղտոտ գյավուր» անվանելով, և հաճախ ուրիշ քրդերի հետ հայկական գյուղերի թալանով է զբաղվել: Կինը այս ամենը հանդուրժել է հանուն զավակի սիրո: Սակայն զավակը որքան հասակ է առել, այնքան նմանվել է հորը և նույն անհարգալից վերաբերմունքը դրսևորել է մոր նկատմամբ: Երբ ռուսական զորքը գրավել է Ալաշկերտը և Ալադաղի վրա արշավել, Սմոն կռվի է գնացել Դրոյի կամավորական գնդի դեմ: Երբ Մարիամը աղաչել է, որ ամուսինը հայերի դեմ զենք չբարձրացնի, վերջինս ոչ միայն մերժել է կնոջ խնդրանքը, այլև նույնիսկ հրացանի կոթով կնոջը խփել է և հեռացել[110]: Զավակը ևս մոր խոսքերի վրա բարկացել է՝ ասելով, թե ինչպես են այդ «կեղտոտ գյավուրները» համարձակվել քրդերի դեմ կռվել և սկսել է մորը քարկոծել: Այս ամենը զայրացրել է Մարիամին: Նրա աչքերը կատաղությունից մթագնել են, ոչինչ չի տեսել և իր անցյալը սեփական ձեռքով քանդելու պատրաստակամությամբ անարժան զավակի վրա է խոյացել և տեղն ու տեղը սպանել է նրան: Ապա խելագարի նման մի կերպ հասել է իր հայրենի գյուղ, որտեղ շեն գյուղից միայն ավերակներ ու մոխրակույտեր է գտել՝ նեխած դիակներով լի[111]:

Մարիամը երդում է տվել իր կյանքի մնացյալ օրերը ազգին մատաղ անել՝ գործած մեղքերը քավելու և վրեժը լուծելու համար: Նա Մանազկերտ է մեկնել՝ աշխատանք փնտրելու: Այդ ժամանակ ռուսական սպայակույտի և հայ կամավորական խմբերի հետ կապ պահպանելու և այլ հարցեր լուծելու նպատակով որոշվել էր Իգդիրի մեջ հայկական «շտաբ» հիմնել: Այդ շտաբում իբրև հետախույզ է աշխատել Մա-

---

[109] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 87:
[110] Տե՛ս նույն տեղում, էջ 88:
[111] Տե՛ս նույն տեղում:

րիամը, որը քրդական տարազով ծպտյալ պտտվել է քրդական շրջաններում և լրտեսել[112]: Նա առաջնակարգ հետախույզ է եղել. չի հոգնել երբեք, առավոտից երեկո գործել է մեծ եռանդով: Երբ անհրաժեշտություն է առաջացել վստահելի ու կարող հետախույզներ ուղարկելու Տարոնում գտնվող Ռուբենի և Կոմսի մոտ, բոլորի ուշադրությունը կենտրոնացել է Մարիամի և երկու տիգրանակերտցի երիտասարդների վրա[113]: Նրանք հաջողությամբ են կատարել իրենց համար դժվար ու խիստ վտանգավոր առաջարկը: Ռուբենի և Կոմսի կարգադրությամբ Մարիամը Սասունում է մնացել, իսկ մյուս հետախույզները վերադարձել են ու ռազմական արժեքավոր տեղեկություններ փոխանցել:

Իր ուխտին հավատարիմ մնալով՝ Մարիամը Սասունի մեջ շարունակել է իր սկսած գործը: Ընդհանուր նահանջի ժամանակ ժողովրդի բեկորները անտառի մեջ են ապաստանել, երբ հանկարծ թուրքերն ու քրդերը հարձակում են գործել: Երկու կողմերի բուռն հրաձգությունը դադարել է, երբ մութն ընկել է: Թշնամու կրած վնասներն ու զբաղեցրած դիրքերը ճշտելու համար անհրաժեշտ է եղել հետախույզներ ուղարկել: Առաջին կամավորը եղել է Տալվորիկի իշխանական տնից քաջ Գյուլեն: Նա, խոսք առնելով, ասել է. «Ես ծեր եմ, մեռնիմ ալ՝ բան չի պակասի»[114]: Երկրորդ կամավորը Մարիամն էր: Նա լուռ ու մունջ ոտքի է կանգնել և Գյուլեին հետևել: Երկու կանայք ամբողջ շրջանը հետախուզել են և ոչ միայն լուր են բերել, որ թշնամին հեռացել է, այլև լքված զենքերն ու փամփուշտները հավաքել ու տեղափոխել են յուրայինների մոտ: Այս քաջասիրտ հայուհին նահատակվել է 1915 թվականին Սասունի վերջին օրհասական կռիվներում՝ իր պարտքը կատարած ու խիղճը հանգիստ:

Մեր ժողովրդի անցյալի կենաց ու մահու պայքարում հերոս հայուհին, հայ կինն ու մայրը շատ դեպքերում քնքուշ էակից վերածվել են

---

[112] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 88:
[113] Տե՛ս նույն տեղում:
[114] Տե՛ս նույն տեղում:

քաջ զինվորի, թևատարած արծվի, որը, իր կյանքի գնով թևերը փռելով, պաշտպանել է իր բույնն ու ձագուկներին: Ահա նման մայրերից էր մշեցի հերոս ֆիդայի **Իսմոն**: Նա ծնվել է Մուշ քաղաքից 8 կմ հեռավորության վրա գտնվող Գոմեր գյուղում, որն ուներ ընդամենը 80 տնտեսություն[115]: Գեղեցիկ աղջիկներին ու կանանց գոմերցիները դաշտ չեն ուղարկել, քանի որ հայուհիներին առևանգելու նպատակով հայկական գյուղերի մոտերքում վխտացել են թուրք և քուրդ բաշիբուզուկները:

Գոմերցի Իսմոյի ընտանիքը բաղկացած էր 42 շնչից: Գերդաստանի հպարտությունը գեղեցկուհի Վարդիկն էր, որին առևանգել էր քուրդ աշիրապետ, մարդասպան Ալոն: Իսմոն տիրապետում էր ձիավարությանը և ամուսնու հետ, տղամարդու շորեր հագած, երկար ժամանակ Ալոյից վրեժխնդիր լինելու նպատակով հետապնդել էր նրան լեռներում ու ճանապարհների վրա: Իսմոյի ամուսինը՝ Մկրտիչը, սպանել էր Ալոյին և միացել Գևորգ Չաուշի խմբին: Նա պատվիրել ու խորհուրդ էր տվել Իսմոյին զգույշ լինել ընտանիքի համար: Հաջորդ օրը Ալոյի վրեժը քրդերը լուծել էին Իսմոյենց գերդաստանից: Նրանք հարձակվել էին Գոմեր գյուղի վրա, այն ավերելուց հետո կոտորել էին Իսմոյենց գերդաստանը ու տունը հրկիզել:[116]:

Ամուսնու քույրը՝ Սանամը, որն ավարտել էր Մշո օրիորդաց դպրոցը, լավ տիրապետում էր թուրքերենին: Նա Իսմոյին և երեխաներին հագցրել է թուրքի շորեր, և որպես թրքուհիներ՝ նրանք փախուստի են դիմել:

Մեծ եղեռնի անիծյալ օրերին, երբ հայ գաղթականները կա՛մ բախտի բերմամբ փրկվել էին, կա՛մ սպանվել իրենց հողի վրա, Գոմեր գյուղը հայտնվել էր կրակի ու ծխի մեջ: 42 հոգանոց գերդաստանից ընդամենը 5 հոգի էր փրկվել՝ Սանամը, Իսմոն, դուստրը՝ Ռեհանը (5 տարեկան), կրտսեր որդին՝ 3-ամյա Համբարձումը, և 40 օրական

---

[115] **Բեգլարյան Ի.,** Հայդուկներ, Երևան, 2001, էջ 348:
[116] Տե՛ս նույն տեղում, էջ 349:

Առաքելը[117]: Փրկված գոմերցիները, ինչպես ամբողջ Մուշն ու Սասունը ապաստանել էին փրկարար Անդոկ լեռան վրա: Սոված, անհույս, յաթաղանի սարսափներն աչքերի մեջ՝ Իսմոն ու Սանամը մի կերպ երեխաներին հասցրել էին Անդոկի մութ անտառները: Կանանց փոքր խմբով երեխաների հետ հաց ճարելու նպատակով, երբ մի անգամ իջել էին ավերված գյուղերը, նրանց վրա հարձակվել էին զինված ասկյարները: Ոսկի որոնելու նպատակով նրանք քրքրել էին կանանց մազերը, հագուստը, գեղեցիկ աղջիկներին բռնաբարել էին, ուշաթափվել էր գեղեցկուհի Սանամը, Ռեհանը վախից փակել էր աչքերը և անշնչացել: Ասկյարներից մեկը հարձակվել էր Իսմոյի վրա: Վերջինս փորձել էր պաշտպանել երեխաներին, սակայն ասկյարը գնդակահարել էր փոքրիկ Համբարձումին մոր գրկում[118]: Ուշագնաց Իսմոն արթնացել էր փոքրիկ Առաքելի լացից: Ուշքի գալով՝ նա Ռեհանի, Սանամի և փոքրիկ Առաքելի հետ դարձել էր փրկիչ Անդոկը, որտեղ դիրք գրաված ֆիդայիները իրենց պաշտպանության տակ էին վերցրել անզեն բնակչությանը: Իսմոն այստեղ փոքրիկ Առաքելին թողել էր Սանամի պաշտպանությանն ու զենքը ձեռքին՝ ֆիդայիների հետ մարտադաշտ ելել: Ամեն անգամ թուրքի կամ քրդի նշանի տակ առնելիս աչքերի առաջ կանգնել էր արնաշաղախ որդին՝ Համբարձումը, որի մատաղ կյանքի փոխարեն հաշվել էր թշնամու զոհերի թիվը:

Ինքնապաշտպանական մարտերին մասնակցելուց հետո, երբ լուր էր հասել, որ ռուսական զորքերը գրավել են Մուշը, Իսմոն ստիպված երեխաների և Սանամի հետ իջել էր դեպի Մուշ, ապա ռուսական զորքի հետ բռնել էր Նախիջևանի ճանապարհը[119]: Նորից անասանելի դժվարություններ, ծանր վիճակ, սով, համաճարակ: Ծանր հիվանդություններից ապաքինված Ռեհանին նկատել էր ռուսական կայազորի պետը, որի օգնությամբ երեխան ուղարկվել էր ապահով վայր՝ բուժվե-

---

[117] **Բեգլարյան Ի.,** նշվ. աշխ., էջ 349:
[118] Տե՛ս նույն տեղում:
[119] Տե՛ս նույն տեղում, էջ 350:

լու: Ճանապարհի փորձությունների մեջ նա կորցրել էր երկրորդ երեխայի հետ կապող վերջին օղակը և մնացել էր միակ որդու՝ Առաքելի հետ: Այդ օրերին թուրքերը գերել էին Սանամին: Վերջինս իր թուրքերեն իմացության շնորհիվ փախչել էր գերությունից և ապաստան գտել Բուլղարիայում:

Իսմոն մարտական փորձ ուներ: Նա ստանձնել էր անպաշտպան կանանց ու երեխաների քարավանի ավագությունը[120]: Անքուն, անհանգիստ շրջում էր նրանց մեջ, հուսադրում նրանց դիմանալ մինչև Արաքսի փրկարար ափ հասնելը:

Երկար դեգերումներից հետո Իսմոն իր փոքրիկ խմբով միացել էր Անդրանիկ զորավարի հետևից գնացող գաղթականությանը: 1918 թվականին նրանք հասել էին Դիլիջան: Գաղթականության հետ էր նաև մեծ հայդուկապետ Սերոբի կինը՝ հերոսուհի Սոսեն: Շուտով լուր առնելով, որ Վանի և Վասպուրականի գաղթականությունը Պարսկաստանով գալիս էր Ռուսահայաստան, սակայն շրջապատված էր թուրքական զորաբանակներով, որոնք անխնա կոտորելու էին նրանց, նա իր զորքով և գաղթականների մի մասով հետ էր դարձել նորից Նախիջևան: Թշնամու աչքը խաբելու և նրան խուճապի մատնելու համար գաղթականների մեջ գտնվող բոլոր երիտասարդ կանայք և աղջիկները Անդրանիկի կարգադրությամբ զինվորական հագուստ էին հագել և ձի նստել, Իսմոն, որ վաղուց էր տիրապետում ձիավորության օրենքներին, փոքրիկ Առաքելին կապել էր մեջքին, յափնջին գցել էր ուսերին ու ձի նստելով՝ մտել էր առաջավոր զորաբանակի մեջ[121]: Անդրանիկի այդ ջոկատն անաղմուկ գրավել էր Ջուլֆայի կամուրջը: Համարձակ գրոհով նրանք գրավել էին նաև Խոյը, սակայն առաջանալ չէին կարողացել, ստիպված նահանջել էին: Արագընթաց վազքի ժամանակ Իսմոյի ձին ծառս էր եղել, արձակվել էին մեջքի կապերը, և երեխան ընկել էր ջրափոսը: Հնարավոր չէր եղել հապճեպ կանգնել, իջնել ու բարձրանալ

---

[120] **Բեգլարյան Ի.,** նշվ. աշխ., էջ 349:
[121] Տե՛ս նույն տեղում, էջ 350:

և խոնարհվել: Սպիտակ ձիավորը՝ զորավոր Անդրանիկը, նկատելով զինվորական հագուստի տակ ծպտված կնոջը, ակնթարթորեն գետնից վեր էր բարձրացրել մանկիկին ու մեկել նրան: Ջուլֆայից ու Նախիջևանից նորից հասել էին Գորիս ու Էջմիածին: Իսմոն Առաքելին՝ Հախվերդյանների տան միակ ճրագին սովից և համաճարակից փրկելու համար նրան հանձնել էր Լենինականի շվեդ-նորվեգական որբանոցը, մինչև կարողանար գլխավերևում ծածկ ունենալ[122]: 1927 թվականին Իսմոն երեխային ետ էր վերցրել: Վերջինս սասունցի Առաքել Հախվերդյանն էր:

Հերոսուհի ֆիդայու կյանքն ավարտվել է 72 տարեկան հասակում[123]: Հախվերդյաններից այժմ 17 սերունդ կա, որոնք շարունակում են Արևմտյան Հայաստանում զոհ գնացած 42 հոգուց բաղկացած հերոս հայուհի մոր՝ Իսմոյի այդ մեծ գերդաստանի նոր տոհմածառը՝ հակառակ թուրք և քուրդ ոճրագործների հայաջինջ ծրագրի:

Հարկ է ընդգծել, որ հայդուկները մեծ դեր են ունեցել նաև զենք տեղափոխելու գործում: Հայտնի է, որ 20-րդ դարասկզբին «Հայ հեղափոխական դաշնակցությունն» անցավ ընդհանուր ապստամբության համար ուժերի կազմակերպմանը: Ընդ որում՝ բուն «էրգրի» մարտական ուժերի ու ռազմամթերքի կենտրոնացման վայրեր ընտրվեցին Վասպուրականն ու Սասունը, որտեղ դրա համար կային առավել նպաստավոր պայմաններ: Նման մարտավարություն որդեգրեցին նաև «Հնչակյան» և «Վերակազմյալ հնչակյան» կուսակցությունները:

Ժողովրդի կազմակերպումը, զինումը և նրան ընդհանուր ապստամբության նախապատրաստելը պահանջում էին օտար աչքերի համար անտեսանելի, լուռ, համբերատար ու տքնաջան աշխատանք: Ազատագրական շարժման առջև ծառացած հրատապ խնդիրներից մեկը ապագա ապստամբության կենտրոններում ուժերի ու միջոցների համակարգված կենտրոնացումն էր: 1900 թվականից սկսած՝ ավելի

---

[122] **Բեգլարյան Ի.**, նշվ. աշխ., էջ 351:
[123] Տե՛ս նույն տեղում:

հաճախակի էին դարձել կանոնավոր զորքերի և համիդիե գնդերի հետ զինատար խմբերի բախումները: Դրանք թեև հայոց ազատամարտի պատմությանը նոր հերոսական էջեր էին ավելացրել, բայց պատճառ էին դարձել ազատամարտիկների, զենքի ու զինամթերքի մեծ կորուստների, հետևաբար լրջորեն վնասել էին «էրգրի» զինման գործին: Անհրաժեշտ էին զենքի ու զինամթերքի փոխադրության նոր ուղիներ ու մեթոդներ: Արդեն 1900 թվականից Ատրպատականից Վասպուրական ազատամարտիկների զենքի փոխադրումը սկսել էր իրականացվել փոքր քանակներով, հաճախ ջորեպանների կամ քուրդ շալակավորների միջոցով: Գրեթե նմանատիպ մեթոդներով սկսել էին գործել նաև Անդրկովկասից ձգվող Կարս-Բասեն-Խնուս-Սասուն և Երևան-Ալադաղ-Ախլաթ-Սասուն զինատար ուղիները: Հատկապես այս երկու ուղիներով Սասունը մինչև 1904 թվականը զգալի քանակությամբ զենք ու զինամթերք էր ստացել, թեև ոչ բավարար խոշոր ապստամբության համար[124]:

Կին նշանավոր և աննկուն զինատարներից էր հայդուկապետ Սեբաստացի Սաքոյի կինը՝ **Մարո Ղարաքեշիշյանը**: Այսօր քչերին հայտնի այդ հերոսուհու շնորհիվ բազմիցս զենք ու զինամթերք է փոխադրվել Արաքսից այն կողմ: Ծնվել և մեծացել է Թիֆլիսում՝ հայրենասեր հայի ընտանիքում: Դեռ փոքր հասակից ոգևորվել է արևմտահայ ազատագրական պայքարով: Մ. Ղարաքեշիշյանը պատերազմական տարիներին որոշել է իրեն նվիրել Արևմտյան Հայաստանի ազատագրման սուրբ գործին: Ահա թե ինչու դպրոցն ավարտելուց հետո նա դարձել է զինատար խմբի առաջատարներից մեկը: Նկատի ունենալով նրա հերոսական կերպարը՝ կարող ենք ասել, որ միայն Մարոյի նման նվիրյալները կարող էին Ռուսաստանից և Միջին Ասիայից այդքան մեծ քանակի զենք տեղափոխել հենց իրենց՝ ռուսների միջոցով և այն ծա-

[124] Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, խմբ.՝ պրոֆ. Հ. Սիմոնյան, Երևան, 2012, էջ 423:

ռայեցնել ազգային-ազատագրական պայքարի սուրբ գործին[125]:

Երբ Մահկանաբերդի արծիվը՝ Սևքարեցի Սաքոն, աշխուժորեն զբաղվել է զենք հայթայթելու և դեպի Ավետյաց երկիր տեղափոխելու բարդ ու վտանգավոր գործով, հանդիպել է շատ շատերի, դիմավորել է բազմաթիվ զինատար խմբերի, իսկ նրան անհրաժեշտ տեղեկությունները հասնել են Մարո Ղարաքեշիշյանի միջոցով[126]: Եղել է նաև ժամանակահատված, երբ զենք ու զինամթերք հայթայթող և ազգային-ազատագրական պայքարի ազնիվ ու անաղարտ զինվոր Մարոյի «մատը խառն է եղել ամեն ինչում»[127]:

Աննկուն հերոսուհի Մարոն 1900 թվականի սկզբին ձերբակալվել է Ռուսաստանից և Միջին Ասիայից զենք տեղափոխելիս, սակայն հայրենասեր հայորդու՝ Գևորգ Կարաքեշիշյանի տված կաշառքով Սամարղանդի զինվորական դատախազը բավարարվել է զենքը բռնագրավելով[128]: Սակայն Մարոն շարունակել է այդ նվիրական գործը Թիֆլիս վերադառնալուց հետո ևս:

1906 թվականին նշանավոր հայդուկապետ Սևքարեցի Սաքոյի հետ ամուսնանալուց հետո տեղափոխվել է Երևան: Ցավալի է, որ նրանց համատեղ կարճ կյանք էր վիճակված: Լեռնային կռիվներում հայդուկի մարմնի մեջ խրված գնդակը տարիներ հետո՝ 1909 թվականին, նրան գերեզման է տարել: Հենց նրա գերեզմանին սրբազան երդում տալով՝ Մարոն վերահաստատել է իրենց կյանքի գործը մինչև վերջ հասցնելու վճռականությունը: Ամուսնու մահից հետո նա կրկին Թիֆլիսում էր: Հովհաննես Թումանյանի օգնությամբ ծանոթացել է քաղաքի մեծահարուստների հետ, որոնց օգնությամբ հանգանակության գումարները հասցրել է աննախադեպ չափերի: Թիֆլիս-Ղազախ-

---

[125] **Առաքելյան Կ.,** Հայ կնոջ դերը հայդուկային պայքարում, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, Երևան, 2016, էջ 147:
[126] Տե՛ս նույն տեղում, էջ 147:
[127] **Բեգլարյան Ի.,** Մահկանաբերդի արծիվը, Սևքարեցի Սաքո, Երևան, 2010, էջ 40, 180, 250:
[128] **Մամյան Ի.,** Մեթերհեմ բանտի կալանավորը, Երևան, 1989, էջ 330:

Քարվանասար-Դիլիջան-Երևան-Դավալու ուղեգծով զինատար ֆուրգոնը Մարոյի ուղեկցությամբ հրացաններ ու փամփուշտներ է տեղափոխել Արևմտյան Հայաստան: Հայերեն, ռուսերեն, վրացերեն և թուրքերեն լեզուների տիրապետումը, բնածին համարձակությունն ու ծանր իրավիճակից դուրս գալու հնարամտությունը օգնել են նրան: Բայց միշտ չէ, որ մահացու վտանգը շրջանցել է խիզախ կնոջը: 1909 թվականի վերջերին նա ձերբակալվել է և շուրջ հինգ տարի անցկացրել Սամարղանդի բանտում[129]: Բանտից դուրս գալուց հետո քիչ բան է մնացել նրա երբեմնի շքեղ գեղեցկությունից: Մազերը կիսով չափ ճերմակել են, դեմքը պատվել է կնճիռներով: Միայն ուժեղ ու կրակոտ աչքերն են նույնը մնացել: Նրա մեջ պահպանվել է ըմբոստ, մարտնչող ոգին, և վերադարձից ընդամենը օրեր հետո կրկին առաջվա զինատարն էր: Երկու անգամ հաջողությամբ զենք է հասցրել Նորշեն: Նրա անունը վաղուց հայտնի էր ֆիդայական աշխարհում: Սևքարեցի Սաքոյի զենքի ընկերները, այդ թվում՝ ֆիդայապետ Նիկոլ Դումանը, իմացել ու ողջունել են, որ նա ազատվել է բանտից՝ շարունակելով իրագործել սրբազան երդումը:

1914 թվականին հոկտեմբերին՝ Սևքարից Դիլիջանով հրացաններ ու փամփուշտներ տեղափոխելիս, ավազակային հարձակման արդյունքում Մարոն կնքել է իր մահկանացուն: Նա կռվել է մինչև վերջ՝ նույնիսկ սպանելով այդ ավազակներից մեկին: Սակայն դարանակալ գնդակը վերջ է տվել այդ անվեհեր ու քաջասիրտ հայուհու կյանքին[130]:

Բիթլիսցի հարուստ ընտանիքի զավակ էր **Շողերը**, որի առաքելությունն ազգի ազատագրության սուրբ գործին զինվորագրվելն էր: Բիթլիսցի քաջ հայդուկ Մուշեղի հետ ամուսնանալուց հետո ավելի ոգևորված էր գործում: Հայ մատնիչ Խաչոյին սպանած Մուշեղի մասին տեղեկություն ստանալու համար ոստիկանները Շողերին ծեծել էին,

---

[129] **Մամյան Ի.,** նշվ. աշխ., էջ 331:
[130] Տե՛ս նույն տեղում, էջ 333:

սակայն ոչինչ չկարողանալով կորզել նրանից՝ բանտարկել էին[131]: Անսասան Շողերը, ժամանակակցի վկայությամբ, որպես «…էգ առիւծ մը՝ խրոխտ կեցուածքով», քաջաբար պատասխանել էր. «Եթէ ֆէտային կը փնտռեք, ան, մատնիչ Խաչօն սպաննելով, փախաւ…»[132]:

Ազատագրական պայքարում աչքի է ընկել նաև կին զինատար հայդուկ **Ծաղիկը**: Վերջինս զինակցել է Դերիկի վանքի հայդուկների հետ, մասնակցել է նաև Դերիկի 1894 թվականի ինքնապաշտպանական կռիվներին և զենքի փոխադրմանը: Զենքի փոխադրման գործում մեծ դեր է խաղացել նաև Ուզունլուծի (Յոզղաթ) հերոսուհի **Գոհարիկ Մարգարյանը**: 1890-1908 թվականներին Գոհարիկն ամենատարբեր միջոցներով և մեթոդներով զենք ու զինամթերք է տեղափոխել Արևմտյան Հայաստան՝ անգամ ջահերի մեջ թաքցնելով դրանք: Ի դեպ, այդ ջահ-թաքստոցներից մեկը պահպանվել է և այժմ Երևանի Զորավար Անդրանիկի անունը կրող ֆիդայական շարժման թանգարանում է[133]:

Կին հայդուկներից հայտնի են եղել նաև *Հայո-Հայաստանը, Սաթենիկ Մատինյանը (Ծաղիկ), Սաթո Օհանջանյանը, Սատան Սիմեյանը, Գայլ Շահենը, Խազալը, Մավին, Աղավնի Վարպետյանը, Սրբոն, Սևոն, Իսմոն* և ուրիշներ[134], որոնց գործունեության մասին, ցավոք, դարձյալ քիչ բան է մեզ հասել: Տարբեր աղբյուրներում հիշատակվում են նաև ֆիդայուհիներ *Խաթուն Գոնտրաջյանի, Կոբեցի Շուշանի, Մարիամ Չիլինգարյանի, Խանում Քեթենջյանի, Ազնիվ Պուճաքյանի* անունները:

Փոքր Հայքի ֆիդայուհիներից և Արամի մտերիմ գործընկերներից էր Սեբաստիայի Թոտորակ գյուղից **Էլմաս Դարբինյանը (Մալեմզյան)**, որին կոչել են **«Հորքուր».** «Հնչակեան բոլոր խմբապետները

---

[131] **Առաքելյան Կ.,** նշվ. հոդվածը, էջ 148:
[132] **Արշակ**, Հայ յեղափոխութեան արշալոյսի հսկաներէն, Պիթլիսցի Մուշեղ, Կ. Պոլիս, 1919, էջ 19:
[133] **Առաքելյան Կ.,** նշվ. հոդվածը, էջ 148:
[134] **Բեգլարյան Ի.,** Հայդուկներ, Երևան, 2010, էջ 384:

գիտէին, թե ով է Հօրքուրը, և ինչ է անոր դերը…»,– փաստագրել է ժամանակակիցը[135]:

Մալաթիայի գավառում Արիֆ բեյի գազանությունների դեմ պայքարում աչքի է ընկել ֆիդայուհի Վարդուհին: Երբ մի անգամ Արիֆ բեյն իր խմբով եկել է Մալաթիայի գավառ, տեսնել է գեղեցկուհի Վարդուհուն և առևանգել է նրան: Սակայն վերջինս կարողացել է ընթացքի ժամանակ ձիու վրայից թռչել և փախչել: Այնուհետև խուսափելով բեյի հետապնդումներից՝ եղբոր՝ Պետոյի հետ հեռացել է սարը, դարձել է հայդուկ, ստեղծել իր խումբն ու վրեժ լուծել[136]:

20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանը քիչ թե շատ տևական խաղաղության կարիք էր զգում՝ ժողովրդի վերքերն ու տառապանքներն ամոքելու, նրա որոշակի խավերի շրջանում առաջացած հուսալքության ու հիասթափության տրամադրությունները հաղթահարելու և զանգվածներին կրկին ազատագրական գաղափարներով բոցավառելու համար: Միայն այդ պայմաններում ժողովրդի կազմակերպման աշխատանքը կարող էր պսակվել հաջողությամբ: Մինչդեռ այդ տարիներին «էրգրում» ստեղծված բարդ ու հակասական իրավիճակը նպաստավոր չէր իրականացնելու նշված խնդիրները:

Ոգևորված հայ ազատագրական պայքարի ժամանակավոր տեղափոխությունից և հայոց ազատամարտի նոր մարտավարությունն ընկալելով որպես նրա թուլության ու պարտության նշան՝ թշնամին ամենուրեք հարձակման էր անցել: Մատնությունների հետևանքով նահատակվել էին Վասպուրականի և Տարոն-Սասունի ազատագրական պայքարի վերջին տարիների ճանաչված առաջնորդներ Վազգենը (1898 թ. հունվար), Գուրգենը (Բաղդասար Մալյան, 1899 թ. ապրիլ) և Աղբյուր Սերոբը (Սերոբ Վարդանյան, 1899 թ. հոկտեմբեր)[137]: Մինչդեռ նրանց փոխարինելը նոր գործիչներով միշտ չէ, որ սահուն է եղել:

---

[135] **Սիրվարդ,** Արամ Աչըգպաշեան (Հերոս Փոքր Հայքի), Փրովիտէնս, 1957, էջ 115:
[136] **Ալպոյաճեան Ա.,** Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ, 1961, էջ 866:
[137] Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 424:

Մյուս կողմից՝ իշխանությունների ակնհայտ հովանավորությամբ ուժեղացել էին հայերի նկատմամբ քրդական աշիրեթների ճնշումները, էլ ավելի ծանրացել էին տուրքերը, հաճախակի էին դարձել թալանը, սպանությունները, հողերի բռնագրավումները, հայերի արտաքսումն իրենց բնակավայրերից և դրանք մուհաջիրներով (Բալկաններից գաղթեցված մահմեդականներ) բնակեցնելը: Չբավարարվելով դրանով՝ կառավարությունն ապահովության համար հայկական գյուղերը լցրել էր զորքերով, որոնք, ապրելով հայերի հաշվին, պատուհաս էին դարձել նրանց համար: Ամեն ինչ արվել է՝ արմատախիլ անելու հայ ազատագրական շարժումը: Ստեղծվել էր հուսահատական մի վիճակ, որը երբեմն ժողովրդին դրդել էր ամենածայրահեղ քայլերի: Գործը նույնիսկ հասել էր նրան, որ 1901 թվականին Տարոնի հայության մեջ զանգվածաբար ուղղափառություն և այլ դավանանքներ ընդունելու շարժում էր սկսվել և համապատասխան դիմումներ էին արվել Վանի ռուսական հյուպատոսին[138]:

Նման պայմաններում ազատագրական շարժման մեջ խիստ դժվարացել էր հայդուկային պայքարի մարտավարության հաղթահարումը: Եթե ժողովրդական ապաստամբության կազմակերպման կողմնակիցները, ի դեմս Հրայրի (Սասուն-Տարոն), Վարդգեսի (Վասպուրական) և նրանց համախոհների, խուսափելով աղմուկից, անիմաստ համարելով մանր կռիվներն ու բախումները, ջանքեր էին գործադրել ժողովրդական զանգվածներին կազմակերպելու, զինելու և ընդհանուր ապստամբության պատրաստելու համար, ապա ի դեմս հայդուկային պայքարի մարտավարության կողմնակիցների՝ Անդրանիկի (Անդրանիկ Օզանյան), Գևորգ Չաուշի ու նրանց համախոհների, այդ թվում՝ հայդուկ կանանց՝ փորձել էին վրեժխնդրական խիզախ ձեռնարկումներով կանխել բռնությունները, ոգևորել ժողովրդին և նրան դուրս բերել հուսահատական վիճակից:

[138] Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 424:

Մարտավարական երկու գծերի հակադրությունը Տարոն-Սասունում շարունակվել էր մինչև 1902 թվականի գարունը, երբ որպես «Հայ հեղափոխական դաշնակցության» լիազոր՝ Սասուն էր հասել Վահանը (Վահան Մանվելյան): Վերջինս նպաստել էր Հրայրի և հայդուկների միջև տեղի ունեցող վեճերի դադարեցմանը[139]:

Հատկապես լայն արձագանք էր ունեցել Աղբյուր Սերոբի սպանությունն իրականացրած և ընդհանրապես Սասունի հայության դահիճ, քուրդ ցեղապետ Բշարե Խալիլի ահաբեկումը՝ մեծ ճանաչում բերելով Անդրանիկին և բարձրացնելով նրա հեղինակությունը ազատագրական կռվի մարտիկների շարքերում:

Դարասկզբին հայդուկների մղած կռիվներից ամենանշանավորը և ամենահերոսականը Ս. Առաքելոց վանքի կռիվն էր՝ Անդրանիկի գլխավորությամբ: Ունենալով ցուցադրական-քարոզչական բնույթ՝ կռվի նպատակն է եղել ժողովրդին դուրս բերել հուսահատական վիճակից և կրկին տերությունների ուշադրությունը հրավիրել արևմտահայության խնդրի վրա:

1901 թվականի նոյեմբերի սկզբին Անդրանիկն ու Գևորգ Չաուշը ավելի քան 30 հայդուկների և շուրջ 20 զինված գյուղացիների հետ մտել են Մուշից ոչ հեռու գտնվող Ս. Առաքելոց վանքը և այն վերածելով ինքնապաշտպանական ամրոցի՝ կռիվներ են սկսել վանքն անմիջապես պաշարած թուրք-քրդական մեծաքանակ ուժերի դեմ: Վանքը գրավելու վերջիններիս փորձերն ապարդյուն են անցել[140]: Կռիվների 11-րդ օրը թուրքական զորքերի հրամանատարությունը ստանձնած Բիթլիսի նահանգապետը բանակցություններ է սկսել՝ հայդուկների պահանջներն իմանալու համար: Ցանկանալով վերջ տալ իրենց համար անցանկալի կռվին՝ իշխանությունները պատրաստ են եղել անգամ որոշ զիջումներ անել: Նրանց հետ բանակցություններ վարող արաղցի քաջասիրտ սուրհանդակ քրդախոս մի հայուհու միջոցով

---

[139] Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 425:
[140] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 581-582:

Անդրանիկը, Գևորգ Չաուշն ու Հակոբ Կոտոյանը ներկայացրել են հետևյալ պայմանները՝ ներում շնորհել քաղաքական բանտարկյալներին, տասանորդի տուրքը հավաքել իրենց՝ գյուղացիների միջոցով, զինաթափ անել ու պատժել հայկական գյուղերում ավելորդ քրդական զինված բանդաներին, հայերին վերադարձնել նրանցից զավթված հողերը, վերացնել հայերից տուրք գանձելու քուրդ ցեղապետների իրավունքը և այլն: Այս պահանջներից մասամբ բավարարվել է միայն առաջինը, ուստի կատաղի կռիվը վերսկսվել է: Թուրքական բանակում շուտով համաճարակ է բռնկվել, մյուս կողմից՝ պաշարվածների զինամթերքը սպառվել է: Վերջին հանգամանքը ստիպել է, որ նոյեմբերի 27-ի գիշերը հայդուկները, սպիտակ սավաններով փաթաթված, աննկատ հեռանան վանքից: Ս. Առաքելոց վանքի կռիվը մեծ տպավորություն է թողել Տարոնի ու Սասունի հայության վրա: Միաժամանակ արձագանք գտնելով արտասահմանում՝ նոր թափ է հաղորդել արտաքին քարոզչությանը[141]:

Առաքելոց վանքի ձեռնարկը հաջողությամբ գլուխ բերելուց հետո ֆիդայիներն անցել են գաղտնի աշխատանքի. ռազմանյութ ու պաշար են հասցրել հայդուկներին, որոնց թիվը օրեցօր աճել է: Առաքելոց վանքի դեպքերից հետո՝ մեկ ամիս անց, Գևորգը իր խմբով մտել է Նորշեն, որտեղ հաջողությամբ հանգանակություն էր արվել՝ մոտ երկու հարյուր հինչյուն ոսկով զենք գնելու համար[142]: Սակայն խումբը մատնվել է Բենիկ Անդրիկյանի կողմից: Ոստիկանության զորքերի հրամանատար Հյուսեին աղան լուրն առնելուն պես, հարյուր ձիավորների գլուխ անցած, Սողգոմ գյուղի կողմից մտել է Նորշեն: Հյուսեինը, որը Բշարե Խալիլի հետ միասին Աղբյուր Սերոբի դեմ հարձակվող զորքի հրամանատարն էր, ընկնելով երկողմանի հատվածների տակ, սպանվել է, նրա զորքից սպանվել են նաև մեկ տասնյակից ավելի մարդիկ: Զորքի մյուս մասը, թողնելով ձիերը, պատսպարվել է գոմերի

[141] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 587:
[142] Տե՛ս նույն տեղում, էջ 589-590:

մեջ: Սակայն քաջարի հայդուկները՝ Գևորգը, Անդրոն ու Միսակը, սպանել են նրանց: «Տագնապալի կռվի այս ընթացքին հրաշալի դեր կը կատարեն երկու կիներ՝ Ասանէթ Փիրոյեան եւ Հռիփսիմէ Չաղոյեան: Գիւղի երիտասարդներն ու կիները հրապարակի վրայ կեցած ձիերու թամբերը վար կառնեն և ձիերը մերկ կը թողան, որպէսզի ոստիկանները չկարենան ձիերը հեծնել և ֆետայիները հետապնդել»,– գրում է Կարո Սասունին: Ֆիդայիները Գևորգ Չաուշի ղեկավարությամբ գյուղի մի խումբ երիտասարդների հետ անցել են Ալվառինջ գյուղ: Առավոտյան քրդերը և թուրքական կանոնավոր զորքը ներխուժել են Նորշեն և ահավոր խոշտանգումների դիմել: «Մահացաւ հերոսուհի Ասանէթն ալ՝ իր կրած չարչարանքներէ»,– գրում է ականատեսը[143]:

Ս. Առաքելոց վանքի կռիվը, ժողովրդի դժգոհության հետևանքով Սասունում թուրքական զորանոցի կառուցման փորձի ձախողումը և նմանատիպ այլ իրադարձություններ վկայում էին հայ ազատագրական պայքարի աշխուժացման մասին: Թեև 1902-1903 թվականներին հայդուկային գործունեությունն առերևույթ դադարել էր, և շուրջ երկու տարի արտաքին հանգստության քողի տակ կազմակերպչական եռանդուն գործունեություն էր ծավալել Հրայրը, սակայն նրա ծրագրերը կիսատ էին մնացել: Իշխանությունների համար գնալով ակնհայտ էր դարձել այն վտանգը, որը ներկայացնում էր Սասունը:

1902 թվականից սկսած՝ կառավարությունն ուժեր էր կենտրոնացրել Սասունի մատույցներում՝ նպատակադրվելով կանխել վերահաս ապստամբությունը: Հետևելով Սասունում ծավալվող դեպքերին՝ հայությունը նույնպես բնազդով զգացել էր այն վճռորոշ նշանակությունը, որը ստացել էր Սասունը հայոց ազատամարտի համար: Ակնհայտ էր, որ այստեղ էր որոշվելու հայ ազատագրական պայքարի ապագան: Հատկապես կովկասահայության շրջանում ծավալվել էր Սասունին օգ-

[143] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 591:

նելու շարժումը: Այդ նպատակով վերադարձ էր կատարվել զինված արշավախմբերի կազմակերպման գործելակերպին, որից հայ ազատագրական շարժումը նախորդ տարիներին միառժամանակ հրաժարվել էր: Դրանցից առաջինը Թորգոմի «Մրրիկ» ձիավոր խումբն էր, որը, դուրս գալով Կարսից և հաղթահարելով մեծ դժվարություններ, 1903 թվականի ամռան սկզբներին անվնաս հասել էր Սասուն՝ բարձրացնելով ժողովրդի տրամադրությունը[144]: Փորձառու և ընտիր մարտիկներից բաղկացած այդ խմբի հայտնվելը Սասունում բացահայտ մարտահրավեր էր իշխանություններին, որոնք շտապել էին օղակի մեջ առնել Սասունը՝ այն համարելով ապստամբ շրջան: Զգուշությունն արդեն ավելորդ էր: Հրայրն ու Վահանը մի կողմից նամակներով նոր օգնություն էին ակնկալել Կովկասից, մյուս կողմից՝ աշխատել էին հնարավորին չափ շատ մարտական ուժեր հավաքել Սասունում: Հայոց դյուցազունների միջնաբերդի վրա կրկին փողփողացել էր ազատաբեր ապստամբության դրոշը:

1903 թվականի աշնանից Սասունն ապրում էր միանգամայն ազատ կյանքով՝ պատրաստություններ տեսնելով դիմագրավելու գալիք փորձությունները: Ստեղծվել էր ապստամբությունը ղեկավարող զինվորական մարմին՝ Անդրանիկի գլխավորությամբ:

Սասունին էապես կարող էին օգնել Կովկասում ստեղծված նոր խմբերը, որոնք 1903 թվականի սեպտեմբերին անցել էին սահմանը: Սակայն Բարսեղ Թիրաքյանի (Խան) ձիավոր և Օննիկ Նովրուզի՝ 150 հոգուց բաղկացած հետևակ խմբերն արդեն սահմանագլխին կատաղի ու հերոսական կռիվների մեջ էին մտել թուրքական գերակշիռ զորքերի հետ, և խմբի մեծ մասը նահատակվել էր[145]: Հետագայում՝ 1904 թվականի գարնանն ու ամռանը, նման ճակատագիր ունեցան նաև մյուս խմբերը: Ապստամբության համար անպատրաստ և անգործունյա դիտողի դերում հայտնվել էր «էրգրում» ուժերի ու ռազմամթերքի

[144] Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 427:
[145] Տե՛ս նույն տեղում:

կենտրոնացման երկրորդ շրջանը՝ Վասպուրականը: Սասունը, չկարողանալով ստանալ իր համար նախատեսված օգնությունը, գործնականում մնացել էր միայնակ:

Կառավարությունը Սասունի դեմ արշավանքը սկսել էր 1904 թվականի գարնանամուտին: Թուրքական 10 հազարանոց զորքը գլխավորում էր ռուս-թուրքական նախորդ պատերազմում հռչակված Քեոսե Բինբաշին: Բացի կանոնավոր զորքերից՝ Սասունի դեմ դուրս էին բերվել նաև մի քանի հազար զինված քրդեր: Նրանց դիմագրավել էին միայն 200 փորձված հայդուկներ և շուրջ 800 զինված սասունցիներ:[146]: 1904 թվականի ապրիլի սկզբներին հակառակորդը վճռական գրոհի էր անցել: Իրենց համար հենակետեր ընտրելով Տափրք, Գելիեգուզան, Շենիկ, Իշխնձոր ու Տալվորիկ գյուղերը՝ սասունցիները համառ դիմադրություն էին ցույց տվել: Ապրիլի 11-ին հատկապես կատաղի կռիվներ էին տեղի ունեցել Շենիկի ճակատում, որտեղ թուրքական հեծելազորը, հանդիպելով հայերի համառ դիմադրությանը, ստիպված նահանջել էր: Առաջին անհաջողություններից հետո թուրքական հրամանատարությունը ապստամբության ղեկավարներին առաջարկել էր զենքը վար դնել: Որպես պատասխան՝ Անդրանիկն ու Հրայրը հայտարարել էին, որ զենքը վար կդրվի 1895 թվականին Մայիսյան բարենորոգումների ծրագրի իրականացման դեպքում: Թուրքական կողմը վերսկսել էր հարձակումը: Ապրիլի 13-ի կատաղի կռիվներում զոհվել էր Հրայրը: Անդրանիկի, Գևորգ Չաուշի և Սեբաստացի Մուրադի մարտիկների անձնուրաց գրոհները, սակայն, ստիպել էին թշնամուն, մեծ կորուստներ տալով, դարձյալ լքել մարտադաշտը[147]:

Կենտրոնական ճակատում՝ Գելիեգուզան գյուղի դեմ, թշնամին 12-14 հրանոթ էր դուրս բերել: Սկսվել էր Գելիեգուզանի մեծ կռիվը: «Թուրքերը վճռական քայլեր կառնեն Կէլիէկուզանը գրաւելու, բայց սասունցիները կատաղօրէն կպաշտպանեն իրենց լեռն ու ձորը: Հայ

---

[146] Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 427:
[147] Տե՛ս նույն տեղում:

կիները խմբովին դէպի դիրքերը կը վազեն, հաց ու փամփուշտ կը տանին կռուողներուն, կոգեւորեն զանոնք և մէկ դիրքի յաղթանակը միւս դիրքերուն կը հաղորդեն: Հոն են անոնք, հայ մարտիկներուն հետ, նահատակուելու վճռականութեամբ»[148]:

1904 թվականի ազատամարտի օրերին հերոսուհի կանանց սխրագործություններին արդեն անդրադարձել ենք: Թեև ապրիլի 19-ի անհավասար մարտն էլ հաջողություն չէր բերել թշնամուն, բայց ապրիլի 20-22-ին շարունակվել էին համառ գրոհները՝ մեծ զոհերի գնով քայլ առ քայլ գրավելով հայկական դիրքերը: Ապստամբության ղեկավարների համար պարզ էր, որ հնարավոր չէր երկար դիմադրել բավարար զենք ու զինամթերք չունենալու պատճառով: Անհրաժեշտ էր մտածել անզեն ժողովրդին կոտորածից փրկելու մասին:

Վահանի հրահանգով Սեբաստացի Մուրադը, 115 զինյալների հետ կռիվներով ճանապարհ բացելով, Սասունի անզեն բնակչությանը և վիրավորներին իջեցրել է Մշո դաշտ՝ խնդիր ունենալով այդ ընթացքում նաև զինամթերք ձեռք բերել՝ պայքարը շարունակելու համար[149]:

Թեև Գելիեգուզանից հետո՝ ապրիլի 23-ին, ընկել էր նաև Տալվորիկը, բայց դրանից հետո էլ Անդոքի և Քեփինի բարձունքներում ապստամբները 8-10 օր շարունակել էին անհավասար կատաղի մարտերը թուրքական զորքերի դեմ: Կռիվները տևել էին մինչև մայիսի կեսերը: Թշնամին, տիրանալով Սասունին, հաշվեհարդար էր տեսել այնտեղ մնացած խաղաղ բնակչության հետ՝ ավերի ու թալանի ենթարկելով, ամայացնելով գյուղերը:

Խոսելով 1904 թվականի Սասունի ապստամության մասին՝ Ռուբենը գրում է. «Մասնակի շատ հերոսութիւններ ու ողբերգութիւններ տեղի ունեցան ապրիլի 22-էն յետոյ Սասունի հովիտներուն մէջ: Պատահեցաւ, որ կեսուրը իր հարսին հետ կապուած միասին ջուրը նետուեցան՝ ազատելու համար իրենց նամուսը «անարգողէն»: Պատահե-

---

[148] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 622:
[149] Տե՛ս նույն տեղում, էջ 625:

ցաւ, որ հայ կիներ իրենք զիրենք ժայռերէն եղջերուներու պես վար նետեն ու ջարդուին: Պատահեցաւ, որ պարտուածներ իրենց օճախի վրայ հանգիստ նստած սպասեն գալիք մահուան, անվրդով կերպով ընդունելով սուիններու հարուածները: Բայց չպատահեցան խնդրանք, աղաչանք եւ թողութիւն յանցանք: Այդ էր պատճառը, որ թուրք հերոս Քէօսէ Պինպաշին սկսած էր սիրել այս հպարտ ժողովուրդը և յաղթողէն ու նուաճողէն դարձած էր այժմ հայ հերոսներուն պաշտպանը»[150]: Պահը հարմար գտնելով՝ սուլթանը ցանկացել էր Սասունի հայությանը մշտապես բնակեցնել Մշո դաշտում, բայց, ի վերջո, տեղի տալով սասունցիների սպառնալիքներին ու մեծ տերությունների հյուպատոսների միջամտություններին՝ նա հարկադրված հրաժարվել էր այդ ծրագրից:

Սասունի անկումով պայքարը չէր դադարել: Կռիվների ասպարեզ էր դարձել նաև Մշո դաշտը: 1904 թվականի մայիս-հուլիս ամիսներին, հայդուկները, այդ թվում՝ հերոսուհի կանայք, պարտիզանական մարտավարությանն ապավինելով, մեծ ու փոքր կռիվներ էին մղել թուրքքրդական կանոնավոր ու անկանոն զորամասերի դեմ: Նրանց գործողությունները հատկապես աշխուժացել էին Վասպուրականից զինամթերքի զգալի պաշարով Սեբաստացի Մուրադի վերադառնալուց հետո:

Բերդակի, Մկրագոմի, Դերենիկի, Գոմերի, Դերգեվանքի, Գոմսի, հատկապես Կուրավոյի կռիվները թեև հերոսական ավարտ էին ունեցել և հարյուրավոր զոհեր խլել թշնամուց, բայց այլևս չէին կարող փոխել իրադարձությունների ընթացքը: Կռիվները շարունակելը կարող էր վտանգի տակ դնել նաև Մշո դաշտի հայությանը: Դա ազատագրական պայքարի ղեկավարներին հարկադրել էր հրաժարվել պարտիզանական գործողություններից և հայդուկներին հեռացնել Տարոնից: Անդրանիկի գլխավորությամբ դեպի Վան անցնող հայդուկները Շամիրամում վերջին հաղթական կռիվներն էին մղել բազմաքանակ թուրքական ուժերի դեմ, ապա մոտենալով Վանա լճին՝ նավերով անցել էին

[150] **Ռուբէն,** Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 3, էջ 292:

Աղթամար կղզի: Վասպուրականի ազատագրական պայքարի ղեկավարներ Վահան Փափազյանի (Կոմս) և Իշխանի (Նիկոլ Պողոսյան) հետ խորհրդակցելուց հետո այստեղ որոշվել էր կազմակերպչական աշխատանքները շարունակելու նպատակով Գևորգ Չաուշին մի փոքրիկ խմբով հետ ուղարկել Մուշ և Սասուն[151]: Հայդուկների մնացած մասն անցել էր Պարսկաստան, ոմանք էլ հեռացել էին Կովկաս՝ հետագայում իրենց գործուն մասնակցությունը բերելով 1905-1906 թվականների հայ-թաթարական կռիվներին:

Սասունի 1904 թվականի ապստամբությունը հայոց զինյալ պայքարի վերջին զանգվածային պոռթկումն էր Արևմտյան Հայաստանի տարածքում: Չնայած գործադրված ճիգերին՝ այն մնաց մեկուսացված՝ չվերաճելով համազգային ապստամբության: Այդ պայմաններում կրկին առաջնային նշանակություն էին ձեռք բերել ժողովրդին կազմակերպելու, նրա ուժերը համախմբելու և ապագա իրողություններին նախապատրաստելու քայլերը, ինչն էլ շարունակվեց ընդհուպ մինչև 1908 թվականի երիտթուրքական հեղաշրջումը:

Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման վերաբերյալ 1903 թվականի հունիսի 12-ի ցարական հրամանագիրը նոր իրավիճակի առաջ էր կանգնեցրել հայությանը, որն ակամայից ներգրավվել էր ցարիզմի դեմ պայքարի ոլորտ: Զանգվածային բողոքի ցույցերով, զորքի ու ոստիկանության հետ բախումներով, տպավորիչ ահաբեկչական ձեռնարկներով, քաղաքացիական անհնազանդության ակտերով այս անգամ ռուսահայությունն էր յուրօրինակ և անհավասար պայքարի մեջ մտել ցարական իշխանությունների դեմ: Հայ կինը վերստին ծառացել էր բռնության դեմ: «Երբ Էջմիածնի միւռոնօրհնէքը գաղտնի կերպով կը կատարուէր՝ ժողովրդական ցոյցերէ խուսափելու համար, մեծ թիւով հայուհիներ խռնուեցան վեհարանին բակը՝ գոչելով. «-Կեցցէ՛ հայ ժողովուրդը, կորչի բռնակալութիւնը»: Ապա կիները պատգամաւորութիւ-

[151] Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 430:

նը մը ընտրեցին՝ կաթողիկոս Խրիմեան Հայրիկին ներկայանալու եւ խնդրելու համար, որ եկեղեցիին կալուածները երբեք չյանձնուին՝ խոստանալով իրենցմէ ակնկալուած ամէն զոհաբերութիւն ընել»,– գրում է Ս. Զեյթլյանը[152]: Մի քանի տասնյակ հազար հայ կանայք, գլխավորապես Էջմիածնի գավառից, կաթողիկոսից պահանջեցին երբեք զիջումների չգնալ ցարական կառավարությանը՝ առաջարկելով, եթե դրամ է պետք, իրենք պատրաստ են իրենց բոլոր զարդերը հանձնել կաթողիկոսին....[153]: Այդ պայքարը որոշ չափով հայության ուշադրությունը շեղեց թուրքահայ դատից:

1905 թվականի փետրվարին սկսված հայ-թաթարական կռիվներն արդեն օրակարգում հրամայաբար դրել էին արևելահայության ֆիզիկական անվտանգությունն ապահովելու խնդիրը: Այս դեպքում արդեն արևմտահայությունն էր շտապել օգնության ձեռք մեկնել արևելահայ եղբայրներին՝ իր լավագույն մարտական ուժերը նետելով հայ-թաթարական պայքարի ամենավճռական տեղամասերը:

Արևմտահայ մեծահամբավ խմբապետները՝ Սեբաստացի Մուրադը, Նիկոլ Դումանը, Վարդանը, Արմեն Գարոն, Սեպուհը, Համազասպը, Քեռին, Սմբատը, Հակոբ Կոտոյանը, Կորյունը, Առյուծ Ավագը և ուրիշներ, կարևոր ներդրում են ունեցել կովկասահայության տարած տպավորիչ հաղթանակներում՝ մեկ անգամ ևս ապացուցելով, որ հայ ազատամարտի նվիրյալների համար չկան արհեստականորեն գծված սահմաններ, և որ նրանց համար նույնական են ազգային շահերը, ընդհանուր ու միասնական է հայրենիքը:

1905 թվականին, երբ մեր հարևան թաթարները, քաջալերված ցարական կառավարության հրահրմամբ, ոտքի էին ելել՝ բնաջնջելու կովկասահայությանը, հայ կինը չէր ցանկացել մենակ թողնել հայ մարդուն, և ասպարեզ էր դուրս եկել՝ աջակցելու համար նրան: Հայ կի-

---

[152] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 15:

[153] **Գիւլխանդանեան Ա.,** Յեղափոխական հայուհիներ, առաջին մաս, Փարիզ, 1939, էջ 5:

նը ոչ միայն խնամել, խրախուսել էր հայ մարտիկներին, այլև օրերով, շաբաթներով ճանապարհ էր կտրել և գաղտնի միջոցներով զենք հասցրել նրանց՝ իրենց դիմադրությունը քաջաբար շարունակելու համար:

1905-1906 թվականների հայ-թաթարական ինքնապաշտպանական կռիվների ժամանակ զենքերի և ռազմամթերքի փոխադրության, հաղորդակցության ապահովմանը, ինչպես նաև խնամատարական աշխատանքներին իրենց գործուն մասնակցությունն էին բերել անձնվեր, անվախ ու քաջասիրտ հայուհիները, որոնք ամեն ինչ արել էին՝ ազգային արժանապատվությունը բարձր պահելու համար: Տիկին **Շեկ-Հովսեփյանը**՝ եռանդուն, համեստ, գաղտնապահ և խոհուն, նվիրյալ էր ազատագրական պայքարի, նաև ազատամարտի մասնակից էր[154]: Նահանգապետարանի պաշտոնյա լինելով՝ կարևոր ու խիստ գաղտնի տեղեկություններ է հաղորդել ՀՅԴ-ին:

Ինչպես Կարսի, այնպես էլ Բաքվի մեջ ամուսինը՝ Թադևոս Շեկ-Հովսեփյանը, կուսակցության կարևոր դեմքերից էր, իսկ տիկին Շեկ-Հովսեփյանը՝ նրա գաղափարակիցն ու գործակիցը[155]: Հայ թաթարական կռիվների առաջին օրը բոլոր դպրոցների վարչությունները աշակերտներին անխոհեմաբար ազատ էին արձակել՝ պատվիրելով, որ իրենց տները վերադառնան: Սակայն քանի որ կռիվները փողոցներում էին ընթացել, ուստի աշակերտները կրակի տակ էին մնացել: Երբ հրացանները լռել էին, հայերին հաջողվել էր ցրված աշակերտներին հավաքել ու իրենց տները հասցնել, իսկ հեռավոր թաղերում բնակվողներին իրենց մոտ պահել: Այս դեպքերի հաջորդ օրը, հակառակ թաթարների անվերջ կրակոցներին, հայուհու արտաքինով մի կին հևասպառ հայկական դիրքերն էր հասել: Տիկին Շեկ-Հովսեփյանը դպրոցական աղջկան գտնելու համար երկու և կես կմ տարածություն ոտքով էր կտրել: Երբ կազակներին խնդրել էր իրեն հայկական դիրքերը առաջնորդել, նրանք անտարբեր էին գտնվել: Անձնվեր մայրը, այս տեսնե-

---

[154] **Գիլխանդանեան Ա.,** նշվ. աշխ., էջ 64:
[155] **Զէյթլեան Ս.**, նշվ. աշխ., էջ 64:

լով, չէր կարողացել համբերել, միայնակ ու աննկատելիորեն անցել էր թաթարական շրջանը: Հազիվ էր մտել հայկական ազդեցության գոտին, երբ հանկարծ նկատել էր, որ ընկել էր ուժեղ կրակի տակ, սակայն հրաշքով փրկվել էր: Իր աղջկան ապահով տեսնելով՝ ցանկացել էր անմիջապես վերադառնալ: Երբ վտանգը հաշվի առնելով՝ ընկերները ընդդիմացել էին, նա շարունակել էր պնդել՝ ասելով. «Եկայ, տեսայ աղջկաս եւ հանգստացայ: Այժմ կարող եմ եւ պիտի գնամ իմ միւս երկու երեխաներիս եւ ամուսնուս դժբախտութիւնը բաժնելու: Երբ այնտեղ էի, նրանց մասին չէի մտածում, ամբողջ միտքս կորած աղջկանս հետ էր: Այժմ, երբ գտայ սրան, միտքս արդէն թռել է այն կողմը, եւ ես այժմ անկարող եմ մնալ»[156]:

Մեծ ջանքերի գնով միայն հնարավոր է եղել տիկինը երկու օր պահել: Նա անհամբեր էր՝ վերադառնալու իրենց հեռավոր Շամախի շրջանը[157]: Երբ հաղորդակցությունը կտրվել է այդ շրջանի և հայկական դիրքերի միջև, տիկին Շեկ-Հովսեփյանը մեկ անգամ ևս անցել է թաթար խուժանի միջով, ապահով հասել է ընկերների մոտ, կարևոր լուրեր է հաղորդել և ապա, հրահանգներ ու ռազմամթերք առած, կրկին վերադարձել: Այդ կնոջ՝ վտանգը արհամարհելու և մահը հեգնելու քաջությունը առասպելական նշանակություն է ստացել: Նրա անձնազոհության օրինակը կռվողներին մեծապես ոգևորել է և նորանոր խիզախությունների մղել:

Օրիորդ Շագիղանյանը պատկանում էր այն հարուստ ընտանիքների թվին, որոնք ամբողջովին նվիրված էին «Հայ հեղափոխական դաշնակցության» գաղափարներին: 1903 թվականից ի վեր նրանց տանը մշտական գաղտնի ժողովներ են գումարվել հեղափոխական գործիչների մասնակցությամբ: Այս մթնոլորտի մեջ մեծացած օրիորդը

---

[156] **Գիւլխանդանեան Ա.**, Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջը, «Հայրենիք» ամսագիր, N 11, Բոստոն, 1932, էջ 131:
[157] **Զէյթլեան Ս.**, նշվ. աշխ., էջ 65:

դարձել էր հայրենիքի ուխտյալ զինվոր՝ հանդուգն ու վճռական[158]: Նա, մտնելով ՀՅԴ-ի շարքերը, աչքի է ընկել աղջիկների խմբի մեջ իր կատարած աշխատանքներով: Նա Հռիփսիմե Մուշեղյանի մտերիմ ընկերուհին էր և գործակիցը: Վերջինս նշանավոր է դարձել գաղտնի աշխատանքներում իր ցուցաբերած անձնազոհությամբ, հայ-թաթարական կռիվների ժամանակ ռազմամթերքի փոխադրությամբ, ինչպես նաև Վանի օգնության ու խնամատարության գործին բերած իր մասնակցությամբ: Հետագայում Հռիփսիմեն խորհրդային համայնավորների կողմից աքսորվել է Սիբիր, և այնտեղ էլ մահացել է աքսորավայրի դժնդակ պայմաններում[159]:

Հայ-թաթարական կռիվների երրորդ օրը Բաքվի հայությունը կազմակերպված դիմադրություն է ցույց տվել Աբրահամ Գյուլխանդանյանի և Նիկոլ Դումանի ղեկավարությամբ: Վերջինիս խմբի կտրիճների հարձակումներից թշնամին սարսափի է մատնվել: Հակառակ այն իրողության, որ թշնամին անխնա կոտորել է հայ կանանց, մեծ թիվ են կազմել այն հայուհիները, որոնք ստույգ մահվան սպառնալիքի տակ հանդգնել են թաթարական թաղերից հայկական շրջաններն անցնել և զենք ու ռազմամթերք փոխադրել թաթարական մասի մեջ թաքնված իրենց ընկերներին: **Օրիորդ Շագիղանյանը** հենց այդ քաջերից էր: Հակառակ մոր թախանձանքներին՝ նրան հաջողվել է անցնել զինված թաթարների շրջանից և հասնել Ա. Գյուլխանդանյանի դիրքերը[160]: Նա ոչ միայն տեղեկություններ է տվել շրջանի դրության մասին, այլև փամփուշտ է պահանջել և տեղափոխել իրենց թաղամասի մարտիկների համար: Նրա ընկերները խորապես տպավորվել են օրիորդի աննկուն ոգուց, նրա զոհաբերության պատրաստակամության փաստից, այն հանգամանքից, թե ինչպիսի խիզախությամբ է նա անցել թշնամու վտանգավոր շրջանները՝ չվախենալով, որ ամեն վայրկյան կարող էին

---

[158] **Զէյթլեան Ս.**, նշվ. աշխ., էջ 65:
[159] Տե՛ս նույն տեղում, էջ 66:
[160] Տե՛ս նույն տեղում:

ճանաչել իրեն՝ քաղաքի ծանոթ սեփականատիրոջ աղջկան:

Հայ-թաթարական կռիվների ամբողջ շրջանում օրիորդը մասնակցել և իրականացրել է զենքերի փոխադրության գործը, վտանգի կարևորությունը ընդունելով՝ կարողացել է համապատասխան ռազմահնարներ կիրառել: Նա, իր թաղի զենքի գործածողներին համախմբելով, հարմար դիրքերում է տեղավորել: Օրիորդը այնքան մեծ վստահություն է վայելել ինքնապաշտպանության կազմակերպիչների շրջանում, որ հաճախ մասնակցել է ամբողջ թաղերի պաշտպանական ծրագրերի մշակմանը[161]:

Օրիորդ Շագիղանյանի օրինակը վկայում է, որ հայ կինը, վեր կանգնելով իր ընտանեկան զբաղմունքներից, հաղթահարելով իր երկչոտությունը, զգացումներով շարժվելու ձգտումը, կարողացել է կանգնել տղամարդու կողքին և նրան հավասար գաղափարական պայքար մղել:

Օրիորդ Աննան Անդրկովկասի հյուսիսային շրջանի ռուսախոս ընտանիքից էր: Հայրը ռուսական պետական պաշտոնյա է եղել, իսկ ինքը Բաքվի մեջ ուսուցչություն է արել[162]: Տարվելով ՀՅԴ-ի գաղափարներով՝ նա ցանկացել է օգտակար լինել իր ժողովրդին և ազատագրական պայքարի մեջ դերակատարում ունենալ: Առիթը չի ուշացել: Հայ-թաթարական կռիվների ընթացքում օրիորդ Աննան մարտիկների կողքին է եղել՝ պատրաստ ամեն զոհողության: Դաշնակցական գործիչ Սմբատ Մարգարյանի թելադրանքով օրիորդ Աննան Ա. Գյուլխանդանյանի դիրքերն է գնացել՝ զենք ու կռվողներ պահանջելու համար: Արտաքնապես ռուս կնոջ տպավորություն թողնելով, իբրև ռուս տանտիրուհի՝ հաջողությամբ կատարել է իրեն հանձնարարած դժվարին խնդիրը, մանավանդ որ թաթարները երբեք չէին կրակում ռուսների վրա: Օրիորդը երկար ժամանակ իբրև սուրհանդակ է գործել և բազմիցս անցել է թաթարական շրջանը և վերադարձել: Երբեմն

---

[161] **Զէյթլեան Ս.**, նշվ. աշխ., էջ 66:
[162] Տե՛ս նույն տեղում:

ծպտյալ իբրև ռուս սպասուհի, երբեմն իբրև ռուս տանտիկին և թաթարական թաղերը անցնող մարտիկ՝ զենք ու զինամթերք է տեղափոխել հայկական թաղեր ու անհրաժեշտ լուրեր հաղորդել[163]: Այնպես որ Աննայի գործունեությունը շատ մեծ օգտակարություն է ունեցել այդ վտանգներով ու դժվարություններով լի օրերին:

Բժշկուհի **Մարգարիտ Մելիք-Բեգլարյան-Օհանյանը** Ղարաբաղի նախկին մելիքների շառավիղն էր՝ Գյուլիստանի կալվածատեր Դավիթ Մելիք-Բեգլարյանի քույրը և դաշնակցական գործիչ և Խանասորի արշավանքին մասնակցած բժիշկ Քրիստափոր Օհանյանի կինը[164]: Իր հարազատների նման Մարգարիտը ևս ցանկացել է ծառայել իր ժողովրդին: Հայ-թաթարական կռիվների օրերին որոշել է դիմել ամեն նյութական զոհողության՝ հիվանդանոց բացել՝ վիրավորներին ու հիվանդներին բուժելու նպատակով: Դժբախտաբար, չի կարողացել այս ծրագիրը իրագործել, ժամանակավորապես մի քանի տներում մահճակալներ է տեղադրել տվել և անցել տենդագին աշխատանքի: Մարգարիտը կազմակերպել է գթության գործը, օրերով առանց հանգստի է գործել և ուրիշներին էլ գործի է դրել իր անձնական օրինակով: Երբ հայ-թաթարական կռիվները սաստկացել են, նա անցել է Գյուլիստանի իրենց կալվածքը և այնտեղ հիմնել հիվանդանոց, որտեղ խնամել է հիվանդներին, վիրավորներին, այդպես բազմաթիվ մարդկանց կյանքեր փրկել: «Ան հոգատար ու գուրգուրող մօր մը պէս կը խնամէր իր հիւանդներ եւ նոյնիսկ ամենէն ծանր պարագաներուն՝ ապրելու կամք ու կորով կը ներշնչէր: Մեր մարգարէաշունչ բանաստեղծին՝ Դ. Վարուժանի պէս, ինքն ալ «ոտնաձայնը» կ՚առնէր «արշալոյսի» մը, որ պիտի բացուէր հայ ժողովուրդին համար, վերջ դնելով ամէնի հառաչանքի ու արցունքի: Իր այս զօրաւոր հաւատքը կը փոխանցէր շուրջիններուն, եւ այս հոգեկան սպեղանին յաճախ աւելի ազդու կ՚ըլլար, քան ֆիզիքա-

[163] **Զէյթլեան Ս.**, նշվ. աշխ., էջ 66:
[164] Տե՛ս նույն տեղում., էջ 67:

կան խնամքը»[165]:

Այս նշանավոր, հերոս հայուհին, դժբախտաբար, իր մահկանացուն կնքել է երիտասարդ տարիքում՝ 1909 թվականին, Բաքվում:

Հայդուկային պայքարի նվիրյալներից էր **Սաթենիկ Մատինյան-Արղությունը (Ծաղիկ):** Սաթենիկը ծնվել է Ալեքսանդրապոլում: Նրա ծնողները գործի բերումով տեղափոխվել էին Թիֆլիս[166]: Նա չէր կարողացել հիվանդության պատճառով սովորել Թիֆլիսի օրիորդաց գիմնազիայում, սակայն հետագայում ստացել էր մանկավարժական կրթություն: Իրականում նա իր իսկական ուսումն առել էր իրենց տան գաղափարական մթնոլորտում: Սաթենիկի հայրը լուսամիտ և ազգասիրական գաղափարներով տոգորված պետական պաշտոնյա էր, մայրը հայ ավանդապահ կնոջ՝ ամուսնուն ու զավակներին նվիրված հայուհու տիպար էր: Եղբայրը՝ Նիկոլը, եվրոպական կրթություն ստանալով, աշխատում էր Թիֆլիսի ֆրանսիական հյուպատոսարանում որպես թարգմանիչ, իսկ քույրերը՝ *Նապալյան, Լուսիկն* ու *Միրանույշը*, բարձրագույն կրթություն ստացած աղջիկներ էին[167]:

Նատալյան դարձել էր նշանավոր հեղափոխական գործիչ՝ իրեն նվիրելով ՀՅԴ-ի գաղափարների տարածման գործին: Նա կուսակցության գաղտնի հանձնարարությունները կատարում էր ամենայն բարեխղճությամբ՝ միաժամանակ մեծ դեր խաղալով գաղտնի գրականության տարածման և փախստական հեղափոխականներ պահելու գործում: Չնայած Նատալյան շատ զրկանքներ էր կրել առանց տրտունջի, մի քանի անգամ բանտ էր նստել, բայց մնացել էր իր գաղափարական բարձրության վրա:

Նատալյայի գործունեությունն իր աչքի առաջ ունենալով՝ քույրը՝ Սաթենիկը, որոշել էր նմանվել նրան, ուստի պատահական չէ, որ մտնելով ՀՅԴ-ի շարքերը՝ նա բարձր պահեց դաշնակցական կին

---

[165] **Զէյթլեան Ս.**, նշվ. աշխ., էջ 58-59:
[166] **Գիւլխանդանեան Ա.,** Յեղափոխական հայուհիներ, առաջին մաս, էջ 44-45:
[167] Տե՛ս նույն տեղում, էջ 46-47:

գործչի անունը: Խիզախ ու ջերմ բնավորությամբ, աննահանջ կորովի տեր, վճռական, հանդուգն, անզիջող և անսպառ եռանդով զինված՝ նա հեռացավ հայրենի տնից, անցավ Պարսկաստան՝ այնտեղ աշխատելով ուսուցչուհու պաշտոնում[168]: Նվիրվելով ազատագրական գաղափարներին՝ նա հարմար առիթներ էր որոնում «էրգիր» անցնելու և այնտեղ գործելու համար:

«Չափազանցություն» չի լինի, եթե ասենք, որ հայ ուսուցչի լավագույն տիպը կատարելագործվել է Պարսկաստանում,– գրում է Ա. Գյուլխանդանյանը,– ապա ավելացնում՝ նշելով՝ «դաշնակցական ուսուցիչը ոչ միայն դաստիարակիչ էր հայ մանուկների և հայ հասարակության, այլեւ անսահման զոհաբերող էր: Նա գրչի հետ միասին գիտէր եւ սովորեցնում էր ուրիշներին զէնքի գործածութիւնը, պէտք եղած ժամանակ զէնքը ձեռքին նա քաջաբար «էրգիր» էր անցնում եւ անվախ չափւում էր թշնամու հետ»[169]:

Համարյա բոլոր մտավորականները, որոնք 19-րդ դարավերջին՝ 1890-ական թվականներին, եղել էին Պարսկաստանում, աշխատել էին որպես ուսուցիչներ՝ լինելով ազատագրական պայքարի նվիրյալ և հայտնի գործիչներ: Նրանց թվում էին Հովսեփ Արղությանը՝ Սաթենիկի ամուսինը, Հովնան Դավթյանը, Նիկոլ Դումանը, Սարգիս Օհանջանյանը, Բարսեղ Գրիգորյանը (Աբա-Մելիք), Տիգրան Ստեփանյանը, Վարդանը, Սարգիսը և ուրիշներ:

Սաթենիկն էլ, աչքի առաջ ունենալով նրանց օրինակը, չափազանց համեստ վարձատրությամբ նրանց նման ազգային գաղափարների տարածման համար դիմացել էր ամեն տեսակի զրկանքների ու զոհողությունների:

Հովսեփ Արղությանը, որ օրիորդ Սաթենիկի՝ իր ապագա տիկնոջ հետ Պարսկաստան էր անցել Երվանդ Ղազարյան ծածկանունով, նկարագրել է նրա կատարած լայնածավալ ազգային գործունեությունը

---

[168] **Գիւլխանդանեան Ա.,** նշվ. աշխ., էջ 46-47:
[169] Տե՛ս նույն տեղում, էջ 49:

հայ կանանց շրջանում: «Ո՞վ էր տեսել, որ Պարսկաստանի սահմանափակ կյանքին ենթակայ հայ կինը յաճախի թատրոն, ներկայ լինի դասախոսութիւններին ու երեկոյթներին[170]»,– գրել է Հ. Արղությանը:

Այդ ամենը կատարվել էր օրիորդ Սաթենիկի ջանքերով: Քանի գնացել, ավելի էր խորացել ժողովրդի լայն համակրանքը դեպի օրիորդ Սաթենիկը: Նա մոտիկ հարաբերություններ հաստատելով մի քանի հայ ընտանիքների հետ՝ իր ծանրախոհ և լուրջ բնավորության շնորհիվ կարողացել էր Թավրիզի բոլոր հայ կանանց մեջ տարածել ազգային գաղափարներ:

«Թավրիզի հայ կանայք, փաթաթված սև ու կապույտ ծածկոցների մեջ, շտապել են ժողովի, ոչ ոք չի կամեցել բացակայել: Բոլորը լուռ նստել են, խոսել է միայն օրիորդ Սաթենիկը: Այդ րոպէին նա կատարեալ առաքեալ էր, մարմնացած գաղափար, նորա հոգու խորքից դուրս էին թռչում հայրենիքի թշւառ ու դաժան կեանքի պատմութիւնները: Մոլեռանդ քարոզչի նման նա նկարագրում էր այն դժոխքը, որ Տաճկահայաստան էր կոչւում, ուր տառապում էր հայ ժողովուրդը ազգովին…

Ժողովականները յուզւած, զգացւած են, շատերը լուռ հեկեկում են… Յանկարծ ամեն կողմից լսւում է. «Օրիո՛րդ, մենք պատրաստ ենք, մենք ամէն ինչ կանենք, ինչ որ պետք է, ինչ որ դուք ցանկանում եք…[171]»»,– գրում է Ա. Գյուլխանդանյանը:

Այդպիսի նվիրյալ, հայրենասիրական աշխատանքի շնորհիվ Թավրիզի լավագույն կանայք օրիորդ Սաթենիկի միջոցով կապվել էին ՀՅԴ-ի հետ՝ չխնայելով իրենց աշխատանքներն ու լումաները: Օգտվելով այդ հաջողություններից՝ օրիորդ Սաթենիկը հիմք էր դրել Թավրիզի «Հայուհյաց բարեգործական ընկերության», որի նպատակն էր չափահաս օրիորդների մեջ կրթություն իրականացնել, հայրենասեր լավ մայրեր դարձնել նրանց, միաժամանակ կար ու ձև սովորեցնել:

---

[170] **Գիւլխանդանեան Ա.,** նշվ. աշխ., էջ 48-49:
[171] Տե՛ս նույն տեղում:

Այդ գործերից զատ՝ օրիորդ Սաթենիկը զարկ էր տվել Թավրիզի «Աբովյան» գրադարանին, մասնակցել էր հեղափոխական, ազգային և այլ նպատակներով կազմակերպված երեկույթներին, դպրոցի եկամուտների և հեղափոխական նպատակների համար դրամահավաք կազմակերպելու համար նա սիրողական մակարդակով բեմ էր բարձրացել և խաղացել առանձին դերեր: Օրիորդ Սաթենիկը, լինելով ազգային նվիրյալ և հայրենասեր գործիչ, հավաքված գումարի մի մասով զենք էր գնել և կազմակերպել դրանց տեղափոխումը Արևմտյան Հայաստան: Օրիորդ Սաթենիկը դրա հետ միասին պատրաստվել էր անցնել «էրգիր»՝ իր ուժերը այնտեղ օգտագործելու, ազատագրական պայքարին նվիրվելու համար:

Նիկոլ Դումանը, Իշխանը (Հովսեփ Արղությանը) և օրիորդ Սաթենիկը, թողնելով Թավրիզը, անցել էին Սալմաստի շրջան, ապա փոխադրվել Դերեկի պատմական վանքը, որտեղ մի խումբ հայդուկներից զատ՝ «էրգրից»՝ Վանից եկել էին նաև Պետոն և Աբա-Մելիքը (Բարսեղ Գրիգորյանը)[172]:

Հայդուկների այս խումբը Պարսկաստանի և «էրգիր» միջև կապը ապահովող հիմնական օղակն էր դարձել: Նրանց խորհրդակցության հավաքին մասնակցել էր նաև օրիորդ Սաթենիկը՝ Ծաղիկը՝ իբրև բոլորին հավասար անդամ: Այս խորհրդակցության ընթացքում Վանի վալին, տխրահռչակ Բահրի փաշան Շարաֆ բեյի քրդերի հետ, մի խումբ զինվորներով հարձակվել էր Դերեկի վանքի վրա՝ վանքը ավերակ դարձնելու, իսկ հայդուկներին սրի քաշելու նպատակով[173]: Սակայն փաշայի նպատակները չէին իրականացել, քանզի վանքում ապաստանած հայդուկները, այդ թվում օրիորդ Սաթենիկը, հերոսաբար կռվել էին, քաջաբար դիմադրել, քրդերին մեծ կորուստներ պատճառելով՝ նրանց ստիպել էին փախուստի դիմել: Այս կռվում իր քաջությամբ փայլել է Նիկոլ Դումանը՝ դրսևորելով կազմակերպչական և ղեկավար-

---

[172] **Գիլխանդանեան Ա.,** նշվ. աշխ., էջ 51:
[173] Տե՛ս նույն տեղում, էջ 52:

ման բացառիկ ընդունակությունները: Օրիորդ Սաթենիկը անվեհեր կերպով դիրքից դիրք էր անցել, խրախուսել մարտիկներին, փամփուշտներ մատակարարել նրանց և շատ հաճախ դիպուկ կրակոցներով գետնին էր տապալել թշնամուն[174]:

Շուտով օրիորդ Սաթենիկը փորձել էր Կարսի վրայով Արամ Արամյանի և Հրայր Դժոխքի հետ անցնել Արևմտյան Հայաստան, սակայն չէր կարողացել: Նա հաստատվել էր Սալմաստում, որտեղ կազմակերպվել և Սալմաստից-Վան էին անցել զինատար խմբերը: Օրիորդ Սաթենիկը՝ իբրև վարժուհի, բժիշկ Քրիստափոր Օհանյանի հետ կազմակերպել և իրականացրել էր «էրգիր» գնացող և վերադարձող զինատար և սուրհանդակների վերաբերյալ բոլոր գործերը[175]:

Խանասորի արշավանքի կազմակերպման գործում ևս օրիորդ Սաթենիկը կարևոր դերակատարում է ունեցել: Նա ոչ միայն ջերմ կողմնակից է եղել այդ արշավանքին՝ հակառակ ոմանց, այլև այդ գործին նվիրել է իր բոլոր ուժերը: Օրիորդ Սաթենիկը ոչ միայն օգտակար է եղել Սալմաստի շրջանում, այլև հաջողությամբ իրականացրել է զենքերի փոխադրման գործը մյուս շրջաններում ևս: Չափազանց դժվարին գործ էր Ռուսաստանի խորքերից զենքեր և այլ ռազմամթերք հասցնելը մինչև Թավրիզ, այնտեղի արհեստանոցում կարգի բերել և նույնպիսի զգուշությամբ փոխադրել Սալմաստ, իսկ այնտեղից՝ «էրգիր»[176]:

Սաթենիկը առնական կեցվածքով Խանասորի արշավանքին է ճանապարհել իր սիրելի էակին՝ Իշխանին (Հովսեփ Արղությանին), չնայած Խանասորի արշավանքի արդյունքները գոհացուցիչ չեն եղել: Արշավանքի մասնակիցները հետապնդումից խուսափելու համար տարբեր վայրեր են տեղափոխվել: Սաթենիկն ու Հովսեփ Արղությանը անցել են Թիֆլիս և այնտեղ էլ ամուսնացել: Սակայն ցարական կառա-

---

[174] **Գիլխանդանեան Ա.,** նշվ. աշխ., էջ 53-54:
[175] Տե՛ս նույն տեղում, էջ 56:
[176] Տե՛ս նույն տեղում, էջ 57:

վարությունը նրանց՝ իբրև վտանգավոր հեղափոխականների, մի քանի տարով աքսորել է Ռուսաստանի հյուսիսային շրջան՝ հեռավոր Վոլոգդա նահանգը: Աքսորավայրից վերադառնալուց հետո՝ 1914-1915 թվականներին՝ կամավորական շարժման ժամանակ, չնայած իր տարիքին, Իշխան Արղությանը կնոջ՝ Սաթենիկի խորհրդով ու քաջալերանքով նվիրվել է կամավորական շարժմանը՝ դառնալով ջոկատներից մեկի հրամանատարը:

Անասելի ողբերգությամբ քաոսի, խավարի միջից ծնունդ առավ Հայաստանի առաջին հանրապետությունը: Իշխան Արղությանը և տիկին Սաթենիկը դարձան հարապետության առաջին դեսպանն ու դեսպանուհին Պարսկաստանում, որտեղ նրանք մեծ նվիրումով աշխատեցին[177]: Իբրև տարագիրներ՝ հետագայում տեղափոխվեցին Փարիզ, որտեղ էլ իրենց ծերության օրերին կրեցին աղքատության դառը ճակատագիրն ու կնքեցին իրենց մահկանացուն:

Հայոց ազատամարտի նվիրյալ հայուհիներից էր **Մարիամ Մակարյանը (Մարոն):** Նա ծնվել է Դերբենտում 1872 թվականին[178]: Դեռ փոքր հասակից զրկվել է ծնողներից, որբացել ու մեծացել եղբայրների խնամքով: Ուսումը ստացել է տեղական գիմնազիայում: Դեռևս աշակերտական շրջանից աշխուժորեն մասնակցել է հայրենասիրական խմբակների աշխատանքներին: Կարդալով Ռաֆֆու վեպերը՝ նա համակվել է հայրենասիրական խանդավառությամբ, որին հաղորդակից է դարձրել իր ընկերուհիներին: Նրանք բոլորն էլ հանդիսավոր կերպով ուխտել են ծառայել իրենց թշվառ հայրենիքի ազատագրման գործին: Մարոն, չնայած իր նուրբ կազմվածքին, ուներ հզոր կամք, զվարթ բնավորություն, խստապահանջ էր և առնական: Նրա նպատակը «էրգիր» անցնելն էր և նրա ազատագրումը քուրդ և թուրք ոճրագործների ձեռքից: Այդ նպատակով 1894 թվականին նա մեկնել է Թավրիզ իբրև

---

[177] **Գիլխանդանեան Ա.,** նշվ. աշխ., էջ 58-60:
[178] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 35:

ուսուցչուհի: «Հոգածու քրոջ պէս կը գուրգուրեր «էրգիր» մեկող կամ վերադարձող հայդուկներուն վրայ[179]»:

Մարոն ոչ միայն պատրաստում էր «էրգիր» անցնող խմբերի իրերը, այլև իր ոգևորիչ խոսքերով բարձրացնում էր նրանց պայքարի ոգին, ազդում էր հոգեկան ապրումների վրա, մղում հերոսության և մեծ զոհողությունների: Նա մասնակցություն ուներ նաև սահմանագլուխ զենք ու զինամթերք փոխադրելու գործին: Նրա բնակարանը վերածվել էր զենք-զինամթերքի պահեստի և թշնամու հետապնդած ընկերների թաքստոցի[180]: Նա, ժամանակակիցների բնութագրմամբ, «Հայուհյաց բարեգործական ընկերության» կարի արհեստանոցի ազգային ոգին էր. ոչ միայն հայուհիներին կարի և նուրբ ասեղնագործության հազարամյա գաղտնիքներն էր սովորեցնում, այլև խմբեր էր կազմում և ընթերցանություններով ու դասախոսություններով նրանց մեջ հայրենասիրություն դաստիարակում և ազատագրական պայքարի գաղափարներ ներշնչում[181]:

Զենքերի փոխադրությունը կազմակերպելու ժամանակ Մարոն ծանոթացել էր զենքի արհեստանոցի հիմնադիր և հմուտ զինագործ Արիստակես Զորյանի (հեղափոխական ծածկանունով՝ Կարոյի) հետ (Ռոստոմի եղբայրը): Երկու գաղափարակից ընկերները խոր սիրով կապվել էին միմյանց հետ: Երբ 1896 թվականին Թիֆլիսում գումարված ՀՅԴ շրջանային ժողովը որոշեց կազմակերպել Խանասորի արշավանքը, Կարոն դեմ էր այդ արշավանքին՝ այն համարելով ուժերի ապարդյուն վատնում: Նրա այս դիմադրությունը այդ գաղափարին, որին նվիրված էր Մարոն, վերջինիս մտածելու տեղիք է տվել: Մարոն փորձել է Կարոյի դժկամության պատճառը փնտրել իրենց սիրո մեջ: Իրականությունն այդպիսին չէր, սակայն Մարոն, այդպես հավատալով, սկսել է հոգեպես տառապել: Նրա մոտ այն մտայնությունն է

---

[179] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 35:
[180] Տե՛ս նույն տեղում, էջ 37:
[181] Տե՛ս նույն տեղում:

իշխել, որ սերը կխոչընդոտի հեղափոխական ազատագրական պայքարի ազատ գործունեությանը: Դրանից հետո նա հոգեկան ապրումներ է ունեցել, և անհետացել է նրա կենսուրախությունը: Նա հետզհետե դարձել է վշտահար և թախծոտ:

1896 թվականին Մարոն մեկնել է Սալմաստ՝ Խանասորի արշավանքի նախապատրաստմանը ակտիվորեն մասնակցելու: Նա գիշերով պատրաստել է ասեղնագործ դրոշակ, որի վրա արշավանքի մասնակիցները պետք է երդում տային[182]: Նա երազել է այն վայրկյանների մասին, երբ իր սիրած երիտասարդն էլ, զենքը ուսին, փամփշտակալները շարք-շարք կապած, պիտի մոտենար իր ձեռքով պատրաստած դրոշակին: Մարոյի աչքի առաջ են եկել Կարոյի ներքին պայքարը հայրենիքի ծառայության և անձնազոհ սիրո միջև: Նա գնալով համոզվել է, որ ինքն է խոչընդոտել Կարոյի ազատագրական գաղափարների իրագործմանը: Դրա համար էլ նա 1896 թվականի դեկտեմբերի 2-ին ինքնասպանությամբ վերջ է դրել իր կյանքին: Մահից առաջ նա իր գրած նամակում կոչ է արել սիրած տղային՝ Կարոյին, գնալ հայրենիքի համար զոհողության: «Լիցո՛ւք թունաւոր վրէժխնդրությամբ Բաբկէն Սիւնիի նման: Կատարի՛ր վերջին կտակս, դրանով միայն կը հանգըստանան ոսկորներս գերեզմանի մէջ»,– գրել էր Մարոն հրաժեշտի նամակում: Իսկապես Կարոն, ներշնչված նամակի բովանդակությամբ, մասնակցել է Խանասորի արշավանքին, առյուծի պես կռվել, նահանջի ժամանակ շարունակել է դիմադրել՝ չնայած նրան, որ հրահանգ է ստացել թողնել դիրքերը: Նա իր սիրած աղջկա նման մահ է փնտրել՝ իր պարտականությունները կատարած համարելով: Նա զոհվել է, կնքել մահկանացուն սիրած աղջկա պատկերը աչքի առջև:

Հայդուկային կռիվներում աչքի է ընկել խիզախ ու աննկուն հայուհի **Կարմիր Իրիցու տան Գյուլեն**՝ հռչակավոր առաջին ֆիդայապետ Արաբոյի (Առաքելի) քույրը[183]: Կորթեր նշանավոր գյուղից Կարմիր Իրի-

---

[182] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 37:
[183] Տե՛ս նույն տեղում, էջ 44:

ցու երևելի տան մեծ աղջիկն էր Գյուլեն: Արաբոն 17 տարեկան էր, երբ զենք էր վերցրել և գնացել Բռնաշենի լեռնալանջերը՝ թուրք և քուրդ հարստահարողների, անարդարությունների դեմ պայքարելու և անպաշտպան ժողովրդին տիրություն անելու: Արաբոյի և նրա զինակից Մխո Շահենի նշանաբանն էր՝ «Թշնամուց զենք գրավել և այն ուղարկել է՝ հարվածելով նրա կրծքին»[184]:

Գյուլեն հաճախ սուրհանդակի դեր է կատարել և թուրքական զորքի շարժումների կատարած խուզարկությունների մասին լուրեր է հասցրել եղբորը: Քաջ և հանդուգն Գյուլեն, վտանգավոր առաքելություններ հանձն առնելով, հսկել է, որ կաշառքով և այլ խոստումներով մատնություն չկատարվի: Գյուլեն թուրքերից և քրդերից հափշտակվածը եղբոր հանձնարարությամբ աղքատներին է բաժանել, երբեմն էլ զենքեր է փոխադրել և հանձնել հայդուկներին:

Գյուլեն ամուսնացել է Մարաթուկի սարալանջին գտնվող Տնկետք գյուղի Խաչատուրենց տան կտրիճ Սարգսի հետ և ընտանեկան պարտականությունների կողքին պահել է նվիրումը եղբոր սկսած գործի հանդեպ: Երբ 1889 թվականին եղբայրը ռես Կրպոյի մատնությամբ Բերդակ գյուղի մեջ ձերբակալվել է, Գյուլեն կորցրել է հանգիստն ու դադարը, մինչև որ պատանի Գևորգն ու Գալշոյի Մանուկը իրենց խմբապետի վրեժը չեն լուծել[185]: Բանտից փախչելուց հետո, երբ Արաբոն Կովկաս է անցել՝ ավելի մեծ ուժերով «էրգիր» վերադառնալու համար, Գյուլեն սկսել է կանանց խմբեր կազմել, զինել նրանց և կազմակերպել է գյուղերի ինքնապաշտպանությունը:

Գյուլեն, իմանալով հերոս եղբոր հաղթական վերադարձի և Գյալառաշի ձորում ընկերների հետ մինչև վերջին փամփուշտը կռվելով նահատակվելու մասին, շատ է տխրել, սակայն երդվել է հավատարիմ մնալ եղբոր հիշատակին, նրա գործը շարունակել մինչև վերջ: Նա շարունակել է կանանց խմբեր կազմել, զինել նրանց և կռվել է մինչև վերջ

---

[184] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 45:
[185] Տե՛ս նույն տեղում:

Սասնո հերոսական պայքարում: Նա հերոսաբար կռվել է Սասունի 1904 թվականի ապստամբության ժամանակ:

1915 թվականին Սասունը ճգնաժամի մեջ էր. սկսվել էր կոտորածը, խուճապ էր տիրում ամենուրեք, հնարավոր չէր կապ հաստատել տարբեր շրջանների միջև: Մարաթուկի սարալանջին փռված Տնկերք գյուղն էլ հուսահատական կռիվ էր մղել, և Խաչատուրենց տան Սարգիսն ու Գյուլեն էլ իրենց զավակների և թոռների հետ նահատակվել էին անհավասար կռվում[186]: Այս մեծ գերդաստանից միայն երրորդ տղան՝ Զաքարն էր փրկվել, քանի որ մի քանի տարի առաջ իր Ավետիս քեռու տղայի՝ Արշակի հետ Հալեպ էր գնացել, որպեսզի սասունցի հայրենակիցների մոտ աշխատեր և վաստակը ընտանիքին ուղարկեր:

1875 թվականին ծնված երզնկացի հայրենասեր, ազգագրական պայքարի նվիրյալ հայուհի **Սրբուհի Յանգյանը** դեռ վաղ հասակից լծվել է հայրենիքի ազատագրման գործին: Դեռևս 1890-ական թվականներին Սրբուհին խորապես տպավորվել էր Ժիրայր Բոյաջյանի հեղափոխաշունչ հայրենասիրությամբ և հասարակական ակտիվ գործունեությամբ փորձել էր ազատագրական գաղափարները տարածել ժողովրդի լայն խավերում[187]: Իր առաջին գործունեությունը Ռուբեն Շիշմանյանի (Դերսիմի Քեռու) խմբերի կազմակերպած աշխատանքներին մասնակցելն էր: Նա ազատագրական պայքարին աջակցելու նպատակով կազմակերպել էր դրամահավաք: Ս. Յանգյանը վայելում էր բոլորի սերն ու վստահությունը իր անսահման նվիրումի, առողջ դատողության և հեռատեսության համար: Տարեցները նրան օրիորդ են անվանել, իսկ երիտասարդները՝ Հորքուր: Իբրև ՀՅԴ-ի պատասխանատու գործիչ՝ նա Աստղիկ անունն է կրել և կապ հաստատել Ռուբեն Շիշման-

[186] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 45:
[187] Տե՛ս նույն տեղում, էջ 47:

յանի հետ[188]: Սրբուհին բազմիցս կազմակերպել և զինյալ խմբեր էր ուղարկել Կարնո գծով Երզնկա, այնտեղից Դերսիմ[189]:

Թշնամին իմանալով ազատագրական պայքարի կազմակերպիչ Ս. Յանգյանի մասին՝ պատրվակ է փնտրել՝ նրան և շրջանի հեղափոխական երիտասարդներին ձերբակալելու, բանտարկելու և չարչարանքների միջոցով խոստովանություններ կորզելու համար: Վերջապես մի քրդի սպանության պատճառով, հայ մատնիչների ցուցմունքի համաձայն, տասնյակ հայ հեղափոխականներ մեղադրվել և ձերբակալվել են: Նրանց թվում է եղել նաև Ս. Յանգյանը՝ որպես ազատագրական պայքարի կազմակերպիչ: Նա դատապարտվել է 7 տարվա բանտարկության՝ իր վրա վերցնելով ամբողջ պատասխանատվությունը, որպեսզի ազատ արձակվեն իր հետ բանտարկված երիտասարդները[190]:

1908 թվականի սահմանադրության առթիվ բոլոր քաղաքական բանտարկյալների նման Ս. Յանգյանն ազատ է արձակվել: Դրանից հետո ևս օրինակելի և նվիրյալ հայրենասեր հայուհին իր տունը ուխտատեղի է դարձրել. քաղաքներից և գյուղերից կանանց խմբեր են եկել՝ իրենց սերն ու հարգանքը հայտնելու նրան: Նա շարունակել է ազգային աշխատանքները, կազմակերպել է Տիկնանց խնամակալ մարմին՝ Աղջկանց բարձրագույն վարժարանին օգնելու համար[191]: Միաժամանակ նրա կազմակերպած նվիրյալ հայուհիների խմբերը խնամատարական մեծ ծավալի աշխատանքներ են կատարել հիվանդներին ու աղքատներին օգնության հասնելու համար: Ս. Յանգյանը անփոխարինելի դեր է կատարել Երզնկայի և շրջապատի հայ կանանց

---

[188] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 45:
[189] Տե՛ս նույն տեղում:
[190] Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, ալպոմ-ատլաս, Ա հատոր, Դիւցազնամարտ 1890-1914, Լոս-Անճելըս, Քալիֆորնիա, 1992, էջ 224:
[191] Տե՛ս նույն տեղում:

մեջ ազգային-ազատագրական պայքարի գաղափարներ ու նվիրում ներշնչելու տեսանկյունից[192]:

1915 թվականին բռնի տեղահանությունից հետո Սրբուհին էլ տարագիրների բազմության հետ անորոշ ուղղությամբ է շարժվել: Ակն քաղաքի մոտ թաղել է իր եղբոր սովամահ աղջկան, մի քանի օր հետո նա նույնպես կնքել է իր մահկանացուն շուրջ 40 տարեկանում: Ամբողջ կյանքը հայրենիքի ազատագրությանը նվիրաբերած խիզախ հայուհու գերեզմանը մնացել է անհայտության մեջ:

Զենքերի փոխադրության և ֆիդայիներին օժանդակության ցույց տալու մեջ իր հատուկ տեղն ուներ **Նունե Մայրիկ (Քոլյանը**): Նա Թավրիզի իր բնակարանի մի մասը տրամադրել էր ՀՅԴ-ին՝ որպես կենտրոնատեղի: 1897 թվականին այնտեղ սպանվել էր Շեկոն[193]: Ն. Քոլյանը կարողացել էր կառավարության խուզարկումներից փրկել մեծ քանակությամբ փամփուշտներ, հրացաններ ու հրացանի մասեր: Չարսափը գլխին դրած՝ այդ ամենը փոխադրել էր այլ վայր: Մահացել է խոր ծերության մեջ[194]:

Առաջին հեղափոխական հայուհիների տարածած գաղափարների շնորհիվ պայքարի ասպարեզ են դուրս եկել արժանավոր կանայք, որոնք մեծապես նպաստել են զենքերի փոխադրությանը, զինապահեստների պաշտպանության, հեղափոխական գործիչների պատըսպարման և խնամքի, ինչպես նաև հեղափոխական նպատակների համար դրամահավաքի կազմակերպմանը: Այդպիսի հայրենասեր և ազատագրական պայքարին նվիրված կին էր Երանուհի Զոհրաբյանի մայրը՝ բոլորի կողմից սիրված **Սառա Մայրիկը**: Նրա տունը Սալմաստի Հավթվան գյուղում դարձել էր Թավրիզից և «էրգրից» եկող ընկերների ապահով կայան[195]: Մայրիկը հարազատ մոր պես ընդունում էր

---

[192] Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, ալպոմ-ատլաս, Ա հատոր, Դիւցազնամարտ 1890-1914, էջ 224:
[193] Տե՛ս նույն տեղում:
[194] Տե՛ս նույն տեղում:
[195] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 106:

բոլորին, գուրգուրում էր, հանգստացնում, կերակրում, անգամ կարկատում էր նրանց հագուստները: Այդ բոլորը անում էր առանց որևէ ակնկալության:

Երբ Նիկոլ Դումանը Սալմաստ էր փոխադրվել և հաստատվել Ղալասար գյուղում, Երանուհուն ու ամուսնուն՝ Նիկոլին, ուսուցչության էին հրավիրել: Սառա Մայրիկը իր աղջկա հետ Ղալասար էր փոխադրվել: Մինչև Առաջին աշխարհամարտի վերջը Ղալասար գյուղը մնացել էր ՀՅԴ կարևոր կենտրոնատեղին, իսկ Սառա Մայրիկը գործել էր ազգային խոր գիտակցությամբ ու նվիրվածությամբ[196]: Շատերը հետևել էին Մայրիկի օրինակին և սատարել թիկունքային աշխատանքներին:

Ազատագրական պայքարի նվիրյալ էր **Ժենյան (Զարուհի Տերոյանը):** Նա ծնվել է 1870 թվականին: Նա քույրն էր ու աջ բազուկը Վազգեն Տերոյանի, նաև Վասպուրականի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի անդամ էր: Նա օգնել է զենք, զինամթերք փոխադրելու և ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում: Ժենյան ակտիվ ազգային-ազատագրական պայքարին մասնակցելու համար թուրքական կառավարության կողմից բանտարկվել է, ապա աքսորվել Պոլիս, հետո՝ Երուսաղեմ: Սահմանադրության օրերին վերադարձել է Վան, այնտեղից գնացել է Գերմանիա՝ մանկավարժություն սովորելու: Եգիպտոսում վարել է ուսուցչական պաշտոն: 1919 թվականին մեկնել է Երևան՝ իր ծերունի մոր մոտ[197]: Վազգենի և Ժենյայի փոքր եղբայրը՝ Վարազդատը, նույնպիսի հայրենասեր էր և նվիրյալ հայորդի էր, ինչպես քույրը:

Զենք - զինամթերքի տեղափոխման և հեղափոխական ձեռնարկումների մասնակից հայրենասեր նվիրյալ հայուհիներից էր **Իսկուհի Պալճյան-Թիրաքյանը**: Նա ծնվել է Կ. Պոլսում 1874 թվականի մայի-

---

[196] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 106:

[197] Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, ալպոմ-ատլաս, Ա հատոր, Դիւցազնամարտ 1890-1914, էջ 224:

սին[198]: Իսկուհին կրթությունը ստացել է տեղի Նարեկյան (հետագայում՝ Եսայան) վարժարանում, ապա Բերայի աղջկանց արհեստանոցում: Վերջինս երկրորդական վարժարան էր, որտեղ դասավանդում էին Ֆրանսիայից եկած ուսուցիչներ, որոնք այդ տարիներին խոսում էին Եվրոպայում տիրող հեղափոխական ոգու մասին, իսկ հայերենի ուսուցիչ Մելքոն Գյուրջյանը (Հրանտ) իր աշակերտուհիներին հայրենասիրական, ազգային, հեղափոխական գաղափարներ էր ներշնչում[199]:

Մ. Գյուրջյանի խոսքերը ազգապահպանության անհրաժեշտության, ազատության ու անկախության, հայի արդար ու դարավոր պահանջի, ինչպես նաև օտարության մեջ տառապող տարագիրների վերաբերյալ մեծ տպավորություն էին թողնում աշակերտների վրա: Նրանցից երկուսը՝ Իսկուհին և Մարի Պեյլերյանը (բանաստեղծուհի), «տարվելով ուսուցչի գաղափարներով, ուխտել էին նվիրվել Հայ դատին և միասին պայքարել դրա համար»[200]:

Դեռևս 1890 թվականին Հնչակյանները, գալով Պոլիս, կազմել էին «օրիորդաց խումբ», որին անդամակցել էր նաև Իսկուհին: Նա մի քանի ընկերուհիների հետ միասին սկսել էր զենքեր տեղափոխել, թերթեր ու թռուցիկներ ցրել[201]: Նրանք լավ գիտեին, որ բացահայտման դեպքում իրենք կարող էին բանտ նետվել, սակայն Իսկուհին և ընկերուհիները ունեին անվախ ու խիզախ բնավորություն:

Բերայի աղջկանց արհեստանոցը ավարտելուց հետո Իսկուհին նույն հաստատության մեջ ուսուցչություն է արել, իսկ մեկ ու կես տարի անց աշխատել է որպես Մաքր գյուղի ազգային վարժարանի ուսուցչուհի: Այնտեղ ուսուցչուհի է աշխատել նույն դպրոցը նոր ավարտած Զապել Եսայանը:

---

[198] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 49:
[199] Տե՛ս նույն տեղում:
[200] Տե՛ս նույն տեղում:
[201] Տե՛ս նույն տեղում, էջ 51:

Հեղափոխական աշխատանքների կենտրոնատեղին էր դարձել **Իսկուհի Տյուլպենտճյանի (Օրիորդ Յուստիկի)** տունը, որտեղ բնակություն էր հաստատել Ֆրանսիայից վերադարձած Հրաչ Թիրաքյանը: Նա Պոլիս էր եկել ազատագրական պայքարին նվիրվելու համար[202]: 1896 թվականի հուլիսին այդ տանը հավաքվում էին ազատագրական պայքարի այնպիսի նվիրյալներ, ինչպիսիք էին Բաբկեն Սյունին, Հրաչի՝ Ֆրանսիայի դասընկերներից Արմեն Գարոն, երիտասարդ ու հայրենասեր հայուհիներ Յուստիկն ու Իսկուհին: Նրանք առաջին անգամ ձեռնառումբեր են գործածել և դրանք իրենց ձեռքով են լցրել: Միաժամանակ նախագծեր են կազմվել Սամաթիայի կռվի և Օսմանյան դրամատան գրավման համար: Իսկուհին վերոնշյալ ընկերուհիների հետ մասնակցել է Բանկ Օտոմանի նախապատրաստական գործին, որի ժողովները տեղի են ունեցել իրենց տանը, որտեղ էլ պահում էին իրենց պատրաստած 600 ռումբերը[203]: Դրանք այլ վայրեր փոխադրելու գործին ակտիվորեն մասնակցել է Իսկուհին Արմեն Գարոյի և Հրաչի հետ միասին: Նրանք որոշել են բռնվելու դեպքում երբեք թշնամու ձեռքը ողջ չընկնել: Իսկուհին ռումբերը թաքստոց տեղափոխելիս դիմել է Արմեն Գարոյին ասելով. «Գարո՛, քեզ մատաղ, ինձ կենդանի չձգես այս շուներու ձեռքը»[204]:

Օսմանյան դրամատան գրավումից հետո, երբ Բաբկեն Սյունին շենքի առջև զոհվեց, իր ձեռքից ընկած ռումբի պայթյունից, իսկ Հրաչն ու Արմեն Գարոն 15 ժամ դրամատան գրավումից հետո միայն ռուսական դեսպանատան միջնորդությամբ հեռացան երկրից, Իսկուհին և իր ընկերուհին՝ Յուստիկը, հիշելով, որ տանը ռումբեր են թողել, ետ են վերադարձել, դրանք իջեցրել են ջրհորը, ապա մեկնել են չվերադառնալու պայմանով[205]: Իտալահպատակ ընկերուհիներից մեկի միջնոր-

---

[202] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 49:
[203] Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, ալպոմ-ատլաս, Ա հատոր, Դիւցազնամարտ 1890-1914, էջ 226:
[204] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 51:
[205] Տե՛ս նույն տեղում:

դությամբ հեղափոխական հայուհիներն ու Իսկուհու ծնողները փոխադրվել են Բուլղարիա՝ Վառնա[206]: Վառնայում Իսկուհին ամուսնացել է Հրաչի հետ: Հենց այստեղ էլ նա իմացել է, որ Թուրքիայում նրան դատապարտել են 101 տարվա բանտարկության: Իսկուհին և քույրը ուսուցչություն են արել տեղական ազգային վարժարանում, միաժամանակ աղջիկների ու կանանց խմբեր են կազմել՝ ազգային-ազատագրական պայքարին ծառայելու համար:

Հրաչն ու Իսկուհին որոշել են «էրգիր» անցնել՝ տեղի ազատագրական պայքարին օգնելու ու աջակցելու համար: Նրանք Թիֆլիսով անցել են Իզմիր, որտեղ ծնվել է նրանց անդրանիկ զավակը՝ Բաբկենը: 4 ամիս անց մատնությամբ նրանք ձերբակալվել են: Միայն բանտարկությունից 6 ամիս անց Հրաչը 101 տարվա բանտարկության է դատապարտվել, իսկ Իսկուհին՝ աքսորի: Աքսորավայրում՝ Սամսոնի բանտում, 1903 թվականի մայիսին ծնվել է 2-րդ զավակը՝ Հերմինեն[207]: Իսկուհին դժվարությամբ ու տառապանքներով փախել է Սամսոնի բանտից Սուխում: Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո բանտից ազատվել է նաև Հրաչը: Երկար ու տառապալից տարիներից հետո Հրաչը միացել է իր ընտանիքին: Ծնվել է նրանց 3-րդ երեխան՝ Նվարդը, որը կարոտյալ պարգև էր հոր համար[208]:

Մեծ եղեռնի օրերին և անվան ու ազգանվան նմանության պատճառով Հրաչի փոխարեն մեկ ուրիշին են տարել մահվան ճամբար, սակայն նա թույլ չի տվել, որ իր փոխարեն մեկ ուրիշ անմեղ մարդ զոհվի: Հրաչի կորուստը շատ ծանր անդրադարձ է ունեցել Իսկուհու և զավակների համար: Այդ հերոսուհի մայրը պատվարժան կերպով կրել է բոլոր տառապանքները և ցավը՝ միայնակ մեծացնելով երեխաներին: Իսկուհին իր 3 երեխաների հետ մնացել է Թիֆլիսում, ապա 4 տարի անց Թիֆլիսից Սուխում է գնացել, այնտեղից Բաթում է անցել, իսկ

---

[206] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 53:
[207] Տե՛ս նույն տեղում,
[208] Տե՛ս նույն տեղում, էջ 54:

1921 թվականին՝ Պոլիս, որտեղ Հայկական «Կարմիր խաչի» հիվանդանոցի վարչական տնօրինուհու պաշտոնն է ստանձնել, սակայն հոդացավով հիվանդացել է և անցել Ռուսչուկ՝ եղբոր մոտ, ապա տաք կլիմայի պատճառով զավակների հետ Եգիպտոսում է հաստատվել, որտեղ էլ մահացել է 1930 թվականին[209]:

Հայ ազատագրական պայքարի նվիրյալ հերոսուհի հայուհիներից էր **Սոֆի Արեշյան-Օհանջանյանը (Ռուբինան)**: Նա ծնվել է Թիֆլիսի գեղատեսիլ արվարձաններից մեկում 1881 թվականին[210]: Մեծ հայրն ու եղբայրը, ռուսական բանակի բարձրաստիճան սպաներ լինելով, օտար շրջանակների հետ շփման մեջ են եղել: Նրանք ռուսախոս էին: Մինչև 18 տարեկանը հայ ազատամարտի նվիրյալը հայերեն գրել կարդալ ու խոսել չգիտեր: 1900 թվականին՝ Թիֆլիսի գիմնազիան ավարտելուց հետո, հաջորդ տարվանից սկսել է պաշտոնավարել Բաքվի դպրոցներից մեկում[211]: Այդ տարիներին Բաքուն իր ազգային մթնոլորտով խոր տպավորություն է գործել հայուհու վրա, որը մեծ խանդավառությամբ հասարակական ակտիվ գործունեություն է ծավալել: Նա բանվորների համար գիշերային դասընթացներ է կազմակերպել, իսկ հայերենի դասավանդման համար հրավիրել է Ռոստոմին: 1903 թվականին ՀՅԴ շրջանային ժողով է գումարվել Նիկոլ Դումանի բնակարանում: Նույն շենքում է բնակվել նաև Սոֆյա Արեշյանը իր քրոջ ու ամուսնու հետ: Այստեղ Նիկոլ Դումանի միջնորդությամբ նա ծանոթացել է ՀՅԴ-ի հիմնադիր Քրիստափոր Միքայելյանի և Համո Օհանջանյանի հետ[212]:

Ս. Արեշյանը կազմակերպել է մի շարք հետաքրքիր միջոցառումներ՝ երեկույթ Սասունի զոհերի համար և այլն: Այդ տարիներին, ինչպես վկայում է Ս. Արեշյանը, Քրիստափորը ծրագրել է քաղաքական մեծ ահաբեկչություն կազմակերպել Կարմիր Սուլթանի դեմ: «Տեռորը»

---

[209] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 55:
[210] Տե՛ս նույն տեղում, էջ 57:
[211] Տե՛ս նույն տեղում:
[212] Տե՛ս նույն տեղում:

երկու նպատակ է հետապնդել՝ ա) հայկական ջարդերի հեղինակին տապալել, բ) նույնիսկ անհաջողության դեպքում հարվածով ցնցել ստրկացած ժողովրդին և արթնացնել նրան դարավոր թմբիրից[213]:

Ս. Արեշյանը, դրացի Սաֆոյի միջոցով իմանալով ծրագրավորված մահափորձի մասին, անմիջապես խնդրել է Ք. Միքայելյանին թույլ տալ մասնակցել ձեռնարկին: 1904 թվականին նա մեկնել է Բեռլին, այնտեղից անցել է Աթենք, որտեղ հավաքվել են ձեռնարկի պատասխանատու մարդիկ: Այստեղ Սոֆին ծանոթացել է Հովնան Դավթյանի և Պերճուհու ամուսնու՝ Սարգսի հետ: «Այնտեղ լուծվեց անցագրի հարցը, և որպես Քրիստափորի աղջիկ՝ մեկնեցինք Իզմիր»,– գրում է Ս. Արեշյանը: Քրիստափորը ներկայանում է որպես Սամուել Ֆայն, իսկ աղջիկը՝ Ռուբինա Ֆայն: Մեկ ամիս անց՝ 1904 թվականի սեպտեմբերին, անցել են Պոլիս և տեղավորվել՝ Ժորեսի բնակարանում[214]: Այստեղ հասել է նրանց գործընկերը՝ Վռամշապուհը: Շուտով Քրիստափորը Ս. Արեշյանի հետ Բուլղարիա է անցել՝ ռումբերի փորձերը կատարելու համար: Դրա պատճառը Ս. Արեշյանը բացատրել է Հունաստանում ընկերների ձերբակալության փաստով:

Բուլղարիայի Ֆիլիպե քաղաքի մեջ տեղավորվելով՝ Քրիստափորը ռումբի փորձեր է սկսել անել: Ռուբինայի թվաբանության մեջ եղած հմտությունները շատ օգտակար են եղել ռումբի պատրաստման նուրբ հաշիվների մեջ[215]: Փորձերը հաջողությամբ իրականացվել են: Վռամշապուհի պահանջով մեկ անգամ էլ որոշվել է փորձարկել ռումբը:

1905 թվականի մարտի 20-ին Ռուբինան Վիտոշ լեռան լանջին ներկա է գտնվել ռումբի փորձարկմանը, որի ժամանակ Քրիստափորն ու Վռամշապուհն նահատակվել են ռումբի պայթյունից[216]: Ռուբինան, ցնցված այս միջադեպից, երկու ամիս Ժնևում է մնացել, սակայն չի

---

[213] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 58-59:
[214] Տե՛ս նույն տեղում, էջ 59:
[215] Տե՛ս նույն տեղում:
[216] Տե՛ս նույն տեղում, էջ 60:

հրաժարվել սուլթանի մահափորձի ծրագրից: Թերևս իր կրած հոգեկան ցնցումից ֆիզիկապես տկարացել է, սակայն հզոր կամքը պահանջել է նպատակն ի կատար ածել: Վերջապես Սարգիս Բարսեղյանի հետ Վիեննա է գնացել, այնտեղից էլ մեկնել է Պոլիս[217]: Այստեղ տեղի ունեցած ժողովի ժամանակ Ռուբինան պնդել է և պահանջել, որ ինքը պատրաստ է մնալ մահափորձ իրականացնող կառքի մեջ, չի ցանկացել, որ ժամանակը անցնի, ցանկացել է վայրկյան առաջ լուծել այդ խնդիրը զոհվածների հիշատակի համար: Մի քանի անգամ լաց լինելով՝ նա կրկնել է նույն խնդրանքը, սակայն ընկերները մերժել են նրա խնդրանքը:

Ռուբինան պահանջել է իրեն վստահել, հակառակ դեպքում անձնասպանության խնդիր է դրել: Վերջապես նրան ընդգրկել են մահափորձի կազմակերպման խմբում: Սակայն երկրորդ մահափորձը՝ ժամացույցի օգնությամբ ռումբը կառքի մեջ պայթեցնելը, չի արդարացրել իրեն, որի մասին ժամանակին զգուշացրել էր Ս. Արեշյանը[218]:

1905 թվականի հուլիսի 21-ի մահափորձի ձախողումը երկրորդ ծանր հարվածն էր 25-ամյա Ռուբինայի համար: Հոգեկան ծանր ապրումները նրան ստիպել են հանգստանալ: 1906 թվականին՝ Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո, Ռուբինա և Սաթենիկ Օհանջանյանները Պոլիս են գնացել և մեծ եռանդով գործել են Բերայի «Աշխատանքի տան» համար, այստեղ կազմակերպել են կանանց համախմբումը ոչ միայն կար ու ձևի, այլև ազգային նվիրական գաղափարների շուրջ[219]: Սակայն շուտով տեղեկացել է «Դաշնակցության գործով» Համո Օհանջանյանի՝ ցարական կառավարության կողմից Թիֆլիսում ձերբակալվելու մասին: Հակառակ նրան, որ ընկերները զգուշացրել են, որ նրա անունը ևս կա ձերբակալվողների ցուցակում,

---

[217] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 59-60:
[218] Տե՛ս նույն տեղում:
[219] Տե՛ս նույն տեղում, էջ 61:

բայց Ռուբինան անդրդվելի է մնացել, նա 1908 թվականին մեկնել է Կովկաս[220]:

Համոն Թիֆլիսից տեղափոխվել է Նովորչեկասկ մյուս անվանի դաշնակցականների հետ: Ռուբինան քաղաքից քաղաք է անցել և նույնիսկ կարողացել է բարյացակամ վերաբերմունք ստեղծել բանտի վարչության և բանտարկյալների միջև: Նա բանտարկյալներին խնամել, հոգատար քրոջ նման հոգացել է նրանց կարիքները: Սակայն կասկածանքների արդյունքում նա ևս ձերբակալվել է և բանտ նստել: Ռուբինայի եղբայր Միշա Աբեղյանը, որը մասնակցել էր ռուս-ճապոնական պատերազմին, կարողացել է քրոջն ազատել բանտից[221]: Ռուբինան Խարկովում ավարտել է բժշկական դասընթացը:

1912 թվականին Համո Օհանջանյանը 4 տարվա տաժանակիր աշխատանքի է դատապարտվել[222]: Իրկուտսկի աքսորավայրում Հ. Օհանջանյանը և Ս. Արեշյանը ամուսնացել են: Նրանք աքսորավայրում իրենց մատուցած բժշկական ծառայության համար տեղացի ժողովուրդների կողմից ջերմ գնահատականի են արժանացել: 1917 թվականին Հ. Օհանջանյանը Թիֆլիս է վերադարձել և ձեռնարկել խնամատարությունը ամուր հիմքերի վրա դնելու գործը[223]: Հայաստանի Հանրապետության ծագման և անկման օրերին ևս Ռուբինան ամուսնու կողքին է եղել: Այդ ժամանակ ծնվել է նրանց միակ զավակը՝ Վիգենը[224]:

Ի վերջո, Օհանջանյանները Կահիրեում են հաստատվել: 1928 թվականի մայիսին Ս. Արեշյանի նախաձեռնությամբ Կահիրեում հիմնվել է «Համազգային կրթական և հրատարակչական ընկերություն»[225], որն իր շուրջն է համախմբել եռանդուն գործունեություն

---

[220] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 61:
[221] Տե՛ս նույն տեղում, էջ 62:
[222] Տե՛ս նույն տեղում:
[223] Տե՛ս նույն տեղում, էջ 63:
[224] Տե՛ս նույն տեղում:
[225] Տե՛ նույն տեղում:

ծավալող օրիորդներին և տիկիններին, հանգանակության և հասութաբեր ձեռնարկներ կազմակերպել և եկամուտ հատկացրել Բեյրութի «Համազգային» ճեմարանին: Շուրջ 20 տարի նյութական օժանդակությունը շարունակվել է մինչև նրա անկախ դառնալը[226]:

1960-ական թվականներին Ռուբինան իր քրոջ, զավակների և հարսի հետ Կանադայի Մոնրեալ քաղաքում է հայտնվել, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն 1971 թվականի ապրիլին:

Նշանավոր հայրենասեր և հեղափոխական հայուհիներից էր **Ժենյա Ադամյանը**՝ Թամարայի կրտսեր քույրը: Վերջինս, հետևելով իր մեծ քրոջ՝ առաջին հեղափոխական գործիչ-հայուհի Թամարա Ադամյան-Ներսիսյանի (1862-1889) օրինակին, անդամակցել է Թիֆլիսի հեղափոխական կուսակցության «Նարոդնայա Վոլյային», իսկ 1890 թվականին՝ ՀՅԴ-ին[227]: Թիֆլիսի օրիորդաց գիմնազիան ավարտելուց հետո որոշել է «էրգիր» անցնել և ուսուցչության գործին նվիրվել[228]:

Հավատալով, որ գլխավոր գործը ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումն էր և ընդհանուր ապստամբության պատրաստումը, Ժենյան հասկացել է, որ անհրաժեշտ է դաստիարակել երիտասարդությանը ազատագրական պայքարի ոգով և նախապատրաստել նրանց այդ նվիրական գործին: Հակառակ իր ծնողների կամքին և ազգականների ցանկությանը՝ նա Սիմոն Զավարյանի հրավերով, որը Տրապիզոնի հայոց դպրոցի տեսուչն էր, մեկնել է «էրգիր»[229]: Սակայն թուրքական կառավարությունը, նրան համարելով վտանգավոր հեղափոխական, հեռացրել է երկրից: Վերադառնալով Թիֆլիս՝ Ժենյան նվիրվել է կուսակցական աշխատանքներին: Նա ոչ միայն զոհաբերության ոգի ուներ, այլև զգաստ էր, խոհեմ և աչալուրջ: Նա իր անմիջական ջանքերով Թիֆլիսում սեփական տան մեջ հիմնել էր գաղտնի

---

[226] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 63:
[227] Տե՛ս նույն տեղում, էջ 22:
[228] Տե՛ս նույն տեղում:
[229] Տե՛ս նույն տեղում:

տպարան, որտեղ տպագրվում էին ՀՅԴ-ի առաջին թռուցիկներն ու «Դրօշակի» առաջին համարները[230]: Գաղտնապահության և գաղտնի գործերի մեջ ընդգրկելով՝ նա մեծ վստահություն էր ձեռք բերել հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, երբ անհրաժեշտ էր մեծ քանակությամբ ռազմամթերք կենտրոնացնել Թիֆլիսի մեջ և այնտեղից գավառներ փոխադրել: Ժենյայի տունը տրամադրվել է ՀՅԴ կենտրոնական զինական մարմնին: Ամեն օր մեծ քանակությամբ հրացաններ ու փամփուշտներ են բերել և մեծ զգուշությամբ ուղարկել անհրաժեշտ վայրեր[231]:

Ժենյան այն բախտավորներից էր, որ տեսել է Հայաստանի Հանրապետությունը: Նրա անկումից հետո անցել է Հյուսիսային Կովկաս՝ հանքային ջրերի շրջանը: Այստեղ էլ նա կարևոր գործունեություն է ծավալել գաղթականներին խնամելու գործում: Նրա ջանքերով որբանոց է բացվել՝ որբերին խնամելու և դաստիարակելու համար: Առաջացած տարիքում նա կնքել է իր մահկանացուն Հյուսիսային Կովկասում[232]:

Հայոց ազգագրական պայքարի նվիրյալ հայուհի էր **Նատալյա Ամիրխանյանը (Մուրադյանը)**: Նա՝ որպես կիրթ ընտանիքի զավակ, ծնվել է 1863 թվականին Երևանում[233]: Գործի բերումով ծնողները վաղուց Թիֆլիս էին փոխադրվել: Նա էլ դեռ Օրիորդաց գիմնազիայի աշակերտուհի Թամարայի և Ժենյա Ադամյանի պես անդամակցել է «Նարոդնայա Վոլյային», և 1882 թվականին Նատալյան նրանց հետ մտել է հայկական հեղափոխական առաջին մարմնի մեջ՝ նվիրվելով ազգային գաղափարների իրականացման գործին[234]:

Նա մեծ աշխատանք է տարել՝ հայացնելու համար օտարանալու ենթակա կամ բոլորովին օտարացած երիտասարդ աղջիկներին: Խմբերի պարապմունքների հետ Նատալյան ոգևորությամբ խոսել է

---

[230] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 22:
[231] Տե՛ս նույն տեղում:
[232] Տե՛ս նույն տեղում:
[233] Տե՛ս նույն տեղում:
[234] Տե՛ս նույն տեղում:

հայոց պատմության, Հայ դատի, հայ ժողովրդի դարավոր իրավունքների վերականգնման անհրաժեշտության մասին: Գլխավոր խնդիրը նա համարել է հայրենիքի ազատագրման համար պայքարը, որով էլ լցնում էր երիտասարդ աղջիկների սիրտն ու հոգին՝ նրանց տանելով դեպի ազնիվ երազանքների իրականացումը:

Նատալյան ամուսնացել է իրեն գաղափարակից բժիշկ Մուրադյանի հետ: Հաստատվելով Ղարաքիլիսայում՝ նա կազմակերպել է կանանց ու աղջիկների խմբեր և նրանց կապել այդ ժամանակվա «Կարմիր խաչի» կենտրոնական խմբերի հետ:

Նատալյան ապրել է մինչև Հայաստանի Հանրապետության անկումը: Նրան բանտ են նետել իբրև վտանգավոր դաշնակցական գործչի: Բանտում 60-ամյա հայուհին բանտարկյալներին միշտ սիրտ է տվել, հորդորել է տղամարդուն վայել կեցվածք ունենալ իրենց անգութ դահիճների առջև[235]: Նա այդ ոգով էր երիտասարդ բանտարկյալներին քաջություն է ներշնչել: Հայաստանի խորհրդայնացումից հետո Նատալյան առաջին հեղափոխական կինն էր, որը զոհ գնաց հայ բոլշևիկների քաղաքականությանը: 1921 թվականի մայիսին համայնավարները, բանտ ներխուժելով, գնդակահարեցին 58-ամյա անվեհեր հայուհուն՝ Նատալյային:

19-րդ դարավերջի հայոց ազատագրական շարժման տարիներին իր ազգի և կրոնի համար նահատակվելու պատրաստ գեղջկուհու պահվածքի ճանաչման և գնահատման, հայ կնոջ աներեր վճռականության լավագույն օրինակ է ցույց տվել Ղարսի գյուղապետ Միրոյի եղբոր աղջիկը՝ **Գյուլիզարը**: 1889 թվականին Տարոն աշխարհի Չխուր-Բուլանղի շրջանը սարսափելի օրեր էր ապրում քուրդ աշիրապետերի ավազակային հարձակումների պատճառով: Այդ աշիրապետերը, խրախուսվելով թուրքական կառավարության կողմից, թալանի և ավերի էին ենթարկում Մուշի և հարակից շրջանների հայկական

[235] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 25:

գյուղերը: Մասնավորապես Ղարս, Արտոնք, Վարդենիս և Առգավանի գյուղերի հայությունը ծայրահեղ հուսահատության էր հասել դրացի քուրդ ավազակապետ Մուսա բեկի ոճրագործությունների պատճառով[236]:

Մուսա բեկը հռչակավոր ավազակապետ Միրզա բեկի ավագ որդին էր: Նա իր ժամանակին սարսափի էր մատնել իր շրջանի քուրդ և հայ գյուղացիներին, շարունակ կռիվների մեջ էր իր սահմանակից քրդական աշիրեթների, մասնավորապես ամենոխերիմ թշնամիներից բըլլըքցիների հետ: Միրզա բեկի սպանությունից հետո որդին՝ Մուսա բեկը, որը հայտնի էր իր անգթություններով, մոտ 300 զինյալ քրդերի գլուխն անցած, անխնա կողոպտել և ավերել էր հայկական գյուղերը, անպատիժ կերպով սպանել էր իրեն անցանկալի մարդկանց, անլուր տանջանքների ենթարկել հայ գյուղացիներին՝ արատավորելով կանանց[237]:

Մուսա բեկի այս հրեշավոր արարքներին վերջ տալու նպատակով Ղարս գյուղի ռես (գյուղապետ) Միրոյի և Առգավանք գյուղի գյուղապետ Օհանի գլխավորությամբ հայ գյուղացիները ստիպված դիմել էին կառավարությանը, խնդրագրեր և հեռագրեր էին ուղարկել Բիթլիսի վալիին և Մուշի մյութասարիֆին[238]: Այս բողոքների հետևանքով կառավարությունը վերջապես ձերբակալել էր Մուսա բեկին և նրան բանտարկել Բիթլիսում: Սակայն երեք օր հետո Մուսա բեկն ազատ էր արձակվել իր բարեկամ Բիթլիսի վալի Էդհեմ փաշայի շնորհիվ, որին 300 ոսկի կաշառք էր տվել: Արյունարբու գազանը, վրեժխնդիր լինելով, որոշել էր քարուքանդ անել հայկական գյուղերն ու սպանել պատասխանատու այն ռեսերին, որոնք բողոքել էին նրա դեմ: Ոճրագործին հաջողվել էր գյուղապետ Օհանին ողջ-ողջ հրկիզել, իսկ նրա ածխացած դիակը Բիթլիսի ճանապարհին է դրել՝ հետևյալ մակա-

---

[236] **Գևոնյան Ա. (Տեր-Կարապետյան)**, Գյուլիզար, Երևան, 1992, էջ 5:
[237] Տե՛ս նույն տեղում, էջ 6:
[238] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 483:

գրությամբ. «Ով որ Մուսա պէկի դէմ բողոքէ, այս վիճակին պիտի հասնի...»[239]:

Բազմաթիվ գյուղապետեր, այդ թվում՝ Ղարսի գյուղապետ Միրոն, կյանքի անվտանգության և ապահովության համար Մուշում էին բնակվում: Օհանի մարմինը տեղափոխվել էր Մուշ: Այստեղ ժողովուրդը դիմել էր հուզումների՝ հուղարկավորությունը վերածելով բողոքի ցույցի[240]: Այս դեպքերից մի քանի շաբաթ անց Մուսա բեկը 150 զինվորներով կեսգիշերին մտել էր Ղարս գյուղ, որտեղ պահակների հետ փոքր ընդհարումներից հետո գրավել էր գյուղը:

Նրանց հաջողվել էր նախօրոք գաղտագողի գրավել եկեղեցին, որպեսզի հայերը զանգերը չհնչեցնեին՝ հարևան Վարդենիսի գյուղից օգնություն խնդրելու համար: Քրդական զինյալ խուժանը, մտնելով Ղարսի Միրոյի տունը, պահապաններից շատերին սպանելուց հետո սպանել էր Միրոյի եղբորը՝ Աղաջանին՝ գեղեցկատես 14-ամյա Գյուլիզարի հորը, ինչպես նաև քեռի Մխոյին և տան երիտասարդ կտրիճներից ոմանց: Հայ դիմադրողները, վիրավորներին վերցնելով իրենց հետ, փախել էին: Քրդերը, մտնելով Միրոյի տուն, ամեն ինչ կողոպտել էին՝ առևանգելով Գյուլիզարին: Նրան տարել էին հետները և հանձնել Մուսա բեկին[241]:

Մուսա բեկն իր զինյալ ուժերով բարձրացել էր Բոնաշենի լեռները, որտեղ գյուղեր ու բնակարաններ ուներ, այնտեղ էլ արգելափակել էին Գյուլիզարին: Շեյխերը անհարմար էին գտել այդ փոքրիկ աղջնակին կնության տալ Մուսաբեկին, որոշել և համոզել էին նրան, որ Գյուլիզարին ամուսնացնեն բեկի փոքր եղբոր՝ Ջազոյի հետ: Այդպես էլ արել էին[242]:

---

[239] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 483:
[240] Տե՛ս նույն տեղում, էջ 484-485:
[241] Տե՛ս նույն տեղում, էջ 485:
[242] Տե՛ս նույն տեղում:

Այս երկու անօրեն դեպքերը ցնցեցին ամբողջ Տարոն աշխարհը: Մշո դաշտի բոլոր գյուղերը, միանալով բողոքին, շարժվեցին Պոլիս՝ անձամբ բողոքելով այս ավարառությունների դեմ: Տարոնի ամբողջ ժողովուրդը պահանջում էր դատի տալ ու բանտարկել Մուսա բեկին ոճրագործ արարքների համար: Հայոց ազգային առաջնորդարանը և Պոլիսի պատրիարքարանը տեր էին կանգնել այս դատին՝ համազգային քաղաքական բնույթ հաղորդելով նրան: Եվրոպական պետությունների դեսպանները, ևս ծանոթանալով խնդրին, միջամտել էին գործին՝ արձագանքելով առևանգման փաստին: Գյուլիզարին իսլամացնելով՝ շուրջ երեք ամիս ենթարկել էին չարչարանքների, սակայն հայուհին երբեք չէր կորցրել հույսը, կարողացել էր իր համարձակությամբ, վճռականությամբ ու արժանապատվությամբ լուր հասցնել մորն ու հարազատներին իր ողջության մասին:

Մուսա բեկի քստմնելի ոճրագործությունների, այդ թվում՝ Գյուլիզարի առևանգման փաստի դեմ տարոնահայության բողոքները հասան մինչև սուլթանի պալատ և Կ. Պոլսի եվրոպական դիվանագետներին և վերջապես տվեցին իրենց դրական արդյունքները: 1889 թվականի հունիսին Մուսա բեկին հրավիրեցին Կ. Պոլիս: Այնտեղ հասնելուց երկու ամիս անց սկսվեց Մուսա բեկի դատավարությունը, որին ներկա էին ոչ միայն բազմաթիվ հայեր, այլ նաև Պոլսի եվրոպական պետությունների ներկայացուցիչներ: Դատը անձնական հանգամանքից դուրս գալով՝ ստացել էր ազգային երանգ: Թուրքական կառավարությունը աշխատում էր արդարացնել Մուսա բեկին՝ եվրոպական պետությունների ներկայացուցիչներին ցույց տալու համար, որ հայերը զրպարտիչներ էին:

Երեք ամիս շարունակ Գյուլիզարը առանձնացվել էր, ենթարկվել քրդերի ազդեցությանը, մահվան սպառնալիքներով նրան պարտադրել էին ընդունել իսլամական կրոնը: Կ. Պոլսից հրաման էր եկել Մուշի կառավարչին, որ Բիթլիսի դատարանը լսեր Գյուլիզարի առևանգման փաստը: Քրդական շեյխերի, Մուսա բեկի և եղբոր՝ Ջազոյի թելադ-

ռանքով Գյուլիզարը պետք է խոստովաներ, որ ինքը մահմեդական է, և իր կամքով է հեռացել տնից[243]:

Չնայած Մուշի և Բիթլիսի հայոց առաջնորդարանները, Մշո դաշտի ժողովուրդը ամեն ինչ անում էին Գյուլիզարին սատարելու հարցում, սակայն նրանք անզոր էին տեսնել աղջկան, քանի որ նա քրդերի արյունարբու առաջնորդներից Ջազոյի մոտ էր մնում, որը մահվան սպառնալիքներով անընդհատ սարսափեցնում էր նրան: Գյուլիզարը, լավ հասկանալով, որ իր խոստովանությունից է կախված Մուսա բեկի արյունառուշտ արարքների գնահատականը, իսկական հերոս հայուհու նման էր պահում իրեն: Հերոսուհին, Մուսա բեկի հորեղբոր հսկողությամբ Բիթլիս փոխադրվելուց առաջ քաջ գիտենալով, որ ուրիշ ելք չունի, քրդերին խոստացել էր, որ դատարանում ցուցմունք կտա, որ մահմեդական է, և ինքն իր կամքով է տանից հեռացել: Լինելով խելացի և քաջ հայուհի՝ Գյուլիզարը որոշել էր խորամանկել, որպեսզի քրդերը որևէ կասկած չունենային իր նկատմամբ: Նա հերթական քաջագործությամբ վերջին վայրկյանին է միայն հայտարարել իր հայ լինելու մասին՝ պատմելով Մուսա բեկի ոճրագործ արարքների մասին:

Բիթլիսի կուսակալը դատն այնպես էր կազմակերպել, որ հայոց առաջնորդարանը չկարողանար մասնակցել դատին: Միայն հրավիրվել էր Գյուլիզարի մայրը, այն էլ՝ վերջին վայրկյանին, և Մուշում գտնվող հորեղբայր Միրոն, որը չէր կարողացել տեսնել նրան[244]:

Կուսակալն ու շեյխերը, նաև Մուսա բեկի ազգականները խաբվել էին Գյուլիզարի զգուշավորությունից՝ մտածելով, որ Գյուլիզարը չէր փոխի իր նախօրոք տված խոստումը, մանավանդ երբ տեսել էին, որ նա նույնիսկ տեսակցության եկած մոր մոտ էր հայտարարում, որ ինքն արդեն թուրք է և իր կամքով է ամուսնացել: Միաժամանակ մորը հասկացնում էր, որ այլ կերպ չէր կարող վարվել թուրքական ամբոխի կողմից շենքը շրջապատելու պայմաններում:

---

[243] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 486:
[244] Տե՛ս նույն տեղում, էջ 483:

Երբ դատական նիստի ժամանակ Գյուլիզարին դատավորը հարցրել է՝ մահմեդական ես, թե հայ, նա հուսահատ նայել է շուրջը, և չտեսնելով ոչ մի հայի՝ հանկարծ լսել է մոր ճիչը, որը գալիս էր դատարանի դռնից: Նա պահանջել է դատավորից, որ մորը ներս թողնեն, որպեսզի նրա ներկայությամբ խոստովանություն անի: Երբ մայրը դատարան է մտել, Գյուլիզարը քաջությամբ գրկախառնվել է մոր հետ, և լավ իմանալով, որ դատավորը կաշառված է քրդերի կողմից, հայտարարել է, որ ինքը հայ է, և որ հայ էլ կմնա, որ իրեն Մուսա բեկը բռությամբ է առևանգել[245]:

Կուսակալը ստիպված աղջկան հանձնել է հայերին: Թուրքական կատաղած ամբոխը, դատարանի առաջ հավաքվելով փորձել է սպանել Գյուլիզարին: Վերջինս զորքի հրամանատարի և ոստիկանության պաշտպանության տակ փոխադրվել է հայոց թաղ և հանձնվել առաջնորդարանին[246]: Քաջ ու անվախ հայուհու այս պահվածքով և դատարանի արդարացմամբ հայ ժողովուրդը տարավ բարոյական հաղթանակ՝ ազատելով Գյուլիզարին թուրք-քրդական ճիվաղների ձեռքից:

1889 թվականի հուլիսին Գուլիզարի տոհմը, Մուսա բեկից խուսափելով, տեղափոխվել էր Պոլիս[247]: Գյուլիզարը արդարացվել էր, սակայն նույն թվականի դեկտեմբերի 5-ին թուրքական կաշառված դատարանն ազատ էր արձակել Մուսա բեկին՝ եղած ամբաստանությունները համարելով զրպարտանք: Չնայած Գյուլիզարը ազատված էր, բարոյական հաղթանակը հայությանն էր: Սակայն Մուսա բեկի ազատ արձակումը սպառնում էր հայության անվտանգությանը: Ահա թե ինչու հայ փաստաբանը դատի վերաքննություն է պահանջել: Վերաքննվող դատը տևել է երեք տարի, և միայն 1892 թվականի վերջին Մուսա բեկի աքսորման վճիռ է կայացվել[248]:

---

[245] **Գևոնյան Ա.,** նշվ. աշխ., էջ 78-79:
[246] Տե՛ս նույն տեղում, էջ 81-82:
[247] Տե՛ս նույն տեղում, էջ 90-91:
[248] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 487:

Մուսա բեկին աքսորեցին Մեքքա, քանի որ նրա կողմից կազմակերպված արյունահեղ դեպքերը միջազգային լայն արձագանք էին ստացել: Եվրոպական դեսպանությունների գոհացման համար նման վճիռ ընդունվեց:

Մուսա բեկի ոճրագործությունների քննությունը, որը 3-4 տարի շարունակ ալեկոծել էր հայությանը Մշո դաշտից մինչև Պոլիս, ավարտվեց հայերի բարոյական հաղթանակով, որը, անշուշտ, պայմանավորված էր այլադավանությունը հրապարակորեն մերժող և իրեն ծնած ժողովրդի ծոցը վերադառնալու հայ հերոսուհի կնոջ՝ Գյուլիզարի քաջ ու անվախ, աներեր վճռականությամբ[249]: Սակայն Մուսա բեկը ընդամենը մեկ տարի մնաց աքսորավայրում, որից հետո «հաջի» տիտղոսով վերադառնալով Տարոն, նոր հանձնարարություններ ստանալով թուրքական կառավարությունից՝ սկսեց ավելի զգուշորեն գործել:

Հերոսուհի Գյուլիզարը 1892 թվականին ամուսնացավ Մշո դաշտի Խեյպյան գյուղի քահանայի որդի, Մուշի առաջնորդարանի քարտուղար, գրող և Օսմանյան խորհրդի անդամ Գեղամ Տեր-Կարապետյանի (Մշո Գեղամ) հետ[250]: Այդ ամուսնությունը հանուն իր ազգի և կրոնի նահատակվելու պատրաստ հայուհու ըմբոստ պահվածքի ու հերոսության ճանաչումն ու գնահատումն էր:

1894 թվականին Մուսա բեկի հալածանքներից և հետապնդումներից ազատվելու համար Գեղամ Տեր-Կարապետյանն ու Գյուլիզարը տեղափոխվեցին Տիգրանակերտ, որտեղ Գեղամը զբաղվեց ուսուցչությամբ: Շուրջ չորս տարի այնտեղ մնալուց հետո նրանք վերադարձան Մուշ, որտեղ Գեղամը ստանձնեց Առաջնորդարանի քարտուղարության պաշտոնը: 1908 թվականին ընտրվեց Օսմանյան խորհրդարանի պատգամավոր և անմիջապես մեկնեց Պոլիս: 1915 թվականին հրաշքով փրկվեց:

---

[249] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 487:
[250] Տե՛ս նույն տեղում:

Շուրջ երեք տարի ապրելով մեծ եղեռնի սարսափներն ու հետևանքները՝ Գեղամը մահացավ 1918 թվականի նոյեմբերին Պոլսում և թաղվեց այստեղ գտնվող Հայաստանի առաջին հանրապետության պատվիրակության հետ բերված եռագույն դրոշով: Գյուլիզարը, փրկվելով ցեղասպանության արհավիրքից, կարողացել էր աղջկա հետ հեռանալ Փարիզ և այնտեղ բնակություն հաստատել: Սակայն վերջին տարիներին կուրացել էր: Նրա հուշերը գրի է առել աղջիկը՝ Արմենուհին:

Գյուլիզարի հերոսական արարքը Մուսա բեկի նման քուրդ և թուրք ոճրագործների դեմ պայքարում նոր հույսեր արթնացրեց հայության շրջանում, ոգևորեց ու վճռականություն հաղորդեց շատերին և հավատ ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ՝ նորանոր սխրագործությունների կոչելով 1890-ական թվականների ինքնապաշտպանական հերոսամարտերի տարիներին:

Այսպիսով՝ հայդուկային պայքարին և ընդհանրապես հայոց ազատագրական պայքարին նվիրված հերոս հայուհիները, հատկապես մայրերը, իրենց հերոսական գործունեությամբ, սկսած զենք-զինամթերք տեղափոխելուց, վերջացրած երիտասարդներին հայրենասիրական գաղափարախոսության դաստիարակմամբ և զենքը ձեռքին՝ անողոք թշնամու դեմ կռվելով, ապացուցեցին մի ճշմարտություն, որ հայ կինը միշտ էլ վտանգի պահին տղամարդու կողքին է:

Բերված փաստերը մեկ անգամ ևս ցույց են տալիս, որ հայդուկային պայքարում հայուհիները անձնազոհությամբ ու քաջությամբ կռվել են գրեթե բոլոր վայրերում և հաճախ հերոսաբար նահատակվել են՝ սերունդներին թողնելով մեծ հայրենասերի, նվիրյալ հայուհու անուն և փառք:

Բ . ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ
1915-1923 ԹԹ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐՈՒՄ

Ունենանք առյուծածին մայրեր,
որոնց արիական որդիներն ավելորդ դարձնեին
Հայաստանը պաշտպանող արհեստական ամրությունները:
Գ. Նժդեհ[251]

Թուրքական պետության ծրագրված ցեղասպանական քաղաքականությանը հայ ժողովուրդը մի շարք վայրերում հակադրեց իր դարավոր դիմադրական ոգին և ընտրելով գիտակցված մահը՝ ինքնապաշտպանական դյուցազնամարտ մղեց անարգ թշնամու դեմ Տարոն աշխարհից, Մուշից ու Սասունից մինչև Վան, Մուսա լեռից մինչև Ուրֆա, Տրապիզոն ու Շապին Գարահիսար: Դրանք հայոց դյուցազներգության նոր էջեր էին, գիտակցված ընտրություն՝ պատվավոր մահվան և տարագրության ճանապարհներին ոչնչացման միջև:

Հաճախ հարց է ծագում՝ ինչպես եղավ, որ 1915 թվականին հայկական որոշ շրջաններ ինքնապաշտպանության դրոշ պարզեցին և գիտակցված մահվան գնացին, իսկ այլ շրջաններ անձնատուր եղան թուրքական յաթաղանին: Ինչո՞ւ հնարավոր չեղավ համակարգել և փոխօգնության կապ հաստատել ինքնապաշտպանության դիմած տարբեր շրջանների միջև: Փաստորեն՝ 1915 թվականին արևմտահայությունը չուներ ինքնապաշտպանության կամ ապստամբության ինքնուրույն ծրագիր[252]:

Կազմակերպչական թերությունների պատճառը հենց ինքնապաշտպանության ինքնաբուխ բնույթն էր: Ակնհայտ է, որ հայերը ինք-

---

[251] **Նժդեհ Գ.,** Ընտիր երկեր, էջ 103:

[252] **Մինասյան Է.,** Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թվականին, «Հայկական բանակ», N 1-2 (83-84), Երևան, 2015, էջ 88:

նապաշտպանության են դիմել՝ մեծ մասամբ հապճեպ արձագանքելով իրադարձություններին, և նրանց գործողությունները թելադրված են եղել իրադրության սրությամբ:

Նշված ցավալի իրողությունը միևնույն ժամանակ ապացուցում է հայերի հասցեին թուրքական պաշտոնական քարոզչությամբ տարածվող այն մեղադրանքի անհիմն լինելը, թե իբր հայերն «անհուսալի տարր էին՝ խռովարար, ապստամբ, թիկունքից հարված հասցնելու ընդունակ»: Եթե այդ մեղադրանքը համապատասխաներ իրականությանը, ապա նախ հայերի ինքնապաշտպանությունը կլիներ ոչ թե օջախային, այլ զանգվածային, երկրորդ, այն ավելի մեծ թվով դեպքերում հաջող ելք կունենար և չէր ավարտվի քաջամարտիկների եղեռնական կոտորածով կամ հերոսական ինքնասպանությամբ, ինչով ավարտվեցին, օրինակ, Շապին Գարահիսարի և Ուրֆայի հերոսամարտերը: Եվ երրորդ, եթե Օսմանյան կայսրության հայ բնակչությունը պատրաստ լիներ և մտադրություն ունենար «թիկունքից հարված հասցնելու», ապա զենքի և պարտիզանական պայքարի մարտավարության հիմունքներին տիրապետող տղամարդկանց պակաս, ցավոք, չէր զգացվի, և թուրքական կառավարությունն էլ այդքան հեշտությամբ չէր կարողանա եղած առաջնորդներին մի հրամանով հավաքել, աքսորել կամ կոտորել՝ չհանդիպելով ոչ մի դիմադրության: Հայերի ինքնապաշտպանության պատմությունը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ հայերը մնացել են առանց առաջնորդի, որտեղ չեն եղել պայքարի կոչող և պայքար կազմակերպող անհատներ (ցավոք, մեծ մասամբ այդպես է եղել), բնակչությանը կոտորվել է գրեթե առանց դիմադրության:

Հայերի ինքնապաշտպանության կազմակերպման հարցում ապակողմնորոշող դեր է խաղացել նաև 1908 թվականի սահմանադրությունը. այն ջլատեց արևմտահայության մարտական ու քաղաքական ուժերը[253]: Բացի այդ՝ բացասական ներգործություն են ունեցել նաև նաև

[253] **Մինասյան Է.**, նշվ. հոդվածը, էջ 89:

հայ հասարակական-քաղաքական որոշ ղեկավար շրջանների դրսևորած անհեռատեսությունը, հասարակության տարբեր շերտերի միջև գոյություն ունեցող հակասություններն ու անմիաբանությունը:

Ինքնապաշտպանական մարտերը Վասպուրական նահանգում և հայ հերոսուհի կանայք

Առաջին ինքնապաշտպանական կռիվները տեղի են ունեցել Վանի նահանգում: Տագնապալի այդ օրերին, երբ օսմանյան զորքերը Կովկասյան ռազմաճակատում կրում էին պարտություն պարտության հետևից, Վանի կուսակալ Ջևդեթ փաշային հրահանգված էր արագ հաշվեհարդար տեսնել Վասպուրականի հանրության հետ[254]:

Գավառներում հրահրվել էին հայ-քրդական ընդհարումներ, որոնց հետևել էին հայ ազգային-հասարակական գործիչների ձերբակալություններն ու սպանությունները: Գավառներից փախած և Վան-Այգեստանի շրջանում ապաստանած գաղթականությունը պատմել է Հայոց ձորում, Գավաշում, Մոկսում, Կարկառում, Բերկրիում և այլ շրջաններում սկսված զանգվածային ջարդերի մասին[255]: Սակայն ազատագրական այս օրերին, ինչպես մեր պատմության մեջ բոլոր նման պարագաներում, գտնվել են անձինք, որոնք կարողացել են կազմակերպել ժողովրդի հերոսական գոյամարտը՝ հաղթական ավարտին հասցնելով այն:

1914 թվականի նոյեմբերի վերջերին Ոստանի կայմագամ Շուքրի բեյը հարձակում է գործել Գավաշ և Կարճկան գավառների սահմանագծում գտնվող հայաբնակ Բելու գյուղի վրա: Հայերը մի քանի օր դիմադրել են և նոր միայն դրանից հետո լքել գյուղը:

---

[254] **Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան),** Մեծ դեպքեր Վասպուրականում 1914-1915 թվականներին, Երևան, 1917, էջ 12:

[255] Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, հ. 1, Վանի նահանգ, Երևան, 2012, էջ 147-384:

1915 թվականի փետրվարի սկզբին արյունալի ընդհարումներ են տեղի ունեցել 18 հայաբնակ գյուղեր ունեցող Կարկառ գավառակում: Հայերի դիմադրությունը գլխավորել է ծկորցի Գալուստ Պողոսյանը (Վուշիկ Գալո): Մի քանի օր հետո կատաղի մարտեր են տեղի ունեցել Հարկենց գյուղի մոտ: Զոհեր տալով՝ հայ բնակչությունը քաշվել է դեպի Մոկս ու Գավաշ: Թուրքերը ցցի են հանել զոհված Վուշիկ Գալոյի գլուխը[256]:

1915 թվականի փետրվարին քրդերը Ամարե Չաթոյի գլխավորությամբ հարձակվել են Ալջավազ գավառի վրա, որն ուներ 21 հայկական գյուղ՝ 6000 բնակչությամբ: Հայերը դիմել են ինքնապաշտպանության արճրացի Օհան Դարբինյանի և կարաքեշիշցի Մկոյի գլխավորությամբ: Առեն գյուղում հայերը պարտության են մատնել քրդերին: Այդ մարտում սպանվել է Ամարե Չաթոն: Սակայն վրա հասած թուրքական զորքը՝ թնդանոթներով սպառազինված, արյունահեղ դատաստան է տեսել հայերի հետ[257]:

Թուրք-քրդական ուժերի հարձակումից պաշտպանվելու համար Վանից դեպի հյուսիս-արևելք գտնվող Արճակ գավառի Արճակ ու Խառակոնիս գյուղերի բնակիչները Շիրին Հակոբյանի գլխավորությամբ զենք են վերցրել և ճնշելով թուրքերին՝ քաշվել են Կզլջա լեռը, որտեղ նրանց միացել են նաև շրջակա այլ գյուղերի բազմաթիվ բնակիչներ: Այստեղից շուրջ 8000 հայեր, հետ մղելով թուրքերի գրոհը, իջել են Ավերակ գյուղը: Շուտով գյուղը պաշարել է թուրքական զորքը: Հայերը 100 կյանքի գնով ճեղքել են պաշարումը և շարժվել դեպի Վան[258]:

Թուրքերը լուրջ դիմադրության են հանդիպել նաև Լիմ, Զարանց,

---

[256] Վան-Վասպուրականի հերոսամարտը, Երևան, 1990, էջ 92-93:

[257] Տե՛ս նույն տեղում, էջ 61-62, նաև՝ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 1, Վանի նահանգ, էջ 260-306:

[258] «Վերապրած Խաչատուր Ամիրյանի վկայությունը Վանի գավառի Արճակ գյուղի մղած դիմադրության և զոհերի մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 1, Վանի նահանգ, էջ 48-49, նաև՝ «Վերապրած Ասպատուր Մուրադյանի վկայությունը Խառակոնիս գյուղի մղած դիմադրության և զոհերի մասին», նույն տեղում, էջ 101-102:

Սևան, Պախելիկ, Ոսկեբակ և այլ գյուղերում, որտեղից 3000 հայեր նույնպես քաշվել են դեպի Վարագա լեռը[259]:

Ուժեղ դիմադրություն է կազմակերպվել Հայոց ձոր գավառում, որը գտնվում էր Վանից դեպի հարավ: Գավառի միջով հոսող Խոշաբ գետի ափերին կային 35 հայկական գյուղեր: Երբ ապրիլի 6-ին թուրքերը ոստիկանապետ Էդհեմ բեյի գլխավորությամբ հարձակվել են հայկական գյուղերի վրա, հայերը քաշվել են Քերծ գյուղի լեռը՝ դիմելով ինքնապաշտպանության: Նրանց օրինակին հետևել են նաև հարևան գյուղերի հայերը[260]:

Ապրիլի 7-ին զենքի են դիմել և ինքնապաշտպանության անցել Կեմ և Անգղ գյուղերի բնակիչները, որոնք տվել են շուրջ 700 զոհ, սակայն նրանց մի մասը փրկվել է՝ ապաստան գտնելով Վանում: Իշխանի Գոմ գյուղում 1000 թուրքերի ու քրդերի դեմ են ելել 100 հայեր, որոնք արյունալի մարտերով շարժվել են դեպի Վարագա լեռ, որտեղ ամրացել էին նախկինում Քերծ լեռան վրա ապաստանած 2000 հայեր: Դրանով էլ ավարտվել է Հայոց ձորի ինքնապաշտպանությունը[261]:

Ինքնապաշտպանություն է կազմակերպվել նաև Թիմար գավառում, որի 50 գյուղերից 30-ը հայկական էին: Ապրիլի 8-ին քուրդ ցեղապետ Արիֆի ելուզակները պաշարել են Տիրամեր գյուղը՝ միաժամանակ հարձակվելով հարևան Ջանիկ գյուղի վրա: Այդ և շրջակա գյուղերի

---

[259] «Վերապրած Մկրտիչ Գրիգորյանի վկայությունը՝ Վանի գավառի Վան գավառակի Ոսկեբակ գյուղի ինքնապաշտպանության մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 1, Վանի նահանգ, էջ 48-49, «Վերապրած Պողոս Ավետիսյանի վկայությունը՝ Վանի գավառի Արճակի Սևան գյուղի կոտորածի մասին», նույն տեղում, էջ 85-91, «Վերապրած Սեդրակ Գասպարյանի վկայությունը՝ Վանի գավառի Վան գավառակի Արճակի Ձարանց գյուղի կոտորածի մասին», նույն տեղում, էջ 106-109:

[260] «Վերապրած քահանա Տեր-Աբրահամյանի և ուրիշների վկայությունները՝ Վանի գավառի Հայոց ձորի գյուղերի կոտորածների մասին», նույն տեղում, էջ 147-163:

[261] «Վերապրած Գարեգին Միրզիկյանի վկայությունը՝ Վանի գավառի Վան գավառակի Հայոց ձորի Անգղ գյուղի կոտորածի մասին», նույն տեղում, էջ 152-153, «Վերապրած Ղազար Մանուկյանի վկայությունը՝ Հայոց ձորի Կեմ գյուղի կոտորածի մասին», նույն տեղում, էջ 156-161, «Վերապրած Ձարուհի Հյուսյանի վկայությունը՝ Հայոց ձորի Իշխանի Գոմ գյուղի կոտորածի մասին», նույն տեղում, էջ 164-166:

բնակիչները, կռիվներ մղելով, շարժվել են դեպի Լիմ մինչև բանակի օգնության հասնելը: Ահեղ կռիվներ են տեղի ունեցել հատկապես լճափին, որից հետո 12000 հայեր տեղափոխվել են Լիմ կղզի[262], որտեղ էլ մնացել են մինչև կամավորական բանակի հասնելը:

Ապրիլի 12-ին թուրքական զորքն ու քրդական խուժանը հարձակվել են Այլուր մեծ գյուղի վրա: Այստեղ ինքնապաշտպանությունը գլխավորել են Աբիսողոմ և Սարգիս Մարդոյանները: Նրանք կարողացել են ետ մղել թշնամու մեծաքանակ ուժերի հարձակումները: Սակայն թշնամին, նոր համալրում ստանալով, խաբեությամբ մտել է գյուղ և կոտորել ամբողջ բնակչությանը[263]:

1915 թվականի փետրվարի 17-ին պարսկական սահմանում ռուսներից կրած պարտությունից հետո 600 չերքեզ զինվորներով Վան է վերադարձել Ջևդեթը: Նա չերքեզներին տեղավորել է հայկական թաղում գտնվող Համուդ աղայի զորանոցում և կարգադրել, որ հայ տղամարդիկ երեք օրվա ընթացքում ներկայանան զինվորագրման:

1915 թվականի ապրիլի 25-ին Ջևդեթը 1500 հոգանոց զորքով շարժվել է Վասպուրականի արծվաբույն Վարագի վրա: Կատաղի մարտեր են մղվել Շուշանց գյուղի մոտ: Սակայն ուժերն անհավասար են եղել: Գյուղի պաշտպանները, դիմադրելով թշնամուն, գիշերով անցել են Վան:

Քառասուներկուօրյա հերոսական ու հաղթական ինքնապաշտպանական կռիվներ են մղել Շատախի հայերը: Վանա լճի հարավում գտնվող Շատախի գավառը (հայտնի է նաև Ջերմաձոր անունով) բարձրաբերձ լեռների, անդնդախոր ձորերի և հորձանուտ գետերի մի ուրույն լեռնաշխարհ էր: Շատախի 110 գյուղերից 50-ը հայաբնակ էին,

---

[262] «Վերապրած Արմենակ Միրոյանի վկայությունը Վանի գավառի, Վանի գավառակի Թիմարի գավառի Ջանիկ գյուղի կոտորածի մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 1, Վանի նահանգ, էջ 103-146:

[263] «Վերապրած Վարդան Ջանոյանի վկայությունը Վանի գավառի Վանի գավառակի Թիմարի գավառի Այլուր գյուղի կոտորածի մասին», նույն տեղում, էջ 117-119:

մնացածը՝ քրդաբնակ, իսկ թուրքեր առհասարակ չեն եղել: Գավառի կենտրոնը Թաղ գյուղն էր, որը դարձել էր ապրիլյան կռիվների հենակետ: Երկու հարյուր տուն ունեցող գյուղը զուտ հայաբնակ էր և գտնվում էր երեք ամեհի ձորերի միացման տեղում: Ձենքը միշտ անբաժան է եղել շատախցի հայերից, և նրանցից սարսափել են ոչ միայն քրդերը, այլև թուրքական տեղական իշխանությունները: Այդ պատճառով էլ Ջևդեթը որոշել էր առաջինը քանդել այդ վտանգավոր բույնը:

Դեռևս 1904 թվականից Շատախում գործում էին դաշնակցական հայտնի գործիչներ Իշխանը (Նիկողայոս Պողոսյան), Արամը (Արամ Մանուկյան), Սարգիսը, Նիկոլը, Վահան Փափազյանը (Կոմս) և ուրիշներ: 1904-1914 թվականներին Շատախի 10000 գյուղացիությունը 7000 օսմանյան ոսկի էր տրամադրել ինքնապաշտպանության գործին[264]:

1912 թվականին ՀՅԴ-ի Վասպուրականի շրջանային ժողովը, հաշվի առնելով հայ ժողովրդի նկատմամբ իթթիհատականների թշնամական վերաբերմունքը, որոշել էր պատրաստ լինել ամեն տեսակի անակնկալի և կազմակերպել ինքնապաշտպանություն: Այդ որոշման հիման վրա գավառներում ստեղծվել էին ինքնապաշտպանության հատուկ զինվորական մարմիններ:

1912 թվականի հոկտեմբերին Արամի մասնակցությամբ Շատախի շրջանային ժողովն ընտրել էր «Անտառի» զինվորական մարմին, որի կազմում ընդգրկվել էին Հովսեփ Չոլոյանը, Միհրան Տեր-Մարգարյանը և Սամվել Մեսրոպյանը: Զինվորական մարմինը կազմել էր ամբողջ գավառի ինքնապաշտպանության տեղադրությունը, տնտեսության վիճակագրությունը: Հերոսամարտի նախօրյակին Շատախն ուներ 120 նոր տեսակի հրացան, 70 տասանոց մաուզեր ատրճանակ, 50-ից ավելի զանազան ատրճանակներ, 100-ից ավելի հին տիպի հրացան, մեծ քանակությամբ վառոդ, կապար, փամփուշտ: Ձենքն ու զինամթեր-

[264] Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 74:

քը պահեստավորել էին գյուղերից դուրս՝ ապահով տեղերում[265]:

Մշակվել էր ինքնապաշտպանական կռվի մի նախագիծ, որի համաձայն՝ կռվի ընթացքում հնարավոր էր ամբողջ շրջանի հայկական գյուղերը միացնել իրար: 1915 թվականի հունվարի 7-ին՝ թուրք և քուրդ ոճրագործների կողմից բազմաթիվ հայ գործիչների ու մտավորականների սպանություններից հետո, Զինվորական մարմինը Թաղում հրավիրել էր խորհրդակցություն, որտեղ որոշվել էին ռազմական կարևոր նշանակություն ունեցող վայրերը և պատասխանատու ղեկավարները: Ինքնապաշտպանության ճակատը մոտավորապես 50 կիլոմետր երկարությամբ մի գիծ էր:

1915 թվականի փետրվարի կեսերին խումարցի Պետրոսի սպանությամբ Շատախում դեպքերն ստացել էին «կայծակնային» ընթացք: Մարտի 25-ին ձերբակալվել էր Զինվորական մարմնի անդամ Հովսեփ Զոլոյանը: Նրան ազատելու փորձերը հաջողություն չէին ունեցել[266]: Զինվորական նոր մարմին էր կազմվել: Դրա կազմում ընդգրկվել էին Սամվել Մեսրոպյանը, Ազատ Միմոնյանը և Տիգրան Բաղդասարյանը: Զինվորական ջոկի հրամանատարներն ստանձնել են իրենց վստահված դիրքերի պաշտպանությունը. դրանք յոթն էին[267]:

Կռիվների սկզբում հայ մարտիկներին հաջողվել էր հնարամտորեն հարկադրել անձնատուր լինել Սիվտկին գյուղի՝ 20 հոգուց բաղկացած թուրքական ջոկատին, ինչպես նաև վերացնել Շահրուրի բերդի շրջակայքում գտնվող Խանի և Գոմերի թուրքական պահակախմբերը: Հայ մարտիկները ոչնչացրել էին նաև Սակ գյուղում գտնվող 14 թուրք ոստիկանների՝ տալով երեք զոհ: Ապրիլի 4-ին Թաղի թուրքական

---

[265] Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 75:

[266] Տե՛ս նույն տեղում, էջ 77:

[267] Տե՛ս նույն տեղում, էջ 80-81, նաև՝ «Վերապրած Լուսաբեր Թովմասյանի վկայությունը Վանի Շատախ գավառակի կռիվների մասին», «Մի խումբ վերապրածների վկայություններ Շատախ գյուղաքաղաքի և Փեսանդաշտի գյուղախմբի ինքնապաշտպանության մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 1 , Վանի նահանգ, էջ 384-388:

վարչության և հայերի միջև բանակցություններ էին սկսվել, որոնք, սակայն, որևէ արդյունք չէին տվել:

Ինքնապաշտպանության աշխատանքներին լծվել էին նաև կանայք, որոնք պարեն էին պատրաստել, հեռու վայրերից քար կրել՝ դիրքերն ամրացնելու նպատակով: Նույն օրն էլ պայթել էր առաջին գնդակը, և սկսվել էր կռիվը:

Այսպիսով՝ 1915 թվականի դարավոր փրկության և գերության շղթաները փշրելու առաջին քայլը կատարվել է Վասպուրական աշխարհի Շատախ գավառի կենտրոն Թաղ ավանում:

Ապրիլի 4-22-ը Թաղում և ամբողջ գավառում ընթացել են թեժ մարտեր: Առաջին օրում հայերն այրել են Ներքին Թաղի ոստիկանատունը, ձերբակալել են մի ոստիկանի ու գրավել 240 փամփուշտ և զինվորական այլ գույք[268]: Ապրիլի 7-ին հայերն այրել են ջրաղացի կամուրջը և կտրել թուրքերի հաղորդակցության ճանապարհները: Ապրիլի 17-ին Հայոց եկեղեցին վերածվել է զինագործական դարբնոցի: Այստեղ կենտրոնացվել են ուռկանների վրայից հանված կապարը, կշռաքարերը և մետաղյա այլ իրեր, սկսվել է վառոդի պատրաստումը, շարքից դուրս եկած զենքերի նորոգումը և փամփուշտների լիցքավորումը:

Ապրիլի 18-ին թուրք ոստիկանները փորձել են անցնել Հաշկանից կամուրջը, սակայն 5 զոհ տալով՝ նահանջել են: Ապրիլի 20-ին գործի է դրվել հայերի պատրաստած թնդանոթը[269]: Մինչև Շատախի կայմագամը դիմել է կուսակալին և գումարտակի հրամանատարին՝ պահանջելով ռազմամթերք, թնդանոթներ և լրացուցիչ զորամասեր, շատախցիներն ամուր փակել են հաղորդակցության ուղիները, և թուրքերը դրսի հետ հաղորդակցվել են միայն Մուսկավա գյուղի լեռնային անանցանելի կածաններով: Ապրիլի 28-ի առավոտյան Թաղի պաշտպանները հեռվում նկատել են ոչ թե սպիտակ դրոշ, ինչին սպասել են, այլ կարմիր, ինչը նշանակում էր, որ թշնամին մոտենում է: Դրությունն ան-

[268] ՀԱԱ, ֆ. 227, ց.1, գ. – 468, թ. 22-23:
[269] Տե՛ս նույն տեղում, ֆ. 227, ց. 1, գ.– 449, թ. 13-16:

հուսալի է դարձել: Այստեղ աչքի են ընկել Շատախի հերոսամարտի նշանավոր հայուհիները:

Շատախցի հայ կինը այս մարտերում իր պայքարելու եռանդի և զոհաբերության ոգին է ապացուցել: Հայերի համար ամենակարևոր դիրքը Սողվանց գյուղն էր, որտեղ կենտրոնացած էին բոլոր շրջաններից հասնող նամակներն ու տեղեկագրերը: Ապրիլի 28-ին Սողվանց գյուղը ևս պաշարվել է, և կատաղի կռիվ է սկսվել: Անհրաժեշտ է եղել կապ հաստատել հետզհետե տկարացող ներսի և դրսի գյուղերի միջև, նաև սուրհանդակ ուղարկել, բայց ո՞վ կհամարձակվեր ստանձնել այդ պարտականությունը: Եվ առաջ է եկել Սրբուհի (Սրբո) անունով 12 տարեկան մի աղջնակ[270]: Փոքրիկ հերոսուհին, վերցնելով նամակը, աներկյուղ սլացել է դժվարին վերելքով, թշնամու գնդակների տեղատարափի տակ ընկնելով և ելնելով, սողալով ու վազելով՝ վերջապես հասել է Սողվանցին և առանց ժամանակ կորցնելու՝ ետ վերադարձել՝ իր հետ բերելով ճշգրիտ տեղեկություններ: Քաջ ու անվախ աղջիկը պատվով կատարել է իր պարտականությունը, բայց Թաղն ընկել է պաշարման մեջ, և անհրաժեշտություն է առաջացել կապ ապահովել դրսի ուժերի հետ: Այս անգամ սուրհանդակի պարտականությունը հանձն է առել 4 զավակների մայր, աննման հայուհին՝ Մարտոյի կինը՝ Ասմարը: Նա, թշնամու շղթայի միջով Սիվտինկա ձորով անցնելով 10 կիլոմետրից ավելի ճանապարհ, Զինվորական մարմնի նամակը հասցրել է Ազատին: Ասմարը գիշերն է ճանապարհ ընկել և վեց ժամից հետո՝ առավոտյան, անվտանգ վերադարձել է՝ կապ հաստատելով դրսի ուժերի հետ: Դիրքերի միջև հաղորդակցությունը կարևոր էր մարտիկների կորովը բարձր պահելու տեսակետից, իսկ այս գործին նպաստողները առավելապես կանայք էին:

Մինչ մայիսի 4-ը պաշարված թաղեցիները վարել են դիրքային կռիվներ, երբ Բազիկը 10 մարտիկներով ճեղքել է թշնամու օղակը և

[270] Վան-Վասպուրական հերոսամարտը, էջ 87:

մտել Թաղ: Թաղի եկեղեցու՝ 38 օր լռած զանգերը կրկին ղողանջել են: Սողվան գյուղը վերագրավվել է, և նրա վրա կրկին ծածանվել է հայկական դրոշը: Հայտնի է դարձել, որ ռուսական բանակի կազմում գործող հայ կամավորական գնդերը մտել են Վան, և Արամը թաղեցիներին ուղարկել է 2 արկղ փամփուշտ ու 2 հրացան:

Մայիսի 11-ին քրդերը նույնպես լքել են Թաղի շրջակայքի իրենց դիրքերը՝ դիմելով փախուստի: Այսպես Շատախի 42-օրյա հերոսամարտն ավարտվել է փայլուն հաղթանակով: Մայիսի 12-ին Թաղը շուքով ու մեծարանքով է ընդունել Դրոյին, իսկ վերջինս հիացմունքի ու դրվատանքի խոսքերով ողջունել է ռազմիկ շատախցիներին[271]:

1915 թվականի ապրիլի սկզբներին Լևոն Շաղոյանի ղեկավարությամբ ինքնապաշտպանական կռիվներ են տեղի ունեցել նաև Ռշտունիքում կամ Գավաշ գավառում: Երբ Ոստանի կայմագամը զենքեր է պահանջել Գավաշի ժողովրդից և ապա հարձակում ձեռնարկել հայկական Փայխներ, Մոխրաբերդ ու այլ գյուղերի վրա, գավաշցիները մարտերով հեռացել և ապաստանել են սահմանակից Փեսանդաշտում: Այստեղ պատսպարվել է մոտ 6000 մարդ[272], որոնք զինված են եղել 150 հրացանով և 70 ատրճանակով:

Ապրիլի 14-16-ը թուրքերը ուժգին հարձակումներ են ձեռնարկել հատկապես Բարադոտիկի ուղղությամբ, որի ինքնապաշտպանությունը անձամբ ղեկավարել է Լևոն Շաղոյանը՝ իր տրամադրության տակ ունենալով 80 հրացանավորներ և 40 ատրճանակավորներ: Թշնամու գրոհներն ուղեկցվել են լեռնային թնդանոթի կատաղի հրաձգությամբ: Սակայն այդ բոլոր գրոհներն ավարտվել են անհաջողությամբ և թշնամու մարդկային կորուստներով: Ապրիլի 17-ին թուրքերը ձեռնարկել են վերջին հարձակումը՝ փորձելով Արտոս լեռան գագաթով անցնել փեսանդաշտցիների թիկունք: Սակայն Լևոն Շաղոյանի հմուտ գործողությունների շնորհիվ թուրք ոստիկանները ծուղակի մեջ են ընկել և թող-

---

[271] Վան-Վասպուրական հերոսամարտը, էջ 88-89:
[272] Տե՛ս նույն տեղում, էջ 90-91:

նելով հինգ սպանված ու մեծ թվով վիրավորներ՝ դիմել են փախուստի: Մայիսի 10-ին Փեսանդաշտ են մտել հայ կամավորական գնդերը:

Վասպուրականի 1915 թվականի ինքնապաշտպանական կռիվներ-ի ժամանակ աչքի ընկած հերոսներից էին *Համասփյուռ Միրզոյանը (Խամաս), Զարուհի Տերոյանը (Ժենյա), Պնենց Տաթևիկը, Սախոյենց Նանոն*: Նրանք կռվել են Վանի հերոսամարտի օրերին և փրկվել 1915 թվականի մայիսին ռուսական գորքի օգնությամբ:

Վանի հերոսամարտի մասնակիցներից Քյանքան Խամբոյի աղջիկը՝ 19-ամյա **Սևոն (Իսկուհի Համբարձումյան)**, կյանքը վտանգելով, հետախուզել էր թշնամու՝ Շահբենդերյանի դիրքը և հայ մարտիկներին առաջնորդել այնտեղ, նրանց հետ կռվելով՝ հաղթանակ էր տարել և պարգևատրվել «Պատվո խաչ» շքանշանով:

Սուրհանդակի պարտականությունները կատարած 4 զավակների մայր **Աղավնի Վարպետյանը** թշնամու աչքի առաջ անցել էր 10 կմ ճանապարհ և Թաղի պաշտպաններին հասցրել անհրաժեշտ լուրերը: Դրա շնորհիվ Բազիկի ղեկավարությամբ հայ մարտիկները ճեղքել էին թշնամու օղակը և վերջնականապես ազատագրել շրջակա տարածքները:

Վանի հերոսամարտը և հայ հերոսուհի կանայք

1915 թվականին հայերի ինքնապաշտպանության փառապսակը դարձավ Վանի հերոսամարտը:

Վանը կազմված էր երկու մասից. արևմտյան մասը Քաղաքն էր, կամ Քաղաքամեջը՝ հինավուրց բերդով, պետական հիմնարկներով, զինապահեստով, շուկայով, իսկ արևելյան մասը Այգեստանն էր: Դրանք միանում էին յոթ կիլոմետր երկարությամբ մի փողոցով՝ Սղգայի ջադդանով, որի կենտրոնում գտնվում էր Խաչփողանի հրապարակը: Վանն ուներ 41000 բնակիչ, որից 23000-ը հայեր էին, 18000-ը՝ մահմեդականներ: Քաղաքամեջում ապրում էր 4000 մարդ,

որից 3000-ը՝ հայեր[273] : Մնացած բնակչությունն ապրում էր Այգեստանում, որի հայաբնակ թաղերն էին Արարքը, Նորաշենը, Հայնկոյսները: Քաղաքի և Այգեստանի միջև ձգվում էր մի ամայի տարածություն, որտեղ նախկինում գտնվել է այդ ժամանակ արդեն դատարկված Հայկավանք թաղը: Քաղաքից դեպի հարավ-արևելք գտնվում էր թրքաբնակ Շամիրամի թաղը, իսկ հարավային Կլոր դար թաղն ուներ խառը բնակչություն: Թուրքերը հայկական թաղերի թիկունքում ստեղծել էին Հաջի-Բեքիրի, Թոփրակ-կալեի, Համուդ աղայի զորանոցները: Եթե Քաղաքամեջը պարսպապատ էր ու հենված Շամիրամի ժայռերին, ապա Այգեստանը գրեթե զուրկ էր բնական ամրություններից ու շրջապատված էր այգիներով: Պատերազմն սկսվելուց հետո Վան էին եկել շուրջ 70000 գաղթականներ, ինչի հետևանքով, մի կողմից, դժվարանում էր պարենավորման գործը, իսկ մյուս կողմից՝ նրանք ծառայում էին որպես զինվորական ուժի աղբյուր:

Հայերին բնաջնջելու մտադրությամբ կանոնավոր մեծաքանակ զինվորական ուժերով դեպի Վան է շտապել կուսակալ Ջևդեթը: Նախ նա տեսակցություն է ունեցել դաշնակցական գործիչների՝ օսմանյան խորհրդարանի Վանի պատգամավոր Վռամյանի (Օննիկ Դերձակյան) և Արամ Մանուկյանի հետ և աշխատել է կեղծ հավաստիացումներով ու խոստումներով բթացնել նրանց զգոնությունը, ապա պահանջել է, որ Վանի երիտասարդությունը զորակոչվի: 1915 թվականի ապրիլի 1-ին Վռամյանի և Մանուկյանի հորդորներով Այգեստանի Նորաշեն եկեղեցում գումարված խորհրդակցությունը հավանություն է տվել Ջևդեթի պահանջին: Ապրիլի 2-ին Վանի առաջնորդական փոխանորդ Եզնիկ վարդապետ Ներկարարյանի անունից հրապարակվել է մի կոչ՝ քաղաքացիական պարտականությունը կատարելու մասին: Սակայն այդ ամենը առաջացրել է Վանի հայ ազգաբնակչության զայրույթը, քանի որ ժողովուրդը կանխազգում էր նախապատրաստվող ահավոր սպան-

[273] **Կարապետյան Մ.**, Հայաստանը 1912-1920 թթ., Երևան, 2003, էջ 105:

դը: Մթնոլորտն ավելի է շիկացել, երբ Ջևդեթը Շատախի դեպքերը քննելու համար այնտեղ է ուղարկել հաշտարար հանձնաժողով՝ դաշնակցական գործիչ Վանա Իշխանի գլխավորությամբ, սակայն ապրիլի 4-ին ճանապարհին՝ Հիրճ գյուղում, կազմակերպվել է նրա տմարդի սպանությունը[274]: Նույնպիսի խարդախ ճանապարհով սպանվել է նաև Վռամյանը, իսկ Արամը միայն վերջին պահին է կարողացել խուսափել թակարդից:

Ջևդեթը արագորեն համալրել է իր զորքերը, բերել է տվել թնդանոթներ և նախապատրաստվել հարձակման: Ընդհատվել է կապը Քաղաքամեջի ու Այգեստանի միջև: Երբ դանակն արդեն ոսկորին է հասել, Վանի հայությունը փրկությունը տեսել է միայն ինքնապաշտպանության մեջ: Խաղաղ ժամանակ վանեցիները պառակտված չեն եղել «Դաշնակցություն», «Հնչակյան» և «Ռամկավար» կուսակցությունների միջև: Սակայն ազգային դժբախտության ծանր պահին նրանք հասկացել են այդ գործելակերպի կորստաբերությունը և մի կողմ թողնելով կուսակցական տարաձայնությունները՝ միասնական մարտի են ելել թուրք ջարդարարների դեմ[275]:

Վանի ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար ստեղծվել է Հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին՝ ռամկավար Արմենակ Եկարյանի նախագահությամբ: Նրա կազմում ընդգրկվել են դաշնակցականներ Կայծակ Առաքելը և Բուլղարացի Գրիգորը, ինչպես նաև խորհրդականներից՝ դաշնակցական Արամ Մանուկյանը, ռամկավար Գաբրիել Սեմերճյանը, հնչակյան Հրանտ Գալիկյանը, նախկին արմենական, անկուսակցական նկարիչ Փանոս Թերլեմեզյանը: Ստեղծվել են նաև պարենավորման, զինբաշխ, հայթայթիչ, «Կարմիր խաչի» և տեղեկատու այլ մարմիններ[276]:

---

[274] «Վերապրած Եզնիկ Վարդապետ Ներկարարյանի վկայությունը Վանի ինքնապաշտպանության սկզբի մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 1, Վանի նահանգ, էջ 29-31:

[275] **Մխիթարյան Օ.**, Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 16:

[276] Մեծ եղեռնի հերոսապատում. 1915 թ. ինքնապաշտպանական հերոսամարտերը,

Հայերն ունեցել են շուրջ 1500 մարտիկ և նույնքան էլ հրացան ու մաուզեր, բայց սահմանափակ թվով փամփուշտ: Այս փոքրաթիվ ուժերի դեմ կանգնած է եղել թուրքական կանոնավոր 10-12 հազարանոց բանակը՝ 12 թնդանոթով: Թուրքական զորքը ղեկավարել են փորձված գերմանացի սպաներ: Հայերը ցուցաբերել են մեծագույն կազմակերպվածություն և խիզախություն: Այգեստանը բաժանվել է հինգ պաշտպանական շրջանների՝ 73 դիրքերով, որտեղ ամրացել են 1053 զինվոր՝ 505 հրացանով, 75 հազար փամփուշտով, 549 մաուզերով ու 40 հազար փամփուշտով[277]: Զինվորական մարմինը անհրաժեշտ հրահանգներ է մշակել կռվողների համար: Դրանցում հաջողության գրավական են համարվել կարգապահությունն ու կազմակերպվածությունը, հրամանների ճշգրիտ կատարումը, գնդակների խնայողական ու նպատակային ծախսումը, աչալրջությունը և այլն[278]:

1915 թվականի ապրիլի 7-ի առավոտյան թուրքերը սկսել են հարձակումը: Թնդանոթային համազարկերը ավերածություն են առաջացրել շուրջբոլորը: Հայերը կռվել են չտեսնված համառությամբ ու կազմակերպվածությամբ՝ ամուր պահպանելով իրենց դիրքերը: Ավելին՝ կռվի հենց առաջին օրը հայերին հաջողվել է գրավել Խաչփողանում գտնվող թուրքական դիրքի հեռագրատունը և պաշարել Համուդ աղայի զորանոցը: Այդ զորանոցի գրավումն ունեցել է կարևոր նշանակություն, որովհետև այն գտնվելիս է եղել հայկական թաղերի կենտրոնում, որտեղի թուրքերն ուժեղ կրակ են բաց թողել շրջակայքի վրա:

Թեհրան, 1982, էջ 274, նաև՝ **Nogales R. de**, Four Years Beneath the Crescent., Transl. from the Spanish by M. Lee. With an introd. by Lieut.-Colonel E. Davis, N. Y., London, 1926, p. 27:

[277] Մեծ եղեռնի հերոսապատում. 1915 թ. ինքնապաշտպանական հերոսամարտերը, էջ 275, նաև՝ **Կոսոյան Հ.**, Վան բերդաքաղաքի ժողովրդային հերոսամարտը, Թեհրան, 1966, էջ 57-59, **Bryce**, The Treatment of Armenians In Ottoman Empire, 1915-1916, London, 1916, p. 35:

[278] Մեծ եղեռնի հերոսապատում. 1915 թ. ինքնապաշտպանական հերոսամարտերը, էջ 275, նաև՝ **Բուրանյան Ե.**, Իմ անցյալի հուշերից, Վասպուրականի ողբերգությունը, Երևան, 2013, էջ 63:

Ճիշտ է, ապրիլի 8-ին հայ մարտիկներն ստիպված են եղել թողնել Հայնկույսների եկեղեցու դիմաց գտնվող Շահբենդերյանի դիրքը, բայց դրա փոխարեն հաջողվել է հրդեհել անգլիական հյուպատոսարանի շենքը, որտեղ դիրքավորվել էին մի քանի տասնյակ թուրք ոստիկաններ[279]: Հերոսամարտի երրորդ օրը՝ ապրիլի 9-ին, վանեցիները գրավել են Համուդ աղայի զորանոցը: Բուլղարացի Գրիգորի առաջարկով այն պայթեցվել է:

Զորանոցի ոչնչացման հաջորդ օրը՝ ապրիլի 10-ին, այգեստանցիները կարողացել են հետ գրավել Շահբենդերյանի դիրքը: Այդ գործում կարևոր դեր է կատարել Սևոն՝ 19-ամյա Իսկուհի Համբարձումյանը: Նա, կյանքը վտանգելով, հետախուզել է դիրքը և այնտեղ առաջնորդել մարտիկներին: Քաջարի աղջիկը պարգևատրվել է Զինվորական մարմնի սահմանած «Պատվո խաչ» շքանշանով[280]:

Ապրիլի 10-ին Զինվորական մարմինը հրապարակել է մի կոչ, որում նշվում էր Վանը 24 ժամվա ընթացքում ծնկի բերելու Ջևդեթի ծրագրի ձախողման մասին՝ ընդգծելով, որ այս կռիվը միայն գոյության կռիվ չէր, այլև կռիվ՝ հանուն ճշմարտության և արդարության՝ ցույց տալու համար, որ հայը գիտի կռվել և մեռնել զենքը ձեռքին:

Մարտերը գնալով ավելի են թեժացել, և Այգեստանի հայերը նորանոր սխրանքներ են գործել: Ապրիլի 15-ին Տիգրան վարժապետ Այիճյանը, վտանգի ենթարկելով կյանքը, հրկիզել է Արարուց հրապարակում գտնվող և լուրջ վտանգ ներկայացնող թուրքական ոստիկանատունը:

Ինքնապաշտպանությունը բարձր մակարդակի կազմակերպվածությամբ սկսվել է նաև Քաղաքամեջում, որը կտրված էր Այգեստանից: Հյուսիսից այն պաշտպանված էր Շամիրամի բերդով ու գահավեժ լեռներով, իսկ մյուս երեք կողմերից շրջապատված էր սեպաձև պարիսպներով: Այստեղ էին գտնվում պետական հիմնարկները և Հայոց

[279] Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 38:
[280] Տե՛ս նույն տեղում, էջ 39-40:

առաջնորդարանը: Այգեստանում ևս կազմվել էր Զինվորական մարմին՝ Հիսուսյան վարժարանի տեսուչ Հայկակ Կոսոյանի ղեկավարությամբ: Անդամներն էին՝ Լևոն Գալջյանը, Միհրան Թորամանյանը, Դավիթ Սարգսյանը, Միհրդատ Միրզախանյանը, Հարություն Ներկարարյանը, Սարգիս Շահինյանը: Ստեղծվել էին նաև մատակարարման, «Կարմիր խաչի» և այլ մարմիններ [281]:

Ինքնապաշտպանության՝ երկու վերստ ձգվող շղթան բաժանվել էր 4 շրջանների և բազմաթիվ դիրքերի: Սակայն զենքի պակաս կար՝ 100 հրացան, 210 ատրճանակ, 60 հազար փամփուշտ, մինչդեռ հայերի դիրքերը գտնվում էին թուրքերի օղակի մեջ [282]:

1915 թվականի ապրիլի 7-ին՝ առավոտյան ժամը 9-ին՝ Այգեստանի վրա հարձակվելուց երեք ժամ հետո, թուրքերը այստեղ էլ անցել էին գրոհի: Հայերը ոչ միայն քաջաբար պաշտպանվել էին, այլև հենց առաջին օրը հրդեհել էին փոստ-հեռագրատունը, ոստիկանատունը և դատարանը, որոնք թուրքերի համար դարձել էին ամուր դիրքեր: Այդ գործողությունների ժամանակ աչքի էին ընկել 16-ամյա Արամ Կապարուկյանը և Աղավնի Վարդապետյանը*:* Երկրորդ օրը՝ ապրիլի 8-ին, հայերը կարողացել էին ոչնչացնել կառավարական նոր փոստատունը և զինարանը[283]:

Աղավնի Վարդապետյանը անտրտունջ դիմագրավել էր դժվարությունները և արհամարհելով մահը՝ գործել էր անձնուրացությամբ և խիզախությամբ: Ահա թե ինչպես են նկարագրված հերոսուհու սխրագործությունները «Վան-Վասպուրականի հերոսամարտը» աշխատության մեջ. «Մեծ էր ռազմական խոյանքը բոլոր շրջանապետներուն, բայց ավելի խիզախ՝ երկրորդ շրջանի շրջանապետ Հարոյին և խմբապետերուն, որոնք, գլուխ անցած իրենց մարտիկներուն, հանդուգն հարձակումով դուրս թռան գրավելու Թեքալիֆի Հարբիյեի շենքը, երեք

[281] **Կարապետյան Մ.**, նշվ. աշխ., էջ 109:
[282] Տե՛ս նույն տեղում:
[283] Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 52:

կողմե թշնամու կրակի տակ: Խումբը երբ կհառաջանար, անոր ընկերացավ տիկ. Աղավնի Վարդապետյանը՝ 40 տարու մայր մը, որ ձգած իր փոքրիկները, գնաց օգնելու և ճամփա ցուցնելու: Բուն դռնեն անհնար եղավ ներս մտնել, ահա լսվեցավ տիկ. Աղավնիի սուր ճիչը, «Այսպես եկեք, այստեղը քանդեցեք, այս դուռը խորտակեցեք...», ու ինքը միևնույն ատեն կփորեր, կփլցներ. «Դեհ ձեզ մատաղ, տղաներ, շուտ-շուտ». մեկ քանի րոպե ահա քանդվեցան անցքերը, խորտակվեցան դռները, հերոսուհու ջանքով շենքը գրավվեցավ: Թշնամին խոր խոցվեցավ, հակառակ իր ջանքերուն, փորձեց հրդեհել գրաված պահեստը: Չեմ կարող չհիշել այդ վայրկյանը, երբ հոն ներկա էի, երբ թշնամու հրձիգը դուրսեն բռնկեցուցած էր շենքը: «Այստեղ հասեք, ճչաց մեր դյուցազնուհին, ջուր, ջուր, շենքը կրակ տվին»: Ահա նույն ինքը՝ Աղավնին, ջրի թիթեղը ձեռքին, վազեց դուրս, վերադարձավ ջրով լի..., մի րոպե, և բոլորը նույն աշխատանքին լծվեցան: Պսակվեցան ջանքերը, հրդեհը մարեց, և բոլորս համատարած կռվի ժխորի մեջ կանչեցինք. «Բռավո տիկ. Աղավնի, կեցցե՛ս դու»: Կռվի ընթացքին Քաղաքամեջը ունեցավ ուրիշ շատ Աղավնիներ, որոնք մինչև վերջ անբաժան մնացին մեզնից՝ բաժնելով զրկանքն ու արյունը»[284]: Այսպես Աղավնի Վարպետյանը Վանի հերոսամարտի իսկական հերոսուհին եղավ:

Ապրիլի 19-ին թուրքերի ձեռնարկած կատաղի հարձակումը ոչ մի արդյունք չտվեց. նրանք մեծ կորուստներ էին կրել՝ նահանջելով ելման դիրքեր: Զենքով ու զինամթերքով իրենց ապահովելու համար վանեցիները ստեղծել էին զինարան, փամփշտարան և վառոդարան, որտեղ աշխատում էին համապատասխան մասնագետներ՝ Վանի վարժապետանոցի տնօրեն, քիմիայի պրոֆեսոր Միքայել Մինասյանի ղեկավարությամբ: Նրա օգնականներն էին Վարդան Պապիկյանը և Հարություն Կաքավյանը: Այստեղ արագ նորոգվում էին վնասված զենքերը,

[284] Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 52:

պատրաստվում էր վառոդ, նույնիսկ ձուլվել էր երկու թնդանոթ[285]:

Կենսականորեն կարևոր դեր է խաղացել 500 արհեստավորներից կազմված «Ամրաշենների խումբը», որն արագ հասել է ճակատի առավել վտանգված տեղամասերը և անմիջապես վերականգնել թնդանոթային կրակով կատարված ավերածությունները, թշնամու դիրքերի տակ ստորերկրյա անցքեր է բացել, որտեղ ռումբերի պայթեցմամբ քարուքանդ են արվել թշնամու դիրքերը: Խմբի զինվորների շարքում էին Շավարշ Հովիվյանը, Ազատ Խորենյանը և Գրիգոր Պաջիրյանը[286]:

Անգնահատելի դեր է ունեցել Հովհաննես Բուճիկանյանի ղեկավարած «Ֆանֆառ» նվագախումբը, որը կազմված էր վարժապետանոցի մի խումբ աշակերտներից: Նվագախումբը հասել էր ամենավտանգավոր դիրքերը և իր աշխույժ նվագով ոչ միայն ոգևորել էր հայ մարտիկներին, այլև նյարդայնացրել ու խուճապի էր մատնել թուրքերին: Նվագախմբի ղեկավարն էր Մարգար Փախչոյանը:

Վանեցիների դիմադրողական ուժը ոչ միայն չէր թուլացել, այլև աճել էր, որովհետև նրանք ձեռք էին բերել մարտնչելու փորձ, և, բացի այդ, նրանց հույս էր ներշնչել ռուսական զորքերի առաջխաղացումը դեպի Վան: Իսկ ռուսական զորքը և Անդրանիկի գլխավորած հայ կամավորների 1-ին գունդը, 1915 թվականի ապրիլի 20-ին Դիլմանի ճակատամարտում ջախջախելով Հալիլ բեյի թուրքական բանակը, առաջ էին շարժվել դեպի Վան: Ռուսական մի այլ զորաբանակ էլ, որի առաջապահն էր Դրոյի գլխավորած հայ կամավորների 2-րդ գունդը, Վանին էր մոտեցել Իգդիր-Բերկրի գծով: Ռուսական զորքերի և հայ կամավորների մոտենալուց ահաբեկված Ջևդեթը ապրիլի 21-ին ձեռնարկել էր նոր հարձակում: Ուժեղ ռմբակոծությունից Վանը կորել էր հրի ու ծխի մեջ, սակայն վանեցիները՝ մեծ ու փոքր, անձնուրաց կռվի էին ելել ատելի ոսոխի դեմ:

---

[285] Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 33, նաև՝ **Սահակյան Ռ.**, Վան քաղաքի հայության ինքնապաշտպանությունը 1915 թ., «Հայոց բանակ», N 1, Երևան, 1996, **Ussher C. D., Knapp G. H.,** An American Physician in Turkey. A Narrative of Adventures in Peace And War, Boston and N. Y., 1917, pp. 252-253:

[286] Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 34:

Չտեսնված համարձակությամբ այդ կռվում աչքի են ընկել պատանի վանեցիները: Նրանք ոչ միայն կապավորների դեր են կատարել, փամփուշտ ու պարեն հասցրել դիրքերը, այլև արհամարհելով մահը՝ թաց լաթերով հանգցրել են թուրքական պատրույգավոր ռումբերը, վնասազերծել են դրանք և վառոդը հասցրել փամփուշտ լցնողներին: Այդ խիստ վտանգավոր գործում աչքի են ընկել 12-14-ամյա պատանիներ Ասլանը, Բաբկենը, Արտաշեսը, Ոստանիկը, Մարտիրոսը և ուրիշներ, որոնց մի մասը զոհվել է՝ չհասցնելով կտրել ռումբի վառվող պատրույգը: Այդ խիզախ պատանիների մեջ էր նաև Արամ Թովմասյանը՝ ապագա շնորհաշատ երգիծաբան Լեռ Կամսարը: Հայ կաթոլիկների դպրոցի սան Կիրակոս Կիրակոսյանն անցել է թշնամու դիրքերը, սպանել երկու թուրք զինվորների և նրանց զենքերը շալակած՝ վերադարձել է՝ արժանանալով «Պատվո խաչի»[287] :

Կռիվները վերսկսվել են ապրիլի 24-ին և գնալով ավելի սաստկացել: Ապրիլի 28-ին Ջևդեթը ձեռնարկել է, կարելի է ասել, վերջին մեծ հարձակումը, և այդ օրը տեղի են ունեցել ամենակատաղի կռիվները, սակայն վանեցիները ոչ մի թիզ հող չեն զիջել: Ապրիլի 30-ին հայերը գրավել են Խաչփողանի կարևոր կետերը: Թուրքերը շարունակել են կռիվը մինչև մայիսի 3-ը՝ գլխավորապես ռմբակոծելով քաղաքը: Սակայն մոտեցող ռուսական բանակի, հայ կամավորների և Վանի հայության հուժկու հարվածների տակ թշնամին խուճապահար փախուստի է դիմել: Մայիսի 3-ին հայ մարտիկները լիովին ազատագրել են քաղաքը, հրդեհել թուրքական բռնապետության ամրոց Հաջի-Բեքիրի զորանոցը և ապա Վանի բերդի վրա բարձրացրել հայոց դրոշը: Այգեստանցիները և Քաղաքամեջի պաշտպանները, բոլոր ցավերն ու տառապանքները մոռացած, ցնծությամբ են դիմավորել միմյանց և ջերմորեն գրկախառնվել են:

Մայիսի 5-ին երկու կողմերից Վան են մտել հայ կամավորների երկու խմբեր՝ Ներքին Թիմարից Դրոն և Համազասպը, Վերին Թիմա-

[287] Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 40-41:

ից՝ Արճակի վրայով՝ Քեռին ու Վարդանը (ըստ Հ. Կոսոյանի՝ հայ կամավորները և ռուսական բանակը Վան են մտել մայիսի 7-ին) [288], իսկ ավելի շուտ, ըստ Հ. Գևորգյանի, Վան էր մտել Դրոյի զորախմբի առաջապահ ջոկատը՝ դաշնակցական Խեչոյի և Դալի Ղազարի գլխավորությամբ, ապա մայիսի 6-ին Վան է մտել բուն ռուսական բանակը՝ գեներալ Նիկոլաևի հրամանատարությամբ: Այդպես ավարտվել է Վանի 30-օրյա հերոսամարտը, որի ընթացքում հայերի կորուստը կազմել է 200 սպանված և վիրավոր:

Վանի հերոսամարտը հայոց ազատամարտի փայլուն դրվագներից է և պատիվ է բերում հայ ժողովրդին: Վանի հռչակված արհեստավորությունը երևան բերեց միջնադարյան համքարական քաղաքապաշտպանության կազմակերպչական հատկանիշներ, դրսևորեց գերազանց ռազմունակություն ու կարգապահություն: Նրա շարքերից դուրս եկան ռազմավարական բնատուր ընդունակությունների տեր այնպիսի ռազմիկներ, ինչպիսիք էին շրջանների պետեր Նշան Նալբանդյանը, Ռաֆայել Տեր-Խաչատրյանը, Հովհաննես Մանուկյանը, Փանոս Ժամհարյանը, Ալես Պարսամյանը և ուրիշներ, որոնց հրամանատարության ներքո ընդամենը 1054 հրացանով ու մաուզերով զինված անվեհեր մարտիկները ետ էին մղում 10000-ից ավելի զինվորների, տասնյակ թնդանոթներ և անսպառ ռազմամթերք ունեցող թուրքական կանոնավոր բանակի ու մոլեռանդ ամբոխի կատաղի գրոհները:

Իսկ թե որքան խելամտորեն և ռազմագիտական հմտությամբ է կազմակերպվել ինքնապաշտպանությունը, երևում է այն փաստից, որ ցարական բանակի շտաբի զինվորականությունը, մանրամասնորեն ուսումնասիրելով պաշտպանական համակարգը, կազմել է մի ընդարձակ քարտեզ և ներկայացրել գլխավոր հրամանատարությանը՝ որպես ռազմագիտական սկզբունքներով չնախատեսված մի երևույթ: Գեներալ Նազարբեկովը, լսելով վանեցիների գոյամարտի մանրամասները, խոնավացած աչքերով ասել է. «Տեսնելով ձեզ, ձեր երկիրը և մեր ժողո-

[288] **Կոսոյան Հ.**, Վաղ-Քաղաքամեջի ապրիլյան կռիվները, Երևան, 1992, էջ 130:

վուրդը, ես հպարտ եմ, որ հայ եմ»[289]:

Մայիսի 6 (19)-ին՝ հայ կամավորական գնդերի և ռուսական բանակի մուտքից հետո, Վանի և ազատագրված շրջանների ժամանակավոր նահանգապետ է նշանակվել Արամ Մանուկյանը: Նրա գլխավորությամբ Վանում ստեղծված հայկական իշխանությունը ազատագրական պայքարի առաջին քաղաքական ձեռքբերումն էր, որը, ցավոք, կարճ կյանք ունեցավ՝ տևելով մինչև հուլիսի 2-ը, երբ ռուսական զորքի նահանջի պատճառով Վանի հայկական իշխանությունը դադարեց գործել: Այն խորհրդանշում էր մեր պետականության օրրան պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի՝ շուրջ 800-ամյա օտար լծից ազատված հողի վրա նոր հայկական իշխանության ծնունդը:

Վան-Վասպուրականի հերոսամարտի հերոս հայուհիներից էր **Համասփյուռ Միրզոյանը (Խամաս)**: Նա անցել է ազատագրական պայքարի փառավոր ուղի՝ ֆիդայական պայքարից մինչև ինքնապաշտպանական հերոսամարտ:

Հ. Միրզոյանը ծնվել է հեղափոխական գործունեությանը նվիրված ընտանիքում: Ծայրահեղ աղքատության պատճառով մայրը և մեծ քույրը՝ Գինոն, ուրիշների համար հաց են թխել և տաք թոնիրների մեջ կռանալու հետևանքով նրանց տեսողությունը շատ է վատացել: Սակայն Գինոն առաջնակարգ սուրհանդակ է եղել, պատրաստակամ՝ ծառայելու ֆիդայիներին, վստահելի պահակ՝ իրենց տանը ապաստանող փախստականների համար[290]: Հ. Միրզոյանը ուներ նաև մի եղբայր՝ Միրզոյի Կարոն, որը դարբին էր և նվիրյալ կուսակցական: Կինը՝ Կալիպսեն, ճարպիկ էր, խելացի և գաղտնի հանձնարարություններ է կատարել՝ նույնիսկ ամենատագնապալի պահերին խուճապի չմատնվելով: Ունեցել է նաև փոքր քույր՝ Կատիկը, որը մեծ գուրգուրանք էր տածում հեղափոխական գործիչների և ֆիդայիների հանդեպ:

---

[289] Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 5:
[290] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 92:

Վասպուրականի հայտնի հեղափոխական դեմքերից Կոմսը, նկարագրելով Խամասին, գրել է. «Նիհար էր և տգեղ, աչքերն էին, որ կխոսեին՝ մոլեռանդ հավատացյալի երկու վառ կերոններ: Մեկն էր քչերից, որ ուներ մտավոր պաշար և հանրային եռանդ»[291]:

Խամասը ուսուցչուհի էր: Չնչին աշխատավարձով աշխատում էր աղջիկների վարժարանում, սակայն իրականում երդվյալ հեղափոխական գործիչ էր: Հանդուգն էր և կորովի, անվրդով և վճռական, նվիրված էր հեղափոխական գաղտնի ձեռնարկներին: Հայ ժողովրդի ազատագրումը նրա համար սուրբ նպատակ էր, որի համար պատրաստ էր նույնիսկ զոհել իր կյանքը[292]:

Հեղափոխական գործիչ Վարդգեսի բանտարկությունից հետո Կոմսը նշանակվել էր նրան փոխարինող Վանում, և Խամասը դարձել էր նրա աջ ձեռքը: Կոմսի հրամանով կազմվել էր կանանց և օրիորդների մի խումբ, որը պիտի օգներ ֆիդայիներին՝ գաղտնի աշխատանքների և զենքեր փոխադրելու հարցում: Արդարամիտ և սուր հոտառություն ունեցող Խամասը հատ-հատ ընտրել էր իր ընկերուհիներին և նրանց համար դարձել սիրված և հարգված խմբապետուհի: Որպես ղեկավար՝ ուներ մի կարևոր հատկություն շրջապատին խանդավառելու և գործի դնելու առումով: Կարճ ժամանակ անց Խամասի խումբը դարձել էր նշանավոր՝ իր կատարած հետախուզական, սուրհանդակային և խնամատարական աշխատանքների շնորհիվ: Այդ խումբը մեծ գործունեություն ծավալեց նաև 1900 թվականին՝ Դավոյի դավաճանության օրերին[293]:

Երբ բոլորի վստահությունը վայելող Դավոն Վանի զենքի ու զինամթերքի պահեստները մատնել էր թշնամուն, շատերը ձերբակալվել էին, և մեծ թվով հեղափոխական գործիչներ էին ապաստանել լեռներում: Այդ սարսափի օրերին Խամասը կազմակերպել էր սուրհանդա-

---

[291] **Կոմս,** Խոնարհ հերոսներ, գիրք Բ, Պէյրութ, 1956, էջ 32:
[292] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 92:
[293] Տե՛ս նույն տեղում:

կային խմբեր: Նրա խումբը կապ էր պահել քաղաքի կենտրոնի և փախստական հեղափոխականների միջև: Միաժամանակ խումբը չմատնված զինապահեստները դատարկել էր և զենքերը ապահով վայր տեղափոխել:

Խամասի գլխավոր օգնականներն էին **Աղավնի** և **Գինաբեր Ալեքսանյան քույրերը**, որոնք մեծ գործ էին կատարել գավառների հետ կապը պահելու համար: Հակառակ նրան, որ նրանց կյանքը միշտ սպառնալիքի տակ էր, այս քույրերը երբեք չէին վարանում, ընդհակառակը, միշտ աննկուն էին: Խմբի անդամների շարքերում ուշադրություն են գրավել նաև *Զարուհի Շալջյանը, Հռիփսիմե Նալբանդյանը և Սողոմե Ջրբախշյանը*[294]: Հետագայում այս կանանց ջանքերի շնորհիվ կազմվել է «Վասպուրականի կանանց միությունը», որը զարկ է տվել Վանի կանանց զարգացման և առաջադիմություն գործին, զորավիգ կանգնել ՀՅԴ գործունեությանը և աջակցել ինքնապաշտպանական մարտերին: Իսկ ապրիլյան Եղեռնից հետո տեր է կանգնել հազարավոր որբերի, ապա Երևանում հիմնել է Վասպուրականի կար ու ձևի և ձեռագործի արհեստանոց[295]:

1908 թվականի հուսահատական օրերին, երբ փախստական Կոմսն ու իր գործընկերները ապաստանել էին լեռներում, Վանից ժամանած սուրհանդակը բերել է մի թռուցիկ՝ Վանի ՀՅԴ Կ. կոմիտեի ստորագրությամբ: Տարօրինակ էր այդ, որովհետև ՀՅԴ Կ. կոմիտեի կազմը փախստական էր դարձել: Թռուցիկը ուղղված էր հայ մատնիչներին, թուլամորթ և գետնաքարշ սողացող հեղափոխության թշնամիներին: Բովանդակությունը հետևյալն էր. «Դու՛ք, իժի՛ ծնունդներ, կարծո՞ւմ եք, թե հեղափոխությունը մեռավ, կարծո՞ւմ եք, թե ՀՅԴ-ն պայթեցրիք ներսից, չարաչար սխալվում եք: Հասկացե՛ք, որ ոչ մի ուժ չի կարող խորտակել կուսակցությունը: Լավ իմացեք, որ Դաշնակցության աչքը ամենուր է, և չեք խուսափելու նրա ահավոր վրեժից...: Վերջին

---

[294] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 92:
[295] Տե՛ս նույն տեղում, էջ 94:

անգամ ենք զգուշացնում ձեզ, թուլամորթնե՛ր և սրիկանե՛ր: Չհամարձակվե՛ք այլևս ձեր զազրելի գործը շարունակել: ՀՅԴ Կ. կոմիտե»[296]:

Նշված թռուցիկի տակ Խամասի ստորագրությամբ երկտող է եղել, որում նա խոստովանել է, որ ինքն է գրության հեղինակը, ներողություն է խնդրել զեղծումի համար և բացատրել է, որ պատեհապաշտ հայեր են հրապարակ իջել և կառավարությանը հաճելի լինելու համար լրտեսություն և մատնություն են արել, հետևաբար արտոնություն է խնդրել նրանցից ազատվելու:

Այսպես՝ այս դժվարին օրերին, երբ կուսակցության ղեկավարությունը հարկադրաբար բացակայել է քաղաքից, Խամասը անձնվեր ու հավատարիմ պահակ է դարձել և թույլ չի տվել, որ կուսակցության դրոշակը անարգվի:

Սահմանադրության շրջանում Խամասը մնացել է որպես ղեկավար դեմք և ընդարձակել է կանանց կազմակերպության գործը: Նրա շնորհիվ քաջարի կին գործիչներ են պատրաստվել և հետագայում վճռական դեր են խաղացել ազգային ու հասարակական գործերում:

Խամասը շատ է ցանկացել բարձրագույն կրթություն ստանալ և ի վերջո, նրան հաջողվել է գնալ Պոլիս և ավարտել Կանանց միջնակարգ վարժարանը: Հետո ամբողջովին նվիրվել է որբերի հավաքման և դաստիարակության գործին:

Վան-Վասպուրականի հերոսամարտի օրերին, զենքը ձեռքին, կռվել է թշնամու դեմ: Իր գործած սխրանքներով աչքի է ընկել Այգեստանի կռիվներում:

Խամասը տեսել է Հայաստանի Հանրապետության ծագումն ու անկումը և համայնավար ղեկավարների հալածանքներից խուսափելով՝ անցել է Պոլիս և շարունակել որբերի դաստիարակության գործը[297]: Ի պատիվ նրա, թերևս հարկ է նշել, որ նա ազգային դիմագիծ ունեցող սերունդների պատրաստման գործում կարևոր դեր է ունեցել:

---

[296] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 96:
[297] Տե՛ս նույն տեղում:

Տարիների տքնաջան աշխատանքից հետո Խամասը վարակվել է թոքախտով և 1936 թվականին մահացել է Պոլսում[298]:

Վան-Վասպուրականի հերոսամարտի նշանավոր հայուհիների թվում էր **Զարուհի Տերոյանը**: Նա ոչ միայն իր եղբոր՝ Վազգեն Տերոյանի նման նվիրյալ ֆիդայի էր, այլև Վասպուրականի հերոսամարտի հերոսուհիներից:

Զ. Տերոյանը Վասպուրականի կանանց առաջին կազմակերպողն էր: Իր շրջապատին կարողացել է խանդավառել ազատագրական պայքարի գաղափարներով և կանանց մարզել է ոչ միայն ֆիդայիների կարիքները հոգալու և խնամատարական աշխատանքները կատարելու գործում, այլև Վան-Վասպուրականի 1915 թվականի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Բոլորին զինավարժություն է սովորեցրել, որպեսզի հարկ եղած ժամանակ կարողանային դիմադրել և պաշտպանել ոչ միայն իրենց, այլ նաև իրենց հարազատներին[299]: Նրա ցուցաբերած սխրագործությունների արդյունքում թշնամու մի քանի գրոհներ ետ են մղվել:

Հերոսամարտի հայտնի հայուհիներից էր **Պնենց Սաթենիկը**: Վերջինս երիտասարդ ու խանդավառ նվիրյալ հեղափոխական Պնի Վահանի կրտսեր քույրն էր[300]: Պնենց տունը ազատագրական պայքարի նվիրյալների, հեղափոխականների ապահով ապաստան էր: Այնտեղ է գտնվել ռազմամթերքի մի կարևոր պահեստ, ինչպես նաև Քեռու կաշվի արհեստանոցը, որտեղ Քեռին երկու օգնականների հետ փամփշտակալներ, կաշվե պարկեր է պատրաստել և ֆիդայիների կոշիկներ նորոգել: Բոլոր կարևոր և խիստ գաղտնի խորհրդակցություններն այդ տանն են տեղի ունեցել, և իրենց նեղ պահերին ֆիդայիներն ու հեղափոխական գործիչները նրանց տանն են ապաստանել:

---

[298] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 96:
[299] Տե՛ս նույն տեղում, էջ 97:
[300] Տե՛ս նույն տեղում:

Սաթենիկը հոգնած և հալածական ֆիդայիների հոգատար քույրն էր: Զենքեր պահելու, խմբեր պատրաստելու գործը միշտ եռանդով ու նվիրումով է ստանձել: Իսկ երբ ֆիդայիները քնել են, նա արթուն հսկել է: Սաթենիկը հափշտակությամբ է կարդացել «Դրոշակը», հեղափոխական գրքեր՝ երազելով վտանգնավոր ձեռնարկներին մասնակցելու, հայրենիքի թշնամիներին պարտության մատնելու մասին անգամ իր կյանքը զոհելու գնով[301]:

Մի օր դավաճան Դավոն՝ թուրք զինվորի համազգեստով, և մի ջոկատ զինվորների գլուխ անցած՝ պաշարել է Պնենց տունը: Իբրև դյուրին զոհ՝ դավաճանը նախ ծերունի մորն է դիմել, սակայն ազգասեր մայրիկը թքել է մատնիչի երեսին և անիծել: Այս անգամ վիրավորված ու զայրացած Դավոն Սաթենիկին է դիմել, սակայն նա չի խոսել անգամ նրա հետ և թուրք սպային դառնալով՝ հայտարարել է, որ իրենց տանը զենք գոյություն չունի: Դավաճանը, հունից դուրս գալով, ծեծել է Սաթենիկին մտրակի սարսափելի հարվածներով և երեք ժամ անընդմեջ զինվորների հետ զենքի պահեստ է փնտրել: Ոչինչ չգտնելով՝ Սաթենիկին և եղբորը բանտ է նետել[302]: Երկուսն էլ չարչարանքների են ենթարկվել, սակայն ոչ մեկն էլ չի խոստովանել, ընդհակառակը, իրենց հոգեկան կորովը բարձր են պահել:

Վերջապես Առաջնորդարանի միջնորդությամբ Սաթենիկն ազատ է արձակվել: Այդ օրերին ազատամարտի նվիրյալները արդեն հարձակվել ու պայթեցրել էին գրավված ռումբերը, իսկ իրենք ցրվել էին հայկական թաղերում՝ պատրաստվելով ինքնապաշտպանության: Բանտի սարսափներից հազիվ ազատված աննկուն Սաթենիկը սկսել է իբրև սուրհանդակ ծառայել այս անգամ դիրքերի միջև: 1915 թվականին Վան-Վասպուրականի հերոսամարտի օրերին հերոսուհի Սաթենիկը, զենքը ձեռքին, կռվել է ոսոխի դեմ:

---

[301] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 96:
[302] Տե՛ս նույն տեղում, էջ 97:

Վանի հաղթական ինքնապաշտպանությունից հետո Սաթենիկը հարկադրաբար բռնել է գաղթի ճանապարհը[303]: Այդ ժամանակ էլ պայքարի դժվարությունները արհամարհող աղջիկը հուսահատվել է և տեղ չհասած՝ մահացել է՝ սիրտը խոցված այն աշխարհից, որտեղ տիրում էր միայն բռնություն, ոճիր և անազատություն:

Վան-Վասպուրականի հերոսամարտի հայուհիներից էր **Սախոյենց Նանոն:** Սախոյենց տունը Վանի Այգեստանի արևելյան ծայրամասի այգիներում կորած մի խարխուլ տնակ էր: Նանոն ապրում էր իր մեծ հոր և այրի մոր հետ: Նրանք այնքան աղքատ էին, որ մեծ հայրը, չնայած իր տարիքին, օրավարձով աշխատող բանվոր էր, իսկ մայրը ուրիշների լվացքն էր անում[304]: Դեռ շատ փոքր տարիքից Նանոն սնվել էր հայ էպոսի քաջ հերոսների՝ Առյուծաձև Միհրի, Սասունցի Դավթի, Փոքր Միհրի, առասպելական թագուհիների և Հայկական լեռնաշխարհում թափառող ազատատենչ հսկաների պատմություններով: Նպաստավոր դիրքի պատճառով նրանց տունը հեղափոխական ապաստան էր դարձել: Այդ պահից սկսած՝ Նանոյի համար իր լսած պատմությունները դադարել էին երևակայական լինել, և անցյալի հերոսները շարունակել էին ապրել ֆիդայիների պատկերացումներում:

Նանոն ֆիդայիների պահապան հրեշտակն էր: Երբ նրանք քնում էին, ինքն արթուն հսկում էր: «Ֆիդայիների տառապալից կյանքում էլ Նանոն կարծես արևի շող լիներ՝ մութ թոնրատան երթիկից իրենց ուղղված՝ ջերմությամբ և փաղաքշանքով»[305]:

Նանոն ուշադրությամբ լսում էր ֆիդայիների պատմածները և անդադար հարցեր ուղղում նրանց: Տարիների ընթացքում Նանոյի մեջ շեշտվել էին անվախությունը, հանդգնությունը, կամքի հզորությունն ու եռանդը:

---

[303] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 96:
[304] Տե՛ս նույն տեղում:
[305] **Կոմս,** նշվ. աշխ., գիրք Գ, Պէյրութ, 1956, էջ 46-47:

Երբ մի օր ֆիդային Ռուբենը ռումբի պայթյունի հետևանքով գրեթե մահամերձ վիճակում էր հայտնվել և իրենց տուն տեղափոխվել, անձնվեր աղջիկը, թուրք պահակազորը ճեղքելով, ամերիկյան հիվանդանոցից բժշկական օգնություն էր հասցրել[306]:

Մի ուրիշ անգամ, երբ իրենց տան մոտերքում թուրք շրջուն պահակախումբը ֆիդայիների դեմ էր ելել և երկուստեք կատաղի հրացանաձգություն էր սկսվել, ֆիդայիներին հաջողվել էր փախչել, իսկ Նանոն, որ այգու մի պատի հետևից էր հսկում, անմիջապես վազել էր և ֆիդայիների փախած ուղղության հակառակ կողմը ցույց տալով՝ գոչել. «Ղաչաղները այն կողմը փախան»[307]: Թուրք զինվորները վազել էին Նանոյի ցույց տված ուղղությամբ, և այդպիսով ֆիդայիները փրկվել էին:

1915 թվականին Վան-Վասպուրականի հերոսամարտի օրերին, Նանոն իր սիրած հերոսների օրինակով էր գործել: Օրեր շարունակ դիրքից դիրք անցնելով, սուրհանդակի դեր կատարելով՝ երբեմն ծպտված այցելել էր կռվողներին, խրախուսել էր նրանց, պահակություն էր արել, հեղափոխական երգեր էր երգել և միշտ սիրտ տալով՝ ասել. «Բնությունը երգում է, երբ գարուն է, իսկ ես երգում եմ, որովհետև մեր ազատության արշալույսը պիտի բացվի շուտով»[308]: Նանոյին անվանում էին «կրակ ու բոց» աղջիկ:

Հաղթանակին հաջորդել են նահանջի տխուր օրերը, և բոլորի պես Նանոն էլ լքել է իր հայրենի տունը: Գաղթի ճանապարհին մահացել էին մեծ հայրն ու մայրը: Նանոն այն բախտավորներից էր, որ տեսավ իրենց զոհաբերության արդյունքը՝ արյունով ձեռք բերված Հայաստանի առաջին հանրապետությունը[309]:

---

[306] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 98:
[307] Տե՛ս նույն տեղում:
[308] Տե՛ս նույն տեղում:
[309] Տե՛ս նույն տեղում:

Կարճ ժամանակ հետո հայտնի է դարձել, որ Նանոն թոքախտով է վարակվել: Չնայած երիտասար տարիքին՝ նա իրեն դժբախտ չէր զգում. փոքր տարիքից երազանքներով ապրող, հետո էլ արդարության և ազատության համար պայքարած հերոսուհին աչքերը պիտի փակեր հայոց անկախ հայրենիքում: Նրա խնդրանքով սիրելի ֆիդայիները նրան թաղել են Արարատի շուքին:

Վան-Վասպուրականի հերոսամարտին ակտիվորեն մասնակցեցել են նաև նշանավոր ֆիդայիների մայրերը: Նրանք հայոց հին և միջնադարյան պատմության հայտնի հերոսուհի մայրերի նման մեծ ազդեցություն են թողել իրենց զավակների վրա իրենց կատարած հայրենանվեր գործերով: Ձվիկ տիկնոջ և Շուշանիկ Պահլավունու նման 1915 թվականին Հայոց ցեղասպանության տարիներին հայ մայրերը ևս իրենց զավակների կողքին էին՝ նրանց հերոսության կոչելու, հայրենի հողի համար անձնուրաց խիզախումների և թշնամու դեմ մինչև վերջ կռվելու հորդորներով և իրենց անձնական հերոսական մասնակցությամբ օրինակներ ցույց տալով: Նման հերոսուհի մայրերից էր հայտնի հայդուկ Մարտիրոս Կոբելյանի մայրը[310]:

Կոմիտե Մայրիկը 60-ն անց, թափանցող նայվածքով և խիստ դեմքով կին էր: «Մեզանից շատ բան գիտեր, մեր գործերից, շատ բան էր տեսնում, հետևում էր մեր բոլոր քայլերին, կարծես բարոյական պատասխանատու լինելու գիտակցությամբ էր անում իր դիտողությունները, տալիս էր իր խորհուրդները: Սրա համար Կոմիտե Մայրիկ էին դրել նրա անունը: Այդպես էլ կոչում էին նրան: Հաճույք էր զգում, երբ ներողամիտ ժպիտով քթի տակ մրթմրթում էր՝ անառակներ»,– գրել է նրա մասին Կոմսը[311]:

Մայրիկի տունը Վանում էր, բաց դաշտի եզրին, հետևաբար, առանց քաղաքի թաղերն անցնելու, կարելի էր համարձակ ելք ու մուտք անել այնտեղ: Այդ պատճառով էլ Մայրիկն իր տան մեջ հաճախ

---

[310] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 101:
[311] **Կոմս,** նշվ. աշխ., գիրք Ա, Պէյրութ, 1950, էջ 66:

է պատսպարել արտասահմանից եկող սուրհանդակներին, զինատար խմբերին, գավառի ներկայացուցիչներին: Նրա տնից են արտասահման և գավառ մեկնել խմբեր ու հեղափոխական գործիչներ:

Մայրիկը երեք տղա ուներ՝ Մարտիրոսը (Դային), Ճեռջ Աղան և Ջան Պեզարը: Երկուսը դարբին էին, սակայն իրականում հեղափոխականների զինագործներն էին և աշխատում էին իրենց տան գաղտնի արհեստանոցում: Երբ աշխատում էին, Մայրիկն արթուն հսկում էր: Եթե կասկածելի երևույթ էր նկատում, անմիջապես զգուշացնում էր ներսում աշխատողներին[312]:

Հայ ազատագրական պայքարի մասնակիցների ցավերը իր ցավերն էին, և երբ նրանցից մեկը հիվանդանում էր, խնամում էր հարազատ մոր պես: Մայրիկն իր շրջապատի ամենահեղինակավոր կինն էր: Բոլոր կանայք իրեն էին դիմում՝ խորհուրդ հարցնելու և հիվանդներին բուժելու համար: Բոլորն էլ մեծ վստահություն ունեին նրա նկատմամբ և նրա խորհուրդներն ու ցուցումները ընդունում էին որպես պատգամ: Եթե որևէ շատախոս կին հեղափոխականների մասին ակնարկում էր, Մայրիկի հանդիմանական նայվածքը իսկույն փակում էր նրա բերանը[313]: Նա Վան-Վասպուրականի հերոսամարտի օրերին մինչև վերջ ինքնապաշտպանության մասնակիցների կողքին էր: Նրանց օգնում էր ոչ միայն ջուր, սննդամթերք ու զինամթերք հասցնելով, այլև իր հայրենասիրական ոգևորող ճառերով, երբեմն էլ զենքը ձեռքին կռվելով:

1915 թվականի ինքնապաշտպանությունից հետո Մայրիկը, անիծելով թուրքին ու քրդին, ստիպված լքել է իր հիշատակներով հարուստ հայրենի օջախը: Չդիմանալով ճանապարհի դժվարություններին՝ մահացել է՝ իր մուրազին չհասած՝ հայոց ազգի ազատությունը չտեսած[314]:

---

[312] **Կոմս,** նշվ. աշխ., գիրք Ա, էջ 66:
[313] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 102:
[314] Տե՛ս նույն տեղում:

Վանի ինքնապաշտպանության հերոսուհիներից էր **Դրախտի Մայրիկը (Նանիկ Ջինոյան)**: Վանում ֆիդայիների կողմից Կարաղաթ կոչված թաղում կար միահարկ ցեխով ծեփված մի տուն, որը հայտնի էր Դրախտ անունով: Ջինոյեց տունն էր:

Մայրիկը՝ Նանիկ խաթունը, 50-ն անց կենսուրախ և անվախ կին էր: Նա գիշեր-ցերեկ գրկաբաց ընդունել է ֆիդայիներին ու հեղափոխական գործիչներին: Հարազատ մոր պես հոգացել է նրանց կարիքները, իսկ հանգստի կամ գաղտնի աշխատանքի պահերին պահապան հրեշտակի պես հսկել է նրանց ապահովությունը: Ֆիդայիների համար այդ խեղճ տունը «Դրախտ» է եղել, հեղափոխական միջնաբերդ[315]: Այդ տանն է գտնվել ամենահին զինապահեստը, զենքերի նորոգման գաղտնի արհեստանոցը և ռումբեր լցնելու հատուկ տեղը:

Մայրիկն ուներ երկաթագործ տղա՝ կարգապահ, կենսուրախ և եռանդուն Միհրանը, ինչպես նաև հանդուգն մի աղջիկ՝ Երանուհին, և մի ուրիշ փոքրիկ աղջիկ: Մայրիկն ու իր զավակները չափազանց գաղտնապահ էին, ինչ էլ պատահեր, ոչ մի խոսք դուրս չէր գալիս նրանց բերանից: Սակայն մի օր մատնության հետևանքով թշնամին պաշարել է նրա տունը: Հսկողություն կատարող Մայրիկը կարողացել է ժամանակին զգուշացնել ֆիդայիներին և նրանք հեռացել են: Երբ թուրք զինվորները ներս են մտել, գիշերազգեստով մի պառավ է նրանց դիմավորել:

1907 թվականին կրկին մատնության հետևանքով «Դրախտը» պաշարվել է: Ներսում գտնվել են հեղափոխական Թևոսը և նրա մի քանի ընկերներ: Մայրիկի ու Երանուհու հնարամտության շնորհիվ հեղափոխականները անվնաս հեռացել են: Սակայն մայր ու աղջիկ ձերբակալվել են: Ամիսներով հարցաքննության և չարչարանքների են ենթարկվել, սակայն աննկուն են մնացել և Առաջնորդարանի միջնորդությամբ հնարավոր է եղել ազատել նրանց[316]:

---

[315] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 102:
[316] Տե՛ս նույն տեղում:

Վանի ինքնապաշտպանության օրերին «Դրախտը» դարձել էր կարևոր կենտրոն, իսկ Երանուհին առաջնակարգ սուրհանդակ էր: Մայրիկն իր զավակների հետ օգնում էր զենք, զինամթերք, ջուր և սնունդ հասցնել պաշտպաններին, երբեմն էլ, զենքը ձեռքին, կռվում էր՝ ոգևորելով նրանց[317]: Սակայն գաղթի օրերին Մայրիկն իր զավակների հետ ստիպված լքել էր հայրենի տունը՝ բռնելով օտարության ճամփան: Շատ նեղություններից հետո հասել էին Իգդիր, որտեղ բազմաթիվ գաղթականներ կային, իսկ խոլեռային համաճարակը ավերներ էր գործում: Մայրիկն իր զավակների հետ հաստատվել էր Հին Նախիջևանում, այնտեղ էլ նահատակվել է, երբ թաթար խուժանը կոտորում էր հայերին[318]:

Ջինոյենց ընտանիքից միակ վերապրողը Միհրանը եղավ: Նա նախապես Պարսկաստան էր անցել:

Վան-Վասպուրականի հերոսամարտի մասնակիցներից էր **Ազգային Մայրիկը**: Նրան հենց այդպես էլ կոչում էին: Ազգային Մայրիկը 50-ն անց հաղթանդամ կին էր: Նա Վազգեն Տերոյանի օրերին ապաստան էր տվել և հարազատ մոր պես խնամել ֆիդայիներին և հեղափոխական գործիչներին: Երբ Հրայր Դժոխքը և Գևորգ Չաուշը Վանում էին, գրեթե միշտ նրա մոտ էին մնում[319]:

Մայրիկն ուներ մեկ տղա և չորս աղջիկ: Տղան՝ Արտաշեսը, եռանդուն հեղափոխական գործիչ էր: Իսկ աղջիկներից իր գաղափարախոսությամբ, հանդգնությամբ, զոհաբերության ոգով աչքի է ընկել Աշխենը:

Մայրիկին «Ազգային» անունն էին տվել, որովհետև երկար տարիներ շարունակ իր անձը, տունը և ընտանիքը ազգին «մատաղ» էր արել: Ոչ մի անձնական շահագրգռվածություն չուներ. նվիրված էր միայն ու միայն ազգի համար զոհաբերվող ֆիդայիներին ու հայդուկ-

---

[317] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 102:
[318] Տե՛ս նույն տեղում, էջ 103:
[319] Տե՛ս նույն տեղում:

ներին: Մայրիկը նրանց միշտ քաջալերում էր, խնամում, մխիթարում և նոր ոգևորությամբ համակում[320]: Նրա տան էր գտնվում ռումբերի և զենքի կարևոր գաղտնարանը: Չնայած շարունակվող խուզարկություններին՝ նրան միշտ էլ հաջողվում էր վտանգը զերծ պահել իրենցից:

Վանի ինքնապաշտպանության օրերին **Աշխենը** կարևոր աշխատանք է կատարել Վասպուրականի «Հայ կանանց միության» շրջանակներում: Այդ միությունը, հստակորեն ըմբռնելով իր դերն ու կոչումը, ժողովրդական այդ աննախընթաց տագնապի շրջանում գործի է դրել բոլոր անդամուհիներին:

Աշխենը կարի արհեստանոցի սյուներից էր: Այստեղ էլ կռվողների համար սպիտակեղեն, գուլպաներ և այլ անհրաժեշտ իրեր էին պատրաստվում[321]: Արհեստանոցի պիտույքները միության անդամուհիները մեծ մասամբ իրենց տներից էին բերում: Արհեստանոցը միաժամանակ բավարարում էր զինվորական և գաղթական հիվանդանոցների բազմաթիվ կարիքները:

Վանի նահանգի կուսակալ Ջևդեթ փաշան վանեցի աննվաճ մարտիկների դեմ պայքարի այլ միջոցներ էր հնարել՝ հազարավոր գաղթականների Այգեստան բերելով, որպեսզի սով, համաճարակ և ընդհանուր հուսահատություն ստեղծվի: Սակայն վանեցի կանանց «Կարմիր խաչը» և «Կանանց միությունը» շուտով հիվանդությունների դեմն առել էին՝ հագուստ և ուտելիք հասցնելով գաղթականներին, իսկ նրանց մի մասին իրենց ընտանիքների մոտ էին տեղափոխել: Այս գործում կարևոր դեր էին կատարել Ազգային Մայրիկը և Աշխենը: Մայրիկն իր տունը տրամադրել էր աղետից տուժածներին, մխիթարել էր նրանց, ամոքել նրանց ցավերը:

Մայրիկի ձեռքի տակ աշխատող անձնուրաց հայուհիներից էր նաև **Սաթո քույրիկը**: Նա անփոխարինելի դեր է կատարել հատկապես տարագրության շրջանում: Այս համատարած լքման օրերը չկարո-

---

[320] **Ջէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 103:
[321] Տե՛ս նույն տեղում:

ղացան բեկում առաջացնել այդ պողպատե կամքով կնոջ մեջ: Ընդհակառակը, նա հույսի և մխիթարության խոսք էր գտնում բոլորի համար:

Սաթո քույրիկը մահացել է 1960-ական թվականներին Բեյրութում[322]:

Շապին Գարահիսարի ինքնապաշտպանությունը և հայ հերոսուհի կանայք

1915 թվականի հունիսի 3-ին սկսվել է Շապին Գարահիսար քաղաքի հայկական թաղամասի ինքնապաշտպանությունը: Ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարությունը հանձնվել էր Ղուկաս Տեովլեթյանին (Ղուկաս Աղբար), որը վայելում էր բոլոր քաղաքական հոսանքների համակրանքն ու վստահությունը: Իսկ մարտական գործողություններն անմիջականորեն ղեկավարում էր Անդրանիկ Օզանյանի վաղամեռիկ կնոջ՝ Վերոնիկայի եղբայր Գարեգին Թաշճյանը[323]:

Ի պատասխան թուրքերի կրակի՝ հայերն իրենց ամուր դիրքերից կրակել են թուրքական թաղերի վրա, սակայն ի վերջո ստիպված փոխադրվել են քաղաքի հինավուրց բերդը, որը կառուցված և ամրացված էր դեռ հռոմեական զորավարների ձեռքով և ուներ բնական ու արհեստական ամրություններ: Բերդում ապաստանել էր 5062 հոգի: Նրանցից 1500-ը արական սեռի էին, որից կռվի ընդունակ էին 250-ը, իսկ մնացածները՝ ծերեր, կանայք, երեխաներ, պատանիներ և հիվանդներ: Բերդում ձեռնարկվել էին կազմակերպչական աշխատանքներ՝ պարենավորում, ջրամատակարարում, զինական նախապատրաստում: Ստեղծվել էր Զինվորական խորհուրդ: Սննդաբաշխումը կատարվում էր կանոնավոր կերպով՝ ըստ ընտանիքի անդամների թվի: Հացը պատրաստվում էր երկու քարայրների մեջ, որտեղ օջախներ էին վառել: 30 կանայք 24 ժամ աշխատում էին՝ պատրաստելով օրական

---

[322] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 103:

[323] **Սիմոնյան Հ.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, 1996, էջ 471:

մոտ 8 հազար հաց:

Բերդում ապաստանած ժողովուրդը մի քանի ժամվա ընթացքում կիսաավեր բերդը վերածել էր լավ ամրացված ամրոցի: Քարե հաստ պատերով նորոգվել էին աշտարակները, խարխլված պարիսպները, նոր պատնեշներով իրար էին կապվել դիրքերը: Դիրքեր էին կառուցվել իշխող յոթ ճակատների վրա, կազմվել էին դրանք պաշտպանող խմբեր՝ յուրաքանչյուրը 8-25 հոգի՝ իրենց պետերով, տասնապետերով, հերթապահներով և փոխանորդներով:

Բերդի պաշտպաններն ունեին 150 մաուզեր, 50 կարաբին և «այնալու» հրացան, հունական, բուլղարական հրացաններ, 40 հեծելազորային բազմահարված «Ֆիլինտա» տիպի հրացան և մոտ 80 կարգի ձեռնառումբեր[324]: Ինքնապաշտպանության ղեկավար Ղուկաս Աղբարը հրահանգ էր տվել ոչ մի անտեղի գնդակ, ոչ մի ռումբ չարձակել՝ առանց գոնե 5 թուրք սպանելու: Կարգապահություն հաստատելու համար Զինվորական խորհուրդը տվել էր հետևյալ հրահանգները.

1. «բացարձակ հնազանդություն խմբապետներին,

2. միջկուսակցական վեճեր և խռովություններ հարուցող անձինք կգնդակահարվեն,

3. առանց Զինվորական խորհրդի թույլտվության ոչ ոք իրավունք չունի հեռանալու բերդից,

4. անհնազանդները տեղում կենթարկվեն մահապատժի»[325]:

Հունիսի 5-ի առավոտյան թուրքերն սկսել էին հրետակոծությունը: Հայերը հավաքել էին ժայռերի խոռոչներում պայթած ռումբերի բեկորները, տարել էին զինարան, փամփուշտներ ձուլել ու «վերադարձրել» թշնամուն: Ղուկաս Աղբարի հնարամտության շնորհիվ թուրքական թնդանոթներից մեկը լռել էր, որովհետև հայերը նշանառուական կրակով ոչնչացրել էին թնդանոթաձիգներին:

Հաջորդ լուսաբացին թուրքերը վերսկսել էին հրետակոծությունը

---

[324] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 118:

[325] Տե՛ս նույն տեղում, էջ 119:

երեք հրանոթներով: Ղուկաս Աղբարը և Զինվորական խորհուրդը որոշել էին մինչ այդ պահված ռումբերը բաժանել դիրքերում գտնվող մարտիկներին: Մինչև կեսօր հայերը նախապատրաստվել էին և պատասխան կրակ չէին բացել: Այդ լռությամբ քաջալերված՝ թուրքերը շարժվել էին դեպի վեր: Հայկական դիրքերից կրակ էր տեղացել, և թշնամին անկանոն կերպով նահանջել էր: Թուրքական հարձակումը վերսկսվել էր հաջորդ օրը: Այս անգամ վեր էր մագլցել թուրք խուժանը, իսկ զինվորները մնացել էին ներքևում: Սկսվել էր թեժ կռիվ, որը շարունակվել էր մինչև երեկո, երբ հարձակվողները կրկին նահանջել էին: Նույնը կրկնվել էր նաև հաջորդ օրերին: Բերդի պաշտպանները հույսեր էին կապել ռուսական զորքերի առաջխաղացման հետ. նրանք սպասել էին նաև Սեբաստացի Մուրադին և Անդրանիկին: Վերջիններս, սակայն, ուշանում էին:

Հունիսի 20-ի լուսաբացին թնդանոթների համազարկերի ուղեկցությամբ թուրք զինվորների շղթաները քայլող անտառի նման սկսել էին բարձրանալ դեպի բերդ: Հայերը պատասխանել էին միահամուռ ու անդադար կրակով՝ հաշվի չառնելով փամփուշտ խնայելու պահանջը: Նրանք գերագույն ճիգերով մնացել էին դիրքերում: Ամեն կողմից լսվում էին օգնության կանչեր: Ղեկավարները հայտնվել էին անելանելի դրության մեջ. ինչպե՞ս դիմադրել թուրքական 5-6 հազարանոց կանոնավոր բանակին և խուժանին: Թշնամուն հաջողվել էր հասնել բերդի պարիսպներին, գրավել բերդի դուռը և քանդել մուտքը պաշտպանող պատվարը: Այդ ճգնաժամային պահին բերդի դռան առջև պայթել էր մի ռումբ, որը նետել էր Գ. Կարմիրյանը: Հացթուխ կանայք ևս ռումբեր էին պահանջել: Այդ պահին 14 տարեկան Հ. Թևեքելյանը կյանքի գնով հայթայթել էր մի ռումբ, որը պայթեցվել էր դռան առջև՝ սպանելով 5-6 զինվորի, մինչդեռ մյուսներն ահաբեկված թաքնվել էին քարերի հետևում:

Հայ մարտիկները հարձակվել էին խուճապահար թշնամու վրա: Թշնամին դիմել էր փախուստի՝ թողնելով մեծաթիվ դիակներ: Թշնա-

մին գետնին էր փռվել վերևից տեղացող փամփուշտներից: Կանայք քարեր էին գլորում նրանց ետևից:

Ժողովուրդը պարով ու լացով է տոնել իր հաղթանակը, որովհետև միևնույն ժամանակ լուսնի լույսով հողին է հանձնել իր զոհված հարազատներին, այդ թվում՝ ինքնապաշտպանության ղեկավարներից Հ. Գարակյոզյանին, Ավագ Տուրիկյանին, Ռուբեն և Գրիգոր Պարոնվարդյան եղբայրներին, Ե. Վեցիկյանին և ուրիշների[326]:

Հաջորդ մի քանի օրերին հարաբերական անդորր է տիրել: Բայց ինչ չկարողացավ անել թշնամին, արեց սովը: Ոչ մի տեղից այդպես էլ օգնություն չեկավ: Անդրանիկ Պարոնվարդյանը և Նշան Սերեճյանը գնացին թուրքերի հետ բանակցելու, բայց այլևս չվերադարձան:

Ղուկաս Աղբարը ժողովի էր հրավիրել բոլոր մարտիկներին: Նա հրահանգել էր գիշերային ուժեղ հարձակումով ճեղքել պաշարման օղակը, իջնել դաշտ և կռիվը շարունակել շրջակա լեռներում, ինչպես նաև թուրքերին սպառնալ շրջակա թուրքական գյուղերի ոչնչացմամբ, եթե նրանք վայրագորեն վարվեին բերդում մնացած կանանց ու երեխաների հետ:

Նահանջն սկսվել էր դռան առջևից: Սկսել էին զգուշորեն իջնել, առանց աղմուկի: Սակայն թշնամին կռահել էր հայերի մտադրությունը: Սկսվել էր գիրկընդխառն կռիվը: Նահանջին մասնակցող շուրջ հազար հոգուց հարյուրը նահատակվեց այդ գիշերային մարտում: Մնացածները, երեք ճակատով հարվածելով թշնամուն, անցան դաշտ, որտեղից էլ ցրվեցին և մոտ երկու տարի տարբեր վայրերում կռվելուց հետո բոլորն էլ սպանվեցին[327]:

Հունիսի 28-ին բերդի վրա պարզվել էր անձնատվության սպիտակ դրոշը: Չհավատալով աչքերին՝ թշնամին վեց ժամ սպասելուց հետո նոր միայն հաղթանակի փողերով ու թմբուկներով բարձրացել էր բերդ՝ հերթական կոտորածը ձեռնարկելու համար:

---

[326] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 133:
[327] Տե՛ս նույն տեղում, էջ 137:

Հաջորդ սերունդների շուրթերին մնաց դյուցազնական Շապին Գարահիսարի հերոսական անունը: Իսկ շապինգարահիսարցի Արամ Հայկազն իր հուշերի գրքում գրել է. «Աղոթելու տեղ կանիծեմ այն Աստվածը, որ մեր ճակատագիրը գրեց»[328]:

Դահիճներն առանձին դաժանությամբ հաշվեհարդար են տեսել Անդրանիկի հարազատների հետ՝ նման քստմնելի եղանակով վրեժխնդիր լինելով իրենց համար սարսափազդու ժողովրդական հերոսից: Նրանք ոչնչացրել են Անդրանիկի եղբոր ու հորեղբոր ընտանիքները: Նրանց թվում է եղել Անդրանիկի հորեղբոր որդին՝ նշանավոր հնչակյան գործիչ և անվանի մտավորական Գագիկ Օզանյանը, որի գրչին են պատկանում «Պատմություն հայ լեզվի և բանահյուսության», «Հայապատում. Հայուն պատմական դերը» արժեքավոր աշխատությունները:

Ընդհանուր առմամբ Շապին Գարահիսարի հերոսամարտի կանայք իրենց պատվաբեր մասնակցությունն են ունեցել թե՛ ազգային-ազատագրական պայքարի գործնական աշխատանքների, թե՛ զոհաբերության պատրաստակամության տեսակետից՝ տղամարդկանից ոչնչով հետ չմնալով[329]: Ազատագրական պայքարի շրջանում Շապին Գարահիսարի կանանց գործունեությունը հիմնականում քաղաքական, կրթական և բարեգործական ուղղվածություն է ունեցել: «Կարմիր խաչի» կանայք ոչ միայն սովորել են խնամել հիվանդներին, այլև դրամ են հավաքագրել՝ ազատագրական պայքարի նպատակներին հատկացնելու համար: Այս կերպ կանանց «Կարմիր խաչը» ազատագրական պայքարի օժանդակող կազմակերպություն էր:

Երիտասարդ, ուսյալ աղջկա գլխավոր իդեալը կրթական գործին նվիրվելն էր, որովհետև այդպես քաղաքականորեն հալածված, իրավազրկված, տնտեսական ճնշող պայմանների և կրոնական սպառնալիքի տակ ապրող ժողովրդին ոչ միայն անհրաժեշտ էր գիտելիքներ սովորեցնել և միտքը լուսավորել, այլև կամաց-կամաց ազգային ոգին

---

[328] **Հայկազ Ա.**, Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, Նյու Յորք, 1957, էջ 459:
[329] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 124:

արթնացնելով՝ ինքնապաշտպանության գործին նախապատրաստել: Կար նաև կանանց և օրիորդների մի խումբ, որը նվիրված էր բարեգործական նպատակներին՝ աղքատների օժանդակությանը, անգործներին գործ հայթայթելու, որբերին ընտանիքներում տեղավորելու և այլ հիմնախնդիրների իրականացմանը:

Շապին Գարահիսարի հերոսամարտի ընթացքում կանայք, արհամարհելով ամեն վտանգ, գիտակցելով մահվան մոտ լինելը, քաջություն են ունեցել գործելու հանուն հայրենիքի ազատության և դարավոր սրբությունների պահպանման: Կանայք թաղից թաղ, տնից տուն զենք են փոխադրել, հետախուզել են թշնամու դիրքերը և գործել իբրև սուրհանդակ: Շապին Գարահիսարի հայկական թաղերի տները գրեթե իրար կպած էին և ունեին գաղտնի անցքեր ու թաքստոցներ: Դրանք վտանգի պահին օգտագործվել են՝ տնից տուն փախչելու կամ զենք ու զինամթերք փոխադրելու ու պահելու համար[330]:

1914 թվականին՝ հայ երիտասարդության պարտադիր զինվորագրությունից քիչ ժամանակ անց, 300 շապինգարահիսարցի երիտասարդներ, թուրքական զորանոցների դժոխային պայմաններին չդիմանալով, փախել են և իրենց տները վերադարձել: Կանաց խմբերը փախստականներին անմիջապես տեղավորել են թաքստոցներում և ողջ օրը թաղերում հսկողություն կազմակերպել: «Այդ կանանց խումբը առավոտից մինչև իրիկուն իրարից 50 քայլ հեռավորության վրա, փողոցի վրա թել մանել կամ գուլպա գործելով զբաղվեց, և եթե կառավարության կողմից շարժ էին նկատում, օրինակ՝ տների խուզարկություն՝ զենք փնտրելու նպատակով, իսկույն պայմանական նշաններով իրար հասկացնում էին, որ տներում պահվողները զգուշավորության միջոցառումներ ձեռք առնեն»[331]:

Մի անգամ դիրքերում պահակություն անող կանայք նկատել են, որ թուրք ոստիկանները մի փախստական հայ երիտասարդի հետք են

---

[330] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 124:
[331] Տե՛ս նույն տեղում:

գտել և հեռվից հեռու հետապնդել նրան: Նրանք անմիջապես վտանգի պայմանական նշան են տվել իրենց գործընկերներին՝ իրենց գոգնոցի ծայրերը բարձրացնելով և օդի մեջ թափ տալով: Փախստականին տան մոտ սպասող կինը լուրը փոխանցել է երիտասարդին և հնար է գտել ժամանակ շահելու, մինչև նա տնից տուն անցներ և գաղտնի անցքերում իր հետքը կորցներ: Ժամանակ շահելու հնարքը հետևյալն էր. մի երիտասարդուհու փախստականի տան դռան առջև են պառկեցրել և խորհուրդ տվել մեռած ձևանալ, իսկ հետո մի խումբ կանանց շուրջը հավաքելով՝ ողբ ու կոծ են սկսել: Խուզարկության եկած թուրք ոստիկանները անակնկալի են եկել. մի պահ սպասել են, մինչև որ մեծ դժվարությամբ երիտասարդուհու մարմինը դռան առջևից հանել են տվել, որպեսզի կարողանան ներս մտնել: Դրանցից հետո կանայք տեղի են տվել՝ վստահ լինելով, որ փախստականը արդեն անհետացել է[332]:

Զենք ունեցող կանայք տղամարդկանց կողքին են եղել դիրքերում և կռվել են մինչև վերջին փամփուշտը, իսկ մյուսները շրջել են դիրքերում՝ խրախուսելով մարտիկներին: Մի մասն էլ իր մասնակցությունն է բերել՝ եռացած ջուր, հող և քարեր թափելով թշնամու վրա:

Հիշատակության են արժանի հետևյալ հայուհիները՝ *տիկիններ Վերոնիկա Թանջուրյանը, Գյուլզադե Թութունյանը, Լուսաբեր Ճեռպելեկյանը, Շնորհիկ Բուռնազյանը, Զիլ Տարիկը կամ Կաթոլիկ Տուրիկը,* ինչպես նաև օրիորդներ *Նորիկ Տեր-Մեսրոպյանը, Մարիամ Թաշճյանը, Վարդանուշ Գազանճյանը, Փիրուզ Սվազճյանը, Վարդուհի Գաբիկյանը և ուրիշներ*[333]:

Հայկական թաղերում մղած կռիվներից հետո ինքնապաշտպանության ղեկավար Ղուկասի խորհրդով ժողովուրդը քաշվել էր քաղաքի վրա իշխող և ապառաժների վրա կառուցված բերդը՝ դիմադրությունը շարունակելու նպատակով: Կանանց խմբերը փոխադրել էին պա-

---

[332] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 125:
[333] Տե՛ս նույն տեղում:

շարը, հետո մի քանի անգամ դարձյալ իջել էին քաղաք և իրենց ձեռքն ընկած ուտելիքը տարել բերդ: Ավելին՝ կանայք, ջրի թիթեղի ամաններ-ը իրենց մեջքներին կապած, թուրքական դիրքերի կողմերում գտնվող աղբյուրներից ջուր էին բերել: Նրանցից շատերը այդ ճանապարհի վրա զոհվել էին: Չնայած թշնամու կողմից տեղացող փամփուշտներին՝ կանայք շարունակել էին ջուր հասցնել կռվողներին և բերդում հավաքված հայրենակիցներին: Սակայն հերոսական մաքառումները արդյունք չէին տվել. 10-15 հազարանոց թուրքական բանակը բերդի պաշարման օղակը սեղմել էր և սկսել թնդանոթներով հարվածել արդեն իսկ կիսակործան կառույցին: Վերջապես անհավասար կռիվը, ինչպես նաև ուտելիքի և ռազամթերքի պակասը հուսահատության էին մատնել պաշարվածներին: Ուրիշ ճար չգտնելով՝ մարտիկները որոշել էին վերջին գրոհով թշնամու շղթան ճեղքել: Հարազատներից բաժանման պահին կանայք իրենց ամուսիններից, եղբայրներից և նշանածներից թույն էին խնդրել՝ պատվավոր մահը գերդասելով նվաստացմանն ու հավիտենական ամոթից. «Մարտիկների բազմաթիվ զոհեր խլած վերջին գրոհից հետո թշնամու՝ բերդի վրա արշավելը տեսնելով՝ կանանցից շատերը թույն են խմել, մյուսները բարձրությունից ցած են նետվել: Այս քաջ և հպարտ հերոս հայուհիները ընդունել են մահը՝ հաղթանակի երգը իրենց շուրթերին»[334].

«Մեռնենք կռվելով,
Մերն է ապագան,
Մեռնենք, բայց կեցցէ՛,
Կեցցէ՛ Հայաստան»:

Նրանք նահատակվել են Զինվորական խորհրդի կողմից հռչակված պայքարի նշանաբանով՝ «Թող աշխարհը ըսե, թե գարահիսարցիք պատվով մեռան...»:

[334] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 125:

Կարելի է ասել, որ հետագա ամիսներին թուրք ջարդարարների դեմ մղված անհավասար պայքարում 27-օրյա հերոսամարտերից հետո շրջապատումից դուրս եկած շապինգարահիսարցիների մեծագույն մասը, այդ թվում՝ կանանք զոհվել են: Բայց զոհվել են՝ մինչև վերջ ծնկի չգալով անարգ ոսոխի առաջ, զոհվել են՝ ծանր կորուստներ պատճառելով նրան: Մեզ հայտնի այդ օրհասական պայքարի առանձին դրվագներ վկայում են, որ նրանք մարտնչել են մինչև նախավերջին փամփուշտը՝ վերջինը պահելով իրենց համար: Անվեհեր շապինգարահիսարցիներից միայն շատ քչերին է հաջողվել ամիսներ շարունակ դիմակայել թշնամուն, սովին ու բնության արհավիրքներին, և 1916 թվականի ապրիլին՝ ռուսների կողմից Տրապիզոնի գրավումից հետո, անցնել են ռազմաճակատի գիծը և փրկվել:

Ինչ վերաբերում է հերոսամարտի երկու հայտնի ղեկավարներին՝ Ղուկաս Աղբարին և նրա աջ ձեռքը հանդիսացող 28-ամյա Վահան Հյուսիսյանին, ապա նրանց ևս վիճակվել էր իրենց խիզախ հայրենակիցների ու մարտական ընկերների մեծ մասի ճակատագիրը: Վերջին տեղեկությունը, որը հայտնի է Ղուկաս Աղբարի մասին, այն է, որ 150 հոգանոց խմբով նա հասել է Ղարաքյութուկ լեռը: Այստեղից նրա հետքերն ընդհատվում են, և ռազմաճակատի երկու կողմերում էլ այլևս նրա մասին որևէ բան հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ մի որևէ տեղ նա մղել է իր վերջին անհավասար մարտը և ընկել շատերի հետ միասին:

Վահան Հյուսիսյանի մասին հայտնի է, որ նա իր վերջին մարտը մղել է Շապին Գարահիսարից 14 կմ հյուսիս-արևելք գտնվող Լիճեսե (Լըճեսի) հունական գյուղի մոտ և ընկել քաջի մահով, նրա կինը՝ Սաթենիկ Բուռնազյանը, շատ հայ հերոսուհիների նման, թույն է ընդունել ինքնապաշտպանության վերջին ժամերին: Լիճեսեի և նրա մոտ գտնվող Աղպայիր լեռան մարտում շապինգարահիսարցի քաջերը ծանր պարտության են մատնել կրնկակոխ հետապնդող թշնամուն[335]:

---

[335] **Թադևոսյան Ռ.,** Դրվագներ հայոց ռազմական պատմությունից. XIX-XX դարեր, էջ 223:

Լիճեսեցի հույն գյուղացու վկայությամբ՝ այդ արյունահեղ մարտում «հայերը, մեկ-մեկ առյուծ կտրած, մեկի դեմ տասը թուրք ջարդեցին»: Հակառակորդի կորուստներն այնքան մեծ են եղել, որ թուրքական հրամանատարության հրամանով ոտքի է հանվել շրջակա հունական գյուղերի բնակչությունը՝ լեռներում ու ձորերում թափված թուրք ասկյարների դիակները հավաքելու համար[336]:

Շապին Գարահիսարի ինքնապաշտպանական մարտերի ընթացքում՝ 1915 թվականի հունիսին, աչքի են ընկել նաև հացթուխ կանայք, որոնք ռումբ էին պահանջում՝ հակառակորդին ռմբահարելու համար: Նրանք զինվելով՝ մոտ մեկ շաբաթից ավելի կանգնեցրել են հարձակվող թուրքական գրոհները, նույնիսկ հակագրոհի անցել: Սակայն մնալով բերդում՝ ի վերջո զենքով դիմավորել են թշնամուն և ընկել թշնամու գնդակներից:

Շապին Գարահիսարի կանանցից արժանի են հիշատակման հերոսուհիներ *Վերոնիկա Թանջությանը, Գյուլզատե Թութունջյանը, Լուսաբեր Ճեոպեղեկյանը, Չիլ Տաթևը, օրիորդներ Մարիամ Թաշճյանը, Վարդանուշ Գագանճյանը, Փերուզ Ավագճյանը, Վարդուհի Գաբիկյանը* և ուրիշներ:

Մուսա լեռան հերոսամարտը և հայ հերոսուհի կանայք

1915 թվականի հուլիսի 26-ին տեղահանվելու հրահանգ է ստացել Քեսապի հայ բնակչությունը: Որոշ միամիտներ, հավատալով կառավարության կեղծ խոստումներին, մտածել էին, թե իրենց մեկնումը ժամանակավոր է: Նրանք կազմում էին բնակչության մեկ երրորդը, իսկ մնացած մասը՝ չորս հազարից ավելի մարդ, որոշել էր դիմագրավել արյունարբու թշնամուն[337]: Նրանցից զենք կրելու ընդունակ էին շուրջ 800-ը, իսկ զենքը քիչ էր՝ հունական «Կրա» հրացան, 7 մաուզեր, 450

---

[336] **Թադևոսյան Ռ.,** Դրվագներ հայոց ռազմական պատմությունից. XIX-XX դարեր, էջ 224:
[337] **Բրայս Ջ.**, նշվ. աշխ., էջ 91:

հնատիպ և որսորդական հրացաններ: Յուրաքանչյուր հրացանի բաժին էր հասնում 80-100 փամփուշտ[338]: Դրանից բացի՝ կար բավականաչափ վառոդ ու կապար՝ 30000 փամփուշտ պատրաստելու համար:

Չափազանց կարևոր էր ինքնապաշտպանության համար հենակետ ընտրելու հարցը: Ոմանք առաջարկել են ամբողջ ժողովրդին հավաքել ամենալավ դիրք ունեցող գյուղում և այն վերածել ամրոցի: Ի վերջո, վերապատվելի Տիգրան Անդրեասյանի և Մովսես Տեր-Գալուստյանի առաջարկով որոշվել է հաստատվել Մուսա լեռան գագաթին, որի բարձրությունը 1800 մետր էր, տարածքը՝ 70-80 քառ. կմ[339]:

1915 թվականի հուլիսի 31-ին սկսվել է լեռ բարձրանալու գործողությունը, որը տևել է երեք օր: Դարեր շարունակ Մուսա լեռան ստորոտին բնակվել է հայկական համայնքը՝ 6 գյուղերով, որոնց թվում էին Բիթիասը, Հաջի-Հաբիբլին, Յողունօլուքը, Խդրբեկը, Վագըֆը և Քեբուսիեն: Հիշյալ հայկական գյուղերը վարչականորեն մտնում էին Հալեպի նահանգի Ալեքսանդրեթի գավառի Անտիոքի գավառակի մեջ՝ կազմելով Սուետիա գյուղախմբի (Նահիե) մի մասը:

Լեռ բարձրանալը իրականացվել է մեծագույն դժվարություններով, որովհետև պատերազմի ընթացքում կառավարությունը բռնագրավել էր բոլոր փոխադրամիջոցներն ու քարշակող ուժերը: Ամեն մի գյուղից ծայր է առել մարդկային բազմություն՝ պարկերով բեռնված, իսկ հովիվները քշել են կովերին, այծերին ու ոչխարներին: Վերելքը գնալով դժվարացել է: Օգոստոսի 1-ին ժողովրդի մեծ մասը հասել է Թաթար Ալան կոչված սարահարթը՝ լեռան գագաթից բավական ներքև: Հետագայում եկածներին տեղավորել են Գըճլճայ, Գուզճըղազ, Տամլաճըգ, Գափլան, Տուզաղը վայրերում[340]: Ժողովրդի տեղաշարժը աննկատ չի մնացել, և Սուետիայի մյուդիրը երեք անգամ հայերից պահանջել է հրաժարվել իրենց մտադրությունից, բայց նրա հորդորներն

---

[338] **Պուրսալեան Յ.**, Մուսա լերան հերոսամարտը, Այնճար, 2004, էջ 13:
[339] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 30:
[340] Տե՛ս նույն տեղում, էջ 31:

անպատասխան են մնացել:

Մուսա լեռան բարձունքներն ունեին աննպաստ կլիմա: Եթե ստորին մասում արևը կիզիչ էր, ապա վերևում տևական սառցային ու թանձր մշուշ էր, որը պարուրում էր մարդկանց մարմինը, թրջում նրանց հագուստը և թափանցում մինչև ոսկորները: Ռազմագիտական տեսանկյունից մշուշն ուներ իր առավելություններն ու անպատեհությունները: Տղամարդիկ անմիջապես ձեռնամուխ են լինում ծառերից կացարաններ պատրաստելու գործին:

Օգոստոսի 5-ին մյուդիրը մուսալեռցիների մոտ է ուղարկել մի պատվիրակություն՝ նամակով, որում փորձում էր ըմբոստներին համոզել հրաժարվել «արկածախնդրությունից և իրենց ճակատագիրը վստահել «բարեխնամ» կառավարությանը, սակայն մյուդիրի այս փորձն էլ հաջողություն չի ունեցել:

Օգոստոսի 7-ին տեղի է ունեցել Թաթար Ալանի ընդհանուր ժողովը: Յուրաքանչյուր շրջանից մասնակցել է 15 ներկայացուցիչ: Սակայն ժողովը նոր էր սկսվել, երբ լուր է հասել, որ 200 թուրք ասկյարներ շարժվում են դեպի հայերի դիրքերը: Եվ սկսվել է առաջին մարտը: Թշնամին թերագնահատել էր հայերի ուժը, այնպես որ վեց ժամ տևած ընդհարումից հետո թուրքերը նահանջել են՝ թողնելով տասը սպանված և քսան վիրավոր: Այս հաղթանակն ունեցավ հոգեբանական մեծ նշանակություն և գոտեպնդեց ժողովրդին:

Օգոստոսի 10-ի լուսաբացին սկսված ճակատամարտը տևել է 12 ժամ, թշնամին կորցրել է 100, հայերը՝ 3 մարդ: Իրենց քաջությամբ աչքի են ընկել Պետրոս Գալուստյանը և Հակոբ Գարակյոզյանը: Առաջինը հինգ գնդակով սպանել է չորս թնդանոթաձիգների, իսկ երկրորդը մարտնչել է մինչև վերջին փամփուշտը և ստացած վերքերից հաջորդ օրը մահացել:

Երեք շրջանների տեղական մարմինները Տամլաճըգում հրավիրել են ժողով՝ իրենց գործողությունները համակարգելու համար: Ստեղծվել է Կենտրոնական վարչական ժողով և զինվորական վարչություն, որի

վերահսկիչ է նշանակվել 21-ամյա Մովսես Տեր-Գալուստյանը: Կենտրոնական վարչական ժողովի ատենապետն էր պատվելի Տիգրան Անդրեասյանը: Մովսես Տեր-Գալուստյանի առաջին գործը եղել է մարտական ուժերի կազմակերպումը:

Օգոստոսի 19-ին Աստվածածնի տոնի առթիվ գլխավոր զորանոցի մոտ մատուցվել է հանդիսավոր պատարագ, որին ներկա է գտնվել գրեթե ամբողջ ժողովուրդը: Պատարագը դեռ չէր ավարտվել, երբ հայտնի է դարձել, որ թշնամին մեծ ուժերով շարժվում է դեպի լեռը: Հարձակում է գործել մոտ 4000 զինվոր՝ տասնյակ թնդանոթներով, և անհամար խուժան: Թուրքերն իրենց ուժերը կենտրոնացրել են Թաթար Ալանի ուղղությամբ, որտեղից հեշտ կլիներ գրավել մյուս դիրքերը: Գիշերը թշնամուն հաջողվել է տիրանալ Թաթար Ալանին և հայտնվել հայերի վերջին դիրքերից հազիվ 200 մետր հեռավորության վրա: Լուսաբացին հայերը մարտնչել են մեկը տասի դեմ՝ հետևյալ կարգախոսով՝ «Դիմադրել, չնահանջել ու մեռնել»[341]:

Կեսօրից հետո սկսվել է գլխավոր հարձակումը: Գրավված Թաթար Ալանից արկերի տարափ է տեղացել բնակավայրերի ու զորանոցների վրա, և ժողովուրդը ստիպված է եղել խուճապահար փախչել մոտակա անտառները: Մարտը հիմնականում մղվել է մի բլրի շուրջ, որը ստացել է «Մահվան բլուր» անվանումը:

Դիրքերը չեն լքել նույնիսկ ծանր վիրավորները: Թշնամին յոթ-գլխանի դևի պես փորձել է շրջապատման օղակի մեջ առնել «Մահվան բլուրը»: Եվ այդ պահին կատարվել է անհավատալի մի բան: Դիրքերը լքած մարտիկներից շատերը ետ են վերադարձել: Նրանցից մեկն առաջարկել է կազմել 50 հոգանոց խումբ և անակնկալ կերպով հարվածել թշնամուն թիկունքից, ինչն էլ իրականացվել է:

Թշնամու աջ թեև սկսել է խուճապահար նահանջել: Բլրի պաշտպանները, օգտվելով դրանից, դուրս են եկել իրենց դիրքերից ու գրո-

[341] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 57-58:

հել նրանց վրա՝ թշնամու շարքերում մահ սփռելով: Շատ չանցած՝ հրանոթներն ու հրացանները լռել են: Հայերը տվել են 10, թշնամին՝ 500-ից ավելի զոհ: Լուսաբացին ամբողջ Մուսա լեռը հայերի ձեռքում էր: Հայերի ռազմավարը կազմել է մի քանի ջորի, 9 մաուզեր և 1000 փամփուշտ[342]:

Օգոստոսի 19-20-ի օրհասական ճակատամարտում իրենց խիզախությամբ աչքի են ընկել Պետրոս Գալուստյանը, Մանուկ Գրլճյանը, Մարտիրոս Ճանսըզյանը, Գրիգոր Նգրուրյանը, Հակոբ Խեչոնյանը, Սարգիս Շաննագյանը, Պողոս Գպպուրյանը և շատ ուրիշներ: Տղամարդկանցից ետ չեն մնացել նաև հայ կանայք ու աղջիկները, որոնցից աչքի են ընկել հատկապես *Շուշանիկ Գապայանը* (նա բոլոր մարտերում իր ամուսնուն կողքին էր), ինչպես նաև *Մանուշակ Մանուկյան-Յաղուպյանը, Վարդեր Զեյթյանը, Եղիսաբեթ Սգայանը* և ուրիշներ[343]:

Օգոստոսի 20-ի իրիկնադեմին, երբ հակառակորդը հասել է առավելագույն հաջողության և մխրճվել հայկական պաշտպանության խորքերը, և թվում էր, թե նա մոտ է վերջնական հաղթանակին, մուսալեռցիներն անցել են հակագրոհի: Թուրքերի համար դա լիովին անսպասելի էր, և իր վերջո մարտն ավարտվել է նրանց ջախջախիչ պարտությամբ: Տ. Անդրեասյանը հետևյալ կերպ է ներկայացրել երկօրյա ճակատամարտի ելքը որոշած այդ հակագրոհը. «Այսպես թիկունքեն և քովերեն, տարբեր կետերե բացված կրակը կատարյալ պաշարումի մը տպավորությունը կձգե թշնամվույն վրա: Մեկ ժամ տևող հարձակումը, կես մթության մեջ կատարված, կատարելապես ցիր ու ցան ըրած էր թշնամիին բանակը և սարսափահար՝ անտառներուն մեջ խառնաշփոթության մատնած: Վերջապես, անճար և հուսահատ՝ խոր խավարի մեջ ձգած փախած էր ան»[344]:

---

[342] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 73:
[343] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 233:
[344] Տե՛ս նույն տեղում:

Կրած պարտությունից հետո թուրքերը փոխել են ռազմավարությունը. նրանք որոշել են պաշարել Մուսա լեռը և ժողովրդին սովի մատնել: Այս ամբողջ ժամանակամիջոցում չի երևացել ոչ մի ռազմանավ: Ուստի որոշվել է կրկին մարդ ուղարկել Ալեքսանդրեթ՝ ռազմանավ որոնելու համար, ինչպես նաև շինել մի փոքրիկ առագաստանավ՝ Կիպրոս հասնելու համար:

Այսպես անցել է ամբողջ օգոստոս ամիսը: Օրեցօր ոչ միայն ավելի է սրվել պարենավորման վիճակը, այլև մոտեցել են աշնան ցրտերը, որոնք անկարելի կդարձնեին նման բարձրության վրա գոյատևելը:

Վերջապես սեպտեմբերի 5-ին ծովի կապույտ ջրերի հեռվում երևացել է մի մոխրագույն զանգված, որից ծխի քուլաներ էին բարձրանում: Ժողովուրդը մի մարդու նման վազել է դեպի «Ազատության լեռը», որի վրա արդեն ցցված էին երկու դրոշները: Նավը մոտեցել է մեծ արագությամբ: Այն խարիսխ է գցել ծովեզերքից մի քանի կիլոմետր հեռու: Դրանից անջատվել է մակույկ, որը եկել ու կանգ է առել մի փոքրիկ ծովածոցում:

Մուսա լեռան վրա գտնվող հայերի ճակատագիրը պետք է որոշվեր ութ օր հետո: Հայերը ռազմանավի հրամանատարին հայտնել էին, որ թուրքերը Քեբուսիե գյուղի եկեղեցում կուտակել էին մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք, իսկ գյուղը լիքն էր հայ գաղթականներով: Ռազմանավն իջել էր մի քանի կիլոմետր դեպի հարավ և սկսել էր ռմբակոծել թուրքերի ռազմական պահեստները: Դրանից հետո «Գիշենը» անհետացել էր երկու օր:

Սեպտեմբերի 7-ի առավոտյան թուրքական մեծ ուժերը կրկին նետվել էին լեռան կողմ՝ Շեյխ Օրդոյի կողմից: Ճակատամարտը տևել էր 10 ժամ: Երեկոյան թշնամին հայերի դիմադրության առջև դարձյալ ընկրկել էր՝ կրելով մեծ կորուստներ: Սեպտեմբերի 10-ին տեղի էր ունեցել Մուսա լեռան վերջին ու վճռական ճակատամարտը: Լեռան պաշտպանների թիկունքը հսկել էին «Գիշեն» և «Դեսեքս» ֆրանսիական նավերը: Գետնին էին փռվել թշնամու զինվորների ամբողջ շարքեր: Խու-

ժանը կորցնելով հարյուրավոր գրոհայինների՝ տեղի էր տվել ու սկսել էր նահանջել, ապա նահանջը վերաճել էր փախուստի: Հայերից զոհվել էին երկուսը, մի քանիսը՝ վիրավորվել: Ճակատամարտի ավարտին երկու ռազմանավերը սկսել էին հրետակոծել թուրքերի զորակայաններն ու գյուղերը:

Մուսալեռցիները գերազանցեցին մեկը մյուսին: Հատկապես աչքի ընկավ Եսայի Յաղուբյանը: Վերջինս հայտնվել էր ամենավտանգավոր դիրքերում: Նրա վճռականությունն ու զինական հմտությունը մեծապես նպաստեցին այդ օրվա հաղթանակին: Այդ օրերին տղամարդկանց քաջությամբ չզիջեցին նաև հայ հերոսուհի կանայք:

Ռմբակոծությունն ավարտից հետո «Գիշենից» մի մակույկ մոտեցել է ափին: Հայերին հաղորդվել է ֆրանսիական կառավարության որոշումը, որ անհնար է օգնական զորքեր ափ հանել և շարունակել դիմադրությունը: Հրահանգ է ստացվել Մուսա լեռան հայերին փոխադրել ապահով վայր՝ Կիպրոս կամ Եգիպտոս: Հրահանգվել է առանց ժամանակ կորցնելու ժողվրդին հավաքել ծովեզրին, որտեղից նրանք մակույկներով կփոխադրվեին ռազմանավեր: Դիրքերում թողնելով փոքրաթիվ ուժեր՝ ժողովուրդն իջել է ծովեզերք: Այդ գործողությունը տևել է երկու օր: Հետագայում ֆրանսիական բանակի կազմում ստեղծվեց Հայկական (Արևելյան) լեգեոն, որի առաջին գինվորագրյալներն էին Մուսա լեռան մարտիկները[345]: Լեգեոնն աչքի է ընկել 1918 թվականի Արարայի ճակատամարտում և արժանացել Պաղեստինում դաշնակից զորքերի հրամանատար, անգլիացի գեներալ Ալենբիի բարձր գնահատականին: 1919-1920 թվականներին Սուետիայի հայությունը դաշնակից զորքերի հետ վերադարձել է իր գյուղերը:

1932 թվականի սեպտեմբերի 18-ին մեծ հանդիսավորությամբ

---

[345] Լեգեոնի ստեղծման, գործունեության պատմության իրավաքաղաքական վերլուծության մասին մանրամասն տե՛ս **Գասպարյան Ռ.**, Հայկական լեգեոն (1916-1920 թթ.), «Հայոց բանակ», N 1, Երևան, 1996, նաև՝ **Գարամանուկյան Ա.**, Հայկական լեգեոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսի տակ, «Հայոց բանակ», N 2, Երևան, 1996:

Մուսա լեռան վրա՝ Տամլաճըգում, բացվել է 1915 թվականի հերոսամարտին նվիրված փառահեղ հուշակոթող, որի հովանու ներքո հանգչում էին ինքնապաշտպանության ընթացքում զոհված 18 մուսալեռցի քաջերի աճյունները: Հետագա 7 տարիներին այն դարձավ ուխտատեղի: Այն բանից հետո, երբ 1939 թվականի հունիսի 23-ի ֆրանս-թուրքական պայմանագրով Ալեքսանդրեթի գավառի կազմում Սուետիան նույնպես բռնակցվեց Թուրքիային, թուրք վանդալները պայթեցրին հուշարձանը՝ ոչնչացնելով մի բուռ հայության անկոտրում կամքի և սեփական անզորության այդ քարե վկայականը:

Հետագայում՝ տարիներ անց՝ 1939-1940-ական թվականներին, լիբանանյան հյուրընկալ հողում մուսալեռցիները կառուցեցին գեղեցիկ ու բարեկարգ մի նոր ավան՝ Այնճարը, որը կարճ ժամանակ անց դարձավ ոչ միայն մուսալեռցիների, այլև ամբողջ լիբանանահայության հպարտության առարկան: Սակայն մուսալեռցիների մի զգալի մասը 1946-1947 թվականների Մեծ հայրենադարձության ընթացքում ներգաղթեց Հայաստան՝ իր հետագա ճակատագիրը կապելով մայր հայրենիքի հետ: Այստեղ՝ Երևանից ոչ հեռու գտնվող Մուսա լեռ ավանի բարձունքում՝ հերոսամարտին նվիրված հուշակոթողի մոտ, յուրաքանչյուր տարի սեպտեմբերին մեծ շուքով նշվում է 1915 թվականին տեղի ունեցած Մուսա լեռան հերոսամարտի փառահեղ հաղթանակը:

Մուսա լեռան հերոսամարտին է նվիրված «Մուսա լեռան քառասուն օրը» վերնագրով անմահ վեպը, որը գրել է ավստրացի գրող Ֆրանց Վերֆելը[346]: Վեպը գերմաներեն լեզվով լույս է տեսել 1933 թվականին: Այն թարգմանվել է 36 լեզուներով, այդ թվում՝ նաև հայերեն:

1938 թվականին Պոլսում թուրքերն այրեցին «անիծյալ վեպի» հազարավոր օրինակներ: 1961 թվականին անգլերեն երկրորդ տպագրությունը լույս տեսավ երկու միլիոն տպաքանակով և արագ սպառվեց:

---

[346] **Վերֆել Ֆ.**, Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964:

Վեպը բարձր է գնահատել նշանավոր գրող Վիլյամ Սարոյանը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Սլովենիայի պարտիզանները Ռոգ լեռը կոչեցին «Սլովենիայի Մուսա լեռ»:

Մուսա լեռան հերոսամարտի տարիներին իրենց սխրագործություններով աչքի են ընկել հերոս սուետուհիները: Սուետիայի հայկական գյուղերում ազգային-ազատագրական պայքարի և ինքնապաշտպանության գաղափարները առաջացել էին դեռևս 1890-ական թվականներին: 1892 թվականին Մուսա լեռան գյուղեր են այցելել հնչական հեղափոխական գործիչ Բաբկեն Սյունու դասընկեր և ուխտակից Աղասին ու իր ընկերները: Նրանց նպատակը հեղափոխական աշխատանքներ կատարելն էր, նաև Զեյթունի ապստամբությանը մասնակցելը, ինչպես վկայում է մուսալեռցի վաստակավոր ուսուցիչ և բանասեր Թովմաս Հապեշյանը, «նրանց կատարած հեղափոխական քարոզչության հետևանքով ազգային-հեղափոխական գործերի հանդեպ հետաքրքրություն և խանդավառություն առաջացավ»[347]:

1908 թվականին ՀՅԴ անդամ մուսալեռցի Անանիա Վիրավորյանը կուսակցական գործունեությունը կազմակերպել է հետևյալ սկզբունքով. «Մեր խոսքը կշիռ պիտի ունենա, մեր գործը վստահություն պիտի ներշնչի»: Նա ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսը դարձավ: Ա. Վիրավորյանի վաղաժամ մահվանից հետո նրա սկսած գործը շարունակել են իր արժանավոր գործընկերները, որոնցից Չափար Վարժապետը (Մխիթար Հյուսյան-Սարգսյան) ազատագրական պայքարի քարոզչություն էր կազմակերպում ոչ միայն հեղափոխական պայքարի կոչերով, այլ նաև նրանց ընտանիքներում Ռաֆֆու գործերը կարդալով և բացատրելով: Այս քարոզչությունն ի վերջո հասել է իր նպատակին. աղջիկներն ու կանայք՝ սուետուհիները, տոգորվել են ազգային-ազատագրական պայքարի ոգով:

---

[347] **Հապէշեան Թ.,** Մուսա լերան հերոսամարտը, «Ազդակ» օրաթերթ, 14 սեպտեմբերի, Լիբանան, 1985:

Վերոնշյալ քարոզչական և կազմակերպչական աշխատանքները տվել են իրենց պտուղները հատկապես Մուսա լեռան հերոսամարտի տարիներին՝ 1915 թվականի գարնանը, երբ Օսմանյան տիրապետության տակ գտնվող և մուսալեռցիների հետ սերտ կապեր ունեցող Սիրիայի Քեսապ գյուղի ժողովուրդը գաղթելու հրաման էր ստացել թուրքական կառավարության կողմից: Մուսալեռցիները միջգյուղային ժողով էին գումարել՝ իրենց անելիքը որոշելու համար: Այդ մասին փաստել է Թովմաս Հապեշյանը. «Ժողովականները բաժանվեցին երկու մասի՝ պետության հրամանին դեմ հանդես եկողները և համակերպվողները: Մեծամասնությամբ որոշում ընդունվեց, որ երբ գաղթի հրամանը ստացվի, ընթացք չտալ և լեռը բարձրանալ: Կամավոր գաղթ դեպի լեռ, և ոչ թե ակամա գաղթ դեպի Սիրիայի մահաբեր անապատները»[348]:

Երբ գաղթի հրահանգը հասել է, Մուսա լեռան վեց գյուղերից (Յողուն-Օլոք, Խդրբեկը և Վագրֆը) հավաքաբար լեռ են բարձրացել, իսկ Քեբուսի գյուղից՝ միայն 17 ընտանիք: Հաջի Հաբիբլից և Բիթիաս գյուղերից կեսից ավելին միացել էր ըմբոստներին և ինքնապաշտպանության կողմնակիցներին:

Մուսա լեռան բարձունքին կազմել է ընդհանուր վարչական մարմին՝ ժողովրդի ամենօրյա կյանքը կարգավորելու համար: Երիտասարդությունը խմբերի է բաժանվել և նշանակվել են խմբապետեր, ինչպես նաև մարտական ղեկավար-օգնականներ:

Սուեդիայի գոյամարտի մոտ մեկուկես ամսվա ընթացքում կանայք տղամարդկանց արժանավոր օգնականներ են եղել: Նրանք չարքաշությամբ և համբերությամբ տոկացել են ցերեկվա շոգին, գիշերվա ցրտին, սովին, տափաստանին և ապահովության պակասին: Թեև կանայք կռվել են փոքրաթիվ ուժերով լավ զինված բանակի դեմ, չեն

---

[348] **Հապէշեան Թ.,** Մուսա լերան հերոսամարտը, «Ազդակ» օրաթերթ, 14 սեպտեմբերի, Լիբանան, 1985:

հուսահատվել, ոչ էլ իրենց սարսափով խուճապ են ստեղծել[349]: Ընդհակառակը, կռվողներին խրախուսել են և թշնամու գնդակների տարափը անտեսելով՝ ջուր և ուտելիք են հասցրել մինչև կռվի առաջին գիծը:

Սուետահայուհիների անձնուրացությունն ու քաջությունը սիրտ էին տալիս և կրկնապատկում տղամարդկանց եռանդն ու կորովը: Նրանց անվախության և քաջության մասին անզուգական օրինակներ է մեջբերում Մուսա լեռան առաջին ազգագրական պայքարի կազմակերպիչ, ինչպես նաև հերոսամարտի ղեկավարներից Մովսես Տեր-Գալուստյանն իր «Սուետուհին» հոդվածում:

Թուրքի գնդակից չվախեցող աննման, քաջ ու անվախ հայուհիներից էր **Ծաղեր Տեր-Մովսիսյանը**: Այս կինը հանգիստ ու դադար չուներ. անընդհատ շրջում էր դիրքերում, քաջալերում մարտիկներին՝ կրկնելով. «Կրակեցե՛ք եղբայրներ, հայի զենքը անգործ պիտի չմընա»[350]:

Թշնամու գնդակների տարափը նշանակություն չի ունեցել սուետուհիների համար: Նրանք կատարյալ արհամարանք են ունեցել թշնամու հանդեպ՝ համոզված լինելով, որ իրենց զենքերին և անառիկ լեռներին ապավինելով՝ ի վերջո պիտի կարողանան հաղթանակով դուրս գալ կենաց ու մահու այդ արյունալի պայքարից: Երբ դիրքերը ջուր տանող **Վարդեր Զեյթլյանի** կուժը ծակվել էր թշնամու գնդակից, նա, փոխանակ կուժը ձեռքից նետելու և ապաստան փնտրելու, թշնամիների ուղղությամբ գոռացել էր. «Անիծվածնե՛ր, ձեր գնդակները անգամ կուժ չեն կարող կոտրել»: Հետո երկար փեշը պատռելով լաթի մի կտորով՝ խցկել էր կուժի ծակված տեղը և կրկին ջուր լցնելով՝ անվրդով դեպի դիրքերը շարժվել: Այս նույն հպարտ սուետուհին, որսի միափող հրացանով զինված, Մուսա լեռան ծերպերից իր մասնակցությունն էր բերել ժողովրդական գոյամարտին:

---

[349] **Զէյթլեան Ս.**, նշվ. աշխ. էջ 127:

[350] **Տեր-Գալուստեան Մ.,** Սուէտուհին, «Յուսաբեր», Բ տարի, N 93, 3 նոյեմբեր, Գահիրէ, 1916:

Մովսես ավագ քահանա Շրիգյանը հետևյալ ականատեսի վկայությունն է տալիս Վարդեր Զեյթլյանի մասին: Տամլաճըգի հայկական գլխավոր դիրքերը վտանգված էին: Քաջամարտիկների մի խումբ վճռել էր օգնության հասնել: Տեղ հասնելու կարճ և ապահով ճանապարհ փնտրելու ժամանակ Վարդերը Զեյթլյանը կանչել էր իր՝ սուրհանդակի պարտականությունը ստանձնած զավակին՝ պատանի Թովմասին՝ նրան վստահեցնելով, որ իրենց ուզած ճանապարհը գիտի: Մարտիկները հիացումով նայել էին մորը, կրակոտ աչքերով տղային, իսկ խմբապետը ասել էր. «–Քույրի՛կ, այնքան ժամանակ, որ քեզ պես հայ մայրեր կան, մեր ազգը կանգուն կմնա»[351]:

Քաջամարտիկների խումբը ժամանակին տեղ էր հասնել և անակնկալի բերելով թշնամուն՝ ծանր կորուստներ էր պատճառել ու նահանջի մատնել:

Երբ լեռան վրա ապաստանած ժողովրդի պաշարը ավարտվել էր, կանանց մի խումբ մարտիկների ուղեկցությամբ անընդհատ տեղացող կրակի տակ թշնամու պաշարման օղակից դուրս էր եկել և շրջակա գյուղերից կորեկ, ցորեն և այլ անհրաժեշտ ուտելիքներ հայթայթել[352]:

Իրենց եղբայրների և ամուսինների կողքին զենքը ձեռքին կռվող սուետիահայուհիների շարքում առանձնանում էր **Շուշան Գապայանը**՝ անձնվեր և անվեհեր մի կին, ով մահվանը նայում էր հանդարտությամբ և արժանապատվորեն[353]:

Վերջին ճակատամարտի ընթացքում, երբ թուրքական բանակը սպառնացել էր բնաջնել ժողովրդին, անձնվիրության և քաջության օրինակներ էր ցույց տվել **Մանուշակ Մանուկյան-Յաղուբյանը**: Նա, թիկունքից կանանց գլուխն անցած, գրոհել էր թշնամու վրա զինված քարերով, գավազաններով և դարավոր ատելությամբ համակված: Այս

---

[351] **Տեր-Գալուստեան Մ.,** Սուէտուհին, «Յուսաբեր», Բ տարի, N 93, 3 նոյեմբեր, Գահիրէ, 1916:

[352] **Զէյթլեան Ս**., նշվ. աշխ., էջ 130:

[353] Տե՛ս նույն տեղում:

առիթով հիշատակության են արժանի նաև **Եղիսաբեթ Սգայանը** և նրա դուստրը[354]:

Նույնիսկ գյուղի մայրերը անմասն չեն մնացել ըմբոստ լեռնականների գոյամարտից: Թովմաս Հապեշյանը հետևյալ հուզիչ վկայությունն է տվել. «–Տամլաճըգի բարձունքի վրա արդարության մարմնացումը հանդիսացող Տեր-Հարություն քահանան լեռնային անտաշ քարերից կառուցված խղճուկ խորանի առջև՝ հայացքը երկնքին, Աստծուց օգնություն էր խնդրում: Իր առջև քիչ թվով մայրեր ու երեխաներ կային, նույնպես աղոթքի մեջ քարացած: Մայրերը աղոթքի բառերը փոխանցում էին երեխաներին՝ նրանց արդար բերանով Աստծուն առաքելու համար»[355]: Երեխաների արդար բերանով Աստծուն ուղղված մայրերի աղոթքը անպատասխան պիտի չմնար…:

Մուսա լեռան հերոսամարտը անկրկնելի իրողություն էր, որովհետև նրանում չկար խտրականություն մեծի և փոքրի, տղամարդու և կնոջ միջև. վտանգը սպառնում էր բոլորին անխտիր, և գիտակցելով այդ վտանգի մեծությունը՝ սուետիահայուհիները անսասանորեն կռվեցին մինչև վերջ: Երբ թշնամու շղթան սեղմվեց, և թուրքերը հայկական շատ դիրքեր գրավեցին, կանայք, կարծես խոսքները մեկ արած, դեպի ծովը դիմեցին՝ նախընտրելով պատվավոր մահը բռնությունից և անարգանքից: Բարեբախտաբար, հերոսամարտի ղեկավարները նախատեսել էին թշնամու ներխուժումը և կենտրոնատեղին, ու ժողովրդի հյուղակները լավ պաշտպանված էին: Նրանք ոչ միայն թուրքերի գրոհները հետ մղեցին և դադարեցրին խուճապը, այլև օգտվելով թանձր մշուշից՝ անցան թշնամու թիկունքը և սկսեցին կրակել: Այս անգամ թշնամին իրեն պաշարված կարծելով, մատնվեց խուճապի[356]:

Ի վերջո լեռնականները ծովեզերքի մոտ մի հսկա մարտանավ նկատեցին: Անմիջապես ծովահայաց բարձունքերի վրա խարույկներ

---

[354] **Զէյթլեան Ս.**, նշվ. աշխ., էջ 130:
[355] Տե՛ս նույն տեղում:
[356] Տե՛ս նույն տեղում , էջ 132:

վառեցին և սավաններով շինված ճերմակ դրոշներ պարզեցին: Դրոշի համար սպիտակ սավանը տրամադրել էր տիկին Զարուհի Տոնիկյանը (օրիորդ Նիկողոսյան): Նրա ամուսինը ծառայում էր թուրքական բանակում, չէր կարողացել փախչել և ազատվել: «Կարմիր խաչի» դրոշակը այնտեղ հավաքված կանայք պատվելի Տիգրան Անդրեասյանի խորհրդով կարել էին Յօղանօլուքցի մի աղջկա (Ֆիստա) հագուստից և դպրոցահասակ աղջիկների գոգնոցներից: Այն տեղադրել էին ծովի դիմաց մի խումբ տղաների հսկողության տակ: Մեկ այլ սավանի վրա պատվելին անգլերեն մեծ գրերով գրել էր. «Քրիստոնյաներ ենք, օգնեցեք մեզ»: Այն նույնպես բարձրացվել էր ծովի դիմաց: Մի օր 150 կանայք և աղջիկներ Տամլաճըգից իջել են դաշտեր՝ 4 զինված տղաների աջակցությամբ Քապուսիի մոտ գտնվող արտերից պարկերի մեջ կորեկ լցնելու և լեռ հանելու համար: Երբ պարկերը շալակած՝ ճանապարհ էին ընկել, թշնամին սկսել էր կրակել, շփոթված աղջիկները տարբեր կողմեր էին փախչել: Այս իմանալով՝ 50 տղաներ իջել էին դաշտ՝ գտնելու նրանց և հետները բարձրացրել էին լեռը: Սակայն, դժբախտաբար այդ հերոս աղջիկներից երկուսը՝ *Սիմա Աբրահամյանը* (խտրբեկցի) և *Արշալույս Թասլագյանը* (Հաջի Հաբիբլիից) ջղերի խանգարում ստացան, և հետագայում երկուսն էլ մահացան[357]:

Ֆրանսիական զրահանավը ոչ միայն փրկեց լեռնապաստանածներին, այլև ռմբակոծեց թուրք զինվորների կենտրոնատեղիները:

Մուսան լեռան հերոսամարտի բոլոր մասնակիցները երախտագիտությամբ են հիշում սուետիահայուհիների կատարած սխրանքը, նրանց կամքն ու կորովը, հոգեկան արիությունն ու տոկալու կարողությունը: Հայ կնոջ այս հոգին է, որ մեր օջախը վառ է պահել դարերի ընթացքում, և հակառակ տարիների ստրկության ու արյան հեղեղներին՝ հայրենի տան նվիրական ծուխն ու արիությունը անխափան փոխանցել է սերնդեսերունդ:

---

[357] **Շերպեճեան Ս.,** Պատմութիւն Սուետահայերու, Պէյրութ, 2010, էջ 78-80:

Ուրֆայի հերոսամարտը և հայ հերոսուհի կանայք

Ուրֆայի ինքնապաշտպանական հերոսամարտի հայուհիների հերոսական գործունեությունը այսպես է բնութագրել հայ նշանավոր գրող, ազգային, պետական և հասարակական գործիչ Ավետիս Ահարոնյանը. «Ուրֆայի հայուհիների մասին Եղիշէի հետ կարող ենք կրկնել. «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհի մոռացան զկանացի տկարութիւն եւ եղեն արուք առաքինիք ի հոգեւոր պատերազմին... ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ»:

Այնուհետև հավելում է. «Արդարև, ուրֆայեցի հայ կանայք ամբողջ այդ հերոսական դիմադրության տևողության ընթացքում իրենց կորովով, իրենց տոկուն անձնվիրությամբ և մանավանդ անօրինակ քաջասրտությամբ ոչ միայն ոչնչով հետ չմնացին իրենց եղբայրներից և ամուսիններից, այլև հաճախ գերազանցեցին նրանց, քանի որ ոգու գերմարդկային ճիգով կարողացան իրենց կանացի թուլությունը բարձրացնել մինչև առնական անվեհերության աստիճանին»[358]:

Ուրֆա (Ուռհա) կամ Եդեսիա քաղաքը գտնվում էր Միջագետքի հյուսիսային սահմաններում: Ուրֆայի գավառն ուներ շուրջ 10 հազար քառ. կմ տարածք և անմիջականորեն ենթարկվում էր Պոլսին:

20-րդ դարի սկզբին Ուրֆա քաղաքի հայության թիվն անցնում էր 30 հազարից:

Ինչպես նշվում է. «Ինքնապաշտպանության միակ խիզախ ու անկախ պատասխանատուն և առաջնորդը եղավ Յոթնեղբայրյան Մկրտիչը: Ան իր եղբոր՝ Սարգիսին և Ռասթկելենյանին ու իր մյուս ընկերներուն հետ կռվեցավ և քաջաբար միասին նահատակվեցավ: Ուրֆայի հայ երևելիները ամեն պարագային տակ ինքնապաշտպանության գաղափարին հակառակ կեցան: Միայն վերջին րոպեին կրցան

---

[358] **Ահարոնյան Ա.**, Ուրֆայի հերոսամարտը, տե՛ս **Սահակեան Ա.**, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Անթիլիաս, 2014, էջ 864:

տեսնել իրականությունը, բայց ուշ էր...»[359]:

Ուրֆայի հայության մղձավանջն սկսվել է հունիսի 8-ին, երբ ձերբակալվել են 16 երևելիներ և կուսակցական գործիչներ: Երկու օր անց նրանք աքսորվել են Ռագգա գյուղաքաղաքը: Այստեղ բանտում քրդական տարազով ծպտված նրանց այցելել է Մկրտիչ Յոթնեղբայրյանը և հայտնել, որ հաջորդ օրը հարձակում է լինելու բանտի վրա ու բոլորին ազատելու են, սակայն բանտարկյալները չեն համաձայնել[360]: Մի քանի օր անց Ուրֆայի ձերբակալված հայ գործիչները սպանվել են:

Հունիսի 25-ին Ուրֆայում սկսվել են զանգվածային նոր ձերբակալություններ: Հուլիսի 10-ին կառավարչատուն է կանչվել Արտավազդ վարդապետը, որին հանձնարարվել է 48 ժամվա ընթացքում հավաքել հայկական թաղերում գտնվող բոլոր զենքերը: Հայերը հանձնել են ոչ պիտանի զենքերը: Հուլիսի 26-ին առաջնորդին նույնպես ձերբակալել են: Հուլիսի 28-ի գիշերը բոլոր բանտարկյալներին դուրս են բերել բանտից ու տարել դեպի Տիգրանակերտ, ճանապարհին էլ՝ Ուրֆայից մի քանի ժամվա հեռավորության վրա գտնվող Շեյթան Դերեսի վայրում, բոլորին կոտորել[361]:

Օգոստոսի 4-ին թուրք գինվորներն ու չեթեները հանկարծակի շրջապատել ու կոտորել են Ուրֆայից երկու ժամվա հեռավորության վրա գտնվող Գուտեմե և Կարա Քյոփրու վայրերում տեղաբաշխված ավելի քան 1500 անզեն հայ զինվորների[362]: Սեպտեմբերի 29-ի առավոտյան թուրք ոստիկանները պաշարել են Գուտեմեի կոտորածից միակ փրկվածների՝ Սարգիս և Գրիգոր Տարախչյանների թաքստոցը, որտեղ ապաստանել էին մի քանի տասնյակ հայեր: Եվ երբ սկսել են ղողանջել եկեղեցիների զանգերը, քառորդ ժամ անց բոլորն իրենց դիրքերում են եղել: Հերոսամարտն սկսված էր:

---

[359] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 165, նաև՝ **Դերվիշյան Ե.**, Ուրֆայի ինքնապաշտպանությունը կամ դյուցազնաշունչ հայության վկան, Բեյրութ, 1978, էջ 358-359:
[360] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 168:
[361] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 654-655, 659:
[362] Տե՛ս նույն տեղում, էջ 661-672:

Մկրտիչ Յոթնեղբայրյանի հրամանով թաղում գտնվող թուրք ոստիկանները զինաթափվել են, իսկ դիմադրողները՝ սպանվել: Նա հրահանգել է թուրքական և հայկական թաղերի միջև նոր պատնեշներ չկառուցել, այլ ամրացնել թուրքական թաղերին նայող տները: Բոլոր դիրքերին բաժանվել են ռումբեր:

Սեպտեմբերի 30-ի արշալույսին թուրք խուժանը, երեք խմբի բաժանված, հարձակվել է հայկական թաղերի վրա: Հայերը թույլ են տվել, որ ամբոխը մտնի թաղերից ներս և ռմբահարել են նրան: Առաջին օրը թուրքերը մարտի դաշտում թողել են 450 դիակ, հայերն ունեցել են 8 զոհ[363]:

Կռվից հետո Մ. Յոթնեղբայրյանն ու Հ. Ռասթկելենյանն այցելել են բոլոր դիրքերը: Նրանք ստեղծել են Զինվորական խորհուրդ, որի կազմում ընդգրկվել են Հարություն Սիմոնյանը, Խորեն Կյուպելյանը, Լևոն Եղբերլերյանը, Հովհաննես Իմիրզյանն ու Արմենակ Աթարյանը[364]: Ընտրվել է Պարենավորման մարմին, սարքավորվել է հիվանդանոցը: Բացվել է զինագործարան, որտեղ լցրել են դատարկ փամփուշտները, նորոգել զենքերը:

Զինվորական խորհրդի կարգադրությամբ հայկական թաղամասը բաժանվել է վեց շրջանների, որոնք միասին ունեին 32 դիրք: Յուրաքանչյուր շրջան ուներ իր խմբապետը, ամեն տասնյակ՝ իր տասնապետն ու փոխանորդը: Երկու խումբ թողնվել է կենտրոնում՝ իբրև պահող ուժ:

Հոկտեմբերի 1-ի գիշերը թուրքերը մտել են կաթոլիկական եկեղեցու բակ: Մկրտիչ Յոթնեղբայրյանի հրահանգով ծուղակ է սարքվել, և բոլորը ոչնչացվել են: Նույնը կատարվել է նաև Թեմրին թաղում՝ Գևորգ Ալահայտոյանի գլխավորությամբ: Գերված երկու թուրք զինվորների զենքերը Մկրտիչ Յոթնեղբայրյանը հանձնել է կռվին մասնակցած օրիորդներ Խանում Քեթենճյանին և Մարիամ Չիլինկիրյա-

---

[363] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 667:
[364] Տե՛ս նույն տեղում, էջ 664:

նին[365]:

Շուտով հայտնի է դարձել, որ Հալեպից դեպի Ուրֆա է գալիս Ֆախրի փաշան՝ 6000-անոց զորքով ու թնդանոթներով, ինչպես նաև Սուլեյման բեկը՝ 600 մարտիկներով: Դեպի Ուրֆա են ձգվել նաև շրջակայքի քրդական աշիրեթները:

Հոկտեմբերի 3-ի առավոտյան հայկական թաղի ուղղությամբ արձակվել է առաջին թնդանոթի ռումբը: Սակայն այդ նույն գիշերը Հ. Ռասթկելենյանին հաջողվել է նոր ծուղակի մեջ գցել թուրքերին[366]: Մկրտիչի եղբայր Սարգիս Յոթնեղբայրյանը (Քոռ Սաքո), Գևորգ Ալահայտոյանն ու ևս հինգ քաջեր կարողացել են քրդական տարազով անկնկատ մոտենալ Ֆախրի փաշայի թնդանոթներին, դիպուկ կրակով ոչնչացնել թնդանոթաձիգներին, հանել թնդանոթներից մեկի փակաղակը և վերադառնալ[367]:

Հոկտեմբերի 7-ի առավոտյան Հայր Աբրահամի դիրքի մարտիկները նկատել են, որ դիմացի բլրի լանջին տեղադրված են թուրքական թնդանոթներ: Քիչ անց եկել է մի թուրք բանագնաց հիսնապետ, որը բերել է Ֆախրի փաշայի նամակը՝ գրված Մկրտիչ Յոթնեղբայրյանին: Փաշան իր հիացմունքն է հայտնել հայերի քաջության մասին և առաջարկել է հանձնվել՝ խոստանալով, որ դիմադրության մասնակիցները ոչ միայն չեն պատժվի, այլև թուրքական բանակում կստանան կարևոր պաշտոններ: Քաջ ծանոթ լինելով թուրքի խոստումներին ու երդման արժեքին՝ Մկրտիչ Յոթնեղբայրյանը պատասխանել է, որ Ուրֆայի հայությունը պետք է կռվի մինչև վերջին մարդը:

Բանակցություններից հետո թշնամին հայկական թաղերի վրա բացել է երկու թնդանոթների անկանոն կրակ: Հոկտեմբերի 8-ին Ֆախրի փաշայի զորքերն անցել են կատաղի գրոհի: Նրանք, տների պատերը ծակելով, փորձել են անցնել հայկական Թեմրին թաղը: Երե-

---

[365] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 666:
[366] Տե՛ս նույն տեղում, էջ 668:
[367] Տե՛ս նույն տեղում, էջ 671:

սուն հայ մարտիկներ, թուրքերի զգեստներ հագած, ծուղակի մեջ են գցել հայկական թաղերին անծանոթ թուրք զինվորներին ու կոտորած սարքել: Թուրքերից 200 հոգի սպանվել է, իսկ մնացածները փախել են: Հոկտեմբերի 9-ին՝ կիրակի օրը, թուրքերին հաջողվել է ամրանալ Թլֆտուր կոչվող բլրի գագաթին, որը գտնվում էր հայկական թաղի թիկունքում, և այնտեղից հնարավոր էր հարվածել հայերի բոլոր դիրքերին ու տներին: Ուղիղ ժամը 12-ին բլրի գագաթից սկսել են որոտալ թուրքական թնդանոթները: Մ. Յոթնեղբայրյանը և Հ. Ռասթկելենյանը շրջել են դիրքից դիրք ու ժողովրդի մեջ նկատել սարսափ ու վարանում: Միևնույն ժամանակ զինված օրիորդները երեք խմբով՝ *Խանում Քեթենճյանի, Մարիամ Չիլինկիրյանի* և *Կեմչյանի* ղեկավարությամբ, անցնելով դիրքից դիրք, սկսել են քաջալերել հայ մարտիկներին: Դիրքերի պաշտպանները երգել են հայրենասիրական երգեր: Փամփուշտ չխնայելու կոչ անելով՝ Մկրտիչ Յոթնեղբայրյանը դուրս է թռել իր դիրքից, ծնկել փողոցի կենտրոնում ու դիմահար կրակով տապալել առաջ վազող թուրք զինվորին: Հայկական դիրքերից բազմաթիվ ռումբեր են տեղացել հարձակվող թուրքերի վրա, որոնք, թողնելով բազմաթիվ դիակներ, սկսել են փախչել: Հաղթանակը կատարյալ էր: Սակայն թշնամու գնդակից Մկրտիչը վիրավորվել և տեղափոխվել է հիվանդանոց: Նրա վիրավորվելու լուրն արագորեն տարածվել է ժողովրդի մեջ[368]:

Հ. Ռասթկելենյանը, թեև բարձր ջերմությամբ, անցել է դիրքից դիրք՝ խրախուսելով պաշտպաններին, որոնք, 12 օր ու գիշեր կռվելով, ուժասպառ են եղել: Նահատակվել են լավագույն կռվողներ Կարապետ Գարատաշյանը, Վաղար Ալաջաջյանը, Կիրակոս Եղբայրլերյանը, Խորեն Արզուհալաճյանը, Սամվել Լագլագյանը, Սարգիս Սևքարյանը և ուրիշներ, գրեթե սպառվել է ձեռնառումբերի պաշարը, դատարկվել է վառոդի պահեստը:

---

[368] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 678-679:

Հիվանդանոցում՝ Մկրտչի մոտ, խորհրդակցության են հավաքվել Զինվորական մարմնի անդամները՝ կռվի նոր ծրագիր մշակելու համար: Բոլորը միաբերան ուխտել են կռվել մինչև վերջին փամփուշտը ու վերջին մարդը:

Հոկտեմբերի 10-ի լուսադեմին թուրքական թնդանոթները վերսկսել են ավերիչ ռմբակոծությունը: Մեկը մյուսի հետևից քանդվել են հայերի տները, և պաշարման օղակը գնալով սեղմվել է: Ուրֆացի մարտիկները կրակել են ավերակների հետևից՝ անընդհատ «ամենայն տեղ մահը մի է» երգելով[369]:

Հոկտեմբերի 11-ին գերմանացի Մ. Էքարդը իր ցանկությամբ հանդիպել է Մկրտիչ Յոթնեղբայրյանի հետ: Տեսակցության ժամանակ գերմանացի սպան փորձել է նրան համոզել, որ հետագա դիմադրությունն ավելորդ է, և պետք չէ ժողովրդի բնաջնջման պատճառ դառնալ: Նա խոստացել է հերոսին փոխադրել Գերմանիա, ապահովել զինակիցների կյանքը: Մկրտիչ Յոթնեղբայրյանը, մեղադրելով գերմանացուն Ուրֆայում խաղացած բացասական դերի համար, խստաշունչ ոճով պատասխանել է. «Եթե ձեր մեջ տակավին քաղաքակիրթ և քրիստոնյա մարդու զգացում կա, փրկեցեք անապատներուն մեջ անզեն ու անպատսպար կոտորվող բազմությունները: Ո՞ւր են մեր ղեկավարները, ո՞ւր է մեր առաջնորդը, բերեք միայն այս վերջինը ու անմիջապես վար դնեմ զենքերս»: Մ. Էքարդը հեռացել է՝ սպառնալով անձամբ ղեկավարել թնդանոթաձգությունը[370]:

Հոկտեմբերի 12-ին ռմբակոծություններն ավելի են սաստկացել, և թուրքերն անցել են կատաղի հարձակման: Թուրքերը մեծ թվով դիակներ են թողնել, բայց զոհեր են տվել նաև հայերը, որոնց այլևս փոխարինողներ չեն եղել: Պաշարման օղակը սեղմվել է, և փրկության հույսը հետզհետե մարել է: Հարություն Ռասթկելենյանն առաջարկել է կռվող տղաներին սպանել իրենց մայրերին ու քույրերին, որպեսզի նրանք

---

[369] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 681-682:
[370] Տե՛ս նույն տեղում, էջ 683:

չընկնեն թուրքերի ձեռքը: Մկրտիչ Յոթնեղբայրյանն առաջարկել է մի քանի օրվա դիմադրությունից հետո, երբ այլևս հնարավոր չլինի շարունակել կռիվը, մնացած ուժերով ճեղքել ճակատը և ապաստանել շրջակա լեռներում:

Հոկտեմբերի 13-ին չորս ժամ տևած ռմբակոծությունից հետո թշնամին կրկին հարձակվել է բոլոր դիրքերի վրա: Կռվի են ելել անգամ փամփուշտ լցնող վարպետները: Թուրքերի ձեռքն անցել են նաև մինչ այդ չգրավված տները: Ահավոր կռիվներ են տեղի ունեցել հատկապես Հայր Աբրահամի շրջանում: Հայերի գնդակներն իզուր չէին թռչում. ճանապարհները լցվում էին թուրք զինվորների դիակներով, բայց զոհվածների փոխարեն կռվի դաշտ էին մտնում նորերը[371]:

Հաջորդ օրը հայկական թաղի տարածքն զգալի չափով փոքրացել է: Մկրտիչ Յոթնեղբայրյան ու Հարություն Ռասթկելենյանն իրենց շուրջն են հավաքել վերջին ուժերը, ամրացնել են տվել նոր դիրքեր, ճշտել են զինամթերքի քանակը, դասավորել են մարտիկներին: Տնետուն, փողոցից փողոց շրջելով՝ նրանք խրախուսել են ժողովրդին, որ հանձնվելու մասին չմտածեն: «Քաջությամբ վերջացնենք քաջությամբ սկսած գործը». այս էր նրանց վերջին կարգախոսը[372]:

Մինչև հոկտեմբերի 18-ը կռիվը շարունակվել է նույն սաստկությամբ: Սկսել էր մաղել աշնանային անձրևը, ամենուրեք ավերակներ էին, վառոդի ու նեխած դիակների անտանելի հոտ: Այդ պայմաններում անգամ Մկրտիչ Յոթնեղբայրյանը մտածել է նոր ծրագիր, որն իրագործելու համար Հարություն Սիմյանը նոր ռումբեր է լցրել: Հայերը ամերիկյան հյուպատոսարանի վրա ճերմակ դրոշ են բարձրացրել և երբ թուրքերը լցվել են շենքի բակը, թաքստոցներից դիպուկ կրակով ոչնչացրել են բոլորին: Դա Ֆախրի փաշային տված վերջին դասն էր:

Ժողովուրդը հայտնվել էր ողբերգական վիճակում, որի հետևանքով բազմաթիվ ընտանիքներ սկսել էին դիմել հավաքական անձնասպանության:

---

[371] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 685-686:
[372] Տե՛ս նույն տեղում, էջ 687:

Հոկտեմբերի 18-ին թուրքերն ամեն կողմից ներխուժել են հայկական թաղերը և մտել մայր եկեղեցու գավիթը: Այդ մարտում, ճակատից խոցվելով, ընկել է Հարություն Ռասթկելենյանը: Նույն օրը տեղի է ունեցել նրա թաղումը, որի մասնակիցներից մեկն ասել է. «Նա խաչից նոր իջեցրած Քրիստոսի տեսք ուներ, ճակատին՝ արյունի պսակ»[373]:

Հոկտեմբերի 20-ին դիմադրությունը շարունակվել է միայն երկու թաղերում, իսկ գրավված թաղերում բազմաթիվ կանայք ու աղջիկներ ինքնասպան են եղել: Հրանոթային կրակը դադարել է, և թուրքերը դիրքեր են գրավել հայկական թաղերում ու տներում: Դա տևել է երեք օր, մինչև որ ընկել են ուրֆացի վերջին կտրիճները, և զորքը տիրացել է քաղաքի ամբողջ հայկական թաղամասին: Եվ Ֆախրի փաշան բացականչել է. «Ի՞նչ կլիներ մեր վիճակը, եթե այդ ծանր օրերին մի քանի ուրֆայեցիներ մեր դեմ այդպես չծառանային»[374]:

Հոկտեմբերի 23-ին՝ կիրակի օրը, մեռյալ լռություն էր: Այդ օրը ավարտվեց Ուրֆայի հայության մեկամսյա հերոսամարտը:

Վերջին օրերին Մկրտիչ Յոթնեղբայրյանին պատգարակով դիրքից դիրք են տարել, և միայն նրա երևալը ուժ է հաղորդել ուժասպառ մարտիկներին: Մի վերջին ճիգով նա աջ ու ձախ կրակել է թուրք զինվորների վրա և վերջին գնդակով կյանքն ավարտել փառավոր մահով: Ֆախրի փաշան թնդանոթի 24 համազարկով թուրք խուժանին տեղեկացրել է հերոսի մահվան մասին[375]:

Հանուն Հայոց աշխարհի ընկել են նաև Գևորգ Ալահայտոյանը, Սարգիս Յոթնեղբայրյանը, Հարություն Սիմյանը, Արմենակ Աթարյանը, Լևոն Չերչյանը, Վաղարշ Մեսրոպյանը, Գառնիկ Շամլյանը և բազմաթիվ հերոսներ[376]:

Ուրֆայի հերոսամարտին իրենց մասնակցության մեծ բաժինն են

---

[373] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 690:
[374] Տե՛ս նույն տեղում, էջ 691:
[375] Տե՛ս նույն տեղում, էջ 690-691:
[376] Տե՛ս նույն տեղում:

ունեցել Ուրֆայի հայուհիները: Նրանք ոչ միայն գթության քույրեր էին, այլև դիրքերում զենքը ձեռքին կռվողներ, իրենց ամուսիններին ու եղբայրներին ոգեշնչողներ: Այսպես՝ **Եղիսաբեթ Յոթնեղբայրյանը** Մկրտիչի կինն էր ու նրա համարզը, զինավառ **Սուլթան Սիմյանը** Ռասթկելենյանի քույրն էր: Իրենց հերոսությամբ աչքի են ընկել նաև օրիորդներ *Մարիամ Չիլինկիրյանը, Խանում Քեթենճյանը, փիկին Խաթուն Գոնտուրճյանը* և շատ ուրիշներ: Նրանցից շատերն ընկել են դիրքերում կամ օրհասական վերջին գրոհից հետո թույն խմել, իսկ ոմանք էլ, իրենց զավակների ձեռքից բռնած, նետվել են իրենց ձեռքով հրդեհված տների բոցերի մեջ: Այսպես ավարտվել է Ուրֆայի 25-օրյա հերոսամարտը՝ հայոց ինքնապաշտպանական հերոսամարտի հերթական փառավոր էջը:

Ուրֆայի ինքնապաշտպանության հերոսուհիներից էր **Եղիսաբեթ Նաջարյան-Յոթնեղբայրյանը:** Ա. Ահարոնյանը, խոսելով Ուրֆայի ինքնապաշտպանության հերոսամարտի հայ հերոսուհիների սխրագործությունների մասին, գրել է. «Աշխարհում ոչ մի ապստամբութիւն ու գոյամարտ հնարաւոր է, եթէ կինը պայքարի մէջ չի նետւում տղամարդի կողքին: Եւ եթէ մի ամբողջ ամիս չորս կողմից պաշարուած Ուրֆայի մի բուռն հայութիւնը կարողացաւ դէմ դնել թուրք խաժամուժին ու զօրքերի կատաղութիւնը սանձել, դրա մէջ ահագին բաժին ունեն Ուրֆայի հայուհիները: Այդ սքանչելի կանայք միայն գթութեան քոյրեր, վիրաւորներ խնամող չեղան, հապա եւ դիմադրական աշխատանքների լաւագոյն վարիչներ, իրենց հնարամտութեամբ ու ճկուն վարպետութեամբ զէնքերի փոխադրութեան ու տեղաւորման լաւագոյն աջակիցներ: Մարտիկների ոգի տուող ու խրախուսիչ, նրանք իրենց կանացիութիւնը մոռացան, զէնք ի ձեռին պատնէշների վրայ պայթող ռումբերի գնդակների տարափի տակ կռուեցին: Հինգերորդ դարի իրենց քոյրերին գերազանցելով՝ նրանք մարտնչում են յուսահատ ամազոնուհիների օրհասական կատաղութեամբ: Դիրքերում ընկնող մարտիկին ան-

միջապէս փոխարինում է իր կինն ու քոյրը, եւ կռիւը բորբոքւում վերըստին:

Նայեցէք այս երիտասարդ գեղուհին, փամփուշտակալների ծանր բեռը մէջքին գոտեպինդ եւ կրծքին խաչաձեւ, մատաղ ու նրբակազմ աղջկան քնքուշ տեսք ունի: Հայուհու իր չքնաղ աչքերի մէջ խոժոռ վճռականութիւն կայ: Տիկին Եղիսաբէթ Եօթնեղբայրեանն է՝ Մկրտիչի կինը եւ արժանաւոր համարզը:

Ահա այս միւսը, նոյնպէս զինուած, տիկին Սուլթան Սիմեան, Ռաստկէլէնեանի քոյրը: Ահա օր. Մարիամ Չիլինկարեանը, օր. Խանըմ Քէթէնճեանը, ահա աննման տիկին Խաթուն Գոնտուրճեանը եւ քանի՜-քանի՜ ուրիշները, որոնք Ապօկալիպսեան այն գիշերներին մահու կատաղութիւնը հեգնեցին եւ հայ կնոջ պատիւն ու փառքը մինչեւ աստղերը բարձրացուցին:

Կ'ուզէ՞ք գիտենալ նրանց վախճանը: Նրանք կա՛մ դիրքերում ընկան իրենց ամուսինների եւ եղբայրների հետ, կա՛մ օրհասական վերջին գրոհից յետոյ թոյն ընդունեցին, եւ շատ շատերն էլ իրենց զաւակների ձեռքից բռնած՝ իրենց ձեռքով հրդեհած տների բոցերի մէջ նետուեցին՝ նամարտ ու գարշելի թուրքին ձեռքը չընկնելու համար»[377]:

Եղիսաբեթը որբևայրի Նաջարենց Մահպուդ Մայրիկի ավագ դուստրն էր: Զավակներին նվիրված մայրը չարքաշ աշխատանքով ոչ միայն մեծացրել, այլև համեստ կրթության էր տվել նրանց: Թեև ինքը պարզ և անգրագետ գյուղացի կին էր, սակայն ցանկացել էր իր կարողության չափով ապահովել զավակների ուսումը: Ուրֆայի բողոքական օրիորդաց վարժարանը ավարտելուց հետո Եղիսաբեթը հաճախել էր Այնթապի օրիորդաց ճեմարանը: Իր ուսանողական տարիներին նա ինքնամփոփ, սակավախոս և շատ աշխատասեր աղջիկ էր[378]:

Մոտ 1911 թվականին՝ ճեմարանը փայլուն արդյունքներով ավարտելուց հետո, ուսուցչությամբ է զբաղվել Ուրֆայի մոտ գտնվող Կար-

---

[377] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 864:
[378] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 112:

մունջ գյուղի բողոքական դպրոցում: Նույն գյուղում աշխատել է նաև նրա մտերիմ ընկերուհին՝ *Եվա Ալադոյանը*՝ Ուրֆայի հերոսամարտի ապագա ղեկավար Մկրտիչ Յոթնեղբայրյանի մորաքրոջ աղջիկը:

Մկրտիչ Յոթնեղբայրյանը իր մտերիմ ընկերոջ՝ հերոսամարտի նշանավոր մասնակից Հարություն Ռասթկելենյանի և ուրֆացի հեղափոխական երիտասարդների հետ զինավարժությունների համար հաճախ է եկել Կարմունջ[379]:

Մի օր, երբ Մկրտիչը Եվայի և Եղիսաբեթի հետ դուրս է եկել զբոսանքի, ատրճանակը հանել է և նշանառություն սովորեցրել երկու օրիորդներին: Նրա ուշադրությունը անմիջապես գրավել է այն, որ թեև Եղիսաբեթը առաջին անգամ էր զենքը ձեռքը վերցնում, սակայն նրա ձեռքերը չէին դողում, և արձակած կրակոցների մեծ մասը հասնում էին նշանակետին: Հետագայում Մկրտիչը նրան նաև ձիավարություն է սովորեցրել:

Հեղափոխական երիտասարդը որոշում է կայացրել այդ քաջ աղջկան կնության առնել, և 1913 թվականին, երբ թուրքական կառավարությունը փնտրում էր Մկրտչին, Եղիսաբեթն իր եղբայրներից մեկի ընկերակցությամբ գնացել է Տիգրանակերտ և այնտեղ էլ ամուսնացել են[380]:

Մ. Յոթնեղբայրյանը մշտապես զգում էր, որ իր ժողովրդի գլխին դամոկլյան սրի նման մի մեծ վտանգ էր կախված: Հետևաբար իր կնոջը կարգադրել էր, որպեսզի նա կազմակերպեր Ուրֆայի կանանց և աղջիկներին, քանի որ համոզված էր, որ ոչ մի գոյամարտ չի կարող հաջողությամբ պսակվել, եթե կանայք տղամարդկանց կողքին չլինեն, և եթե ժողովրդի բոլոր խավերը իրենց մասնակցությունը չցուցաբերեն: Իրավամբ, ուրֆացի կանանց դերը մեծ էր թե՛ հերոսամարտի նախօրեին, թե՛ ընթացքում:

---

[379] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 112:
[380] Տե՛ս նույն տեղում:

Ժողովրդի մեջ երկու հոսանք կար. մի մասը կողմնակից էին ինքնապաշտպանությանը դիմելուն, մյուս մասը հակված էին ենթարկվելու թշնամուն: Սակայն կանայք և աղջիկները այնքան մեծ համոզումով էին պաշտպանում ստրկության դեմ ծառացման և ազատության գաղափարները, որ նրանց ի վերջո հաջողվել էր մեծ խանդավառություն առաջացնել, և շուտով հնազանդվողների կողմնակիցները չեզոքացել էին, և ժողովուրդը մեկ սիրտ, մեկ հոգի էր դարձել: Իսկ երբ թուրքերից բավականին մեծ քանակությամբ զենք էր գրավվել, կանայք նույնպես զինվել էին և պատրաստվել տղամարդկանց կողքին կռվելու:

Կանանց և աղջիկների նախապատրաստական աշխատանքների մաս էր կազմում նաև հիվանդանոց սարքելը: Երբ կռիվները սկսվել էին, ուրֆացի կանանց խմբերը շրջել էին թաղեթաղ, ժողովրդին ու մարտիկներին քաջալերել՝ հեղափոխական երգեր երգելով:

Այդ օրերին Եղիսաբեթը, փամփշտակալները մեջքին և կրծքին կապած, հրացանը ձեռքին, վճռական դեմքով իր հերոս ամուսնու արժանավոր կյանքի ընկերն էր: Նա կռվողներին խրախուսում էր ոչ միայն խոսքով, այլև իր անձնական օրինակով և կռվում էր պատնեշների վրա՝ պայթող ռումբերի և սուլող փամփուշտների տարափի տակ: Ամուսնու վիրավորվելուց և Ռասթկելենյանի մահից հետո Եղիսաբեթը դադար չէր առել. շարունակել էր կռվել, քանի որ ինքն էր դիրքերի ոգին[381]:

Հերոսամարտից հետո ողջ մնացած մարտիկները քաշվել են դեպի գետնափոր թաքստոցները, իսկ վիրավոր Մկրտիչը, նրա վիրավոր եղբայր՝ Սաքոն, Եղիսաբեթը և նրանց մի քանի ընկերներ մի ապահով թաքստոց են ճարել: Սակայն տեղը շատ նեղ է եղել, և երկու վիրավորները անտանելի ցավերի մեջ են հայտնվել: Տասը օր տոկալուց հետո, այլևս չկարողանալով դիմանալ, Մկրտիչն ու Սաքոն գիշերով դուրս են եկել՝ ավելի հարմար թաքստոց գտնելու համար: Սակայն մի հայ մատ-

[381] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 735-736:

նիչ նկատել է նրանց և այդ տեղեկությունը թուրքերին հաղորդել: Երբ առավոտյան թուրքերը պաշարել են թաքստոցը, Սաքոն բռնվել է, իսկ Մկրտիչ Յոթնեղբայրյանը մի քանի հոգի սպանելուց հետո վերջին փամփուշտն իր կրծքին է ուղղել[382]:

Մի քանի օր հետո Եղիսաբեթն էլ է բռնվել և դատապարտվել 101 տարվա բանտարկության: Սակայն 1918 թվականին ազատվել է և հաջորդ տարի գնացել Ամերիկա՝ իր եղբոր մոտ:

Յոթնեղբայրյան մեծ գերդաստանից միայն ինքն է մնացել՝ բուի պես իր ճակատագիրը ողբալու համար: Մահացել էր նաև նրա մեկամյա զավակը: Իր կրած տառապանքների և մեծ վշտի հետևանքով Եղիսաբեթը հետզհետե կորցրել է իր մտավոր հավասարակշռությունը, և ազգականները հարկադրված նրան տեղափոխել են Նյու Յորքի հոգեբուժարան:

Այսպիսին էր իր ժողովրդի ազատագրական պայքարին նվիրված մեծ հայուհու տխուր վախճանը:

Հերոս հայուհիներից էր **Խանում Քեթենճյանը:** Խանում Քեթենճյանը (հեղափոխական անունով՝ Արմենուհի) նախ հաճախել է Ուրֆայի բողոքական վարժարանը, ապա ավարտել է Խարբերդի Ամերիկյան քոլեջը[383]: Հեղափոխական գաղափարներով տոգորված՝ վաղօրոք անդամագրվել էր ՀՅԴ «Կարմիր խաչին»: Հերոսամարտի նախօրյակին կանանց զինավարժության և մարտական ջոկատների պատասխանատուն էր:

1909 թվականի մատի 28-ին Դիարբեքիրի նահանգի ՀՅԴ-ի առաջին շրջանային ժողովի որոշումների մեջ «Կարմիր խաչի» առնչությամբ կարդում ենք հետևյալը. «Նկատելով «Կարմիր խաչի» խմբերի անուրանալի օգտակարությունը կանանց մտավորական լուսավորման տեսակետից, ինչպես նաև նրանց մատուցած ծառայությունները մինչև անգամ ինքնապաշտպանության հարցում՝ ՀՅԴ շրջանային ժողովը

---

[382] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 743-744:
[383] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 116:

հանձնարարել է բոլոր մարմիններին ամենուրեք ստեղծել «Կարմիր խաչի» խմբեր՝ դրանց մեջ ընդգրկելով հատկապես մտավորական տարրի ներկայացուցիչների, ուսուցչուհիների և այլն»[384]:

Ահա այսպիսի անհրաժեշտ ներկայացուցիչ և անփոխարինելի մարդ էր Խանում Քեթենճյանը: Կարճ ժամանակում նա ղեկավար դեմք դարձավ Ուրֆայի կանանց մեջ և եղավ Մկրտիչ Յոթնեղբայրյանի ու Հարություն Ռասթկելենյանի ամենամտերիմ գործընկերը[385]:

Հերոսամարտի ընթացքում նա ստանձնել էր կանանց հրամանատարությունը և մասնակցում էր ղեկավարների խորհրդակցություններին՝ իբրև Զինվորական մարմնի անդամ: Դիմադրական աշխատանքների հմուտ կազմակերպիչ էր և շնորհիվ իր հնարամտության շատ օգտակար էր լինում հատկապես զենքերի փոխադրության և բաշխման գործում: Կռվի ընթացքում դիրքից դիրք էր խոյանում, քաջալերում, ոգևորում և կռվում էր: Երբ զգուշացնում էին կամ փորձում էին վտանգավոր դիրքերից հեռացնել, բարկանում էր և ասում, թե «գնդակին զոհ գնալը ինձ համար նախընտրելի է թուրքի ձեռքն ընկնելուց»[386]:

Երբ թուրք խուժանը սկսել էր լցվել քաղաք, Խանումը և իր հետևորդները թուրք զինվորի հագուստ էին հագել, և այս հնարքով նրանց հաջողվել էր մեծ թվով թշնամի զինվորների սպանել: Նա և իր ընկերուհի կանայք երբեք չէին լքել իրենց դիրքերը, այլ մինչև վերջ մնացել էին պատնեշի վրա:

Հայոց թաղամասերից մեկի մոտ թուրքական պահակազոր կար, որը պետք էր մեջտեղից վերացնել: Խանումը որոշել էր իր ջոկատի հետ այդ գործը գլուխ բերել: Գիշերը աննկատ մոտեցել էր այնտեղ, կտրել հեռախոսային գծերը, սպանել էր երկու պահակներին և ներս մտել: Թշնամին հանկարծակիի գալով՝ փորձել էր խույս տալ: Այս դեպքի միակ վկան՝ պահակակետի կոմիսար Յուսուֆ էֆենդին, պատմել է

---

[384] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 116:
[385] Տե՛ս նույն տեղում:
[386] Տե՛ս նույն տեղում:

հետևյալը. «Հրաձգությունից հետո պահակակետ ներխուժեցին բազմաթիվ մարդիկ, որոնց դեմքերը խավարի մեջ պարզ չէին երևում: Գուցե նրանց մեջ էր նաև մեր սարսափը՝ հոչակավոր Մկրտիչը: Մեզ փրկություն չկար: Երբ պահակակետի մութ անկյուններից սկսեցին կրակել, մեզանից երկուսը սպանվեցին, իսկ ես թեթև վիրավորվեցի ոտքից ու մի կերպ փախա, թաքնվեցի: Թաքստոցից տեսա, թե ինչպես ոստիկան Ալիին ողջ-ողջ բռնեցին, ձեռքերը կապեցին, վզին պարան անցկացրին և կախեցին դռան մուտքից: Բայց տարօրինակ էր: Բոլորին հրամայող ձայնը ոչ թե տղամարդու էր, այլ կնոջ[387]: Տեսա, որ մեզ հետ հաշիվները մաքրելուց հետո պահականոցի առաջ շարքի կանգնեցին սև ուրվականները, և նորից լսվեց մանկամարդ կնոջ խրոխտ ձայնը: Նա արտասանեց երեսունից ավելի կանացի անուն: Նրա արտասանած ամեն մի անունից հետո ես լսում էի «ներկա» պատասխանը, որը նորից կանացի էր: Ես հասկացա, որ պահակակետի վրա գրոհողները միայն կանայք են եղել: Այսպես, ստուգելուց հետո, որ սպանված չունեն, և որ բոլորը ներկա են, նրանք, մարտական երգ երգելով, հեռացան պահականոցից: Ես փրկված էի»[388]:

Երբ հայ մարտիկների հրացանները լռել էին, Խանումն անցել էր Ամերիկյան «կուրանոցը», որտեղ մեծ թվով ուրֆացիներ էին հավաքվել: Հանկարծ սպայի առաջնորդությամբ թուրք զինվորները ներս էին խուժել և սկսել էին խուզարկել այնտեղ հավաքված ժողովրդին: Երբ հերթը հասել էր Խանումին, նա արագորեն գոտու միջից հանել էր ատրճանակն ու կրակել սպայի վրա: Հպարտ և քաջ հայուհին նախընտրել էր մեռնել զենքը ձեռքին, քան թե ապրել թշնամու լծի տակ[389]:

---

[387] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 116:
[388] **Կուրտիկյան Ս.**, Ուրֆայի հերոսուհին՝ Խանում Քեթենճյանը, «Ասպարէզ», 8 փետրվարի, Ֆրեզո, 1966:
[389] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 118:

Հերոսամարտի նշանավոր հերոսուհիներից էր **Մարիամ Չիլինկի-ության-Ամբակումյանը:** Մարիամը աշխույժ և սրամիտ, սառնարյուն և հանդուգն աղջիկ էր, որ պատրաստ էր ամեն վտանգի մեջ նետվել և նույնիսկ ամենաճգնաժամային վայրկյաններին կռվողների տրամադրությունը բարձրացնում էր իր վարակիչ եռանդով: Մի թեթև կաղալու պատճառով կատակով նրան Թիմուրլենկ էին կոչում[390]:

Մարիամը Ուրֆայի «Կարմիր խաչի» սյուներից մեկն էր: Հերոսամարտի ընթացքում ճանաչում էր ձեռք բերել ոչ միայն իբրև գթության քույր, այլև որպես մարտիկների անձնվեր գործակից: Երբ թուրքական դիրքերը ճերմակ դրոշակ էին պարզել և հայտարարել, որ Ֆախրի փաշան երկու հոգի է ուզում բանակցության համար, Մարիամը անմիջապես առաջ էր անցել, իսկ նրան հետևել էր իր մտերիմ ընկերուհին՝ Ազնիվ Միրզոյան-Պուրճագյանը: Այդ վայրկյանին հանդուգն Մարիամի մտքով անգամ չէր անցել, որ կարող էր դավադրության զոհ դառնալ: Երբ հասել էին փաշայի մոտ, վերջինս շատ հարգալից վերաբերմունք էր ցուցաբերել՝ ասելով. «Զավակնե՛րս, հիանում եմ ձեր քաջության վրա, ցավում եմ, որ ստիպված եմ կռվել ձեզ պես հերոսների և հերոսուհիների դեմ, սակայն այլ կերպ չենք կարող վարվել պետության անհնազանդների հետ: Խղճում եմ ձեր ժողովրդին, ուզում եմ, որ վերադառնաք և խոսեք ձեր հրամանատարի հետ: Դուք ձեր ունեցած ուժերով այսքանից ավել չեք կարող անել բանակի դեմ»[391]:

Իսկ երկու հայուհիները պատասխանել էին. «Շատ լավ եք խոսում, սակայն մոռանում եք, որ կռիվը մենք չենք սկսել. մեր երիտասարդներին և առաջնորդներին տարաք, սպանեցիք, ձայն չհանեցինք: Ինչ որ պահանջեցիք, տվեցինք, այլևս ի՞նչ եք ուզում մեզանից: Ձեր կատարած անգթությունների փոխարեն ահա գերի ընկած թուրք զինվորներ ենք պահում՝ առանց նրանց վնաս հասցնելու: Դադարեցրեք հարձա-

---

[390] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 118:
[391] Տե՛ս նույն տեղում:

կումները, և մենք դարձյալ կդառնանք կառավարության հավատարիմ հպատակները»[392]:

Մարիամն ու Ազնիվը թուրք գերի զինվորների հարցը հատկապես մեջտեղ էին բերել, որպեսզի իրենց չարգելեն վերադառնալ: Անշուշտ, փաշան չէր ընդունել նրանց առաջարկը, սակայն հպարտ հայուհիների կորովի կեցվածքը երբեք չէր կարողացել մոռացության մատնել:

Ամբողջ հերոսամարտի ընթացքում Մարիամը գործել էր նույն թափով և նույն ոգով՝ մարտիկների կողքին կռվելով, վիրավորներին խնամելով, հուսահատներին մխիթարելով, իսկ հերոսամարտից հետո ժողովրդի բեկորներին առաջնորդել էր դեպի ապահով թաքստոցներ կամ օտար հաստատություններում պատսպարել[393]:

Ուրիշների նման Մարիամը ևս ձերբակալվել է և 101 տարվա բանտարկության դատապարտվել, սակայն 1918 թվականի զինադադարից հետո ազատ է արձակվել: Հետագայում տեղափոխվել է Ամերիկա և այնտեղ էլ ամուսնացել: Ամերիկայում Մարիամը հանրային լայն գործունեություն է ունեցել և միշտ պահել է նույն նվիրումը հայության տարագիր բեկորների հանդեպ[394]:

Ուրֆայի հերսուհիների մեջ առանձնահատուկ հարգանք էր վայելում **Սուլթան Ռասթկելենյան-Սիմյանը:** Սուլթանը հերոսամարտի ղեկավարներից Հարություն Ռասթկելենյանի քույրն էր և տարիներ շարունակ եղել է նրա գաղափարակիցն ու գործակիցը: Քույր ու եղբայր միասին երազել են այն մասին, թե երբ պետք է փարատվեր ժողովրդի սրտի վախը, երբ պետք է վճռվեր, որ հայը ազատ պիտի դառնար, պիտի թոթափեր թուրք բռնավորի լուծը: Ճակատագիրը վճռելու ժամանակը հերոսամարտն էր: Սուլթանը կազմակերպել էր կանանց և աղջիկների խմբեր, որոնք դիրքից դիրք էին գնում՝ մարտիկներին խրախուսելու համար: Հաճախ ինքն էլ, հրացանը ձեռքին, երևում էր տղա-

---

[392] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 740-741:
[393] Տե՛ս նույն տեղում:
[394] Տե՛ս նույն տեղում:

մարդկանց կողքին կռվելիս[395]: Նահատակվել է եղբոր հետ կողք կողքի կռվելու ժամանակ:

Սուլթանը տեսել էր, թե ինչպես իր քաջալերմամբ օրիորդ Կեմչյանը վեր էր խոյացել Հ. Ռասթկելենյանի մարմինը վերցնելու, սակայն տեղն ու տեղը սպանվել էր: Ի վերջո, Սուլթանի կարգադրությամբ եղբոր դիակը փրկվել էր թշնամու ձեռքն ընկնելուց[396]:

Սուլթանի մոտիկ գործակիցներից էր **Տիկին Խաթուն Գոնտուրաճյանը**՝ մահը հեգնող աննման մի հայուհի, որը նաև մեծ դեր է խաղացել վիրավորներին խնամելու և նրանց քաջություն ու կորով ներշնչելու տեսակետից:

Սուլթանի շնչով դաստիարակված մարդկանցից էր նաև **Ազնիվ Պչաքճյանը**: Երբ պատնեշի վրա իր նշանածի՝ ազատագրական պայքարի գործիչ Մովսես Սուճյանի կողքին կռվելիս է եղել, լսել է, որ իր սիրելիին զարկել են, քաջ հայուհին չի ողբացել կամ իրեն չի կորցրել, ընդհակառակը, ավելի ամուր է սեղմել հրացանի փողը և վրեժով մշուշված աչքերով մոլեգնությամբ կրակել:

Հայկական դիրքերից արձակված վերջին գնդակները լռել էին, և թուրքերը պատրաստվում էին խուժել հայկական թաղերը, երբ իր պատիվը փրկելու համար Ազնիվը վերջին գնդակը ուղղել է ճակատին և ընկել թնդանոթի ռումբերից խորտակված ու ամայացած իրենց դիրքերի վրա[397]:

Ահա այսպիսի հերոս ուրֆացի հայուհիների մասին է Ավետիս Ահարոնյանը իրավամբ գրել. «Կարելի է համարձակորեն ասել, որ անցյալ պատերազմի ամբողջ տևողության ընթացքում ոչ մի այլ ազգի կանայք այդքան հերոսություն, այդքան անձնվիրություն չեն ցուցաբե-

---

[395] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 740-741:
[396] Տե՛ս նույն տեղում:
[397] Տե՛ս նույն տեղում, էջ 741:

ռել իրենց հայրենի տան, հայրենի օջախների և պատվի պաշտպանության համար»[398]:

Հերոսամարտից հետո Սուլթանը ձերբակալվել է և դատապարտվել 15 տարվա բանտարկությունից, հետո ազատ է արձակվել 1918 թվականի զինադադարից հետո: Նա տեսել է Հայաստանի Հանրապետության ծագումը և համոզվել, որ եղբոր և Մկրտիչ Յոթնեղբայրյանի, գաղափարի և զենքի ընկերուհիների, ինչպես նաև հազարավոր ուրֆացիների արյունը զուր տեղը չի թափվել, թեև նրանք չկային, սակայն նրանց գաղափարները հաղթանակել էին:

Տարոնի ինքնապաշտպանական հերոսամարտերը և հայ հերոսուհի կանայք

Խոսելով Տարոն աշխարհի անմարդկային կոտորածների և յոթամսյա ինքնապաշտպանական հերոսամարտերի մասին՝ Կարո Սասունին այսպես է բացատրել տարոնցու ապրած հոգեկան խռովքն ու ապրումները. «Հոգեբանական այս խռովքը կարելի ա բացատրել պատմական այն իրողությամբ, որ Տարոնը բազմաթիւ հերոսական մարտերու թատերաբեմը դարձած էր 1890-1908 թվականների յեղափոխութեան շրջանին: Հայ ժողովուրդը պարծանքով կը յիշէր Սասունի, Մուշի, Ախլաթի եւ Խնուսի անունները: Տարօնի ծոցէն ծնած հերոսները ամբողջ ազգին հպարտանքն էին: Քաջագործութեան այնպիսի դէպքեր տեղի ունեցած էին անցեալի մէջ, որ մտածել կուտային, թե այդ մարզին մէջ տարօնցին երբեք չհաշտուեցաւ Տարօնի պարտութեան հետ, եւ չըմբռնեց զանգուածային կոտորածները, որ բաժին ինկան Տարօնին: Դիւցազնական ըմբռնում ունենալով Սերոբ Աղբիւրի, Անդրանիկի, Գէորգ Չաւուշի, Հրայրի, Կորիւնի և այլ բազմաթիւ հերոսներու և ղեկավարներու մասին, տարօնցին չկրցաւ մարսել այն ազատ-

[398] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 865:

համարձակ հրդեհումը մեր ժողովուրդին ու բան մը պակաս գտաւ 1915-ի դէպքերու եւ ղեկավարներու ընթացքին մէջ: Հոգեկան այս խռովքը թոյլ տուաւ նաեւ անդրադառնալու հերոսական այն կռիւներուն, որ Տարօնի ժողովուրդը մղեց արեան եւ հրդեհի անօրինակ ծովի մը մէջ: Անոնք, որ խելահաս տարիք ունէին և մասնակից էին գոյամարտին, ժամանակի արտակարգ պայմանները գիտէին, Տարօնի վիճակուած բախտը աւելի իրապաշտօրեն ըմբռնեցին: Իսկ անոնք, որ երկրէն դուրս էին, կամ մանկական ու պատանեկան հասակին տեղահանուեցան եւ վերապրեցան կերպով մը չհաշտուեցան իրենց վիճակուած բախտին հետ միշտ այն մտածումով, թէ Տարօնը կրնար աւելի մեծ խոյանքներ ունենալ եւ քայլել հին յեղափոխութեան դիւցազնական ճանապարհով, քան ունեցաւ եօթնամսեայ կռիւներու ընթացքին: Տարօնի արիւնալի կռիւները, որ մղուեցան 1915-ի ապրիլեան եղեռնի ամբողջական պատմութեան մէջ, եթէ պիտի խօսուի նաեւ հայ ժողովրդի դիմադրականութեան մասին Թուրքիոյ ամբողջ տարածքի վրայ, այդ անմարդկային կոտորածին դէմ ամէնէն ծաւալուն եւ ամէնէն երկարատեւ կռիւները մղեց Տարօն աշխարհը բազմաթիւ շրջաններու մէջ, եւ տեղ-տեղ կռուող բեկորները կրցան դիմանալ մինչև 1916 թվականի գարունը, երբ ռուսական բանակները եւ կամաւորական գունդերը հասել են Մուշ: Անտեսել այս հերոսամարտը, անգիտանալ բազմաթիւ արիւնալի գոյամարտերը պիտի նշանակէր պատմութիւնը խեղաթիւրել: Հրաշք սպասել հերոսներէն հերոսապաշտ ժողովուրդի մը իրավունքն է: Բայց հերոսությունները ուրանալը ոչ ոքի իրաւունքն է: Պատմութիւնը իրողութիւններն ու ճշմարտութիւնները կը դասաւորէ անկողմնակալ կերպով եւ կը դատէ հաւասարակշիռ տրամաբանութեամբ: Այս լոյսին տակ է, որ պիտի ներկայացվեն այն հերոսամարտերը, որ տեղի ունեցան՝ Մուշ քաղաքի, Մշոյի դաշտի, Նեմրութի, Սասունի եւ այդ շրջաններու մէջ»,– գրում է Կ. Սասունին[399]:

[399] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 818-819:

Մուշի և Խնուսի հերոսամարտերը և հայ հերոսուհի կանայք

1915 թվականի նախօրյակին Մուշի հոգևոր առաջնորդն էր Ներսես եպիսկոպոս Խարախանյանը: Մուշում գործում էր ՀՅԴ Դուրան-բարձրավանդակի կենտրոնական կոմիտեն, որի անդամներից էին մշեցի Մճո Պոլեյանը, Կորյունը (Գոմսա Իսո), Վարդան վարդապետը, Ռուբենը (Ռ. Տեր-Մինասյան), սեմալցի Քեաթիպ Մանուկը, օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներ Մշո Գեղամը, Վահան Փափազյանը (Կոմս) և ուրիշներ:

Տարոն-Տուրուբերանը մտնում էր Բիթլիսի (Բաղեշի) նահանգի մեջ, որի նահանգապետն էր իթթիհատական գործիչ Մուստաֆա Աբդուլ Խալըդը: Բիթլիսի նահանգը բաժանված էր չորս գավառների՝ Բաղեշի, Մուշի, Գենջի և Սղերդի: Մուշի գավառապետը մոլի իթթիհատական Սերվեթ բեյն էր: Սասունի լեռնաշխարհը բաժանված էր նշված չորս գավառների միջև:

Պատերազմի հենց սկզբից Մուշը դարձել էր զինվորական պահեստային ուժերի կենտրոնատեղի: Թուրքական կառավարությանը հաջողվել էր դեռևս 1914 թվականի հուլիսի 21-ին հայտարարված զորահավաքի միջոցով մեկ ամսվա ընթացքում Տարոնի հայկական գյուղերը մեծ մասամբ դատարկել տղամարդկանցից և ունեցվածքից: Սակայն Սասունի, Ծովասարի, Շատախի և Տալվորիկի շրջանները գրեթե զինվոր չէին տվել: Զորակոչվել էր միայն Խիանքի, Խուլբի և Բսանքի հայ երիտասարդության մի հատվածը, որի մեծ մասը, սակայն, հետագայում փախուստի էր դիմել և վերադարձել իր լեռները: Փաստորեն՝ 1915 թվականի հունվարից Սասունի շրջանները ինքնապաշտպանության կարգավիճակում էին, քանի որ շրջապատված էին քրդական ցեղախմբերով և թուրքական զորամասերով[400]:

---

[400] «Գրիգոր քահանա Տեր-Գրիգորյանի կազմած տեղեկագիրը՝ Մշո դաշտի և Սասունի կոտորածների մասին», «Վերապրած Հովհաննես Աբրահամյանի վկայությունը՝ Մուշի և Սասունի ինքնապաշտպանության ու գաղթի մասին», Հայոց ցեղասպանությունը

Այնուամենայնիվ, 1915 թվականի հունվարի սկզբին ՀՅԴ Դուրան-բարձրավանդակի կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ Մուշում հրավիրվել էր ինքնապաշտպանության կազմակերպման հարցով խորհրդակցական ժողով: Նկատի ունենալով Տարոնի հայության պաշարված վիճակը՝ ժողովը որոշել էր ամբողջ Տարոնը բաժանել ութ ինքնապաշտպանական շրջանների: Ժողովում ընդունված որոշմամբ Ռուբենը և Կորյունը պետք է շրջեին Մշո դաշտի գյուղերով՝ ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար[401]:

Առաջին բախումը տեղի է ունեցել 1915 թվականի հունվարի 25-ին Մշո դաշտի Ցրոնք գյուղում: Կառավարությունն այստեղ էր ուղարկել 500 զինվորներից կազմված մի ջոկատ՝ հարյուրապետ Իսմայիլի գլխավորությամբ՝ փախստական զինվորներ փնտրելու պատրվակով: Կարճատև մարտից հետո ցրոնքցիների ինքնապաշտպանական խմբերը քաշվել էին լեռները: Թուրք զինվորները հրի էին մատնել գյուղի 150 տները: Փետրվարի 6-ին բախում էր տեղի ունեցել Գոմս գյուղում, որի ինքնապաշտպանության պատասխանատուն Կորյունն էր: Այդ օրը հարկ հավաքելու պատրվակով գյուղ էր եկել իթթիհատական Շեյխ Մեհմեդ Էմինը՝ 15 ոստիկաններով, և իջևանել էր Կորյունի տանը: Նա գաղտնի հրահանգ ուներ դավադրաբար սպանելու այդ պահին Գոմսում գտնվող Ռուբենին և Կորյունին: Սակայն Կորյունին հավատարիմ մի քուրդ նրան տեղեկացրել էր դավադրության մասին: Կորյունը հրդեհել էր իր տունը, իսկ հայ մարտիկները ոչնչացրել էին փախչող ոստիկաններին:

Շենիկ գյուղում փետրվարի 10-ին Ռուբենը հրավիրել էր Սասունի խմբապետների ժողով, որին մասնակցում էին Կորյունը, Մջոն, Փեթարա Մանուկը, սեմալցի Իշխանը (Մանուկ), գելիեգուզանցի Կիրակոսը, շենիկցի Ղազարը, Չոլոն, ահրոնքցի Գալուստը և սասունցի Մուշեղը:

Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, հ. 2, Բիթլիսի նահանգ, Երևան, 2012, էջ 15-35:

[401] Հերոսապատում Մեծ եղեռնի, Պէյրութ, 1978, էջ 205:

Ռուբենի զեկուցումից հետո ծրագրվել էր Սասունի ինքնապաշտպանությունը, ճշտվել էին շրջաններն ու դրանց պատասխանատուները: Սասունի ընդհանուր ճակատը բաժանվել էր պաշտպանության յոթ գլխավոր հատվածների, որոնց ղեկավարներն էին փորձառու ֆիդայիներ Մուշեղը, Կորյունը, Մջոն, Զոլոն, Ադամը, շենիկցի Իշխան Մանուկը, Ղազարը, Պողոսը և ուրիշներ[402]:

Երբ Սասունն սկսել էր պատրաստվել ինքնապաշտպանությանը, Մուշ քաղաքը և Մշո դաշտը սպասողական դրության մեջ էին: Նախկին ֆիդայիների մեջ ուժեղ դրսևորված էր Սասունին ապավինելու տրամադրությունը: Դրա արտահայտությունն էր հռչակավոր ֆիդայի, ՀՅԴ Դուրան-բարձրավանդակի կենտրոնական կոմիտեի գլխավոր դեմքերից մեկի՝ Մկրտիչ Պոլեյանի (Մճո)՝ առանց ընդհանուր որոշման իր 30 կռվող ուժերով Առաքելոց վանք բարձրանալը, որից հետո խումբը մեկնել էր Սասուն:

Թուրքական ուժերը քրդերի հետ 1915 թվականի մայիսի 1-ին հարձակվել են Մշո դաշտի հյուսիսում գտնվող Խնուսի շրջանի վրա: Խնուս գավառի հայությունը Տարոնի մյուս շրջանների նման սպասելիս է եղել ռուսական բանակին: Այդ իսկ պատճառով խնուսցիները ևս ոչինչ չեն արել ինքնապաշտպանության նախապատրաստվելու համար: Խնուսցի մի քանի ազդեցիկ քուրդ ցեղապետեր նրանց հավաստիացրել են, որ եթե իշխանությունները ձեռնարկեն հայերի կոտորած, ապա իրենք կպարտավորվեն պաշտպանել նրանց: Հայերը ևս կպարտավորվեին պաշտպանել քրդերին, երբ ռուսները գրավեին Խնուսը[403]:

Սակայն ռուսական հրամանատարությունը դադարեցրել էր իր զորքերի առաջխաղացումը: Դրա հետևանքով իրադրությունը կտրուկ փոխվել է: Հայերին «պաշտպանող» քուրդ ցեղապետերը, օգտվելով առիթից, փոխել են իրենց որոշումը և սկսել համագործակցել իշխանու-

---

[402] **Կարապետյան Մ.**, նշվ. աշխ., էջ 129:
[403] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 736:

թյունների հետ՝ նպատակ ունենալով մասնակցել տեղի հայ բնակչության կոտորածին և ունեցվածքի թալանին:

Խնուսում հայերի դիմադրությունը կանխելու նպատակով երիտթուրքական իշխանությունները ձերբակալել էին տեղի հայության շրջանում հեղինակություն վայելող առավել նշանավոր 150 անձանց: Նրանց սպանել էին Դերջանի և Երզնկայի միջև գտնվող Շողալարի ձորում[404]: Ապա նրանք կարողացել էին քաղաքում գրեթե առանց որևէ դժվարության իրագործել իրենց ոճրագործ ծրագրերը: Սակայն գավառի մի շարք հայկական գյուղեր դիմադրել էին ջարդարարներին:

1915 թվականին մայիսի 1-ին Գովանդուկ (Կովանտուկ) գյուղ էին ներխուժել քրդական հեծյալ ջոկատը և շրջակա քրդական գյուղերի խուժանը: Մի խումբ հայ գյուղացիներ, դիրքեր գրավելով, պաշտպանել էին գյուղը հրոսակներից: Ինքնապաշտպանության հաջող կազմակերպմանը նպաստել էր այն հանգամանքը, որ Գովանդուկի բնակիչներից դաշնակցական Միերը, Դավիթը, Համազասպ Մալխասյանը և հնչակյան Մալխասը փորձառու հայդուկներ էին: Նրանք կարողացել էին թշնամուն հետ պահել այնքան ժամանակ, մինչև գյուղի բնակիչներն անցել էին Գարաչոբան գյուղ[405]:

Հայ մարտիկները հակառակորդին դիմադրել էին մինչև ուշ երեկո, ապա նահանջել էին և բարձրացել Գոզալ Պապա կոչվող սարը: Այստեղ իրենց միացած հայրենակիցների հետ նրանք որոշել էին անցնել ռազմաճակատի գիծը[406]: Նույն օրը քրդական հեծելագնդի հարձակմանն էր ենթարկվել Սալվորի հայկական գյուղը: Այստեղ ևս մի խումբ հայեր դիմագրավել էին հակառակորդին այնքան ժամանակ, մինչև բնակչությունը կարողացել էր հեռանալ Գարաչոբան: Միայն

---

[404] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 736, 738-739:
[405] **Մելիքեան Ե.,** Հարք-Խնուս, Անթիլիաս, 1964, էջ 275:
[406] Տե՛ս նույն տեղում, էջ 275:

դրանից հետո նրանք ևս նահանջել էին, իսկ գյուղը ենթարկվել էր թալանի[407]:

Մայիսի 2-ին նույն բախտի էր արժանացել Խրըմխայա գյուղը, որի բնակիչները նույնպես ապաստանել էին Գարաչոբանում: Այստեղ տեղի էին ունեցել առավել ծանր դիմադրական մարտերը: Երիտթուրքական իշխանությունները, հաշվի առնելով այստեղ ապաստանած հայերի թվաքանակն ու հնարավոր ուժեղ դիմադրությունը, նրանց դեմ կենտրոնացրել էին մեծ ուժեր: Առաջին գրոհը հայերը ետ էին մղել՝ թշնամուն պատճառելով ծանր կորուստներ: Ոչնչացվել էր 59 հոգի: Միայն Սիմոն Տեր-Հովհաննիսյանը իր 25 հոգանոց խմբով սպանել էր 25-ից ավելի քրդերի և թշնամուց խլել 5 հրացան: Թուրքերի և քրդերի երկրորդ գրոհը ևս ետ էր մղվել: Սակայն զենքի և զինամթերքի սակավությունը հայերին հարկադրել էր նահանջել: Բնակչությունն ապաստանել էր Գոզալ Պապա սարում: Ինչպես մնացած դեպքերում, այս անգամ ևս Գարաչոբանի հայության շարժական և անշարժ գույքը թալանվել էր[408]:

1915 թվականի մայիսի 4-ին և 6-ին ինքնապաշտպանական մարտեր են տեղի ունեցել Գարաքյոփրու, Խոզլու, Ելպիս, Չավուրմա, Գաբրիելի Գոմ, Արոս և հայկական այլ գյուղերում[409]: Ինքնապաշտպանները դիմադրել են այնքան ժամանակ, մինչև բնակչությունը կարողացել է հեռանալ որևէ անվտանգ վայր: Դիմադրությունը շատ ավելի թույլ է եղել գավառի Տուման, Մարուֆ, Շապատին, Խալչաուշ, Քաղքիկ և հայ-

---

[407] «Վերապրած Եղիշե Մելիքյանի վկայությունը՝ Կարինի գավառի Խնուս գավառակի տեղահանության և կոտորածների մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, հ. 3, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, Երևան, 2012, էջ 113-115, նաև՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5գ. 85, թ.1.3:

[408] «Վերապրած Կարապետ քահ. Տեր-Հովհաննիսյանի վկայությունը՝ Կարինի գավառի Խնուս գավառակի Գարաչոբան գյուղի հայության տեղահանության և կոտորածների մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 3, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, էջ 115-119:

[409] **Մելիքեան Ե.,** նշվ. աշխ., էջ 277-284:

կական մյուս գյուղերում: Այդ գյուղերի բնակիչները, վստահելով հարևան քրդերին, տեղափոխվել են նրանց մոտ՝ հավատալով, որ նրանք կպաշտպանեն իրենց, սակայն խաբվել են: Քուրդ ելուզակները կոտորել են հայերին, իսկ նրանց ունեցվածքը՝ յուրացրել: Արձանագրվել են միայն եզակի դեպքեր, երբ հայերն իսկապես պաշտպանություն են ստացել քրդերից: Եղել են դեպքեր, երբ տղամարդկանց հետ միասին դիմադրության փորձեր են արել նաև կանայք: Նրանք իրենց ձեռքն ընկած բահերով, եղաններով, փայտերով ու երկաթե ձողերով հարձակվել են քրդական խուժանի վրա՝ նրանց պատճառելով ծանր վնասվածքներ, բայց քանի որ զինված չեն եղել, զոհ են գնացել թշնամու կրակոցներին: Նման դեպքերը գրեթե մասսայական են եղել գավառի բոլոր հայաբնակ գյուղերում:

Մուշի մեջ Կոտոյի Հաջիի տունը ազատագրական պայքարի կազմակերպման կարևոր օջախ էր, որն այդպես էլ մնաց տարիներ շարունակ, նույնիսկ այն ժամանակ, երբ Հաջին հեռացել էր Կովկաս և այնտեղ էր գործում[410]: Հաջիի կինը՝ **Եղսոն**, ամուսնու գաղափարներին նվիրված, բարձր արժանապատվության տեր կին էր: Թեև հարուստ աղջիկ էր, սակայն նույնիսկ ամուսնու բացակայության ժամանակ չէր օգտվում իր հայրական տնից՝ դա համարելով պատիվ չբերող հանգամանք ամուսնու օջախի համար: Իր զավակներին նվիրված մայր էր: Երբեք ուրիշին չէր դիմում, աշխատում էր դաշտերի մեջ, ուրիշների համար հաց էր թխում և այս ձևով արժանապատվորեն պահում իր երեխաներին: Նա միշտ բարձր է պահել իր օջախի պատիվը[411]:

Եղսոյի հետ էր բնակվում նաև Հաջիի քույրը՝ Փառանձեմը: Այս երկու կանայք իրենց տան աստիճանների տակ իրենց իսկ ձեռքով փորել էին մի գաղտնարան՝ հեղափոխական գրականություն, զենք ու փախստական հեղափոխականներ պահելու համար: Իրենց անձին սպառնացող վտանգը հաշվի չառնելով՝ նրանք պատրաստ էին ամեն

---

[410] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 85:
[411] Տե՛ս նույն տեղում:

տեսակի զոհաբերության հայ ժողովրդի ազատության համար ծառայող ֆիդայիների համար: Չնայած Եղսոն պարզ, անուս գյուղացի կին էր, բայց զարմանալիորեն աչքի էր ընկնում արագ որոշումներ ընդունելու և ծանր իրադրությունից փրկվելու արտակարգ որոշումներ կայացնելու կարողությամբ[412]:

Եղսոն հնարամիտ էր ու ճարպիկ: Մի քանի անգամ, ոստիկանությունը տունը խուզարկելով, Եղսոյին և Փառանձեմին բանտ էր նստեցրել և չարչարանքների ենթարկել նրանց, սակայն ոչինչ չէր գտել, քանի որ կանայք ոչինչ չէին ասել այն դեպքում, երբ Ռուբենին և Տարոնի ազատամարտի այլ գործիչներին ամիսներով իրենց տանն էին պահել[413]: Այս հերոսուհի կանայք Սասունի ղեկավար ընկերների հանձնարարություններն էին կատարում՝ վայելելով նրանց վստահությունն ու հարգանքը:

Երբ 1915 թվականի հուլիսի 12-ին թուրքերը սկսել էին թնդանոթներով ռմբակոծել Մուշը, Կոտոյի Հաջին, որը վերադարձել էր հայրենի օջախ, իր տունը անառիկ բերդի էր վերածել՝ կռվելով իր տղայի, կնոջ և քրոջ հետ կողք կողքի[414]: Երկու օր անընդհատ դիմադրել էր, հետո երբ ռազմամթերքը վերջացել էր, հերոսուհի կինը՝ Եղսոն, խնդրել էր ամուսնուց, որ գնդակահարի իրենց՝ թշնամու ձեռքը չընկնելու համար: Կոտոյի Հաջին խորը վշտով իրականացրել էր կնոջ ցանկությունը, իսկ վերջին փամփուշտով վերջ էր տվել իր կյանքին:

Խնուս գավառում ավելի կազմակերպված և համառ դիմադրություն է ցույց տվել Հարամիկ գյուղի բնակչությունը: Այստեղ 1915 թվականի սկզբներից Տիգրան Մարտոյանի գլխավորությամբ աշխատանքներ են տարվել գյուղի ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ: Տ. Մարտոյանը փորձել է ինքնապաշտպանական խմբեր ստեղծել նաև հարևան հայկական գյուղերում, սակայն հաջողություն չի

---

412 **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 85:
413 Տե՛ս նույն տեղում:
414 **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 836-837:

ունեցել: Նա ինքը զոհ է գնացել գավառի երիտթուրքական իշխանությունների խարդավանքներին և խնուսցի 150 երևելիների հետ ձերբակալվել է ու հետագայում սպանվել[415]:

Երբ գավառում ծայր են առել հայ բնակչության զանգվածային կոտորածներ, Հարամիկում բնակվող թուրքերը հայերին խոստացել են սատար կանգնել նրանց այնպես, ինչպես սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կազմակերպած ջարդերի ժամանակ: Թուրքերը համագյուղացիներին խոստանցել են պաշտպանել քրդերի հարձակումից այն պայմանով, որ հայերը ռուսների գալուց հետո նույն կերպ վարվեն իրենց հետ:

Փոխադարձ համաձայնության գալուց հետո 150 հայ ընտանիքներ տեղափոխվել են թուրք համագյուղացիների տները: Սակայն մի խումբ հայեր՝ Հակոբ Մուրադյանի գլխավորությամբ, չվստահելով թուրքերին, ամրացել են Հակոբի քարաշեն տանը: Նա, լինելով 1890-ական թվականների հայերի ջարդերի ականատեսը, իր տունը կառուցել էր մի փոքրիկ ամրոցի նմանությամբ:

Դիմադրության ղեկավարությունը ստանձնել են Զապթիա Միսակը, Հայկազուն Մուրադյանը, Գարեգին Տեր-Սողոմոնյանը և Խչե-Ավոյի Մեսրոն: Հայերի նախապատրաստությունները դուր չեն եկել թուրքերին, որոնք հատուկ պատվիրակություն են ուղարկել հայ ինքնապաշտպանների մոտ և առաջարկել են հանձնել զենքերը՝ շեշտելով, որ միայն այդ դեպքում իրենք կպաշտպանեն հայերին: Երկարատև վիճաբանություններից հետո հայ ինքնապաշտպանները համաձայնել են հաջորդ օրը հանձնել զենքերը: Սակայն լուր ստանալով դեպի Հարամիկ շարժվող քրդական ուժերի մասին՝ հրաժարվել են այդ մտադրությունից[416]:

Հայ մարտիկներից վեցը ամրացել են գերեզմանոցում և թշնամու մոտենալուն պես կրակ բացել: Նրանց աջակցել են քարաշեն տանն ամրացած հայերը: Իր դիպուկ նշանառությամբ հատկապես աչքի է ըն-

---

[415] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 748-752:
[416] **Մելիքեան Ե.,** նշվ. աշխ., էջ 287-288:

կել Խչե-Ավոյի Մեսրոն[417]: Հայերին են միացել նաև գյուղի թուրքերը: Նման բուռն դիմադրության հանդիպելուց հետո քրդերը հարկադրված նահանջել են:

Քրդական հաջորդ գրոհի ժամանակ հայերին պաշտպանող թուրքերը որոշել են չվտանգել իրենց և միանալով քրդերին՝ սկսել են կոտորել իրենց տներում ապաստանած հայ համագյուղացիներին՝ միևնույն ժամանակ յուրացնելով նրանց ունեցվածքը: Սակայն ոչ բոլոր թուրքերն են վարվել այդ կերպ: Նրանցից մեկը հրաժարվել է գյուղ մտած քրդերի առջև դուռը բացել և հայերին հանձնել:

Հայերից մեկը՝ Միրագի Հովսեփը, դիպուկ կրակոցով գետնին է տապալել տուն ներխուժած քրդերից մեկին: Չկարողանալով տուն մտնել՝ քրդերը հրդեհել են այն: Քչերին է հաջողվել փրկվել:

Քուրդ ելուզակները, մեծ ուժեր կենտրոնացնելով, գրոհ են ձեռնարկել՝ Հ. Մուրադյանի տանն ամրացած հայ մարտիկների դիմադրությունը կոտրելու համար: Կրկին իր դիպուկ նշանառությամբ աչքի է ընկել Խչե-Ավոյի Մեսրոն՝ ոչնչացնելով 10 ելուզակի: Եվ քրդերը նորից հարկադրված նահանջել են՝ իրենց հետ տանելով սպանվածներին ու վիրավորներին:

Հասկանալով, որ այդ տանը երկար ժամանակ հնարավոր չէ դիմագրավել թշնամուն, հայ մարտիկները դուրս են եկել այնտեղից և ցրվել զանազան ուղղություններով: 60 հոգի՝ զինված 15 հրացանով և մի քանի ատրճանակով, ամրացել են Խոզլու գյուղի ջրաղացում: Այստեղ քրդերը պաշարել են նրանց: Հայերը փորձել են ճեղքել թշնամու օղակը, սակայն 10 զոհ տալով՝ հարկադրված վերադարձել են ջրաղաց[418]:

Չկարողանալով ճնշել հայերի դիմադրությունը՝ քրդերը դիմել են խորամանկության: Նրանք հայերին առաջարկել են հանձնվել՝ խոստանալով անվնաս հասցնել Խնուս և հանձնել գավառական իշխանու-

---

[417] **Մելիքեան Ե.,** նշվ. աշխ., էջ 289-290:
[418] Տե՛ս նույն տեղում, էջ 295:

թյուններին: Հայերն էլ իրենց հերթին պահանջ են դրել, որ իրենցից երեքը պետք է զինված լինեն: Երկար բանակցություններից հետո քրդերը համաձայնել են: Եվ երբ, ըստ պայմանավորվածության, երեք զինված հայեր դուրս են եկել ջրաղացից, քրդերը, դրժելով իրենց խոստումը, կրակ են բացել և սպանել են նրանց: Ապա չթողնելով, որ ներսում գտնվողները ուշքի գան, միանգամից ներխուժել են ջրաղաց և սպանել այնտեղ գտնվողների մեծ մասին: Միայն մի քանի հոգու է հաջողվել հրաշքով ազատվել[419]:

Կազմակերպված ու տևական դիմադրություն են ցույց տվել նաև Արոս գյուղի պաշտպանները՝ տեղի քահանայի գլխավորությամբ ամրանալով գյուղի իշխող բարձունքներում, որտեղից ապահովել են ժողովրդի նահանջը: Ապա դիրքավորվել են քարայրներում և տևական պարտիզանական կռիվների ընթացքում մեկ-մեկ զոհվել: Միայն քչերն են դիմացել մինչև ռուսների գալը:

Մայիսի 10-ին Խնուսի դաշտի գյուղերն ավերելուց ու բնակիչներին կոտորելուց հետո համիդիեներն ու քուրդ խուժանը գրոհել են Խնուս բերդաքաղաքի վրա: Բայց տեղի պաշտոնյաները, ոստիկանությունն ու թուրք երևելիները վճռականորեն կանգնեցրել են նրանց, որպեսզի իրենք թալանեն հայերի ունեցվածքը: Շուտով հասել է տեղահանության օրը, երբ նրանք կարող էին իրագործել իրենց հրեշավոր նպատակները:

Փրկվածները պատմել են, որ Եղիշե Սիմոնյանի ղեկավարությամբ մի խումբ զինված երիտասարդներ բերդի ձորաբերանի քարանձավներից մեկում մի քանի օր հերոսական կռիվ են մղել և ընկել են միայն մեծ թվով թուրքերի սպանելուց հետո: Բերդաքաղաքի Ձորի թաղում 7 երիտասարդներ, ամրանալով մի տան մեջ, դարձյալ օրերով կռվել են և զինամթերքի սպառվելու պատճառով դեպի Պաղջայի հին բերդը նահանջելիս զոհվել[420]:

---

[419] **Մելիքեան Ե.,** նշվ. աշխ., էջ 296:
[420] Տե՛ս նույն տեղում:

Խնուսի գավառի հայաբնակ գյուղերի ինքնապաշտպանական հերոսամարտերի օրերին քաջարի տղամարդկանց կողքին են եղել նաև հերոսուհի կանայք: Նրանք երեխաների հետ միասին ջուր, սննդամթերք ու փամփուշտներ են հասցրել կռվողներին, հաճախ, զենքերը ձեռքներին, կռվել են նրանց կողքին: Շատ հաճախ նրանք իրենց գցել են ժայռերից կամ գիտակցված ինքնասպանության են դիմել՝ թշնամու ձեռքը չընկնելու համար: Նման դեպքերը չափազանց շատ են Խնուսի և այլ գավառների հայոց ինքնապաշտպանական տարեգրության մեջ:

Քրդական խուժանին դիմագրավելու՝ խնուսցի հերոս հայուհու քաջակորով կեցվածքի մասին մի դրվագ է ներկայացրել այդ ինքնապաշտպանական կռիվների մասնակից Եղիշե Մելիքյանն իր հիշողություններում: Նա գրել է. «1914 թվականի աշնան Խնուսի հայոց վիճակը աւելի վատթարացաւ: Չուխուրայ Մուսա պէյը իր 20 000 հերոսականներով Պուլանուխի վրայով Խնուս եկաւ՝ Բասենի ճակատ երթալու: Իր ճամբուն վրայ ընկած Խնուսի հայկական գիւղերը ան սարսափի ու աւարի ենթարկեց և 700 հեծեալներով շաբաթ մը մեր գիւղը՝ Հարամիկ կեցեաւ: Խասըմ պեյը 10 ձիաւորներով մեր տունը իջեւանած էր: Առանց քիւրտի մը ընկերակցութեան՝ որեւէ Հայ տունէն դուրս չէր կրնար ելլեր եւ տեղ մը երթալ: Օր մը Յունանի Յեսոյի կինը՝ Սանամ, կուզէր իր հօր՝ Խոբերու Մարգարի (Շեպոյի) տունը երթալ: Ճամբան, երբ կը հասնի մեր Այվանի դրան առջեւ, Խասըմ պէյի ղուլամները կը բռնեն զինք: Կինը կը խնդրէ, որ ազատ թողնուն, որ հօրը տունը երթայ: Քիւրտերը, սակայն, կը փորձեն բռնաբարել զայն: Յուսահատ կինը յանկարծ կը խոյանայ առաջին յարձակող քիւրտին վրայ, ձեռքէն հրացանը կը խլէ, կը զարնէ դրան առջեւի քարին եւ կը կոտրէ. դարձեալ կը յարձակի երկրորդ քիւրտի մը վրայ և անոր հրացանն ալ կը խլէ ու նոյնպէս կը զարնէ քարին ու կը կոտրէ: Լուրը հասաւ Խասըմ պէյին: Ան կանչեց իր ղուլամները, կինը բերել տուաւ ու հարցուց եղելութիւնը: Երբ լսեց պատմութիւնը, կոտրած հրացաններու տէր երկու

քիւրտերը ծեծի ենթարկեց, իսկ Յեսոյի կինը քիւրտի մը ընկերակցութեամբ իր տուն ղրկեց»[421]:

Այսպիսով՝ 1915 թվականի մայիսին Խնուսի գավառի մեկ տասնյակից ավելի գյուղեր նույնիսկ ամենաանբարենպաստ պայմաններում իրենց մեջ ուժ են գտել ընդվզելու թուրք-քրդական ջարդարարների դեմ և մղելու միքանիօրյա ինքնապաշտպանական հերոսամարտեր: Դրանով հազարավոր խնուսահայեր եթե անգամ չեն փրկել իրենց կյանքը, ապա փրկել են գեթ սեփական արժանապատվությունը և իրավունք նվաճել իրենց արժանավոր տեղն ունենալու Հայոց եղեռնի ընթացքում տեղի ունեցած հերոսամարտերի շարքում:

Ցավոք, մինչև 1915 թվականի հուլիսի 10-ը Մուշի հայությունը մնացել էր սպասողական, անորոշ դրության մեջ և զենք էր բարձրացրել միայն այն ժամանակ, երբ քաղաքը արդեն կտրվել էր դաշտի գյուղերից, իսկ թշնամին շրջապատել էր քաղաքը: Հետևանքն այն է եղել, որ Մուշի դիմադրությանը ոչ բոլորն են մասնակցել, որովհետև մի զգալի մասը հեռացել էր Սասուն: Բացի այդ՝ դիմադրությունը անհրաժեշտ կազմակերպվածություն չի ունեցել: Թեև այն հերոսական էր, բայց կարճատև՝ ընդամենը 5 օր: Հուլիսի սկզբին ռուսական բանակի անակնկալ նահանջը երիտթուրքերին հնարավորություն է տվել նշանակալի ուժեր կենտրոնացնելու և իրականացնելու Տարոնի հայության կոտորածը:

Առանց դիմադրության հանդիպելու թուրք-քրդական ուժերը գրավել են Մուշի շրջակա բարձունքները և այնտեղ թնդանոթներ տեղադրել: Մուշի հին ու փորձառու մարտիկներ Հաջի Հակոբը, Մուխսի Ֆարհադի Արոն, Լևոն Ասլանյանը և Տիգրան Մկրտչյանը որոշել են բաժանվել երկու խմբի և բարձրանալ Սասուն: Ֆարհադի Արոյի խմբին հաջողվել է ճեղքել թուրքական շղթան և մտնել Սասուն, իսկ մյուս խումբը վերադարձել է քաղաք: Հակոբ Կոտոյանի գլխավորած Ձորի

[421] **Մելիքեան Ե.,** նշվ. աշխ., էջ 272:

թաղի խումբը մնացել է քաղաքում և անգամ փորձ չի արել անցնելու Սասուն:

Մուշի դիմադրողական ուժերը տեղաբաշխված են եղել իրարից բավական հեռու գտնվող Սուրբ Մարինեի, Ձորի և Վերին թաղերում: Նշված երեք թաղերի մարտիկների խորհրդակցության ժամանակ որոշվել են դիմադրության կետերը և դրանց ղեկավարները: Հերոսամարտի ընդհանուր ղեկավար է նշանակվել Հաջի Հակոբ Կոտոյանի օգնական Տիգրան Մկրտչյանը[422]:

Հուլիսի 11-ի առավոտյան ոստիկանների ուղեկցությամբ Վերին թաղ է մտել ոստիկանական մի ջոկատ: Հանդիպելով դիմադրության՝ թուրքերն սկսել են հրդեհել հայկական թաղերը: Հաջորդ օրը՝ հուլիսի 12-ին, կռիվը վերածվել է գոտեմարտի: Ամբողջ գիշեր թուրքական թնդանոթները ռմբակոծել են Վերին թաղի դիրքերը: Սակայն թաղի պաշտպանները վերականգնել են քանդված դիրքերը, ամրացրել նորերը: Կանայք հաց ու ջուր են հասցրել կռվողներին: «Ոչ միայն տղամարդիկ, այլև բազմաթիւ կիներ եւ աղջիկներ քաջութեան աննման օրինակներ կուտային՝ ոգևորելով կռուողները և անոնց հասցնելով հաց, ջուր և ռազմամթերք»,– գրել է ականատես Տ. Եղիշէ քահանա Պարսամեանը[423]:

Ե. Պարսամյանը նշել է այն 28 հերոսների անունները, որոնք Լևոն Ասլանյանի ղեկավարությամբ հերոսաբար կռվել են Վերին թաղի գոյամարտերում: Նրանց թվում էր նաև հերոս հայուհի **Անուշ Մկրտչյանը**, որը ոչ միայն ոգևորում էր կռվող մարտիկներին, զենքը ձեռքին՝ դիպուկ նշանառությամբ տապալում թուրք և քուրդ ոսոխներին, այլև կանանց խմբերի հետ միասին հասցնում էր ջուր, սնունդ և զինամթերք մատակարարել դիրքերի պաշտպաններին[424]:

---

[422] Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 3, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, էջ 130:

[423] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 834:

[424] Տե՛ս նույն տեղում, էջ 838:

«Այս 28 մարտիկներէն շատ ավելի եղած են անշուշտ կռուողները,– գրում է հեղինակը: –Ամէն տուն դիրք մը դարձած էր: Տուներ կային, որ մեծ յաջողութեամբ խուժանին եւ զօրքին կը դիմադրէին, բայց քանի մը ժամ յետոյ տունը թնդանօթներու գնդակներէն փուլ կու գար, աւերակոյտին տակ կը թաղէր քաջարի կռուողները, որոնց ո՛չ անունը կայ, ո՛չ այլ թիւը գիտենք»[425]:

Սակայն ռումբերի տարափը գնալով ուժգնացել է՝ դիմադրությունը դարձնելով անհնար: Կռվողները ստիպված են եղել դիրքերը փոխել, թնդանոթների տարափի տակ ավելի սեղմվել: Երեկոյան Վերին թաղը դատարկվել է: Նրանց մեծ մասը իջել է Ձորի թաղ՝ այնտեղ դիրքավորվելու:

Լևոն Ասլանյանը և Հակոբ Կոտոյանը որոշել են վերջին ճակատամարտը տալ Ձորի թաղում: Հուլիսի 13-ի առավոտյան Ձորի թաղ են անցել Վերին թաղի բոլոր պաշտպանները: Հաջի Հակոբի կարգադրությամբ նշանառու Չախչախենց Հուսիկը շարքից հանել է երկու թուրք թնդանոթաձիգների, բայց ինքն էլ է զոհվել: Վիրավոր Հաջի Հակոբը շրջել է դիրքերում, ոգևորել մարտիկներին: Գիշերը տեղի է ունեցել վերջին խորհրդակցությունը: Դիմադրության ղեկավարները խոստովանել են, որ կռիվն անհույս է: Հաջի Հակոբը պահանջել է, որ կռվող խմբերը, պաշտպանության տակ առնելով անզեն ժողովրդին, ճեղքեն պաշարման օղակը և անցնեն մոտակա լեռները, իսկ նա որոշել է մնալ և կռվել մինչև վերջին շունչը: Կեսգիշերին մարտիկները և ժողովուրդը, խումբ առ խումբ կռվելով, սկսել են հեռանալ, սակայն քաղաքից դուրս գալ հաջողվել է ընդամենը 700 հոգու: Մնացածները՝ Հաջի Հակոբի գլխավորությամբ, հուլիսի 13-14-ին մղել են Մուշի «մահվան ճակատամարտը»[426]: Այդ կռիվներին Հաջի Հակոբի հետ մաս-

---

[425] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 838:

[426] «Վերապրած Շուշան Աջամյանի վկայությունը Մուշ գավառի Մուշ քաղաքի կոտորածների մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 2, Բիթլիս նահանգ, էջ 248-249:

նակցել են Մամիկոն Պետրոսյանը և Միսակ Կոնջոյանը: Պատմությունը չի արձանագրել Հաջի Հակոբի շուրջ խմբված ժողովրդի թիվը, որովհետև այդ կռիվներից վկա չի մնացել: Հայտնի է միայն, որ Հաջի Հակոբն այդ երկու օրը մնացել է իր դիրքերում և քաջությամբ դիմավորել մահը[427]:

Մուշի հերոսամարտի վերջին օրվա մասին Եղիշե քահանա Պարսամյանը իր «Տարօնի ինքնապաշտպանութիւնն ու ջարդը» գրքույկում գրում է. «Հուլիսի 13-ի և 14-ի կռիվները վկայ չունեին... Բայց վերջին օրհասական կռիւը ամէն մարդ կրնայ ըմբռնել պարզ երեւակայութեամբ: Մինչեւ վերջին մարդը, վերջին կինն ու երեխան, վերջին դիմադրողը այս ու այն պատին տակ, այս ու այն շէնքին մէջ, մահամերձի կռիվը կուտար քարով, փայտով, զենքով ու կրակով, թշնամիին շարքերը հանձնելով եւ վերջապես նահատակի մոխրացած աճիւնը թողնելով Ձորու թաղի հայերի օճախներու փլած ու մոխրացած աւերակներուն տակ:

Փա՜ռք մահուամբ անմահութեան ճամբան բռնողներուն...»[428]:

Հուլիսի 13-ի կեսգիշերին քաղաքից դուրս եկած խմբերից Շահկա Արոն շուրջ 100 քաջերով, որոնց կեսն անզեն էր, հանդուգն հարձակմամբ ճեղքել է թուրքական զորաշղթան և հասել Հավատորիկ: Մեկ ուրիշ խումբ՝ խիզախ Զաքարիայի գլխավորությամբ, կռվով հասել է Մշո այգիներ, որտեղ չորսժամյա մարտերից հետո բոլոր քաջերը նահատակվել են:

Տեր Եղիշեի հետ մոտ 200 հոգի, մեծ մասամբ անզեն պատանիներ ու երեխաներ, հասել են Մոկունքի այգիներ: Այս ու այն կողմից այստեղ են հասել նաև Սարո Իսպանդարյանի, Հրանտ Հալլաթյանի, Տիգրան Մկրտչյանի զինյալները: Տիգրան Մկրտչյանի խմբի մեջ էին

---

427 «Վերապրած Շուշան Աջամյանի վկայությունը Մուշ գավառի Մուշ քաղաքի կոտորածների մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 2, Բիթլիս նահանգ, էջ 248-249:

428 **Տէր-Պարսամեան Ե.,** Տարօնի ինքնապաշտպանութիւնն ու ջարդը (1914-1915), էջ 256-258, **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 838:

հայտնի ֆիդայիներ «Մխիթարի Յարթինի Մանուէլը, Աւագենց Եղիկը, Ջուկենց Յովհաննէսը, Ղազանչոնց Համօն, Ադէի Մանուկի Անուշը և ուրիշներ»[429]:

Անուշն աչքի է ընկել հերոսական սխրագործություններով: Տիգրանի առաջարկով հիմնական ուժերն ու ժողովուրդը պատսպարվել են Մոկունքի այգիների մեջ, իսկ մարտական ուժերի մի մասով, որոնց մեջ էր նշանառու և քաջաբար կռվող Անուշը, նրանք դիրք են բռնել Սրահովիտ կոչված քարաշարերի մեջ: Մարտական խումբը, տեսնելով, որ թուրքական ուժերը դեպի այգիներ է բարձրացել, զբաղեցրած դիրքերից թշնամու ուշադրությունը ստիպված իրենց վրա գրավելու համար կրակել են նրանց վրա: Կռիվը մի քանի ժամ շարունակվել է, հետո հասել է իր գագաթնակետին: Հերոսուհի Անուշը ոչ միայն դիպուկ կրակով գետին է տապալել թշնամուն՝ ավելացնելով ոճրագործների դիակների քանակը, այլև դիրքից դիրք անցնելով՝ ոգևորել է խմբի անդամներին: Այն բանից հետո, երբ թեժ կռվի ժամանակ Տիգրանի կարգադրությամբ մարտական խումբը, որի մեջ է եղել նաև անվախ հայուհին, դուրս է եկել Մուսա բեյի 80 ձիավորներից կազմված ջոկատի դեմ, որը արշավում էր հայկական դիրքերի վրա, դիմահար կրակով փակել է ձիավորների ճանապարհը: Մեծ քանակությամբ զոհեր տալով՝ թշնամու հեծելազորը ետ է քաշվել: Այդ կատաղի կռիվը շարունակվել է մինչև երեկոյան մութն ընկնելը: Հայ մարտիկները կառչած են մնացել իրենց ամուր դիրքերին և շեշտակի հարվածներով կարողացել են պաշտպանել այգիներում և քարայրներում պատսպարված բազմությանը: Այս կռվի ժամանակ անվախ հայուհի քաջարի Անուշը խոյացել է թշնամու վրա, իր դիպուկ կրակոցներով թշնամու դիակները փռել գետնին, բայց ինքն էլ կնքել է իր մահկանացուն թշնամու դավադիր գնդակից խոցված: Ահա թե ինչ է գրում այդ մասին Կարո Սասունին. «Սպանուեցան 5-10 փոքրիկներ, իսկ կռուող ուժերէն եղան քանի

[429] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 839:

մը վիրաւորներ եւ նահատակուեցաւ միայն Ադէ՝ Մանուկի Անուշը, հերոսական մաքառումներէ ետք»[430]:

Մոկունքի այգիներում ապաստանածները մտադրվել են անցնել Քանա լեռը, բայց լույսը բացվել է, և անցումը դարձել է անհնար: Տիգրան Մկրտչյանն ստիպված է եղել կրակ բացել առաջ շարժվող թշնամու վրա, և կռիվն սկսվել է: Առաքելոց վանքի կողմից թուրքական զորքերը և չեթեները կրակ են թափել պաշտպանվող հայերի վրա, բայց նրանք մնացել են իրենց դիրքերում անսասան և քիչ զոհեր են տվել: Մութն ընկնելուն պես ողջ մնացածները անցել են Բերդակ գյուղով և բարձրացել են Քանա լեռը[431]: Դա Մուշ քաղաքի հերոսամարտի ավարտն էր:

Ի տարբերություն Մուշի, որի հերոսամարտը կարճ է տևել, Մշո դաշտի կռիվները շարունակվել են մի քանի ամիս: 1915 թվականի մայիսից դաշտի գյուղերը շրջապատել են քրդական զինված հորդաներն ու թուրք ոստիկանները: Հունիսի վերջին ընդհատվել է հայկական գյուղերի միջև կապը: Մինչ Մուշ քաղաքում և Սասունում մտածում էին, թե իրենք պիտի լինեն հարվածի ծանրության կենտրոնը, դաշտի կռվողների մի մասը Սասուն էր բարձրացել: Կառավարությունը պատրաստվել էր առաջին հարվածը հասցնել Մշո դաշտի գյուղերին, որոնք լավ զինված չէին: Զրկվելով Սասուն բարձրացած իր ղեկավար մարտիկներից և լավ զենքերից՝ Մշո դաշտը կարող էր ցույց տալ միայն թույլ դիմադրություն: Նման պայմաններում դաշտի գյուղերի պաշտպանների մեծ մասը չէին կարողացել դիմադրել և մի քանի օրվա ընթացքում կոտորվել էին: Այդուհանդերձ, գտնվել էին գյուղեր, որոնք հերոսաբար պայքարել էին թշնամու դեմ՝ Կառնենը, Ս. Կարապետ վանքի շրջանը, Ավրանը, Ալիջանը, Վարդենիսի շրջանը:

Կառնեն գյուղը գտնվում էր Մուշ քաղաքից երկու կիլոմետր դեպի արևմուտք: Գյուղի ինքնապաշտպանությունն սկսվել է Մուշ քաղաքի

---

[430] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 841:

[431] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 405-406, 416-417:

հերոսամարտին զուգահեռաբար: Այն գլխավորել է փորձառու ֆիդայի կառնենցի Մկրտիչը: Կառնենցիների դիմադրությունը տևել է մեկ ամբողջ օր՝ մինչև հունիսի 12-ի ուշ գիշերը, երբ զինամթերքի սպառման պատճառով բոլորը հերոսաբար նահատակվել են իրենց դարավոր գյուղի խորտակված պատերի տակ[432]:

Մուշ քաղաքի հյուսիս-արևելքում գտնվել է Ալիջան գյուղը: Դեռ մարտին ալիջանցի Տիգրանը մի քանի ընկերներով բախվել է թուրք ոստիկանների հետ, բարձրացել է Սասուն ու միացել Ռուբենին ու Կորյունին: Ալիջանի ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար հուլիսի սկզբին այստեղ է եկել Հայկ Միրջանյանը: Նրա տանը տեղի է ունեցել խորհրդակցություն, որտեղ որոշվել է զենքի դիմել: Ալիջանցիները զինաթափել են գյուղ մտած ոստիկաններին: Դիմադրությունը ղեկավարել են Հայկ, Մխիթար և Միսակ Միրջանյանները: Կռվին մասնակցել են նաև կանայք: Սասուն բարձրացած Տիգրանին փոխարինել է տղամարդու զգեստ հագած նրա քույրը՝ **Հայկանուշը:** Հայկանուշը հայտնի ֆիդայի Տիգրանի քույրն էր: 1915 թվականի մարտին եղբայրը Սասուն էր բարձրացել՝ Ալիջանի պաշտպանությունը հանձնելով հին մարտական ուժերին, որոնք Կովկասի և ֆիդայական կռիվների մեջ արդեն թրծված էին: Նրանք Ալիջանի պաշտպանությունը այնքան լավ էին կազմակերպել, որ գյուղը վերածվել էր ամուր բերդի:

Հուլիսին մի խումբ թուրքեր և քրդեր պաշարել էին գյուղը, իսկ մի ուրիշ խումբ անցել էր գրոհի: Անմիջապես գյուղացիները իրենց դիրքերը գրավել էին և բուռն կերպով դիմադրել: Հայկանուշը՝ ֆիդայու պես հագնված ու զինված, շրջել էր դիրքից դիրք և անսահման քաջալերել կռվին մասնակցողներին: Նա իր հրամանատարության ներքո ունեցել էր նաև կանանց մի խումբ, որոնք իրենց բաժին մասնակցությունն էին բերել գյուղի գոյամարտին: Ահա թե ինչ է պատմել այդ մասին դեպքերին ականատես մի կին՝ Ազնիվը. «Կորով ներշնչող անձնաւորութիւն մըն էր Տիգրանի քոյրը՝ Հայկանուշը, որ զինուորի պէս հագուած, վզէն

[432] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 422-423:

երկու կարգ պատռոններ անցուած, այր մարդոյ շարքին մէջ կը կռուէր, ասկից հոն կերթար, անկից ուրիշ տեղ մը կը վազէր, բոլոր կոգեւորէր, գնդակներու տեղատարափի տակ՝ թշնամիի գծին մոտերը գտնուող աղբիւրեն ջուր բերելու կերթար, և առնական քաջությամբ մը իր զենքերով կպաշտպաներ գյուղը»[433]:

Կռիվները տևել են չորս օր: Թշնամին, ծանր կորուստներ տալով, մի քանի անգամ նահանջել է: Ալիջանցիները նրանց թողած զենքերը խլել են և նոր թափով դիմադրությունը շարունակել: Այս կռիվներին ականատես Ազնիվը հետևյալ վկայությունն է տվել Հայկանուշի խիզախությունների մասին. «Հայկանուշը ակնդէտ կը սպասէր քիւրտի մը իյնալուն, որպէսզի խիզախէր անոր մարմնին վրայ եւ թէ՛ հեծած ձին, եւ թէ՛ կրած զէնքերը առնէր և վերադառնար»[434]:

Թշնամին միշտ օգնական ուժ է ստացել և հարձակումներ գործել, մինչդեռ Ալիջանում ապաստանած փախստական հայերը համատարած ջարդերի մասին լուրեր էին պատմում՝ ահ ու սարսափ տարածելով: Ի վերջո գյուղի մարտական ուժերը խորհրդակցական ժողով են գումարել և քննարկել, թե իրենք դեռ քանի օր կարող են դիմադրել և հանուն փրկության որոշել են լքել գյուղը և հեռանալ: Մեկնելուց առաջ ալիջանցիները իրենց գյուղի շուրջ գտնվող խոտի դեզերը կրակի են տվել, որպեսզի թշնամին կարծեր, որ գյուղը այրվում և Մուշից զորք չպահանջեր՝ գյուղը ավերելու համար:

Հակառակ կամքին՝ Հայկանուշն էլ է բռնել գաղթի ճանապարհը, ու հայտնի չէ, թե ինչ վախճան է ունեցել: Եղբայրը՝ ֆիդայի Տիգրանը, նահատակվել է Անդոկի լանջին՝ Սասունի ճակատամարտում: Ալիջանի հերոսամարտը տևել է չորս օր: Թշնամին կրել է մեծ կորուստներ: Չորս օր անց ալիջանցիներն ստիպված են եղել բարձրանալ Քանա լեռը[435]:

---

[433] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 849-850:
[434] Տե՛ս նույն տեղում, էջ 851:
[435] Տե՛ս նույն տեղում, էջ 423-424, 427:

Ավրան գյուղը Գևորգյան ճեմարանի շրջանավարտ Հայկ Տեր-Վարդանյանի և Մակար Խարախանյանի գլխավորությամբ դիմադրել է մեկ օր, իսկ շրջակա անտառներին ու լեռներին ապավինած ավրանցիները կռվել են 12 օր, ու բոլորն էլ նահատակվել են:

Վարդենիս գյուղը բավական հեռու է եղել Մուշից. այն գտնվել է Մշո դաշտի արևելյան ծայրագավառ Չխուրի շրջանում: Շրջանի ապավենը Շամբ կոչվող ծանծաղ լիճն էր՝ շրջապատված եղեգնուտով: Լճի ափերին կային մի քանի գյուղեր: Վարդենիսցիները ծրագրել էին պատսպարվել, կռվել հենց այդ եղեգնուտներում: Կոտորածից առաջ Շամբի եղեգնուտներ էր տեղափոխվել Վարդենիս, Արտոնք, Ղարս և այլ գյուղերի անզեն բնակչությունը՝ մթերապաշարով և անհրաժեշտ իրերով:

Վարդենիսի և շրջակա գյուղերի ինքնապաշտպանությունը տևել է 15 օր, որից հետո եղեգնուտներին ապավինած ժողովրդի համար արշալույս է բացվել, թշնամին սկսել է լեղապատառ փախչել՝ առնելով ռուսական զորքերի մոտենալու լուրը: Այդպիսով՝ Վարդենիսի շրջանից մոտ վեց հազար մարդ է փրկվել և հայկական կամավորական գնդերի պաշտպանությամբ ու ռուսական զորքերի հետ նահանջել է՝ հասնելով Արարատյան դաշտ[436]:

Մարտ ամսից կառավարությունը թուրքական զորքեր է կենտրոնացրել Ս. Կարապետ վանքում և նրա շուրջը: Երբ հուլիսի 7-ին ջարդի ազդանշան է տրվել, անմիջապես ձեռնարկվել են Բաղլուի, Մեշտիի, Զիարեթի և Սորտարի պաշարումն ու կոտորածը: Նույնքան արագ էլ կատարվել է նշված գյուղերի ժողովրդի մեծ մասի և զինված խմբերի նահանջը դեպի Ս. Կարապետի վանքը, լեռներն ու անտառը, որտեղ պիտի մղվեին ինքնապաշտպանական կռիվներ[437]: Ինքնապաշտպանությունը ղեկավարել են առասպելական քաջի համբավ վայելող սորտարցի Արամը, Բաղլուի Հովոն, Գոմսա Մոսոն և Մելիքը, ուսուցիչ

[436] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 423-424, 427:
[437] Տե՛ս նույն տեղում, էջ 431:

Մկրտիչ Տեր-Մկրտչյանը և մի քանի խմբապետներ: Այստեղ կուտակվել է 15-20 հազար հալածական ու սոված ժողովուրդ: Դիմադրողական ուժերն ունեցել են աղքատիկ զինամթերք, ընդամենը հարյուր մարտական հրացան, մի այդքան էլ ատրճանակ ու որսորդական հրացաններ: Սակայն Ս. Կարապետի շրջանի ինքնապաշտպանությունը այնքան ուժեղ է եղել, որ թշնամուն թվացել է, թե այնտեղ կան ֆիդայական զորավոր ուժեր: Կռիվները երկար են տևել, սակայն վրա են հասել սովն ու զինամթերքի պակասը: Այդ պատճառով շատերը փորձել են ճեղքել թշնամու օղակը և բարձրանալ Սասուն կամ միանալ ռուսական զորքերին: Ոմանց դա հաջողվել է, ոմանք էլ զոհվել են: Հակառակորդին մոլորեցնելու համար կռիվը շարունակողները սորտարցի Արամի գլխավորությամբ անընդհատ տեղից տեղ են փոխադրվել: Հերոս հայորդին կռվել է մինչև 1916 թվականի հունվարը, երբ մի քանի ընկերներով փորձել են անցնել Սուլուխի կամուրջը և հասնել ռուսական զորքերին, նահատակվել է ճիշտ այնտեղ, որտեղ ընկել էր Գևորգ Չաուշը: Արամի պաշտպանած ժողովրդի բեկորներին հաջողվել է ազատվել և անցնել Արևելյան Հայաստան[438]:

Տարոնի ինքնապաշտպանության հերոսական դրվագներից են Նեմրութի եռամսյա կռիվները: Երբ 1915 թվականի ապրիլին սկսվել է Վանի ինքնապաշտպանությունը, Վանի շրջանի մի շարք գյուղերի բնակիչներ գաղթել են Ախլաթ: Արամ Մանուկյանը նամակով շրջանի ղեկավարներից մեկին՝ ֆիդայի Փալապեխ Կարապետին, հրահանգել է զինյալ ուժեր հավաքել և լեռ բարձրանալ: Ապրիլի վերջերին Նեմրութ է բարձրացել շուրջ երեք հարյուր կռվող, մեծ մասամբ անզեն: Դիմադրությունը ղեկավարել են Սողոյի եղբայր շամիրամցի Արամը, նրա համագյուղացի Մուշեղը, Կծակ գյուղից ֆիդայի Այվազ Գևորգյանը, Տափավանք գյուղից Հարություն Տերոյանը[439]:

---

[438] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 433:
[439] Տե՛ս նույն տեղում, էջ 435:

Նեմրութի հերոսամարտն սկսվել է ապրիլի 20-ին և շարունակվել է մինչև հուլիսի 15-ը՝ երեք ամիս, որից հետո Նեմրութի հերոսները միացել են դեպի Դատվան ու Ախլաթ շարժվող ռուսական բանակին՝ համալրելով հայ կամավորական գնդերը:

Մշո դաշտի գյուղերի հերոսական ինքնապաշտպանության օրերին հայ կանայք տղամարդկանց կողքին կամ առանց նրանց անարգ ոսոխի դեմ կռվել են հերոսաբար: Շատ հաճախ զենքի և փամփուշտի բացակայության պայմաններում թշնամու ձեռքն ընկնելուց խուսափելու համար դիմել են գիտակցված ինքնասպանության, իրենց անունն ու պատիվը բարձր պահելով ու հերոսանալով սերունդների աչքում: Նման հերուսուհի կանանցից էր ցրոնքցի **Տիրուն (Տշտոն) Եղսոյանը**:

Մշո դաշտի հայ գյուղերը, 1915 թվականի մայիսից սկսած, շրջապատվել էին քրդական զինված հորդաններով և թուրք պահակազորքի կողմից: Գյուղերի միջև հաղորդակցությունը կտրվել էր, և մի գյուղը չգիտեր, թե ինչ է կատարվում մյուս գյուղում: Իսկ մարտական ուժերի մեծ մասը բարձրացել էր Սասունի լեռները:

1915 թվականի հուլիսի 25-ին թուրք և քուրդ խուժանը հարձակվել էր Մշո դաշտի Յողունք գյուղի վրա: Ամբողջ գյուղում կար 150-200 տուն, իսկ հայտնի կռվողները հեռացել էին, որպեսզի չվտանգեին ծերերի, կանանց և երեխաների կյանքը[440]:

Թշնամին սկսել էր կողոպտել, քանդել, կոտորել: Գեղեցիկ կանանց և աղջիկներին առանձնացրել էին՝ բռնաբարելու և իսլամացնելու համար: Ընդդիմացողներին մազերով ձիերի պոչերին էին կապել և քառասմբակ քշել, մինչև որ կտոր-կտոր լինեին: Անօգնական աղջիկներն ու կանայք խուճապի էին մատնվել: Այդ վճռական պահին հանդուգն ու կորովի մի կին՝ **Տիրուն (Տշտոն) Եղսոյանը**, որն աչքի էր ընկել ինքնապաշտպանական կռիվներում, նրանց պաշտպան էր կանգնել և արհամարհելով ամեն վտանգ՝ ապահով առաջնորդել էր տուն:

---

[440] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 784-785:

Սակայն այդ տունն էլ պաշարվել էր քուրդ ու թուրք ամբոխի կողմից[441]: Տիրունի քաջալերանքով կանայք և աղջիկները համառորեն դիմադրել էին, և մահը աչքի առնելով՝ որոշել էին իրենց անունն ու պատիվը անարատ պահել: Տիրունը, իր հարսի ձեռքը ամուր բռնած, բոլորին սիրտ էր տալիս, և իրավիճակը ինչքան էլ անհույս լիներ, ճանապարհներ էր որոնում՝ նրանց ոգու կորովը բարձր պահելու համար:

Տիրուն Եղսոյանի ղեկավարությամբ կանայք կռվել են հերոսաբար: Այդ մասին պատմել է ականատես Միսակ Հակոբյանը, որը բախտի բերմամբ մի ծանոթ քրդի օգնությամբ ազատվել էր այդ մահաբեր վայրից: «Այս տարեց կիներէն ամէնէնն անվախն ու խիզախն էր Էղսոյի Սարգսի աղջիկ Տիրուն (Տշտոն), որ մայր վագրի պէս անվախ կը ցատկէր, կը ճանկռտէր թէ՛ թուրքի եւ թէ՛ քիւրտի երեսը: Այդ կինը՝ Տիրուն, հակառակ ամէն տեսակ չարչարանքներուն, բռնած իր հարսի ձեռքէն, ոչ ոքի յանձնեց զայն, մինչեւ ամէնէն ստոյգ մահը, ձեռքը բռնած հարսին եւ որպես առաջնորդ այդ անտէր հօտին, դիմեց այն տունը, ուր հրկիզուեցան ամէնքը միասին, առանց բացառութեան»,– գրում է հուշագիրը[442]:

Թշնամու մի խումբ, կատաղած կանանց դիմադրությունից, կրակի էր տվել նրանց ապաստանած տներից մեկը: Բոցերն ու ծուխը աշխարհ էին բռնել, սակայն փախչողներ ու հանձնվողներ չէին եղել:

Մշո դաշտի գյուղերի ինքնապաշտպանական կռիվների մասնակիցներից էր հերոսուհի Խամեն: Նա ապաստանել էր Քանասարում: Ծիրինկատարի և Ծովասարի հյուսիսային փեշերից դեպի Բիթլիս երկարող Սասունի անտառածածկ և խորը անդունդներով կտրատված լեռնաշղթան Քան էր կոչվում: Մուշի ու դաշտային գյուղերի անկումից և Սասունի ճակատամարտին հաջորդող Անդոկի պարտությունից հետո Քանա սարի վրա հավաքվել էր 15-20 000 հասնող բազմություն: Կատարված իրադարձությունները հուսահատություն էին առաջացրել:

---

[441] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 784-785:
[442] Տե՛ս նույն տեղում, էջ 785-786:

Նույնիսկ մարտական ուժերի մեջ տիրում էր անորոշություն և սպասողական վիճակ[443]: Նման պայմաններում քաջ ու ճարպիկ Խամեն կանանց մի խումբ էր կազմել, որի նշանաբանն էր՝ «Հերոսաբար մեռնել, սակայն չհանձնվել»: Նրանք գիշերները գնացել էին մոտակա գյուղերը՝ բնակչությանը ուտելիք հասցնելու: Քանի-քանի անգամներ Խամեն մահից ազատվել էր՝ հարմար առիթով մտնելով իրենց լքված տունը, մինչև վտանգն անցել է[444]: Սակայն մի գիշեր Խամեն և ընկերուհիները բռնվել են Մառնիկ գյուղում և քրդերի կողմից հանձնվել ոստիկանությանը: Թուրք ոստիկանները նրանց ախոռի մեջ էին բանտարկել: Տարիքով մի քուրդ, Խամեի համար 20 ղրուշ փրկագին վճարելով, ազատել էր նրան[445]:

Քուրդը Խամեին հագուստ էր տվել, որպեսզի նա ցնցոտիները փոխեր: Այդ հագուստը հայուհիներից գողացված էր, և դրանց վրա արյան բծեր կային: Իր հուզմունքը զսպելով՝ Խամեն որոշել էր վրեժ լուծել և կրկին սար բարձրանալ:

Հոգին փոթորկող ատելությունն ու զայրույթը խրոխտ հայուհու բազկին ուժ էին տվել, և նա կացնի մեկ հարվածով քրդին գետնին էր տապալել և Քանայի անտառներում ապաստանել: Օրերի ընթացքում ժողովրդի վիճակը ծանրացել էր: Այս մասին հայտնի հեղափոխական գործիչ Վահան Փափազյանը փաստել է. «Ժողովուրդը հալվում է ամենօրյա մասնակի ջարդերի և հիվանդությունների պատճառով: Այդ պայմաններում ո՞վ կարող է մտածել ուժերի ամփոփման կամ որևէ նպատակի համար այն կազմակերպելու մասին: Բոլորը զարհուրելիորեն հուսահատ՝ սեփական կյանքի պահպանման միջոցներ են փնտրում ամեն գնով»[446]:

---

[443] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 782-783:
[444] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 90:
[445] Տե՛ս նույն տեղում:
[446] Տե՛ս նույն տեղում:

Ռուսական բանակի և հայ կամավորական գնդերին սպասելուց հոգնած՝ Խամեն այդ փոքրիկ խմբի հետ հեռացել էր Քանասարից: Երկար ժամանակ անց խումբը քրդաբնակ դարձած նախկին հայկական գյուղերի մեջ թափառել էր, ոմանք սովամահ էին եղել: Ուրիշները սպանվել էին, ոմանք էլ՝ անհետ կորել: Ի վերջո Խամեն ստիպված հագել էր քրդի տարազ և ծառա մտել մի աղայի տանը:

1916 թվականին, երբ հայկական նահանգներից վերապրողներին փրկելու կոչված կամավորականները մտել էին Մուշ, լեռներում ապաստանած մշեցիների ու սասունցիների բեկորները միացել էին նրանց: Ենթադրվում էր, որ դրանից հետո Խամեն էլ ծառայության լուծը թոթափել էր՝ միանալով նրանց: Դժբախտաբար, պատմությունը ոչ մի ստույգ տեղեկություններ չի պահպանել այս հանդուգն և պատվախնդիր հայուհու ճակատագրի մասին:

Սասունի հերոսամարտը և հայ հերուսուհի կանայք

Հայ ազատագրական շարժման միջնաբերդ Սասունը ևս պատրաստվում էր ինքնապաշտպանության: Ռուբենն ու Կորյունը Սասուն էին անցել 1915 թվականի փետրվարին և հրավիրել Շենիկի խորհրդակցությունը: Մի քանի շաբաթ անց նրանց էր միացել Մճոն:

Թշնամին ուներ Սասուն ներխուժելու երկու ճանապարհ: Առաջինը Խուլբի ճանապարհն էր՝ դեպի Տալվորիկ և Անդոկ (Անտոկ), երկրորդը՝ Հավետունի շրջանից դեպի Բսանք: Այս ուղղության վրա կային բազմաթիվ քրդական աշիրեթներ: Առավել կարևորը Խուլբի ճանապարհն էր, որին էլ ուղղված էր կառավարութան առաջին հարվածը:

1915 թվականի ապրիլի սկզբներին թուրքական կառավարական զորքերը, չեթեներն ու քրդերը հարձակվել էին Ահրոնք գյուղի վրա. այդպես էլ սկսվել էին կռիվները: Շրջանի պաշտպանական ուժերը բաժանվել էին մի քանի խմբերի: Ահրոնքի մի խումբ երիտասարդներ ամրացել են գյուղի անտառներում, ժայռերի վրա և կռիվ սկսել հարավից

հարձակվող քրդերի դեմ: Խումբը ղեկավարել էին Մանոն, Հրայրի հորեղբորորդի Հովհաննես Տեր-Մամբրեյանը, Կիբոն և Խաչոն: Մեկ այլ խումբ գործել էր Ընձքարի անտառներում ու կիրճերում: Երրորդ խումբը դիրքավորվել էր Անդոկի հարավային փեշերին՝ Իշխնձորից մինչև Ահրոնք:

Շուտով հարձակվողներին Սասունի հարավից միացել էին նաև Խիանքի քրդերը, որոնք շարժվել էին դեպի Սպիտակ լեռ ու Տալվորիկ: Այս երկու շրջաններում կռիվները տևել էին ապրիլից մինչև հունիսի վերջերը, երբ Խուլբի և Խիանքի հայությունը երիտասարդ կռվողների ետ էր քաշվել Անդոկ՝ Սասնա վճռական քսանօրյա ճակատամարտին մասնակցելու համար [447]: Կառավարությունդ երկու վաշտ էր ուղարկել՝ Կուրտիկի ամբողջ լեռնաշղթան գրավելու համար: Ռուբենը և Կորյունը դա չէին հանդուրժել, ուստի սկսվել էր դիրքային կռիվ, որը տևել էր շուրջ երեք ամիս: Թուրքերի հենարանը Ս. Հովհաննեսի վանքն էր: Առաջին օրերի գրոհների ձախողումից հետո թուրքերն ստիպված էին եղել հրաժարվել Կուրտիկի բարձունքներին տիրելու ծրագրից և ամրացել էին լեռնաշղթայի հյուսիսային լանջերին: Նրանց միակ նպատակը հայերի զինամթերքը սպառելն էր, որովհետե Սասուն մտնելու հրահանգ դեռևս չունեին:

Կուրտիկի կռիվների ընդհանուր ղեկավարն էր Փեթարա Մանուկը, որը փորձառու ֆիդայի էր՝ Գևորգ Չաուշի մարտական զինակիցը դեռ 1904-1907 թվականներին: Նրա հետ են եղել Փեթարի հին ֆիդայիներ Ախոն, Իսրոն, Կիրակոսը, Թադոն և ուրիշներ[448]:

Սասունի հարավում ու հարավ-արևմուտքում սկսված մարտական գործողություններն ապրիլի երկրորդ շաբաթվա ընթացքում տարածվել են մինչև Սպիտակ լեռ: Գրավելով Սպիտակ լեռը՝ քրդերը պատրաստվել են շարժվել դեպի Տալվորիկ, սակայն Գեբինի և Տալվորիկի հայ

---

[447] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 439:
[448] Տե՛ս նույն տեղում, էջ 442:

մարտիկները փակել են Սպիտակ լեռան լեռնանցքը: Այդ ճակատի հրամանատարն էր խմբապետ Մուշեղը:

Այսպիսով՝ ապրիլից սկսած՝ Սասունը չորս կողմից պաշարված էր: Այդ վիճակը տևել է մինչև հուլիս: Մինչև հունիս բոլոր ճակատներում սասունցիները հերոսաբար դիմադրել են հարձակումներին: Բայց ռուսական բանակի առաջխաղացումն ուշացել է, և հետզհետե ավելի սուր է զգացվել զինամթերքի ու պարենի պակասը: Քրդերի ձեռքն անցել են Խիանքը, Խուլբի մեծ մասը և Բսանքը: Հունիսի կեսերին պաշարման օղակն ավելի է նեղացել: Դիմադրողական կռիվները հետզհետե փոխադրվել են Անդոկ, որը կենտրոնական դիրք էր գրավում:

Հարավային շրջանների ժողովուրդն ու կռվողները տեղաբաշխված էին Տալվորիկի, Անդոկի և Գեբինի լեռներում ու անտառներում: Տալվորիկից մինչև Կուրտիկ և Ծովասարի ստորոտից մինչև Անդոկի հարավային փեշերը: 1200 քառ. կմ տարածությամբ այդ շրջանում հավաքվել էին ոչ միայն Սասունի ժողովուրդն իր մարտիկներով հանդերձ, այլև Մշո դաշտից և ուրիշ վայրերից այստեղ հասած գաղթականները[449]: Այդ բազմությանը կերակրելու հարցը դարձել էր մեծ հոգս: Միակ լուծումը մոտակա քրդական գյուղերի վրա հարձակվելն էր, ինչը կունենար նաև ռազմավարական նշանակություն: Այդ նպատակով կազմվել էին հարվածող խմբեր՝ փորձառու ֆիդայիներ Չոլոյի և շենիկցի Ղազարի գլխավորությամբ: Այդ խմբերը հունիսի վերջին երկու շաբաթվա ընթացքում շեշտակի հարձակումներ էին գործել քրդերի վրա և ձեռք բերել զգալի քանակությամբ մթերապաշար: Միևնույն ժամանակ այդ հարձակումների շնորհիվ քրդերը խուճապի էին մատնվել և 25 կմ ետ քաշվել Անդոկի ճակատից:

Թնդանոթներով զինված թուրքական զորամասերը ուղղվել են դեպի Շենիկ և Սեմալ, որոնք հերոսական Սասունի առաջին դարպասներն էին: Թուրքերի հիմնական նպատակն էր ոչնչացնել Մուշից և Մշո

[449] Մեծ եղեռնի հերոսապատում, էջ 446:

դաշտից ազատված հայ մարտիկներին, որոնք Կոմսի և Մատթեոսի գլխավորությամբ դիրքեր էին գրավել Հավատորիկի և Մառնիկի բարձունքներում: Այդ դիրքերում հայ մարտիկները կռվել են երեք ամսից ավելի, ուստի և ուժասպառ են եղել: Փոքրաքանակ սասունցիները երկու օր համառորեն դիմադրել են, բայց ի վերջո թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ տեղի են տվել և անցել են Շենիկ ու Սեմալ[450]:

Հուլիսի 19-ին թուրքական հախուռն հարձակումը վերածվել է կանոնավոր ճակատամարտի: Նման պայմաններում Ռուբենը, Կորյունը և Մճոն վերադասավորել են ուժերը և դիմադրությունը կենտրոնացրել վեց ճակատներում: Տալվորիկի և Խիանքի ճակատը ղեկավարել է խմբապետ Մուշեղը, որի օգնականներն էին ալիջանցի Տիգրանը և բսանցի Դավիթ Երիցյանը: Շենիկ-Սեմալի ճակատի ղեկավարությունը հանձնվել է Չոլոյին, շենիկցի Ղազարին, սեմալցի Քյաթիպ Մանուկին և Ադամին[451]:

Գելիեգուզանի ճակատամարտն ընդգրկել է Անդոքի բոլոր կողմերը, և այն ղեկավարել են Կորյունը և Մճոն: Մարտական ղեկավարներն են եղել Մորուք Կարոն, Ղազար Պետոյանը, Սրգոյի Հովսեփը, Քյաթիպ Կիրակոսը, Մարգեն, Տեր Քաջի Ադամը, Ղազար Ֆահրատյանը և Գարոյի Պետրոսը: Կենտրոնը ղեկավարել է Ռուբենը, որի կողքին էին Մուխսի Ֆարհատի Արոն, Պզտիկ Արամը, Ավրանի Արամը և Հրայրի եղբայը՝ Մանոն՝ իրենց պահեստային խմբերով[452]:

Սասունի պաշարված շրջաններում հավաքվել է շուրջ 15 հազար մարդ, բոլորն էլ՝ կորովի ու կռվի ընդունակ, և բոլորն էլ ձգտել են կրկնել 1894 և 1904 թվականների հերոսամարտերը՝ այս անգամ ավելի մեծ ծավալներով:

---

[450] «Վերապրած Կիրակոս Տեր Տոնապետ Երիցյանի վկայությունը՝ Մուշի գավառի Մուշի գավառակի Շենիկ գյուղի կոտորածների մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 2, Բիթլիս նահանգ, էջ 249-252:

[451] Տե՛ս նույն տեղում, էջ 452:

[452] Տե՛ս նույն տեղում, էջ 249-252:

Շենիկի ուղղությամբ թուրքական բանակին հաջողվել է գրավել Մերկե-Մոզանի բարձունքները: Հայ մարտիկները նահանջել են և ամրացել Սեմալի, Շենիկի ու Կուրտիկի գծի վրա: Նույն օրը քրդերը հարավից Տալվորիկի և Իշխնձորի ուղղությամբ ձեռնարկել են բուռն հարձակում, սակայն Սպիտակ լեռան կիրճերում հանդիպել են ուժեղ դիմադրության: Սկսվել է մահ-պատերազմ, և Տալվորիկում կարծես երկրաշարժ էր: Երեկոյան քրդերը զինադադար են առաջարկել, որը և ընդունվել է:

Շենիկի ճակատում Ռուբենը, Կորյունը և Մճոն որոշել են ձեռնարկել գիշերային կայծակնային հակահարձակում թուրքական թնդանոթների վրա, որոնց բարձր դիրքերից՝ 15-20 կմ տարածության վրա, կրակային փոթորիկ է տեղացել: Հայ մարտիկներն արագորեն սառը զենքով վերացրել են պահակներին, ոչնչացրել թնդանոթաձիգներին և գրավել երեք թնդանոթները: Այնուհետև այդ նպաստավոր դիրքերից նրանք մրրկածուփ կրակ են բաց թողել մոտակա դիրքերում գտնվող թուրքական զորամասերի վրա՝ նրանց պատճառելով մեծ կորուստներ, մինչդեռ կենդանի մնացածները խուճապահար դիմել են փախուստի: Վերագրավել են Շենիկը, գրավել նաև թուրքական երեք թնդանոթներ: Ռուբենի կարգադրությամբ սասունցիները հանել են թնդանոթների փակաղակները, այլ կարևոր մասեր ու վերադարձել իրենց կենտրոնատեղին[453]:

Հյուծված զորամասերը համալրելով նոր ուժերով ու թնդանոթներով՝ թուրքերը հուլիսի 23-ին սկսել են ավելի լայնածավալ հարձակում, որը տևել է մինչև օգոստոսի 2-ը: Անդոկի շրջանում դիրքերը ձեռքից ձեռք են անցել: Թեև թուրքերն ունեցել են բացահայտ առավելություն, սակայն նրանք օրական առաջ են շարժվել հազիվ մեկ կիլոմետր:

Օգոստոսի 2-ին տեղի է ունեցել Սասունի հերոսամարտի վերջին

---

[453] «Վերապրած Կիրակոս Տեր Տոնապետ Երիցյանի վկայությունը՝ Մուշի գավառի Մուշի գավառակի Շենիկ գյուղի կոտորածների մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 2, Բիթլիս նահանգ, էջ 456:

արարը: Թշնամուն հաջողվել է Շենիկի ճակատից ճեղքել դիմադրության կուռ շղթան՝ խլելով Կորյունի ու նրա նման հերոսների կյանքը, հերոսներ, որոնք այլևս նահանջելու տեղ չունեին, որովհետև նահանջել կնշանակեր Սասունի բնակչությանը դատապարտել կոտորածի:

Սասունի ինքնապաշտպանական կռիվների, հերոսամարտի տարիներին իրենց հերոսությամբ աչքի են ընկել անվախ ու քաջակորով հայուհիները:

«Սասնոյ եօթնամսեայ հերոսամարտին մէջ իրենց կարեւոր բաժինն ունեցան կիները: Առանձին խմբերով անոնք կը շրջէին դիրքերը, կռուողները կը խրախուսէին, ուտելիք և ջուր կը հասցնեին, յաճախ ալ կը մասնակցէին նաեւ կռիւներուն: Անոնք հազար տեսակ հնարք կը գործադրէին թշնամիներուն վնասելու համար»,– գրել է Ռուբենը իր հիշատակներում,– ապա ավելացրել է. «Լեռներու գագաթներէն քարեր կը գլտորէին, երկաթէ լծակներով ժայռեր տեղահան կը՝ընէին: Կատարներէն գլորուող այս քարերը մինչեւ ծոր հասնիլը իրենց ճամբուն վրայ տեղահան կը՝ընէին քարակոյտեր ու ժայռեր: Լեռներն ու ձորերը կը լեցուէին աղմուկով ու թնդիւններով, կարծես երկրաշարժ տեղի կունենար, ու աշխարհը փուլ կու գար ամէն կողմէ: Այս միջոցով թշնամին զոհեր կու տար ու չէր կրնար հասնիլ մեր դիրքերուն:

Կիներու այս խումբերը օգնութեան կը հասնէին նաեւ վիրաւորներուն: Ժողովրդական դեղեր՝ մեծ մասամբ պատրաստուած մեղրով, անանուխով եւ աղով, կը բուժէին վիրաւորներու վէրքերը: Իսկ դարմանէն աւելի, կիներու անձնուէր խնամքն ու քաջալերանքն էր, որ ուժ կու տար անոնց: Կռիւներու ամենէն վտանգաւոր վայրկեաններուն, այս կիները կը սկսէին երգել ու պարել: Երբեմն անոնք յանկարծ նշմարած կը՝ըլլային հեռուէն երեւցող հայ կամաւորական խումբերը եւ ռուս զօրքը: Միտումնաւոր կերպով տարածայնուած այս լուրերը ուժ կուտային կռուողներուն, որպէսզի անոնք քիչ մը եւս տոկան հարիւր հազարաւոր

զօրքերու եւ քիւրտ աշիրէթներու յարձակումներուն: Այս կիներուն մեջ նշանաւոր էր Ռըպէն»[454]:

Շենիկի անվեհեր կանանցից էր խմբապետուհի **Ռպեն (Հռիփսիմե)՝** Սիմոն պապիս մայրը (Է. Մինասյան): Նրա մեջ իշխողը սասունցու հպարտ ու ըմբոստ ոգին էր:

Երբ Սիմոն պապս պատմում էր իր Հռիփսիմե մոր մասին, հոգիս լցվում էր հպարտությամբ, բայց միաժամանակ մտածում էի, թե պապս գովաբանում է իր մորը՝ պատմելով նրա սխրագործությունների մասին, ինչպես կարող է անել յուրաքանչյուր մեկը՝ իր հարազատին ներկայացնելիս: Սակայն երբ կարդացի Ռուբենի (Մինաս Տեր-Մինասյանի) «Հայ յեղափոխականի մը յիշատակները» աշխատության հատորները և ընթերցեցի Շենիկի Մեծ եղեռնը վերապրածների հուշերը, համոզվեցի, որ պապս մի բան էլ դեռ համեստությամբ քիչ է պատմել հերոսուհի մոր մասին: Ահա թե ինչ է գրում Սասունցի Մուշեղն իր հուշերում. «Ռպեն իշխանական ընտանիքից էր, Գրքեի Վարդանի հեղինակավոր ծանոթ տնից, Շաքեի քույրը: Այս տունը տարիների ընթացքում հեղափոխական իսկական օջախ էր, ուր Մ. Տամատյանը, Հրայր Դժոխքը, Գևորգ Չաուշը և Ռուբենը ապաստանում էին տարիներ ի վեր»[455]: Այս միջավայրի մեջ էր մեծացել և հեղափոխական գաղափարներով թրծվելով՝ հայ ժողովրդի ազատության ուխտյալ զինվոր էր դարձել Ռպեն:

1915 թվականին, չնայած նրան, որ ամուսնացած էր, զավակների տեր, միջին տարիքի կին էր, իր ուժն ու կորովը պահելով՝ կանանց խմբեր էր կազմակերպում և մասնակցում Ռուբենի գլխավորությամբ Սասունի մոտակա քրդական գյուղերի վրա կազմակերպված արշավանքներին՝ մեծ մասամբ ուտելիք ճարելու համար, մանավանդ որ փախստականների թիվը գնալով աճում էր:

---

[454] **Ռուբէն,** նշվ. աշխ., հ. 7, էջ 80-81:
[455] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 81:

Խմբապետուհի Ռպեն գործել է Անդոքի շրջանի մեջ, «սակայն երբեմն կռվողներին քաջալերելու և ուրիշ շրջանների մեջ էլ խմբեր կազմելու համար մինչև Տալվորիկ կերթար, հետո դարձյալ Անդոք կվերադառնար[456]: Նա հոգնել չուներ, և նրա համար անկարելի ոչինչ չկար: «Ռըպէն յոգնիլ չէր գիտեր: Բազմաթիւ ժամեր տեւող այդ ճամբորդութիւններէն ետք անիկա դարձեալ ուժեղ էր, կորովի ու ժպիտը դեմքէն անպակաս: Ինչպէս կռիւներու, նոյնպէս ու պարի ու երգի մէջ անիկա նմանը չուներ: Իր երկար, սէլվիի հասակը օրորելէն պարի մեջ ուժասպառ կ'ըներ նոյնիսկ ամենէն ուժեղ տղամարդիկը»,– գրում է Ռուբենը[457]:

Վիրավորների համար ժողովրդական դեղեր է պատրաստել մեղրով, անանուխով ու աղով: Հոգատար մոր պես խնամել է վիրավորներին ու հիվանդներին, քաջալերել է և հույս ներշնչել բոլորին: Նա խնամել է բազմաթիվ վիրավորների: Անդոքի կռիվների ժամանակ դիրքից դիրք է անցել և իր հանդուգն ու խիզախ կռիվներով ետ մղել թշնամու գրոհները, հաճախ ինքն էլ կանանց խմբով գրոհել է և ստիպել թշնամուն փախչել: Այս հանդուգն ու խիզախ հայուհին նահատակվել է Սասունի վերջին ծանր կռիվների ընթացքում[458]՝ հուլիսի 21-ին՝ թնդանոթային ռմբակոծության ժամանակ, և բախտ է ունեցել չտեսնելու Սասունի անկումը:

1915 թվականի հերոսամարտի տարիներին հայտնի են դարձել նաև **Շուշանն** ու **Գյուլեն**: Երկուսն էլ Տալվորիկի իշխանական տներից էին: «Այս երկու քաջ կիները իրենց խմբերով բախտորոշ դեր մը ունեցան մեր շրջանի կռիւներուն մէջ: Անոնց ներկայութիւնը, ցուցադրած կորովն ու քաջութիւնը պատճառ կ'ըլլային հրահրելու կռուողներու եռանդը: Ափսոս որ Շուշանը և Կյուլէն եւս իրենց հարիւրավոր քոյ-

---

[456] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 81:
[457] Տե՛ս նույն տեղում:
[458] Տե՛ս նույն տեղում, էջ 82:

ներուն հետ ինկան Սասնոյ անհաւասար կռիւներու ընթացքին»[459],– գրում է Ռուբենը իր հուշերում:

Տասնօրյա հերոսամարտից և Շենիկի անկումից հետո հրավիրվել է վերջին խորհրդակցությունը, որտեղ մարտական խմբերի ղեկավարները որոշել էին տարբեր ուղղություններով հարձակվել թշնամու վրա և ամբողջ ժողովրդի հետ ճեղքել պաշարման շղթան: Այդ ծրագիրն իրագործվել էր օգոստոսի 3-ի գիշերը[460]: Կռվող խմբերին ու ժողովրդին հաջողվել էր ապաստանել անառիկ լեռների ապահով վայրերում: Մարտիկներին՝ Ռուբենի, Վահան Փափազյանի (Կոմս), Մարտիրոսի և այլ խմբապետների ղեկավարությամբ, հաջողվել էր ուղղություն վերցնել դեպի հյուսիս-արևելք և օգոստոսի վերջերին հասնել ռուսական բանակին:

Սասնա լեռները մինչև 1916 թվականի գարունը պաշտպանել էին իրենց զավակներին, մինչև ռուսական զորքի առաջխաղացման հետևանքով թուրք-քրդական ուժերը նահանջել էին, և հայ կամավորական գնդերը 1916 թվականի առաջին ամիսներին վերանվաճել էին Տարոնը: Սասունի հայությունը, մեկ ամբողջ տարի՝ 1915 թվականի փետրվարից մինչև 1916 թվականի փետրվարը, կրելով ծանր կորուստներ, այդուհանդերձ, հաջողությամբ դիմադրել էր թուրքերին և էական մասնակցություն բերել Հայաստանի առաջին հանրապետության ստեղծմանը:

Սասունի ինքնապաշտպանական կռիվների ժամանակ իր հերոսությամբ աչքի էր ընկել քաջարի ու առյուծասիրտ հայդուկ Կարապետ Ավոյանի (Մորուք Կարոյի) կինը՝ անվախ ու քաջասիրտ հերոսուհի **Մարթան**[461]:

Նա ծնվել է Սասունի Իշխնձոր գյուղում՝ Ղազարի ընտանիքում: Նրբագեղ այդ գեղեցկուհին գյուղի զարդն էր, փոքրամարմին էր, բայց և անասելի քաջ: Մի անգամ թուրք հարկահանները, գալով Իշխնձոր,

---

[459] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 82:
[460] Տե՛ս նույն տեղում, էջ 457-458:
[461] **Հեբոյան Ա.,** Մորուք Կարո (Հայ ընտանիքի իրապատում), Երևան, 1998, էջ 31, 35:

Ղազարից հարկ են պահանջել այն դեպքում, երբ նա այդ հարկը ընդամենը մի քանի օր առաջ էր տվել՝ ըստ սուլթանական գործող հրամանի: Նա քրդերին էր վճարել: Ղազարը թուրք հարկահաններին խնդրել էր ժամանակ տալ, որ կարողանա նոր հարկը վճարել, սակայն վերջիններս սպառնացել էին՝ նրան հայտարարելով, թե չվճարելու դեպքում նրա գլուխը կտանեն հարկի փոխարեն: Այդ խոսակցությունը լսելով՝ գեղեցկուհի ու անվախ Մարթան, թուրը ձեռքին, կանգնել էր թուրք հարկահանի դեմ դիմաց: Նրա ցասումով լի աչքերից կրակ էր ժայթքել: Նա համարձակորեն մենամարտի էր հրավիրել թուրք ավազակներին:

Արդյո՞ք վախեցել էր թուրք փաշան, ամաչե՞լ հայ աղջկա մարտահրավերից, թե՞ խոնարհվել էր նրա գեղեցկության առաջ, հայտնի չէր: Միայն պարզ էր, որ առանց հարկը վերցնելու նրանք դուրս էին եկել Ղազարի տնից, և ավազակները հեռացել էին Իշխնձորից[462]:

Մարթան ոչ միայն հիանում էր իր հոր՝ Ղազարի հիմնած գեղեցիկ այգու թռչունների համերգով ու բնությամբ, այլև վարժվում էր զենքով, անվրեպ կրակելով, որն անհրաժեշտ էր իր կեղեքվող ժողովրդին պաշտպանելու համար: Մարթան ծանոթացել էր արծվաբույն Սասունի Գելիեգուզան գյուղի զավակ Մորուք Կարոյի հետ, որը միջին հասակի, ժպտուն աչքերով, շեկ բեղերով, մի երիտասարդ էր, անվախ ֆիդայի: Նրա գլխավոր նպատակը իր ժողովրդի ազատ ու անկախ ապրելն էր[463]:

Քանի որ Ղազարը խոստացել էր աղջկան ամուսնացնել իրենց գյուղի ռեսի որդու հետ, Մորուք Կարոն փախցրել էր Մարթային, ինչի պատճառով երկու գյուղերի միջև կռիվ էր սկսվել, և յուրահատուկ թշնամանք էր առաջացել: Մորուք Կարոն Մարթայի հետ բարձրացել էր իր սիրած Անդոկ լեռը: Մարթայի միջոցով նրա ուժն ու կորովը բազմապատկվել էին: Նույնիսկ մի անգամ նրանք նկատել էին, թե ինչպես մի խումբ քրդեր, հարձակվելով Գելիեգուզան գյուղի երկու հովիվ-

---

[462] **Հեբոյան Ա.,** Մորուք Կարո (Հայ ընտանիքի իրապատում), Երևան, 1998,, էջ 32:
[463] Տե՛ս նույն տեղում, էջ 35-36:

ների վրա, Գաբոյի Սերոբին կապել էին ծառին, իսկ Գալոյին տարել էր ոչխարների հետ: Մորուք Կարոն և Մարթան համարձակորեն հարձակվել էին քրդերի վրա: Նրանցից մեկը սպանվել էր տեղում, իսկ մյուսները փախուստի էին դիմել[464]:

Դրանցից հետո Սերոբի և Գալոյի հետ կապված դեպքը տարածվել էր Սասնո գյուղերում: Ժողովուրդը խորին հարգանքով էր խոսում Մորուք Կարոյի և Մարթայի քաջագործությունների մասին:

Շենիկցի անվեհեր ֆիդայի Չոլոյի (Հարություն Աբրահամյան) միջնորդությամբ, որը մինչև վերջ հավատարիմ մնաց Մորուք Կարոյի և Մարթայի հետ իր տարիների ընկերությանը, Իշխնձորի Ղազարը հաշտվեց Մորուք Կարոյի հետ: Երկու գյուղի տղամարդիկ ևս հաշտվեցին[465]:

Ամուսինների հերոսապատումի անմոռաց դրվագների փառապսակը 1915-1916 թվականների Անդոքի բարձունքներում մի բուռ քաջերի հետ մղած օրհասական պայքարն էր մեր դարավոր ոսոխի ոճրագործ ծրագրի դեմ:

1915 թվականի Սասունի ինքնապաշտպանական հերոսամարտի օրերին Մորուք Կարոյի կողքին իր անվրեպ կրակոցներով աչքի է ընկնել քաջամարտիկ Մարթան: Նա Կարոյի առաջարկով հագել է տղամարդու հագուստ, ուսին գցել Բերդանկա հրացան: Կարոյի հետ հավասար նա կռվել է թուրքերի և քրդերի դեմ: 1915 թվականի մայիս-հունիսին մարդասպանների հզոր բանակը, մինչև ատամները զինված, հարձակվել է Տարոն աշխարհի վրա: Մշո և Սասնո հայ բնակչությունը դուրս է եկել ինքնապաշտպանության: Սակայն նկատվել է փամփուշտների պակաս, շատերը, հատկապես կանայք, զինվել են բահերով, փայտերով, մինչև անգամ քարերով[466]:

---

[464] **Հեբոյան Ա.,** նշվ. աշխ., էջ 36:
[465] Տե՛ս նույն տեղում:
[466] Տե՛ս նույն տեղում, էջ 43-44:

Եթե Տարոնի հայությունը դուրս էր եկել ինքնապաշտպանության, ապա թուրքերն ու քրդերը՝ թալանի, բռնաբարության ու բնաջնջման: Մեկը մյուսի ետևից ետ էին շպրտվում քրդական ու թուրքական ոհ-մակների հարձակումները: Թուրքական ուժերը ստացել էին նոր հա-մալրում և նորից հարձակման անցել: Կանանց խմբերից մեկը՝ Մար-թայի ղեկավարությամբ, անվրեպ կրակոցներով կասեցրել էր թշնամու մի խմբի հարձակումը՝ ցուցադրելով աներևակայելի դիմադ-րություն: Թուրքական հրամանատարությունը, ընկնելով ծանր դրու-թյան մեջ, ստիպված զինադադար էր հայտարարել[467]:

Շուտով թուրքական բանակը, տասնապատիկ հզորացած, նորից անցել էր հարձակման: Հայերը զենք ու զինամթերք չունեին, պակասել էր դիմադրող ուժը: Կանանցից շատերը ինքնասպան էին լինում՝ թուրք ու քուրդ ոճրագործների ձեռքը չընկնելու համար:

Անհավասար մարտում ֆիդայիները, նրանց հետ նաև Մարթան, կռվել են քաջաբար: Նրանք կռվել են մինչև ուշ գիշեր, հետո օգտվելով խավարից, ճեղքելով պաշտպանման շղթան՝ չքացել են Կեպին սարի անտառներում: Օգոստոսի 2-ից հետո, երբ Սասունն արդեն վերջին օրն էր ապրում[468], Ռուբենի խորհրդակցության արդյունքում որոշվել էր հեռանալ Սասունից: Մորուք Կարոն և Մարթան դարձել էին բնակչու-թյան գաղթի կազմակերպիչներ, որոնք զենքով պաշտպանում էին հայրենակիցներին քուրդ խուժանի հարձակումներից:

Նույնիսկ եղել են դեպքեր, երբ Մարթան անվրեպ կրակոցներով քարաժայռերի ծերպերից վերահսկել է գաղթականների ճանապարհի անվտանգությունը: Նա նույնպես, գաղթականության հետ կրելով մեծ տանջանքներ ու չարչարանքներ, Մորուք Կարոյի հետ միասին Անդրա-նիկի զորքի հետ մտել է Արևելյան Հայաստան[469]:

---

[467] **Հեբոյան Ա.,** նշվ. աշխ., էջ 45:
[468] Տե՛ս նույն տեղում, էջ 54:
[469] Տե՛ս նույն տեղում, էջ 70-71:

Մարթան իր սիրելի Մորուք Կարոյի հետ մասնակցել է Թալինի բերդի գրավմանը (1918 թվականի մայիսի 5-ին), Սարդարապատի ճակատամարտին: Մորուք Կարոյի հետ միասին նրանք հաստատվել են Թալինի շրջանի Ահագչի (Զովասար) գյուղում, որի հարևանությամբ Ոսկեթաս գյուղում հաստատվել էր նրանց հավատարիմ ընկեր, Սասունի հերոսամարտի առասպելական հերոս ֆիդայի Չոլոն[470]:

Թվում է, թե նշանավոր ֆիդայիների կյանքը նոր պայմաններում հարմարավետ ու հանգիստ վիճակում կլիներ: Բայց այդպես չեղավ: Բոլշևիկյան հալածանքների արդյունքում իբրև ժողովրդի թշնամի 1937 թվականին անհիմն ու անհեթեթ մեղադրանքով (իբրև կոլտնտեսության եզներին է ծեծել) ձերբակալվել է և խորհրդային բանտերում իր մահկանացուն է կնքել նշանավոր հայդուկապես Չոլոն: Չոլոյի նման Մորուք Կարոն և Մարթան, դժբախտաբար, հարազատ հողի վրա ևս հանգիստ չունեցան՝ ենթարկվելով բոլշևիկյան անագորույն հալածանքին: Մորուք Կարոն ազատվեց հրաշքով: 1930 թվականին, Արաքս գետով անցնելով ՀԽՍՀ սահմանը, հաստատվեց Իրանի Համադան քաղաքում, որտեղ 1949 թվականի դեկտեմբերի 6-ին կնքեց իր մահկանացուն[471]: Մորուք Կարոյի փախուստից հետ Մարթային ձերբակալեցին և երեք աղջիկների հետ զանազան տանջանքներից հետո 6 ամիս պահեցին Երևանի բանտի նկուղներում, այնուհետև աքսորեցին Ղազախստանի Ակմոլինսկի շրջան: Հինգ տարի աքսորավայրում տանջվելուց հետո հերոսուհուն հաջողվել է կրկին վերադառնալ Ահագչի գյուղ: Այստեղ էլ սարսափելի հալածանքներից հետո նվիրվելով ընտանիքին ու հարազատներին՝ 1983 թվականի հոկտեմբերի 1-ին Մարթան կնքել է իր մահկանացուն[472]:

Սասունի հերոսամարտի տարիներին եղել են հերոսուհի հայուհիներ, որոնք, դիմելով անձնազոհության, հանձն են առել և Սասուն տե-

---

[470] **Հեբոյան Ա.,** նշվ. աշխ., էջ 82-83:
[471] Տե՛ս նույն տեղում, էջ 98-99, 226:
[472] Տե՛ս նույն տեղում, էջ 214:

ղափոխել անհրաժեշտ զենքն ու զինամթերքը: Նման անվախ ու քաջասիրտ հայուհիներ էին **Հալեպի Երրերակը՝ Երիցուհի Վարդուհի Մուրադյանը, Լուսյա Գրիգորյանն** ու **Ֆերիդե Սահակյանը**:

1914-1918 թվականներին Հալեպի և Ջեզիրեի սասունցիները այնքան էին մտահոգվել իրենց հայրենակիցների ճակատագրով, որ խմբեր էին կազմել և մեծ քանակությամբ զենք ու զինամթերք էին տեղափոխել՝ պատսպարելով ապահով վայրերում: Նրանց նպատակն էր գնալ Սասուն: Սակայն մատնության հետևանքով շատերը ձերբակալվել էին, ոմանք էլ գնդակահարվել[473]: Այդ ճգնաժամային օրերին երեք անձնազոհ և հանդուգն սասունցի կանայք՝ *Երիցուհի Վարդուհի Մուրադյանը, Լուսյա Գրիգորյանը* և *Ֆերիդե Սահակյանը*, հանձն էին առել զենքերի փոխադրության, զինապահեստների պահպանման, ինչպես նաև իրենց հայրենակիցների հոգատարության գործը[474]:

Այս հայուհիների գործակցությամբ մի քանի սասունցիների խմբեր երկար ճանապարհ էին կտրել՝ իրենց ժողովրդին օգտակար լինելու համար: Այս կանայք վճռական դեր են կատարել նաև Դեր Զորի հազարավոր տարագիրների փրկելու ուղղությամբ: Այս տարեգիրները վայելել են սասունցի ջրաղացատերերի և փռատերերի պաշտպանությունը, որոնք, իրենց կյանքը վտանգելով, մահապարտներին ազատության ճանապարհ են հարթել[475]:

Կարմիր Իրիցու գերդաստանից Մարի Օհանյանը հետևյալն է վկայել Թել Սապիի ջրաղացպան իր հոր մասին, որը, իր ազգային արժանապատվությունից դրդված, փրկել էր արաբների ձեռքն ընկած բազմաթիվ հայուհիների. «Թիլ Սապիից գալով՝ հայրս տուն էր մտնում գիշերներով՝ հետը բերելով մի երկչոտ արաբուհու…: Այդ արաբ կանայք հայուհիներ էին, որոնք Եղեռնի հետևանքով արաբ շինականների կողմից տարվել էին Սիրիայի գյուղերը որպես սեփական ավար:

---

[473] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 91:
[474] Տե՛ս նույն տեղում:
[475] Տե՛ս նույն տեղում:

Քանի-քանիսների փախուստը կազմակերպել էր հայրս Թիլ Սապիի ջրաղացում, որոնք բեռնված անասուններով գալիս էին իր մոտ հացահատիկ աղալու: Մայրս հաջորդ օրը փրկվածներին հանձնում էր Տեր Մկրտիչ քահանա Մուրադյանին՝ նրանց հայության գիրկը վերադարձնելու համար»[476]:

Երիցուհի Վարդուհի Մուրադյանը, Լուսյա Գրիգորյանը և *Ֆերիդե Սահակյանը* իրենց հարազատ ժողովրդի գիրկը վերադարձածներին սիրով ընդունում էին՝ հետևելով նրանց բարօրությանը: Այս կանայք երկար տարիներ գործել և միշտ բարձր են պահել հայի ազգային արժանապատվությունը:

1915 թվականին Սասունի հերոսամարտի օրերին հայտնի են դարձել նաև հերոսուհիներ **Շուշանն** ու **Գյուլեն**: Երկուսն էլ Տալվորիկի իշխանական տներից: «Այս երկու քաջ կիները իրենց խմբերով բախտորոշ դեր մը ունեցան մեր շրջանի կռիւներուն մեջ,– գրում է Ռուբեն Տեր-Մինասյանը: Անոնց ներկայութիւնը, ցուցադրած կորովն ու քաջութիւնը պատճառ կըլլային հրահրելու կռուողներու եռանդը: Ափսոս որ Շուշանը և Կիւլէն եւս իրենց հարիւրաւոր քոյրերուն հետ ինկան Սասնոյ անհաւասար կռիւներու ընթացքին»[477]:

Պոնտոսի հայության ինքնապաշտպանական մարտերը և հայ հերոսուհի կանայք

Ինքնապաշտպանության դիմել է նաև Պոնտոսի հայությունը: Հատկապես նշանակալի էր Տրապիզոնի մոտակայքում գտնվող Շամպա և Թրե լեռներում ամրացած 700 տրապիզոնահայերի դիմադրությունը:

---

[476] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 91:
[477] **Ռուբէն**, նշվ. աշխ., էջ 82

Հայերի ղեկավարներն էին Զիլ Հովհաննեսը, Հակոբ Քեհյանն ու Միքայել Ջեյթունյանը[478]: 1915 թվականի հուլիս-հոկտեմբեր ամիսներին թուրքական կանոնավոր բանակի զորամասերը՝ զինված հրանոթներով և գնդացիրներով, փորձեցին ընկճել հայ մարտիկներին, բայց պարտություն կրելով՝ նահանջեցին: Որոշ ընդմիջումներով Պոնտոսի հայերը մարտնչեցին մինչև 1923 թվականի նոյեմբերը, երբ նավակներով ճեղքելով Սև ծովի ալիքները՝ հասան ռուսական ափ[479]: Նրանք վերջին 700 հայերն էին, որոնք, զենքները ձեռքներին, հեռացան հայրենի եզերքից: Ռուսական հողում ապաստանեցին թուրքական յաթաղանից փրկված տասնյակ հազարավոր հայեր:

Ստորև ներկայացնում ենք մի քանի դրվագ պոնտոսահայության (համշենահայության) ինքնապաշտպանությունից:

Տրապիզոնից ու նրա շրջակայքից բռնագաղթած շուրջ 100 հայ տղամարդ Թեքքե կայանում հարձակվել էր պահակների վրա, զինաթափել և հեռանալով լեռները՝ շարունակել էր կռվել թուրք բարբարոսների դեմ:

Ցեղասպանության առաջին օրերին Ջեմալ Ազիմ փաշայի հրամանով 40 հայ տղամարդու փորձել էին ծովում խեղդամահ անել, սակայն մահապարտները մերկ ձեռքերով հարձակվել էին ուղեկցող թուրք ոստիկանների վրա, բոլորին սպանել, բայց իրենք էլ զոհվել էին: Փրկվել էին միայն երկուսը՝ Ադամ Հովսեփյանը և շապինգարահիսարցի Անդրանիկը:

Տրապիզոնցի Հարություն Սարգսյանն իր երկու որդիների՝ Գուրգենի և Պարույրի հետ ծրագրել էր սպանել ջարդարար Ջեմալ Ազիմին և ապա զենքի կոչել հայերին: Սակայն նրանք ընկել էին թուրք ոստիկանների ձեռքը և սպանվել: Տրապիզոնցիներ Սեդրակ Սեյրանյանն ու

---

[478] «Վերապրած Գոհար Սարյանի վկայությունը՝ Տրապիզոնի հայության կոտորածների մասին», Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, հ. 3, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսակահայք, էջ 368-373:

[479] **Արզումանյան Մ.,** Հայաստան. 1914-1917, Երևան, 1969, էջ 387:

Երվանդ Տերտերյանը, իրենց տները վերածելով կրակակետերի, մինչև վերջին գնդակը կռվել էին թուրք հրոսակների դեմ, ապա անձնասպան եղել[480]:

Թուրք մարդասպանների դեմ զենք էր բարձրացրել Սև ծովի ափին՝ Տրապիզոնի մոտ գտնվող Կովատ Շամի հայ բնակչությունը, որի հերոսական պայքարը, մեր կարծիքով, հայոց 1915 թվականի դյուցազնամարտի՝ ցարդ արժանվույնս չլուսաբանված փառահեղ էջերից է:

Եղեռնի նախօրեին ինքնապաշտպանության կազմակերպման զգալի աշխատանք էր կատարվել Տրապիզոնի մերձակայքում գտնվող և քսան հայկական գյուղերից կազմված Ցոմուրա գյուղախմբում, բայց կուսակալ Ջեմալ Ազիմը, մի շարք երևելի հայերի խաբելով կամ պարտադրելով, ուղարկել էր՝ հայ բնակչությանը համոզելու, որ հանձնեն զենքերը և «զերծ մնան վտանգից»: Իրավիճակը ծանրացրել էր նաև այն հանգամանքը, որ հայ ղեկավարների մի մասի սպանվելու և ինքնապաշտպանության գլխավոր կազմակերպիչ Միսաք Թոռլաքյանի՝ Կովկաս ուղարկվելու պատճառով ժողովրդին համախմբելու ունակ մարդիկ չկային, ու վերջին պահին մարտախմբերն ու ժողովրդի մի մասը կոլեկտիվ ինքնապաշտպանության փոխարեն քաշվել էր լեռները, թեև հետո շատերը վերադարձել էին:

Առաջին ընդհարումը տեղի էր ունեցել տեղահանվող Շանա գյուղի մերձակա լեռներում և տևել մինչ երեկո: Հայերը երեք զոհ էին ունեցել, իսկ Ասլան բեյի 500 հոգանոց չեթեների խումբը, երեսուն սպանված ու վիրավոր տալով, հեռացել էր այդ լեռներից: Հաջորդ ընդհարման ժամանակ, հայտնվելով դարանում, չեթեների խումբը ցրվել էր:

Արդեն սեպտեմբերին Շանայի լեռներում գործում էին ութ մեծ ու փոքր մարտախմբեր, որոնցից միայն Հովհաննես Ղուկասյանի խումբն էր կազմված բացառապես երիտասարդներից: Մյուսներում կային նաև կանայք ու երեխաներ, իսկ ութերորդ խմբում Ճոշարա գյուղի պատանիներն ու աղջիկներն էին, որոնց մասին մյուս մարտիկներն իմացել

---

[480] **Կարապետյան Մ.,** նշվ. աշխ., էջ 146:

էին միայն խմբի ջախջախումից հետո, երբ ողջ մնացածները միացել էին մյուս խմբերին:

Յոթ մարտախմբերը միմյանց հետ ունեին մշտական կապ, վտանգի դեպքում նրանք համախմբվում ու կռվում էին միասին: Գրեթե բոլոր մեծ կռիվները տեղի են ունեցել Արգուլա լեռան վրա: Մարտիկները գիտեին նաև, որ Սյուրմենի լեռներում Գաբրիել Մատեյանի և Սև Կարապետի հրամանատարությամբ 30 հոգանոց ուժեղ մարտախումբ էր գործում, որը մեծ սարսափ էր տարածում շրջակայքում[481]:

Երկրորդ մեծ ընդհարումը տեղի է ունեցել աշնանը, երբ արդեն պետք էր սննդամթերքի պաշար հավաքել 1916 թվականի ձմեռը դիմավորելու համար: Մարտիկները հարձակվում էին քարավանների վրա, իջնում շրջակա հունական ու թուրքական գյուղերը: Բոլորը գիտեին լեռներում ու անտառներում ապաստանածների մասին: Թուրք գյուղացիներն արդեն զգուշանում էին ցեղասպանություն վերապրած հայերին սպանելուց՝ համոզված լինելով, որ անպատիժ չեն մնա: Հոկտեմբերի սկզբին թուրքերը մեծ հարձակում ձեռնարկեցին Արգուլա լեռան վրա, բայց հանդիպելով ուժեղ դիմադրության՝ այդպես էլ չհամարձակվեցին անտառ մտնել:

Նոյեմբերի վերջին սկսվեց հայտնի հրոսակապետ Լութվի Չաուշի հարձակումը: Նրա 300 հոգանոց խումբը կազմված էր տարիներով անտառներում ապրած ավազակներից: Տեղահանությունների սկզբից նրանք հաջողությամբ հետամուտ եղան փախստական հայերին «որսալուն» և նախկին ավազակներից շուտով վերածվեցին «հերոսների»: Հանդուգն ու անսպասելի հարձակմամբ բավական առաջ շարժվելով՝ Լութվին կարողացավ խզել հայերի մարտախմբերի միջև կապը և ջլատել նրանց ուժերը: Սկսվեց երեքժամյա կատաղի մենամարտ, որը երկու կողմերի համար էլ կյանքի ու մահվան պայքար էր: Շուտով թուրքերը, չդիմանալով հայերի հանդուգն հակագրոհներին, փախուստի դիմեցին:

---

[481] **Թոռլաքեան Մ.,** Օրերուս հետ, Լոս Անջելես, 1953, էջ 18:

Հաջորդ օրը հայկական մարտախումբը Կալաֆկա լեռից հանգիստ դիտեց, թե ինչպես մի քանի հազար զինված թուրքեր պաշարեցին Արգուլան, և 4-5-ժամյա հրաձգությունից հետո գրոհեցին անմարդաբնակ լեռան վրա և հազարավոր փամփուշտներ վատնելով՝ գտան միայն իրենց թողած հինգ դիակները[482]:

1916 թվականի կեսերին ռուսական զրահանավով տասնմեկ զինակիցների հետ Տրապիզոն վերադարձավ Միսաք Թոռլաքյանը, որը Յոմուրայի գյուղախմբի ինքնապաշտպանության ոգին էր և հետագայում սատկեցրեց Բաքվի 30000 հայության գլխավոր դահիճներից մեկին՝ Ադրբեջանի ներքին գործերի նախարար Բեհրութ խան Ջիվանշիրին: Սև ծովում ռուսական առափնյա զորքերի հրամանատարությունը նրանց ուղարկել էր հետախուզական առաքելությամբ, սակայն Մ. Թոռլաքյանի հիմնական նպատակն էր լեռներում ապաստանած հայերին փրկելը[483]: 1915-1916 թվականների ձմեռը սաստիկ էր: Վերապրածները փակվեցին քարայրներում, ու նրանց գտնելն անկարելի էր: Շուտով Մ. Թոռլաքյանը միացավ լեռներում ապաստանած մարտիկներին:

1915 թվականի մայիսի 13-ին հայկական Պոնտոսում սկսված եղեռնի մասին լուրը Կովկաս հասցրած հրամանատարի վերադարձը խանդավառել էր բոլորին: 1916 թվականի փետրվարին Շանա գյուղում տեղի ունեցավ նախավերջին ու ամենակատաղի մարտը: Մի քանի հազարանոց խուժանն ու բանակային ստորաբաժանումները խայտառակ պարտություն կրեցին: Մութն ընկնելուն պես թուրքերը դադարեցրին կռիվը, իսկ հայերը տեղափոխվեցին Կալաֆկա լեռ: Հաջորդ օրը վաղ առավոտից վերստին հարձակման անցած թշնամին, դարձյալ տասնյակ հազարավոր փամփուշտներ վատնելով, կեսօրից հետո միայն կարողացավ գրավել դատարկ Արգուլան:

Հուսահատված կառավարությունն ազատ արձակեց և հայերի դեմ

---

[482] **Թոռլաքեան Մ.,** նշվ. աշխ., էջ 22:
[483] Տե՛ս նույն տեղում, էջ 32:

ուղարկեց նահանգի բոլոր կալանավորներին: Շուտով թշնամու 4000-անոց ուժերը նեղ օղակի մեջ առան Կալաֆկան: Սա ամենաերկար ու ծանր կռիվն էր: Թուրքերը, բառիս բուն իմաստով հանձնվելով, փորձեցին առաջ շարժվել: Կռիվը շարունակվեց կեսգիշերից հետո էլ, մինչև մարտիկները կանանց ու երեխաների հետ կարողացան ճեղքել պաշարումն ու հեռանալ: Իսկ հաջորդ օրը հայկական մարտախմբերը վերստին Արգուլայի վրա էին[484]:

Սննդի ու զինամթերքի պակասի պատճառով սյուրմենցիները վերադարձան իրենց լեռները, Կալաֆկայի մարտախմբերը մնացին իրենց երբեմնի գյուղերի մերձակայքում, իսկ կռվողների մեծ մասը տեղափոխվեց Արգուլա:

Փետրվարի կեսերին թշնամու գյուղերը մեծ եռուզեռի մեջ էին: Թուրքերը բոլոր կողմերից հրդեհել էին Արգուլայի անտառները: Երեք կողմում ամեն ինչ լափող համատարած կրակն էր, չորրորդ կողմում՝ բազմահազարանոց թշնամին: Մարտիկները որոշել էին յուրաքանչյուրը մեկ կնոջ կամ աղջկա հետ ճեղքել պաշարման շղթան: Մութն ընկնելուն պես նրանք կարողացել էին զարմանալիորեն աննկատ անցնել թուրքերից ընդամենը 700-800 մետր հեռավորության վրա և դուրս գալ սեղմվող հրե օղակից: Իսկ մի քանի օր անց իմացել էին, որ նույն օրը ռուսները գրավել էին Ռիզան, ու որպես ազդանշան՝ լեռնագագաթներից մեկի վրա հսկայական խարույկ էին վառել, որն իրենք տեսել էին, բայց նշանակությունը չէին հասկացել: Ռուսական հարձակումից սարսափահար թուրքերը դիմել էին փախուստի, և թվում էր, թե վերապրած հայությունը փրկված է: Ապրիլի 16-ին, երբ ռուսական զորքերը մտել էին Տրապիզոն, հունական Լիվերա գյուղի մերձակայքում գտել էին շուրջ 400 փախստական հայերի, որոնց վաղուց զոհված էին համարում: Անցնելով ռուսական գոտի՝ մարտիկներից երեսունհինգն իսկույն զինվորագրվել էին ու մեկնել ռազմաճակատ, սակայն ռուսա-

[484] **Թոռլաքեան Մ.,** նշվ. աշխ., էջ 22:

կան հրամանատարությունը նրանց նկատմամբ անթաքույց անբարյացակամ վերաբերմունք էր դրսևորել: Վերապրածներից շատերն ի վերջո հաստատվել էին Սոչիում ու նրա շրջակայքում[485]:

Ոստիկանության հետ մի մեծ ընդհարումից հետո Մ. Թոռլաքյանի մարտախմբի քսանհինգ-երեսուն մարտիկներ ամրացել էին դիրքերի վերածված մի քանի տներում՝ տասնհինգ հոգու ուղարկելով լեռան տարբեր կողմեր և ստեղծելով մեծաքանակ ուժի առկայության տպավորություն: Այդ ծանր մարտը տևել էր մինչ ուշ գիշեր: Հարձակվող թշնամին, հիսուն զոհ տալով, ոչ մի հաջողության չէր հասել, անգամ չէր կարողացել միմյանցից մեկուսացնել հայկական դիրքերը: Ոստիկանների հետ առաջին ընդհարման ժամանակ հայերը, գերեվարված թուրքերին զինաթափելով, ուղարկել էին Տրապիզոն՝ կուսակալ Ջեմալ Ազիմին նամակով խնդրելով հաջորդ անգամ իրենց դեմ ուղարկվելիք ժանդարմներին զինել ավելի ժամանակակից զենքերով: Կատաղած կուսակալը ոչ միայն ներում էր շնորհել բոլոր ավազակներին, հանցագործներին ու դասալիքներին, այլև յուրաքանչյուր հայի գլխի դիմաց հարյուր ոսկի էր խոստացել և հայ մարտիկների դեմ հանել 2500 հոգանոց զինված ուժ, որոնցից 800-ը՝ բանակային, իսկ 300-ը՝ ժանդարմական ստորաբաժանումներից[486]:

Թշնամու մի մասը, Տրապիզոնից հարավ-արևմուտք գտնվող լեռներում եռօրյա ապարդյուն կռիվներում տասնյակ զոհեր տալուց հետո նահանջելով, միացել էր Շանա գյուղի վրա գրոհողներին: Հինգ օր շարունակ թշնամին, վախենալով անտառ մտնելուց, անիմաստ կրակում էր ծառերի վրա և միայն օգնական ուժ ստանալուց հետո գրոհով մտել էր Արգուլայի արդեն դատարկ անտառները, իսկ հայ մարտիկները Կալաֆկայի բարձունքներից դիտել էին այդ անօրինակ «պայքարը»: Թշնամին ի վերջո հասել էր Կալաֆկա ու ձյան վրա եղած հետքերից հասկանալով, որ մարտիկներն անտառ են մտել, վախեցած վերադար-

---

[485] **Թոռլաքեան Մ.,** նշվ. աշխ., էջ 46-47:
[486] Տե՛ս նույն տեղում, էջ 58:

ձել էր գյուղ: Գրեթե սնունդ չունեցող, սովահար հայ մարտիկների խումբը կենտրոնացել էր հազիվ 1000 մետր շրջագծով անտառապատ բարձունքում՝ հսկելով ճանապարհի բոլոր կարևոր հատվածները: Վիճակը բավական լուրջ էր, և կարգադրվել էր նախահարձակ չլինել, թուրքերի երթևեկը չարգելել, իսկ անտառ նրա մտնելու դեպքում՝ հինգ-վեց քայլից նոր միայն կրակել:

Շուտով թշնամին երեք ուղղություններով անցել էր հարձակման: Կատաղի կռիվը տևել էր մինչ ուշ գիշեր: Թուրքերն անգամ օդ էին բարձրացրել ինքնաթիռ, որը, սակայն, թռիչքի ժամանակ խափանվել էր և ծովն ընկել: Գիշերը ճեղքելով պաշարումը՝ մարտիկները քաշվել էին Արգուլա, որն ինքնապաշտպանության համար ավելի հարմար վայր էր: Ի դեպ, 60 հոգանոց խմբում միայն քսաներեքն էին մարտիկներ, իսկ մյուսները կանայք, երեխաներ ու ծերունիներ էին: Առավոտյան, երբ թուրքերը հասկացել էին կատարվածը, արդեն հարյուրից ավելի զոհ ունեին, չէին համարձակվել գրոհել Արգուլայի վրա, այլ միայն հրդեհել էին անտառները՝ հուսալով գոնե այդ կերպ ոչնչացնել մարտիկներին:

Իմանալով Ռիզայի անկման մասին՝ հայերի մարտախումբը փորձել էր անցնել ռուսների գրաված տարածք, բայց երբ ռուսների հարձակումը դադարեցվել էր, հայ մարտիկները մնացել էին թուրքական զորքերի խմբավորման անմիջապես կենտրոնում: Անգամ այդ վիճակում, երբ ամեն պահի կարող էին նկատվել ու լիովին ոչնչացվել, նրանք գտան և սպանեցին տեղի հայության գլխավոր ջարդարարներից մեկին, ազատեցին թուրքերի առևանգած մի քանի հայուհիների: Ի վերջո, բազմաթիվ արկածներով անցան ճակատի գիծը[487]:

1917 թվականի օգոստոսի 15-ին արդեն ռուսական բանակի հակահետախուզությունում ծառայող Միսաք Թոռլաքյանը մի զորաջոկատի հետ ստացավ հանձնարարություն՝ ոչնչացնել գիշերները պարեն ու

[487] **Թոռլաքեան Մ.,** նշվ. աշխ., էջ 67-69:

ռազմամթերք փոխադրող թուրքական նավերը: Առաջադրանքի կատարումից հետո, տեսնելով թուրքերի բարոյալքված վիճակը, ռուս հրամանատարն առաջարկեց ծովային հրանոթների կրակի աջակցությամբ այդ փոքրիկ ջոկատով գրոհել մերձակա Թերմե քաղաքի վրա: Ռազմական խորամանկությունների միջոցով իր ուժերն իրականից անհամեմատ մեծ ցույց տալով՝ ջոկատն արագորեն գրավեց ճանապարհի վրա գտնվող մի քանի գյուղերը, իսկ երբ հասավ Թերմե, պարզվեց, որ քաղաքի 10000-12000-անոց թուրք բնակչությունն արդեն փախել է[488]: Հայ մարտիկներն սկսեցին պայթեցնել զինապահեստներն ու պետական կարևոր շենքերը, երբ հանկարծ մերձակա անտառից լսվեցին հրաձգության ու ձեռնառումբերի պայթյունների ձայներ, ապա քաղաք մտան մոտ յոթանասուն հայ վերապրածներ՝ մարտիկներ, ծերեր, կանայք ու երեխաներ, որոնց առաջնորդն էր Չարշամպա գյուղի քահանա Քալենճյանը, որին թուրքերը «Խենթ քահանա» էին կոչում: 1915 թվականին՝ Չարշամպայի տեղահանության ժամանակ մարտախմբով լեռները քաշվելիս, նա իր տան դռան վրա թուրքերեն գրություն էր թողել. «Տանն իմ ընտանիքի հանգիստը խանգարողի հերը կանիծեմ, շանսատակ կանեմ, լինի զինվորական, պետական պաշտոնյա, թե ոստիկան»[489]: Մոտ վեց ամիս թուրքերը չմտան այդ տուն: Իսկ հետո մեծաքանակ խուժանը եկավ ու հիմնահատակ ավերեց և՛ Չարշամպան, և՛ տունը: Այս խումբն իր հանդուգն գործողությունների շնորհիվ ամբողջ շրջակայքում մեծ հռչակ էր ձեռք բերել: Իսկ քահանան իր հոտի հետ անցել էր Ռուսաստան, պատերազմի ավարտից հետո՝ վերադարձել, 1922 թվականին ձերբակալվել էր և երկու խմբապետերի հետ քեմալականների ձեռքով ողջակիզվել:

1915-1923 թվականներին ութամյա գոյամարտ տեղի ունեցավ Ջանիկի լեռներում՝ Սամսունում:

1915 թվականի ամռան կեսին լեռներում ապաստանած խմբերը

---

[488] **Թոռլաքեան Մ.,** նշվ. աշխ., էջ 82-83:
[489] Տե՛ս նույն տեղում, էջ 101-102:

կապ հաստատեցին միմյանց հետ ու մահվան գնացող տարագիր քարավաններին ուղեկցող ժանդարմների վրա անակնկալ հարձակումներով ազատեցին բազմաթիվ հայերի, ինչպես նաև հայթայթեցին զենք ու զինամթերք: Ջանիկի լեռներում ամրացած գրեթե բոլոր մարտախմբերում էլ կային կանայք ու երեխաներ: Վերապրածները հիշում են, որ այդ ժամանակ Քելթեփեի հատվածում կար շուրջ 150 կռվող (փոքրիշատե զինված էին 50-ը), իսկ Չարշամպայի կողմերում՝ մի 70-80 հոգանոց խումբ: Մարտախմբեր կային նաև Սամսունում: Օգոստոսին ժանդարմական կենտրոնատեղի Քեոքլուկ գյուղում մեծ թուրքական ստորաբաժանման ծանր պարտությունն ու յոթ ժանդարմի սպանվելը սարսափ տարածեցին շրջակայքում:

Հայդուկային պայքարն ուժեղանում էր: Օրեր անց մարտիկներն իմացան, որ Քեոքլուկում թուրքերը ողջակիզելու համար գյուղի եկեղեցում հավաքել են մնացած 50 հայ ծերունիներին և 85-ամյա Միքայել քահանային: Երբ 35 հոգանոց մարտախումբը տեղ հասավ, ողջակիզվող հոգևորականը հասցրեց տեսնել սկսված հզոր հարձակումն ու վերջին օրհնությունը տալ մարտիկներին: Թշնամին, տասը սպանված ու չորս գերի թողնելով, փախուստի դիմեց: Այդ օրը մարտիկներն առանց խտրության կոտորեցին հանդիպած բոլոր թուրքերին: Քեոքլուկն ամայացավ, ու թուրքերն այլևս երբեք չհամարձակվեցին այնտեղ վերաբնակվել[490]:

Սեպտեմբերի 6-ին մարտիկներին պաշարեց Սուլեյմանի չեթեների ստվար խումբը, որին հենց իրենք էին որոնում՝ գործած չարիքների վրեժն առնելու համար: Կռիվը սկսվելուն պես հայասպանն ընկավ, իսկ չեթեները՝ փախան: Մարտիկները հեռանալիս ուսանելի դաս տվեցին նաև իրենց վրա կրակ բացած մի թուրքական գյուղի:

Երբ մարտախմբերում եղած պատանիները փոքրիշատե փորձ ձեռք բերեցին, նրանցից կազմվեց 13 հոգանոց մի առանձին խումբ,

---

[490] **Յովակիմեան Յ. (Արշակունի),** Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Պէյրութ, 1967, էջ 33:

որի առաջին գործը եղավ (թեև հրամանատարությունը խստորեն արգելել էր) վրեժխնդրությունը հայտնի հայասպան չաուշ Իսմայիլից: Գազանը տանը չէր, և վրիժառուներն սպանեցին նրա որդուն ու ազատեցին մի առևանգված հայ աղջկա[491]:

Հայկական Պոնտոսի հայերը քարավանների վրա հարձակումներով բավական մթերք ձեռք բերեցին ու 1915-1916 թվականների ձմեռը հանգիստ անցկացրին հսկա քարայրներում: Փոքրիկները գրել ու կարդալ էին սովորում, պատանիները՝ զբաղվում զինավարժությամբ:

Գարունը դեռ չեկած՝ խմբերը վերստին կապ հաստատեցին միմյանց հետ, ապա գերված թուրք սուրհանդակից խլված նամակից իմացան, որ Սեբաստիայից մեծաքանակ զինվորական պարենով քարավան է գալիս, իսկ փետրվարի 25-ին իրենց դեմ մեծ հարձակում է սկսվելու: Հայերը, տիրանալով քարավանին, լիովին լուծեցին իրենց սննդի ու զինամթերքի հարցը, առաջին անգամ ունեցան ձեռնառումբեր և ոգևորված սպասեցին գալիք մեծ կռվին:

Երկօրյա ծանր կռիվներից հետո, երբ 150 մարտիկներն արդեն օրհասական վիճակում էին, օգնության հասան այլ մարտախմբեր, ու թշնամին մեծ կորուստներով ետ շպրտվեց: Այդ կռվում զոհվեց մարտախմբի հրամանատար Տ. Զեյթունճյանը:

Փետրվարի 25-ին թշնամին, վերադասավորելով ուժերը, անցավ վերջին ու վճռական հարձակման, բայց արդեն տեղ էին հասել լեռներում ամրացած բոլոր հայդուկային խմբերը, և մի քանի հազարանոց թշնամին ընդամենը 350 մարտիկներից ուղղակի խայտառակ պարտություն կրեց՝ կորցնելով անգամ ընդհանուր հրամանատարին: Իսկ հայերը տասներկու զոհ ունեցան:

Շուտով ռուսական բանակը մտավ Տրապիզոն, բայց Ջանիկի լեռներում ապաստանած շուրջ 2000 հայերից նավեր բարձրանալ թույլ

---

[491] **Յովակիմեան Յ. (Արշակունի),** Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Պէյրութ, 1967, էջ 42-43:

տրվեց միայն կանանց ու երեխաներին[492]: Հայ մարտիկները, հետո միայն հասկանալով, որ ռուսական հրամանատարության համար իրենք լոկ թշնամու թիկունքում գործող հարվածային ու քայքայիչ ուժ էին, դարձյալ քաշվեցին լեռներ:

Նոյեմբերի 26-ին չորս թնդանոթ ունեցող բազմահազարանոց թշնամին, որի կեսը կանոնավոր զորքեր էին, հզոր հարձակում ձեռնարկեց թվով 450 հայ մարտիկների դեմ, որոնք պիտի պաշտպանեին նաև 200 հույն ընտանիքների: Կեսօրից հետո թշնամին բավական մեծ թվով դիրքեր գրավեց: Մութն ընկնելուց հետո, երբ հայերը դաշույններով ու ձեռնառումբերով դիմեցին հուսահատ հակահարձակման, տեղանքում կողմնորոշումը կորցրած թուրքերն սկսեցին կոտորել միմյանց: Բայց այդ արյունալի օրը հայերից շատ կյանքեր խլեց:

1916-1917 թվականների ձմեռը նույնպես ցուրտ և ծանր էր: Մատնության հետևանքով զոհվեցին մարտախմբի հրամանատար Զիլ Օվանեսը (Հովհաննես) և Ագդաղի լեռներից Կովկաս անցնելու համար այստեղ եկած Ադամ Չաուշը, որը Յոզղաթի դիմադրության հրամանատարներից էր: Քեոքլուկում հաստատվել փորձող թուրք գաղթականները, անմոռանալի դաս ստանալով, ընդմիշտ հեռացան, իսկ մարտիկները հրդեհեցին գյուղը: Նրանք սպանեցին հայերի հայտնի դահիճ Քեոմյուրիե օղլուին[493]:

Ագդաղ լեռը (2272մ), որը գտնվում էր Սեբաստիայի և Անկարայի նահանգների վարչական սահմանագծի վրա, Սեբաստիա քաղաքից ավելի քան 90 կմ դեպի հարավ-արևմուտք, Հայոց մեծ եղեռնի ընթացքում դարձավ թուրք ցեղասպանների դեմ արևմտահայության մղած ինքնապաշտպանական հերոսամարտերի հայտնի օջախներից մեկը: Լեռան վրա ապաստանած հարևան Չաթ գյուղի (Մեծ և Փոքր Չաթեր) բնակչությունը, ինչպես նաև մի քանի այլ գյուղերի բնակչության ջարդերից փրկված բեկորները մոտ 4 տարի պայքարեցին թուրք բարբա-

---

[492] **Յովակիմեան Յ. (Արշակունի),** նշվ. աշխ., էջ 46:
[493] Տե՛ս նույն տեղում:

ռոսների դեմ և այդ պայքարից դուրս եկան հաղթանակած: Ընդ որում՝ գոյատևման պայքարը մղվում էր ոչ միայն թուրքերի, այլ նաև բնության դժնդակ պայմանների ու սովի դեմ, որոնք ոչ պակաս անողոք թշնամիներ էին[494]:

Այն բանից հետո, երբ թուրքական ոստիկանական ուժերի և հրոսակախմբերի կողմից Չաթը ենթարկվեց բարբարոսական հարձակման և կիսով չափ դատարկվեց, արդեն «օրինական» աքսորի նպատակով կազմվեց 1000 հոգանոց մահվան քարավան՝ բաղկացած կանանցից ու երեխաներից: Աքսորյալների քարավանը ճանապարհին՝ Աղյորենի ձորում, գլխովին ոչնչացվեց թուրք ջարդարարների կողմից: Սպանդից ողջ մնացած մոտ 100 վիրավոր չաթցիների Ադամ Չավուշի հայդուկները գտան և տարան Ագդաղ, որտեղ, սակայն, նրանց մեծ մասը ստացած վերքերից հետագայում մահացավ:

«Նահատակուողներու կարաւանին մէջ գտնուեցան երկու հերոսուհիներ, տիկիններ Զարդար Հապէշեան, Պաճի Հաճը Մկրեան քոյրեր, որոնք արտակարգ արիասրտութեամբ մը դահիճներու ձեռքէն կացինը խլեցին, երկու հոգի սպաննելէն վերջ նահատակուեցան:

Կատղած վագրերէն աւելի դաժան եղող խուժանը. հնձեց բոլոր հայերը աննկարագրելի բարբարոսութեամբ եւ Աղէօրէնի ձորը յորդեցաւ անմեղներու կարմիր արիւնով…

Կոտորածն ու կողոպուտը վերջացած էր: Տխրահռչակ Հասան պէյ հրամայեց 35 հատ հայ գեղեցկուհիներուն, որ թրքանան, եթէ կուզեն ազատիլ չարաչար մահանալէ: Այդ հայուհիները խիզախօրէն մերժեցին կատարել դահճապետին պատգամը՝ առաջարկելով իսկոյն գնդակահարել զիրենք:

Անոնցմէ էին Օր. Կիւլիւ Պոզոյեան՝ 17 տարեկան, Օր. Ղազարեան՝ 17 տարեկան, ուզունլուցի Օր. Շնորհիկ: Համոզելու բոլոր ճիգերը

---

[494] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, խմբ. Ա. Դարեան եւ Ա. Երկանեան, Պէյրութ, 1988, էջ 774:

ապարդիւն անցան: Անոնք ինքնաբերաբար շարուեցան ոստիկաններուն առջեւ:

Դժոխապետը արիւնոտած գանկով եւ հրդեհուած աչքերով հրաման արձակեց սպանել զանոնք:

Եւ չաթցի 35 գեղանիներ տապարի անողոք հարուածներով նահատակուեցան՝ վայրկենապէս»[495]:

Արեւմտյան Հայաստանի շատ շրջանների նման, Սեբաստիայի գավառի Թոնուսի խոշոր գավառակն էլ զոհ գնաց Հայոց մեծ եղեռնի ամենակուլ մոլուցքին: Գավառակի կենտրոն Կամարակ գյուղաքաղաքը և ավելի քան երկու տասնյակ հայկական գյուղեր գլխովին ոչնչացվեցին: Ինքնապաշտպանության դիմած միակ գյուղը Տենտիլն էր, որի բնակչության միայն շատ փոքր մասը կարողացավ փրկվել և ապաստանել Ագդաղ լեռան վրա, այստեղ արդեն պայքարը շարունակվեց մինչև Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունը: Տենտիլի 4000-ոց բնակչությունը հարևան հայկական գյուղերի դաժան ճակատագրին չարժանանալու համար 200 զինված երիտասարդների պաշտպանության ներքո ապաստան գտավ գյուղի մերձակայքում գտնվող ժայռի հսկա քարանձավում[496]:

Շուտով թուրքական խոշոր ուժերը՝ 1300 կանոնավոր զինվոր և 500 հրոսակ, գրոհեցին քարանձավը, բայց այն գրավել չկարողացան: Չօգնեց նաև թուրքական հրետանու գնդակոծությունը: Այնժամ հակառակորդն անցավ երկարատև շրջափակման և որոշեց ըմբոստներին ծնկի բերել ծարավի միջոցով: Սա, իրոք, շատ գործուն միջոց էր. քարանձավի առջև կար հորդաբուխ աղբյուր, որից, բնականաբար, թուրքերը թույլ չէին տալիս օգտվել ապստամբներին: Սակայն որոշ ժամանակ անց, հայտնվելով ծարավից մեռնելու իրական վտանգի առջև, ավելի քան 150 զինված քաջեր, այդ թվում՝ և կանայք, դիմեցին խելահեղ գիշերային գրոհի: Աղբյուրի մոտ դիրքավորված հակառակորդը

---

[495] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 796:
[496] Տե՛ս նույն տեղում, էջ 775:

ետ շպրտվեց: Չնայած հրետանային կատաղի գնդակոծությանը՝ մինչև լուսաբաց հայ կանայք կարողացան ջրի մեծ պաշար տեղափոխել քարանձավ և միառժամանակ ապահովել այնտեղ գտնվողների գոյությունը:

«Ցնորական էր տեսարանը: Ոստիկանները կը տապլտկէին իրենց ձիերու ոտքերուն տակ: Պահ մը վեց ոստիկանները պաշարուեցան: Ակնթարթի մէջ զինաթափ եղան եւ տեղնուտեղը գնդակահարուեցան: Վերջապէս կռիւը տեւեց երեք ժամ: Ոստիկան ջոկատը տասներկու դիակներ ձգելով փախուստ տուաւ:

Չաթի կիներն ու աղջիկները մեծ մասնակցութիւն բերին այս կռուին: Անոնք ամազոնուհիներու քաջասրտութեամբ կը կռուէին յարձակող ոստիկաններուն դէմ, ռումբի նման քարեր նետելով կամ գլորելով: Նետածնին չէր վրիպեր: Բազմաթիւ ոստիկանների վիրաւորեցին անոնք:

Այդ զմայլելի խոյանքը մեծ տպաւորութիւն գործեց Սեդրակին վրայ եւ Սամուէլին դառնալով գոչեց.

– Սամուէ՛լ, մեր քոյրերը մատակ առիւծներու պէս կռուեցան. նետած քարերին պարապը չանցաւ:

– Իրաւունք ունիս,- պատասխանեց արիարանց Սամուէլը,- անոնց տեսած զուլումը՝ աշխարհի մէջ ոչ մէկ ազգի իգական սեռը տեսած ու կրած չէ, պէտք էր որ մեյմեկ դիւցազնուհիներ ըլլային»,– գրում է ականատես հեղինակը[497]:

Այդ հաղթանակը, սակայն, հեշտությամբ չտրվեց. 135 հայ քաջեր ընկան գիշերային այդ ճակատամարտում[498]:

Միայն 19 քաջերի հաջողվեց ճեղքել թուրքական շրջափակումը և հասնել Ագդաղ լեռ, ուր արդեն հանգրվանել էր Չաթ գյուղի բնակչությունը:

Ինքնապաշտպանության դիմեցին նաև Կամարակի գավառակի հարևանությամբ գտնվող Յոզղաթի գավառի (Անկարայի նահանգ),

---

[497] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 798:
[498] Տե՛ս նույն տեղում, էջ 776:

Բողազլյանի գավառակի Պուրըն Գըշլա, Էյլենճե և Գումգույու հայկական գյուղերի բնակիչները՝ մոտ 8000 հոգի: Երեք գյուղերի բնակչությունը դիմադրության վայր ընտրեց Գումգույուն: Ոստիկանական և զինվորական խոշոր ուժերի, ինչպես նաև մեծաքանակ հրոսակախըմբերի դեմ 1915 թվականի հուլիսի սկզբին սկսված օրհասական պայքարը շարունակվեց մեկ ամիս: Ապստամբների դիմադրությունն ընկճվեց միայն այն բանից հետո, երբ հակառակորդը, բերելով հրանոթներ ու գնդացիրներ, կործանիչ կրակ բացեց գյուղի վրա: Բնակչության մի մասը զոհվեց, մյուս մասը գերվեց թշնամու կողմից: Զոհվածների մեջ էր նաև հերոսամարտի ղեկավար Աբիսողոմ Առաքելյանը՝ Էյլենճե գյուղից: Հարյուրավոր մարդիկ, այդ թվում՝ կանայք, թուրք բարբարոսների ձեռքը չընկնելու համար թույն ընդունելով ինքնասպան եղան: Շրջապատման օղակը ճեղքել և Ագդաղ հասնել հաջողվեց միայն 8 քաջերի՝ Հաջի-Բեկ Փափազյանի գլխավորությամբ[499]:

1918 թվականի օգոստոսի վերջին թուրքական կառավարությունը հերթական անգամ «ներում» շնորհեց: Բայց 1919 թվականի աշնան սկզբին քեմալականներն աշխուժացան և վերսկսեցին թալանն ու սպանությունները: Թուրքերը ողջակիզեցին Սովուճագ գյուղի մարտախմբի հրամանատար Հովհաննես Ուրումյանի ընտանիքին, ապա սպանեցին Արթին Մինասյանին և այլ խմբապետերի:

Վերադառնալով Ագդաղի իրադարձություններին, նշենք, որ այստեղ հավաքված հայդուկների և անզեն փախստականների պարենամթերքի գործը գնալով դժվարանում էր: Կենսական այդ կարևորագույն խնդիրը լուծելու համար Ադամ Չավուշի խումբը հարձակում գործեց Չաթի պահապան ոստիկանական ուժերի վրա և ջախջախեց նրանց: Արդյունքում ձեռք բերվեց հարուստ ռազմավար՝ պարեն, զենք և զինամթերք: Ձեռք բերված պարենամթերքը Ագդաղի փախստական ժողովրդին բավարարեց երկու շաբաթ:

---

[499] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 798:

Ի պատասխան Չաթի վրա հարձակման՝ Բողազլյանից խոշոր ոստիկանական ջոկատ ուղարկվեց դեպի լեռ: Սըրըխլուի ձորում տեղի ունեցած բախումն ավարտվեց թուրքերի պարտությամբ. միայն որպես սպանված տալով 12 հոգի՝ ոստիկանները դիմեցին փախուստի: Այս մարտին, հայդուկներից բացի, մասնակցում էին չաթցի կանայք և աղջիկները, որոնք բարձունքներից ժայռաբեկորներ էին գլորում թշնամու վրա՝ զգալի վնասներ պատճառելով նրան[500]:

Վերջին երկու պարտություններն այնպիսի իրարանցում առաջացրեցին Յոզղաթում, որ զինվորական խոշոր ուժեր ուղարկվեցին ապստամբների դեմ: Չաթը վերածվեց ուժեղ հենակետի, որտեղ տեղակայվեցին մի քանի հարյուր ոստիկաններ: Ագդաղը վերցվեց շրջափակման մեջ: Խուզարկու ջոկատներն սկսեցին պարբերաբար «սանրել» լեռը: Հայդուկները և անզեն ժողովուրդը, ի վիճակի չլինելով ճակատելու նման ուժերի դեմ, բաժանվեցին խմբերի և քաշվեցին անտառների խորքերը և լեռան դժվարամատչելի վայրերը: Հայ փախստականների զոհերի թիվը կտրուկ աճեց:

Թուրքերի ձեռնարկած այս լայնածավալ պատժիչ գործողության արդյունքում լեռան վրա գտնվող փախստականների թիվը 1200-ից կրճատվեց 500-ի: Թշնամին և սովը պարզապես հնձում էին հայերի շարքերը: Ստեղծված դրությունից դուրս գալու միակ ելքը համարելով հակահարձակման անցնելը՝ հայդուկներն սկսեցին վերստին ուժեղ հարվածներ հասցնել թշնամուն[501]:

1916 թվականի ապրիլին Ագդաղը նորից շրջափակվեց թշնամու խոշոր ուժերով: Թուրքական բոլոր գյուղերում ստեղծվեցին ոստիկանական ուժեղ պահակակետեր: Բարձրացնելու համար իրենց դիմադրողականությունը՝ լեռան վրա ապաստանած խմբերը միավորվեցին: Բանակատեղի ընտրվեց պաշտպանական գերազանց դիրք ունեցող Էսիք Պելեն գագաթը: Հայդուկների հետ միասին միավորվեցին նաև

---

[500] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 778-779:
[501] Տե՛ս նույն տեղում, էջ 779:

նրանց պաշտպանության ներքո գտնվող փախստականների խմբերը: Բոլորը միասին կազմում էին 400 հոգի: Խմբերի միավորումից անմիջապես հետո հայդուկների ձեռքն ընկան մի քանի թուրք դասալիք զինվորներ, որոնք շատ կարևոր տեղեկություններ հաղորդեցին Էրզրումի ուղղությամբ ռուսական զորքերի հաղթական առաջընթացի, ինչպես նաև հայ կամավորական գնդերի քաջագործությունների մասին: Հայ կամավորների մասին լուրն այնպիսի բուռն ոգևորություն առաջացրեց, որ անմիջապես գումարված խմբապետական ժողովում որոշվեց Պոնտոսի վրայով անցնել ռուսների կողմը և ապա պայքարը շարունակել հայ կամավորական գնդերում: Սակայն մեկնումից առաջ, Ագդաղի ստորոտում գտնվող հունական Ղարաբիր գյուղի մոտ տեղի ունեցավ խոշոր բախում թուրքական ուժերի հետ: Հաջի Բեկի, Արթին աղայի և Ադամ Չավուշի խմբերը հակառակորդին քաշեցին դեպի լեռը և ջարդեցին նրան: Տալով 35 հոգու կորուստ՝ թուրքերը դիմեցին փախուստի, հայկական կողմն այդ մարտում ունեցավ ընդամենը մեկ վիրավոր[502]:

Յոզղաթի թուրքական իշխանությունները, անհանգստացած հայդուկների այս նոր հաղթանակից, որոշեցին մեկ անգամ ևս խոշոր ուժեր նետել հայ ապստամբների դեմ: Բայց մինչ այդ արդեն առաջապահի դեր խաղացող Հաջի Բեկի (Փափազյան) 40 հոգանոց խումբը մեկնեց Ագդաղից՝ ուղղություն վերցնելով դեպի հյուսիս-արևելք՝ Պոնտոս: Անցնելով Եշիլ Ըրմակ (Իրիս) գետը՝ առաջին իսկ հունական, գյուղում Հաջի Բեկի խումբը միավորվեց այդ շրջանում գործող հունական և հայկական 3 այլ՝ Հակոբոսի, Դելի Փափազի և Աբրահամի հայդուկային խմբերի հետ: Հայ-հունական միացյալ զորաջոկատն արդեն ներկայացնում էր 200 մարտիկ ունեցող պատկառելի ուժ:

1916 թվականի աշնանը ջոկատը հասավ սևծովյան Ունիե նավահանգստից 50 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Չանկերիշ լեռը: Այստեղ

---

[502] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 806-807, նաև՝ **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 294-295:

հոկտեմբերի սկզբին այն շրջապատվեց թուրքական 4000-ոց զորախմբի կողմից: Ուղիղ մեկ և կես օր տևած ճակատամարտն ավարտվեց նրանով, որ հայ-հունական ջոկատը խիզախ գրոհով ճեղքեց շրջապատման օղակը և անցավ Թերմեի անտառները[503]:

Դրանից անմիջապես հետո ռուսական ռազմանավերը գնդակոծեցին Թերմեն և էվակուացրին ծովափ դուրս եկած ջոկատի մեծ մասը: Սակայն թշնամու թիկունքում գործելու համար տեղում թողնվեց 60 հոգանոց խումբ՝ Զիլ Օհանի գլխավորությամբ[504]:

Ագդաղ լեռնաշղթայի Ղարաբաբա գագաթը (2345մ) որպես հենակետ ընտրած Կամարակի խումբը 1916 թվականի հունիսի 16-ին խոշոր բախում ունեցավ թուրքական 300 հոգանոց կանոնավոր զորաջոկատի և բազմաքանակ հրոսակախմբերի հետ: Մարտն ավարտվեց թշնամու պարտությամբ, որը, զգալի կորուստներ տալով, դիմեց փախուստի: Հայդուկները հակառակորդին հետապնդեցին մինչև 4 կմ հեռավորության վրա գտնվող Ինքյոյ գյուղը: Կռվում հատկապես աչքի ընկավ Կյուլպենկ Զավուշը: Նա, ի թիվս այլոց, հրացանազարկ արեց նաև թշնամական զորաջոկատի հրամանատար սեբաստացի Մեհմեդ Օսմանին, ինչպես նաև վերցրեց 2 գերի[505]:

Ղարաբաբայի պարտության դիմաց ռևանշ վերցնելու համար, թուրքական կողմը 1916 թվականի օգոստոսի 17-ին Ագդաղի քաջերի դեմ ուղարկեց կրկնակի մեծ ուժեր՝ 600 զինվոր և 400 հրոսակ, նրանց դիմագրավում էին ընդամենը 45 հայդուկներ: Չիֆթե Յուրտ կոչված ձորում 4 ժամ տևած կռիվն ավարտվեց հայերի հաղթանակով: Կյուլպենկի, Վարդիվառի և Ադամ Զավուշի գլխավորությամբ մարտնչող հայդուկները կարողացան սվինամարտով ճեղքել թշնամական օղակը և ժողովրդի հետ միասին նահանջել նախ Զարչալանի ձորը և ապա՝

---

[503] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 295:
[504] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 808-809:
[505] Տե՛ս նույն տեղոը, էջ 809-810:

նրանից 4 կմ-ի վրա գտնվող անտառը: Թուրքերն այդ մարտում ունեցան մեծաթիվ սպանվածներ, հայդուկները՝ ընդամենը 1 զոհ:

Հաջորդ խոշոր բախումը տեղի ունեցավ դարձյալ Ղարաբաբայի բարձունքի վրա: Եռօրյա կռվից հետո՝ 1916 թվականի նոյեմբերի 17-ի գիշերը, 52 հայդուկներ, որոնցից միայն 7-ը զինված, ճեղքեցին ավելի քան 700 թուրք հրոսակների շղթան և անցան հարավ՝ Ալիսի ափին ընկած Սելճուքի և Շեմենի լեռները[506]: Շուտով, սակայն, նրանց սկսեցին հետապնդել 600 թուրք հեծյալներ: Թշնամու գործը դժվարացնելու և քիչ զոհեր տալու համար հայդուկների խումբը մանրատվեց և ցրվեց տարբեր ուղղություններով: Նրանցից 4-ը՝ Քուրդ Պողոսը և Գաբրիելը՝ զինված, իսկ Նազարեթն ու Պողոսը՝ անզեն, պաշարվեցին թշնամիների խիտ շղթայով: 22 ժամ տևած կռվում նրանցից 3-ը զոհվեցին. հակառակորդի կորուստն անհամեմատ ավելի մեծ էր: Երկու ոտքերից վիրավոր քուրդ Պողոսը իր մոտ մնացած հրացանի վերջին փամփուշտով կարողացավ գնդակահարել Խնուսի հայության դահիճներից մեկին՝ քուրդ Շևքեթ բեյին, ով 6 ամիս առաջ հրամանատար էր նշանակվել այնտեղ: Հնգօրյա դաժան պայքարից տանջահար, սովից ու ծարավից հյուծված, արնաքամ եղած հայդուկը, չկարողանալով այլևս շարունակել կռիվը, ինքնասպան եղավ իր ատրճանակով[507]:

Ղարաբաբայի 2-րդ կռվից առաջ՝ 1916 թվականի հոկտեմբերի 27-ին, Ագդաղը լքեց նաև Ադամ Չավուշի 50 հոգանոց խումբը, որը ռազմարշավի դուրս եկավ դեպի Սամսուն: Դրանից հետո լեռան վրա մնացին միայն Արթին աղա և Սամվել խմբապետների ուժերը: Դեպի Պոնտոս մեկնող Ադամ Չավուշի նպատակն էր՝ հետևելով Հաջի Բեկի խմբին՝ ծովով անցնել ռուսների կողմը և նրանց շարքերում մարտնչել Թուրքիայի դեմ: Ունենալով տեղանքին քաջածանոթ ուղեկցորդներ՝ խումբը գրեթե առանց պատահարների, ընդամենը փոքրածավալ մաքրագործումներ իրականացնելով, հասավ Ունիեի մոտերքը: Այստեղ

---

[506] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 810:
[507] Տե՛ս նույն տեղում, էջ 812-813:

Ադամ Չավուշի հայդուկները միավորվեցին արդեն հիշատակված Զիլ Օհանի (Հովհաննես) խմբի հետ: Վերջինս Ագդաղից ժամանած նոր խմբին ոչ միայն լիովին վերազինեց, այլև ապահովեց առատ զինամթերքով: Ագդաղցիները դեռ նոր էին ժամանել, երբ Չանկերիշ լեռան վրա տեղի ունեցավ խոշոր բախում թուրքական 4000-ոց զորախմբի և 110 հոգանոց հայ-հունական զորաջոկատի միջև:

Չդիմանալով հակառակորդի ահռելի ճնշմանը՝ առաջինը տեղի տվեց լեռան հյուսիս-արևելքում դիրքավորված հունական խումբը: Դրանից հետո նահանջեցին նաև հայկական մյուս երկու՝ Դելի Հոճայի և Ավետիս Չաքրյանի խմբերը: Ամենավերջինը մարտի դաշտը թողեց գրեթե լրիվ շրջապատման մեջ հայտնված Ադամ Չավուշի խումբը: Վերջինս այնքան հմտորեն դուրս եկավ մարտից, որ դրանից հետո իրադրությանն անտեղյակ թուրքական ստորաբաժանումները դեռևս 1 ժամ շարունակում էին կռվել մթության մեջ, բայց այժմ արդեն իրար դեմ: Արդյունքում կոտորվեց 300-350 ասկյար՝ չհաշված հայ-հունական խմբերից կրած կորուստները:

Ութ ժամ տևած Չանկերիշի այդ արյունահեղ ճակատամարտում իրենց բացառիկ քաջությամբ հատկապես փայլեցին Զիլ Օհանը, նրա հերոսուհի կինը և չաթցի հայդուկ Ուբեն Գութնույանը: Նրանք 35 հոգանոց հունական խմբի նահանջ-փախուստից հետո, գրավելով նրա դիրքերը, դեռ քառորդ ժամ էլ շարունակեցին դիմագրավել թշնամուն՝ մեծ կորուստներ պատճառելով նրան[508]: Զիլ Օհանը ճակատամարտի ամբողջ ընթացքում ղեկավարում էր հայ-հունական կողմի գործողությունները: Չանկերիշի ճակատամարտից անմիջապես հետո Ադամ Չավուշի խումբը նույն գիշերն ունեցավ ևս մեկ բախում իրեն հետապնդող թուրքական խոշոր կանոնավոր ուժերի հետ, այս անգամ արդեն Սայ Գիրազ լեռան վրա: Երեք ժամ տևած այդ ծանր մարտում չաթցի հայդուկների հետ միասին, ուս ուսի մարտնչում էր նաև տեղական 10

[508] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 808-809, 817:

հոգանոց մի խումբ՝ Համբարձում անունով մի երիտասարդի և քաջ խմբապետի գլխավորությամբ: Հայկական երկու խմբերին հաջողվեց պոկվել հակառակորդից և անցնել Չյոշյուրի լեռները:

«Հյուսիսարեւելյան ճակատն վերայ, երեսուն եւ հինգ յոյներէ բաղկացած խումբը, թշնամիին կատաղի յարձակումներէն նեղը մնալով, կը լքէ ճակատը եւ փախուստի կը դիմէ: Նոյն ճակատը պաշտպանելու համար Զիլ Յովհաննէս եւ իր հերոսուհի կինը կը փութան գրաւելու յոյներու դիրքը: Բայց անկարելի կ'ըլլայ թշնամիին տարափին դիմադրել երկու հոգիով, մանաւանդ որ նա իր բոլոր ուժերը կեդրոնացուցած է ջախջախելու համար այս ճակատը: Իր եւ կնոջը նետած ռումբերն ու գերմարդկային ճիգերը առանց համապատասխան արդիւնքների կը մնան: Քառորդ ժամ տեւող աննկարագրելի պատերազմի մը մէջ Զիլ Յովհաննէս կը վիրաւորուի կոնակէն եւ դիւցազնուհին աջ բազուկէն: Չաթցի Ռուբէն Գութնոյեան, որուն պաշտոն տրուած էր Ռուսաստանէն բերած զէնքերն ու փամփուշտները բաժնել բոլոր խումբերու մէջ, դէպի վար կը խոյանայ օգնութեան հասնելու համար: Երեքը մէկ կռուէլով կը նահանջեն սարին գագաթը»,– նշել է ականատեսներից մեկը[509]:

Սայ Գիրազի մարտից հետո Ադամ Չավուշի խումբը նորից վերադարձավ այնտեղ և 1916 թվականի ամբողջ դեկտեմբեր ամիսն անցկացրեց լեռան վրա՝ ճյուղերից հյուսված հյուղակներում:

Ադամ Չավուշի խմբում ընդգրկված կանայք հագել էին տղամարդկանց հագուստ և զինված էին ու պատրաստ հակահարված հասցնելու թշնամուն:

Սայ Գիրազի վրա անցկացնելով 1916 - 1917 թվականների ձմեռը՝ Ադամ Չավուշի խումբը, որի կազմում էին հերոս կանայք, 1917 թվականի գարնանը վերսկսեց հայդուկային ակտիվ գործողությունները: Ինչպես վկայում է դեպքերի մասնակիցը, չաթցի հայդուկները, նաև կինները զինված «ատեն գյուղերը կիջնեին և Թուլամճի Խաչիկի ցուցմուն-

[509] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 817:

քով հարկ եղած պատիժը կու տային հայակուլ և արյունարբու թուրքերու»[510]:

Ագդաղից Ադամ Չավուշի մեկնումից հետո լեռան վրա դեռևս մնում էին Արթին աղայի (Տեմիրճյան) և Սամվել Ինճեյանի խմբերը: Վերջիններս երկար վիճաբանություններից հետո՝ 1916 թվականի հոկտեմբերին, նույնպես որոշեցին տեղափոխվել Պոնտոս և այնտեղ միանալ Հաջի Բեկի և Ադամ Չավուշի խմբերին: Ճանապարհին՝ Կյուլճուք գյուղի մոտ, խմբերը գիշերային մարտում ջախջախեցին և փախուստի մատնեցին թուրքական մի կանոնավոր զորաջոկատի: Նոյեմբերի 11-ին խմբերը հասան հայկական Խավշախ ավերակ գյուղը, որտեղ եռամսյա դադար ունեցան, այլ կերպ ասած՝ նրանք այդ գյուղում անցկացրին 1916-1917 թվականների ձմեռը: Խավշախում գտնվելու ընթացքում հայդուկները ուրախալի լուր ստացան Պոնտոսից, որ Բաֆրայի (Սամսոնից ավելի քան 35 կմ հյուսիս-արևմուտք) մոտ, ռուսական նավատորմը զենքի և զինամթերքի հարուստ պաշար է թողել թուրքերի թիկունքում հայ-հունական հայդուկային խմբերի համար[511]:

1917 թվականի գարնանը խմբերը վերսկսեցին ռազմերթը դեպի Պոնտոս: Ասկայն ճանապարհի կեսին տեղի ունեցավ անակնկալ՝ Սամվելի խումբը որոշեց վերադառնալ Ագդաղ: Հայտնելով խմբի ընդունած որոշման մասին՝ Ս. Ինճեյանը Ագդաղի հայդուկների մոտ անառարկելի հեղինակություն վայելող Արթին աղային դիմեց հետևյալ խոսքերով. «Հոն թաղված է մեր հոգիին կեսը և սիրելիներու մեծ մասը: Ինչ անիմաստ է մեր արշավը դեպի անծանոթ հորիզոններ: Տակավին անպատիժ կշրջին բյուրավոր դահիճներ: Մենք ո՞ւր կփախչինք ահեղ պարտքեն:

...Հոն դեռ կաթիլ կաթիլ ետ առնելիք արյուն ունինք»[512]:

---

[510] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 834:
[511] Տե՛ս նույն տեղում, էջ 835:
[512] Տե՛ս նույն տեղում:

1917 թվականի ապրիլի 13-ին խմբերը բաժանվեցին: Արթին աղայի խումբը շարունակեց ռազմերթը դեպի Պոնտոս, իսկ Սամվելի խումբը վերադարձավ Ագդաղ:

Արդեն Պոնտոսի սահմաններում նախկին հայկական Կյունպատ (Գմբեթ, Չարշամպայից ավելի քան 30 կմ հարավ-արևմուտք) գյուղում, Արթին աղայի հայդուկները ոչնչացրին հայկական ջարդերին ակտիվորեն մասնակցած ոստիկանական մի խումբ: Այդ կռիվներում աչքի ընկան հայ հերոսուհի կանայք՝ Արթին աղայի կինը՝ **Մարիամը,** և գեղեցկուհի **Մարթան**, որոնք երկուսն էլ աչքի ընկան դիպուկ կրակոցներով և ոգևորիչ կոչերով, մինչև վերջ քաջությամբ կռվելու վճռականությամբ[513]: Դրանից հետո հետքերը կորցնելու համար հայդուկները տեղափոխվեցին Փունար-Չուխուրու:

1917 թվականի հոկտեմբերի սկզբին Արթին աղայի խումբը ստացավ համալրում՝ կազմված 15 պոնտահայ հայդուկներից: Սակայն մեկ ամիս անց նորեկները բաժանվեցին չաթցի հայդուկներից: Պոնտահայերի երիտասարդ խմբապետը հիվանդության պատճառով մնաց Արթին աղայի խմբում: Հետագայում դեպքերի բերումով հիվանդ խմբապետը դարձավ իր իսկ դյուրահավատության զոհը: Նրան թուրք ոստիկանները գնդակահարեցին Չարշամպայի Ճևիզջի գյուղի իր հայրական տանը: Խմբապետի կործանման գործում վճռական դեր խաղաց նրա երբեմնի թուրք «բարեկամ» Թեֆիկ էֆենդին: Սակայն վերջինս չկարողացավ խուսափել արժանի հատուցումից: Մի քանի օր անց թուրք ճիվաղը մահապատժի ենթարկվեց Արթին աղայի հայդուկների կողմից իր իսկ գյուղում, գյուղի ամբողջ բնակչության ներկայությամբ[514]: Այդ մահապատիժն էլ ավելի բարձրացրեց չաթցի հայդուկների հեղինակությունը, և, ընդհակառակը, սարսափի մատնեց Չարշամպայի թուրքական իշխանություններին: Հայդուկների դեմ ուղարկվեց 800 հոգանոց կանոնավոր զորաջոկատ, որը, սակայն երկար ժամեր

[513] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 834:
[514] Տե՛ս նույն տեղում, էջ 835:

տևած մարտում տալով զգալի թվով սպանվածներ և վիրավորներ, ստիպված էր նահանջել, հայդուկներն այդ մարտում ունեցան ընդամենը մեկ վիրավոր: Դրանից հետո թուրքերը փորձեցին Հայվաճուխ գյուղից ոմն Իբրահիմի միջոցով թակարդը գցել և ջախջախել Արթին աղայի խումբը: Արդյունքում ստացվեց հակառակը: Թուրքական 50 հոգանոց զորաջոկատը, տալով զգալի թվով զոհեր, դիմեց փախուստի: Դրանից հետո մարտում հայդուկների ձեռքից ճողոպրած հրամանատար Իբրահիմը հրկիզվեց իր իսկ տան մեջ[515]:

1917 թվականի հունիսին Ադամ Չավուշի և Աբրահամի խմբերին միացան նաև Արթին աղայի և Ավետիս Չաքրյանի խմբերը՝ կազմելով 100 հոգանոց հզոր մի զորաջոկատ, որի հենակետը դարձավ Թազդաղ լեռը: Մինչ այդ, Ադամ Չավուշի խումբը ջախջախեց Չյորտյուկ գյուղի մեծաքանակ հրոսակախումբը. միայն որպես սպանված՝ թուրքերն այդ կռվում կորցրին մոտ 50 հոգի:

Թազդաղի հայդուկների տարածած սարսափն այնքան մեծ էր, որ Ունիեի իշխանությունները հեղինակավոր մի պատվիրակություն ուղարկեցին նրանց մոտ՝ փորձելով խաղաղ միջոցներով և խոստումներով հասնել նրան, որ հայկական կողմը վայր դնի զենքը: Սակայն Ադամ Չավուշը և Արթին աղան ոչ միայն կտրուկ մերժեցին հակառակորդի առաջարկը, այլև սարսափեցրին թուրք գավառակապետին՝ նրա առաջ կազմակերպելով գերազանց սպառազինված մի քանի տասնյակ հայդուկների ուժի ցուցադրություն[516]:

Ունիեի գավառակապետի (կայմագամ) այցից հետո հայդուկներին հաջողվեց մի թուրք հազարապետ-կալվածատիրոջ միջոցով լիուլի համալրել իրենց պարենի, ինչպես նաև զենքի ու զինամթերքի պաշարները: Այդ նույն օրը սակայն Թազդաղում մնացած հայդուկների վրա հարձակվեց թուրքական բանակի այսպես կոչված «Յըլդըրըմ» (Կայծակ) Ասկերի հատուկ զորաջոկատը, որն իբր թե համարվում էր ան-

[515] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 835:
[516] Տե՛ս նույն տեղում, էջ 830-831:

պարտելի: Գրոհից առաջ հայդուկների ուժից վախեցած գավառակապետը խորհուրդ էր տվել զորաջոկատի հրամանատարին չձեռնարկել այդ քայլը: Սակայն վերջինս ամբարտավանորեն պատասխանել էր, որ իր յուրաքանչյուր զինվոր սվինի ծայրին անցկացրած հայ հայդուկի գլուխ է նվեր բերելու գայմագամին: «Յըլդըրըմի» գրոհն ավարտվել էր նրանով, որ այն կորցրել էր 10 «անպարտելի» ասկյար, իր հրամանատարին, մի քանի ձի: Ստիպված էին դիմել անփառունակ նահանջի:

Նշված մարտից հետո, սակայն, հայդուկներն ունեցել էին ծանր կորուստ: Ադամ Չավուշը, ով իր 6 մարտիկներով գնացել էր Չարշամպայի մոտ գտնվող Ճեյվար գյուղը՝ լազերից զենք գնելու նպատակով, ընկել էր թակարդը: Այստեղ նա հանդիպել էր Պալախոր գյուղի հայտնի ավազակապետ Ահմեդին՝ իր 30 հոգանոց ավազակախմբով: Միամտորեն հավատ ընծայելով թուրքին՝ հայդուկապետն ընդունել էր նրա ճաշի հրավերը և գյուղապետի տանը՝ հենց ճաշի ժամանակ, դավադրաբար սպանվել էր Ահմեդի կողմից. նրա հետ սպանվել էր ևս մեկ հայդուկ: Մյուս 5 հոգին կարողացել էին փրկվել մահացու վտանգից և հասնել Արթին աղայի խմբին: Զոհված հայդուկների գլուխները նվեր էին ուղարկվել Չարշամպայի կայմագամին:

Այսպիսի ցավալի վախճան ունեցավ Ագդաղի և Պոնտոսի հայդուկային պայքարի խորհրդանիշը դարձած Ադամ Չավուշի հերոսական կյանքը[517]:

Սակայն հայ հայդուկների կողմից Ադամ Չավուշի մահն անպատասխան չթողնվեց: Ամիսներ անց Հաջի Բեկը, ով հասցրել էր գնալ ռուսական ափ և վերադառնալով՝ վերսկսեց հայդուկային գործունեությունը՝ իր մարտական ընկերոջ մահվան վրեժը լուծելով: Չարշամպա-Պալախոր ճանապարհին նա իր մի քանի հայդուկներով դարանակալեց և ոչնչացրեց Ահմեդին ու էլի 7 հրոսակների: Կարճ ժամանակ անց ոչնչացվեց նաև Ահմեդի հրոսակախմբի մնացած մասը[518]:

---

[517] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 832-834:
[518] Տե՛ս նույն տեղում:

1917 թվականի հոկտեմբերի սկզբին Կյոլճի-տաղ լեռան ստորոտում՝ շատ մեծ տարածության վրա, տեղի ունեցավ քառօրյա ճակատամարտ՝ Արթին աղայի, Հաջի Բեկի, Աբրահամի և հունական միացյալ խմբերի (մոտ 200 հայդուկ) ու թուրքական մեծաթիվ կանոնավոր ուժերի միջև: Բավական է ասել, որ 4 ուղղություններից միայն մեկում հարձակվում էր 500 ասկյար՝ գնդացիրներով և դաշտային մեկ հրանոթով: Հենց առաջին օրը տալով ավելի քան 100 սպանված և վիրավոր՝ հետագա օրերին հակառակորդը դարձավ շատ ավելի զգուշավոր ու անհամարձակ: Ի վերջո ոչ մի արդյունքի չհասնելով՝ թուրքերն ստիպված էին դադարեցնել հարձակումը և գլխիկոր հեռանալ:

1918 թվականի գարնանը Արթին աղայի և Հաջի Բեկի խմբերն առանձին-առանձին վերադարձան Չարշամպա, իսկ հունիսին վերստին միավորվեցին: Չհաշտվելով հայդուկների վերադարձի հետ՝ 1918 թվականի նոյեմբերի վերջին Սամսունի իշխանությունները նրանց դեմ ձեռնարկեցին լայնամասշտաբ պատժիչ գործողություն: Էշիկ Ղրա լեռան վրա տեղի ունեցավ կատաղի բախում Լիվա փաշայի գլխավորած թուրքական խոշոր զորաջոկատի և հայդուկների միջև: Չնայած այն հանգամանքին, որ թուրքերն ունեին հրետանի և գնդացիրներ, այնուամենայնիվ քառօրյա ճակատամարտն ավարտվեց նրանց պարտությամբ: Տալով մոտ 100 զոհ՝ թշնամին ետ քաշվեց դեպի Սամսուն[519]:

Հետագայում արդեն հայդուկներն ստիպված էին պայքարել քեմալական նորաստեղծ ռեժիմի դեմ: Մասնավորապես 1920 թվականի վերջին (նոյեմբերի 20-ին և դեկտեմբերի 1-ին) նրանք երկու խոշոր բախումներ ունեցան թուրքական ուժերի դեմ, որոնցում թշնամին կրեց ծանր պարտություն: 1921 թվականի հուլիսին հայդուկների մի փոքր խումբ Թոգաթի (Եվդոկիա) և Ելդրզ (Աստղիկ) լեռան վրայով մեկնեց Չաթ՝ իմանալու համար, թե ինչ է կատարվում իրենց հայրենի գյուղում և գավառակում: Նրանց բերած տեղեկությունները մխիթարական չէին:

[519] Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) հայոց, էջ 836-837:

Ինչպես ցեղասպան երիտթուրքերի, այնպես էլ նրանցից ոչնչով չտարբերվող «հեղափոխական» և «դեմոկրատ» քեմալականների օրոք հնարավոր չէր վերադառալ այնտեղ և նոր կյանք սկսել: Դրանից հետո տեղի ունեցավ Տերե Պողազի կռիվը: Արթին աղայի 12 հայդուկներ Սամսուն-Հերեկ ճանապարհին գտնվող վերոհիշյալ ձորում իրենց ուժերը չափեցին 400 հոգանոց թուրքական զորաջոկատի հետ, որը գնում էր Հերեկ՝ հույների և հայերի դեմ պատժիչ գործողություն իրականացնելու: Մարտում պարտված հակառակորդը կարողացավ իր ճանապարհը շարունակել միայն գիշերը, ըստ այդմ՝ միայն որպես սպանված կորցնելով 33 հոգի՝ հայերի մեկի դիմաց[520]:

1919-1922 թվականներին հույն-թուրքական պատերազմում քեմալական զորքերի կողմից Իզմիրի գրավումով (1922 թվականի սեպտեմբերի 9-ը) Հունաստանի պարտությունը դարձավ իրողություն: Դրանից հետո իրադրությունը Պոնտոսում կտրուկ փոխվեց: Հունական բնակչության ջարդերն ընդունեցին ավելի լայնածավալ բնույթ: Այստեղ անհնար դարձավ նաև հայկական հայդուկային խմբերի հետագա գոյությունը: Կիսատ-պռատ խաղաղ կյանքի անցած Հաջի Բեկի և Արթին աղայի խմբերը ստիպված էին նորից լեռ բարձրանալ: Նրանք առաջին իսկ մարտում պարտության մատնեցին իրենց դեմ ուղարկված զորաջոկատին: Սակայն մինչ այդ արդեն առասպելական համբավ ունեցող հայ խմբապետը դավադրաբար ձերբակալվել և սպանվել էր թուրքերի կողմից[521]:

Ի վերջո, Անկարայի քեմալական կենտրոնական իշխանության միջամտությունից հետո ավելորդ գլխացավանքից որքան հնարավոր է շուտ ազատվելու համար 50 հայ հայդուկներ Սամսունից 3 խմբով մեկնեցին արտասահան: Առաջին երկու խմբերը մեկնեցին դեռևս դաշնակիցների վերահսկողության տակ գտնվող Կ. Պոլիս, իսկ 3-րդ խումբը՝ ռուսական ափ: Հայդուկներին հաջողվեց իրականացնել այդ գործո-

---

[520] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 301-302:
[521] Տե՛ս նույն տեղում, էջ 302:

ղությունը, քանի որ նրանք, խելամտորեն ոչ մի հավատ չընծայելով թուրքական կողմի տված երաշխիքներին, իրենց հետ որպես պատանդ վերցրել էին մի քանի թուրք սպա և զինվոր:

Ինչպես արդեն նշվել է, 1917 թվականի ապրիլին, դեպի Պոնտոս ռազմերթն ընդհատելով, Սամվել Ինճեյանի խումբը վերադարձավ Ագդաղ լեռ և վերսկսեց իր հայդուկային ակտիվ գործունեությունը: Գերազանց կերպով սպառազինված այդ ոչ մեծ խումբը (30 հայդուկ)՝ քաղաք Բողազլյան - Ագդաղ - Մադեն գծից մինչև Ալիս գետի աջ ափն ընկած ընդարձակ տարածությունը պահում էր վերահսկողության ներքո: Սամվելի հիմնական խմբից բացի, անմիջականորեն Ալիս գետի ափին գործում էր ևս մեկ խումբ՝ Միքայել և Սեդրակ խմբապետերի ղեկավարությամբ[522]:

1917 թվականի հոկտեմբերին, գալիք ձմեռվա դժվարությունները նկատի ունենալով, Սամվելի խումբը, ի տարբերություն Ագդաղի՝ դեպի հյուսիս մեկնած բոլոր խմբերի, որոշեց մեկնել հարավ՝ Կիլիկյան Տավրոս: Ռազմերթն անցավ առանց շատ թե քիչ լուրջ պատահարների: Սակայն Տավրոսյան լեռներին հասնելուն պես տեղի ունեցավ խոշոր բախում: Հունական Չարուխլու գյուղում խմբի 40 հայդուկներ ստիպված եղան կռվի բռնվել Նիգդե քաղաքից բերված 200 զինվորների և նույնքան էլ թուրք հրոսակների դեմ: Չնայած թվական հսկայական գերակշռությանը՝ հակառակորդը տվեց մեծ կորուստներ և ստիպված եղավ նահանջել: Բավական է ասել, որ խմբապետ Սամվելի կինը՝ **Գյուլինարը**, ով նույնպես հայդուկ էր, այդ մարտում ոչնչացրեց 2 թուրք ասկյարի և ծանր վիրավորեց թշնամական խմբավորման հրամանատար՝ հազարապետ (բինբաշի) Էքրեմ բեյին[523]:

Հերոսուհու սխրագործությունները այսպես է նկարագրել ականատես մասնակիցը. «Խումբէն քսանեւեօթ հոգի կատարելապէս զինուած են, Սամուէլ Ինճէեան եւ իր հերոսուհի կինը Կիլինար, Պալթաճին եւ ու-

---

[522] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 302:
[523] Տե՛ս նույն տեղում:

ոիշ բոլոր ծանօթները խումբին մէջ էին. վրիժառու բառերով կը կանչէին Կիւլպէնկը իրենց մօտ: Խմբապետ Սամուէլ, Ռուբէն եւ Քըչըքըրը-քեան ստորագրած էին երկտողը: Տիկին Կիւլինարն էր անիկա, բոլորովին անճանաչելի դարձած, վրացական գլխարկով մազերը տղու պէս կարճ կտրած, լազական տափատ հագած, կուրծքին խաչաձեւ փամփուշտ կապած, մէջքէն նոր դաշոյն մը առկախ, տաճկական կարճ զէնք մը ձեռքին մէջ, անիկա հերոսուհիի անզուգական տիպար մըն էր: Կիւլին Չաթի Տէր Սարգիս քահանայի աղջիկն էր. երբ Սամուէլ բանտէն ելաւ, անոր հետը ամուսնացաւ: Տխուր կը թուէր, պատճառը այդ օր հօր գերեզմանը տեսնելն էր: Երբ վատի մը առաջ Փոստողլուէն կը փախէին, Օսման չավուշ զարկաւ քահանան եւ Կիւլինար իր ձեռքերով թաղեց հայրը»[524]:

1917-1918 թվականների ձմռանը հայդուկներն ստիպված էին բառացիորեն գոյության կռիվ մղել բնության և սովի դեմ: Տավրոսյան դաժան ձյունամրրիկների և սառնամանիքների պայմաններում, երբ ժամանակից շուտ սպառվեց նաև կուտակված պարենամթերքը, 1918 թվականի հունվարի վերջին հայդուկները թողեցին Չեթին-Դերեի իրենց կացարանը և ուղղություն վերցրին դեպի Ագդաղ: Շրջակա թուրքական գյուղերից պարենային բռնագրավումներին ի պատասխան՝ գազազած իշխանությունները որոշեցին մի զարկով վերջ տալ Սամվելի խմբին: Այդ նպատակով առանձնացվեց 500 հոգանոց հեծյալ զորամաս, ըստ էության՝ հեծելագունդ, որն սկսեց կրնկակոխ հետապնդել հայդուկներին: Գիշերային խավարում Տավրոսի անդնդախոր ձորերը չգլորվելու համար և՛ հայդուկները, և՛ նրանց հետապնդողներն ստիպված էին տեղաշարժվել միայն ցերեկը: Ըստ այդմ՝ հայդուկներն առաջ էին գնում օրական 15 ժամ՝ ավելացնելու համար իրենց և թշնամու միջև եղած տարածությունը: Ռազմարշավի սկզբում հայդուկներն

[524] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 837-839:

ստիպված եղան ջախջախել թուրքական 2 գյուղերի միացյալ հրոսակախումբը:

Հետապնդումն սկսելուց 10 օր անց Ավշարքյոյ գյուղի մոտ թուրքական հեծելազորը և նրան միացած մեծաքանակ հրոսակախմբերն ի վերջո կարողացան փակել հայդուկների ճանապարհը: Սակայն առավոտից մինչև երեկո շարունակված կռիվն ավարտվեց հայերի հաղթանակով: Կռվում իր սխրագործություններով աչքի ընկավ հերոսուհի Գյուլինարը:

Ահա այսպես է նկարագրում քաջասիրտ հայուհու անվախ և հանդուգն գործունեությանը այդ կռվի ականատեսը. «Ժամէ մը աւելի երկու հակառակորդ խումբերը դադրեցուցին կռիւը: Ապա թուրքերը կրկին փորձեցին յարձակիլ գիւղին մէկ ծայրը բլուր մը կար, առանց հայերու դիրքէն տեսնուելու կարելի էր այդ կէտէն գիւղ խուժել: Էքրէմ պէյ չէր գիտեր, թէ հոդ ալ թշնամի խմբակ մը դարանամուտ եղած իրենց կը սպասէ: Երբ մեղուանոցներու մօտ հասան, հայդուկները միահամուռ հարուածելով անակնկալ մահուան վտանգի մատնեցին զանոնք: Հերոսուհի Կիւլինար ինը կտրիճներու հաւասար ճարտարութեամբ կը գործածէ զէնքը, անիկա սպաննեց երկու զինուոր եւ նոյն ինքն Էքրէմ պէյը ձիէն վար գլորեց՝ ծանրապէս վիրաւորելով զայն աջ սրունքէն:

Թշնամին վերջնականապէս լռեց ու հեռուները քաշուեցաւ: Տղաք դուրս խուժեցին դիրքերէն եւ իբր թէ յոյներուն վրայ զայրացած ըլլային, զանազան անպէտ իրեղէններ ջարդեցին ու հոսուհոն յարդի դէզերու հրդեհ ձգեցին»[525]:

Տալով զգալի թվով զոհեր՝ հակառակորդն ստիպված էր ճանապարհ տալ Սամվելի խմբին: Երկրորդ և վերջին անգամ հետապնդողները և հետապնդվողներն իրար հանդիպեցին Ադանայի և Անկարայի (Անգորա) նահանգների սահմանագծի վրա գտնվող Բեշգարտաշ հունական գյուղում: Ընդ որում հանդես բերելով ռազմական խորաման-

[525] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 849:

կություն և շատ բարձր հմտություն՝ հայդուկները գերի վերցրին հակառակորդի 24 զինվոր[526]:

Կեսարիայի գավառի տարածքում թշնամու հետ առաջին հանդիպումը տեղի ունեցավ թուրքաբնակ Պարսամպա գյուղի մոտ: Կեսարիա քաղաքից ուղարկված զորքը և տեղի թուրքական հրոսակախմբերը շրջապատեցին այն հսկա քարայրը, որտեղ իջևանել էր Սամվելի խումբը: Միակ ելքը շեշտակի գրոհով շրջապատման օղակի ճեղքումն էր, ինչը և արեցին հայդուկները: Մարտում իրենց քաջությամբ հատկապես աչքի ընկան Հաճի Հակոբ Մկրյանը և Ուֆան Սյոպեթյանը: Հակառակորդն այդ կռվում ունեցավ 10-ից ավելի սպանված, իսկ հայդուկները՝ 2 վիրավոր[527]:

Ալիս գետին մոտենալիս թուրքական Քեմրելի գյուղի մոտ խմբի մի մասը քիչ մնաց դժբախտ պատահարի զոհ դառնար: Լեռան լանջից պոկված հսկա ձնահյուսը դեպի ձոր շպրտեց 11 հայդուկների: Իրենց ընկերների քրտնաջան որոնումների արդյունքում բոլոր տուժածները գտնվեցին. երջանիկ պատահականությամբ նրանք բոլորը ողջ էին մնացել[528]:

Դրան հաջորդեց Հալխաճի 2-րդ ճակատամարտը, որը շարունակվեց ամբողջ օրը և կարող էր վերջինը լինել Սամվելի խմբի համար: Հայդուկների զինամթերքը չափազանց քիչ էր և հակառակորդի զանգվածային գրոհներին նրանք պատասխանում էին հատուկենտ, բայց անվրեպ կրակոցներով: Իրիկնադեմին, արդեն լավ հասկանալով, որ հայ մարտիկների փամփուշտները գրեթե սպառվել են, թուրքերն ընդհուպ մոտեցան նրանց դիրքերին՝ պատրաստվելով վերջին սվինային գրոհին: Երեք կողմից շրջապատված հայդուկներին ոչինչ չէր մնում

---

[526] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 852:
[527] Տե՛ս նույն տեղում, էջ 855-856, 860:
[528] Տե՛ս նույն տեղում, էջ 862-863:

անել, քան մոտակա գետակի կողմից առանց որևէ իրարանցման անաղմուկ դուրս գալ շրջապատումից[529]:

Հաջորդ մեծ բախումը տեղի ունեցավ 1918 թվականի մայիսին՝ Ս. Զատիկի տոնի օրը: Ագդաղի լեռնագագաթներից մեկի՝ Սըրըխլուի վրա Սամվելի խումբը շրջապատվեց 500 հեծյալ և հետևակ զինվորների և մեծաքանակ հրոսակախմբերի կողմից: Նեղվելով զինամթերքի պակասից՝ մութն ընկնելուն պես հայդուկները հմտորեն դուրս եկան շրջապատումից՝ հակառակորդին պատճառելով շոշափելի կորուստներ:

«Զատիկի» հաղթանակից հետո Սամվելի խմբի հեղինակութունն այնքան էր բարձրացել, որ ո՛չ ոստիկանները և ո՛չ էլ թուրք գյուղացիները չէին հանդգնում խոչընդոտել հայդուկներին թուրքական գյուղերից պարենամթերքի ձեռքբերման գործում: Ավելին, իրենց վրա վերցնելով պետական հարկերի գանձումը՝ հայդուկները շուրջ 40 գյուղերից մեծաքանակ պարենամթերք կուտակել տվեցին հունական Պաշչաթաղ գյուղում, որտեղից էլ կարոտյալ ընտանիքները, առանց ազգային խտրականության, գալիս և ստանում էին համապատասխան օգնություն[530]:

1918 թվականի աշունը և ձմեռը խումբն առանց որևէ պատահարի անցկացրեց Սըրըխլու լեռան ստորոտում: Առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտության մասին հայդուկներն իմացան ամիսներ անց: Դրանից հետո Յոզղաթի, Կեսարիայի և Ագդաղ-Մադենի զինվորական ու քաղաքացիական իշխանությունները բարեկամության և խաղաղության քողի տակ փորձեցին զինաթափել Սամվելի խումբը, բայց ստացան կտրուկ մերժում: Խմբի հեղինակությունն այնքան էր աճել, որ շրջանի ավելի քան 50 գյուղերի համար այն դարձել էր ոչ պաշտոնական իշխանություն:

---

[529] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 872:
[530] Տե՛ս նույն տեղում, էջ 873:

Զինադադարին հաջորդած ժամանակահատվածում Ագդաղի հայդուկների ձեռքով իրենց արդարացի պատիժն ստացան այդ տարածքում Հայոց մեծ եղեռնին մասնակցած մի շարք հայտնի թուրք ջարդարարներ[531]:

1919 թվականի ամռանը, իրադրությունը Թուրքիայի ներքին նահանգներում կտրուկ փոխվեց՝ կապված քեմալական շարժման ծավալման հետ: Գալիք լուրջ վտանգները նկատի ունենալով՝ Յոզղաթի նորանշանակ գավառապետ (մյութեսարիֆ) Լևոն փաշա Այըճյանը օգոստոսի սկզբին խորհուրդ տվեց խմբապետ Սամվելին անհապաղ թողնել հայրենի Չաթը և անցնել ֆրանսիական վերահսկողության տակ գտնվող Կիլիկիա: Դրանից անմիջապես հետո՝ հաշված օրերի ընթացքում, 40 հայդուկներից կազմված խումբը Էգրեկի ու Շարի վրայով մեկնեց Կիլիկիա[532]: Այստեղ թե՛ հայ ազգային իշխանությունների, թե՛ ֆրանսիական իշխանությունների կողմից նրանց ցույց տրվեց բացառիկ ընդունելություն: Բավական է ասել, որ Հաճընում խմբին դիմավորեցին քաղաքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա նվագախմբով, հազարից ավելի հայ խանդավառ քաղաքացիների ցնծագին բացականչությունների ներքո: Նույնը կրկնվեց Սիսում և Ադանայում, որտեղ խումբն ամբողջ կազմով մտավ Հայկական լեգեոնի մեջ:

Այսպես ավարտվեց Ագդաղի քառամյա հերոսական ինքնապաշտպանությանը մասնակցած վերջին մարտական խմբի գործունեությունը, խումբ, որի շնորհիվ հայկական դիմադրության դրոշը ծածանվեց այդ անպարտելի լեռան վրա մինչև վերջ՝ մինչև Թուրքիայի պարտությունը Առաջին համաշխարհային պատերազմում:

Հայտնի է, որ 1919 թվականի հուլիսի 25-ին չեթեների խմբերը պաշարեցին Քեոքլուկը, բայց հերթապահող դիրքապահները հասցրին ոտքի հանել ժողովրդին: Հարձակումը մեծ դժվարությամբ հետ մղվեց հրամանատար Ավետիս Չագըրյանի կյանքի գնով: Դրանից հետո

---

[531] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 874:
[532] Տե՛ս նույն տեղում, էջ 875:

թուրքերը շուրջ մեկ տարի լռեցին: Իսկ 1920 թվականի օգոստոսին զենքերը հանձնելու խիստ հրամանը հայերին ստիպեց իսկույն ամրացնել Քեռքլուկի դիրքերը: Սեպտեմբերի սկզբին 1500 հոգուց բաղկացած խուժանն ու զորքը հարձակվեցին գյուղի վրա (ժողովուրդը հասցրել էր վաղօրոք տեղափոխվել անտառ) և հարյուր մարտիկների դեմ հինգժամյա կռվից հետո մեծ կորուստներով նահանջեցին: Օրեր անց երկրորդ մեծ հարձակումն արդեն դիմադարձվեց բավական մեծ դժվարությամբ, ինչից հետո մարտիկները վերջնականապես հեռացան լեռներ, իսկ կայմագամը թրքացած հայ դավաճանների օգնությամբ ձերբակալեց, ապա սպանեց խմբապետ Կարապետ Թահմագյանին (Դելի Հոճա)՝ իր տասը զինակիցներով[533]:

Մարտախմբերի խորհրդակցությունում որոշվեց թշնամու ուշադրությունը շեղող հարձակում ձեռնարկել գյուղերի վրա: Երբ քաղաքից թուրքական զորքը օգնության հասներ, երկրորդ խումբը պիտի գրոհեր բանտի վրա: Բայց մի հույնի մատնության հետևանքով կալանվածներին տեղափոխեցին կենտրոնական բանտ, որտեղից նրանց ազատելն արդեն անհնար էր, և իրագործվեց միայն ծրագրի՝ թուրքական գյուղերին հարվածելու մասը:

1920-1921 թվականների ձմեռը լեռներում ապաստանած մարտիկների համար հանգիստ անցավ: Փետրվարին քեմալականները փորձեցին մեկ հարվածով ոչնչացնել թե՛ հայ և հույն մարտախմբերին, թե՛ հակաքեմալական ուժերին, բայց տևական կռիվները արդյունք չտվեցին: Ծանր պաշարումն ու կռիվները շարունակվեցին, երբ անակնկալ կերպով եկավ «ներման» հերթական հրամանագիրը, որին հավատալով, քեռքլուկցիներից բացի, գրեթե բոլորն իջան գյուղերը: Ներման այս քաղաքականությունը տևեց մինչև Հունաստանն ու Թուրքիան փոխանակեցին միմյանց տարածքում պատանդ մնացած մեծաթիվ հույների և թուրքերի: Առիթից օգտվելով՝ հայ մարտիկները կարողացան ևս 200 հոգու ուղարկել Կովկաս ու լեռներում մնացին մենակ: Ապա

---

[533] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 53-54:

իմացան, որ լեռներում են նաև Հովհաննես Ուրումյանի, Կարապետ Սարյանի, Մեսրոպ Տազրճյանի ու Սահակ Համալյանի մարտախմբերը: Կենտրոնանալով Թերմեի անտառներում՝ նրանք փորձեցին անցնել Ռուսաստան, սակայն փորձը ձախողվեց հետապնդումների սաստկացման պատճառով:

1921 թվականի մայիսին տեղի ունեցած սաստիկ ընդհարումից հետո բռնություններ սկսվեցին անգամ ներման հրամանագրերին արձագանքած ու խաղաղ ապրող հայերի նկատմամբ, որոնց մեծ մասն ստիպված եղավ վերստին քաշվել լեռներ[534]:

Նոյեմբերին մարտիկների վրա շուրջ 1000 չեթեներով հարձակման անցավ տխրահռչակ Թոփալ Օսմանը, սակայն հայերին պաշարելիս ինքը հայտնվեց ծուղակում և խայտառակ փախուստի դիմեց՝ անգամ թուրքական մամուլում դառնալով ծաղրի առարկա: Բայց հայասպանն իր վրեժը լուծեց հայ և հույն անզեն ժողովրդից[535]:

1921-1922 թվականների ձմեռը հայդուկները հեշտ անցկացրին, քանի որ նախապես հավաքել էին անհրաժեշտ ամբողջ պաշարը: Գարնանը մեծ դժվարություններով կարողացան նավով գաղտնի Կովկաս ուղարկել ևս 250 վերապրածների, ապա, մասնակի զիջումներով ու առանց զենքը հանձնելու, համաձայնեցին գյուղ իջնել, որովհետև մտածում էին Ռուսաստան անցնելու մասին: Իսկ քեմալական շարժումն ուժեղանում էր: 1922 թվականի դեկտեմբերին ընդամենը երեք օրում սպանվեցին ներման հրամանագրերին ու թուրքի բարեկամությանը հավատացած շուրջ երեսուն հայ և հույն խմբապետեր ու մարտիկներ: 1915 թվականին լեռները բարձրանալուց ի վեր կռվող ուժերի նման մեծ կորուստ դեռ չէր եղել:

Դրան հետևեցին կայմագամի սպառնալիքներն ու Քեռքլուկի երկօրյա կռիվը: Երեք զոհ տալով՝ մարտիկները քաշվեցին լեռներ, որտեղ անհրաժեշտ պայմաններ կային հետագա դիմադրության համար:

---

[534] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 159-60:
[535] Տե՛ս նույն տեղում, էջ 78-79:

1922-1923 թվականների ձմեռն անցկացնելուց հետո ինքնապաշտպանները կարողացան նավով Ռուսաստան ուղարկել ևս 75 հոգանոց մի խումբ, ու լեռներում մնացին միայն զինված երիտասարդները, որոնք որոշել էին ընդմիշտ մեկնելուց առաջ լուծել դավադրաբար սպանված խմբապետերի վրեժը: Այս մարտիկները, որոնք, «ներման» հրամանագրերին չհավատալով, չէին բարեկամացել թուրքերի հետ ու գրեթե ոչ ոքի չէին ճանաչում, բաժանվեցին տասնհինգ փոքր խմբերի ու մեկնեցին տարբեր ուղղություններով: Նրանք գերեցին պատահած բոլոր թուրք տղամարդկանց, բերեցին Չանկերիշ, քառասուներկուսին գնդակահարեցին, երկու խոշոր ագարակատերերի պատանդ պահեցին, որ թուրքերը հայերին ներեն, իսկ մնացած գերիներին ազատ արձակեցին, որ սրանք ամենուր պատմեին կատարվածը: Ծանր պատիժ ստացավ նաև Էլգրուկ գյուղը, որի թուրքերն էլ սպանել էին խմբապետ Պետրոս Թահմագյանին[536]:

1923 թվականի քեմալական կառավարությունը հայերին երկրից հեռանալու արտոնություն շնորհեց, որին շուտով հետևեց նաև ապստամբների ներումը: Բոլոր կողմերից գալով ու միանալով իրար՝ վերջին 445 հայերը, որոնցից 375-ը լավ զինված էին, հեռացան Ռուսաստան: Տրապիզոնի և շրջակայքի շուրջ 60000 հայությունից փրկվեց միայն 10 տոկոսը լեռներում ապաստանած, տարիներով կենաց ու մահու կռիվ մղած մարտիկների անօրինակ նվիրումի ու պայքարի շնորհիվ:

Ֆընտըճագի հերոսամարտը և հայ հերոսուհի կանայք

1915 թվականին Հայոց մեծ եղեռնի ընթացքում տեղի ունեցած ինքնապաշտպանական հերոսամարտերի շարքում իր պատվավոր և ուրույն տեղն ունի Ֆընտըճագի հերոսամարտը:

---

[536] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 82-83:

Արևելյան Կիլիկիայում գտնվող այս խոշոր գյուղը կամ նույնիսկ գյուղավանը Առաջին աշխարհամարտի նախօրեին վարչականորեն մտնում էր Հալեպի նահանգի Մարաշի գավառի մեջ: Մարաշ քաղաքից 18 կմ հարավ-արևմուտք գտնվող և 18 թաղից բաղկացած Ֆընտըճագը 1914 թվականին ուներ ավելի քան 3000 բնակիչ (500 տուն)[537]: Դարերի պատմություն ունեցող այս գյուղը հնուց ի վեր հռչակված էր իր խիզախությամբ: Դրա լավագույն վկայությունը 1895-1896 թվականներին համիդյան ջարդերի և 1909 թվականին կիլիկյան աղետի ընթացքում գյուղի մղած ինքնապաշտպանական կռիվներն էին, որոնց արդյունքում Ֆընտըճագը փրկվեց, իսկ թշնամին ստացավ ջախջախիչ հակահարված: 1909 թվականի ապրիլյան հայտնի կռիվներից հետո գյուղի աղաները գումարեցին ժողով, որտեղ որոշվեց, որ յուրաքանչյուր ֆընտըճագցի տղամարդ այսուհետև պետք է ունենա նորագույն զենք: Եվ պետք է ասել, որ այս չգրված օրենքը հարգվում ու կիրառվում էր:

Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, երիտասարդ ֆընտըճագցիների մեծ մասը խույս տվեց զորակոչից, իսկ նրանք, ովքեր զորակոչվեցին, կարճ ժամանակ անց փախան թուրքական բանակից և վերադարձան գյուղ: Արևմտահայության հանդեպ գնալով ուժեղացող հալածանքների ու անհանդուրժողականության պայմաններում ֆընտըճագցիները հեռատեսորեն գաղտնի կապեր էին հաստատել Մարաշի և նույնիսկ Այնթապի հնչակյան մասնաճյուղերի հետ: Ենթադրվում էր, որ հարկ եղած դեպքում հիշյալ քաղաքների հնչակյան մարտական խմբերը օգնության կգային Ֆընտըճագին:

Մոտեցող աղետի առաջին նախանշանների մասին ֆընտըճագցիներն իմացան 1915 թվականի մայիսին՝ այն բանից հետո, երբ իրենց համագյուղացի Նազարեթ Մոսկոֆյանը հայտնեց, որ Մարաշից վերադառնալիս ճանապարհին տեսել է զեյթունցի աքսորյալների քարավան-

[537] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 311:

ներից մեկը: Այս լուրին Ֆընտըճագում չհավատացին. հնարավոր բան չէր, որ առանց մի կրակոց արձակելու արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի դրոշակակիր Զեյթունն ինքնակամ հանձնվեր: Բայց շուտով գյուղի մերձակայքում երևաց զեյթունցի հայ-դուկների 40 հոգանոց (այլ տվյալներով՝ 23 հոգանոց) ջոկատը: Երկու շաբաթ ֆընտըճագցի հովիվների կողմից հյուրասիրվելուց հետո ջոկատն իջավ գյուղ: Զեյթունցի հայդուկներից իմանալով Զեյթունի տարագրման բոթը՝ Ֆընտըճագի աղաներն անմիջապես գումարեցին գաղտնի ժողով, որին մասնակցում էր նաև զեյթունցի Մեսրոպ Չոլագյանը[538]: Ժողովում որոշվեց ոչ մի դեպքում չտարագրվել և հարկ եղած դեպքում դիմել ինքնապաշտպանության:

Ժողովում տիրող ընդհանուր մթնոլորտի մասին պատկերացում են տալիս նրա մասնակիցներից մեկի՝ Հովսեփ աղա Գոճայանի կողմից ասված հետևյալ խոսքերը. «Ֆընտըճագը պիտի կռվի, մեր լեռները մեզ ապաստան պիտի լինեն, մեր դաշտերը թուրքերի դիակներով պիտի ծածկվեն, նրանց արյունը գետի նման պիտի վազե»[539]:

Ավելորդ ուշադրություն չգրավելու համար զեյթունցիների ջոկատը դուրս բերվեց գյուղից: Ինչպես և ամենուրեք, տեղահանումից ու ջարդից առաջ թուրքական իշխանությունները նախևառաջ զինաթափում էին հայ բնակչությանը: Թշնամին այդպես ցանկացավ վարվել նաև Ֆընտըճագի հետ: Հունիսի կեսերին Օմար բեյի գլխավորությամբ ժամանած ժանդարմական վաշտը գիշերը ներխուժեց Ֆընտըճագ և սկսեց խուզարկություն՝ զենք գտնելու նպատակով: Արդյունքում թուրքերը կարողացան բռնագրավել միայն հին դաշույններ ու սրեր, հիմնական զենքերը՝ հրացաններն ու ատրճանակները, գյուղացիները լավ էին թաքցրել: Երբ Օմար բեյը պահանջեց հանձնել զեյթունցիներին, նրան պատասխանեցին, որ զեյթունցի հայդուկները վաղուց հեռացել են գյուղի սահմաններից:

---

[538] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 312:
[539] Տե՛ս նույն տեղում:

Հուլիսի 16-ին Ֆընտըճագ ուղարկվեց հեծյալ ոստիկանական գունդ՝ արդեն հիշատակված Օմար բեյի գլխավորությամբ: Ճիշտ ժամանակին իմանալով մոտեցող թշնամու մասին՝ Ֆընտըճագի ինքնապաշտպանական ուժերը և արդեն գյուղում գտնվող զեյթունցիների ջոկատը հասցրին դիրքավորվել: Հարձակումը գյուղի վրա սկսվեց կեսօրից հետո և շարունակվեց 3 ժամ: Ֆընտըճագի մերձակա մատույցներում տեղի ունեցած մարտն ավարտվեց հակառակորդի լիակատար ջախջախումով: Օմար բեյը 20 ժանդարմներով կարողացավ ետ քաշվել թուրքական Տատաղլը գյուղը: Թուրքերը միայն որպես սպանված տվեցին 110 հոգի, որոնց մաուզեր հրացանները և փամփուշտները մեծապես համալրեցին ապստամբների զինական միջոցները[540]:

Այսպիսով՝ հուլիսի 16-ին անվեհեր ֆընտընճագցիներն ապստամբության դրոշ պարզեցին թուրք ցեղասպանների դեմ՝ կռիվն ու պատվավոր մահը գերադասելով ստորացուցիչ ու մահվան համազոր աքսորից:

Մարտին հաջորդած գիշերն իսկ ձեռնարկվեցին գյուղի անվտանգությունն ապահովող միջոցներ: Նախևառաջ ստեղծվեց 5 հոգանոց ռազմական խորհուրդ, որի անդամներն էին Մինաս Գալայճյանը, Վարդավար Քյահյանը, Հովսեփ Գոճայանը, Նազարեթ Գոճայանը և Խաչիկ Գալայճյանը: Բանագնացներ ուղարկվեցին Քիշիֆլի և Անտեհիր (Տերեքյոյ) մոտակա հայկական գյուղերը, որպեսզի նրանց բնակչությունը տեղափոխվի Ֆընտըճագ: Դրանով նախ այդ գյուղերը միառժամանակ կփրկվեին աքսորից և հետո, համախմբելով ուժերը, ավելի հաջող կդիմակայեին թուրք ջարդարարներին: Նշված գյուղերի բնակչությունը (223 տուն, 1300 շունչ) առանց որևէ հապաղման ապաստանեց Ֆընտըճագ, որով վերջինիս պաշտպանների թիվը մեծապես աճեց[541]:

---

[540] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 313:
[541] Տե՛ս նույն տեղում, էջ 314:

Կանխելու համար հարևան 6 թուրքական գյուղերի (Տյոնուքլու, Թաթիհլի, Չափալը, Ավշարլը, Օրջան, Բարսախլը) հնարավոր հարձակման վտանգը, հուլիսի 17-ին Ֆընտըճագցիների մարտական ուժերը շեշտակի գրոհով գրավեցին ու բնաջնջեցին ավազակային որջերի վերածված այդ գյուղերը, որով Ֆընտըճագի անվտանգության գոտին զգալիորեն ընդլայնվեց: Այս առումով Ֆընտըճագի ինքնապաշտպանությունը շահեկանորեն առանձնանում է 1915 թվականի մյուս բոլոր հերոսամարտերից: Այստեղ շատ հաջող կերպով իրագործվեց «լավագույն պաշտպանությունը հարձակումն է» ռազմարվեստի հիմնարար դրույթներից մեկը, որը, սակայն, հետագայում զարգացում չստացավ[542]:

Ռազմական խորհուրդը մարտական առկա բոլոր ուժերը բաժանեց 3 մասի՝ միայն գյուղի պաշտպանությունն իրականացնող ուժ, գյուղից դուրս գործող արշավախումբ և վերջապես՝ Մարաշի գրավման համար նախատեսված զորաջոկատ: Գյուղի մատույցներում ստեղծվեցին պաշտպանական դիրքեր. ամբողջ բնակչությունը մասնակցեց խրամատների փորման աշխատանքներին:

1915 թվականի հուլիսի 31-ին թշնամու 8000-ոց զորախումբը՝ գնդապետ Կալիպ բեյի հրամանատարությամբ, մոտեցավ Ֆընտըճագին և ճամբար դրեց նրանից 12 կմ հեռավորության վրա գտնվող Ավշարլը թուրքական ավերված գյուղում: Թուրքական զորախմբից մի հայ զինծառայող՝ Նագարեթ Ունճույանը, հենց նույն գիշեր գաղտնի եկավ Ֆընտըճագ: Նա բերեց ոչ միայն կարևոր տեղեկություններ թշնամու մասին, այլև խորհուրդ տվեց անհապաղ հարձակվել նրա վրա, քանի դեռ ռազմերթից հետո թուրք ասկյարները հոգնած քնած էին: Սակայն Ն. Ունճույանի խորհուրդը չընդունվեց այն պատճառաբանությամբ, որ առկա ուժերը սակավ էին, անբավարար էր նաև զենքի ու զինամթերքի

[542] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 314-315:

քանակը: Որոշվեց հարձակվողի դերը կամովին զիջել հակառակորդին[543]:

Վճռական ճակատամարտից առաջ հայերի կռվող ուժը կազմում էր 1335 մարդ, որոնք զինված էին 250 լավագույն մաուզեր հրացաններով, ինչպես նաև մարտական այլ հրացաններով ու ատրճանակներով՝ 40 հազար փամփուշտով: Հայկական ուժերը տեղաբաշխված էին 7 պաշտպանական դիրքերում. գյուղի միակ մուտքը՝ Էշեկմեյդանից եկող ճանապարհը, պաշտպանում էր զեյթունցիների ջոկատը: Թուրքական զորախմբում հաշվվում էր 8000 ասկյար, որոնք, բնականաբար, հրացանի ու զինամթերքի պակաս չունեին: Ավելին՝ թշնամին ուներ նաև լեռնային հրանոթ ու 2 գնդացիր: Ի հավելումն կանոնավոր այդ ուժերի՝ թուրքերն ունեին նաև մի քանի տասնյակ հազար (որոշ տվյալներով՝ 60 000) հրոսակներ[544]:

Ֆընտըճագի մարտական ուժերի շտաբը դարձավ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցուն կից դպրոցը:

Թուրքական հարձակումն սկսվեց օգոստոսի 3-ի լուսաբացին: Մինչ այդ Կալիպ բեյը վերջնագիր էր ներկայացրել ֆընտըճագցիներին՝ պահանջելով անվերապահ անձնատվություն. հակառակ պարագայում նա սպառնում էր 1 ժամում գյուղը բնաջնջել: Թուրքական վերջնագիրը մերժվեց, որից հետո հակառակորդն անցավ հարձակման: Հիմնական հարվածը հասցվում էր հարավային և արևմտյան կողմերից: Թշնամու հետևակին իր կրակով աջակցում էր լեռնային մեկ հրանոթ: Երեք ժամ տևած առաջին գրոհը ետ մղվեց թշնամու համար մեծ կորուստներով, հարյուրավոր թուրք ասկյարների դիակներ մնացին մարտի դաշտում:

Կեսօրից հետո թշնամու հարձակման թափն զգալիորեն աճեց: Այժմ արդեն նա գրոհում էր բոլոր ուժերով և 3 հիմնական ուղղություններով: Հարձակմանը մասնակցում էին նաև շրջակա թուրքական գյու-

---

[543] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 314-315:
[544] Տե՛ս նույն տեղում, էջ 316:

ղերից եկած բազում հազարավոր հրոսակներ: Հայերի համար կենաց ու մահու այդ ճակատամարտը հետևյալ կերպ է ներկայացնում դեպքերի ականատես Ոսկան Հովհաննիսյանը. «Կեսօրեն ետքը ժամը երկուքին կռիվը ավելի սաստկանալով, կատաղի գույն առավ բոլոր ճակատներուն վրա, ու ամեն տեսակ զենքերու շաչյուններեն կարծես երկինք ու երկիր իրար անցած ըլլային: Առյուծասիրտ լեռնականներու, հազարներ անգամ թվով և ռազմամթերքով ավելի թշնամվույն դեմ գերմարդկային և քաջարի դիմադրությունը, անտեսանելի խարազանե մը մտրակված, որ կուգար իրենց հավատքեն, հույսեն և ազատ ապրելու վեհ գաղափարեն, որոնց կդարձներ անպարտելի»[545]:

Թուրք ցեղասպանների դեմ մղվող այս օրհասական կռվում իրենց խիզախությամբ փայլեցին նաև հայ կանայք ու աղջիկները: Նրանցից շատերը զինամթերք, կերակուր ու ջուր էին հասցնում խրամատներուն գտնվող իրենց եղբայրներին, հայրերին ու ամուսիններին: Իսկ նրանցից ոմանք, նաև զենքը ձեռքին, մարտնչում էին թուրք ջարդարարների դեմ: Նրանց թվում էր **օրիորդ Խաթուն Չավուշը (Յափուճյան)**, ով իր զինավարժությամբ ու քաջությամբ հայտնի էր ամբողջ Ֆընտրճագում: Նա աչքի ընկավ հերոսական սխրագործություններով[546]:

Ճակատամարտի ընթացքում փայլուն ռազմական խորամանկության դիմեց Ղափլան-գայա դիրքի հրամանատար Սարգիս Գալայճյանը: Այս դիրքը մարտիկների քանակով ամենամեծն էր (350 մարտիկ), իսկ նշանակությամբ էլ կարևորագույններից մեկը: Այստեղ անընդմեջ 3 ժամ տևած կատաղի մարտի ընթացքում հայ մարտիկների զինամթերքն սկսեց սպառվել: Միակ ելքը հակառակորդի հաշվին փամփուշտի ձեռքբերումն էր, ինչը և իրականացվեց մեծ վարպետությամբ: Հրամանատարի կարգադրությամբ դիրքի վրա սպիտակ դրոշ բարձրացվեց: Անհամբերությամբ այդ պահին սպասող թուրք ասկյարները և հրոսակները, կարծելով, որ հայերն արդեն տեղի են տալիս, մեծ զանգ-

[545] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 316:
[546] Տե՛ս նույն տեղում:

վածներով խուժեցին «հանձնվող» դիրքի վրա: Երբ մոտեցող թշնամու և հայ մարտիկների միջև մնացել էր շատ կարճ տարածություն, վերջիններս միահամուռ կերպով կործանիչ կրակ բացեցին: Արդյունքում թուրքերը սարսափահար ետ ընկրկեցին՝ մարտի դաշտում թողնելով մոտ 500 դիակ: Ձեռք բերված հարուստ ռազմավարը հնարավորություն տվեց Գափլան-գայայի քաջերին շարունակելու ճակատամարտը[547]:

Ամենաերկար դիմադրությունը շարունակվեց Ս. Աստվածածնում և նրա հարևանությամբ գտնվող դպրոցում: Դրանց պաշտպանները մարտնչեցին մինչև վերջ: Երբ զինամթերքը սպառվեց, հայ մարտիկները թշնամու վրա խոյացան կացիններով, դաշույններով ու քարերով:

18 ժամ անընդմեջ շարունակված ճակատամարտն ավարտվեց կեսգիշերն անց. թշնամին կարողացավ ճնշել դիմադրության վերջին օջախները: Ձեռք բերված հաղթանակի համար թուրքերն ստիպված եղան վճարել շատ թանկ՝ միայն որպես սպանված 3000 ասկյար և 5000 հրոսակ: Հայկական կողմի մարտական կորուստները համեմատաբար շատ փոքր էին[548]:

Ինչպես և պետք էր սպասել, ճակատամարտի ավարտին հետևեց հախուռն ջարդը, որը սակայն որոշ ժամանակ անց դադարեցվեց Կալիպ բեյի հրամանով:

Հերոսամարտի ավարտից հետո ողջ մնացածները, հիմնականում կանայք և երեխաներ, մահվան քարավանով աքսորվեցին Դեր Զոր: Ահա նման վախճան ունեցավ Ֆընտրճագի 19 օր տևած հերոսական ինքնապաշտպանությունը: Ամանոսի բարձրաբերձ լեռներում գտնվող այդ գյուղավանը, փաստորեն, կատարեց այն, ինչը թվում էր, թե տասնամյակների ու դարերի իրավունքով վերապահված էր անպարտելի Զեյթունին: Ավաղ, այս վերջինն ականջալուր եղավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունից հնչած «խելոք կեցեք» կործանարար խոր-

---

[547] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 316:
[548] Տե՛ս նույն տեղում, էջ 318:

հուրդ-հրահանգին, որի համար և վճարեց շատ թանկ, ինչպես նաև զրկվեց 1915-ի հերոսամարտերի ցուցակում իր պատվավոր տեղն ունենալու իրավունքից:

Թուրքերի վրա Ֆընտըճագի տարածած սարսափն այնքան ուժեղ էր, որ ի տարբերություն Կիլիկիայի շատ ու շատ հայկական գյուղերի՝ այս բնակավայրը չվերաբնակեցվեց թուրք գաղթականներով:

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտությունից հետո հարյուրավոր վերապրող ֆընտըճագցիներ՝ 647 հոգի (այլ տվյալներով՝ 1000), ինչպես և արևմտահայության մյուս բեկորները, վերադարձան իրենց հայրենի օջախները[549]: Սակայն վերադարձի և վերընձյուղման բերկրանքը շատ կարճ տևեց: Հայկական Կիլիկիան ֆրանսիացիների կողմից դավաճանաբար քեմալական Թուրքիային հանձնելուց հետո երկրորդ անգամ և վերջնականապես պարպվեց նաև Ֆընտըճագը: Վերապրող ֆընտըճագցիների մի փոքր մասը զոհ գնաց քեմալական հորդաներին, իսկ մեծ մասն ապաստան գտավ հարևան և հյուրընկալ Սիրիայում:

* * *

Ինքնապաշտպանական հերոսամարտերին հայ կնոջ հերոսական մասնակցության առումով բավական ուշագրավ դրվագ է Ծովք լճի Ս. Նշան կղզում համանուն Ծովք գյուղի մի խումբ հայդուկների մղած գոյապայքարը 1915 թվականին հուլիս-հոկտեմբեր ամիսներին[550]:

Չնայած այն հանգամանքին, որ Ծովք (Կյոլճիկ) լիճն իր մերձափնյա բնակավայրերով վարչականորեն մտնում էր Դիարբեքիրի նահանգի մեջ, առևտրատնտեսական և մնացած գրեթե բոլոր հարցերով առավել սերտորեն կապված էր հարևան Խարբերդի նահանգի (Մամուրեթ-ուլ-Ազիզ) և Խարբերդ քաղաքի հետ, քանի որ ուղիղ գծով վերջինից հեռու էր ընդամենը 25 կմ: 1915 թվականի մարտին Խարբերդի

---

[549] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 318-319:
[550] Տե՛ս նույն տեղում, էջ 323:

նահանգում թուրքական իշխանությունների կողմից հայ բնակչությունից զենքի հավաքման կապակցությամբ Խարբերդի ազգային առաջնորդարանում 300 հոգու մասնակցությամբ և հոգևոր առաջնորդ Տ. Պսակ ծ. վարդապետ Տեր-Խորենյանի նախագահությամբ տեղի ունեցավ համախարբերդցիական գաղտնի ժողով, որտեղ մեծամասնության կամքով որոշվեց թաքցրած զենքերը հանձնել: Այդ որոշմանը ենթարկվեց նաև լճի հարավային ափին գտնվող և 100 տուն բնակչություն ունեցող Ծովք հայկական գյուղը: Իշխանություններին հանձնվեցին հիմնականում հին զենքերը[551]:

Մայիսի 22-ին Ծովքը շրջապատվեց 100 հեծյալ և հետևակ ոստիկաններով և մեծաթիվ հրոսակներով: Գյուղի 16 տարեկանից բարձր արական ամբողջ բնակչությունը ձերբակալվեց: Ծովքեցի 11 երիտասարդներ՝ Անանիա Ստեփանյանի և գյուղի քահանա տեր Պողոսի գլխավորությամբ, չենթարկվեցին հրամանին և ապաստանեցին լճափնյա մի ձորակում: Խիզախ քահանան, լավ պատկերացնելով մոտեցող արհավիրքը, առաջարկեց անհապաղ ապստամբություն բարձրացնել, սակայն գյուղի երևելիները «խելամտորեն» մերժեցին այդ առաջարկը: Դրանից հետո իրադարձություններն ընթացան թուրքերի նախանշած ուղիով: Նախ երկու օր անմարդկային տանջանքների ենթարկվելուց հետո իբր թե Խարբերդի բանտ տեղափոխվելու ճանապարհին դավադրաբար ոչնչացվեցին գյուղի բանտարկված տղամարդիկ[552]:

Վերջապես հունիսի 23-24-ին գյուղի մնացած ամբողջ բնակչությունը՝ ծերեր, կանայք, երեխաներ, երկու մահվան քարավաններով բռնագաղթեցվեց և գրեթե գլխովին ոչնչացվեց Խարբերդի ճանապարհին ընկած ձորերում:

Հունիսի 24-ի գիշերը մոտ մեկ ու կես տասնյակ ծովքեցի երիտասարդներ, որոնք, ինչպես արդեն ասվել է, մեկ ամիս շարունակ գտնվում էին փախստականի վիճակում, զինվեցին թաքցրած զենքե-

---

[551] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 323:
[552] Տե՛ս նույն տեղում, էջ 324:

ռով և բարձրացան լեռ. նրանցից երկուսը մինչ այդ սպանվեցին քրդերի կողմից: Մանր խմբերի բաժանված հայդուկներն անհրաժեշտաբար միավորվեցին մեկ միասնական խմբի մեջ, որի 11 անդամներից զինված էին 9-ը. խմբի փաստական ղեկավարն արդեն հիշատակված Անանիա Ստեփանյանն էր: Հունիսի վերջին տեղի ունեցավ առաջին բախումը հայդուկների և նրանց դեմ ուղարկված մոտ 30 ոստիկանների և էլ ավելի մեծ թվով քուրդ հրոսակների միջև, որն ավարտվեց վերջինների խայտառակ փախուստով: Դրանից հետո, իրադարձություններին ականատես և քաջատեղյակ 14-ամյա ծովքեցի Կյուրեղ Խրայանի վկայությամբ, թուրքերի և քրդերի համարձակությունը Ծովք լճի շրջանում կտրուկ նվազեց[553]:

Լեռներում տեղի ունեցած այս զինաբախումից 15 օր անց խումբը թշնամուց աննկատ, մեծ վարպետությամբ տեղափոխվեց լճի հարավարևմտյան մասում գտնվող Ս. Նշան կղզի՝ որպես առավել ապահով և դիմադրության համար առավել հարմար վայր: Շուտով խումբը համալրվեց ևս մեկ հոգով: Դա ծովքեցի 18-ամյա օրիորդ **Սուլթան Տեր-Մարկոսյանն** էր, ով դեպքերի բերումով հայտնվել էր լճափնյա մեկ այլ՝ թուրքական Հայրաթոռ գյուղում և պատահաբար իմանալով հայդուկների մասին՝ գիշերով լողալով հասել էր կղզի[554]:

Թշնամին, բնականաբար, ի վերջո կռահեց հայդուկների նոր ապաստարանի մասին, բայց գերադասեց բավական երկար ժամանակ չանհանգստացնել նրանց: Ընդհակառակը, հայ մարտիկների տարածած սարսափն այնքան ուժեղ էր, որ երբ նրանց մանր խմբերը պարբերաբար հայտնվում էին ափամերձ այգիներում և դաշտերում՝ պարենամթերք հայթայթելու նպատակով, թուրք գիշերապահները գերադասում էին ծպտուն չհանել: Օգոստոսի սկզբին ի վերջո մի քանի տասնյակ ոստիկաններ 4 մակույկներով փորձ արեցին գրավել կղզին, բայց հայդուկների ուժեղ համազարկից սարսափած՝ կես ճանապար-

---

[553] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 324:
[554] Տե՛ս նույն տեղում:

հից վերադարձան ափ: Ս. Նշանում գտնվելու ամբողջ ընթացքում, ծովքեցի մարտիկները կղզին հիմնավորապես նախապատրաստել էին պաշտպանության համար: Պատրաստվել էին ոչ միայն սովորական դիրքեր, այլ նույնիսկ հատուկ խորշեր՝ հրետանային գնդակոծությունից պաշտպանվելու համար[555]:

Այս ոչ մեծ ծովամարտն է՛լ ավելի ուժեղացրեց թշնամու վախը: Ահա թե ինչ է գրում այդ մասին Կ. Խրայանը. «Կատարված կռիվին ազդեցությունը այնքան խոշոր եղավ, որ մեկ երկու շաբաթե վերջ այդ շրջաններու բոլոր բնակիչներուն մեջ կարծես իրարանցում մը կար: Տեղացիներ, բոլորն ալ հավասարապես այլևս կատարյալ համոզում գոյացուցած էին, թէ կղզին ապաստանողներուն թիվը քանի մը տասնյակներ կկազմեն»[556]:

Հայդուկներին ոչնչացնելու երկրորդ անհաջող փորձից հետո թուրքերը դիմեցին իրենց փորձված զենքին՝ խաբեությանը: Հոկտեմբերի 20-ին, իբր թե նահանգապետի կողմից ուղարկված պատվիրակը, ափին կանգնած, մի քանի անգամ բարձրաձայն ներկայացրեց հայդուկների ներման «շնորհագիրը», որով վերջիններս, այդ պահից սկսած, համարվում էին հետապնդումից զերծ և կոչ էր արվում նրանց՝ դուրս գալ կղզուց: Թուրքերի «ազնվությանը» քաջածանոթ ծովքեցիները, բնականաբար, կուլ չտվեցին այդ խայծը:

Դրանից անմիջապես հետո, կղզու դիմաց հայտնվեց կանոնավոր բանակի 400 հոգանոց զորաջոկատ: Կային նաև մեծ թվով քուրդ հրոսակներ: Այլևս պարզ դարձավ, որ հակառակորդը պատրաստվում է վճռական հարձակման: Նույն գիշերը հայդուկները գումարեցին ռազմական խորհուրդ, որտեղ որոշվեց մարտը չընդունել և թշնամուց անննկատ տեղափոխվել լճի մյուս ծայրում գտնվող Կըրյած կղզի: Մարտից խուսափելու գլխավոր փաստարկն այն էր, որ կռվի պարագայում թշնամին անպայմանորեն կունենար մեծ կորուստներ և դրանից գա-

[555] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 324:
[556] Տե՛ս նույն տեղում:

զազած՝ կոչնչացներ թուրքական և քրդական գյուղերում դեռևս իրենց գոյությունը քարշ տվող հայ բեկորները: Նկատի էր առնվում նաև այն հանգամանքը, որ հակառակորդի կողմից հրետանու կիրառման դեպքում խումբը պարզապես կոչնչացվեր՝ չկարողանալով ինչպես հարկն է դիմադրել: Հաջորդ առավոտյան թուրքական կողմը, տասժամյա հրացանաձգությունից հետո ի վերջո հասկանալով, որ կղզին դատարկ է՝ համարձակվեց գրավել այն: Հերթական անհաջողությունից կատաղած թշնամին շատ արագ գտավ հայդուկների հետքը և շրջափակեց Կըրյած կղզին: Այստեղ ապաստանելուց առաջ ծովքեցիներից չորսը դուրս էին եկել ափ և հեռացել լեռները[557]:

Հոկտեմբերի 22-ը դարձավ զգալիորեն նոսրացած հայդուկային խմբի վերջին օրը: Մի քանի տասնյակ լաստերով գրոհող թշնամին հանդիպեց կատաղի դիմադրության: Իր քաջությամբ հատկապես փայլեց **օրիորդ Սուլթանը**: Նա զոհվեց վերջինը և մինչ այդ հասցրեց գնդակահարել 2 զինվորի և 1 տասնապետի: Նրա նահատակությունը հետևյալ կերպ է ներկայացնում Կ. Խրայանը. «Այսպես չորս հարյուրեն ավելի զինվորներ, աղաներ և քյուրտեր հինգ ժամվան մեջ հինգ անգամ հարձակում գործել և նահանջելե վերջ, զինվոր մը կհաջողվի հերոսուհին թիկունքեն զարնել, երբ վերջինը կծռի նոր փամփուշտ վերցնել խոռոչեն»[558]:

Լեռ բարձրացած 4 հայդուկներից 3-ը հետագայում Խարբերդի մոտ գտնվող Եղեգի գյուղում բռնվեցին թուրքերի կողմից և Մեզիրեի բանտում կարճ ժամանակ պահվելուց հետո 100 հայ այլ երիտասարդների հետ միասին գնդակահարվեցին:

Ամբողջ հայդուկային խմբից կարողացավ փրկվել միայն 19-ամյա Հարություն Մարտիկյանը. նա ծպտված վիճակում կարողացավ դիմանալ մինչև պատերազմի ավարտը[559]:

---

[557] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 325:
[558] Տե՛ս նույն տեղում:
[559] Տե՛ս նույն տեղում:

Ծովքի հայդուկային խմբի մղած քառամսյա գոյապայքարի ամենաէական և ամենաարժեքավոր առանձնահատկությունը թերևս այն է, որ նույնիսկ մի փոքրիկ մարտական խմբի գոյությունը, ընդ որում՝ ոչ մեծ ակտիվություն ցուցաբերող, կարող էր տևականորեն ահ ու սարսափի մեջ պահել այդ շրջանի թրքությանը և քրդությանը:

Կիլիկիահայության ինքնապաշտպանական մարտերը և հայ հերոսուհի կանայք

Դեռ աշխարհամարտի ժամանակ՝ 1916 թվականի հոկտեմբերի վերջին, դիվանագետներ Մ. Սայքսի ու Ժ. Պիկոյի և Հայոց ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի միջև Լոնդոնում ձեռք բերված համաձայնությամբ ստեղծվել էր հիմնականում հայ կամավորներից բաղկացած Արևելյան (Հայկական) լեգեոնը: Ֆրանսիական կառավարությունը հոգում էր լեգեոնի կազմավորման և ապահովման ծախսերը: Նախատեսվում էր պատերազմի հաղթական ավարտից հետո այն դարձնել Ֆրանսիայի հովանավորությամբ ստեղծվելիք Կիլիկիայի ինքնավար հանրապետության զինված ուժերի հիմքը:

Ֆրանսիական զորքերի կազմում Հայկական լեգեոնը հատկապես աչքի ընկավ Պաղեստինում՝ 1918 թվականի սեպտեմբերի 19-ի Արարայի ճակատամարտում: Մարտի ելքը վճռվեց հօգուտ ֆրանսիական զորքերի՝ շնորհիվ հայ մարտիկների խիզախության: Մուդրոսի զինադադարից հետո լեգեոնը տեղափոխվեց Կիլիկիա և զինագրավեց երկրամասի ռազմավարական կարևոր կետերը: 1918 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին լեգեոնի կազմում կար չորս գումարտակ՝ բաղկացած ավելի քան 5000 զինվորներից: Սևրի պայմանագրի ստորագրումից հետո, երբ մեծ տերությունները սկսեցին զիջումների գնալ և մերձենալ քեմալական Թուրքիայի հետ, ֆրանսիական իշխանությունները, հրաժարվելով Կիլիկիային ինքնավարություն տալու մտադրությունից, 1920 թվականի օգոստոսին Հայկական լեգեոնը լուծարեցին:

Դրանով կիլիկիահայերը զրկվեցին թուրք-քրդական հրոսակներից և քեմալական զորքերից պաշտպանվելու իրական հնարավորությունից:

Մուդրոսի զինադադարից հետո Կիլիկիան զինագրավվեց անգլիական զորքերի կողմից, իսկ 1919 թվականի նոյեմբերին նրանց փոխարինեցին ֆրանսիական զորամասերը: Ցեղասպանությունից մազապուրծ և տեղահանված կիլիկիահայերը սկսեցին վերադառնալ հայրենի օջախները: Արդեն 1920 թվականի սկզբներին Կիլիկիայում ապրում էր ավելի քան 150000 հայ[560]: Սակայն տեղում հաստատված ֆրանսիական վարչությունը որևէ գործոն, միջոց չձեռնարկեց՝ հայերի անվտանգությունն ապահովելու համար: Տեղերում իշխանության գլուխ մնացած թուրք պաշտոնյաները և թուրք-քրդական զինված խաժամուժն առիթը բաց չէին թողնում հալածելու երկրամասի քրիստոնյաներին, այդ թվում՝ կիլիկիահայերին: Վերջիններիս համար առավել լուրջ սպառնալիք դարձավ քեմալական շարժումը: Քեմալականները շարունակեցին քրիստոնյաների բնաջնջման համիդյան և երիտթուրքական քաղաքականությունը: Օգտվելով առիթից, որ 1920 թվականի սկզբներին ֆրանսիական իշխանությունները սկսել էին դուրս բերել զորքերը Կիլիկիայից, քեմալականները 1920 թվականի ընթացքում կոտորեցին կամ բռնագաղթի ենթարկեցին տեղի տասնյակ հազարավոր հայերի[561]:

Քեմալականների առաջին թիրախը դարձավ հայաբնակ Մարաշը, որտեղ նրանք անակնկալ ներխուժեցին 1920 թվական հունվարի կեսերին: Հայերն ինքնապաշտպանության դիմեցին, մի քանի տասնյակ հայ լեգեոնականների շուրջը միավորվեցին տղամարդիկ, կանայք և պատանիները: Սակայն բացակայում էր ընդհանուր հրամանատարությունը, անբավարար էին զենքն ու զինամթերքը:

Հունվարի կեսերին Մարաշի ֆրանսիական կայազորի հրամանատար գեներալ Քերեթը հակառակորդից պահանջեց դադարեցնել ան-

---

[560] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 220-221:
[561] Տե՛ս նույն տեղում, էջ 220-221:

կարգությունները և ամբողջ իշխանությունը հանձնել իրեն, բայց թուրքերը հեգնորեն մերժեցին: 1920 թվականի հունվարի 18-ին թուրքական կողմը վերջնագիր ներկայացրեց Քերեթին[562]: Միաժամանակ նրանք Մարաշի նոր կառավարիչ մայոր Մորբիոյից պահանջում էին քաղաքից հեռացնել հայ լեգեոնականներին (շուրջ 500 հոգու), քանի որ քաջ գիտակցում էին, որ համառ դիմադրություն և զգալի հարվածներ կարող են ստանալ միայն նրանցից: Դիմադրությունը «շտկելու» և «լարվածությունը թուլացնելու» համար Մորբիոն հայ լեգեոնականներին ուղարկեց Իսլահիե: Ճանապարհին նրանց վրա հարձակվեցին թուրքական ուժերը: 8-9 օր դաժան մարտեր մղելով և ավելի քան 100 սպանված տալով՝ լեգեոնականները հունվարի 29-ին վերադարձան Մարաշ, որտեղ դեռևս հունվարի 21-ին սկսվել էր ապստամբությունը[563]: Նույն օրը հարձակման էին ենթարկվել հայկական թաղամասերը և ֆրանսիական պաշտպանական 7 դիրքերը: Հայերը փրկություն էին որոնում եկեղեցիներում և օտար հաստատություններում: Ընդամենը 20 լեգեոնականների պաշտպանությամբ մոտ 2 հազար հայեր ապաստանել էին Ս. Աստվածածին եկեղեցում, իսկ 3700-ը՝ ֆրանսիական եկեղեցում[564]:

Հայերը, հավատ չընծայելով ֆրանսիացիների օգնությանը, անմիջապես դիմեցին կազմակերպված դիմադրության: Նրանք Սեդրակ Խրլագյանի, Սարգիս Չաուշ Սարդարյանի, Արամ Սամուելյանի գլխավորությամբ ութ դիրք ստեղծեցին: Մարտերին մասնակցում էին և՛ լեգեոնականները, և՛ զենքի ունակ տղամարդիկ, շատ դեպքերում՝ կանայք և պատանիներ: Սակայն հայկական դիրքերի միջև չկային փոխ-

---

[562] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 225:

[563] **Գալուստյան Գ.,** Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք. 1934, էջ 788-793, **Տէր-Վարդանեան Յ.,** Մարաշի ջարդը 1920-ին և պատմական համառոտ ակնարկ մը իր անցեալին վրայ, Երուսաղէմ, 1927, էջ 122:

[564] **Գալուստեան Գ.,** նշվ. աշխ., էջ 798-801:

համաձայնեցված գործողություններ և նաև ընդհանուր հրամանատարություն[565]:

Դրությունը դարձավ եղերական, երբ հունվարի 23-ին քաղաք ներխուժած Քլըջ Ալիի հրոսակները հրդեհեցին հայկական թաղամասերը: Կոտրելով Բաղդասար Օտապայյանի 100 կամավորների համառ, բայց անհույս դիմադրությունը՝ թուրք բարբարոսները հրդեհեցին Ս. Աստվածածին եկեղեցին: Կրակե լեզվակներին զոհ գնացին 2000 հայեր[566]:

Առանձնապես համառ դիմադրության հանդիպեցին Ս. Սարգիս եկեղեցու ուղղությամբ գրոհող թուրք հրոսակները: Հմտորեն դիրքեր գրաված 110 հայ լեգեոնականներ և կամավորներ Գևորգ Հարությունյանի և Սմբատ Շահնազարյանի առաջնորդությամբ դիպուկ հրաձգությամբ հակառակորդին պահեցին որոշակի հեռավորության վրա:

Զեյթունցի Ս. Մարգարյանի գլխավորությամբ հաջող ինքնապաշտպանության դիմեց Բեյթ Շալոմ թաղը: Արամ Սամուելյանի հրամանատարությամբ 15 օր թշնամու դեմ հերոսաբար մաքառեցին Շեքերտերե թաղամասում դիրքավորված մարտիկները:

Շուտով ֆրանսիացիներն օգնություն ստացան: Փետրվարի 7-ին՝ մարտերի 18-րդ օրը, 4000 զինվորներից բաղկացած ֆրանսիական զորամասը՝ գնդապետ Նորմանի հրամանատարությամբ, բանակեց Մարաշից 2-3 կմ հեռավորության վրա գտնվող Աթիշի դաշտում, իսկ փետրվարի 8-ից 9-ը հրետանային կրակով ավերեց թուրքական դիրքերը[567]:

Թուրքերը փետրվարի 10-ին անձնատվության պայմաններն իմանալու համար բանագնաց ուղարկեցին ֆրանսիական հրամանատարության մոտ: Բայց փետրվարի 11-ին տեղի ունեցավ հրեշավորն ու ողբերգականը. հաղթող կողմի հրամանատար գեներալ Քերեթը նահան-

---

565 **Գալուստեան Գ.,** նշվ. աշխ., էջ 798-801:
566 Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 226:
567 Տե՛ս նույն տեղում:

ջի հրաման տվեց՝ ենթարկվելով ֆրանսիական բարձրագույն հրամանատարության հրահանգին: Այդ քայլը «պատճառաբանվում էր» նրանով, որ Մարաշի ֆրանսիական զորամասն օգնություն ստանալու որևէ հույս չուներ. չկար պարեն, խիստ սակավ էր զինամթերքը[568]:

Հաջորդող իրադարձությունները ցույց տվեցին, որ Մարաշի նահանջը պայմանավորված էր Ֆրանսիայի՝ Կիլիկիան Թուրքիային զիջելու և Սիրիան պահելու դրդապատճառներով, այն Սիրիան, որի նկատմամբ ֆրանսիական կապիտալն ավելի մեծ տնտեսական ու ռազմավարական հետաքրքրություններ ուներ:

Փետրվարի 11-ի գիշերը գեներալ Քերեթը նահանջի ուղի բռնեց: Երկար տատանումներից հետո նա խուճապի մատնված հայերից ընդամենը 5 000 հոգու թույլատրեց միանալ իր զորախմբին՝ մյուսներին լքելով և թողնելով անխուսափելի մահվան ճիրաններում: Նույն գիշերը թուրքերի բարբարոսությանը զոհ գնաց 2 000 հայ, հիմնականում կանայք և երեխաներ[569]:

Տաժանակիր էր նաև ֆրանսիական զորախմբի հետ նահանջողների վիճակը: Որպե առ որպե սպասելով թուրք հրոսակների հարձակման, ամեն ակնթարթ կյանքից զրկվելու վտանգն աչքի առաջ՝ գաղթին անպատրաստ մարդիկ սառնամանիքի պայմաններում առաջ էին շարժվում և ի վիճակի չլինելով շարունակել ճանապարհը՝ անշունչ գետին էին տապալվում: 800-1200 ֆրանսիացիներ և մոտ 4 000 հայեր զոհվեցին, վիրավորվեցին կամ ցրտահարվեցին այդ ճանապարհին: Մարաշի սանջակում և քաղաքում բնակություն հաստատած հայերից սրի քաշվեց 13600-ը, 8 000-ն արտաքսվեց քեմալական իշխանությունների կողմից[570]:

Մարաշի անկումով քեմալական շարժումը Կիլիկիայում առավել ծավալվեց: Մարաշի անկումից տագնապահար Մ. Տամատյանը 1920

---

[568] **Գալուստեան Գ.,** նշվ. աշխ., էջ 134:
[569] **Արզումանյան Մ.,** Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, էջ 419:
[570] Տե՛ս նույն տեղում:

թվականի փետրվարի 19-ին պաշտոնական նամակով դիմեց Բրեմոնին՝ պահանջելով կա՛մ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայության անվտանգությունն ապահովելու համար, կա՛մ հայերին զենք հատկացնել ինքնապաշտպանության նպատակով: Հապաղելը կարող էր հազարավոր մարդկանց կորստի պատճառ դառնալ [571] : Սակայն Ֆրանսիան հրաժարվում է օգնել հայերին, քանի որ արդեն համաձայնության էր եկել քեմալականների հետ:

Հաճընի ութամսյա հերոսական ինքնապաշտպանությունը և հայ հերոսուհի կանայք

Քեմալականների գլխավոր հարվածն ուղղվեց Հաճընի դեմ, որտեղ շուրջ 8 000 հայեր էին հաստատվել: 1920 թվականի փետրվարի կեսերին հաճընցիները տեղեկացել էին Մարաշի աղետի և դեպի Հաճըն նախապատրաստվող հարձակման մասին[572]: Ազատատենչ հաճընցին որոշել էր ապավինել իր բազկի զորությանը: Ստեղծվել էր զինվորական մարմին՝ Անդրանիկի առաջին կամավորական գնդի հեծյալ վաշտի հրամանատար Սարգիս Ճեպեճյանի (Ճեպեճի) ղեկավարությամբ: Գործում էր նաև Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդը՝ Հաճընի հայոց հոգևոր առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի նախագահությամբ: Այդ խորհուրդի կազմում ընդգրկված էին Միհրան Գայանը, Սարգիս Ճեպեճյանը, Ռուբեն Երկաթը, Պետրոս Թերզյանը և ուրիշներ: Զինվորագրվել էին 16-50 տարեկան բոլոր տղամարդիկ[573]: Կռվող ուժերը բաժանվել էին խմբերի, կազմակերպվել էր մարտական ուսուցում, պատրաստվում էին պաշտպանական ամրություններ: Մարտիկների թվաքանակը հասնում էր 580-ի (այլ տվյալներով 800 հոգու): Կազմակերպվել էր հետևակային 4

[571] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 564, թ. 9:
[572] Հայոց պատմություն, հ. IV, գ. 1, էջ 227:
[573] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 564, թ. 9:

վաշտ: Սակայն զենքն ու զինամթերքը խիստ անբավարար էին. հայ մարտիկներից զինված էր ընդամենը 300-ը[574]:

Ինքնապաշտպանության խորհուրդը որոշել էր Հաճընի սպառնալի դրության մասին տեղեկացնել գնդապետ Է. Բրեմոնին և Պետրոս Սարաճյանի գլխավորությամբ պատվիրակություն էր ուղարկել Ադանա: Սակայն ֆրանսիական իշխանությունները ոչ մի գործնական քայլ չէին ձեռնարկել:

Միայնակ մնալով ճակատագրի դեմ հանդիման՝ հաճընցիները որոշեցին նահանջել, քանի դեռ քաղաքը վերջնականապես չէր օղակվել թշնամու կողմից: Սակայն Է. Բրեմոնից ստացված հեռագիրն այն մասին, թե հայերին օգնության կհասնեն 1200 կամավոր ու լեգեոնական[575], խափանում է նահանջի որոշման կատարումը: Արդյունքում ֆրանսիական իշխանությունները ոչ միայն ոչինչ չձեռնարկեցին Հաճընին օգնելու համար, այլև Սիս քաղաքում զինաթափեցին 400 հայ կամավորների, որոնք հայրենակիցներին օգնության էին շտապում[576]:

Մարտի 15-ին Հաճընն ամբողջությամբ պաշարվեց քեմալական ջոկատների (հրամանատար՝ Կոզան օղլի Դողան) կողմից: Մարտի 28-ին նրանք վերջնագիր ներկայացրին հանձնվելու մասին, որը մերժվեց հայերի կողմից, սկսվեց Հաճընի յոթնամսյա հերոսամարտը:

Ապրիլի 3-4-ը թուրքերը կատաղի գրոհով գրավեցին Հաճընի հյուսիս-արևելքում գտնվող ամերիկյան «Պորտ» ընկերության շենքը: 15 օր ու գիշեր 20 հայ պատանիներ թուրքերից պաշտպանում էին Ս. Հակոբ վանքի դիրքերը[577]: Անառիկ ամրոցի էր վերածվել Հաճընից դուրս գտնվող Թուրսարգսյանների տունը, որի պաշտպանությունը ստանձնել էին 15 երիտասարդներ՝ Հաջի Պավուգյանի գլխավորությամբ[578]:

---

[574] **Պօղոսեան Յ.,** Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան-տաղի հայ գիւղերը, Անթիլիաս, 2014, էջ 526:
[575] **Պօղոսեան Յ.,** նշվ. աշխ., էջ 611:
[576] Տե՛ս նույն տեղում, էջ 632:
[577] Տե՛ս նույն տեղում, էջ 633:
[578] Տե՛ս նույն տեղում, էջ 636:

Ապրիլի 6-ին թուրքական կանոնավոր զորամասերը և չեթեները փորձել են ճեղքել Հաճընի պաշտպանության շղթան: Ուժերի գերագույն լարումով հայ պաշտպաններին հաջողվել է ետ մղել հակառակորդի բոլոր գրոհները: Թուրքական հրամանատարությունը թարմ ուժեր է կենտրոնացրել Հաճընի շուրջ, թնդանոթներ բերել և հրետակոծության ենթարկել քաղաքը: Ապրիլի 21-ին Տոլոմաճում տեղադրված թնդանոթներից թուրքերը ռմբակոծել են Ս. Հակոբ վանքը, որի պաշտպանները հետ են քաշվել նախօրոք պատրաստված պաշտպանական երկրորդ բնագիծ: Գրավվել է նաև Թուրսարգսյանների տունը, որից հետո պաշարման օղակն ավելի է սեղմվել Հաճընի շուրջ[579]:

Ապրիլի 30-ին թուրքերը կատաղի գրոհ են ձեռնարկել հայկական դիրքերի վրա: Հինգ ժամ տևած մարտն ավարտվել է թշնամու գերակշիռ ուժերի ետ մղմամբ[580]: Մայիսի 10-ին թուրքերը վերսկսել են հարձակումները: Մարտերը շարունակվել են մի քանի օր, և թշնամին այս անգամ էլ ի զորու չէր կոտրելու հայերի դիմադրական ոգին: Թուրքերն ավելի ոգևորվել են մայիսի 30-ի ֆրանս-քեմալական զինադադարից հետո, երբ ֆրանսիացիները թողել են Սիսը և տեղափոխվել Ադանա:

Հունիսի 8-ի լույս 9-ի գիշերը հայկական ուժերը հանկարծակի հարձակում են գործել դիրքերում քնած թուրքերի վրա, հետ շպրտել նրանց՝ ձեռք բերելով զգալի քանակությամբ զինամթերք ու սննդամթերք[581]:

Վերագտնելով իրենց՝ թուրքերը վերսկսել են հարձակումները, սակայն կրկին հետ են շպրտվել: Շուտով նրանց օգնության են հասել թուրքական 78-րդ բանակի զորամիավորումները[582]:

Հաճընի ծանր դրությունը շարունակվել է. զինամթերքը սպառվել էր, քաղաքում սով էր սկսվել: Զենք և սննդամթերք ձեռք բերելու հա-

---

579 **Պօղոսեան Յ.,** նշվ. աշխ., էջ 638-639:

580 **Թէրզեան Ս.,** Հաճընի ութամսեայ դիւցազնամարտը, Պուենոս-Այրէս, 1956, էջ 311-316:

581 **Պօղոսեան Յ.,** նշվ. աշխ., էջ 643:

582 Տե՛ս նույն տեղում, էջ 646:

մար օգոստոսի 6-ի լույս 7-ի գիշերը 100 հայ մարտիկներ մեկ անգամ ևս գրոհի են նետվել՝ թշնամուն պատճառելով 200 զոհ, իսկ իրենք՝ ընդամենը 15 զոհ: Հայերը ձեռք են բերել ոչ միայն զգալի քանակությամբ սննդամթերք, այլև 2 գնդացիր, 100 հրացան, 25 արկղ փամփուշտ, թնդանոթ և 450 ռումբ[583]:

Որոշ ժամանակ անց սովը կրկին իրեն զգացնել է տվել, և ինքնապաշտպանության խորհուրդը որոշել է վերստին դիմել գրոհի: Սեպտեմբերի 18-ի գիշերը Արամ Կայծակի և Զանիել Չաուշի (Թորոսյան) ջոկատները (մոտ 200 հոգի) հաջողությամբ լուծել են իրենց առջև դրված խնդիրը: Մարտում վիրավորվել է թուրք հրամանատար Կոզան օղլի Դոդանը, որն ավելի ուշ ստացած վերքերից մահացել է Վահկայում[584]:

Այնուամենայնիվ, օղակը Հաճընի շուրջը գնալով ավելի էր սեղմվում: Ակնհայտ էր, որ առանց կողմնակի աջակցության պաշտպաններն այլևս ի վիճակի չէին լինի շարունակելու պայքարը: Հաճընցիները հոկտեմբերի 3-ին երեք սուրհանդակների միջոցով նամակ ուղարկեցին՝ Ադանա՝ հուսալով, թե կստանան խոստացված օգնությունը: Սակայն օգնություն չի լինում:

Լքված բոլորից՝ Հաճընը, փաստորեն, դատապարտված էր կործանման: 1920 թվականի հոկտեմբերի 19-ի վաղ առավոտյան թուրքերը ռմբակոծեցին քաղաքը, փլվեց Ս. Աստվածածին եկեղեցին, կտրվեց կապը կենտրոնի և դիրքերի միջև: Թուրքերը ներխուժեցին քաղաք, մարտեր սկսվեցին ամեն մի փողոցի, յուրաքանչյուր տան համար:

Սրի քաշվեց Հաճընի ողջ հայությունը: Արամ Կայծակի և Զանիել Թորոսյանի գլխավորությամբ միայն 387 հոգու հաջողվեց ճեղքել պա-

---

[583] Յուշամատեան Մեծ եղեռնի, էջ 882-883:
[584] **Պօղոսեան Յ.,** նշվ. աշխ., էջ 652:

շարման օղակը և մարտեր մղելով՝ հասնել Ադանա՝ ճանապարհին տալով 22 զոհ[585]:

Այսպիսով՝ Հաճընի տասը հազար բնակչությունից, որոնք վերապրել էին 1915-1916 թվականներին Դեր Զորի, Ռաքքայի, Ռա-ուլ-Այինի, Մեսքենեի կոտորածները և 1919 թվականին վերադարձել Հաճընն, միայն 387 զինված տղամարդ և ընդամենը 7 կին փրկվեցին քեմալականների կողմից իրականացված 1920 թվականի կոտորածից: Այս 7 փրկված կանայք էին՝ *Սառան, Հռիփսիմեն, Լուսինեն, Եղիսաբեթ Բալաբանյանը, ինչպես նաև Նվարդ Թելյանը, Ագուլինե Խանջյանը, Եսթեր Մալյանը*, որոնք, զենքը ձեռքներին, մարտնչել էին տղամարդկանց հետ[586]: Հաճընի կոտորածը վերապրած 7 կանանց նկարները պատկերված են «Հաճընի ընդհանուր պատմություն» գրքում: Փրկվածների թվում էր նաև տասնչորսամյա մի պատանի՝ Սարգիս Կրբեկյանը, որը հետևել էր զինված կանանց, այդ պաշտպանների հետ փրկվել էր կոտորածից:

«Այդ 7 կանայք կարծես Հաճընի կանանց 7 մասունքները լինեին, քաղաք, որը հիմնականում 1918 թվականից բնակեցված էր կանանցով՝ մեծ մասամբ այրիներով, որոնց ամուսիններն Առաջին համաշխարհային պատերազմում զորակոչվել էին թուրքական բանակ, կա՛մ զոհվել էին, ռազմաճակատում, կա՛մ ոչնչացվել, կա՛մ էլ սպանվել էին 1915-1918 թվականների բռնագաղթի ժամանակ»,– գրում է արմատներով հաճընցի Հայկանուշ Սաջյան-Գրքաշարյանը:[587]:

Հաճընի ինքնապաշտպանությունը տվեց իր աննման հերոսուհիներին, որոնք կռվեցին մինչև վերջ՝ թշնամուն ահուսարսափ պատճառելով:

---

[585] **Սաջյան-Գրքաշարյան Հ.,** Հաճընն, եթե քեզ մոռանանք..., հուշագրություն, Երևան, 2014, էջ 248, 273-274:

[586] **Սաջյան-Գրքաշարյան Հ.,** նշվ. աշխ., էջ 262:

[587] Տե՛ս նույն տեղում:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ անգլիական ու ֆրանսիական բանակները գրավեցին Կիլիկիան և սկսեցին հայանպաստ խոստումներ շռայլել, բռնի կերպով տեղահանված հայության խլյակները նոր հույսերով տոգորվեցին և հայրենիք վերադառնալով՝ իրենց տունն ու տեղը սկսեցին վերաշինել:

Հաճընցիների տունդարձը սկսվեց 1919 թվականի փետրվարին, և շուտով ազգային կյանքը վերակազմակերպվեց: Սակայն նույն տարվա օգոստոսին շրջակա թուրքական գյուղերում հայտնվեցին քեմալական առաջին հրոսակախմբերը, և սկսվեցին սպառնալիքներն ու սպանությունները: Նույնը պատահեց նաև Կիլիկիայի կարևոր կենտրոն Մարաշում. երբ հայոց առաջնորդները Ադանայի կենտրոնական հրամանատարության ֆրանսիացի կառավարչին դիմեցին և ինքնապաշտպանության համար զենք խնդրեցին, ֆրանսիացի պատասխանատուն, հայոց այս խնդրանքը համարելով ֆրանսիական բանակի հանդեպ անվստահության նշան, կտրականապես մերժեց: Տեսնելով, որ Ադանայի, ինչպես նաև Սիսի ֆրանսիական հրամանատարության կենտրոնները ոչ մի պարտավորություն չեն ստանձնում՝ հայերին քեմալական հարձակումներից պաշտպանելու համար, հաճընցիները վճռեցին դիմել ինքնապաշտպանության:

Ինքնապաշտպանության բարձրագույն ժողովի հսկողության տակ, մարտական խմբերի կողքին կանանց պարենավորման, խնամատարական և հետախուզական խմբեր կազմվեցին, ինչպես նաև մարտական խմբեր, որտեղ իրենց հանդգնությամբ աչքի ընկան *Նվարդ Թելյանը, Եսթեր Մալյանը, Ակյուլինե (Ագյուլինի) Խանջյանը*[588]: Այս երեք հերոսուհիները հաճախ դիմահար կրակով ահ ու սարսափ էին պատճառում թուրք-քրդական խուժանին՝ մեծ կորուստներ պատճառելով թշնամուն: Հաճախ դիրքից դիրք էին անցնում՝ ոգևորելով ինքնապաշտպանության մասնակիցներին, միաժամանակ նրանց օգ-

[588] **Պողոսյան Յ.,** նշվ. աշխ., էջ 644:

նում էին զինամթերքով և պարենով: Նրանք մարտական խմբերով դիմագրավում էին թշնամու հարձակումներին: Երեքն էլ դիպուկ կրակողներ էին, քաջ ու համարձակ: Նույնիսկ փողոցային կռիվների ժամանակ նրանք դիրքերը չլքեցին: Այս անվեհեր և քաջասիրտ հայուհիները իրենց հերոսությամբ մեծ ճանաչում ձեռք բերեցին:

1920 թվականի մարտին քեմալական հրոսակախմբերը գրավեցին Հաճընը Սիսի հետ կապող Վահկան և սկսեցին հարվածել հայոց առաջավոր դիրքերը: Հաճընցիները բուռն կերպով դիմադարձեցին՝ հուսալով, որ հայ կամավորները կկարողանան օգնության հասնել: Սակայն Կիլիկիայի այլ շրջաններում ևս սկսվել էին ինքնապաշտպանական կռիվներ, և փետրվարին ֆրանսիացիները արդեն քաշվել էին Մարաշից՝ հայերին թուրք խուժանի դեմ անպաշտպան թողնելով: Մարաշի Ֆընտըճագի շրջանում կատաղի կռիվներ էին տեղի ունենում, որտեղ իրենց քաջությամբ մեծ համբավ էին ձեռք բերել *Խաթուն Յափուջյան-Սաղպազարյանը* և նրա եղբայր Կարապետը[589]:

Մայիսի վերջերին ֆրանսիացիները քեմալականների հետ զինադադար էին կնքել, որի պայմաններից մեկն էլ Լեռնային Կիլիկիայի և Սիսի հանձնումն էր: Այսպիսով՝ Հաճընն էլ մենակ մնաց քեմալական գերակշիռ ուժերի առաջ: Այս համաձայնության հրապարակումից հետո Կիլիկիայի զանազան շրջանների կանայք միացան և Ազգերի դաշնությանը հեռագիր ուղարկեցին՝ բողոքելով ֆրանս-քեմալական համաձայնության դեմ և շեշտելով Կիլիկիայի հայության կյանքին և պատվին սպառնացող վտանգը: Կիլիկիայի կանանց այս կոչը մնաց անպատասխան:

Բախտին հանձնված հաճընցիները լարեցին իրենց ուժերը: Անհրաժեշտ պարենը ամբարելու համար հաճընցի մարտիկները հարձակվեցին շրջակա թուրքական գյուղերի վրա, իսկ կանանց պարենավորման խումբը մեծ քանակությամբ պաշար հավաքեց: Այս կռիվների

---

589 **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 134-135:

ընթացքում քեմալական զորքի հրամանատարը ծանր վիրավորվեց: Սակայն շատ չանցած կին սուրհանդակները լուր բերեցին, որ թշնամու նոր ուժեր են տեղ հասել, և նոր գրոհ է նախապատրաստվում[590]: Սպասված հարձակումը տեղի է ունեցավ հոկտեմբերի 15-ին, և թնդանոթները ամբողջ օրը գոռացին[591]: Հակառակ հաճընցիների մղած գոյամարտի՝ պաշարման օղակը հետզհետե սեղմվեց, մինչև որ դիմադրողների զինապահեստը սպառվեց, և խառնաշփոթ նահանջ սկսվեց: Քչերը փրկվեցին, և թշնամու պաշարման օղակը ճեղքելով՝ վերջապես Ադանա հասան:

Վերապրողները մեծ հիացումով են արտահայտվել տղամարդկանց կողքին կանանց համառ դիմադրության մասին: Ընդհանուր խուճապի մեջ նրանցից շատերը նախընտրել են պատվով մեռնել, քան թե թուրք զինվորների և նրանց միացած «բաշիբոզուկների» ձեռքն ընկնել: Հուշագիրները, Նվարդ Թելյանի, Եսթեր Մալյանի և Ակյուլե Խանջյանի անուններն առանձնացնելով հանդերձ, հիշատակում են կանանց խմբերի պարտականության գիտակցությունն և աննման քաջությունը:

Կիլիկիայի հայոց փորձառությունը մեկընդմիշտ հաստատում է, որ 1915 թվականից սկսված՝ հայկական ցեղասպանությունը շարունակվում էր. քեմալական Թուրքիայի կառավարությունը շարունակում էր երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը: Երկուսի պարագայում էլ նպատակը մեկն էր՝ Արևմտյան Հայաստանի հայության հետքը ջնջել և հայոց պատմական հայրենիքը ամբողջովին յուրացնել:

1920 թվականի սկզբներից իրադրությունը խիստ սրվել էր նաև Դաշտային Կիլիկիայում: Արդեն հունիս-հուլիս ամիսներին քեմալական ջոկատները սպառնում էին Ադանային: Հուլիսի 11-ին զենքի էր դիմել Ադանայի մուսուլմանական բնակչությունը: Հաջորդ օրը հարձակման էին անցել քեմալական ջոկատները: Ֆրանսիական 3 հազարանոց ջոկատը, որի ավանգարդում կռվում էին հայ մարտիկները, անցել էր հա-

---

590 **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 134-135:
591 Տե՛ս նույն տեղում:

կահարձակման: Մերսինից հարձակման էր անցել նաև հունական զորասյունը, որը պարտության էր մատնել թշնամուն: Ընդհարումները շարունակվել էին մինչև սեպտեմբերի կեսերը, ապա դրությունը մասամբ կայունացել էր[592]:

Ծանր էր իրավիճակը նաև Այնթապում, որտեղ հաստատվել էին մոտ 17 հազար հայեր: Նրանք ձգտում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատել Այնթապի բազմահազար թուրքերի հետ: Թուրքերի համար հայերը, սակայն, օտար նվաճողների դաշնակիցներ էին և սպառնում էին Թուրքիայի տարածքային ամբողջականությանը: 1919 թվականի դեկտեմբերին ստեղծվել էր այսպես կոչված «Կենտրոնական հանձնաժողով», որի խնդիրը թուրքական ուժերի համախմբումը և պայքարն էր ֆրանսիացիների ու հայերի դեմ: Ավելի ուշ ձևավորվեց «Այնթապի պաշտպանության ընկերությունը», որն էլ ստանձնեց պայքարի կազմակերպումն ու ղեկավարումը[593]:

Հայ ազգային կուսակցությունները, պարզորոշ գիտակցելով դեպքերի զարգացման իրական ընթացքը, ձեռնամուխ են եղել ինքնապաշտպանության կազմակերպմանը: Կազմվել են ջոկատներ, կառուցվել է զինարան, պատրաստվել են զենքեր: Ստեղծվել է Զինվորական մարմին՝ Աստուր Լևոնյանի, Ավետիս Գալամքերյանի և Ներսես քահանա Թավուքճյանի անդամակցությամբ: Ինքնապաշտպանության դեկավար է ընտրվել Ա. Լևոնյանը: Խիստ անբավարար էր զենքը. 500 մարտիկներից ժամանակակից զենքով զինված էր ընդամենը 50 հոգին: Մյուսները զինված էին որսորդական հրացաններով:

Մ. Քեմալի հրամանով Այնթապի շրջանի թուրքական ուժերի հրամանատար է նշանակվել Քլըջ Ալին:

Ապրիլի 1-ին, երբ գեներալ Անդրեան ֆրանսիական ուժերի մեծ մասով դուրս է եկել քաղաքից և շարժվել Քիլիսի ուղղությամբ, թուր-

---

[592] Ատանայի Հայոց պատմութիւն, Անթիլիաս, 2012, խմբ. Բ. Եղիայեան, էջ 421-557:

[593] Պատմութիւն Անթէպի Հայոց, Անթիլիաս, 2013, աշխ. և խմբ. Գ. Ա. Սարաֆեան, էջ 1043:

քերն անցել են հարձակման[594]: Սկսվել է Այնթապի մոտ մեկ տարի (1920 թվականի ապրիլի 1 - 1921 թվականի փետրվարի 8) տևող գոյամարտը:

Օգտագործելով հարձակման անսպասելիությունը՝ թուրքերին հաջողվել է գրավել քաղաքի արևելյան ծայրամասը, գրոհել հայկական թաղամասերի վրա, բայց հանդիպելով հայկական դիրքերից տեղացող համազարկերին՝ գամվել են տեղում: 16 օր անընդմեջ շարունակվող գրոհները չեզոքացվել են հայերի ամրակուռ դիմադրությամբ:

Ինչպես Մարաշում, այնպես էլ Այնթապում ֆրանսիական կայազորը սկզբնական շրջանում միայն հետևում էր տեղի ունեցող իրադարձություններին:

Պաշարված քաղաքին օգնության են եկել գնդապետներ Նորմանի և Դեբիվարի զորաջոկատները, որոնք ապրիլի 16-ին ճեղքել են պաշարման օղակը ՝ մտնելով Այնթապ: Օգնական ուժեր ստանալով՝ թուրքերն ապրիլի 29-ին գրավել են քաղաքը շրջապատող բարձունքները և սկսել են ռմբակոծել հայկական դիրքերը[595]:

Մարտերը փոփոխական հաջողություններով ընթացել են նաև ամռան ամիսներին: Ապա կարճատև դադարից հետո մարտերը բորբոքվել են նոր թափով և շարունակվել մինչև դեկտեմբեր, երբ ֆրանսիական զորամիավորումները ջախջախել են հակառակորդին և ետ շպրտել մոտ 20 կիլոմետր:

1921 թվականի փետրվարի 8-ին թուրքերը հաշտություն են խնդրել[596]: Փաստորեն, ֆրանսիական զորքերի օգնությամբ Այնթապի հայությունը փրկվել է, սակայն ավելի ուշ, երբ 1921 թվականի մարտի 9-ին Լոնդոնում կնքվել է թուրք-ֆրանսիական պայմանագիր, ըստ որի՝ ֆրանսիացիները պետք է թողնեին Այնթապի սանջակը, Քիլիսը և այլ

---

[594] Պատմութիւն Անթէպի Հայոց, Անթիլիաս, 2013, աշխ. և խմբ. Գ. Ա. Սարաֆեան, էջ 1043:
[595] Տե՛ս նույն տեղում, էջ 1052:
[596] Տե՛ս նույն տեղում, էջ 1061:

շրջաններ, այնթապցիները բռնել են գաղթի ճամփան՝ լքելով հայրենի օջախները:

Օրհասական էր իրադրությունը Զեյթունում: 1919 թվականի մայիս - սեպտեմբեր ամիսներին Զեյթունում և նրա շրջակայքում հաստատվել էին 1200 հայեր (բուն Զեյթունում 1050)՝ ջանալով ստեղծել կյանքի քիչ թե շատ տանելի պայմաններ[597]: Արամ Չոլաքյանի ատենապետությամբ ստեղծվել էր Ազգային միություն, որի կազմում ընդգրկվել էին Սեդրակ Չոլայքյանը, Հովհաննես Սիմոնյանը, Լևոն Նորաշխարհյանը և ուրիշներ: Կազմվել էին նաև պարենավորման և ինքնապաշտպանության հանձնաժողովներ:

1919 թվականի վերջերից թուրքերը բազմաթիվ ճնշումներ էին գործադրում՝ ձգտելով հրահրել ընդհարումներ[598]: Իրենց սպառնացող վտանգի մասին զեյթունցիները տեղեկացրել էին ֆրանսիական իշխանություններին, սակայն բախվել էին նրանց քար անտարբերությանը: Այսպիսի պայմաններում Զեյթունի ազգային միությունը զենքի էր կոչում 15-70 տարեկան բոլոր տղամարդկանց: Կազմավորվել էին ջոկատներ, նշանակվել հրամանատարներ:

1920 թվականի հունվար ամսին թշնամին առաջին հարվածը հասցրեց Զեյթունի գյուղերին, որոնք հիմնականում զուրկ էին պաշտպանության միջոցներից: Հարձակման ենթարկվեցին Ֆռնուզ, Կուչեղ (Գոչող), Հին գեղի, Գարաթութ և Պուղուրենք գյուղերը, որոնց բնակչությունը, փրկվելով օգնության հասած զեյթունցիների կողմից, անցնում էր Զեյթուն: Այստեղ էր ապաստանել նաև Մխալ գյուղի բնակչությունը[599]:

1920 թվականի մարտի սկզբին Զեյթունն արդեն ամբողջությամբ շրջափակվել էր թուրքերի կողմից: Ուժերը խիստ անհավասար էին: Ինչպես նշում է Ն. Զեյթունցյանը, Զեյթունի ինքնապաշտպանական 6

[597] Հայոց պատմություն, Երևան, 2010, էջ 230:
[598] Տե՛ս նույն տեղում:
[599] Տե՛ս նույն տեղում:

խմբերից յուրաքանչյուրը բաղկացած էր 48 ռազմիկներից, որոնցից միայն 16-ն էին զինված ժամանակակից զենքով, իսկ 20-ը՝ փողերից լիցքավորվող հրացաններով:

Անորոշ ու տագնապալի վիճակը շարունակվում է մինչև 1921 թվականի ապրիլը, երբ ժամանում են քեմալական նոր ուժեր և նախապատրաստվում հարձակման:

1921 թվականի հունիսի 18-ին թուրք հրամանատարներ Ահմեդ Թևֆիգը և Ահմեդ Էդիպը վերջնագիր են ներկայացրել հայերին՝ պահանջելով անմիջապես թողնել զորանոցը, հանձնել բոլոր զենքերը և զինվորագրվել քեմալական բանակին[600]:

Հունիսի 22-ին թուրքերը, թնդանոթներ մոտեցնելով Զեյթունին, հայերից պահանջել են հանձնվել և տեղափոխվել Մարաշ՝ տալով ընդամենը 5 ժամ ժամանակ: Կարծելով, թե փրկության ելքը Մարաշ գաղթելն է, 711 հոգի կրկին ոտք են դրել տարագրյալի ուղին: Սակայն թուրքերը 150 հոգու հետ են վերադարձրել՝ գաղթել արտոնելով միայն 590 զեյթունցիների[601]:

Զորանոցում մնացողները վճռել են զենքը ձեռքին պայքարել թշնամու դեմ, ճեղքել պաշարման օղակը, իսկ անհաջողության դեպքում քաջի մահով ընկնել են հայրենի քաղաքի և օջախների պաշտպանության դիրքերում:

Թուրքերը սկսել են ռմբակոծել զորանոցը: Սկսվել է վերջին և օրհասական մարտը, որ պետք է մղեին լեռնականների բեկորները թուրքական կանոնավոր զորամասերի, վաշտերի դեմ: Երկու օր տևող հրետակոծության հետևանքով փլվել է զորանոցը, բռնկվել է հրդեհ: Տեսնելով, որ վիճակն օրհասական է, Ազգային միությունը որոշել է ճեղքել պաշարման շղթան: Վարդ-Մեխակի տվյալներով շրջապատումից կա-

[600] Հայոց պատմություն, էջ 231:
[601] Տե՛ս նույն տեղում:

ողացել են դուրս գալ 370-ը (300 տղամարդ և 70 կին), իսկ զորանոցում մնացած 140 հայերը սպանվել են թուրքերի կողմից[602]:

Թուրքերը, ենթադրելով, թե հայերը նպատակ ունեն հասնել Դաշտային Կիլիկիա և փրկություն որոնել ֆրանսիական գոտում, մեծ ուժեր էին կենտրոնացրել բոլոր ճանապարհներին: Համառ և անհավասար մարտեր մղելով, խիզախության և տոկունության անօրինակ հրաշքներ գործելով՝ սեպտեմբերի 2-3-ին Հ. Սիմոնյանի և Լ. Նորաշխարհյանի գլխավորությամբ 118 հոգու հաջողվել է հասնել Քիլիս՝ ֆրանսիական գոտի, և փրկվել: Շուտով նրանց են միացել նաև կոտորածներից փրկված զեյթունցիներ, ինչպես նաև Մարաշ գաղթած 590 զեյթունցիների բեկորներ, որոնց մյուս՝ մեծ մասը ճանապարհին կոտորվել էր թուրքերի կողմից:

Ավելի ուշ, երբ 1921 թվականի հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված պայմանագրով Ֆրանսիան Կիլիկիան վերջնականապես հանձնեց Թուրքիային, զեյթունցիները ևս, թուրքական յաթաղանից փրկված կիլիկիահայության հետ միասին, հեռացան հայրենի երկրից:

* * *

Մեր պատմության մեջ հաճախ ենք հանդիպում իրենց զավակների վրա խոր ազդեցություն թողած մայրերի, հերոսածին մայերի, որոնք իրենց զավակներին սնել ու դաստիարակել են քաջության ոգով: Այդպիսին էին ֆիդայիների մայրերից շատերը: Ազգային նվիրում ունեցող բազմաթիվ մայրերի ենք հանդիպում հայոց պատմության էջերում:

Մեր նորագույն պատմության մեջ ազգային նկարագրով աչքի ընկած մայրերից էր Արմեն Գարոյի մեծ մայրը՝ **Զանազան Փաստրմաճյանը**, բոլորին հայտնի Կոկոն[603]: Նա Կարինի Ոզնի գյուղից պարզ ու անուս մի աղջիկ էր, որի ծնողները նրան ենիչերիներից ազատելու համար խոտի դեզի մեջ էին պահել և տարել քաղաք, առաջնորդին հանձ-

---

[602] Հայոց պատմություն, էջ 231:
[603] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 98:

նել: Վերջինս էլ նրան հանձնել էր իր անվախությամբ հայտնի ուստա Հովհաննեսի խնամքին: Կոկոն ամուսնացել էր ուստայի մեծ տղայի՝ Խաչատուրի հետ: Շուտով մեծ հարստության տեր էր դարձել Կարինում մեծ հեղինակության ու ազդեցություն ձեռք բերած Փաստրմաճյան ընտանիքը: Կոկոյի ամուսինը եկեղեցիներ ու կամուրջներ էր կառուցել տվել և քաղաքի աղքատներին ու բանտարկյալներին էր կերակրել: Այս բարերարությունները թուրք կառավարության ուշադրությունն էին գրավել, և 1872 թվականին թուրք վարձկանները սպանել էին Կարինի ազդեցիկ և ղեկավար դեմքին՝ Խաչատուրին[604]: Գործած այս անարդարության դեմ ըմբոստացել էր Կոկոյի հոգին և տարիներով եկեղեցի չէր գնացել, որովհետև չէր կարողացել ընդունել Աստծո հեղինակությունը, որն այդպիսի անարդարություն էր թույլ տվել, հետո էլ շարունակել էր անտեսել:

Անարդարություն դեմ ընդվզող այդ հոգին մայրը փոխանցել էր իր զավակներին և թոռներին: Նրանց միշտ պատվիրել էր ընդդիմանալ սխալ կարգադրությունների և անիրավասությունների դեմ: Ո՞վ էր իրավունք տվել, որ թուրքն ու քուրդը հայերի հողերը հափշտակեն, անօրինաբար ունեցվածքը գրավեն: Պարզ ու անուս գյուղացի մայրիկի բռնած դիրքը և մտածելակերպը խոր տպավորություն էին թողել երիտասարդ Արմեն Գարոյի վրա[605]:

Հայ ազատագրական պայքարի նշանավոր դեմքերից Ռուբենի մայրը ուշադրության է արժանի իր տղայի կյանքում ունեցած բացառիկ դերով: Մեր ժողովրդի նվիրյալ զավակների նահատակությունից հետո Ռուբենը մեծ հուսալքություն է ապրել՝ մտածելով, որ նահատակությունը հրացանից պոկված անմիտ գնդակ էր և «էրգիր» գնալու փոխարեն գնացել է իր հայրենի տունը: Սակայն մայրը հորդորել է նրան. «–Տղաս քո բոլոր ընկերները գնացին և սպանվեցին, աստված թող հոգիները լուսավորի, բայց եթե մեկը ճանապարհ է բռնում, պետք է շարունակել,

---

[604] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 98:
[605] Տե՛ս նույն տեղում, էջ 100:

ես չեն անիծում նրանց, որ ողջ են մնացել: Բայց ով որ մեռնողի ճանապարհը չի շարունակում, նա անարժան է մեռածներին: Բարով ես եկել, բարով էլ գնաս»[606]: Մոր այս խոսքերը խորը տպավորություն են թողել Ռուբենի վրա: Սրանից հետո նա «էրգիր» է անցել, նախ՝ Վասպուրական, ապա՝ Տարոն, և Սահմանադրության հռչակումից հետո միայն տուն է վերադարձել: Իր իսկ վկայությամբ նեղ վայրկյաններին մոր խոսքերն է հիշել և գոտեպնդվել:

Սահմանադրությունից հետո, երբ Ռուբենը պատրաստվել է Եվրոպա գնալ՝ իր պատանի օրերի անհասանելի երազը՝ ուսումը շարունակելու համար, հանկարծ նամակ է ստացել Սարգիս Բարսեղյանից: Վերջինս հայտնել է, որ ժողովրդին սպառնացող վտանգը շատ մոտիկ է ու մեծ, խնդրել է անմիջապես միանալ իրեն[607]: Եթե թանկ է անցյալը, թանկ են նաև մեր ժողովրդի զավակները:

Հոգեկան տագնապ է սկսվել Ռուբենի մեջ. նա մորը բացատրել է, որ անիմաստ մահը և կյանքը իրար կողքի են նստած, պիտի ընտրել մեկը, սակայն չգիտեր՝ որը: Մերժել Սարգիսին և ընտրել կյանքը կնշանակեր շնչավոր մի դիակ դառնալ, իսկ ընդունելով առաջակը՝ կնշանակեր նահատակ դառնալ:

Մայրը մի պահ լռել է և իր կյանքի օրինակը բերելով՝ տղային բացատրել, թե ինչպես կյանքն ու մահը իրար քույր և եղբայր են, որ չպետք է մահից վախենալ և ոչ էլ շատ ուրախանալ կյանքի համար: «Բարով ես եկել, բարով էլ գնաս: Թե որ չգնաս, երկու ոտքի վրա կենդանի դիակ դառնաս: Երբ որ տեսնես, որ վտանգ չկա, կգնաս ուսումդ շարունակելու»,– ասել է մայրը որդուն[608]:

Ռուբենը մոր խոսքերը որպես պատգամ պահել է ամբողջ կյանքի ընթացքում:

---

[606] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Զ, էջ 158:
[607] Տե՛ս նույն տեղում, էջ 160:
[608] Տե՛ս նույն տեղում:

Հայ ժողովրդի համար ընտանիքը սուրբ տաճար է և խարիսխ, իսկ այդ սուրբ տաճարի քրմուհին նվիրված և անձնազոհ հայ մայրն է: Այդ մեծ ընտանիքում միշտ աչքի են ընկել մայրերը, որոնք միշտ զոհաբերությամբ խնամել են իրենց ֆիդայի ու ազատագրական պայքարի նվիրյալ զավակներին, զորավիգ կանգնել նրանց գաղափարական մեծ գործին:

Վարդգեսի մայրը ծնվել է Կարինում, սակայն, երբ 1899 թվականին տղան Վանի հեղափոխական աշխատանքներին է միացել, ինքն էլ է դարձել հեղափոխական: Կարճ ժամանակ անց դարձել է բոլոր ֆիդայիների և հեղափոխական գործիչների մայրը: Նրանց հագուստն է լվացել ու կարկատել, ուտելիք է պատրաստել, նույնիսկ նրանց բանտարկված ընկերների կարիքներն է հոգացել[609]:

Մայրիկի տունը ապահով թաքստոց էր: Չնայած իր տարիքին՝ քանի-քանի անգամ ծեծվել էր, սակայն երբեք չէր դժգոհել, ընդհակառակը, միշտ ժպտադեմ դիմավորել էր փախստականներին և նրանց հանգիստն ու ապահովությունը հսկել:

Մի օր, երբ Հրայր Դժոխքը Սասունից իրենց տանն է ապաստանել, զինվորները անակնկալ պաշարել են տունը, սակայն Մայրիկի հնարամտությունը փրկել է դրությունը: Աղջիկներին ու հարսներին սենյակի մի անկյունում է կանգնեցրել, իսկ փոքրակազմ Հրայրին նրանց հետևում է թաքցրել և պատվիրել, որ երբ զինվորները իրենց մոտենան, ճչան, վայնասուն բարձրացնեն, որպեսզի թշնամին խրտնի և հեռանա, իսկ ինքը իր լայն թիկունքը հենել է, զենքի գաղտնի պահարանին[610]: Երբ զինվորները մոտեցել են պահարանին, Մայրիկը, կեղծ զայրույթ ցույց տալով, կավե ամաններից մի քանիսը գետնին է խփել և ասել. «Այստեղ բան չկա, կոտրեցե՛ք, ջարդեցե՛ք, ինչ կուզեք,

---

[609] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 101:
[610] Տե՛ս նույն տեղում:

բան չկա»[611]: Մայրիկի հնարքը հաջողվել է. և՛ Հրայրը, և՛ զենքի պահեստը փրկվել են թշնամու ձեռքն ընկնելուց:

Վարդգեսը 1906 թվականի փոխադրվել է Տիգրանակերտի բանտ: Մայրիկը վերադարձել է Կարին, և այդ հոգեպես աննվաճ կինը սկսել է ֆիզիկապես հյուծվել[612]: Սահմանադրության հռչակումից հետո տղան ազատվել է բանտից, մոր միակ ցանկությունը նրան վերջին անգամ տեսնելն է եղել: Սակայն Վարդգեսի տուն հասնելուց մի քանի օր առաջ մայրն արդեն մահացել էր:

* * *

Կրթական և հասարակական գործերին նվիրված հայուհիներից կարելի է առանձնացնել խիզանցի քույրերին:

Կ. Սասունու խմբագրած «Տարոն Աշխարհի պատմություն» լայնածավալ աշխատության մեջ 1870-ական թվականների մասին հիշատակվում է հետևյալը. «Տարոնցին դեռ աղջկան դպրոց ուղարկելու, կարդալ սովորեցնելու վարժված չէր. սովորող աղջիկներից փախչում էին: «Կարդացող աղջիկը տանը հարս չի լինի»,– այդպես էր արտահայտվում տարոնցին»[613]:

Նման պայմաններում խիզանցի երկու քույր իրենց քահանա հոր և երկու ուսուցիչ եղբայրների՝ Փիլիպպոսի և Հովհաննեսի հետ Պոլսից Մուշ են գնացել և աղջիկների ու տղաների համար առանձին դպրոցներ բացել Ս. Մարինե թաղում: Դժբախտաբար, պատմության մեջ չեն պահպանվել Տարոնի կրթական առաջին գործիչների անունները: Կա միայն հիշատակություն, որ կրթական հաստատությունը «Դպրոցասիրաց արևելյան ընկերությանն» էր պատկանում[614]:

---

[611] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 101:
[612] Տե՛ս նույն տեղում:
[613] Տե՛ս նույն տեղում, էջ 139:
[614] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 249:

Խիզանցի քույրերը վճռական են եղել և հավատավոր: Նրանք խորապես տպավորվել են Տարոնի Հովնան եպիսկոպոսի և Խրիմյան Հայրիկի ազգանվեր պատգամներից և հավատացել, որ առանց կրթական վերելքի հայը չի կարող իր դատն ու ազգային շահերը պաշտպանել: Նրանք Խրիմյան Հայրիկի նախաձեռնությամբ հրատարակվող «Արծվիկ Տարոնի» հավատարիմ ընթերցողներն են եղել և գիտակցել են Մուշի և Տարոնի ցավերը:

«Տարոն աշխարհի պատմության» մեջ արտացոլում է այդ ցավերի նկարագրությունը. «Հայ ժողովուրդը ամենօրյա ջարդի էր ենթարկվում Էրզրումում, Վանում, Բաղեշում, Մուշում և Տիգրանակերտի քրդական շրջանների մեջ: Աչքի ընկնող երիտասարդները սպանվում էին, գեղեցիկ կանայք ու աղջիկները բռնի առևանգվում էին, կալվածքները բռնագրավվում էին, տարվա բերքը կողոպտվում էր, անասուններին քշում տանում էին, դեզերը հրդեհվում էին, եկեղեցիներն ու վանքերը պարբերաբար կողոպտվում և պղծվում էին, շատերին կրոնափոխ էին անում: Պարզորոշ քչանում էր հայ ժողովուրդը: Մնացած օջախների մեջ մեծացած մանկիկները, երբ երիտասարդ էին դառնում, կտրիճ երիտասարդներին գլխատում էին, իսկ իգական սեռի ներկայացուցիչներին առևանգում էին և իսլամացնում: Ու այս անհուն աղետը ամենօրյա իրողություն էր: Մի գավառը մյուսից տեղյակ չէր, շատ տեղերում կատարվածը գրի չէր առնվում»[615]:

Այս ամենին հակառակ՝ խիզանցի քույրերը, նրանց բարեպաշտ հայրն ու երկու եղբայրները ամեն զոհողության գնացին՝ իրենց ժողովրդին ծառայելու համար: Անհրաժեշտ էր նոր սերունդ դաստիարակել՝ հայության իրավունքները պաշտպանելու համար: Իրավունքի պաշտպանությունը պետք է խորացներ ազգային գիտակցությունը՝ հետագայում ազգային-ազատագրական շարժման վերածելու համար:

---

[615] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 141:

Մշո Ս. Մարինե թաղամասում սկսեց նախ տղաների դպրոցը գործել, իսկ աղջիկների համար որպես դպրոց ծառայում էր Նատո Բորոյանի տան մեծ սենյակը: Քույրերը այնքան մեծ եռանդով էին գործում, որ շուտով սկսում են բոլորի սերն ու հարգանքը վայելել: Հետզհետե տարոնցու համար աղջիկների դաստիարակությունը ոչ միայն ընդունելի, այլև փափագելի դարձավ:

1879 թվականին Պոլսում հիմնված «Հայոց միացյալ ընկերության» ջանքերով Ս. Մարինե եկեղեցու մոտ աղջիկների վարժարանի նոր շենք կառուցվեց: Իսկ տղաների համար Շեկ Ավետարանի Ս. Աստվածածին եկեղեցին այգիների մեջ շենք կառուցեց և կոչեց Մուշի կենտրոնական վարժարան: Նույն տարում Պոլսի «Ազգանվեր հայուհիների ընկերության» տնօրենուհին էլ Մուշ այցելեց և օժանդակեց կրթական գործի ծավալմանը: Այս ընկերության սյուներն էին կրթության նվիրյալ **Զապել Ասատուրը (Սիբիլ), Արշակուհի Ճևեճյան-Թեոդիկը** և այլ նվիրյալ հայուհիներ[616]:

Խիզանցի քույրերը շարունակեցին իրենց սկսած աշխատանքը և նրանից հոգեկան բավարարվածությունը ստացան: Մուշի Կենտրոնական վարժարանը դարձավ Տարոն աշխարհի համար կրթական և մտավորական կարևոր կենտրոն: Ժամանակի ընթացքում «Հայոց միացյալ ընկերությունը» ուրիշ դպրոցներ էլ բացեց Տարոն աշխարհի գլխավոր գյուղերում:

Խիզանցի քույրերի նման կարինցի Մոմճյան քույրերն էլ՝ **Արմենուհին, Եպրաքսյան, Աղավնին** և **Երանուհին (Տիկ. Մանուկյան)**, 1897-ական թվականներին կրթական երկարամյա գործունեություն ծավալեցին Կարինի մեջ:

Հայտնի ուսուցչուհիներ էին **Ագապի** և **Հռիփսիմե Հայրապետյան քույրերը, Սաթենիկ Սուճյանը, Սաթենիկ Կարապետյանը, Զաբել Եազճյանը, Վարսենիկ Շամլյանը** և շատ ուրիշներ[617]: Նրանց

---

[616] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 141:

[617] **Մոմճյան-Մանուկյան Ե.**, «Հայրենիք» օրաթերթ, 8 դեկտեմբերի, Բոստոն, 1938:

շնորհիվ հատկապես Կարինի մանկապարտեզների համբավը հասավ ներքին գավառները՝ «ստիպելով կարնեցի օրիորդներին, որ լեռներ և ձորեր կտրեն, և քրդի ու թուրքի վախը իրենց սրտերում՝ գնան գոնե մոտակա գավառները կրթության ջահը հասցնելու մեր կարոտ ազգակիցներին»:

Այս կրթության նվիրյալների և նրանց հաջորդների դաստիարակած սերունդներն էին, որ նվիրվեցին ազգային-ազատագրական պայքարի մեծ գործին:

* * *

Հեղինե Մեծպայանը կրթական և հասարակական գործին նվիրված հայուհիներից էր: Նա ծնվել է Նոր Նախիջևանում: Դեռևս աշակերտության օրերից անդամակցել է դաշնակցական օրիորդաց խմբին և գաղտնի ձեռնարկներում վստահելի գործիչ էր: Նա սիրված է եղել բոլորի կողմից: Գիմնազիան ավարտելուց հետո զբաղվել է ուսուցչությամբ՝ վստահ լինելով, որ կրթական գործը հայոց ազատության համար պայքարին նախապատրաստվելու և իրականացնելու գլխավոր նախապայմանն էր[618]:

Հ. Մեծպայանը մեկնել է Թավրիզ, պաշտոնավարել է Լիլավայի Հայկազյան վարժարանում, որտեղի տեսուչն էր նշանավոր մանկավարժ Տիգրան Ռամշաջյանը: Այստեղ նա շարունակել է Սաթենիկի և Մարոյի սկսած գործը՝ կանանց հասարակական աշխատանքների կազմակերպումը: Հ. Մեծպայանը մտերմացել է Թավրիզի հայ ընտանիքների հետ և կազմակերպել է կանանց միություններ, որտեղ նա դասավանդել է հայերեն՝ նրանց մղելով հայրենասիրական և գաղափարական պայքարի, որպեսզի ներկաները ևս մասնակցեն ազգային գոյամարտին[619]:

---

[618] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 165:
[619] Տե՛ս նույն տեղում:

Դաշնակցական Խեչոն և Հեղինեն առաջին հանդիպումից հետո մեծ սիրով հրապուրվել են իրարով: Սակայն երկուսն էլ հասկացել են, որ անձնական երջանկության իրավունք չունեն, եթե ուխտել են ծառայել հայրենիքին: Այս հանգամանքը շատերի դառնության, երբեմն էլ ողբերգության պատճառ էր հանդիսացել, ինչպես Կարոյի և Մարոյի պարագայում: Հեղափոխության ղեկավար դեմքերի մեջ երկու կարծիք էր պտտվում սիրո և պարտականության վերաբերյալ: Մի կողմից Հրայր Դժոխքի և գլխավորաբար ֆիդայիների կարգախոսն էր՝ «Ինչի է պետք անհատական կամ ընտանեկան սերը, եթե դաշնակցականը պետք է խոնարհվի ազգի սիրո առջև: Ընդհակառակը՝ սերն արգելք է ազատ գործելու և հանգիստ մեռնելու»[620]:

Հրայրն ինքը ամուսնացած էր և ուներ երկու զավակ, սակայն մյուսներին օրինակ լինելու համար ցմահ հեռու է մնացել նրանցից: Վարդան Շահբազը 20 տարի բացակայել է տնից և անգամ չի տեսել իր միակ զավակին: Տատրագոմցի Հովնանը, ամուսնությունից մի քանի ամիս հետո տուն-տեղ թողած, բարձրացել է լեռները և ֆիդայական սովորության համաձայն՝ չի վերադարձել[621]:

Նույն հանգամանքի վերաբերյալ այլ մոտեցում ուներ ՀՅԴ հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանը: Վերջինս մի առիթով իր քրոջ որդուն ասել է. «Ոչ բոլորն են ունակ հրաժարվել սիրուց հանուն գաղափարի, սակայն եթե ոմանց էլ հաջողվում է, դեռ չի նշանակում, որ պիտանի են կյանքին: Եթե իրոք սիրում է, պետք է անձնատուր լինի իր զգացմունքին, ինչը կբազմապատկի եռանդը, որով ավելի պիտանի կլինի թե՛ սեփական անձին, թե՛ հասարակությանը»[622]: Այս հակասական կարծիքները խորացնում էին Հեղինեի հոգեկան տագնապը:

---

[620] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 166:
[621] Տե՛ս նույն տեղում, էջ 165:
[622] **Թադևոսյան Լ.,** Հուշեր, գրի է առնված Ն. Հանգույցի կողմից, «Հայրենիք» ամսագիր, մայիս, N7, Բոստոն, 1923, էջ 182:

1915 թվականին կամավորական գնդերի առաջնորդներից Խեչոն, գլխավորելով հայկական այրուձին, մտել է Վան և փախուստի մատնել Ջևդեթի ոհմակին: Սակայն Տարոնի ճանապարհին, երբ հասել է Ռահվա դաշտ, որտեղից զորքը պետք է ներխուժեր Մշո դաշտ, թշնամու գնդակից սպանվել է: Նրան թաղել են Վանում՝ Իշխանի կողքին, ճիշտ այն ժամանակ, երբ Հեղինեն Հովսեփ Թադևոսյանի գլխավորած օգնության խմբով հասել է Վան: Բայց շուտով ստացել է գույժը[623]:

Խեչոյի մահով Հեղինեի մեջ մեռավ այն ամենը, ինչ անձնական էր: Նա դարձավ մոլեռանդ ուխտյալ՝ հանուն իր գաղափարների, ինչի համար իր սիրելին կյանքն էր զոհել: Հետագայում Հ. Մեծպայանը զբաղվել է որբերի կարիքներով, քանի որ համոզված էր, որ ապագայում Խեչոյի պես հերոսներ ունենալու համար անհրաժեշտ է այդ դժբախտ սերունդը Խեչոյի ոգով դաստիարակել: Երբ Հայաստանն ընկավ համայնավար լծի տակ, և դաշնակցական ղեկավարությունը փախավ արտասահման, Հեղինեն մերժեց հեռանալ Հայաստանից և շարունակում էր գործել հին թափով՝ հավատարիմ մնալով իր ու Խեչոյի գաղափարներին:

Համայնավար լրտեսները, գտնելով Հեղինեին, նրան աքսորել են Ռուսաստանի խորքերը, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն, ինչպես բազմաթիվ այլ քաղաքական բանտարկյալներ[624]: Մինչ օրս նրա գերեզմանն անհայտ է[625]:

Հայոց կրթական և հասարակական գործի նվիրյալներից էր **Հորթանս Դավթյանը (Բերշիէ):**

Հորթանսը՝ Հովնան Դավթյանի (կուսակցական անունը՝ Նանոյանի) կինը շվեյցարիացի ուսյալ և գաղափարական ուսուցչուհի էր: Նա Հովնանին առաջին անգամ հանդիպել էր Ժնևում, խորապես տպա-

---

[623] **Թադևոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 182:
[624] **Զէյթլեան Ս.**, նշվ. աշխ., էջ 166:
[625] Ալպոմ-ատլաս, հ. Ա, Դիւցազնամարտ 1890-1914, Լոս Անճելըս, Քալիֆորնիա, 1992, էջ 266:

վորվել հայ հեղափոխական գործչի նկարագրի ազնվությունից, բարոյական և գաղափարական մակարդակից, բարեխիղճ ու անբասիր գործունեությունից: «Եվ երկու կյանքերը հյուսում են իրար, որպեսզի ամբողջ քառորդ դար ապրեն, գործեն ու տառապեն միասին: Եվ օրիորդը ապշեցուցիչ արագությամբ սովորել է հայոց լեզուն, գրականությունն ու պատմությունը, սովորել է և սիրել իր նոր ազգն ու հայրենիքը, ինչպես երբեք մի օտար չի սիրել հային ու Հայաստանը»[626]:

Ծագումով շվեյցարիացի Հորթանսը ապրել և գործել է իբրև իսկական հայ: Իր հայանալու գաղտնիքը ամուսնու հանդեպ ունեցած մեծ սերն ու հարգանք էր: Այս մասին իշխան Հովսեփ Արղությանը տվել է հետևյալ վկայությունը. «Մի եզակի և գաղափարական զգացմունք կարծես միացել էր այդ զույգին և կազմել հակումների, բնավորության և ձգտումների մի ամբողջություն: Այդ է պատճառը, որ չի կարելի խոսել Հովնանի մասին և չհիշել Տիկ. Հորթանսին: Նրանք անբաժան էին: Որքան Հորթանսը սիրում էր Հովնանին, նույնքան տածում էր անկեղծ սեր դեպի այն ժողովուրդը, որի արժանավոր զավակներից մեկն էր Հովնանը: Երկուսն էլ՝ մտավոր վիթխարի պաշարով և ծայրաստիճան համեստ ու բարի:

Հորթանսը միշտ ամուսնու կողքին է եղել, օժանդակել է նրան, հայերեն հոդվածներ գրել, թարգմանել է Ակնունու «Կովկասյան վերքերը» ֆրանսերեն, ինչպես նաև Ռաֆֆուց հուզիչ և հայրենասիրական հատվածներ է հրատարակել Ժնևի մամուլում[627]:

Հորթանսն իր վերաբերմունքով ու համոզմունքներով Հայաստանի ու հայ ժողովրդի նվիրյալ էր: Նրան հարազատ են եղել Հովնանի քարոզած կուսակցական կենտրոնախույզ գաղափարները, որոնք ապագայում ծառայելու էին դաշնակցական կորիզների զարգացմանը ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում: Կատարվել էր կու-

---

[626] **Վարանդեան Մ.,** Հովնան Դաւթեան, «Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, N2, Բոստոն, 1922, էջ 9-10:
[627] **Զէթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 149:

սակցական գաղափարների, նպատակների ճիշտ ըմբռնում և հասարակական գործչի կուսակցական ոգով ապրելու և մեռնելու ցանկության դրսևորում:

1989 թվականին ամուսինները մեկնել են Թավրիզ, Հովնանը զբաղեցրել է նորաբաց «Թամարյան» վարժարանի տեսչի պաշտոնը, իսկ Հորթանսը՝ ուսուցչուհու: Կարճ ժամանակում նրանք ստեղծել են խանդավառ մթնոլորտ աշակերտական և հասարակական կյանքում: Հանրությանն անգամ չի հուզել այն հարցը, որ Հորթանսը օտարազգի էր: Նա սիրված ու վստահելի հասարակական գործիչ էր, արժանավոր հեղափոխականի արժանավոր կին: «Երկուսն էլ վայելում էին համակրանքն անգամ ոչ դաշնակցական շրջանակներում՝ շնորհիվ Հորթանսի հեռատեսության և անկաշառ բնավորության ու մանավանդ ջերմ հայկական հայրենասիրության»[628]:

1901 թվականին Հորթանսը տնօրինել է Թիֆլիսի «Հովնանյան օրիորդաց» դպրոցը, իսկ Հովնանը զբաղվել է կուսակցական աշխատանքներով: Հորթանսը փայլել է իբրև կրթական-մշակութային գործիչ, իսկ հայերենի իմացությամբ բարդ կացության մեջ է դրել անգամ ռուսախոս հայ կանանց:

1908 թվականին դաշնակցականների դեմ ուղղված հալածանքների պատճառով զույգը դարձյալ վերադարձել է Թավրիզ: Հովնանը դարձել է նորաբաց Կենտրոնական միջնակարգ դպրոցի տնօրեն, իսկ Հորթանսը՝ ուսուցչուհի: Այդ օրերի մասին հիշատակել է նրանց աշակերտներից Վ. Աստղունին. «Ամբողջ աշակերտությունը հարգում էր զույգին: Հովնանն իր նուրբ վարքով այնպես էր նկատողություն անում, որ այն չէր տարբերվում խորհուրդից: Մեղմ ձայնով և գերազանց հայերենով Հորթանսին սիրում էինք բոլորս և զարմանում էինք՝ ինչպես է թողել իր հայրենիքը և կապվել մեր ժողովրդին»[629]:

---

[628] **Վարանդեան Մ.,** Հովնան Դաւթեան, «Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, N2, Բոստոն, 1922, էջ 11:
[629] ՀՅԴ Հտ. «Յովնան Դաւթեան», հ. Ա, էջ 81:

Այնուհանդերձ, դժբախտությունը հարվածեց երկուսին. Հովնանը հիվանդացավ թոքախտով և վարակեց կնոջը: 1913 թվականին քայքայված առողջությամբ նրանք վերադարձան Շվեյցարիա: Վերջինիս վերաբերյալ Հովնանը Հովսեփ Արղությանին տեղեկացրել է. «Բժիշկները պահանջում են, որ երկուսս էլ որոշ ժամանակ բուժվենք և հանգստանանք, այլապես հիվանդությունը կարող է լրջորեն սպառնալ: Ես վախենում եմ Հորթանսի համար»[630]:

Հորթանսը որոշ շրջան բուժվել է լեռնային առողջարաններում և քրոջ տանը, սակայն ջանքերն ապարդյուն են անցել: Զգալով մահվան մոտ լինելը՝ իր պահանջով տեղափոխվել է ամուսնու մոտ՝ Դաշնակցության տուն և այնտեղ էլ կնքել մահկանացուն 1915 թվականին:

Ինչպես կյանքում էին անբաժան, այնպես էլ եղան հիվանդության և վախճանի մեջ: Հովնանը մահացավ 1917 թվականին՝ կնոջ նկարը մշտապես իր հետ պահելով: Իսկ Միքայել Վարանդյանի հետ իր վերջին տեսակցության ժամանակ ասել է. «Հորթանսի աճյունը պահվում է այստեղ: Շուտով ես էլ կմահանամ, և մեր երկուսի աճյունները միասին կամփոփվեն Քանաքեռի բլրին՝ Մասիսի դիմաց: Երկու փոքրիկ դամբարանների վրա կլինի պարզ շիրմաքար՝ մեր անուններով»[631]:

Ինչպես Ամենայն հայոց բանաստեղծն է ասում. «Մարդու գործն է միշտ անմահ», Հորթանս Դավթյանի հիշատակը պիտի ապրի հայոց մեջ, որովհետև նա անզուգական նվիրումով է ծառայել հայ ժողովրդին, նրա արժանիքները ճանաչել է և մեծապես գնահատել:

Մեր նորագույն պատմության էջերում հանդիպում են նաև ուրիշ օտարազգիներ, որոնք անձնվիրաբար թեթևացրել են հայ ժողովրդի տառապանքները: Հայ ժողովրդի հանդեպ նրանց սերը կարելի է չափել այն զոհողություններով, որ նրանք արել են՝ առանց որևէ ակնկալիքի: Այդ մասին է փաստում նաև Ուրֆայի հերոսուհի **Կարին Յեփ-**

---

[630] ՀՅԴ Հտ. «Յովնան Դաւթեան», հ. Ա, էջ 27:

[631] **Վարանդեան Մ.,** Հովնան Դաւթեան, «Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, N2, Բոստոն, 1922, էջ 12:

փեյի կատարած անփոխարինելի աշխատանքը: Հայ ժողովուրդը խոր երախտիքով է պահում ծագումով օտար, սակայն սրտով հայ անձանց հիշատակը իր բազմադարյան հուշամատյանում:

* * *

Հայոց կրթական և հասարակական գործերի նշանավոր գործիչներից էր **Եղիսաբեթ (Լիզա) Մելիք-Շահնազարյան-Զորյանը**: Վերջինս ծնվել է 1874 թվականի մայիսի 5-ին Շուշիում: Հայրը՝ Իսահակ Մելիք-Շահնազարյանը, Ղարաբաղի նշանավոր Ղահրաման միրզայի որդին էր: Իսահակը ազատամիտ և հայրենասեր պաշտոնաթող գնդապետ էր: Նա իր զավակներին դաստիարակել էր ազգասիրական ոգով և տենչում էր, որպեսզի նրանք իմանան իրենց պատավորությունները հայրենիքի և ժողովրդի առջև: Իր զավակներից մեկը մասնակցել էր Խանասորի արշավանքին, որտեղ էլ նահատակվել էր: Մինչև 12 տարեկանը Եղիսաբեթը ուսանել է Շուշիի ռուսական դպրոցում, ապա տեղափոխվելով մորաքույրերի մոտ՝ ընդունվել է Թիֆլիսի տեղական գիմնազիա: Ընդունակ և աշխատասեր աշակերտուհին գիմնազիան ավարտել է 1893 թվականին փայլուն արդյունքներով[632]:

Եղիսաբեթի շրջապատում մեծ թիվ էին կազմում ռուսները, քանի որ մորաքույրերը ամուսնացած էին բարձրաստիճան ռուս պաշտոնյաների հետ: Այնուհադերձ, Եղիսաբեթը մտերիմ էր Քրիստափոր Միքայելյանի հետ, ով հանրահաշիվ էր դասավանդում մորաքրոջ որդիներին, իսկ երկու եղբայրներն էլ ընկերակցում էին Սիմոն Զավարյանին և Ռոստոմին: Նրանք մասնակցում էին գաղտնի ժողովներին: Եղիսաբեթն էլ ընկերակցել է նրանց, սակայն թաքցրել է ռուսամետ մորաքույրերից, որպեսզի չգրգռի նրանց բարկությունը: 1892 թվականի ժողովին առաջին անգամ հանդիպել է Ռոստոմին, սակայն նիհար, դըժ-

[632] Ալպոմ-ատլաս, հ. Ա, Դիւցազնամարտ 1890-1914, էջ 226:

գույն, ինքնամփոփ և լռակյաց «քոթոթ» Ռոստոմը 19-ամյա Եղիսաբեթի վրա խորը տպավորություն չի թողել[633]:

Այդ շրջանում Ռոստոմը Թիֆլիսում էր, հոր հրահանգով հաճախում էր զինվորական քոլեջ, սակայն զինվորական ասպարեզին նվիրվելու փոխարեն ներշնչվեց հեղափոխական գաղափարներով:

«Հեղափոխական գաղափարները» արդեն գրավել էին նրան. «Հավասարություն, եղբայրություն, ազատություն, սոցիալիզմ-ընկերվարություն» իր համար զինվորական դառնալը այլևս նպատակ չէր[634]:

1894 թվականին Եղիսաբեթը մեկնել է Ժնև՝ բանգիտություն ուսանելու: Նույն շրջանում Ժնևում էր նաև Ռոստոմը «Դրօշակի» գործով: Ռուսական կրթություն ստացած օրիորդը առիթ է ունեցել մոտիկից ծանոթանալու այդ եզակի մարդու ապրելակերպին, գաղափարներին և գործունեությանը: Հատկապես ակնառու էին նրա գաղափարական նվիրումը, հզոր դատողությունը և բարոյական կերպարը, ինչպես նաև տարակարծությունը հարթելու, համադրելու և շաղկապելու բացառիկ կարողությունը:

1894 թվականին Եղիսաբեթն ու Ռոստոմը նշանադրվել են: Ռոստոմի նշանվելու հանգամանքը մեծ անակնկալ էր, քանի որ Պարսկաստանում մի առիթով իրեն հարցրել էին, թե արդյոք ամուսնացած է կամ զավակներ ունի, ինչին Ռոստոմը պատասխանել էր, որ տանը մնալու և ընտանեկան հոգսերով զբաղվելու ժամանակ չունի: Եղիսաբեթի ծնողներն ու ազգականները դեմ էին այդ միությանը, քանի որ Եղիսաբեթը Ռուսաստանում հայտնի հարուստ և ազնվական ընտանիքից էր, իսկ Ռոստոմը աղքատ, գյուղացիական ծագում ուներ և իբրև հեղափոխական՝ իրավունք չուներ Ռուսաստանում ապրելու: Եղիսաբեթի համար այս ամենը նշանակություն չուներ: Իրենց նշանադրության օրը

---

633 **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 153:

634 «Ռոստոմի աղջկա՝ Թագուշի հարցազրույցը Փարիզի «Ազատամարտ» թերթում»՝ արտատպված Բեյրութի «Ազդակ» օրաթերթի 1981 թվականի հրատարակության մարտ ամսվա 25, 26, 27 համարներում:

Եղիսաբեթը իր ձեռքը դրել է «Դրոշակի» համարներից մեկի վրա և երդվել չխանգարել Ռոստոմի հասարակական-հեղափոխական գործունեությանը: Արդյունքում Եղիսաբեթի ծնողները զրկել են իրենց աղջկան օժիտից և ժառանգության իրավունքից[635]:

Ժնևում Եղիսաբեթը ուսանելուն զուգահեռ եռանդով մասնակցել է հասարակական կյանքին և նշանածի հետ զբաղվել «Դրոշակի» հրատարակությամբ: Համալսարանում շուտով նկատել են Եղիսաբեթի կարողությունները և խորհուրդ են տվել լքել նշանածին՝ ամբողջությամբ գիտությանը նվիրվելու համար և անգամ բարձր գիտական պաշտոն են առաջարկել Իտալիայում, սակայն Եղիսաբեթը մնացել է անդրդվելի: 1898 թվականին ավարտելով համալսարանական կրթությունը՝ վերադարձել է մորաքույրերի մոտ՝ Թիֆլիս, և ամուսնացել Ռոստոմի հետ: Այնուհանդերձ, հեղափոխական Ռոստոմը ստիպված է եղել ամուսնության օրն իսկ Թիֆլիսից փախչել արտասահման, իսկ Եղիսաբեթը մեկնել է Բաքու, որտեղ ապրել է մասնավոր դասավանդման և նավթահորերի հատակագծերի պատրաստման շնորհիվ: 1899 թվականի ամռանը նորապսակները հանդիպել են և հաստատվել Ֆիլիպպեում: Այստեղ Եղիսաբեթը գաղթական մանուկներին ուսանելու համար դպրոց է հիմնել, որտեղ դասավանդում էր նաև Ռոստոմը:

Դպրոցական աշխատանքներում իրենց մասնակցությունն են բերել **Պարտիզպանյան քույրերը** (հետագայում՝ **Սաթենիկ Տեր-Դավթյան** և **Պերճուհի Բարսեղյան**)[636]:

Եղիսաբեթը կրթական գործին զուգահեռ կատարել է նաև հասարակական գործունեություն. Ծնողական ժողովներ և դասախոսություններ կազակերպելով հոգեմտավոր զարգացման համար՝ շեշտել է ընտանիքի դաստիարակության կարևորությունը:

Ժամանակի ընթացքում Եղիսաբեթի հիմնած դպրոցը ընդլայնվել է վայելելով բարձր ժողովրդայնություն և ձեռք է բերել սեփական դրոշ-

---

[635] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 153:
[636] Տե՛ս նույն տեղում:

մը, որը ոչ միայն նպաստել է այնտեղ ուսանող մանուկների զարգացմանը, այլև կերտել է բարոյական դիմագիծ և ուխտյալ հայրենասիրություն: Հետագայում Ֆիլիպպեի և Բուլղարիայի այլ քաղաքներում հասարակական բնույթ կրող այլ հաստատություններ էլ են հիմնվել:

Մեծ մասամբ հիմնադիրները Եղիսաբեթի և Ռոստոմ աշակերտներն էին, որոնք շարունակել են իրենց մեծ դաստիարակների գործը: Եղիսաբեթը, Ռոստոմը և իրենց փոքրիկ աղջիկը՝ Թագուշը, ապրել են ծայրահեղ ծանր պայմաններում: Ռոստոմը, կուսակցական գործերով կլանված լինելով, ընտանիքի ամբողջ հոգսը թողել է Եղիսաբեթի վրա: Վերջինս երկրորդ զավակի ծնունդից հետո ծանր հիվանդացել է և ստիպված թողել է իր գործը, որպեսզի մեկնի Կովկաս՝ ապաքինվելու: Այստեղ Եղիսաբեթը հանդիպել է ծնողներին, որոնք մոռացել էին ժամանակի դժգոհությունները և հաշտվել նրանց հետ: Ծնողների օժանդակությամբ Եղիսաբեթը մեկնել է Շվեյցարիա և ապաքինվելուց հետո վերադարձել է Թիֆլիս՝ լծվելով իր սիրած կրթահասարակական գործունեությանը[637]: Այս օրերի վերաբերյալ Թագուշ Զորյանը հարցազրույցներից մեկում ասել է. «Մայրս ուսուցչուհի էր: Թիֆլիսում այդ ժամանակ բնակչության կեսից ավելին հայեր էին, այդ իսկ պատճառով բազմաթիվ հայկական դպրոցներ կային: Մայրս այդ ժամանակ շատ գործունյա կին էր: Հարկ է նշել, որ այն փողոցը, որտեղ մենք ապրում էինք, լի էր հայերով: Մեր տունը կանգնած էր երեք ճանապարհի վրա. սա հեշտացնում էր հորս գործը, երբ նա փախչում էր ոստիկաններից: Փողոցի բնակիչները մեր բարեկամներն էին և ոստիկանների հայտնվելուն պես մեզ տեղեկացնում էին, և հայրս բավարար ժամանակ էր ունենում փախչելու համար»[638]:

Հակառակ ռուսական դպրոցներից ունեցած փայլուն առաջարկների և իր ունեցած ընտանեկան ծանր կացության՝ Եղիսաբեթը հոգ է տարել նաև Ռոստոմի մոր և քրոջ մասին: Նա նախընտրել է ծառայել

---

[637] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 153:
[638] Տե՛ս նույն տեղում, էջ 155:

հայկական վարժարաններում և աշխատել է Հովնանյան և Գայանյան դպրոցներում՝ իբրև բնական գիտությունների ուսուցչուհի: Ազատ ժամանակ դասախոսել է «Զուբալովի տան» ժողովրդական համալսարանում, ինչպես նաև Բարեգործականի հիմնած արհեստանոց-դպրոցում և լայն գործունեություն է ծավալել մանավանդ կանանց շրջանում: Երբ Ներսիսյան վարժարանի հոգաբարձուների խորհրդի անդամ է նշանակվել, գործուն մասնակցություն է բերել դպրոցի կրթական ծրագրում մանկավարժությունը հաստատուն հիմքերի վրա դնելու աշխատանքին[639]:

Այսպես ապրել ու գործել է մինչև 1914 թվականի ամառը: Անձնական կյանքում ամուսինը ինքնամոռաց նվիրվել է Սուրբ գործին, քիչ են հանդիպել ամուսիններով, սակայն Եղիսաբեթը երբեք չի բողոքել: Քրիստափոր Միքայելյանի քրոջ որդին՝ Հովսեփ Թադևոսյանը, հետևյալ հատկանշական դրվագն է պատմել իր հուշերում. «Մի օր Թիֆլիսում՝ փողոցում, Ռոստոմը հանդիպում է կնոջը՝ տիկին Լիզային (Եղիսաբեթ): Տիկինը զարմացած հարցնում է Ռոստոմին.

– Ե՞րբ ես եկել:

– Մի յոթ օր կլինի,– պատասխանեց Ռոստոմը,– բայց շատ էի զբաղված, չկարողացա տուն գալ,

– Լավ,–ասում է կինը,– երբ ժամանակ ունենաս, մի անգամ էլ տուն արի…

Եվ բաժանվում են»[640]:

1914 թվականին Եղիսաբեթը և աղջիկը մեկնել են Ժնև, որտեղ ամուսինը իրենց է սպասել: Վերոնշյալ հարցազրույցներում Թագուշը հետևյալ ձևով է նկարագրել Ժնևի իրենց կյանքը. «Հորս ժամանակի մեծագույն մասը, այսինքն՝ յուրաքանչյուր ազատ վայրկյանը մեզ էր վերապահված…»:

---

[639] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 155:

[640] **Թադեւոսեան Հ.,** Թափառումներ անցյալի հուշերի մեջ, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր-դեկտեմբեր, N6, Բոստոն, 1946, էջ 85:

«Թեև նա պարտադրված էր կանոնավոր կերպով տարբեր առաքելություններ կատարել Հ.Յ.Դաշնակցության հաշվին, բայց ժամանակի մնացած մասը մեզ հետ էր անցկացնում»:

Իսկ հոր և մոր մասին Թագուշը վկայում է հետևյալը. «– Իրականում, եթե կուզեք իմանալ, հայրս սքանչելի և բարի մարդ էր, նաև գրավիչ: Ծայրահեղ ազնիվ էր, և հակառակ մորս, որ մարդկանց հանդեպ խիստ վերաբերմունք ուներ, հայրս մեծ վստահություն էր ցուցաբերում թե՛ ընկերների և թե՛ ընդհանրապես մարդկանց հանդեպ: Մայրս միշտ հակաճառում էր նրան՝ քննադատելով նրա կեցվածքը, որը մարդու դատում էր նրա առօրյա արարքների համաձայն և ոչ թե վտանգի մեջ եղած ժամանակ: Իսկ հայրս պատասխանում էր՝ ամեն անգամ մարդիկ, երբ վտանգի մեջ էին գտնվում, կերպարանափոխվում էին գերմարդկանց և սքանչելի արարածների»[641]:

Ժնևում Եղիսաբեթը որոշել էր պատրաստվել ներկայանալ քննությունների՝ գիտության դոկտորի աստիճան ստանալու համար, իսկ Թագուշը ցանկություն էր հայտնել հաճախել Գեղարվեստի վարժարանի դասընթացներին և նկարչությամբ զբաղվել: Շուտով սկսվել էր Առաջին համաշխարհային պատերազմը, և մայր ու աղջիկ մեկնել էին Կովկաս, որտեղ Ռոստոմը զբաղվել էր կուսակցական գործերով[642]:

1919 թվականի հունվարի 18-ին ամուսնու մահվան գույժը ստանալուց հետո Եղիսաբեթը այլևս Կովկաս չի վերադարձել: Այս մասին Թագուշ Զորյանը վկայում էր հիշյալ հարցազրույցում. «Մորս միջոցով տեղեկացա հորս մահվան բոթը: Շատ քաջ կին էր: Մի օր ինձ իր մոտ կանչեց և ասաց՝ «հայրդ մահացել է»…Դուք գիտեք, դա նրա համար շատ ծանր հարված եղավ: Ինձ համար նույնպես, չնայած, որ քիչ էի ճանաչում նրան: Նրա մասին հաճախ էի խոսում»[643]:

---

641 **Թադեւոսեան Հ.,** նշվ. աշխ., էջ 85

642 **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 155:

643 **Եղիայան Բ.,** Էդուարդ Տարօնեան գիրքերը, «Ազդակ» օրաթերթ, 14 փետրվար, 1962:

1923 թվականից հետո Եղիսաբեթը 11 տարի ծառայել է Քրաֆտ-Բոնարի հիմնած հայկական որբանոց-դպրոցում: Հայ որբ մանուկների դաստիարակությունը սուրբ գործ էր նրա համար: Մայրական գուրգուրանք ուներ նրանց հանդեպ, աշխատում էր, որ մոռանան իրենց փշրված երազները և ապագային նայեն հաստատ և անվարահայացքով:

Ռոստոմի նման Եղիսաբեթն էլ մեծ նվիրում ուներ երիտասարդության նկատմամբ, գիտեր նրանց հանրօգուտ աշխատանքի մղել և շնորհիվ իր բարոյական բարձր վարքի ու պարտադրված հարգանքի, կարողանում էր նրանց տարակարծությունները հարթել և ուժերը համադրել:

Բյուզանդ Եղիայանը, ով երկու տարի պաշտոնավարել է Եղիսաբեթի հետ Քրաֆտ-Բոնարի հայկական կենտրոնում, այս բացառիկ կնոջ մասին վկայում էր հետևյալը. «Հայ կնոջ ճշմարիտ տիպար համալսարանական ուսումով, դոկտորական աստիճանով, բայց շատ համեստ և հանդարտ նկարագրով, միշտ ուշիմ և հայ մանուկների նկատմամբ մշտապես գուրգուրանքով լցված սիրտ ունեցող մի մայր: Տարօրինակ է թվում թերևս այն, որ միայն միասին պաշտոնավարելու երկու տարիների ընթացքում ես պետք է հարգեի նրան այն բանի համար, ինչը չէի ակնկալում գտնել հայ կնոջ մեջ՝ կյանքի նկատմամբ իր մշտական դրական կեցվածքը և մարդկային հարցերի մեջ թափանցող հստակ միտքը: Մանկավարժական մեր ժողովների ժամանակ, երբ նա ելույթ էր ունենում, գիտությունն ու սերը միասին էին խոսում: Լավ դիտված, լավ հաշվարկված և լավ մտածված տեսություններ էին իր եզրակացությունները, իսկ ամենից խորն իր մեջ իմաստունի հավատքն էր»[644]:

1934 թվականին փակվել է Քրաֆթ-Բոնարի որբանոցը, և Եղիսաբեթը կորցնելով սիրած գործը, հայտնվել է նյութական դժվարություն-

[644] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 156:

ների մեջ, չնայած իր պողպատե կամքով և անբեկանելի կորովով գլուխը միշտ բարձր է պահել: Մինչև վախճանը Եղիսաբեթը կատարել է հայ ժողովրդի հանդեպ ունեցած իր պարտքը և հավատարիմ մնացել է տարիներ առաջ «Դրոշակի» համարներից մեկի վրա կատարած իր նվիրական ուխտին:

1934 թվականի հուլիսի 6-ին նշվել է նրա մանկավարժական գործունեության հոբելյանը, և կրթական ու հասարակական վաստակաշատ մշակը ջերմ գնահատականի է արժանացել: Նա անցած ճանապարհը և զոհաբերության անգերազանցելի ոգին իբրև օրինակ պետք է ծառայեն գալիք սերունդների համար:

Հարկ է շեշտել, որ Եղիսաբեթ Մելիք-Շահնազարյան-Զորյանն այն եզակի կանանցից է եղել, ով հասկացել և հարգել է իր ամուսնու՝ կուսակցական ղեկավարի պարտավորությունները և նվիրումով թռիչքի մղել ժողովուրդի բարօրությանը ձգտող նրա հոգին:

* * *

1918 թվականի Մայիսյան հերոսամարտի քաջարի մասնակիցների թվում էր **Հռիփսիմե (Լոլա) Մեծատուրյան-Սասունին**: Նա հերոսական սխրագործություններով է աչքի ընկել հատկապես Սարդարապատի հերոսամարտում:

Հռիփսիմե Մեծատուրյանը բանաստեղծ Միսաք Մեծարենցի զարմուհին էր: Ծնվել է Բինկյանում (Ակն) 1896 թվականին: Հայրը հարուստ վաճառական էր և գործով գտնվում էր Պոլսում: Նա 1896 թվականին սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած կոտորածին զոհ է դարձել: Հոր մահից ամիսներ հետո ծնվել է եղբայրը՝ Վահանը, և հետո ընտանիքը Բինկյանից Սեբաստիա է փոխադրվել[645]:

Հռիփսիմեն նախ հաճախել է տեղական ազգային վարժարանը, իսկ 1908 թվականին ընտանիքով հանդերձ Պոլսում են հաստատվել,

[645] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 188:

քրոջ՝ Մանիկի հետ Ամերիկյան քոլեջ է գնացել: Վաղ հասակում ի հայտ են եկել Հռիփսիմեի կազմակերպչական հատկանիշները: Իսկ քոլեջյան ընկերուհիները՝ Եսթեր Տեր-Սահակյանը, Արաքսի Շիրինյանը, Մանուշակի, Վերժինեի և քրոջ՝ Մանիկի գործակցությամբ բեմադրել են Թումանյանի «Անուշը»:

Քոլեջի վառվռուն ու աշխույժ հայուհիների խումբը միշտ ներկա է գտնվել ՀՅԴ ուսանողական միության «Ազատամարտ» ակումբի կազմակերպած դասախոսություններին և Սկյուտարի «Ռաֆֆի» լսարանի հայագիտական ձեռնարկներին: Այս երիտասարդ աղջիկների ազգային նպատակներին ծառայելու ոգին այնքան զորավոր էր, որ 1910 թվականին ՀՅԴ շարքերը մտան: Նրանց երդման արարողությունը վարել է Կարո Սասունին: Իբրև շարքային ընկերուհի՝ Հռիփսիմեն ընտրել է Լոլա ծածկանունը, որը հետագայում դարձել է մնայուն անուն նրա համար[646]:

1913-1914 թվականներին Լոլան մտել է մի խմբակի մեջ, որը ահաբեկչական աշխատանքի համար էր մարզվում և Համազասպի հսկողության տակ զենքի և ձեռքի նռնակի գործածության հմտություններ է ձեռք բերել:

Մեծ եղեռնի մղձավանջներից հետո ընկերուհիներ Եսթեր Տեր-Սահակյանի և Արաքսի Շիրինյանի հետ գաղտնի կերպով Պոլսից Բուլղարիա է հասել, այնտեղից էլ Սիլվա Կապուտիկյանի հոր՝ Բարունակի և Մ. Օզմանյանի առաջնորդությամբ հասել է Թիֆլիս, որտեղ խնամակալության աշխատանքների է լծվել: Վանի նահանջից հետո, երբ Թիֆլիսի արվարձաններից մեկում որբանոց է բացվել, Լոլան այնքան վստահություն է վայելել, որ նշանակվել է տնօրենի պատասխանատու պաշտոնում:

1916 թվականի գարնանը, երբ հայ կամավորները առաջանում էին դեպի Բիթլիս-Մուշ-Խնուս, Լոլան, հեղափոխական աշխատանքնե-

---

[646] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 186:

ին մասնակցելու տենդով բռնկված, միացել է Բիթլիսի նախկին հյուպատոսին՝ Արշակ Սաֆրասյանին, և նախ Վան, այնուհետև Մուրադի հետ Բիթլիս գնացել, որտեղ հավաքվել էին Անդրանիկը, Սեպուհը, Սմբատը և հայտնի այլ խմբապետեր: Մուշի անկումից հետո ցանկացել է Ծովասարի և Կուրտիկի բարձունքների վրա մղվող կռիվներին մասնակցել, սակայն շրջանի հասարակական գործերի վարիչ Կարո Սասունու կարգադրությամբ իր ընկերուհու՝ Արաքսի Շիրինյանի հետ որբերին հավաքելու և ապահով կայաններ հասցնելու պարտականություններ է ստանձնել: Այնուհետև Լոլան մնացել է Մուշում, իսկ Արաքսին որբերին Կարս է փոխադրել[647]:

1916 թվականի օգոստոսին, երբ մասնակի նահանջ է տեղի ունեցել Սասունի բարձունքներից և Մուշ քաղաքից, որբերն ու մոտ երեսուն հազարի հասնող ժողովուրդը ճամփա են ընկել դեպի Արարատյան դաշտ ու Կարս: Լոլան առաջին մեկնողների մեջ չէր: Ընդհակառակը, ֆիդայու տարազով և զենքը ուսին՝ միացել էր հետնապահ խմբին՝ Փեթարի Մանուկին, Սասունցի Մուշեղին, Մորուք Կարոյին, Մշեցի Արմենակին, Չոլոյին և նրանց ընկերներին[648]:

Սկզբում հին ֆիդայիներից ոմանք Լոլայի ներկայությունը անընդունելի են համարել, սակայն նրա ձիավարության և նշանառության տիրապետման, դիմադրելու կորովի և զոհաբերության ոգու դիմաց հետզհետե տեղի են տվել: Այնուհետև Լոլան անբաժան է եղել Խնուսի, Մուշի, Սասունի և Բուլանուխ-Մանազկերտի գործիչներից և մարտիկներից:

1916-1917 թվականներին Լոլան իր քոլեջական ընկերուհիների հետ կանանց և աղջիկների խնամատարության խումբ է կազմել և Խնուսի ու Մուշի բոլոր որբանոցների պատասխանատվությունը ստանձնել: Նախկին որբերին Կարս է փոխադրել՝ կամավորական գնդերի կողմից փրկված մանուկներին տեղ հասցնելու համար: Նա իր

---

[647] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 187:
[648] Տե՛ս նույն տեղում:

աշխատանքները կազմակերպելու կարողությամբ բոլորին հարգանք է պարտադրել, և նրա խոսքը կշիռ ուներ[649]:

1917 թվականին, երբ Կարո Սասունին Թիֆլիսում է գտնվել՝ ՀՅԴ տեղական ժողովին մասնակցելու համար, Լոլան Խնուսից Թիֆլիս է գնացել, և հոկտեմբերին գաղափարակից ու զինակից երիտասարդները ամուսնացել են: Հաջորդ ամսին դարձյալ Խնուս են վերադարձել[650]:

1918 թվականի փետրվարի վերջերին Էրզրումը թուրքերի ձեռքն է ընկել, իսկ մարտին ու ապրիլին Վանից, Մուշից, Խնուսից ու Ալաշկերտից հայության նահանջը սկսվել է դեպի Արարատյան դաշտ: Որբերը պահակների պաշտպանության տակ ճանապարհ են ընկել: Լոլան մի անգամ ևս միացել է ֆիդայիների հետնապահ ձիավորների զորամասին: Այդ զորամասը հաճախակի բախումներ է ունեցել ներխուժող թուրքական բանակների հետ, ինչպես նաև այն թուրքերի և քրդերի հետ, որոնք, քաջալերված թուրքական առաջխաղացումից, ցանկացել են նահանջող հայության ճանապարհը կտրել: Չնայած իր հղիությանը՝ Լոլան ոչ միայն կռիվներին է մասնակցել, այլև շրջապատին ոգևորություն է ներշնչել:

Առաջին զավակը ծնվել է Երևանում: Ամուսինը մի քանի օր առաջ Թիֆլիս է մեկնել՝ Արևմտահայ զինվորական մարմնի աշխատանքներին մասնակցելու համար: Սակայն վրա է հասել Ալեքսանդրապոլի գրավումը թուրքերի կողմից, ինչպես նաև թուրքական բանակի առաջխաղացումը դեպի Սարդարապատ և Ղարաքիլիսա: Կարո Սասունին մնացել է Ղարաքիլիսայի ճակատում և կտրվել է իր տարոնցի ու սասունցի զորամասերից:

Այդ նույն զորամասերը, որտեղ գտնվել են նրա կինն ու նորածին զավակը, գործել են Էջմիածնի, Սարդարապատի, Աշտարակի և Եղվարդի շրջաններում: Խանձարուրի մեջ փաթաթված երեխան միշտ զինվորի վզից էր կախված: Այդ վիճակում իսկական հերոսուհին ոչ

---

[649] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 188:
[650] Տե՛ս նույն տեղում, էջ 189:

միայն զենքը ձեռքին կռվել է Սարդարապատի ճակատամարտում, այլև կազմակերպել է կանանց և աղջիկների խմբեր՝ վիրավորներին և հիվանդներին խնամելու, տարագիր ընտանիքների կարիքները հոգալու և տեղափոխությունը հսկելու համար: Ամիսներ հետո մեծ ջանքերով փրկված երեխան դարձել է մալարիայի զոհ[651]:

Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, երբ Սասունի և Տարոնի զորամասերը թուրք-թաթարներով բռնկված շրջաններն էին մաքրում, Լոլան մնաց նրանց կողքին և իր տրամադրության տակ եղած 15-20 ձիավոր կտրիճներով մասնակցեց այդ կարևոր գործին:

Երբ Գորիսից ճանապարհ են ընկել դեպի Սևան՝ այնտեղից էլ Երևան հասնելու համար, թաթարները կտրել են լեռնանցքը: Լոլայի խումբը դիմադրել է թաթարներին և Երևան է հասել հոկտեմբերի 10-ին:

Այնուհետև Լոլան նվիրվել է Հայաստանի «Կարմիր խաչի» կազմակերպմանը, որն այդ շրջանի իր գլխավոր իրագործումն է եղել: Իսկ երբ 1920 թվականին ամուսինը նշանակվել է Շիրակի նահանգապետ Ալեքսանդրապոլում, համագործակցել է հայկական որբանոցների ընդհանուր վարիչի հետ՝ նպաստելով որբախնամ գործունեությանը[652]:

Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող հալածանքի և սարսափի օրերին Լոլա Սասունին բանտարկվել է Չեկայի Երևանի բանտում: Նա կարողացել է փրկվել Փետրվարյան ապստամբության օրերին, երբ Սասունցի Մուշեղը հերոսական գրոհով գրավել էր Չեկայի շենքը և այնտեղ գտնվող 500 բանտարկյալներին ազատ արձակել: Այդ դեպքից հետո Լոլան մոտ 10 000 գործիչների և մարտիկների հետ Երևանից Զանգեզուր, այնտեղից էլ Պարսկաստան է անցել: Մինչդեռ երկրորդ զավակը՝ տասը ամսական Սուրենը, և Լոլայի մայրը մնացել են Երևանում: Լոլային մտերիմ և համագործակից ընկերուհին՝ Արաքսյա Շիրվանյանն էլ Պարսկաստան անցնողների մեջ էր, սակայն

---

[651] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 189:
[652] Տե՛ս նույն տեղում:

Թավրիզի ճանապարհին թաթար ավազակների հարձակման զոհ է դարձել[653]:

1922 թվականին Թավրիզի տարագիրների շնորհած ներումից օգտվելով՝ Լոլան Երևան է վերադարձել իր նորածին զավակի՝ Վիգենի հետ և մոր ու Սուրենի ընկերակցությամբ նախ Թիֆլիս, այնուհետև Պոլիս անցել: Նույն տարվա վերջին հաստատվել է Սոֆիայում, ապա Վիեննայում, Ժնևում, իսկ 1925 թվականին՝ Սասունիների գերդաստանի հետ՝ Փարիզում:

Լոլան Փարիզում ապրելու վեց տարիների ընթացքում բեղուն գործունեություն է ծավալել «Կապույտ Խաչում»: Ինչպես Սփյուռքում, այպես էլ հայրենիքում, Լոլան շարունակել է քայլել հանրային ծառայության ճանապարհով և անսահման նվիրում ցուցաբերել տարասփյուռ հայության ուժերի վերականգնման հարցում: Փարիզից հետո Կահիրեում, Հալեպում, այնուհետև Բեյրութում ՀՕՄ-ի («Հայ օգնության միության») աշխատանքների կազմակերպիչն է եղել[654]:

Լիբանանի «Օգնության խաչի» հիմնադիրներից էր Ջավո Շանթը: Նա նախապես իր բաժին մասնակցությունն է բերել հիմնադրությանը՝ Ֆրանսիայի Կ. Խաչին, որն այժմ «Կապույտ խաչ» է կոչվում: Տիկին Շանթը գործել է Լիբանանի և Սիրայի «Օգնության խաչի» օգտին: Նա մասնակցել է Բեյրութի դրամատների աշխատանքներին և չքավոր դպրոցականների համար «Պնակ մը կերակուրի» երախտաշատ գործին: Լիբանանի «Օգնության խաչի» հիմնադիր ընկերուհիներից է եղել նաև Աղավնի Փափազյանը, որը տարիներ շարունակ անսակարկելի նվիրումով է ծառայել հայրենիքին:

Լոլա Սասունին ամբողջ երեք տասնամյակ հավատավոր և գործունյա ընկերուհիներին է համախմբել, որոնք պատասխանատու պաշտոններ են ստանձնել: Նա Վերժինե Տեր-Կարապետյանի, Արաքսի Արծրունու, Արշալույս Արմենյանի, Բերկրուհի Առաքելյանի, Վերժինե

---

[653] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 189:
[654] Տե՛ս նույն տեղում:

Ֆաթթալի, Բեգա Գլճյանի, Ազատուհի Ռաֆայելյանի և Թալի Գրուշյանի ու այլ ընկերուհիների հետ համատեղ անհատական բուժարանների ցանց է հիմնել, հսկել է չքավորների ու որբերի սնունդն ու առողջությունը, նրանց կրթական կարիքներն է հոգացել, հայ կնոջ մտավոր և ընկերական մակարդակի բարձրացմանը նպաստել, ազգային հաստատություններին օժանդակել, մինչև որ հետզհետե բազմացող գաղութի ամենաբարգավաճ, կենսունակ ու բազմանդամ կազմակերպություններից մեկն է դարձել Լիբանանի «Օգնության խաչը» (ԼՕԽ): Արդարև, Լիբանանի կառավարությունը բարձր գնահատելով ԼՕԽ-ի դերը և Լոլա Սասունու անձնվեր ծառայությունը՝ 1966 թվականին «Մայրիների ազգային կարգի» շքանշանով է պարգևատրել վաստակավոր «Խաչուհուն»[655]:

Տարիների ընթացքում առողջությունը քայքայվել էր, սակայն մնացել էր ԼՕԽ-ի շրջանային վարչության գործավարի պաշտոնում և հանգիստ-դադար չուներ: Անցնող տարիների հետ անդիմադրելի է դարձել հայրենիք գնալու և Սարդարապատի հաղթանակի կոթողը և Արագածի բարգավաճ գյուղերը տեսնելու փափագը, որտեղ հաստատվել են սասունցիները, որոնց գրավման համար մղված կռիվներին ինքն էլ էր մասնակցել:

Թեև առողջական վիճակը թույլ չի տվել նման ճանապարհորդություն կատարել, սակայն հոգեկան կարիքը մեծ է եղել: Լոլա Սասունին, հիշելով իր զինակից նշանավոր ֆիդայի ընկերներին, ժամանել է Թալինի շրջանի Ոսկեթաս և Ահագչի գյուղեր, որտեղ ապրել էին նվիրյալ ու երդվյալ ֆիդայիներ Չոլոն և Մորուք Կարոն, տեսակցել է նրանց հարազատներին, անձամբ Մորուքի կնոջը՝ Մարթային, վերհիշել է իրենց ապրած ուղին և վերադարձել է Բեյրութ:

Անքննելի է մարդու քայլերը վարող խորհուրդը. խոսք չհասկացավ ու գնաց ու կարճ ժամանակ հետո մեռավ՝ իր աչքերում ունենալով այն

---

[655] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 191:

երկրի վերջին պատկերը, որի շքեղ տեսիլքի համար հազարավոր ֆիդայիների հետ ինքը ևս իրեն նետել էր կրակների մեջ:

Հայաստանից վերադառնալուց տասն օր հետո Լոլա Սասունին փակել է աչքերը, վախճանվել 1969 թվականի հոկտեմբերի 2-ին ուխտած մեկի հոգեկան բավարարվածությամբ: Լոլա Սասունու մահվան առթիվ Խոսրով Թյութունջյանը[656] հետևյալ խոսքն է ասել. «Տիկին Սասունին հայ կնոջ նոր տիպար էր՝ իբրև մտավորական և մարտիկ, միաժամանակ նաև զավակների մայր և տանտիրուհի: Հյուրասեր էր, սեղանը բաց՝ իր հարուստ սրտի պես: Արդարամիտ էր և անկախ մտածող: Ուներ իր սեփական դատողությունն ու գործելակերպը»[657]:

«Ազդակ» օրաթերթի խմբագիրը՝ Սարգիս Զեյթլյանը, հետևյալ կերպ է արժևորել նրա կյանքի անցած ուղին. «Նա օժտված էր իր ապրած ժամանակաշրջանի խռովքներից մեծապես ազդված և ժամանակի վրա զորավոր ազդեցություն ունեցող անհատականությամբ, մեր ժողովրդի հետ բազմիցս սրի և հրի միջով էր անցել, սակայն չի ընկճվել սրի առջև, չի տկարացել հրի դիմաց, ոսոխի սրի դեմ սեփական սուրը բարձրացնելու բացառիկ կորով է հայտնաբերել, նրա ավերող հրին հակադրեց իր հուրը՝ դառնալով մեր հեղափոխությանը գործուն մասնակցություն ցուցաբերած հայուհիներից մեկը’[658]:

Կարոյի և Լոլայի զավակներից Սերժը Փարիզում է հաստատվել, իսկ Բաբկենը իր ընտանիքի հետ Լոս Անջելեսում է բնակվում:

Հայ կանայք կազմակերպել են «Կարմիր խաչի» խմբեր, որոնք ոչ միայն հիվանդներ ու վիրավորներ էին խնամում, այլև մայրերին, մանուկներին, աղքատներին և աղետյալներին էին օգնում, ինքնազարգացումով զբաղվում, կարդալ-գրել չիմացողներին էլ հայերեն սովորեցնում: Նրանք իրենց ցուցաբերած եռանդով ու աշխատանքով հաստատել են, թե իրենց դերը ինչպիսի բախտորոշ նշանակություն է ունեցել

---

656 «Ազդակ» օրաթերթ, 9 հոկտեմբերի, Լիբանան, 1969:

657 **Զեյթլյան Ս.,** Արցունքով և երախտագիտությամբ, «Ազդակ» օրաթերթի խմբագրական, 7 հոկտեմբերի, Լիբանան, 1969:

658 Տե՛ս նույն տեղում:

հայության ազգային նկարագիրը պահելու համար: Այդ կանանցից հատկապես աչքի են ընկել բժշկուհիներ **Հերսելիա Սարուխանյանը (Նավասարդյան)** և **Հեղուշ Եղիազարյանը (Փափազյան)**[659]**:**

Հերսելիա Սարուխանյանը, լինելով շուշեցի մեծահարուստ ընտանիքի զավակ, Ղարաբաղի հեղափոխական դեմքերի՝ Նիկոլ Դումանի, Խանասորի Վարդանի, Թորգոմի, Կոստիա Համբարձումյանի, Միքայել Վարդանյանի և Արամի ազգային գաղափարների ջատագովն ու կրողը, նրանց գաղափարական ուղին ընտրեց: Իր ժողովրդին ծառայելու գերագույն նպատակով նա անդամագրվել է «Կովկասյան դաշնակցական աշակերտական միություն» համագումարին, որի նախաձեռնողներից ու ղեկավարներից էր իր հայրենակից Վահան Նավասարդյանը: 1910 թվականին դարձել է Մոսկվայի Ստանկևիչի անվան կանանց բժշկական բարձրագույն ուսումնական հաստատության ուսանող, իսկ հետո Վահան Նավասարդյանի հետ միացել է հայ կամավորական շարժմանն ու ռուսական բանակի հետ մինչև Էրզրում հասել: Նա հանգիստ ու դադար չի ունեցել. բացառիկ նվիրումով հոգացել է իր ժողովրդի կարիքները, իսկ նահանջի օրերին եղել է հայ գաղթականների պահապան հրեշտակը[660]: Նա միշտ զորավիգ է կանգնել «Կարմիր խաչին» և իր ընկերուհիներին նույն պատգամը փոխանցել՝ ասելով. «Փառք փնտրեք Ձեր ժողովրդի ու հայրենիքի ծառայության մեջ»[661]:

Հ. Սարուխանյանը (Նավասարդյան) պատկանում է հայուհիների այն փաղանգին, որոնք, իրենց կյանքը ազգային գաղափարներին ի սպաս դնելով, ուրախացել են հայության հաջողություններով, տխրել՝ ցավերով:

Բժշկուհի Հեղուշ Եղիազարյանը (Փափազյան) ծնվել է Երևանում: Նրանց տունը ի սկզբանե հեղափոխական երիտասարդության հավա-

---

[659] **Ձէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 168-179:
[660] Տե՛ս նույն տեղում, էջ 170:
[661] Տե՛ս նույն տեղում, էջ 172:

քատեղի էր դարձել, որտեղ դեռ փոքրուց Հեղուշը հափշտակությամբ դիտում էր իրենց տունը մտնող ու ելնող հեղափոխական գործիչներին: Ավարտելով ռուսական գիմնազիան՝ նա կլանվել է ռուսական հարուստ մշակույթով: 1905-1906 թվականներին եղել է «Դաշնակցության աշակերտական միության» անդամ, յուրացնելով հայոց պատմության ու գրականության դասերը՝ նվիրվել է «Կարմիր խաչի» գաղտնի գործունեությանը: Նա իր գործակից ընկերուհիների հետ թշնամու գնդակների տակ ռազմամթերք է փոխադրել հայկական դիրքերը, նյութապես օգնել «էրգիր» անցնող ու «էրգրից» վերադարձող փախստականներին, ապահով թաքստոցներ է ճարել՝ «ղաչաղներին» ու բանտարկված ընկերներին օգնելով: Նա Վահան Փափազյանի (Կոմսի) ուղեկցությամբ գյուղեր է մեկնել՝ կազմակերպություններ ստեղծելու և միաժամանակ Սիմոն Զավարյանի պատրաստած գյուղատնտեսական հարցարանների պատասխանները լրացնելու համար: Ռուսերենի կատարյալ իմացության շնորհիվ նրան հաջողվել է ոստիկանության կասկածները ցրել, իսկ զինվորականների շրջանակներում իր ծանոթությունների շնորհիվ գրավված զենքերը վերադարձվել են, իսկ դաշնակցական գործիչների «մեղքերի» հատուցած դժվարությունները՝ հարթվել:

Մոսկվայի համալսարանում բժշկություն սովորելուց հետո Հեղուշը նշանվել է Կոմսի հետ: Երբ ռուսական կառավարությունը զորակոչի է ենթարկել բժշկուհիներին, Հեղուշը ուղարկվել է ռազմաճակատի հիվանդանոցները[662]: Երբ ռուսական զորքը 1914 թվականի դեկտեմբերի 9-ին Ալաշկերտից նահանջել է՝ հարկադրված լինելով մեծաքանակ պահեստները լքել, Հեղուշը պահանջել է, որ այդ մթերքները բաժանվեն հայերին, բայց հրամանատարությունը մերժել է՝ պահեստները կրակի տալով: Հեղուշի հուսահատությունը մեծ էր, ուստի պատահական չէ, որ Երևան հասնելուց հետո սկսել է գործել «Կարմիր խաչի» պետական հիվանդանոցներում: Նա շուտով միացել է 1915 թվականի

[662] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 176:

հունիսին Վան մեկնող բժշկական խնամատարական խմբին, սակայն ռուսական զորքերի նահանջի պատճառով հարկադրաբար բռնել է գաղթի ճամփան, որտեղ էլ տիֆով հիվանդացել է ու կիսամեռ վիճակում հասել Երևան, ապա ապաքինվելուց հետո ծառայել է Էջմիածնի Գայանյան վանքի հիվանդանոցում: Այդ ժամանակ Էջմիածնի գաղթականության ողբերգական վիճակը անջնջելի հետք է թողել նրա հիշողության մեջ և անհուն խռովք պատճառել նրան:

1916 թվականին Հեղուշը Սալմաստի շրջաններում հիվանդանոցներից մեկի պատասխանատվությունն է ստանձնել: Կամավորական շարժման ամբողջ ընթացքում հայ կինն ամբողջովին իր մասնակցությունն է բերել՝ անձնվիրաբար ծառայելով ու հանգանակություններ կազմակերպելով գաղթականության օգտին:

Հեղուշը կանանց և օրիորդների հանձնախմբի մղիչ ուժն էր: Նա վայելել է բոլոր ընկեր-ընկերուհիների վստահությունն ու համակրանքը ու իրեն վստահված ամեն պատասխանատու գործ կատարել է նվիրումով ու կատարյալ բարեխղճությամբ: Նա իր ազգային-հասարակական ավելի քան հիսունամյա ծառայության շրջանում ոչ միայն ազատագրական պայքարին ու Հայաստանի Հանրապետության կերտմանն է մասնակցել, այլև զբաղվել է ազգագրությամբ, մասնավորապես ազգային տարազների գիտական նկարագրություններով:

Տարագրության մեջ հայուհիները ազգային նոր կառույցներ էին հիմնադրում և նպաստում ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը: Ազգային պայքարին նվիրված կանայք բազմատեսակ ձեռնարկներ ու հանձնարարություններ էին կազմակերպում և գոյացած գումարը հատկացնում ֆիդայիների համար զենք գնելու, գաղթականներին օգնելու, փախստական կամ բանտարկված ընկերների կարիքները հոգալու համար:

Այնթափի մեջ «Կարմիր խաչի» ու ՀՅԴ կանանց խմբերը, զինատարներին ու ռումբերի թաքստոցները հսկելով ու խուզարկություններ անելով, վտանգի պահին թույլ չէին տալիս, որ պայթուցիչ նյութերն ու

գործիքները թուրք ոստիկանների ձեռքն ընկնեին, այլ տանիքից տանիք փոխանցելով՝ արագորեն տեղափոխում էին ապահով վայրեր: Այդ արիասիրտ կանանցից արժի հիշատակել Մարիցա Պարսումյանին (Զառիկյան), Տիգրանուհի Պագտալյանին, Օվսաննա Մագսուտյանին (Դերվիլյան) և Մարիամ Թութունջյանին[663]:

1915 թվականի ապրիլի 24-ին Կ. Պոլսում մի գիշերվա մեջ մեծ թվով հայ մտավորականներ ու քաղաքական գործիչներ են ձերբակալվել, իսկ նրանք, ովքեր պատահաբար ազատվել են, փախստական են դարձել: Հայուհիները գործի են անցել այդ ճգնաժամային օրերին, փախել են ու թաքնված ընկերների համար ապահով թաքստոցներ պատրաստել, զենք և փամփուշտ փոխադրել, իբրև սուրհանդակ՝ ակտիվորեն գործել են ու կապ հաստատել թաքնվածների միջև: Նրանք կուսակցական արխիվներն ու թղթածրարները ապահով վայրերի մեջ են պահել: Պոլսից դուրս գտնվող ընկերների հետ նրանք գաղտնի կապ են հաստատել ու վերջինների ուղարկած ծածկագրերն ու նամակները թաքնվածներին հասցրել: Այդ քաջ ու համարձակ հայուհիները, իրենց կյանքը վտանգելով, արտասահմանից գեղեցիկ կազմած անգլերեն կամ ֆրանսերեն վեպեր էին ստանում, որոնցից ամեն մեկի մեջ օտար անցագիր կար զետեղված՝ թաքնվածներից մեկի կյանքը փրկելու համար[664]:

Այսպես են գործել հայուհիները. մեկ բռնվածի տեղը տասը նորեր են մեջտեղ եկել՝ իրենց երիտասարդ կյանքը ազգին զոհաբերելու պատրաստակամությամբ: Այն բնակավայրերում, որտեղ կոտորած կամ աղետ է պատահել, նվիրյալ կանանց խումբը շտապել է ողջ մնացածներին փրկել: Հայ կինը անձնվիրությամբ պահել է որբերին և հարազատ մոր պես գուրգուրել է նրանց: Նրանք ջանացել են արցունքը սրբել ու ամոքել վիշտը հազարավոր տխուր մանուկների, որոնք

---

[663] **Զէյթլեան Ս.,** նշվ. աշխ., էջ 176:
[664] Տե՛ս նույն տեղում:

ոչ միայն կորցրել էին իրենց ծնողներին, հայրենի տունը, այլև անհոգ ու անմեղ մանկությունը:

Միանգամայն տեղի է հիշել հայ կնոջ՝ Զապել Եսայանի «Ավերակներուն մեջ» գիրքը, որտեղ գրողը նկարագրել է կիլիկիահայության կոտորածներից անմիջապես հետո աղետի վայր մեկնած կանանց գրագիրների մի խմբի կողմից որբերին անհրաժեշտ օժանդակություն հասցնելու, նրանց տիրություն անելու համար կատարված աշխատանքները: Զ. Եսայանը, իր այս արժեքավոր գործում մարդկային տառապանքների խորքերը բացահայտելով, թուրք և քուրդ մարդասպաններին ու խուժանի սերունդներին դատաստանին է հանձնում:

Հայուհիների կազմակերպած խմբերը ոչ միայն որբերին են հավաքել, որբանոցներ են հիմնել, այլև զբաղվել են նրանց դաստիարակությամբ՝ հեղափոխական ոգով սերունդ դաստիրակելու և ազգային ազատության ու անկախության դարավոր ձգտումներին բավարարվածություն տալու և նրա հավերժությունն ապահովելու համար:

Հալածանքի, բռնությունների, տեղահանությունների, կոտորածի սպառնալիքի ենթակա գաղթականների քարավանները գրեթե անպակաս էին: Նրանք ցնցոտիներով ծածկված, կիսաքաղց ու հիվանդ վիճակում դատապարտված էին օրերով ճանապարհ կտրելու: Այս գաղթականները բժշկական, նյութական ու բարոյական օժանդակության կարիք ունեին: Բժշկական ու հասարակական գործունեությանը նվիրված հայ կանայք ամեն տեսակի խնամք ու աջակցություն էին ցուցաբերում, որպեսզի տարագիրները իրենց կյանքը վերսկսելու հնարավորություն և կամք ունենային:

Այսպիսով՝ հայուհի հերոսների ինքնապաշտպանական մարտերում ցուցաբերած անձնազոհության շնորհիվ հնարավոր եղավ հնարավորինս քիչ կորուստներով դիմագրավել թշնամուն:

Անվախ ու նվիրյալ հայուհիների գործունեության մեջ խտացված կգտնենք իրենց հազարավոր ժողովրդի առաքինությունները՝ հայրենասիրությունը, ազատատենչությունը, անձնվիրությունը, քաջությունը,

ինչպես նաև ազգային ինքնությունը պահպանելու և փոխանցելու համառ ու անզիջող հավատքն ու վճռականությունը:

Ազատագրական պայքարին նվիրված հեղափոխական հայուհիների ճակատագիրը ազգային գոյամարտի տագնապը դիմագրավող իրենց հարազատ ժողովրդի ճակատագրի նման հաճախ որբերգական է եղել: Նրանց հաջորդող սերունդների և մեր պարտքն է ուսումնասիրել այդ հերոսուհիների կյանքը, լսել նրանց պատգամը ու հավատարիմ մնալ նրանց քարոզած ազգային ու նվիրական գաղափարին:

Հայոց ինքնապաշտպանական մարտերի, դյուցազնական հերոսամարտերի բովով անցած հայուհիները մեր նոր և նորագույն պատմության անծանոթ զինվորներն են, որոնց մի մասի անհայտ գերեզմանների, մյուսների հուշարձանների առջև պետք է խոնարհվի ամեն մի հայ ու գոտեպնդվի նրանց հաղթանակի խոր հավատքով, հայրենիքի ազատության համար կռվով մեռնելու պատրաստակամությամբ և ազատ ու անկախ հայրենիքի պայծառ տեսիլքով, նրա իրական կայացման ու զարգացման հեռանկարով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅՈՒՀԻՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939-1945 ԹԹ.)

Ա. ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ

Կան ժողովուրդներ, որոնք դեռ հեռու են անկախության ու քաղաքակրթության բարիքները վայելելու բախտից, որովհետև կնոջ ազդեցությունը փկար է նրանց մեջ: Մի ժողովրդի բարիքը՝ գովելի թե պարսավելի, կախում ունեն մայրերից:

Մայրը միշտ էլ իր հոգուց մի բան փեղափոխում է իր զավակների կրծքի տակ:

Գ. Նժդեհ[665]

Երկրորդ աշխարհամարտը, որն իրավամբ համարվում է մարդկության պատմության մեծագույն աղետը, խլեց 60 միլիոնից ավելի մարդկային կյանքեր՝ անթիվ-անհամար բնակավայրեր վերածելով փլատակների: Աշխարհակործան այս պատերազմում Հայաստանը, բարեբախտաբար, ռազմական գործողությունների թատերաբեմ չդարձավ: Պատերազմի մահաբեր ալիքը, բախվելով կովկասյան լեռներին, անանցանելի դարձավ, ընկրկեց, որով մեր երկիրը զերծ մնաց անխուսափելի թվացող ավերածություններից ու կոտորածից: Բայց, այնուհանդերձ, այն նաև մեր պատերազմն էր, քանի որ անմիջականորեն առնչվում էր նաև մեր ժողովրդի կենսական շահերին, որովհետև նրա մասնակից

[665] **Նժդեհ Գ.**, Ընտիր երկեր, էջ 102:

դարձավ նաև Հայոց ցեղասպանության արդյունքում ձևավորված հայ Սփյուռքը, ողջ աշխարհասփյուռ հայությունը՝ ի դեմս իր 600 հազար ռազմիկների, որից Խորհրդային Հայաստանից բանակ մեկնեցին ավելի քան 300 հազար, իսկ ԽՍՀՄ մյուս հանրապետություններից՝ ևս 200 հազար հայեր: Շուրջ 100 հազար հայեր պատերազմին մասնակցեցին ԽՍՀՄ դաշնակից երկրների բանակների և ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթած երկրների դիմադրական ու պարտիզանական շարժման շարքերում[666]: Պատերազմի ընթացքում ռազմաճակատներում զոհվեց ավելի քան 200 հազար հայ զինվոր[667], նրանց թվում՝ նաև հայ քաջասիրտ կանայք:

Ընդհանուր առմամբ «Խորհրդային Միության հերոսի» կոչում է շնորհվել 108 հայի, որից 4-ին՝ Խորհրդա-ֆիննական պատերազմում, 101-ին՝ Հայրենական մեծ պատերազմում, 3-ին՝ հետպատերազմյան խաղաղ շինարարության տարիներին կատարած սխրանքների համար[668]: Հայրենական մեծ պատերազմում կատարած սխրանքների համար Խորհրդային Միության մարշալ Հ. Բաղրամյանը և գրոհային օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Ն. Ստեփանյանն այդ բարձր կոչմանն արժանացել են կրկնակի, իսկ 26 հայ ռազմիկներ պարգևատրվել են «Փառքի շքանշանի» բոլոր երեք աստիճաններով՝ դառնալով «Փառքի շքանշանի լրիվ ասպետներ», որոնց իրավունքները հավասարեցված են «Խորհրդային Միության հերոսի» կոչում ունեցողներին[669]:

Պատերազմի տարիներին գիտության և արդյունաբերության բնագավառում կատարած ակնառու ծառայությունների համար 8 հայորդիների շնորհվել է «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչում (Հ. Յոլյան, Ա. Միկոյան, Ի. Թևոսյան, Բ. Հարությունով, Ն. Նա-

---

666 **Հարությունյան Կ.,** Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.), Երևան, 2002, էջ 19:

667 Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 651:

668 Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին, էջ 578:

669 **Арутюнян К., Погосян Г.**, Вклад армянского народа в победу в Великой отечественной войне (1941-1945), Ереван, 2010, с. 7.

ռինյան, Բ. Սալամբեկով, Ա. Խաչատրյան և Լ. Օրբելի): Պատերազմի մասնակից երեք հայ ականավոր գիտնականների՝ «Միգ» կործանիչ ինքնաթիռների գլխավոր կոնստրուկտոր, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-գնդապետ Արտեմ Միկոյանին, հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր, պրոֆ. Սամվել Քոչարյանցին և ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի[670]:

1945 թվականի դեկտեմբերի տվյալներով պատերազմին մասնակցել են 68 հայ գեներալներ, ավիացիայի մարշալ (Սերգեյ Խուդյակով (Խամփերյանց)) և մեկ ծովակալ: Պատերազմի մասնակից հայ սպաներից այնուհետև գեներալի կոչում է շնորհվել ևս 94-ին, իսկ բանակի գեներալ Հ. Բաղրամյանին 1955 թվականին շնորհվել է «Խորհրդային Միության մարշալի» կոչում: Նույն թվականին «Խորհրդային Միության նավատորմի ծովակալի» կոչում է շնորհվել Հ. Իսակովին: 1975 թվականին «Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի» կոչում է շնորհվել Հ. Բաբաջանյանին, իսկ 1980 թվականին «Ինժեներական զորքերի մարշալի» կոչում՝ Սերգեյ Ագանովին: Վերջինս պատերազմի տարիներին վաշտի հրամանատարից հասել էր բանակի ինժեներական զորքերի շտաբի պետի պաշտոնին:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ զորավարներից մեկը եղել է ռազմաճակատի, 3-ը՝ բանակի, 6-ը՝ զորակազմի, 28-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի, ավելի քան 100-ը՝ գնդի հրամանատարներ[671]:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց ծանրակշիռ ավանդն են ունեցել նաև անտեսանելի ճակատի լեգենդար հետախույզները՝ գեներալ-լեյտենանտ Հայկ Հովհակիմյանը, գեներալ-մայորներ Իվան Աղայանցը, Միքայել Ալավերդովը, Վյաչեսլավ Կևորկովը, գնդապետ-

---

[670] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 578:

[671] **Арутюнян К., Погосян Г.**, նշվ. աշխ., էջ 6-8, Очерки истории Российкой внешней разведки, т. 4, 1941-1945, Москва, 2003, էջ 324-333:

ներ Աշոտ Հակոբյանը, Գերասիմ Բալասանովը, Վյաչեսլավ Գուրգենովը, Խորհրդային Միության հերոս, գնդապետ Գևորգ Վարդանյանը, նրա կինն ու գործընկերուհին, քաջասիրտ հայուհի Գոհար Վարդանյանը և շատ ուրիշներ, որոնց գործած սխրանքները հայտնի պատճառներով դեռևս լիովին չեն լուսաբանվել[672]:

Պատերազմի ընթացքում խորհրդային բանակի կազմում եղել են 6 հայկական ազգային դիվիզիաներ (76, 89, 261, 390, 408, 409-րդ), որոնցից 261-րդ դիվիզիան մշտապես տեղակայված էր ՀԽՍՀ-ում և ռազմաճակատում մարտնչող հայկական դիվիզիաների համար անհրաժեշտ համալրում պատրաստելուց բացի՝ պաշտպանում էր նաև խորհրդա-թուրքական պետական սահմանը: Մնացած հինգ դիվիզիաները ակտիվորեն մասնակցել են ռազմական գործողություններին: Նրանցից բացի՝ Խորհրդային Հայաստանում կազմավորվել կամ իրենց համալրումն են ստացել ևս 8 հրաձգային ազգային դիվիզիաներ և մի շարք բրիգադներ:

Պատերազմի հենց սկզբում բանակին աջակցելու նպատակով Խորհրդային Միությունում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում, ստեղծվել է ժողովրդական աշխարհազոր: 1941 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ հայկական աշխարհազորն ունեցել է 52 ջոկատ՝ 26 000 անձնակազմով[673]:

Հայտնի է, որ Երկրորդ աշխարհամարտը սկսվել է 1939 թվականի սեպտեմբերի 1-ին գերմանական զորքերի Լեհաստան ներխուժումով: Սկսվել է մարդկության պատմության մեջ իր չափերով ու արյունահեղությամբ աննախադեպ պատերազմ՝ Գերմանիայի զինված ուժերի հաղթարշավով: 1939-1941 թվականներին Գերմանիան իր դաշնակիցների՝ Ճապոնիայի և Իտալիայի աջակցությամբ զավթել է գրեթե ողջ Եվրոպան, նաև խոշոր տարածքներ Ասիայում ու Աֆրիկայում: Այդ ընթացքում ԽՍՀՄ-ը գրեթե առանց դժվարության իրեն է կցել մի շարք

---

[672] **Арутюнян К., Погосян Г.**, նշվ. աշխ., էջ 6:
[673] **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 420:

սահմանամերձ տարածքներ Արևմուտքի սահմանակից երկրներից: Նախ խորհրդային զորքերը մտել են Արևմտյան Բելոռուսիա և Արևմտյան Ուկրաինա, ապա՝ նաև Բեսարաբիա ու Մերձբալթիկա:

1939 թվականի վերջին ԽՍՀՄ-ին ավելի լուրջ ռազմական փորձություն էր սպասվում Խորհրդա-ֆիննական պատերազմում: Ֆինլանդիայի հետ եղած սահմանային վեճը վերաճել էր անհաշտ հակամարտության: Երբ խորհրդային կառավարությունը իր հյուսիսային սահմանի անվտանգությունը ապահովելու նկատառումով առաջարկեց Լենինգրադից 20-32 կմ հյուսիս ձգվող սահմանային գիծը առնվազն 70 կմ հեռացնել քաղաքից՝ փոխարենը պարտավորվելով Ֆինլանդիային հանձնել կրկնակի մեծ տարածք Կարելիայում, ֆիննական կառավարությունը, սակայն, կտրականապես մերժեց այդ առաջարկը, ինչն էլ ի վերջո հանգեցրեց ծանր ու արյունահեղ պատերազմի:

Խորհրդա-ֆիննական պատերազմում (1939 թ. նոյեմբերի 30 – 1940 թ. մարտի 13) խորհրդային զորքերին ծանր կորուստների գնով (333 հազար զոհ, վիրավոր ու ցրտահարված, այս պատերազմին մասնակցած 16 հազար հայերից 2 հազարը զոհվեցին, այդ թվում՝ նաև հայ կանայք) հաջողվել է ճեղքել թշնամու 135 կմ երկարությամբ, ավելի քան 2 հազար խոշոր կրակակետ ունեցող «Մաներհայմի գիծ» անվանումով ամրությունների հզոր շղթան և Մոսկվայի հաշտության բանակցություններում իր պայմանները թելադրել Ֆինլանդիային[674]: Այս պատերազմում իրենց քաջագործությունների համար խորհրդային 412 ռազմիկների շարքում «Խորհրդային Միության հերոսի» կոչման են արժանացել 4 հայորդիներ:

1940 թվականի դեկտեմբերի 18-ին Հիտլերը հաստատեց ԽՍՀՄ-ի դեմ կայծակնային պատերազմի ծրագիրը, որը ստացավ «Բարբարոսա» անվանումը: Ըստ այդ ծրագրի՝ նախատեսվում էր արդեն շուրջ երկու տարի հաջողությամբ կիրառվող մարտավարությամբ՝ գերազանց

[674] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 541:

սպառազինված և շարժունակ խմբավորումների անակնկալ ու սրընթաց գործողություններով, արագորեն մասնատել ու ոչնչացնել ԽՍՀՄ արևմտյան սահմանագոտում տեղակայված զորքերը, շուրջ երկու ամսվա ընթացքում ջախջախել Կարմիր բանակի հիմնական ուժերը, ոչնչացնել Խորհրդային Միության արդյունաբերական կենտրոնները՝ հասնելով անվերապահ հաղթանակի: Այդ նպատակով գերմանական հրամանատարությունը ԽՍՀՄ սահմանի մոտ կենտրոնացրել էր լավ սպառազինված 190 դիվիզիա, որոնք տեղաբաշխվել էին 3 հիմնական՝ «Հյուսիս», «Հարավ» և «Կենտրոն» ռազմավարական ուղղություններով:

Հայրենական պատերազմի նախօրյակին Գերմանիայի դաշնակիցների թիվը ավելացավ ևս մեկով. 1941 թվականի հունիսի 18-ին բարեկամության և չհարձակման պայմանագիր կնքվեց Գերմանիայի և Թուրքիայի միջև, ինչը նշանակում էր, որ Գերմանիան հնարավորություն էր ստանում անարգել օգտագործելու Թուրքիայի ցամաքային, առավել ևս ծովային տիրույթները: Գերմանական ռազմանավերը իսկույն ներխուժեցին Սև ծով և ընդհուպ մոտեցան ԽՍՀՄ ծովափնյա շրջաններին: Փաստորեն՝ ամեն բան պատրաստ էր ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ սանձազերծելու համար:

Ինչ վերաբերում է Գերմանիայի հետ բարեկամացած Թուրքիային, ապա դժվար չէր հասկանալ, թե այդ դեպքում ինչ էր սպասվում Հայաստանին ու հայ ժողովրդին: Հայոց ցեղասպանությունը իրականացրած Թուրքիան անմիջապես խոշոր ռազմական ուժեր՝ 26 սպառազեն դիվիզիա էր կենտրոնացրել Խորհրդային Հայաստանի սահմանի մոտ և հարմար պահի էր սպասում՝ այնտեղ ներխուժելու համար[675]:

1941 թվականի հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան, խախտելով ԽՍՀՄ-ի հետ կնքած չհարձակման մասին պայմանագիրը, առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց

[675] **Штеменко С.,** Генеральный штаб в годы войны, Москва,1968, с. 54.

Խորհրդային Միության վրա: Դեռևս Լեհաստանի վրա հարձակվելուց մի քանի օր առաջ՝ 1939 թվականի օգոստոսի 22-ին՝ Օբերզալցբուրգում Երրորդ Ռայխի բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ, Ա. Հիտլերը ցուցում էր տվել իր զորավարներին առաջիկա պատերազմում անխնա բնաջնջելու սլավոնական ժողովուրդներին՝ ուշադրություն չդարձնելով հասարակական կարծիքի վրա, հիշեցնելով, թե «մեր ժամանակներում այլևս ո՞վ է հիշում 1915 թվականին Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»[676]:

Պատահական չէ, որ հայ ժողովուրդը, հիշելով և վերապրելով առաջին համաշխարհային պատերազմում գերմանա-թուրքական ռազմական դաշինքի արդյունքում իրականացված Հայոց ցեղասպանության փաստը և յուրացնելով այդ վայրենի սպանդի դասերը, մեկ մարդու պես գիտակցվելով, թե իր համար ինչպիսի վտանգ կարող էր առաջանալ Գերմանիայի հաղթանակի դեպքում, ոտքի կանգնեց՝ պատերազմի հենց առաջին օրվանից մասնակցելով մարտական գործողություններին ռազմաճակատի բոլոր հատվածներում՝ հեռավոր Մուրմանսկից մինչև Մերձբալթիկա, ԽՍՀՄ արևմտյան սահմաններով դեպի հարավ՝ մինչև Օդեսա և Ղրիմ: Հայ մարտիկները Խորհրդային Միության բազմազգ ժողովուրդների շարքում մարտնչում էին զինվորական բոլոր օկրուգների և ռազմաճակատների տարբեր զորատեսակների կազմում: Ընդհանուր առմամբ Խորհրդային Հայաստանից բանակ զորակոչվածները կազմել են հանրապետության բնակչության (1,4 մլն մարդ, 1941 թ.) 23 %-ն այն դեպքում, երբ ԽՍՀՄ-ի մասշտաբով այս ցուցանիշը կազմում էր 18 %, այն է՝ 200 մլն բնակչից (1941 թ.) 34,5 մլն զորակոչված[677]:

Խորհրդային զինված ուժերի քաջարի մարտիկները Հայրենական մեծ պատերազմի արյունահեղ մարտերում հայրենասիրության, հերոսության, անձնազոհության հրաշալի օրինակներ են ցույց տվել:

---

[676] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 544:
[677] **Թադևոսյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 420:

Խորհրդային ժողովրդի ազատության և անկախության համար մղվող պայքարում իրենց հերոս եղբայրներից, ամուսիններից, հայրերից ու որդիներից ետ չեն մնացել նաև կանայք: Նրանք ոչ միայն թիկունքում՝ արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարական կազմակերպություններում, տրանսպորտում, կոլտնտեսություններում, լուսավորության, առողջապահության, արվեստի, մշակույթի, գրեթե բոլոր բնագավառներում, խորհրդային տնտեսություններում փոխարինել են տղամարդկանց, այլև համալրել են բանակի շարքերը՝ իրենց մեծ լուման ներդնելով հաղթանակի գործում: Տղամարդկանց հավասար նրանք ծառայության են անցել՝ մարտական բոլոր դժվարությունները հաղթահարելով, նրանց հետ միասին հասել են մինչև վերջնական հաղթանակ, մինչև Բեռլին: «...Երբեք ոչ մի պատերազմում կանայք այնպիսի դեր չեն խաղացել, ինչպես 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում,– ասել է գեներալ Չույկովը»[678]:

Կանայք և աղջիկները համալրել են նաև խորհրդային բանակի, ռազմաօդային և ռազմածովային նավատորմների և հակաօդային պաշտպանության միավորումների շարքերը: Խորհրդային երկրի հազարավոր կանայք՝ բանվորուհիներ, կոլտնտեսուհիներ, ուսանողուհիներ, մտավորականության ներկայացուցիչներ, կամավոր մեկնել են ռազմաճակատ և մարտնչել ֆաշիստական զավթիչների դեմ որպես տանկիստներ, կապավորներ, հրետանավորներ, օդաչուներ, հատկապես որպես բժշկասանիտարական աշխատողներ և այլն:

Խորհրդային ժողովրդի արիասիրտ դուստրերը անձնազոհության, հերոսության անկրկնելի օրինակներ են ցույց տվել Մոսկվայի, Լենինգրադի, Օդեսայի, Սևաստապոլի, Ստալինգրադի, Կուրսկի, Կովկասի և Խորհրդային Միության այլ քաղաքների և բնակավայրերի ազատագրման համար մղված մարտերում:

---

[678] **Чуйков В.,** Начало пути, Москва, 1962, с. 261.

Երկրորդ աշխարհամարտի և Հայրենական մեծ պատերազմի հերոսական տարեգրության մեջ առհավետ արձանագրվեցին շատ հերոսուհիների անուններ, որոնք իրենց սխրագործություններով անմահ փառք բերեցին խորհրդային կնոջը: Հայրենական մեծ պատերազմի հերոսական տարեգրության մեջ առհավետ ամրագրվել են *Զոյա Կոսմոդեմյանսկայայի, Լիզա Չայկինայի, Ուլյանա Գրոմովայի, Լյուբա Շևցովայի, Մայա Պեգլիվանովայի (Փահլևանյան)* և այլ անմահ քաջերի անունները: Խորհրդային կառավարությունը, բարձր գնահատելով կանանց ծառայությունները Հայրենական մեծ պատերազմում, 70 հայրենասեր կանանց արժանացրել է «Խորհրդային Միության հերոսի» կոչման: Ավելի քան 120 հազար կանայք պարգևատրվել են Հայրենական մեծ պատերազմի շքանշաններով ու մեդալներով, 8 հազար կին պարգևատրվել է «Հայրենական պատերազմի պարտիզանին» մեդալով: Հարյուր հազարավոր կանայք իրենց կրծքին կրել են հերոս քաղաքների պաշտպանության համար շնորհված մեդալներ[679]:

Երկրորդ աշխարհամարտին և Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են մեծ թվով քաջասիրտ հայուհիներ, ավելի քան 10 հազար հայ կանայք, որոնցից 4 հազարը՝ ՀԽՍՀ-ից, մյուսները՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից և Սփյուռքից[680]: Պատերազմի ամենածանր փորձությունների ժամանակ հայ կանայք բարձր են պահել հայ ժողովրդի դարավոր պայքարի հերոսական ավանդները՝ սրբորեն կատարելով իրենց պարտքը հայրենիքի հանդեպ: Հայրենիքի պաշտպանության համար մղված դաժան պայքարում նրանք ցուցաբերել են բարձր գիտակցություն, հայրենասիրություն և վճռականություն: Համալրելով խորհրդային բանակի շարքերը՝ անձնվիրաբար մարտնչել են ֆաշիստական զավթիչների դեմ: Խորհրդային հայրենիքի նկատմամբ հայ կնոջ ունեցած անսահման սիրո մասին գեղեցիկ կերպով է արտա-

---

679 **Մարտիրոսյան Լ.,** Հայ կանանց սխրագործությունները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում (1941-1945), Երևան, 1961, էջ 7:
680 **Թադևոսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 420:

հայտվել կամավոր ռազմաճակատ մեկնած Լենա Գրիգորյանը. «Իմ հայրենիքը ծաղկուն Հայաստանն է: Բայց իմ հայրենիքը ո՛չ միայն Հայաստանն է, այլև ամբողջ Խորհրդային Միությունը: Ուզում եմ հազար կյանք ունենալ, որպեսզի դրանք բոլորը նվիրեմ Խորհրդային Միությանը»[681]:

Պատերազմի առաջին ամիսներին հիտլերյան բանակին հաջողվեց գրավել Լատվիան, Լիտվայի զգալի մասը, Արևմտյան Բելոռուսիան և Արևմտյան Ուկրաինայի մեծ մասը: Խորհրդային բանակը հարկադրված եղավ նահանջել երկրի խորքը: Պաշտպանական մարտերը շարունակվեցին մինչև 1941 թվականի աշնան ամիսները: Այդ մարտերում տղամարդկանց կողքին հերոսաբար կռվել են նաև կանայք, նրանց թվում՝ բազմաթիվ հայուհիներ, որոնք աչքի են ընկել իրենց սխրագործություններով: Նրանց թվում էր կոմերիտուհի **Սոնիկ (Սոնյա) Սինոյանը**[682]: Նա ծնվել է 1923 թվականին Թալինի շրջանի Բազմաբերդ գյուղում: 1939 թվականին տեղափոխվել է Երևան, աշխատել Կարի 1-ին ֆաբրիկայում: 1941 թվականի հոկտեմբերի 23-ին Երևանում հրավիրված համաքաղաքային Կոմերիտական ժողովին ներկայացրած դիմումում կամավոր ռազմաճակատ մեկնելու ցանկություն հայտնելով՝ Ս. Սինոյանը գրել է. «Ես հպարտ եմ, որ պիտի մեկնեմ Կարմիր բանակ և հարազատներիս հետ միասին կռվեմ հիտլերյան ավազակների դեմ: Թող գիտենան ֆաշիստ զավթիչները, որ խորհրդային կանայք պատրաստ են կրծքով պաշտպանելու իրենց սիրելի հայրենիքի ազատությունն ու անկախությունը»[683]:

1942 թվականի սկզբներին Ս. Սինոյանը արդեն ռազմաճակատում էր: Նա մասնակցել է Կիրովոգրադի մարզի Վերբլյուշկա գյուղի, ապա Կովկասյան ռազմաճակատի՝ Մոզդոկ քաղաքի համար մղվող պաշտ-

---

681 “Правда”, 4 декабря, Москва, 1943.

682 Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, Երևան, 2011, էջ 210:

683 **Մարտիրոսյան Լ.,** Սովետական Հայաստանի կանայք Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945), Երևան, 1968, էջ 122:

պանական մարտերին, եղել է հրետանու կապավոր, անընդհատ վերականգնել է հաճախակի ընդհատվող կապը: Եֆրեյտոր Ս. Սինոյանը խորհրդային քաջարի զինվորների հետ միասին կատաղի հակագրոհներով արգելակում էր թշնամու գրոհները: Նա միաժամանակ քաջ հետախույզ էր: Բազմիցս մեկնելով թշնամու թիկունք, օրինակելիորեն կատարելով հրամանատարության առաջադրանքները՝ արժանացել է «Գերազանցիկ հետախույզ» կոչմանը:

Գվարդիայի եֆրեյտոր Ս. Սինոյանը 1944 թվականին մասնակցել է Ուկրաինայի, Մոլդովայի և Հունգարիայի ազատագրմանը, որտեղ Ս. Սինոյանը նորից հրետանային միավորման կապավոր էր: Տակմազե և Շերպեն (Մոլդավիա) գյուղերի մատույցներում Ս. Սինոյանը թշնամու տվյալները պարզելու առաջադրանք է ստացել զինակիցների հետ: Հետախուզման ընթացքում բախում է տեղի ունեցել հակառակորդի հետ: Կարճատև մարտից հետո հակառակորդն անձնատուր է եղել, իսկ հաղթանակած հետախույզները, ոչ մի զոհ չտալով, վերադարձել են զորամաս՝ իրենց հետ բերելով 6 գերված գերմանացու[684]:

1945 թվականի հունվարի 31-ին հերոսուհի հայուհին Հունգարիայի Մարիա գյուղի համար մղված մարտում 1.5 անգամ վերականգնել է կապը, ոչնչացրել թշնամու 5 զինվոր[685]: Բելգրադյան հրաձգային N1 դիվիզիան մի բարձունքում տեղավորել էր երկու հրետանային մարտկոց: Կապավորը գնդի հրամանատարին տեղեկացրել է թշնամու հարձակման մասին: Թշնամին տանկերով և ավտոմատավորներով առաջ է շարժվել: Կռվի թեժ պահին խափանվել է կապը գնդի հրամանատարության և մարտկոցների միջև, և հնարավոր չի եղել այն վերականգնել: Մարտկոցի հրամանատարը, ցանկանալով փրկել զորամասի միակ աղջկա՝ Ս. Սինոյանի կյանքը, պահանջել է դուրս գալ կրակային գծից և գնալ շտաբ: Սակայն նա հրաժարվել է կատարել հրամանը, հրետանավորներին արկեր է մատակարարել և մինչև վերջ կռվելով՝

---

[684] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 210:
[685] Տե՛ս նույն տեղում:

մասնակցել է բարձունքի պաշտպանությանը: Այդ սխրագործության համար նա արժանացել է «Կարմիր աստղ» շքանշանի[686]:

Ուշագրավ է Դանուբի ափին (Ավստրիա) վերջին մարտերից մեկում Ս. Սինոյանի կատարած սխրագործությունը: 1945 թվականի փետրվարի 3-ին մարտեր էին մղվում Դյուլա գյուղի մոտ: Գրոհի էր նետվել գերմանական հետևակը՝ ութ տանկերի պաշտպանությամբ: Կապն ապահովել է Ս. Սինոյանը: Երբ նրա վրա շարժվող տանկերից մեկը մոտեցել է, 15 մետր հեռավորության վրա Ս. Սինոյանը նրա վրա նետել է հրկիզող շիշը, որի արդյունքում թշնամու տանկը շարքից դուրս է եկել: Ս. Սինոյանը անձամբ նռնակներով ոչնչացրել է երկրորդ «Վագր» տիպի տանկը, հինգ հիտլերականի և գերի վերցրել երկուսին: Մարտկոցի անձնակազմը ոչնչացրել է գերմանական 4 տանկ և գերեվարել 25 զինվորի[687]:

Բազմաթիվ են խիզախ գվարդիական եֆրեյտոր Ս. Սինոյանի կատարած քաջագործությունները: Նա գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղած մարտերում ցուցաբերած խիզախության համար պարգևատրվել է «Փառքի 3-րդ աստիճանի» շքանշանով, բազմաթիվ մեդալներով: Մոլդավիայի, Շումեն (Շումլա), Կոստանցա, Բուդապեշտ քաղաքների ազատագրման, Կորենեյբուրգ, Ֆլորիդսդորֆ, Վիեննա, Գոլլաբրուն, Շտոկկերաու և մի շարք այլ քաղաքների համար մղված մարտերում աչքի ընկնելու համար Գերագույն գլխավոր հրամանատարության կողմից Ս. Սինոյանը արժանացել է գրավոր շնորհակալության:

Կարմիր բանակի հարավային խմբի հրամանատարությունը զորացրման կապակցությամբ Ս. Սինոյանին տված հրամանում գրել է. «Այս պատմական մեծ ճակատամարտում դու պատվով կատարեցիր Կարմիր բանակի ռազմիկի պարտականությունը: Հարավային խմբի

---

[686] **Մարտիրոսյան Լ.,** Սովետական Հայաստանի կանայք Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945), էջ 123:
[687] Տե՛ս նույն տեղում, էջ 124:

զորքերի կազմում դու անցել ես Դոնից և Ստալինգրադից մինչև Վիեննա և ավստրիական Ալպերը տանող երեք հազար կիլոմետրանոց փառավոր մարտական ճանապարհը: Դու քաջությամբ ու պատվով մասնակցեցիր գերմանական զավթիչներից հարազատ Ուկրաինայի ու Մոլդովայի և միլիոնավոր սովետական քաղաքացիների ազատագրման մարտերին»[688]:

Հաղթանակից հետո Ս. Սինոյանը վերադարձել է հայրենի Բազմաբերդ գյուղը, մասնակցել կոլտնտեսության աշխատանքներին: 1949 թվականին տեղափոխվել է Երևան, աշխատել Երևանի առաջին ավտոբուսային հավաքակայանում: Ս. Սինոյանը մահացել է 1994 թվականին Երևանում:

Կովկասի ակտիվ պաշտպաններից էր ԽՄԿԿ անդամ **Հասմիկ Թամազյանը:** Նա ծնվել է 1922 թվականին ՀԽՍՀ Աշտարակի շրջանի Աշտարակ գյուղում: 1940 թվականին ավարտելով գյուղի միջնակարգ դպրոցը՝ աշխատանքի է անցնել սկզբում խնայդրամարկղում որպես վերահսկիչ, իսկ ապա Պետապում՝ որպես ավագ տեսուչ: Հասմիկը՝ որպես լավագույն կոմերիտուհի, ընտրվել է որպես Շրջանային գործադիր կոմիտեի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար[689]: Հ. Թամազյանը Կովկասի հերոսական պաշտպանության օրերին (1942 թ. հուլիսի 27-ից – 1943 թ. հոկտեմբերի 9-ը) կամավոր կերպով մեկնել է խորհրդային բանակ, սովորել և դարձել է զենիթային հրետանավոր:

1943 թվականի սկզբներին համառ և արյունահեղ մարտեր էին մղվում՝ Արմավիր քաղաքը ազատագրելու համար: Հիտլերականները ուժեղ կրակի տակ էին պահում մեր պաշտպանական դիրքերը: Գործում էր թշնամու ավիացիան: Ռազմաօդային դիվիզիոնի հրամանատարի առաջադրանքով Հ. Թամազյանի ջոկը արագորեն հայտնաբերել է հակառակորդի ինքնաթիռների թռիչքի ուղղությունը և բարձրությունը: Երբ ինքնաթիռները մոտեցել են մեր պաշտպանության գծին,

---

[688] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 270, գ 3, թ. 5, 71:
[689] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 18:

զենիթայինների հուժկու կրակը ցրել է նրանց խումբը՝ ոչնչացնելով մի քանիսին: Խափանվել է թշնամու ավիացիայի այդ օրվա հարձակումը Արմավիր և Կրոպոտկին քաղաքների վրա[690]:

Կովկասի ազատագրման համար մղվող մարտերում անձնուրաց սխրագործությունների համար Հ. Թամազյանը հրամանատարության կողմից երկու անգամ արժանացել է պատվոգրի և պարգևատրվել «Մարտական ծառայությունների համար» մեդալով: Փորձված ռազմիկ Հ. Թամազյանը մասնակցել է Ուկրաինայի, Մոլդովայի ազատագրմանը, մարտերով հասել է Չեխոսլովակիա: Նա միաժամանակ դիվիզիոնի կուսակցական կազմակերպության քարտուղարն է եղել:

Բնութագրելով Հ. Թամազյանի ռազմական սխրագործությունները ռազմաճակատի տարբեր հատվածներում՝ և՛ ստորաբաժանման հրամանատար կապիտան Պանկովը, և՛ քաղաքացիական գծով նրա տեղակալ մայոր Ժիլկինը Հ. Թամազյանի հորը գրած նամակում ընդգծում են. «Մեր ստորաբաժանման մեջ ծառայությունն անցկացնելիս Ձեր դուստրը իրեն դրսևորեց որպես լավագույն աղջիկ-մարտիկներից մեկը: Ամբողջ ծառայության ընթացքում նա եղել է մարտական և քաղաքական պատրաստության գերազանցիկ, համեստ ու կարգապահ մարտիկ»[691]:

Կովկասի պաշտպանության մարտիկների շարքում հերոսաբար կռվել են նաև մեծ թվով կապավոր կանայք՝ կապի վաշտի հրամանատար *Աղավնի Ավետիսյանը*, կրտսեր լեյտենանտներ *Քնարիկ Հարությունյանը* և «Կարմիր աստղի» շքանշանակիր *Վիկտորյա Մալակյանը*, մարտական ծառայության համար մեդալակիրներ *Լուսյա Պողոսյանը* և *Վալենտինա Լիվյանը*, «Կարմիր աստղ» շքանշանակիր *Անելա Աբրահամյանը*:

Վալենտինա **Վ. Լիվյանը** ապահովել է անխախտ կապը գումարտակի և վաշտի միջև: 1943 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին

---

[690] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 125:
[691] ՀԱԱ, ֆ. 270, գ. 55ա, թ. 2:

ծովային հետևակի 255-րդ կարմրադրոշ բրիգադի կազմում մասնակցել է Նովորոսիյսկի մոտ մղված մարտերին՝ ապահովելով մշտական կապը գումարտակի հրամանատարության և զորամասերի միջև: Մարտերի ծանր պահերին Վ. Լիվյանը մարտի դաշտից դուրս է բերել վիրավորներին և նրանց ցույց տվել բժշկական առաջին օգնությունը[692]:

Նույն կերպ էր վարվել նաև մյուս հայուհին՝ կապի վաշտի հրամանատար **Աղավնի Ավետիսյանը**՝ միշտ անխափան պահելով կապը: Նա անձամբ էր ստուգել և վերանորոգել հեռախոսային գիծը: Մի մարտի ժամանակ, երբ թշնամու ուժեղ կրակի տակ Ա. Ավետիսյանը վերանորոգելիս է եղել հեռախոսային գիծը, ընկել է շրջապատման մեջ: Սակայն հերոս հայուհին կռվով հաջողությամբ կարողացել է դուրս գալ շրջապատումից և անհապաղ ապահովել կապը զորամասի հետ[693]: Կապի վաշտի հրամանատար հերոսուհի Ա. Ավետիսյանը իր անձնական օրինակով ոգեշնչել է ստորաբաժանման հրամանատարներին ու մարտիկներին:

Անվեհեր կապավոր, լուսավորության նախարարության նախկին աշխատակից, կամավոր ռազմաճակատ մեկնած **Քնարիկ Հարությունյանը** Կովկասից հասել է մինչև Բեռլին: Նա մարտական ծառայությունների համար պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով ու մեդալներով[694]:

Կապավոր **Անելա Աբրահամյանի** մարտական ուղին ձգվում է Հյուսիսային Կովկասից մինչև Բեռլին: Բժշկական տեխնիկումի վերջին կուրսի ուսանողուհի, տրամվայի պարկի աշխատակից Ա. Աբրահամյանը կամավոր մեկնել է ռազմաճակատ 1942 թվականին: Սկզբում 320-րդ, ապա 409-րդ դիվիզիաների շարքերում նա թշնամու դեմ մարտնչել է որպես սանիտարական գումարտակի հրահանգիչ, ապա՝ որպես կա-

---

692 **Մարտիրոսյան Լ.,** Սովետական Հայաստանի կանայք Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945), էջ 126:
693 Տե՛ս նույն տեղում:
694 Տե՛ս նույն տեղում:

պավոր շտաբային մարտկոցում: Նա մասնակցել է Հյուսիսային Կովկասի, Ռոստով, Միլլերովո և ուկրաինական շատ քաղաքների ազատագրման մարտերին: Զմեև քաղաքը ազատագրելիս պատերազմական ծանր իրավիճակում կապը անխափան ապահովելու համար Ա. Աբրահամյանն արժանացել է «Խիզախության համար» մեդալի[695]:

Ծանր կռիվներ են մղվել Դնեպրոպետրովսկ քաղաքի շրջանում: 409-րդ դիվիզիան հարկադրված նահանջել է: Զոհվել է մայոր Ղազարյանի ավտոմեքենայի վարորդը, մեքենայում գտնվող մի խումբ հրամանատարների սպառնացել է շրջապատումը: Ա. Աբրահամյանը անմիջապես, առանց ժամանակ կորցնելու մեքենայի ղեկը վերցրել է իր ձեռքը և շրջապատումից դուրս բերել հրամանատարներին:

Կապավոր Ա. Աբրահամյանը արժանացել է դիվիզիայի հրամանատար Դոբրովսկու շնորհակալությանը: Հետագայում դիվիզիան ակտիվ մասնակցություն է ունեցել Դնեպրոպետրովսկ, Կիրովոգրադ, Կրիվոյ Ռոգ քաղաքների ազատագրման մարտերին:

1944 թվականի հունվարին Կրիվոյ Ռոգի մատույցների ծանր կռիվներում Ա. Աբրահամյանը և 11 խիզախ հրետանավորներ անձնազոհ կռվել են թշնամու մեծաքանակ տանկերի դեմ մինչև օժանդակ ուժերի հասնելը: Նույն թվականի փետրվարին Հայկական 89-րդ «Թամանյան» դիվիզիայի շարքերում Ա. Աբրահամյանը՝ նորից որպես գնդի շտաբային մարտկոցի կապավոր, մասնակցել է Սևաստոպոլի և Լեհաստանի ազատագրմանը: Օդերի հենակետում կապի անխափանությունը ապահովելու համար Ա. Աբրահամյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, իսկ Բեռլինի ճակատամարտին ակտիվ մասնակցելու համար՝ երկրորդ մեդալով[696]:

1942 թվականի օգոստոսին Թբիլիսիի դիպուկահարների ուսումնարանի սաներ *Օլգա Անանյանը* (Հայաստանից), *Անյա Կարապետյանը* (Հյուսիսային Կովկասից) և *Նինա Օսիպովան* (Բաքվից) մեկնել են

---

[695] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 127:
[696] Տե՛ս նույն տեղում, էջ 128:

ռազմաճակատ: Թեժ կռիվներ են մղվել Տագանրոգից 20 կմ հյուսիս-արևմուտք: Մարտական դիրքերում էր նաև այն զորամասը, որի շարքերում էին անվախ ու խիզախ հայուհիները՝ Օլգան, Անյան և Նինան:

Հակառակորդը ձգտել է խուճապի մատնել և շրջապատել զորամասը: Թշնամու խաչաձև ու ուժեղ կրակի տակ դիպուկահար Ա. Կարապետյանը սողալով հասել է առաջավոր դիրքերը և ձեռքի նռնակները նետել թշնամու առաջացող տանկերի վրա: Դիպուկ կրակից բոցավառվել է թշնամու տանկը, սակայն արկի բեկորը խլել է Ա. Կարապետյանի կյանքը[697]:

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում կռվող հայ ժողովրդի քաջասիրտ, անվախ դուստրերից էր կամավոր ռազմաճակատ մեկնած, «Կարմիր աստղ» շքանշանակիր **Նինա Մուրադյանը**: Նա մասնակցել է Կուբանի ազատագրմանը և իր զինակիցների հետ ոչընչացրել մեծ թվով հիտլերականների:

1942 թվականին ամռանը ծանր կռիվներ են մղվել Կուբանում, Տուապսե-Նովորոսիյսկ հատվածում: Այդ մարտերին հայկական 408-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմում էր Երևանի Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցի շրջանավարտ **Արաքսյա Հարությունյանը**: Նովորոսիյսկի շրջանում տասն օրվա ընթացքում բժշկական ծառայության կրտսեր լեյտենանտ Ա. Հարությունյանը փրկել է մի քանի տասնյակ վիրավոր մարտիկների ու հրամանատարների կյանքը[698]:

1943 թվականի սկզբներին՝ ռմբակոծության ժամանակ, Ա. Հարությունյանը վիրավորվել է, ապաքինվելուց հետո նույն հոսպիտալում աշխատել է որպես բուժքույր: Նույն թվականի վերջերին նա ընդունվել է հրամանատարական դասընթացներ և ավարտելուց հետո լեյտենանտի կոչումով մեկնել է ռազմաճակատ: Գվարդիական հրաձգային դիվիզիայի լեյտենանտ Ա. Հարությունյանը մասնակցել է Չեխոսլովակիայի Մորավսկա-Օստրավա և Ժիլինա քաղաքների ազատագրման

---

[697] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 128:
[698] Տե՛ս նույն տեղում:

մարտերին: Ժիլինա քաղաքի մոտ մարտերից մեկի ժամանակ սպանվել է ստորաբաժանման հրամանատարը, իսկ Ա. Հարությունյանը հրամանատարությունը վերցրել է իր ձեռքը: Ստորաբաժանումը երեկոյան հարձակում ձեռնարկելով կարևոր նշանակության բարձունքի վրա, ոչնչացնելով թշնամուն՝ առաջ է շարժվել և գրավել է մեկ ուրիշ բարձունք ևս: Հաջորդ օրը ետ մղելով թշնամու գրոհները՝ խորհրդային մյուս զորամասերի հետ մասնակցել է Ժիլինա քաղաքի ազատագրմանը: Ցուցաբերած խիզախության համար լեյտենանտ Ա. Հարությունյանը արժանացել է «Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանի»: Նա մասնակցել է նաև Չեխոսլովակիայի Օլոմուց, Բոգումին, Ֆրիշտատ, Սկոչուվ, Չադցա, Ռուժոմբերոկ և այլ քաղաքների, ինչպես նաև Պրագայի ազատագրման մարտերին[699]:

Կերչի ազատագրական մարտերում ռազմաօդային նավատորմի զորամասերի մարտաշարքերում էր նաև կանանց կարմրադրոշ «Թամանյան» ավիացիոն լեգենդար գունդը՝ ԽՍՀՄ հերոս Մարիա Ռասկովայի հրամանատարությամբ: Նույն գնդում է ծառայել ռազմաճակատ մեկնած հայ ժողովրդի արիասիրտ դուստր, կամավոր, օդաչու **Ալեքսանդրա Օսմանցևան (Օսմանյանը)**: Նա սկզբում աշխատել է որպես ավիացիոն մեխանիկ: Համառորեն սովորելով թռիչքային բարդ տեխնիկան՝ Ա. Օսմանցևան դարձել է օդաչու: Նա իր առաջին մարտական մկրտությունը ստացել է 1943 թվականի նոյեմբերին Կերչում՝ օդային կատաղի կռիվներում:

Գոմել, Մինսկ, Քյոնիսբերգ և Բեռլին քաղաքների համար մղված օդային կռիվներում Ա. Օսմանցևան խիզախ օդաչուներ Մարինա Չեչենևայի, Իրինա Ռակոբոլսկայայի, Գալինա Պոմետենկոյի հետ մասնակցել է թշնամու օդային ուժերի ոչնչացմանը: Բարձր գնահատելով նրա մարտական ծառայությունները՝ հրամանատարությունը նրան պարգևատրել է «Կարմիր աստղ», «Հայրենական պատերազմի 1-ին

[699] **Մարտիրոսյան L.,** նշվ. աշխ., էջ 129:

աստիճանի» շքանշաններով, «Կովկասի պաշտպանության» և «Բեռլինի գրավման համար» մեդալներով[700]:

Պատերազմի հաղթական ավարտից հետո օդաչուն վերադարձել է իր ծննդավայրը՝ Ստավրոպոլ: Միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո մեկնել է Երևան, ընդունվել և 1958 թվականին բարձր գնահատականներով ավարտել է Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը, որից հետո աշխատել է Ալեքսանդրովսկի անասնաբուժական տեխնիկումում որպես դասախոս:

1943 թվականի հոկտեմբեր - 1944 թվականի մայիս ամիսներին ազատագրվեցին Կերչ և Ղրիմ թերակղզիները: Այդ ընթացքում թերակղզիները գերմանաֆաշիստական զորքերից մաքրելու մարտական գործողությանը հերոսական մասնակցություն ցուցաբերեց Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան՝ գեներալ Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ: Գերագույն գլխավոր հրամանատարի՝ 1943 թվականի հոկտեմբերի 9-ի հրամանագրով դիվիզիային շնորհվեց «Թամանյան» պատվավոր անվանումը: Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար 10 հայորդու շնորհվեց «Խորհրդային Միության հերոսի» կոչում:

1943 թվականի նոյեմբերի 3-ին Կերչի թերակղզի իջած խորհրդային առաջին դեսանտայինների մեջ էր նաև Մոսկվայի տեխնոլոգիական ինստիտուտի առաջին կուրսի ուսանողուհի, Լոռվա դուստր **Սոնյա Չիլինգարյանը**: Նա «Թամանյան» 89-րդ հրաձգային դիվիզիայում գնդացրային դասակի հրամանատար էր: Մասնակցել է բազմաթիվ մարտերի, առանձնապես աչքի է ընկել Թամանի ազատագրման ժամանակ:

Դեսանտայինների կազմում կռվող Ս. Չիլինգարյանի գնդացրային դասակը առաջադրանք էր ստացել հակառակորդին դուրս շպրտելու Կերչի ճանապարհին գտնվող Վոյկովի անվան մետալուրգիական գոր-

---

[700] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 130:

ծարանի շրջակայքից, որտեղ հակառակորդի զորամասերը, ամրապնդվելով, դիրքերում ստեղծել էին ուժեղ կրակային հենակետեր: Լեյտենանտ Ա. Չիլինգարյանի գլխավորությամբ դասակը շարժվել է դեպի գործարան ու նետվել գրոհի: Համառ և արյունահեղ կռվում քաջարի հրամանատարը գնդացրային կրակով անձամբ ոչնչացրել է հակառակորդի մի քանի կրակային կետեր և բազմաթիվ հիտլերականների: Թշնամուն դուրս մղելով գործարանից՝ դասակը ամրացել է նոր դիրքերում:

1943 թվականի դեկտեմբերին Կերչի թերակղզու մի այլ հատվածում մեծ կարևորություն ներկայացնող բարձունքի գրավման համար կատաղի մարտ է բորբոքվել գրոհող դասակի և թշնամու միջև: Ջախջախելով թշնամուն՝ դասակը ընդհուպ մոտեցել է բարձունքին, բայց ընկել է թշնամու ականանետային կրակի տակ: Պայթած արկի բեկորից դասակի հրամանատար Ս. Չիլինգարյանը մահացու վերք է ստացել ու կնքել իր մահկանացուն: Հերոսուհի հրամանատարի մարտիկները շեշտակի գրոհով գրավել են բարձունքը՝ վրեժ լուծելով թշնամուց իրենց սիրելի հրամանատարի համար[701]:

Ուկրաինայի համար մղվող մարտերում քաջ հայուհիներից աչքի է ընկել Երևանի Պռոշյանի անվան դպրոցի շրջանավարտ **Անժելիկ Միքայելյանը**: Վերջինս մասնակցել է Լուգանսկ, Խարկով, Պոլտավա քաղաքների ազատագրմանը: Նա համարձակ ու քաջ մարտիկի համբավ է նվաճել և առաջադրանքները հստակ ու անթերի կատարելու համար հրամանատարության կողմից պարգևատրվել է անվանական զենքով[702]:

Ռազմաճակատից մորը գրած նամակում Ա. Միքայելյանը փաստել է՝ նշելով. «Մենք ուկրաինական հողում ենք: Ես այստեղ երբեք չեմ եղել: Ուկրաինայի մասին միայն գրքերում եմ կարդացել, տեսել կինոն-

---

[701] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 131:
[702] Տե՛ս նույն տեղում, էջ 131:

կարներում: Այժմ ես Ուկրաինայում եմ, և ինձ թվում է, որ նա ինձ համար նույնքան հարազատ է, որքան իմ Հայաստանը»[703]:

Ա. Միքայելյանը ստանցել է սպայի կոչում՝ դառնալով լավագույն հետախույզ, իր մարտական ընկերների հետ բազմիցս թափանցել է հակառակորդի պաշտպանության գիծը՝ լեզու որսալու և ռազմական անհրաժեշտ տեղեկություններ բերելու համար:

Հայտնի է, որ Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին մարտական ուղի անցած եռակի շքանշանակիր «Թամանյան» 89-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում տղամարդ ռազմիկների կողքին կռվել են նաև շատ հայուհիներ: Նրանց մեջ էր սանիտարական ավագ հրահանգիչ **Ռոզա Սարգսյանը**: Նա ոչ միայն սանիտար էր, այլև լավ հետախույզ ու քաջ մարտիկ: 1943 թվականի սկզբներին, երբ կատաղի մարտեր էին ընթանում Հյուսիսային Կովկասի ազատագրման համար, թշնամու տանկերից մեկը շարժվել է Ռ. Սարգսյանի խրամատի ուղղությամբ: Քաջասիրտ հայուհին, իրեն չկորցնելով, տանկի մոտենալուն պես հաջորդաբար նրա վրա է նետել նռնակները: Տանկը շրջվել է և բոցավառվել, իսկ Ռ. Սարգսյանը մարտի է բռնվել նաև տանկիստի հետ և տեղն ու տեղը սպանել նրան: Այդ մարտում նա վիրավորվել է: Հոսպիտալում բուժվելուց հետո Ռ. Սարգսյանը վերադարձել է հարազատ զորամաս: «Թամանյան» դիվիզիայի շարքերում նա մասնակցել է Լեհաստանի ազատագրմանը, Օդեր գետի ափին «Հայկական փոքր հող» պլացդարմի պաշտպանությանը և աչքի ընկել գերմանական Կալիշ, Լանդսբերգ, Մեզերիտց, Շվիբուս, Ֆրանկֆուրտ քաղաքների գրավման մարտերում[704]:

Բեռլինի համար մղվող հաղթական ճակատամարտում Ռ. Սարգսյանը ընդլայնել է իր մարտական ուղին, որի համար արժանացել է «Գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալագրին» ու պարգևներին: Նա պարգևատրվել է «Կարմիր դրոշի» երկու, «Կարմիր

---

[703] ՀԱԱ, ֆ. 270, գ. 58, թ. 2:
[704] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 34:

աստղի» և «Փառքի 3-րդ աստիճանի» շքանշաններով, «Կովկասի պաշտպանության», «Վարշավայի ազատագրման», «Բեռլինի գրավման համար» և այլ մեդալներով: Նույն դիվիզիայի շարքերում փառավոր մարտական ուղի է անցել մեկ ուրիշ հայուհի՝ **Հայկուշ Ավետիսյանը**: Հայրենական պատերազմի սկզբից նա մեկնել է խորհրդային բանակ: Ղրիմից հասնելով Բեռլին՝ մասնակցել է թշնամու վերջնական ջախջախմանը և հաղթանակի բերկրանքը վայելել թշնամու մայրաքաղաքում[705]:

1945 թվականի փետրվարի 15-ին՝ գիշերը, թալանչիները Ֆրանկֆուրտի մոտ գետանցելով Օդերը, նրա ձախ ափին ստեղծել են ամուր պլացդարմ (հենակետ), որտեղ հայ մարտիկները երկու ամիս համառ ու արյունահեղ մարտեր են մղել: Այդ հողակտորը ստացել է «Հայկական փոքր հող» անվանումը: Հակառակորդը թե՛ օդից, թե՛ ցամաքից անընդհատ գնդակոծել է հենակետը: Կատաղի ռմբակոծությունից հետո ֆաշիստները մոտեցել են նրա մի հատվածին և կռվի բռնվել խրամատից դուրս եկած հայ մարտիկների հետ: Մայոր Սիմոնյանի գումարտակի մարտիկները քաջաբար դիմադրել են իրենց մոտեցող թշնամու գերակշիռ ուժերին: Այդ պահին զորամասի հրամանատարը նկատել է խրամատում քողարկված իր մարտիկներից մեկին: Անհանգստացած հրամանատարը մտածել է, թե մարտիկը նռնակ չունի, բայց մեկ րոպե անց, երբ նկատել է, որ տեղից վեր ցատկելով՝ նա նռնակներ է նետում հակառակորդի վրա ու նորից քողարկվում, խիստ զարմացել է և հուզված հետևել է այդ քաջագործությանը, որի արդյունքում կասեցվել է թշնամու առաջխաղացումը: Այնուհետև գումարտակը, համազարկ տալով, հակառակորդին ետ է շպրտել իր ելման դիրքերը: Մարտից հետո հրամանատարը, անձամբ այցելելով խիզախ ռազմիկին, խիստ զարմացել է՝ իր առաջ տեսնելով կին-ռազմիկին՝ **Հայկանուշ Ավետիսյանին**:

---

[705] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 35:

Հայկանուշը մասնակցել է նաև Բեռլինի համար մղվող կատաղի մարտերին: Հաղթական ճակատամարտից հետո խիզախ հայուհին Ռայխստագի պատին թողել է հետևյալ մակագրությունը. «Կարմիր բանակի շարքերում այստեղ հասավ հայուհին և Ռայխստագից դիտեց ծնկաչոք Բեռլինը»[706]:

Բեռլինի գրավման մասնակից բազմաթիվ հայուհիների թվում էր Հայկական հրաձգային 89-րդ «Թամանյան» դիվիզիայի զենիթային **Երջանիկ Ենոքյանը**: Եղբորն ուղղած նամակում նա գրել է. «Նամակս գրում եմ Բեռլինից, այն քաղաքից, որի գրավման վերջին մարտերին մասնակցել եմ ես: Մենք մոռացել էինք քունն ու հանգիստը և սրընթաց հետապնդում էինք թշնամուն…: Մարտերի ծանր օրերին հայրենի հողի կարոտն այրում էր մեր սիրտը, սակայն որքան ծանր էինք զգում այդ կարոտը, այնքան ավելի ուժգին էինք հարվածում թշնամուն, որպեսզի շուտ վերադառնանք մեր հարազատների գիրկը: …Քո քրոջ ձեռքը չէր դողում թշնամուն հարվածելիս: Մեր զենիթային հրանոթը վայր է գցել թշնամու շատ ինքնաթիռներ»[707]:

Կովկասի պաշտպանության համար մարտնչած արիասիրտ հայուհիների շարքում էր 1919 թվականին Թիֆլիսում ծնված **Արմիկ Արամյանը**: Վերջինս 1940 թվականին ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը, 1942 թվականին մի խումբ կոմերիտուհիների հետ կամավոր մեկնել է ռազմաճակատ: Նա հերոսաբար կռվել է՝ մասնակցելով Կովկասի պաշտպանական մարտերին, մարտնչել առաջին, երրորդ և Ուկրաինական ռազմաճակատներում: 1943 թվականին ծանր վիրավորվել է Բելոկուրանկինոյում մղվող մարտերի ժամանակ: Ապաքինվելուց հետո անվախ ու քաջ հայուհին մասնակցել է Ուկրաինայի և Լեհաստանի ազատագրմանը, ֆաշիստական Գերմանիայի վերջնական ջախջախմանը և հաղթանակը դիմավորել Բեռլինում: 1945 թվականի հունիսին խիզախ հայուհին զո-

---

[706] «Լենինյան դրոշ», 23 ապրիլի, Թբիլիսի, 1996:
[707] «Մարտ հանուն հայրենիքի», 5 հուլիսի, Երևան, 1945:

ռացրվել է և վերադարձել Լեռնային Ղարաբաղ՝ Ստեփանակերտ, որտեղ աշխատել է գյուղտեխնիկումում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ապա՝ Խնձրիստան գյուղի դպրոցում ուսմասվար, այնուհետև՝ տնօրեն: 1975 թվականին անցել է կենսաթոշակի:

Հայրենական մեծ պատերազմում ցուցաբերած խիզախության համար նա պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի» շքանշանով, «Մարտական ծառայությունների համար», «Խիզախության համար» բազմաթիվ մեդալներով, հաղթանակի 60-ամյակի կապակցությամբ Ֆրանսիայի կառավարության կողմից ստացել է «Եվրոպայի ազատագրման մասնակցի» մեդալ: ԼՂՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է նաև «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալով: Նվիրյալ հայուհի Ա. Արամյանը՝ որպես պատերազմի վետերան և ուսուցչուհի, երկար տարիներ ակտիվորեն մասնակցել է երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործին[708]:

Հայրենական պատերազմի ուղիները տարբեր ռազմաճակատներ են տարել Արցախի քաջասիրտ, մրահոն դստերը՝ **Լուսիկ Սարուխանյանին**: Նա ծնվել է 1921 թվականին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Ջանյաթաղ գյուղում: 1942 թվականին կանանց երկրորդ խմբի հետ զորակոչվել է խորհրդային բանակ (1500 աղջիկներ): Սկզբում նա ուղարկվել է Թբիլիսի, իսկ ապա վեց ամիս անց՝ գործող բանակ՝ Կրասնոդար, ապա՝ Ուկրաինա: Իրար հետևից ազատագրելով Խորհրդային Միության քաղաքները՝ խորհրդային ազատարար զորքը, որի շարքերում էր նաև արիասիրտ հայուհի Լ. Սարուխանյանը, շարժվել է դեպի թշնամու որջը: Լ. Սարուխանյանը, զենքը ուսին, աշխատել է լուսարձակի վրա, փորել է խրամատներ, կատարել ծանր աշխատանքներ, միաժամանակ կռվել է անձնուրացաբար: Ռազմաճակա-

[708] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 157:

տում ցուցաբերած խիզախության և քաջության համար նա ստացել է եֆրեյտորի զինվորական կոչում:

Լ. Սարուխանյանը հայրենիքի հանդեպ նվիրվածությունը արտահայտել է մինչև պատերազմի հաղթական ավարտը իր կատարած մարտական ծառայությամբ: Մասնակցելով ֆաշիստական Գերմանիայի ջախջախմանը՝ նա հասել է մինչև Բեռլին և Ռայխստագի պատին գրել «Ստեփանակերտ-Բեռլին» բաղձալի բառերը[709]:

Մարտական ծառայությունների համար Լ. Սարուխանյանը պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի» շքանշանով և մեկ տասնամյակից ավելի մեդալներով: 1945 թվականին Լ. Սարուխանյանը զորացրվելուց հետո վերադարձել է հայրենի Արցախ՝ աշխատելով «Ղարմետաքս» կոմբինատում, իսկ 1956 թվականից վաղաժամկետ անցել է կենսաթոշակի: Խաղաղ ճակատում ևս բարեխիղճ աշխատանքի համար նա արժանացել է «Բարեխիղճ աշխատանքի համար» և «Աշխատանքի վետերան» մեդալների:

Ահա այսպիսի քաջությամբ էին մարտնչում թշնամու դեմ արիասիրտ հայ կանայք խորհրդային զինված ուժերի մարտական շարքերում՝ բարձր պահելով հայ ժողովրդի մարտական ավանդույթները, հարստացնելով նրա հերոսական պայքարի պատմության էջերը:

* * *

Ինչպես ռազմաճակատում, այնպես էլ թիկունքում բժշկասանիտարական անձնակազմը, առողջապահության բնագավառի աշխատողները խորհրդային բանակի վիրավոր ու հիվանդ ռազմիկների բուժմանը նվիրեցին իրենց ամբողջ ուժերն ու գիտելիքները: Բարձր և միջին անձնակազմի հազարավոր բժշկական աշխատողներ համալրել են խորհրդային բանակի շարքերը: Թշնամու կրակի տակ նրանք առաջին օգնություն են ցույց տվել վիրավոր մարտիկներին ու հրամա-

[709] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 209:

նատարներին: Հոսպիտալներում, սանկայաններում, հիվանդանոցներում նրանք ոչինչ չեն խնայել՝ մարտիկներին ու հրամանատարներին բուժելու, նրանց մարտունակությունը վերականգնելու համար:

Պատերազմի տարիներին Հայաստանի «Կարմիր խաչի» ընկերությունը պատրաստել է 342 սանիտարական հրահանգիչ և 1028 սանիտար[710], որոնց մեծ մասը անմիջապես մեկնել են ռազմաճակատ: Ընկերության ավելի քան 2000 անդամ կամավոր ցուցակագրվել են պահեստային դոնորների շարքում, իսկ 754 երիտասարդ հայուհիներ առաջին իսկ պահանջով կամավոր իրենց արյունն են տվել՝ Արյան փոխներարկման հանրապետական կայանի վիրավոր մարտիկների և հիվանդների առողջությունը վերականգնելու համար[711]:

Հայաստանում խորհրդային բանակի բժշկասանիտարական ծառայության մեջ ընդգրկված անձնակազմում կանայք զգալի թիվ են կազմել: Նրանցից լավագույները համալրել են 390-րդ, 408-րդ, 409-րդ, 89-րդ, 76-րդ հայկական դիվիզիաների և առանձին բժշկասանիտարական գումարտակների, գնդերի և մյուս ստորաբաժանումների բաժանմունքները: Ռազմաճակատի առաջավոր գծում այդ խիզախ հայուհիները առաջին օգնությունն են ցույց տվել խորհրդային վիրավոր ռազմիկներին:

Կամավոր ռազմաճակատ մեկնած առաջին անվեհեր բժշկական քույրերից էր Երևանի բժշկական ինստիտուտի ուսանողուհի քսանամյա **Գոհար Նազարյանը**: Նա եղել է 1941 թվականի վերջին գործող բանակում: Նահանջի դժվարին պայմաններում բժշկական ծառայության լեյտենանտ Գ. Նազարյանը, չվհատվելով, լարելով իր բոլոր ուժերը, սողեսող մոտեցել է վիրավորներին, կապել նրանց վերքերը՝ արագ դուրս բերելով կրակային գծից:

---

[710] **Ավագյան Վ.,** Հայկական ՍՍՌ «Կարմիր խաչի» ընկերության գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, «Աշխատություններ հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի», № 2, Երևան, 1949, էջ 27:

[711] Տե՛ս նույն տեղում, էջ 28:

1941 թվականի նոյեմբերին Դոնի Ռոստովի շրջանում մղվող համառ ու դաժան մարտերից մեկում Գոհարը կրակի տակ վիրակապել է 44 վիրավոր ռազմիկի ու սանիտարների օգնությամբ նրանց տեղափոխել մի կիսավեր խրճիթ: Կարճ դադարից հետո թշնամին անցնելով նոր հարձակման՝ շրջապատել է բնակավայրը: Գիշերը վրա հասնելու պես Գոհարն իր օգնականներով վիրավոր մարտիկներին զգուշորեն դուրս է բերել խրճիթից ու անվնաս հասցրել սանիտարական կայան: Մի այլ մարտում լեյտենանտ Գ. Նազարյանը մարտադաշտում առաջին օգնությունն է ցույց տվել բազմաթիվ վիրավորների ու կազմակերպել նրանց փոխադրումը սանկայան[712]:

Անձնուրաց բուժքույր էր Լենինականի մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի բանվորուհի, գվարդիայի ավագ Գոհար Հարությունյանը: Նա ակտիվորեն մասնակցել է Լուգանսկի, Ռոստովի ազատագրման և Բեռլինի գրավման հերոսամարտերին:

1941 թվականի նոյեմբերի վերջին Դոնի Ռոստովի համար մղվող կատաղի մարտերի ժամանակ թշնամուն տարբեր կողմերից հաջողվել է ներխուժել քաղաք: Առաջին գծում գտնվող վիրավորները բժշկական օգնության կարիք են ունեցել, բայց հակառակորդի ուժեղ կրակը թույլ չի տվել մոտենալ նրանց: Այդ վտանգավոր իրավիճակում բուժքույր Գ. Հարությունյանը խնդրել է դիվիզիայի հրամանատարից թույլ տալ իրեն մեկնել առաջավոր դիրքեր: Երկու բժիշկների հետ նա մեկնել է ռազմադաշտ ու առաջին գծից դուրս բերել տասից ավելի ծանր վիրավորների: Դեռևս Ուկրաինայում մղած պաշտպանական ծանր մարտերի ժամանակ՝ 1941 թվականի սեպտեմբերին, անձնազոհ խիզախության և արիության համար Գ. Հարությունյանը արժանացել էր «Մարտական ծառայությունների համար» մեդալի: Նա պարգևատրվել է նաև «Կարմիր աստղի» շքանշանով, «Մարտական ծառայությունների համար 2-րդ աստիճանի» մեդալով, ինչպես նաև «Կովկասի», «Ստալինգ-

[712] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 135:

ռադի պաշտպանության», «Պրագայի ազատագրման» ու «Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով[713]:

1920 թվականին Նոր Բայազետում ծնված խիզախ հայուհի **Պարզիկ Ավետյանը**, 1941 թվականին ավարտելով Երևանի բժշկական ինստիտուտը և մինչև 1943 թվականի հուլիսը աշխատելով իր ծննդավայրում որպես սանէպիդկայանի վարիչ, մեկնել է գործող բանակ: Մարտնչել է հարավարևելյան, ապա՝ Ուկրաինական 3-րդ ռազմաճակատներում: Նա ոչ միայն օգնել է վիրավորներին՝ նրանց վիրակապելով և դուրս բերելով մարտադաշտից, այլև քաջաբար կռվել է թշնամու դեմ: Պ. Ավետյանն իր սխրանքներով բազմիցս աչքի է ընկել Բուդապեշտի ազատագրական մարտերում՝ Դոնի ափերից հասնելով մինչև Դանուբի ափերը[714]: Զորացրվելուց, մարտական ընկերներին հրաժեշտ տալուց հետո՝ 1946 թվականին, աշխատանքի է ընդունվել Երևանի 5-րդ մանկական պոլիկլինիկայում որպես տեղամասային բժիշկ, իսկ 1958-1965 թվականներին ղեկավարել է 5-րդ բուժմիավորման մասնաճյուղը, որը հետագայում առանձնացել ու դարձել է առանձին՝ 13-րդ համարի պոլիկլինիկան: Հայրենիքի ազատության համար մարտնչող պաշտպաններին անցյալում բուժած Պ. Ավետյանը բուժել է նաև հայրենիքի ապագա պաշտպաններին:

Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային լանջին՝ Թերեքի երկու ափերին փռված Օրջոնիկիձե (Վլադիկավկազ) քաղաքում՝ Մեծ եղեռնի արհավիրքներից մազապուրծ եղած և այստեղ հաստատված Բերբերյանների գերդաստանում, 1923 թվականին ծնվել է քաջասիրտ հայուհի **Մագթաղինե Բերբերյանը**: Մանուկ հասակում հորից զրկված Մագթաղինեն տեղափոխվել է Դոնի Ռոստով, որտեղ ստանալով միջնակարգ կրթություն՝ 1939 թվականին ընդունվել է Բաքվի բժշկական ինստիտուտը, ապա տեղափոխվել է Երևանի բժշկական ինստիտուտ, որն

---

[713] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 136:

[714] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** Հայաստանի բժիշկները Մեծ հայրենականում, գիրք առաջին, Երևան, 1983, էջ 139-140:

ավարտել է 1943 թվականին և նույն տարում մեկնել ռազմաճակատ: Մարտական ծառայություն է իրականացրել Ուկրաինական 4-րդ ռազմաճակատի էվակուհոսպիտալում որպես բուժմասի պետ: Նա բազմաթիվ մարտական առաջադրանքներ կատարելիս փրկել է մեծաթիվ վիրավոր զինվորների կյանքեր:

1946 թվականին զորացրվելուց հետո մինչև 1952 թվականը աշխատել է որպես թերապևտ Արզնիի առողջարանում, ապա շուրջ 6 տարի՝ Գլխավոր ուռուցքաբանության հանրապետական դիսպանսերի ռենտգենաբանության բաժանմունքում[715]:

Խիզախ հայուհին պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալով և «Առողջապահության գերազանցիկի» կրծքանշանով:

Արիասիրտ հայուհու, ծագումով շիրակցի, Երևանի բժշկական ինստիտուտի բուժֆակի շրջանավարտ, 1944 թվականին բանակ զորակոչված **Մարգարիտա Գասպարյանի** ստացած մարտական մեդալների մեջ առավել ծանր հուշեր էր արթնացնում «Բուդապեշտի ազատագրման համար» ստացած մեդալը:

Հայտնի է, որ «Բուդապեշտի օպերացիան» դժվարագույներից էր, որը փայլուն կերպով իրականացրել են Ուկրաինական 2-րդ և 3-րդ ռազմաճակատների զորքերը 1944 թվականի հոկտեմբերից մինչև 1945 թվականի փետրվարը: Գերմանական հրամանատարությունը, հաշվի առնելով Բուդապեշտի ռազմավարական նշանակությունը՝ որպես բանակի մատակարարման լավագույն աղբյուր դեպի Վիեննա ու Հարավային Գերմանիա տանող ամրացված շրջան, ամեն ինչ արել է՝ քաղաքը ձեռքից բաց չթողնելու համար: Սակայն ոչինչ չի օգնել թշնամուն՝ ո՛չ Բուդապեշտը շրջափակող մի քանի պաշտպանական կառուցումները, ո՛չ էլ նոր ու թարմ ուժերով զորքի համալրումները: 1945 թվականի փետրվարի 13-ին թշնամու շրջապատման մեջ գտնվող խըմ-

[715] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 150:

բավորումը, չնայած կատաղի դիմադրությանը, գլխովին ջախջախվել է, իսկ քաղաքը՝ ազատագրվել: 110000 հիտլերականներ գերի են վերցրել: Բազմաթիվ հայ ռազմիկների հետ բժշկուհի Մ. Գասպարյանը ևս Ուկրաինական 3-րդ ռազմաճակատի զորքերի շարքում Բուդապեշտի օպերացիայի ժամանակ հանդես է եկել որպես դաշտային շարժական հոսպիտալի վիրաբույժ: Անվանի հայուհին, զենքը ձեռքին, և՛ կըռվել է, և՛ մասնակցել վիրահատություններին: Նա մասնակցել է նաև Հունգարիայի և Ռումինիայի ազատագրմանը: Պատերազմն ավարտել է Չեխոսլովակիայի Բռնո քաղաքում[716]: Հետո տեղափոխվել է Հեռավոր Արևելք, ծառայել ներքին գործերի զորամասում: Զորացրվել է 1950 թվականին, ապա աշխատել է Երևանի 4-րդ կլինիկական հիվանդանոցում:

Երևանի բժշկական տեխնիկումի ուսանողուհի, Կիրովաբադցի **Լուսյա Շահինյանը** գերազանց գնահատականներով հանձնել է ավարտական քննությունները, երբ սկսվել է Հայրենական մեծ պատերազմը: Ժամանակավորապես հրաժարվելով ինստիտուտ ընդունվելու գաղափարից՝ նա կամավոր համալրել է 396-րդ հրաձգային դիվիզիայի շարքերը և որպես սանիտարական դրուժինայի հրամանատար՝ 1941 թվականի նոյեմբերին արդեն 824-րդ գնդի շարքերում մասնակցել է Դոնի Ռոստովի մոտ տեղի ունեցող ծանր մարտերին: Լ. Շահինյանը, անտեսելով մահը, ականների տարափի տակ նետվել է ամենավտանգավոր տեղերը, բժշկական առաջին օգնությունն է ցույց տվել մարտիկներին, կազմակերպել կրակի առաջին գծից նրանց դուրս բերելու գործը: Մեկ օրվա ընթացքում մարտերից մեկում Լ. Շահինյանը առաջին օգնություն է ցույց տվել տասնյակ վիրավոր ռազմիկների և օգնել նրանց փոխադրել ապահով վայրեր: Ահա թե ինչ է գրել Լ. Շահինյանի սխրագործության մասին ռազմաճակատային թերթը. «Շահինյանը 56 մարտիկի և մեկ հրամանատարի փրկեց մահից՝ կապելով

[716] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 175-176:

նրանց վերքերը և դուրս բերելով թշնամու կրակի տակից: Նա կոմերիտուհի էր և մարտի մեջ գործում էր որպես հայրենիքի հավատարիմ դուստր: Վտանգելով իր կյանքը՝ նա փրկեց շատերի կյանքը»[717]:

1941 թվականին Կերչի ուղղությամբ՝ Կարպաշյա գյուղի պաշտպանական ծանր մարտերում, սանիտարական դրուժինայի հրամանատար Լ. Շահինյանը նոր սխրանքներ է գործել: Ծանր վերք ստացած ուկրաինացի մի մարտիկի առնելով ուսին՝ անցել է մի քանի կիլոմետր, վիրավորին հասցրել է սանիտարական կետ և այդպես փրկել նրա կյանքը: Վիրավոր ազատամարտիկը պատմել է, թե ինչպես է իրենց գրոհի հրաման տրվել: Երբ հասել են դիրքերին՝ հաղթահարելով թշնամու կրակային պատնեշը, ռումբեր են նետել, ինքը ծանր վիրավոր է եղել, թվացել է, թե երկու ոտքից էլ զրկվել է, մտածել է, թե արնաքամ կլինի: Նա գիտակցությունը կորցրել է, երբ արթնացել է, տեսել է մի փոքրամարմին, սևահեր, թուխ աչքերով, փոքրահասակ մի աղջկա, որն իրեն քաշ է տվել սողեսող, թփերի արանքով, թշնամուց աննկատ: Նա խղճի խայթ է զգացել՝ տեսնելով աղջկա քրտնած դեմքը և լսելով նրա հևոցը: Աղջիկը սրտապնդել է նրան՝ ասելով, որ վերքը վտանգավոր չէ, և շուտով կհասնեն դաշտային հիվանդանոց: «Մի քանի օր հետո ծանոթացա փոքրիկ հայուհու՝ իմ կյանքի փրկիչի հետ,– գրում է զինվորը և ավելացնում,– ես քանի ապրում եմ, չեմ մոռանա նրան՝ Լուսյա Շահինյանին՝ այդ իսկական հերոսուհուն[718]»:

Լ. Շահինյանը ոչ միայն հոգատար, խիզախ ու անձնազոհ բուժքույր էր, այլև քաջ հետախույզ: Նա իր մարտական ընկերների հետ 1942 թվականի ձմռանը հատուկ առաջադրանքով մեկնել է թշնամու թիկունք: Հասնելով նշանակված վայրը՝ մեծ զգուշությամբ ուսումնասիրել է հակառակորդի ամրությունները և հրկիզել զինամթերքի պահեստը: Սակայն այդ ժամանակ Լ. Շահինյանը վիրավորվել է թշնամու գնդակից: Հաղթահարելով ցավն ու դժվարությունները, մարտական

[717] ՀԱԱ, ֆ. 270, գ. 61, թ. 8:
[718] Տե՛ս նույն տեղում:

խնդիրը կատարած՝ նա վերադարձել է զորամաս: Բազմաթիվ սխրագործությունների և մարտական առաջադրանքների փայլուն կատարման համար դրուժինայի հրամանատար Լ. Շահինյանը ներկայացել է նոր պարգևի[719]:

Բժշկական ծառայության լեյտենանտ **Օֆելյա Պետրոսյանը** պատերազմի սկզբից իր սանիտարական դասակով ակտիվորեն մասնակցել է Կովկասի հերոսական պաշտպանությանը: Վեցերորդ ռազմաօդային բանակի կազմում նա մասնացել է Դոնի Ռոստովի ազատագրման համար մղվող մարտերին և թեժ կռիվներից մեկում վիրավորվել: Ապաքինվելուց հետո՝ 1942 թվականի սկզբից, նա նշանակվել է 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի սանիտարական դասակի հրամանատար և նրա շարքերում փառավոր մարտական ուղի անցել:

1942 թվականի դեկտեմբերին Թերեքի ձախ ափին՝ Մոզդոկ քաղաքի մոտ, խորհրդային զորամասերի շարքերում 409-րդ հայկական դիվիզիան ևս անցել է հարձակման: Օ. Պետրոսյանը մարտի թեժ պահին, կրակի տակ վիրավորներին առաջին օգնություն ցույց տալու համար սողալով մոտեցել է առաջին գծին: Հակառակորդը նկատելով նրան՝ գնդացրային ուժեղ կրակ է բացել: Խորհրդային մարտիկներն իրենց կրակով պաշտպանել են Օֆելյային: Հասնելով վիրավոր ռազմիկին՝ նա առաջին օգնություն է ցույց տվել և վերցնելով իր ուսին՝ հասցրել է անվտանգ վայր: Այդ օրը Օ. Պետրոսյանը սանիտարների հետ միասին, ռմբակոծության տակ խրամատից խրամատ անցնելով, դիրքերից ավելի քան 50 վիրավոր ռազմիկների է դուրս բերել:

Բժշկական ծառայության լեյտենանտ Օ. Պետրոսյանը անձնուրաց ծառայություններով աչքի է ընկել նաև Դնեպրի անցման ժամանակ: 1943 թվականի աշնանը, մի խումբ հերոսների հետ Դնեպրի աջ ափն անցնելով, Օ. Պետրոսյանը ստեղծել է փոքրիկ հենակետ: Շուտով մոտակա գյուղում դաժան մարտեր են բորբոքվել: Օ. Պետրոսյանը, առա-

[719] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 138:

ջապահ ջոկատի շարքերում գյուղի համար մղվող փողոցային մարտերի ժամանակ ցուցաբերելով խիզախություն, կրակի տակից դուրս բերելով 22 վիրավորի, պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով[720]:

Կրիվոյ Ռոգի մոտ Բատիզման գյուղի համար մղվող կռվում Օ. Պետրոսյանն իր սանիտարական դասակի օգնությամբ մարտադաշտից դուրս է բերել ևս 35 վիրավոր ռազմիկի[721]: Կիրովոգրադի մարզի ազատագրումից հետո Կիրովոգրադյան անվանակոչված դիվիզիայի մարտիկների պատվիրակության մի խումբ, որի մեջ էր նաև Օ. Պետրոսյանը, 1944 թվականի հունվարին այցելել է Խորհրդային Հայաստան, պատմել հայ ժողովրդի զավակների սխրագործությունների մասին: Հայաստանի աշխատավորությունը գրկաբաց է ընդունել իր քաջարի պատվիրակներին: Նրանք 1944 թվականի փետրվարի 19-ին վերադարձել են ռազմաճակատ:

409-րդ դիվիզիայի ռազմիկները մայիսի 25-ին ռումինական Յասսի քաղաքի համար մղված մարտերում փայլուն հաջողությունների են հասել: Այստեղ Օ. Պետրոսյանը, ծանր վիրավորվելով, մեկնել է՝ բուժվելու: Բարձր գնահատելով Օ. Պետրոսյանի ծառայությունները՝ հրամանատարությունը նրան պարգևատրել է «Հայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի» շքանշանով, «Կովկասի պաշտպանության համար» և այլ մեդալներով[722]:

Աշտարակցի արիասիրտ հայուհի **Ռոզա Արամյանը**, 1940 թվականին ավարտելով Երևանի բժշկական ինստիտուտը, պոլիկլինիկայի բժշկի պաշտոնով մեկ տարի Վեդիում աշխատելուց հետո Մեծ հայրենականի առաջին օրը մեկնել է բանակ, ծառայել տարբեր զորամասերում, բուժել է հարյուրավոր վիրավորների ու հիվանդների: Զենքը ձեռքին, դիրքից դիրք անցնելով՝ նա վիրավոր զինվորներին տեղափոխել է ապահով վայրեր և բուժելով՝ շարք է վերադարձրել նրանց:

---

[720] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 138:
[721] Տե՛ս նույն տեղում:
[722] Տե՛ս նույն տեղում, էջ 140:

Բժշկական ծառայության կապիտան Ռ. Արամյանը 1944 թվականին հիվանդության պատճառով զորացրվել է: Պարգևատրվել է «Մարտական ծառայության համար» մեդալով: Պատերազմից հետո նա աշխատել է Արտաշատի շրջանում որպես տրոպիկական կայանի վարիչ, իսկ 1955 թվականին՝ տեղամասային թերապևտ Երևանի 8-րդ պոլիկլինիկայում[723]:

Հայրենական մեծ պատերազմում վիրավորների ապաքինման և նորից մարտական շարքեր, ռազմաճակատ վերադառնալու հայրենանվեր գործում իր ավանդն ունի Թբիլիսիում ծնված, Երևանի բժշկական ինստիտուտի շրջանավարտ Վարդուշ Գրիգորյանը: Նա 1941 թվականի հունիսի 25-ից մինչև պատերազմի վերջը աշխատել է N 1571 հոսպիտալում: Պատերազմից հետո ևս նվիրյալ հայուհին շարունակել է աշխատել Կիրովականում՝ քաղաքի առողջարանում, սուր վարակիչ հիվանդությունների հիվանդանոցում, 1950 թվականից՝ Երևանի N 10 պոլիկլինիկայում[724]: Նա պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալներով, «Առողջապահության գերազանցիկի» կրծքանշանով և բազմաթիվ շնորհակալագրերով:

Տրապիզոնում 1908 թվականին ծնված անվախ ու խիզախ հայուհի **Մերուբե Թորոսյանը**, ականատես լինելով թուրք և քուրդ ոճրագործների կողմից 1915 թվականին իր ծնողների դաժան սպանությանը, երդվել է վրեժ լուծել մարդասպան հանցագործներից իր հարազատների և հայ ժողովրդի կրած սարսափելի տանջանքների ու ցեղասպանության համար: Եվ ահա, երբ առիթը ներկայացել է, Ալեքսանդրապոլում մեծացած որբ աղջիկը, ավարտելով Երևանի բժշկական ինստիտուտը, որոշել է վրեժ լուծել Առաջին համաշխարհային պատերազմում թուրք ոճրագործների դաշնակից Մեծ եղեռնի մեղսա-

---

[723] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 142:
[724] Տե՛ս նույն տեղում, էջ 196:

կից գերմանացիներից: Հայրենական պատերազմի սկզբից լինելով խորհրդային բանակի շարքերում՝ նա մասնակցել է ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող մարտական գործողություններին՝ Կերչի, Հյուսիսկովկասյան, Ուկրաինական 3-րդ և 4-րդ ռազմաճակատներում (էվակուհոսպիտալ N 130, դաշտային հոսպիտալ N4232): Նա, թշնամու կրակի տակ դիրքից անցնելով, փրկել է բազմաթիվ վիրավորների կյանքեր, ապա զենքը ձեռքին՝ մարտնչել է թշնամու դեմ՝ ավտոմատային համազարկերով և նռնակներով ոչնչացնելով բազմաթիվ գերմանացի զինվորների[725]:

Հոսպիտալի բժիշկ օրդինատոր Մ. Թորոսյանը-Զաքարյանը հաղթանակը դիմավորել է Բուդապեշտում: Զորացրվելուց հետո նա աշխատել է Երևանում որպես մանկաբույժ 4-րդ բուժմիավորումում (այժմ՝ 47-րդ պոլիկլինիկա): Հերոսուհին պարգևատրվել է «Մարտական ծառայության համար» (1943), «Կովկասի պաշտպանության համար» (1945), «Աշխատանքային գերազանցության համար» (1951) մեդալներով: 1966 թվականին նրա մեդալներին ավելացել է նաև բարձրագույն պարգևը՝ «Լենինի շքանշանը»[726]:

Հայրենասեր հայուհի, ծննդով գյումրեցի **Մարիա Թորոսյանը**, երբ ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, ֆաշիստական հորդաների՝ մեր երկիր ներխուժումից անցել էր 6 ամիս: Նա ռազմաճակատ է մեկնել Կրասնոսելսկի շրջանի Չայքենդ գյուղից, որտեղ աշխատում էր իբրև տեղամասի բժիշկ[727]: 1943 թվականից նա մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Մինչև 1944 թվականը ծառայել է Բելոմորսկ քաղաքի պաշտպանության առանձին գումարտակում (Կարելա-ֆիննական ռազմաճակատ), իսկ դրանից հետո՝ մինչև պատերազմի ավարտը, եղել է կրտսեր բժիշկ 61-րդ բանակի 234-րդ հրաձգային դիվիզիայի 145-րդ բուժսանի գումարտակում և 1350-րդ հրաձգային

---

[725] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 227:
[726] Տե՛ս նույն տեղում:
[727] Տե՛ս նույն տեղում, էջ 228:

գնդում (Բելառուսական 1-ին ռազմաճակատ): Քաջասիրտ հայուհին մարտական ծառայությունը իրականացնելիս ոչ միայն բուժել է վիրավորների վերքերը, այլև զենքը ձեռքին՝ մարտնչել է թշնամու դեմ: Հարձակումների ժամանակ նա ընթացել է առաջին շարքերում, իր խիզախ ու համարձակ գրոհներով ոգևորել է զինվորներին և տարել իր հետևից: Պատերազմից հետո Մ. Թորոսյանը շարունակել է իր ծառայությունը Գերմանիայում: Զորացրվելուց հետո աշխատել է որպես վիրաբույժ Երևանի 2-րդ պոլիկլինիկայում: Բժշկական ծառայության ավագ լեյտենանտ Մ. Թորոսյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Վարշավայի ազատագրման համար», «Բեռլինի գրավման համար» մեդալներով, 1954 թվականին ստացել է «Առողջապահության գերազանցիկի» կրծքանշան, իսկ 1967 թվականին նրան շնորհվել է «ՀԽՍՀ վաստակավոր բժշկի» կոչում[728]:

Մոսկվայի տակ ջախջախիչ հարված ստանալուց հետո՝ 1942 թվականի ամռանը, թշնամին գրոհ է կազմակերպել ռազմաճակատի հարավարևելյան մասում՝ առաջ շարժվելով դեպի Ստալինգրադ և Կովկաս: Վոլգայի անառիկ ամրոցի՝ Ստալինգրադի պաշտպանությանը մասնակցել են բազմաթիվ հայ ռազմիկներ, կանայք ու աղջիկներ: Հայրենիքի խիզախ դուստրերից էր **Ասյա Քեկեջյանը**: Նա 17 տարեկան էր, երբ իբրև սանիտարական հրահանգչուհի մեկնեց ռազմաճակատ: Առաջին մարտական մկրտությունը ստացել է 1942 թվականի հուլիսի 23-ին Խարկովի մարզի Վելիկոբուրլուցկի շրջանի «Սերիյար» սովխոզի ազատագրման ժամանակ: Չնայած այստեղ նա վիրավորվել է ազդրից, սակայն չի լքել մարտադաշտը: Հաղթահարելով սուր ցավը՝ այդ վիճակում առաջին օգնությունն է ցույց տվել 14 վիրավոր մարտիկի ու հրամանատարին: Մարտի թեժ պահին Ա. Քեկեջյանը, նկատելով, որ շարքից դուրս է եկել հրանոթի անձնակազմի մարտիկներից մեկը, առանց վարանելու օգնության է հասել, սկսել է արկեր մատակարարել

[728] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 228:

ականաձիգ մարտիկին: Հրանոթի ակտիվ կրակը թշնամուն ետ է շպրտել: Այս քաջագործության համար Ա. Քեկեջյանը պարգևատրվել «Խիզախության համար» մեդալով: Նույն գվարդիական հրետանային գնդում Ա. Քեկեջյանը մարտական իր փորձառությամբ մասնակցել է Ստալինգրադի ճակատամարտին: Այդ մարտերում աչքի ընկած ծառայությունների համար գնդի հրամանատարությունը Ա. Քեկեջյանին պարգևատրել է «Մարտական ծառայությունների համար» և «Ստալինգրադի պաշտպանության համար» մեդալներով[729]: Այնուհետև գվարդիական հրետանային գնդի կազմում 1943 թվականի հուլիսի 5-10-ը մասնակցել է Օրյոլ-Կարսկի ահեղ ճակատամարտին: Թշնամու անընդհատ չդադարող կրակի տակից Ա. Քեկեջյանը դուրս է բերել 23 վիրավոր մարտիկի և հրամանատարին[730]:

Մի այլ ահեղ մարտում, երբ բորբոքվել է կռիվը, Ա. Քեկեջյանը նկատել է երկու խորհրդային այրվող տանկեր: Արհամարհելով մահը՝ նա նետվել է դեպի տանկերը, բարձրացել է նրանց վրա և ազատել այնտեղ ծանր վիրավոր վիճակում գտնվող 8 տանկիստի: Այս սխրագործության համար Ա. Քեկեջյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով: Գվարդիական հրետանային գնդի հրամանատարությունը, բարձր գնահատելով Ա. Քեկեջյանի հերոսությունը, խիզախությունը ռազմաճակատում, գրել է. «Մենք հպարտանում ենք թշնամու դեմ քաջաբար մարտնչող սովետական ժողովրդի անվախ դուստրերով»[731]:

Ստալինգրադի հերոս պաշտպանների շարքերում էր սանիտարական հրահանգչուհի **Ասյա Կարապետյանը**: Իր մարտական ընկերների հետ ռազմաճակատի առաջին գծում օգնության է ցույց տվել վիրավոր մարտիկներին, կրակի տակից հանել, քույրական ջերմ հոգատարությամբ փաթաթել է վերքերը՝ խնամելով նրանց: Ա. Կարապետյանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Մարտական ծառա-

---

[729] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 141:
[730] Տե՛ս նույն տեղում:
[731] ՀԱԱ, ֆ. 270, գ. 78, գ. 1:

յությունների, քաջության համար» ու «Ստալինգրադի պաշտպանության համար» մեդալներով[732]:

Ստալինգրադի հերոսամարտերի ակտիվ մասնակիցներից էր հայրենիքի դուստր, խիզախ հայուհի, բուժքույր **Սոնյա Մելքումյանը**: Նա մարտնչել է հրետանային դիվիզիոնում: Հրետանավորների շարքում Ս. Մելքումյանը թեժ կռիվների ժամանակ արկեր է մատակարարել հրետանավորներին, արհամարհելով մահը՝ ռազմադաշտից դուրս է բերել մարտիկներին, բուժել նրանց վերքերը[733]: Կատաղի ու վճռական կարևորություն ունեցող մարտերից մեկում, մարտական առաջադրանքը կատարելիս Ս. Մելքումյանը մահացու վերք է ստացել և կնքել իր մահկանացուն:

Երևանի բժշկական ինստիտուտի ուսանողուհի **Սուսաննա Զաքարյանը,** ստանալով բժշկական ծառայության լեյտենանտի կոչում, 1941 թվականին մեկնել է Ղրիմ՝ ռազմաճակատ: Կերչի թերակղզում կռվող հրաձգային 138-րդ դիվիզիայի 135-րդ առանձին բժշկասանիտարական գումարտակում նա սանիտարական հրահանգիչ էր[734]: Սուսաննան ձեռք է բերել մեծ փորձ և դարձել հմուտ բուժաշխատող: Կերչում մեկ օրվա ընթացքում ռմբակոծության ծանր պայմաններում նա վիրակապել է 24 վիրավորի և նրանց տեղափոխել սանիտարական գնացք: Չնայած մարտերից մեկում Ս. Զաքարյանը ծանր վերք է ստացել, սակայն այդ վիճակում փրկել է իրենից քիչ հեռու ընկած, արյունաքամ եղած փոխգնդապետ Պոպովին: Երախտապարտ փոխգնդապետը նրան գրել է. «Շնորհակալություն Ձեզ, քո՛յր Սուսաննա, որ փրկեցիք իմ կյանքը: Ցանկանում եմ, որ շուտով Դուք էլ առողջանաք ու միասին նորից ելնենք մարտադաշտ... Ուղարկում եմ Ձեզ ծաղիկներ՝ կարմիր, սպիտակ վարդեր: Նայե՛ք այդ վարդերին ու միշտ հիշե՛ք, որ պատերազմից հետո նորից կլինի գարուն, ազատ մարդկու-

---

[732] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 53-54:
[733] Տե՛ս նույն տեղում:
[734] Տե՛ս նույն տեղում:

թյան երջանիկ գարուն, որի համար ֆաշիզմի դեմ մարտնչում ենք ես, Դուք, միլիոնները: Մեր արյան գնով ենք ձեռք բերելու այդ գարունը»[735]:

Ապաքինվելուց հետո բուժքույր Ս. Զաքարյանը ակտիվ մասնակցել է Ստալինգրադի հերոսական պաշտպանությանը: Կատաղի կրակի ներքո նա առաջին օգնությունն է ցույց տվել մարտիկներին: Այստեղ նա երկրորդ անգամ ծանր վիրավորվելուց հետո այլևս չի կարողացել վերադառնալ մարտադաշտ: Բարձր գնահատելով քաջասիրտ հայուհու ծառայությունները հայրենիքի հանդեպ՝ հրամանատարությունը նրան պարգևատրել է «Կարմիր դրոշի», «Կարմիր աստղի», «Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի» շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով[736]:

1944 թվականի գարնանը Սևաստապոլ քաղաքի ազատագրման մարտերին մասնակցել են խորհրդային հայրենիքի բազմազգ ժողովուրդների զավակները: Նրանց թվում էր նաև 18-ամյա **Լուսիկ Ասլանյանը:** Թշնամու կրակի ներքո գիշերվա խավարում նա առաջավոր դիրքեր է հասցրել փամփուշտներ, ձեռքի նռնակներ, անհրաժեշտության դեպքում առաջին օգնություն է ցույց տվել վիրավոր մարտիկներին: Մարտերից մեկի ժամանակ՝ վեցերորդ վիրավորին օգնություն ցույց տալիս, թշնամու գնդակը մահացու վիրավորել է նրան՝ կտրելով անձնվեր հայրենասեր հայուհու կյանքը[737]:

Երևանում ծնված, բժշկական ինստիտուտի շրջանավարտ, արիասիրտ հայուհի **Արմենուհի Իսահակյանը** 1942 թվականին որպես կրտսեր բժիշկ մեկնել է ռազմաճակատ 53-րդ գնդի կազմում: Գնդից անբաժան, կրակի ու բոցերի մեջ անվախ հայուհին մարտնչել է նաև

---

[735] Քաջասիրտ հայուհիները, Երևան, 1943, էջ 52:
[736] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 143:
[737] Տե՛ս նույն տեղում:

Ստալինգրադյան, Ուկրաինական 4-րդ և Բելառուսական 3-րդ ռազմաճակատներում[738]:

1942 թվականի օգոստոսին ծանր և տառապալի օրեր են սկսվել այն գնդի համար, որի կազմում կռվել է հերոսուհին: Գունդը, անցնելով Վոլգայի մյուս ափը, մարտերի մեջ է մտնել հենց անտառում, որտեղ Ա. Իսահակյանը վիրավոր մարտիկներին բուժօգնություն է ցույց տվել՝ միաժամանակ կռվելով ոսոխի դեմ: Ա. Իսահակյանը, նկարագրելով Ստալինգրադի ճակատամարտի ծանր օրերը և ֆաշիստների գործադրած դաժանությունները, գրել է. «Ֆաշիստական հորդաները հրդեհում ու ավերում էին այն ամենը, ինչը երկար տարիներ տքնաջան աշխատանքով ստեղծել էր մարդը, բարբարոսաբար խոշտանգում ու ոչնչացնում էին անզեն բնակիչներին՝ առանց սեռի ու տարիքի խտրության: Ֆաշիստների վիճակը, որքան օրհասական էր դառնում, նույնքան ավելի էին հրեշավոր ու անգութ դառնում նրանք: Անփառունակ վախճան ունեցավ դարչնագույն ժանտախտը, հաղթեց Ստալինգրադը»[739]:

Գնդի խիզախ դուստրը տեղափոխվել է Բելառուսական 3-րդ ռազմաճակատ, այնուհետև՝ Կաունասում գտնվող էվակուհոսպիտալ, որտեղ էլ բժշկական ծառայության կապիտան Ա. Իսահակյանը դիմավորել է հաղթանակը:

1946 թվականին բանակից զորացրվելուց հետո նա անցել է գիտահետազոտական աշխատանքի, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Իր մատուցած մարտական փայլուն ծառայությունների համար Ա. Իսահակյանը պարգևատրվել է «Ստալինգրադի պաշտպանության համար» մեդալով, «Առողջապահության գերազանցիկի» կրծքանշանով[740]:

«Ռոզա Հարությունյան՝ Երևանից». այս բառերն է հայ քաջասիրտ հերոսուհին թողել Բեռլինի գրավման ժամանակ Ռայխստագի պատի

---

[738] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 232:
[739] Տե՛ս նույն տեղում:
[740] Տե՛ս նույն տեղում:

վրա[741]: Բեռլին հասած հոսպիտալի անձնակազմի հետ նա լուսանկարվել է Բրանդենբուրգյան դարպասների աստիճանների վրա և որպես ահեղ օրերի հուշ՝ բերել տուն:

Ռոզա Իսկանդարյանը-Հարությունյանը, ավարտելով Երևանի բժշկական ինստիտուտը, կամավոր մեկնել է բանակ: Մարտական առաջին մկրտությունը ստացել է Կիևում, երբ ֆաշիստները 1943 թվականին ռմբակոծել են քաղաքը:

Երբ դաշտային հոսպիտալը, որտեղ մարտական առաջադրանքներ է կատարել Ռ. Հարությունյանը, ընկել է ռմբակոծման տակ, հայրենասեր հայուհին թանձր խավարի մեջ, հորդառատ անձրևի տակ անծանոթ տեղանքով վիրավոր հիվանդներին տեղափոխել է և հասցրել ապահով վայր, որը նախապես ընտրել է հրամանատարությունը:

Ռ. Հարությունյանը Դնեստր գետի անցման ժամանակ ևս աչքի է ընկել մեկ այլ սխրագործությամբ: Գետի վրայի բոլոր կամուրջները ֆաշիստները ավերել են, պատրաստվել է արհեստական կամուրջ, որով պետք է անցներ խորհրդային զորքը, իսկ մյուս ափին գերմանացիներն են դիրքավորվել: Այդ ժամանակ սկսվել է կատաղի մարտը: Ռ. Հարությունյանը ոչ միայն հասցրել է հակառակորդի կրակի տակ ապրանքատար մեքենայից իջեցնել բժշկական սարքավորումները, տեղափոխել վիրավորներին, այլև մասնակցել է թշնամու գնդացրային կրակակետի վերացման մարտին: Մարտը վերջացել է թշնամու պարտությամբ: Վերջինս նահանջել է՝ մեծ քանակությամբ զոհեր տալով: Այդ ահեղ մարտից հետո Ռ. Հարությունյանը նամակ է ուղարկել հարազատներին, որտեղ գրել է, թե «մինչև մահ մնացել էր չորս քայլ» (կա մի այսպիսի երգ)[742]:

Ուկրաինական 2-րդ ռազմաճակատում ևս Ռ. Իսկանդարյան-Հարությունյանը մասնակցել է բազմաթիվ մարտերի: Եղել է Բեսարաբիայում, Ռումինիայում, մասնակցել է Մերձբալթիկայի ազատագրմա-

---

[741] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.**, նշվ. աշխ., էջ 235:
[742] Տե՛ս նույն տեղում, էջ 236:

նը, Արևմտյան Պրուսիայի ու Գերմանիայի տարածքներում մղված կռիվներին, իսկ 1945 թվականի մայիսին՝ Բեռլինի գրավման համար ծավալված հերոսամարտին[743]:

1945 թվականին զորացրվել է բժշկական ծառայության կապիտան Ռ. Իսկանդարյան-Հարությունյանը: Նա աշխատել է Մեղրիի հիվանդանոցում, ապա՝ Երևանի 4-րդ բուժմիավորումում: Խիզախ և համարձակ հայուհի Ռ. Իսկանդարյան-Հարությունյանը մարտական ծառայությունների համար պարգևատրվել է բազմաթիվ մարտական մեդալներով, արժանացել «Վաստակավոր բժշկի» կոչման:

Պատերազմի սկզբից Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) մատույցներում մարտական գործողությունների մեջ են մտել խորհրդային զորամասերը, աշխարհազորայինները, քաղաքի ողջ ազգաբնակչությունը: Լենինգրադի հերոսական պաշտպանությանը մասնակցել են նաև արևավառ Հայաստանի տասնյակ դուստրեր: Իրենց սխրանքներով աչքի են ընկել բժշկական ծառայության լեյտենանտներ *Սոֆյա* և *Ռուզաննա Լալայան* քույրերը, բժշկական ծառայության ավագ լեյտենանտ *Աստղիկ Սանոյանը, Կատյա Չմշկյանը*, բժշկական ծառայության կապիտան *Լենա Բուռնազյանը* և ուրիշներ:

Սոֆյա և Ռուզաննա Լալայանները, 1941 թվականի հունիսին ավարտելով Լենինգրադի բժշկական ինստիտուտը, կամավոր մեկնել են ռազմաճակատ և ծառայության անցել 42-րդ բանակի կազմում որպես վիրաբույժներ[744]: Այնուհետև նրանք ստացել են բժշկական ծառայության ավագ լեյտենանտի կոչում և նշանակվել զինվորական բժիշկներ Լենինգրադը պաշտպանող հրաձգային գնդերից մեկի սանիտարական գումարտակում: Նովգորոդի ուղղությամբ ռազմաճակատի գծին մոտենալու ժամանակ գունդը ենթարկվել է ռմբակոծության: Լալայան քույրերը և բուժքույր Վերա Յակովլևան Պրիգոլսկ կայարանի շրջանի բնակիչներից ձեռք են բերել սայլերը և հակառակորդի ուժեղ

---

[743] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.**, նշվ. աշխ., էջ 236:
[744] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. I, էջ 177:

ռմբակոծության տակ վիրավոր մարտիկներին տեղափոխել հոսպիտալ[745]:

Երբ գերմանական զորքերը մտել են Պետերգոֆ և Լենինգրադի շրջակա գյուղերը, մի խումբ ընկերների հետ Ռուզաննա Լալայանը ընկել է շրջապատման մեջ: Ամբողջ 10 օր նրանք անասելի տանջանքներ են կրել, անցել ճահիճների ու անտառների միջով և կտրելով ռազմաճակատի գիծը, անվնաս դուրս գալով թշնամու օղակից՝ հասել են Լենինգրադ:

Ռ. Լալայանը նույն սանմասում էր, ապա՝ 189-րդ դիվիզիայի 100-րդ բժշկասանիտարական գումարտակում: Նա աշխատել է որպես վիրաբույժ, տասն օրվա ընթացքում մարտական դժվարին պայմաններում կատարել է ավելի քան 100 բարդ վիրահատություն՝ մահվան ճիրաններից ազատելով շատ մարտիկների ու քաղաքացիների[746]:

1942 թվականի սեպտեմբերյան մի օր բժշկական ծառայության լեյտենանտ Ռ. Լալայանը գետնափոր խրամատում վիրահատություն է կատարել, երբ ներս են բերել ծանր վիրավոր Նիկոլայ Բոնդարևին: Նախքան վիրահատելը անհրաժեշտ էր նրան ուշքի բերել: Ռ. Լալայանը իրենից վերցրել է 150 գրամ արյուն, ներարկել Բոնդարևին, նրան ուշքի բերել և սկսել վիրահատությունը[747]:

1942 թվականի սեպտեմբերին Ռ. Լալայանը պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով, «Մարտական ծառայությունների համար», իսկ նույն թվականի դեկտեմբերին՝ «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով:

Սոֆյա և Ռուզաննա Լալայանները բժշկական օգնություն են ցույց տվել Պուլկովոյի, Շլիսսելբուրգի տակ, Ռազլիվում, Ուրիցկում, Ստարայա Ռուսսայում և Ելգավայի (Միտավա) մարտերում վիրավորված բազմաթիվ մարտիկների: Ս. Լալայանը պարգևատրվել է «Հայրենական

---

[745] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 144:
[746] Տե՛ս նույն տեղում:
[747] Տե՛ս նույն տեղում:

պատերազմի 2-րդ աստիճանի» շքանշանով և «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով: 156-րդ բժշկասանիտարական գումարտակի բժշկական վաշտի հրամանատար, երկրորդ կարգի զինվորական բժիշկ Բենենսովը Ս. Լալայանի բնութագրում գրել է. «...Երրորդ կարգի զինվորական բժիշկ Սոֆյա Լալայանը ծառայության ընթացքում իրեն դրսևորել է որպես բարեխիղճ և գործիմաց վիրաբույժ: Նա վիրահատության է ենթարկել 153 միջին և թեթև ծանրության վիրավորի: Նա մեծ հեղինակություն է վայելում բժշկասանիտարական գումարտակում»[748]:

1944 թվականի ապրիլի 6-ին Լուգովոյի մոտ՝ վիրահատության սեղանի առաջ՝ մարտական պոստում, հերոսաբար զոհվել է հայրենիքի քաջ դուստր Ս. Լալայանը: Կորցնելով քրոջը, լցված անսահման վրեժով՝ Ռ. Լալայանը շարունակել է իր անձնվեր աշխատանքը մինչև Հայրենական պատերազմի հաղթական ավարտը: 42-րդ բանակի նախկին գլխավոր վիրաբույժ, պրոֆեսոր Ի. Ս. Բելաբորը 1947 թվականի հոկտեմբերի 10-ին Ռ. Լալայանին գրած նամակում հայտնել է. «1947 թվականի մարտին վիրաբույժների ընկերությունում կարդացած իր զեկուցման մեջ հիշատակել է ռազմաճակատում աչքի ընկած անվանի վիրաբույժներին: Հիշատակեցի նաև Ձեզ և Ձեր զոհված քրոջը՝ Սոֆյային, որին ես լավ եմ հիշում, և միշտ վերհիշում նրա հերոսական մահը իր պոստում»[749]:

1946 թվականին բժշկական ծառայության լեյտենանտ Ռ. Լալայանը զորացրվել է խորհրդային բանակից: Բժշկական գիտությունների թեկնածու Ռ. Լալայանը երկար ժամանակ աշխատել է Երևանի տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի գիտահետազոտական ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող:

Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում փառավոր մարտական ուղի է անցել Երևանի պետական համալսարանի ուսանո-

---

[748] ՀԱԱ, ֆ. 270, գ. 24, թ. 1:

[749] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 145:

ղուհի, բժշկական ծառայության ավագ լեյտենանտ **Էմմա Հայրապետյանը:** Նա Կովկասյան նախալեռներից մարտերով հասել է Բեռլին և տուն վերադարձել հաղթանակով: Շատ անքուն գիշերներ է անցկացրել Է. Հայրապետյանը՝ բազմաթիվ վիրավորների կյանքը փրկելու համար: Ծանր, արյունաքամված ավագ լեյտենանտ Սամոխվալովի կյանքը փրկելու համար նա իր արյունից է ներարկել նրան: Երախտապարտ լեյտենանտը Է. Հայրապետյանին ուղղված նամակում գրել է. «Իմ սիրելի, հարազատ քույր Էմմա ջան, ես առողջացել եմ: Չնայած կորցրել եմ ոտքս, բայց կենդանի եմ քո շնորհիվ: Իմ ընտանիքով երախտապարտ ենք Ձեզ, սրտանց ցանկանում ենք Ձեզ երջանիկ կյանք»[750]:

Է. Հայրապետյանի հոգատար վերաբերմունքի շնորհիվ շարք են վերադարձել *Ն. Շահվերդյանը, Հ. Շատվորյանը, Ս. Հովհաննիսյանը, Օ. Խաչատրյանը, Օ. Խառատյանը* և ուրիշներ:

Է. Հայրապետյանը պարգևատրվել է «Մարտական ծառայությունների», «Խիզախության», «Վարշավայի ազատագրման» և «Գերմանիայի դեմ հաղթանակի» համար մեդալներով:

Նույն դիվիզիայի 400-րդ հրաձգային գնդի երրորդ գումարտակում է ծառայել սանիտարական դասակի հրամանատար **Մարուսյա Հեքիմյանը:** Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում նա մասնակցել է Կուբանի, Թամանի, Կերչի, Ղրիմի, Լեհաստանի ազատագրմանը և գերմանական ֆաշիզմի ջախջախման վերջին մարտերին:

1944 թվականի օգոստոսին Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան, անցնելով Բուգ գետը, կենտրոնացել է լեհական Լյուբլին քաղաքի շրջանում: Զորամասերին առաջադրանք է տրվել շարժվել դեպի Վիսլա և պաշտպանական դիրքեր գրավել նրա ձախ ափին: Դիվիզիայի հրետանավորները 1945 թվականի հունվարի 2-ին մասնակցել

[750] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 146:

են այդ առաջադրանքի կատարմանը: Նրանց հետ էր նաև բժշկական ծառայության լեյտենանտ Մարուսյա Հեքիմյանը[751]:

Վիսլայի ձախ ափին հրանոթների հակազդակների և մոլեգնող մարտերի բովում Մ. Հեքիմյանը աներկյուղ կատարել է իր գործը: Այստեղ նա կրակի գծից դուրս է բերել 24 վիրավորի[752]:

Վիրավորներին ժամանակին բժշկական առաջին օգնություն ցույց տալուց և նրանց հետագա բուժմանը հետևելուց բացի՝ Մ. Հեքիմյանը ռազմամթերք է հասցրել նաև հրետանավորներին: Արարքի համար պարգևատրվել է «Կարմիր աստղ» շքանշանով:

1945 թվականի փետրվարի սկզբին «Թամանյան» դիվիզիան հաղթական մարտերով հասել է Գերմանիա և մարտական առաջադրանք ստացել անցնել Օդեր գետը և նրա ձախ ափին ստեղծել պաշտպանական հենակետ: Առաջադրանքը հաջողությամբ կատարել են հայ թամանցիները:

Փետրվարի 16-ին թշնամին ուժեղ հարձակում է սկսվել դիվիզիայի զորամասերի վրա: Նրա բոլոր գրոհները ետ են շպրտվել: Թշնամին չի կարողացել մոտենալ հենակետին:

Մ. Հեքիմյանը առաջադրանք է ստացել՝ ընդունելու վիրավորներին: Չորս կողմը պայթող ականների, հրաձգության և օդային ռմբակոծության տակ նա վիրավոր մարտիկներին բժշկական օգնություն է ցույց տվել և տեղափոխել թիկունք:

Փետրվարի 17-ին Մ. Հեքիմյանը նոր, ավելի դժվարին առաջադրանք է ստացել՝ շարժվող զորամասերի հետ անցնելով Օգեր գետի ձախ ափը և այնտեղ կազմակերպելով բժշկական օգնության գործը: Անցումը չափազանց դժվար է եղել: Թշնամին գործադրել է բոլոր ճիգերը՝ պահելու իր դիրքերը: Մ. Հեքիմյանը մակույկով անցել է գետը: Թշնամին սկսել է կրակել նավակի վրա, սակայն մարտիկները, նրանց հետ նաև Մ. Հեքիմյանը, բարեհաջող պաշտպանվելով, հասել են գե-

---

[751] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 147:
[752] Տե՛ս նույն տեղում:

տի մյուս ափը: Այստեղ մարտական ծանր պայմաններում բժշկական ծառայության լեյտենանտ Մարուսյա Հեքիմյանը խնամել և բուժել է տասնյակ վիրավորների: Նա մեծ սխրագործություններ է կատարել նաև Բեռլինի ճակատամարտում և արժանացել է Գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալագրին և պարգևատրվել «Կարմիր աստղի 2-րդ աստիճանի» շքանշանով[753]:

«Կարմիր աստղի» շքանշանակիր, բժշկական ծառայության կապիտան **Լուսյա Ասրյանը** Հայկական 89-րդ «Թամանյան» հրաձգային դիվիզիայի բժշկասանիտարական անձնակազմի լավագույն սպաներից էր: Նա փրկել էր տասնյակ վիրավորների կյանքը:

Դիվիզիայի 400-րդ գնդի հրամանատար, փոխգնդապետ, ծանր վիրավոր Դանիել Հակոբյանը բուժվում էր Լ. Ասրյանի հոգատար հըսկողության տակ: Զորամաս վերադառնալու օրը փոխգնդապետը իր շնորհակալության առաջին խոսքն ուղղելով Լ. Ասրյանին՝ գրել է. «Իմ թանկագի՛ն քույր Լուսյա, կանցնեն պատերազմի այս ահեղ ու փոթորկալի օրերը, իմ հիշողության մեջ միշտ կմնա Ձեր բարի դեմքը, երախտապարտ կմնամ Ձեզ՝ հիշելով, որ Դուք օր ու գիշեր անքուն խնամք էիք տանում՝ Ձեզ անծանոթ մի սպայի փրկելու համար, հիշելով, որ գիտակցությունս կորցրած պահին սառը ջրի կաթիլները Դուք էիք ցողում իմ շուրթերին: Հաջողություն և երկար տարիների կյանք եմ ցանկանում Ձեզ»[754]:

«Թամանյան» դիվիզիայի բժշկասանիտարական գումարտակում աչքի ընկնող ծառայություններ է կատարել նաև Լ. Ավագյանը: Դիրքից դիրք անցնելով՝ նա օգնել է վիրավոր ռազմիկներին: Մի մարտի ժամանակ վիրավորվել է շարքային Դարուբյանը և անօգնական վիճակում երկար ժամանակ ընկած մնացել թշնամու դիրքերի առջև: Խաչաձև կրակը խանգարել է մոտենալ վիրավորին: Լ. Ավագյանը, արհամարհելով մահը, գիշերը սողեսող մտել է մարտադաշտ և դիակների

---

[753] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 148:
[754] Տե՛ս նույն տեղում, էջ 148:

մեջ գտել Դարոբյանին, խնամքով կապել է նրա վերքերը և մարտիկներ Ս. Սարգսյանի ու Կ. Հակոբյանի օգնությամբ դուրս է բերել մարտադաշտից՝ փրկելով նրա կյանքը:

Վիրավորներին բժշկական օգնություն ցույց տալու համար ոչինչ չեն խնայել բժշկական ծառայության լեյտենանտ *Լուսիկ Իստամանյանը*, բժշկական քույր *Իսկուհի Հովհաննիսյանը, Հերմինե Կելեջյանը, Սիրանուշ Արևշատյանը, Գոհար Հովսեփյանը* և ուրիշներ:

Ռազմաճակատում իր սխրագործություններով աչքի է ընկել Թբիլիսիում ծնված, տեղի գիմնազիան ավարտած, բժշկի դուստր **Լուսիկ (Լուսյա) Իստամանյանը:** 1922 թվականին նա մեկնել է Բեռլին՝ սովորելու: Այստեղ ավարտել է մանրէաբանության դասընթացները և 1923 թվականին վերադառնալով ծննդավայր՝ նույն թվականին էլ որպես լաբորանտ աշխատանքի է անցել Լենինգրադի Վերա Սլուցկեի անվան հիվանդանոցում: Երկու տարուց ավել այստեղ աշխատելուց հետո 1926 թվականին եկել է Երևան, ընդունվել պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը, որն ավարտելուց հետո որպես տրոպիկական կայանի երկրորդ բժիշկ աշխատանքի է մեկնել Վեդիի շրջանի Դավալու գյուղը, իսկ 1935 թվականին տեղափոխվել է Երևան որպես կլինիկական բաժնի կրտսեր գիտաշխատող[755]:

1941 թվականի հունիսի 22-ին զորակոչվել է բանակ և նշանակվել 31-րդ հրաձգային դիվիզիայի 16-րդ բուժսանգումարտակի վաշտի բժիշկ, իսկ 1942 թվականի ապրիլից՝ նույն վաշտի հրամանատարը: 1943 թվականի մայիսից երկու տարի աշխատել է N 2280 հոսպիտալի բաժնի վարիչ, որից հետո՝ 1945 թվականի մայիսին, տեղափոխվել է 297-րդ հրաձգային դիվիզիայի 342-րդ բուժսանգումարտակը որպես հոսպիտալային վաշտի հրամանատար[756]:

Լ. Իստամանյանի մարտական ուղին ձգվել է Կովկասից մինչև Բուդապեշտ, Վիեննա: Ստացել է բժշկական ծառայության մայորի կո-

---

[755] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 237-238:
[756] Տե՛ս նույն տեղում, էջ 238:

չում, պարգևատրվել «Կարմիր աստղ» շքանշանով ու մարտական յոթ մեդալներով[757]:

1946 թվականի հունիսին զորացրվել է բանակից, իբրև կրտսեր գիտաշխատող՝ աշխատանքի է ընդունվել Երևանի մալարիայի ու բուժ-պարազիտոլոգիայի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: 1950 թվականի պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և որպես ավագ գիտաշխատող՝ աշխատել նույն ինստիտուտի կլինիկա-կան բաժնում, իսկ հետո, երբ ինստիտուտը միացվել է Համաճարակա-բանության ու հիգենիայի ինստիտուտին, աշխատել է պրոֆեսիոնալ հիվանդությունների բաժնում: 1953 թվականին նրան շնորհվել է Հայ-կական ՍՍՀ «Վաստակավոր բժշկի» պատվավոր կոչում:

Բժշկական քույր **Սիրանուշ Արևշատյանը**, անձնուրաց կերպով խրամատից խրամատ անցնելով, առաջին օգնություն է ցույց տվել վի-րավոր մարտիկներին: Թեժ մարտերից մեկի ժամանակ հակառակոր-դի կրակի տակ նա վիրակապել է 17 ռազմիկի և նրանց դուրս բերել կրակի գծից[758]:

Շամշադինի շրջանի Նավուրի գյուղացի **Գոհար Հովսեփյանը** նախքան պատերազմը աշխատել է որպես ուսուցչուհի: Մեկնելով ռազ-մաճակատ՝ նա դարձել է գթության քույր: Ստորաբաժանման հրամա-նատար, կապիտան Կոշևը 1945 թվականի մարտին Գ. Հովսեփյանի ծնողներին ռազմաճակատից ուղարկած նամակում գրել է. «Մեր մար-տիկներն ու հրամանատարները հարգանքով ու համակրանքով են վե-րաբերվում իրենց սիրելի Գոհարին: Շամշադինցի այս աղջիկը զգայուն քույր է: Նրա ջերմ, հոգատար վերաբերմունքը թեթևացնում է նույնիսկ ամենամեծ վիրավորի ցավերը: Ստորաբաժանման մեջ բոլորը գովես-տով են խոսում Գոհարի մասին: Նվիրված ու բարեխիղճ աշխատանքի համար նա շատ անգամ արժանացել է շնորհակալության: Գոհարի ծնողները կարող են իրենց հպարտ զգալ, որ հայրենիքի համար տվել

---

[757] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 175:
[758] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 149:

են այնպիսի դուստր, որին մարտիկները խիզախ աղջիկ են անվանում»[759]:

Բազմաթիվ հայ բժշկուհիներ ծառայել են ռազմածովային նավատորմում: Նրանց թվում են բժշկական ծառայության կապիտան *Թամարա Ասլանյանը*, բուժքույր *Ելիզավետա Հովհաննիսյանը*, *Ասյա Յափունջյանը* և ուրիշներ:

Թամարա Ասլանյանը Կարմիր բանակում ծառայել է 1939 թվականին: Նա իր մարտական գործունեությունը սկսել է Սևծովյան նավատորմի մի ավիացիոն գումարտակում: Թ. Ասլանյանը Սևաստոպոլի դյուցազունների շարքերում էր, որոնք աշխարհին զարմացրին իրենց տոկունությամբ ու հերոսությամբ: Սևաստոպոլի պաշտպանության մարտերում աչքի ընկնող ծառայությունների համար հրամանատարությունը Թ. Ասլանյանին արժանացրել է կառավարական բարձր պարգևի: Նրա պարգևաթերթիկում գրված էր. «Բժշկական ծառայության կապիտան Թամարա Արշակի Ասլանյանը ծառայել է Սևծովյան նավատորմի 12-րդ ավիացիոն բազայում, որը տեղավորված էր Սևաստոպոլ քաղաքում: Հայրենական պատերազմի սկզբից մինչև Սևաստոպոլի պաշտպանության վերջին օրերը... ընկ. Թ. Ասլանյանն իրեն ցույց է տվել որպես տոկուն, արի և սովետական հայրենիքին անսահմանորեն նվիրված հրամանատար...: Մատյուշենկո և Կոստանտինովսկայա ծովախորշերի օդանավակայանների հրետանային գնդակոծման և ռմբակոծության ժամանակ նա առաջինն էր նետվում թշնամու չդադարող կրակի մեջ՝ ռազմիկներին ցույց տալով անհրաժեշտ բժշկական օգնություն: Գերմանացիների կատաղի հարձակման օրերին Թամարա Ասլանյանը անմիջականորեն մասնակցել է 500 վիրավորների բժշկական օգնություն ցույց տալու, քաղաքի հյուսիսային մասից հարավ տեղափոխելու..., ինչպես նաև վիրավոր օդաչուներին Կովկաս էվակուացնելու գործին»:

---

[759] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 149:

Բժշկական ծառայության կապիտան Թ. Ասլանյանը Սևաստոպոլ քաղաքի պաշտպանության ժամանակ ցուցաբերած անձնազոհ ծառայությունների համար պարգևատրվել է «Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի» շքանշանով և «Մարտական ծառայությունների համար» մեդալով[760]:

Հայրենիքի առաջին իսկ կոչով բժշկական քույր **Ելիզավետա Հովհաննիսյանը** մեկնել է սովետական բանակ և ծառայության անցել ռազմածովային նավատորմում:

Ե. Հովհաննիսյանը որպես բուժքույր անձուրաց գործունեություն է ծավալել «Կոտովսկի» և «Լվով» սանիտարական նավերում: Վերոհիշյալ նավերով 36 անգամ ուղևորություն է կատարել՝ Օդեսայից, Սևաստոպոլից, Կամիշ-Բուրունից, Կերչից վիրավորներ տեղափոխելով դեպի թիկունք[761]: Վիրավորների տեղափոխումը կատարվել է դժվարին պայմաններում: Խախտելով միջազգային «Կարմիր խաչի» օրենքները՝ ֆաշիստները ռմբակոծել են նավերը:

1941 թվականի օգոստոսի 13-ին Սկանդովսկի-Օդեսա ճանապարհին «Կոտովսկի» սանիտարական նավը ենթարկվել է ֆաշիստական ինքնաթիռների ռմբակոծմանը: Բուժքույր Ե. Հովհաննիսյանը աչալուրջ հետևել է տախտակամածի վրա տեղի ունեցող դեպքերին և ժամանակին օգնություն ցույց տվել վիրավորներին: Ամբողջ նավարկության ժամանակ ռմբակոծության ծանր պայմաններում Ե. Հովհաննիսյանը վիրակապել է 2000 վիրավորի և նրանց ուղեկցել թիկունք[762]:

Անձնվեր աշխատանքի համար հրամանատարությունը Ե. Հովհաննիսյանին պարգևատրել է «Մարտական ծառայությունների համար» մեդալով: 1942 թվականի հունիսին Սևաստոպոլում առաջադրանքը կատարելիս Ե. Հովհաննիսյանը զոհվել է քաջի մահով:

---

[760] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 151:
[761] Տե՛ս նույն տեղում:
[762] ՀԱԱ, ֆ. 270, գ. 66, էջ 3:

Նմանօրինակ սխրանքներ են կատարել հայ բժշկուհիները պատերազմի դաշտում: Նրանք ռազմաճակատում հիվանդներին ու վիրավորներին են բուժել, երբեմն մարտադաշտից վիրավորներ են հանել, պատահել է, որ վիրահատական գործիքի փոխարեն նաև զենք են վերցրել: Հաճախ կրակի առաջավոր գծում նաև իրենց արյունն են տվել վիրավոր մարտիկներին:

Այդպիսի նվիրյալ հայուհիներից էր **Գոհարիկ Իսրայելյանը**: Նա ծնվել է Գանձակում (Կիրովաբադ)՝ ծառայողի ընտանիքում: Միջնակարգ դպրոցը Բաքվում ավարտելուց հետո ընդունվել և 1941 թվականին ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, իսկ 1943 թվականի մայիսին զորակոչվելով բանակ՝ ուղարկվել է Կենտրոնական ռազմաճակատի N 3450 էվակուհոսպիտալ[763]:

Գիշերը ռմբակոծությունից հետո հոսպիտալ են բերել ազգությամբ ուկրաինացի 22 տարեկան մի շարքային զինվորի: Նա զրկվել էր երկու ծայրանդամներից և ուժեղ արյունահոսություն ուներ: Հիվանդի վիճակը ծանր էր: Հարկավոր էր առաջին խմբի արյուն ներարկել: Բժշկուհի Գոհարիկը, առանց երկար մտածելու, նրան է տվել իր արյունից 400 գրամ, այն էլ՝ անմիջական փոխներարկմամբ: Այդպես փրկել է հիվանդի կյանքը: Այդ դեպքից հետո բժշկուհին տարբեր ժամանակներում բազմաթիվ մարդկանց է փրկել մահից՝ նրանց 5 լիտր արյուն տալով: Ինչպես տեսնում ենք խորհրդային բժշկուհի Գ. Իսրայելյանի մարդասիրությունն ու անձնազոհությունը սահմաններ չեն ճանաչում:

Գ. Իսրայելյանին 1943 թվականի սեպտեմբերին ուղարկել են Ուկրաինական 1-ին ռազմաճակատի N 3280 էվակուհոսպիտալի վիրաբուժական բաժանմունք[764], որտեղ մնացել է մինչև հաջորդ տարվա մայիսը, իսկ 1946 թվականի մայիսից աշխատել է հոսպիտալում: Հետո զորացրվել է բժշկական ծառայության ավագ լեյտենանտի կոչումով:

---

[763] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 239:
[764] Տե՛ս նույն տեղում:

1946-1947 թվականներին որպես թոքախտաբույժ աշխատել է Լենինականի տուբերկուլյոզային դիսպանսերում, իսկ 1947 թվականից ստանձնել է Լենինականի N 1 բուժմիավորման կլինիկական լաբորատորիայի վարիչի պաշտոնը:

Երևանի բժշկական ինստիտուտի շրջանավարտ, արիասիրտ հայուհի **Լուսյա Խաչատրյանը** Հայրենական պատերազմին մասնակցել է սկզբից մինչև վերջ: Բանակ է մեկնել առաջին իսկ օրերին և իբրև վիրաբույժ՝ աշխատել է առաջավոր գծում: Եղել է Ուկրաինայում, Բելոռուսիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում[765]:

Լ. Խաչատրյանը ռազմաճակատի վիրավորների ու հիվանդների համար միայն բուժօգնություն ցույց տվող բժիշկ չէր: Նրանց համար նաև հարազատ քույր էր, քաջ կռվող, սրտացավ բարեկամ, ազնիվ ընկեր: Պատերազմն անզոր էր կոպտացնելու նրա նուրբ սիրտը, ընդհակառակը, նրան դարձրել էր ավելի բարի:

Լ. Խաչատրյանը սովետական բժշկի պատվավոր անունը բարձր է պահել և՛ պատերազմում, և՛ խաղաղ պայմաններում: Նա հրամանատար բժիշկների առաջադրանքները կատարել է անթերի և պատասխանատվության բարձր զգացումով: «Կարմիր աստղի» շքանշանը, մի շարք մարտական մեդալներն ու այլ պարգևները վկայում են, որ նա ճակատից վերադարձել է՝ դժվարին քննությունը «գերազանց» հանձնած:

Պատերազմի հաղթական ավարտից հետո Լ. Խաչատրյանը վերադարձել է Երևան և որպես պետական սանիտարական տեսուչ՝ աշխատել քաղաքային խորհրդի առողջապահության բաժնում: 1946 թվականից աշխատել է Երևանի քաղաքային սանէպիդկայանի կոմունալ սանիտարիայի բաժանմունքում, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն:

---

[765] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 243-244:

Բժշկական ծառայության կապիտան **Լյուդմիլա Հայրապետովան** ծնվել է 1922 թվականին Արմավիր քաղաքում՝ ծառայողի ընտանիքում: 1940 թվականին ավարտել է Ա. Պուշկինի անվան դպրոցը, 1944 թվականին՝ Երևանի բժշկական ինստիտուտը, ապա մոբիլիզացվել և ուղարկվել է Ուկրաինական 4-րդ ռազմաճակատ, նշանակվել է օրդինատոր N 1954 հոսպիտալի վիրաբուժության բաժնում: Այդ հոսպիտալի հետ մարտական ուղի է անցել մինչև Կրակով (Լեհաստան): Գիշեր ու ցերեկ չի հեռացել վիրահատական սեղանից և հարյուրավոր վիրավոր զինվորների կյանք է փրկել[766]:

Չեխոսլովակիայի ազատագրումից հետո ուղարկվել է Մորավսկա-Օստրավա՝ Չեխոսլովակիայի արդյունաբերության կենտրոններից մեկը: Այստեղ Ուկրաինական 4-րդ ռազմաճակատի զորքերը 1945 թվականի ապրիլի 15-ին սկսել են հարձակողական գործողությունները և դրանք հաջողությամբ ավարտել մայիսի 6-ին: Ստեղծված դժվարագույն պայմաններում Լ. Հայրապետովայի կողմից Կարպատյան լեռների գոտում վիրավորներին օգնություն է ցույց տրվել հենց մարտադաշտում: Գերմանաֆաշիստական զորքերի խմբավորումների ոչնչացումից հետո Լ. Հայրապետովան կրկին վերադարձել է Կրակով՝ վիրավորների բուժումը շարունակելու:

1946-1948 թվականներին աշխատել է Երևանի կայազորային հոսպիտալում: 1954 թվականից որպես բժիշկ աշխատել է Երևանի N 2 բուժսանմասում[767]:

Պարգևատրվել է «Խիզախության համար», «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և մարտական այլ մեդալներով:

1942 թվականի հոկտեմբերին թշնամին մտել է Կովկասյան նախալեռները: Այդ ահեղ օրերին բժշկական գիտությունների թեկնածու, բժշկական ծառայության մայոր **Ռոզա Ջանջուտովան** նշանակվել է

---

[766] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 284:
[767] Տե՛ս նույն տեղում, էջ 285:

N4279 դաշտային ինֆեկցիոն հոսպիտալի պետ: Նրա ղեկավարած հոսպիտալը 46-րդ բանակի կազմում Կովկասյան նախալեռներից հասել է մինչև Չեխոսլովակիա[768]:

Պատերազմի ծանր օրերին հոսպիտալի կազմակերպման ու ղեկավարման գործում կոմունիստ Ռ. Ջանջուտովան հանդես է բերել ուժեղ կամք, կազմակերպչական մեծ ունակություն: Բժշկասանիտարական անձնակազմի անբասիր աշխատանքի շնորհիվ հոսպիտալը դարձել է օրինակելի: Նա արագորեն վերակառուցել է հոսպիտալը և հմտորեն կազմակերպել վիրավորների ընդունումն ու նրանց բուժման գործը: «Նրա համար չկար գիշեր ու ցերեկ, դադար չէր առնում մինչև վիրավորների համար առավելագույն պայմաններ չէին ստեղծվում»,– ասված է 46-րդ բանակի սանիտարական բաժնի պետի տված բնութագրում[769]:

Ռազմաճակատում Ռ. Ջանջուտովան աչքի է ընկել ոչ միայն որպես լավագույն կազմակերպիչ, այլ իբրև հմուտ բժիշկ:

Նահանջող հիտլերականները մարդկանց մեծ կուտակումների շրջանում թողել են վարակիչ հիվանդությունների օջախներ: Բժշկական անձնակազմից պահանջվել է հատուկ զգոնություն և անխոնջ աշխատանք: Ռ. Ջանջուտովայի գլխավորած հոսպիտալի բժշկական անձնակազմի համառ աշխատանքի շնորհիվ կանխվել են վարակիչ հիվանդությունները և փրկվել մեծ թվով մարդկային կյանքեր:

Հոսպիտալի աշխատանքները օրինակելիորեն ղեկավարելու համար բժշկական ծառայության մայոր Ռ. Ջանջուտովան պարգևատրվել է «Կարմիր աստղի», «Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի» շքանշաններով ու մի շարք մեդալներով, իսկ մի շարք քաղաքների ազատագրման և գրավման ժամանակ վիրավոր մարտիկների բուժ-

---

[768] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 67:

[769] ՀԱԱ, ֆ. 270, բժշկական ծառայությունների մայոր Ռ. Ջանջուտովայի գործը:

ման գործը բարձր հիմքերի վրա դնելու համար Գերագույն գլխավոր հրամանատարության կողմից արժանացել է 18 շնորհակալագրերի[770]:

Երևանի բժշկական ինստիտուտի ասպիրանտ, բժշկական ծառայության լեյտենանտ **Շողիկ Պապոյանը** 1943 թվականին մեկնել է ռազմաճակատ և 11-րդ բանակի N հրաձգային դիվիզիայի բժշկասանիտարական գումարտակում նշանակվել վիրակապման բաժանմունքի օրդինատոր[771]: Կռիվը կատաղի բնույթ է կրել: Բժշկական անձնակազմը աշխատել է չափազանց լարված: Երիտասարդ բժշկուհին վիրահատման սեղանից չի հեռացել: Ճգնաժամային էր վիրավոր մարտիկ-ֆուտբոլիստի դրությունը: Վիրավորը զգացել է ոտքից զրկվելու վտանգը: Շ. Պապոյանը լավ է հասկացել նրան և մտածել է անպայման փրկել նրա ոտքը: Բժշկուհին վիրավորին վերցրել է իր անմիջական հսկողության տակ և գործադրելով բոլոր գիտելիքներն ու հմտությունը՝ բուժել է նրան (առանց ամպուտացիայի)[772]:

Ուշադիր վերաբերմունքով և հոգատարությամբ Շ. Պապոյանը շատ մարտիկների կյանք է փրկել: Նրա հասցեով բազմաթիվ նամակներ են ստացվել ռազմաճակատից ու թիկունքից, որոնց հեղինակները բարձր են գնահատել Շ. Պապոյանի աշխատանքը: Հայրենասեր հայուհին շուրջ երկու տարի կրակի ու բոցերի մեջ, Բելոռուսական 1-ին և Ուկրաինական 1-ին ռազմաճակատներում կռվել է ու վանել մահը զինվորներից՝ կյանք պարգևելով նրանց[773]:

Բժշկուհի Շ. Պապոյանը մասնակցել է Բրյանսկ, Ունեչա, Վլադիմիր-Վոլինսկ քաղաքների, Լեհաստանի, Հունգարիայի և Չեխոսլովակիայի բազմաթիվ քաղաքների ու մայրաքաղաք Պրագայի ազատագրմանը, ինչպես նաև Դրեզդեն, Կոտբուս, Լյուբբեն և Բեռլին քաղաքների գրավման մարտերին: Շ. Պապոյանը պարգևատրվել է «Հայրե-

---

[770] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 69:
[771] Տե՛ս նույն տեղում:
[772] Տե՛ս նույն տեղում, էջ 69:
[773] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 200:

նական պատերազմի 2-րդ աստիճանի» և երկու «Կարմիր աստղի» շքանշաններով:

Բժշկական ծառայության ավագ լեյտենանտ Շ. Պապոյանը հաղթանակից հետո շարունակել և ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտի ասպիրանտուրան, 1955 թվականին պաշտպանել է ատենախոսություն և ստացել բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Երկար տարիներ նա աշխատել է Երևանի բժշկական ինստիտուտում որպես դոցենտ, ապա ամբիոնի վարիչ: Նա ստացել է «Հայաստանի վաստակավոր բժշկի» կոչում: Մահացել է 2005 թվականին Երևանում[774]:

Հայ ժողովրդի արժանի դուստրերի թվում են նաև բժշկական ծառայության կապիտան **Աշխեն Իգիթխանյանը** և առաջին կարգի զինվորական բժիշկ **Նորա Ավետիսյանը**: 1941 թվականի գերազանց գնահատականներով ավարտելով Երևանի բժշկական ինստիտուտը՝ նրանք հայրենիքի առաջին կոչով մեկնել են խորհրդային բանակ:

Ա. Իգիթխանյանը վիրաբույժ էր: 1943 թվականի ապրիլին Կուբանի Մինսկ կայարանի մոտ ծանր վիրավորվել էր Վասիլի Լեբեդևը: Ծանր հարվածից նրա աջ ոտքը վնասվածք էր ստացել: Պետք էր կտրել, որովհետև վնասված մասը «մահացել» էր: Այդպիսի եզրակացության էին եկել վիրաբույժները: Ռազմիկի ոտքի բուժման միտքը հուզել է երիտասարդ վիրաբույժ Ա. Իգիթխանյանին: Եվ նա, առանց վիրահատելու, վերքը բուժելու միջոց է գտել: Նույն մեթոդով նա փրկել է Իվան Միխայլենկոյի «մահացած» ձեռքը[775]:

Ա. Իգիթխանյանի նման խիզախ և հոգատար էր նրա ընկերուհին՝ բժշկական ծառայության կապիտան Նորա Ավետիսյանը: «Յունկերների» մի մեծ խումբ իրար ետևից չորս հարձակում է գործել դաշտային հոսպիտալի վրա: Պայթող արկղերից կարծես շարժվել է գետինը, տեղահան են եղել լուսամուտների շրջանակները, դռները, հիվանդները

---

[774] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 200:
[775] ՀԱԱ, ֆ. 270, գ. 21, թ. 3:

նոր վերքեր են ստացել: Այդ ծանր և վտանգավոր իրադրության մեջ Ն. Ավետիսյանը հանդես է բերել բացառիկ արիություն: Նա, գրկելով հիվանդներին, նրանց տեղափոխել է ռմբապաստարան՝ փրկելով շատերի կյանքը[776]: Իսկ նույն պահին ռմբապաստարանում բուժքույր Տապրովայի օժանդակությամբ Ա. Իգիթխանյանը վիրահատել է դաղստանցի Աբդուլաև Գաջիին:

Հայրենական հեռագրական գործակալության թղթակիցը, Կուբանի մարտերում ականատես լինելով Ա. Իգիթխանյանի և Ն. Ավետիսյանի անձնազոհ աշխատանքին, գրել է. «Այդ համեստ աղջիկներն արդեն անցել են մարտական լուրջ դպրոց և պատերազմական կյանքի փորձություններում հարստացրել իրենց գիտական պրակտիկան…: Հայ ժողովրդի այդ դուստրերի համեստությունն ու առաքինությունը այսօր Հայրենական պատերազմի կրակ ու բոցում նոր փուլ է ստացել»[777]:

Ա. Իգիթխանյանը Կովկասյան նախալեռներից մարտերով հասել է Գերմանիա, Կովկաս, Կուբան-Ուկրաինա-Բելոռուսիա, Լիտվա-Լեհաստան-Արևմտյան Պրուսիա, մասնակցել է Քյոնիգսբերգի և Բեռլինի գրավման մարտերին: Պատերազմը ավարտել է Չեխոսլովակիայում՝ պարգևատրվելով «Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի» շքանշանով, «Կարմիր աստղի» շքանշանով և 8 մեդալներով[778]: Նա 1965 թվականին արժանացել է «Հայաստանի վաստակավոր բժիշկի» կոչման:

1942 թվականին՝ պատերազմի ամենածանր ժամանակահատվածում, դեպի երկրի խորքերը թափանցող հրոսակային բանդաներին ռազմաճակատի ամբողջ երկարությամբ հերոսաբար դիմադրել են խորհրդային բանակի զորամասերը և տեղ-տեղ հակահարձակման

---

[776] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 72:
[777] ՀԱԱ, ֆ. 270, գ. 21, թ. 5:
[778] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 174:

անցնելով՝ ազատագրել քաղաքներ ու գյուղեր: Կենաց և մահու այդ մարտերում զոհվել են նաև Հայաստանից մեկնած հայրենասերներ:

Երևանի բժշկական ինստիտուտի շրջանավարտ Լիդան, լսելով այդ մասին, եղբոր վրեժը լուծելու համար դիմել և կամավոր մեկնել է ռազմաճակատ: Նրան ուղարկել են Ստալինգրադի ռազմաճակատ, և 66-րդ բանակի N 4948 դաշտային հոսպիտալում սկսել է իր զինվորական ծառայությունը[779]: **Լիդա Հարությունյան - Օհանջանյանին** այստեղ վստահել են ծանր վիրավորների բաժանմունքի պետի պաշտոնը: Ստալինգրադի մոտ ֆաշիստական հորդաների ջախջախումից հետո վերոհիշյալ բանակը վերակազմավորվել է 5-րդ գվարդիական բանակի և փոխադրվել Ուկրաինական 2-րդ ռազմաճակատ:

Դնեպրի համար ծավալված մարտերի օրերին Լիդա Հարությունյանը-Օհանջանյանը աչքի է ընկել սխրագործությամբ՝ փրկելով բազմաթիվ վիրավոր զինվորների կյանքը: Նա մասնակցել է Լվով, Ստանիսլավ, Մելեց, Վարշավա և բազմաթիվ այլ քաղաքների ազատագրման համար մղված մարտերին, իրենց զորամասի հետ առաջ է անցել Գերմանիայի տարածքներով:

Ռազմաճակատի բոլոր հատվածներում Լ. Հարությունյան - Օհանջանյանը աշխատել է չափազանց լարված, գրեթե չի հանգստացել նույնիսկ այն ժամանակ, երբ երկար ոտքի կանգնելուց ուռել են նրա ոտքերը: Աշխատել է արագ, արտակարգ եռանդով ու նվիրված: Իզուր չէ, որ զինվորները նրան անվանել են «կրակի կտոր»: Նրա ճակատային ընկերուհի Լենա Կովալյովան նրան հասցեագրած նամակում նշել է հետևյալը. «Բոլոր հայ կանանց ես պատկերացնում եմ քեզ նման՝ վեհանձն, քաջ ու ազնիվ»[780]:

1945 թվականի մայիսի 11-ին հոսպիտալը տեղափոխվել է Դրեզդեն, որտեղ էլ Լ. Հարությունյան – Օհանջանյանը շարունակել է ծառա-

---

[779] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 186:
[780] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 291-292:

յությունը մինչև 1946 թվականը: Զորացրվել է 1946 թվականի մարտին, պարգևատրվել է բազմաթիվ մեդալներով[781]:

10 տարի Բաքվում աշխատելուց հետո վերադարձել է Ստեփանակերտ, որտեղ աշխատել է որպես շտապօգնության կայանի բժիշկ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին իր քաջագործություններով աչքի է ընկել Երևանի բժշկական ինստիտուտի շրջանավարտ **Արփիկ Հացագործյանը**: 1943 թվականի մայիսին զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը, ուղարկվել Հյուսիսկովկասյան բանակի շտաբ (Կրասնոդար), նշանակվել է Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի 197-րդ բուժսանգումարտակի թերապիայի փոկի օրդինատոր[782]: Դիվիզիային նա միացել է Ստարոշչերբինովկա գյուղում: Այստեղից դիվիզիայի հետ մեկնել է ճակատ, մասնակցել Նովոռոսիյսկում գրավման համար մղվող մարտերին[783]:

Բուժսանգումարտակը, որտեղ աշխատել է Ա. Հացագործյանը, ամրացել է Նովոռոսիյսկի անտառներում, տեղավորվել է վրանների տակ և ընդունել է վիրավորներին: Այստեղ ծանր վիճակում գտնվող վիրավորների համար առանձնացված է եղել շոկային հատուկ պալատ, որտեղ արյուն կամ դրան փոխարինող հեղուկ են ներարկել արյունաքամ վիրավորներին, հիվանդներին հանել են շոկային վիճակից և ուղարկել վիրահատության կամ թերապիայի ջոկը՝ կազմակերպելու հետագա բուժումը կամ փոխադրումը[784]: Բոլոր բժիշկների նման Ա. Հացագործյանն էլ աշխատել է լարված՝ օրվա մեջ հազիվ 2-3 ժամ քնելով, սննդին ու հանգստին հատկացնելով: Ճակատային գիծը շատ մոտ է եղել բուժսանգումարտակին. արկերի բեկորները վրաններին են հասել: Նովոռոսիյսկից 43 կմ հարավ-արևելք գտնվող Գելենջիկի մոտ Ա. Հացագործյանին հանձնարարվել է մնալ գյուղում, խնամել հիվանդ-

---

[781] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 291-292:
[782] Տե՛ս նույն տեղում:
[783] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 187:
[784] Տե՛ս նույն տեղում:

ներին, և երբ նրանց վիճակը թույլ կտա, ուղարկել մոտակա հոսպիտալը[785]: Ա. Հացագործյանը երկու բուժքույրերի ու մեկ սանիտարուհու հետ բարեխղճորեն կատարել է այդ հանձնարարությունը և մեկ շաբաթ անց միացել է իրենց զորամասին:

1943 թվականի վերջերին, երբ դիվիզիան ծովով տեղափոխվել է Կերչ, Ա. Հացագործյանը հիվանդության պատճառով եկել է թիկունք՝ Երևան: 1943 թվականի դեկտեմբերից որպես վիրաբուժական բաժնի օրդինատոր աշխատել է N 1473 էվակուհոսպիտալում, իսկ 1944 թվականի հունիսից՝ պատերազմի հաշմանդամների համար բացված վերականգնողական վիրաբուժական հիվանդանոցում[786]:

Պատերազմից հետո աշխատել է տարբեր տեղերում՝ մայրաքաղաքի 3-րդ հիվանդանոցում, առողջապահության նախարարությունում: Հայրենական մեծ պատերազմում և դրանից հետո Ա. Հացագործյանի ծառայությունը գնահատվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945 թթ. ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Հայրենական մեծ պատերազմի տարիներին անձնվեր աշխատանքի համար» մեդալներով ու շնորհակալագրերով:

Բժշկական ծառայության լեյտենանտ **Շուշիկ Ասատրյանը** մարտական մկրտությունը ստացել է Կովկասի պաշտպանության կռիվներում: 1942 թվականի հոկտեմբերին Սուխումի լեռնանցքում կատաղի մարտեր են մղվել: Գերմանացիները փակել են ճանապարհը: Վիրավոր մարտիկներն ընկել են շրջապատման մեջ: Ստեղծվել է ծանր դրություն: Բժշկասանիտարական մասի փոքրաթիվ կոլեկտիվը, որի կազմում էր Շ. Ասատրյանը, բժշկական ծառայության մայոր Նատալյա Պադուշկո-Դուբրովսկայայի գլխավորությամբ, առանց հուսահատվելու չարչարվել է գիշեր ու ցերեկ՝ վիրավորներին շրջապատումից դուրս բերելու և թիկունք էվակուացնելու համար: 1943 թվականին Սուխումիի

---

[785] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 294:
[786] Տե՛ս նույն տեղում:

լեռնանցքում Շ. Ասատրյանը վիրավորվել է, բայց չի հեռացել զորամասից[787]:

Հրամանատարն առաջարկել է ամեն գնով ռազմադաշտից դուրս բերել կրծքից ծանր վիրավոր Ազիզբեկյանին: Շ. Ասատրյանը իր վրա է վերցրել այդ դժվարին առաջադրանքի կատարումը: Արհամարհելով թշնամու ուժեղ կրակը՝ նա սողեսող հասել է մարտիկին, առաջին օգնություն է ցույց տվել և դուրս է բերել ռազմադաշտից՝ փրկելով նրա կյանքը[788]:

Բժշկական ծառայության լեյտենանտ Շ. Ասատրյանի մարտական ուղին ավարտվել է Ավստրիայում: Խորհրդային կառավարությունը բարձր գնահատելով նրա ծառայությունները՝ նրան պարգևատրել է «Կարմիր աստղի» շքանշանով (երկու), «Բելգրադի ազատագրման», «Բուդապեշտի», «Վիեննայի գրավման» և «Հաղթանակի համար» մեդալներով:

Աշխեն Վիրաբյանը, 19 տարին չբոլորած, ուսանողական նստարանից մեկնել է սովետական բանակ որպես վիրաբուժական քույր: Նա բժշկական առաջին օգնություն է հասցրել վիրավոր ռազմիկներին, որպես դոնոր՝ իր արյունն է տվել՝ հայրենիքի պաշտպանների կյանքը փրկելու համար:

Դոնբասի համար մղված մարտերում ծանր վիրավորվել էր Իվան Սերեբրյակովը: Նրա փրկությունը կախված էր արյուն ներարկելուց, իսկ սանգումարտակում արյուն չկար: Աշխենը առաջարկել է իր արյունը: Հրամանատարի կյանքը փրկվել է[789]: Այնուհետև նրա արյունը օգնել է վերականգնելու ևս երեք ծանր վիրավորի առողջությունը: Աշխենի մասին ռազմաճակատից Նինա Սոլոմանովնան գրել է. «Հայ աղջ-

---

[787] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 74:
[788] Տե՛ս նույն տեղում, էջ 157:
[789] Տե՛ս նույն տեղում:

կա այդ անձնվիրությունն ու հայրենասիրությունը հիացրել է Ն բժշկասանիտարական գումարտակի անձնակազմին»[790]:

1944 թվականի վերջերին Արևելյան Պրուսիայում ընթացող կատաղի մարտերից մեկում գլխից ծանր վիրավորվել էր հրամանատարը՝ թուրքմեն բանաստեղծ Չաթի Աշիրովը: Նա ուշաթափ, անօգնական վիճակում մնացել էր դաշտում: Ահեղ կրակի տարափի տակ սողալով՝ նրան է մոտեցել «Կարմիր աստղի» շքանշանակիր, բժշկական ծառայության լեյտենանտ **Նինա Սաղումյանը**[791]: Բժշկական առաջին օգնություն ցույց տալով՝ նա սանիտարների օգնությամբ վիրավորին փոխադրել է դաշտային հոսպիտալ: Մի քանի օրից, երբ վերականգնվել է գիտակցությունը, բանաստեղծը հետաքրքրվել է իր կյանքի փրկողով և նրան նվիրել է մի բանաստեղծություն՝ «Ես հայուհի, անունս՝ Նինա» վերնագրով[792]:

Չեմ հիշում ես դեմքը քրոջական,
Անունը նրա հիշում եմ, սակայն,
– «Ես հայուհի եմ, անունս - Նինա»:

14 տարի անց Հայաստանի մայրաքաղաք Երևանում Չաթի Աշիրովը հանդիպել է Ն. Սաղումյանին՝ իր կյանքի փրկարարին:

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում մեծ ծառայություններ են կատարել նաև բժշկական ծառայության մայոր, «Կարմիր դրոշի» և «Կարմիր աստղի» շքանշանակիր *Սոֆյա Գրիգորյանը* (Մոսկալենկո), «Կարմիր աստղի» շքանշանակիր, բժշկական ծառայության կապիտան *Մարգարիտա Մելիք-Փարսադանյանը,* բժշկական ծառայության մայոր *Փառանձեմ Ավետիքյանը*, բժշկական ծառայության կապիտաններ, «Կարմիր աստղի» շքանշանակիրներ, գվարդիական *Վարվառա Վելիկանյանը, Թամարա Չոլախյանը, Սիրուշ Հովհաննիսյանը,* բժշկական ծառայության լեյտենանտներ *Լենա Սարգսյանը,*

---

[790] «Սովետական Հայաստան», 29 հոկտեմբերի, Երևան, 1943:
[791] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 78:
[792] Տե՛ս նույն տեղում:

Լուսյա Փոթիկյանը, Նինա Բերեկյանցը, բժշկական քույրեր *Ոսկեհատ Հովհաննիսյանը, Լուսիկ Արզումանյանը* և շատ ուրիշներ[793]:

Փառանձեմ Ավետիքյանը Տեր-Ավետիքյանների մեծանուն տոհմից էր: Ավարտել է Կիրովաբադի (Գանձակ) մանկավարժական տեխնիկումը և 4 տարի որպես ուսուցիչ աշխատել Դաշքեսանի շրջանի գյուղերում: Փառանձեմ Ավետիքյանը 1940 թվականին ավարտել է նաև Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը և որպես բժշկական տեղամասի վարիչ և ենթաշրջանային բժիշկ՝ աշխատանքի է անցել Շամշադինի (Տավուշ) շրջանի Ղրղի գյուղում:

1941 թվականի օգոստոսի 5-ին զորակոչվել է և ծառայության անցել Հյուսիսկովկասյան ռազմաճակատում, «Սուվորովի շքանշանի» դափնեկիր Բարանովիչի անվան 20-րդ լեռնահրաձգային դիվիզիայում, այնուհետև՝ նույն դիվիզիայի 61-րդ հրետանային, ապա՝ 265-րդ հրաձգային գնդերում որպես սանիտարական ծառայության պետ, գլխավոր բժիշկ: Անցել է Հյուսիսկովկասյան 1-ին, Բելոռուսական 3-րդ և Ուկրաինական 1-ին ռազմաճակատների արյունոտ ճամփաներով[794]:

Մասնակցել է Հյուսիսկովկասյան լեռնանցքների, Կուբանի, Բելոռուսիայի, Արևելյան Պրուսիայի, Լեհաստանի (Վարշավայի) ազատագրմանը, Բեռլինի գրավմանը, պատերազմի հաղթական ավարտը տոնել է Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրահայում:

Պարգևատրվել է «Կարմիր աստղի» (1944), «Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի» շքանշաններով, ավելի քան 20 մարտական մեդալներով[795]: 1946 թվականի հոկտեմբերին բժշկական ծառայության կապիտան Փ. Ավետիքյանը զորացրվել է և աշխատանքի անցել Երևանի պրոֆեսոր Գաբրիելյանի անվան 1-ին մանկական կլինիկական հիվանդանոցում որպես օրդինատոր:

---

[793] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 79:
[794] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 156:
[795] Տե՛ս նույն տեղում:

1955-1982 թվականներին եղել է հիվանդանոցի նորածին երեխաների բաժնի վարիչը:

1965 թվականին նրան շնորհվել է «Հայաստանի վաստակավոր բժշկի», 1979 թվականին՝ «Բարձրագույն կատեգորիայի մանկաբույժի» կոչում[796]:

Փ. Ավետիքյանը մահացել է 1990 թվականին Երևանում:

Իսկական արիասիրտ հայուհի էր ծագումով գյումրեցի **Թամարա Չոլախյանը:** Նա, հինգ տարեկանում զրկվելով ծնողներից, ապրել է Կիրովականում (Վանաձոր)՝ բարեկամների մոտ:

1931 թվականին ավարտելով Երևանի բժշկական ինստիտուտը, գործուղվելով Ղափան՝ աշխատել է մանկական կոնսուլտացիայում, այնուհետև՝ քաղաքի սանհամաճարակաբանության կայանում[797]:

1941 թվականի հուլիսից ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել է մարտերին, բուժօգնություն ցուցաբերել տարբեր զորամասերում: 1941-1942 թվականներին աշխատել է N 122 շարժական դաշտային հոսպիտալում, այնուհետև՝ 408-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 485-րդ գումարտակում որպես սանջոկի պետ: Բուժսանգումարտակը, որը գտնվել է Տուապսեի անտառում տեղակայված վրաններում, գործել է լարված և մեծ ծանրաբեռնվածությամբ: Այստեղ ծառայող Թ. Չոլախյանը վիրավորներին որակյալ օգնություն է ցուցաբերել[798]:

1942 թվականի հոկտեմբերին Թ. Չոլախյանին ուղարկել են նույն դիվիզիայի հրետանային գունդը՝ վիրավորներին օգնություն ցույց տալու և բուժսանգումարտակ բերելու նպատակով: Այդ չափազանց լուրջ հանձնարարությունը նա կատարել է մեծ դժվարությամբ, բայց անթերի[799]: Այնուհետև ծառայել է 47-րդ բանակին կից բուժուժեղացված

---

[796] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 156:
[797] Տե՛ս նույն տեղում, էջ 198:
[798] Տես՛ նույն տեղում:
[799] Տես՛ նույն տեղում:

առանձին վաշտում: Որոշ ժամանակ անց վաշտը մտել է 18-րդ բանակի կազմի մեջ և մարտական երկար ուղի անցել դեպի արևմուտք: Թ. Չոլախյանը մասնակցել է Կուրսկ-Օրյոլ ուղղությամբ ծավալված մարտերին, զորամասի հետ անցել Դնեպր և Բուգ գետերը, Արևմտյան Ուկրաինայից հասել Լեհաստան՝ հաղթահարելով մեծաթիվ դժվարություններ: Ուկրաինայում մի քանի բժիշկների և 10 վիրավորների հետ շրջապատման մեջ է ընկել, բայց կարողացել է առանց խուճապի մատնվելու դուրս գալ օղակից, հասնել մոտակա հոսպիտալը: Երեք ամիս մնալով լեհական հողում՝ բուժօգնություն է ցույց տվել ոչ միայն վիրավոր զինվորներին, այլև տեղի բնակչությանը[800]:

1945 թվականի փետրվարին զորացրվել է բանակից, ստացել հաշմանդամության 2-րդ կարգ և վերադարձել Հայաստան: Որպես բժիշկ՝ աշխատել է Ջերմուկի առողջարանում, ապա Հանրապետական հոգեբուժական հիվանդանոցում: 1967 թվականին բժշկական ծառայության կապիտան Թ. Չոլախյանին շնորհվել է «Հայաստանի վաստակավոր բժշկի» կոչում:

Քնարիկ Բաբայանը, 1943 թվականին ավարտելով Երևանի պետական բժշկական ինստիտուտը, աշխատանքի է ընդունվել Երևանի համաճարակաբանության ու մանրէաբանության ինստիտուտում որպես մանրէաբան: Նա 1944 թվականին զորակոչվել է բանակ և 25-րդ Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի հետ մասնակցել է մարտերին[801]:

Սեպտեմբեր-հոկտեմբերին 2-րդ Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը Լենինգրադյան և Մերձբալթյան 1-ին ու 3-րդ ռազմաճակատների զորքերի հետ միասին հարձակողական մարտեր են ծավալել գերմանաֆաշիստական զորքերի մերձբալթյան խմբավորումները ջախջախելու և խորհրդային Մերձբալթիկան ազատագրելու համար: Փշրելով հակառակորդի շուրջ 50 դիվիզիաների համառ դիմադրությու-

---

[800] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 198:
[801] Տե՛ս նույն տեղում, էջ 158:

նը՝ խորհրդային զորքերը փայլուն կերպով իրագործել են այդ խնդիրը և շարունակել առաջ գնալ դեպի արևմուտք: Այդ հերոսական մարտերին արիաբար մասնակցել է նաև Քնարիկ Բաբայանը[802]:

1945 թվականին բանակից զորացրվելուց հետո մինչև 1950 թվականը աշխատել է Երևանի 1-ին մանկական հիվանդանոցում որպես մանկաբույժ: 1950 թվականից եղել է 2-րդ ծննդատան կլինիկական լաբորատորիայի բժիշկ-լաբորանտը[803]:

Պարգևատրվել է «Կարմիր աստղի» շքանշանով, «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Անձնվեր աշխատանքի համար» և հինգ այլ մեդալներով, բազմաթիվ պատվոգրերով:

Հայրենական մեծ պատերազմի վետերանը նաև աշխատանքի վետերան է:

Ծագումով ղարաբաղցի **Աստղիկ Մխիթարյանը** ավելի քան հիսուն տարի աշխատել է որպես բուժքույր՝ իր ծառայությունը բերելով երկրամասի առողջապահության ոլորտին: 1941 թվականի հունիսի 22-ին Հայրենական մեծ պատերազմի (1941-1945) հայտարարման օրը Ա. Մխիթարյանը քրոջ հետ դիմել է Մարտակերտի զինվորական կոմիսարիատ՝ որպես բուժքույր կամավոր ռազմաճակատ մեկնելու համար[804]: Պատերազմի սկզբում մի քանի ամիս վիրավորներ են ընդունել Ստեփանակերտի, իսկ հետո՝ Շուշիի հոսպիտալներում, այնուհետև նրանց տեղափոխել են գործող ճակատ:

Ղարաբաղցի աղջիկների մի մեծ խումբ (հոսպիտալի կազմով), նրանց թվում՝ Աստղիկ Մխիթարյանը, անցել են պատերազմի դժվարին ճամփաներով և հաղթանակը դիմավորել ֆաշիստական Գերմանիայի որջում՝ Բեռլինում[805]:

---

[802] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 158:
[803] Տե՛ս նույն տեղում:
[804] Տե՛ս նույն տեղում, էջ 196:
[805] Տե՛ս նույն տեղում:

Երկար ու ձիգ պատերազմական տարիների ընթացքում Աստղիկ Մխիթարյանը եղել է ակտիվ դոնոր, փրկել է հարյուրավոր վիրավորների կյանքը: Նա միանգամից կես լիտր արյուն է տվել գեներալ Վատուտինին[806]: Ա. Մխիթարյանը պարգևատրվել է բազմաթիվ մեդալներով և կառավարական այլ պարգևներով:

Մարիա Մանթաշյանը ծնվել է Թիֆլիսում (այժմ՝ Թբիլիսի), 1925 թվականին ավարտել է Դոնի Ռոստովի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը: Աշխատել է Վրաստանում, իսկ 1935-1937 թվականներին աշխատել է Հայաստանի կոմկուսի կենտկոմում, ապա 1937-1941 թվականներին եղել է հանրապետության «Կարմիր խաչի» կենտրոնական կոմիտեի նախագահը[807]:

1941 թվականի հունիսի 22-ին մեկնել է ռազմաճակատ, օգոստոսից գլխավորել է N 3694 էկակոհոսպիտալի բազմաբարդ աշխատանքը: Հոսպիտալում նրա ջանքերի շնորհիվ բուժման գործի դրվածքն ապահովել է հիվանդների արագ ապաքինումն ու կրկին շարք վերադառնալը: Մահացության տոկոսը հասցվել է նվազագույնի[808]:

1947 թվականին Մ. Մանթաշյանը զորացրվել է բանակից և որպես ռազմական ամբիոնի դասախոս՝ աշխատանքի է նշանակվել Երևանի պետական համալսարանում, այնուհետև՝ առողջապահության նախարարությունում որպես Սանլուստան գլխավոր բժիշկ: Պարգևատրվել է «Լենինի» (1954), «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշաններով, վեց մեդալներով, պատվոգրով, կրծքանշանով[809]: Արժանացել է «Հայաստանի վաստակավոր բժշկի» կոչման:

Բժշկական ծառայության պահեստի ավագ լեյտենանտ **Սիրանուշ Հովհաննիսյանը** ծնվել է Ղափանի շրջանի Նորաշենիկ գյուղում: 1939 թվականին ընդունվել է բժշկական ինստիտուտ, որն ավարտել է 1943

---

[806] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 196:
[807] Տե՛ս նույն տեղում, էջ 191:
[808] Տե՛ս նույն տեղում:
[809] Տե՛ս նույն տեղում:

թվականի հունիսին և օգոստոսին զորակոչվել բանակ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին Ուկրաինական 4-րդ ռազմաճակատում որպես վիրաբույժ օրդինատոր N 2116 էվակոհոսպիտալում[810]: Արիասիրտ հայուհին փրկել է հարյուրավոր վիրավորների կյանքեր:

Ս. Հովհաննիսյանը 1946 թվականի հունվարին զորացրվել է բանակից, վերադարձել է Երևան, աշխատանքի ընդունվել օրթոպեդիայի ու վնասվածքաբանության ինստիտուտում որպես կլինիկական օրդինատոր:

Ս. Հովհաննիսյանին 1965 թվականին շնորհվել է «Հայաստանի վաստակավոր բժշկի» կոչում: Պարգևատրվել է հինգ մեդալով[811]:

Նվիրյալ հայուհի Սրբուհի Ղարագյոզյանը ծնվել է Բաքվում, հայրենիքի առաջին իսկ կոչով մեկնել է ռազմաճակատ: 1941 թվականի հունիսի 25-ից սկսվել է նրա զինվորական կյանքը բժշկական ծառայության 28-րդ հրաձգային դիվիզիայի 83-րդ գնդում: Որպես ավագ բժիշկ՝ ծառայել է նաև 369-րդ, 106-րդ գնդերում ու 35-րդ հրետանային գումարտակում, Հյուսիսային Կովկասի ճակատներում և Գրոզնիի, Արմավիրի, Ռոստովի, Նովոչերկասկի ու Թբիլիսիի հոսպիտալներում բուժել հարյուրավոր հիվանդ ռազմիկների[812]:

1945 թվականին զորացրվելով բանակից՝ Ս. Ղարագյոզյանը աշխատել է Բաքվում, 1951 թվականից՝ Երևանում որպես 2-րդ բուժսանմասի հիվանդանոցի գլխավոր բժիշկ: Պարգևատրվել է մի շարք մեդալներով և ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով, արժանացել է «Հայաստանի վաստակավոր բժշկի» կոչման[813]:

Բաքվում է ծնվել նաև քաջասիրտ հայուհի **Մարգարիտա Մելքումյանը:** Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է բժշկական ինստիտուտում: 1944 թվականին ավարտել է այն և

---

[810] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 307:
[811] Տե՛ս նույն տեղում:
[812] Տե՛ս նույն տեղում, էջ 320:
[813] Տե՛ս նույն տեղում, էջ 321:

զորակոչվել բանակ: Թբիլիսիում մասնակցել է բժիշկների կատարելագործման դասընթացներին, հետո ուղարկվել Ուկրաինական 4-րդ ռազմաճակատ: Որպես վիրաբույժ ծառայել է 137-րդ հրաձգային դիվիզիայի 182-րդ բուժսանգումարտակում, որտեղից էլ ուղարկվել է գունդ[814]: Նրա անձնական խիզախության, սխրագործության շնորհիվ փրկվել են հարյուրավոր վիրավորներ, որոնք բժշկուհու հմուտ միջամտությամբ վերադարձել են ռազմադաշտ:

1945 թվականի դեկտեմբերին զորացրվել է բանակից և եկել Երևան: 1948-1951 թվականներին որպես թերապևտ աշխատել է Երևանի պոլիկլինիկաներից մեկում:

Մ. Մելքումյանը պարգևատրվել է «Մարտական ծառայության համար», «Կովկասի պաշտպանության համար» և ևս 7 մեդալներով: Նա բժշկական ծառայության կապիտան էր[815]: Մ. Մելքումյանը առողջապահության գերազանցիկ էր, արժանացել է «Հայաստանի վաստակավոր բժիշկ» կոչման:

Հայրենական մեծ պատերազմի տարբեր ռազմաճակատներում բժշկական ծառայություններ կատարելիս իրենց հերոսական սխրանքներով աչքի են ընկել քաջասիրտ հայուհիներ, բժշկական ծառայության մայոր, Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի բազմամեդալակիր *Տատյանա Կարճիկյանը*, բժշկական ծառայության կապիտան, Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի մեդալակիր *Ասյա Գալջյանը,* բժշկական ծառայության կապիտաններ, «Կարմիր աստղի» կրկնակի շքանշանակիր *Վալենտինա Զաքարյանը*, «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանակիր *Սառա Դավթյանը*, բժշկական ծառայության ավագ լեյտենանտներ, մարտական մեդալակիրներ *Արևհատ Մալինյանը, Օֆելյա Մելիքյանը, Մարիա Մեհրաբյանը, Արտանուշ Գինոսյանը, Ռուզաննա Դավթյանը, Լուսյա Բունիաթյանը*, բժշկական քույրեր, «Աշխատանքային կարմիր դրոշի», «Կարմիր աստղի» շքան-

---

[814] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 361-362:
[815] Տե՛ս նույն տեղում:

շանակիր *Թամարա Հովհաննիսյան-Ամիրխանյանը*, «Կարմիր աստղի» շքանշանակիր *Հասմիկ Զաքարյան-Սարգսյանը, Լուսյա Եսայանը* և ուրիշներ[816]:

* * *

Երկու պատերազմի մասնակցել է արիասիրտ հայուհի, հերոսուհի, բժշկուհի **Հեղինե (Ելենա) Բուռնազյանը**: Մասնակցելով Խորհրդա-ֆիննական և Հայրենական պատերազմներին՝ բազմաթիվ արհավիրքներ է տեսել նա. ապրել է անվերջանալի թվացող ծանր պահեր: Խորհրդա-ֆիննական պատերազմին իր մասնակցության մասին Ելենա Բուռնազյանը գրել է. «Կարելիայի ծոցում առաջին անգամ հանդիպեցի բազմաթիվ և բազմապիսի վնասվածքների, որոնք հաճախ զուգակցվում էին 45-50 աստիճան սառնամանիքների հետևանքով առաջացած ցրտահարությամբ: Այս հիվանդներն իմ տեսած հիվանդները չէին, նրանց ցավի արտահայտությունը նման չէր սովորական հիվանդների տրտունջներին: Վերքերը բազմապիսի էին, մեկը մյուսից տարբեր, մեկը կռվի դաշտում էր թողել ոտքը, մյուսը եկել էր առանց ձեռքի, երրորդի դեմքը կորցրել էր իր բնական տեսքը, չորրորդը… Սարսափելի էր, սարսափելի ու ահավոր…»[817]:

Ելենա Բուռնազյանը ծնվել է 1914 թվականին Շուշիում (Լեռնային Ղարաբաղ): Միջնակարգ կրթությունը ստացել է Թբիլիսիում: 1937 թվականին ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, աշխատանքի է նշանակվել Լենինականի շրջանի Արթիկ գյուղի հիվանդանոցում և պոլիկլինիկայում, որտեղ աշխատել է մինչև 1939 թվականը[818]:

1939 թվականին գործուղվել է Լենինգրադ (Սանկտ Պետերբուրգ)՝ ասպիրանտուրայում ուսանելու: Սակայն ուսումն ընդհատվել է

---

[816] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ.,, էջ 164-165, 170-171, 183, 204-205, 208, 220-221, 261, 297-298, 352, 366:
[817] Տե՛ս նույն տեղում, էջ 166:
[818] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 162:

Խորհրդա-ֆիննական պատերազմի պատճառով, և նա զորակոչվել ու մեկնել է ռազմաճակատ: Պատերազմի ավարտից հետո շարունակել է ասպիրանտական ուսումնառությունը, որը, սակայն, նորից է ընդհատվել: Մեծ հայրենականի առաջին իսկ օրը՝ 1941 թվականի հունիսի 22-ին, Ե. Բուռնազյանը մեկնել է Լենինգրադյան ռազմաճակատ, որպես վիրաբույժ՝ մասնակցել է մարտերին և աչքի է ընկել անձնական խիզախությամբ իր ցուցաբերած սխրագործություններով:

Քնքուշ ու փխրուն հայուհին տեսել ու զգացել է պատերազմի արհավիրքները, ապրել է անվերջանալի թվացող ծանր պահեր՝ Լենինգրադի պաշարումը, քաղաքի սովահար մարդկանց տառապանքը, բազմաթիվ վերքեր ու վնասվածքներ, որոնք հաճախ ուղեկցվում էին 50 աստիճանից ավելի սառնամանիքների հետևանքով առաջացած ցրտահարությամբ: Նման ծանր պայմաններում կատարել է վիրահատություններ, փրկել է կյանքեր: Պատերազմական դեպքերից մեկի մասին նա գրել է. «Լադոգա լճի ափին՝ բարձունքի վրա կառուցված դպրոցական շենքում տեղավորված բուժկետը աշխատում էր գիշեր-ցերեկ: Ես այստեղ էի ծառայում: Մի օր՝ առավոտյան ժամը 6-ին, սկսվեց ռմբակոծումը: Կարմիր խաչի նշանով դրոշակներն ու պաստառները բարբարոսներին ետ չկանգնեցրին իրենց դիվային մտադրությունից: Փլվեց շենքի ճակատային մասը, փշրվեցին ապակիները և փշուրները թափվեցին մեր դեմքերին, ձեռքերին, պոկվեցին պատուհանների փեղկերը: Սեղանին պառկած վիրավորը, մոռացած իր վերքն ու ցավը, ցած իջնելով, խուճապի չմատնվեց: Իմ ձեռքերն ու դեմքը արյունոտվել էին: Բայց մենք չկորցրինք մեզ, խուճապի չմատնվեցինք: Ծանր վիրավորներին չորս հոգով տեղափոխեցինք շենքի ետևում գտնվող փոսը, օգնեցինք նոր վերքեր ստացած վիրավորներին: Հրեշավոր էր, զարհուրելի ու զայրացուցիչ: Մենք փրկեցինք տասնյակ ու հարյուրավոր վիրավորների»[819]:

---

[819] **Գրիգորյան Ա., Մելքումյան Բ.,** նշվ. աշխ., էջ 166-167:

1944 թվականին Ե. Բուռնազյանը ինքն է վիրավորվել: Բուժվելուց հետո զորացրվել է: 1944-1945 թվականներին աշխատել է Երևանի 1-ին կլինիկական հիվանդանոցում որպես վիրաբույժ-օրդինատոր: 1949-1951 թվականներին եղել է Երևանի շտապօգնության կայանի պետը, 1951 թվականից՝ պրոֆեսոր Ռ. Յոլյանի անվան հիվանդանոցի վիրաբույժ[820]:

1964 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, նույն թվականին արժանացել է «Հայաստանի վաստակավոր բժշկի» կոչման:

Պարգևատրվել է «Ռազմի» և «Խաղաղ օրերի» շքանշաններով ու մեդալներով:

[820] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 162:

ՍՕՍԷ ՎԱՐԴԱՆԵԱՆ
(ՍՕՍԷ ՄԱՅՐԻԿ)
1868-1953

ՕՐ. ՍՐԲՈՒՀԻ ԵԱՆԸԳԵԱՆ
(ԱՍՏՂԻԿ)
1875?-1915

ԾԱՂԻԿ (ՍԱԹԵՆԻԿ
ՄԱՏԻՆԵԱՆ - ԱՐՂՈՒԹԵԱՆ)

ՆՈՒՆԷ ՄԱՅՐԻԿ
(ՔՕԼԵԱՆ)

ՕՐ. ՄԱՐԻԱՄ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ԿԻՎԼՍԻՄԱ ԱԴԱՄՅԱՆ
(Հաճի Գրիգորի տիկինը)

ՄԻՍ ՔՕԼԴ
Գըրտթտի Ամերիկեան
վարժարանի տնօրէնուհին

Խմբապետ Արթին Աղայի կինը՝ ՄԱՐԻԱՄ

Գաղթական



Խմբապետ ՄԱՆՈՒԷԼ ԻՆՃԷԵԱՆ, ՊԵՏՐՈՍ ՊՈՅԱՃԵԱՆ, ՅԱԿՈԲ ԳԱՍՊԱՐԵԱՆ (ետևը), ՏԻՐԱՆ ՏԷՄԻՐՉԵԱՆ (նետ.), ԱԼԵՔՍԱՆ ՀԱՃԻՄԱՆՈՒԿԵԱՆ, ՄԻՍԱՔ ՏԷԻՐՄԷՆՃԵԱՆ (նետ.), ՍԵԴՐԱԿ ԳՈՒԼԱՔՍԸԶԵԱՆ, ՀԱՄԲԱՐ ՏԻԼԱՆԵԱՆ, ՅՈՎՍԷՓ ՉԱՔՐԵԱՆ (նետ.), ԿԻՒԼՊԷՆԿ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ, ՀԱԿՈԲ ՍԱՀԱԿԵԱՆ, ԵԱՂՈՒՊ ՏԻԼԱՆԵԱՆ (նետ.) եւ անզուգական հերոսուհի ԿԻՒԼԻՆԱՐ

Ձախից աջ՝ Հռիփսիմե Ռեջեպյան և Սառա Մաչյան

ՏԻԿ. ԵՍԹԵՐ ՄԱԼԵԱՆ

ՕՐ. ԱԿԻՒԼԻՆԷ ԽԱՆՃԵԱՆ
(Տիկ. Ա. Թաթուլեան)

ՏԻԿԻՆ ՆՈՒԱՐԴ ԹԷԼԵԱՆ
(Տիկ. Սարգիս Մընըշեան)

ՏԻԿԻՆ ԽԱԹՈՒՆ ԳՈՆՏՐԱՃԵԱՆ

ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԵԹ
ՊԱԼԱՊԱՆԵԱՆ
(Գերութեան տարազով)

ՄԱՆՈՒՇԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ
(Ինքնապաշտպանության մասնակից)

ՕՐ. ԽԱՆԸՄ ՔԷԹԷՆՃԵԱՆ

ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԷԹ
ԵՕԹՆԵՂԲԷՐԵԱՆ

ՏԻԿԻՆ ՍՈՒԼԹԱՆ ՍԻՄԵԱՆ

ՏԻԿԻՆ ԻՍԿՈՒՀԻ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՋԱՎԵՆԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆՈՒՆԵ
ՎԼԱԴԻՄԻՐԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՋԱՐՋԱՆԴԻ
Ազատամարտիկ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ
ՍԱՄՎԵԼԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ԱԹԱՅԱՆ ՆՈՒՆԵ
ՅՈՒՐԻԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԷԼԻԱՆՈՐԱ
ՆՈԲԵԼԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԼԻԴԱ
ՍՊԱՐՏԱԿԻ
Բուժքույր

ԲԱԴԱԼՅԱՆ (ՏԵՐՏԵՐՅԱՆ)
ՌԻՏԱ ՍԱՄՎԵԼԻ
Ազատամարտիկ

ԱՂԱՅԱՆ ԷԼՄԻՐԱ
ԱԼԵՔՍԱՆԴՐԻ
Ազատամարտիկ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ
ԱՐՄԵՆԱԿԻ
Ազատամարտիկ

ԱՂԵԿՅԱՆ ԿԱՐԻՆԵ
ՊԱՐՍԱՄԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ԱՄԻՐՅԱՆ ՆԱԶԻԿ
ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
Ազատամարտիկ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
ԱԼԵՔՍԱՆԴՐԻ
Ազատամարտիկ-բժիշկ



ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ
ՍԻՐԱԿԱՆԻ
Ազատամարտիկ

ԱՍՐՅԱՆ ՍՏԱԼԻՆԱ
ԽՈՐԵՆԻ
Ազատամարտիկ

ԱՌՍՏԱՄՅԱՆ ՏԱՆՅԱ
ՍԵՐԳԵՅԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ԲԱԴԱԼՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ
ՄՆԱՑԱԿԱՆԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ԲԴՈՅԱՆ ՀԵՂԻՆԵ
ԼՅՈՒԴՎԻԳԻ
Ազատամարտիկ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԿԱՐԻՆԵ
ՎԼԱԴԻՄԻՐԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ
ՄՈՎՍԵՍԻ
Ազատամարտիկ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԻՐԻՆԱ
ԼԱԶԱՐԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱԼԻՆԱ
ՍՄԲԱՏԻ
Ազատամարտիկ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԿԱՐԻՆԵ
ԱՇՈՏԻ
Ազատամարտիկ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՆԱԻՐԱ
ՌԱՖԱՅԵԼԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ԹԱՌԱՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ
ՄԻՔԱՅԵԼԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԺԵԼԱ
ՀՐԱՆՏԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՋՈՒԽՐԱ
ՄԻՔԱՅԵԼԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՄԵԼՍԻԴԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ
Ազատամարտիկ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՂԻՆԵ
(ՋԵՄՄԱ) ՄԱՐԳԱՐԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՇԱՔՐՈՅԻ
Ազատամարտիկ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՍՄԲԱՏԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱԼՅԱ
ՄԻՔԱՅԵԼԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՂԱՎՆԻ
ԱՂԱՍՈՒ
Ազատամարտիկ-բուժքույր

ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱԻՐԱ
ՎԱՉԳԵՆԻ
Ազատամարտիկ-բուժքույր

ՍԱՅԻՅԱՆ ԷԼԼԱԴԱ
ԱԼԵՔՍԱՆԴՐԻ
Ազատամարտիկ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՓԻԿ
ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
Սոցիալական աշխատանքի
հերոս, ՀԽՍՀ Գերագույն
խորհրդի պատգամավոր

ԱՂԱԶԱՐՅԱՆ ՄՈՆԻԿԱ
ԲԵՐԳԵՅԻ
Երկրորդ աշխարհամարտի
մասնակից

ԱՇՃՅԱՆ ՄԵՐԻ
ՀԱԿՈԲԻ
Երկրորդ աշխարհամարտի
մասնակից

ԱՎԵՏԻՔՅԱՆ ՓԱՌԱՆՁԵՄ
ՎԱՉԳԵՆԻ
Մեծ հայրենականի մասնակից

ԱՐԱՄՅԱՆ ԱՄԻԿ
ՆԻԿՈԼԱՅԻ
Մեծ հայրենականի մասնակից

ԲԱԲԱՅԱՆ ՔՆԱՐԻԿ
ՄԻՔԱՅԵԼԻ
Մեծ հայրենականի մասնակից

ԲՈՒՌՆԱԶՅԱՆ ՀԵՂԻՆԵ
(ԵԼԵՆԱ) ՏԻԳՐԱՆԻ
Սովետա-ֆիննական և Մեծ
հայրենական պատերազմների
մասնակից

ԻԳԻԹԱՆՅԱՆ ԱՇԽԵՆ
ՄԱՐՏԻՆԻ
Մեծ հայրենականի մասնակից

ԻՍՏԱՄԱՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ
(ԼՅՈՒՍՅԱ) ՍԵՐԳԵՅԻ
Մեծ հայրենականի մասնակից

ԿՈՒՄՋՅԱՆ ԷԼԵՆ
ՄՈՒՇԵՂԻ
Մեծ հայրենականի մասնակից

ՍՈՖՅԱ ԵՎ ՌՈՒԶԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ ԼԱԼԱՅԱՆՆԵՐ
Մեծ հայրենականի մասնակիցներ

ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵՐԻ
(ԱԼԲԵՐՏԱՍԻ) ՀԱՐՐԻԻ
Երկրորդ աշխարհամարտի
մասնակից

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԼԻԴԱ
ՍԱՄՍՈՆԻ
Մեծ հայրենականի մասնակից

ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ ԱՐՓԻԿ
ԱՐՍԵՆԻ
Մեծ հայրենականի մասնակից

ՄԱՆՈՒՇՅԱՆ
ՄԵԼԻՆԵ
Ֆրանսիայի ազգային հերոս

ՄԻԼԴՈՆՅԱՆ ԱԳՆԵՍ
(ՍԱՄՄԵԹ) ԱՍԱՏՈՒՐԻ
Երկրորդ աշխարհամարտի
մասնակից

ՄՈՒՐԱԴՅԱՆ (ԱՓԻԿՅԱՆ)
ԿԼԱՐԱ ԽՈՐԵՆԻ
Երկրորդ աշխարհամարտի
մասնակից

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՍՏՂԻԿ
ՋԻՆԱՎՈՐԻ
Մեծ հայրենականի մասնակից

ՉՈԼԱԽՅԱՆ ԹԱՄԱՐԱ
ՎԱՂԱՐՇԱԿԻ
Մեծ հայրենականի մասնակից

ՊԱՊՈՅԱՆ ՇՈՂԱԿԱԹ
ՊԵՏՐՈՍԻ
Մեծ հայրենականի մասնակից

ՊԵԳԼԻՎԱՆՈՎԱ
(ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ) ՄԱՅԱ
ԳԱՍՊԱՐԻ
Մեծ հայրենականի մասնակից

ՌԱԶԳՐԱՏԼՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
ԴԱՆԻԵԼԻ (ՍԱՇԿԱ)
Երկրորդ աշխարհամարտի
մասնակից

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ
ՂԱԶԱՐԻ
Մեծ հայրենականի մասնակից

ՍԻՆՈՅԱՆ ՍՈՆԻԿ ՊԵՏՐՈՍԻ
Մեծ հայրենականի մասնակից

ԻԳԻԹԽԱՆՅԱՆ ԱՇԽԵՆ
ՄԱՐՏԻՆԻ
Մեծ հայրենականի մասնակից

ՍՅՈՒ (ՍԱՐԱՖՅԱՆ)
ՋԵՅԼ ՇՄԱՎՈՆԻ
Երկրորդ աշխարհամարտի
մասնակից

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ
(ՎԱՐԴԱՆՅԱՆ) ԳՈՀԱՐ
ԼԵՎՈՆԻ
Հետախույզ

Աղավնի Վարդապետյան
(Վանի քաղաքամիջի
հերոսուհին)

Սևո
(Այգեստանի 20 տարեկան
հերոսուհի սուրհանդակ)

Սրբո
(Շատախի սուրհանդակ,
12 տարեկան հերոս աղջիկ)

Գևորգ Չաուշի կինը՝
Եղսոն

Մանուկ Հայաստան
Նկար՝ Ա. Ֆէթվաճեանի

Բ. ՀԱՅՈՒՀԻՆԵՐԸ ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Հայ կնոջ միջոցով դարձի և զգաստության հրավիրենք գաղութահայության ազգայնորեն տկարացած տարրերին: Նրա պաշտպանությանն ու գուրգուրանքին հանձնենք մեր մայրենի լեզուն, եռագույնը, անկախության Մայիսը՝ սրբությունները մեր ցեղի.... Մեր որբախնամ ժողովուրդը հրամայաբար պիտի դառնա արիադավան և արիախնամ: Հայ կնոջից սպասենք հոգեբանական այդ հրաշքը:

Գարեգին Նժդեհ[821]

Երկրորդ աշխարհամարտի տարիներին ֆաշիզմի դեմ ծավալված պարտիզանական պայքարում և դիմադրական շարժման մեջ իրենց արժանի ավանդն են ունեցել նաև թշնամու թիկունքում մարտնչող պարտիզանները, որոնց թվում քիչ չէին նաև հայ ժողովրդի զավակները: Միայն Ուկրաինայում և Բելոռուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 200, Ֆրանսիայում՝ 1200, Հունաստանում՝ ավելի քան 1000, Հոլանդիայում՝ շուրջ 800 հայ պարտիզաններ[822]:

Գործել են պարտիզանական մի քանի ջոկատներ, որոնք կազմավորված էին առավելապես հայերից: Այսպես՝ Ուկրաինայում գերմանական զավթիչների դեմ գործող լեգենդար Կովպակի պարտիզանական միավորման կազմում մարտնչել է 100 հոգուց բաղկացած «Հաղթական» ջոկատը՝ Սերգեյ Հարությունյանի հրամանատարությամբ, գենե-

---

[821] **Նժդեհ Գ.**, Ընտիր երկեր, էջ 103:

[822] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 570:

ռալ Նաումովի պարտիզանական միավորման կազմում՝ 250 հայերից բաղկացած՝ «Անաստաս Միկոյանի անվան ջոկատը»՝ Արամայիս Հովսեփյանի հրամանատարությամբ, Բելոռուսիայում՝ «Չապաևի անվան բրիգադը»՝ Խաչիկ Մաթևոսյանի հրամանատարությամբ, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 80 հայերից բաղկացած 41-րդ ջոկատը՝ Արտյոմ Սաղումյանի հրամանատարությամբ, Ղրիմում՝ 10-րդ պարտիզանական ջոկատը՝ Արամ Տերյանի գլխավորությամբ, Կրասնոդարի երկրամասի Արմյանսկի շրջանի «Ստեփան Շահումյանի անվան ջոկատը»՝ Անդրանիկ Մալխասյանի հրամանատարությամբ, Լիտվայում գործող ջոկատը՝ Աշոտ Սարաբյանի, Ֆրանսիայում 2000 խորհրդային ռազմագերիներից կազմված պարտիզանական գունդը՝ Ալեքսանդր Ղազարյանի հրամանատարությամբ, որի կազմում կային ավելի քան 1200 հայեր, Հունաստանում ավելի քան 1000 հայերից կազմավորված «Ազատություն» պարտիզանական ջոկատը՝ Բաբկեն Ներսիսյանի հրամանատարությամբ: Հոլանդիայում շուրջ 800 հայ ռազմագերի լեգեոնականների խմբերն աջակցել են հոլանդական դիմադրական շարժմանը[823]:

Նշված ջոկատների և խմբերի կազմում ընդգրկված են եղել բազմաթիվ խիզախ հայուհիներ, որոնք, գործելով թշնամու թիկունքում, աչքի են ընկել իրենց սխրագործություններով: Նրանք միայն անհրաժեշտ տեղեկություններ են տվել թշնամու զորքի և զինտեխնիկայի գտնվելու վայրերի, զորաշարժերի մասին, այլև հանդուգն հարձակումներով պայթեցրել, շարքից հանել են բազմաթիվ կամուրջներ, վառելանյութով և զինտեխնիկայով բեռնավորված գնացքներ, ավտոմեքենաներ, զրահամեքենաներ, բազմաթիվ օբյեկտներ, հանկարծակի են բերել և մեծ վնաս հասցնելով՝ ոչնչացրել են թշնամու կենդանի ուժեր:

Հայ քաջասիրտ կանայք շատ հաճախ իրենց հերոսական գործունեությամբ դարձել են այդ ջոկատների ու խմբերի ոգին, կանգնելով

[823] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 570:

տղամարդկանց կողքին՝ նրանց քաջալերել են, ոգևորել և մղել են նորանոր սխրանքների: Իրենց խիզախությամբ աչքի են ընկել հայ պարտիզաններից Հենրիկ Զաքարյանը, Վահան Գրիգորյանը, Սմբատ Արզումանյանը, Խաչիկ Մաթևոսյանը, Վահան Աղաջանյանը (բելոռուսահայ), քույր և եղբայր Թամարա և Հայկ Մարտիրոսյանները, Աշոտ Հայրապետյանը (Ղրիմ), Կրասնոդարի «Երիտասարդ գվարդիա» կազմակերպության անդամներ Գեորգի (Ժորա) Հարությունյանցը և Մայա Փեհլիվանյանը (Ուկրաինա), Արտյոմ Պետրոսյանը, Հակոբ Իլիկչյանը, Արթուր Բաբայանը (Չեխոսլովակիա), Հենրիկ Թումանյանը, Սերգեյ Կուսիկյանը, Արարատ Նավոյանը (Լեհաստան), Գևորգ Քոլոզյանը, Մկրտիչ Դաշտոյանը, Սերջիո Դավթյանը, Մխիթար Գրիգորյանը (Իտալիա), Գրիգոր Միրզախանյանը, Անդրանիկ Միրզոյանը, Տիգրան Ալիխանյանը, Հմայակ Բադալյանը (Հոլանդիա), Բարթուղ Պետրոսյանը, Լևոն Տիտանյանը, Ստեփան Յաղջյանը (Ֆրանսիա) և ուրիշներ[824]:

Հազարավոր սփյուռքահայեր ընդգրկված են եղել ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված երկրների դիմադրական շարժման շարքերում: Իրենց անմար սխրագործություններով հռչակվել են Միսակ Մանուշյանը, որը հետմահու արժանացել է «Ֆրանսիայի դիմադրական շարժման հերոսի», իսկ նրա կյանքի և պայքարի ընկերուհի Մելինե Մանուշյանը՝ «Ֆրանսիայի ազգային հերոսի» կոչման: Մանուշյանի խմբին մեծ օգնություն են ցուցաբերել աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրի ծնողները՝ Մամիկոն և Քնար Ազնավուրյանները, քույրը՝ Աիդան, և անձամբ ինքը՝ Շառլ Ազնավուրը:

Հանուն Ֆրանսիայի ազատության իրենց կյանքը զոհել են հայ ժողովրդի անվեհեր զավակներ, քաջասիրտ հայուհիներ Լուիզա (Լաս) և Արփիար Ասլանյանները: Ավելի քան 300 հայորդիներ ընկան Հունաստանի պարտիզանական կռիվներում և դիմադրական պայքարում:

---

[824] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 670:

Նրանց թվում էին Անդրանիկ և Երվանդ Ղուկասյանները, Սիլվեստրո Ղալեյանը և ուրիշներ:

Ամբողջ Բուլղարիայով մեկ հայտնի էր հերոսուհի պարտիզան Սաշկայի (Հերմինե Ռազգրադյան) անունը, որին ֆաշիստները տանջամահ էին արել: Հարավսլավիայում պարտիզանների մեջ հռչակված հերոսներից թվում էին Վարդան Սուքիասյանը (Սուքիասիչ) և ուրիշներ[825]:

Թշնամու թիկունքում գործող պարտիզանական ջոկատներում մարտնչել են հայ ժողովրդի հերոսուհի դուստրերը: Նրանց թվում էր **Մայա Փահլևանյանը (Պեգիվանովան):**

Մայա Պեգիվանովան ծնվել է 1925 թվականի մայիսի 20-ին Ռուսաստանի Ռոստովի մարզի հայկական Թոփթի գյուղում՝ ուսուցիչ Գասպար Գալուշոկյանի ընտանիքում[826]: Չորս տարեկան հասակում աղջիկը զրկվել է հորից: Նրան մեծացրել ու դաստիարակել է մայրը՝ Աննա Վասիլևնան:

Մ. Պեգիվանովան սովորել է Կրասնոդոնի մոտ գտնվող Պերվոմայկա ավանի միջնակարգ դպրոցում: 9-րդ և 10-րդ դասարաններում եղել է դպրոցի կոմերիտական կազմակերպության քարտուղարը:

1942 թվականի հուլիսին, երբ ֆաշիստական բարբարոսները ներխուժել են Վորոշիլովգրադի (Լուգանսկ) մարզի Կրասնոդոն փոքրիկ քաղաքը, տանջանքների ու կախաղանների այդ մղձավանջային օրերին լենինյան կոմերիտմիության Կրասնոդոնի սաները ստեղծել են «Երիտասարդ գվարդիա» ընդհատակյա կազմակերպությունը, որի անունը հռչակվել էր ամբողջ աշխարհում: «Երիտասարդ գվարդիայի» անդամներից 17-ը Պերվոմայկա ավանի դպրոցից էին: Նրանց թվում

---

[825] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 570-571, Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 192:

[826] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 201:

էին հայ ժողովրդի խիզախ զավակներ Մայա Պեգիվանովան և Ժորա Հարությունյանցը[827]:

Մ. Պեգիվանովան «Երիտասարդ գվարդիա» ընդհատակյա կազմակերպության «Հնգյակի» ղեկավար էր, իսկ նշված պաշտոնը վստահում էին միայն ամենահամարձակներին: Նա Ուլյանա Գրոմովայի հետ գրել է հակաֆաշիստական առաջին թռուցիկը և կյանքը վտանգի ենթարկելով՝ այն տարածել է քաղաքում ու շրջակա գյուղերում: Մ. Պեգիվանովան «Երիտասարդ գվարդիա» ընդհատակյա կազմակերպության մեջ է ներգրավել հուսալի ու անձնազոհ շատ երիտասարդների, ակտիվ մասնակցություն է ցուցաբերել համարյա բոլոր գործողություններին:

1943 թվականի հունվարի 11-ին Գեստապոն ձերբակալել է «Երիտասարդ գվարդիայի» անդամներին, ծանր խոշտանգումների է ենթարկել՝ փորձելով գաղտնիքներ կորզել նրանցից, բայց հերոս կոմերիտականները, նրանց թվում՝ Մ. Պեգիվանովան, ոչինչ չեն հայտնել՝ հավատարիմ մնալով իրենց երդմանը: Նրանք հերոսությամբ են տարել բոլոր տանջանքներն ու իրենց կյանքը զոհաբերել հայրենիքի ազատագրության համար[828]:

Մ. Պեգիվանովան զոհվել է 1943 թվականի հունվարի 16-ին Ուկրաինայի Կրասնոդար քաղաքում:

1943 թվականի սեպտեմբերի 13-ին գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղված պայքարում ցուցաբերած խիզախության ու արիության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը Մ. Փահլևանյանին (Պեգիվանովային) հետմահու պարգևատրել է «Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի» և «Հայրենական պատերազմի պարտիզան 1-ին աստիճանի» շքանշաններով[829]:

---

[827] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 201:
[828] Տե՛ս նույն տեղում:
[829] Տե՛ս նույն տեղում:

Սիմֆերոպոլ քաղաքում պարտիզանների պայքարին ակտիվ մասնակցություն է ունեցել ղարաբաղցի Հրանուշ Մխիթարյանը: Չնայած Գեստապոյի հետապնդումներին՝ նա գաղտնի թռուցիկներ է տարածել և պայթուցիկ նյութեր մատակարարել տեղի պարտիզանական ջոկատին: Հ. Մխիթարյանը մասնակցել է պարտիզանական ջոկատի կողմից գերմանական երեք գնացքների և երկաթուղային կամուրջի խորտակման առաջադրանքներին, որը կատարել է հաջողությամբ[830]:

1942 թվականին Հյուսիսային Կովկասի պարտիզանների շարքերում էր ԽՄԿԿ անդամ, կիրովաբադցի Անահիտ Շահնազարյանը: Լեռներում, կիրճերում և դժվարանցանելի անտառներում, ձմռան դաժան պայմաններում, կտրելով հարյուրավոր կիլոմետր տարածություն, Անահիտը կատարել է մարտական շատ առաջադրանքներ: Նա մասնակցել է ճանապարհներն ականապատելու, կամուրջները և ռազմամթերքի պահեստները պայթեցնելու դիվերսիոն գործողություններին[831]:

Բելովկա գետի մոտ կանգնեցված է մի համեստ հուշասյուն՝ հետևյալ մակագրությամբ՝ «18-ամյա կոմերիտուհի **Հասմիկ Լևոնի Բադեյանցը** հերոսաբար ընկավ ֆաշիզմի դեմ մղված մարտերում»[832]: 1943 թվականի սկզբներին, երբ գերմանացիները գրավել էին ծովափնյա Անապա քաղաքը, էսէսական դիվիզիայի հետախուզական ջոկատը շատ հայրենասերների թվում գազազած որոնում էր նաև պարտիզան Հ. Բադեյանցին: Թշնամու բռնազավթած օրերին հայոց հայրենասեր, նվիրյալ դուստրը կապվել է «Մայակ» պարտիզանական ջոկատի հետ: Ջոկատը տեղեկություններ է ստանցել նրա միջոցով: Սակայն էսէսականներին հաջողվել է ձերբակալել կապավոր Հասմիկին: Գեստապոյականները, չկարողանալով որևէ խոսք կորզել նրանից, կտրեցին խի-

---

[830] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 160:
[831] Տե՛ս նույն տեղում:
[832] Տե՛ս նույն տեղում:

զախ պարտիզանի լեզուն՝ ասելով. «Մեզ պետք չէ այս լեզուն, եթե նա ոչինչ չի ասում»[833]:

Մի ամիս անց պարտիզանները ազատեցին Հ. Բադեյանցին: Վրեժով լցված Հասմիկը միացավ պարտիզաններին և արիաբար մարտընչեց վայրագ մարդասպանների դեմ:

Անվախ պարտիզան Հ. Բադեյանցը զոհվել է 1943 թվականի հուլիսին՝ գիշերային ռմբակոծության ժամանակ:

1942 թվականի հուլիսի 25-ին՝ կատաղի կռիվներից հետո, թշնամուն հաջողվել էր գրավել Դոնի Ռոստովը: Հաստատվել էր ֆաշիստական ծանր ռեժիմ[834]: Գեստապոյականները առանց դատ ու դատաստանի հաշվեհարդար էին տեսել խաղաղ բնակչության հետ: Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Չալթըր գյուղի երիտասարդներից գերմանացիները կազմակերպել էին 15-ական մարդուց բաղկացած բրիգադներ և աշխատանքի ուղարկել երկաթուղային կայարան: Նրանք պետք է ավազ բարձեին ապրանքատար վագոնները: Հիտլերականներն ավազն օգտագործել էին ճանապարհները նորոգելու համար: Բրիգադներից մեկում, որի ղեկավարն էր Հայկ Բարաշյանը, որոշել էին դիմել խորամանկության՝ վագոնները ճանապարհելով դատարկ: Նրանք յուրաքանչյուր վագոնի մուտքի մասում մոտ 1.5 մետր բարձրությամբ լցրել էին ավազ՝ ստեղծելով այն տպավորությունը, թե իբր վագոնը լիքն էր: Այդ միջոցով բրիգադը կարողացել էր ճանապարհել երեք էշելոն: Հերթի էին դրել չորրորդը: Թամարա Խարախաշյանը, Իսկուհի Չուվարյանը և Սիրունիկ Խաթլամաջյանը շարունակել էին «լցնել» վագոնները[835]: Գերմանացի ինժեները և աշխղեկը, որոնք մատնությամբ իմացել էին գաղտնիքը, ստուգելով վագոնների բեռնվածությունը՝ մոտեցել էին նրանց վագոնին: Ինժեները հարցրել էր Թամարային՝ արդյոք վագոնը լցված է, և կարելի է այն չափել:

---

[833] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 160:
[834] Տե՛ս նույն տեղում, էջ 161:
[835] Տե՛ս նույն տեղում:

Թ. Խարախաշյանի կտրուկ «այո»-ն կատաղեցրել էր ինժեներին: Նրա ձեռքի շարժումով աշխղեկը ցատկել էր վագոն և ցած գլորել հանդուգն հայուհուն: Ապա հիտլերականը կոպտորեն բռնել էր Թամարայի ձեռքից և ուժով քաշելով դեպի վագոն՝ սեղմել նրան երկաթե դռան նեղ բացվածքում[836]:

Պատերազմի դառնությունները ճաշակած 20-ամյա Թ. Խարախաշյանը Դոնի Ռոստովի ազատագրումից հետո ավարտեց քույրական դասընթացները և որպես սանիտարական հրահանգչուհի՝ կամավոր ծառայեց խորհրդային բանակում: Իր ծառայությունների համար նա պարգևատրվել է մի շարք մեդալներով[837]:

Խորհրդային ռազմագերիների թվում գերմանական համակենտրոնացման ճամբարներում տանջանքների ու խոշտանգումների են ենթարկվել նաև հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ ու հերոսուհի դուստրեր: Նրանց թվում են եղել *Աիդա Ալավերդյանը, Վալենտինա Պապիկյանը, Շուշիկ Ստեփանյանը, Զարիվարդ Դոլուխանյանը* և ուրիշներ[838], որոնք բարձր են պահել խորհրդային քաղաքացու պատիվը, զիվորական երդումը և տուն են վերադարձել բաց ճակատով:

1942 թվականի սեպտեմբերին՝ Ստալինգրադի պաշտպանության ծանր օրերին, թշնամու կողմից գերի վերցվածների մեջ է եղել նաև հեռաչափուհի **Աիդա Ալավերդյանը**:

1943 թվականի փետրվարին 17526 համարի ներքո նրան փոխադրել են Ռավենսբուրգի համակենտրոնացման ճամբար[839]: Սարսափելի ծանր օրեր է ապրել Ա. Ալավերդյանը: Նա աշխատել է Բերտրիբի ֆաբրիկայում: Սաբոտաժի և անորակ արտադրանքի համար կալանավորուհիները ենթարկվել են ծանր խոշտանգումների: Ա. Ալավերդյանը հանդգնել է չկատարել ֆաբրիկատիրոջ պահանջները, ընկերուհինե-

---

[836] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 160:
[837] Տե՛ս նույն տեղում, էջ 162:
[838] Տե՛ս նույն տեղում:
[839] Տե՛ս նույն տեղում:

ին խրախուսել է աշխատել դանդաղ, տալ խոտան արտադրանք: Որքան խստացրել են ճամբարային ռեժիմը, այնքան ռազմագերիները արիացել և համարձակ են դարձել՝ չկորցնելով ազատագրման հույսը:

Ա. Ալավերդյանը կապված է եղել ճամբարում պայքարող հակաֆաշիստ կանանց հետ և գտնվել է նրանց հսկողության տակ: Շուտով նրան տեղափոխել են 32-րդ բարաքը, որը նախատեսված է եղել ավելի վտանգավոր կալանավորների համար: Այստեղ նա ծանոթացել է Գերմանիայի աշխատավոր ժողովրդի առաջնորդ Էռնստ Թելմանի կնոջ՝ Ռոզա Թելմանի հետ, սերտ կապեր է ստեղծել Նաթելա Տատվանիձեի, Օվսաննա Ավագովայի, Վալենտինա Պատիկյանի, Նինա Եֆիմովայի, ինչպես նաև շատ հակաֆաշիստ չեխուհիների, գերմանուհիների, ֆրանսուհիների և ճամբարում տառապող այլ երկրների առաջադեմ կանանց հետ[840]:

Ճամբարում ստեղծվել է ինտերնացիոնալ կոմունիստական օղակ, որի ոգին ձևավորել են Եվգենիա Լազարևնա Կլիման (Օդեսայից, պատմության ուսուցիչ), Վերա Ուդովենկոն և ուրիշներ:

Կոմունիստական օղակի շուրջը համախմբվել են հարյուրավոր կալանավորներ: Նրանց թվում են եղել նաև Կովկասի դուստրերը՝ Քեթո Խոմերկինը, Աիդա Ալավերդյանը, Լիդա Նազարովան, Կլավա Դենիսովան և ուրիշներ[841]:

Կոմունիստական օղակի յուրաքանչյուր անդամի պարտականությունն էր բարձր պահել խորհրդային հայրենասիրության ոգին, կալանավորների շրջանում կազմակերպել սաբոտաժ, բուժօգնություն ցույց տալ և խնամել վիրավոր ու հիվանդ կալանավորներին: Օղակը գրել և տարածել է թռուցիկներ, նշել տոնական բոլոր օրերը:

Տիրապետելով ֆրանսերենին՝ Ա. Ալավերդյանը ռուսերեն է թարգմանել լյուքսեմբուրգցի Լիլիի՝ ռուս կանանց նվիրված բանաստեղծությունը: Ա. Ալավերդյանը երկու տարի և երկու ամիս տանջանքներով լի

---

[840] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 163:
[841] Տե՛ս նույն տեղում:

օրեր է ապրել Ռավենսբուրգի համակենտրոնացման ճամբարի զնդաններում: 1945 թվականի ապրիլի 30-ին սովետական զորքերը ազատագրել են Ռավենսբուրգի համակենտրոնացման ճամբարի գերիներին, այդ թվում՝ Ա. Ալավերդյանին: Նա աշխատել է Աստրախանում[842]:

1941 թվականի հունիսին մեր հայրենիքի համար ստեղծված վտանգավոր օրերին Լեռնային Ղարաբաղից ընկերուհիներ **Շուշիկ Ստեփանյանը** և **Զարիվարդ Դոլուխանյանը** մեկնել են ռազմաճակատ՝ պաշտպանելու հայրենիքը: Մարտական ծանր պայմաններում հայ ժողովրդի քաջարի դուստրերը, արհամարհելով մահը, առաջին օգնություն են ցույց տվել վիրավոր ռազմիկներին՝ նրանց փոխադրելով սանիտարական կայաններ:

Սևաստոպոլի տակ հրետանային դիվիզիոնը ընկել է շրջապատման մեջ: Թշնամու օղակից ազատվելու և զորամասերին միանալու միակ ելքը եղել է դեպի ծով տանող ներքնախորշը, որը ուժեղ ռմբակոծվել է թշնամու կողմից: Ծանր դրություն է ստեղծվել ներքնախորշում գտնվող նավաստիների համար. չկար ջուր, վիրակապ, սննդամթերք: Վիրավորների թիվը մեծ էր, իսկ օգնությունը՝ քիչ: Չնայած Շուշիկ Ստեփանյանը նույնպես վիրավորվել է, բայց կարողացել է մեկ վիրավորից անցնել մյուսին, սպեղանի դնել նրանց վերքերին: Շ. Ստեփանյանը զոհված մարտիկների մոտից հավաքել է փամփուշտները և հասցրել կռվող մարտիկներին: Մի քանի օր անց նավաստիները որոշել են մեկ-մեկ, սողեսող դուրս գալ ներքնախորշից: Այն պահին, երբ Շ. Ստեփանյանը ձորով գետնասող դուրս է եկել, գերմանացիները գերել են նրան: Քաջարի հայուհուն ծաղր ու ծանակի են ենթարկել, տանջել են Սևաստոպոլի, Սիմֆերոպոլի բանտերում, Շեպետոցկայի ճամբարում, ապա հարկադրական աշխատանքի ուղարկել Գերմանիա[843]:

Մի այլ մարտում գերվել էր Զարիվարդ Դոլուխանյանը: Շ. Ստեփանյանը և Զ. Դոլուխանյանը Գերմանիայում հանդիպել են իրար:

---

[842] **Саркисов А.,** Победившая смерть, см. «Девушки в погонах», Москва, 1964, с. 42-50.
[843] **Սարկիսովա Ա.,** նշվ. աշխ., էջ 164:

Ընկերուհիները Նոյրուպեն քաղաքի հիվանդանոցում աշխատել են որպես հավաքարարուհիներ[844]:

1945 թվականի փետրվարին մեր ռազմաճակատներից մեկի հրամանատարության հատուկ առաջադրանքով Նոյրուպենի մոտ վայրէջք են կատարել խորհրդային հետախույզներ Վաղարշակ Առաքելյանը և Անտոնինա Իվանովան (ռադիստ)[845]: Նրանք կապվել են Շուշիկի և Զարիվարդի հետ, որոնք ռադիստուհուն տեղավորել են իրենց նկուղում և քողարկել նրա աշխատանքը: Փոքր նկուղից խորհրդային հայրենիք են հաղորդվել կարևոր տեղեկություններ թշնամու զորքերի տեղաշարժերի, կուտակումների, ռազմական օբյեկտների և այլնի մասին: Գերության մեջ գտնվող երկու հայ կանայք, վտանգի ենթարկելով իրենց կյանքը, օգնել են Կարմիր բանակին: Զորացրվելուց հետո Շ. Ստեփանյանը աշխատել է Երևանում, իսկ Զ. Դոլուխանյանը՝ Գրոզնիում[846]:

Դաշտային փոստում է ծառայել **Սիրուշ Մաճկալյանը**: Նա ծնվել է Շամշադինի շրջանի Թովուզ գյուղում: Ս. Մաճկալյանը զբաղվել է մարտիկների նամակները ժամանակին առաքելու գործով, նաև հարկ եղած դեպքում զենքով մասնակցել է թշնամու ջախջախմանը[847]:

Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետն ավարտելուց հետո Ս. Մաճկալյանը Երևանում աշխատել է որպես կոմերիտմիության շրջանային կոմիտեի քարտուղար, ապա՝ ֆաբգործուսներից մեկում որպես դիրեկտորի տեղակալ: Կոմունիստ Ս. Մաճկալյանը ռազմաճակատ է մեկնել հայրենիքի առաջին իսկ կանչով: Հարազատներին ուղարկել է տասնյակ նամակներ, որոնք փաստել են ռազմաճակատային առօրյայի և խորհրդային զորքերի հաղթանակների մասին: «Հետևեցեք մեր հաջողություններին,– գրել է

---

[844] **Սարկիսովա Ա.,** նշվ. աշխ., էջ 164:
[845] Տե՛ս նույն տեղում:
[846] Տե՛ս նույն տեղում, էջ 165:
[847] Տե՛ս նույն տեղում:

նա 1943 թվականի հունվարի 18-ին, իր բարեկամներ Լուսյա և Աշոտ Օհանյաններին,– և տրամադրություններդ բարձրացրեք: Շուտով, շատ շուտով այդ սրիկաներին կքշենք մոր հողից, այս վերջին օրերին արդեն ճղում են այնպես, ինչպես վախկոտ նապաստակները՝ «հաջող» որսկանի առջևից: …Փափագում ենք հասնել Բեռլին»[848]:

Ս. Մաճկալյանը մասնակցել է խորհրդային շատ քաղաքների ու բնակավայրերի, դրանց թվում՝ Ռոստովի ազատագրմանը: Այդ կապակցությամբ նա գրել է. «Ռոստովն արդեն մերն է, ուրախությանս չափ ու սահման չկա»[849]:

Նամակները վկայում են, որ Ս. Մաճկալյանը գործել է տարբեր ռազմաճակատներում՝ Հյուսիսային Կովկասում, Վորոնեժի մարզում, Խարկովի ուղղությամբ և այլուր:

1943 թվականի օգոստոսի 11-ի նամակում Ս. Մաճկալյանը գրել է. «Մերոնք կռվի մեջ են, թեժ կռիվներ են գնում հօգուտ մեզ: Կարճ ժամանակի ընթացքում շատ և շատ հայեր, մայրեր, քույրեր, եղբայրներ և ամուսիններ կուրախանան»[850]:

Սակայն Ս. Մաճկալյանը չտեսավ այդ ուրախությունը, խորհրդային ժողովրդի վերջնական հաղթանակը, քանի որ զոհվեց 1943 թվականի օգոստոսի 27-ին:

Գրեթե 3 տարի լեյտենանտ Հայկ Մարտիրոսյանը և նրա կապավորը՝ 15-ամյա հերոսուհի քույրը, աշխատել են Թեոդոսիայի գերմանական պարետի մոտ որպես թարգմանիչ: Նրանք խորհրդային հրամանատարության համար հույժ կարևոր տեղեկություններ են հայթայթել թշնամու զորքերի տեղաբաշխման, տեղաշարժի, սպառազինության վերաբերյալ, զենք ու զինամթերք մատակարարել պարտիզաններին, գերության ճիրաններից ազատել ռազմագերիներին:

---

[848] **Սարկիսովա Ա.,** նշվ. աշխ., էջ 165:
[849] Տե՛ս նույն տեղում:
[850] Տե՛ս նույն տեղում, էջ 166:

1944 թվականին նրանք ձերբակալվել են, դաժան կտտանքների ենթարկվելուց հետո՝ գնդակահարվել[851]: Նման հերոսական դրվագները եզակի չէին: Թշնամու թիկունքում անձնազոհ ու արիասիրտ պայքարի, մարտական առաջադրանքը կատարելու համար սեփական կյանքի գիտակցված զոհաբերման ուսանելի օրինակներ են թողել բազմաթիվ հայ պարտիզաններ ու հետախույզներ:

Ժամանակի ընթացքում հետախույզների անվախ ու գործունեության թեկուզ և մասնակի գաղտնազերծումը հնարավորություն է տվել ճանաչելու լեյտենանտ Հայկ Հովակիմյանին, գեներալ-մայորներ Իվան Աղայանցին, Միքայել Ալավերդովին, Վյաչեսլավ Կևորկովին, գնդապետներ Աշոտ Հակոբյանին, Գերասիմ Բալասանովին, Վյաչեսլավ Գուրգենովին: Խորհրդային Միության հերոս Գևորգ և Գոհար Վարդանյանների փայլուն աշխատանքի շնորհիվ բացահայտվել է 1943 թվականի Թեհրանի կոնֆերանսում Ստալինի, Ռուզվելտի և Չերչիլի դեմ նախապատրաստվող մահափորձը[852]:

Գոհար Փահլևանյանը ծնվել է 1926 թվականի հունվարի 25-ին Լենինականում (Գյումրի): 1932 թվականի ծնողների հետ տեղափոխվել է Իրան: Երեք տարի սովորել է հայկական դպրոցում, ապա ավարտել է 12-ամյա պարսկական դպրոցը[853]:

1941 թվականին Թեհրանում ծանոթացել է ապագա ամուսնու՝ Գևորգ Վարդանյանի հետ: Ինքը ռուսերեն չգիտեր, իսկ Գևորգը՝ հայերեն: Խոսել է պարսկերեն: 1942 թվականին Գ. Վարդանյանը նրան ներքաշել է իր ղեկավարած «Թեթև հեծելազոր» խմբակը, որը կապված էր խորհրդային հետախուզության ռեզիդենցիայի հետ, նաև զբաղվում էր գերմանացի լրտեսների որոնման աշխատանքներով: 16-ամյա Գ. Փահլևանյանը կարողացել է կասեցնել Բաքվից Իրան թռած խորհրդային երկու օդաչուների՝ գերմանացիների կողմ անցնելը:

---

[851] Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, էջ 51:
[852] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 579:
[853] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 214:

1943 թվականի աշնանը Գ. Փահլևանյանը մասնակցել է Թեհրանի կոնֆերանսին մասնակցող «Մեծ եռյակի» ղեկավարների անվտանգությունն ապահովող օպերատիվ միջոցառումներին, ինչպես նաև Իրանում «Աբվերի» հետախուզական ցանցի լրտեսների հայտնաբերման և չեզոքացման գործողություններին[854]:

1946 թվականին Գևորգ Վարդանյանը և Գոհար Փահլևանյանն ամուսնացել են: Ընդհանուր հաշվով նրանք «ամուսնացել են» երեք անգամ, որից երկուսը՝ «համաձայն լեգենդի»: Անլեգալ պայմաններում ամուսիններն աշխատել են շուրջ 45 տարի:

1951 թվականին նրանք ժամանակավորապես վերադարձել են Երևան և ավարտել Օտար լեզուների ինստիտուտը:

Եվ երբ ԽՍՀՄ ղեկավարը ծանոթացրել է գնդապետ Վարդանյանին «Խորհրդային Միության հերոսի» կոչում շնորհելու համար ներկայացված փաստաթղթերին, զարմացած հարցրել է. «Ինչպե՞ս: Եվ այս ամենը նա մենա՞կ է արել»: «Ինչո՞ւ մենակ,– պատասխանել է ՊԱԿ-ի նախագահը,– կնոջ հետ»[855]:

Երկար տարիներ Գ. Վարդանյանն ապրել և գործել է աշխարհի տարբեր երկրներում: Այսպես՝ մի քանի տարի ամուսիններն աշխատել են Իտալիայում՝ հետևելով ՆԱՏՕ-ի հարավային հենակետերին: Իրենց վերջին արտասահմանյան գործուղումից Վարդանյան ամուսինները հայրենիք են վերադարձել 1986 թվականի աշնանը, որից մի քանի օր անց Գ. Փահլևանյանն անցել է կենսաթոշակի:

1984 թվականին ՊԱԿ-ի պատվավոր աշխատակից հայուհին պարգևատրվել է «Կարմիր դրոշի» շքանշանով, որը, երևի, նրա միակ մարտական բարձր պարգևն է եղել: Անվանի հետախույզն այդպես էլ ողջ կյանքում մնաց առանց զինվորական կոչման:

Գ. Փահլևանյանը Անդրեյ Պերվոզվաննու անվան միջազգային՝ «Հավատի և նվիրվածության համար» մրցանակի (2006) դափնեկիր է:

---

[854] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 214:
[855] Տե՛ս նույն տեղում:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում իր ծանրակշիռ ավանդը ներդրեց սփյուռքահայությունը: Պատերազմի տարիներին նրա ճնշող մեծամասնությունը կողմնորոշվեց դեպի մայր հայրենիքը, ակտիվորեն մասնակցեց թշնամու դեմ պարտիզանական պայքարին, համախմբվեց ազգային ճակատի բազմաթիվ կազմակերպությունների մեջ, ստեղծեց մի շարք առաջադեմ կազմակերպություններ ու ընկերություններ: Աշխարհասփյուռ հայությունը, որի ընդհանուր թիվը աշխարհում շուրջ 2 մլն էր այդ տարիներին, տարբեր գաղթօջախներում միավորվեց ազգային հակաֆաշիստական ճակատներում[856]:

Ազգային ճակատներ ու միություններ ստեղծվեցին գրեթե բոլոր հայաշատ երկրներում՝ ԱՄՆ-ում՝ Ամերիկահայերի ազգային խորհուրդն ու Հայկական առաջադիմական լիգան, Ֆրանսիայում՝ Ֆրանսահայերի ազգային ճակատը, Սիրիայում և Լիբանանում՝ Հայ ազգային խորհուրդը, Բուլղարիայում՝ Հայրենական ճակատը, Հունաստանում՝ Ժողովրդաազատագրական ճակատը և այլն, որոնց նպատակն էր այդ օրհասական պահին զորավիգ լինել մայր հայրենիքին և բարոյական ու նյութական օժանդակություն ցուցաբերել ֆաշիզմի դեմ մարտնչող հայ ժողովրդին[857]:

Սփյուռքահայերը ոչ միայն բարոյապես պաշտպանեցին մայր հայրենիքը, այլև նյութական օժանդակություն ցույց տվեցին Կարմիր բանակին: Պատերազմի ընթացքում պարբերաբար հանգանակություններ կատարվեցին տարբեր գաղթօջախներում՝ Հայաստան դեղորայք, հագուստ, մթերք, ինչպես նաև սպառազինություն ուղարկելու համար: 1943 թվականին Հայ առաքելական եկեղեցու, մասնավորապես Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանի նախաձեռնությամբ աշխարհասփյուռ հայությունը հանգանակություն կատարեց՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն ստեղծելու համար: Այս հանգանակությունը, որի առաջին մուծումը կատարեց

---

[856] Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, Երևան, 2005, էջ 55:
[857] Տե՛ս նույն տեղում:

Սուրբ Էջմիածինը, մեծ խանդավառություն առաջադրեց բոլոր երկրների հայերի մեջ:

Տանկային շարասյունը շահագործման հանձնվեց 1944 թվականի սկզբին և անմիջապես ուղարկվեց ճակատային գիծ՝ համալրելով Հովհաննես Բաղրամյանի գլխավորությամբ գործող Մերձբալթյան 1-ին ռազմաճակատի սպառազինությունը: Հանգանակություն կատարվեց նաև տանկային երկրորդ՝ «Գեներալ Բաղրամյան» շարասյան համար, ինչը, սակայն, ընդհատվեց պատերազմի հաղթական ավարտի պատճառով:

Սփյուռքահայ բազմաթիվ արիասիրտ հայուհիներ մասնակցել են ֆաշիստների կողմից Եվրոպայի գրավյալ երկրներում սկիզբ առած դիմադրական շարժմանը: Ֆրանսիայում հակաֆաշիստական ընդհատակյա պայքարի աննկուն մարտիկ Միսակ Մանուշյանի նախաձեռնությամբ Փարիզի շրջանում կազմակերպված ընդհատակյա ջոկատների՝ «Ստալինգրադ», «Վիկտոր Հյոգո», «Ազատություն», «Զապաև» անդամների մեծամասնությունը հայեր էին: Նրանց մեջ էին նաև արիասիրտ, համարձակ ու խիզախ հայուհիներ Արփիար և Լուիզա (Լաս) Ասլանյանները, Միսակ Մանուշյանի կյանքի և պայքարի ընկերուհին՝ քաջ հայուհի Մելինե Մանուշյանը և ուրիշներ[858]:

Արփիար և Լուիզա Ասլանյանները ծնվել և մեծացել են Թեհրանում: Նրանք ավարտել են Թավրիզի Կենտրոնական վարժարանը: Լուիզան (Լաս) ուսումը շարունակել է Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, 1923 թվականին Փարիզում հետևել է Սորբոնի համալսարանի գրականության դասընթացներին: Նա գրող էր, հասարակական գործիչ, 1936 թվականից դարձել էր Ֆրանսիայի կոմկուսի անդամ[859]:

Փարիզի և Սփյուռքի պարբերականներում տպագրվել են նրա պատմվածքները, հեքիաթներն ու բանաստեղծությունները: Դեռևս 1936 թվականին Փարիզում հրատարակվել է «Հարցականի ուղինե-

---

[858] Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, էջ 24:
[859] Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 2, Երևան, 1995, էջ 401:

ռով» վեպը, որտեղ նա պատկերել է ֆրանսահայերի կյանքը՝ նրանց փրկությունը տեսնելով հայրենադարձության մեջ: Քրոջ՝ Արփիարի հետ միասին, որը տեղափոխվել էր Թեհրանից Փարիզ, պատերազմի հենց սկզբից մարտնչել է ֆաշիզմի դեմ դիմադրական շարժման շարքերում՝ Միսակ Մանուշյանի խմբում: Ձերբակալումից հետո նրան տեղափոխել են Գերմանիա՝ ֆաշիստական համակենտրոնացման ճամբար, որտեղ էլ 1945 թվականին կնքել է իր մահկանացուն[860]:

Միսակ Մանուշյանի գլխավորությամբ դիմադրական շարժման ընդհատակյա մարտիկները, նրանց թվում՝ հերոսուհի հայուհիներ Արփիար ու Լուիզա (Լաս) Ասլանյանները և Մելինե Մանուշյանը, միայն 1943 թվականին իրականացրել են մոտ 60 գործողություն, հարձակումներ ֆաշիստական զորքերի, զորանոցների, ավտոշարասյունների, գնացքների, ռազմական այլ օբյեկտների վրա: Նրանց ջանքերով կազմակերպվել է նաև Փարիզի պարետ, գեներալ ֆոն Շաումբուրգի սպանությունը[861]:

1943 թվականի նոյեմբերին Գեստապոն մատնությամբ ձերբակալել է Մ. Մանուշյանին և նրա 23 պարտիզան զինակիցներին, այդ թվով վերոնշյալ քաջասիրտ հայուհիներին: 1944 թվականի փետրվարին նրանց մեծ մասին Մ. Մանուշյանի հետ միասին մահապատժի են ենթարկել, մյուս մասին տեղափոխել են համակենտրոնացման ճամբարներ: Նրանցից Մելինեին՝ Մ. Մանուշյանի կնոջը, հաջողվել է մինչև 1944 թվականի փետրվարի 21-ը փախչել բանտից: Կնոջը՝ Մելինեին ուղղված նամակում Մ. Մանուշյանը իր գնդակահարության օրը գրել է. «Ես մտել էի ազատագրության բանակ որպես կամավոր զինվոր և մեռնում եմ երկու մատ հեռու հաղթանակից ու նպատակից: Երջանկություն նրանց, ովքեր պիտի ապրեն մեզնից հետո և պիտի վայելեն վաղվա խաղաղության ու ազատության քաղցրությունը»[862]:

---

[860] Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 2, էջ 401:
[861] Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, էջ 54:
[862] Տե՛ս նույն տեղում:

Ֆրանսիայի ազգային հերոս, քաջասիրտ հերոսուհի **Մելինե Մանուշյանը** դիմադրական շարժման մեջ աչքի է ընկել իր սխրագործություններով: Նա ծնվել է 1913 թվականին Կոստանդնուպոլսում (Թուրքիա)՝ Ասատրյանների ընտանիքում[863]:

1915 թվականի Մեծ եղեռնի տարիներին չորս տարեկան հասակում կորցրել է ծնողներին և հայտնվել մանկատանը, իսկ 1922 թվականին տեղափոխվել է Հունաստան: Հետագայում նա դառնությամբ է հիշել մանկատանը անցկացրած սոված ու դաժան օրերը:

1926 թվականին մանկատունը տեղափոխվել է Մարսել (Ֆրանսիա), որտեղ Մ. Մանուշյանը սովորել է հայ բարեգործների հիմնած Դպրոցասեր տիկնանց վարժարանում: Դպրոցն ավարտելուց հետո նա բնակարան է վարձել Փարիզի այն թաղամասերից մեկում, որտեղ բնակվել է նրա կյանքի ու պայքարի ապագա ընկերոջ՝ ֆաշիզմի օրերին պարտիզանական ինտերնացիոնալ ջոկատի հրամանատար Միսաք Մանուշյանի ընտանիքը:

1932 թվականից Մելինե Մանուշյանը մասնակցել է ՀՕԿ-ի աշխատանքներին[864]:

1938 թվականին, երբ հիմնադրվել է «Ֆրանսահայ ժողովրդական միությունը», Մ. Մանուշյանը դարձել է միության կենտրոնական վարչության անդամ և միաժամանակ կատարել է կազմակերպության քարտուղարի պարտականությունները: 1939 թվականին սկսվել է Երկրորդ համաշխարհային պատերազմը: Գերմանաֆաշիստական զորքերը օկուպացրել են Փարիզը: Այդ ժամանակվանից խիզախ հայուհին ֆրանսահայ կոմունիստների հետ անցել է ընդհատակյա գործունեության: Նրան նշանակել են գաղտնի գրականություն տարածող պատասխանատու աշխատող, և նա Փարիզի շենքերի պատերին հակաֆաշիստական ազդագրեր, թռուցիկներ, կոչեր է փակցրել:

---

[863] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 192:
[864] Տե՛ս նույն տեղում:

1943 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին գերմանացիները ձերբակալել են 23 պարտիզանների, նրանց թվում՝ նաև Մելինե և Միսաք Մանուշյաններին, և գնդակահարության դատավճիռ կայացրել[865]: Մինչև դատավճիռն իրականացնելու օրը՝ 1944 թվականի փետրվարի 21-ը, Մելինեին հաջողվել է փախչել բանտից: Մի քանի շաբաթ անց, երբ Ֆրանսիայում տոնել են հաղթանակը, Մ. Մանուշյանը միացել է խորհրդային զորքերին և շարունակել պայքարը գերմանաֆաշիստական հրոսակների դեմ:

Մ. Մանուշյանը մահացել է 1989 թվականի դեկտեմբերի 6-ին Փարիզում:

Ֆաշիզմի դեմ ընդհատակյա պայքարում բազմաթիվ զոհեր են տվել նաև բուլղարահայերը: Մի խումբ բուլղարահայ ռազմիկներ այսպես են բնորոշել իրենց համար պայքարի նշանակությունը. «Մենք, կռվելով մեր երկրորդ հայրենիքի՝ Պուլկարիայի համար, կռված եղանք նաև մեր սիրելի Խորհրդային Հայաստանի համար: Նմանապես բոլորը՝ ազատամիտ մարդկության նպատակը իրականացնելու համար, որը ամեն ջանք կը թափե օր առաջ ոչնչացնելու համար այն գազանը, որը 6-7 տարիներ ի վեր մարդկության արյունը կծծե: Անկցի ֆաշիզմը: Կեցցե' ազատությունը»[866]:

Բուլղարիայի Ստաս-Բլանիայի շրջանում գործող «Չավդար» պարտիզանական ջոկատի անդամ էր 18-ամյա խիզախ հայուհի **Հերմինե Ռազգրատլյանը (Սաշկան):** Վերջինս ավելի քանի 2 տարի հերոսաբար պայքարել է զավթիչների դեմ: Նա աչքի է ընկել բազմաթիվ համարձակ սխրագործություններով:

Արիասիրտ հերոսուհի Հ. Ռազգրատլյանը (Սաշկան) ծնվել է 1926 թվականի մայիսի 15-ին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում՝ բուլղարահայ ուսուցչի ընտանիքում[867]:

---

[865] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 192:
[866] Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, էջ 55:
[867] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 204:

Նախնական կրթությունը ստացել է Բուլղարիայում: Քաջատեղյակ է եղել իր ժողովրդի ազատագրական պայքարի դրվագներին, ոգեշնչվել է Վարդան Մամիկոնյանի, Այծեմնիկի, Անդրանիկի կերպարներով, կարդացել Աբովյանի, Նալբանդյանի, Ռաֆֆու, Ալիշանի, Պատկանյանի, Պեշիկթաշլյանի հայրենաշունչ ստեղծագործությունները: Նա ծանր էր ապրում հայ ժողովրդի 1915 թվականի Մեծ եղեռնը, որի մասին պատմել էին ծնողները: Նրա վրա ցնցող տպավորություն է թողել Յավորովի «Հայերը» բանաստեղծությունը: Սոֆիայում վերջինիս արձանի բացման արարողությանը նա կատարել է «Մայր Արաքսի ափերով» երգը[868]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1942 թվականից, Հ. Ռազգրատլյանը անդամագրվել է բուլղարական դիմադրության գաղտնի կազմակերպություններին, ծավալել ընդհատակյա գործունեություն, զենքը ձեռքին՝ մարտնչել գերմանական ֆաշիստների դեմ:

1943 թվականին անդամագրվել է Թոդոր Ժիվկովի և Դոբրի Ջուրովի ղեկավարած «Չավդար» պարտիզանական ջոկատին: Եղել է գնդացրային անձնակազմի ավագ, մասնակցել մի շարք մարտերի, աչքի է ընկել քաջությամբ ու հերոսությամբ:

Ֆաշիստների դեմ մղված պայքարում մտերմական հարաբերություններ են ստեղծվել Հ. Ռազգրատլյանի և պարտիզանական ջոկատի առաջին գումարտակի հրամանատար Ստոմեն Կոստովի (Լենկո) միջև, և նրանք ամուսնացել են:

1944 թվականի ապրիլի 10-ին Բուլղարիայի Լյուտյակովսկի Բահիր բնակավայրի մոտ ֆաշիստ բարբարոսները Հ. Ռազգրատլյանին գազանային խոշտանգումների ենթարկելուց հետո կիսամեռ վիճակում թաղել են[869]:

---

[868] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 204:
[869] Տե՛ս նույն տեղում:

Բուլղար ժողովուրդը բարձր է գնահատել Սաշկայի սխրագործությունները: Նրա մասին գովեստի խոսքեր են ասել հետագայում Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության պաշտպանության նախարար Դոբրի Ջուրովը, Սաշկայի զինակից Վասիլ Լակովը: Նրա մարտական ընկեր և պոետ Վեսելին Անդրեևը գրել է «Սաշկա» բանաստեղծությունը, որը զետեղված է Բուլղարիայի դպրոցներում դասավանդվող քրեստոմատիայում: Նրա մասին վիպակ է հրատարակել գրող Ստեփան Կուրտիկյանը, որը լույս է տեսել հայերեն և ռուսերեն: Սոֆիայից ոչ հեռու՝ «Զավդար» պարտիզանական ջոկատի թանգարանում, դրված է բուլղար քանդակագործ Դուգանովի ստեղծած Սաշկայի կիսանդրին[870]:

Հարավսլավիայում մարտնչած հարյուրավոր հայ ընդհատակյա մարտիկներից էր խիզախ հերոսուհի **Վարդուշ Սուքիասյանը** (Սուքիասիչ): Ամբողջ երկում հռչակվել էր անվեհեր հայուհու անունը: Նա Հարավսլավիայի իր ծննդավայրում՝ Վալիկո-Կրագիշտե գյուղում, ստեղծել էր հակաֆաշիստական խմբակ, որի բացահայտումից հետո արիասիրտ հայուհին բարձրացել էր լեռները և միացել սերբ պարտիզաններին[871]:

Վ. Սուքիասյանը աչքի է ընկել խիզախ մարտական սխրագործություններով: Համարձակ հերոսուհին մի քանի անգամ ձերբակալվել է, սակայն կարողացել է փախչել ֆաշիստական որջերից և շարունակել պայքարը: Վերջին անգամ, երբ Գեստապոն արդեն պատրաստվել է գնդակահարել նրան, պարտիզանական ջոկատի հրամանատարը, ծպտված գեստապոյականի համազգեստով, հարցաքննության տանելու պատրվակով մտել է բանտ և ազատել նրան[872]:

Դիմադրունակ շարժման մասնակից սփյուռքահայ արիասիրտ հերոսուհիներից շատերը խորհրդային բանակի և դաշնակիցների հետ

---

[870] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 204:
[871] Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, էջ 55:
[872] Տե՛ս նույն տեղում:

միասին ազատագրել են իրենց երկրները ֆաշիզմի լծից և հաղթանակի փառքով պսակել իրենց անունը:

* * *

Հազարավոր սփյուռքահայեր, այդ թվում՝ խիզախ հայուհիներ, ֆաշիզմի դեմ պայքարել են ոչ միայն պարտիզանական-դիմադրական շարժման շարքերում, այլև զենքը ձեռքերին՝ դաշնակից երկրների բանակներում:

Միայն ԱՄՆ բանակում մարտնչել են շուրջ 20 հազար հայորդիներ[873]: Նրանցից լեյտենանտ Երվանդ Դերվիշյանն արժանացել է ԱՄՆ հերոսի «Կոնգրեսի պատվո մեդալ» շքանշանի, որով պատերազմի տարիներին ԱՄՆ բանակում պարգևատրվել է ընդամենը 87 մարդ:

Ամերիկյան ռազմաօդային ուժերի խիզախ օդաչուներից էին Չարլզ Տերտերյանը, ՀՀ ազգային հերոս Քըրք Քըրքորյանը, Սեմ Պարսամյանը, Թնդրյու Կոշտոյանը (զոհվել է Անգլիայում), Ջերարդ Գևորգյանը, Ժիրայր, Հայկ և Արծվիկ Կատարյան եղբայրները և շատ ուրիշներ[874]:

ԱՄՆ բանակի գեներալներ դարձան Ջորջ Մարտիկյանը և Հայկ Շեքերջյանը, սիրիական բանակում՝ գեներալ-լեյտենանտ Արամ Կարամանուկյանը, Բուլղարիայում՝ Գաբրիել Գաբրիելյանը: Շուրջ 30 հազար հայեր կային Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բանակներում, որոնց մի զգալի մասը զորակոչված էր Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և այլ երկրներից:

Անգլիայի և Ֆրանսիայի երկնակամարում են հերոսացել ռազմական օդաչուներ Նոյել, Ջեկ և Լևոն Աղազարյան եղբայրները: Նրանցից առաջինը զոհվել է Անգլիայում, իսկ երկրորդը՝ Ֆրանսիայում կատարած մարտական թռիչքների ժամանակ: Նրանց քույրը՝ Մոնիկ Աղա-

---

[873] Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, էջ 55:
[874] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 571:

զարյանը, պատերազմի ժամանակ եղել է ռազմական օդանավակայանի պատասխանատու ծառայող[875]:

Խիզախ հայուհի **Մոնիկ Աղազարյանը** ծնվել է 1920 թվականի ապրիլի 17-ին Անգլիայի Սուրեյ քաղաքում: Հաճախել է Ռոյհամփթոնի Սուրբ սիրտ մենաստանի դպրոցը, այնուհետև ուսումը շարունակել է Փարիզում: Երկրորդ աշխարհամարտի (1939-1945) առաջին տարիներին Վիկտորյա թագուհու հոսպիտալում օգնել է Արչիբալդ Մաքինտոշին՝ խնամելով վիրավորներին[876]:

Մանկուց Մ. Աղազարյանը երազել է օդաչու դառնալ, ինչպես իր եղբայրները: Նա երազանքն իրականացել է 1943 թվականին սեպտեմբերին, երբ նրան վստահել են թռչել «Սփիթֆայր», «Մուստանգ», «Հոուքըր Թայֆուն» ինքնաթիռներով: Այնուհետև նա ծառայության է անցել Ավիացիոն տրանսպորտի (այժմ՝ Օդային տրանսպորտի օժանդակության կորպորացիա) աջակցության (Air Transport Auxiliary, ATA) կենտրոնում, որը, հետագայում զարգանալով, վերաճել է ահռելի ավիաընկերության[877]:

1940-1941 թվականներին Ու. Չերչիլի կողմից ստեղծված Ավիացիայի նախարարության անմիջական ղեկավարությամբ կտրուկ փոխվել և կարգավորվել է ինքնաթիռների արտադրությունը: ATA-ի աշխատանքները դժվարացել էին օդային հարձակումների պատճառով: ATA-ում ծառայում էին 166 օդաչու կանայք, որոնցից մեկը Մ. Աղազարյանն էր:

1943 թվականին ATA-ի պնդմամբ Մ. Աղազարյանը ընդգրկվել է տասը օդաչու աղջիկների ցանկում: Նրանք մասնակցել են փորձնական թռիչքներին, ապա մարտական առաջադրանքների կատարմանը: Արիասիրտ հայուհին աչքի է ընկել իր սխրագործություններով:

---

[875] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 571:
[876] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 144:
[877] Տե՛ս նույն տեղում:

Պատերազմի վերջում ATA-ն լուծարվել է: Մ. Աղազարյանը տեղափոխվել է Բրիտանիայի ՌՕՈՒ-ի բազայի վրա ստեղծված «Մալքոլմ» ակումբ: Այնտեղ աշխատել է որպես Իսլանդիայի ավիացիոն ծառայության մենեջեր[878]:

Շուտով ընկերությունը ձեռք է բերել իր առաջին «Դրաքոն Ռափիդ» («Արագընթաց հրեշ») ինքնաթիռը, որով Մ. Աղազարյանը թռիչքներ է կատարել դեպի Ջերսի: Մ. Աղազարյանը մշակել է համակարգչային բարդ մարզասարքի օգնությամբ օդաչուների կարճաժամկետ ուսուցման եղանակ:

1984 թվականին Մ. Աղազարյանը նշանակվել է Լոնդոնի ավիացիոն վարչության «Իսլանդական ծառայության» գործադիր տնօրեն: Հետագայում անգլո-ամերիկյան ծրագրի շրջանակներում հայազգի ավիատորը մասնակցել է կորած օդաչուների փրկարարական աշխատանքներին:

Մ. Աղազարյանը մահացել է 1993 թվականի մարտի 3-ին Լոնդոնում:

ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի ռազմաօդային ուժերում, ցամաքային զորքերում, կանանց բանակային կորպուսներում, հոսպիտալներում և Դաշնակիցների էքսպեդիցիոն բանակների կազմում ծառայող հայուհիներից շատերը մարտական բազում առաջադրանքներ կատարելիս աչքի են ընկել իրենց քաջությամբ ու սխրագործություններով: Նման խիզախ ու հերոս հայուհիներից էին ԱՄՆ-ում ծնված *Մերի Աշճյանը, Ագնես (Սամմեթ) Միլդոնյանը, Ջեյլ Սյուն (Սարաֆյանը), Էլեն Կումջյանը, Կլարա Մուրադյանը (Ափիկյան) և Մերի (Ալբեևպասի) Հակոբյանը*:

Արիասիրտ հայուհի **Մերի Աշճյանը** ծնվել է 1922 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգների Մասաչուսեթս նահանգի Ուոչեսթեր քաղաքում՝ Արևմտյան Հայաստանի Խարբերդ քաղաքից գաղթած ծնողների ընտանիքում[879]:

---

[878] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 144:
[879] Տե՛ս նույն տեղում:

1943 թվականի հոկտեմբերի 30-ին Մ. Աշճյանը զինվորական ծառայության է անցել Սան Ֆրանցիսկոյում: Այդ ժամանակահատվածում ԱՄՆ բանակում հիմնարար փոփոխություններ են տեղի ունեցել կանանց օժանդակ բանակային կորպուսների կայացման գործում[880]:

Մ. Աշճյանը իր մասնագիտական կրթությունը ստացել է Դես Մոինես ճամբարում և ծառայության նշանակվել ադմինիստրատիվ կորպուսում: Միաժամանակ սովորել է սպայական կազմի պատրաստման դպրոցում և զբաղվել արտասահմանյան երկրների հետ կապերի հարցերով: Այնուհետև նրան գործուղել են Ջորջիա նահանգ՝ ուսանելու ցամաքային զորքերում, որից հետո ծառայության են նշանակել ԱՄՆ զինված ուժերի Առաջին զորամիավորման կազմում գտնվող, Լոնդոնում տեղակայված, Օմար Բերդլիի հրամանատարությամբ գործող զորամասում, որտեղ նա կազմել է ռազմական գործողությունների ամենօրյա քարտեզները: Ի դեպ, նա միակ հայուհին է եղել այդ զորամասում:

Մ. Աշճյանն աշխատել է նաև կապիտան Իսրայելի համար: Բուլգի ճակատամարտի ժամանակ եղել է Ֆրանսիայի Վերդուն բնակավայրում, մասնակցել է մարտական գործողություններին, աչքի է ընկել քաջությամբ և սխրագործություններով, այցելել է վիրավորներին: Այնուհետև նրան լիազորել են ծառայությունը շարունակել Գերմանիայում՝ Վիաբադենի զորակայանում, որտեղ շարունակել է մարտական առաջադրանքների կատարումը: Նա ծառայել է Ֆրանկֆուրտում տեղակայված շտաբ-բնակարանում[881]:

Պատերազմից հետո Մ. Աշճյանը ծառայել է Ամերիկյան լեգեոնում որպես քաղաքացիական հայցվոր: Օգնել է վետերաններին և նրանց ընտանիքներին բազմաթիվ խնդիրների լուծման հարցում: Հետագայում աշխատել է Ֆրեզնոյի քաղաքապետարանում:

---

[880] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 144:
[881] Տե՛ս նույն տեղում:

Մ. Աշճյանը պարգևատրվել է «Կանանց ծառայության կորպուսի», «Գերազանց ծառայության համար», «Երկրորդ աշխարհամարտի», «Հաղթանակի համար» և այլ մեդալներով:

Քաջարի հայուհի **Ագնես Միլդոնյանը** ծնվել է 1917 թվականի հունիսին ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Լին քաղաքում: Խարբերդցի (Արևմտյան Հայաստան) Ասատուր և Էլիզաբեթ Միլդոնյանների կըրտսեր դուստրն է: Երբ Ագնեսը մեկ տարեկան էր, ընտանիքը տեղափոխվել է Ֆիթչբուրգ: Այստեղ էլ Ա. Միլդոնյանը կրթություն է ստացել[882]: 1935 թվականին ավարտել է տեղի Բարձրագույն, ապա՝ 1938 թվականին, Բարբանկի դպրոցի, այնուհետև՝ Նյու Յորքի Կոլումբիա համալսարանի բուժքույրերի կուրսերը: Ուսումն ավարտելուց հետո մեկնել է Մասաչուսեթս նահանգի Քեյփ Քոդի ճամբար, որտեղ ծառայում էր նրա ավագ եղբայրը՝ Ջորջը:

Պերլ Հարբորի վրա հարձակումից հետո Ա. Միլդոնյանը ծառայության է անցել ԱՄՆ-ի բանակի բուժքույրերի կորպուսում, նպաստել բազմաթիվ վիրավորների բուժման գործին: Հինգ ամիս անց կամավոր մեկնել է Ավստրալիա և Նոր Գվինեա, աշխատել տարբեր հոսպիտալներում, մասնակցել է նաև հիվանդների էվակուացման աշխատանքներին Ֆիլիպիններում և Նոր Գվինեայում:

1942 թվականի հունվարի 15-ին նրան որպես բուժքույր ծառայության են նշանակել Թդվարդյան զինվորական հիվանդանոցում, իսկ նույն թվականի մարտի 16-ին՝ գործուղել 2-րդ հոսպիտալ: Նա գիշերցերեկ հոգ է տարել վիրավորների մասին, բուժել է նրանց, աջակցել մարտադաշտ ուղարկելու գործում[883]:

1942 թվականի մայիսին Ա. Միլդոնյանը մեկնել է Սան Ֆրանցիսկո, որտեղից էլ՝ մայիսի 19-ին Մելբուռն: Այնուհետև «Ռոյալ Վիկտորիա» հոսպիտալում նա աշխատել է ուղիղ մեկ ամիս և արդեն հուլիսին

---

[882] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 195:
[883] Տե՛ս նույն տեղում:

ուղևորվել Ավստրալիա՝ Սիդնեյ, Բրիսբեյն, Թաունսվիլ՝ նույն առաքելությամբ[884]:

1943 թվականին ծառայել է Մարիբում, Լա Պապոայում, Նոր Գվինեայում: 1945 թվականի մարտին Ա. Միլդոնյանին տեղափոխել են Հոլանդիա՝ 247-րդ գլխավոր հոսպիտալ, այնտեղից հուլիսի 22-ին գործուղել են Մանիլա:

Ա. Միլդոնյանը ԱՄՆ՝ Նյու Ջերսի է վերադարձել 1945 թվականի սեպտեմբերի 21-ին: Նա ստացել է ԱՄՆ բանակի բուժքույրերի կորպուսի ավագ լեյտենանտի կոչում: Բազմաթիվ սխրագործությունների համար պարգևատրվել է «Լավագույն հրամանատար», «Բանակի կանանց կորպուսի ծառայության», «Երկրորդ աշխարհամարտի հաղթանակի», «Ֆիլիպինների ազատագրման» և այլ մեդալներով[885]:

Երկրորդ աշխարհամարտում իր սխրագործություններով աչքի ընկած **Սյու (Սաֆարյան) Ջեյլը** ծնվել է 1917 թվականի փետրվարին ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Մալդեն քաղաքում՝ ծննդով խարբերդցի (Արևմտյան Հայաստան) Շմավոն Սարաֆյանի և Մաքրուհի Շարիսկանյանի ընտանիքում[886]:

1942 թվականին ավարտել է Հայլենդ Փարքի բարձրագույն դպրոցը և ընդունվել Բիզնեսի ինստիտուտ: Եղել է Ամերիկայի հայկական երիտասարդական միության Դետրոյթի մասնաճյուղի անդամ: Շուրջ մեկ տարի ծառայել է Ամերիկայի կառավարության Ներքին եկամուտների բաժնում որպես քարտուղար: Այնուհետև վեց տարի աշխատել է Տեխասի նահանգում՝ Գալվեստոնում: Մինչև՝ 1942 թվականի սեպտեմբեր ամիսը անընդհատ կատարելագործել է մասնագիտական ունակությունները: 1942 թվականի նոյեմբերին 400 կուրսանտների հետ Սյու (Սաֆարյան) Ջեյլը ուսուցում է անցել WAAC-ի ուսումնական կենտ-

---

[884] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 195:
[885] Տե՛ս նույն տեղում:
[886] Տե՛ս նույն տեղում, էջ 211:

ռոնում, որից հետո որպես տեսուչի լիազոր ներկայացուցիչ ծառայել է գեներալ Հիլի գրասենյակում[887]:

1943 թվականին WAAC-ը անվանափոխվել է Կանանց զինվորական կորպուս՝ դրանով հնարավորություն ընձեռնելով կանանց ծառայելու բանակում: Սյու (Սարաֆյան) Ջեյլը առաջիններից էր: Նա ծառայության է անցել Արևմտյան Եվրոպայում տեղակայված Դաշնակիցների էքսպեդիցիոն բանակների գլխավոր հրամանատարի քարտուղարներից մեկի պաշտոնում, որտեղ նա մասնակցել է նաև մարտական գործողություններին, աչքի է ընկել քաջությամբ: 1945 թվականից մինչև պատերազմի ավարտը՝ 1945 թվականի հունիսը, ծառայել է Գերմանիայում ԱՄՆ-ի օկուպացիոն ուժերի հրամանատար Դուայթ Էյզենհաուերի մոտ: Նրան է 1945 թվականի դեկտեմբերին իր հուշերը թելադրել ռազմական անվանի գործիչը[888]:

Ս. Ջեյլը զորացրվել է 1947 թվականին լեյտենանտի զինվորական կոչումով: Մահացել է 1997 թվականի ապրիլի 13-ին Ֆլորիդա նահանգի Մեյթլենդ քաղաքում:

Երկրորդ աշխարհամարտում իր խիզախությամբ աչքի ընկած հայուհի **Էլեն Կումջյանը** ծնվել է 1909 թվականը հունվարին ԱՄՆ-ի Ռոդ Այլենդ նահանգում՝ Արևմտյան Հայաստանից գաղթած դերձակ Մուշեղ Հովհաննիսյանի ընտանիքում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նրա ընտանիքը տեղափոխվել է Կալիֆոռնիայի Ֆրեզնո քաղաք: Ապրել է հայկական թաղամասում՝ Ֆուլտոն փողոցում[889]:

1930 թվականին ավարտել է Ֆրեզնոյի բարձրագույն դպրոցը, 1932 թվականին՝ բուժքույրերի դպրոցը, որից հետո աշխատել է Լոս Անջելեսի գլխավոր հոսպիտալի գրանցումների բաժնում: 1942 թվականի հուլիսին ծառայության է անցել բուժքույրերի զինվորական կորպուսում և մասնագիտական հմտություններ ձեռք բերել նախ

---

[887] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 211:
[888] Տե՛ս նույն տեղում:
[889] Տե՛ս նույն տեղում, էջ 181:

Սթոունհամի (Պիտաբուրգ, Կալիֆոռնիա), ապա՝ Տորանեսի ճամբարներում: Այնուհետև Է. Կումջյանին ծառայության են նշանակել «Կոմֆորտ» նավ-հոսպիտալում, որը գործել է ռազմական թատերաբեմի ասիական-խաղաղօվկիանոսյան ուղղությամբ: Նավ-հոսպիտալը անմիջական մասնակցություն է ունեցել Օկինավայի համար մղված մարտերում, որտեղ հայուհին աչքի է ընկել հերոսությամբ՝ անթերի կատարելով վիրավորների տարհանումը, նրանց բուժումը և մարտական գործողություններին խիզախորեն մասնակցելով:

1945 թվականի ապրիլին շուրջ 8 օր նավ-հոսպիտալը անշարժացել է տարածաշրջանի ջրերում, որպեսզի վերցնի վիրավորներին և շարժվի դեպի Գուամ՝ նրանց ցամաքային հոսպիտալներում տեղավորելու համար: Դա նրան հաջողվել է[890]:

1945 թվականի ապրիլին «Կոմֆորտը» խարիսխ է նետել Օկինավայի ափերին: Նույն օրը անզեն նավ-հոսպիտալը գնդակոծվել է թշնամու օդանավի մահապարտ-օդաչուի կողմից: Վիրաբուժական բաժանմունքից կենդանի է մնացել միայն Էլեն Կումջյանը. նրան բազմաթիվ ջարդվածքներով և այրվածքներով գտել է փրկարարներից մեկը: Վիրավոր բուժքրոջը տեղափոխել են Գուամի հոսպիտալ, որտեղ նա բուժվել է շուրջ երեք ամիս Ջեյկ Փաշայանի խնամակալությամբ: Վերջինս ապրել է իրենց հարևանությամբ: Բազմաթիվ վիրահատություններից հետո որպես հաշմանդամ թողել է ծառայությունը և վերադարձել է Ֆրեզնո[891]:

1947 թվականին Է. Կումջյանը ծառայության է անցել Սան Ֆրանցիսկոյի՝ պատերազմի վիրավորների, այնուհետև՝ ֆրանսիական հոսպիտալում, որտեղ աշխատել է մինչև 1983 թվականը:

Է. Կումջյանը եղել է ԱՄՆ բանակի բուժքույրերի կորպուսի լեյտենանտի կոչումով առաջին բուժքույրը: Կատարած հերոսական գործողությունների համար քաջասիրտ հայուհին պարգևատրվել է «Ծառա-

---

[890] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 195:
[891] Տե՛ս նույն տեղում:

յության համար», «Ասիական խաղաղօվկիանոսական ռազմագործողության համար», «Հաղթանակի համար», «Ֆիլիպինների ազատագրության համար» և մարտական այլ մեդալներով:

Է. Կումջյանը մահացել է 1988 թվականի հունվարի 1-ին[892]:

Երկրորդ աշխարհամարտի արիասիրտ բուժքույր **Մերի Հակոբյանը** ծնվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Մասաչուսեթս նահանգի Վուսթեր քաղաքում:

1935 թվականին ավարտել է Մեդֆորդի բարձրագույն դպրոցը, երկու տարի աշխատել է տարբեր բնագավառներում[893]: Այնուհետև սովորել է Լորենսի հոսպիտալի բուժքույրերի դպրոցում, որն ավարտել է 1940 թվականին Բրիտանական ռազմածովային նավատորմի բուժքույրի մասնագիտությամբ: Եղել է «Բուժքույրերի ամերիկյան ասոցիացիայի», «Կարմիր խաչի» անդամ:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ավելի քան երեք տարի ծառայել է ԱՄՆ բանակի օժանդակ ծառայության կանանց կորպուսում: Մարտական առաջադրանքներ կատարելիս նա աչքի է ընկել խիզախությամբ և անհատական քաջագործությամբ:

1942 թվականի օգոստոսին Մ. Հակոբյանը միացել է բանակի բուժքույրերի կորպուսին: 1943 թվականի հունվարին զինվորական 27-րդ հոսպիտալը, որտեղ ծառայել է մեր հայրենակցուհին, տեղափոխվել է Նոմեայի հարավ՝ Անս Վաթա Բիչ[894]: Նոր Կալեդոնիայում ծառայելու ժամանակ Մ. Հակոբյանը ստացել է հերթական՝ կապիտանի զինվորական կոչում՝ նշանակվելով հոսպիտալի ավագ բուժքույր: Այստեղ նա կազմակերպել է վիրավորների բուժման և մարտադաշտ վերադարձնելու գործը: Այնուհետև նրան տեղափոխել են Օկինավա, որտեղ ծանր

---

[892] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 195:
[893] Տե՛ս նույն տեղում, էջ 183:
[894] Տե՛ս նույն տեղում:

վիրավորվել է հոսպիտալի վրա թշնամու ինքնաթիռի կործանման հետևանքով[895]:

Պատերազմից հետո՝ 1945 թվականի օգոստոսի 15-ին, Մ. Հակոբյանը վերադարձել է Կալիֆոռնիա, որոշ ժամանակ ծառայել է Չիկագոյի վետերանների ադմինիստրացիայի կազմում, երկուսուկես տարի անց տեղափոխվել է Բոստոն, ավարտել է տեղի քոլեջը, 1958 թվականի ստացել է արվեստների բակալավրի աստիճան: Ցուցաբերած անձնական քաջության համար նա պարգևատրվել է «Բոսորագույն սիրտ», «Լավագույն հրամանատար», «Բանակի կանանց կորպուսի ծառայության», «Երկրորդ աշխարհամարտի հաղթանակի» և այլ մեդալներով: 1983 թվականին անցել է կենսաթոշակի:

Մ. Հակոբյանը մահացել է 1993 թվականի դեկտեմբերի 6-ին:

Աննկուն հայուհի **Կլարա Մուրադյանը** ծնվել է 1923 թվականին, Ամերիկայի Միացյալ Նահանգների Օնտարիո նահանգի Բրանտֆորդ քաղաքում՝ Խորեն և Հռիփսիմե Ափիկյանների ընտանիքում[896]:

1942 թվականին ավարտել է «Նիագարա ֆոլս» միջնակարգ դպրոցը: 1944-1946 թվականներին ծառայել է ԱՄՆ ցամաքային զորքերի կանանց գվարդիայի պահեստազորում: Ակտիվ մասնակցություն է ունեցել մարտական գործողություններին և աչքի է ընկել քաջությամբ: Այդ տարիներին էլ ծանոթացել է ապագա ամուսնու՝ Նորման (Սուրեն) Մուրադյանի հետ: Վերջինս իր ծառայությունն էր անցկացնում Եվրոպայում տեղակայված կանադական բանակում:

1948 թվականին Կ. Մուրադյանն աշխատել է Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ Բեռլինում գտնվող դիվանագիտական ծառայությունում[897]:

---

[895] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 183:
[896] Տե՛ս նույն տեղում:
[897] Տե՛ս նույն տեղում:

1950 թվականին՝ դիվանագիտական ծառայության ավարտից հետո, գերագույն հանձնակատարի հետ վերադարձել է ԱՄՆ և աշխատել «Նիագա ֆոլսում»:

1952 թվականին նորից վերադարձել է դիվանագիտական ծառայության՝ աշխատելով Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում տեղակայված շտաբ-բնակարանում[898]:

Եվրոպայում ծառայելու տարիների ընթացքում Կ. Մուրադյանը շրջագայել է ամբողջ մայրցամաքով և Մերձակա Արևելքի երկրներով, այցելել է Ֆրանսիայում և Թուրքիայում ապրող հարազատներին:

Վերադառնալով ԱՄՆ՝ 1954-1958 թվականներին որպես քարտուղար աշխատել է «Բելլ» ավիացիոն ընկերությունում: Այնուհետև տեղափոխվել է Դետրոյթ և մինչև 1963 թվականը աշխատել «Ֆորդ մոթոր» ընկերությունում: 1962 թվականին ակտիվորեն մասնակցել է Դետրոյթի Ս. Սարգիս հայկական եկեղեցու նախագծման և կառուցման դրամահավաքի աշխատանքներին: Ամուսնությունից հետո տեղափոխվել է Ջորջինա նահանգի Ասլանտա քաղաքը:

Կ. Մուրադյանը մահացել է 87 տարեկան հասակում Ատլանտայում 2010 թվականի սեպտեմբերին:

Այսպիսով՝ Երկրորդ աշխարհամարտի և Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում հերոսուհի հայ կանայք, սփյուռքահայ արիասիրտ հայուհիները դաշնակիցների բանակներում, տարբեր ռազմաճակատներում ակտիվորեն մասնակցել են խորհրդային և եվրոպական երկրների ժողովուրդների ազատության ու անկախության համար մղվող համաժողովրդական պայքարին՝ անթառամ փառքով պսակելով հայրենասեր կնոջ և հայուհու բարձր կոչումը:

---

[898] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 183:

* * *

Պատերազմը ստիպեց թիկունքի աշխատանքը վերակառուցել ռազմական ձևով, ստեղծել ռազմական հզոր տնտեսություն՝ ռազմաճակատի պահանջներն անընդմեջ ապահովելու համար: Ռազմաճակատը և թիկունքը միավորվեցին որպես միասնական անխորտակելի ուժ:

Համաժողովրդական, տիտանական պայքարի մեջ իր արժանի բաժինն ունի խորհրդային կինը: Հայրենական պատերազմի դաժան օրերին խորհրդային կինը ցույց տվեց իր անսահման հայրենասիրությունը, իր ուժը, հոգու կորովն ու արիությունը: Հայ կանայք և աղջիկները ոչ միայն համալրեցին խորհրդային բանակի, ռազմաօդային և ռազմածովային նավատորմների և հակաօդային պաշտպանության միավորումների շարքերը, խորհրդային զինված ուժերի կազմում նրանք մարտնչեցին որպես տանկիստներ, կապավորներ, հրետանավորներ, օդաչուներ և հատկապես որպես բժշկասանիտարական աշխատողներ, այլև թիկունքում՝ արդյունաբերական ձեռնարկություններում, տրանսպորտում, կոլտնտեսային դաշտերում, լուսավորության, առողջապահության, արվեստի և կուլտուրայի բնագավառներում փոխարինեցին տղամարդկանց և աշխատանքային սխրագործություններով իրենց լուման ներդրեցին հաղթանակի մեծ գործում:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից խորհրդային բանակին և ճակատայինների ընտանիքներին ցույց տվող օգնությունն ընդունեց համաժողովրդական բնույթ:

Հանրապետությունում մեծ աշխատանք տարվեց աշխատավորների շրջանում՝ պաշտպանական ֆոնդեր ստեղծելու, բնակչության նվիրատվությունները լրացուցիչ կերպով համաժողովրդական պատերազմի կարիքներին տրամադրելու ուղղությամբ:

Պաշտպանության զանազան ֆոնդերի ստեղծման գործում իրենց նվիրատվություններով ակտիվ մասնակցություն ունեցան հանրապետության հայ և այլ ազգությունների հայրենասեր կանայք:

Երևան քաղաքի Կիրովյան շրջանի տնային տնտեսուհիների և աշխատավորուհիների նախաձեռնությամբ է ստեղծվել «Երևանի հայրենասիրուհի» մարտական էսկադրիլիա կառուցելու ֆոնդը: Իրենց խնայողություններից նրանք պետբանկ են մուծել 554000 ռուբլի և 265775 ռուբլու փոխառության պարտատոմս: Այդ նախաձեռնությունը խանդավառությամբ է ընդունվել մայրաքաղաքի աշխատավորուհիների և տնային տնտեսուհիների կողմից, որոնք այդ նպատակի համար հավաքել են մոտ 4 միլիոն ռուբլի[899]:

Սպանդարյանի շրջանի տնային տնտեսուհիների առաջարկով քաղաքի Լենինյան, Օրջոնիկիձեի և Կիրովյան շրջանների աշխատավորները և տնային տնտեսուհիները հավաքել են 135214 ռուբլի և 34785 ռուբլու արժողությամբ պարտատոմս՝ «Հայրենասեր տնային տնտեսուհի» մարտական ինքնաթիռ կառուցելու համար[900]:

«Երևանի հայրենասիրուհի» և «Հայրենասեր տնային տնտեսուհի» մարտական ինքնաթիռների կառուցման նախաձեռնողներն արժանացել են պաշտպանության պետական կոմիտեի շնորհակալությանը: Սպանդարյանի շրջանի տնային տնտեսուհիների խնդրանքով «Հայրենասեր տնային տնտեսուհի» մարտական ինքնաթիռը տրամադրվել է Խորհրդային Միության հերոս, բանակի գեներալ Հ. Բաղրամյանի հրամանատարությամբ գործող Մերձբալթյան 1-ին ռազմաճակատին[901]: Այս կապակցությամբ Սպանդարյանի շրջանի տնային տնտեսուհիները Հ. Բաղրամյանին ուղարկած նամակում գրել են.

«Թանկագի՛ն ընկեր Բաղրամյան,

Թո՛ղ այդ ինքնաթիռն ամեն վայրկյան հիշեցնի դեպի մեր հայրենիքն ունեցած սիրո և նվիրվածության մասին, կրակի հեղեղ թափի գերմանաֆաշիստական զավթիչների գլխին:

---

[899] **Հարությունյան Ա.,** Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1958, էջ 66-67:
[900] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 23:
[901] Տե՛ս նույն տեղում:

Թո՛ղ այդ ինքնաթիռը համարձակ ճախրի և ազատության լույսի ճառագայթներ տարածի Ձեզ այնքան կարոտով սպասող մայրերի, քույրերի, կանանց ու երեխաների վրա:

...«Հայրենասեր տնային տնտեսուհի» մարտական ինքնաթիռը հանձնեցեք քաջերից մեկին, որ Ձեր օրինակով բազմապատկի սովետական մեծ ժողովրդի փառքը: Մենք սպասում ենք այն երջանիկ օրվան, երբ Դուք հաղթանակից հետո նորից ոտք կդնեք Ձեր հայրենական օջախը՝ արևային Հայաստան, այն ժամանակ Ձեր հպարտ ճակատին կդրոշմենք մեր մայրական ջերմագին համբույրները»[902]:

Պատերազմի սկզբում չթուլացող քայլերով լայն ծավալ է ընդունել Կարմիր բանակի համար տաք հագուստ ձեռք բերելու՝ Հայ կանանց հայրենասիրական շարժումը: Հայ ժողովուրդը, ոչինչ չխնայելով, խորհրդային բանակի մարտիկներին օգնել է տաք հագուստով և անընդմեջ ռազմաճակատ է առաքել նվեր-ծանրոցներ: Այսպես՝ միայն Երևանում Կարմիր բանակի մարտիկների համար 1941-1945 թվականներին հավաքվել է 132 հազար կտոր տաք հագուստ[903], իսկ Լենինական քաղաքի աշխատավորությունը հավաքել և ռազմաճակատ է ուղարկել մոտ 120 հազար կտոր տաք հագուստ և սպիտակեղեն[904]: Բացի այդ՝ տասնյակ վագոններով նվերներ են ուղարկվել Հայկական 89-րդ «Թամանյան», Վորոշիլովի անվան 76-րդ, 51-րդ գվարդիական, 409-րդ կիրովոգրադյան, 15-րդ ստալինգրադյան դիվիզիաներին, Սևծովյան նավատորմին և այլ զորամասերի մարտիկներին ու սպաներին:

Հանրապետության կոլտնտեսային, հատկապես գյուղական կանայք մինչև 1943 թվականը հայրենիքի պաշտպաններին ուղարկել են մեկ միլիոն կտոր տաք հագուստ, 3 գնացք նվերներ և 128 հազար անհատական ծանրոց[905]:

---

[902] ՀԱԱ, ֆ. 9, գ. 1, թ. 12-12ա:
[903] **Հարությունյան Ա.,** նշվ. աշխ., էջ 68:
[904] ՀԱԱ, ֆ. 275, գ. 15, թ. 13:
[905] «Սովետական Հայաստան», 21 ապրիլի, Երևան, 1943:

Պատերազմի տարիներին կառուցվել և շահագործման են հանձնվել բազմաթիվ գործարաններ, որոնք ունեին պաշտպանական նշանակություն: Շարք են մտել Երևանի էլեկտրամեքենաշինական, էլեկտրասարքավորումների, ավտոդողերի, կոմպրեսների, կաբելի, ժամացույցի, շարժիչների վերանորոգման, գյուղատնտեսական գործիքների գործարանները: Շահագործման են հանձնվել նաև Ալավերդու ծծմբաթթվի, Ստեփանավանի գուլպայի, Շահումյանի շրջանի «Կարմիր ջուլհակ» գործվածքային, Կիրովականի մորթու-մուշտակի, Լենինականի ներկի, Նոր Խարբերդի մանածագործական, Արաբկիրի գործվածքային, Հոկտեմբերյանի (այժմ՝ Արմավիր) պահածոների գործարանները, արտելները և ցեխերը: Պատերազմի դժվարին պայմաններում ձեռնարկվել են նոր խոշոր օբյեկտների՝ Սևանի ստորերկրյա հիդրոկայանի, Քանաքեռի ալյումինի, Պոլիվինիլացետատի և այլ գործարանների կառուցման աշխատանքները: Շարունակվել են Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի, Սպիտակի շաքարի, Շամշադինի ֆերմենտացիոն, Աշտարակի «Խերես» գինու, Արզնիի ապակետարայի, Թումանյանի հրակայուն աղյուսի գործարանների շինարարությունները[906]:

1942 թվականին ավարտվել է արդյունաբերության վերակառուցումը ռազմաճակատի պահանջներին համապատասխան: Այդ ժամանակաշրջանում հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները յուրացրել են ավելի քան 250 նոր տեսակի արտադրանքի թողարկումը[907]:

Հանրապետության ծանր արդյունաբերությունը գերազանցապես աշխատել է ռազմաճակատի աճող պահանջները բավարարելու համար: Մեքենաշինության ձեռնարկությունների արտադրանքի մեջ զգալիորեն բարձրացել է ռազմական արտադրանքի տեսակարար կշիռը: Մեքենաշինական ձեռնարկությունները թողարկել են արկեր, ականներ, զանազան պահեստամասեր և այլն:

---

[906] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 30:
[907] Տե՛ս նույն տեղում:

Հանրապետության արտադրական ձեռնարկություններից ռազմաճակատ են մեկնել շատ բանվորներ: Ստեղծված պայմաններում հրատապ խնդիր է դարձել կադրերի պատրաստումը: Արտադրության մեջ ներգրավվել են նոր կադրեր, մեծ թվով կանայք և աղջիկներ, որոնց մեծ մասը մինչև պատերազմը չէր աշխատել: Նրանք փոխարինել են իրենց հարազատներին արդյունաբերության մեջ, տրանսպորտում և այլուր:

Բազմաթիվ աղջիկներ, ավարտելով միջնակարգ դպրոցը և թողնելով բարձրագույն ուսում ստանալու ցանկությունները, մտել են ձեռնարկությունները և արագորեն յուրացրել որևէ մասնագիտություն: Դա բարձր հայրենասիրության լավագույն արտահայտություն էր: Հայաստանի կանայք, աղջիկներն ու պատանիները, որոնք մեծ սիրով փոխարինել են ռազմաճակատ մեկնածներին, հանդես են բերել աշխատանքային մեծ եռանդ, ջանասիրություն, հերոսություն և բարձր հայրենասիրություն: Նրանք գիտակցել են, որ առանց թիկունքում կազմակերպված ու անխափան աշխատանքի, բանվորների, գյուղացիների, մտավորականության հերոսական ջանքերի անհնարին է հաղթանակը, ուստի ամեն կերպ ձգտել են արագորեն տիրապետել արտադրության տեխնոլոգիային, դառնալ որակյալ կադրեր, ժամանակին և բարձրորակ արտադրանք տալ հայրենիքին:

1941 թվականի հունիսին Երևանի արտադրական ձեռնարկություններում աշխատող մի խումբ կանայք բաց նամակով դիմել են Հայաստանի բոլոր կանանց՝ հայրենիքի պաշտպանության գործը թիկունքում ամրապնդելու և իրենց աշխատանքով խորհրդային բանակին օգնելու նպատակով[908]:

Այդ նամակում նրանք գրել են. «…Այժմ հասել է ժամը, երբ մեր երկրի բոլոր կանայք պետք է մեկ մարդու նման դուրս գան պայքարի, գործարանում թե կոլխոզում, հիմնարկում թե ֆրոնտում, զենքը ձեռ-

[908] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 31:

քին՝ օգնեն Կարմիր բանակին՝ գազազած ֆաշիզմին մինչև վերջը ջախջախելու համար:

Դեպի դազգահնե՛ր, դեպի մեքենանե՛ր, դեպի զե՛նք: Փոխարինենք մեր ամուսիններին, մեր եղբայրներին, և եթե երկիրը պահանջի, նրանց հետ կողք կողքի դիրքեր մեկնենք: Քեզ, հայրենի՛ք, երդվում ենք, որ ո՛չ մի օր, ո՛չ մի ժամ, ո՛չ մի րոպե մեր հայրենիքը չպիտի զգա իր որդիների բացակայությունը, նողկալի թշնամին պիտի ջնջվի երկրի երեսից մի անգամ և ընդմիշտ»[909]:

Նույնպիսի բովանդակությամբ նամակով հանդես են եկել նաև Լենինականի (Գյումրի) մանարան գործարանի կին աշխատողները:

Երևանի և Լենինականի աշխատավորուհիների դիմում-կոչերը լայն արձագանք են գտել հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում, ինչպես նաև տնային տնտեսուհիների լայն շրջաններում:

Ի պատասխան այդ դիմումների՝ Երևանում տեղի ունեցած հակաֆաշիստական ցույցի մասնակից կանայք իրենց կամքը, պատրաստակամությունն են հայտնել են փոխարինելու ռազմաճակատ մեկնած հարազատներին, բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, կատարելու և գերակատարելու ռազմաճակատի պատվերները, օգնելու խորհրդային բանակին, ապահովելու մեր հաղթանակը թշնամու դեմ:

«Մենք՝ Հայաստանի կանայք,– ասել է իր ելույթում ցույցի մասնակից Գ. Դուրինյանը,– պետք է ետ չմնանք մեր երկրի սիրտ մեծ Մոսկվայի և Լենինի քաղաքի գործարաններում իրենց զավակներին, եղբայրներին, ամուսիններին փոխարինող կանանցից, չխնայենք մեր ուժերը, եթե հարկ լինի և կյանքը՝ Կարմիր բանակի թիկունքը է՛լ ավելի ամրացնելու համար»[910]:

---

[909] «Սովետական Հայաստան», 26 հունիսի, Երևան, 1941:
[910] «Սովետական Հայաստան», 10 սեպտեմբերի, Երևան, 1941:

Հայրենական պատերազմի առաջին օրերին Երևանի Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանից մեծ թվով բանվոր-ծառայողներ են մեկնել ռազմաճակատ: Նրանց փոխարինելու են եկել տասնյակ երիտասարդ հայ կանայք: Փոխարինելով ռազմաճակատ մեկնած ամուսնուն՝ **Արփիկ Սմբատյանը** կարճ ժամանակամիջոցում որակավորվել և դարձել է երկրորդ կարգի խառատ: Որպես առաջավոր բանվորուհի՝ նա ընդունվել է «Կոմունիստական կուսակցության» շարքերը: **Լենա Դավթյանը** միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է որպես աշակերտ և հետագայում դարձել որակյալ խառատ[911]:

Պատերազմի առաջին օրերին Երևանի մակարոնի ֆաբրիկա է եկել **Պայծառ Բաղդասարյանը**: Կարճ ժամանակամիջոցում առաջավոր բանվորուհին դարձել է բրիգադավար:

Հայրենիքը պաշտպանելու համար Երևանի պահածոների գործարանի բազմաթիվ բանվորներ և ծառայողներ կամավոր համալրել են Կարմիր բանակի շարքերը: Շուտով նրանց փոխարինելու են եկել գործին անծանոթ տնային տնտեսուհիներ: Կանայք ստանձնել են նաև գործարանի հակահրդեհային պաշտպանության գործը՝ փոխարինելով մոբիլիզացիայի ենթարկված տղամարդ հրշեջներին:

Պատերազմի առաջին օրերին Երևանի տրամվայի պարկից Կարմիր բանակ մեկնած վագոնավարներին փոխարինելու համար աշխատանքի է ընդունվել 28 տնտեսուհի[912]:

Երբ Շուշիկ Գրիգորյանի տղան մեկնել է ռազմաճակատ, նա աշխատանքի է անցել Լենինականի տրիկոտաժի ֆաբրիկայում: Նա որակավորվել, դարձել է արտադրության առաջավոր[913]:

1941 թվականի հունիսի 23-ին Ղափանի շրջանում շատ հայուհիներ, այդ թվում՝ երիտասարդ աղջիկներ, հանքային կոմբինատի վարչությանը խնդրել են Կարմիր բանակ մեկնածների փոխարեն իրենց

---

[911] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 33:
[912] Տե՛ս նույն տեղում, էջ 34:
[913] Տե՛ս նույն տեղում:

ընդունել աշխատանքի՝ հայտնելով, որ կարող են և կկատարեն ամեն մի աշխատանք՝ գազազած թշնամուն հաղթելու համար:

Պատերազմի սկզբնական շրջանում Ղափանի պղնձի հանքերում և հարստացուցիչ ֆաբրիկայում աշխատանքի են անցել տասնյակ կանայք: Նրանցից ոմանք դարձել են վարպետներ[914]:

Բանակ է մեկնել Ղափանի պղնձահանքային կոմբինատի վագոնավար Սուրեն Համբարձումյանը: Նույն հանքում սկսել է աշխատել նրա կինը՝ **Սաթիկ Համբարձումյանը**, սկզբում՝ որպես պայթեցնողի օգնական, իսկ հետո՝ որպես ինքնուրույն պայթեցնող: Ս. Համբարձումյանի փնջային պայթեցման ռացիոնալիզատորական առաջարկը ներդրվել է հանքերում: Նա իր առաջադրանքները կատարել է 150-160 %-ով: Անվանի լեռնագործի անբասիր աշխատանքը բարձր է գնահատվել խորհրդային իշխանության կողմից: Նա պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով[915]:

Ս. Համբարձումյանի նման բազմաթիվ կանայք են աշխատել Ղափանի հարստացուցիչ ֆաբրիկայում: Այսպես՝ **Ա. Հովհաննիսյանը, Հ. Սարգսյանը, Է. Ղազարյանը** գործարանի ղեկավարությանը խնդրել են իրենց հանձնարարել այլ ցեխերի ղեկավարումը, որոնք մինչև այդ գլխավորել են բանակ մեկնած բանվորները: Նրանց խնդրանքը հարգվել է: Ցեխերը արձանագրել են բարձր ցուցանիշներ:

Մոսկվայի հերոսական պաշտպանության օրերին Երևանի, Լենինականի, Կիրովականի, Ղափանի, Ալավերդու արտադրական ձեռնարկությունների բանվորների ու ծառայողների աշխատանքային նշանաբանն էր՝ աշխատել էլ ավելի լավ և արտադրողաբար, ամեն կերպ ուժեղացնել ռազմաճակատին ցույց տրվող օգնությունը, լինել կարգապահ, տոկուն և աչալուրջ:

Արտադրության մեջ կանանց ներգրավումն ընդունել է մշտական բնույթ: Եթե մինչև պատերազմը արտադրական ձեռնարկություններ-

---

[914] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 34:
[915] Տե՛ս նույն տեղում, էջ 33:

ռում կանայք տոկոսային հարաբերությամբ զգալիորեն ետ են մնացել տղամարդկանցից, ապա պատերազմի տարիներին նրանց տեսակարար կշիռը զգալիորեն մեծացել է՝ 1942 թվականին հասնելով 54,4 %-ի[916]: 1943 թվականի առաջին կիսամյակում Լենինյան շրջանի արտադրական ձեռնարկություններում աշխատող կանայք կազմել են բոլոր աշխատողների ավելի քան 40 %-ը:

Կիրովի անվան գործարանում աշխատել են ավելի քան 700 կանայք, որոնց մեծ մասը արտադրություն են եկել պատերազմի օրերին: Հունիսի մեկը ներառյալ այդ գործարանում կանայք կազմել են բոլոր բանվորների 42,2 %-ը: Ծխախոտի գործարանում կանայք կազմել են բոլոր բանվորների 67,1, տետրակի գործարանում՝ 77,9, կաշվի գործարանում՝ 52,6 %-ը[917]:

Ձեթ-օճառ կոմբինատում, պահածոների, մակարոնի, ապակետարայի գործարաններում աշխատող բանվորների բացարձակ մեծամասնությունը կազմել են կանայք:

Երկու տարվա ընթացքում (1941-1943) սննդարդյունաբերության մեջ կանանց տեսակարար կշիռը 32.2 %-ից բարձրացել է 51.4 %-ի, իսկ տեքստիլ արդյունաբերության մեջ համապատասխան ցուցանիշներն էին 53.3 և 93.9 %[918]:

Կանայք արտադրական ձեռնարկություններ էին գալիս ինքնաբուխ, բարձր գիտակցությամբ և հայրենասիրական բարձր զգացումով:

Հայրենական պատերազմի վերջին տարում Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ (առանց գյուղատնտեսության) աշխատում էր 65 հազարից ավելի կին, որը կազմում է բանվորների և ծառայողների ընդհանուր թվի 43.8 %-ը[919]:

---

[916] **Հարությունյան Գ.**, Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին, Երևան, 1948, էջ 19:
[917] ՀԱԱ, ֆ. 1, ց. 32, գ. 25, թ. 90:
[918] Տե՛ս նույն տեղում, ֆ. 163. Ց. 15, գ. 229, թ. 76, 86, 88:
[919] Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 9, գ. 354, թ. 39:

Խորհրդային Միության, ինչպես նաև Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատող կանայք ուժերի մեծ լարումով, քաջաբար են տարել պատերազմական ժամանակաշրջանի դժվարություններն ու փորձությունները:

Հանրապետության աշխատավոր կանայք, ամենադժվարին տեղամասերում՝ ֆաբրիկաներում, գործարաններում, հանքերում, երկաթուղում փոխարինելով տղամարդկանց, մեծ օգնություն են ցույց տվել հայրենիքին և խորհրդային բանակին:

Պատերազմի տարիներին արտադրություն եկած նոր կադրերը, գլխավորապես կանայք, որակավորման խիստ կարիք էին զգում: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում կազմակերպվել են տեխուսուցման խմբակներ, աճել է կարճատև դասընթացների ցանցը: Արտադրություն եկած նոր կադրերն իրենց որակավորումը բարձրացրել են ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններում, ինչպես նաև անհատական ուսուցման միջոցով:

1941 թվականի հուլիսից մինչև 1943 թվականի վերջը Երևան քաղաքի Լենինյան շրջանում տարբեր մասնագիտությունների որակավորում է ձեռք բերել 1833 կին[920]: Տեխնիկական ուսուցման ցանցում որակավորում է ստացել 1363 բանվորուհի[921]:

Երևանի Օրջոնիկիձեի շրջանի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից կազմակերպված դասընթացներում իրենց որակավորումը բարձրացրել է 2271 մարդ, որի մոտավորապես կեսը կանայք էին[922]:

1941 թվականին Ս. Մ. Կիրովի անվան գործարանում անհատական և բրիգադային ուսուցման միջոցով որակավորվել է 90 բանվորու-

---

[920] **Հարությունյան Ա.,** նշվ. աշխ., էջ 13:
[921] ՀԱԱ, ֆ. 1, ց. 32, դ. 1153, թ. 21:
[922] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 32, գ. 1153, թ. 370:

հի, 1942 թվականին՝ 390, իսկ 1943 թվականին՝ 5 ամսվա ընթացքում 93 բանվորուհի[923]:

Պատերազմի տարիներին կապի առաջավոր աշխատող է դարձել համապատասխան որակավորում ձեռք բերած 383 կին, որից 145-ը հեռախոսավարուհիներ էին, 99-ը՝ հեռագրային ապարատի աշխատողներ, 11-ը՝ քաղաքային հեռախոսային ցանցի վարպետներ, 32-ը՝ ռադիո մասնագետներ, 24-ը՝ տեսակավորողներ, 32-ը՝ փոստային գործակալներ, 10-ը՝ ռադիոտեխնիկներ[924]:

Ս. Մ. Կիրովի անվան գործարանի լաբորատորիայում վարիչ **Ելենա Թերզիբաշյանը** և ցեխի վարպետները կարողացել են բարձրացնել նորեկ բանվորների որակավորումը և ապահովել բարձրորակ արտադրանքի թողարկումը:

Որակյալ արտադրանք էր տալիս Երևանի ձեթ-օճառ կոմբինատի ենթավարպետ **Բավական Ավետիսյանը**: Կարճ ժամանակամիջոցում տիրապետելով օճառի սառեցման մասնագիտությանը՝ նա մշտապես գերակատարել է արտադրական պլանները: Նոր և բարդ մասնագիտության արագ տիրապետման գործում աչքի են ընկել նաև **Մարգո Հովհաննիսյանը, Մարիամ Զատիկյանը** և **Փիրուզ Հովսեփյանը**, որոնք աշխատել են բովման պրոցեսների տեղամասում[925]:

Աշխատանքի հիանալի օրինակ են ցույց տվել տրիկոտաժի գործարանի առաջավոր *կաղապարողներ* **Զարիկ Թովմասյանը, Հայկուշ Սիմոնյանը** և **Վարդուշ Ավետիսյանը**[926]:

Լավ աշխատանքի օրինակներ են ցույց տվել հանրապետության շատ շրջանների ու քաղաքների արտադրական ձեռնարկություններում աշխատող կանայք:

---

[923] ՀԱԱ, ֆ. 1, գ. 370, թ. 4:
[924] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 38:
[925] Տե՛ս նույն տեղում:
[926] Տե՛ս նույն տեղում, էջ 39:

Այսպիսով՝ Հայրենական պատերազմի օրերին կանայք կազմել են հանրապետության արդյունաբերության աշխատողների առաջատար ջոկատներից մեկը:

Հայրենական պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում արդյունաբերության մեջ աշխատող կանայք արտադրական պլանները, հատկապես ռազմական առաջադրանքները կատարել են ժամանակին՝ տալով բարձրորակ արտադրանք:

Կանայք դարձել են արտադրության առաջավորներ, նպաստել են խորհրդային տնտեսության զարգացմանը և երկրի պաշտպանունակության ամրապնդմանը: Հանրապետության արտադրական ձեռնարկություններում աշխատող բանվորուհիները, մտնելով սոցիալիստական մրցության մեջ, դրսևորել են աշխատանքային նոր եռանդ ու խանդավառություն, ցույց են տվել հայրենասիրական անօրինակ խիզախումներ:

Սոցմրցման մեջ ընդգրկված հանրապետության արտադրական ձեռնարկություններից առանձնապես աչքի են ընկել Ս. Մ. Կիրովի անվան մեքենաշինական, պահածոների, կարի, մետաքսի գործարանների, Մարտի 8-ի անվան արտելի, Լենինականի տեքստիլ և մսի կոմբինատների, Չկալովի անվան կարի, կոշիկի գործարանների, Այրումի պահածոների գործարանների կոլեկտիվները[927]:

Սոցիալիստական մրցությամբ պարտավորություններ ստանձնած յուրաքանչյուր բանվորուհի աշխատել է «այսօր ավելի շատ և ավելի բարձրորակ արտադրանք տալ, քան տվել ենք երեկ, իսկ վաղը ավելի շատ, քան այսօր» նշանաբանով: Նշված իրողությունը փաստել են հանրապետության մի շարք արտադրական ձեռնարկությունների ձեռք բերած հաջողությունները: Երևանի կարի 3-րդ ֆաբրիկան, մտնելով սոցմրցման մեջ, 1943 թվականի առաջին եռամսյակում մարտիկների համար նախատեսված 580 հազար համազգեստի փոխարեն արտադ-

[927] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 41:

րել է 697 հազար կտոր համազգեստ՝ պլանը կատարելով 122 %-ով[928], իսկ կարի առաջին ֆաբրիկան, օրինակելիորեն կատարելով ստանձնած պարտավորությունները, 1943 թվականի առաջին եռամսյակում հասել է արտադրական բարձր ցուցանիշների՝ պլանից դուրս տալով չորս գնդի անձնակազմի համար անհրաժեշտ հանդերձանք[929]:

Սոցիալիստական մրցության մեջ ընդգրկված կանանց թիվը գնալով ավելացել է: Լենինյան շրջանում արտադրության պլանները դերակատարող կանանց թիվը հասել է 1500-ի:

Մեքենաշինական գործարանի առաջավոր կանայք կազմել են գործարանի բոլոր բանվորների 63.3 %-ը, կոշիկի գործարանում՝ 54.6 %-ը, Երևանի ձեթ-օճառ կոմբինատում՝ 40.1 %-ը և այլն: Սոցիալիստական մրցությունը լայնորեն ծավալվել է Երևանի պահածոների գործարանում: Գործարանի ինժեներներ **Անիկ Կարապետյանը, Լյուբա Ռոզենբերգը, վարպետներ Սաթիկ Թարջիմանյանը, Գոհար Խաչատրյանը, Լիզա Բաբայանը** մշտապես ապահովել են իրենց առաջավոր դերը արտադրության մեջ՝ իրենց օրինակով խանդավառելով բանվորուհիներին[930]:

Կովկասի հերոսական պաշտպանության օրերին Երևանի պահածոների գործարանի կոլեկտիվը N զորամասի մարտիկներից ստացել է նամակ և սոցմրցման հրավեր:

Ռազմիկները գրել են, որ մտնելով նախահոկտեմբերյան մրցության մեջ՝ պարտավորվել են գերմանական զավթիչներին ջախջախելու համար չխնայել իրենց արյան վերջին կաթիլը և բանվոր-բանվորուհիներին կոչ են արել վերցնել նորանոր պարտավորություններ՝ ռազմաճակատին ավելի շատ արտադրանք տալու և բանակին օգնելու համար[931]:

---

[928] ՀԱԱ, ֆ. 40/113, ց. 9, գ. 234, թ. 14:
[929] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 32, գ. 1181, թ. 58:
[930] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 41:
[931] ՀԱԱ, ֆ. 240, գ. 169, թ. 4:

Երևանի պահածոների գործարանի կոլեկտիվը պատասխան նամակում հայտնել է, որ ընդունում է ճակատայինների սոցիալիստական մրցության հրավերը և հավաստիացնում էր պլանից դուրս մի քանի հազար տուփ պահածո տալ ռազմաճակատին, կրճատել էլեկտրաէներգիայի ծախսերը, իսկ վառելանյութի խնայողությունը հասցնել 10-15 %-ի[932]:

Ցեխը, մտնելով համամիութենական սոցիալիստական մրցության մեջ, պարտավորվել է բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, լրիվ կարողությամբ օգտագործել մեքենաներն ու հումքը: Ցեխը պատվով է կատարել ստանձնած պարտավորությունները: Նույն ցեխի բանվորուհիներ **Վարդուշ Գրիգորյանը, Փիրուզ Ավետիսյանը, Աստղիկ Մալխասյանը,** հմտորեն տիրապետելով տեխնիկայի, ռացիոնալ կերպով օգտագործելով ժամանակը, կատարել են երկուական արտադրական նորմա:

Արաբկիրի տեքստիլ արտելի բանվորուհիները, միանալով համաժողովրդական շարժմանը, մրցման են հրավիրվել Սովետաշենի տեքստիլ արտելին՝ պարտավորվելով արտադրանքի ինքնարժեքն իջեցնել 3 %-ով, էլեկտրաէներգիան և վառելանյութը տնտեսել 10 %-ով, արտադրանքի ընդհանուր ծավալում առաջին տեսակի գործվածքների տեսակարար կշիռը հասցնել 75 %-ի: Բանվորուհիները պայքարում էին պայմանագրի բոլոր կետերը ժամկետից շուտ կատարելու համար: Սոցմրցման պայմանագիր կնքելուց հետո անհատական կցման կարգով արտելում որակավորվել է 40 ջուլիակուհի, որոնք գերակատարել են նորմաները:

Լենինականի Չկալովի անվան կարի գործարանի ստախանովական բանվորուհին՝ **Ելենա Մկրտչյանը**, մտնելով սոցմրցման մեջ, 1942 թվականի մայիս ամսվա արտադրական նորման կատարել 185 %-ով, իսկ հունիս անվանը՝ 203 %-ով[933]:

---

[932] ՀԱԱ, ֆ. 240, գ. 169, թ. 4:

[933] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 43:

Հայրենական պատերազմի տարիներին աճել են կոմերիտական երիտասարդական ճակատային բրիգադները: Նրանց խնդիրն էր կրճատել աշխատուժը՝ առանց պակասեցնելու արտադրանքը: Այդ ճակատային բրիգադներում իրենց օրինակելի աշխատանքով աչքի են ընկել կանայք և աղջիկները: Նրանք աշխատանքի արտադրողականության բարձրացման բնագավառում ձեռք բերած փորձն ու մեթոդը հաղորդել են մյուս բանվոր-բանվորուհիներին, նպաստել են պլանների գերակատարմանը՝ նշանաբան ունենալով «ոչ միայն քանակով, այլև հմտությամբ» կոչը:

Ստալինգրադի հերոսական պաշտպանության օրերին Երևանի պահածոների գործարանում ՀամԼԿԵՄ 25-ամյակի և հերոս քաղաքի պաշտպանների անվան բրիգադները, որոնց կազմը բաղկացած էր բացառապես կանանցից, համարձակ ու խելացի կազմակերպված աշխատանքի շնորհիվ պատվերները կատարել են ժամանակին: Իսկ տրամվայի պարկում ստեղծված ճակատային բրիգադը, որի բրիգադավարն էր **Դորա Բաբայանը**, մշտապես գերակատարել է պլանները:

Հիշատակության արժանի է Երևանի ձեթ-օճառ կոմբինատի երիտասարդական-կոմերիտական ճակատային բրիգադը, որը ղեկավարել է առաջավոր բանվորուհի, ճակատայինի կին **Թամարա Մինասյանը**: Այդ բրիգադը կիսամյա պլանը կատարել է 300 %-ով և արդարացրել է իր բարձր կոչումը[934]:

Երևանի կոշիկի N 3 ֆաբրիկայում, որտեղ աշխատանքի մեքենայացման մակարդակը ցածր էր և արտադրական շատ գործընթացներ կատարվել են ձեռքով, կազմակերպվել են ճակատային բրիգադներ: Դրանցից մեկը՝ ձևողների ճակատային բրիգադը, ղեկավարել է անվանի բանվորուհի **Մարիամ Թումանյանը**, որը մինչև Հայրենական պատերազմը ապրել է Օդեսայում և պատերազմի առաջին ամիսներին ակտիվորեն մասնակցել է քաղաքի պաշտպանությանը[935]:

---

[934] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 46:
[935] Տե՛ս նույն տեղում:

Հմտորեն տիրապետելով ձևելու գործին՝ Մ. Թումանյանը օրեցօր սկսել է ավելացնել արտադրանքի քանակը՝ օրական կատարելով մի քանի արտադրական նորմա: Աշխատանքային ժամանակը արդյունավետ օգտագործելու և կատարելագործված մեթոդների շնորհիվ նրա գլխավորած բրիգադը հասել է արտադրական նոր վերելքի և հումքի խնայողության:

Հայէլեկտրագործարանի երիտասարդական ճակատային բրիգադների 12 երիտասարդ բանվորուհիներ աշխատանքային լավագույն ցուցանիշների համար 1944 թվականին ՀամԼԿԵՄ 25-րդ տարեդարձի առթիվ պարգևատրվել են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատվոգրերով, իսկ Լենինյան շրջանի արտադրական ձեռնարկություններից 9 առաջավորներ՝ ՀամԼԿԵՄ կենտկոմի պատվոգրերով: Նրանց թվում էին **Մարֆա Բոնդորը** (մակարոնի ֆաբրիկայից), **Անիկ Հովսեփյանը** (ձեթ-օճառ կամբինատից), *Իսկուհի Թերզյանը* (ավտովերանորոգման գործարանից), **Արփիկ Թորոսյանը** (ցեխի ապարատավար և նույն ցեխի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար)[936]:

Կուսակցության XVIII համագումարի անվան Լենինականի մանարան գործարանի՝ Կոստանենկոյի և Մինասյանի բրիգադները ԼԿԵՄ կենտկոմի և ԽՍՀՄ տեքստիլ արդյունաբերության ժողկոմատի կողմից արժանացել են ճակատային բրիգադի կոչման: Կոստանենկոյի բրիգադում 1944 թվականին երրորդ եռամսյակի սկզբում աշխատել է 6, իսկ եռամսյակի վերջում՝ 5 բանվորուհի: Բրիգադի յուրաքանչյուր անդամ սպասարկել է նորմայից զգալի չափով ավելի իլիկ:

Ղափանի առաջավոր հանքագործների շարքերում արժանի տեղ է գրավել **Սրբուհի Հայրապետյանը**: Նա գլխավորել է կանանց առաջին բրիգադը: 1943 թվականին բրիգադի անդամները պլանից դուրս հայրենիքին տվել են հարյուրավոր տոննա հանքաքար: Աչքի ընկած բրի-

[936] ՀԱԱ, ֆ. 1, ց. 32, գ. 1181, թ. 58:

գադի կազմում **Լամզար Ազատյանը, Զմրուխտ Գրիգորյանը** և **Թամարա Ոսկանյանը** ամեն օր կատարել են մեկ ու կես նորմա»[937]:

Այսպիսով՝ կոմերիտական երիտասարդական ճակատային բրիգադները, ծնունդ առնելով և զարգանալով պատերազմի տարիներին, խոշոր դեր են կատարել ժողովրդական տնտեսության զարգացման գործում: Այդ շարժումը մոբիլիզացրեց երիտասարդներին, արտադրության մեջ աշխատող բոլոր կոմերիտականներին՝ արտադրանքի թողարկումն ավելացնելու, աշխատանքային բարձր կարգապահության, արտադրանքի որակը բարձրացնելու համար:

Կոմերիտական երիտասարդական ճակատային բրիգադների հերոսական աշխատանքը լիցքավորել է նաև ճակատայիններին: Ռազմաճակատում ձեռք բերված յուրաքանչյուր հաջողություն իր հերթին ոգեշնչել է թիկունքի հայրենասերներին:

Ինչպես բոլոր հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում երկուհարյուր-երեքհարյուրակայինների շարժումը լայն տարածում է գտել արդյունաբերության բոլոր ճյուղերում:

Երևանի Կիրովի անվան, ավտոդողերի, կոշիկի N 1, ծխախոտի, կարամելի գործարանների և Լենինականի, Կիրովականի, Ալավերդու, Ղափանի արտադրական ձեռնարկություններում աշխատող կանանց մեջ լայն ծավալ է ընդունել այդ շարժումը: Առաջ է եկել նույնիսկ հազարակայինների շարժում[938]: Համաժողովրդական այդ շարժման մեջ իրենց օրինակելի աշխատանքով արժանի տեղ են գրավել Հայաստանի կանայք և աղջիկները:

Երևանի Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանի երկրորդ ցեխը ամսվա պլանները սիստեմատիկաբար կատարել է 150-200 %-ով: Այդ ցեխում աշխատող կոմերիտուհի, երկուհարյուրակային **Մարիամ Առաքելյանը** երկու օր դուրս չի եկել գործարանից, մինչև չի ա-

---

[937] **Գրիգորյան Ա.,** Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, Երևան, 1960, էջ 176-177:

[938] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 48:

վարտել առաջադրանքի կատարումը: Գործարանի N 1-3 ցեխի առաջավոր բանվորուհիներ **Մարիա Ռիբալկինը, Ասյա Մկրտչյանը, Վարսիկ Մարությանը, Սեբաստիա Խաչատրյանը** մշտապես գերակատարել են պլանները[939]:

Մայրաքաղաքի ծխախոտի գործարանում երկուհարյուրակայիններ դարձան **Աղավնի Միքայելյանը** և **Հռիփսիմե Մարգարյանը**: Հետևելով նրանց՝ գործարանի բոլոր բանվորուհիները գերակատարել են իրենց առաջադրանքները: Գործարանի երկուհարյուրական բանվորուհիներ **Մանյա Ասոյանը, Հասմիկ Հովհաննիսյանը, Թամարա Սարգսյանը** ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից պարգևատրվել են մեդալներով[940]:

Երևանի պահածոների գործարանում իրենց առաջադրանքները սիստեմատիկորեն գերակատարել են **Աստղիկ Սիմոնյանը, Արմիկ Առաքելյանը, Վարդուշ Հարությունյանը, Ասլի Կարապետյանը, Մայրանուշ Պողոսյանը, Նվարդ Թադևոսյանը, Մարիամ Ամիրխանյանը, Արուսյակ Սարուխանյանը, Բավական Ղարիբյանը, Հայկուշ Բարսեղյանը** և ուրիշներ[941]:

Պլանները 200-300 %-ով կատարելը դարձավ առաջավոր բանվորուհիների նշանաբանը: Այդ շարժման մասնակիցների շարքերը գնալով խտանում էր: Թեթև արդյունաբերության ձեռնարկություններում աշխատող բանվորուհիներ **Զարիկ Կարապետյանը, Գոհար Հակոբյանը**, հասնելով արտադրական լավագույն ցուցանիշների, դարձան երեքհարյուրակայիններ: Այդ շարժումը լայն արձագանք գտավ նաև հանրապետության այլ գործարաններում:

Պլանները սիստեմատիկաբար գերակատարելու համար Երևանի պահածոների գործարանի լավագույն բանվորուհիներից 15-ը պարգևատրվել են «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով:

---

[939] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 49:
[940] Տե՛ս նույն տեղում, էջ 49:
[941] Տե՛ս նույն տեղում:

Կոմերիտական կազմակերպությունը երկու անգամ արժանացել է Հայաստանի ԼԿԵՄ կենտկոմի փոխանցիկ դրոշին և մեկ անգամ՝ ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարի խորհրդային և ՀԱՄԿԽ-ի փոխանցիկ դրոշին[942]:

Խորհրդային Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում բազմադազգահայինների շարժման մեջ աչքի են ընկել առաջավոր շատ բանվորուհիներ: Հանրապետության տեքստիլ արդյունաբերության կենտրոն Լենինականի տեքստիլ կոմբինատի հարյուրավոր առաջավոր բանվորուհիներ, ակտիվորեն մասնակցելով այդ շարժմանը, դարձել են նրա դրոշակիրները:

Տեքստիլ կոմբինատի ենթավարպետ **Ա. Ղազարյանը**, որը նախկինում սպասարկել է 104 դազգահի, արձագանքելով բազմադազգահայինների հայրենասիրական շարժմանը, սկսել է սպասարկել 208 դազգահ: Իսկ բազմադազգահային **Պոլինա Կլավկինայի** սպասարկած դազգահների թիվը հասել է 240-ի[943]:

Լենինականի գործվածքային ֆաբրիկայում 24 դազգահ է ղեկավարել **Քնարիկ Մանուկյանը**: Պետական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և Կարմիր բանակի մարտիկներին հանդերձավորելու գործում ցույց տված առաջադիմության համար պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով: **Սուսաննա Արշակյանը** մշակել է մեքենաները ստուգելու իր մեթոդը: Նա ավելորդ անցում չի կատարել, նույնիսկ այն ժամանակ, երբ որևէ մեքենայի վրա արգելակույտ է առաջացել: Նա միշտ պլանը կատարել է 160-180 %-ով՝ պլանից դուրս տալով 500-600 կիլոգրամ կաժ, որից կարելի էր պատրաստել մի քանի հարյուր զույգ սպիտակեղեն, ոտքի փաթաթան, մարլա, սրբիչ: Ս. Արշակյանի հաջողությունների բարձր գնահատականը նշանավորվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով[944]:

---

942 **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 49:
943 Տե՛ս նույն տեղում:
944 Տե՛ս նույն տեղում, էջ 52:

Լենինականի տրիկոտաժի ֆաբրիկայի անվանի բանվորուհի, «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով և «Աշխատանքային արիության համար» մեդալով պարգևատրված **Արմիկ Զարյանը** միաժամանակ ղեկավարել է գուլպա գործող 5 մեքենա:

Գործվածքային ֆաբրիկայում աշխատանքային հերոսության լավագույն օրինակներ են տվել բանվորուհիներ **Սոնյա Շախուլյանը, Շուշիկ Մկրտչյանը, Վարդուշ Մալխասյանը, Խոսրիկ Բաղդասարյանը**, որոնք պլանով նախատեսված 88-ի փոխարեն կատարել են 110 գործողություն: Բարձր գնահատելով Հայաստանի տեքստիլագործների անձնվեր աշխատանքը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1944 թվականին 38 բանվորների պարգևատրել է շքանշաններով ու մեդալներով (մեկ բանվորուհի պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», 5-ը՝ «Պատվո նշան» շքանշանով, 4-ը՝ «Աշխատանքային արիության համար», 9-ը՝ «Աշխատանքային գերազանցության համար» մեդալներով)[945]:

Պետական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու համար միայն տեքստիլ կոմբինատի բանվոր-բանվորուհիներից շուրջ 1500 մարդ պարգևատրվել են «Աշխատանքային արիության», «Կովկասի պաշտպանության» և «Հաղթանակի համար» մեդալներով:

Բազմադազգահայինների շարժման շնորհիվ բարձրացավ Հայաստանի բանվոր դասակարգի, մասնավորապես տեքստիլագործների տեխնիկական մակարդակը:

Պատերազմի ժամանակաշրջանում սպառազինությունը, ռազմական հանդերձանքը ու պարենամթերքը ժամանակին ռազմաճակատ հասցնելը, այսինքն՝ տրանսպորտի աշխատանքը, առաջնակարգ նշանակություն են ստացել:

Երկաթուղային տրանսպորտի տղամարդ աշխատողներից շատերը մեկնել են ռազմաճակատ: Նրանց փոխարինելու են եկել կանայք:

---

[945] «Коммунист», 15 февраля, Баку, 1944.

Դասընթացների միջոցով հարյուրավոր կանայք դարձել են մեքենավարներ, մեքենավարի օգնականներ, փականագործներ, խառատներ, կայարանի հերթապահներ, կցորդներ, հեռագրիչներ և այլ մասնագետներ, որոնք տղամարդկանց հետ համահավասար աշխատել են հայրենիքի և ռազմաճակատի համար: 1944 թվականին Հայաստանում երկաթուղային կին կադրերի թիվը անցել է 1000-ից[946]:

Վարդանուշ Կիրակոսյանը, Պայծառ Սարգսյանը, Լենա Մարտիրոսյանը, Մանիկ Կարապետյանը մինչև պատերազմը չեն ունեցել տեխնիկական պատրաստություն: Նրանք դեպոյում են սովորել փականագործի մասնագիտությունը: Փականագործ **Հայաստան Բաղդասարյանը** օրվա առաջադրանքը կատարել է 300-400 %-ով:

Հայրենական պատերազմի դժվարին օրերին Լենինականի կայարանում աշխատանքի ընդունված **Ազգուշ Զատիկյանը** ժամանակին ապահովել է գնացքների բարձման-բեռնաթափման գործը, ինչպես նաև գնացքների ընդունումն ու ուղեկցումը: Լավագույն կերպով է աշխատել Ղալթախչի կայարանի հերթապահ **Թամարա Պողոսյանը**: Ռազմական ժամանակի ձևով աշխատելու հիանալի օրինակ են ցույց տվել Համամլու (Սպիտակ) կայարանի սլաքավար **Օֆելյա Եղիազարյանը**, 16-րդ ուղեմասի գծի պահակներ **Աննա Խաչատրյանը և Սուսաննա Ղազարյանը**[947]:

Հիշատակության արժանի է հեռախոսային ու հեռագրական կապի ցանցում աշխատող հայրենասեր հայուհիների գործունեությունը: Կին կապավորները գիշեր-ցերեկ աշխատել են քրտնաջան կերպով՝ նշանաբան ունենալով, որքան կարելի է ավելի արդյունավետ կատարել առաջադրանքները, ժամանակին տեղ հասցնել նամակները ռազմաճակատից թիկունք և թիկունքից ռազմաճակատ:

Պատերազմի դժվարին օրերին լավ էր աշխատում Լենինականի հանգուցային կապի 8-րդ ուղեմասի կոլեկտիվը: Պատվով կատարելով

---

[946] ՀԱԱ, ֆ. 163, ց. 15, գ. 252, թ. 60:
[947] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 54:

համամիութենական սոցիալիստական մրցությամբ ստանձնած պարտավորությունները՝ այդ կոլեկտիվը շահել է առաջին տեղը և արժանացել Անդրկովկասյան երկաթուղու ճանապարհների վարչության փոխանցիկ կարմիր դրոշին:

Իրենց լավ աշխատանքով առանձնապես աչքի են ընկել **Ռոզա Պետրոսյանը**, կապի ուղեմասի հրահանգչուհի **Օֆելյա Փիլյանը**, **Նվարդ Բաղդասարյանը**, որոնք պլանները կատարել են 200 %-ով[948]:

Պատերազմի ծանր օրերին կանանց ակտիվ մասնակցությամբ ստեղծվեցին նոր սարքավորումներ, կատարելագործվեցին շատ մեքենաներ, դրսից բերվող շատ նյութեր փոխարինվեցին տեղականով: Այդ բոլորը նպաստել են պլանների հաջող կատարմանը:

Այսպիսով՝ Հայրենական պատերազմի սկզբից մինչև նրա հաղթական ավարտը Խորհրդային Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատող կանայք՝ որպես նվիրյալ հայրենասերներ, իրենց անդուլ աշխատանքով անգնահատելի ծառայություն են մատուցել և պատվով կատարել հայրենիքի հանդեպ իրենց սրբազան պարտքը:

* * *

Պատերազմը մեծ փորձությունների առաջ կանգնեցրեց նաև կոլտնտեսային գյուղացիությանը: Ինչպես բանվոր դասակարգը, այնպես էլ աշխատավոր գյուղացիությունը մեր հայրենիքի համար ծանր օրերին ցուցաբերեցին նվիրյալ հայրենասիրություն և հաղթահարելով պատերազմի ժամանակաշրջանի դժվարությունները՝ Կարմիր բանակի համար դարձան ամուր հենարան:

Պատերազմի տարիներին պետությունը լուրջ խնդիրներ դրեց գյուղատնտեսության աշխատավորների առջև, որոնք անձնվեր աշխատանքով ապահովեցին ռազմաճակատին անհրաժեշտ սննդամթերքներով, իսկ գործարանները՝ հումքով:

---

[948] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 55:

Հայրենական պատերազմի ժամանակ Խորհրդային Հայաստանը թիկունքային շրջան էր: Չնայած դրան՝ պատերազմը ծանր հետևանքներ թողեց նաև մեր հանրապետության վրա: Խորհրդային կոլտնտեսային գյուղացիությունը խորապես գիտակցեց մեր հայրենիքի վրա կախված վտանգի լրջությունը, թշնամուն հաղթելու գործում թիկունքի կարևոր նշանակությունը: Ուստի չխնայելով իր ուժերն ու կարողությունները՝ նա ամեն կերպ ձգտում էր ընդարձակել ցանքատարածությունները, բարձրացնել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը և անասնաբուծության մթերատվությունը:

Կուսակցական, կոմերիտական և հասարակական կազմակերպությունների քաղաքական-մասսայական լուրջ աշխատանքի շնորհիվ հանրային տնտեսության մեջ ներգրավվեց գյուղի ամբողջ բնակչությունը, որի գերակշռող մասը կազմում էին կանայք, ծերերը և անչափահասները:

Գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման գործում հատկապես մեծ էր կանանց դերը: Առանց չափազանցության կարելի է նշել, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին հիմնականում կանայք են տարել գյուղատնտեսական աշխատանքների ոչ դյուրին բեռը: 1941 թվականի 36 %-ից կանանց տեսակարար կշիռը 1944 թվականին բարձրացավ 47 %-ով[949]:

1941 թվականի հունիսին Ախտայի (այժմ՝ Հրազդան) շրջանում տեղի է ունեցել երիտասարդ կանանց և աղջիկների հավաք: Հավաքի շուրջ 500 մասնակիցներ հանդես են եկել հանրապետության երիտասարդությանն ուղղված բաց նամակով: Նրանք գրել են. «…Մենք, ինչպես միշտ, այնպես էլ այժմ, առանց խուճապի մատնվելու, պատրաստ ենք ամեն կերպ օգնել մեր հարազատ ու հերոսական Կարմիր բանակին՝ թշնամուն կործանիչ և ոչնչացնող հարված հասցնելու համար»[950]:

---

[949] Советская Армения в годы Великой отечественной войны (1941-19465), сборник документов и материалов, Ереван, 1975, с. 38-40.
[950] «Սովետական Հայաստան», 28 հունիսի, Երևան, 1941:

Նրանք բոլոր կանանց և աղջիկներին կոչ են արել փոխարինել բանակ մեկնած իրենց եղբայրներին ու մյուս հարազատներին, ավելի մեծ եռանդով մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին, դրանք կատարել սահմանված ժամկետում, սովորել ռազմական գործը: Հավաքից հետո 100 երիտասարդ կին ու աղջիկ ընդգրկվել են գյուղատնտեսությունն ուսումնասիրող խմբակներում: Նրանց օրինակին հետևել են հազարավոր կանայք Սիսիանի, Ղամարլուի, Սպիտակի, Ստեփանավանի, Վաղարշապատի, Աշտարակի և մյուս շրջաններում[951]:

Ախտայի շրջանի Ներքին Ախտա գյուղում 72 կին, փոխարինելով ռազմաճակատ մեկնած իրենց հարազատներին, կազմել են 8 օղակ: Նրանք գերազանցորեն կատարել են խոտհունձը: 1941 թվականի հունիսին Վաղարշապատի շրջանում հազարավոր կանայք դուրս են եկել դաշտ՝ գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու համար: Պատերազմի սկզբում Կիրովականի շրջանում կոլտնտեսային արտադրության մեջ ընդգրկված երիտասարդ կանանց ու աղջիկների թիվը հասել է 5000-ի[952]:

Պատերազմի առաջին օրերին Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղում դաշտ են եկել ավելի քան 500 կանայք: Նրանց անձնվեր աշխատանքի շնորհիվ կոլտնտեսությունը ժամանակից շուտ ավարտել է 700 տոննա սիլոսի պատրաստումը:

Կուրթանցիներից ետ չեն մնացել Սպիտակի շրջանի Համամլու գյուղի 600 կանայք և աղջիկներ, որոնք աշխատել են բերքահավաքը կազմակերպել անկորուստ: Սևանի շրջանի Օրդաքլու (Լճաշեն) գյուղի կոլտնտեսության 520 կանայք և աղջիկներ ժամանակին կատարել են բերքահավաքի աշխատանքները: «Ավելի շատ հաց Կարմիր բանակին», «Անխոցելի դարձնենք Կարմիր բանակի թիկունքը», «Եթե հարկ լինի, հրացանները ձեռքներիս՝ կկանգնենք Կարմիր բանակի շարքե-

---

951 **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 59:
952 «Սովետական Հայաստան», 24 սեպտեմբերի, Երևան, 1941:

ռում՝ թշնամուն հաղթելու համար». սրանք էին Օրդաքլուի կոլտնտեսուհիների աշխատանքային նշանաբանները:

Ռազմաճակատ ուղարկելով իրենց ամուսիններին, եղբայրներին, որդիներին՝ Վարդաշենի կոլտնտեսուհիները կրկնապատկված եռանդով են սկսել աշխատել կոլտնտեսային դաշտերում: Վ. Մելիքյանի բրիգադում աշխատող կանանց թիվը պատերազմի առաջին ամիսներին հասել է 35-40-ի այն դեպքում, երբ մինչև պատերազմը բրիգադի կին անդամների թիվը 20-25-ից չէր անցնում: «Ես սիրով կփոխարինեմ բանակ մեկնած եղբորս,– ասում էր կոլտնտեսուհի Շողիկ Հարությունյանը,– և պարտավորվում եմ ժամանակին և բարձրորակ կատարել հացահատիկի, ծխախոտի բերքահավաքի աշխատանքները»[953]:

Հանրապետության աշխատավորուհիների ներգրավումը կոլտընտեսությունների աշխատանքներին ավելի ուժեղացել է Սովետական Միության կանանց համապատասխան կոչի հրապարակումից հետո: «Բանվորուհինե՛ր, կոլտնտեսուհինե՛ր և ծառայողնե՛ր, է՛լ ավելի վստահորեն տիրապետեցեք տղամարդու պրոֆեսիաներին, դազգահներին, տրակտորներին մոտ, կուլտուրայի և արվեստի տեղամասերում ավելի վճռականորեն փոխարինեք նրանց, ովքեր մեկնել են առաջավոր դիրքերը: ...Հայրենիքի նկատմամբ ձեր ամբողջ սիրով, թշնամու նկատմամբ ամբողջ ատելությամբ ամրապնդեցեք հաղթական թիկունքը»,– ասված է հիշյալ կոչում[954]:

Հանրապետության կոլտնտեսուհիները միահամուռ կերպով են միացել այդ կոչին: Իջևանի շրջանի կոլտնտեսային առաջավորների ցույցը կոչ է արել հանրապետության կանանց փոխարինել իրենց ամուսիններին, եղբայրներին ու որդիներին, աշխատել նոր եռանդով, կրկնապատկված ուժով, առանց քուն ու դադարի, հարկ եղած դեպքում հրացան վերցնել և կրծքով պաշտպանել խորհրդային հայրենիքը:

---

[953] «Կոլխոզ ուղի», N 57, Մարտունի, 1941:
[954] «Правда», 18 июля, Москва, 1941.

Հայրենական պատերազմի ծանր օրերին լուրջ ուշադրություն է դարձվել տրակտորիստների, կոմբայնավարների, օղակավարների, բրիգադավարների, ֆերմաների վարիչների և կոլտնտեսության նախագահների որակյալ կադրեր պատրաստելու վրա: Հայկական ԽՍՀՄ-ում կանայք մեծ թիվ են կազմել հիշյալ մասնագետների շարքում:

1941 թվականի հունիսին հանրապետությունում կանանց և աղջիկների շրջանում կազմակերպվել են գյուղատնտեսական տարբեր մասնագիտությունների կարճատև դասընթացներ, որոնք տևել են մինչև 1942 թվականի փետրվարը: Այդ դասընթացների շրջանավարտներից կոլտնտեսության նախագահներ են ընտրվել 21 մարդ, գյուղխորհրդի նախագահներ՝ 169, բրիգադավարներ դարձել 455, ֆերմայի վարիչներ՝ 166 մարդ[955]:

Դասընթացներ են կազմակերպվել նաև հետագա տարիներին: Դասընթացներում սովորողների զգալի մասը կազմել են կանայք:

1941-1944 թվականներին հանրապետության կոլտնտեսություններում ղեկավար աշխատանքի առաջ են քաշվել 700 կոլտնտեսուհիներ[956]: Կանանց տեսակարար կշիռը բարձրացել է ղեկավար կադրերի համալրման տեսակետից: Այսպես, եթե կոլտնտեսությունների նախագահների մեջ 1940 թվականին կին նախագահները կազմել են 0.5 %, ապա 1945 թվականին այդ ցուցանիշը բարձրացել է՝ հասնելով 0.7 %-ի: Կանանց թվաքանակն աճ է ունեցել հաշվապահների ու բրիգադավորների կազմում: Անասնապահական ֆերմաների վարիչների շարքում կանանց թվաքանակն ավելացել է մինչև 1944 թվականը և նվազել 1945 թվականին, երբ ռազմաճակատից տղամարդիկ սկսել են վերադառնալ[957]:

---

[955] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 63:
[956] Տե՛ս նույն տեղում:
[957] Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 587:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանրապետության բոլոր 1035 կոլտնտեսություններում կանայք ակտիվ մասնակցություն են ունեցել գյուղատնտեսական աշխատանքներին: Եթե 1940 թվականին 146 հազար աշխատունակ կանանցից հանրային աշխատանքներին մասնակցել են 133 հազարը, ապա 1942 թվականին՝ 150 հազար աշխատունակ կանանցից 147 հազարը[958]:

1944 թվականին հանրապետության կոլտնտեսային աշխատավորների թվում կանայք կազմել են 68.3 %-ը: Նրանք վաստակել են կոլտնտեսականների բոլոր աշխօրերի 49.7 %-ը[959]:

Եթե 1940 թվականին հանրապետության կոլտնտեսուհիներից 200-300 աշխօր են վաստակել 5880-ը, 300-400 աշխօր՝ 1040-ը և 400-ից ավելի աշխօր՝ 261 մարդ, ապա 1944 թվականին 19 հազար կոլտնտեսուհիներ վաստակել են 200-300 աշխօր, 4800-ը՝ 300-400 աշխօր, 1000-ը՝ 400-ից ավելի աշխօր[960]: Այս թվերը վկայում են Հայրենական պատերազմի տարիներին կոլտնտեսությունների հանրային աշխատանքներում կանանց մասսայական մասնակցության մասին:

Ընդգրկվելով համաժողովրդական մրցության մեջ՝ կանայք պայքարել են գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասնապահության մթերատվության բարձրացման համար:

Հայկական ՍՍՀ կոլտնտեսություններում կազմակերպվել են բարձր բերքի համար պայքարող ճակատային երիտասարդական-կոմերիտական օղակներ: 1943 թվականին այդպիսի օղակների թիվը հասել է 775-ի, իսկ 1945 թվականին՝ 1648-ի[961]:

Բարձր բերք ստանալու համար օղակավարուհիներից «Աշխատանքային կարմիր դրոշ» շքանշանով պարգևատրվել են Սրմա Աստոյանը (Սպիտակ շրջանի Չկալովի անվան կոլտնտեսություն), Մագթաղ

---

[958] Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920-1960 թթ., Երևան, 1960, էջ 260:
[959] ՀԱԱ, ֆ. 1, ց. 33, գ. 176, թ. 27:
[960] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 63:
[961] Տե՛ս նույն տեղում, էջ 64:

Հակոբյանը (Ալավերդու շրջանի Շնողի կոլտնտեսություն), Մարգարիտա Սուքիասյանը (Մարտունու շրջանի «Հոկտեմբեր» կոլտնտեսություն) և Եպրաքսյա Կոդայանը (Ախոյանի շրջան)[962]:

«Պատվո նշան» շքանշանի արժանացել են երեք օղակավարուհի, իսկ «Աշխատանքային արիության» և «Աշխատանքային գերազանցության համար» մեդալների՝ 23 օղակավարուհի: Բարձր բերքի համար պայքարող օղակներում ընդգրկված կանայք և աղջիկները բարեխիղճ աշխատանքով հասել են մեծ հաջողությունների:

Պատերազմի առաջին իսկ օրերին տրակտորների պակասը զգալի է դարձել: Հազարավոր մեխանիզատորներ մեկնել են գործող բանակ: Հանրապետության կանայք մեծ խանդավառությամբ են նվիրվել գյուղատնտեսական տեխնիկային տիրապետելու գործին: Կանայք ձեռք են բերել նոր մասնագիտություններ: Նրանք դարձել են տրակորիստներ, կոմբայնավորներ, վարորդներ և այլ մասնագետներ: Բացված կարճատև դասընթացներում միայն 1943 թվականին պատրաստվել են 7925 մեխանիզատորներ, որոնցից 858-ը կանայք էին, իսկ 1944 թվականի պատրաստվել են 441 կին տրակտորիստներ և 60 կին կոմբայնավարներ[963]:

Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանը պատերազմի տարիներին տարբեր մասնագիտություններ է սովորեցրել 300 կոլտընտեսուհիների[964]:

Ալագյազի շրջանում ՄՏ կայանների գծով կազմակերպվել է երեքամսյա դասընթաց, որտեղ տրակտորի տեխնիկան յուրացնելու համար սովորել են 22 երիտասարդ աղջիկներ, իսկ տրակտորիստի որակավորում ստացած 15 մարդ՝ Երևանի մեխանիզատորների կարճատև դասընթացներում: Նման դասընթացներ կազմակերպվել են նաև

---

[962] «Коммунист», 11 февраля, Баку, 1944.
[963] ՀԱԱ, ֆ. 163, ց. 15, գ. 242, թ. 35:
[964] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 31, գ. 103, թ. 13:

Մարտունու ՄՏ կայանին կից, որտեղ սովորել է 29 կին, իսկ Կալինինոյի ՄՏ կայանը պատրաստել 36 աղջիկ-մեխանիզատորներ:

Դասընթացներն ավարտողների մեծ մասը բարեխղճորեն աշխատել է գյուղատնտեսության մեջ: Տրակտորիստուհիները ջանացել են խնայել վառելանյութը, պահեստամասերը և վարը կատարել ժամանակին: **Ուստիան Հովակիմյանը** 1937 թվականից աշխատել է Աշտարակի ՄՏ կայանում, սիստեմատիկորեն գերակատարել է առաջադրանքները: 1941 թվականի օգոստոս ամսին 13 աշխատանքային օրվա պլանը գերակատարել է կրկնակի՝ տնտեսելով 140 կիլոգրամ վառելանյութ:

Ղուկասյանի շրջանի Ղազանչի գյուղի տրակտորիստուհիներ **Օֆիկ Գրիգորյանը, Պայծառ Ղազարյանը, Եպրաքսյա Քերոբյանը և Եվգինե Գրիգորյանը** գերակատարել են իրենց աշխատանքային պլանները[965]:

Սեդա Հովհաննիսյանը, Ծաղիկ Խաչատրյանը և Ծաղիկ Պողոսյանը (Քանաքեռ), ստանձնելով բանակ մեկնած իրենց ամուսինների գործը, երդվել են մինչև պատերազմի հաղթական ավարտը բարձր պահել ռազմաճակատ մեկնած տրակտորիստների աշխատանքային ավանդները: 1941 թվականի աշնանը նրանք օրվա առաջադրանքները կատարել են 130-150 %-ով: Նույնպիսի ցուցանիշներ է տվել Ախտայի ՄՏ կայանի տրակտորիստուհի **Ս. Գրիգորյանը**[966]:

Հոկտեմբերյանի շրջանի Շահրիարի ՄՏ կայանում աշխատել են 37 կին տրակտորիստներ, որոնք ամեն կերպ ձգտել են աշնանացանը և ցրտահերկը կատարել ժամանակին և որակով: Նույն շրջանից **Հրանուշ Սուքիասյանը**, երբ հայրը մեկնել է ռազմաճակատ, ընդունվել է տրակտորիստների դասընթացը, ավարտելուց հետո սկսել է ինքնուրույն վարել մեքենան, իսկ 1943 թվականին արժանացել է «Սոցիալիստական գյուղատնտեսության գերազանցիկ» կրծքանշանի[967]:

---

[965] **Մարտիրոսյան Լ. Վ.,** նշվ. աշխ., էջ 68:
[966] Տե՛ս նույն տեղում:
[967] Տե՛ս նույն տեղում:

1942 թվականին հանրապետության տրակտորիստներն ու տրակտորիստուհիները, արձագանքելով երկրի առաջավոր տրակտորիստուհիների դիմումին, վերցրել են նոր պարտավորություններ:

1942 թվականին բերքահավաքը կազմակերպված անցկացնելու համար կոմերիտական կազմակերպությունները կարճ ժամանակամիջոցում հավաքել են 214 հազար ռուբլու արժողությամբ տրակտորի և գյուղատնտեսական այլ մեքենաների պահեստամասեր: Կազմակերպվել են կին տրակտորիստների 28 տրակտորային բրիգադներ, որոնք բերքահավաքը անցկացրել են սեղմ ժամկետում[968]:

Կիրովականի (Վանաձորի) շրջանի ՄՏ կայանի կոլեկտիվը, մտնելով համաժողովրդական սոցմրցման մեջ, ստանձնել է բարձր պարտավորություններ: Տրակտորիստուհի **Նատաշա Ավետիսյանը** խնդիր է դրել կատարել 300 հեկտար բարձրորակ վար և տնտեսել 600 կիլոգրամ վառելանյութ, վերանորոգման ծախսերը կրճատել 10 %-ով, գարնանացանի ընթացքում պատրաստել երկու տրակտորիստ: Իր պարտավորությունը նա կատարել է պատվով:

Տրակտորիստուհի **Թագուհի Դարբինյանը** պարտավորվել է 2.2 հեկտարի փոխարեն մեկ հերթափոխում կատարել 3 հեկտար վար՝ յուրաքանչյուր հեկտարում տնտեսելով երկու կիլոգրամ վառելանյութ: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թվականի փետրվարի 8-ի հրամանագրով Թ. Դարբինյանը պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով[969]:

Մտնելով համամիութենական սոցիալիստական մրցման մեջ՝ իրենց հայրենանվեր գործերով լավագույն արդյունքների են հասել Բասարգեչարի և Իջևանի շրջանների ՄՏ կայանների աշխատողները: Իջևանի ՄՏ կայանի 5-րդ տրակտորային բրիգադը, որի ղեկավարն էր **Անահիտ Գյուզալյանը**, 1942 թվականի գարնանացանի պլանը կատարել է 166 %-ով՝ տնտեսելով 1342 կիլոգրամ վառելանյութ, իսկ Բա-

---

968 ՀԱԱ, ֆ. 575, ց. 1, գ. 118, թ. 28:

969 **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 69:

սարգեչարի կոլտնտեսության կանանց 7-րդ բրիգադը 350 հեկտար վարի փոխարեն կատարել է 571 հեկտար՝ տնտեսելով 3620 կիլոգրամ վառելանյութ[970]:

Հոկտեմբերյանի շրջանի Մեծ Շահրիարի (այժմ՝ գյուղ Նալբանդյան) ՄՏ կայանի տրակտորիստուհիներ **Նազանի Մարտիրոսյանը, Վերգուշ Գրիգորյանը, Հռիփսիմե Ազարյանը և Էմմա Հարությունյանը** 1942 թվականի գարնանը հերկել են 1014 հեկտար հողամաս՝ տնտեսելով 1115 կիլոգրամ վառելանյութ: Նրանց աշխատանքային սխրանքների մասին պատմել է «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը[971]: Թերթը կարդալուց հետո N ավիազորամասից սերժանտ Ժորժ Գունկը և Վիկտոր Բորյուժեն տրակտորիստուհիներին ուղարկել են նամակ, որտեղ ասված է. «Ձեր աշխատանքը մեզ ոգեշնչում է է՛լ ավելի լավ յուրացնել ավիացիոն վարպետությունը: Մենք պատրաստ ենք ամեն րոպե հակահարված տալու թշնամուն: Ցանկանում ենք Ձեզ ավելի լավ աշխատանք, դրանով իսկ ամուր կլինի ձեր հարվածը թշնամուն»[972]:

Հանրապետության մի շարք ՄՏ կայաններ գերազանց են կատարել գարնանացանի և աշնանացանի աշխատանքները, համամիութենական սոցիալիստական մրցության մեջ դուրս են եկել որպես հաղթողներ և արժանացել փոխանցիկ կարմիր դրոշի:

Երկրորդ կարգի մրցանակի է արժանացել Հոկտեմբերյանի ՄՏ կայանը, որի աշխատողների զգալի մասը կանայք էին:

1942 թվականին արտադրական պլանները գերակատարելու, ինչպես նաև ինքնարժեքի իջեցման ու վառելանյութի տնտեսման համար ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով պարգևատրված մեքենատրակտորային արհեստանոցների 90 լավագույն աշխատողներից 8-ը կանայք էին: Նրանց թվում էին Իջևանի ՄՏԿ-ի տրակտորային բրիգադի բրիգադավար **Արաքսյա Իսկանդարյանը,** Շամշադինի ՄՏԿ-ից՝

---

970 «Սովետական Հայաստան», 6 սեպտեմբերի, Երևան, 1942:
971 «Комсомольская правда», 29 апреля, Москва, 1942.
972 «Սովետական Հայաստան», 3 հունիսի, Երևան, 1942:

Հրանուշ Հովակիմյանը, Գորիսի ՄՏԿ-ից՝ **Հասմիկ Սալիկյանը**, Շահրիարի ՄՏԿ-ից՝ **Անահիտ Թորոսյանը**, Կիրովականի ՄՏԿ-ից՝ **Աննա Գրիգորյանը**[973]:

Ամփոփելով կանանց տրակտորային բրիգադների համամիութենական սոցիալիստական մրցության 1943 թվականի արդյունքները՝ ՀամԼԿԵՄ կենտկոմը որոշել է գյուղատնտեսական աշխատանքներին ակտիվորեն մասնակցելու համար Կենտկոմի փոխանցիկ կարմիր դրոշը հանձնել Իջևանի շրջանի կին տրակտորիստների բրիգադին, որի բրիգադավարն էր Արաքսյա Իսկանդարյանը: ՀամԼԿԵՄ կենտկոմի պատվոգրով պարգևատրվել են Բասարգեչարի և Հոկտեմբերյանի ՄՏԿ-ների տրակտորիստուհիները[974]:

Համամիութենական սոցիալիստական մրցության հրավերը ընդունած Մկոյանի շրջանի Շատին գյուղի կոլտնտեսականները պարտավորվել են աշնանացան ցորենի յուրաքանչյուր հեկտարից պլանով նախատեսված 11 ցենտների փոխարեն ստանալ 15 ցենտներ, իսկ գարնանացան ցորենի յուրաքանչյուր հեկտարից՝ 9 ցենտների փոխարեն 11 ցենտներ:

1942 թվականին հացահատիկային կուլտուրաների ցանքի պլանը շատինցիները կատարել են 106 %-ով, կտավատինը 140, կարտոֆիլինը՝ 130, բրինձինը՝ 135, կորեկինը՝ 550 %-ով[975]:

Սոցիալիստական մրցություն է ծավալվել տարբեր շրջանների կոլտնտեսությունների միջև:

Ազիզբեկովի շրջանի կոլտնտեսականները մրցման են հրավիրել Միկոյանի շրջանի կոլտնտեսականներին: Մինչև 1942 թվականի հուլիսի 20-ը երկու շրջաններում միմյանց հետ պայմանագիր են ստորագրել

---

973 «Սովետական Հայաստան», 5 մայիսի, Երևան, 1943:
974 **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 70:
975 «Սովետական Հայաստան», 5 օգոստոսի, Երևան, 1942:

30 կոլտնտեսություն, 86 բրիգադ, 3130 կոլտնտեսականներ, այդ թվում՝ ավելի քան 1700 կին[976]:

Վաղարշապատի շրջանի կոլտնտեսուհիները դիմել են շրջանի գյուղատնտեսության կին աշխատողներին՝ առաջարկելով մասնակցել կոլտնտեսային աշխատանքներին, 1942 թվականին վաստակել են ոչ պակաս 250-300 աշխօր (յուրաքանչյուրի համար): «Փոխարինելով բանակ մեկնած մեր հայրերին, ամուսիններին, եղբայրներին, հարազատներին,– գրել են Վաղարշապատի շրջանի առաջավոր կոլտնտեսուհիների հավաքի մասնակիցները,– կաշխատենք այնպես, ինչպես նրանք կռվում են գերմանական ֆաշիստների դեմ»[977]:

Համամիութենական մրցության մեջ են մտել նաև Նոր Բայազետ շրջանի Նորադուզ գյուղի կոլտնտեսության 100 աղջիկներ: Նրանք դաշտից տուն են վերադարձել միայն հացահատիկի վերջին հասկը հավաքելուց հետո:

Հացահատիկի արտադրությունն ավելացնելու գործում զգալի հաջողությունների են հասել Իջևանի շրջանի կոլտնտեսությունները:

Հացահատիկի հնձի օրվա առաջադրանքները 150-200 %-ով են կատարել Նոյեմբերյանի շրջանի Լամբալուի կոլտնտեսության դաշտավարական 4-րդ բրիգադի անդամները: Օրինակելի և նվիրված աշխատանքով աչքի են ընկել կոլտնտեսուհիներ Ֆաթմա Հաշտա կզին, Խեյթանոս Ալի կզին, Սաֆորա Օսմա կզին և ուրիշներ[978]:

Ռինդ գյուղի (Միկոյանի շրջան) կոլտնտեսության գրեթե բոլոր կանայք մասնակցել են հացահատիկի բերքահավաքին: Կոլտնտեսուհիներ Աստղիկ Ստեփանյանը, Նունե Ասատրյանը, Նունուֆար Կարլենյանը պլանով նախատեսված 1000 քառակուսի մետրի փոխարեն օրեկան հնձել են 1800 քառակուսի մետր[979]:

---

976 **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 72:
977 Տե՛ս նույն տեղում:
978 Տե՛ս նույն տեղում, էջ 73:
979 Տե՛ս նույն տեղում:

Պատերազմի առաջին օրերին Թալինի շրջանի Ձիթհանքով գյուղի Բուդյոննու անվան կոլտնտեսության նորեկ կոլտնտեսուհիներից էր 16-ամյա **Մարիամ Մարտիրոսյանը**: Նա մեծ ցանկությամբ փոխարինել է ռազմաճակատ մեկնած տրակտորիստ եղբորը: Մարիամը գործուղվել է Երևանի գյուղատնտեսական դպրոց: Ավարտելով 4-ամսյա դասընթացը՝ նա՝ որպես տրակտորիստ, սկսել է աշխատել կոլտնտեսային դաշտերում: Շուտով կոլտնտեսության վարչությունը նպատակահարմար է գտել եռանդուն կոմերիտուհուն նշանակել դաշտավարական օղակի օղակավար: Օղակին հատկացվել է 10 հեկտար հողամաս: Հմտորեն կազմակերպելով գործը՝ Մ. Մարտիրոսյանի օղակը նվաճել է ռեկորդային բերք: Օղակի անդամները խնամքով են մշակել հողամասը, ցանել տեսակավոր սերմ: Օղակը տարեցտարի բարձրացրել է հացահատիկի բերքատվությունը: Հաղթանակի տարվա աշնանը օղակը ցանել է աշնանացան ցորեն, որի արդյունքը հրաշալի էր. 1946 թվականին պլանով նախատեսված 16 ցենտների փոխարեն յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 39.5 ցենտներ ցորեն[980]:

Պատերազմի տարիներին կոլտնտեսությունը ղեկավարելու անսպառ եռանդ, մեծ հմտություն է ցուցաբերել Աղինի շրջանի Քյալալի (Նորաբեր) գյուղի կոլտնտեսության նախագահ, կուսակցության անդամ **Փառանձեմ Աբգարյանը**: Նա կոլտնտեսության աշխատանքները ղեկավարել է հմտորեն: Կոլտնտեսությունը 1943 թվականին ստացել է հարուստ բերք՝ հեկտարից 20 ցենտներ հացահատիկ: 230 հեկտար հացահատիկի հունձը նախատեսված 20 օրվա փոխարեն կոլտնտեսականները կատարել են 12 օրում: Փ. Աբգարյանը կարողացել է հնձի դուրս բերել գյուղի բոլոր կանանց: Կոլտնտեսությունը ժամկետից շուտ է կատարել 1943 թվականի պետական մթերումների պլանը[981]:

---

[980] **Սահակյան Վ., Գևորգյան Վ.,** Հայաստանի սոցիալիստական աշխատանքի հերոսները, Երևան, 1960, էջ 44:
[981] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 74:

Հայրենական պատերազմի տարիներին հանրապետությունում ավելացել են նաև կարտոֆիլի ցանքատարածությունները:

1940 թվականի համեմատությամբ 1945 թվականին կարտոֆիլի ցանքատարածությունը կրկնապատկվել է, բարձրացել է բերքատվությունը, իսկ համախառն բերքը հասել մեկ ու կես միլիոն ցենտների[982]:

Կարտոֆիլի բերքատվության բարձրացման գործում մեծ դեր են խաղացել գյուղատնտեսության երկուհարյուրակայինները, որոնց շարքերը համալրել են բազմաթիվ անվանի կոլտնտեսուհիներ:

Ալավերդու շրջանի Ծաթեր գյուղի կոլտնտեսության օղակավարուհի **Հայկանուշ Գալստյանը** փոխարինել է ռազմաճակատ մեկնած ամուսնուն և անձնվիրաբար պայքարել է կարտոֆիլի առատ բերք աճեցնելու համար: Հայկանուշը մեծ խնամքով մշակել է իրեն հատկացված չորս հեկտար հողամասը: Դրա շնորհիվ 1944 թվականին հեկտարից պլանով նախատեսված 90 ցենտների փոխարեն նա ստացել է 280 ցենտներ կարտոֆիլ: Դա ռեկորդային բերք էր, որի համար Հ. Գասպարյանը արժանացել է կառավարական բարձր պարգևի՝ «Լենինի» շքանշանի[983]:

Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղի Միկոյանի անվան կոլտնտեսությունում կարտոֆիլի բարձր բերքի վարպետներ են դարձել **Արուսյակ Դարբինյանը, Աստղիկ Գալոյանը, Հասմիկ Խանամյանը և Հայկանուշ Մագդալյանը**:

Արուսյակ Դարբինյանի օղակը 1944 թվականին պլանով նախատեսված 95 ցենտների դիմաց յուրաքանչյուր հեկտարից ստացել է 164 ցենտներ կարտոֆիլի բերք[984]:

Հայրենական պատերազմի տարիներին բամբակի նշանակությունը ավելի է բարձրացել: Բամբակն անհրաժեշտ էր արդյունաբերության, ռազմաճակատի կարիքները, առավելապես հոսպիտալների

---

[982] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 75:
[983] Տե՛ս նույն տեղում:
[984] Տե՛ս նույն տեղում:

պահանջները բավարարելու համար: Կուսակցության և կառավարության պահանջով բամբակացան շրջանների կուսակցական կազմակերպությունները, կոլտնտեսությունների ղեկավարները և կոլտնտեսականները լարված աշխատանք են տարել բամբակե առատ բերք աճեցնելու և այն անկորուստ հավաքելու համար:

1942 թվականի սեպտեմբերին՝ բամբակի բերքահավաքի առաջին օրը, Փոքր Շահրիար գյուղի կոլտնտեսությունը գործարանին է հանձնել 2.5 տոննա բամբակ: Կոլտնտեսուհի **Աննա Ավչյանը** մեկ օրվա ընթացքում հավաքել է 100 կիլոգրամ բամբակ[985]: Բամբակաշատ գյուղի կոլտնտեսուհի **Ասանեթ Սիմոնյանը** պլանով նախատեսված 45 կիլոգրամի փոխարեն օրական հավաքել է 220-230 կիլոգրամ բարձրորակ բամբակ:

Հոկտեմբերյանի շրջանի Ջաֆարաբադի կոլտնտեսության օղակավարուհի **Թամարա Շահբազյանը** աշխատել է 1934 թվականից՝ բազմիցս արժանանալով համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունքին: Թ. Շահբազյանը պլանով նախատեսված 13 ցենտների դիմաց հեկտարից ստացել է 30 ցենտներ բամբակ և 75-80 ցենտներ խաղող: Մտնելով սոցմրցման մեջ՝ նա պարտավորություն է ստանձնել հավաքել 250 կիլոգրամ բամբակ, այսինքն՝ օրական կատարել 6 նորմա[986]:

Ղամարլուի (Արտաշատ) շրջանի Վերին Աղբաշ գյուղի կոլտնտեսության օղակավարուհի **Նազիկ Ստեփանյանը** 1941 թվականին յուրաքանչյուր հեկտարից ստացել է 50 ցենտներ բամբակ, իսկ հաջորդ տարն՝ 60 ցենտներ: Նույն շրջանի Ներքին Աղբաշ գյուղի կոլտնտեսության բամբակի բարձր բերքի վարպետ **Եսթեր Հովհաննիսյանը** պատերազմի տարիներին իր օղակի անդամների հետ միասին հանրապետությունում ստացել է բամբակի ռեկորդային բերք[987]:

---

[985] «Սովետական Հայաստան», 8 սեպտեմբերի, Երևան, 1942:
[986] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 79:
[987] Տե՛ս նույն տեղում:

Բրիգադավոր **Սիրանուշ Դավթյանի** բամբակագործական բրիգադը պլանով նախատեսված 1400 կիլոգրամի փոխարեն օրական հավաքել է 1800-2100 կիլոգրամ առաջին տեսակի բամբակ[988]:

Իր կատարած աշխատանքով, ինչպես նաև հասարակական գործունեությամբ աչքի է ընկել **Արփիկ Բադալյանը**: Նա ծնվել է 1927 թվականին Հոկտեմբերյանի շրջանի Սովետական (այժմ՝ Ալաշկերտ) գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո՝ 1945 թվականից, Ա. Բադալյանը աշխատել է հայրենի գյուղի կոլտնտեսությունում որպես բամբակագործական բրիգադի օղակավարուհի: Նրա ղեկավարած օղակը, կիրառելով երկրի առաջավոր բամբակագործների փորձը, աճեցրել է բամբակի ռեկորդային բերք՝ յուրաքանչյուր հեկտարից ստանալով 73 ցենտներ բարձրորակ հումք: Այդ նվաճումների համար Ա. Բադալյանը 1947 թվականին պարգևատրվել է «Աշխատանքային գերազանցության» մեդալով, իսկ 1950 թվականին արժանացել է նաև «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչման: Ա. Բադալյանը 1955-1965 թվականներին ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր[989]:

Ա. Բադալյանի նման անձնուրաց և աշխատասեր հայուհիների թիվը քիչ չէր հանրապետությունում: Բրիգադավարներից հիշատակության արժանի են՝ «Աշխատանքային արիության համար» մեդալակիր **Սիրանուշ Մկրտչյանը** (Հոկտեմբերյանի շրջանի Լենինի անվան կոլտնտեսություն), **Սիրան Բալայանը** (Գորիսի շրջանի Կիրովի անվան կոլտնտեսություն), «Աշխատանքային գերազանցության համար» մեդալակիրներ **Դուխիկ Կարապետյանը** (Հոկտեմբերյանի շրջանի «Սոցիալիզմ» կոլտնտեսություն), *Նուբար Մուրադյանը* (Աշտարակի շրջանի Օրջոնիկիձեի անվան կոլտնտեսություն), ինչպես նաև **Սանամ Շիմալյանը** (Ալավերդու շրջանի Շամուտ գյուղ), կոմունիստ **Երջանիկ**

---

988 «Կոմունիզմի ուղիով», N 28, Էջմիածին, 1941:

989 **Կարապետյան Փ., Ամիրխանյան Ա.,** Արմավիրի մարզի անվանի մարդիկ, Երևան, 2013, էջ 16:

Մելքոնյանը (Նոր Բայազետի շրջանի Փաշաքյանդ գյուղ) և ուրիշներ[990]:

Պատերազմի տարիներին մեծ ուշադրություն է դարձվել նաև ծխախոտի ցանքերի ընդարձակմանը: Ծխախոտի պլանտացիաները 1940 թվականին գրավել են 5029 հեկտար, իսկ 1945 թվականին՝ 7803 հեկտար տարածություն: Անհրաժեշտ է նշել, որ ծխախոտի ցանքերի տարածության ընդարձակումը զուգակցվել է բերքատվության բարձրացման հետ: Ծխախոտագործությունը տարածվել է նաև նոր շրջաններում: Պատերազմի տարիներին ծխախոտի կուլտուրան մշակվել է Հայաստանի շուրջ քսան շրջաններում[991]:

Հանրապետության ծխախոտագործության գլխավոր կենտրոններն են Շամշադինի և Իջևանի շրջանները: Ծխախոտագործների ավանգարդում էր Շամշադինի շրջանի Նորաշեն գյուղի կոլտնտեսությունը: Այստեղ մեծ խանդավառությամբ են աշխատել ծխախոտագործուհիներ **Սանամյանը** և **Փայտյանը**: Ռազմաճակատում գտնվող իրենց հարազատներին նրանք գրել են. «Մեր ամուսինների ղեկավարած օղակները այժմ մենք ենք ղեկավարում: Մենք պատվով կկատարենք մեզ վրա դրված պարտավորությունները և կապահովենք սոցիալիստական դաշտերի բարձր բերքատվությունը: Մենք պարտավորվում ենք մեր պոստում աշխատել ազնվորեն և բարեխղճորեն: Թող մեր թշնամիներն իմանան, որ սոցիալիզմի երկրի կանայք ընդունակ են ամեն ինչի, նույնիսկ զենք կրելու: Մենք կանգնած ենք մեր ամուսինների և եղբայրների թիկունքում: Նրանք՝ ռազմաճակատում, մենք սոցիալիստական դաշտերում անընդհատ պայքարով կապահովենք հաղթանակը»: Նրանք կատարել են իրենց խոստումը և օրինակ ծառայել շատ կոլտնտեսուհիների համար[992]:

---

990 **Մարտիրոսյան L.,** նշվ. աշխ., էջ 80:
991 Տե՛ս նույն տեղում, էջ 81:
992 Տե՛ս նույն տեղում:

Բերդ գյուղի «Նոր կյանք» (Շամշադինի շրջան) կոլտնտեսության առաջավորներ Անիչկա և Նագրաֆին Մելքոնյանները, Ներքին Կարմիրաղբյուր գյուղի օղակավարուհի **Սաթենիկ Գալոյանը** և շատ ուրիշներ իրենց ամուսիններին բանակ ճանապարհելուց հետո աշխատանքի են լծվել նոր եռանդով:

Հայրենական պատերազմի տարիներին իրենց քրտնաջան աշխատանքով լավագույն արդյունքի են հասել Իջևանի շրջանի Սարիգյուղի Շահումյանի անվան կոլտնտեսության ծխախոտագործուհիներ **Սիրան Մկրտումյանը, Հռիփսիմե Մադաթյանը** և **Լիլիֆար Գալըստյանը**, որոնք արժանացել են «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչման[993]:

Նոր Բայազետի Նորադուզ գյուղում աչքի են ընկել օղակավարուհի **Պարզիկ Ասոյանը** և ***Սիրան Ասատրյանը***: Փաստորեն՝ Հանրապետության ծխախոտագործության բնագավառում աշխատողների մեծամասնությունը կազմել են կանայք: Նրանք ավանգարդային դերում էին նաև գյուղատնտեսության տվյալ ճյուղի զարգացման պայքարում:

Հայրենական պատերազմի տարիներին գյուղատնտեսական մի շարք կուլտուրաների թվում որոշակի զարգացում են ունեցել նաև խաղողագործությունը և պտղաբուծությունը, որոնց համախառն արտադրանքը, 1940 թվականի համեմատությամբ, 1945 թվականին աճել է 18 %-ով[994]:

Պատերազմի պայմաններում խաղողագործությունը, ինչպես նաև պտղաբուծությունը, չէին կարող բուռն զարգացում ապրել: Դրա համար պահանջվում էին մեծ ներդրումներ, զգալի չափով բուժանյութեր և հանքային պարարտանյութեր, իսկ դրանց քանակը սահմանափակ էր: Չնայած այս բոլորին՝ պահպանվել են խաղողի այգիների բոլոր տարածությունները: Մինչև պատերազմը խաղողի և պտղատու այգիների մշակման ծանր աշխատանքները կատարել են գրեթե միայն տղամար-

---

[993] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 82:
[994] Տե՛ս նույն տեղում, էջ 87:

դիկ, իսկ Հայրենական պատերազմի տարիներին դրանց մեծ մասը կատարել են կանայք:

Լավագույն խաղողագործի անուն է վաստակել Վաղարշապատի շրջանի Քաղցրաշեն գյուղի Շահումյանի անվան կոլտնտեսության օղակավարուհի, հետագայում Սոցիալիստական աշխատանքի հերոս **Նոյեմզար Եղիազարյանը**: Նրա անդուլ աշխատանքի լավագույն ապացույցն է այդ տարիներին վաստակած աշխօրերի քանակը, որը գերազանցել է պարտադիր մինիմումը[995]:

Մարինոս Բարամյանի կենսագրությունը հարուստ է նաև հեղափոխական անցյալով: Նա եղել է Հայաստանում խորհրդային կարգերի համար մղվող պայքարի մասնակից հայ կանանց շարքում: Ծառայել է երկրորդ գնդի ութերորդ պարտիզանական վաշտի չորրորդ դասակում, որը գործում էր Վեդու շրջանում: Խիզախ պարտիզանուհին շարունակ եղել է կրակի առաջին գծում, իր ընկերներին օգնել է ռազմամթերքով և պարենամթերքով:

Հեղափոխական պայքարում կոփված Մ. Բարամյանը ակտիվորեն մասնակցել է խորհրդային շինարարությանը: Նա առաջիններից մեկն էր, ով մտավ Գետաշենի կոլտնտեսության մեջ: Օղակավարուհի Մ. Բարամյանը անդուլ աշխատանք է տարել խաղողի բերքատվության բարձրացման և նոր այգիների ստեղծման համար: Նա աշխատանքային մեծ եռանդ է ցուցաբերել նաև պատերազմի տարիներին: Իսկ պատերազմի հաղթական ավարտից հետո՝ 1948 թվականին, 10 հեկտար այգիների յուրաքանչյուր հեկտարից 160 ցենտներ խաղող ստանալու համար արժանացել է «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչման[996]:

Էջմիածնի շրջանի Միկոյանի անվան կոլտնտեսության առաջավոր բրիգադավարներից էր **Հայաստան Ամիրյանը**: 1930 թվականից աշխատելով կոլտնտեսությունում՝ ջանասեր աշխատանքով նա արժա-

---

[995] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 88:
[996] Տե՛ս նույն տեղում, էջ 89:

նացել է մեծ պատվի: Հ. Ամիրյանի աշխատանքային սխրանքները բազմիցս նշվել են հանրապետության կուսակցական համագումարներում և շրջանային կուսակցական կոնֆերանսներում:

Հայաստան Ամիրյանը ծնվել է 1911 թվականին Վանի նահանգի Խերխան գյուղում՝ տնայնագործի ընտանիքում: Կյանքի դառնությունը ճաշակել է մանուկ հասակից: Երբ թուրքական ենիչերիների հալածանքներից փրկվելու համար 1915 թվականին Վանի աշխատավորները բռնել են գաղթի ճանապարհը, Ամիրյանների ընտանիքը օթևան է գտել Էջմիածնում: Սովետական կարգերի շնորհիվ ոտքի է կանգնել նաև նրանց ընտանիքը: Հայաստանը ավարտել է յոթնամյա դպրոցը, առաջինն է մտել կոլտնտեսության մեջ և համալրել «Կոմունիստական կուսակցության» շարքերը: Հայրենական պատերազմի հենց առաջին օրերից Հ. Ամիրյանը նշանակվել է դաշտավարական բրիգադի բրիգադավար: 1941 թվականին բրիգադի լավ աշխատանքի շնորհիվ ամեն մի հեկտարից ստացվել է 28 ցենտներ, և ընդամենը պետությանն հանձնվել է 945 ցենտներ բամբակ: 1942 թվականին նույնքան տարածությունից բրիգադը ստացել է 903 ցենտներ բամբակ: 1943-1944 թվականներին բրիգադը մշակել է 40 հեկտար հողամաս՝ պետությանը հանձնելով համապատասխանաբար 820 և 840 ցենտեր, իսկ 1945 թվականին՝ 35 հեկտարից 770 ցենտներ բամբակ[997]: Պատերազմի դժվարին պայմաններում բրիգադը հմտորեն ղեկավարելու, աշխատանքները կազմակերպչական բարձր մակարդակով անցկացնելու համար կոմունիստ բրիգադավար Հ. Ամիրյանը 1943 թվականին արժանացել է ՀԿ(բ)Ը կենտկոմի շնորհակալությանը, իսկ 1944 թվականին՝ Հայկական ԽՍՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրին:

Կոլտնտեսության կին ղեկավարների մեջ աչքի է ընկել Վաղարշապատի շրջանի վերին Խաթունարխ գյուղի կոլտնտեսության նախագահ **Ռեբեկա Ղարիբյանը:**

---

[997] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 89:

Հայրենական պատերազմի առաջին օրը, երբ Ռ. Ղարիբյանի ամուսինը՝ կոլտնտեսության նախագահ Երվանդ Ղազարյանը, մեկնել է ռազմաճակատ, կոլտնտեսականները միաձայն նախագահ են ընտրել կուսակցական Ռ. Ղարիբյանին: 1942 թվականին կոլտնտեսությունը դարձել է միլիոնատեր: Կոլտնտեսականները տանկային շարասյուն կառուցելու ֆոնդ են մուծել մեկ միլիոն ռուբլի, իսկ կոլտնտեսության նախագահ Ղարիբյանը, արձագանքելով Սարատովի մարզի Պոկրովսկի շրջանի կոլտնտեսական Ֆերապոնտ Գոլովատիի հայրենասիրական նախաձեռնությանը, իր անձնական խնայողություններից նույն ֆոնդին հատկացրել է 50 հազար ռուբլի[998]:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ռ. Ղարիբյանը 1945 թվականին պարգևատրվել է «Լենինի» շքանշանով, իսկ 1946 թվականին առաջավոր կոլտնտեսության նախագահը ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Այսպիսով՝ մեր հանրապետության առաջավոր կանայք, չխնայելով իրենց ուժերը և հաղթահարելով մեծ դժվարություններ, ապահովել են խաղողի, պտղի և գյուղատնտեսական մյուս մթերքների անխափան արտադրությունը:

* * *

Չնայած պատերազմի տարիներին առաջացած լուրջ դժվարություններին՝ Հայաստանի կոլտնտեսականները, այնուամենայնիվ, պայքարել են անասունների գլխաքանակի ավելացման և անասնաբուծության մթերատվության բարձրացման համար: 1941 թվականի հետ համեմատած՝ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1944 թվականին աճել է 5.9 %-ով: Նույն ժամանակաշրջանում ոչխարների և այծերի գլխաքանակը ավելացել է 23.1 %-ով, իսկ խոզերինը՝ 9.7 %-ով[999]:

---

998 **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 90:
999 ՀԱԱ, ֆ. 1, ց. 33, գ. 4, թ. 4:

Անասունների գլխաքանակի աճման հետ մեկտեղ բարձրացել է նաև նրանց մթերատվությունը: Մեկ կովի միջին կաթնատվությունը նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ բարձրացել է 11 %-ով, ոչխարներինը և այծերինը՝ 7 %-ով:

1944 թվականի առաջին կիսամյակում անասնաբուծության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար հանրապետությունը նվաճել է Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ կարմիր դրոշը: Այդ դրոշով պարգևատրվել է նաև Ստեփանավանի շրջանը[1000]:

Կանանց դերը մեծացավ նաև անասնապահության ոլորտում:

Ապարանի շրջանի Բլխեր (Շենավան) գյուղի կոլտնտեսության կթվորուհի **Վարդուշ Գևորգյանը** 45 ոչխարից ստացել է 50 գառ, իսկ **Օսաննա Հովհաննիսյանը**՝ 45 ոչխարից 53 գառ: Կթվորուհիներ Ս. Գասպարյանը, **Կ. Դավթյանը** և **Վ. Պետրոսյանը** շարունակ գերակատարել են իրենց արտադրական նորմաները[1001]:

Պատերազմի ծանր օրերին աշխատանքի վերադարձած 60-ամյա անասնապահ Շողեր Սաքանյանը, դիմելով կոլտնտեսականներին, ասում էր. «Ես խնամում եմ 15 կով և խոստանում եմ աշխատել ազնվորեն, գիշեր և ցերեկ, որպեսզի ավելի շատ կաթ տամ հայրենիքին, կպատրաստեմ ընտիր տեսակի կարագ ու պանիր ռազմաճակատի համար, որ մեր ասլան բալեքը լավ սնվեն ու ավելի ուժեղ հարվածով շուտ ոչնչացնեն Հիտլերին ու նրա բանակին»[1002]:

Ստեփանավանի շրջանի Լեջան գյուղի Կամոյի անվան կոլտնտեսության անասնաբուծական ֆերմայի կթվորուհիներ **Արուսյակ Գրիգորյանը** և **Անիչկա Աղաջանյանը**, օրինակելիորեն կազմակերպելով կովերի խնամքը, ձեռք են բերել զգալի հաջողություններ:

[1000] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 91:
[1001] Տե՛ս նույն տեղում:
[1002] Տե՛ս նույն տեղում:

Սոցմրցման արդյունքները ամփոփելուց հետո հանրապետության առաջավոր յոթ կթվորուհիներ 1943 թվականին արժանացել են Հայկական ԽՍՍ Գերագույն սովետի պատվոգրին:

1944 թվականին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով հանրապետության անասնաբուծության բնագավառում աշխատող առաջավոր կանայք արժանացել են կառավարական պարգևներին: «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով պարգևատրվել են Սիսիանի շրջանի Չկալովի անվան կոլտնտեսության կթվորուհի **Օվսաննա Թորոսյանը**, «Պատվո նշան» շքանշանով՝ Ստեփանավանի շրջանից կթվորուհի **Վարսենիկ Պապյանը**, Ապարանի շրջանի «Հարվածային» կոլտնտեսության ֆերմայի վարիչ **Վերգինե Սադոյանը**: «Աշխատանքային արիության համար» մեդալով պարգևատրվել են յոթ և «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով՝ ութ կթվորուհիներ[1003]:

Ախտայի շրջանի Արզաքյանդի կոլտնտեսության կթվորուհիները 1945 թվականին յուրաքանչյուր կովից ստացել են 1380 կիլոգրամ կաթ: Կալինինոյի շրջանի Կաթնաղբյուր գյուղի 17-րդ կուսհամագումարի անվան կոլտնտեսության կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները հպարտանում էին **Մարիամ Ջանոյանով**: Վերջինս իր ամբողջ կյանքն ու եռանդը նվիրաբերել է հանրային հոտի աճեցման, նրա մթերատվության բարձրացման գործին:

1941 թվականի աշնանը Շահումյանի շրջանի Շահումյանի անվան կոլտնտեսության նախագահ է ընտրվել կոմունիստ **Նազանի Գալըստյանը:** Նա լուրջ ուշադրություն է դարձրել անասնաբուծության զարգացմանը: Ընդարձակվել են խոտհարքները, ստեղծվել է անասունների կերի կայուն բազա, բարձրացել է կաթնատվությունը: 1942 թվականին կոլտնտեսությունը յուրաքանչյուր կովից ստացել է 1470 կիլոգրամ կաթ, իսկ մեկ ոչխարից՝ 1.2 կիլոգրամ բուրդ[1004]:

[1003] «Коммунист», 11 февраля, Баку, 1944:
[1004] **Մարտիրոսյան L.,** նշվ. աշխ., էջ 93:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1960 թվականին կոլտնտեսության նախագահ **Նազանի Գալստյանին** շնորհել է «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչում:

1945 թվականին կոլտնտեսությունը յուրաքանչյուր ֆուրաժային կովից ստացել է 33.5 ցենտներ կաթ 1942 թվականի 24.2 ցենտների դիմաց, որը նույնպես բարձր ցուցանիշ էր:

Պատերազմի տարիներին Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղի կոլտնտեսությունը ղեկավարել է ճակատային կին **Աղավնի Դիլանյանը:**

Կոլտնտեսության աշխատանքները լավ ղեկավարելու և պետական պարտավորությունները ժամանակին կատարելու համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով 1944 թվականին կոմունիստ Ա. Դիլանյանը պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով[1005]:

1942-1943 թվականներին Մարգարայի 26 կոմիսարների անվան կոլտնտեսության նախագահի պոստում էր բազմավաստակ կոլտնտեսուհի, կուսակցության անդամ **Սաթիկ Մաթևոսյանը:** Զանգիբասարի շրջանի կոմերիտմիության անվան կոլտնտեսությունը ղեկավարել է «Աշխատանքային արիության համար» մեդալակիր **Հայկանուշ Մարջանյանը**, Սևանի շրջանի «Ավանգարդ» կոլտնտեսությունը՝ **Սիրանուշ Ալավերդյանը**, Զանգիբասարի շրջանի Գյոյգմբեթ գյուղի «Ինտերնացիոնալ» կոլտնտեսությունը՝ **Մանյա Օհանյանը**, Վաղարշապատի շրջանի Լուսագյուղի կոլտնտեսությունը՝ **Գոհար Դարբինյանը** և այլն[1006]:

Գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման և պետական պարտավորությունների կատարման բնագավառում հանրապետության կին աշխատավորները կատարել են պատվավոր գործ:

Այսպիսով՝ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը իր ուժերը նվիրաբերել է ֆաշիստական զավթիչներին ոչնչացնելու գործին:

[1005] **Մարտիրոսյան L.,** նշվ. աշխ., էջ 93:
[1006] Տե՛ս նույն տեղում, էջ 94:

Պատերազմի ծանր ժամանակաշրջանում «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը» համախմբել էր հանրապետության կանանց ուժերը՝ գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպված անցկացնելու, պետական պլանները կատարելու համար: Կանայք դարձել էին կարևոր ուժ գյուղատնտեսության բնագավառում:

Հայաստանի գյուղատնտեսության կին աշխատողները երբեք իրենց եռանդն ու ուժերը, աշխատանքային արիությունը չեն դրսևորել այնպիսի ուժով, ինչպես Հայրենական պատերազմի տարիներին: Իրենց վրա վերցնելով գյուղատնտեսական աշխատանքների գլխավոր ծանրությունը՝ նրանք ցույց տվեցին աշխատանքային բացառիկ եռանդ: Աշխատավոր հայ գեղջկուհին կրեց բազում դժվարություններ ու զրկանքներ, բայց երբեք չընկճվեց: Հայրենիքի սիրով համակված կանայք թշնամուն հաղթելու գործում ներդրեցին իրենց մեծ լուման:

* * *

Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանի մտավորականները, մասնավորապես մշակույթի և գիտության գործիչները, իրենց որոնող միտքը, ստեղծագործական աշխատանքը և ուժերն են նվիրաբերել մեր հայրենիքի անկախության և ազատության պայքարի գործին:

Պատերազմի ահեղ օրերին ժողովրդական կրթության բնագավառում կյանքն ընթացել է առանց խափանումների, նորմալ և կազմակերպված: Պատերազմը վճռական ստուգում դարձավ ոչ միայն բանվորների և կոլտնտեսականների, այլև մտավորականության համար:

1941/1942 ուսումնական տարվանից դպրոցները վերակառուցեցին իրենց աշխատանքը պատերազմի պայմաններին համապատասխան: Հայրենիքի ազատության և անկախության համար մղվող պայքարում ռազմաճակատի և թիկունքի հայրենասերների սխրանքները ոգեշնչում էին նաև ժողովրդական կրթության աշխատողներին:

Նրանք կազմակերպված ու մեծ եռանդով շարունակեցին մատաղ սերնդի դաստիարակության պատվավոր գործը:

ԽՍՀՄ ժողկոմ խորհրդի որոշումով 1943/1942 ուստարվանից մտցվեց տղաների և աղջիկների անջատ ուսուցում: Նորություն էր աշակերտների առաջադիմության գնահատման հինգբալյան համակարգը[1007]:

Երևանի Կրուպսկայայի և Մ. Գորկու անվան դպրոցների աշակերտության շրջանում մեծ հարգանք և սեր են վայելել հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիներ **Սիրանուշ Մարտիրոսյանը** և **Վարսենիկ Եսայանը**[1008]:

Բազմավաստակ ուսուցչուհիներ Ս. Մարտիրոսյանի և Վ. Եսայանի ղեկավարությամբ պարբերաբար լույս են տեսել դպրոցական գրական թերթերը և ալմանախները, իսկ յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում կազմակերպվող համաքաղաքային գրական բաց երեկույթներում աշակերտները հանդես են եկել ինքնուրույն ստեղծագործություններով: Նույնպիսի ջանասիրությամբ են աշխատել նաև ուսուցչուհիներ **Արուս Պողոսյանը, Իզաբելա Շամամյանը**, «Լենինի» շքանշանակիր **Վահանուշ Մատինյանը, Սիրուշ Պողոսյանը, Լյուսյա Բոյաջյանը, Արուսյակ Լալազարյանը** (Երևան), ***Հայկուշ Դրամբյանը, Պայծառ Մկրտչյանը*** (Լենինական), **Սիրուշ Մատինյանը** (Կիրովական), **Աշխեն Բարխուդարյանը** (Գորիս), **Շուշիկ Խաչատրյանը, Էմմա Նազարյանը, Դուխիկ Բուդաղյանը** (Ստեփանավան), ***Մանուշ Խառատյանը*** (Մեղրի), **Ամալյա Ճշմարտյանը** (Գյառգյառ), ***Նվարդ Մելիքսեթյանը*** (Քանաքեռ), ***Եվգինե Հարությունյանը*** (Գյուլագարակ)[1009]:

Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանի մանկավարժները և աշակերտները, հատկապես ամառային արձակուրդների

[1007] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 97:
[1008] Տե՛ս նույն տեղում, էջ 98:
[1009] Տե՛ս նույն տեղում:

շրջանում, մեծ օգնություն են ցույց տվել գյուղատնտեսության աշխատողներին: Միայն 1942 թվականի ամառվա ընթացքում ուսուցիչները և աշակերտները վաստակել են մեկ միլիոն երկու հարյուր հազար աշխօր[1010]:

Ուսուցչուհիների ղեկավարությամբ Սպիտակ շրջանի Ղզլորան (Շենավան), Արթիկի շրջանի Հոռոմ, Նոյեմբերյանի շրջանի Կոթիգեղ, Ախտայի շրջանի Ռնդամալ (Ջրառատ), Զանգիբասարի շրջանի Արբաթ, Նոր Բայազետի շրջանի Աղկալա գյուղերում բերքահավաքի եռուն շրջանում դպրոցականներից և ուսուցիչներից կազմակերպվել են օղակներ, բրիգադներ, որոնք աշխատել են բերքահավաքն անկորուստ և ժամանակից շուտ ավարտելու համար[1011]: «Թվով մոտ 40 ուսուցչուհիներ,– գրված է «Բայազետի կոլխոզնիկ» շրջանային թերթում,– աշխատել են մեր կոլտնտեսության դաշտերում: Հայրենասեր ուսուցչուհիները ոչ մի ջանք չենք խնայել իրենց օրվա պլանների կատարման համար: Հատկապես աչքի են ընկել Արաքսյա Շահինյանը (օղակավար), **Սաթիկ Խաչիկյանը, Պալինա Լուբանովան, Անիկ Ժամհարյանը** և շատ ուրիշներ»:

Ուսուցչուհի **Օլյա Օրդյանը** այդ օրերին գրել է. «Ամուսինս գնացել է Կարմիր բանակ, մենք պետք է օգնենք կոլտնտեսությանը՝ բերքն անկորուստ հավաքելու, որպեսզի մեր կարմիրբանակայինները ոչ մի բանի կարիք չզգան»[1012]:

Նույն խանդավառությունն էր համակել Հոկտեմբերյանի, Վաղարշապատի, Իջևանի, Շամշադինի, Ստեփանավանի, Ղափանի, Արթիկի, Ապարանի շրջանների մանկավարժներին:

Խրախուսելի աշխատանքի օրինակ են ցույց տվել Արմավիրի միջնակարգ դպրոցի ուսուցչուհիները և դպրոցականները: Ուսուցչուհի **Հեղուշ Ստեփանյանը**, 1943 թվականին մասնակցելով բերքահավաքին,

---

[1010] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 97:
[1011] Տե՛ս նույն տեղում:
[1012] «Բայազետի կոլխոզնիկ», N 64, Նոր Բայազետ, 1941:

հավաքել է մոտ 150 կիլոգրամ բամբակ: Ստեփանյանից ետ չեն մնացել ուսուցչուհի **Անտոնինա Անդրեևան** և մյուսները[1013]:

Հայրենասեր ուսուցչուհիների աշխատանքը բարձր է գնահատվել կուսակցության և կառավարության կողմից: Հայրենական պատերազմի տարիներին «Հայկական ԽՍՀ վաստակավոր ուսուցչի» կոչում է շնորհվել 41 ուսուցչուհու երեխաների դաստիարակության և ուսուցման ասպարեզում կատարած երկարամյա ու անբասիր աշխատանքի համար: «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրի» է արժանացել 22 դպրոց, որտեղ սովորել ու դաստիարակվել են Խորհրդային Միության մի խումբ հայ հերոսներ[1014]:

Խորհրդային Հայաստանի մանկավարժներն ազնվորեն են կատարել իրենց սրբազան պարտքը հայրենիքի հանդեպ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի առողջապահության բնագավառի աշխատողներն իրենց բոլոր ուժերը և գիտելիքները նվիրել են ռազմաճակատի և թիկունքի բուժսպասարկմանը: Պատերազմի պայմաններում մեծ հոգատարություն է ցուցաբերվել երեխաների առողջության պահպանման, նրանց նյութական ու կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ:

1942 թվականին 40 մանկաբույժ արժանացել է հանրապետության առողջապահության ժողկոմատի շնորհակալությանը և խրախուսանքին: Նրանց թվում էին մանկաբույժներ **Ե. Աֆրիկյանը, Լ. Գրիգորյանը, Ա. Հովսեփյանը** (Երևան), **Ա. Եփրիկյանը, Գ. Միքայելյանը** (Լենինական), **Պ. Փափազյանը, Վ. Բաբայանը** (Կիրովական), **Վ. Աղաջանյանը** (Սևան), **Վ. Անդրեասյանը** (Արտաշատ) և ուրիշներ[1015]:

Դոցենտ **Աննա Ֆարմանյանը**, «Լենինի» շքանշանակիր **Աշխեն Վարդանյանը, Սաթենիկ Տեր-Դանիելյանը, Տիրուհի Խաչիևան, Արաքսյա Հարությունյանը**, հանրապետության վաստակավոր բժշկու-

---

[1013] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 101-102:
[1014] Տե՛ս նույն տեղում:
[1015] Տե՛ս նույն տեղում:

հի ***Մարգարիտա Կամենցևան, Հռիփսիկ Սարգսյանը, Սիրուշ Առաքելյանը, Հռիփսիկ Սինանյանը, Թագուհի Խուդոյանը*** և բազմաթիվ ուրիշ բժշկուհիներ բուժսպասարկումը հաջող կազմակերպելու, հիվանդների նկատմամբ մեծ հոգատարություն ցույց տալու համար արժանացել են ժողովրդի ջերմ սիրուն և հարգանքին[1016]:

Ռազմաճակատը և թիկունքը բժշկական կադրերով ապահովելու գործում մեծ աշխատանք է ծավալել Երևանի բժշկական ինստիտուտը: Պատերազմի տարիներին ինստիտուտի աշխատանքները ղեկավարել է **Վերգինե Միքայելյանը**: Խորհրդային կառավարությունը, բարձր գնահատելով պատերազմի շրջանում կադրերի պատրաստման գործում Վ. Միքայելյանի մատուցած ծառայությունները, նրան պարգևատրել է «Պատվո նշան» շքանշանով, «Կովկասի պաշտպանության» և «Աշխատանքային արիության համար» մեդալներով[1017]:

Հանրապետությունում գործում էր 26 ստացիոնար հոսպիտալ և հինգ էվակոհոսպիտալ: 1944 թվականի հոկտեմբերի ամսվա տվյալներով հոսպիտալներում աշխատող բժշկական ավագ անձնակազմի 69 %-ը կանայք էին[1018]:

Բժիշկների ցուցաբերած հոգատար վերաբերմունքի շնորհիվ մեր հանրապետության հոսպիտալներում բուժվող վիրավոր ռազմիկների ճնշող մասը լիակատար ապաքինվելուց հետո վերադարձել է բանակ:

Իրենց լավագույն աշխատանքի համար հիշատակության արժանի են ՀՍՍՀ վաստակավոր բժշկուհի, ակնաբույժ **Ռաիսա Դովատուրը**, N 1571 հոսպիտալի (Կիրովական) երկրորդ բաժանմունքի պետ, վիրաբույժ **Սուսաննա Չիչյանը**, վիրաբույժ **Վիկտորիա Եղյանը**, բժշկուհիներ **Իզաբելա Եդիգարյանը, Վարդուշ Գրիգորյանը, Յուլյա Առաքելյանը**, բուժքույրեր **Ա. Կասագանովան, Ելենա Մուրադյանը, Մարի Զաքարյանը** և ուրիշներ: Նրանց անխոնջ և հոգատար աշխատանքի

[1016] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 101-102:
[1017] Տե՛ս նույն տեղում:
[1018] Տե՛ս նույն տեղում, էջ 104:

առաջին գնահատողներն էին բուժվող վիրավորները և վերջիններիս հարազատները[1019]:

Հայկական ԽՍՀ հոսպիտալներում աշխատող բժշկական անձնակազմից 400 մարդ արժանացել է «Կովկասի պաշտպանության համար» մեդալի: 1944 թվականին Խորհրդային Միության 14 հոսպիտալների թվում Հայաստանի N 1460 հոսպիտալը պարգևատրվել է «ԽՍՀՄ ժողկոմխորհրդի» պատվոգրով[1020]:

Հայաստանի բժշկասանիտարական բնագավառի կին կադրերն ոչ միայն ռազմաճակատներում, թիկունքներում ևս իրենց անբասիր ու անխոնջ աշխատանքով պատվով են կատարել հայրենիքի հանդեպ ունեցած պարտքը: Կուսակցությունը և կառավարությունը, ինչպես միշտ, պատերազմի ընթացքում ևս առանձին հոգատարություն է ցուցաբերել գիտությունների բոլոր ճյուղերի և գիտնականների նկատմամբ: Պատերազմի սկզբում հանրապետությունում գործել է 11, իսկ վերջում՝ 14 բարձրագույն ուսումնական հաստատություն:

Հայրենական պատերազմի տարիներին ավելացել է նաև հանրապետության գիտահետազոտական հիմնարկներում աշխատող կանանց թիվը: Այդ հիմնարկներում աշխատող կանանց ընդհանուր թիվը 1944 թվականին հասել է 865-ի, որը կազմում էր բոլոր գիտաշխատողների 51.3 %-ը: 1945 թվականին գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկներում աշխատող 1136 աշխատողներից 417-ը կամ 41.5 %-ը կանայք էին[1021]:

Գիտության բոլոր բնագավառներում իրենց լուրջ ուսումնասիրություններով աչքի ընկնող ծառայություններ են կատարել հանրապետության կին գիտնականները:

[1019] **Մարտիրոսյան L.,** նշվ. աշխ., էջ 105:
[1020] Տե՛ս նույն տեղում, էջ 106:
[1021] ՀԱԱ, ֆ. 163, ց. 15, գ. 243, թ. 3:

Քիմիական գիտությունը Հայաստանում իր բարգավաճումն է ապրել խորհրդային իշխանության տարիներին: Գիտության այդ ճյուղի աշխատողների շրջանում կանայք գրավել են պատվավոր տեղ:

Գիտական և մանկավարժական աշխատանքի մեծ ճանապարհ է անցել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Արաքսյա Բաբայանը**: Նա Հայրենական պատերազմի տարիներին աշխատել է Երևանի անասնաբուժական ինստիտուտում՝ գլխավորելով Օրգանական քիմիայի ամբիոնի աշխատանքները, իսկ 1935 թվականից սկսած՝ նաև որպես ավագ գիտաշխատող Արմֆանի քիմիական ինստիտուտում: 1945 թվականին Ա. Բաբայանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն[1022]:

Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վերգինե Թառայանը** Հայրենական պատերազմի ամբողջ ընթացքում գիտական բեղմնավոր աշխատանքը զուգակցել է կադրերի պատրաստման գործի հետ: 1942-1946 թվականներին Վ. Թառայանը ղեկավարել է Երևանի պետական համալսարանի անալիտիկ քիմիայի ամբիոնի աշխատանքները[1023]:

Կենսաբանական գիտությունների դոկտոր **Ազնիվ Պետրոսյանը** ղեկավարել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հողի միկրոբիոլոգիայի սեկտորը: Սեկտորի աշխատակիցներ, կենսաբանական գիտությունների թեկնածուներ **Արփիկ Կիրակոսյանը, Արաքսյա Մեհրաբյանը, Էմմա Նազարյանը**, կրտսեր գիտական աշխատողներ **Լուսյա Նարինյանը, Սոֆիկ Ղարագյոզյանը** աշխատել են նոր տեսակի պարարտանյութեր ստանալու հիմնախնդրի վրա:

Կենսաբանական գիտությունների դոկտոր **Փառանձեմ Մարուխանյանը** ղեկավարել է Կենսաբանության ինստիտուտի միկրոբիոլո-

---

[1022] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 107:
[1023] Տե՛ս նույն տեղում, էջ 108:

գիայի սեկտորը, որը զբաղվել է գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարի մեթոդների հարցով:

Կենսաբանական գիտությունների դոկտոր **Ռոմելա Գալաջյանը** ուսումնասիրել է բանջարաբոստանային կուլտուրաների բակտերիոլոգիական հիվանդությունների պրոֆիլակտիկայի հարցերը:

Արմենուհի Եղիկյանը և **Աշխեն Մինասյանը** ուսումնասիրել են հացահատիկի նոր սորտերի ստացման մեթոդները: Ա. Եղիկյանը աշնանացան ցորենի երկու նոր սորտի հեղինակներից էր[1024]:

Խոշոր աշխատանք է կատարել գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Դարյա Բաբայանը**: Նա առաջիններից մեկն էր, ով բազմակողմանիորեն ուսումնասիրեց Հայաստանում աճող բույսերի, այդ թվում՝ անտառային, բանջարաբոստանային կուլտուրաների, դեկորատիվ ծառերի, թփերի զանազան հիվանդությունները: Նա մեծ դերակատարում է ունեցել խաղողի հիվանդությունները տեսակավորելու և դրանք բուժելու մեթոդների մշակման գործում:

Բազմավաստակ գիտնական **Սրբուհի Լիսիցյանն** այդ տարիներին Ռ. Մելիքյանի անվան երաժշտական կաբինետում ավագ գիտական աշխատող էր, ուսումնասիրում էր հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները: Իր հետազոտության առաջին հատորը հրատարակել է պատերազմից հետո, որի համար նրան շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան[1025]:

Պատմական գիտությունների թեկնածու **Վալենտինա Աբրահամյանը**, ութ տարեկանում թուրք բարբարոսների հալածանքներից մի կերպ ազատվելով, բնակություն է հաստատել Երևանում: Նա ավարտել է միջնակարգ դպրոցը, ապա՝ համալսարանը, իսկ 1931 թվականին գործուղվել է Լենինգրադ՝ ասպիրանտուրայում սովորելու: Վ. Աբ-

---

[1024] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 107:
[1025] Տե՛ս նույն տեղում, էջ 109:

ռահամյանը ուսումնասիրել է հայ ժողովրդի միջնադարյան պատմության հարցերը[1026]:

Բանասիրական գիտությունների թեկնածու **Ռոզա Նանումյանը** 1941 թվականին նշանակվել է Գրականության թանգարանի տնօրեն: Պատերազմի տարիներին Ռ. Նանումյանը գիտական մեծ գործունեություն է ծավալել, ակտիվ կերպով մասնակցել է ցուցահանդեսների կազմակերպմանը: Պատերազմի տարիներին նա հրատարակել է մի քանի ուսումնասիրություններ, հայրենասիրական թեմաներով բազմաթիվ դասախոսություններ է կարդացել գործարաններում և կոլտնտեսություններում, աշխատավորական լայն շրջաններում[1027]:

Հայրենական պատերազմի տարիներին մեծ աշխատանք են կատարել նաև կին դասախոսները: Հանրապետության ուսումնական հաստատություններում ճանաչված և հարգված դասախոսներ էին բանասիրական գիտությունների թեկնածուներ **Սալոմե Արեշյանը, Էլիզա Պետրոսյանը, Արշալույս Բաբայանը**, կենսաբանական գիտությունների թեկնածուներ **Ասյա Պետրոսյանը, Ալմաստ Մինասյանը, Նատալյա Մելիքյանը**, գիտությունների թեկնածուներ **Աշխեն Պետրոսյանը, Եվգենյա Միրզախանյանը, Իզաբելա Թամրազովան** և ուրիշներ[1028]:

Պատերազմը դարձել էր բոլոր գրողներին ու արվեստագետներին հուզող թեմա: Այդ օրերին «Պրավդան» գրել է. «Չի եղել և չկա մի հայ, որը չգիտակցի, թե ինչ է բերում իր հետ օտարերկրացիների՝ զավթիչների, բռնակալների ու բանդիտների արշավանքը»[1029]:

Պատերազմի առաջին իսկ օրերից իրենց ցասումնալից ձայնը բարձրացրին հայ գրականության վարպետը՝ Ավետիք Իսահակյանը, նշանավոր գրողներ Հովհաննես Շիրազը, Նաիրի Զարյանը, Հրաչյա Քոչարը, Ստեփան Զորյանը և ուրիշներ: Խորհրդային հայրենիքի հա-

---

[1026] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 109:
[1027] Տե՛ս նույն տեղում, էջ 110:
[1028] Տե՛ս նույն տեղում:
[1029] «Սովետական Հայաստան», 28 փետրվարի, Երևան, 1943:

մար ստեղծված ծանր օրերին՝ մահ կամ հաղթանակ. այս էր հայ բանաստեղծների և գրողների ստեղծագործության նշանաբանը:

Գրողներն առանձին սիրով ու ոգևորությամբ էին երգում ռազմաճակատի ու թիկունքի կանանց հերոսությունները, որոնք պատերազմի օրերին բազմապատկված ուժով հանդես եկան թե՛ ռազմաճակատում, թե՛ թիկունքում: Պատերազմի տարիներին շատ գրողներ գրեցին մոր, կնոջ, դստեր մասին, ռազմաճակատում ռազմիկներին փրկող անձնվեր քույրերի մասին: Քրոջ գաղափարը խոր իմաստությամբ էին ընկալում ռազմաճակատի մարտիկները և սպաները:

Պատերազմի տարիներին իրենց հայրենասիրական մարտաշունչ երկերով հանդես եկան կին գրողներ ***Լուսի Թարգյուլը, Աղավնին, Արաքսը, Հռիփսիմո Պողոսյանը***, ինչպես նաև երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ **Սիլվա Կապուտիկյանը, Մարո Մարգարյանը** և ուրիշներ[1030]:

1942 թվականին լույս տեսավ **Հռիփսիմե Պողոսյանի** «Որդիների հետ» բանաստեղծությունների ժողովածուն: Հեղինակը երգում էր միլիոնավոր խորհրդային որդիների մասին, նրանց ոգեշնչում թշնամու նկատմամբ լինել անխնա: Հ. Պողոսյանը բանաստեղծական ազդու և կրակոտ խոսքերով է գրել «Պարտիզանուհու նամակը», «Ինտերնացիոնալը», «Մայիսին», «Մանյակ» բանաստեղծությունները:

1944 թվականին լույս տեսավ Աղավնու «Իմ տաղարանը» բանաստեղծությունների ժողովածուն: Աղավնու բանաստեղծությունները ճակատայիններն ընդունեցին որպես մարտական կոչ:

Պատերազմի տարիներին առանձին գրքով հանդես եկավ բանաստեղծուհի **Սիլվա Կապուտիկյանը**: «Օրերի հետ» ժողովածուով նա գրական աշխարհ մտավ որպես ինքնատիպ բանաստեղծուհի: Այս ժողովածուի բանաստեղծությունների մեծ մասը նվիրված է ռազմաճակատի և թիկունքի կանանց սխրանքներին: Ս. Կապուտիկյանի՝ այդ տա-

---

[1030] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 113-114:

րիների ստեղծագործությունների շարքում մեջ աչքի են ընկնում Հայրենական պատերազմի հերոսների, մոր, որդու և այլ թեմաներով գրված «Օրորոցի մոտ», «Առաջին գարունը», «Նահանջի օրեր», «Ուկրաինացի մոր օրորը», «Բալլադ աղջկա ձեռագործի և երազների մասին», «Սոնետ Հունան Ավետիսյանի հիշատակին», «Քո դարձի համար», «Երևանի լույսերը», «Խոհ զինվորի մասին», «Հերոսական» և այլ բանաստեղծություններ ու չափածո գործեր[1031]: Բանաստեղծուհու բոլոր ստեղծագործություններն էլ հագեցած են խորը լիրիկայով և գեղարվեստական ինքնատիպությամբ:

Սիլվա Կապուտիկյանի հետ միաժամանակ հրապարակ եկավ բանաստեղծուհի **Մարո Մարգարյանը**: Իր բանաստեղծություններում գրողը պատմում էր հայրենիքի սիրո, նրա քաջարի դուստրերի մասին:

Արձակագիրներ **Արաքսը, Լյուսի Թարգյուլը** իրենց պատմվածքներում կերտեցին հայրենիքի համար մարտնչող կանանց կերպարներ[1032]:

Հայրենական պատերազմի օրերին Հայաստանի գրողներն իրենց ձայնը բարձրացրին ֆաշիզմի կործանիչ քաղաքականության դեմ՝ իրենց երկերում հերոս դարձնելով այն մարդկանց, որոնք արագացնում էին ֆաշիզմի կործանումը, սովետական ժողովրդի և խաղաղության հաղթանակը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին իրենց հայրենասիրական և նվիրական աշխատանքով աչքի ընկան թատրոնի և կինոյի աշխատողները, շատ նշանավոր դերասաններ, թատերական գործիչներ և ուրիշներ: Ժողովրդական դերասանուհի **Արուս Ոսկանյանը** Հայաստանի կոմկուսի կենտկոմին ուղղված նամակում գրել է. «Իմ բազմաթիվ ելույթներում և հոդվածներում ես պատրաստակամություն եմ հայտնել իմ ամբողջ ուժերը, և, եթե անհրաժեշտ լինի, կյանքս նվիրաբերել ի բարօրություն մեր մեծ հայրենիքի: Այս օրերին, երբ խորհրդ-

---

[1031] **Մարտիրոսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 114:
[1032] Տե՛ս նույն տեղում:

դային ժողովուրդն իր ազատության համար պայքարում է անարգ թշնամու դեմ, ես այրվում եմ իմ հայրենիքին օգտակար լինելու ցանկությամբ՝ ոչ միայն գեղարվեստական սպասարկմամբ, այլև ֆիզիկական աշխատանքով, որպեսզի իմ լուման ներդնեմ մեր թիկունքի ամրապնդման գործին: Հավատացնում եմ ձեզ, որ մենք՝ արվեստի կին աշխատողներս մեր աշխատանքով և գեղարվեստական սպասարկմամբ կծառայենք մտավոր և ֆիզիկական աշխատանքի բնագավառում այնքան ժամանակ, քանի դեռ վերջնականապես չի ոչնչացել ուխտադրուժ թշնամին»[1033]:

Բոլոր թատրոններում կազմակերպվել են համերգային բրիգադներ: Համերգներ են տրվել զորամասերում, հոսպիտալներում, գործարաններում և կոլտնտեսություններում: Ժողովրդական դերասանուհի Արուս Ոսկանյանը պատերազմի առաջին իսկ օրից մինչև իր կյանքի վերջը (1943) ունեցել է մոտ 500 ելույթ: Նա գլխավորել է Սունդուկյանի անվան թատրոնի բրիգադների մեկը: Սունդուկյանցիները կազմակերպել են յոթ բրիգադ, որոնցում ընդգրկված են եղել 40 դերասաններ և դերասանուհիներ: Հայաստանի բոլոր թատերական բրիգադները պատերազմի առաջին մի քանի ամսում միայն զորամասերի համար շեֆական կարգով տվել են 2500 ներկայացում, համերգ և ելույթ[1034]:

Զորամասերում, հոսպիտալներում, գործարաններում և կոլտնտեսություններում ունեցած ելույթներին ակտիվորեն մասնակցել են **Արուս Ոսկանյանը, Հայկանուշ Դանիելյանը, Հասմիկը, Օլգա Գուլազյանը, Ռուզաննա Վարդանյանը, Արուս Ասրյանը, Անիկ Մկրտումյանը, Իզաբելա Դանզասը, Դուրյան-Արմենյանը** և ուրիշներ[1035]:

Հայ դերասանուհիները կերտել են կնոջ հերոսական կերպարների մի ամբողջ գալիրեա, կերպարներ, որոնք ոգեշնչել են ռազմաճակատի և թիկունքի մարդկանց:

[1033] «Երևան», N 112, Աթենք, 1962:
[1034] **Մելիքսեթյան Ս.,** Ուրվագծեր սովետահայ թատրոնի պատմություն, Երևան, 1960, էջ 154:
[1035] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 116:

Խորհրդային հերոս կնոջ անզուգական կերպարներ են կերտել նաև **Օլգա Գուլազյանը, Ռուզաննա Վարդանյանը, Արուս Ասրյանը, Ամալյա Արազյանը, Սիրան Ալավերդյանը, Մայրանուշ Պարոնիկյանը, Անատոլիա Եղյանը, Արաքս Առաքելյանը, Նինա Բոխյանը, Վերջալույս Միրիջանյանը, Էմմա Վարդանյանը, Իդա Մկրտչյանը, Թագուհի Սահակյանը, Ծաղիկ Վրույրը, Էմմա Ստեփանյանը, Ժենյա Գևորգյանը, Ժաննա Թովմասյանը, Արև Հարությունյանը** և շատ ուրիշներ[1036]:

Ռեժիսոր **Աստղիկ Աղասյանը** պատանի հանդիսատեսի թատրոնում, ի թիվս շատ պիեսների, բեմադրել է նաև Գ. Յաղջյանի «Զոյան» և Ռաֆֆու «Սամվելը»:

1942 թվականին Երևանում բացվեց Երաժշտական կոմեդիայի պետական թատրոնը, որտեղ մեծ աշխատանք կատարեցին **Իզաբելա Դանզասը, Նվարդ Ալիխանյանը, Վարդուհի Շահսուվարյանը, Սոֆյա Էրամջյանը, Իդա Մկրտչյանը** և ուրիշներ:

Ա. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի ակադեմիական թատրոնը ցուցադրեց հայրենասիրական օպերաներ:

1941-1945 թվականներին օպերայի թատրոնի երգչուհի **Տաթևիկ Սազանդարյանը** հանդես եկավ Կարմենի («Կարմեն»), երգչուհու («Քյոռ Օղլի»), մանկլավիկի («Հուգենոտներ») և Փառանձեմի («Արշակ Երկրորդ») դերերգերով: 1944 թվականի Տ. Սազանդարյանը մասնակցեց վոկալիստների համամիութենական մրցանակաբաշխությանը՝ արժանանալով առաջին կարգի դիպլոմի: Նույն թվականին նրան շնորհվեց «Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստուհու» կոչում[1037]:

1941 թվականի վերջերից Երևանի օպերային թատրոնում իր ստեղծագործական աշխատանքը սկսեց Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանի սան, երգչուհի **Զարուհի Դոլուխանյանը:** Հետագայում նա համաշխարհային հռչակ վայելեց[1038]:

[1036] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 117:
[1037] Տե՛ս նույն տեղում, էջ 118:
[1038] Տե՛ս նույն տեղում, էջ 118-119:

Հոսպիտալներում, կոլտնտեսություններում, գործարաններում, ինչպես նաև ռազմաճակատում գործող զորամասերի համար բազմաթիվ համերգներով հանդես են եկել Հայֆիլհարմոնիայի երաժշտական կոլեկտիվները: Միայն 1944 թվականի վերջին երեք ամսվա ընթացքում զինվորական հոսպիտալներում և ՆԳԺԿ զորամասերում նրանք կազմակերպել են 71 համերգ:

Նույն թվականի օգոստոսի 25-ին Հայկական ժողովրդական երգի ու պարի անսամբլի 25 հոգուց բաղկացած բրիգադը՝ ժողովրդական արտիստ Թաթուլ Ալթունյանի գլխավորությամբ, մեկնեց Հ. Բաղրամյանի հրամանատարությամբ գործող Մերձբալթյան ռազմաճակատի զորամասերը՝ համերգներ տալու: Բրիգադի անդամներից 16-ը կանայք էին: Բրիգադի լավագույն կատարողները պարգևատրվեցին շքանշաններով և մեդալներով[1039]:

1941-1945 թվականներին «Հայկինոն» հանդես եկավ գեղարվեստական լիամետրաժ, դոկումենտալ և խրոնիկալ կինոնկարներով: Այդ տարիներին «Հայկինոն» նկարահանեց «Արյուն արյան համար», «Կրակը անտառում», «Հայկական կինոհամերգ», «Հայրենասերների ընտանիքը», «Գվարդիական կինը», «Դուստրը», «Դավիթ Բեկ», «Մի անգամ գիշերով» գեղարվեստական ֆիլմերը, ինչպես նաև «Ռազմաճակատի համար», «Սովետական բանակի մուտքը Իրան», «Ամեն ինչ ռազմաճակատի համար», «Հայաստանի զավակները», «Երկիր հայրենի» փաստագրական ֆիլմերը և կինոնկարները[1040]:

Գեղարվեստական ֆիլմերում կանանց գլխավոր դերերում հանդես եկան **Հասմիկը, Վ. Ավետիսյանը, Ն. Ալթունյանը, Ս. Վոլխովսկայան, Դ. Ծատուրյանը, Ա. Ասրյանը** և ուրիշներ:

Պատերազմի պահանջներին համապատասխան իրենց աշխատանքները վերակառուցեցին նաև հանրապետության քանդակագործները և նկարիչները:

[1039] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 119:
[1040] Տե՛ս նույն տեղում, էջ 120:

Անվանի քանդակագործուհի **Ա. Ուրարտուն** իր աշխատանքների հիմնաքարը դարձրեց հայրենասիրական ու մարդասիրական թեմաները: Դիմաքանդակ ստեղծագործություններին զուգընթաց քանդակագործուհին ստեղծեց նաև թեմատիկ գործեր: Պատերազմի տարիներին Ուրարտուի հմուտ ձեռքերով կերտվեցին «Վրեժի երդումը» արձանը, «Կանայք Հայրենական պատերազմում» բազմամարդ կոմպոզիցիոն աշխատանքը և այլ գործեր:

Տաղանդավոր և անվանի արվեստագետների շարքում շատ շնորհալի նկարչուհիներ իրենց ստեղծագործությունները նվիրեցին հայրենասիրական թեմաներին: **Մարիամ Ասլամազյանը** որպես պրոֆեսիոնալ նկարչուհի ձևավորվեց պատերազմի ժամանակաշրջանում: Պատերազմի տարիներին ստեղծած նրա կտավների շարքում աչքի են ընկնում «Հերոսի վերադարձը», «Լենինգրադցիները», «Հերոսի երգը» նկարները: Ուշագրավ են նաև նկարչուհի Երանուհի Ասլամազյանի «Կինը ռազմաճակատում» և «Աղջիկները ճանապարհ են գցում ռազմաճակատ» գործերը[1041]:

Պատերազմի ժամանակ իրենց լավագույն կտավներով աչքի են ընկել նկարչուհիներ **Գ. Ֆերմանյանը, Ս. Ղարագյոզյանը, Վ. Հայրապետյանը, Ա. Սարգսյանը, Դ. Մխիթարյանը, Ա. Նալբանդյանը, Ա. Պարսամյանը** և ուրիշներ, որոնց ստեղծագործությունները պարբերաբար ցուցադրվել են հանրապետական ցուցահանդեսներում շրջկենտրոններում, գործարանային ակումբներում և հոսպիտալներում[1042]:

Այսպիսով՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայաստանի լուսավորության, արվեստի և գրականության գործիչները, ամբողջ մտավորականությունը իրենց ունակությունները և տաղանդը նվիրաբերեցին մեր հայրենիքի ազատության և անկախության համար մղվող արդարացի պայքարին:

[1041] **Մարտիրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 120-121:
[1042] Տե՛ս նույն տեղում, էջ 121:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻՆ (1988-1994)

Ա. ՀԱՅՈՒՀԻՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՍԿԶԲՆԱՓՈՒԼՈՒՄ

Առյուծածին մայրեր…

… Պայքարի մեջ դու պիտի ունենաս քո մեծ ու վճռական զինակիցը՝ հայ մայրը: Ինչպիսի ասպվածային հաճույք մարտնչողի համար՝ լսել խրախուսիչ ձայնը հայրենակրոն մոր: Ո՞վ չգիտի, թե ազգային տագնապների օրերին, երբ հայրենասիրաբար բաբախում է տառապող կնոջ սիրտը, կորած չէ դեռ ամեն հույս:

Գարեգին Նժդեհ[1043]

ԽՍՀՄ-ը 1980-ական թվականների երկրորդ կես թևակոխեց աստիճանաբար հասունացող սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի պայմաններում: Արտադրանքի քանակական աճի միջոցով զարգացող խորհրդային տնտեսությանն աստիճանաբար սպառում էր առաջընթացի հնարավորությունները: Տնտեսության ոլորտում նվազում էին աշխատանքի արտադրողականության տեմպերը: Կառավարման վարչահրամայական ուռճացած համակարգը, փաստորեն, սպառել էր իրեն: Այն, չկարողանալով խթանել արտադրողական ուժերի զարգացումը, խոչընդոտում էր գիտատեխնիկական առաջընթացին: Բնակչության սոցիալական ապահովության ոլորտում ևս լուրջ դժվարություններ էին ստեղծվել, ինչն էլ հանգեցնում էր նրա կենսամակար-

[1043] **Նժդեհ Գ.**, Ընտիր երկեր, էջ 100:

դակի անկմանը: Դրա հետ միասին ընդլայնվում էին կուսակցական, պետական, տնտեսական ղեկավար մարմինների, պաշտոնյաների արտոնությունները: Խախտվում էին օրենքները, ոտնահարվում սոցիալական արդարության սկզբունքները: Այս ամենի հետևանքով ԽՍՀՄ ազգաբնակչության շրջանում խորանում էր անվստահությունը երկրի ղեկավարության նկատմամբ, նկատվում էր համընդհանուր անտարբերություն: Պետական ունեցվածքի հափշտակումները դառնում էին համատարած: Աշխատանքն աստիճանաբար արժեզրկվում էր, մարում էր հավատը սոցիալական արդարության նկատմամբ: Ներքին հիմնախնդիրներին ավելանում էին «սառը պատերազմի» թելադրանքով իրականացվող արտաքին քաղաքականության սխալները: Նման իրավիճակը պահանջում էր որոնել դրանից դուրս գալու ուղիներ[1044]:

Ահա թե ինչու 1985 թվականի մարտին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրված Միխայիլ Գորբաչովը, համեմատաբար երիտասարդ լինելով, լավ էր հասկանում, որ երկիրը տնտեսական և քաղաքական լուրջ բարեփոխումների անհրաժեշտության առաջ էր կանգնած, ուստի անմիջապես ձեռնամուխ եղավ տնտեսությունը վերափոխելու և կառավարման ձևերի կատարելագործելուն[1045]:

ԽՄԿԿ կենտկոմի 1985 թվականի ապրիլյան պլենումը հասարակության արմատական վերակառուցման քաղաքականություն ընդունեց, որն ամրապնդվեց կուսակցության 27-րդ համագումարի (1986 թ.) որոշումներով[1046]: Սակայն, ինչպես կյանքը ցույց տվեց, «Վերակառուցումը», փաստորեն, առկա քաղաքական համակարգի գեղահարդարման, արտաքուստ նորացման փորձ էր: Այն, ըստ էության, բարեփոխումների՝ «վերևից» կարգավորվող ծրագիր էր, որն իրականացվում էր կոմունիստական վերահսկողությամբ[1047]: Ուստի պատահական չէ,

---

[1044] **Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ.,** Հայաստանը 1945-1990-ական թթ., Երևան, 1994, էջ 85:
[1045] Տե՛ս նույն տեղում:
[1046] Խորհրդային Միության «Կոմունիստական կուսակցության» 27-րդ համագումարի նյութերը, Երևան, 1986:
[1047] **Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ.,** նշվ. աշխ., էջ 86:

որ «Վերակառուցման» սկզբնական շրջանում (1985-1986 թթ.) առաջնահերթ ուշադրություն դարձվեց ոչ թե քաղաքական բարենորոգումների իրականացման, այլ գիտատեխնիկական առաջընթացին և երկրի սոցիալ- տնտեսական զարգացումն արագացնող գործընթացներին: Սակայն հիմնականում այս ուղղությամբ ձեռնարկված քարոզչական միջոցառումները չնպաստեցին և չէին էլ կարող նպաստել տնտեսական ճգնաժամից երկրի դուրսբերմանը:

Չունենալով տնտեսական հստակ ծրագիր՝ «Վերակառուցման» նախաձեռնողները 1987 թվականին ձեռնամուխ եղան տնտեսական բարենորոգումների իրագործմանը՝ որոշ ինքնուրույնություն տալով ձեռնարկություններին, որոնք անցան տնտհաշվարկի և ինքնաֆինանսավորման: Վերափոխվեցին տնտեսության կենտրոնացված կառավարման ու պլանավորման ձևերը, կիրառվեցին կառավարման համեմատաբար ժողովրդավարական սկզբունքներ, լայն տարածում ստացավ ինքնակառավարումը: Սակայն նշված քայլերը համակարգը կատարելագործելու թեթև ու անհեռանկարային փորձեր էին, քանի որ նույնիսկ ընդունված առաջադիմական օրենքներն ու որոշումները չէին կենսագործվում: Բարենորոգումների նախաձեռնողները, ձևավորվելով և աճելով կուսակցական բյուրոկրատական միջավայրում, չէին կարող հրաժարվել տարիների ընթացքում արմատավորված տնտեսավարման վարչահրամայական գործելակերպից: Ուստի տնտեսական բարեփոխումները ձախողվեցին: Ձեռնարկված միջոցառումները ոչ միայն չբարելավեցին ԽՍՀՄ-ի տնտեսական վիճակը, այլև 1980-ական թվականների վերջերին երկրի սոցիալ-տնտեսական կացությունն ավելի վատթարացավ: Ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով 1988 թվականին առաջ քաշվեց քաղաքական բարենորոգումների՝ թվացյալ ժողովրդավարացման ծրագիրը, որը ևս շատ շուտով ձախողվեց: 1988 թվականին ԽՄԿԿ 19-րդ համամիութենական համաժողովում ընդունվեցին հասարակության ժողովրդավարացման որոշում-

ներ[1048]: Սակայն ժողովրդավարությունն անհամատեղելի էր ամբողջատիրության հետ, ուստի շրջանառվեցին «հրապարակայնություն», «ժողովրդավարություն» կարգախոսները, որոնց ոգուն համապատասխան էլ որոշ քայլեր կատարվեցին: Մասամբ դադարեցվեցին այլախոհների հետապնդումները, կալանավայրերից ազատ արձակվեցին մեծ թվով քաղբանտարկյալներ: Լայն թափ ստացան երկրի պատմության մինչգորբաչովյան ժամանակաշրջանի «սպիտակ էջերի» լրացումն ու համակողմանի լուսաբանումը: Որոշ ազատություններ տրվեցին զանգվածային լրատվության միջոցներին:

1989 թվականի սկզբներին երկրի պատմության մեջ առաջին անգամ այլընտրանքային սկզբունքով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրություններ անցկացվեցին: 1989 թվականի մայիսին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը Մ. Գորբաչովին ընտրեց երկրի Գերագույն խորհրդի նախագահ, իսկ 1990 թվականի մարտին՝ երրորդ արտահերթ համագումարում, նա ընտրվեց ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահը[1049]:

Ըստ էության, իշխանության վերին օղակներում գտնվողների մեջ արմատավորված ամբողջատիրական մտածողությունը նրանց թույլ չտվեց ամբողջությամբ իրականացնել բարենորոգումներն ու հիմնովին վերափոխել «Կոմունիստական կուսակցության» միջոցով ամրապընդված քաղաքական համակարգը:

Խորհրդային Միության տարբեր վայրերում պաշտոնական իշխանությունների կողքին առաջացան զանազան հասարակական կազմակերպություններ, միություններ ու ընկերություններ, որոնք, առանձին հանրապետություններում վերածվելով սոցիալական լայն շարժումների, դարձան եթե ոչ ընդդիմադիր, ապա առնվազն այլընտրական ժողովրդական իշխանություններ: Կարճ ժամանակահատվածում այդ

[1048] ԽՄԿԿ 19-րդ համամիութենական կոնֆերանսի որոշումները (28 հունիս-1 հուլիսի, 1988 թ.), Երևան, 1988:

[1049] **Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ.,** նշվ. աշխ., էջ 86:

շարժումները երկրի ժողովրդավարացման ուղղությամբ արձանագրեցին շատ ավելի նշանակալից նվաճումներ, քան ձեռք էին բերվել «Վերակառուցման» շրջանի նախորդ տարիների ընթացքում: Այդ շարժումների առաջացման համար ազդակ հանդիսացան հասարակական-քաղաքական տվյալ միջավայրի առջև ծառացած ամենակենսական խնդիրները: Ժողովրդական շարժումներն աստիճանաբար խորացրին կայսրությունից ազատագրվելու միտումները՝ ընդգրկելով նաև Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները, որտեղ մեկը մյուսի հետևից տապալվեց կոմունիստական վարչակարգը, և նրանք դուրս եկան ԽՍՀՄ ազդեցությունից: Դա հանգեցրեց սոցիալիստական երկրների տնտեսական փոխօգնության համակարգի քայքայմանը, որի հետևանքով էլ ավելի վատթարացավ Խորհրդային Միության տնտեսական վիճակը:

Այնուհետև Մերձբալթյան հանրապետություններն առաջ քաշեցին տնտեսական ինքնիշխանության գաղափարը, որը շատ շուտով վերածվեց լիակատար անկախության գաղափարի՝ դառնալով նրանց պետական քաղաքականության հիմնական ուղենիշը: Վերջինս որդեգրեցին նաև մի շարք միութենական և ինքնավար հանրապետություններ, մարզեր, որոնք, մեկը մյուսի հետևից ընդունելով «ինքնիշխանության» կամ «անկախության» հռչակագրեր, սկսեցին վարել սեփական շահերից բխող քաղաքականություն: Սկսվեց ԽՍՀՄ-ի քաղաքական քայքայման գործընթացը, որն աստիճանաբար կազմալուծեց կենտրոնացված տնտեսական համակարգը[1050]:

Այսպիսով՝ կիսատ-պռատ բարենորոգումները ոչ միայն չնպաստեցին ԽՍՀՄ-ի տնտեսության կայունացմանը, այլև հանգեցրին Խորհրդային Միության փլուզման գործընթացի ծավալմանը: Կենտրոնական իշխանությունների անկարողությունը՝ լուծելու սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգամիջյան հարաբերությունների ոլորտներում կու-

[1050] **Ազիզբեկյան Ռ.,** Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992, էջ 8:

տակված հիմնախնդիրները, խորացրեց Խորհրդային Միության ժողովուրդների անվստահությունը նրանց հանդեպ: Դրան հակառակ՝ մի շարք հանրապետություններում (Լիտվա, Լատվիա, Էստոնիա, Հայաստան, Մոլդովա, Ռուսաստան) ժողովրդի կողմից ընտրված ժողովրդավարական նոր իշխանությունները վայելում էին իրենց ազգաբնակչության մեծ մասի վստահությունը: ԽՍՀՄ-ում գրեթե համատարած բնույթ ընդունեց անկախության ձգտումը, որն էլ ավելի սրեց ազգամիջյան հարաբերությունները: Երկրի մի շարք տարածաշրջաններում (ԼՂԻՄ, Աբխազիա, Հարավային Օսիա, Մերձդնեստր) բռնկվեցին միջէթնիկական պատերազմներ:

«Վերակառուցման» ժամանակաշրջանում ազգամիջյան արյունալի ընդհարումների լայն ծավալումը հիմնականում հետևանք էր տարիների ընթացքում իրականացված բոլշևիկյան ազգային արատավոր քաղաքականության, որի մի մասն էր կազմում վարչատարածքային կամայական բաժանումը: Ձգտելով արդարացնել այդ քաղաքականությունը՝ շուրջ յոթանասուն տարի «Կոմունիստական կուսակցությունը» փորձում էր ԽՍՀՄ-ում բնակվող հարյուրից ավելի ազգություններին համոզել, թե երկրում հաջողությամբ ու վերջնականապես լուծված է ազգային հարցը: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ իշխող վարչակազմը, առանց խորամուխ լինելու առկա հիմնախնդիրների մեջ, հետևողականորեն ճնշում էր ազգային ձգտումներին նպատակաուղղված ամեն մի փորձ: Այդ դիրքորոշմանը հավատարիմ մնացին նաև «Վերակառուցման» քաղաքականության «նախաձեռնողները», որոնց պատկերացմամբ այն հիմնվում էր չորս գլխավոր սկզբունքների վրա՝ տնտեսության արդիականացում, քաղաքական նորացում, ժողովրդավարացում և հրապարակայնություն:

Ինչպես 1989 թվականի սեպտեմբերին ազգային հարցին նվիրված ԽՄԿԿ կենտկոմի պլենումում ընդունված կոմկուսի «Կուսակցության ազգային քաղաքականությունը արդի պայմաններում» փաստաթուղթը, այնպես էլ ազգային հարցի մասին հետագայում ընդունված

կուսակցական ու պետական բազմաթիվ փաստաթղթեր հիմնականում հռչակագրային բնույթ ունեին. դրանցում ոչ միայն չէին հստակեցվում այս կարևոր խնդրի լուծման ուղիները, այլև առավել սրությամբ դրսևորվող ազգամիջյան հիմնահարցերը համահարթեցվում կամ էլ մղվում էին երկրորդական պլան: Նման մոտեցումները ավելի բորբոքեցին երկրում ծավալված ազգամիջյան հակամարտությունները:

Հայաստանի համար «Վերակառուցման» ժամանակաշրջանը չափազանց բարդ էր ու դժվարին: ԽՍՀՄ-ի տնտեսության և հասարակական-քաղաքական կյանքի ճգնաժամի հետևանքները դրսևորվեցին նաև հանրապետությունում: Սակայն եղած դժվարություններին գումարվեցին նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, ավերիչ երկրաշարժի ծանր հետևանքները, շրջափակումները, բազմահազար փախստականների առկայությունը: Դրանք Հայաստանի՝ առանց այն էլ ծանր սոցիալ-տնտեսական կացությունը դարձրին աղետալի:

Հանրապետության բնակչության սոցիալական ապահովության ոլորտում զգալի դժվարություններ էին կուտակվել, որոնք հանգեցնում էին ժողովրդի կենսամակարդակի անկմանը: Սրվել էին նաև բնապահպանական խնդիրները, որոնք հիմնականում քիմիական և լեռնամետալուրգիական արդյունաբերության զարգացման հետևանք էին:

Երկար տարիներ ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում, առաջնորդվելով նվազագույն ծախսերով տնտեսական առաջընթաց ապահովելու և սոցիալական հիմնահարցեր լուծելու սկզբունքներքով, հաշվի չառնելով տեղական առանձնահատկությունները, միակողմանիորեն զարկ էր տրվել վերոնշյալ ճյուղերի զարգացմանը: Չնայած դրանք զգալիորեն նպաստել էին հանրապետության սոցիալ-տնտեսական առաջընթացին, սակայն անտեսվել էին այդ արտադրությունների էներգատարությունն ու նյութատարությունը, հողային, բնակլիմայական սահմանափակ պայմանները, ջրային պաշարների սակավությունը, ժողովրդագրական ու բնապահպանական գործոնները: Հայաստանում բնապահպանական ծանր իրավիճակ էր ստեղծվել,

որը բացասաբար էր անդրադառնում ազգաբնակչության առողջության վրա՝ լրջորեն սպառնալով ոչնչացնել կենսական նշանակություն ունեցող բնական հարստությունները: Տագնապալի էր Սևանա լճի վիճակը:

Այսպիսով՝ «Վերակառուցման» քաղաքականության իրականացման առաջին տարիներին ԽՍՀՄ-ում զարգացող գործընթացները Հայաստանում հիմնականում դրսևորվեցին բնապահպանական խնդիրների լուծմանն ու սոցիալական արդարության հաստատմանը նպատակաուղղված ժողովրդական շարժման սկզբնավորմամբ: Սակայն երբ արցախահայությունը, առաջնորդվելով «ժողովրդավարություն» և «հրապարակայնություն» կարգախոսներով, արտահայտեց ինքնորոշման իր իրավունքը, ծավալված շարժման գլխավոր նպատակը դարձավ Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծման հասնելը: Հայ ժողովուրդը առաջիններից էր, որ վստահեց գորբաչովյան ժողովրդավարությանը՝ փորձելով իրականացնել իր ազգային ձգտումները: «Վերակառուցման» տարիները, փաստորեն, շրջադարձային եղան հայ ժողովրդի պատմության մեջ: Այդ ժամանակաշրջանն առաջին հերթին նշանավորվեց արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր փուլով: Այն ԽՍՀՄ քաղաքական կյանքում կատարվող փոփոխությունների անխուսափելի հետևանք էր, և, ի տարբերություն նախորդ տարիների պայքարի, բացահայտ էր ու հստակորեն առաջադրում էր ազգային ու քաղաքական նպատակներ, հանդես էր բերում ինքնորոշման սեփական իրավունքը մինչև վերջ պաշտպանելու վճռականություն: Այդ պայքարի հիմնական առանձնահատկությունը նրա աննախադեպ համաժողովրդական բնույթն էր ու միջազգային լայն արձագանքը: Այն, ըստ էության, դարձավ խորհրդային կայսրության փլուզումն արագացնող գործոններից մեկը: Ն. Ռիժկովը գրում է. «....Խորհրդային Միության փլուզումն աստիճանաբար սկսվեց, երբ Կենտրոնը չցանկացավ կամ այնուամենայնիվ չկարողացավ լսել Ղարաբաղյան «զանգը»»[1051]:

[1051] **Սարգսյան Ֆ.,** նշվ. աշխ., էջ 156-157, նաև **Рыжков Н.,** Перестройка, История предательств, Москва, 1992, с. 197:

Փաստորեն՝ «Վերակառուցման» շրջանում ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում լայն պայքար սկսվեց ազգային ինքնուրույնության համար: Դրա հիմնական պատճառն այն էր, որ չէին ձեռնարկվում միջոցառումներ՝ ազգամիջյան հարաբերությունները կարգավորելու, տեղական պահանջներն ու առանձնահատկությունները հաշվի առնելու միջոցով բարձրացված ցավոտ հարցերին ինչ-որ չափով լուծում տալու համար: Ուստի հանրապետություններում անխուսափելիորեն ձևավորվեցին ազգային ժողովրդական ճակատներ, որոնք սկզբնական շրջանում պայքարում էին ԽՍՀՄ կազմում ավելի շատ արտոնություններ ձեռք բերելու համար: Պայքարի բովում իր ուրույն ուղին անցավ Հայաստանը և նրա հետ՝ նենգությամբ իրենից բաժանված հայության հազարամյակների ոստան Արցախը:

Արցախը միշտ իր ուրույն տեղն է ունեցել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում: Դարեր շարունակ Արցախն ու Սյունիքը Արևելյան Հայաստանում ծավալված ազատագրական շարժումների հիմնական կենտրոններ են եղել: Մեր ժողովրդի պատմության բախտորոշ պահերին արցախցիները թշնամու դեմ պայքարի առաջին շարքերում իրենց հայրենասիրությամբ ու արիությամբ նորանոր սխրանքների են կոչել սերունդներին:

Դեռևս անցած դարի 20-ական թվականների սկզբներին խորհրդային իշխանության ջանքերով Արցախի լեռնային մասը, առանց նրա հիմնական բնակչության՝ հայության կամքը հաշվի առնելու, կուսակցության Կովկասյան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 5-ի անօրինական որոշմամբ բռնակցվել էր Խորհրդային Ադրբեջանին: Դրանից հետո Ադրբեջանի խորհրդային իշխանությունները ծրագրված աշխատանքներ էին սկսել Արցախը հայաթափելու նպատակով: Այդ քաղաքականությունը նրանք կարողացան իրականացնել հայկական Նախիջևանում, որը բոլշևիկյան ղեկավարության որոշմամբ նույնպես մտցվել էր Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ: Նախիջևանի այդ ինքնավար հանրապետությունը ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում

լիովին հայաթափվեց և բնակեցվեց «ադրբեջանցի» անունը ստացած թուրքերով:

Լեռնային Արցախի բնակչությունը շուրջ 70 տարի անընդմեջ պայքարել է ադրբեջանական իշխանությունների հայավեր քաղաքականության դեմ: Արցախն այդ երկարատև ու դաժան գոյամարտի տարիներին շատ անմեղ զոհեր է տվել, բայց կնճիռը մնացել է անլուծելի:

Խորհրդային կենտրոնական իշխանությունների անտարբերության և թողտվության պայմաններում Ադրբեջանի ղեկավարները սանձարձակորեն բռնադատում էին մարզի հայության մարդկային տարրական իրավունքները, բիրտ ճնշումներ էին կիրառում հայ դպրոցի ու մշակույթի նկատմամբ: Միաժամանակ փորձված և խորամանկ միջոցներով դիվանագիտորեն վարում էին մարզը հայաթափելու, այն թուրքացնելու հետևողական քաղաքականություն, որի պատճառով բնակչության ընդհանուր թվաքանակում արագորեն իջնում էր հայության բաժինը: Շարունակ ձգձգվում էին արտադրական ձեռնարկությունների և բնակելի շենքերի շինարարությունները: ԼՂԻՄ-ում կապիտալ շինարարության տարեկան միջին ցուցանիշները գրեթե 2.5 անգամ ցածր էին Ադրբեջանի ընդհանուր ցուցանիշից[1052]:

1989 թվականի հունվարի 12-ին ԼՂԻՄ-ում անցկացված բնակչության մարդահամարի տվյալներով մարզի բնակչությունը կազմել է 189.1 հազար մարդ, որից 145.5 հազարը կամ 79.9 %-ը հայեր էին, իսկ 40.7 հազարը կամ 21.5 %-ը՝ ադրբեջանցիներ, 1.9 հազարը կամ 1.0 %-ը՝ ռուսներ, և 1.0 հազարը կամ 0.5 %-ը կազմել էին այլազգի ներկայացուցիչներ[1053]:

Մարզի տագնապալից ժողովրդագրական իրավիճակի պատճառ-

[1052] Нагорно-Карабахская Республика, путь к вершинам, с. 73.

[1053] Итого всесоюзной переписи населения 1989 г. численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономной области, таблица 2, с. 3-23.

ներից էին կուտակված սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները[1054], որոնք բացառապես լուծվում էին Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականության նպատակների իրականացման դիրքերից: Դրա հետևանքով ԼՂԻՄ-ի տնտեսության ճյուղային և միջճյուղային կառուցվածքը, արտադրողական ուժերի տեղաբաշխումը, տարածքային միավորների տնտեսական ծանրաբեռնվածությունը չէին համապատասխանում մարզի բնատնտեսական պայմաններին ու ներուժին: Չկար տնտեսական կապ Հայաստանի հետ: Այս ամենը բացասաբար էր անդրադառնում ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման վրա, խոչընդոտում բնակչության լիարժեք զբաղվածության ապահովմանը և՝ հանգեցնելով նրա արտագաղթին: Վերջինս մեծապես պայմանավորված էր նաև հայ բնակչության ազգային-մշակութային ու հոգևոր պահանջմունքների բավարարման ոլորտների ծայրահեղ անմխիթար վիճակով:

Ադրբեջանի իշխանությունները ԼՂԻՄ-ում փակում էին հայկական դպրոցները, ուսումնական ծրագրերում «Հայոց պատմություն» առարկայի փոխարեն մտցնում «Ադրբեջանի պատմություն» և սահմանափակում հայոց լեզվով դասագրքերի ու գրականության տարածումը: Արգելված էր Երևանից հեռուստատեսային և ռադիոհաղորդումների ընդունումը, ամեն կերպ խոչընդոտներ էին հարուցվում Հայաստանի հետ մշակութային կապերի հաստատմանը[1055]:

Այդ ամենը չէր կարող առաջ չբերել ժողովրդի, մտավորականության, նույնիսկ կուսակցական աշխատողների և պետական ծառայողների մեծ մասի բացահայտ դժգոհությունը: Ինչ խոսք, կային նաև Բաքվի հլու կամակատարներ, որոնք ոչ միայն չէին միանում ընդհանուր դժգոհությանը, այլև դատապարտում էին իրենց հայրենակիցների ազնիվ

[1054] **Агаджанян М.,** Нагорно-Карабахский конфликт в свете защиты прав человека: политические и правовые аспекты, с. 129.

[1055] 1970 թվականի համեմատությամբ 1988 թվականին դպրոցականների թիվը մարզում նվազել է 13 հազարով, տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 25 մայիսի, 19 հունիսի, Ստեփանակերտ, 1988:

պոռթկումները: Եթե 1920-1950-ական թվականներին Արցախյան ընդվզումները հիմնականում առանձին անհատների դժգոհության արտահայտությունն էին, ապա 1960-1970-ական թվականներին պայքարն արդեն թևակոխել էր նոր հանգրվան՝ զանգվածային ընդվզումների շրջան: Հայտնի է, որ ամբողջ հայ ժողովուրդը, ի դեմս Խորհրդային Հայաստանի ղեկավարության, առաջին օրվանից սկսած՝ երբեք չի համակերպվել հայաբնակ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու, նրան բռնակցելու անօրինական որոշման հետ: 1920-1960-ական թվականներին արցախահայությունը և Խորհրդային Հայաստանի բնակչության բազմաթիվ ստորագրահավաքները, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարներ Աղասի Խանջյանի, Գրիգոր Հարությունյանի, Հակոբ Զարուբյանի, Անտոն Քոչինյանի և այլ մարդկանց բազմաթիվ նամակները ԽՄԿ կենտկոմ, նրա գլխավոր քարտուղարներին, ԽՍՀՄ ղեկավարությանը՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու խնդրանքով, մերժվել են զանազան պատճառաբանություններով: 1960-ական թվականներին արցախահայության ազատագրական պայքարի ղեկավարությունը ստանձնել է նշանավոր գրող, պատմաբան ու հրապարակախոս, Արցախի գրողների միության ղեկավար Բագրատ Ուլուբաբյանը: Նա ազատագրական պայքարի համախոհների հետ 1960-ական թվականների սկզբներին կազմակերպել է գաղտնի ժողովներ, համախմբել մարզի մտավորականությանը, Մոսկվա՝ բարձրագույն ատյաններին ուղարկել բողոքագրեր:

Բ. Ուլուբաբյանի կազմած և մեծ աղմուկ հանած նամակի տակ հեղինակի անվան կողքին իրենց ստորագրություններն են դրել նաև մարզի 12 այլ գործիչներ: Նամակի հեղինակները շեշտել են, որ ԼՂ բնակչության 85 %-ը հայեր են, որոնք այդտեղ ապրում են անհիշելի ժամանակներից՝ հույս հայտնելով, որ ԽՄԿԿ կենտկոմն ու խորհրդային կառավարությունը կաջակցեն մարզի միավորմանը Հայկական ԽՍՀ-ի հետ:

1965 թվականի հունիսին «13-ի նամակը» ուղարկվել է Մոսկվա՝ կուսակցական և պետական ղեկավար մարմիններին: Նամակը երկրի

ղեկավարությանն անձամբ հանձնել է Բ. Ուլուբաբյանը: Նրան ընդունել և զրույցներ են ունեցել ԽՄԿԿ կենտկոմում:

Ադրբեջանում կատաղի թշնամանքով ընդունեցին Արցախից Մոսկվա ուղարկված դիմումներն ու բողոքները, դրանց հեղինակները մեղադրվեցին ահաբեկչական գործունեություն ծավալելու մեջ: Բաքվից հետևեցին աննախադեպ սպառնալիքներ, բայց հայրենասերները չընկրկեցին: Բ. Ուլուբաբյանը կազմեց և ԽՄԿԿ կենտկոմ ուղարկեց մի նոր բողոքագիր, որը ստորագրել էին ևս երեք մարդ:

1966 թվականին Երևանում հայտնվեց 150 էջանոց անստորագիր մի մեքենագիր տեքստ, որի հեղինակը դարձյալ Բ. Ուլուբաբյանն էր: Տեքստը բազմացվեց և տարածվեց: Տեքստում խոսք էր գնում Ադրբեջանի տիրապետության տակ հեծող հայության դժվարին կյանքի մասին: Շուտով դրան հաջորդեցին դաժան հալածանքներ Արցախում: Տասնյակ մարդիկ բանտ նետվեցին, որտեղ մի քանիսը մեռան՝ չդիմանալով կտտանքներին, ծեծ ու ջարդին: Մարզի մի խումբ մտավորականներ ենթարկվեցին անողոք հետապնդումների և արտաքսվեցին հայրենի երկրամասից: Մյուս կողմից Արցախի մի քանի ստրկամիտ պաշտոնյաներ (Կևորկով, Մելքումով և նրանց աջակիցները) ամեն կերպ հաճոյանում և հլու-հնազանդ ծառայում էին Բաքվի իշխանություններին՝ հավատարմությամբ կատարելով նրանց հակահայ հրահանգները և կարգադրությունները:

Պետական մակարդակով Արցախում սկսված դաժան տեռորը զայրույթի ուժգին ալիք առաջ բերեց Հայաստանում: Պատահական չէ, որ 1966 թվականի օգոստոսին ՀԿԿ կենտկոմի քարտուղար Ա. Քոչինյանի ստորագրությամբ բողոքի նամակ ուղարկվեց ԽՄԿԿ կենտկոմ, որով պաշտպանվում էր Արցախը Հայաստանին միավորելու պահանջը:

Հետագա տարիներին Հայաստանից ու Արցախից շարունակվում էր նամակ-բողոքների հոսքը Մոսկվա: Երևանից հայ գրողների ու գիտնականների մի խումբ երկրի ղեկավարությունից պահանջեց վեր-

ջապես ուշադրություն դարձնել արցախահայության վիճակի վրա՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով: Հայաստանում, Արցախում և Սփյուռքում մեծ արձագանք գտավ մեծանուն գրող, սոցիալիստական աշխատանքի հերոս Սերո Խանզադյանի՝ խորհրդային ղեկավարությանն ուղղված նամակ-բողոքը, որով նա իր զայրույթն էր արտահայտում այն անտարբերության հանդեպ, որ կենտրոնը ցուցաբերում էր ամբողջ հայ ժողովրդին հուզող խնդրի, նրա արդարացի պահանջի նկատմամբ:

Հիշատակության են արժանի մոսկվաբնակ արցախցի նշանավոր գիտնական Հրանտ Եպիսկոպոսյանի, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս Սուրեն Բաղդասարյանի և մյուսների բողոքներն ու կազմած տեղեկագրերը, որոնք նրանք ուղարկում էին կուսակցական և խորհրդային վերադաս մարմիններին՝ չստանալով որևէ հիմնավոր պատասխան:

Արցախյան ազատագրական ոգորումները նոր թափ ստացան 1970-ական թվականների վերջերին և 1980-ական թվականների սկզբին: Այդ շրջանում աչքի ընկան պայքարի մի ամբողջ շարք նոր գործիչներ: Նրանց թվում էր գրող ու հրապարակախոս Զորի Բալայանը: Վերջինս գրքերով ու հոդվածներով, հրապարակախոսական ելույթներով, ստորագրահավաքներ կազմակերպելով, Մոսկվայի մամուլի օրգաններում տպագրած ակնարկներով մեծապես նպաստեց արցախահայության պայքարի վերելքին: Ռուս մտավորականության մի շարք լավագույն ներկայացուցիչների հետ նա հաստատել էր սերտ հարաբերություններ՝ նրանց ներգրավելով Արցախյան շարժման պաշտպանության գործին:

1986 թվականի փետրվարին տեղի ունեցած ԽՄԿԿ 27-րդ համագումարի նախօրյակին Մ. Գորբաչովին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա. Գրոմիկոյին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ներկայացվել էր նամակ՝ հայ հինգ ակադեմիկոսների, երեք գեներալների և ԽՍՀՄ երեք ժողովրդական արտիստների ստո-

ռագրությամբ: Նրանց թվում էր Աբել Աղանբեգյանը: Վերջինս այդ ժամանակ Մ. Գորբաչովի խորհրդականն էր: Բայց Մոսկվան շարունակում էր լուռ մնալ, իսկ շարժումը գնալով արմատական բնույթ էր ստանում[1056]:

1986 թվականի հուլիսին Արկադի Կարապետյանի ղեկավարությամբ Ստեփանակերտում հիմնվեց ընդհատակյա մի կազմակերպություն, որը ստացավ «Արցախյան միություն» անունը: 1987 թվականի ամռանն ու աշնանը «Միությունը» կատարեց իր ծրագրի նվազագույն մասը. անցկացրեց ԼՂԻՄ-ը Հայաստանին միավորելու ոչ պաշտոնական հանրաքվե, որի արդյունքում հավաքվեց ավելի քան 80 հազար ստորագրություն: Նույն թվականի նոյեմբերի վերջին Մոսկվա մեկնեց մի պատվիրակություն, որը ԽՄԿԿ կենտկոմ ներկայացրեց հավաքված ստորագրությունների փաթեթը: Դարձյալ ոչ մի արձագանք[1057]:

Բայց արցախահայության պայքարի թափը չէր պակասում: Որոշվեց ԼՂԻՄ-ից նոր պատվիրակություն ուղարկել երկրի մայրաքաղաք: Պատվիրակությունը Երևանից մեկնեց 1988 թվականի հունվարի 5-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վազգեն Բալայանի գլխավորությամբ: Պատվիրակները Մոսկվա տարան Լեռնային Ղարաբաղի պատգամավորների և ղեկավար աշխատողների 260 ստորագրությամբ հանրագիր և մարզի ստեղծման ու Ադրբեջանի կազմում նրա բացարձակ մեծամասնությունը կազմող հայ բնակչության անտանելի վիճակի վերաբերյալ 80-ից ավելի փաստաթուղթ[1058]:

Մոսկվայում պատվիրակության գործունեությանը աջակցում էին Զորի Բալայանը և Իգոր Մուրադյանը: Հունվարի 8-ին պատվիրակությանն ընդունել էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ, ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի անդամ Պ. Դեմիչևը: Նրան էլ հանձնվել էին տարած փաստաթղթերն ու հան-

---

[1056] **Ուլուբաբյան Բ.,** Արցախյան գոյապայքար, Երևան, 1994, էջ 292:
[1057] «Հայոց աշխարհ», 22 հունվարի, Երևան, 1998:
[1058] **Ուլուբաբյան Բ.,** նշվ. աշխ., էջ 293:

ռագիրը: Պ. Դեմիչևը հուսադրել էր պատվիրակության անդամներին՝ ասելով, որ անպայման կստեղծվի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հատուկ հանձնախումբ՝ հարցը հանգամանորեն ուսումնասիրելու համար: Եղել էին նաև հավաստիացումներ, որ պատվիրակության անդամները չեն ենթարկվի հետապնդումների ու հալածանքների: Ամբողջ Արցախը անհամբեր բաղձալի լուրի էր սպասում Մոսկվայից, բայց Կրեմլը շարունակում էր լռել: Արցախցիները ստիպված Մոսկվա ուղարկեցին նոր պատվիրակություն՝ Վաչե Սարուխանյանի և մի քանի այլ գործիչների մասնակցությամբ: Պատվիրակությունն ընդունվել է ԽՄԿԿ կենտկոմի ազգային հարաբերությունների սեկտորի վարիչ Վ. Միխալկովի կողմից: Վերջինս նույնպես հուսադրող, բայց դատարկ խոստումներ տվել[1059]:

Նման իրավիճակում, վստահելով գորբաչովյան ժողովրդավարությանը, հայ ժողովուրդը փորձեց իրականացնել իր ազգային ձգտումները, և «Վերակառուցման» տարիները շրջադարձային եղան հայ ժողովրդի պատմության մեջ: Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության ազգային-ազատագրական շարժումը երբեք էլ հանկարծակի չի սկսվել, այն հասունացել էր տասնամյակների ընթացքում: Հետևաբար խաղաղ ցույցերում ու հանրահավաքներում առաջ քաշված խնդիրները նորություն չէին: Սակայն խորհրդային կայսրապետության պայմաններում ԽՄԿԿ կենտկոմի հանցավոր թողտվությամբ ու քաջալերմամբ Ադրբեջանի իշխանությունների կողմից այն հակազդվեց ուժային ճընշումներով: Ադրբեջանն ուներ հստակ նպատակ՝ ունենալ ադրբեջանական (թուրքացված) Արցախ: Ահա թե ինչու սկիզբ առավ Արցախյան շարժումը, որը նոր էջ բացեց հայոց պատմության մեջ: Խնդիր դրվեց վերականգնելու պատմական արդարությունն ու Արցախը վերամիավորելու մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին:

Ոգևորված Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությամբ

[1059] «ԼՂ Հանրապետություն», 22 հունվարի, Ստեփանակերտ, 1998:

և հավատալով Մոսկվայի խոստումներին՝ արցախցիները 1988 թվականի սկզբներից դուրս եկան բացահայտ պայքարի՝ «Լենին-կուսակցություն-Գորբաչով» կարգախոսներով: Սկզբում շարժումը, ըստ էության, չէր ղեկավարվում որևէ կազմակերպության կամ ընտրված որևէ պատասխանատու անձի կողմից: Այն ընթանում էր տարերային հուժկու պոռթկումներով: Արցախահայությունը վերջնականապես համոզվել էր, որ ազատությունը կարող է ձեռք բերվել ոչ թե վերադասին ուղղված խնդրանք-պաղատանքներով, այլ միայն ու միայն հետագա անձնուրաց պայքարով՝ ընդդեմ ադրբեջանական դաժան գաղութատիրության: Ստեղծված ծայրահեղ լարված իրավիճակում արցախահայությունը կա՛մ պետք է հեռանար հայրենի երկրամասից, կա՛մ պայքարեր իր հողն ու պատիվը պաշտպանելու համար: Նրանք ընտրեցին երկրորդ ուղին:

Անհրաժեշտ է ընդգծել, որ այդ ժամանակ էլ ազգային-ազատագրական պայքարի ուշագրավ ու կարևոր առանձնահատկություններից էր կանանց զանգվածային և բուռն մասնակցությունը: Այս անժխտելի իրողությունը քանիցս արձանագրվել է ժամանակաշրջանի տարեգիրների և ուսումնասիրողների կողմից. «Կանա՜յք, հատկապես և աղջիկնե՜րը,– գրում է Ղարաբաղյան շարժման տարեգիր Բագրատ Ուլուբաբյանը 1988-ի փետրվարյան հանրահավաքներից ստացած իր տպավորություններում: –Որքա՜ն խելոք, արդար ու վարակիչ են նրանց խոսքերը: Նրանք ինչպիսի՜ տրամաբանական հյուսվածքի մեջ են առնում իրենց կյանքի ցավն ու հոգսը, պայքարի կամքն ու վճռականությունը, հաղթանակի հույսն ու հավատը»[1060]: Կանանց մասնակցության, նրանց զսպվածության ու հատուկ լիցք հաղորդելու շնորհիվ էր, որ հարյուր հազարավոր մարդկանց հուզումներն ու ալեկոծումները հանրահավաքների ժամանակ մնում էին կարգ ու կանոնի, սթափ ու խոհուն վարվելակերպի հունի մեջ: «Մենք՝ այրերս ու տղաները, միտինգներում

[1060] **Ուլուբաբյան Բ.,** Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, Երևան, 1997, էջ 10:

վերստին ճաշակեցինք մայրության, քույրության ու կանացիության կշռադատված ու խոհեմ վարվեցողության պտուղները: Նորից ու նորից համոզվեցինք, որ տնային հանապազօրյա հոգնատանջ աշխատանքը, երեխաների խնամքի ու դաստիարակության, սերունդներին անխռով մեծացնելու համար մայրերին լուսացրած անքուն գիշերներն ու զրկանքները, մայրական այս ծանր ու հոգնատանջ պարտականությունների հետ տղամարդկանց համահավասար, իսկ հաճախ առավել շատ աշխատանքային մասնակցությունը հանրային տնտեսությունում նրանց մեջ չեն խամրել՝ դրսևորելու սերը դեպի հայրենիքը, անձնուրացությունը՝ հանուն արդարության հաղթանակի»[1061]: Նորից հայ կինը հանդես եկավ ոչ միայն որպես արդարության վերահաստատման համար մղվող պայքարի ոգեշնչման աղբյուր, այլև նրա ակտիվ մասնակից:

«Ի դեմս միտինգների մասնակցող հայ կնոջ հպարտ, անձնուրաց, շեշտադրված կեցվածքի ու պահելաձևի, մենք նորից հանդիպեցինք Մամիկոնեից Մեծ տիկնոջ ֆենոմոնը մարմնավորող խրոխտ ու հողեղեն կերպարին,– գրում է ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանը[1062]:

Այսպես, երբ խնդիր դրվեց վերականգնել պատմական արդարությունն և Արցախը վերամիավորել մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին, հայ կինը հանդես եկավ ոչ միայն որպես պայքարի գաղափարակիր ու կազմակերպիչ, հասարակական-քաղաքական գործիչ, այլև հայրենիքի պաշտպան:

Շարժման ղեկավարներից Իգոր Մուրադյանի վկայությամբ 1986-1987 թվականներին Ստեփանակերտում ստորագրահավաքը հիմնականում իրականացվում էր քաղաքի բուժպոլիկլինիկայի գրանցման բաժնի աշխատողների օգնությամբ: Կանանց մասնակցությամբ իրականցվող «կիսալեգալ» գործունեությունը համակարգվում էր շարժման կազմակերպիչների կողմից, որոնց շնորհիվ ընդհատակյա աշխա-

---

[1061] **Աբրահամյան Հ.,** Մարտնչող Արցախ 1917-2000, հ. Գ, Ստեփանակերտ, 2007, էջ 18:
[1062] **Խոջաբեկյան Վ.,** Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 25:

տանքներում ներգրավվեցին նաև Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի մի խումբ ուսանողուհիներ: Թե՛ ինստիտուտում և թե՛ քաղաքում ստեղծվեցին շարժումը խթանող մանր խմբեր, որոնք հրավիրում էին գաղտնի ժողովներ, հանգանակում դրամական միջոցներ, պատրաստում թռուցիկներ և կատարում մի շարք այլ աշխատանքներ: Նախաձեռնում էին գյուղական, շրջանային ու քաղաքային տեղական մարմինների նիստեր գումարել, որտեղ գլխավոր խնդիրը «Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերամիավորման» հարցն էր:

Շարժման կազմակերպիչները, որոնց շարքերում մեծ թիվ էին կազմում կանայք, սկզբում բնակչության հետ իրականացնում էին գաղափարական և բացատրական լայն ծավալի աշխատանքներ, գաղտնի թռուցիկներ էին պատրաստում ու տարածում: Այդ գործին ակտիվորեն մասնակցում էին հիմնարկ-ձեռնարկությունների աշխատողներ: Յուրաքանչյուր կոլեկտիվում կային առանձին կանայք ու աղջիկներ, որոնք տղամարդկանց հետ միասին արագորեն տարածում էին թռուցիկները: Սկսված ընդհատակյա աշխատանքները ունեին մեկ նպատակ՝ փորձել ներդրում ունենալ խնդրի լուծման գործում: Այնուհետև նրանց մասնակցությամբ սկսվեցին ստորագրահավաքները, որոնք կատարվում էին խիստ գաղտնի պայմաններում: Ստորագրահավաք կազմակերպվեց հատկապես 1986-1988 թվականներին Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու օգտին: Ստորագրահավաքով հանուն համազգային նշանակության խնդրի լուծման սկսվեց հեռագրերի և հանրագրերի ձևակերպում[1063]:

Գործող խմբերը ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու խնդրանք-պահանջով, ինչպես նաև շրջանի բնակչությանը հուզող այլ խնդիրների առնչությամբ հանրագրեր էին ուղարկում շրջանային ու մարզային ատյաններին, Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ

[1063] **Աբրահամյան Հ.,** Մարտնչող Արցախ 1917-2000, հ. Գ, էջ 17:

բարձրագույն ղեկավար մարմիններին և ԽՍՀՄ կենտրոնական մարմիններին: Կազմակերպիչների մի մասն աշխատանքներ էր տանում Մոսկվա մեկնող պատվիրակություններին հանձնելու նպատակով հանրագրերի պատրաստման ուղղությամբ, իսկ մի այլ խումբ նախապատրաստում էր կոլտնտեսություններում անցկացվող հաշվետու ժողովների օրակարգային հարցը՝ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին: Համարյա մարզի բոլոր հաստատություններում ընդհատակյա գործունեություն էր ծավալվել: Ստեփանակերտում այդ աշխատանքներին ակտիվորեն մասնակցեցին նաև խոհարարուհի **Արաքսյա Հայրապետյանը**, «Ղարմետաքս» կոմբինատի աշխատակից **Վալյա Մեհրաբյանը**, կանայք[1064], որոնք կանգնած էին շարժման ակունքներում և անտեսելով սպառնացող վտանգը ու հանդիպող դժվարությունները՝ մտան պայքարի հորձանուտ:

Այդ օրերին տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի մասին Արցախի պետական համալսարանի պրոֆեսոր, Արցախյան շարժման ակտիվ մասնակից **Լենա Գրիգորյանը** հետագայում գրում է. «Հիմա, երբ ամեն ինչ վաղուց հետևում է մնացել, շատ դյուրին կարող է թվալ այդ ամենը, սակայն այն ժամանակ միանգամայն այլ էր մթնոլորտը: Աշխատում էինք ադրբեջանական բաժնի հետ՝ կողք կողքի: Նախընտրեցի դիմել առավել վստահություն ներշնչող գործընկերներիս: Զգուշորեն բացատրեցի, թե ինչն ինչոց է: Եվ ի զարմանս ինձ, ոմանք կտրականապես հրաժարվեցին, ոմանք քաղաքավարությամբ մերժեցին՝ մտերմաբար խորհուրդ տալով, որ հեռու մնամ նման բաներից, որոնց վերջը բանտախուցն է»[1065]:

Անհրաժեշտ է նշել, որ վերակառուցման տարիներին ժողովրդի մի մասի մոտ առկա էր անտարբերությունն ու վախի զգացողությունը, որը կոտրելու նպատակով հայրենասեր ուժերը քարոզչական առավել ծավալուն գործ սկսեցին կատարել: Արցախը Հայաստանին վերամիավո-

---

[1064] «Շարժում 88», 20 փետրվարի, N 2, Ստեփանակերտ, 2008:
[1065] «Հայրենական պաշտպան», 18 մարտի, Ստեփանակերտ, 2003:

ռելու միտված քարոզչական աշխատանքներ էր կատարում 1986 թվականին Ստեփանակերտում հիմնված «Արցախյան միություն» ընդհատակյա կազմակերպությունը, որը ստացավ «Արցախյան միություն» անունը: Այն ղեկավարվում էր 11 հոգուց բաղկացած կոմիտեի կողմից և ուներ ծրագիր ու կանոնադրություն: Արմատավորված անտարբերությունն ու վախի զգացողությունը կոտրելու նպատակով «Արցախյան միությունը» և հայրենասեր մյուս ուժերը քարոզչական առավել ծավալուն գործ սկսեցին կատարել: Կազմակերպության բաժանմունքները հիմնվեցին նաև մարզի շրջաններում[1066]: Կանայք ներգրավված էին նաև բաժանմունքների ղեկավար կազմում: ԼՂԻՄ Մարտունու շրջանի բաժանմունքի ղեկավարներից էր շրջխորհրդի գործկոմի պլանային հանձնաժողովի նախագահ **Անգելինա Հովսեփյանը**[1067]: Վերջինիս վկայությամբ՝ ինքը 1986 թվականին ընդգրկվել էր շարժման կազմակերպիչների գաղտնի խմբի մեջ: Այդ ժամանակ գաղտնի ստորագրահավաքներ էին իրականացվում, և նա միացել դրանց կազմակերպմանը: Նրան հանձնարարված էր տեղեկություններ պատրաստել վերջին տասը տարիներին շրջանի սոցիալ-տնտեսական վիճակի մասին՝ ԽՄԿԿ կենտկոմ ներկայացնելու նպատակով:

Ըստ Ա. Հովսեփյանի՝ ամենի ինչ կազմակերպվում էր նախատեսված ծրագրերին համաձայն. բոլորը գիտակցում էին սկսած գործի կարևորությունը և աշխատում էին մեծ նվիրումով: Միությունը 1987 թվականի ամռանը ու աշնանը իրագործեց իր նվազագույն ծրագիրը՝ հավաքելով ավելի քան 80 հազար ստորագրություն (որոշ տվյալներով՝ 52 հազար), որը նոյեմբերի վերջին ներկայացվեց ԽՄԿԿ կենտկոմ[1068]: Անկասկած, գաղտնի գործունեություններ են ծավալվել ԼՂԻՄ-ի բոլոր շրջաններում, և ամենուր կանայք հանդես են եկել ակտիվությամբ[1069]:

[1066] **Ավանեսյան Ի.,** Կանանց մասնակցությունը Արցախյան գոյապայքարում (1988-1994), ատենախոսություն, Երևան, 2015, էջ 12:
[1067] «ԼՂ Հանրապետություն», 22 հունվարի, Ստեփանակերտ, 1988:
[1068] «ԼՂ Հանրապետություն», 21 հունվարի, Ստեփանակերտ, 1988:
[1069] **Ավանեսյան Ի.**, նշվ. ատենախոսության սեղմագիր, էջ 12:

1987 թվականին Մարտունու շրջանի տեղական կազմակերպիչների և ակտիվիստների շարքերը համալրած կանայք՝ **Ռիտա Գևորգյանը** (Մարտունու կենտրոնական գրադարանի տնօրեն), **Սիլվա Բալայանը** (Մարտունու կոմերիտշրջկոմի քարտուղար), **Սիլվա Խաչատրյանը** (լրագրող), նախաձեռնում և իրականացնում էին մասնավորապես գաղտնի ստորագրահավաքներ, կատարում գաղափարախոսական աշխատանքներ, կազմակերպում գաղտնի ժողովներ[1070]: Նույն աշխատանքները իրականացվում էր նաև Մարտակերտի շրջանում, որտեղ ընդհատակյա կազմակերպության առավել ակտիվ գործիչներից էր **Ժաննա Խուրշուդյանը**[1071]:

Ժ. Խուրշուդյանը մասնակցում էր ոչ միայն գաղտնի խմբերի հավաքներին, այլև թռուցիկների տարածմանը և ստորագրահավաքին: Իհարկե, շրջանի գյուղերում դա իրականացվում էր համակիրների օգնությամբ, որոնց շարքերում մեծ թիվ էին կազմում շրջկենտրոնի և գյուղերի կանայք: Հարկ է նկատել, որ նրանց հիմնական մասը մտավորականներ էին: Թեկուզ գաղտնի, իրականացվող աշխատանքները նպաստեցին Հայաստանի հետ Արցախի միավորման պահանջի բարձրացմանը: Դրան հակառակ՝ բոլորովին այլ ծրագրեր հասունացան Ադրբեջանի կառավարիչների մոտ: 1987 թվականին բացահայտ դարձավ հայերի բռնի տեղահանումը Հյուսիսային Արցախում: Բռնության առաջին զոհը դարձավ հին ու հզոր արմատներ ունեցող հայկական Չարդախլու գյուղը, որի համախումբ դիմադրությունը վստահություն ներշնչեց շրջակա հայկական գյուղերի ամբողջ խմբին: Մի քանի ամիս տևած բռնությունները հասան նրան, որ ոստիկանության ուժերով շուրջ 200 ադրբեջանցիներ զինված հարձակում գործեցին հայկական գյուղի վրա: Հանրապետական և կենտրոնական իշխանության մարմինները ամեն կերպ քողարկեցին այդ երևույթը: Միայն «Սելսկայա

[1070] «Ամարաս», 15 փետրվարի, Մարտունի, 2008:

[1071] **Բեգլարյան Հ.,** Արցախ-Նամե, Ղարաբաղյան շարժում, գիրք Գ, Ստեփանակերտ, 2006, էջ 89:

ժիզն» կենտրոնական թերթում, այն էլ՝ շատ ուշացումով, նկարագրվեց, թե ինչպիսի ահավոր բռնություններ ու ապօրինություններ են կատարվել հայերի նկատմամբ Չարդախլու գյուղում[1072]: Հանուն իրենց պատմական հայրենիքի ազգային գոյատևման և մայր Հայաստանի միավորման՝ Հյուսիսային Արցախի հայերին մնում էր 1987 թվականին միանալ ստորագրահավաքին և համագործակցել ԼՂԻՄ-ում գործող ընդհատակյա խմբերի հետ: Տեղի կանայք ևս մասնակցում էին իրականացվող նախաձեռնություններին և այդ փուլում մի շարք աշխատանքներ կատարում հանուն այդ կարևոր նպատակի իրականացմանը[1073]:

Թե՛ Ստեփանակերտում և թե՛ մարզի շրջկենտրոններում շարունակվում էին ընթանալ գաղտնի ժողովներ, հանդիպումներ, որտեղ որոշումներ էին ընդունում Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու կարևորության մասին: Գաղտնի խմբերի առաջնահերթ խնդիրներից էր նախաձեռնող խմբերի ստեղծումը, որը իրականացվեց 1987 թվականին: Արդեն սեպտեմբերին Ասկերանի շրջանի գրեթե բոլոր գյուղերում գործում էին նման խմբեր, որոնք ակտիվ համագործակցության մեջ էին շրջկենտրոնի իրենց համախոհների հետ: 1987 թվականին Ասկերանում քիչ չէին շրջանի տեղական կազմակերպիչները և ակտիվիստները, որոնց շարքերում էր **Ժենյա Մովսիսյանը**: Վերջինս ևս մի շարք աշխատանքներ տարավ ընդհատակյա փուլում[1074]:

Ասկերանում առաջին նախաձեռնող խմբերից էր շրջանային «Կարմիր դրոշ» թերթի խմբագրակազմը: Շարժման սկզբում գրված համարձակ հոդվածները, որոնք չէին տպագրվում «Խորհրդային Ղարաբաղ» թերթում, անպայման տեղ էին գտնում Ասկերանի շրջանային թերթում: Այս աշխատանքներին մասնակցում էր նաև լրագրող **Ծովի-**

[1072] «Сельская жизнь», 24 декабря, Москва, 1987.
[1073] **Ավանեսյան Ի.**, նշվ. ատենախոսություն, էջ 24:
[1074] Տե՛ս նույն տեղում:

նար Գրիգորյանը[1075]: Նա այժմ աշխատում է Արցախի հանրային ռադիոյում որպես առաջատար խմբագիր: Կային կանայք, որոնք թեպետ ներառնված չէին նախաձեռնող խմբերի մեջ, բայց և մասնակցում էին նախապատրաստական աշխատանքներին: Այստեղ գործող նախաձեռնող խմբերում ընդգրկված կանայք **(Միրա Ավանեսյան, Նորա Առուշանյան, Մելանյա Առուշանյան, Գրետա (Ջեմմա) Թամրազյան)**, շրջկենտրոնում թռուցիկներ տարածելուց, ստորագրահավաքներ կազմակերպելուց բացի, աշխատանքներ էին տանում նաև գյուղերում[1076]:

«ԼՂԻՄ-ի վերամիավորում մայր հայրենիքին» ստորագրահավաքում կին ակտիվիստները բաժանվում էին մի քանի խմբերի, և ինչպես նրանք են վկայում, օրվա մեջ երկու անգամ այցելում էին «Կարմիր դրոշ» թերթի խմբագրատուն՝ հավաքած ստորագրությունները հանձնելու համար: Այդ աշխատանքները կատարվում էին խիստ գաղտնի[1077]: Միաժամանակ կանայք մասնակցում էին նաև գաղտնի հավաքներին, որոնք էլ 1986-1987 թվականներից վերածվեցին ընդհատակյա քաղաքական կազմակերպության:

Կանանց ակտիվ աշխատանքների շնորհիվ նամակների, դիմումների, հանրագրերի հոսքը Հադրութի շրջանից սկսվեց դեռևս 1986 թվականից: Ընդհատակյա աշխատանքների մասնակից կանայք ամենուրեք ստորագրահավաքներ էին կազմակերպում՝ արդյունքները Մոսկվա ուղարկելու համար: Հավատ կար, որ գորբաչովյան «Վերակառուցումը», նոր մտածողությունը հնարավոր կդարձնեն հեշտությամբ լուծելու բարձրացված հիմնահարցերը: Մասնավորապես խմբի նախաձեռնությամբ կազմված և Հադրութի շրջգործկոմին ուղղված հանրագրում հադրութցիները պահանջում էին լուծել Հադրութում հայկական հեռուստաալիք ունենալու հարցը և դիմել Մոսկվային՝ Արցախի հարցի արդարացի լուծում տալու համար: Արցախյան շարժման առաջ-

---

[1075] **Ավանեսյան Ի.**, նշվ. ատենախոսություն, էջ 24:
[1076] Տե՛ս նույն տեղում, էջ 25:
[1077] Տե՛ս նույն տեղում:

նորդ Արթուր Մկրտչյանի կինը՝ **Գոհար Մկրտչյանը**, նշված փաստի մասին գրում է. «Երբ 1987 թվականին Հադրութի հայ երիտասարդները, նրանց թվում՝ բազմաթիվ աղջիկներ ու կանայք, դիմել էին գործով, որպեսզի Հադրութում աշխատի հայկական հեռուստատեսության ծրագիրը, գործկոմի քարտուղարը, որն այն ժամանակ կարևոր դեմք էր, ասել էր, թե դուք ապրում եք Ադրբեջանում և պարտավոր եք նայել ադրբեջանական հեռուստատեսությունը: Երբ մենք նույն հարցով դիմեցինք Բաղիրովին (Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղարին), նա պատասխանեց, որ իրենք տեխնիկական հնարավորություններ չունեն, և բացի այդ՝ նրանք, ովքեր ուզում են հայկական հեռուստատեսության ծրագրերը նայել, կարող են գնալ և ապրել Հայաստանում: Այդ պատասխանից հետո մենք նամակ գրեցինք ԽՍՀՄ-ի կենտրոնական հեռուստատեսությանը: Այնտեղից պատասխան ստացանք, որ եթե մեր տեխնիկական հնարավորությունները ներում են, մենք կարող ենք դիտել թեկուզ ճապոնական կամ ամերիկյան հեռուստատեսության ծրագրերը: Այդ նամակը տարանք, ցույց տվեցինք գործկոմի և շրջկոմի նախագահներին, որպեսզի ապացուցենք, որ նման բան հնարավոր էր: Մարզկոմի քարտուղարը հավաքեց ստորագրողներին, սպառնաց և զգուշացրեց, որ խելոք տեղները նստեն, թե չէ կվտարվեն: Դա մեզ շատ վրդովվեցրեց, և գոյություն ունեցող ազգային խտրականությունն այդ օրվանից ավելի խորացավ: Ես կասեի, որ դա ոչ թե պատճառ էր, այլ մի փոքր առիթ, խթան, որ երիտասարդները, այդ թվում՝ կանայք և աղջիկներ արթնանան:

Այդ ժամանակ ես և ամուսինս՝ Արթուրը, գնացինք Երևան՝ Հայկական հեռուստատեսություն, նկարագրեցինք իրավիճակը: Նրանք մեզ տրամադրեցին երևանյան հաղորդումները նայելու հնարավորություն: Երբ վերադարձանք Ղարաբաղ և ասացինք, որ Երևանից գալու են և իրենց միջոցներով տեղադրելու են անտենաներ: Մենք համոզվեցինք, որ մեր մշակույթին հաղորդակից լինելուն իրականում խանգարում են ոչ թե ոչ բավարար տեխնիկական միջոցները, այլ Ադրբեջանի

ղեկավարության կողմից մշակված հայաթափման քաղաքականությունը»[1078]:

1987 թվականին հադրութցիները հանրագրով, այդ թվում՝ նաև կին ակտիվիստների ստորագրությամբ (**Էլզա Աբրահամյան, Անիկ Հայրապետյան, Սիլվա Պողոսյան**), դիմում են ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին՝ խնդրելով լուծել ազգային պահանջատիրության հարցը՝ ԼՂԻՄ-ը վերամիավորելու Հայաստանին[1079]:

Այսպես՝ հայկական հեռուստաալիքի հարցը չլուծվեց, միևնույն ժամանակ Հադրութում սկսեցին ճնշումները նախաձեռնող խմբի անդամների հանդեպ: Այնուամենայնիվ, շարժումը հետզհետե ավելի ու ավելի էր ծավալվում՝ մասնակիցներին դարձնելով շրջանի բոլոր գյուղերի բնակիչ: Ընդհատակյա խմբերը, մեկը մյուսի հետ համագործակցելուց բացի, ունեին առանձին տեղական խմբեր, որոնց միջոցով իրականացվում էին մի շարք ներքին կազմակերպչական աշխատանքներ: Ստեփանակերտում ակտիվ տեղական կազմակերպիչների շարքերում էին **Անահիտ Եղիազարյանը, Աղավնի Դանիելյանը, Քնար Հովհաննիսյանը**[1080]:

1988 թվականի սկզբներին շարժումը նոր թափ առավ: Անհրաժեշտ է ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու միասին Հռչակագիրը համաժողովրդական քննարկման դնել ու համապատասխան որոշում կայացնել:

Շարժման նախաձեռնող խմբերը, որոնց մեջ քիչ չէին կանայք, կազմեցին ժողովների անցկացման ժամանակացույց, որը հիմնականում համապատասխանեցվեց ԼՂԻՄ-ում փետրվարին ավանդաբար անցկացվող տնտեսությունների ղեկավարների հաշվետու-ընտրական ժողովների ժամանակացույցի հետ, և ժողովում ներկայացվեց Լեռ-

---

[1078] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, Երևան, 2000, էջ 96:

[1079] **Ավանեսյան Ի.**, նշվ. ատենախոսությունը, էջ 25:

[1080] **Բեգլարյան Հ.,** նշվ. աշխ., էջ 87:

նային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու մասին Հռչակագիրը, որը ամենուր հավանության արժանացավ: Այդ գործընթացը նոր հույսեր արթնացրեց մարդկանց մեջ՝ Արցախի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու գործում: Կարճ ժամանակահատվածում շրջանի բոլոր կոլեկտիվներում անցկացվեցին ժողովներ, որտեղ կանայք ևս ելույթներով հանդես եկան ու առաջարկեցին դիմել Կենտրոնին՝ հիմնահարցին արդար լուծում տալու խնդրանք-պահանջով: Միաժամանակ շարունակվում էր ստորագրությունների փաթեթների հոսքը Մոսկվա: Հադրութից ստորագրությունների փաթեթը Մոսկվա ուղարկվեց 1988 թվականի հունվարին: Ստորագրահավաքի կազմակերպմանը մասնակցում էր 66 մարդ, որոնցից 20-ը՝ կանայք[1081]: Այնուհետև վերջիններիս մասնակցությամբ Հադրութում տարածվում են «Ղարաբաղը բռնությամբ Ադրբեջանի մաս չի կազմի», «Ղարաբաղը կազատագրվի ամեն գնով, ինչ էլ, որ լինի», «Սահմանադրությունը ժողովրդի համար է, ոչ թե ժողովուրդը՝ Սահմանադրության», «Նախիջևանը օրինակ է Ադրբեջանի վարած քաղաքականության մասին» բովանդակությամբ կարգախոսներ[1082]:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունն Արցախյան շարժման առաջին իսկ օրվանից, դիմեց խարդավանքների, ահաբեկման, բռնի ուժի կիրառման քաղաքականության:

Արցախյան շարժման գլուխ կանգնեցին «Կռունկ» և «Միացում» կազմակերպությունները: Ղարաբաղյան գոյապայքարի այս նոր փուլում ժողովուրդը կանգնեց խաղաղ, ժողովրդավարական պայքարի, սակայն այն Ադրբեջանի կողմից վերածվեց ազգամիջյան բախումների, որը դարասկզբի ձեռագրով վերստին արյունով ու վայրագություններով լցրեց նորօրյա պատմության էջերը:

Ադրբեջանի կոմկուսի կենտկոմը որոշեց շարժումը խեղդել, և 1988 թվականի փետրվարի 11-ին Ադրբեջանի ԿԿ կենտկոմի ներկայա-

---

[1081] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 26:
[1082] Տե՛ս նույն տեղում:

ցուցիչները պիտի ժամանեին Արցախ՝ կուսակցական ակտիվի նիստեր գումարելու նպատակով, կուսակցական կազմակերպության միջոցով շարժումը կասեցնելու համար: Նրանք պահանջեցին ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու պահանջը դատապարտող որոշումներ կայացնել[1083]:

Սակայն ոչ միայն նրանց այդ նախաձեռնությունն արդյունք չտվեց, այլև նպաստեց շարժումը համաժողովրդական բնույթի վերածվելուն: Ակտիվի մասնակիցները դատապարտեցին Ադրբեջանի վարած գաղութային քաղաքականությունը և վճռականորեն հանձնարարեցին պայքարը շարունակելու մասին:

Փետրվարի 12-ին Ադրբեջանի ԿԿ կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Կոնավալովը, ժամանելով Ասկերան, որոշ քայլեր ձեռնարկեց, սակայն նրա առաքելությունը տապալվեց: Նույն օրը Ասկերանում հանրահավաք կազմակերպվեց, որտեղ ելույթ ունեցող կանայք մերկացրին Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականությունը: Այստեղ հանրահավաքն անցկացվեց ցուցապաստառով՝ «Կեցցե լեռնային Ղարաբաղի վերամիավորումը Հայկական ԽՍՀ-ին»[1084]:

Փետրվարի 12-ին Հադրութ և Մարտունի շրջկենտրոններում տեղի ունեցան այդ շրջանների բնակչության առաջին զանգվածային ցույցերը, որոնցում առաջ էր քաշվում մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու պահանջը: Բաքվից եկած էմիսարների ճնշումները մարզի կուսակցական և պետական մարմինների աշխատակիցների վրա արդյունք չտվեց[1085]:

Հադրութում ևս կուսակցական ակտիվի ժողովը տապալվեց, հետո կայացավ առաջին հանրահավաքը, որտեղ ընթերցվեց Հռչակագիրը[1086]: Այն կազմակերպվում էր նախաձեռնող խմբի ջանքերով, որի ղե-

---

[1083] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 27:
[1084] Տե՛ս նույն տեղում:
[1085] Տե՛ս նույն տեղում:
[1086] «Լուսարար», 11 փետրվարի, N 2-3, Ստեփանակերտ, 2013:

կավարներից էր ռուսաց լեզվի ուսուցչուհի **Նելլի Կասպարովան**: Նա մեկն էր այն գլխավոր գործող անձանցից, որոնք կազմակերպում էին նամակների, հանրագրերի հոսքը Մոսկվա, իսկ փետրվարի 12-ին ակտիվ աշխատանք տանում կուսշրջկոմի պլենումում Հռչակագրի ընդունման, ապա և հաջորդ օրը մարզային իշխանությունների կողմից այդ փաստաթղթի օրինականացման ուղղությամբ: Նրա համախոհների շարքերում մեծ թիվ էին կազմում հադրութցի կանայք[1087]:

Փետրվարի 12-ին Մարտունու շրջանում կայացած առաջին զանգվածային հանրահավաքում ելույթ ունեցան Մարտունու կենտրոնական գրադարանի տնօրեն **Ռիտա Գևորգյանը** և լրագրող **Սիլվա Խաչատրյանը**, որոնք մեկ անգամ ևս արտահայտեցին արցախցիների կամքը և պահանջեցին շարունակել սկսած գործը հանուն գլխավոր նպատակի: Այնուհետև *Իրինա Մանասյանը* ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու մասին հռչակագրի ռուսերեն օրինակը ներկայացրեց հանրահավաքի մասնակիցներին[1088]:

Ռիտա Գևորգյանը, անդրադառնալով այդ օրերի դեպքերին, գրում է. «Այդ տարիներին ես աշխատում էի շրջանային կենտրոնական գրադարանում… Ակտիվորեն սկսեցինք թռուցիկներ տարածել, որոնք մեզ էր տալիս Վոլոդյա Խաչատրյանը: …Թռուցիկները ընդունվում էին մեծ ոգևորությամբ, և դրանք մեծ նշանակություն ունեցան մասսաներին համախմբելու, շարժման մեջ ընդգրկելու համար: Այնուհետև սկսեցին ստորագրահավաքները, հեռագրերի տեքստերի ձևակերպումը, որում կարևոր դերակատարություն ունեին Անգելինա Հովսեփյանը և Սիլվա Բալայանը… Հաճախակի էինք հանդիպում Հադրութի մեր համախոհների հետ… Մինչև փետրվարի 12-ը գործում էինք անլեգալ՝ խիստ գաղտնի պահելով մեր գործունեությունը, սակայն իրադարձությունները շատ արագ էին զարգանում, և որոշվեց 1988 թվականի փետրվարի 12-ին ժամը 5-ին ցույց կազմակերպել… Նշված ժամին աշ-

---

[1087] «Դիզակ», 12 փետրվարի, Հադրութ, 2007:
[1088] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 28:

խատավորական կոլեկտիվները շարժվեցին դեպի հրապարակ...Մեզ արդեն ոչինչ արգելակել չէր կարող, շարժվում էինք առաջ: Հայտնի էր միայն, որ ժողովրդին այլևս կանգնեցնել հնարավոր չէր»[1089]:

Ռ. Գևորգյանի վկայություններից հայտնի է դառնում, որ 1988 թվականի սկզբներին շարժումը գնալով համաժողովրդական բնույթ էր ստանում, իսկ նրա ակունքներում կանգնած կանայք անում էին ամեն ինչ: Անհրաժեշտ է նշել, որ այդ օրերին կանանց անմիջական մասնակցությամբ կազմակերպված աշխատանքներ էին իրականացվում նաև Մարտակերտում: Այստեղ աշխատանքներն ավելի ծավալուն բնույթ ունեին: Լինելով մարզի ամենամեծ շրջանում՝ Մարտակերտի ակտիվիստները, որոնց մեջ շատ էին կանայք, ստիպված էին հիմնական աշխատանքները տանել գյուղերում, որտեղ հաճախակի էին տեղի ունենում գաղտնի ժողովներ: Ադրբեջանի իշխանությունների նպատակները ձախողվեցին, իսկ փետրվարի 12-ից մարզի հայ բնակչության պայքարը դարձավ զանգվածային: Շարժման ընդհատակյա փուլում ազգային-ազատագրական գործընթացի մեջ ներառված կանայք մեծապես նպաստեցին, որպեսզի շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի:

Անդրադառնալով 1985 թվականից մինչև 1988 թվականի սկիզբը ընկած ժամանակահատվածում կանանց դերին՝ միանշանակ կարելի է արձանագրել, որ նրանք հատուկ եռանդ ու մասնակցություն ցուցաբերեցին և մեծ դերակատարություն ունեցան համազգային գործում: Իրադարձությունների վերլուծությունը վկայում է, որ այն պահից սկսած, երբ ԽՍՀՄ-ում «Վերակառուցման» քաղաքականությամբ պայմանավորված փոփոխությունների հետևանքով սկիզբ առավ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը, կանայք, մասնակից դառնալով այդ ամենին, դեռևս ընդհատակյա փուլում ընդգրկվեցին նախաձեռնող խմբերի կազմում և նպաստեցին, որպես-

[1089] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 28, «Ամարաս», 15-31 հունվարի, Մարտունի, 2006:

զի շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի: Այն նախևառաջ իրականացվեց լայն բացատրական աշխատանքով մարզի հայ բնակչության շրջանում, ապա դրան հաջորդեց հանրագրերի հոսքը Մոսկվա խորհրդային ղեկավարությանը, ապա 1988 թվականի փետրվարին՝ առաջին բազմամարդ հանրահավաքները, ցույցներն ու երթերը: Այդ ամենին միացած կանայք, առաջ մղելով Արցախի հիմնահարցը, խորհրդային կայսրության վերադաս մարմիններից պահանջեցին հարցը լուծել ժողովրդավարական պահանջներին ու ազգերի ինքնորոշման սկզբունքների համապատասխան: Նրանց գործունեությունը հիմնականում դրսևորվեց քարոզչական աշխատանքներում, որի շնորհիվ ընդհատակյա շարժումը վերածվեց համաժողովրդական:

Այս իրողությունն առավել ցայտուն դրսևորվեց Արցախում, որտեղ, Բ. Ուլուբաբյանի դիտարկմամբ, հանրահավաքների ոգին հիմնականում կանայք էին՝ Ստեփանակերտի թատրոնի դերասանուհի Ժաննա Գալստյանի գլխավորությամբ:

Խոսելով այդ օրերի դեպքերի և իրադարձությունների մասին՝ Ժ. Գալստյանը գրում է. «Երբ սկսվեց շարժումը, ես, ինչպես բոլոր մայրերը, բոլոր ղարաբաղցիները, միամտորեն հավատացի «Վերակառուցում» ասածին, որ հնարավոր է ժողովրդավարական և քաղաքական ճանապարհով իրականացնել մեր երազանքները և արժանապատվորեն ապրել: Ես ղարաբաղյան մտավորականության այն հայտնի պատվիրակության կազմում էի, որ գնաց Մոսկվա, և վերադարձից հետո՝ փետրվարի 12-ին, Ստեփանակերտում սկսվեցին առաջին ցույցերը: Ես համոզված էի, որ քաղաքական ճանապարհով հնարավոր է ինչ-որ բանի հասնել: Մինչև որ նույն փետրվարին մեզ հրամցրեցին Սումգայիթը: Սումգայիթն ինձ շատ ու շատ բաներ հիշեցրեց այն անցյալից, ինչը, ինչպես ասում են, ինձ հետ չէր կատարվել:

Սումգայիթում զոհվել էին իմ մի քանի ծանոթները, որոնց վաղուց չէի հանդիպել, և մայրիկիս համագյուղացիներն էին: Իմ մեջ կասկած առաջացավ ժողովրդավարական մեթոդների մեջ: Հետո սկսվեց «քա-

ներով պատերազմը»: Ղարաբաղում ճանապարհների կառուցվածքն այնպիսին էր, որ, ասենք, մի շրջանից մյուսը գնալու համար անհրաժեշտ էր անցնել ադրբեջանական տարածքներով, անկախ կապ չկար: Օրինակ՝ Ստեփանակերտից Մարտակերտ հասնելու համար պետք էր անցնեինք Աղդամի միջով: Հետո սահմանամերձ շրջաններում սկսեցին գողանալ անասուններին՝ սպառնալով որսորդական զենքով: Այդ ժամանակ մենք մտածեցինք ինքնապաշտպանության ջոկատներ ստեղծելու մասին: Սկզբում դրանք կրում էին զուտ պաշտպանական բնույթ, ասենք՝ պաշտպանել ֆերմաները և գյուղատնտեսական աշխատանքները: Կամաց-կամաց ձողը բարձրանում էր: Ղարաբաղում ստեղծվեց «Կռունկ» կազմակերպությունը: Ես այդ կազմակերպության անդամն էի, հետո ազգային խորհրդի անդամը, պարտիզանական գործունեությունը կոորդինացնող գաղտնի կոմիտեի անդամը: Մենք այլ ճար չունեինք: Մենք կանգնած էինք ընտրության առջև. կա՛մ պետք է պատասխան տայինք, կա՛մ կլիներ նոր ցեղասպանություն: Երբ շարժումը վերաճեց զինված հակամարտության, ես արդեն զինվորական էի»[1090]:

Հարկ է նշել, որ կանայք տղամարդկանց հավասար ներկայացված էին նաև «Միության» բարձրագույն ղեկավարության հետ բանակցություններ վարելու առաքելությամբ Մոսկվա մեկնող պատվիրակություններում: Օրինակ՝ 1988-ի մարտին կազմված պատվիրակության մեջ ընդգրկված 7 պատվիրակներից 3-ը կանայք էին՝ **Սաիդա Օրբելյանը, Քնարիկ Առաքելյանը** և **Տատյանա Սոբոլևան**[1091]:

Հայ կանայք բոլոր ժամանակներում ժողովրդի համար բախտորոշ պահին և արտակարգ իրավիճակում հիացմունքի արժանի ձեռներեցություն ու խիզախություն են ցուցաբերել՝ մշտապես հանդես գալով իրենց այրերի կողքին կամ թիկունքին: Նրանք համաժողովրդական պայքարի առաջին շարքերում էին:

[1090] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, էջ 54:
[1091] Տե՛ս նույն տեղում, էջ 80:

Արցախյան ազգային-ազատագրական շարժման արդի փուլի ելակետը հանդիսացավ շարժման ակտիվիստների ջանքերով 1988 թվականին փետրվարի 13-ին Ստեփանակերտում անցկացված համաժողովրդական հանրահավաքը, որին մասնակցում էին մեծ թվով ուսանողներ, ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվներ իրենց ցուցապաստառներով: Այս բազմահազարանոց հավաքին մասնակցում էին ոչ միայն մայրաքաղաքից, այլև շրջաններից Ստեփանակերտ եկած մեծ թվով կին-ակտիվիստներ: Հանրահավաքում դատապարտվեց Ադրբեջանի ղեկավարության կողմից շարժումը դատապարտող որոշումը, որի նախագիծը նախօրոք պատրաստ էր: Հանրահավաքում ելույթ ունեցողների թվում էր **Արաքսյա Հայրապետյանը**: Նա, դատապարտելով Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականությունը, կոչ արեց հասնել հարցի արդարացի լուծմանը՝ մարզը դուրս բերել Ադրբեջանի կազմից, ինչն էլ կհանդիսանար արցախցիների կամքի դրսևորումը[1092]:

Ելույթ ունեցողների խոսքը մասնակիցների համար ոգևորիչ էր: Նրանք հավատ էին ներշնչում մասնակիցներին, որ արցախահայության նպատակը մոտ է իրականությանը: Չնայած նրան, որ ԽՍՀՄ և Ադրբեջանի ղեկավարությունը ամեն ինչ անում էր այն կասեցնելու համար, սակայն չէր կարողանում, քանի որ համաժողովրդական պայքարը վերելք էր ապրում: **Հասմիկ Միքայելյանը**՝ այդ ժամանակ Ստեփանակերտի կուսքաղկոմի երկրորդ քարտուղարը, վկայում է. «Առաջին ցույցից հետո, որը ղեկավարների մեծ մասին հանկարծակիի բերեց, սկսվեց կրիտիկական վիճակից ելքի որոնումը: Ամբողջ օրը շշպռանքներ ու քարոզներ էին տեղում, իսկ ուշ երեկոյան Կևորկովի և այլ անձանց շուրթերից անսքող սպառնալիքներ լսվեցին. եթե վաղը հուզումները կրկնվեցին, հետևանքները կանխատեսել անհնարին կլինի: Խոսքը վերաբերում էր Ադրբեջանի կոմկուսի ԿԿ վարչական մարմինների

[1092] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 25:

բաժնի վարիչ Մ. Ասադովի սպառնալիքին, որը նա հնչեցրել է կուսմարզկոմի բյուրոյի փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը կայացած նիստում: Նրա հայտարարությամբ նույնիսկ ակնկալվում էր, հարյուր հազար ադրբեջանցի «ֆանատիկների» ներխուժումը մայրաքաղաք Ստեփանակերտ և հաշվեհարդարը շարժման մասնակիցների նկատմամբ:

Լարված իրավիճակում ուժային կառույցների սպառնալիքների ներքո բազմաթիվ խոչընդոտների պայմաններում, հազարավոր արցախցիներ, անտեսելով վտանգը, դուրս եկան հանրահավաքի և ԼՂԻՄ-ի ղեկավարություններից պահանջեցին մայր Հայաստանի հետ վերամիավորելու մասին որոշում ընդունել: Չնայած Կենտրոնի կոշտ դիրքորոշմանը, այնուամենայնիվ, շարունակվում էին հայ պատվիրակությունների այցելությունները Մոսկվա՝ խնդրի դրական լուծմանը հասնելու համար: Այս նպատակով, ինչպես վերը նշվել է, դեռևս 1988 թվականի փետրվարի 8-ին Մոսկվա մեկնեց ԼՂԻՄ մտավորականության պատվիրակությունը, որի կազմում էին նաև շարժման ակտիվ մասնակիցներ, Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի Ժաննա Գալստյանը և սոցիալիստական աշխատանքի հերոս Գոհարիկ Սարինյանը: ՀԽՍՀ պետական անվտանգության կոմիտեի նախագահի մի զեկուցագրից պարզվում է, որ Արցախի պատվիրակությանը Մոսկվայում «հուշել են, որ պետք է նախ դիմել մարզային խորհրդին ու կարողանալ որոշում ընդունել տալ ԼՂԻՄ-ը Հայաստանին միավորելու մասին և այն ուղարկել ըստ ատյանների»[1093]:

Պատվիրակության անդամները Ստեփանակերտ վերադարձան փետրվարի 17-ին և հաշվետվության ներկայացրին Ստեփանակերտում բազմահազարանոց հանրահավաքի մասնակիցներին Մոսկվայում կատարած աշխատանքների մասին և կոչ արեցին լինել անհողդողդ ու ոչ մի րոպե չնահանջել պայքարից[1094]: Պատվիրակության անդամ Ժաննա

[1093] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 83:
[1094] «ԼՂ Հանրապետություն», 23 հունիսի, Ստեփանակերտ, 1996:

Գալստյանը հիշում է. «Մեր՝ մտավորականներիս Մոսկվա կատարած առաքելությունը ևս որակում են որպես օժանդակ մեծ պայթյունի համար, որ տեղի ունեցավ նրան հաջորդող տարիներին»[1095]: Պարզվեց, որ փետրվարի 10-ին պատվիրակության անդամներին ընդունել էր ԽՄԿԿ կենտկոմի ազգամիջյան հարաբերությունների բաժնի վարիչ Վ. Միխայլովը, որը հուսադրել էր նրանց և խոստացել աջակցել այդ հարցում:

Առաջին զանգվածային ցույցից անմիջապես հետո՝ փետրվարի 14-ին, Ստեփանակերտ տեղափոխվեց 12 միավոր տեխնիկայից բաղկացած տանկային շարասյուն[1096], իսկ հաջորդ երկու-երեք օրերին ավելի մեծ թվով զինվորներ հայտնվեցին քաղաքում[1097]: Չնայած նրան, որ քաղաքի փողոցները լեփ-լեցուն էին խորհրդային զորքերով, Ստեփանակերտ էր եկել մարզի բնակչության զգալի մասը: Բազմահազարանոց քաղաքը հավաքվել էր կենտրոնական հրապարակում, ներկա էին նույնիսկ մանկամարդ կանայք՝ փոքրիկ երեխաների հետ: Այդ օրերին արդեն իսկ մեծ թիվ էին կազմում շարժման ակտիվիստ կանայք, որոնց աշխատանքների համակարգմանը մասնակցում էր նաև **Վալյա Մեհրաբյանը**[1098]: Առաջին իսկ օրերից նա մասնակցում էր ստորագրահավաքներին, թռուցիկներ տարածում՝ շրջաններից պատգամավորների ներկայությունն ապահովելու համար կազմակերպչական աշխատանքներ կատարում, ակտիվորեն մասնակցում հանրահավաքներին: Պարետային ժամի պատրվակի տակ, երբ Ադրբեջանի իշխանավորները փորձ կատարեցին ԼՂԻՄ-ի ներքին գործերի բաժնի զենքերը բռնագրավել, արցախցի 30 կանանց, նրանց թվում Վալյա Մեհրաբյանի

[1095] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 25:
[1096] **Բալայան Վ.,** նշվ. աշխ., էջ 282:
[1097] **Արշակյան Ա.,** Արցախյան գոյապայքար (1985-1992), Երևան, 2004, էջ 19:
[1098] «Մարտիկ», 20 փետրվարի, N 10, Ստեփանակերտ, 2001, նաև **Ավանեսյան Ի.**, նշվ. ատենախոսությունը, էջ 32:

համառ դիմադրության արդյունքում զենքի բռնագրավման ծրագիրը ձախողվեց[1099]:

Փետրվարի 14-ին և 15-ին Լենինի անվան (ներկայիս՝ Վերածննդի) հրապարակում, շարունակվող հանրահավաքներում կազմվում էին հարյուրավոր հեռագրեր, դիմումներ և ուղարկվում Մոսկվա, Երևան, որոնցում առաջ էին քաշվում բազմաթիվ պահանջներ ու խնդիրներ[1100]: Լ. Գրիգորյանի հավաստմամբ՝ Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի կողմից 13 դասախոսների, նաև իր՝ **Արզիկ Մխիթարյանի, Ռոնա Բալայանի, Սեդա Ղազարյանի, Աննա Հարությունյանի, Ալվինա Բադալյանի** ստորագրությամբ Մ. Գորբաչովին ուղարկվեց հեռագիր, որում պահանջվում էր կարգավորել ստեղծված իրավիճակը և արցախյան խնդրի արդարացի լուծումը[1101]: Այդ նույն ժամանակ մարզի շրջաններում տեղի էին ունենում խորհրդակցություններ, հավաքներ, որոնցում հիմնականում քննարկվող հարցը ղարաբաղյան հիմնախնդրին էր:

Ասկերանում փետրվարի 15-ի հերթական հանրահավաքում պատվիրակները, այդ թվում՝ **Ռեբեկա Եղյանը**, կոչով դիմել են Ժողպատգամավորների շրջխորհրդի նստաշրջանի մասնակիցներին. «Մենք՝ Ասկերան ավանի և Ասկերանի շրջանի հայաբնակ գյուղերի հասարակության ներկայացուցիչների հանրահավաքի մասնակիցներս, կոչ ենք անում Ժողովրդական պատգամավորների շրջխորհրդի բոլոր պատգամավորներին պաշտպանել շրջանի հասարակության պահանջը և քվեարկել հօգուտ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու արդարացի պահանջի»[1102]: Ապա հանրահավաքի կազմակերպիչները նամակ էին պատրաստել և 12 հոգուց բաղկացած պատվիրակություն ուղարկել Հայաստան: Պատվիրակության մեջ ընդգրկ-

---

[1099] **Ավանեսյան Ի.**, նշվ. ատենախոսությունը, էջ 32:
[1100] ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 48, թ. 24:
[1101] «Արցախի համալսարան», 10 փետրվարի, N 2, Ստեփանակերտ, 2008:
[1102] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 33:

ված կին-ակտիվիստներ **Նորա Առուշանյանը** և **Ասյա Հայրապետյանը** ևս մասնակից էին դարձել փետրվարի 21-ին Թատերական հրապարակում կայացած բազմահազարանոց հանրահավաքին: Վերջիններիս տեղեկացմամբ՝ պատվիրակությունը, այդ օրերին ցույցերին մասնակցելուց բացի, Երևանում մի շարք հանդիպումներ է ունեցել, այդ թվում՝ Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հետ և քննարկել հիմնախնդիրը[1103]: Պատվիրակության նպատակն էր հարցի կարգավորման համար բոլոր հնարավոր միջոցներն օգտագործել:

Հերթական նամակը՝ ուղղված ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին՝ Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման առաջարկով, կազմվել է փետրվարի 15-ին արիմիությունների Հադրութի շրջանային կառույցի նիստում, որտեղ 24 ելույթ ունեցողներից 10-ը կանայք էին[1104]: Նրանք, արտահայտելով արցախցիների վճռականությունը, առաջարկել են առանց վարանելու շարունակել համաժողովրդական պայքարը: Չնայած Ադրբեջանի իշխանությունների կողմից ԼՂԻՄ-ի տարբեր շրջաններում կիրառվող բռնություններին՝ արցախահայությունը ոչ միայն չնահանջեց, այլ նոր թափով շարունակեց համաժողովրդական շարժումը:

Ստեղծված իրավիճակը պահանջում էր իրագործել կոնկրետ և վճռական քայլեր: Այսպես՝ սկսվեց ԼՂԻՄ շրջանների ժողովրդական պատգամավորների, այդ թվում կին-պատգամավորների դիմումների հոսքը շրջանային խորհուրդներ՝ շրջանային արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով՝ ԼՂԻՄ-ի հարցը քննարկելու համար: Առաջին հանրահավաքից հետո Մարտունու շրջանային խորհուրդ են դիմել մի շարք պատգամավորներ, այդ թվում՝ **Էլեոնորա Բալայանը** (թիվ 5 ընտրատարածք), **Սեդա Օհանյանը** (թիվ 46 ընտրատարածք), **Լյուբա Գրիգորյանը** (թիվ 52 ընտրատարածք), **Սիրուշ Դադայանը** (թիվ 74

[1103] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 33:
[1104] Տե՛ս նույն տեղում:

ընտրատարածք), **Լիլյա Ավանեսյանը** (թիվ 53 ընտրատարածք)՝ պահանջելով պաշտպանել Մարտունու շրջանի բնակչության պահանջը և մարզի վերամիավորման հարցը քննարկելու համար հրավիրել ժողովրդական պատգամավորների շրջանային արտահերթ նստաշրջան[1105]:

Այնուհետև Ասկերանի շրջանային խորհրդի մի խումբ պատգամավորներ (այդ թվում՝ 15 կին պատգամավորներ) փետրվարի 17-ին դիմել են շրջխորհրդի գործկոմ՝ խնդրելով «Ադրբեջանական ԽՍՀ ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի մասին» Ադրբեջանական ԽՍՀ օրենքի 31-րդ և 35-րդ հոդվածների պահանջներին համապատասխան հրավիրել շրջանային խորհրդի արտահերթ նստաշրջան և ընդունել որոշում[1106]:

Դիմումում մասնավորապես նշվել է. «Մենք՝ ներքոստորագրյալ պատգամավորներս, պահանջում ենք հրավիրել շրջխորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին շրջանի հասարակության կողմից քննարկված ու ջերմ պաշտպանություն հռչակագիրը և ընդունել համապատասխան որոշում»[1107]: Այդ կին պատգամավորների շարքերում էին **Ալինա Ասըրյանը, Անիկ Ասատրյանը, Սուսաննա Գաբրիելյանը, Սվետլանա Խաչատրյանը, Անահիտ Պետրոսյանը, Վեներա Գրիգորյանը, Էմմա Դանիել-յանը, Էվելինա Ստեփանյանը, Ելիզավետա Սարգսյանը, Գրետա Մարտիրոսյանը, Երմոնյա Սարգսյանը, Ստելլա Բալասյանը, Անուշ Անդրյանը, Նազիկ Դադայանը** և **Ասյա Պետրոսյանը**[1108]:

Բազմաթիվ փաստաթղթեր վկայում են այն իրողությունը, որ կանայք համաժողովրդական այդ պայքարում մասնակցում էին բոլոր նախաձեռնություններին: Նրանց ակտիվ մասնակցությամբ փետրվարի

[1105] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 34:
[1106] Տե՛ս նույն տեղում:
[1107] Տե՛ս նույն տեղում:
[1108] Տե՛ս նույն տեղում:

18-ին Ասկերանի շրջխորհրդի գործկոմ են դիմում Նորագյուղի, Նախիջևանի, Խնապատի գյուղական խորհուրդների գործկոմները՝ առաջարկելով հրավիրել շրջխորհրդի նստաշրջան և քննարկել հիմնահարցը[1109]: Շարժման կազմակերպիչները վկայում են, որ մարզի բոլոր շրջանների շրջխորհուրդների գործկոմներին ուղղվել են մի շարք նամակներ ու դիմումներ՝ շրջխորհրդի նստաշրջան հրավիրելու առաջարկով, այն էլ՝ կանանց անմիջական մասնակցությամբ:

1988 թվականի փետրվարի 19-ին հրավիրվեց Ժողպատգամավորների՝ Մարտունու 20-րդ գումարման շրջխորհրդի 3-րդ արտահերթ նստաշրջանը, որին մասնակցում էին 24 կին-պատգամավորներ: Ելույթ ունեցան **Կարինե Բաբայանը, Էլեոնորա Բալայանը, Լիլյա Ավանեսյանը**: Վերջինս հատկապես կարևորեց, որ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ միավորման հարցը միշտ էլ եղել է քննարկման առարկա: Հարցը բարձրացվել է նաև 1966 թվականին և չի գտել արդարացի լուծում, ու մինչև հիմա հարցը մնում է բաց: Մոտեցել էր այն պահը, որ պետք է վերջնականապես դրականորեն լուծվեր ժողովրդի պահանջը: Իր և ընտրողների անունից առաջարկել է խնդիրը ներկայացնել վերադաս մարմինների քննարկմանը ու պահանջել դրական լուծում տալ հարցին[1110]:

Ելույթ ունեցող բոլոր կին-պատգամավորները՝ **Կարինե Բաբայանը, Մարիետա Սարգսյանը, Նինա Գասպարյանը, Էլեոնորա Բալայանը, Նելլի Հովսեփյանը, Վարդուշ Օհանյանը, Լիլյա Ավանեսյանը, Անգելինա Հովսեփյանը, Սիրանուշ Դադայանը, Արևիկ Ավարյանը, Լարիսա Ջիվանշիրյանը, Ռայա Հարությունյանը, Թամարա Քամալյանը, Ռայա Բաղդասարյանը, Բելա Գրիգորյանը, Անժելա Շամամյանը, Սեդա Օհանյանը, Լյուբա Գրիգորյանը, Անժելա Խաչատրյանը, Մագուրա Հովսեփյանը, Էմմա Ավետիսյանը, Սվետլանա Բաղդասարյանը, Անժելա Բալայանը**, միահամուռ առաջարկեցին խնդրել

[1109] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 35:
[1110] Տե՛ս նույն տեղում:

Ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզխորհրդի գործկոմին ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին հարցը ներկայացնել մարզխորհրդի նստաշրջանի քննարկմանը[1111]:

Փետրվարի 20-ին կայացավ Ժողպատգամավորների Ասկերանի 20-րդ գումարման շրջխորհրդի 5-րդ նստաշրջանը: Նստաշրջանին 78 պատգամավորներից ներկա էին 60-ը, որոնցից 10-ը՝ կին: Ելույթով հանդես եկան **Անիկ Ասատրյանը, Երմոնյա Սարգսյանը, Թամարա Փարամազյանը**, որոնք, կողմ արտահայտվելով ԼՂԻՄ-ի վերամիավորմանը Հայաստանին, որպես ժողովրդի ընտրյալ և ժողովրդի շահերը պաշտպանող պատգամավորներ՝ առաջարկեցին նստաշրջանի անունից հռչակագիր ներկայացնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու մասին: Պատգամավոր Անիկ Ասատրյանը նշեց, որ որպես Ասկերանի շրջսովետի պատգամավոր՝ արտահայտում է իր ընտրական օկրուգի ցանկությունը: Միայն ժողովուրդը կարող է որոշել իր բախտը, իսկ հայ ժողովուրդը ունի միայն մեկ ցանկություն: Նա՝ որպես ժողովրդի ընտրյալ և նրա շահերը պաշտպանող, խնդրեց նստաշրջանի անունից դիմել ԽՍՀՄ Գերագույն սովետին՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու խնդրանքով[1112]:

Անհրաժեշտ է նշել, որ այդ օրերին մարզի շրջաններում և Ստեփանակերտում ամեն ինչ տրվում էր, այդ թվում՝ կանանց ակտիվ մասնակցությամբ, մարզխորհդի նստաշրջանի կայացման և որոշման ընդունման համար: Շարժման մասնակիցները հավատում էին, որ նստաշրջանի որոշումը կտանի հարցի դրական լուծմանը: Նույն օրը Ժողպատգամավորների Հադրութի 20-րդ գումարման շրջխորհրդի 4-րդ նստաշրջանում քննարկվեց «ԼՂԻՄ-ի և Նախիջևանի միացումը Հայկական ԽՍՀ-ին և այդ հարցի վերաբերյալ Շահումյանի, Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի շրջաններում հանրաքվե անցկացնելու ու

[1111] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 36:
[1112] Տե՛ս նույն տեղում, էջ 36-37:

դրանք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը ներկայացնելու մասին» հարցը: Կին պատգամավորները իրենց զեկույցներում արտահայտեցին շրջանի հայ ազգաբնակչության կամքը: Ընդունվեց որոշում՝ «խնդրել մարզխորհրդի գործկոմին՝ նստաշրջանի քննարկմանը ներկայացնել «ԼՂԻՄ-ի և Նախիջևանի միացումը Հայկական ԽՍՀ-ին և Շահումյանի, Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի շրջաններում անցկացնելու հանրաքվե»[1113]: Ահա այսպիսի իրավիճակ էր ստեղծվել մարզում փետրվարի 19-20-ի դրությամբ, որի ընթացքում կանանց անմիջական մասնակցությամբ մարզի բոլոր շրջաններում, բացի Շուշիից, անց էին կացվել շրջխորհուրդների նստաշրջաններ, որոնք որոշում էին ընդունել առաջարկել մարզխորհրդին՝ արտահերթ նստաշրջան հրավիրելու[1114]:

Մարզխորհրդի նստաշրջանին մասնակցելու համար փետրվարի 20-ի առավոտյան սկսեցին Ստեփանակերտ ժամանել մարզխորհրդի պատգամավորները, չնայած այդ օրը Ստեփանակերտում գտնվող Ադրբեջանի ԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բաղիրովի հրահանգով ամենուրեք խոչընդոտներ էին ստեղծվում, որպեսզի պատգամավորները շրջաններից չկարողանան հասնել մարզկենտրոն[1115]: Նույն օրը՝ ժամը 11-ին, Ստեփանակերտում հրավիրվեց մարզխորհրդի գործկոմի նիստ, որտեղ նիստին մասնակից կանայք՝ նրանց հետ նաև մարզգործկոմի նախագահի տեղակալ **Արաքսյա Տոնոյանը** և մարզգործկոմի քարտուղար **Ռիմա Խաչիյանը** առաջարկեցին ընդառաջել պատգամավորների պահանջին և հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան[1116]: Այդ նույն օրը ԼՂԻՄ մտավորականությունը, նրանց թվում՝ ***Ժաննա Գալստյանը*** և **Գոհարիկ Սարինյանը**, նամակով դիմելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, ներկա-

---

[1113] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 36-37:
[1114] Տե՛ս նույն տեղում:
[1115] **Արշակյան Ա.,** նշվ. աշխ., էջ 21:
[1116] «Հայաստանի Հանրապետություն», 20 փետրվարի, N 33, Երևան, 1998:

յացրին արցախցիների պահանջը և խնդրեցին նպաստել ԼՂԻՄ-ի վերամիավորմանը մայր Հայաստանին[1117]: Սակայն ինչպես փետրվարի 20-ի մտավորականության նամակը, այնպես և նախորդ և հաջորդ մի շարք նամակ-դիմումները մնում էին անհետևանք:

Փետրվարի 20-ին ժամը 16-ին Ստեփանակերտում հրավիրված Ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման քաղաքային խորհրդի 4-րդ արտահերթ նստաշրջանում ելույթ ունեցան Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի, ժողովրդական արտիստ **Մարգո Բալասանյանը**, մարզի մշակույթի բնագավառի արհմիության կոմիտեի նախագահ **Լաուրա Ղարամյանը**, Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի բանվորուհի **Իրինա Գևորգյանը** և Ստեփանակերտի կուսքաղկոմի քարտուղար **Հասմիկ Միքայելյանը**: Քննարկման թեման Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու մասին աշխատավորության պահանջի կապակցությամբ Ստեփանակերտ քաղաքում ստեղծված իրավիճակի մասին» հարցն էր[1118]:

Քաղխորհրդի 4-րդ արտահերթ նստաշրջանի մասնակից կանայք ոչ միայն իրենց մտահոգությունները հայտնեցին մարզում ստեղծված իրավիճակի համար, այլ նաև պահանջեցին մարզխորհրդի նստաշրջանում ընդունել որոշում, որը պետք է արտահայտեր արցախահայության կամքը: Քաղխորհրդի պատգամավոր **Մարգո Բալասանյանը**, իր խոսքում անդրադարձավ հայկական թատրոնի, հատկապես Ստեփանակերտի՝ Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի կատարած աշխատանքներին, ապա՝ առկա իրավիճակին՝ նշելով. «Աշխատանքի բնույթով ես հաճախակի եմ լինում Ղարաբաղի ամենաձայրամասային բնակավայրում և իրազեկ եմ այն տխուր փաստին, որ սոցիալ-տնտեսական ծանր վիճակի հետևանքով մեր լեռ-

[1117] ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 3, թ. 52:
[1118] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսություն, էջ 38:

նային գյուղերը դատարկվում են: Դա այն պատճառներից մեկն է, որը արցախցիներին ստիպում է իրենց երկրամասը վերամիավորել Հայկական Հանրապետության հետ: Ղարաբաղից հեռացած հայերին փոխարինելու են գալիս ադրբեջանցիները, որոնց թիվը գնալով ավելի է շատանում: Հարգելի՛ պատգամավորներ, մեր թատրոնի կոլեկտիվն ինձ հանձնարարել է հայտնել իրենց ցանկությունը՝ Լեռնային Ղարաբաղը վերամիավորելու Հայաստանի հետ»[1119]:

Մինչ բուն խնդրին անդրադառնալը ելույթ ունեցողները փորձում էին ներկայացնել անցյալի սխալները, քննադատում Ադրբեջանի վարած հակահայկական հարցը, ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջի ու դրա վերականգնման մեջ տեսնում արդարության հաստատումը: Պատահական չէ, որ **Լաուրա Ղարամյանը** սկզբում անդրադարձավ 1920-ական թվականների սկզբին կատարված պատմական կոպիտ սխալին և պահանջեց այն ուղղել, որը մարզի ամբողջ բնակչության ցանկությունն էր: Ապա նշեց, որ մարզը զրկված է բազմաթիվ հնարավորություններից, նույնիսկ չունի հայերենով հրատարակելու իրավունք, մշակույթի պալատ, անչափ թույլ է մարզի մշակութալուսավորչական հիմնարկների նյութական բազան և հավաստեց, որ բարձրացրած հարցում ազգայնական, որևէ միտում չկա, ու լիովին հավատում է, որ այն կվճռվի դրականորեն[1120]:

Քաղաքային խորհրդի 4-րդ նստաշրջանում իրենց ելույթներում Ի. Գրիգորյանը և Հ. Միքայելյանը ևս պաշտպանեցին հնչած առաջարկությունները՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու անհրաժեշտության վերաբերյալ[1121] :

ԼՂԻՄ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու և մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու հարցի քննարկումը դարձել

[1119] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսություն, էջ 38:
[1120] Տե՛ս նույն տեղում, էջ 39:
[1121] Տե՛ս նույն տեղում:

էր հրամայական պահանջ, և բոլորն անհամբեր սպասում էին այդ որոշման ընդունմանը:

Մեծ ջանքերի գնով 1988 թվականից փետրվարի 20-ի երեկոյան ժամը 20-ն անց 20 րոպեին նստաշրջանը սկսեց աշխատանքները, որին մասնակցած 111 պատգամավորներից 49-ը կին պատգամավորներ էին[1122]: Պատմական նիստը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մարզային խորհրդի միջնորդությունը՝ մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու հարցը»: Ելույթ ունեցած 45 պատգամավորներից 27-ը կին պատգամավորներ էին[1123]: Նրանք իրենց ելույթներում համոզիչ փաստերով ցույց էին տալիս ԼՂԻՄ-ի՝ անցած տարիներին Ադրբեջանի ԽՍՀ կազմում գտնվելու պատճառով բազմաթիվ չլուծված հարցերի առկայությունը, որոնք խանգարել են մարզի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի զարգացման բնականոն ընթացքին: Այդ նպատակով նրանք առաջարկում էին նստաշրջանի անունից խնդրել Ադրբեջանի ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին, որ վերջիններս ընդառաջեն Լեռնային Ղարաբաղի հայ աշխատավորու-

---

[1122] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսություն, էջ 39:

[1123] Պատմական նստաշրջան, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ստեփանակերտ, 2008, էջ 27: Մասնակցում էին կին պատգամավորներ Արմիդա Գաբրիելյանը (թիվ 5 ընտրատարածք), Սուրայա Գրիգորյանը (թիվ 2 ընտրատարածք), Ռաիսա Գրիգորյանը (թիվ 115 ընտրատարածք), Ռիտա Մնացականյանը (թիվ 130 ընտրատարածք), Գոհար Գրիգորյանը (թիվ 4 ընտրատարածք), Ժաննա Մելքումյանը (թիվ 92 ընտրատարածք), Լիդիա Սարգսյանը (թիվ 21 ընտրատարածք), Էսմիդա Առաքելյանը (թիվ 84 ընտրատարածք), Լիդա Պետրոսյանը (թիվ 101 ընտրատարածք), Անժելա Հակոբյանը (թիվ 60 ընտրատարածք), Նարինե Ավանեսյանը (թիվ 7 ընտրատարածք), Լուսիկ Հակոբյանը (թիվ 82 ընտրատարածք), Ժաննա Մովսիսյանը (թիվ 42 ընտրատարածք), Ռիտա Նալբանդյանը (թիվ 41 ընտրատարածք), Լաուրա Համբարձումյանը (թիվ 128 ընտրատարածք), Ասյա Ղազարյանը (թիվ 58 ընտրատարածք), Ամալյա Հակոբյանը (թիվ 73 ընտրատարածք), Անիկ Սուքիասյանը (թիվ 96 ընտրատարածք), Ամալյա Աբրահամյանը (թիվ 104 ընտրատարածք), Ջուլիետա Լալայանը (թիվ 102 ընտրատարածք), Ռազմելա Անանյանը (թիվ 100 ընտրատարածք), Լենա Ղահրամանյանը (թիվ 91 ընտրատարածք), Ալվարդ Սարդարյանը (թիվ 87 ընտրատարածք), Նվարդ Պետրոսյանը (թիվ 67 ընտրատարածք), Թամարա Գալստյանը (թիվ 72 ընտրատարածք), Սիլվա Արզումանյանը (թիվ 110 ընտրատարածք), Զինա Բաբայանը (թիվ 108 ընտրատարածք):

թյան ցանկությանն ու ինքնորոշման անկապտելի իրավունքին՝ լուծելով մարզն Հայաստանին միավորելու հարցը, ինչպես նաև միջնորդելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ նույն հարցի լուծմանն աջակցելու համար: Նրանցից յուրաքանչյուրն իր ելույթն ավելացնում էր նոր փաստեր, սեփական դիտարկումներ, որոնք ցույց էին տալիս, որ մարզն իր ինքնավարության ամբողջ ընթացքում ազգային զարգացման տեսակետից պարզապես գտնվել է փակուղու առաջ: Նրանք բազմաթիվ փաստեր, օրինակներ էին բերում, քննում և դատապարտում էին, միաժամանակ համոզված հաստատում, որ այդ վիճակից դուրս գալու միակ ճանապարհը Ղարաբաղի վերամիավորումն է Հայկական ԽՍՀ-ին[1124]:

Պատգամավոր **Արմիդա Գաբրիելյանը**, իր ելույթում ներկայացնելով հայ ազգի բարիդրացիական հարաբերությունները ուրիշ ազգությունների ու ժողովուրդների հետ, նշել է. «Մի բան պարզ է. ուրիշ ազգերին սիրել կարողանալու համար պետք է սիրել նախ իր ազգին, պաշտպանել իր ազգի արժանապատվությունը: Մի՞թե արժանապատվության կոխկրտում չէ, երբ հայ մանուկը, օրորոցից սկսած, անհաղորդ է հայ երգին, հայ մշակույթին ու մեր պատմությանը: Մեր երեխաները դպրոցում չորս լեզու են սովորում, սակայն չգիտեն հայ ժողովրդի պատմությունը: Այսօր վերակառուցման և ժողովրդավարության պայմաններում վերջապես հասել է խոսելու, արդարացի պահանջելու հարցը… Մեր պահանջը հոգևոր սնունդն է, մենք հայ մնալ ենք ուզում, ազգության ապագան ենք ուզում: Մեր սկսածը արդար, ազնիվ գործ է, արդարացի պահանջ: Ուրեմն ոչ մի նահանջ՝ հանուն Ղարաբաղի միացման Սովետական Հայաստանին»[1125]:

Նույն նստաշրջանում պատգամավոր **Սուրայա Գրիգորյանը**, անդրադարձ կատարելով փետրվարին տեղի ունեցած հանրահավաք-

---

[1124] Պատմական նստաշրջան, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ստեփանակերտ, 2008, էջ 28-29:
[1125] Տե՛ս նույն տեղում, էջ 41:

ներին, ժողովներին և այնտեղ քննարկվող հարցին, նշել է, որ վերջապես լցվել է մեր ժողովրդի համբերության բաժակը: Լեռնային Ղարաբաղը Հայաստանի մի մասնիկն է: Նա հայտարարեց, որ «Ղարմետաքս» կոմբինատի երեքհազարանոց բանվորների հետ միանում է բոլոր ղարաբաղցիների արդար պահանջին՝ չմոռանալով այն հանգամանքը, որ ԼՂԻՄ-ը միակն է ամբողջ Սովետական Միությունում, որը ունենալով, Հայկական Սոցիալիստական Հանրապետության հետ նույն լեզուն, չի մտնում այդ հանրապետության կազմի մեջ, ու առաջարկեց ուղղել այդ սխալը[1126]:

Իրար հաջորդելով՝ ամբիոն բարձրացող կին պատգամավորները պահանջում էին արդարացիորեն լուծել հիմնախնդիրը: Նստաշրջանի բոլոր մասնակիցները, Լեռնային Արցախի ամբողջ հայ բնակչությունը խորապես համոզված էին, որ այլևս բացառվում է Ադրբեջանի կազմում մնալը, և որ հարցի միակ և սահմանադրական լուծումը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորումն է: Ուստի ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը որոշեց. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խորին ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի նկատմամբ և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից ՀԽՍՀ կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ն Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցի դրական լուծման համար[1127]: Հաջորդ օրն այս որոշումը տպագրվեց «Սովետական Ղարաբաղ» թերթում:

Ադրբեջանի իշխանությունները սվիններով դիմավորեցին այդ որոշումը և բռնեցին արցախահայության բացահայտ մարտահրավերը բռնի ուժով խեղդելու ուղին:

[1126] Պատմական նստաշրջան, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 41:
[1127] «Սովետական Ղարաբաղ», 21 փետրվարի, N 5, Ստեփանակերտ, 1988:

ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները ևս, չնայած իրենց կողմից վերակառուցման ու հրապարակայնության հռչակմանը, Արցախյան արդարացի շարժման հանդեպ դրսևորեցին կատաղի անհանդուրժողականություն: Երկրի բարձրագույն ղեկավարությունը աներկբա կանգնեց ադրբեջանական գաղութարարների կողքին: Ազգերի ինքնորոշման սահմանադրական իրավունքի իրագործումը կարող էր լուրջ վտանգ սպառնալ կոմունիստական համապարփակ տիրապետությանը: Պատահական չէր, որ Ադրբեջանի ղեկավարության առաջարկությամբ փետրվարի 21-ին ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոն հապշտապ ընդունեց «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշումը, որով արցախահայության ազատագրական շարժումը որակվեց որպես «ծայրահեղական», մի խումբ անջատողականների գործողությունների արդյունք, «նացիոնալիստական», որն իբրև հակասում է Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ աշխատավորների շահերին: Միաժամանակ որոշում ընդունվեց հայկական մարզի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացմանը նպաստող միջոցառումների վերաբերյալ[1128]:

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության սահմանադրական պահանջներին հակադրեցին բիրտ ուժի և բռնության քաղաքականությունը, որը կիրառվեց հատկապես ադրբեջանական իշխանությունների կողմից՝ նպատակ ունենալով այդ ճանապարհով կասեցնել համաժողովրդական պայքարը: Այդ մասին են վկայում 1988 թվականի փետրվարյան դեպքերը, երբ 22-ին, իրենց ճանապարհին ամեն ինչ ավերելով, ադրբեջանցի հրոսակները Աղդամի շրջանից, շարժվեցին Ստեփանակերտ՝ «կարգ ու կանոն հաստատելու», սակայն Ասկերանի մատույցներում կանգնեցվեցին և հետ շպրտվեցին[1129]: Իսկ հաջորդ օրը՝ փետրվարի 23-ին, լուր տարածվեց, թե Քելբաջարի (ներկայումս՝ Քարվաճառ) կողմից հարձակում է կատարվում Մարտակերտի ուղղու-

[1128] «Правда», 24 февраля, Москва, 1988.
[1129] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 42:

թյամբ: Ադրբեջանական հրոսակախմբին դիմակայելու համար շրջ-կենտրոնի բնակչությունը՝ տղամարդիկ թե կանայք, բեռնատարներով շարժվեցին դեպի Քելբաջարի կողմը: Այդտեղ կանանց մասնակցությունը կազմակերպում էր **Վալյա Պետրոսյանը**, որի ղեկավարությամբ պատասխան տրվեց ազերիներին, որոնց նպատակն էր խոչընդոտել Մարտակերտում տեղի ունեցող հանրահավաքին[1130]: Այդ պահից սկսած՝ Վալյան պնդել է, որ ինքը լինելու է պայքարի առաջին շարքերում: Վալյա Պետրոսյանը շարժման առաջին օրերից մասնակցում էր ցույցերի, հանրահավաքների կազմակերպմանը, գաղտնի ստորագրահավաքին, իսկ հետագայում՝ ամուսնու՝ Յուրա Եղիազարյանի հետ ուղղաթիռով Հայաստանից Արցախ զենք ու զինամթերքի տեղափոխմանը: Երբ սկսեցին ինքնապաշտպանական մարտերը, նա միացավ կամավորական ջոկատներին և մինչև 1994 թվականի մայիսը մասնակցեց Արցախի ազատամարտին:

Վալյա Պետրոսյանը 1989-1994 թվականներին մասնակցել է Մարտակերտի (Հոռաթաղ, Առաջաձոր, Մոխրաթաղ, Մաղավուզ, Մարտակերտ և այլն) ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Բազմիցս ուղղաթիռներով մեկնել է Կամո և վերադարձել զենք ու զինամթերքով լի ծանրոցներով: Այդ գործն իրականացնելու համար Վալյային օգնում էին լեզվի իմացությունն ու մորից ժառանգած ուկրաինական դիմագծերը[1131]:

1992 թվականի ամռանը թուրքերն ու ռուսական բանակի ստորաբաժանումները մեծաքանակ տեխնիկայի աջակցությամբ անցել են լայնածավալ հարձակման: Սկսվել է մեծ նահանջը: Հուլիսի 3-ին Վ. Պետրոսյանը, պահակակետից վերադառնալով, գնացել է Առաջաձոր՝ ծնողներին տեսնելու և այլևս չի կարողացել վերադառնալ մարտի դաշտ: Օգոստոսի 19-ին իմացել է, որ ամուսինը Կիչանում վիրավորվել է: Անմիջապես մեկնել է այնտեղ, Յուրային տեղափոխել է Երևան՝

[1130] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 205:
[1131] Տե՛ս նույն տեղում:

բուժման: 1993 թվականի փետրվարին ամուսինները նորից Արցախում էին: Յուրան ծառայությունը շարունակել է հրետանիում, Վ. Պետրոսյանը՝ սկզբում տանկային վաշտում, այնուհետև՝ հրետանիում: Մարտական գործողություններում ցուցաբերած խիզախության համար Վ. Պետրոսյանը պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին», «Արաբո», «Փառապանծ մարտիկ», Վ. Սարգսյանի «Մարտական գործողություն», «Հայաստանի երկրապահ», «Դելտա» մեդալներով և պատվոգրերով[1132]:

Դեպքերի զարգացումները հաջորդում էին մեկը մյուսին, ինչը ստիպում էր արցախահայությանը վճռական քայլերի գնալ: Փետրվարի 25-ին Մարտակերտի շրջանի մի խումբ մտավորական կանայք՝ **Ալվինա Սարգսյանը, Զարիկ Դավթյանը, Նինա Օհանյանը, Ժաննա Մելքումյանը, Կարինա Աբրահամյանը, Արմիդա Մինասյանը**, դիմել են ԼՂԻՄ մարզխորհրդի և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահություններին, որտեղ իրենց դժգոհությունն են հայտնել փետրվարի 21-ին ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի ընդունած որոշման համար՝ պահանջելով նպաստել իրավիճակին[1133]:

Շարժմանը սատար կանգնելու համար 1988 թվականի փետրվարի 21-ին Խորհրդային Հայաստանում զանգվածային ելույթների մեծ ալիք սկսվեց: Ազատագրական շարժումը համակարգելու նպատակով Իգոր Մուրադյանի նախաձեռնությամբ փետրվարի 22-ին ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն[1134]: Հանրապետության գրեթե բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, ի դեմս «Ղարաբաղ» կոմիտեի, բնակավայրերում ստեղծվեցին շարժման կառույցներ: Փետրվարի 21-ին Երևանի Թատերական հրապարակում տեղի ունեցավ առաջին զանգվածային հանրահավաքը: Շուտով միտինգների ու ցույցերի ալիքը տարածվեց հանրապետության բոլոր քաղաքներում ու գյուղերում: Բազմամարդ

[1132] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 205:
[1133] ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 3, թ. 50:
[1134] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 18-19:

ժողովներում աշխատավորներն իրենց համերաշխությունն էին հայտնում Արցախի ազատագրական շարժմանը, երդվում էին աջակից լինել իրենց եղբայրներին ու քույրերին, միաժամանակ կենտրոնական իշխանություններից պահանջում էին արդարացի լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը: Աննախադեպ աճում էր հանրահավաքների մասնակիցների թիվը: Փաստորեն՝ ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցան հարյուր հազարանոց հանրահավաքներ ու ցույցեր: Երևանի Թատերական հրապարակում, Մատենադարանի առջև, գլխավոր պողոտաներում տեղի ունեցող հանրահավաքներում ու ցույցերում ելույթներ էին ունենում գիտության ու արվեստի նշանավոր գործիչներ, բանվորներ, ծառայողներ, պատերազմի ու աշխատանքի վետերաններ, որոնց մեջ քիչ չէին հայուհի կանայք, նշանավոր բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը և ուրիշներ: Նրանք պաշտպանեցին արցախահայության օրինական պահանջը, հրապարակեցին դիմումներ ու կոչեր՝ ուղղված կենտրոնական իշխանություններին՝ հարցը դրականորեն լուծելու ակնկալիքով: Սակայն հարցը լուծելու փոխարեն, ըստ էության, կենտրոնական իշխանությունները փորձում էին պայքարը դադարեցնել հայ անվանի մտավորականների միջոցով:

Փետրվարի 25-ին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը հանդիպեց Զ. Բալայանի և Ս. Կապուտիկյանի հետ: Նա կեղծ խոստումներով փորձեց հանգստացնել ալեկոծ հայ ժողովրդին, հետո սպառնաց, որ եթե շարժումը շարունակվի, ապա դա կործանարար կլինի Ադրբեջանում ապրող շուրջ կես միլիոն հայերի համար[1135]: Դրանով նա, փաստորեն, հուշեց ադրբեջանցի վանդալներին անել այն, ինչ արեցին հետագայում: Գորբաչովը նաև ադրբեջանցիներին հասկացնել տվեց, որ կարող են փակել Հայաստան տանող ճանապարհները, հանրապետությունը կտրել արտաքին աշխարհի հետ հա-

[1135] **Ուլուբաբյան Բ.,** նշվ. աշխ., էջ 72:

ղորդակցվելուց և տնտեսական բոյկոտի միջոցով բնակչությանը սովի մատնել: ԽՍՀՄ կենտրոնական մարմինները շարժման առջև պատնեշ կանգնեցրին նրա սկսման առաջին օրերից և մինչև վերջ հավատարիմ մնացին Արցախյան հիմնահարցի նկատմամբ որդեգրած անհանդուրժողական կարճատես քաղաքականությանը:

ԽՍՀՄ կենտրոնական մարմինները և ադրբեջանական իշխանությունները, համոզվելով, որ քաղաքական միջոցներով հնարավոր չէ կասեցնել հայերի՝ օրըստօրե ծավալվող ազատագրական շարժումը, որոշեցին ոտնահարել համամարդկային իրավունքի բոլոր չափանիշները՝ ժողովրդական շարժմանը հակադրելով բիրտ ուժն ու բռնությունը:

1988 թվականի փետրվարի 26-ին ԽՄԿԿ ԿԿ գլխավոր Մ. Գորբաչովը հատուկ կոչով դիմեց Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին՝ հորդորելով զսպվածություն և հանդարտություն հանդես բերել՝ խոստանալով առաջիկայում քննարկել դրանք դեմոկրատական պայքարի և օրինականության շրջանակներում[1136]: Հայ ժողովուրդը, ի տարբերություն ադրբեջանցիների՝ պահի կարևորության լուրջ գիտակցման, դադարեցրեց գործադուլներն ու հանրահավաքները: Իսկ ադրբեջանցիները, ընդհակառակը, ոչ միայն չդադարեցրին, այլև նոր թափ հաղորդեցին հակահայկական ելույթներին և դիմեցին վայրագ գործողությունների:

Բաքվից 35 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում, 1988 թվականի փետրվարի 26-ից սկսած, հակահայկական հանրահավաքներ կազմակերպեցին, որոնց գլխավորում էին քաղաքի «Կոմունիստական կուսակցության» շրջկոմների քարտուղարները: Հետագայում Սումգայիթի պաշտոնանկ արված քաղկոմի քարտուղարը հայտարարեց, որ այդ բոլորը կազմակերպվել է Ադրբեջանի կոմկուսի

[1136] ՀԱԱ, ֆ. 1, ց. 82, գ. 21, թ. 4-5:

կենտկոմի և նրա առաջին քարտուղարի ցուցումով: Դրան հավանաբար տեղյակ էին նաև Մ. Գորբաչովը և նրա շրջապատը[1137]:

Փետրվարի 27-ին ադրբեջանական խուժանը «մա՛հ հայերին» կոչով տեղական իշխանությունների աչքի առաջ կատարեց հայ ազգաբնակչության կոտորած, որը տևեց մինչև փետրվարի 29-ը: Պաշտոնական տվյալներով տանջամահ էին արվել 32 մարդ, խոշտանգվել ու ծանր վիրավորվել ավելի քան 200-ը[1138]:

Ո՛չ Սումգայիթի հանրահավաքները, ո՛չ կոտորածները պատահական չեն եղել, ինչպես հետագայում փորձում էին ներկայացնել ադրբեջանական իշխանությունները: Նախօրոք կազմել էին հայերի բնակարանների ցուցակները, անջատել հեռախոսները, պահեստավորել ինքնաշեն զենքեր: Փետրվարի 26-29-ն ընկած ժամանակահատվածում Սումգայիթի միլիցիան չէր գործել: Քաղաքը խուլ շրջափակված էր, ճանապարհներն ու երկաթուղին գտնվում էին զինված ջոկատների հսկողության տակ: Գազազած խուժանը հայերին սպանում էր բնակարաններում, տանջամահ անում փողոցներում ու հրապարակներում, այրում կենդանի մնացած մարդկանց: Այդ հանցագործության նպատակն էր փակել Արցախի հիմնահարցի քննարկման հեռանկարները, նոր ջարդերի կազմակերպման սպառնալիքով ահաբեկել հայերին և նրանց հարկադրել հրաժարվել ազատագրական պայքարից: Ակնհայտ է, որ ցանկացած հակամարտություն, զրկանք նախևառաջ անկրելի տառապանք է: Այս դեպքում արդեն կնոջ հոգեկան տառապանքներին գումարվում է մարմնական բռնությունների ենթարկվելու վտանգը:

Ահաբեկման հերթական քայլը՝ հայերի ցեղասպանությունը Սումգայիթում, սկիզբ դրեց Ադրբեջանի հայության բռնագաղթի առաջին փուլին: Երեք օր ջարդարարների խմբերը անակնկալ ներխուժում էին հայերի բնակարանները և կոտորում անպաշտպան մարդկանց: Առա-

---

[1137] **Улубабян Г., Золян С., Аршакян А.,** Сумгаит… Геноцид… Гластность?, Ереван, 1989, с. 55.

[1138] Տե՛ս նույն տեղում, էջ 18-19:

վել դաժան գործողությունները իրականացվեցին կանանց նկատմամբ, որի մասին վկայում են դեպքերի ականատեսները[1139]: Ականատեսներից Ռիմա Խալափյանը պատմում է, որ իր հարևան Էմմա Գրիգորյանին, որը հիսունն անց կին էր, մերկ հանել են բակ, ապա՝ սպանել: Վլադիմիր և Մարինա Պետրոսյանները պատմում են, որ հարևան Ավանեսյանների աղջիկներին մերկացրել են, հանել բակ ու դաժանորեն ծեծել: Բազմաթիվ են նման վկայությունները[1140]:

Շատ ավելի սահմռկեցուցիչ է Շագայանց Վալենտինայի սկեսրոջ սպանությունը: «Մենք նույնիսկ չկարողացանք նրան մարդավարի թաղել,– պատմում է նա:– Չթողեցին: Չկարողացանք մի կարգին սգալ նրան: Դա շատ ցավալի է: Ահավոր ձևով նրան սպանեցին: Դանակներով խողխողեցին, ծխախոտներով այրեցին»[1141]:

Զոհերի թվում էին *Էմմա Գրիգորյանը* (Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղից), *Ռազմելա Առուշանյանը, Լյոլա Ավագյանը* (Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղից), *Իրինա Մելքումյանը* (Հադրութի շրջանից), ինչպես նաև *Ելենա Բաբայանը, Սեդա Դանիելյանը, Ռայիսա Մելքումյանը, Փիրուզա Մելքումյանը, Թամարա Մեհտիևան, Հերսիլիա Մովսեսովան, Արուսյակ Սահյանը, Նատալյա Վարդանյանը*: Միայն փետրվարի 29-ի գիշերը երեք օր ուշացումով միութենական կենտրոնական իշխանությունները զորք մտցրին Սումգայիթ: Մեծ դժվարությամբ հաջողվեց դադարեցնել արյունահեղությունը և քաղաքից դուրս բերել ողջ մնացած հայերին:

Հայտնի է, որ Սումգայիթում առավել սադիստական գործողություններ կիրառվեց հատկապես կանանց նկատմամբ: Կազմակերպիչների համար դա պարզապես մարտավարություն էր: Կոտրել կանանց ոգին կնշանակեր առհասարակ կոտրել ազատագրական շարժումը:

[1139] **Шахмурадян С.,** Сумгаитская трагедия в сяидетельствах очевидцев, Ереван, 1989, кн. 1, с. 14:

[1140] **Շահմուրադյան Ս.,** նշվ. աշխ., էջ 14, 26:

[1141] Տե՛ս նույն տեղում, էջ 391:

Հազիվ թե տղամարդիկ մինչև վերջ գնային ու մարտունակ լինեին, եթե վճռական չլինեին կանայք, եթե ամուր չլիներ թիկունքը: Հայության դեմ իրականացրած այս ցեղասպանության նպատակն էր հայերին ահաբեկելով նոր արյունահեղ գործողությունների հեռանկարով՝ խեղդել Արցախյան ազատագրական պայքարը: Սումգայիթը վճռական ազդեցություն ունեցավ շարժման հետագա ընթացքի վրա: Ոճրագործությունը ոչ միայն չընկճեց հայ ժողովրդին, այլև ավելի համախմբեց նրան ազգային նպատակների իրականացման գաղափարի շուրջ: Ավելի քան երեք հազար սումգայիթաբնակ հայեր, կորցնելով իրենց բնակարանները և ունեցվածքը, հրաշքով փրկվելով սպանդից, պատսպարվեցին Հայաստանում, իսկ մնացածները Ադրբեջանից փախան տարբեր ուղղություններով: Ըստ որում՝ նրանց թույլ չէին տալիս փոխադրվել Ղարաբաղ:

Կենտրոնական իշխանությունները ձգտում էին հասարակությունից թաքցնել սումգայիթյան ողբերգությունը՝ այն ներկայացնելով որպես խուլիգանական տարրերի գործողություն: Ավելին՝ կենտրոնական մամուլն ու հեռուստատեսությունը դատապարտում էին «պրոլետարական միասնությունը խաթարող հայ անջատականներին», հակահայկական թույն սփռում ամբողջ երկրով մեկ: Մոսկվայի ադրբեջանամետ քաղաքականության պատճառով սումգայիթյան ոճրագործները մնացին անպատիժ: Դա ադրբեջանաբնակ հայերի նկատմամբ լայնածավալ հալածանքներին և բռնի տեղահանումների ազդակ հանդիսացավ: Ամբողջ Ադրբեջանում ծայր առավ վայրենի խրախճանք: Ամենուր ջարդարարների գործողություններն ուղեկցվում էին հայերի սպանություններով, բնակավայրերի ավերումով ու թալանով: Ակնհայտ էր արդեն, որ Արցախյան հարցն լուծվելու էր ոչ թե քաղաքակիրթ, ժողովրդավարական ճանապարհով, այլ զինված հակամարտությամբ, կանայք վճռականորեն գնացին դրան, քանի որ հակառակ ընտրությունը հավասար էր ինքնասպանության: Սումգայիթը, այսպիսով, հակառակ արդյունքն ունեցավ. նպատակ էր դրվել կոտրել, ընկճել հայի ոգին,

մինչդեռ գործնականում հարկադրեցին գիտակցել, որ այդ ժողովրդի հետ այլևս անհնարին է կողք կողքի լինել, այլապես դատապարտվում ես կոտորվելու, բռնությունների ենթարկվելու, բռնաբարվելու, նվաստանալու, մշտական սպառնալիքին: Ալեկոծվեց նաև հայկական Սփյուռքը: Կանանց մասնակցությամբ բազմաթիվ միտինգներ, ցույցեր տեղի ունեցան Նյու Յորքում, Վաշինգտոնում, Փարիզում, Աթենքում, Բեյրութում ու արտասահմանյան մի շարք այլ քաղաքներում: Վրդովված էր ողջ ժողովուրդը: 1988 թվականի մարտի 6-ին և 8-ին Ստեփանակերտի հուշահամալիրում Սումգայիթի նահատակների հիշատակին նվիրված օրվա ելույթների հիմնական հռետորները նախկինի պես կանայք էին: Այդ ոճրագործության դեմ իրենց բողոքի ձայնն են բարձրացրել **Ժաննա Գալստյանը, Ռոզա Սարգսյանը, Արզիկ Մխիթարյանը, Նադյա Բաղդասարյանը, Սվետլանա Պետրոսյանը և Ռիմա Քոչարյանը**: Նրանք իրենց ելույթներում դատապարտեցին ոճիրը կազմակերպողներին ու պահանջեցին կազմակերպիչներին և անմիջական հանցագործներին դատական պատասխանատվության ենթարկել: «Այսօր երջանկությունը պիտի ծփար մեր հոգիներում, մեր տներում, գարնանամուտի մեր աշխարհում,– ասում է իր ելույթում Ժաննա Գալստյանը: Սակայն համատարած սուգ է ամենուրեք, որովհետև Բաքվի չարագործ մեծերի հրահանգով ու ղեկավարությամբ մեր հարազատներին կոտորել, հոշոտել, հրեշավոր տառապանքների են ենթարկել Սումգայիթում: Մենք միայն մեր ցավի մասին խոսք էինք ասել աշխարհին և սպասում էինք, որ կբուժեն այդ ցավը: Նրանք դժոխային վայնասուն բարձրացրին, որ խլացնեն մեր ձայնը, դժոխային գործիքներով ելան մեր դեմ, որպեսզի սպանեն մեզ և մեր արդարությունը: Բայց ո՞ւր են պաշտոնական մարմինները: Ա՞յս էր նրանց հռչակած ժողովրդավարությունը, այսպե՞ս են վերակառուցվում ու վերակառուցում: Մի՞թե սուտ են այս մթնոլորտը լցրած կոչերն ու հավաստիացումները... Ո՛չ, մենք կանգ չենք առնի, մենք չենք ընկնի չարության հակահայկական դավերի դեմ: Մենք այսօր կերդվենք մեր նահատակների

սուրբ հիշատակի առաջ, որ կգնանք առաջ, կքայլենք աննահանջ, որպեսզի բացվի մեր փրկության դուռը, և մենք տերը դառնանք մեր ազատ անկախության և հարազատ լեռնաստանի»[1142]: Այս հանրահավաքների հիմնական կազմակերպիչները կանայք էին, որոնք էլ իրենց ելույթներում միահամուռ կերպով դատապարտում էին սումգայիթյան սպանդը:

Նման պայմաններում Կենտրոնը շարունակում էր ոչ միայն բացահայտ հակահայկական դիրք գրավել, այլև ձգտում էր ամեն կերպ նույնացնել Ադրբեջանում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները: Հանրահավաքներն և ցույցերը արգելելու նպատակով 1988 թվականի մարտին խորհրդային բանակը մտավ Երևան: 1988 թվականի մարտի սկզբներին «Ղարաբաղ» կոմիտեին համանման հասարակական-քաղաքական կառույց ստեղծվեց նաև Արցախում[1143]: Կառույցն անվանվեց «Կռունկ» հասարակական-քաղաքական կազմակերպություն կամ կոմիտե՝ 11 հոգուց բաղկացած խորհրդով, որը կոչված էր ղեկավարելու շարժումը[1144]: «Կռունկի» խորհրդի անդամ էր Ժաննա Գալստյանը: Վերջինս կատարում էր հանրահավաքների կազմակերպման հանձնաժողովի նախագահի պարտականությունները: Կոմիտեն մարզի բոլոր շրջաններում ստեղծեց իր մասնաճյուղերը, որոնք աշխատանքներ էին տանում նաև գյուղերում: Շրջաններում և գյուղերում այդ աշխատանքներին մասնակից կանայք աչքի էին ընկնում կազմակերպչական ակտիվությամբ: Նրանք, հանրագրերի, նամակ-դիմումների պատրաստման աշխատանքներից բացի, նաև հրավիրում էին ժողովներ, քննարկում հրատապ հարցեր՝ մարզում տիրող իրադրության, շարժման նպատակներին վերաբերող, սպասվող վտանգներին դիմակայելու նախապատրաստական աշխատանքներին, Ստեփանակերտի

[1142] **Ուլուբաբյան Բ.,** Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, Երևան, 1997, էջ 39:
[1143] **Աբրահամյան Հ.,** «Կռունկ», Ստեփանակերտ, 2013, էջ 40:
[1144] Տե՛ս նույն տեղում:

հանրահավաքի մասնակիցներին օգնություն ցույց տալու, մարզում անդորրը ապահովելու մասին և մի շարք այլ հարցեր:

1988 թվականի մարտին Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում հրավիրվեց ժողով՝ **Զոյա Իսկանդարյանի, Գոհար Այվազյանի, Էմմա Աղաջանյանի, Դոնարա Գրիգորյանի** մասնակցությամբ, որտեղ ընդունվեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից հանելու և Հայաստանին վերամիավորելու որոշումը[1145]: Գյուղում հաճախակի կազմակերպվող հավաքներին, ժողովներին ելույթ էին ունենում ուսուցչուհիներ **Թամարա Պետրոսյանը, Քնարիկ Սիմոնյանը** և ուրիշներ, որոնք վերադաս մարմիններից պահանջում էին կատարել Արցախի ժողովրդի կամքը՝ հիմնահարցը լուծել արդարացիորեն[1146]: Հաթերքի, ինչպես նաև հարևան գյուղերի կանայք, երկար ճանապարհ կտրելով, մասնակցում էին Ստեփանակերտում տեղի ունեցող հանրահավաքներին և նրանց համար բերում պարենամթերք, վառելափայտ, տաք շորեր և այլն: Նման մասնակցություն էին ցուցաբերում մարզի համարյա բոլոր շրջանները:

Կանայք շատ էին հանդես գալիս հոդվածներով հանրապետական, կենտրոնական թերթերում՝ հաճախ հակադարձելով հանրապետական թերթերում, ռադիոյով և հեռուստատեսությամբ հնչած «Էքստրեմիատներ», «Նացիոնալիստներ», «Սիպարատիստներ» անվանումներին, ցույց էին տալիս Ադրբեջանի հակահայ քաղաքականության էությունը, բացահայտում հայության ազնիվ նպատակն ու ձգտումները և այլն: Այս հարցերում հատկապես ակտիվ էին Արցախի մանկավարժական ինստիտուտի ավագ դասախոսներ Լենա Գրիգորյանը, Արզիկ Մխիթարյանը և շատ ուրիշներ[1147]:

Արցախի համար ծանր օրերին հայ կանայք, ընդգրկվելով հասարակական կազմակերպություններում, միություններում, կազմակեր-

---

[1145] **Աղաջանյան Ա.,** Հաթերք, Ստեփանակերտ, 2012, էջ 391:
[1146] Տե՛ս նույն տեղում:
[1147] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, էջ 70-73:

պում էին հանրահավաքներ, գործադուլներ և մի շարք աշխատանքներ տանում՝ բռնագաղթած հայ ընտանիքներին օգնելու համար:

1988 թվականի մարտի 24-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նիստը օրենքից դուրս ճանաչեց «Կռունկ» կոմիտեի ստեղծումը ու նրա անդամների նկատմամբ քրեական հետապնդումներ սկսեց: Ուստի այն անցավ ընդհատակ՝ միավորվելով «Տնօրենների խորհուրդ» կազմակերպությանը և գործելով նրա անվան տակ[1148]:

«Ղարաբաղ» կոմիտեի և «Կռունկի» արգելումը լայն բողոք բերեց ոչ միայն Հայաստանում և Արցախում, այլև Խորհրդային Միությունում և սփյուռքահայության շրջանում: Հրապարակախոս Հ. Բորովիկի հետ 1988 թվականի մարտի 28-ին Երևանում ունեցած հանդիպման ժամանակ Սիլվա Կապուտիկյանը հայ ժողովրդի անունից խիստ անհանգստություն հայտնեց «Ղարաբաղ» կոմիտեի և «Կռունկ» գործունեությունն արգելելու առթիվ. «Վերջերս,– այսպես ավարտեց իր խոսքը բանաստեղծուհին,– վերացվեց Ղարաբաղի հարցը տնօրինող մեր հանրապետական կոմիտե, և պարզ է, որ կոմիտեականները դեռևս հնարավորություն կունենան ազատ ու հանգիստ շարունակելու իրենց առօրյա գործն ու կյանքը: Իսկ ի՞նչ պիտի կատարվի «Ղարաբաղի» այդ նույն կոմիտեի անդամների հետ: Մենք չենք մոռացել այնտեղ տասնամյակների մոլեգնած շովինիզմի և բռնությունների դեպքերը: Ուրեմն մենք պարտավոր ենք սատար կանգնել մեր արյունակիցներին ու վերին ղեկավարության միջամտությունն ապահովել, որպեսզի Ղարաբաղն այս անգամ ևս չդառնա դաժան հաշվեհարդարի ասպարեզ»[1149]:

Համաժողովրդական շարժումը խորհրդային վերադաս մարմիններից պահանջում էր Արցախի հիմնախնդիրը լուծել ժողովրդավարության պահանջներին համապատասխան: Այդ նպատակներով հերթական անգամ՝ 1988 թվականի մայիսի 3-ին, արցախահայության նոր

[1148] «Սովետական Ղարաբաղ», 25 մարտի, Ստեփանակերտ, 1988:
[1149] **Ուլուբաբյան Բ.,** նշվ. աշխ., էջ 61:

պատվիրակություն մեկնեց Մոսկվա՝ մանկավարժական ինստիտուտի դասախոս Հ. Գրիգորյանի ղեկավարությամբ, պատվիրակության կազմում էր նաև **Արզիկ Մխիթարյանը**: Մոսկվայում մի շարք հանդիպումներ ունենալով՝ պատվիրակությունը այդպես էլ չհասավ որևէ դրական արդյունքի և մայիսի 24-ին Մոսկվայից վերադարձավ հիասթափված՝ համոզվելով, որ պետք է հույսը դնել սեփական ուժերի վրա և հույսեր չկապել Մոսկվայի հետ: Հաջորդ օրը պատվիրակությունը մասնակից դարձավ Երևանի Թատերական հրապարակում կայացած բազմահազարանոց հանրահավաքին և հաշվետվություն ներկայացրեց Մոսկվայում ունեցած հանդիպումների մասին[1150]: Երևանում տեղի ունեցող բազմահազարանոց հանրահավաքներում հաճախակի Արցախից ժամանած կին-ակտիվիստների զեկույցներ էին հնչում: Նույն հանրահավաքում Արցախից ժամանած Ժաննա Գալստյանը, հանգամանորեն ներկայացնելով մարզում տիրող իրավիճակը, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի ալենումում Ե. Լիգաչովի ունեցած ելույթը, տեղի ունեցող գործադուլները, հայտարարեց, որ արցախահայությունը շարունակում է մնալ վճռական, այն էլ՝ Ստեփանակերտ բերված մեծաթիվ զինվորականության սանձարձակ գործողությունների մթնոլորտում: Հենց դա էլ Լեռնային Ղարաբաղի բնակչությանը ստիպում է դիմել ծայրահեղ քայլի՝ գործադուլի, որը, ինչպես պարզվում է, չի անհանգստացնում ո՛չ կենտրոնական, ո՛չ էլ Հայաստանի իշխանություններին»[1151]:

Արցախի ճակատագիրը մտահոգում էր նաև օտարազգիներին: Հայկական կողմին սատարող օտարազգի կին քաղաքական գործիչներից էր Գալինա Ստարավոյտովան: Նա 1988 թվականի մայիսի 11-ին Մատենադարանի մոտ տեղի ունեցած հանրահավաքում հայտարարեց, որ այս պայքարում հայ ժողովուրդը մենակ չէ, երկրի լավագույն և ազնիվ մարդիկ արձագանքում են նրանց պահանջին, ժողովուրդ, որի համար թանկ են ժողովրդավարական գաղափարներն ու հոմանիզ-

---

[1150] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 49:
[1151] Տե՛ս նույն տեղում, էջ 50:

մը[1152]: Պաշտպանում են մարդու իրավունքներն ու ժողովրդավարական սկզբունքները «Ղարաբաղ» կոմիտեի անդամների, Ադրբեջանից հայ փախստականների, Ադրբեջանի բանտերում գերեվարված և դատապարտված հայերի և այլ հարցերում:

1988 թվականի մայիսին ադրբեջանցիները սպառնում էին հաշվեհարդար տեսնել Շուշի քաղաքի հայ բնակչության հետ, ինչպես դա արվել էր 1920 թվականի մարտին: Մայիսի 16-ից սկսած՝ երեք օրվա ընթացքում քաղաքի հայ բնակչության մեծամասնությունը վտարվեց քաղաքից: Շուշիից հայուհի կանանց նամակ-բողոքներում՝ ուղղված ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, մանրամասն տեղեկություններ էր հաղորդվում մայիսի 16-ին թուրքերի կողմից իրագործված վայրագությունների մասին, որոնց նպատակը հայերին ստորացնելն ու քաղաքից դուրս քշելն էր: Գյուլչորա Հարությունյանի և Արմիդիա Ալթունյանի նամակում մասնավորապես ասվում էր. «Թուրքերը, զինված երկաթի կտորներով, կացիններով, քարերով հարձակվեցին հայերի բնակարանների վրա, ջարդ ու փշուր արեցին դուռ ու լուսամուտներ և պահանջեցին հեռանալ քաղաքից՝ բոլորին կոտորելու և ոչնչացնելու սպառնալիքով: Ստիպված էին հեռանալ քաղաքից…»[1153]:

Արդեն նույն թվականի սեպտեմբերի վերջին քաղաքում հայ չէր մնացել: Ակնհայտ պարզ էր, որ Շուշիի հայերի բռնագաղթեցումն Ադրբեջանի ղեկավարության կազմակերպած «անհետաձգելի միջոցառումներից» էր: Այդ առնչությամբ Երևանում և Ստեփանակերտում տեղի ունեցած հանրահավաքների անունից ևս բողոքի նամակ-հեռագրեր ուղարկվեցին Մոսկվա՝ ղեկավար մարմիններից պահանջելով արդարության հաստատում: Հունիսի 1-ին ունեցած հանրահավաքում **Մարգո Բալասանյանը, Տատյանա Շվեդովան** և **Ժաննա Գալստյանը** ևս դատապարտեցին Շուշիում տեղի ունեցածը և շեշտեցին, որ արցախա-

---

[1152] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 39, թ. 17:
[1153] Տե՛ս նույն տեղում, ֆ. 207, ց. 44, գ. 19, թ. 75:

հայությունը այլևս ոչ մի վայրկյան չէր կարող մնալ Ադրբեջանի կազմում[1154]:

Հարկ է նկատել, որ համաժողովրդական պայքարում կանայք ամենուր էին իրենց ակտիվ գործունեությամբ, և պատահական չէր, որ հաճախ հանրահավաքներում լսվում էր նրանց խոսքը, որն իր գործուն ազդեցությունն էր ունենում բազմության վրա: **Մարգո Բալասանյանի** ելույթը ոչ միայն բողոքի ձայն էր, այլև չհուսահատվելու կոչ. «Արցախցիների ձայնը, որն արձագանք է գտել ամբողջ աշխարհում, ուշ է հասնում Մոսկվային,– նշել է նա և ապա ավելացրել,– բայց եկեք չհուսահատվենք, որովհետև մոր սրտում պահած երկար տարիների իղձը այսօր պոռթկացել է վարար գետի պես և անպայման կստանա իր լուծումը»[1155]:

Կենտրոնին ուղղված դիմում-նամակներից կարելի է առանձնացնել 1988 թվականի հունիսի 13-ին Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի կանանց խորհրդի կողմից դիմումը՝ ուղղված ՀԽՍՀ կոմկուսի կենտկոմին և Գերագույն խորհրդի նախագահությանը, որտեղ հատկապես ասվում էր. «Արդեն երեք-չորս ամիս է, ինչ մեր ժողովուրդը՝ մեծ թե փոքր, հրապարակ է եկել իր բուռն համերաշխությունն արտահայտելու Լեռնային Ղարաբաղի մեր հայ եղբայրների և քույրերի հետ՝ մայր հանրապետությանը վերամիավորելու նրանց արդար, մաքուր և բնական իղձի առիթով: Վերջին տասնօրյակում, սակայն, իրողությունը շատ ավելի լուրջ բնույթ է կրում: Մեր երիտասարդությունը գիշեր-ցերեկ փողոցներում հրապարակներում ցույցեր և միտինգներ է անում: Այս ամենը, անշուշտ, կատարվում է օրենքի սահմաններում, և մեր ժողովուրդը համոզված է իր պահանջի արդարության և ճշմարտության մեջ... Մեր կոլեկտիվի կանայք կազմում են հանրապետության կին մտավորականների զգալի մասը, նրանցից շատ-շատերը պետական այրեր են և մեծ պատասխա-

[1154] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսություն, էջ 51:
[1155] ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 19, թ. 75:

նատվությամբ են համակված մեր երիտասարդների ապագայի հանդեպ: Ուստի թախանձագին խնդրում ենք Ձեզ, ընդառաջելով մեր ժողովրդի բուռն ցանկությանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի առաջիկա՝ հունիսի 15-ի նստաշրջանի օրակարգում մտցնել Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի սույն թվականի փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը քննարկելու և ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու խնդրին դրական պատասխան տալու հարցը»[1156]:

1988 թվականի հունիսի 15-ին տեղի ունեցած Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում քննարկեց և համաձայնություն տվեց ԼՂԻՄ-ի Հայկական ԽՍՀՄ-ին վերամիավորելու վերաբերյալ մարզային խորհրդի որոշմանը: Հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանը դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ այդ հարցը քննարկելու և դրականորեն լուծելու խնդրանքով[1157]: Սա ԽՍՀՄ պատմության մեջ եզակի դեպք էր, երբ տեղական մարմինները տարածքային փոփոխություններ կատարելու մասին որոշում էին ընդունել՝ առանց Կենտրոնի նախնական հրահանգավորման: Ուստի զարմանալի չէ, որ մոսկովյան իշխանությունները հայ ժողովրդի ազատագրական շարժումը որակեցին «Վերակառուցման» քաղաքականության դեմ ուղղված ինքնագլուխ ներսահմանային վերածևումներ կատարող քայլ և մերժեցին հարցի քննարկումը: Պատահական չէ, որ 1988 թվականի հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում ընդունվեց որոշում, որի համաձայն՝ մերժվեց Լեռնային Ղարաբաղի մարզային և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների խնդրանքը[1158]: Այդ որոշումը, որն ավելի բարդացրեց Ղարաբաղյան հիմնախնդիրը, ոտքի հանեց ամբողջ հայությանը, առաջին հերթին՝ կանանց,

---

[1156] ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 678, թ. 48-49:

[1157] «Սովետական Հայաստան», 16 հունիսի, Երևան, 1988:

[1158] «Правда», 20 августа, Москва, 1988, «Սովետական Ղարաբաղ», Ստեփանակերտ, 24 օգոստոսի, 1988:

որոնց մասնակցությամբ բազմաթիվ կազմակերպություններ նշված որոշման դեմ հանդես եկան իրենց ելույթներով և հայտարարություններով, բողոք-նամակներով:

Այդ օրերին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի հետ համագործակցող հանրահավաքի մասնակից կանայք, դիմում հղելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, դատապարտեցին՝ նշելով, որ մենք՝ հայ մայրերս և կանայք, մեր վրդովմունքն ենք հայտնում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի նիստի որոշման առթիվ, որով մերժվեց Ղարաբաղի վերամիավորումը Հայաստանին[1159]:

Հուլիսի 18-ի որոշումը դատապարտվեց նաև 1988 թվականի սեպտեմբերի 9-ին Երևանի Թատերական հրապարակում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքում, որտեղ **Արաքսյա Հայրապետյանը**, քննադատելով երկրի ղեկավարությունը, դրվատեց նրանց, ովքեր նպաստում, աջակցում են շարժմանը և կոչ արեց հասնել խնդրի կարգավորմանը: Միաժամանակ հայ կանայք շարունակում էին դիմումներ հղել Մոսկվա: Սեպտեմբերի 28-ին հանրահավաքների մասնակից Հայաստանի կանանց՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը ուղարկված նամակում ևս դատապարտվում էր հուլիսի 18-ի որոշումը: Նամակի հեղինակները իրենց մտահոգությունն էին հայտնում նաև Հայաստանում և Արցախում առկա լարված դրության համար, ներկայացնում հայության պահանջը և խնդրում սանձահարել ադրբեջանցիների վայրագությունները[1160]:

Այդ օրերին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին նոր բողոք-նամակ է ուղարկվում նաև ԼՂԻՄ կանանց կողմից: Վերջիններս խնդրում էին լուծել հիմնախնդիրը, միաժամանակ պատժել Սումգայիթի ոճրագործներին[1161]: Նման պահանջով **Սիլվա Կապու-**

[1159] ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 46, թ. 1:
[1160] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 127, գ. 678, թ. 23-24:
[1161] Տե՛ս նույն տեղում, ֆ. 284, ց. 5, գ. 2, թ. 23:

տիկյանը և **Մարո Մարգարյանը** մեկնել են Մոսկվա՝ ներկա գտնվելու 1988 թվականի հոկտեմբերի 18-ին սկսված սումգայիթյան դատավարությանը[1162]: Դատավարությանը ներկա հայ մտավորականները պահանջել են արժանի պատիժ տալ ոճրագործներին: Այդ նույն ժամանակ Հայաստանից և Արցախից ուղարկվում էին բազմաթիվ հեռագրեր և նամակներ, որոնց հեղինակները ևս նման պահանջ էին ներկայացնում: Կանայք հիմնահարցը քննարկում էին տարբեր հավաքներում և հանդիպումների ժամանակ: 1988 թվականի սեպտեմբերին Մոսկվայից Ստեփանակերտ ժամանած հանձնաժողովի՝ ԽՍՀՄ ԳԽ ազգությունների խորհրդի հետ ԼՂԻՄ մտավորականության հանդիպման ընթացքում 14 ելույթ ունեցողների թվում էին **Լյուդմիլա Սարգսյանը** (դպրոցի տնօրեն), **Ռուզաննա Ավագյանը** (Սումգայիթի սպանդից փրկված, որը Երևանում հացադուլ էր հայտարարել), **Թամարա Պետրոսյանը** (ուսուցչուհի, ազգությամբ ռուս), **Սվետլանա Պետրոսյանը** (ուսուցչուհի), որոնք իրենց ելույթներում դատապարտում էին Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունը՝ պահանջելով կատարել ժողովրդի կամքը[1163]:

1988 թվականի նոյեմբերին Երևանում ձևավորված «Արցախ» հայրենակցական միության գործադիր մարմնի քարտուղար ընտրվեց շարժման մասնակից, ծննդով արցախցի **Լարիսա Ալավերդյանը**: Այդ և հաջորդ տարիներին տարբեր տեղերում բացվեցին բարեգործական ներկայացուցչություններ, որոնցում ընդգրկվում էին մեծ թվով կանայք[1164]: Հետագայում Ստեփանակերտում ևս բացվեց միության բարեգործական ներկայացուցչություն, որը ղեկավարում էր միության լիազոր, շարժման ակտիվ մասնակից **Աղավնի Դանիելյանը**: «Արցախ» հայրենակցական միությունը համագործակցում էր մի շարք կազմակերպությունների հետ, տեղեկատվական նյութեր տարածում հիմնա-

---

[1162] **Աբրահամյան Հ.,** Մարտնչող Արցախ 1917-2000, հ. Գ, էջ 138:
[1163] ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 9, թ. 7:
[1164] **Աբրահամյան Հ.,** Մարտ կրակագծի մատույցներում, էջ 31:

հարցի վերաբերյալ: Միության կանայք ակտիվ էին մանավանդ հանրահավաքների ժամանակ և կոոպերատիվների կազմակերպման գործում[1165]:

Արցախում և Հայաստանում հանրահավաքները, ցույցերը, գործադուլները, դասադուլները շարունակվեցին 1988 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ չնայած նրան, որ Մոսկվան և Ադրբեջանը սաստկացնում էին բռնությունները շարժման կազմակերպիչների և առհասարակ հայ ժողովրդի նկատմամբ: Այդ օրերին Ադրբեջանում ամենուրեք հայ ազգաբնակչության նկատմամբ իրագործվում էին բռնարարքներ՝ ստիպելով տեղահանվել, հեռանալ իրենց բնակության վայրերից: 1988 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կիրովաբադից ու Բաքվից, Շամխորի, Խանլարի շրջաններից և հայաշատ այլ վայրերից սկսվեց հայ բնակչության արտաքսումը, որն ուղեկցվում էր բռնություններով ու խոշտանգումներով, թալանով: Բռնագաղթվածները ադրբեջանական հրոսակներին էին թողնում ամեն ինչ՝ տները, կայքը, անասունները: Դա իր հերթին ոգևորում էր անպատժելիության մթնոլորտում գործող խուժանին: Իրենց հանցագործությունները քողարկելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները հայերին հարկադրում էին ստորագրել կեղծ պայմանագրեր, որ իբր նրանք կամավոր են մեկնում Հայաստան: Միաժամանակ համաշխարհային հասարակությանը թյուրիմացության մեջ գցելով՝ Ադրբեջանի իշխանությունները 1988 թվականի դեկտեմբերին Կենտրոնի հավանությամբ և ադրբեջանցի հրահրիչների կոչերով կազմակերպեցին հայաստանաբնակ 120-ից 150 հազար ադրբեջանցիների արտագաղթ[1166] (ադրբեջանական կեղծ տվյալներով՝ 160-200 հազար): Մոսկվան շտապեց «հա-

---

[1165] «Зов Арцаха», 3 марта, N 1, Ереван, 1993.

[1166] **Բալայան Վ.,** Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 358: **Ազիզբեկյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 31: **Խոջաբեկյան Վ.,** Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Երևան, 2001, էջ 289: «ЗСФСР в цифрах», с. 47, 1989 թ. մարդահամարի նյութերը, «Бакинский рабочий», Баку, 09.08.1989, 07.10.1990, «Союз», N 38, Москва, 1990:

վասարակշել» արտագաղթերը: Մ. Գորբաչովի մերձավորները հաշվի չէին առել մի «մանրուք»: Ադրբեջանի հայերը թալանվել, խոշտանգվել և իրենց ունեցվածքը, բնակարաններն ու խնայողությունները թողել փախել էին, իսկ հայաստանաբնակ ադրբեջանցիներին ոչ միայն հնարավորություն տրվեց վաճառելու կամ փոխանակելու իրենց բնակարանները, այլև նրանց ունեցվածքը փոխադրելու համար տրամադրվեցին մեքենաներ և նույնիսկ ինքնաթիռներ: Նրանց ճնշող մեծամասնությունը կարողացան տեղափոխել ունեցվածքի հիմնական մասը: Հայաստանից արտագաղթած ադրբեջանցիներն առանց դժվարությունների տեղավորվեցին Ադրբեջանից հեռացված հայերի բնակարաններում: Աղետի գոտում բնակվող ադրբեջանցիներին, ըստ պաշտոնական վիճակագրության, տրվեց մոտավորապես 80 միլիոն ռուբլու փոխհատուցում:

1988 թվականի սումգայիթյան եղեռնագործությունից հետո մինչև տարեվերջ շուրջ 200 հազար բռնագաղթված հայեր ապաստանեցին Հայաստանում և ԽՍՀՄ տարբեր վայրերում: Բռնագաղթված ադրբեջանաբնակ հայերը հանգրվանեցին Երևանում, Մասիսի, Արարատի, Վարդենիսի, Հրազդանի, Աբովյանի, Կրասնոսելսկի շրջաններում, հանրապետության հյուրանոցներում, հանրակացարաններում, առողջարաններում, հանգստյան տներում և այլուր: Նրանց մի մասն ապաստանեց ԽՍՀՄ տարբեր տարածաշրջաններում, հատկապես Հյուսիսային Կովկասում: Բռնագաղթվածներին տեղավորելը, նրանց կարիքները հոգալը շատ ծանր էր ճգնաժամային պայմաններում գտնվող Հայաստանի համար, հատկապես այն պատճառով, որ Ադրբեջանից Հայաստան ներգաղթածները հիմնականում քաղաքաբնակներ էին: Այդ վիճակը ավելի ծանրացավ աղետալի երկրաշարժի պատճառով, որը նոր զոհեր ու ավերումներ բերեց հայ ժողովրդին: Հայաստանի և Արցախի հասարակական կազմակերպություններում ընդգրկված առանձին կանայք գրեթե ամեն օր բազմաթիվ աշխատանքներ էին տանում բռնագաղթած հայ ընտանիքներին օգնելու համար: Ստեղծ-

ված իրավիճակից ելնելով՝ արցախահայությունը նոյեմբերի 14-ից դիմեց համընդհանուր գործադուլի, որը շարունակվեց մինչև դեկտեմբերի 7-ը: Շարժման մասնակից **Գալյա Առստամյանը** այդ օրերի մասին գրում է. «Գործադուլ էին հայտարարել, դուրս եկել՝ ցույցի ..., մոմերը վառած շարժվում էինք եղբայրական հուշահամալիր և վանկարկում՝ «միացում», «Հայաստան», իսկ զինվորները մեզ մահակներով ցրել էին ուզում»[1167]:

Հայության համար մեծագույն ողբերգություն էր 1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժը, որն ընդգրկեց Հայաստանի տարածքի գրեթե 40 %-ը: Տարերային աղետը հանրապետության ժողովրդական տնտեսությանը հասցրեց ավելի քան 13 մլրդ ռուբլու վնաս: Պաշտոնական նվազեցված տվյալներով զոհվեց ավելի քան 25 հազար մարդ, 530 հազարը դարձավ անօթևան[1168]: Երկրաշարժի հաջորդ օրն Խորհրդային Հայաստանում և Արցախում անմիջապես դադարեցվեցին գործադուլները: ՀԽՍՀ մայրաքաղաք Երևանում և այլ վայրերում, Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկայում և մարզային հիվանդանոցում՝ Արյան փոխներարկման կենտրոնում, մեծ հերթեր էին գոյացել: Հավաքվածների շարքերը համալրած կանայք արյուն էին տալիս երկրաշարժից տուժածների համար: Նրանք միաժամանակ սննդամթերք, դեղորայք, առաջին անհրաժեշտության իրեր էին հավաքում՝ Աղետի գոտի ուղարկելու համար: Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժը, հանրապետությունում ապաստան գտած հարյուր-հազարավոր փախստականների առկայությունը, Երևանում շարունակվող պարետային ժամը, «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալությունը և սկըսված շրջափակումը ստեղծել էին ծանր իրավիճակ: Չնայած այդ ամենին՝ պայքարը չէր դադարում:

ԽՄԿԿ կենտկոմ ուղարկված նամակ-զեկուցագրից տեղեկանում ենք, որ Երևանի դրամատիկական թատրոնի մոտ կայացած հանրա-

---

[1167] **Առստամյան Գ.,** Իմ պատիվ, իմ ցավ Ղարմետաքսկոմբինատ, էջ 41:
[1168] **Մանուկյան Մ.,** Երկրաշարժ, Երևան, 1989, էջ 3-6:

հավաքին մասնակցում էր 500 մարդ, այդ թվում՝ 200 կին: Հանրահավաքի մասնակիցները պահանջում էին ազատել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին, վերացնել պարետային ժամը, խորհրդային բանակը դուրս բերել Երևանից, փախստականներին ապահովել բնակարաններով, ինչպես նաև կոչ անում Արցախի համար պայքարել մինչև վերջ[1169]:

1988 թվականի դեկտեմբերին Արցախ ժամանեց ԽՍՀՄ ակադեմիկոս և քաղաքական գործիչ Անդրեյ Սախարովը, որի գլխավորած պատվիրակության կազմում էին նաև նրա կինը՝ ծագումով արցախցի, իրավապաշտպան և հրապարակախոս **Ելենա Բոներ-Ալիխանյանը**, և **Գալինա Ստարավոյտովան**[1170]: Մինչև Լեռնային Ղարաբաղ ժամանելը պատվիրակությունը Բաքվում հանդիպել էր Ա. Վեզիրովի հետ: Վերջինս հիմնախնդրի լուծման հնարավոր պայմանների մասին խոսելու փոխարեն հիշեցրել էր, որ «եղբայր ժողովուրդները պետք է իրենց անհաշտությունը մոռանան դժբախտության օրերին, իսկ այդպիսի ողբերգություն է Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժը...»[1171]:

Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ մարզկոմի առաջին քարտուղար Հ. Պողոսյանի, այնուհետև շարժման ակտիվիստների հետ: Իրենց զեկույցներում Ելենա Բոները և Գալինա Ստարավոյտովան քննադատություններ հնչեցրին մարզի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների վարած քաղաքականության դեմ և խոստացան ամեն ինչ հաղորդել Մ. Գորբաչովին: Հերթական հանդիպումը տեղի ունեցավ Ստեփանակերտի աշխատավորության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև պատվիրակները երկար ու հանգամանալից զրույց ունեցան Բաքվից, Սումգայիթից և ուրիշ շրջաններից փախստական դարձած հայերի հետ[1172]:

[1169] ՀԱԱ, ֆ. 1, g. 127, գ. 735, թ. 1-2:
[1170] **Աբրահամյան Հ.,** Մարտնչող Արցախ 1917-2000, հ. Գ, էջ 143-144:
[1171] **Сахаров А.,** Нагорном Карабахе, Ереван, 1996, с. 18.
[1172] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 56:

Գալինա Ստարավոյտովայի այցելությունները Արցախի մի քանի գյուղեր (Սղնախ, Քարին տակ և այլն) հնարավորություն տվեց նրան տեղեկանալու գյուղերի գաղտնի ինքնապաշտպանական ջոկատների առկայության մասին, որոնց հետ հանդիպումների ժամանակ նա հորդորեց. «Դուք այսօր պիտի պատրաստ լինեք ինքնապաշտպանության»[1173]: Դա վկայում է այն մասին, որ Գ. Ստարավոյտովան լավագույնս էր գիտակցում առկա օրհասական վիճակը, հատկապես նկատում էր, որ արցախցիների կյանքը վտանգված էր Ադրբեջանի իշխանությունների կողմից:

Պատվիրակության անդամները այդ դժվարին օրերին հնարավոր ամեն ինչ արեցին ոչ միայն Արցախի հիմնահարցը բարձրագույն ամբիոններից հնչեցնելու համար, այլև Արցախի համար օգնություն ստանալու համար:

ԼՂԻՄ մարզխորհրդի՝ 1988 թվականի փետրվարի 20-ի պատմական որոշումից հետո Արցախում ծավալված իրադարձությունները, բնականաբար, լայն արձագանք գտան նաև Հյուսիսային Արցախում:

1988 թվականի մայիսի 14-ին Գետաշենում գումարվեց «Գետաշեն հայրենակցական միության» առաջին նիստը[1174], որին մասնակցում էին երևանաբնակ մի խումբ գետաշենցիներ և Գետաշենի ղեկավարները: Նիստում հաստատվեց միության վարչության կազմը, որի մեջ ընդգրկված էին **Ռիտա Չիլինգարյանը** (վարչության քարտուղար-տեղեկատվական-լրատվական հանձնախմբի անդամ), **Դոնարա Նալբանդյանը** (քարտուղար-տեղեկատվական-լրատվական հանձնախմբի անդամ), **Լիլիթ Նալբանդյանը** (բուժսպասարկման հանձնախմբի պատասխանատու), **Արևիկ Սիսյանը** (բուժսպասարկման հանձնախմբի անդամ) և **Սուսաննա Սիսյանը** (վարչության քարտուղար-տեղեկա-

---

[1173] **Պետրոսյան Ռ.,** Արցախ, պատերազմ, զինադադար, Երևան, 2001, էջ 104:

[1174] Միությունը գոյություն ուներ դեռևս 1967 թվականին, սակայն ակտիվ չէր գործում հասկանալի պայմաններով: Այն վերականգնվեց 1988 թվականի մայիսի 14-ին:

տվական-լրատվական հանձնախմբի անդամ)[1175]: Ռիտա Չիլինգարյանը 1988 թվականի մայիսից զբաղեցնում էր նաև «Գետաշեն» ՀԲՄ վարչության քարտուղարի պաշտոնը, հանրահավաքներում հանդես էր գալիս հրատապ ելույթներով, մամուլում՝ հոդվածներով: Տեղեկատվական-լրատվական հանձնախմբի անդամ **Դոնարա Նալբանդյանը**, համալրելով վարչության շարքերը, մասնակցություն էր ունենում Գետաշենի ենթաշրջանի բնակչությանը բազմիցս օգնության կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքներին[1176]:

1988 թվականից սկսած բուժսպասարկման հանձնախմբի պատասխանատու **Լիլիթ Նալբանդյանը** օդային միակ կապի միջոցով՝ ուղղաթիռով, բազմիցս այցելություններ էր կատարում հայրենի գյուղ՝ Գետաշեն՝ տանելով դեղորայք և սննդամթերք, ինչի անհրաժեշտությունն ուներ Հյուսիսային Արցախը[1177]:

Միության նախաձեռնությամբ կազմակերպվեց նաև Գետաշենի և հարակից Ազատ, Կամո, Մարտունաշեն, Կուշչի-Արմավիր հայկական գյուղերի ազգաբնակչության գաղտնի ստորագրահավաքը՝ Խանլարի շրջանի վարչատարածքային ենթակայությունից դուրս գալու և Շահումյանի շրջանին միանալու պահանջով: 1988 թվականի մայիսից մինչև 1992 թվականի հունվար ամիսները գումարվեց միության նախագահության 27 նիստ, կազմակերպվեց 6 հանրահավաք Գետաշենում, Երևանում և Աբովյանում[1178]:

1988 թվականին Շահումյանում քանիցս հարց էր բարձրացվել ԼՂԻՄ-ին միանալու մասին: Նախաձեռնող խմբի կազմակերպիչներից էր Շահումյանի կուսշրջկոմի 3-րդ քարտուղար **Էլմիրա Դանիելյանը**: Նա ոչ միայն ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում շրջանի ինքնապաշտպանության ապահովմանն ուղղված կազմակերպական աշխա-

---

[1175] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 57:
[1176] Տե՛ս նույն տեղում, էջ 57:
[1177] **Սիսյան Բ., Չիլինգրյան Ռ.,** Գետաշեն, Երևան, 2007, էջ 306-308:
[1178] Տե՛ս նույն տեղում, էջ 311:

տանքներին, այլ նաև բազմիցս նամակ-հեռագիր ուղարկում մարզային ատյաններին, Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ բարձրագույն ղեկավար մարմիններին և Կենտկոմին[1179]:

1988 թվականի աշնանը Ադրբեջանում համատարած ջարդերն ու բռնությունները հայերի նկատմամբ սթափեցրին նաև Հյուսիսային Արցախի հայ ազգաբնակչությանը: Այդ օրերին Գետաշենի ենթաշրջանին մեծապես օգնում էր Հայաստանի կոոպերատորների միությունը: Ստեփանակերտում գործող մասնաճյուղի անդամներ էին **Արաքսյա Հայրապետյանը** և **Վալյա Մեհրաբյանը**: Միությունն իրականացում էր մարդասիրական օգնություն, ինչպես նաև աջակցություն ցուցաբերում Հյուսիսային Արցախում ինքնապաշտպանության կազմակերպմանը[1180]: Նրանց ուղեկցությամբ ուղղաթիռների միջոցով միությունը օգնություն էր կազմակերպում Հյուսիսային Արցախի հայ բնակչությանը և այդ աշխատանքներին մասնակցում էին ոչ քիչ թվով կանայք[1181]:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ չնայած նրան, որ Մոսկվան և Ադրբեջանը սաստկացնում էին բռնությունները շարժման կազմակերպիչների ու առհասարակ հայ ազգաբնակչության նկատմամբ, այնուամենայնիվ, 1988 թվականի գարնանից սկսած՝ Արցախում և ՀԽՍՀ-ում շարունակվում էին հանրահավաքները, ցույցերը, գործադուլները, դասադուլները, որի կազմակերպման գործում կանայք ունեցան իրենց մեծ դերակատարումը: Կանանց մասնակցությամբ, նրանց զսպվածության ու հատուկ լիցք հաղորդելու շնորհիվ էր, որ հարյուր հազարավոր մարդկանց հուզումներն ու ալեկոծումները հանրահավաքների ժամանակ մնում էին կարգ ու կանոնի, սթափ ու խոհուն վարվելակերպի հունի մեջ:

1988 թվականը, չնայած մեր ժողովրդի կրած տառապանքներին, այնուամենայնիվ պատմության մեջ մտավ որպես համազգային և ազ-

---

[1179] **Պետրոսյան Ռ.,** Արցախի պաշտպանության դիրքերում, Երևան, 1997, էջ 85:
[1180] Տե՛ս նույն տեղում, էջ 43:
[1181] Տե՛ս նույն տեղում, էջ 85:

գային ոգու արթնացման ժամանակաշրջան. հայ կանայք տղամարդկանց հետ համահավասար, նրանց կողքին աներեր ու հերոսաբար կանգնած էին ամենուր:

1988 թվականի դեկտեմբեր - 1989 թվականի հունվար ժամանակահատվածում, չնայած գործող հատուկ դրությանն ու պարետային ժամին, թեև երկրաշարժի ավերումներին ու շրջափակումներին, Հայաստանում ու Արցախում նոր թափով բորբոքվեցին բազմահազարանոց ցույցերն ու հանրահավաքները: Ղարաբաղյան հարցի արդարացի լուծման պահանջին ավելացավ նաև շարժման ղեկավարներին ազատ արձակելու պահանջը: Այդ ճակատագրական օրերին հայ ժողովրդի արդարացի ընդվզմանը պաշտպան կանգնեցին ռուս առաջավոր մտավորականները, տղամարդկանց հետ միասին նաև կանայք՝ *Անդրեյ Սախարովը*, նրա կինը՝ *Ելենա Բոնները, Գալինա Ստարովոյտովան, Միխայիլ Դուդինը, Անդրեյ Նույկինը, Վիկտոր Շեյնիսը, Լեոնիդ Բատկինը, Անդրեյ Զուբովը, Յուրի Աֆանասևը, Անատոլի Պրիստավկինը, Բուլատ Օկուջավան, Տատյանա Լիխանովան, Ինեսա Բուտկովան, Վալենտին Օսկեցկին* և ուրիշներ: Նրանք պարբերաբար դիմումներ էին հղում ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերին և համաշխարհային հասարակայնությանը՝ հայ ժողովրդի արդարացի պայքարին պաշտպան կանգնելու կոչերով: Սանկտ Պետերբուրգի ընտրված պատգամավորներ Ա. Սոբչակը և Ա. Դենիսովը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում (1989 թ. մայիս) անգամ հայտարարեցին, որ իրենք հրաժարվում են ԽՍՀՄ Գերագույն խորհրդում իրենց մանդատներից՝ հօգուտ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից մեր ժողովրդի կողքին էր նրա արդարացի պահանջի մշտական աջակիցն ու ջերմ պաշտպանը՝ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ Քերոլայն Քոքսը: Նա, 1991 թվականի մայիսից սկսած, Արցախ է այցելել ավելի քան 50 անգամ: Լինելով ակադեմիկոս Ա. Սախարովի

համախոհը՝ Ք. Քոքսը մշտապես հետևել է նրա մարդասիրական սկզբունքներին՝ հայտարարելով. «Ես այնտեղ եմ, որտեղ ցավ կա»[1182]: Նրա անմիջական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Անգլիայի, Նորվեգիայի, Իտալիայի և այլ երկրների գիտնականներից, գրողներից, հասարակական գործիչներից կազմավորվեց 13 հոգանոց խումբ, որը 1991 թվականի մայիսին ուղևորվեց Հայաստանի Հանրապետություն: Նշված խումբը, Գորիսի շրջանի Տեղ գյուղում հանդիպելով հայ փախստականներին, արձանագրեց նրանց նկատմամբ ադըրբեջանցիների կողմից գործադրված աննկարագրելի բռնությունների փաստերն ու ներկայացրեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ու պաշտպանության նախարարությանը:

Ք. Քոքսը բազմիցս ռազմական ուղղաթիռով շրջել ու նկարահանել է ԼՂՀ հրդեհվող ու ավերված գյուղերը ու դրանք ցուցադրել է Եվրոպայի ու Ամերիկայի տարբեր հեռուստաալիքներով: Ք. Քոքսը Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում ներկայացրել է Ղարաբաղյան հիմնախնդրի էությունը: Արցախյան պատերազմի ընթացքում նա նյութական ու բարոյական անգնահատելի օգնություն է ցույց տվել շրջափակման մեջ գտնվող արցախահայությանը: Զինադադարից հետո նրա ակտիվ աջակցությամբ և գերմանացի մասնագետների համագործակցությամբ Ստեփանակերտում ստեղծվեց պրոթեզավորման մասնագիտացված կլինիկա, իր իսկ միջոցներով նույն քաղաքում ողնաշարի վնասվածքներով հիվանդների համար հիմնադրվեց վերականգնողական կլինիկա: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, գնահատելով Ք. Քոքսի ծառայությունները հայ ժողովրդի հանդեպ, նրան անվանել է «հրեշտակ՝ իջած մեր ազգի համար»[1183]:

Հայ ժողովրդի հիշողության մեջ ընդմիշտ կմնա բուլղար ժողովրդի ազնիվ զավակ, կինովավերագրող Ցվետանա Պասկալևայի պայ-

---

[1182] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, հանրագիտարան, Երևան, 2004, էջ 670:
[1183] Տե՛ս նույն տեղում:

ծառ անունը: Նա առաջին արտասահմանցի լրագրողն էր, որը, 1991-1994 թվականներին լինելով Լեռնային Ղարաբաղում, լայնորեն լուսաբանել է Ղարաբաղի հիմնախնդիրը և այն ներկայացրել միջազգային հանրությանը: «Օղակ» գործողության ժամանակ լինելով Գետաշենի ենթաշրջանում և Շահումյանի շրջանում՝ նա հայ բնակչության դեմ կատարվող բռնարարքներն ու տեղահանությունը ռեպորտաժներով ներկայացրել է միջազգային հանրությանը: Ռազմական թեժ կետերից նա բազմիցս հեռուստահաղորդումներ է պատրաստել CNN, NSC, բուլղարական ազգային, ռուսական, գերմանական, ֆրանսիական հեռուստաընկերությունների համար, «Ռոյթեր» գործարագրով **Ց. Պասկալեան** նկարահանել է պատերազմական իրադարձություններին և Արցախյան ազատագրական պատերազմին նվիրված 6 վավերագրական ֆիլմ (հայերեն, ռուսերեն ու անգլերեն)[1184]: Պատերազմից հետո երկար տարիներ ՀՀ ազգային հեռուստատեսությամբ վարել է «Իմ թանկագին ողջեր ու մահացածներ» և Արցախի անցյալին և ներկային վերաբերող հեղինակային հրապարակախոսական ու վերլուծական հաղորդումներ՝ նվիրված Շուշիի ազատագրմանը, ԼՂՀ խնդիրներին:

1989 թվականի հունվարին 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղում կառավարման նոր ձև մտցնելու մասին: Նախատեսվում էր ստեղծել 8 հոգուց (մեծ մասը՝ Մոսկվայից) կազմված Հատուկ կառավարման կոմիտե՝ ԽՄԿԿ կենտկոմի բաժնի վարիչ Ա. Վոլսկու գլխավորությամբ[1185]: Կոմիտեն անմիջականորեն ենթարկվելու էր Կենտրոնին: Նույն որոշմամբ դադարեցվեց Արցախի աշխատավորների կողմից ընտրված ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման մարզխորհրդի գործունեությունը: Վերացվեց մարզի կուսակցական մարմինը՝ մարզկոմը: Այս վերջինն արվում էր նաև մարզկոմի առաջին քարտուղար,ազատագրական շարժման նշանավոր ղեկավարներից մեկից՝ Հ. Պողոսյանից

[1184] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, հանրագիտարան, էջ 557:
[1185] «Правда», 15 января, Москва, 1989.

ազատվելու համար: Շուտով Ա. Վոլսկու գլխավորած կոմիտեն սկսեց աշխատանքները: 1989 թվականի հունվարի 13-ին ԽՍՀՄ մինիստրների խորհուրդն ընդունել էր «Ադրբեջանական ԽՍՀ ԼՂԻՄ-ում կառավարման նոր ձև մտցնելու հետ կապված միջոցառումների մասին» որոշումը, որով ԽՍՀՄ պետպլանային և ֆինանսների նախարարությանը հանձնարարվել էր ԽՍՀՄ պետական բյուջեի մեջ, սկսած 1989 թվականի, հատուկ տողով նախատեսել ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն ցուցանիշները[1186]:

Փաստորեն, ԽՍՀՄ ղեկավարները ԼՂԻՄ-ը տարածքային տեսակետից ճանաչել էին որպես Ադրբեջանի մաս, իսկ կառավարման առումով մարզին տրվել էր ինքնուրույն վարչական միավորի կարգավիճակ: Նոր վարչակարգի ստեղծումը հայ ժողովրդի մեջ Արցախյան հիմնախնդրի լուծման աղոտ հույս արթնացրեց: Կոմիտեն որոշակի միջոցառումներ ձեռնարկեց ԼՂԻՄ-ի, Հայաստանի և Կենտրոնի հետ տնտեսական կապեր ստեղծելու ուղղությամբ, սակայն իրավական անորոշ կարգավիճակով: Կոմիտեն լիազորված չէր բավարարելու արցախահայության պահանջը, դրա համար էլ այն ձախողվեց:

Հայ ժողովուրդը ի սկզբանե մեծ հույսեր չկապեց այդ որոշման հետ, որտեղ հատուկ ընդգծված էր, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մի մասն է: Այդ կոմիտեի գոյության մի քանի ամիսները ցույց տվեցին, որ օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք պատճառներով և առաջին հերթին Ադրբեջանի սադրանքների հետևանքով այն ի վիճակի չէ կատարելու իր առաքելությունը: Հայաստանի ու Արցախի միջև տնտեսական կապեր ստեղծելու նրա ջանքերն ապարդյուն անցան: Փոխարենը Հատուկ կոմիտեի լուռ համաձայնությամբ Ադրբեջանի իշխանությունները ուժեղացրին Լեռնային Ղարաբաղի շրջափակումը և խորացրին բռնությունները հայերի նկատմամբ: Գնալով Արցախի և Հա-

[1186] «Известия», Москва, 21.01.1989.

յաստանի հայության մեջ խորացավ անվստահությունը Հատուկ կոմիտեի և ընդհանրապես կենտրոնական իշխանությունների նկատմամբ:

Հայ բնակչության հետևողական պայքարի շնորհիվ և ԽՍՀՄ առաջադեմ մտավորականության օժանդակությամբ Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամները 1989 թվականի մայիսին ազատ արձակվեցին, որոնք կրկին շարունակեցին ղեկավարել ազատագրական շարժումը: Հանրահավաքներում առաջ էին քաշվում դեմոկրատական ազատությունների, հանրապետության ինքնուրույնության ընդլայնման, կենսոլորտի բարելավման, պատմական անցյալի վերագնահատման և այլ հարցեր:

Այդ օրերին կանանց նախաձեռնությամբ աշխատանքներ իրականացվեցին Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում, հատկապես հանրագրերի հավաքման ուղղությամբ՝ ուղղված ոչ միայն Հատուկ կառավարման կոմիտեին, այլ նաև ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանն ու վերադաս իշխանություններին:

Արցախցիների ոտնահարված իրավունքները պաշտպանելու նպատակով Ստեփանակերտի կանանց խորհուրդը նամակով դիմեց Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Վոլսկուն՝ խնդրելով արգելել Ադրբեջանի հակահայկական գործունեությունը[1187]: Այնուհետև 1989 թվականի մայիսի 19-ին տեղի ունեցավ Ժողպատգամավորների՝ Մարտունու 20-րդ գումարման շրջանային խորհրդի 6-րդ նստաշրջանը, որտեղ անընդունելի համարվեց ԼՂԻՄ-ի կառավարման հատուկ ձևը: Նիստին ներկա 23 կին պատգամավորներից 3-ը՝ **Անգելինա Հովսեփյանը, Անժելա Խաչատրյանը, Մելանյա Ադամյանը**, իրենց խոսքում կարևորեցին այն հանգամանքը, որ կոմիտեի քողի տակ Ադրբեջանի ղեկավարությունը շարունակում է անպատիժ միջամտել ինքնավար մարզի գործերին, ոտնահարում նրա իրավունքներն ու շահերը: Նստաշրջանն ընդունեց որոշում, որտեղ մասնավորապես աս-

[1187] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 60:

վում է. «Հաշվի առնելով, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից քննության չեն առնվել Ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումները, դիմել Խորհուրդների համամիութենական համագումարին՝ լրիվ իշխանությունը օգտագործելու, Ժողովրդական պատգամավորների՝ Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանների որոշումները քննարկելու և Հայկական ԽՍՀ-ի հետ ԼՂԻՄ-ը վերամիավորելու խնդրանքով: Արցախցի հայ կանանց կողմից կոմիտեին ուղղված բողոք-դժգոհությունները նպատակ ունեին վերջ տալու անօրինականություններին: Դրան էին նպատակամղված նաև Ասկերանի մի քանի գյուղերի հասարակության հետ ընդհանուր ժողովները, որտեղ ելույթ ունեցողներ **Անիկ Ասատրյանը, Սվետլանա Պետրոսյանը, Աիդա Համբարձումյանը** և **Էլեանորա Ավանեսյանը** Հատուկ կոմիտեի գործունեությունը համարեցին անարդյունավետ: Նրանց գնահատականին միացան նաև Մարտակերտի շրջանի մի շարք գյուղերի կանայք՝ իրենց ընդհանուր ժողովների որոշումներով[1188]:

1989 թվականի մայիսի 16-ին «Հայ կանանց միաբանությունը» ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը ներկայացրեց վեց կետից բաղկացած կոնկրետ միջոցառումներ, որտեղ նույնիսկ պահանջվում էր Հատուկ կառավարման կոմիտեի հրաժարականը[1189]: Կանայք իրենց մտահոգությունները, բողոքները՝ կապված ստեղծված լարված իրավիճակի հետ, արտահայտեցին նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամների հետ ունեցած հանդիպումների ժամանակ:

1989 թվականի ամռանը Ադրբեջանում հակահայկական հիստերիան հասավ իր գագաթնակետին: Դրա համար առիթ ծառայեցին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում հայ պատգամավորների ելույթները, որոնք, ապացուցելով ղարաբաղյան պայքարի արդարացի լինելը, կրկին պահանջեցին մարզը վերա-

---

[1188] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 61:
[1189] ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 118, թ. 10:

միավորել Հայաստանին: Ադրբեջանական մամուլը վայնասուն բարձրացրեց, իսկ հանրապետության իշխանությունները դիմեցին նոր զինված վայրագությունների: Ամենուր սկսեցին լայնածավալ բռնություններ: Հայաշատ վայրերում նոր ուժով բորբոքվեցին հալածանքները, խոշտանգումներն ու սպանությունները:

Տասնյակ հայկական բնակավայրեր թալանվեցին ու հրկիզվեցին: Հուլիս-օգոստոսին սկսվեց նոր, էլ ավելի ծավալուն երրորդ մեծ բռնագաղթը, որի հետևանքով լիովին հայաթափվեցին Կիրովաբադը, Մինզեչաուրը, Խանլարը, Շահումյանը և այլ շրջաններ: Հուլիսին Ադրբեջանի կողմից փակվեցին Հայաստան և Արցախ տանող երկաթուղիներն ու ավտոճանապարհները:

Իրենց բնակավայրերը լքեցին թալանված ադրբեջանաբնակ շուրջ 30 հազար հայեր, որոնցից 20 հազարը պատսպարվեց Հայաստանում, և փախստականների ընդհանուր թվաքանակը անցավ 220 հազարից ավելի[1190]:

1989 թվականի հուլիսին Բաքվում կազմակերպվեց Ադրբեջանի ժողովրդական ճակատը, որը շուտով զինված ջոկատներ ստեղծեց և առանձին շրջաններում զավթեց իշխանությունը: Դեկտեմբերին ադրբեջանցիները ավերեցին Իրանի և Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանային կառույցները՝ դրսից Նախիջևան առատորեն զենք և զինամթերք ներկրելու համար: Դաժան շրջափակումը սոցիալական ծանր հետևանքներ ունեցավ: 1989 թվականի ամռանից Հայաստանում դադարեցվեց արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասի գործունեությունը, ձախողվեցին Աղետի գոտու վերականգնման և գյուղատնտեսական կուլտուրաների բերքահավաքի աշխատանքները: Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի շրջափակումով Ադրբեջանը, փաստորեն, չհայտարարված պատերազմի սկիզբը դրեց: Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանը դատապարտեց Ադրբեջանի կող-

[1190] **Խոջաբեկյան Վ.,** Արցախը փորձության ամսին, Երևան, 1991, էջ 20:

մից Հայաստանի և ԼՂԻՄ-ի շրջափակումը և կենտրոնական իշխանություններից պահանջեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումար հրավիրել՝ հարցը քննարկելու համար, բայց դա տեղի չունեցավ: Իսկ ավելի ուշ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների երկրորդ համագումարը, անդրադառնալով նշված հարցին, նույնիսկ խուսափեց «շրջափակում» բառը արձանագրության մեջ մտցնելուց և հավասարապես մեղադրեց երկու հանրապետությունների ղեկավարություններին: Դա, անշուշտ, ոգևորեց ադրբեջանցիներին և շրջափակումը կազմակերպված ու մշտական բնույթ ընդունեց: Շուտով Ադրբեջանի իշխանությունները փակեցին նաև ՌՍՖՍՀ-ից Հայաստան եկող գազատարը: Դա մեծ վնաս հասցրեց Հայաստանին և շուրջ երկու տարի շրջափակման մեջ գտնվող Արցախի տնտեսությանը: Ձմռան դաժան պայմաններում նվազեցին էներգիա արտադրելու հնարավորությունները, խաթարվեցին կենսազործունեություն ապահովող օբյեկտների աշխատանքները, փակվեցին դպրոցները և բուհերը: Սկսվեցին էներգիայի մատակարարման հովհարային անջատումները:

Շրջափակումը ծանր անդրադարձավ Արցախի վրա, որը լիովին կղզիացել և կտրվել էր արտաքին աշխարհից, զգացվում էր նաև սննդամթերքի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների խիստ կարիքը: Մարզի տնտեսական ու բարոյահոգեբանական վիճակը կարգավորելու նպատակով 1989 թվականի օգոստոսի 16-ին Ստեփանակերտում հրավիրվեց ԼՂԻՄ լիազոր ներկայացուցիչների համագումար: Այն գտավ, որ մարզի կառավարման հատուկ ձևը ոչնչով չի օգնում հրատապ հարցերի լուծմանը, որ Հատուկ կոմիտեի գոյության ամիսներին ոտնահարվել են մարզի ինքնավարության չնչին մնացորդները, ուստի նպատակահարմար է ընտրությունների միջոցով վերականգնել ապօրինաբար վերացված կուսակցության մարզկոմն ու մարզխորհուրդը: Միաժամանակ որոշվեց մինչև իշխանության սահմանադրական գործառույթների վերականգնումը, մարզը կառավարելու համար ընտրել Ազգային խորհուրդ: Համագումարը հավանություն

տվեց նաև Շահումյանի շրջխորհրդի նստաշրջանի որոշմանը՝ շրջանը ԼՂԻՄ-ի հետ վերամիավորելու վերաբերյալ, և հանձն առավ վերջնական լուծում տալ այդ հարցին: Նորընտիր Ազգային խորհուրդը կոչով դիմեց ժողովրդին՝ դադարեցնելու մի քանի ամիս տևած գործադուլը[1191]:

Ազգային խորհրդի մեջ ընդգրկված էին նաև **Նորա Ավագիմյանը** (Մետաքսկոմբինատից), **Նախշուն Ավանեսյանը** (Սոսի կոլտնտեսության նախագահ), **Սիլվա Բալայանը** (Մարտունու երիտշրջկոմի քարտուղար), **Էլմիրա Վահանյանը** (Մարտակերտի երիտշրջկոմի քարտուղար), **Լյուդմիլա Գրիգորյանը** (բժշկուհի), **Զոյա Պետրոսյանը** (Մարտակերտի թիվ 1 դպրոցի ուսուցչուհի), **Գրետա Սահակյանը** (մարզային կինխորհրդի նախագահ) *և* **Լիդա Սարգսյանը** (Ստեփանակերտի թիվ 8 դպրոցի ուսուցչուհի): Վերջիններիս մասնակցությամբ խորհրդի համագումարում ընդունվեց որոշում, համաձայն որի՝ մինչև ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի ու կուսակցության մարզկոմի գործունեության վերականգնումը երկրամասի բարձրագույն գործադիր իշխանության լիազորությունները հանձնվում են Ազգային խորհրդին: Բացի դրանից՝ համագումարը ընդունեց հռչակագիր, որում նշվում էր, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի գործերին Ադրբեջանական ԽՍՀ-ի միջամտությունը գնահատվելու է որպես ագրեսիայի ակտ, և այն կստանա համարժեք պատասխան[1192]: Խորհրդի կազմում ընդգրկված կանայք, նիստերի ժամանակ առաջարկություններով ու նախաձեռնություններով հանդես գալուց բացի, մասսայական աշխատանքներ էին տանում նաև մարզի բնակչության շրջանում: Ադրբեջանի և Մոսկվայի իշխանությունների կողմից Ազգային խորհուրդը անօրինական համարվեց, որի բնական հետևանքը հանդիսացավ Արցախի դեմ ահաբեկչական քաղաքականության ուժեղացումը: Ձենք որոնելու նպատակով Արցախի հայկական բնակավայրերում զինվորա-

---

[1191] «Խորհրդային Ղարաբաղ», 17 օգոստոսի, Ստեփանակերտ, 1989:
[1192] Տե՛ս նույն տեղում:

կաններն ամենուրեք խուզարկություններ էին կատարում: ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության զինվորները 1989 թվականի սեպտեմբերին Ստեփանակերտում զենք գործադրեցին խաղաղ բնակչության նկատմամբ: Եղան զոհեր և վիրավորներ: Բացի այդ զորքից՝ հայկական գյուղերի վրա հարձակումներ էին գործում ադրբեջանական զինված հրոսակախմբերը: Նման պայմաններում հայ կամավորականները ամեն ինչ անում էին՝ պաշտպանելու խաղաղ բնակչությանը: Հայ կանայք, համագործակցելով հայ կամավորականների ուժերի հետ, կատարում էին բազմաթիվ առաջադրանքներ:

Այդ օրերի մասին Վարյա Ջուլհակյանը նշում է. «Ամենուր լուրեր էինք ստանում մարզի տարբեր տեղերում կատարվող դեպքերի մասին: Հերթական լուրը հասավ Կրկժանից, որտեղ վտանգված է խաղաղ բնակչության կյանքը, և ամեն պահի հնարավոր էր հարձակում ադրբեջանցի հրոսակների կողմից: Արտակարգ դրության շրջանի պարետ, գեներալ-մայոր Վ. Ն. Սաֆոնովի հրամանով Ներքին գործերի նախարարության զորքերը փակել էին Կրկժան տանող ճանապարհը: Ստեղծված օրհասական վիճակը ստիպեց վճռական քայլի դիմել՝ օգնության գնալ հարազատներին: Խիստ վերահսկողության պայմաններում, 8-10 նոնակ անձրևանոցի մեջ թաքցրած, մեծ դժվարությամբ անցանք երկու պահակակետ և Կրկժանի մոտ միացանք Արմենավանից օգնության եկած 15 կամավորականների: Տեղի ադրբեջանցիները ծպտվել էին՝ կարծելով, թե հայկական ուժեր են կուտակվում Կրկժանում, իսկ հայ բնակչությունը ոգևորված էր. կարող էին պաշտպանվել»[1193]: Վ. Ջուլհակյանի վկայությամբ՝ նա շարունակել է համագործակցությունը Կրկժանի ինքնապաշտպանական ուժերի հետ, որին մասնակցել է նաև համագյուղացի **Թամարա Բալայանը**[1194]:

1989 թվականի հուլիսի 21-ից Ադրբեջանը տնտեսական շրջափակման ենթարկեց Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը: Մի քանի

[1193] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 64:
[1194] Տե՛ս նույն տեղում:

օր անց՝ հուլիսի 26-ին, Շահումյանի շրջանային խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց, այդ թվում՝ Գետաշենի շրջանը ԼՂԻՄ-ին միավորելու վերաբերյալ: Այսպիսով՝ Հյուսիսային Արցախը, որը ընդգրկված էր ազգային-ազատագրական պայքարի մեջ, առաջ քաշեց կարևոր և կենսական նշանակություն ունեցող հիմնախնդիրը:

Ադրբեջանի Գերագույն խորհուրդը ոչ միայն թշնամանքով ընդունեց ԼՂԻՄ-ի հետ միավորվելու մասին շահումյանցիների և գետաշենցիների որոշումը, այլև փակեց Հյուսիսային Արցախից Ադրբեջանի տարածքով ԼՂԻՄ-ին կապող միակ մայրուղին, դադարեցվեցին բոլոր կարգի մատակարարումները, ընդհատվեցին կապի միջոցները, ինչն էլ ստիպեց հայերին պաշտպանողական քայլեր ձեռնարկելու: Դրանցից առաջինը ռազմավարական կարևոր նշանակության՝ Կարաչինար-Թալիշ ճանապարհի վերանորոգումն էր, որով ապահովվեց շրջանի ցամաքային կապը մարզի հետ: Երկրորդը կարևոր միջոցը ռադիոկապի ստեղծումն էր Գետաշենի և Շահումյանի ու Հայաստանի միջև:

Այդ օրերին Գետաշենից արտաքին աշխարհի հետ միակ կապն ապահովում էր կապավոր, ազատամարտիկ Սվետլանա (Լենա) Ավագյանը: Նա կապի միջոցով Հայաստան հաղորդում էր Գետաշենում տիրող իրավիճակի մասին: Մինչև Գետաշենի անկումը ոչ միայն ապահովում էր հեռախոսային կապը, այլև միաժամանակ մասնակցում ու կազմակերպում էր կանանց մասնակցությունը Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանությանը: Նա հայտին էր «Կամա-2» նշանաբանով[1195]:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով ականատեսների վկայությունները, կարող ենք ասել, որ Հյուսիսային Արցախում ևս ազգային-ազատագրական պայքարի մեջ ընդգրկված կանայք քիչ թիվ չէին

[1195] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 81:

կազմում՝ սկսած ընդհատակյա փուլից և հատկապես ինքնապաշտպանության ժամանակ:

Ադրբեջանի ղեկավարության կողմից Գետաշենի և Խանլարի պետավտոտեսչության և քրեական հետախուզության պետերի միջոցով Շահումյանի շրջանն ու Գետաշենի ենթաշրջանը հայ բնակչությունից խաբեությամբ դատարկելու փորձերը, հանդիպելով հայ կանանց դիմադրությանը, ձախողվեց: Այդ դեպքերում, երբ մարզի հայ բնակչությունը ուժերի գերագույն լարումով փորձում էր պաշտպանել իր ֆիզիկական գոյությունը ադրբեջանական հրոսակներից, այդ նույն ժամանակ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները շարունակում էին վարել հակահայկական քաղաքականություն: Ուստի պատահական չէ, որ 1989 թվականի նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում իրադրության կարգավորման միջոցառումների մասին» որոշումով աննպատակահարմար համարեց Հատուկ կառավարման կոմիտեի գոյությունը: Նախատեսվեց մարզը կառավարելու համար ԼՂԻՄ-ի հետ հավասարության հիմունքներով ստեղծել Հանրապետական կազմկոմիտե, հիմնել վերստուգիչ-դիտորդ հանձնաժողով, մարզում շարունակել պահել ԽՍՀՄ ՆԳՆ զորքերը և այլն: Միաժամանակ հանձնարարվեց վերականգնել ԼՂԻՄ մարզխորհուրդը և նրա գործադիր կոմիտեն՝ վերջիններիս ենթակա բոլոր մարզային մարմիններով հանդերձ, որն Ադրբեջանի իշխանությունների կողմից այդպես էլ չկատարվեց[1196]: Այդ որոշմամբ համապատասխան մարզում տնօրինելու էր հանրապետական կազմկոմիտեն, որը գլխավորում էր Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Պոլյանիչկոն: Նրա առջև խնդիր էր դրված երկրամասում փոխել ժողովրդագրական իրավիճակը՝ հօգուտ ադրբեջանցիների: Ելնելով դեպքերի զարգացման նման ընթացքից՝ արցախահայության ազատագրական պայքարին նոր ուժով սատար կանգնելու նպատակով

[1196] «Խորհրդային Հայաստան», 30 նոյեմբերի, Երևան, 1989:

1989 թվականի դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի ազգային խորհրդի համատեղ նիստում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության վերամիավորումը[1197]: Մեկ ամիս անց ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը չեղյալ հայտարարեց այդ որոշումը՝ այն որակելով հակասահմանադրական: Մոսկվան մեկ անգամ ևս հաստատեց իր նպատակը՝ բոլոր միջոցներով հայ ժողովրդին հետ պահել ազատագրական պայքարից: Որքան Կենտրոնը ուժեղացնում էր ճնշումը Արցախյան շարժման դեմ, այնքան համարձակ էին դառնում ադրբեջանական հրոսակները:

Օգտվելով իր համար Կենտրոնի խիստ նպաստավոր քաղաքականությունից՝ Ադրբեջանի ժողովրդական ճակատը 1990 թվականի հունվարին Բաքվում սանձազերծեց հայերի զանգվածային ջարդեր: Հունվարի 13-ի բազմահազարանոց հանրահավաքից հետո «հայությանը ոչնչացնելու» կոչ արվեց: Մոտ 5 հազար մարդուց բաղկացած ամբոխը նախօրոք մշակված ծրագրով և նախապես կազմված հասցեներով հարձակվեց հայերի բնակարանների վրա՝ նրանց սպանելու և ունեցվածքը թալանելու նպատակով: Հայերը ենթարկվեցին անմարդկային խոշտանգումների: Այդ օրը վայրագություններին զոհ գնաց մոտ 400 մարդ[1198]: Թաղից թաղ անցնելով՝ յոթ օր անընդհատ խուժանը հայերի նոր ջարդեր էր իրագործում: Կազմակերպված համատարած կոտորածների պատճառով մեկ շաբաթվա ընթացքում Բաքուն, որի կառուցման ու զարգացման համար հայերը հսկայական ներդրում էին ունեցել, լիովին հայաթափվեց: Գազազած ամբոխը բռնություններ էր գործադրում նաև ռուսների և մյուս ազգերի ներկայացուցիչների նկատմամբ: Ի վերջո, հայերի արյամբ արբեցած Ադրբեջանի ժողովրդական ճակատը բացահայտորեն անցավ խորհրդային կարգերի տապալմանը: Միայն այդ ժամանակ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը Բաքվում ար-

---

[1197] «Խորհրդայի Հայաստան», 30 նոյեմբերի, Երևան, 1989:

[1198] **Մինասյան Է.,** Բաքվի 1990 թ. հունվարյան ջարդերը և դրանց իրավաքաղաքական գնահատականը, «Տարեգիրք Բ», Երևան, 2010, էջ 12-13:

տակարգ դրություն հայտարարեց և մեծ ուշացումով զորքը մտցրեց քաղաք: Զինվորականներին դժվարությամբ հաջողվեց դադարեցնել վայրենի սպանդը:

1990 թվականի հունվարյան վանդալիզմի հետևանքով ավելի քան 200 հազար հայեր, հազիվ փրկվելով ադրբեջանական յաթաղանից, հեռացան Բաքվից և Ադրբեջանի հայաբնակ մյուս բնակավայրերից՝ ապաստան գտնելով Հայաստանում, Ղարաբաղում, Ռուսաստանի Դաշնության տարբեր քաղաքներում: Ադրբեջանից փախած և միայն Հայաստանում ապաստանած հայերի թիվը հասավ 300 հազարի[1199]: Այդ ցեղասպանական իրադարձությունների հորձանուտում հայտնված կանանց՝ ջարդարարների վայրագությունները նկարագրող վկայություններում բազմաթիվ փաստեր կան: Բաքվի հունվարյան դեպքերից փրկված Ռայա Հարությունյանը, խոսելով այդ ողբերգական դեպքերի մասին, պատմում է, թե ինչպես հունվարի 14-ին իր տուն են ներխուժել 25-30 հոգի: Դանակներով շրջապատել և դրամ են պահանջել, մերժում ստանալով՝ նրանցից մեկը ծիծաղելով ասել է. «Ատամներդ կհանենք»: Այնուհետև սկսել են քաշքշել, ծաղրել և սպառնալ: Բարբարոսների ձեռքից նրան փրկել են զինվորական ուսումնարանի սաներ ռուս երիտասարդները[1200]:

Բաքվի ցեղասպանությունը դատապարտեց Ելենա Բոնները, ով այդ դեպքերի կապակցությամբ տված իր հայտարարության մեջ ասել է. «Ինչո՞ւ երկիրը կենտրոնական հեռուստատեսությամբ տեսավ Սումգայիթի մասին ֆիլմը: Ինչո՞ւ մենք չիմացանք՝ դատապարտվեցին արդյոք Սումգայիթի, Բաքվի և այլուր կազմակերպված ջարդերի մասնակիցները: Ովքե՞ր և որտե՞ղ նրանց դատեցին»[1201]:

1990 թվականի հունվարի վերջին Ստեփանակերտում կանանց մասնակցությամբ հերթական բողոքի ցույց տեղի ունեցավ՝ Բաքվում

[1199] **Մոսեոսվա Ի., Հովնանյան Ա.,** Բաքվի ջարդերը, Երևան, 1992, էջ 15:
[1200] Տե՛ս նույն տեղում, էջ 219:
[1201] «Коммунист», 18 августа, Москва, 1990.

հունվարին կազմակերպված ջարդերի առիթով: 1990 թվականի ապրիլի 24-ի Հայոց ցեղասպանության 75-ամյա տարելիցին Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում սգո հանրահավաք կազմակերպվեց, որի ժամանակ ելույթներով հանդես եկան նաև հանրապետական կանայք, սակայն բոլոր ելույթ ունեցողները ձերբակալվեցին: Նրանց թվում էր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոս **Ռոնա Բալայանը**[1202]: Այս երևույթը մեծ վրդովմունք առաջացրեց Ստեփանակերտում, հատկապես աշխատավորության շրջանում. նրանք փորձեցին իրենց բողոքը արտահայտել՝ գործադուլ կազմակերպելով: Միութենական իշխանությունները ոչ միայն չտվեցին Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի և Ադրբեջանի այլ քաղաքներում ու բնակավայրերում իրականացված Հայոց ցեղասպանության իրավաքաղաքական գնահատականը, այլև սատարեցին Բաքվի՝ Ղարաբաղի և նրա սահմաններից դուրս գտնվող, բայց Ադրբեջանին ենթակա հայաբնակ տարածքները հայաթափելու տենդորեն շարունակվող քաղաքականությանը, ԼՂԻՄ-ի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի շրջափակմանը ու ազգաբնակչության բռնագաղթին:

1990 թվականի հունվարի 15-ին, երբ Բաքվում մոլեգնում էին հակահայկական բռնությունները, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Դրանից երեք օր առաջ՝ հունվարի 12-ին, Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը, ելնելով 1989 թվականի ԽՍՀՄ ԳԽ նոյեմբերի 28-ի որոշումից, ստեղծեց Հանրապետական կազմկոմիտե՝ օժտված լայն լիազորություններով: Այն գլխավորում էր Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար հայատյաց Վ. Պոլյանիչկոն: Կազմկոմիտեի գործունեությամբ Լեռնային Արցախում սկսվեց հակահայկական հիստերիայի նոր փուլ: Վ. Պոլյանիչկոն իր գործողություններով հսկայա-

[1202] «Մարտիկ», 29 ապրիլի, Ստեփանակերտ, 1995:

կան չարիքներ պատճառեց Արցախի ժողովրդին: Նրա գլխավորած կազմկոմիտեի նպատակը մարզի ժողովրդագրական իրավիճակը հօգուտ ադրբեջանցիների փոխելն էր:

Հայկական բնակավայրերը մեկուսացնելու նպատակով Հանրապետական կազմկոմիտեի ցուցումով քանդվում էին միջշրջանային և գյուղամիջյան առանց այն էլ անմխիթար վիճակում գտնվող ճանապարհները, նոր ջարդերի սպառնալիքով կատարվում էին աներևակայելի բռնաճնշումներ, գործադրվում էին հարկադրանքի այնպիսի տմարդի ձևեր, որոնց հետևանքով աշխարհից կտրված գյուղերի հայ բնակիչներին ոչինչ չէր մնում անելու, քան թողնել իրենց բնակավայրերը և հեռանալ անվտանգ վայրեր: 1990 թվականի փետրվարի վերջին լիովին հայաթափվեցին Շահումյանի շրջանի Ազատ և Կամո գյուղերը: Նույն թվականին Ադրբեջանի Գերագույն խորհրդի որոշմամբ լուծարվեցին մարզի բոլոր չորս հայկական վարչական շրջանները: Փաստորեն՝ ստեղծված իրավիճակը մեծ նահանջ էր Ա. Վոլսկու գլխավորած Հատուկ կոմիտեի համեմատությամբ:

Ավելի քան 70 կանանց ստորագրությամբ Հյուսիսային Արցախի ազգաբնակչությունը 1990 թվականի մարտի 1-8-ը Ազատ և Կամո գյուղերի բնակչության բռնագաղթի հետ կապված դիմում-բողոքներ ներկայացրեց: Բողոքը քննարկվեց 1990 թվականի մարտի 2-ին «Գետաշեն» ՀԲՄ նիստում: Փաստաթուղթը ներկայացվեց ԽՍՀՄ գլխավոր դատախազությանը, ՀՀ ԳԽ-ին ու Հայաստանի գլխավոր դատախազությանը: Այն հանգամանորեն տեղեկություններ էր հաղորդում հայերի նկատմամբ գործադրված բռնաճնշումների մասին և միաժամանակ խնդրում հնարավորություն ստեղծել ազգաբնակչությանը վերադառնալու հայրենի օջախներ: Սակայն ԽՍՀՄ գլխավոր դատախազությունը, անպատասխան թողնելով այդ դիմում-բողոքները, ակամա հաստատեց բռնագաղթի ծրագրավորված և համաձայնեցված լինելը Մոսկվայի հետ: Այս ամենի արդյունքում Գետաշենի և Մարտունաշենի բնակչությունը, համոզվելով, որ ԽՍՀՄ ներքին զորքերը ոչ միայն

մտադիր չեն իրենց պաշտպանել, այլև հաճախ իրենք են մասնակցում հայկական գյուղերի ջարդերին ու թալանին, ավելի հաստատակամ դարձավ գործողությունների մեջ՝ ուժեղացնելով և ընդլայնելով ինքնապաշտպանության ջոկատների շարքերը[1203]:

Հյուսիսային Արցախի, ինչպես նաև Գետաշենի ինքնապաշտպանությունը աջակցություն էր ստանում Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում կազմավորված կամավորական ջոկատներից, որոնց շարքերը համալրել էին նաև կանայք:

Հայտնի է, որ 1990 թվականի օգոստոսի 4-ին ՀՀ նորընտիր Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Դրանով, փաստորեն, Հայաստանում վերջ դրվեց «Կոմունիստական կուսակցության» 70-ամյա մենատիրությանը: Հայաստանի նորընտիր իշխանությունները ձեռնամուխ եղան անկախ պետականության կերտմանը: 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվեց հանրապետության անկախության գործընթացի սկիզբը: Հայ ժողովրդի անկախացման դրսևորմանը Մոսկվան հակադարձեց արցախահայության նկատմամբ կիրառվող բռնությունների և ճնշումների ուժեղացմամբ:

1990 թվականի սեպտեմբերի 4-ին Ստեփանակերտի օդանավակայանում ԽՍՀՄ ներքին զորքերը բռնագրավեցին Հայաստանի քաղաքացիական ավիացիային պատկանող հինգ «Յակ-40» տիպի ինքնաթիռ, իսկ հաջորդ օրը՝ ևս վեցը[1204]:

Ելնելով Լեռնային Ղարաբաղում տիրող լարված իրադրությունից՝ սեպտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության նորընտիր խորհրդարանը հանդես եկավ հայտարարությամբ, որով դրությունը կայունացնելու նպատակով Կենտրոնին առաջարկվում էր ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի և խորհրդային բանակի ստորաբաժանումները տեղակայել

[1203] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 68:
[1204] **Արշակյան Ա.,** նշվ. աշխ., էջ 35:

ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի վարչական սահմանների երկայնքով, վերացնել Ադրբեջանի կազմկոմիտեն և վերականգնել Լեռնային Ղարաբաղի մարզային ու տեղական խորհուրդները, վճռական միջոցներ ձեռնարկել ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի շրջափակումը վերացնելու համար: Բայց, ի պատասխան այդ առաջարկի, միութենական իշխանությունները ուժեղացրին բռնությունները արցախահայության նկատմամբ:

Կենտրոնի նման վերաբերմունքը հայ ժողովրդի մի շարք նվիրյալների հարկադրեց դիմելու բողոքի ծայրահեղ միջոցի: 1990 թվականի սեպտեմբերին Մոսկվայի «Մոսկվա» հյուրանոցում քաղաքական հացադուլ հայտարարեցին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, հրապարակախոս Զորի Բալայանը, ԽՍՀՄ ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը, Լեռնային Արցախի Ազգային խորհրդի նախագահ Վաչագան Գրիգորյանը, ԼՂԻՄ լուծարված մարզխորհրդի նախագահ Սեմյոն Բաբայանը: Նրանց միացան նաև տաջիկ և ուզբեկ գիտնականներ: Հացադուլավորներին համերաշխություն ու աջակցություն հայտնեցին երկրի գիտության, մշակույթի և գրականության շատ գործիչներ, միջազգային գիտական, հասարակական կազմակերպություններ և այլն: Արցախցի մի խումբ կանայք՝ «Մայրության» հիմնադրամի գլխավորությամբ, որոշեցին հետևել նրանց օրինակին և միանալ հացադուլավորներին: Այդ կապակցությամբ նրանք Մոսկվայի հացադուլավորներից ստացան հետևյալ հեռագիրը. «Մենք շնորհակալ ենք Արցախի կանանց, մայրերին՝ քույրերին զորավիգ լինելու համար: Այդ դժվարին ժամանակներում Արցախի ժողովուրդը պետք է համախմբի իր բոլոր ուժերն ու կամքը, որպեսզի տոկա մեր ծանր ու տևական պայքարում: Մենք դիմում ենք կանանց. դուք՝ որպես մայրեր, չպետք է ձեր կյանքը վտանգի

ենթարկեք և հացադուլ անեք: Դուք հարկավոր եք Արցախին: Դուք հարկավոր եք մեր երեխաներին[1205]:

Նշված հայտարարությունը չխանգարեց նրանց, որպեսզի մեկնեն Մոսկվա և միանան հացադուլին: Մոսկվա մեկնող կանանց խումբ ընդգրկված «Ղարմետաքս» կոմբինատից Գալյա Առստամյանի վկայությամբ նախքան մեկնելը արցախցի կանայք հեռագիր ուղղեցին Մ. Գորբաչովին, միության խորհրդարաններին և Կանանց կոմիտեին՝ պահանջելով վերականգնել ԼՂԻՄ-ի իրավական-վարչական մարմինները, նրա սահմանադրական իրավունքները[1206]:

Նրանք մասնակցեցին «Մայրերի համերաշխության կոմիտեում» տեղի ունեցած մամլո ասուլիսին, որին ներկա էին մի շարք երկրների լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Այստեղ պատվիրակության անդամները, մանրամասն ներկայացնելով Արցախում տիրող իրավիճակը, հայտարարեցին, որ Ադրբեջանի իշխանությունները սկսել են դիմել ծայրահեղ միջոցների, որոնց նպատակը, փաստորեն, մարզի լուծարումն է, բայց արցախահայությունը երբեք ծնկի չի գա, կպայքարի մինչև վերջ[1207]: Նրանց զեկույցները տպավորիչ ու միաժամանակ համոզիչ կերպով ներկայացնում էին Արցախում տիրող իրավիճակը, ինչը հանրությանը այլ կերպ էր ներկայացված: Կանանց գործունեությունը Մոսկվայում ավարտվեց հաջողությամբ, նրանք փորձեցին ստեղծված հնարավորություններն օգտագործել հանուն նպատակի: Մոսկվայում Արցախից ժամանած կանանց միացան նաև Հայաստանի ներկայացուցիչները, ինչպես նաև գրող, հրապարակախոս **Ինեսա Բուրկովան**: Վերջինս այցելել էր Արցախ և Ղարաբաղյան հարցի վերաբերյալ բազմիցս հավաստի տեղեկություններով հանդես եկել մամուլում: Միայն սեպտեմբերի 29-ին հացադուլավորները դադարեցրին

[1205] «Խորհրդային Ղարաբաղ», 23 սեպտեմբերի, Ստեփանակերտ, 1990:

[1206] **Առստամյան Գ.,** Իմ պատիվը, իմ ցավ Ղարմետաքսկոմբինատ, Ստեփանակերտ, 2010, էջ 46:

[1207] **Առստամյան Գ.,** Սպասում, Ստեփանակերտ, 1996, էջ 42:

բողոքի ցնցող ակտը: Թեև այն ոչ մի ազդեցություն չունեցավ Կենտրոնի դիրքորոշման վրա, բայց երկրի և աշխարհի ուշադրությունը բևեռեց Արցախի հիմնախնդրի վրա՝ նպաստելով նրա միջազգայնացմանը:

Երկրամասում տիրող ծանր վիճակը, Կենտրոնի հակահայկական դիրքորոշումը ադրբեջանական իշխանավորների սադրիչ քայլերը մեկ անգամ ևս ստիպեցին Արցախի մի խումբ կանանց 1990 թվականի հոկտեմբերին հերթական կոչով դիմել աշխարհի կանանց: Կոչում մասնավորապես ասվում էր, որ հայոց Արցախի կանայք այսօր զինվորյալ են ու ոտքի են ելել հանուն ազատության և խաղաղության, մարդու բնական իրավունքի և կնոջ սուրբ կոչման, որը կյանքեր ծնելու հատկությամբ հակադրվում է խորհրդային բանակի և ադրբեջանցի գրոհայինների կյանքեր խլող քաղաքականությանը: Նրանք, աշխարհի կանանց պատմելով արցախահայության ձգտումների և անզիջում պայքարի մասին, կոչ էին անում Արցախից հանել Ադրբեջանի ապօրինի կազմկոմիտեին, բացել Արցախը Հայաստանի հետ կապող ճանապարհները և ապահովել ռադիոհեռուստատեսության նորմալ աշխատանքը[1208]:

Արցախի տարբեր վայրերում իրականացված ոճրագործությունները ոչ միայն անհանգստություն և զայրույթ էին առաջացնում, այլև ստիպում էին մեր ժողովրդին, այդ թվում հայուհի կանանց, դիմել կոնկրետ քայլերին: Հայուհի կանայք դեռևս 1988-1989 թվականների հանրահավաքների ժամանակ պատրաստ էին զինվորագրվել կամավորական ջոկատներին՝ համարելով, որ այդ ճակատագրական պահին իրենք ևս պարտավոր են կատարել իրենց պարտքը հայրենիքի առջև:

Համազգային պայքարին միացած կանանց կազմակերպչական աշխատանքների մասին տեղեկություններ է հաղորդում 1990 թվականի վերջերին օպերատիվ-հետախուզական խմբի կազմում Արցախ

[1208] «Ուրբաթ», 19 հոկտեմբերի, Երևան, 1990:

գործուղված ԽՍՀՄ ՆԳՆ սպա Վիկտոր Կրիվոպուսկովը[1209]: Նա գրում է. «ԼՂԻՄ կազմկոմիտեի նախագահ Վ. Պ. Պոլյանիչկոն ազերիական հատուկ ծառայությունների կողմից խլված մի նամակ կարդաց, որը Շուշիի Կիրով գյուղից մի կին էր ուղարկել ԼՂԻՄ մարզկոմին: Նամակը բովանդակում էր խնդրանք՝ մթերքներով և դեղամիջոցներով շտապ օգնություն հասցնել հայկական ենթաշրջանում ապրող գյուղերի բնակչությանը: Նա պնդում է, որ չնայած մշտական գնդակոծություններին, մարդկանց սպանություններին՝ մարդիկ տոկուն են բոլոր տեսակի արգելքների դեմ և հանուն ոչ մի բանի չեն լքի իրենց դարավոր հայրենիքը: Կինը մի բան էր խնդրում՝ թույլ չտալ, որ այդ գյուղերից հանեն ներքին զորքերի բլոկ-պոստերը, որոնք թեև սակավաթիվ են, բայց լավ թե վատ բնակչությանը պաշտպանում են ադրբեջանական ուղղորդված ագրեսիայից»[1210]:

Ըստ հեղինակի՝ Պոլյանիչկոն այդ նամակը համարեց Ժաննա Գալստյանի ակտիվ գործունեության արդյունք և սպառնաց, որ եթե նա կամավոր չդադարեցնի իր գործունեությունը այդ գյուղերում և չվերադառնա տուն, ապա իրենք կօգնեն դա անել: Պատահական չէր անձնագրային ստուգման ռեժիմի ժամանակ՝ 1990 թվականի դեկտեմբերի 16-ին, Ժ. Գալստյանի ձերբակալությունը Բերդաձորում, որտեղից նրան տեղափոխեցին Ստեփանակերտ: Նրա փրկության համար պայքարում էին շարժման առաջնորդները, ինչպես նաև ինքը՝ Վ. Կրիվոպուսկովը: Ապացուցվեց, որ ձերբակալության համար հիմնավորում չկա, որից հետո ազատեցին, և մինչև պատերազմի ավարտը նա մնաց մարտական դիրքերում[1211]:

Այդ օրերին Բերդաձորի ենթաշրջանի ռադիոհեռախոսկապը ապահովում էր **Գայանե Առստամյանը**: Նա, դեռևս 1989 թվականի

[1209] **Кривопусков В.,** Мятежный Карабах, Из дневника офицера МВД СССП, Москва, 2007, с. 21.
[1210] **Կրիվոպուսկով Վ.,** նշվ. աշխ., էջ 21:
[1211] Տե՛ս նույն տեղում:

դեկտեմբերին ընդգրկվելով շարժումը համակարգող կապավորների խմբում, մեկնեց Բերդաձորի ենթաշրջան՝ գիտակցելով Շուշիի բանտում հայտնվելու վտանգը: Նրա աշխատանքի շնորհիվ անխափան գործում էր կապը Ստեփանակերտի և Երևանի հետ[1212]: Այդ օրերի մասին Գ. Առստամյանը հիշում է. «1991 թվականի սկզբներից զգացվում էր, որ Բերդաձորի շուրջ սեղմվում է օղակը, հաճախակի էին դառնում ամենատարբեր ստուգումները անձնագրային ռեժիմի անվան տակ... Թուրքերին պարզ է դառնում շարժման տեղի գործիչների անունները, և Բերդաձորը նորից շրջապատվում է: Պահանջում են առաջնորդներից Ժ. Գալստյանին: Նա, մտածելով, որ իր պատճառով կարող են բնակչությանը վնասել, ինքնակամ հանձնվում է: Երբ պատրաստվում են զրահամեքենայով նրան տանել գյուղից, ես միանում եմ և նրանց հետ հասնում մինչև Ստեփանակերտ: Հաջողվում է ազատվել, և առաջին խնդիրը լինում է լուրը հասցնել շարժման ղեկավարներին ու նորից վերադառնալ Բերդաձոր[1213]:

Գայանե Առստամյանը Բերդաձորի ենթաշրջանում մնաց մինչև վերջ: Բերդաձորցիների տեղահանման օրերին նա աշխատում էր սահմանի քթի տակ: Ուղղաթիռներով կանանց, երեխաներին տեղափոխում են Ստեփանակերտ: Շուտով թշնամին կրակի տակ առավ հեռախոսակայանը. առջևում ուրվագծվում էին գերության տանջալի օրերը: Սակայն նրան հաջողվեց վերջին ուղղաթիռով դուրս գալ այդ դժոխքից՝ իբրև երեխայի մայր»[1214]:

Երկար ժամանակ Ժ. Գալստյանը ստիպված էր թաքնվել հետապնդումներից: Իսկ երբ սկսվեցին լայնածավալ ռազմագործողությունները, նա ծառայության անցավ նոր կազմավորվող պաշտպանության բանակի կապի բաժնում, այնուհետև՝ կանանց վաշտում:

[1212] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 72:
[1213] Տե՛ս նույն տեղում, էջ 73:
[1214] Տե՛ս նույն տեղում:

Գայանե Առստամյանը ծնվել է Ստեփանակերտում 1963 թվականին, 1984 թվականին ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության բաժինը: Երբեք չի աշխատել իր մասնագիտությամբ, քանի որ հետաքրքրությունների ոլորտը ավելի շատ կապն էր, ուստի 1987 թվականից ընդունվել է աշխատանքի Ստեփանակերտի քաղաքային կապի հանգույցում որպես կադրերի գծով տեսուչ[1215]: Գայանե Առստամյանը Արցախյան շարժման առաջին տարիներին՝ 1989 թվականին՝ որպես կապավոր, տեղափոխվել է Բերդաձոր գյուղ: 1991 թվականի մայիսի 18-ին՝ խորհրդային բանակի և Ադրբեջանի ՕՄՕՆ-ի կողմից իրականացված «Կոլցո» ռազմական գործողության ժամանակ, ձորակը հայաթափ էր եղել, և բնակչությունը տեղափոխվել էր Ստեփանակերտ և Գորիս քաղաքներ: Գայանե Առստամյանը վերադարձել Է Ստեփանակերտ: 1991-1992 թվականներին մասնակցել է Արցախի նորաստեղծ բանակի կապի զորամասի կազմավորմանը և 1992 թվականի սեպտեմբերի 1-ից ծառայության անցել Արցախի ինքնապաշտպանության բանակում որպես ռադիստ-հեռագրող, իսկ 1993 թվականի մայիսի 1-ից՝ թիվ 747035 զորամասում որպես սանիրահանգիչ[1216]:

1989-1994 թվականներին տարբեր ջոկատների և Շուշիի 8-րդ մոտոհրաձգային գումարտակի կազմում մասնակցել է Լաչինի (Իփյիակ, Թազաքենդ), Մարտակերտի (Դրմբոն, Գետավան, Չլդրան, Կիչան, Կարմիրավան), Հադրութի (Խծաբերդ), Ֆիզուլու (Հորադիզ), Կուբաթլուի, Աղդամի (Բոյահմեդլի, Սոֆուլու) շրջանների ազատագրական և ինքնապաշտպանական մարտերին[1217]:

1994 թվականի դեկտեմբերի 15-ին Գայանե Առստամյանը նշանակվել է թիվ 3 հրաձգային վաշտի բուժկետի պետ: Այդ պաշտոնում ծառայել է մինչև զորացրվելը՝ 1995 թվականի սեպտեմբերի 1-ը:

[1215] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 151:
[1216] Տե՛ս նույն տեղում:
[1217] Տե՛ս նույն տեղում:

Այժմ Գայանե Առստամյանը շարունակում է ծառայությունը Երևանում՝ զինկոմիսարիատում:

Վ. Կրիվոպուսկովը անդրադարձել է նաև 1989 թվականին Էջմիածնի կամավորական ջոկատի շարքերը համալրած **Նազիկ Ամիրյանին:** Վերջինս ինքնապաշտպանական ջոկատի հետ մեկնել էր Հադրութի շրջան՝ իբրև Դուդուկչի գյուղում կոոպերատիվ կազմակերպելու և մթերքներ գնելու համար: Սակայն իրականում նրանք գյուղը պաշտպանում էին ադրբեջանցիների անընդհատ հարձակումներից:

1990 թվականի նոյեմբերի 17-ին՝ խորհրդային ՆԳ նախարարության զինվորների կողմից «անձնագրային ստուգման» ժամանակ Նազիկ Ամիրյանը ջոկատի 24 անդամների հետ ձերբակալվել է: Մեկ ամիս նա մնացել է անդրդվելի և տարել այդ ծանրությունը, այն էլ՝ Շուշիի բանտում: Վ. Կրիվոպուսկովը, ներկա գտնվելով նրա հարցաքննությանը, հայտնում է, որ գնդապետ Բորովսկին անկեղծորեն զարմացել է, որ ջահել, առաջին հայացքից սուսուփուս այդ աղջիկն այդքան հաստատուն, գործնական թափ ունի: Սեփական գործն էր կազմակերպել, ղեկավարում էր տղամարդկանց կոլեկտիվ, այն էլ ոչ թե խաղաղ մի անկյունում, այլ, փաստորեն, առաջին գծում: Շփվելով Նազիկի հետ՝ նա նկատում է նրա և՛ հաստատուն բնավորությունը, և՛ կամքը, և՛ դրսևորելու ու մարդկանց իր հետևից տանելու կարողությունը:

Դեռ նախորդ օրը պարզ է դարձել, որ Ն. Ամիրյանը բոլորովին էլ պատահական չի հայտնվել հայրական օջախից հեռու: Իհարկե, նրա գլխավոր առաքելությունը գյուղատնտեսական մթերքներ գնելն ու մշակելը չեն եղել և ոչ էլ անասնապահական ֆերմայի տանիքները կարկատելը: Նա սահմանամերձ շրջանի մարտական ընդհատակյա բազայի կազմակերպիչ էր: Վ. Կրիվոպուսկովը նշում է, որ դա էր պատճառը, որ ընդհատակի ղեկավարները խիստ անհանգստացած էին նրա ձերբակալության համար[1218]: Այնուամենայնիվ, նույն թվականի դեկտեմբե-

[1218] **Կրիվոպուսկով Վ.,** նշվ. աշխ., էջ 97-114:

ին նա փրկագինով ազատվեց և ջոկատի կազմում շարունակեց պայքարը: Ն. Ամիրյանի գործունեության մասին ավելի հանգամանալից նշված է «Հայուհիներ» հանրագիտարանի առաջին հատորում, որտեղ գրված է. «Նազիկ Ամիրյանը ծնվել է 1967 թվականի մարտի 14-ին Երևանում: 1988 թվականին ավարտել է Երևանի ժողտնտեսության ինստիտուտի տնտեսագիտական բաժինը, դասավանդել է Վարդաշենի առևտրի աշխատողների վերապատրաստման ուսումնարանում: Արցախյան շարժման առաջին իսկ օրերից մասնակցել է երթերին, միտինգներին: 1989 թվականին Էջմիածնի կամավորական ջոկատի կազմում որպես բուժքույր և մարտիկ մեկնել է Հադրութի շրջանի Էդիլլուի ձորակի գյուղախմբի (Մելիքաշեն, Բլութան, Խրմանջուղ, Աղբուլաղ, էդիլլու, Հախուլլու) պաշտպանական շրջան»[1219]:

Մարտական մկրտությունն ստացել է 1989 թվականի աշնանը Մելիքաշեն գյուղում: Ջոկատն իր վրա է գրավել ռուս-ադրբեջանական զինվորականության ուշադրությունը: Նոյեմբերին ռուսները ջոկատից 14 հոգու ձերբակալել և տեղափոխել են Ստեփանակերտ, ծեծի ենթարկել, շատերին նետել Շուշիի բանտ: Բանտ է ընկել նաև Ն. Ամիրյանը: Ջոկատի հրամանատար Մանվել Գրիգորյանը, փախչելով հիվանդանոցից, փրկագին է վճարել և բանտից դուրս բերել մարտական բոլոր ընկերներին, այդ թվում՝ Նազիկին:

1991 թվականին ջոկատը մեկնել է Հաթերք, 1992 թվականի ձմռանը վերադարձել Էդիլլուի ձորակ: Ն. Ամիրյանը նշանակվել է մատակարար: Նույն թվականի օգոստոսին ջոկատը վերակազմավորվել է գումարտակի և մտել արցախյան նորաստեղծ բանակի կազմի մեջ: Նրան շնորհվել է ավագ լեյտենանտի կոչում: Նշանակվել է անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով հրամանատարի տեղակալ: 1992 թվականի դեկտեմբերին ստեղծվել է Էջմիածնի պայմանագրային գումարտակը: 1993 թվականին կապիտան Նազիկ Ամիրյանը 5-

[1219] Հայուհի, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 151:

որդ բրիգադի թիկունքի պետի պաշտոնակատարն էր: Օգոստոսին 5-րդ բրիգադի ակտիվ գործողությունների շնորհիվ ազատագրվել են Ֆիզուլին և հարակից գյուղերը: 1993 թվականի հոկտեմբերին բրիգադը ուղարկվել է՝ հանգստի և համալրվելու: 1993 թվականին մեկնել է Մարտակերտի պաշտպանական շրջան, ազատագրել է Մաղավուզ, Հակոբ Կամարի, Գետի Գոմեր, Տոնաշեն, Դաստակերտ, Մատաղիս, Թալիշ գյուղերը և մինչև հրադադար մնացել այդ դիրքերում: 1993 թվականի ձմեռային ռազմագործողություններից հետո Ն. Ամիրյանին շնորհվել է մայորի կոչում[1220]: Այժմ նա ակտիվ հասարակական գործունեություն է ծավալում. ՀՀ ԵԿՄ վարչության անդամ է, ԵԿՄ մատաղ սերնդի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների և սպորտի հանձնաժողովի նախագահն է, ղեկավարում է ՀՀ նետաձգության հանրապետական ֆեդերացիան: Ունի գնդապետի կոչում (1996): Պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչի 1-ին աստիճանի» շքանշանով (1995), ՀՀ «Արիության համար» (1998), ՀՀ ԵԿՄ բարձրագույն պարգև «Սպարապետ Վազգեն Սարգսյան» շքանշանով (2004), «Արիական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» (1995), ՀՀ ՊՆ «Դրաստամատ Կանայան» և «Վազգեն Սարգսյան» մեդալներով»[1221]:

Նշված փաստերը վկայում են, որ այդ դժվարին օրերին Արցախի ինքնապաշտպանությանը միացած Հայաստանի կամավորական ջոկատների շարքերը համալրել էին նաև կանայք, որոնք անձնազոհ նվիրումով հաստատակամությամբ և քաջությամբ մասնակցեցին Արցախի ազատագրմանը:

Արցախում ծավալված զանգվածային բռնությունների ալիքը նոր թափով շարունակվեց 1991 թվականի հունվարին: Մարզի հայ բնակչության վճռականությունից և անհնազանդությունից կատաղած՝ ԽՍՀՄ ղեկավարությունը և Ադրբեջանի իշխանությունները նոր թափով սկսեցին պայքարել ինքնորոշման սահմանադրական ուղու վրա

[1220] Հայուհի, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 151:
[1221] Տե՛ս նույն տեղում:

կանգնած արցախահայության նկատմամբ: Նման իրավիճակում Կանանց Հայաստանի հանրապետական խորհրդի նախագահությունը 1991 թվականի հունվարի 11-ին դիմեց ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին՝ նշելով, որ Հայաստանի կանայք տոկունությամբ դիմակայում են ցրտին, սովին, սակայն անհանդուրժելի են հայ ժողովրդի դեմ մշտապես կիրառվող բռնությունները, ինչպես նաև ձեռնարկվող լրատվական կեղծ ելույթները: Այդ նամակբողոքում ցասումով էր խոսվում Ադրբեջանի ղեկավար մարմինների կողմից Լեռնային Ղարաբաղում կազմակերպվող հանցագործությունների մասին և պահանջվում արդարացի որոշում կայացնել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ[1222]:

Փետրվարի 4-ին հայ կանանց ստորագրությամբ ԼՂ ժողովրդական բոլոր մակարդակների պատգամավորներ և բազմաթիվ հիմնարկ-ձեռնարկությունների տնօրեններ դիմեցին Մ. Գորբաչովին՝ հաղորդելով Ադրբեջանի ՆԳ նախարար Մ. Ասադովի գլխավորությամբ մարզի հայկական գյուղերի վրա ադրբեջանցի հրոսակների հարձակումների, ինչպես նաև Ստեփանակերտի ջրմուղի պայթեցման ու բազմաթիվ խաղաղ բնակիչների սպանությունների մասին: Սակայն, ինչպես հետագա դեպքերն են վկայում, դիմումը ոչ միայն դրական պատասխան չստացավ, այլև գնալով ավելի վատթարացավ երկրի դրությունը: Ընդհանրապես Կենտրոնը խուսափում էր քաղաքական լուծումներից[1223]:

Արցախում տիրող ծանր իրավիճակի, սանձազերծված բռնությունների առիթով իրենց վրդովմունքն արտահայտեցին **Գալինա Ստարավոյտովան, Էլենա Բոները, Ինեսա Բուրկովան, Գալինա Նույկինան** և շատ ուրիշներ: Ռուս գրող Գալինա Նույկինան փետրվարի 8-ին մոսկովյան մի խումբ գրողների հետ Երևանից Ստեփանակերտ ժամանեց՝ մարզի վիճակին ծանոթանալու և Միության հասարակայնությանը

[1222] «Խորհրդային Ղարաբաղ», 12 հունվարի, Ստեփանակերտ, 1991:
[1223] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 75:

ճշգրիտ և հավաստի տեղեկություններ տանելու համար: Սակայն Ստեփանակերտի օդանավակայանում նրանց հետ ուղարկեցին: Վրդովված Գ. Նույկինան իր բողոքում նշում է. «Ես Ղարաբաղում, ավելի ճիշտ նրա շեմին տեսել եմ մարդկանց, որոնք անհուսության մեջ են, այն էլ՝ մի կացության մեջ, ասես իրենց թիկունքում տարածված է տառապանքի ու ողբերգության մի գոտի: ...Մենք ականատես եղանք ուղևորների հետ կատարվող այնպիսի բռնությունների, որոնց օրինակը երևի թե չկա ու չի կարող լինել աշխարհի ուրիշ ոչ մի անկյունում: Ես չեմ կարող իմ կարեկցանքը չարտահայտել Ղարաբաղի հայերին՝ երեք տարի շարունակ անմարդկային զրկանքների դեմ պայքարող այդ խիզախ և արդար ժողովրդին...»[1224]:

Արցախում ստեղծված իրավիճակով մտահոգված ԽՍՀՄ մի շարք կին մտավորականներ, որոնք առանձին, թե հասարակական կազմակերպությունների կազմում, փորձում էին նպաստել իրավիճակին՝ հանդես գալով հայտարարություններով և նախաձեռնություններով: Հատկապես առանձնանում էր «Մոսկովսկայա տրիբունա» հասարակական կազմակերպությունը, որի շարքերը համալրել էր **Գալինա Ստարավոյտան**: Այդ օրերին ակտիվ գործունեություն էին ծավալել հասարակական մի շարք կազմակերպություններում և միություններում համախմբված կանայք: Նմանօրինակ կազմակերպություններից ու միություններից էին «Գետաշենը», «Արցախ» ՀԲՄ-ն, «Մայրություն» հիմնադրամը, «Գթություն», «Զինվորի մայր» հասարակական կազմակերպությունները և այլն:

«Մոսկովսկայա տրիբունա» հասարակական կազմակերպությունը, Գալինա Ստարավոյտովայի ակտիվ մասնակցությամբ քննարկելով Արցախ-Հայաստան ստեղծված ծանր վիճակը, 1991 թվականի մարտի 3-ին ընդունեց դիմում՝ ուղղված ՀՀԳԽ-ին, ինչպես նաև հայտարարություն՝ նախագահ Մ. Գորբաչովին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Այդ

[1224] **Ուլուբաբյան Բ.,** նշվ. աշխ., էջ 194:

փաստաթղթերում պաշտպանվում էին Արցախի բնակչության շահերը, և դատապարտվում Ադրբեջանի մարդասպանների արարքները, ու պահանջում էին պատժել, դատի տալ հանցագործներին, ԽՍՀՄ ՆԳ զորքերը ենթարկել Կենտրոնին ու նրանց հանձնարարել խաղաղություն և ոչ թե պատժիչ ֆունկցիաներ[1225]:

Ակտիվ գործունեություն էր ծավալում «Գետաշեն» հայրենակցական-բարեգործական միությունը, որը, սոցիալ-տնտեսական ոլորտում բարեփոխումներ իրագործելուց բացի, զբաղվում էր նաև երկրի ինքնապաշտպանության հարցերով և անդրադառնում կանանց նախաձեռնություններին: 1991 թվականին **Գրետա Միրզոյանի** նախաձեռնությամբ հիմնադրված «Զինվորի մայր» հասարակական կազմակերպությունում 1992-1994 թվականներին կանանք՝ որպես գթության քույրեր, ոչ միայն խնամում էին արցախյան մարտադաշտերում վիրավորված զինվորներին, այլև պատերազմի շրջանում մեծ նվիրումով իրականացնում էին մի շարք այլ աշխատանքներ ևս[1226]:

Հասարակական կազմակերպությունների շարքերը համալրելուց բացի՝ հայ կանայք գործում էին նաև բարեգործական, մարդասիրական աշխատանքների շրջանակներում: Նրանց թվում էր բարերար Քերոլայն Նաջարյանը: Վերջինս 1989 թվականին Բոստոնում հիմնեց «Հայկական առողջապահական միություն» բարեգործական կազմակերպությունը, որի մասնաճյուղերը բացվեցին նաև Երևանում և Ստեփանակերտում: Կազմակերպությունը, աղետի օրերից սկսած, համագործակցում էր Գյումրիի թիվ 1 պոլիկլինիկայի հետ, իսկ արդեն 1994 թվականին այստեղ հիմնեց առողջապահության պահպանման կենտրոն: 1995 թվականին բարերար հայուհին Ստեփանակերտում հիմնեց Մոր և մանկան «Արփեն» բժշկական կենտրոնը, կազմակերպեց և իրականացրեց Արցախի տարբեր գյուղերում վերակառուցման աշխա-

[1225] «Հայաստանի Հանրապետություն», 6 մարտի, Երևան, 1991:
[1226] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 102:

տանքներ, ինչպես նաև նյութական օգնություն ցուցաբերեց զոհված ազատամարտիկների ընտանիքներին[1227]:

Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականությունը դատապարտվեց 1991 թվականի փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի պատմական որոշման երեք տարին լրանալու կապակցությամբ Ստեփանակերտի Հաղթանակի հրապարակում կայացած բազմահազարանոց հանրահավաքում, որտեղ ելույթներով հանդես եկան «Ղարմետաքս» կոմբինատից **Սվետլանա Պետրոսյանը**, ԼՂԻՄ ձեռնարկության գլխավոր հաշվապահ **Թամարա Շվեդովան**, թիվ 3 մսուր-մանկապարտեզի դաստիարակչուհի **Եկատերինա Դուբնինան** և Կոշիկի ֆաբրիկայի բանվորուհի **Էլզա Բաղդասարյանը**: Նրանք մեկ անգամ ևս հավաստեցին ողջ արցախահայության վճռականությունը՝ համախմբված ու միասնական ուժերով շարունակել պայքարը[1228]: Ամենուրեք կանանց ոգևորիչ ելույթները ուժ և հավատ էին ներշնչում բազմությանը, որը ստեղծված օրհասական վիճակից դուրս գալու փրկությունը իր ձեռքերում էր տեսնում:

Գոհարիկ Սարինյանի և **Ռոզա Ավանեսյանի** նախաձեռնությամբ 1991 թվականի մարտին կանայք, նամակով դիմելով ԽՍՀՄ տարբեր ատյանների, առաջարկեցին վերականգնել մարզային իշխանությունները, վերացնել ճանապարհների շրջափակումը, մարզի տարածքից դուրս բերել ադրբեջանական ոստիկանության հատուկ ջոկատայիններ-ի անվան տակ գործող անօրինական խմբավորումները: Կանանց կողմից հաջորդ քայլը 1991 թվականի մարտի 8-ին Ստեփանակերտում կազմակերպած բողոքի ցույցն էր:

Ցույցը կազմակերպվել է ընդդեմ Ադրբեջանի իշխանությունների՝ այդ օրերին ձերբակալված և Շուշիի բանտ տարված երեք անմեղ հայերի համար: Կանանց բողոքի երթին միացած քաղաքի բոլոր բնա-

---

[1227] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 110:
[1228] «Խորհրդային Ղարաբաղ», 30 մարտի, Ստեփանակերտ, 1991:

կիչները պահանջում էին Ադրբեջանի բանտերից ազատել անմեղ հայ բանտարկյալներին:

Շրջափակման մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղում իրադրությունը գնալով ավելի էր սրվում: Ադրբեջանի ղեկավարությունը միութենական իշխանությունների աջակցությամբ հետևողականորեն շարունակում էր փոխել տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը: 1991 թվականի հունվարի 14-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ին ավելի քան 80 %-ով հայաբնակ Շահումյանի անվան հարակից շրջանը ադրբեջանաբնակ Կասում-Իսմայիլի շրջանին միավորելու մասին[1229]: Նպատակը մեկն էր՝ վերացնելով Շահումյանի շրջանը՝ այն լիովին հայաթափել: Արցախում գտնվող ԽՍՀՄ ներքին զորքերի անձնակազմը, ենթարկվելով Ադրբեջանի հանրապետական կազմկոմիտեին, փաստորեն, կատարում էր պատժիչ դեր՝ բռնի տեղահանելով հայ ազգաբնակչությանն իր պատմական հայրենիքից:

Զանգվածային բռնությունների ալիքը իր գագաթնակետին հասավ 1991 թվականի ապրիլին, երբ խորհրդային և ադրբեջանական զինված ուժերը սկսեցին Լեռնային Ղարաբաղի հյուսիսային մասի հայաբնակ գյուղերի էթնիկ զտումները, որով հակամարտությունը, ըստ էության, մտավ պատերազմական փուլ: Սակայն Հյուսիսային Արցախի հայ ազգաբնակչության կողմից մերժվեց այդ կամայական որոշումը, որից հետո բազմաթիվ դիմումներով նորանոր պատվիրակություններ ուղարկվեցին Մոսկվա, սակայն, անարդյունք: Դրան հաջորդեցին ավազակային հաճախակի հարձակումները, որոնց ենթարկվեցին ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք ու երեխաներ: Մշտական դարձած ավազակային հարձակումները իրականացվում էին օմօնականների (միլիցիայի հատուկ նշանակության ջոկատներ) կողմից՝ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումների աջակցությամբ:

[1229] **Ղահրամանյան Կ.,** Օջախի գիրք. հողը կանչում է, գիրք Բ, էջ 64:

Օգտվելով Մոսկվայի բացարձակ աջակցությունից՝ ադրբեջանական իշխանությունները շարունակում էին զավթել հայկական նորանոր գյուղեր և բնակիչներին արտաքսել իրենց հազարամյա բնակավայրերից: 1991 թվականի ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական օմօնը խորհրդային բանակի աջակցությամբ բացահայտ պատերազմ սկսեց Հյուսիսային Արցախի զուտ հայաբնակ Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ՝ իրականացնելով նախօրոք մշակված «Կոլցո» («Օղակ») օպերացիան: Այդ գործողությունը սկսվեց ապրիլի 30-ին, որին մասնակցում էին խորհրդային «Վիրաժ» և «Օբրիվ» ռազմական միավորումները[1230], ադրբեջանական օմօնի «Դոզոր» ստորաբաժանումը, ինչպես նաև տասնյակ ավարառու հրոսակախմբեր: Նրանք նախապես գրավել էին Գետաշենի շրջակա բարձունքները, շրջափակել գյուղը: Հրաման ստանալուն պես այդ բազմաքանակ զորախումբը զրահամեքենաներով, հրասայլերով և զենքերի տարբեր տեսակներով հարձակում սկսեց հայկական գյուղերի վրա: Կատաղի մարտեր տեղի ունեցան Գետաշեն և Մարտունաշեն գյուղերում, որտեղ քաջաբար զոհվեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի նորագույն շրջանի հերոսներ Թաթուլ Կրպեյանը, Սիմոն Աչիկգյոզյանը, Արթուր Կարապետյանը, Վալերի Նազարյանը, Ջարզանդ Դանիելյանը և ուրիշ քաջորդիներ[1231]: Ուժերը խիստ անհավասար էին, և զավթիչները զրավեցին ու հիմնովին ավերեցին նշված երկու գյուղերը: Ոգևորված այդ «հաղթանակով»՝ ադրբեջանցիները համատարած հարձակումներ սկսեցին Հադրութի և Շահումյանի հայկական գյուղերի վրա: Մայիսի կեսերին բռնագաղթվեցին 24 հայկական գյուղերի բնակիչներ, սպանվեցին ավելի քան 100 հայեր, մի քանի հարյուր մարդ պատանդ վերցվեց[1232]: Փաստորեն՝ 1991 թվականի մայիս-հունիս ամիսներից Ադրբե-

---

[1230] **Ղահրամանյան Կ.,** Հյուսիսային Արցախ, գոյության պայքար, գիրք Բ, Երևան, 1993, էջ 66-69:
[1231] **Բաղդասարյան Դ.,** Դիմակայություն, Երևան, 1998, էջ 58:
[1232] «Հայաստանի Հանրապետություն», 21 մայիսի, Երևան, 1991:

ջանը սկսեց ազգամիջյան պատերազմ, որն աստիճանաբար ավելի մեծ ծավալ ստացավ:

Զինված հակամարտության այդ օրերին կանանց տոկունության, քաջության, սխրագործության, միաժամանակ տառապանքների, զրկանքների ու մանավանդ նրանց նկատմամբ գործադրված վայրագ բռնությունների նորանոր էջերով լցվեց մեր ժողովրդի պատմությունը: Եվ այդ սարսափելի դեպքերի մեջ թերևս խորհրդային երկրում դաստիարակված հայի համար զարմանալին այն էր, որ ադրբեջանցի ասպատակող հրոսակներին միացել էին Խորհրդային Միության ներքին զորքերի ռուս բանակայինները: Հայ մարդիկ իրենց ստացած դաստիարակությամբ հավատում էին, որ ռուսներն են հայ ժողովրդի ամենամեծ բարեկամները, նրանց զորքերը միայն և միայն ազատագրող են, ոչ թե նվաճող: Ուստի տեսնելով ադրբեջանցիների հետ ռուսների բռնությունները՝ զարմանում էին: Բազմաթիվ կանանց հուշագրություններ են պահպանվել այդ ողբեգրական օրերի վերաբերյալ: Գետաշենցի կանանցից Ասյա Աթանեսյանի վկայությամբ՝ ապրիլի 30-ին օմօնականները, ներխուժելով գյուղ, ոչ միայն կողոպտել էին իր տունը՝ տանելով ոսկյա զարդեր, 1000 ռուբլի, այլև պատանդ վերցրել ամուսնուն՝ Հրաչիկ Աթանեսյանին, և սպանել եղբորը՝ Միշիկ Սաֆարյանին[1233]:

Կանայք սարսափով էին հիշում, թե ինչպես էին օմօնականները, անկախ սեռից ու տարիքից, թալանում, ավերում տները, սպանում, բռնություն գործադրում խաղաղ բնակիչների նկատմամբ: Ահա թե ինչ է գրում բռնությունների ականատես Էլմիրա Ֆարաշյանը. «Գյուղացիները մտածում էին, թե խորհրդային բանակը օգնության է եկել, սակայն երբ տանկերը շրջապատեցին գյուղը, արգելափակեցին գյուղից դուրս տանող բոլոր ճանապարհները և փողերն ուղղեցին տների վրա, մենք հասկացանք, որ մի վատ բան է պատրաստվում: Տուն մտան մի ռուս կապիտան և մոտավորապես 20 օմօնական: Կապիտանը պա-

[1233] **Սիսյան Բ., Չիլինգարյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 353:

հանջեց անձնագրերը, հետո սկսեց գոռալ. «Ենթարկվո՞ւմ եք Ադրբեջանի սահմանադրությանը, թե՞ ոչ... հետո սկսեցին տունը կողոպտել, ծեծեցին մորս ու որդուս, ջարդուփշուր արեցին ամեն ինչ»[1234]:

Այդ դժվարին ժամանակներում Գետաշենից Հայաստան ռադիոկապը շարունակում էր ապահովել Սվետլանան՝ նույն ինքը Լենա Ավագյանը՝ միաժամանակ մասնակցելով ենթաշրջանի ինքնապաշտպանությանը: Համագործակցելով Թաթուլ Կրպեյանի գլխավորած ջոկատի հետ՝ ոչ միայն սնունդ էր մատակարարում նրանց, այլ նաև իր տունը դարձրել էր նա ջոկատի զինանոցը: Կապավորը աշխատում էր գիշեր-ցերեկ: Նրա «Կամա-2» ազդանշանը անընդհատ հնչում էր եթերում[1235]:

Անգամ Գետաշենի անկման վերջին օրերին նա շարունակում էր անհնարին պայմաններում պահել կապը, միաժամանակ կանանց մասնակցությամբ կազմակերպում էր ինքնապաշտպանական միջոցառումներ՝ օմոնականներին գյուղից դուրս հանելու ուղղությամբ: Հարկ է նշել, որ ադրբեջանցիները բազմիցս փորձել են ձերբակալել նրան, սակայն դա նրանց չի հաջողվել, քանի որ կապավոր Լ. Ավագյանը ներկայացել է որպես Սվետլանա՝ ստեղծելով համոզում, որ տարբեր մարդկանց մասին է խոսքը: Նույնիսկ իր սեփական տունը վառելով՝ նա հեռացել էր իր սիրելի Գետաշենից: 1991 թվականի մայիսի 3-ին Գետաշենի ռադիոկապից վերջին հեռագիրն էր հղել, որտեղ ասվում էր. «Խորհրդային բանակը ոչնչացնում է մեզ, խորհրդային քաղաքացիները տանկերով տրորում են մեզ մեր իսկ տներում և բակերում, ադրբեջանական օմոնականները՝ երեխաներին, կանանց... Զորքը ոչնչացնում է մեզ և ստիպում է ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, հակառակ դեպքում՝ թողնել հայրենի գյուղերը: Սակայն փախչել չեն թողնում, կրակում են: Մենք պատսպարվելու տեղ չունենք, աշխարհի՛ մարդիկ, փրկե՛ք գոնե երեխաներին, փրկե՛ք: Մենք զոհվում ենք տան-

[1234] «Հայաստանի Հանրապետություն», 15 մայիսի, Երևան, 1991:
[1235] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, Երևան, 2004, էջ 45:

կերի շրջափակման մեջ և արտաքին աշխարհից կտրված: Փրկե՛ք մեզ»[1236]:

Նմանատիպ բռնությունների առթիվ «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպության նախաձեռնությամբ բողոքի ցույց էր կազմակերպվել Մոսկվայում: Հանդես գալով հանրահավաքում՝ գրող-հրապարակախոս Ինեսա Բուրկովան դիմել էր երկրի ղեկավարությանը՝ կոչ անելով վերջ տալ Արցախի հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացվող սպանդին: Նա մարդկության թշնամիներ էր հայտարարել ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դմիտրի Յազովին, ներքին գործերի նախարար Բորիս Պուգոյին և միութենական այլ ղեկավարների[1237]:

Հայտնի է, որ Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերի վրա ապրիլի 29-ին ու 30-ին լայնածավալ հարձակման ժամանակ ուղղաթիռներից գնդակոծման ու հրետակոծության արդյունքում զոհվել են 35, վիրավորվել հարյուրից ավելի հայեր[1238]: Գետաշենցի զոհվածների, անհայտ կորածների, բռնագաղթի հետևանքով մահացածների մեջ քիչ չէին կանայք, որոնց թվում էին՝ **Հասմիկ Աղայանը, Նորա Երիցյանը, Հռիփսիմե Մինասյանը, Մարո Չիլինգարյանը** և շատ ուրիշներ: Հասկանալի է, որ բռնությունների ենթարկված կանանց շարքերում ամենադաժան ճակատագիրը բաժին է հասել նրանց, ովքեր պատանդ էին մնացել հակառակ կողմում: Սակայն ոչինչ պարզ չէ նրանց կրած տառապանքների մասին, քանի որ մեծ մասը, չդիմանալով խոշտանգումներին ու նվաստացումներին, նահատակվել են, իսկ ովքեր վերադարձել են, անկարող են եղել վերարտադրել ու վերապրել տառապանքները:

Գետաշենի և Մարտունաշենի բռնագաղթն ավարտվել է 1991 թվականի մայիսի 7-ին: Գետաշենի և Մարտունաշենի ինքնապաշտ-

---

[1236] «Մռովի ղողանջներ», 3 մայիսի, Ստեփանակերտ, 1992:
[1237] «Հայաստան», 11 մայիսի, Երևան, 1991:
[1238] **Բուրովա Ի.,** նշվ. աշխ., էջ 17:

պանական ուժերի շնորհիվ բնակիչներին հաջողվել է տեղափոխել առանց մեծաթիվ զոհերի: Այդ դեպքերի առիթով ցույցեր և ժողովներ են կազմակերպվել Երևանում, հանրապետության մյուս բնակավայրերում, որտեղ ելույթ ունեցող կանայք, դատապարտելով տեղի ունեցածը, պահանջել են կանխել Հյուսիսային Արցախում կատարվող բռնությունները:

1991 թվականի մայիսի 27-ի ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների, այդ թվում՝ կին պատգամավորների նամակը՝ ուղղված ԽՍՀՄ իշխանություններին, բողոք էր ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական հատուկ նշանակության զինված ջոկատների և խորհրդային բանակի զինվորների կողմից համատեղ իրականացված բռնությունների, տեղահանությունների դեմ, ինչպես նաև խնդրանք՝ նպաստելու իրավիճակի կարգավորմանը[1239]:

1991 թվականի մայիսին ԽՄԿԿ կենտկոմի պլենումում ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր **Լյուդմիլա Հարությունյանը** իր ելույթով խորհրդային ղեկավարությանը մեղադրեց կատարված դեպքերի և պատերազմ հրահրելու մեջ: Հետագա իրադարձությունները, մասնավորապես պարտադրված պատերազմը, ցույց տվեցին, որ Կենտրոնի համաձայնությամբ նախօրոք պարտադրված էր հրեշավոր ծրագիր, ինչը ձախողվեց հայ ժողովրդի համառ դիմադրության շնորհիվ ու մեծ զոհողությունների գնով[1240]:

1991 թվականի մայիսի 9-ին Հայ կանանց խորհրդի նախագահության ընդլայնված նիստը, քննարկելով Գետաշենի և Մարտունաշենի հայ ազգաբնակչության բռնի տեղահանումը, ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններում խորհրդային բանակի կողմից սանձազերծված բռնությունների հետ առնչվող հարցերը, ընդունեց բողոք-դիմում՝ ուղղված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես դե Կուելյարին, Մարդու իրավունքների հանձնաժողովին, կանանց, երեխաների և ըն-

---

[1239] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 82:
[1240] **Ուլուբաբյան Բ.,** նշվ. աշխ., էջ 223:

տանիքի հարցերով զբաղվող փորձագետների խմբին, Միության հանրապետությունների կանանց կազմակերպություններին, լրատվության զանգվածային միջոցներին: Դիմումում մասամբ նշված էր, որ Ադրբեջանի ենթակայության հայկական, իսկ այժմ արդեն հենց Հայաստանի գյուղերը դարձել են հարձակումների, թալանի, բռնության օջախներ: Խորհրդային բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումների լայնածավալ աջակցությամբ ադրբեջանական օմօնականները կատարում էին սպանություններ և ավերածություններ: Ռազմական գործողությունների ժամանակ օգտագործվում էին զրահամեքենաներ, հրետանի, գյուղերը ենթարկվում էին տևական շրջափակումների, տուժում էին կանայք, երեխաներ և ծերունիներ[1241]:

Վերոնիշյալ դեպքերի առիթով ԼՂԻՄ «Մայրության» հիմնադրամը հեռագրով դիմել էր Մոսկվային, որտեղ հաղորդել էր, որ ադրբեջանական օմօնականների լկտիացած հրոսակախմբերը ԽՍՀՄ ղեկավարության թողտվությամբ և ներքին զորքերի օժանդակությամբ իրականացրել էին հայերի բռնի տեղահանություն, միաժամանակ հեղել հայկական գյուղերի խաղաղ բնակիչների արյունը, շրջափակել այդ գյուղերի բոլոր մուտքերը, սպանել էին երեխաներին, կանանց և ծերերին: Հիմնադրամը պահանջում էր խորհրդային իշխանության նախագահից անհետաձգելի միջոցներ ձեռնարկել՝ անմեղ մարդկանց սպանությունները դադարեցնելու համար, և Արցախի մայրերը, օգնություն էին խնդրում՝ հիշեցնելով, որ ամեն րոպե մեռնում էին երեխաներ, կանայք, ծերունիներ[1242]:

«Օղակ» ռազմական գործողության առաջին փուլում Գետաշենի ենթաշրջանի գյուղերից սկսվեց Շահումյանի, Շուշիի, Հադրութի և ԼՂԻՄ-ի այլ շրջանների բնակիչների բուն տեղահանության, հայրենազրկման, սպանությունների, վայրագությունների, թալանի, խոշ-

---

[1241] «Հայաստանի Հանրապետություն», 11 մայիսի, Երևան, 1991:
[1242] «Голос Армении», Ереван, 15.05.1991.

տանգումների՝ գրեթե 4 ամիս տևած գործողությունը, որն իրագործվեց մի քանի փուլով[1243]:

Բերդաձորի և Հադրութի հարավարևելյան գյուղերի գրեթե բոլոր չափահաս տղամարդկանց նետեցին Շուշիի, Լաչինի, Ֆիզուլու բանտերը, որոնց մի մասին հոշոտեցին, մյուսներին հաշմեցին ու մեծ փըրկագների հաշվին ազատ արձակեին: Այս դաժան իրավիճակին անդրադարձան նաև Խորհրդային Միության տարբեր կազմակերպություններում ընդգրկված կանայք, որոնք, բողոքի ձայնը բարձրացնելով, փորձեցին օգնել իրավիճակի կարգավորմանը: Ի պաշտպանություն արցախահայությանը՝ Մոսկվայից իր վրդովմունքը հայտնեց 1991 թվականի մարտի 20-ին ստեղծված «ԿՐԻԿ»-ը՝ Ռուսաստանի մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեն, որի հիմնադիր 22 անդամների թվում էին նաև **Գալինա Նույկինան, Գալինա Ստարավոյտովան**, ինչպես նաև աշխատանքները համակարգող **Ինեսա Բուրկովան, Սեդա Վերմիշևան և Անահիդա Բեստավաշվիլին**[1244]: Նրանցից ոմանք գոյապայքարի տարիներին բազմիցս այցելել են Արցախ, տեղում ուսումնասիրել իրավիճակը, իրենց հրապարակային ելույթներում ներկայացրել ռեալ պատկերը՝ ահազանգելով կատարվող անօրինությունների դեմ պայքարի անհրաժեշտության մասին: Ռուս մտավորականության այս կոմիտեն իր հայտարարության մեջ նշում էր, որ ձեռնարկվող ահաբեկչության անմիջական պատասխանատվությունը կրում է Կենտրոնը… Եթե նմանօրինակ գործելակերպը դադարեցվի, կոմիտեն Կենտրոնի գործողությունները կգնահատի որպես չհայտարարված պատերազմ հայ ժողովրդի դեմ[1245]:

ԽՍՀՄ նախագահի՝ 1991 թվականի հուլիսի 4-ի հրամանով Շահումյանի շրջանում վերացվեցին պարետային ժամն ու արտակարգ

[1243] **Բարսեղյան Ի.,** «Օղակ» ռազմական գործողության պետական-ահաբեկչական բնույթը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների», N 13, Երևան, էջ 5:
[1244] «Правда», Москва, 20.08.1991.
[1245] **Հակոբյան Թ.,** Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008, էջ 95-96:

դրությունը: Սակայն երկու օր անց, երբ զինվորները պետք է հեռանային շրջանից, հատուկ գրոհայինները սկսեցին հարձակումը հայկական երեք գյուղերի վրա: Գրոհը հետ մղվեց հայ ինքնապաշտպանական ուժերի կողմից, բայց հակառակորդի ճնշման տակ Հյուսիսային Արցախի գյուղերը սկսեցին դատարկվել: Մարդիկ հեռանում էին մեքենայով կամ տրակտորով, սայլով, ձիով, բայց հիմնական մասը՝ ոտքով: Կին, երեխա թե ծեր, հիվանդ ու հաշմանդամ օգնում էին մեկմեկու:

Իրենց հուշագրություններում կանայք, խոսելով Շահումյանի բռնագաղթի մասին, վկայում են, որ շատերը զոհ գնացին կամ անհայտ կորան բռնի տեղահանության ճանապարհին: Տեղահանվածները, մեծ դժվարությամբ հասնելով Հաթերք, իրենց գաղթի ճանապարհով անցած դեպի Ստեփանակերտ, որտեղից էլ՝ Երևան[1246]: Ընդառաջ գնալով բռնի տեղահանվածներին՝ կանայք իրենց հետ տարած սննդամթերքը, հագուստը, բաժանեցին շահումյանցիներին: Փորձեցին նրանց տեղավորել Ստեփանակերտում կամ Շուշիում, սակայն շատ քչերը մնացին այստեղ: Հիմնական մասը հասավ Երևան, հետո տարածվեցին տարբեր շրջաններ ու քաղաքներ, իսկ շատերն էլ հեռացան նախկին ԽՍՀՄ-ի ամենատարբեր կողմերի վրա և այլ երկրներ[1247]:

1991 թվականին Ադրբեջանցի հրոսակների հարձակումները լայնածավալ բնույթ էին ստացել ոչ միայն Շահումյանի, այլև Մարտակերտի շրջանում: 1991 թվականի մայիսի 15-ին օմօնականներին անձնագրային ստուգման պատրվակով ներխուժեցին Չլդրան գյուղ: Այդ օրերին շարժման ակտիվիստ **Արևիկ Սարգսյանը** աշխատում էր գյուղի կապի հանգույցում[1248]: Նրան հաջողվեց գիշերը համագյուղացիներին նախապես տեղյակ պահել օմօնականների մասին, ինչի արդյունքում գյուղի տղամարդիկ փրկվեցին ձերբակալությունից: Գյուղն ուներ ինքնապաշտպանական ջոկատ, որի անդամները գիշերները գյուղը

[1246] «Մռովի ղողանջներ», 9 մայիսի, Ստեփանակերտ, 1994:
[1247] **Ղահրամանյան Կ.,** նշվ. աշխ., էջ 590:
[1248] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 91:

պաշտպանում էին թալանի եկող ադրբեջանցի ելուզակներից: Ա. Սարգսյանը ջոկատի հետ շատ հաճախ պահակակետերում էր գտնվում, միաժամանակ մասնակցում էր զենք ու զինամթերքի հայթայթմանը: Դեռևս 1988 թվականին հայրենի Չլդրան գյուղում աշխատանքի էր անցել որպես հեռախոսավարուհի ու միևնույն ժամանակ շարունակել էր մասնակցել Ստեփանակերտի ցույցերին, գաղտնի ստորագրահավաքին և թռուցիկների տարածմանը[1249]:

1988 թվականի մայիսին Հայաստանի առաջին հանրապետության տարեդարձին Ա. Սարգսյանի կազմակերպմամբ Չլդրանի գյուղխորհրդի շենքին ամրացվեց եռագույնը, որի համար նրան ձերբակալեցին՝ մեղադրելով որպես ազգամիջյան տարաձայնություններ հրահրողի: Որպես պատիժ՝ նրան տնային կալանքի ենթարկեցին: 1989 թվականին փախչելով տնային կալանքից՝ Ա. Սարգսյանը իր հայրենանպաստ գործունեությունը շարունակեց Ստեփանակերտում, որտեղ օգնություն հավաքելով՝ տեղափոխում էր Գետաշեն, Շահումյան: Հետագայում իր գործը շարունակեց ինքնապաշտպանական ուժերի շարքերում՝ մասնակից դառնալով մարտական մի շարք գործողությունների[1250]:

Ղարաբաղյան հակամարտության ժամանակ մեկ անգամ չէ, որ հայ կինը ստիպված եղավ զենք վերցնել, հայրենիքի համար ընկած ամուսնուց ու որդուց հետո շարունակել անհավասար մարտը ու մինչև վերջին շունչը պաշտպանել հայրենի տունը: Հիշատակության է արժանի, օրինակ, Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի կանանց «Փառանձեմ» ազատագրական ջոկատը, որը ժամանակին մի միջադեպի առիթով՝ մեծ աղմուկ է հանել[1251]: Ռուս զինվորականների վայրագությունները, նրանց հայերին պատանդ վերցնելն ու ադրբեջանցի ավա-

---

[1249] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 91:
[1250] Տե՛ս նույն տեղում, էջ 92:
[1251] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, էջ 17:

ռառուներին վաճառելը սպառել էին հաթերքցի կանանց համբերությունը:

1991 թվականի օգոստոսի սկզբին ադրբեջանական օմոնականները կրկին շրջապատեցին Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղը, այդ գյուղի կանայք՝ **Ասյա Իսկանդարյանի** գլխավորությամբ, ստեղծեցին «Փառանձեմ» անվամբ ջոկատը, որի շարքերում էին **Սիրանուշ Առուշանյանը (Սիրանուշ աբան), Քնարիկ Սիմոնյանը** և ուրիշներ: Ջոկատը մասնակից դարձավ այն նշանավոր իրադարձությանը, որը տեղի ունեցավ 1991 թվականի օգոստոսի 13-ին: Այդ օրը արցախցի կանանք ստիպված դիմեցին հանդուգն ու միաժամանակ վտանգավոր քայլի: Դրա պատճառը այն էր, որ ռուս զինվորականները պատանդ էին վերցրել Հաթերքի բնակիչ Ժորա Պետրոսյանին՝ ադրբեջանցի օմոնականներին հանձնելու նպատակով, ինչպես նաև նախօրեին մերձակա գյուղերում ռուս զորաջոկատների և ադրբեջանցի ավազակախմբերի կողմից իրականացվել էին ամեն տեսակի վայրագություններ: Այդ նպատակով հաթերքցիների «Փառանձեմ» ջոկատը տեղի ինքնապաշտպան ուժերի հետ միասին օգոստոսի 13-ի գիշերը գերի վերցրեց 43 հոգուց բաղկացած խորհրդային մի զորաջոկատ՝ ռազմամթերքով և ռազմական մեքենաներով[1252]: Գերված զինվորները երևի թե սովոր չէին զայրույթից առյուծ կտրած կանանց դիմակայելուն, հանձնվել էին առանց դիմադրության: Ջոկատը, որի մասնակիցներն էին գյուղի բնակիչները, այդ թվում՝ **Ռոմելա Մակյանը, Զոյա Իսկանդարյանը, Հասմիկ Հարությունյանը, Եդիլյա Հայրապետյանը, Զոյա Մարտիրոսյանը, Ռոզա Բալումյանը, Վերա Պետրոսյանը**, կարողացավ կարճ ժամանակում համախմբել ամբողջ գյուղը և թույլ չտալ ձերբակալել հաթերքցի տղամարդկանց[1253]: Ռուս զինվորականների զենքի ու զինամթերքի հանձնումը կատարվեց առանց դիմադրության: Այդ օրը հաթերքցիները պատանդ վերցրին 32 ռուս զինվորների նրանց հրամա-

---

[1252] **Արշակյան Ա.,** նշվ. աշխ., էջ 165:
[1253] «Республика Армения», Ереван, 29.09.1991.

նատարների հետ միասին: Պատանդներին Վերին Հոռաթաղի ջոկատի կողմից գերված 12 զինվորների հետ (ընդամենը 44 հոգի) տեղափոխեցին «Մեսիս» անվամբ տեղամասի անտառ[1254]: Որոշվեց նրանց ազատ չարձակել, մինչև չազատեն Ժ. Պետրոսյանին և Շուշիի բանտի 15 հայ բանտարկյալներին:

Հաթերքում տեղի ունեցածի մասին օգոստոսի 14-ին հաղորդվեց աշխարհի բազմաթիվ լրատվամիջոցներով: Ղարաբաղ շտապեցին մի քանի ռուս գեներալներ, գնդապետ Վիլեն Մարտիրոսյանը և Հայաստանի պաշտպանության կոմիտեի նախագահ Վազգեն Սարգսյանը[1255]:

Հաթերք ժամանեցին մեծ թվով ռուս զինվորականներ և հրամանատարությունը որոշեց սկզբում պատժել հաթերքցիներին՝ հանձնառնելով գյուղը ոչնչացնել, այնուհետև ազատել պատանդներին: Այդ նպատակով գյուղը շրջափակվեց 600 զինվորներով, հարյուրավոր զրահատեխնիկայով: Սակայն ոչ մի սպառնալիք արդյունք չտվեց: Գյուղում ստեղծված օրհասական վիճակը ստիպեց կանանց համապատասխան քայլեր ձեռնարկել:

Օգոստոսի 15-ին Հաթերքի «Փառանձեմ» ջոկատի մարտիկ կանայք (**Քնարիկ Սիմոնյան, Թամարա Պետրոսյան, Էլեոնորա Առստամյան**), հեռագիր ուղղելով Մ. Գորբաչովին և Բ. Ելցինին, Զինվորների մայրերի կոմիտեին հայտնեցին, որ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի մի խումբ կանայք ստիպված են եղել դիմել ծայրահեղ միջոցի՝ պատանդ վերցնել ավելի քան 30 զինվորի և սպաների ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերից: Ադրբեջանական օմոնի բանդաները ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի օգնությամբ երկար ժամանակ պատանդ էին վերցրել հայերին, հանձնել ադրբեջանցիների տնօրինությանը: Այսպես՝ վերջին երեք ամսվա ընթացքում օմօնականները ներքին զորքերի աջակցությամբ բռնագաղթեցրել էին հայկական տասնյակ գյուղերի բնակիչների, կալանքի տակ առել 500 մարդու: Ժողովրդի համբերության բաժա-

---

[1254] «Республика Армения», Ереван, 29.09.1991.
[1255] **Արշակյան Ա.,** նշվ. աշխ., էջ 165:

կը լցվել էր: Արդյունքում պատանդ էին դարձել նրանք, ովքեր բռնության գործիք էին օմօնականների ձեռքին[1256]:

Արցախի մայրերը մեկ պայման էին դնում՝ վերադարձնել իրենց զավակներին, որոնք գտնվում էին ադրբեջանական կալանատներում՝ խոստանալով, որ մի մազ անգամ չի պակասի խորհրդային զինվորից, որը զենք է դարձել ադրբեջանական ղեկավարության հակահայկական անմարդկային քաղաքականության համար[1257]:

Հիշարժան իրադարձությունների մասին տասնյակ հոդվածներ տպագրվեցին կենտրոնական «Պրավդա», «Իզվեստիա», «Կոմսոմոլսկայա պրավդա», «Կոմերսանտ», «Մոսկովսկայա պրավդա» թերթերում: Այդ օրերին հաղորդումներ եղան նաև ռադիոյով և հեռուստատեսությամբ: Օգոստոսի 16-ին Երևանի Ազատության հրապարակում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքը պաշտպանեց հաթերքցիների այդ խիզախ ձեռնարկումը:

Հաթերքում պատանդ վերցված ռուս զինվորներին ազատ արձակելու համար օգոստոսի 18-ին բանակցություններ վարելու նպատակով Հաթերք ժամանեցին Մոսկվայից բարձրաստիճան պաշտոնյաներ, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ, գնդապետ Ն. Սիմոնովը զինվորների մի խումբ մայրերի հետ, կանանց խորհրդի անդամներ, լրագրողներ, ինչպես նաև Երևանի և Ստեփանակերտի ներկայացուցիչներ[1258]: Մինչ բանակցությունների սկսելը Հաթերքում կազմակերպվեց հանրահավաք՝ թվով 600-700 մարդու մասնակցությամբ: Նրանցից շատերը ելույթ ունեցան և իրենց բողոքները ուղղեցին Կենտրոնից ժամանածներին: Հանրահավաքում խոսվեց շարժման պատճառների, նպատակների և ռուս զինվորների ու Ադրբեջանի ՆԳՆ օմօնական ջոկատների իրականացրած բռնությունների մասին: Իր ելույթում ուսուցչուհի, ազգությամբ ռուս Թամարա Պետրոսյանը մասնավորապես

[1256] «Голос Армении», 17 августа, Ереван, 1991, **Արշակյան Ա.,** նշվ. աշխ., էջ 166:
[1257] Տե՛ս նույն տեղում:
[1258] **Արշակյան Ա.,** նշվ. աշխ., էջ 166:

ասաց[1259]. «...Երեխաներին դաստիարակում ենք եղբայրության ու բարեկամության ոգով, մինչդեռ իմ ռուս եղբայրները բռնություններ են գործում ինչպես մեր գյուղում, այնպես էլ ամբողջ Ղարաբաղում, ուր հայերի հետ համերաշխ ապրում են նաև ռուսներ: Ժողովրդի ծոցից ծնված զինվորները պետք է պաշտպանեն իրենց ծնող ժողովրդին և ոչ թե բռնություն գործեն նրանց նկատմամբ: Ես նրանց՝ իմ ռուս եղբայր զինվորների փոխարեն ամաչում եմ: Եկեք այնպես անենք, որ մենք ամոթով չմնանք հայերի մոտ, միևնույն է՝ Ղարաբաղը անկախ կլինի: Շատ եմ խնդրում՝ տարեք նրանց այստեղից[1260]»:

Գեներալ Ստարիկովը հայտնում էր, որ Վ. Պոլյանիչկոն պահանջել է բանակը գործադրել Հաթերքի դեմ և ազատել պատանդ զինվորների: Ն. Սիմոնովը այդ մասին հեռագրով հայտնում էր Բ. Ելցինին և Վ. Յանաևին: Ի վերջո նրանք ստիպված էին համաձայնել «Փառանձեմի» առաջարկած պայմաններին և կատարել պատանդների փոխանակում[1261]: Փախստական բնակչության հետ հանդիպումից և հավաքից հետո ինքնապաշտպանական ջոկատի պատվիրակության հետ բանակցությունների արդյունքում զինվորները ազատ արձակվեցին: Պատվիրակության կազմում էին նաև Զինծառայողների ծնողների միութենական խորհրդի անդամ **Ելենա Լունինան**, գրող **Ինեսա Բուրկովան**: Ծանոթանալով գործին՝ նրանք իրենց պարտքը համարեցին յուրաքանչյուրն իր գծով Կենտրոնին հաղորդել ճշմարիտ, սպառիչ տեղեկություններ և պահանջել, որպեսզի քայլեր ձեռնարկվեն արցախահայության դեմ կատարվող բարբարոսություններին վերջ տալու համար[1262]:

Հայտնի է որ, Հաթերքի իրադարձությունների օրերին Թալինի շրջանի Ներքին Սասնաշեն գյուղի կանայք գլխաշոր ուղարկեցին

[1259] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 94:
[1260] Տե՛ս նույն տեղում, էջ 95:
[1261] **Արշակյան Ա.,** նշվ. աշխ., էջ 166:
[1262] «Голос Армении», 22 августа, Ереван, 1991.

«Փառանձեմ» ջոկատին հետևյալ մակագրությամբ. «Ընդունեք ձեռագործ այս շալը և խնդրում ենք տալ այն ֆիդայուհուն, որը կռվել գիտի սասունցիաբար»[1263]:

Անհրաժեշտ է նշել, որ օգոստոսի 13-ի դեպքերը լավ դաս եղան ռուս զինվորների համար: ԽՍՀՄ պատմության մեջ առաջին աննախադեպ երևույթն էր, այն էլ՝ կանանց մասնակցությամբ, որն իր վրա բևեռեց ողջ երկրի ուշադրությունը: Հակառակորդը համոզվեց, որ գործ ունի մի անընկճելի կամքի տեր, անարդարությունն ու բռնությունը չհանդուրժող ժողովրդի հետ: Արժի հիշատակել նաև այս դեպքերին հաջորդած ևս մի իրադարձություն, որը տեղի ունեցավ նույն Հաթերք գյուղում՝ նորից կանանց մասնակցությամբ:

Օգոստոսի 28-ին «անձնագրային ստուգման» պատրվակով օմոնականները մտան Հաթերք և սկսեցին խուզարկել բնակարաններն ու կազմակերպել թալանը: Գյուղից դուրս գալու ժամանակ կանայք շրջապատեցին նրանց քարերով, փայտերով, ով ինչով կարող էր, և հերթական դասը տվեցին[1264]:

Նշված հիշարժան դեպքերից հետո «Փառանձեմի» շատ կանայք շարունակեցին հայրենիքի պաշտպանության գործը՝ մասնակցելով Արցախյան պատերազմի մի շարք ռազմական գործողություններին:

1991 թվականի աշնանը անօրինակությունները հակառակորդի կողմից շարունակվեցին, և հակամարտությունը սկսեց օրեցօր ավելի սուր բնույթ կրել:

Փաստորեն՝ 1991 թվականի մայիսին Ադրբեջանի կողմից հրահրվեց ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ:

1991 թվականի հուլիսին ստեղծվեցին ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե և ինքնապաշտպանական ուժերի շտաբ: Մարզի բոլոր շրջաններում կազմակերպվեցին զինված ջոկատներ, որոնք հետագայում համախմբվեցին մեկ միասնական հրամանատարության

[1263] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 96:
[1264] Տե՛ս նույն տեղում:

ներքո: Հայ կանայք ևս ընդգրկվեցին այդ ջոկատների կազմում:

Երբ ակնհայտ դարձավ ԽՍՀՄ փլուզման անխուսափելիությունը, 1991 թվականի օգոստոսի 30-ին Բաքվում հրավիրված Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց Ադրբեջանական Հանրապետության անկախության վերականգնման մասին հռչակագիր[1265]: Դա նշանակում էր, որ Ադրբեջանը դուրս էր գալիս ԽՍՀՄ կազմից՝ նպատակ ունենալով իր հետ տանել նաև Լեռնային Ղարաբաղը: Հռչակագրում ասված էր, որ Ադրբեջանի Հանրապետությունը ընդգրկված է լինելու 1918-1920 թվականների մուսավաթական Ադրբեջանի Հանրապետության սահմաններում: Փաստորեն՝ Բաքուն հրաժարվում էր Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց: Դա նշանակում էր, որ նրա կազմում չէին կարող լինել ո՛չ Նախիջևանը, ո՛չ Լեռնային Ղարաբաղը: Ուստի անհրաժեշտ էր շտապել և ձեռքից բաց չթողնել պատմական պահը, հատկապես որ 1990 թվականի ապրիլի 3-ից գործող «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին»[1266] ԽՍՀՄ օրենքով Խորհրդային Միությունից դուրս եկող հանրապետության սահմանների մեջ գտնվող ինքնավար հանրապետություններին ու ինքնավար կազմավորումներին և տվյալ տարածքում բնակչության մեծամասնությունը կազմող համահավաք բնակվող ազգային խմբերին իրավունք էր տրվում ինքնուրույնաբար վճռելու իրենց պետական-իրավական կարգավիճակի խնդիրը: Ուստի այդ օրենքը Լեռնային Ղարաբաղի հայությանը թույլ էր տալիս օրինական ճանապարհով բաժանվել Ադրբեջանից և դառնալ սեփական ճակատագրի տերը, մանավանդ որ 1918-1920 թվականներին Ղարաբաղը երբեք այդ պետության մաս չէր կազմել:

Բացի այդ՝ 1991 թվականի հոկտեմբերի 18–ի Անկախության մասին սահմանադրական ակտով Ադրբեջանը անվավեր ճանաչեց իրեն

[1265] НКР, История и современность, Степанакерт, 1998, с. 9.

[1266] **Золян С.,** Нагорный Карабах: Проблема и конфликт, Ереван, 2001, с. 111.

վերաբերող, Սովետական Միության գոյության ժամանակ ընդունված ակտերը: Դրանով իսկ Ադրբեջանը անվավեր ճանաչեց նաև բոլոր ակտերը, որոնք վերաբերում էին Լեռնային Ղարաբաղին:

Առաջնորդվելով ԽՍՀՄ սահմանադրությամբ և նշված օրենքով՝ 1991 թվականի սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային, բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ համատեղ նստաշրջանը: Նստաշրջանին մասնակցում էին մարզային խորհրդի 147 պատգամավորներից 102-ը, բացակայում՝ 45-ը: Ներկա էին նաև ԽՍՀՄ և ՀՀ 90 պատգամավորներ, քաղաքային և շրջանային խորհուրդների պատգամավորներ, մարզի տարբեր բաժինների վարիչներ, ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավարներ: Նստաշրջանը հիմնականում քննարկեց հանրապետության հռչակման մասին հարցը[1267]:

Նստաշրջանում բոլոր ելույթ ունեցողները պաշտպանեցին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը հանրապետության հռչակելու առաջարկությունը: Նրանց թվում էին Տատյանա Սոբոլևան և Լիդիա Սարգսյանը: Վերջինս մասնավորապես նշեց. «Այստեղ պատգամավորները ճիշտ ասացին, որ մեզ անընդհատ ներկայացնում էին սահմանադրական պահանջներ: Այժմ մենք ենք ներկայացնելու... Պետք է ԼՂԻՄ-ի անունից խնդրենք Ժողպատգամավորների համագումարին՝ որոշել մեր կարգավիճակը... Իսկ մենք ուզում ենք լինել ինքնուրույն...»[1268]:

Ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» որոշումը: Նախկին ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի տարածքում հռչակվեց անկախ հայկական պետություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ)[1269]: Նրա տարածքում մինչև

[1267] «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, Երևան, 1991:
[1268] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 101:
[1269] **Բաղրյան Վ.,** Տեսադաշտ, 1988-1994, Ստեփանակերտ, 2013, էջ 85-87:

ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը գործելու էին ԽՍՀՄ Սահմանադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև նշյալ «Հռչակագրի» նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին չհակասող մյուս գործող օրենքները:

Փաստորեն՝ Ադրբեջանի անկախության հռչակումից հետո ԼՂԻՄ-ը՝ որպես ինքնավար կազմավորում, և Շահումյանի շրջանը՝ իբրև ազգային փոքրամասնությամբ համահավաք բնակեցված տարածք, մինչև ԽՍՀՄ իրավաբանական գոյության ավարտը իրականացրին իրենց պետաիրավական կարգավիճակների որոշմանը նպատակաուղղված, Խորհրդային Միության գործող օրենսդրությամբ սահմանված իրավական քայլեր: Հետևաբար Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ԽՍՀՄ օրենսդրության շրջանակներում զուրկ են իրավական հիմքերից:

Միջազգային իրավունքի տեսանկյունից ևս նման հիմքեր գոյություն չունեն, քանի որ Ադրբեջանը, անկախություն հռչակելով, իրեն հայտարարել է 1918-1920 թվականներին գոյություն ունեցած Ադրբեջանական Հանրապետության իրավահաջորդը, որը չի ճանաչվել Ազգերի լիգայի կողմից այդ հանրապետության մեջ մտնող տարածքների հստակ սահմանների որոշման դժվարության պատճառով:

Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ զուրկ են նաև պատմական հիմքերից, քանի որ վերջինս անկախ Ադրբեջանի մաս երբևէ չի եղել:

Տասնամյակներ շարունակ ազգերի ինքնորոշման իրավունքից օգտվելու՝ արցախահայության բոլոր խաղաղ նախաձեռնություններին ի պատասխան՝ Ադրբեջանը կիրառել է բռնություններ, ոտնահարել հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Ուստի Ադրբեջանի հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ չունեն նաև բարոյական հիմքեր:

Այսպիսով՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշումը իրականացվում է մի տարածքի վրա, որի նկատմամբ Ադրբեջանն իրավա-

կան, պատմական և բարոյական հավակնություններ ունենալ չի կարող: Սակայն Ադրբեջանը ոչ մի կերպ չի ցանկանում ընդունել այս իրողությունը: Ուստի պատահական չէր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից անմիջապես հետո Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում, որով տեղի ունեցածը համարեց դավադրություն Ադրբեջանի ամբողջականության ու անկախության դեմ և հանրապետության ուժային գերատեսչություններին հանձնարարեց խափանել այդ «Հռչակագրի» իրականացման ցանկացած փորձ՝ պատասխանատվության ենթարկելով դրա հեղինակներին[1270]: Միաժամանակ Հանրապետական կազմկոմիտեին հանձնարարվեց լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել ԼՂԻՄ-ի բնակչության զինաթափումն արագացնելու ուղղությամբ: Սակայն այս հանձնարարականները գործնականում անհնար էր իրականացնել, քանի որ մարզի մեծ մասը, գտնվելով հայկական ուժերի վերահսկողության ներքո, անհասանելի էր Ադրբեջանի պաշտոնական անձանց: Ուստի Ադրբեջանը սաստկացրեց ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում:

1991 թվականի նոյեմբերի 26-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը ընդունեց որոշում լուծարման մասին:

1991 թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որը հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Այդ օրը, չնայած պատերազմական դժվարին վիճակին, ԼՂՀ-ի բնակչության ձայնի իրավունք ունեցողների 82 %-ը մասնակցեց հանրաքվեին, իսկ քվեարկողների 99,8 %-ը քվեարկեց անկախության օգտին[1271]:

ԼՂՀ անկախության հանրաքվեին ներկա գտնվելու համար աշխարհի մի շարք երկրներից Արցախ ժամանեցին 40 անկախ դիտորդներ, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ

[1270] **Հակոբյան Տ.,** ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.), Երևան, 2011, էջ 21:

[1271] **Մինասյան Է.,** Հայաստանի երրորդ հանրապետություն, Երևան, 2013, էջ 149:

Քերոլայն Քոքսը: Դիտորդներն արձանագրեցին, որ ԼՂՀ-ում անկախության հանրաքվեն անցել է միջազգային բոլոր նորմերին համապատասխան, և ոչ մի խախտում չի արձանագրվել: Նրանք հատուկ դիմում հղեցին մի շարք երկրների խորհրդարաններին, որտեղ նշվում էր, որ ադրբեջանական կողմը ամեն կերպ փորձել է խոչընդոտել հանրաքվեի անցկացմանը: Այդպես էլ հանրապետության տարածքում ապրող ադրբեջանցիները հանրաքվեին չմասնակցեցին[1272]:

1991 թվականի դեկտեմբերի 28-ին կայացան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) պատգամավորների ընտրություններ, որոնց ադրբեջանցիները չմասնակցեցին ղեկավարության հրահանգով: 1992 թվականին հունվարի 6-ին կայացավ հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, որն ընդունեց «ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը»[1273]:

Ք. Քոքսը մասնակցեց նաև 1992 թվականի հունվարի 6-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի անդրանիկ նիստին: Նրա հետ էին տարբեր երկրներից 10 դիտորդներ, ինչպես նաև Ռուսաստանի մի խումբ խորհրդարանականներ և լրագրողներ: Բարոնուհին, նստաշրջանում ելույթ ունենալով, դատապարտեց ադրբեջանական իշխանությունների կողմից արցախահայության դեմ կազմակերպված վայրագությունները:

Հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանը: Փաստորեն՝ ԼՂՀ գերագույն խորհուրդը ձևավորվեց Ադրբեջանի պարտադրած պատերազմում: Ստեղծվեց ԼՂՀ նախարարների խորհուրդ՝ Օլեգ Եսայանի վարչապետությամբ[1274]: Նորանկախ հանրապետության սահմաններում գործելու էին ԼՂՀ Սահմանադրությունն ու օրենքները:

[1272] Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս-1992 թ. հունվար) փաստաթղթեր, Երևան, 2011, էջ 178-181:
[1273] **Մինասյան Է.,** նշվ. աշխ., էջ 149:
[1274] Տե՛ս նույն տեղում, էջ 149:

1992 թվականի հունիսի 2-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հաստատեց պետական դրոշը, իսկ նոյեմբերի 17-ին՝ երկրի զինանշանն ու օրհներգը: ԼՂՀ դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն՝ սպիտակ գույնի հնգատամ սանդղանման զարդանախշով, որի աջ փոքրիկ հատվածը անջատված է դրոշի հիմնական մասից, ինչը խորհրդանշում է Արցախի և՛ այսօրվա կացությունը, և՛ նրա ապագան: Աստիճանաբար կազմավորվեց դատական համակարգը՝ Հայաստանի Հանրապետության օրինակով: Մարտերի բովում կազմավորվեց ԼՂՀ բանակը, որն ազատագրական պայքարում իրեն պսակեց հաղթանակների փառքով: Առաջնային համարվեց Ղարաբաղյան հակամարտության գոտում խաղաղ բանակցությունների գործընթացը: Վերջինս դարձավ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) քննարկման առարկա: Բայց Ադրբեջանի իշխանությունները մերժում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական մեթոդներով կարգավորմանն ուղղված ամեն մի առաջարկ՝ առաջ քաշելով Արցախը կրկին իրենց ենթարկելու անիրական պահանջներ: Ավելին՝ Թուրքիայի հովանավորությամբ ու աջակցությամբ ադրբեջանցիներն իրենց ռազմական բազաներից սկսեցին անընդհատ ռմբակոծել Արցախի բնակավայրերը: Խոջալուից, Շուշիից և Աղդամից ամեն օր ռմբակոծվում էր Ստեփանակերտը՝ պատճառելով ավերածություններ և մարդկային բազում զոհեր: Համապարփակ շրջափակումն ու շուրջօրյա հրետակոծություններն ավերում ու կաթվածահար էին անում Արցախի տնտեսությունը: Առանց հակառակորդի ռազմական հենակետերի ու կրակակետերի վերացման՝ հնարավոր չէր ապահովել բնակչության անվտանգությունը: Հենց դրան էլ ձեռնամուխ եղան հայ ինքնապաշտպանական ուժերը, որոնց շարքերում էին բազմաթիվ հերոս հայուհիներ: Չնայած հակառակորդի ճնշումներին՝ հայ կանայք հերոսաբար դիմակայեցին թշնամու բոլոր մարտահրավերներին և իրենց տեղն ու դերն ունեցան ոչ միայն ազատամարտի ռազմաճակատներում սխրագործություններ կատարելու, այլև ԼՂՀ կազմավորմանն ակտիվորեն մասնակցելու գործընթացում:

Բ. ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (1991-1994)

Հաճախ վիրավոր, բայց միայն հոգեպես անպարտելի նման ժողովուրդներն են հաջողության հասնում պատմության մեջ... Չեն հուսահատվում ժողովուրդները, որովհետև մարդկության ընտանիքի բոլոր անդամները, բացի մեր մտավորականության որոշ մասից, գիտեն, որ մեկի հայրենի հողը չի կարող մյուսի համար մնայուն հայրենիք դառնալ, որ դա հավիտենական արդարության օրենքի ուժով վաղ թե ուշ վերադարձվում է իր տերերին, եթե այդ վերջինների մեջ չի նվազել սերը դեպ հարազատ երկրամասը:

Իսկ սեր ու նվիրում դեպի հայրենիքը, ներշնչում ու սնուցում է հայրենասեր մայրը: Հայ կինն ավելի հերոսուհի, քան թախծության մայր պիտի լինի: Նրա շրթունքներից պիտի չպակասեն ժաննադարկյան բառերն ուղղված մեր սերունդներին. «Եթե հոգնած եք, դադար առեք, բայց մի՛ լքեք կռվադաշտը, մի՛ դասալիքեք»:

Գարեգին Նժդեհ[1275]

ԼՂՀ ստեղծումով արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց նոր փուլ: ԼՂՀ անկախության ճանապարհին իրականացվեցին իրավաքաղաքական, ռազմական ու դիվանագիտական գործողությունները, որոնք ամրապնդեցին նորանկախ պետականությունը: 1991 թվականի դեկտեմբերից Ադբեջանը բացահայտ զինված հարձակում սկսեց Լեռնային Ղարաբաղի հանրապետության դեմ՝ տարածքներ զավթելու և հայ ազգաբնակչությունը բռնի տեղահանելու նպատակով: Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ընթացքում ծավալվող ռազմական գործողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջաններում և Արցախի

[1275] **Նժդեհ Գ.**, Ընտիր երկեր, էջ 101-102:

Հանրապետությունում միաժամանակ ստեղծվեց պաշտպանական համակարգ: Մարտական գործողություններին զուգահեռ սկսեցին կազմավորվել ՀՀ զինված ուժերն ու ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը, որոնք վերածվեցին պաշտպանական բանակի:

1991 թվականի վերջերին և 1992 թվականի սկզբներին ԼՂՀ տարածքում կազմավորվեցին 10-ից ավելի վաշտեր ու դասակներ[1276], ինչը հնարավորություն տվեց առավել կազմակերպված իրականացնելու Արցախի ինքնապաշտպանական մարտերը: Այդ մարտերին միացան հարյուրավոր կին կամավորականներ, որոնք, մասնակցելով մարտական գործողություններին տղամարդ զինվորների հետ կիեցին պատերազմի բոլոր դժվարությունները:

Դեռևս 1988-ի, 1989-ի հանրահավաքների ժամանակ կամավորական ջոկատներին զինվորագրվելու և ճակատ մեկնելու կոչերին արձագանքում էին նաև կանայք՝ համարելով, որ այդ ճակատագրական պահին իրենք ևս պարտավոր են կատարել իրենց պարտքը հայրենիքի առջև: Ամենազարմանալին այն է, որ նրանց մեջ քիչ չէին երիտասարդ մայրերը, որոնք մահվան վտանգի էին գնում՝ տանը թողնելով երկու երեք երեխաներ: Թերևս գործում էր նաև այն հոգեբանությունը, թե լավ է իրենց այրերի կողքին լինել, նրանց հետ միասին նայել մահվան աչքերին, օգնել նրանց, դուրս բերել վիրավորներին մահվան օղակից, դարմանել, քան թե թիկունքում մնալ մշտական սպասումի ու տանգնապի մեջ: **Աղավնի Տեր-Ստեփանյանի**՝ ծնողներին գրած վերջին նամակում այսպիսի սրտառուչ տողեր կան, որոնց տակ, թերևս, կստորագրեին բոլոր ազատամարտիկ կանայք[1277].

…Անկարող եմ ես չկռվել,
Երբ տեսնում եմ կռվողներին,
Անկարող եմ հանգիստ նստել,
Նայել լացող մեր մայրերին…

[1276] **Հարությունյան Ա.,** Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001, էջ 27:
[1277] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, էջ 18:

Դրա համար պետք է կռվեմ՝
Թեկուզ մարտում ինքս էլ ընկնեմ...[1278]*:*

Սրանք պարզապես ոգևորության պահին արտասանված տողեր չեն: Աղավնին պատրաստ էր կյանքը զոհաբերել հանուն հայրենիքի, ու երբ անհրաժեշտ եղավ, այդ արեց առանց երկմտելու և քաջաբար:

Ա. Տեր-Ստեփանյանը ծնվել է 1966 թվականի հունիսին Երևանում, զոհվել է 1992 թվականի հուլիսի 29-ին Ամիավան 6-ում՝ Քաշաթաղի (Լաչին) շրջանի Հոչազ գյուղում: Ա. Տեր-Հարությունանը զինվորագրվել է Արցախյան ազատամարտին՝ հերոսանալով ցուցաբերած սխրագործությամբ. «Անկարող եմ ես չկռվել» արտահայտությունը նշանաբան ընտրելով:

Արտաշատի թատրոնի դերասան Հովհաննես Փանոսյանը և Ռուբեն Կիրակոսյանը ջոկատ էին հավաքում՝ Ամիավան գնալու համար, Աղավնին զգացել էր, որ ներսում մի լույս է վառվել. ինքը պետք է գնար տղաների հետ:

Տղաները շատ համոզել էին, որ հրաժարվի, բայց Աղավնին համառել էր: Մեկնելու օրը նա ներկայացել էր գեղեցիկ զինվորական համազգեստով և ջոկատի հետ մեկնել որպես բուժքույր: Իր բնավորության մեղմությամբ և հոգատարությամբ կարճ ժամանակում դարձել էր ջոկատի քույրը: Աղավնին ամեն օր խնդրում էր հրամանատարին, համոզում, որ իր տեղը պահակետում է և ոչ թե շտաբում: Այստեղ էլ հասավ նպատակին. իր համար ծանր զենքը կախում էր ուսից ու գնում ծառայության[1279]:

«Արդեն երկրորդ ամիսն էր լրանում, ինչ Ամիավաններում էին: Փախստականներ էին գալիս: Գյուղերը շնչում էին կենդանությամբ: Խաղաղ էր հուլիսի 29-ը: Զինվորների մի մասը գիշերային հերթապահությունից հետո քնած էր: Այդ օրը պետք է իրենց փոխեին, ուղարկեին՝ հանգստանալու: Լսվեց պայմանական նշանը՝ երեք կրակոց:

[1278] **Վարդումյան Հ.,** Կին ազատամարտիկները, Երևան, 2009, էջ 47:
[1279] Տե՛ս նույն տեղում, էջ 47:

Եկել էր հրամանատար Ռոդենը, պահանջում էր հավաքել գյուղի ծայրի բլրակի մոտ, որտեղ ջոկատի պահակետը և դիտակետն էր: Աղավնին ջոկատի մի քանի տղաների հետ շտապեց այնտեղ: Բոլորն արդեն հավաքվում էին պահակակետի բլրակի ստորոտում, երբ որոտացին համազարկերը: Թշնամին անցել էր հարձակման: Ուղիղ նշանառությամբ վերացրին ջոկատի միակ հարմար դիրքում տեղադրված պահակետն ու գրոհեցին: Աղավնին անմիջապես պառկեց մոտակա ցանկապատի հետևում: Տղաները նույնպես դիրքավորվեցին: Չէին կարողանում նույնիսկ գլուխները բարձրացնել, որ կողմնորոշվեն: Աղավնին, տեսնելով դիմացից վազող հակառակորդին, ակնթարթորեն դատարկեց միակ պահունակը, մնացել առանց փամփուշտի: Ապա խուճապն ավելի սաստկացավ, երբ զգաց, որ անզեն է թշնամու դեմ:

–Տղե՛րք…,– կանչեց իր զրնգուն ձայնով ու ցանկանում էր ոտքի կանգնել, երբ տղաներից մեկը քաշեց, գետնին սեղմեց և մեկնեց լիքը պահունակը:

–Աղուն ջան,– ասաց Արթուր Գրիգորյանը,– հատ-հատ կրակիր և աշխատիր նշան բռնել նոր…,– ապա գոռաց ականջի մոտ,– ես քեզ պաշտպանում եմ. ետ քաշվիր մինչև մոշի թփերը. այնտեղ ապահով է:

Աղունը սկսեց ետ սողալ: Երբ հասնում էր մոշի թփերին, նռնականետով խփեցին քիչ առաջվա իր պառկած տեղին: Սարսափով ետ նայեց: Իր փրկիչը գալարվում էր արյան լճակի մեջ[1280]:

–Շներ,– գոռաց սեղմած ատամների արանքից,– շնե՛ր…,– ապա հարմար դիրքավորվելով մոշի թփերի ետևում եղած քարակույտում՝ նայեց առաջ՝ դեպի թշնամին, որն արդեն դիմադրության չհանդիպելով՝ գյուղից շարժվում էր ուղիղ իր վրա: Մի պահ հրաձգությունը կարծես դադարել էր: Կրակոցները գնալով հեռանում էին: Հասկացավ, որ ինքը մենակ է մնացել: Բայց վախը առաջին խուճապը հաղթահարելու հետ անցել էր:

[1280] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 46:

Ազերի զինվորները, աննպատակ կրակելով, մոտենում էին: Թողեց մոտենան, ինչքան հնարավոր է, ապա կրակահերթ տվեց: Մի քանիսը ընկան: Մնացածները ցրվեցին՝ հարմար դիրքեր գտնելու: Մի կրակահերթ էլ տվեց: Սկսեցին հայհոյել: Ապա մի ակնթարթում գնդակները հնձեցին մոշի թփերը: Կրակում էին նաև ձախ կողմի բլրից: Աղավնին ավելի սեղմվեց քարակույտների մեջ ու լռեց: Աղավնին սպասում էր: Եվ երբ համոզվեցին, որ բոլորը զոհվել են, ազերիները համարձակորեն սկսեցին առաջանալ: Երկար կրակահերթերով մի քանիսին նույնպես տապալեց գետնին: Ողջ կրակը կենտրոնացրին Աղավնու վրա: Ձախ կողմի բլրից սկսեցին խփել գնդացրով: Ապա մի նռնականետ բերեցին: Աղավնին ուշադիր հետևում էր: Նռնակն ընկավ կողքին: Ոտքից վիրավորեց: Մի պահ բարձրացավ, ձեռքը տարավ ոտքին՝ զսպելու այրող ցավը: Ու հենց այդ պահին, կարծես սուր դանակով ճղեցին թիկունքը»[1281]:

Ազերիները մի քանի ժամով գրավեցին գյուղը: Ընդամենը մի քանի ժամով: Նահանջը չվերածվեց խուճապի: Երեկոյան տղաները վերադարձան, թշնամուն փախուստի մատնեցին…:

Գյուղի սկզբին՝ պահակետի բլրի ստորոտում, հավաքված էին բոլոր դիակները՝ 18 հոգի, որոնց մեջ էր Աղավնի Հարությունյանի դին:

Երբ Անուշ Ավագյանի մայրը խնդրում է դստերը չգնալ ճակատ, իր ծեր տատի հույսին չթողնել երկու զավակներին, պատասխանում է. «Մայրիկ ջան, ամեն ընտանիքից մեկը պետք է գնա, մեր տան տղամարդն էլ ես եմ»: Ծանր վիրավորվելուց հետո, դեռ լրիվ չապաքինված, նա կրկին վերադառնում է վաշտ: Եվ երբ մարտական ընկերները փորձում են ետ պահել նրան, համոզում է. «Ես չեմ կարող հեռանալ, երբ դեռ նոր են սկսվելու ծանր կռիվները, դեռ Արցախն ազատագրված չէ»[1282]:

[1281] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 47:
[1282] Տե՛ս նույն տեղում, էջ 34:

«Անվեհեր հրամանատար» **Անուշ Ավագյանը** ծնվել է 1968 թվականի ապրիլին Ստեփանակերտում: Զոհվել է 1993 թվականի փետրվարի 7-ին Վաղուհաս գյուղի մոտ:

1991 թվականին գրանցվել է Կարո Բաբայանի հրամանատարությամբ գործող ջոկատի կազմում որպես մարտիկ-բուժքույր և անմիջապես մասնակցել է Մարտունու շրջանի Ղարադաղլու (Վարանդա) գյուղի համար մղվող մարտերին: Ծանր մարտեր արդյունքում վաշտը երեք վիրավոր է ունեցել: Անուշի համար առավել ծանր էր առաջին կռիվն էր: Եվ վիրավորներին վիրակապելիս արյան հոտից ու գույնից գլխապտույտ և սրտխառնոց է ունեցել: Բայց գերբնական լարումով տիրապետել է իրեն, հաղթահարել առաջին փորձությունը. վիրավորներին վիրակապել է և հանել մարտադաշտից:

Ա. Ավագյանը դարձավ իսկական զինվոր և կոփված բուժքույր՝ ամուր, զգացմունքներին տիրապետող, միևնույն ժամանակ գթասրտությամբ լեցուն: Առաջին փորձությունից հետո հարազատ վաշտի հետ փառավոր մարտական ուղի է անցել՝ Խոջալու, Շուշի, Լաչինի միջանցք, Բերդաձոր, Մարտակերտի շրջան, Ասկերանի շրջանի Նախիջևանիկ և Փիրջամալ գյուղերի ազատագրական մարտեր… Այստեղ էլ, ծնկից վիրավորվելով, տեղափոխվել է Ստեփանակերտի զինվորական հիվանդանոց: Վերքը ծանր էր, երկար է տևել ապաքինումը: Հրամանատարներն ու զինակից ընկերները հաճախ են այցելել նրան, հոգ տարել, որ արագ ապաքինվի ու միաժամանակ համոզել, որ չվերադառնա վաշտ, մնա տանը և փոքր երեխաներին խնամի[1283]: Սակայն Անուշը նորից վերադարձել էր: Վաշտն արդեն գումարտակ էր դարձել: «Անուշը դեռ կաղում էր, քայլում էր ձեռնափայտի օգնությամբ:

«–Այդ վիճակում ի՞նչ ես անելու,– ասաց շտաբի պետ Աշոտ Պետրոսյանը, որն իրենց մոտիկ հարևանն էր, և լավ գիտեր նրա տնտեսական վիճակը,– ավելի լավ չի՞ լինի՝ մնաս՝ փոքրիկներիդ մեծացնես:

[1283] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 47:

–Ինձ մարտական մեքենա տվեք,– համառեց Անուշը,– ոտքով քայլելու կարիք չի լինի»[1284]:

Ա. Ավագյանին նշանակեցին ԲՄՊ-ի անձնակազմի հրամանատար:

1992 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին նրանք մասնակցեցին Բերդաձորի ենթաշրջանի Եղծահող գյուղի համար մղվող մարտերին: Դեկտեմբերին մարտական մեքենան վերանորոգելով՝ տեղափոխվեցին Մարտակերտի շրջանի Կիչան գյուղի մոտակայքը: Իսկ 1993 թվականի հունվարի 15-ից, Շուշիի գումարտակի կազմում մասնակցելով հարձակողական գործողություններին, թուրքերին մեծ կորուստներ պատճառելով, ստիպեցին նահանջել դեպի հյուսիս-արևելք: Հունվարի վերջին նորից վերադարձան գումարտակ, անձնվիրաբար մասնակցեցին Զլդրան, Դրմբոն գյուղերի ազատագրմանը: Թշնամին գլխապատառ փախչում էր[1285]: Հայ զորականները, ոգևորված ռազմական հաջողություններից, հետապնդում էին թշնամուն:

1993 թվականի փետրվարի 4-ին գումարտակը տեղափոխվեց Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտակայքը և գրավելով ճանապարհին տեղակայված ամրություններն ու բարձունքները՝ հասավ Վաղուհաս գյուղի մատույցներին[1286]:

Փետրվարի 7-ին պետք է գրոհեին Վաղուհասի վրա: Նախօրեին արդեն գրավել էին բոլոր հարմար բարձունքները, ճշտել հարձակման ուղղությունները: Մարտական տեխնիկան, բլրի ետևում դարան մտած, սպասում էր հարձակման հրամանի: Հանկարծակի հրետակոծություն սկսվեց: Թշնամու արկն ընկավ մոտիկ կանգնած տանկի փողի վրա: Չհասցրին էլ թաքնվել: Պայթունին ամենամոտիկ կանգնածն Անուշն էր: Բեկորները խոցեցին նրան: Անմիջապես տեղափոխեցին դաշտային հոսպիտալ, բժիշկները ջանք չխնայեցին, բայց վերքերը ծանր

[1284] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 47:
[1285] Տե՛ս նույն տեղում, էջ 4:
[1286] Տե՛ս նույն տեղում, էջ 5:

էին, չհաջողվեց փրկել անվեհեր-հրամանատարին. նա հերոսացավ իր մարտական սխրագործությամբ:

Հերոսացան թե՛ այն կանայք, որոնք չվերադարձան, և թե՛ նրանք, ովքեր վերադարձան վերքերով ու թրծված հոգիներով: Նրանց մեծ մասը զոհվեց արկի բեկորներից՝ մարմնով պաշտպանելով ընկած, վիրավոր զինվորներին, մայրաբար պաշտպանելով նրանց: Չափազանց հատկանշական է ազատամարտիկ Մարգարիտա Թառանյանի օրագրում արված այս գրառումն իր մարտական ընկերուհու մասին. «Թամրազյան Անահիտը թաքուն կերակրում է թուրք գերուն: Ես զարմացած ու հիացած եմ նրա հոգու վեհությամբ. ընդամենը հինգ ամիս առաջ ամուսնուն կորցրած հայ կինը խնամում է թուրք վիրավորին»[1287]: Մինչդեռ Անահիտը ճակատ էր գնացել՝ զոհված ամուսնու վրեժը լուծելու նպատակով: Թերևս այսպես կարող են միայն կռվել կանայք՝ երբեք չկորցնելով մայրական բնազդը, թույլին կարեկցելու խիղճը: Եվ թերևս այդ չմեռնող խիղճն է այն զորավոր ուժը, որը վերածվում է ներումի ու իր լույսով ցրում պատերազմի խավարը: Այլապես մարդկության պատմությունը կվերածվեր պատերազմների անվերջանալի մղձավանջի, ու մոլորակը կդատապարտվեր ինքնաոչնչացման[1288]:

Անահիտն այն բուժքույրերից էր, որոնք հավասարապես նաև ազատամարտիկ էին: Անհրաժեշտության պահին, առանց հապաղելու՝ սանիտարական պայուսակը փոխարինում էր ավտոմատով ու տղամարդկանց հետ կողք կողքի կռվում թշնամու դեմ, չնայած իր նուրբ, աղջկական կառուցվածքին՝ կամքի մեծ ուժով հաղթահարում էր զինվորին մշտապես ուղեկցող զրկանքները:

Ժամանակն անցնում էր աննկատ: Գունդը, որի կազմում էին աղջիկները, իր մարտական ուղին էր անցնում՝ ազատագրելով Շուշիի շրջանը, ապա մյուս շրջանները: Ա. Թամրազյանը մասնակցել է գրեթե բոլոր մարտական գործողություններին և բազմաթիվ վիրավորների

[1287] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, էջ 94- 96:

[1288] Տե՛ս նույն տեղում:

կյանք փրկել, ցավոք, նաև դիակներ հանել կրակագծից, որը ոչ պակաս կարևոր ու ծանր աշխատանք էր:

Ա. Թամրազյանը մինչև վերջին օրը մնացել է իր սիրելի զինակիցների կողքին, վիրակապել է վերջին վիրավորին, և երբ եկել է խաղաղությունը, հասկացել է, որ ինքը բնածին գթության քույր է, որովհետև պատերազմը նրա մեջ բացահայտել է ափեափ լցված գթությունը:

Զինադադարից հետո Ա. Թամրազյանը ընդունվել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարան: Պատերազմը շատերի կյանքում մեծ ճշտումներ ու անսպասելի փոփոխություններ էր կատարել: Անահիտն էլ բացառություն չեղավ: Նա այժմ աշխատում է հատուկ հետախուզական գումարտակում որպես բժշկական ծառայության պետ[1289]:

Սակայն արդարացի է ասել, որ հերոսացան առհասարակ հայաստանյան ու ղարաբաղյան բոլոր կանայք: Արդարև, հերոսություն էր պարզապես այդպես անտրտունջ դիմակայել 1992-1994 թվականների զրկանքներին, այն ցուրտ ու մութ գիշերներին, հացի սրտմաշուկ հերթերին, ճակատից եկող հաղորդագրություններին, ռմբակոծություններին, ինչպես նաև նկուղներում ծննդաբերելու, պահպանելու և երեխաներին այնպես պահպանելու դժվարություններին, որ նրանցից գեթ մեկ մազ չպակասեր: Որքան էլ որ պատմությանը քաջատեղյակ լինես, առեղծված է մնում հայ կանանց այս տոկունությունը, որ թերևս դեռ շատ կզբաղեցնի Ղարաբաղյան հակամարտության ուսումնասիրությանը լծված մասնագետներին:

Արցախյան ազատամարտի առաջին օրերից սկսած՝ հայ կանայք ակտիվորեն մասնակցեցին ռազմական գործողություններին: **Նրանք առաջին հերթին աչքի ընկան Արցախի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան շրջանների պաշտպանական մարտերում:** Ըստ 1989 թվականին ԼՂՀՄ-ում անցկացված մարդահամարի՝ Մարտակերտի շրջանի ընդհանուր բնակչության թվի (46870 մարդ) 24167-ը կանայք

[1289] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, էջ 96:

էին[1290]: Նրանց մի մասը միացավ ազատամարտին, մնացածը, մնալով թիկունքում, իրենց ներդրումը ունեցավ ազատագրական մարտերում՝ անտրտունջ դիմակայելով 1992-1994 թվականների զրկանքներին:

Անհրաժեշտ է նշել, որ ռազմագործողությունների մասնակից կանանց հիմնական մասը առաջին գծում զբաղվում էր բուժօգնությամբ: Սակայն շատ հաճախ հայուհիները, օրհասական պահերին առաջին բուժօգնություն ցուցաբերելուց բացի, նաև զենք էին վերցնում և սահման պաշտպանում: Իսկ մարտի դաշտ մեկնող կանայք, զենքը ձեռքներին, որպես կամավոր-ազատամարտիկ, առաջին գծում մարտնչելուց բացի, մասնակցում էին մի շարք աշխատանքների՝ սկսած բուժօգնությունից, սննդի մատակարարումից ու պատրաստումից մինչև կազմակերպչական մի շարք այլ աշխատանքներ:

Երևանի սովետական շրջանի շրջկոմի երկրորդ քարտուղար Ռուդիկ Գևորգյանն իր հուշագրում գրում է. «Շրջանի պատվիրակությունը, մեկնելով Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջան, շրջագայեց սահմանամերձ գրեթե բոլոր գյուղերը: Տեսանք, որ շուրջօրյա հերթապահություն էր սահմանված այդ գյուղերում, որտեղ կանայք հերթապահում էին ցերեկային ժամերին: Սակայն նկատեցինք, որ բոլոր գյուղերում գիշերվա բոլոր ժամերին տղամարդկանց հետ հավասար հերթապահում էին նաև կանայք: Բոլորը զինված էին մեծ մահակներով: Տեղեկացանք, որ կացիններն ու եղանները կազմ ու պատրաստ էին դիմադրության համար: Գյուղերից երկուսում մենք լավ «պրծանք» կանանց ձեռքից: Մութ գիշեր էր, մեքենայի ձայնը և շրջապատի մոտ կանգնած կանանց հրամայական «կանգնի՛ր» բառը չլսեցինք: Տասնյակ կանայք, մահակներով զինված, հարձակվեցին մեր մեքենաների վրա, 1-1,5 մետր հեռավորության վրա մեքենաները արգելակեցին: Իսկ

[1290] Итоги всесоюзной переписи населения 1989 г. численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономной области, таблица 2, с. 17-18.

ինչպիսի ուրախություն, ոգևորություն, որ մայր Հայաստանը իրենց հետ է: Բոլորն էլ պատրաստ էին կռվելու»[1291]:

Հեղինակի վկայությունների համաձայն՝ նախքան լայնածավալ ռազմագործողություններ սկսելը Մարտակերտի շրջանի գյուղերում առկա ինքնապաշտպանական ուժերում մեծ թիվ էին կազմում կանայք: Ստեղծված կամավորական ջոկատներին անհրաժեշտ էր զենք և զինամթերք մատակարարել: Ուստի Մարտակերտի կամավորական ուժերը՝ Վլադիմիր Բալայանի և Լեոնիդ Ազգալդյանի գլխավորությամբ, դիմեցին բոլոր մարտակերտցիներին՝ դրամահավաք կազմակերպելու նպատակով: Մարդիկ «սև օրվա» համար պահած իրենց վերջին գումարները որոշեցին հանձնել կամավորական ջոկատներին այն համոզմամբ, որ միայն զենքով հնարավոր կլինի Արցախի փրկությունը: Դրամահավաքին մասնակից կանանց թվում էր **Արևհատ Օհանջանյանը:** Վերջինս ոչ միայն դրամական միջոցներ, այլև մեծ քանակությամբ ոսկյա զարդեր տրամադրեց Մարտակերտի ինքնապաշտպանական ջոկատին: ԼՂՀ զոհված ազատամարտիկների թանգարանում գտնվող, Արևհատ Օհանջանյանին տրված տեղեկանքում կարդում ենք. «Տրվում է Մարտակերտ քաղաքի բնակչուհի Արևհատ Շամիրի Օհանջանյանին, որ նա իսկապես իր ոսկյա զարդերը և իրերը (շղթա, ականջողեր, ժանացույց, մատանիներ, ոսկյա դրամներ) նվիրել է Արցախի ազատագրական բանակին (հրամանատար՝ Վլադիմիր Բալայան) և այդ միջոցներով ձեռք է բերել մեկ «ԲՄՊ-1» զրահամեքենա: ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի Մարտակերտի շրջանի լիազոր ներկայացուցիչ՝ Ա. Աբրահամյան»[1292]:

1992 թվականի փետրվարի կեսերին լայնամասշտաբ նոր հարձակում սկսվեց Հյուսիսային Արցախի վրա: Հարձակվելով դեպի Մանաշիդ՝ հակառակորդը գործի դրեց զանգվածային բնաջնջման ոչ միայն

[1291] **Գևորգյան Ռ.,** Հավաքական ոճ, Երևան, 2005, էջ 427:
[1292] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 107:

«Գրադ», այլև «Ուրագան» տիպի արգելակված զենքեր[1293]: Հայտնվելով ծանր իրավիճակում՝ հայ ինքնապաշտպանական ուժերը շարունակում էին համառ դիմադրություն ցույց տալ թշնամուն, որին մասնակցում էին ոչ միայն ջոկատները համալրած կանայք, այլև խաղաղ բնակիչները. ով ինչով կարող էր: Մեծ նահանջից հետո պայքարը շարունակվեց պարտիզանական եղանակով: Շահումյանի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարն էր շրջգործկոմի նախագահ Շահեն Մեղրյանը: Ինքնապաշտպանության մեջ ներգրավված էր շրջանի ամբողջ բնակչությունը: Շեն գյուղում գործում էր նույնիսկ կանանց առանձին ջոկատ[1294]:

Ընդգրկվելով ինքնապաշտպանական ջոկատներում՝ շահումյանցի կանայք այն համոզմունքն ունեին, որ այդ ճակատագրական պահին տղամարդկանց համահավասար պարտավոր են կատարել իրենց պարտքը հայրենի երկրի, հարազատ գյուղի առջև:

Գտնվելով շրջափակման մեջ՝ քաջակորով կամք և խիզախություն ցուցաբերեցին բազմաթիվ բուժաշխատողներ, որոնց թվում էին Շահումյանի շրջանային հիվանդանցի բուժքույրեր **Անիչկա Պետրոսյանը, Անգին Արդուխանյանը, Թամարա Շեգյանը, Նելլի Առստամյանը, Օֆիկ Մակարյանը, Լյուդմիլա Բաղմամյանը**[1295]: Նրանք օգնում էին բժիշկներին վիրահատությունների ժամանակ, օրերով հերթապահում էին, անհրաժեշտության դեպքում անգամ դոնոր էին լինում: Մինչև վերջ մնալով գյուղում՝ մեծ պատասխանատվությամբ աշխատեցին նաև բուժքույրեր **Շուշիկ Հակոբյանը, Լորա Սիմոնյանը, Ասլիմ Բաշրաթյանը, Էլվիրա Շախյանը: Բուժքույրերից Իրա (Գալինա) Զարգարյանը և Կամելլա Սարդրոսյանը** շրջանային ծննդատան կողմից ամրակցված էին Մանաշիդի տեղամասին[1296]: Չափազանց դժվար էր

[1293] **Հարությունյան Մ.,** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին 1991-1994 թթ., թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2001, էջ 41:
[1294] «Մռովի ղողանջներ», 11 ապրիլի, Ստեփանակերտ, 1992:
[1295] **Ղահրամանյան Կ.**, Օջախի գիրք. Հողը կանչում է, գիրք Բ, էջ 575:
[1296] Տե՛ս նույն տեղում:

նրանց գործը: Շահումյանցի բուժաշխատողները ոչ միայն վիրավոր ազատամարտիկներին էին խնամում կամ վիրակապ դնում, այլ նաև օգնում էին ադրբեջանցիների դաժանություններից փրկված խաղաղ բնակիչներին: Ադրբեջանցի վանդալները շատ հաճախ պարզապես հոշոտում ու դաժանորեն խոշտանգում էին ոչ միայն գերիներին, այլ նրանց դիակները, որոնց մեջ քիչ չէին կանայք: Եթե հաջողվում էր գերությունից փրկել այդ տանջահար մարմինները, բուժքույրերը մեծ խնամքով «մշակում» էին, որպեսզի հարազատների կսկիծը կրկնակի չդառնա: Դրա հետ մեկտեղ նրանցից յուրաքանչյուրը ուներ իր անձնական վիշտն ու տառապանքը: Հուշերից մեկում գրված է, որ 1992 թվականից, երբ բուժքույր **Էմմա Անանյանը** ծանրաբեռնված ու լցված աշխատանքի մեջ էր, Շահումյանի շրջանի հիվանդանոց են բերում նրա վիրավորված աղջկան և փոքր որդուն, իսկ նա շարունակում էր իր անձնական ցավի հետ միասին կիսել նաև իր հայրենակիցների ցավերը[1297]:

Շահումյանի շրջանի համար դժվարին օրերին նրան օգնության են շտապել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի կամավորական ջոկատները, որոնց շարքերում կային նաև կանայք: Հյուսիսային Արցախի օգնությունը համընկնում էր նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններին տիրող իրավիճակին: Այդ օգնությունը կազմակերպվում էր միաժամանակ երկու ճակատով: Նրանք, մեկնելով Արցախի հյուսիսարևելյան շրջաններ, փայլուն կերպով կատարում էին իրենց տրված առաջադրանքները: Այդ ջոկատների մեծ մասը, որոնցում ընդգրկված էին 14-60 տարեկան կամավորականներ, հիմնականում տեղավորված էին գյուղերում[1298]:

Հայ կամավորական ուժերի՝ «Արծվիկ 24» գումարտակ (*Նունե Աբրահամյան, Անահիտ Լոպոյան*), «Գարեգին Նժդեհ» (*Զարուհի Բադա-*

[1297] «Մռովի ղողանջներ», 11 ապրիլի, Ստեփանակերտ, 1992:

[1298] **Աբրահամյան Հ.**, Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի ստեղծումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, Երևան, 2006, էջ 117:

յան), «Մայիս» (*Գալյա Գյուրջյան, Լորետա Գյուրջյան*), «Կարս» (*Նվարդ Դուդուկյան*), «Ղազանչի» (*Ալվարդ Շեկյան*), «Մանաշիդի» (*Զոյա Մարտիրոսյան*), «Խրամորթ» (*Լենա Շամիրյան*), «Ադանա» (*Ալվարդ Կոստանդյան*), «Սիսակ» (*Մարիետա Խաչատրյան*), «Տոռոզյան» և «Նաիրի» (*Սուսաննա Կոստանդյան*), «Անահիտ» (*Անահիտ Մարտիրոսյան*), «Աղբյուր Սերոբ» (*Նաիրա Սահակյան*), «Եղնիկներ» (*Արմենիա Նալբանդյան*), «Խաչակիրներ» (*Անժելա Զալյան*), «Արմավիր» (*Լոլիտա Վարդանովա*), «Սևան» (*Անժելա Հակոբյան*) և «Զորավար Անդրանիկ» (*Մարիետա Սարգսյան*) ջոկատների կազմում կանայք պատերազմի ողջ ընթացքում մասնակցեցին Արցախի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան շրջանների ռազմագործողություններին[1299], որոնց ժամանակ նրանցից ոմանք զոհվեցին կամ վիրավորվեցին՝ անձնական օրինակով ցույց տալով, որ հայ կինը կարող է լինել նաև հայրենիքի զինվոր ու ամուր պաշտպան:

1965 թվականի Մասիսի շրջանի Նոր Խարբերդ գյուղում «Մեծն Տիգրան» զորախմբի շարքերում Շահումյան մեկնեց 1990 թվականին ծնված **Մարիետա Սարգսյանը**[1300]: Նա, իր երկու երեխաներին թողնելով մոր խնամքին, իբրև բուժքույր՝ զինվորագրվեց «Սասուն» ջոկատին: 1989 թվականի եղավ Երասխավանում, Նոյեմբերյանի շրջանում, ապա Գորիսի շրջանի Խնձորեսկի, Քաշաթաղի գյուղերում: Նրա մարտական ուղին շարունակվեց «Զորավոր Անդրանիկ» ջոկատի հետ, որը 1991 թվականի մարտ ամսից մասնակցում էր Շահումյանի շրջանի ինքնապաշտպանությանը, այնուհետև՝ Արծվաշենի, Շամշադինի (Տավուշի) մարտական գործողություններին[1301]:

1992 թվականին ստեղծվեց Մասիսի շրջանի զորամասը, որի կազմում Մ. Սարգսյանը մեկնեց Լաչինի շրջան և թեժ ռազմագործողությունների ժամանակ ջոկատի հետ շրջափակման մեջ ընկավ: Այս-

---

[1299] «Մարտիկ», 26 հունվարի – 1 փետրվարի, N 7, Ստեփանակերտ, 1995,
[1300] **Վարդումյան Հ.,** Կին ազատամարտիկներ, էջ 40:
[1301] Տե՛ս նույն տեղում:

տեղ նա, օգտագործելով իր փորձն ու մարտական կոփվածությունը, իսկական անձնազոհություն ցուցաբերելով, մեն-մենակ մնալով թշնամու օղակման մեջ, կռվեց ու կարողացավ մնացած զինվորների հետ դուրս գալ թշնամական շրջափակումից: Իսկ արդեն երկու ամիս հետո զորամասը Կոբրայից տեղափոխվեց Մարտակերտի շրջան՝ Մոլալար, որտեղից պետք է շարժվեին դեպի Քարվաճառ: Հակառակորդ կողմը զգում էր, որ հայերի ռազմական ճնշումը օրեցօր ուժեղանում է, որի ընթացքում էլ նա նոր ուժեր ու տեխնիկա էր կենտրոնացնում: Այդ օրերին հանկարծակի սկսված ուժեղ հրետակոծությունների ժամանակ՝ մարտական ծառայությունների կատարման ընթացքում, վիրավոր զինվորին մայրական բնազդով սեփական մարմնով պաշտպանելով, արկի պայթյունից Մ. Սարգսյանը ծանր վիրավորեց և տեղափոխվեց հիվանդանոց, որտեղ և մահացավ 1993 թվականի փետրվարի 10-ին՝ իր ծննդյան օրվանից 3 օր անց[1302]:

Հայուհին իր մահականացուն կնքեց իբրև հայրենիքի համար կյանքը հերոսաբար զոհաբերած ազատամարիկ:

1989 թվականին Երևանում Կորյուն Ղումաշյանի ղեկավարությամբ ստեղծված «Մեծն Տիգրան» ջոկատի շարքերում Շահումյանի ինքնապաշտպանությանը միացան նաև կամավորականներ **Կարինե Հովսեփյանը** և **Մելսիդա Հարությունյանը**[1303]:

Կ. Հովսեփյանը Ղարաբաղյան շարժմանը կամավորագրվել էր դեռևս 1988 թվականին: Առաջին իսկ օրերից ակտիվորեն մասնակցում էր ցույցերին, իսկ հետո միացավ նաև կամավորական ուժերին:

«Մեծն Տիգրան» ջոկատը, լինելով առաջին կամավորական ջոկատներից մեկը, 1989-1994 թվականներին մասնակցել է ՀՀ Գորիսի Կոռնիձոր, Արարատի Երասխ, Վայքի Բարձունք, Սիսիանի (Սոֆլու), իսկ 1991 թվականի գարնանից՝ ԼՂՀ Շահումյանի Էրքեջ, Մարտակեր-

---

[1302] **Վարդումյան Հ.,** Կին ազատամարտիկներ, էջ 41:
[1303] «Հայ զինվոր», 10 մայիսի, Երևան, 2010:

տի, Լաչինի (Բերձոր), Քարվաճառի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

1991 թվականի գարնանը ջոկատը պաշտպանական մարտեր է մղել Շահումյանի շրջանի Էրքեջ գյուղում: Կ. Հովհաննիսյանը, ջոկատի հետ մեկնելով Շահումյանի շրջան, այնտեղ մնացել է մինչև մեծ նահանջը: Նա, զենքը ձեռքին, որպես մարտիկ, մասնակցել է բոլոր կռիվներին, իսկ ընդմիջումներին օգնել է գյուղացիների աշխատանքներին: Մինչև 1994 թվականի մայիսյան զինադադարը շարունակվել է նրա մարտական ուղին, որի ընթացքում էլ, ծանր վիրավորվելով, դարձել երկրորդ կարգի հաշմանդամ[1304]:

Գնդի հրամանատար Կ. Ղումաշյանը Կ. Հովսեփյանի մասին գրում է. «Նա մեր ջոկատի տղաների համար իսկական գթության քույր էր: Տղաները նրան Սոսե Մայրիկի պատվին Սոսե էին ասում: Կռվի առաջին օրվանից մինչև հրադադարի օրը մեզ հետ էր՝ զենքը ձեռքին, առաջին գծում: Նա թշնամու վրա կրակող հայուհի էր: Հիշողությունիցս չի ջնջվում նրա հետևյալ խոսքը, որ մեզ համար թևավոր խոսք էր դարձել. «Ես հայրենիքին տվեցի կնոջ համար ամենաթանկը՝ մայր կոչվելու իրավունքը»»:

Կ. Հովհաննիսյանը դեռևս կենդանության օրոք պարգևատրվել է «Արիության» և «Մարտական ծառայության համար» մեդալներով… «Տիգրան Մեծ» վարժարանի ռազմական ամբիոնի հայոց պատմության լսարանը անվանակոչվել է այս հերոս հայուհու անունով[1305]:

Գրեթե նույն մարտական ուղին է ունեցել նաև 1959 թվականի մարտին Արարատի մարզի Վերին Վեդի քաղաքում ծնված, 1960 թվականից Երևանում բնակություն հաստատած, Երևանի ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտում հաշվապահ աշխատող Մելսիդա Հարությունյանը: Նա, 1990 թվականին ընդգրկվելով աշխարհազորային գնդի կազմում, ապա «Եղնիկներ» պարտիզանական ջոկատում,

---

[1304] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, հանրագիտարան, էջ 285:
[1305] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 110:

մասնակցել է Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական, իսկ մեծ նահանջից հետո՝ Մարտակերտի, Ստեփանակերտի, Շուշիի շրջաններ-ի ազատագրական մարտերին[1306]:

Նվիրյալ հայուհին իր տարերքի մեջ էր. կարծես ծնված էր զինվոր լինելու համար: 1992 թվականի հունվարին ջոկատը վերադարձել է Երևան՝ հանգստի, իսկ երկու ամիս անց մեկնել է Ստեփանակերտ՝ Արկադի Տեր-Թադևոսյանի հրամանատարության ներքո գործող 26-րդ գումարտակ, որը պաշտպանում էր Ստեփանակերտը: Մարտակերտում ստեղծված ծանր կացության պատճառով 1992 թվականի հունիսի 14-ին Մ. Հարությունյանը ջոկատի կազմում մեկնել է այնտեղ, այն էլ՝ առաջին գիծ: Ընթացող ծանր մարտերի ընթացքում վիրավորվել է ձեռքից և ոտքից, ինչպես նաև ցնցակաթված ստացել: Այդ վիճակն էլ նրան չի ստիպել հեռանալ մարտի դաշտից:

Հուլիսի 4-ին հայկական ուժերը, պայթեցնելով զորանոցն ու շտաբը, լքեցին Մարտակերտը: Քաղաքից վերջին հեռացողներն էին Արկադի Տեր-Թադևոսյանը, 26-րդ գումարտակի Յուրան, Մորուք Վանիկը, Կարինե Գևորգյանը, Աղավնի Սահակյանը և Մելսիդա Հարությունյանը: Նահանջից հետո վերջինս ստիպված էր վերադառնալ Երևան՝ ապաքինվելու: Իսկ արդեն 1993 թվականի մարտին, անդամագրվելով «Մեծն Տիգրան» աշխարհազորային գնդին, նրա շարքերում մասնակցել է Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղի պաշտպանական մարտերին: Մեկ շաբաթ անց մեկնել է Մարտակերտի ռազմաճակատ, Արմենակ Արմենակյանի և շտաբի պետ Տիգրան Հարությունյանի հրամանատարությամբ մասնակցել է Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղի ինքնապաշտպանական մարտերին:

Մարտական ծառայության ընթացքում, զենքը ձեռքին մարտնչելուց բացի, մասնակցել է նաև հետախուզական աշխատանքներին: 1993 թվականի ամռանը, մեկնելով Շահումյան, շուրջ մեկ տարի և չորս

[1306] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 185, **Վարդումյան Հ.**, Աստվածների կանչը, էջ 116-117:

ամիս նա մնացել է թշնամու թիկունքում՝ մասնակցելով հետախուզական բոլոր աշխատանքներին, մարտերին, ջոկատի բժշկուհի Արմենիա Նալբանդյանի հետ խնամել էր նաև հիվանդներին ու վիրավորներին, իսկ ազատ ժամանակ զինվորների համար հաց է թխել:

Գյուլիստանի «Քաչալ» սարի մոտերքում 1994 թվականի ապրիլի 11-ի և 12-ին հակառակորդի հետ կատաղի մարտերի ընթացքում Մելսիդան մարմնով ծածկել է վիրավոր զինվորներին՝ փրկելով նրանց կյանքը, իսկ ինքը վիրավորվել ոտքերից ու ձեռքերից[1307]:

1995 թվականի օգոստոսին ավարտվեց խիզախ հայուհու մարտական ծառայությունը: Նա մեկնեց՝ բուժվելու, վերադարձից հետո ծառայության անցավ ՀՀ ՊՆ զորամասերից մեկում որպես ֆինանսական ծառայության պետ:

Օգտագործելով Գյանջա (Գանձակ) քաղաքում տեղակայված նախկին խորհրդային 4-րդ բանակի զենքն ու զինամթերքը՝ 1992 թվականի հունիսի 12-ին ադրբեջանական զորամիավորումները լայնածավալ հարձակման անցան ԼՂՀ հյուսիսարևելյան, արևելյան և հարավարևելյան սահմանների ամբողջ երկարությամբ՝ Հադրութից մինչև Շահումյան: Թշնամուն հաջողվեց զավթել ամբողջ Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանի մեծ մասը, Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր: Հյուսիսային Արցախում հակառակորդի լայնածավալ հարձակման արդյունքում բռնագաղթի ենթարկվեցին հանրապետության ավելի քան 40 հազար բնակիչներ, ավերվեցին և հրկիզվեցին տասնյակ բնակավայրեր[1308]:

Շահումյանի անկումից հետո «Եղնիկներ» անունով պարտիզանական ջոկատը՝ Շահեն Մեղրյանի գլխավորությամբ, այդպես էլ չհեռացավ շրջանի տարածքից՝ շարունակելով պայքարը թշնամու դեմ:

[1307] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 143-144:

[1308] **Հասրաթյան Ա.,** Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2008, էջ 19:

Ջոկատը աջակցություն ստացավ Արցախի իշխանությունների կողմից[1309]:

1992 թվականի հունիսի 18-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը, Նախարարների խորհուրդը համատեղ որոշում կայացրին, իսկ հունիսի 19-ին պաշտպանության խորհուրդը հանդես եկավ կոչով՝ ուղղված շահումյանցիներին. «Բոլոր նրանց, ովքեր ի վիճակի ենք զենք կրելու, ում համար թանկ են հայրենիքը և ազատությունը, պարտիզանական պայքար ծավալել զավթված ամբողջ տարածքում: Ում համար թանկ են նախնիների գերեզմանները, մեր եկեղեցիներն ու սրբությունները, պետք է սարսափ տարածեն թշնամու վրա: Պետք է օր ու գիշեր ոչնչացվեն նրանք, ովքեր զենքով ոտք են դրել մեր հողի վրա»[1310]:

Կոչը տարածվեց շահումյանցիների շրջանում, որին, բուռն արձագանքեցին նաև կանայք: Սկսեցին պարտիզանների շարքերը մտնել նույնիսկ տարեցներ, թոշակառուներ: Պարտիզանական ջոկատը ադրբեջանցիներին թույլ չէր տալիս բուն դնելու նվաճված գյուղերում: Այդ ծանր օրերին պարտիզանական ջոկատին միացավ 1967 թվականին Երևանում ծնված, 1992 թվականից ՀՀ հանրապետական հիվանդանոցի երկրորդ վիրաբուժական բաժանմունքի բժշկուհի, օրդինատոր Արմինա Նալբանդյանը[1311]: Հետևելով ամուսնու՝ Արտակ Խաչատրյանի հորդորներին, որն աշխատում էր Շահումյանի շրջանի Վերիշեն հիվանդանոցի գլխավոր բժշկի պաշտոնում, նա ոչ միայն բուժօգնություն էր ցույց տալիս հիվանդներին, այլև ջոկատների հետ մեկնում մարտական գործողությունների:

1993 թվականի ապրիլին **Արմինա Նալբանդյանը** ամուսնու հետ մեկնեց բռնազավթված Շահումյանի շրջան՝ թնամու թիկունքում գործելու: Նա ամուսնու խորհուրդով տեսավ ու հասկացավ, որ հարկավոր է պարտիզանական ջոկատի համար դաշտային հոսպիտալ ստեղծել,

---

[1309] **Հասրաթյան Ա.,** նշվ. աշխ., էջ 20:
[1310] **Ղահրամանյան Կ.,** Հյուսիսային Արցախ, գիրք Բ, էջ 82:
[1311] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 143-144:

որպեսզի հնարավորություն ունենան տեղում օգնություն ցույց տալու ազատամարտիկներին: Ա. Նալբանդյանը այս նպատակով մեկնեց Երևան: Շուտով՝ ապրիլի 17-ին, ուղղաթիռի աղետից զոհվեց ամուսինը, չնայած ծանր ու անտանելի հարվածին՝ Ա. Նալբանդյանը ամուսնու հիշատակի համար շարունակեց նրա գործը: Եվ պատահական չէ, որ մինչև հրադադարը նա մեկնեց ու մնաց Շահումյանում՝ «Եղնիկների» մոտ՝ մարտական ընկերների կողքին[1312]: Նրան հաջողվեց պաշտպանության նախարարության և ՀՕԽ-ի աջակցությամբ «Եղնիկների» բազայում կազմակերպել դաշտային հոսպիտալ[1313]:

1993 թվականի դեկտեմբերի 23-ին ազերիները մեծ ուժերով մարտական տեխնիկայի աջակցությամբ հարձակվեցին Գյոյթափա տեղանքի ուղղությամբ: Ուժերն անհավասար էին, և հայ ինքնապաշտպանական ուժերը, երեք զոհ տալով, ստիպված էին նահանջել: Վիրավորների, զենքի և զինամթերքի հետ հոսպիտալն էվակուացնել հնարավոր չէր, հարկավոր էր ոչնչացնել՝ թշնամուն չթողնելու համար: Այսպես՝ դաշտային հոսպիտալը գործեց մինչև 1993 թվականի դեկտեմբերի 27-ը, իսկ նահանջը տևեց մինչև Մաղավուզ: Արտատափ կոչվող անտառոտ տեղանքում բազավորվելով՝ «Եղնիկները» նորից անցան իրենց պարտականությունների կատարմանը: Իսկ բժշկուհին ստիպված էր ամեն ինչ սկսել սկզբից ու նորից դիմեց Ստեփանակերտ՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՕԽ՝ կազմակերպելու դաշտային հոսպիտալ, որի ծառայություններից օգտվում էին ոչ միայն «Եղնիկներ» ջոկատը, այլ նաև շրջակա բնակավայրերի և զորամիավորումների կարիքավորները[1314]:

Մատաղիսի ազատագրումից հետո վերջնականապես բացվեց պարտիզանական ջոկատի շուրջ սեղմված շրջապատման օղակը: Ա. Նալբանդյանը, ենթարկվելով պատերազմի փորձությանը, գերա-

---

[1312] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 143-144:
[1313] Տե՛ս նույն տեղում:
[1314] Տե՛ս նույն տեղում, էջ 144-145:

զանց քննություն բռնեց՝ ավարտին հասցնելով իր ամուսնու կիսատ թողած հայրենանվեր գործը: Նրա շնորհիվ փրկվեցին բազմաթիվ վիրավոր ազատամարտիկներ: Ծառայությունը շարունակեց մինչև հրադադար, որից հետո վերադարձավ իր նախկին աշխատանքին[1315]:

1992 թվականի ամռանն ադրբեջանական ուժերի լայնածավալ հարձակման արդյունում հուլիսի 4-ին գրավվեց Մարտակերտ քաղաքը, այնուհետև՝ շրջանի մի մասը: Մարտերն ընթանում էին փոփոխական հաջողություններով: Հայկական ուժերը Հաթերքը կորցնելուց հետո ստիպված էին ամրանալ Կիչանում: Այդ օրերին Հաթերքի ջոկատի հիմքի վրա կազմավորված ստորաբաժանման հետ էր Սիրանուշ Առուշանյանը և այդ շարքերում էլ մասնակից դարձավ Իմերեթ-Գերավենդ, Աղդաբան, Ումութլու գյուղերի թշնամական հենակետերի վերացմանը[1316]:

Սիրանուշ Առուշանյանը ծնվել է 1940 թվականի մարտին, ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո տեղափոխվել է Սումգայիթ, աշխատել է տարբեր մասնագիտություններով, ապրել Սումգայիթում մինչև 1988 թվականի ցեղասպանությունը: Նույն թվականի մարտին տեղափոխվել է հայրենի գյուղ, կապ հաստատել Արցախյան շարժման Երևանի մասնակիցների հետ և Մայիս Հարությունյանի մասնակցությամբ զենք և զինամթերք է տեղափոխել Երևանից Ստեփանակերտ: Այդ գործում շատ էր օգնում Սիրանուշի՝ ռուսերեն և ադրբեջաներեն լեզուների լավ իմացությունը: Նա կարողանում էր հաղորդակցվել օդանավակայանում հերթապահող թուրք օմոնականների և ռուս զինվորների հետ՝ անցկացնելով թանկարժեք առաքումները[1317]:

1989 թվականին Ս. Առուշանյանը անդամագրվել է Սուրեն Հարությունյանի գլխավորած կամավորական գաղտնի ջոկատին և վերցնե-

---

[1315] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 144-145:
[1316] Տե՛ս նույն տեղում, էջ 149:
[1317] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 154:

լով եղբոր որսորդական հրացանը՝ մեկնել է դիրքեր: Ջոկատում մեծամասնություն էին կազմում նրա բարեկամ-ազգականները, որոնք նրան Աքա (մորաքույր) էին կոչում: Այդպես էլ նրա մարտական անունը կնքվել է Աքա:

1991 թվականին կազմակերպվեց Հաթերքի «Փառանձեմ» կանանց կամավորական ջոկատը: Մարտախմբին զինվորագրվել է նաև **Սիրանուշ Առուշանյանը**: Մինչև 1994 թվականը ջոկատի (ապա՝ վաշտ) կազմում մասնակցել է ԽՍՀՄ ՆԳՆ 43 զինծառայողներին պատանդ վերցնելու գործողությանը: 1993 թվականի փետրվարին նա ակտիվորեն մասնակցություն է ունեցել Մարտակերտի վերին ձորակի՝ Դրմբոն, Վերին Հոռաթաղ, Հարությունագոմեր, Վաղուհաս, Չլդրան, Զարդախաչ, Հաթերք, Զագլիկ, Ումութլու գյուղերի ազատագրմանը[1318]:

Աքան՝ որպես մարտիկ, ակտիվորեն մասնակցել է բոլոր մարտերին, իր համարձակությամբ, համառությամբ, նվիրվածությամբ և կանացի ներկայությամբ ոգեշնչել է տղամարդկանց՝ չթողնելով հուսալքվել պարտությունից և նահանջից: Աքան հենց այդ անհատներից էր, որոնք իրենց կյանքը առանց մտածելու պետք է նվիրաբերեին հանուն հայրենիքի անկախության և ազատության: «1992-ի սեպտեմբերն էր: Թուրքերը դեռևս զորավոր էին: Նահանջի ալիքը քշում էր հայկական ուժերին, որոնք գերբնական ճիգ էին գործադրում՝ կառչելով յուրաքանչյուր քարից, յուրաքանչյուր թփից: Սակայն ստիպված էին նահանջել. նոր զորակոչված տղաներ էին վաշտում: Երբ անհրաժեշտ եղավ վերադառնալ, վերագրավել հանձնած դիրքերը, նորակոչիկները հրաժարվեցին: Աքան, ձեռքի մեջ սեղմելով իր անբաժան զենքը, լուռ առաջ ընկավ և շարժվեց դեպի թշնամու դիրքերը: Տղաներն ստիպված էին գնալ նրա հետևից: Գնացին և վերագրավեցին կորցրած դիրքերը»[1319]:

Ռազմական գործողությունների ընթացքում երեք անգամ վիրավորվեց, սակայն երկամյա բուժումից հետո կրկին վերադարձավ

[1318] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 154:
[1319] **Վարդումյան Հ.**, նշվ. աշխ., էջ 49:

շարք և ծառայությունը արդեն շարունակեց Մաղավուզում՝ 2-րդ գումարտակում, որի շարքերում էլ մասնակցեց Մաղավուզի, Լեոնարխի, Մառաղիսի, 4-րդ սովխոզի և Օմարի բարձունքների ազատագրմանը:

Ս. Առուշանյանը հրադադարից հետո շարունակեց ծառայությունը, և միայն 1996 թվականին զորացրվեց՝ ավագ լեյտենանտի կոչումով:

Իր կատարած սխրագործությունների համար խիզախ, քաջ ու անվախ հայուհի Սիրանուշ Առուշանյանն արժանացել է «Մարտական խաչի 2-րդ աստիճանի» շքանշանի (2002), «Արաբո» հուշամեդալի, «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալի (երկուսն էլ՝ 2005), «Հայաստանի երկրապահ» հուշամեդալի (2006), կառավարական այլ պարգևների[1320]:

Հայաստանի Հանրապետության ու Արցախի համար ծանր օրերին Մարտակերտի գումարտակը համալրվում էր կանանց հաշվին, որոնք, կամավորագրվելով հայկական զինված ուժերին, պատվով էին կատարում մարտական բոլոր առաջադրանքները: Արցախի համար օրհասական պահին Հաթերքի ինքնապաշտպանական ջոկատին էր միացել **Աիդա Սերոբյանը**[1321]:

Ա. Սերոբյանը ծնվել է 1952 թվականի Վրաստանում և մեկ տարի անց տեղափոխվել է Էջմիածին, որտեղ է 1959 թվականին ընդունվել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը, որն ավարտելուց հետո ընդունվել և 1980 թվականին ավարտել է Երևանի բժշկական ուսումնարանը: Աշխատանքի է անցել թիվ 12 պոլիկլինիկայում որպես բուժքույր[1322]: 1992 թվականին հեռուստատեսությամբ լսելով, որ Արցախի ինքնապաշտպանական ուժերը բուժքույրերի կարիք ունեն, իր երկու անչափահաս երեխաներին թողնել է մոր խնամքին, իսկ ինքը՝ մեկնել Արցախ՝ Հաթերքի պարտիզանական ջոկատում բուժքույր աշխատելու: 1992

[1320] **Վարդումյան Հ.**, նշվ. աշխ., էջ 50, Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 154:

[1321] Տե՛ս նույն տեղում, էջ 181-183:

[1322] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 181:

թվականին մասնակցելով Հաթերքի և շրջակա գյուղերի ազատագրական մարտերին՝ նա ծառայությունը շարունակել է Մարտակերտի գնդի շարքերում: Չլդրանում Ա. Սերոբյանը ձախ ուսից վիրավորվել է, սակայն շարունակել է ծառայությունը: 1993 թվականի հունվարից միացել է «Արցախ» փրկարարական ծառայությանը, որի կազմում մասնակցել է ամենաթեժ մարտերին, որոնք ընթանում էին Մարտակերտի շրջանում: «Արցախի» շարքերում մասնակից է դարձել նաև Չլդրան, Դրըմբոն, Վաղուհաս, Խունկութալա, Զարդախաչ, Հաթերք, Զագլիկ, Կուսապատ գյուղերի ազատագրական մարտերին, ինչպես նաև Քարվաճառի տարածքի ազատագրմանը[1323]: Թուրքերի խուճապը մեծ էր. զինվորական ու ժողովուրդ միախառնված փախչում էին: Այդ օրերին մեծ էր հայի՝ որպես հաղթողի մեծահոգի գթառատությունը: Ի տարբերություն թուրքի, որը կոտորում, բռնաբարում ու ծաղրի էր ենթարկում նահանջող խաղաղ բնակրությանն ու վիրավորներին, հայերն օգնում էին խաղաղ բնակչությանը: Հայ կինը ռազմի դաշտում անգամ չկորցրեց իր մարդկային հատկանիշները՝ կարեկցանք, խղճահարություն, թեկուզ թշնամու հանդեպ: Նման վերաբերմունք է ցուցաբերել Ա. Սերոբյանը՝ Քարվաճառում փրկելով ադրբեջանցի մի հղի կնոջ, որին հետո տեղափոխել են Ստեփանակերտի ծննդատուն[1324]:

1993 թվականի ընթացքում Ա. Սերոբյանին ուղարկել են Մարտունու շրջան: Նա լեգենդար Ավոյի գնդի հետ մասնակից է եղել Գևորգավան և Վեյսալի գյուղերի ազատագրմանը: Ավոն, գնահատելով բուժքրոջ նվիրվածությունը, առաջին բուժօգնության պայուսակ է նվիրել ու շնորհակալություն հայտնեց նրան[1325]:

Միաժամանակ վիճակը ծանրացել էր Մաղավուզի ուղղությամբ, շուտով Ա. Սերոբյանը գործուղվել է այնտեղ: Երբ հուլիսից սկսվել են Աղդամի ազատագրական գործողությունները, նա ևս միացել է և ան-

---

[1323] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 182-183:
[1324] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, էջ 28:
[1325] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 183:

ցել հետագա ռազմական բոլոր գործողությունների ճանապարհներով: Արդեն 1994 թվականի հունվարի 1-ից Շուշիի գնդի հրամանատարության պահանջով նա համալրել է գնդի շարքերը՝ 52-րդ գումարտակը, որտեղ մնացել է մինչև հրադադար՝ անցնելով Բոյահմեդլի, Փափրավենդ, Սեյսուլան, Մարտակերտ, Կարմիրավան տարածքները[1326]:

Արցախի հյուսիսարևելյան շրջանի ազատագրական պայքարին մասնակցելու համար 1993 թվականի սեպտեմբերի 15-ին Արցախ է մեկնել 1975 թվականին Եղեգնաձոր քաղաքում ծնված Եղեգնաձորի էլեկտրատեխնիկումի ուսանողուհի **Գայանե Մարգարյանը**: Նա Մարտակերտի գումարտակի բուժքույր Թամար Աբրահամյանի միջոցով համալրել է Մարտակերտի գումարտակը՝ հրամանատար Իլիչ Բաղրյանի ղեկավարությամբ: 1993-1994 թվականներին նրա կազմում մասնակցել է շրջանի մի շարք բնակավայրերի ինքնապաշտպանական մարտերին[1327]: Թեժ մարտերի ժամանակ Գ. Մարգարյանն որպես բուժքույր օգնել է Թամարին: «Դժվար էր: Հատկապես առաջին ծանր վիրավորին օգնություն ցույց տալը. ծորացող արյան գույնին և մահվան պարին ընտելանալ էր պետք: Ավելի ծանր էր ընկերոջ խեղված մարմինը ձեռքերի վրա տեղափոխելը… Սակայն Գայանեն զինվոր էր ծնված: Տղաները սիրեցին նրան, զգացին նրա արժեքը՝ որպես ընկերասեր, անձնվիրության պատրաստ և իր տարիքի համեմատ հասունացած, կազմակերպված մարդ»[1328]:

Գ. Մարգարյանը ամուսնացել է վաշտի գնդացրորդ Արամի հետ: Սակայն հարսանիքից հինգ ամիս հետո Մատաղիսի համար մղվող մարտերից մեկում զոհվել է ամուսինը: Իսկ Գայանեն երեխայի էր սպասում: Ճակատագիրը նորից անողոքաբար հարվածել է նրան:

«Գայանեն երկար չողբաց. ժամանակ չկար: Վերցրեց անուսնու գնդացիրը և այլևս ցած չդրեց: Մեծ էր վրեժը ճակատագրի, աշխարհի,

---

[1326] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմ Ղարաբաղում, էջ 29:
[1327] **Վարդումյան Հ.,** Կին ազատամարտիկները, էջ 131:
[1328] Տե՛ս նույն տեղում, էջ 132:

թշնամու հանդեպ. նորից զրկվեց հազիվ գտած երջանկությունից: Կռվում էր քաջաբար՝ առանց իրենց խնայելու: Կյանքն արդեն կորցրել էր իմաստը, ապրել-չապրելը միևնույնն էր նրա համար»[1329]:

1994 թվականի առաջին օրերին ադրբեջանցիները նորից խորացան Մարտակերտի շրջանի տարածք: Գումարտակը պաշտպանական մարտեր սկսեց Մաղավուզ գյուղի մատույցներում: Հունվարի 9-ին հակառակորդը հանկարծակի գրոհի նետվեց: Մինչև հիմնական ուժերի տեղ հասնելը Գայանե Մարգարյանը երեք ազատամարտիկների հետ անհավասար պայքարի մեջ մտավ հակառակորդի հետ՝ թույլ չտալով վերջինիս գյուղ թափանցել: Այդ ժամանակ Մաղավուզ գյուղի մատույցներում մարտական ծառայության ընթացքում զոհվեցին 4 ազատամարտիկներ, այդ թվում՝ Գայանե Մարգարյանը[1330]: Հերոս հայուհու վերջին մարտի մասին պատմել են նրա մարտական ընկերները: Ահա թե ինչ են ասել նրանք. «–Մենք այստեղից ինքնակամ չենք հեռանա»,– ասաց Գայանեն և ծիծաղեց: Տղամարդիկ զարմացան նրա ծիծաղի վրա. բոլորովին վախ չուներ:

Ազերի զինվորները գիտեին, որ կռվողները քիչ են, համարձակորեն առաջ էին գալիս: Սակայն հայ ազատամարտիկները կրակում էին դիպուկ, դիմահար կրակով ոչնչացնում հակառակորդին: Գայանեն յուրաքանչյուր ազերի զինվորի մեջ տեսնում էր ամուսնուն սպանողին, և վրիժառու գնդակները հասնում էին իրենց նպատակին: Այնուամենայնիվ, գրոհը կարճ տևեց: Ազերիները կարողացան շրջանցել և բոլոր կողմերի կրակի տակ առնելով՝ ոչնչացնել գյուղի հերոս պաշտպաններին: Սակայն նրանց այդպես էլ չհաջողվեց գյուղ թափանցել: Օգնության շտապողները հասան և ընթացքից գրոհի մեջ մտնելով՝ դուրս շպրտեցին հակառակորդին»[1331]:

[1329] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 131:
[1330] Տե՛ս նույն տեղում, էջ 133:
[1331] Տե՛ս նույն տեղում:

Ռոզա Պետրոսյանը՝ Մաղավուզ գյուղի խորհրդի նախագահը, ցավակցելով հերոսուհու և զոհվածների մյուս հարազատներին, գրում է. «Հայրենակիցնե՛ր, այս հերոսներն անհավասար մարտի մեջ մտնելով գյուղի մատույցներ մտած թշնամու դեմ, հերոսաբար ընկան՝ կյանքի գնով փրկելով Մաղավուզ գյուղը՝ իր հազար բնակիչներով, արգելեցին թշնամու առաջխաղացումը: Մաղավուզցիները, Գայանեի մարտական ընկերները գոհ են նրա ծնողներից՝ նման հայրենասեր քաղաքացի, նվիրված մարտիկ դաստիարակելու համար»[1332]:

Գ. Մարգարյանը ինչպես լուռ ու աննկատ հեռացել էր հայրական տնից, նույն կերպ էլ վերադարձավ և հաստատվեց Եղեգնաձոր քաղաքի «Եռաբլուրում»: Գ. Մարգարյանն իր կարճատև, բայց հերոսական կյանքով բոլոր հայրենակիցներին հնարավորություն ընձեռեց ապրելու ազատ ու անկախ հայրենիքում: Փաստելով, որ վաղը, եթե նորից անհրաժեշտ լինի, էլի զոհված հերսների ոգին է առաջնորդելու նոր հաղթանակների:

Հայրենիքի պաշտպանությանը կյանքի գնով պատասխանեց նաև ազատամարտիկ **Կարինե Գևորգյանը**: Նա ծնվել է 1956 թվականի Վարդենիսի շրջանի Խաչաղբյուր գյուղում, ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1982 թվականին՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական ֆակուլտետը և որպես երիտասարդ մասնագետ՝ գործուղվել «Նաիրիտ» ԳԱՄ[1333]: Նա, 1992 թվականին Արցախ մեկնելով, որպես բուժքույր միացել է Մարտակերտի ինքնապաշտպանական ուժերին: Սկզբում՝ 1992 թվականի նոյեմբերից, ծառայության է անցել ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերում՝ Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) հրամանատարությամբ, ապա հետագայում համալրել է Մարտակերտի գումարտակի շարքերը և 1992-1993 թվականներին մասնակցել Մարտակերտի Գետավան, Հաթերք, Սարսանգի ջրամ-

---

[1332] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 133:
[1333] Տե՛ս նույն տեղում:

բար, Մեծշեն, Մաղավուզ գյուղերի, Քարվաճառի Օմարի պաշտպանական և ազատագրական գործողություններին[1334]:

«–Օմարի լեռնացքի գրավման ժամանակ մոտ մեկ ամիս մնացինք այնտեղ,– պատմում է ջոկատի հրամանատար Մարուքը՝ Ռաֆիկ Համբարձումյանը,– Կարինեն հետներս էր: Ցուրտ, ձյուն: Տղաների մի մասը գլուխ էր պահում, բայց Կարինեն մեզ հետ բարձրացավ մինչև լեռնանցքի վերին կետը: Ամբողջ ժամանակ բժշկական պայուսակն ուսին, ավտոմատը ձեռքին, մինչև ծնկները ձյան մեջ... Եվ այս վիճակում դեռ քաջալերում էր տղաներին..., մարտի կոչում նրանց»[1335]:

Օրհասական պահերին Կ. Գևորգյանը միշտ անթերի կատարել է բոլոր առաջադրանքներն ու հանուն նպատակի մասնակից դարձել ամենաթեժ մարտերին, իսկ 1993 թվականի հունիսի 13-ին Մաղավուզ գյուղի համար մարտում՝ զոհվել[1336]: Դժբախտաբար, նա չտեսավ իր երազանքի իրականացումը՝ Մարտակերտի ազատագրումը, բայց մարտական ընկերները իրականացրին նրա երազանքը:

Հայրենիքի վտանգի պահին հայ կանայք շարունակում էին արձագանքել զինված ուժերի հայտարարություններին և մեկնում առաջին գիծ: 1992 թվականի հայուհի հերոսների շարքերն է համալրել ազատամարտիկ բուժքույր **Նունե Աբրահամյանը**[1337]: Նա ծնվել է 1966 թվականի հուլիսին Երևանում: 1990 թվականին ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Նետաձգության Հայաստանի բազմակի չեմպիոն է եղել[1338]: 1991 թվականից աշխատել է Երևանի վնասվածքային վերականգնողական կենտրոնի ֆիզիոթերապիայի բաժնում: Արցախյան ազատագրական շարժման առաջին իսկ օրերից ակտիվորեն մասնակցել է ռազմական գործողություններին: Առաջին մարտական մկրտությունն ստացել է 1992

[1334] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 74:
[1335] Տե՛ս նույն տեղում:
[1336] Տե՛ս նույն տեղում, էջ 75:
[1337] Տե՛ս նույն տեղում, էջ 8-9:
[1338] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 138:

թվականի Արծվաշենում[1339]: Դրանից հետո «Արծիվ 24» գումարտակի կազմում մասնակցել է մի շարք ռազմական գործողությունների: Գումարտակը կազմավորվել է 1992 թվականի օգոստոսի 16-ին Երևանում՝ Վ. Սարգսյանի նախաձեռնությամբ: Գումարտակում ընդգրկված էին ՀՀ տարբեր շրջանների ազատամարտիկներ:

Ն. Աբրահամյանը 1992-1994 թվականներին «Արծիվ-24» գումարտակի կազմում մասնակցել է Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի Առաջաձորի, Դրմբոնի, Հաթերքի, Սարսանգի ջրամբարի, Կուսապատի և այլ տարածքների, Աղդամի, Ֆիզուլու, Հորադիզ, Կուբաթլուի, Զանգելանի, Քելբաջարի շրջանների, Օմարի լեռնանցքի, ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին[1340]:

Հաղթական երթերի ընթացքում մշտապես եղել է առաջին գծում: Ն. Աբրահամյանը ծառայել է անձնվիրաբար: Նա տասը ամիս տուն չի վերադարձել, չի հանել զինվորական համազգեստը, սանիտարական պայուսակը: Տղաները կռվում էին, նահատակվում: Օգնել էր պետք, խլել մահվան ճիրաններից, մեղմել ցավերը: Տասը ամսվա ընթացքում տասնյակ ազատամարտիկների կյանքեր է փրկել: Տասը ամիս շարունակ գիշեր ու ցերեկ չի ունեցել: Ն. Աբրահամյանը միշտ գրոհի առաջին գծում է եղել, թշնամու կրակի տակ, անձնուրացորեն նետվել է առաջ, որտեղ վիրավորներն էին, որտեղ սեր ու գթություն էր հարկավոր: Իսկ երբ թշնամին շատ էր մոտենում, երբ ազերիներն սպառնում էին մխրճվել, կազմալուծել ազատամարտիկների շղթան, նա վերցնում էր ավտոմատը ու դիպուկ կրակոցով, մեկը մյուսի ետևից գետին տապալում թշնամու զինվորներին: Գերազանց գթության քույր լինելուց բացի՝ նաև գերազանց հրաձիգ էր: Որպես նետաձգության չեմպիոն՝

[1339] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 138:
[1340] Տե՛ս նույն տեղում:

կրակում էր անվերպ և տիրապետում զենքերի գրեթե բոլոր տեսակներին[1341]:

Գումարտակի տղաներն այնպես էին ընտելացել, որ չէին պատկերացնում, թե մի օր էլ կարող են բաժանվել նրանից: Բայց կյանքն ունի իր դաժան ու կոշտ օրենքները. ամեն մեկը գալիս, իր գործն է անում ու հեռանում ասպարեզից...:

Գումարտակը նույնպես մասնակցել է Օմարի լեռնանցքի գրավման համար մղվող մարտերին: Յանշաղ գյուղի մոտ գումարտակը շրջապատման մեջ է ընկել: Հերթական անգամ, երբ Ն. Աբրահամյանը ցանկացել է շարժվել դեպի վիրավոր ընկերը, ինքն է վիրավորվել կրծքից:

1994 թվականի հունվարի 31-ին Ն. Աբրահամյանին հասցրել են Դրմբոնի զինվորական հիվանդանոց, սակայն բժիշկներն անկարող են եղել փրկել նրա կյանքը[1342]:

Եռաբլուրում մի սուրբ մասունք ևս ավելացավ: Այսօր նրա վերջին կռվի վայրում հուշակոթող է կանգնեցված: Ն. Աբրահամյանն իր հոգում կրում էր Աստծո ամենաթանկ պարգևը՝ սերը և գթությունը, որոնք, շռայլորեն ծախսելով, անմահացավ՝ լրացնելով իր ժողովրդի հազարավոր նվիրյալների շարքերը:

1992 թվականին անդամագրվելով մահապարտների «Արծիվ-1» գումարտակին՝ Արցախ է մեկնել նաև Անահիտ Հովհաննիսյանը՝ մասնակից դառնալով գումարտակի վարած մի շարք մարտական առաջադրանքներին՝ Մարտակերտի շրջանի Չլդրան, Վաղուհաս, Հարությունագոմեր, Վանք գյուղերի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին, զինադադարը դիմավորել է մարտի դաշտում[1343]: Չնայած զինվորական գործում կանայք թվով քիչ էին, սակայն նրանց

[1341] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, էջ 9-10:
[1342] Տե՛ս նույն տեղում, էջ 10:
[1343] **Ջանիկյան Գ.,** Մահապարտները, Երևան, 2002, էջ 39:

ներկայությունը մեծ ներգործություն էր ունենում մարտիկների հոգեբանության, մարտական ոգու բարձրացման վրա:

Ակնհայտ փաստ է, որ ռազմական գործողություններին մասնակից հայ կանանց առաջ էր մղում հայրենիքին օգտակար լինելու գաղափարը: Հենց դա էլ ստիպել է Անժելա Զալյանին 1992 թվականին հասնել Արցախ և մասնակցել հյուսիսարևելյան շրջանի ինքնապաշտպանական մարտերին:

Անժելա Զալյանը ծնվել է 1960 թվականին Միրբաշիրի շրջանում, ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ 1978 թվականին ընդունվել է Երևանի բժշկական ուսումնարանը, որն ավարտելով՝ աշխատանքի է անցել Հանրապետական մաշկավեներական դիսպանսերում որպես բուժքույր[1344]:

1992 թվականի հուլիսին, Ամերիկայից երկրորդ անգամ Հայաստան գալով, ամերիկահայ երկու ընկերները՝ Կարո Քահքեճյանը և Շահե Աճեմյանը՝ իրենց հետ մեծ քանակությամբ դեղամիջոցներ, հանդերձանք ու զինվորական սնունդ բելելով, որոշել էին ջոկատ կազմել ու մասնակցել մարտական գործողություններին: Կարո Քահքեճյանի գլխավորությամբ հիմնականում թալինցիներից ու երևանցիներից կազմավորվեց 15 հոգանոց «Խաչակիրների ջոկատը», որը մեկնեց Արցախ: Հենց ջոկատի բուժքույրը դարձավ Անժելան, որին Կ. Քահքեճյանը ճանաչում էր վաղուց՝ շարժման առաջին օրերից: Նա եռանդով օգնում էր երկրաշարժից տուժածներին ու փախստականներին, մասնակցում միտինգներին ու ցույցերին: Լինելով փորձված բուժքույր՝ նա առանց տատանվելու ընդունեց Կ. Քահքեճյանի առաջարկը[1345]: Չուզենալով մորն անհանգստացնել՝ խաբել էր նրան՝ իբրև դեղորայք են բաժանելու, ետ կգան: Սակայն Արցախ ժամանելով՝ նա մնաց:

Հուլիսին «Խաչակիրներ» ջոկատի կազմում 2-րդ անգամ Արցախ ժամանելով՝ Ա. Զալյանը ջոկատի շարքերում կատարեց առաջին մար-

---

[1344] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 88:
[1345] Տե՛ս նույն տեղում:

տական առաջադրանքը. Հարությունագոմեր և Պողոսագոմեր գյուղերի տարածքով ինքնապաշտպանական ուժերի հետ անցավ հակառակորդի թիկունք՝ հետախուզական և դիվերսիոն գործողություններ իրականացնելու նպատակով[1346]: Հետախուզությունից վերադառնալիս, ջոկատը անսպասելիորեն թիկունքից հարձակվելով, թշնամուն կորուստներ պատճառեց՝ ձեռք բերելով մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Հարձակման գործողությունները սկսվեցին: Անժելայի համար ծանր էր: Տարբեր տեղերից բազմաթիվ վիրավորներ էին բերում: Նա ցնցված էր սիրելի հրամանատարի՝ Կարոյի կորստից, սակայն ստիպված էր սեղմել ատամները և գերլարված աշխատանք կատարել: Ոչ մի տեղեկություն չկար նաև ջոկատի մյուս տղաներից: Նրանք նույնպես զոհված էին համարվում: Միայն երեկոյան գտան և տեղափոխեցին ծանր վիրավոր Սանասարին: Անժելան նրան վիրակապելով և առաջին օգնություն ցույց տալով՝ տեղափոխեց Դրմբոնի հոսպիտալ՝ փրկելով կյանքը[1347]:

Ջոկատի շարքերում նա հետախուզական աշխատանքները շարունակեց Քարվաճառում: Այնուհետև 1993 թվականին մասնակցեց Մարտակերտի ազատագրական գործողություններին, որից հետո «Խաչակիրների» հետ մեկնեց Շահումյանի շրջան և «Եղնիկներ» պարտիզանական ջոկատի հետ պայքարը շարունակեց մինչև հրադադար[1348]:

1992-1994 թվականներին մասնակցել է ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի (Մաղավուզ, Մեգրելսկ, «Պուշկինյալ»), Քելբաջարի, Լաչինի շրջանների ազատագրական մարտերին[1349]: Ջոկատը մասնակցել է նաև Գյուգթափա, Արտատափ տեղանքների պաշտպանական և բազմաթիվ այլ դաժան մարտերի, կատարել է հետախուզական և դիվերսիոն գործողություններ: Ա. Ջալյանը ջոկատի համար անփոխարինելի

[1346] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 89:
[1347] Տե՛ս նույն տեղում:
[1348] Տե՛ս նույն տեղում, էջ 90:
[1349] Տե՛ս նույն տեղում:

էր: Նրան բոլորը սիրում էին հարազատի նման, ամեն կերպ աշխատում էին պահպանել, թեթևացնել զինվորական դժվար կյանքը: Իսկ բուժքույրը նրանց համար ոչինչ չէր խնայում:

Հրադադարից հետո Անժելան ծառայության է անցել թիվ 59016 զորամասի հրետանային դիվիզիոնում[1350]:

Արցախյան պատերազմում հաճախակի երևույթ էր դարձել կռվող ազատամարտիկների կողքին տեսնել նրանց կողակիցներին, որոնք, տանը թողնելով անչափահաս երեխաներ, իրեն ամուսինների հետ մեկնում էին ռազմադաշտ:

Գայանե Մելջումյանը ծնվել է 1959 թվականին Երևանում, ամուսնացել է Էջմիածնի շրջանի Խաթունարխ գյուղում, ուներ երկու երեխա[1351]: 1992 թվականին Գայանե Մելջումյանը, ամուսնու՝ Սամվել Տոնոյանի հետ Էջմիածնից Արցախ մեկնելով, մտավ իր հոր ծննդավայրի՝ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ինքնապաշտպանական ջոկատի կազմ: Առաջին օրերին գյուղում բուժքույր Սվետլանա Մկրտչյանի հետ բուժօգնություն էր ցուցաբերում ազատամարտիկներին: 1992 թվականի սեպտեմբերից արդեն կանոնավոր բանակ էր ստեղծվել: Գայանեն ամուսնու հետ ծառայում էր կազմավորված ականանետային միավորումում: Այս զորամասում էին ծառայում նաև **Կարինե Գևորգյանը, Աղավնի Սահակյանը**, ապա՝ նաև **Աիդա Սերոբյանը**: Կարճ ժամանակում նրանք սրտակից ընկերուհիներ դարձան:

1993 թվականի հունիսի 13-ին Մաղավուզ գյուղի համար մղվող մարտերում հերոսաբար զոհվեց Կարինե Գևորգյանը: Գ. Մեջլումյանին հանձնարարեցին Կարինեի դիակը տեղափոխել Երևան: Երևանում լսեց, որ ամուսինը վիրավորվել է: Իրականում նա զոհվել էր վիրավոր ընկերոջ կյանքը փրկելիս: Ամուսնու զոհվելուց հետո շարունակեց ծառայությունը և 1992-1994 թվականներին գյուղի ջոկատի ու ՊԲ ականանետային վաշտի կազմերում մասնակցեց Մարտակերտի, Ղազա-

---

[1350] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 90:
[1351] Տե՛ս նույն տեղում, էջ 140:

ռահողի, Մաղավուզի, Մատաղիսի, Չլդրանի, Գետավանի, Կուսապատի, Թալիշի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերին, որոնց ընթացքում էլ մի քանի անգամ վիրավորվեց, սակայն ապաքինվելուց հետո վերադարձավ մարտադաշտ և մնաց մինչև հրադադար: Նա և՛ զինվոր էր, և՛ մայր, և՛ գթության քույր:

Արցախը երբեք անտարբեր չի եղել իր զավակների անկեղծ նվիրվածության հանդեպ: Միանգամայն արժանիորեն գնահատվեց նաև **Գ. Մեջլումյանի** ծառայությունը: Նա եկավ՝ չցանկանալով վերադառնալ, եկավ՝ ամուսնուն ետ վերադարձնելու նպատակով, սակայն ինքն էլ վարակվելով հայրենասիրության հիվանդությամբ՝ մնաց և մինչև վերջ կատարեց իր պարտքը հայրենի հողի, հարազատ ժողովրդի հանդեպ: 1994 թվականի ամռանը Գայանեն պարգևատրվել է ԼՂՀ «Մայրական երախտագիտություն» մեդալով[1352]:

Ազատամարտիկ-բուժքույր **Սվետլանա Աբրահամյանը** ծնվել է 1958 թվականի դեկտեմբերին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում:

1977 թվականին ավարտելով Բաքվի առևտրի տեխնիկումը՝ աշխատել է վաճառող: Նա ամուսնացել է, ունեցել մեկ երեխա: Ամուսինը, չտանելով ադրբեջանցի թուրքի նվաստացումները, սպանել է նրան և դատապարտվել: 1993 թվականի հունվարի 25-ին մեկնելով Արցախ և մտնելով Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջոկատի հիմքի վրա կազմավորված 44-րդ գումարտակ՝ Ս. Աբրահամյանը մասնակից է դարձել Մարտակերտի մի շարք բնակավայրերի ազատագրական մարտերին: Այդ օրերին Մարտակերտի շրջանի զգալի մասը գրավված էր հակառակորդի կողմից: Մինչև ամառ ծանր մարտերը հաջորդել են միմյանց: Այդ մարտերին մասնակցել է նաև Ս. Աբրահամյանը[1353]: Որպես սանիրահանգիչ՝ մասնակցել է Մարտակերտի Մաղավուզ, Հակոբ Կամարի, Լյուլասազ, Հաթերք և այլ ուղղությամբ ռազմական գործողություններին: Նույն թվականի օգոստոսից տեղափոխվել է «Խալաս-

---

[1352] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 142:
[1353] Տե՛ս նույն տեղում:

տոյի» հրամանատարությամբ գործող 42-րդ հրաձգային գումարտակ, որը տեղակայված էր Մաղավուզ գյուղում: Օգոստոսին 26 հոգուց կազմված խմբի հետ մեկնել է Կուբաթլու՝ մասնակցելու ազատագրական մարտերին[1354]: 10 օրվա ընթացքում շրջանը ամբողջովին ազատագրելուց հետո ջոկատի հետ վերադարձել է հարազատ գումարտակ:

1994 թվականի ապրիլին ռազմական գործողությունների ավարտման պահին մասնակցել է Մարտակերտի շրջանի համար մղվող մարտերին: Վիրավորվել է, բուժվել և վերադարձել ծառայության, մասնակցել է նաև Օմարի լեռնանցքի համար մղվող մարտերին, որը հերոսական ջանքերով ազատագրվել է փետրվարի 18-ին: Մի շարք մարտական առաջադրանքներ կատարելուց հետո՝ ապրիլի 20-ին, Երրորդ սովխոզի ուղղությամբ գրոհի ժամանակ Ս. Աբրահամյանը ծանր վիրավորվել է: Չնայած դրան՝ վիրահատության 20-րդ օրը մասնակցել է մայիսի 9-ի արցախյան զինվորական շքահանդեսին և հրադադարը դիմավորել է Ստեփանակերտի զինվորական հիվանդանոցում: Մայիսի 25-ին վերադառնալով պաշտպանական շրջանի երկրորդ գումարտակ՝ ստացել է ենթասպայի կոչում և շարունակել ծառայել ՊՆ-ում: Առ այսօր նա ծառայում է նույն զորամասում որպես 1 ՀԳՄ ԲԿ պետ: Իրեն դրսևորել է որպես հոգատար, խոտապահանջ և բանիմաց զինծառայող: Նրան վստահված ստորաբաժանումը մշտապես աչքի է ընկել իր կատարած բարեխիղճ աշխատանքով, ինչի համար Ս. Աբրահամյանը բազմիցս արժանացել է հրամանատարության խրախուսանքին, պարգևատրվել պատվոգրերով, թանկարժեք նվերներով[1355]:

Ազատամարտիկ-բուժքույր Սուսաննա Կոստանդյանը ծնվել է փետրվարին Արցախի Մարտակերտ ավանում[1356]: 1984 թվականին, ավարտելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնամետալուրգիական ֆակուլտետը, աշխատանքի է անցել Նոր Հաճընի «Սապ-

---

[1354] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 138:
[1355] Տե՛ս նույն տեղում:
[1356] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 103-104:

ֆիր» արտադրական միավորումում որպես ինժեներ: 1987 թվականին ընտրվել է «Շողակն» գործարանի կոմերիտմիության ազատված քարտուղար և աշխատել է մինչև 1991 թվականի վերջը:

Դեռևս 1989 թվականին Նոր Հաճընում Պետրոս Խոջոյանի հրամանատարությամբ ստեղծվեց կամավորական ջոկատ, որին անմիջապես անդամագրվեց Ս. Կոստանդյանը: Ջոկատն իր մարտական ուղին սկսեց Բերդաձորից: Նույն թվականի աշնանը մեկնելով այնտեղ՝ մնաց մինչև 1990 թվականի հունվարը: Այդ ընթացքում **Ս. Կոստանդյանը** ջոկատի կապավորն էր, միևնույն ժամանակ իրականացնում էր թիկունքային ծառայությունը, որն այդ տարիներին ավելի դժվար աշխատանք էր, քան սահմանում կամ Արցախում լինելը[1357]:

Մարտակերտի շրջանի ազատագրմանը միացած Ս. Կոստանդյանը, 1990 թվականին համալրելով Նոր Հաճընի ջոկատի կազմը, նորից մեկնել է Բերդաձոր: Մեկ ամիս մնալով և պայքարելով ռուս-թուրքական միացյալ ուժերի ոտնձգության դեմ՝ նա կամավորականների հետ վերադարձել է և սկսել զբաղվել Արզնիի օդանավակայանում զենքի և զինամթերքի տեղափոխմամբ[1358]:

1993 թվականի ջոկատի առաջադրանքով Սուսաննա Կոստանդյանը մեկնել է Մարտակերտի շրջան, որտեղ և մասնակից է դարձել Հակոբ Կամարի ու Մատաղիս գյուղերի ազատագրական գործողություններին: Նա փորձված բուժքույր էր և մարտիկ: Այս տեղանքում կողք կողքի կռվում էին Հայաստանից, Արցախից եկած ջոկատներ, որտեղ բուժքույրերի կարիք էր զգացվում և հասնել բոլորին նրա համար շատ դժվար ու ծանր էր: Սակայն շարունակել է նման պայմաններում մեծ պատասխանատվությամբ կատարել իր պարտականությունները, իսկ անհրաժեշտության դեպքում զենք է վերցրել: 1994 թվականի Նոր Հաճընի «Նաիրի» վաշտի հետ նա տեղափոխվել է Օմարի լեռնանցք, որտեղ անտանելի ծանր պայմաններում մարտեր էին ընթանում: Թըշ-

---

[1357] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 103-104:
[1358] Տե՛ս նույն տեղում, էջ 104:

նամու օղակի մեջ հայտնված վաշտը այդ մարտերում ունեցել է 12 զոհ և 23 վիրավոր[1359]: Նահանջի ճանապարհին Սուսաննա Կոստանդյանը վիրավորվել է, սակայն դա պատճառ չի հանդիսացել, որ նա լքի մարտի դաշտը: Ղամիշլի գյուղի ազատագրումից հետո՝ փետրվարի 15-ին, վերադարձել է Երևան՝ հանգստի, որտեղ և դիմավորել է հրադադարը: Զինադադարից հետո շատերն են վերադարձել իրենց նախկին մասնագիտություններին, իսկ նա չի լքել զինված ուժերը[1360]:

1994 թվականի մայիսից աշխատանքի է անցել «Երկրապահ կամավորականների միությունում», ապա՝ նոյեմբերից մինչև 1996 թվականի հունվարը՝ Ապարանի 52258 զորամասում: Մարտական ծառայությունների համար ստացել է լեյտենատի կոչում: Ծառայում է Եղվարդի շրջանային զինկոմիսարիատում որպես բաժնի պետ[1361]:

Անահիտ Մարտիրոսյանը ծնվել է 1964 թվականի մարտին Բաքվում: Ծնողները ծնունդով Շամխորի շրջանի Չարդախլու գյուղից էին: 1987 թվականի ավարտել է Բաքվի նավթաքիմիական ինստիտուտը:

1989 թվականին՝ ամուսնու դաժան սպանությունից և եղերական դեպքերից հետո, հրաշքով փրկված Անահիտը ծնողների և երկու որդիների հետ բնակություն է հաստատել Հայաստանի Նոյեմբերյանի շրջանի Բագրատաշեն գյուղում[1362]: Անահիտը արագ է հմտացել բուժքրոջ մասնագիտության մեջ: Նա առաջին գծից դուրս էր բերում, բժշկական օգնություն ցույց տալիս վիրավորներին, որոնց տեղափոխում էին Երևան: Ջոկատները փոխարինում էին մեկը մյուսին, իսկ նա չէր լքում ռազմի դաշտը: 1991 թվականին ՀԱԲ-ի մի ջոկատի հետ որպես բուժքույր-մարտիկ Արցախ է մեկնել նաև Անահիտ Մարտիրոսյանը՝ միանալով Մարտակերտի շրջանի Մարաղա, Մաղավուզ, Կարմի-

---

[1359] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 105:
[1360] Տե՛ս նույն տեղում:
[1361] Տե՛ս նույն տեղում:
[1362] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 193:

ռավան, Մեծ Շեն, Հոռաթաղ, Դրմբոն գյուղերի ազատագրական պայքարին, որի ընթացքում էլ մի քանի անգամ վիրավորել է[1363]:

1992 թվականի ապրիլին Չլդրանի թեժ մարտերի ընթացքում գերի ընած 14 թուրքերի մեջ էր Ա. Մարտիրոսյանի դպրոցական ընկերը, որի մայրը հայ էր, իսկ նա եկել էր կռվելու հայերի դեմ: Այդ մասին տեղեկանալով՝ հրամանատարը նրան՝ «ընկերոջը», հանձնել է Անահիտին: Սակայն վերջինիս վրեժը մեծ էր. աչքի առաջ էր Սումգայիթում տանջամահ արված ընկերուհին: Առանց վարանելու՝ նա իր ձեռքով սպանել է «դավաճանին»: Այս դեպքերից հետո ստեղծվել է 28 հոգուց կազմված «Անահիտ» ջոկատը՝ Ա. Մարտիրոսյանի հրամանատարությամբ[1364]: Նրա գլխավորությամբ ջոկատը, որի կազմում արցախցիների կողքին կռվում էին ռուս կամավորականներ, փառավոր մարտական ուղի է անցել՝ ապրելով սարսափը, ինչպես նաև հարձակման ու գերված տարածքների ազատագրման երջանկությունը:

1992 թվականի հուլիսի 26-ին Մաղավուզի պաշտպանական դիրքերում թշնամական տանկերը, հրետանին ու ականանետները արկերի տարափ էին թափում պաշտպանների գլխին: Անահիտը գլխից վիրավորվել է իրեն շատ մոտ պայթած արկից և ցանցակաթվածի ենթարկվել: Յոթ օր հոսպիտալում բուժվելուց հետո վերադարձել է դիրքեր, այնուհետև նորից ճակատ մեկնել: Թեժ մարտի ժամանակ ջոկատն ընկել է շրջափակման մեջ: Օգնությունն ուշացել է: Շրջափակումից դուրս գալով, ընկերների դիակները վերցնելով՝ ջոկատը Դրմբոնից տեղաշարժվել է Չլդրան[1365]:

1993 թվականի գարնանը ջոկատը հարձակման է անցել Մարտակերտի շրջանի Ալաշան գյուղի ուղղությամբ: Թեժ մարտերում Անահիտը հերթական անգամ վիրավորվել է ոտքից և ձեռքից: Այս անգամ արդեն առողջական վիճակի կտրուկ վատացման պատճառով

[1363] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 193:
[1364] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 137-138:
[1365] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 193:

ստիպված է եղել հեռանալ պատերազմի դաշտից[1366]: Նրա երկարատև ապաքինման պատճառով ջոկատը լուծարվել է՝ ընդգրկվելով ԼՂՀ ՊԲ-ի կազմում: Նրան՝ իբրև հերոսուհի հայուհու, խիզախ մարտական ընկերոջ, բարձր է գնահատել Արցախի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը[1367]:

1992 թվականին Մարտակերտի պաշտպանականի (հինգերորդ պաշտպանական շրջան) կազմը համալրեց Արցախյան շարժման ակտիվ մասնակից **Արևիկ Սարգսյանը**: Նա Չլդրան գյուղի գաղտնի կամավորական ջոկատի անդամ էր: Ծնվել է 1954 թվականի նոյեմբերին Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղում: 1972 թվականին ընդունվել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի տնտեսագիտական-հաշվապահական բաժինը, որն ավարտելով՝ աշխատանքի է անցել Ստեփանակերտի կարի ֆաբրիկայում որպես գլխավոր հաշվապահի տեղակալ[1368]: Բազմիցս անդրադարձել ենք Ա. Սարգսյանին, ով իր հայրենանվեր գործողությունը սկսել էր դեռևս 1988 թվականից: Նա ակտիվորեն մասնակցել է Ստեփանակերտի ցույցերին, ստորագրություններ հավաքել և թռուցիկներ տարածել: ՊԲ-ի շարքերում ծառայության անցնելով՝ նա մասնակցել է շրջանի բնակավայրերի ինքնապաշտպանական և ազատագրական մի շարք մարտերի:

1991 թվականի ամռանն արդեն գյուղում կազմակերպվել էին զինված գաղտնի ջոկատներ, որոնք ծածուկ էին գործում՝ գիշերները պաշտպանելով գյուղի դիրքերը: Ա. Սարգսյանը, ջոկատի հետ միշտ դիրքերում է եղել, իսկ ցերեկներն զբաղվել է զենք, զինամթերք ու սնունդ հայթայթելով:

Տարածքի շարժումը կազմակերպելու համար կցված էին Ստեփանակերտից Բեկորը (Աշոտ Ղուլյան), իսկ Մարտակերտից՝ Վիգեն Շիրինյանը: Զենքն ու զինամթերքը բերում էին Երևանից և հասցնում Գե-

---

[1366] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 139:
[1367] «Մարտիկ» 8-13 մարտի, N 11, Ստեփանակերտ, 2004:
[1368] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 168:

տաշեն, Շահումյան: Արևիկ Սարգսյանը մասնակցել է նաև այս վտանգավոր ու պատասխանատու գործին[1369]:

1992 թվականին թուրքերի ուժերը գերակշիռ էին. ռուսական բանակի աջակցությամբ մեկը մյուսի հետևից գրավել և հայաթափել էին Շահումյանի ու Մարտակերտի շրջանների գյուղերը: Ամռանը թուրքերը գրավել էին նաև Մարտակերտը: Մարտակերտի ջոկատը՝ Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) գլխավորությամբ, նահանջել էր մինչև Չլդրան: Ա. Սարգսյանը մտել էր այդ ջոկատի մեջ որպես թիկունքի պետ[1370]:

Օգոստոսի 20-ին Չլդրանում էին: Ծանր վիճակ էր ստեղծվել հայկական զինված ջոկատների համար: Այս մարտերում Ա. Սարգսյանն ընկավ ռմբակոծության տակ, մի քանի տեղից վիրավորվեց, բայց չհեռացավ մարտական դիրքերից:

Օգոստոսի 22-ին ջոկատը տեղափոխվեց «Բասմաչ» բարձունք, որն անտառածածկ մի տեղանք էր: Թուրքերը մինչ այդ չտեսնված թափի հարձակում ձեռնարկեցին: Զոհեր և վիրավորներ եղան: Քանի որ ջոկատը բուժքույր չուներ, Ա. Սարգսյանն ստիպված էր բուժքրոջ պարտականություններն իր վրա վերցնել, և չնայած ինքն էլ վիրավորված էր մի քանի տեղից, բայց գերմարդկային ջանքերի գնով բոլոր վիրավորներին դուրս հանեց մարտադաշտից: Մարտական ընկերներն ու հրամանատարը զարմացած էին՝ որտեղից այդքան ուժ, որտեղի՞ց այդքան տոկունություն. նա վիրավոր վիճակում անում էր մի գործ, որն ի զորու չէր կատարել նույնիսկ տղամարդը[1371]:

Նորից ստիպված էին նահանջել: Բազավորվել էին Առաջաձորի դպրոցում: Ծանր մարտեր էին: Թուրքերն աշխատում էին ցանկացած գնով պաշտպաններին դուրս մղել գյուղից: Տղաների ուժերը սակավ էին: Հերոսաբար էին կռվում բոլորը, բայց թուրքերը գերազանց ուժե-

---

[1369] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 169:
[1370] Տե՛ս նույն տեղում, էջ 170:
[1371] Տե՛ս նույն տեղում, էջ 169:

ռով և տեխնիկայով գրոհում էին: Ա. Սարգսյանն ստիպված ինքն էլ մտավ մարտի մեջ. գնդացիրը վերցրեց ձեռքը, տեղավորվեց մարտիկների կողքին: Կարողացան կասեցնել հակառակորդի գրոհները և հիմնավորապես ամրացան[1372]:

1992 թվականի աշնանից փոփոխական հաջողություններով ռազմական գործողություններ սկսեցին ռազմաճակատի բոլոր տեղամասերում: Զորամասը, որտեղ ծառայում էր Ա. Սարգսյանը, նորից առաջացավ մինչև Չլդրան, ապա առաջ՝ Դրմբոն: Հայոց նորաստեղծ բանակի հաղթական երթն արդեն անհնարին էր կասեցնել:

Ա. Սարգսյանը որպես զինվոր դիմավորեց հրադադարը, ծառայեց մինչև 1996 թվականը: Հրադադարից հետո ծառայությունը շարունակել է Մարտակերտի ռազմականացված կապի համակարգում՝ որպես հեռախոսավարուհի[1373]:

Ազատամարտիկ **Լոլիտա Վարդանովան** ծնվել է 1970 թվականի հունվարին Բաքու քաղաքում: 1973 թվականի տեղափոխվել է Հայաստան՝ Արարատի շրջանի Կիրովի անվան սովխոզ: 1988 թվականի ընդունվել է և 1989 թվականի ավարտել է առաջին բժշկական օգնության կուրսեր: Ամուսնացած էր, ուներ մեկ երեխայի: Պապերը Արցախի Հադրութի շրջանից էին[1374]:

1989 թվականին Լ. Վարդանյանը, հակառակ իր մոր՝ պատմության ուսուցչուհու և ամուսնու պահանջներին, որ չգնա Արցախ, մեկնելց և ծառայության անցավ Հոկտեմբերյանի (Արմավիր) ջոկատում, որի կազմում շուրջ 6 ամիս մասնակցեց ընդհարումներին, փրկելով վիրավորներին՝ դարձավ բուժքույր ու զինվոր:

Ամուսինը լքել էր Լ. Վարդանյանին: Մայրը համոզելով՝ նրան տուն էր բերել: Սակայն Լոլիտան չկարողացավ կատարել մորը տված խոստումը. 1991 թվականին մեկնեց Մեղրիի շրջան, որտեղ մասնակցեց

[1372] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 169:
[1373] Տե՛ս նույն տեղում, էջ 171:
[1374] Տե՛ս նույն տեղում, էջ 192:

բոլոր ընդհարումներին ու մարտերին, հերթապահեց պահակետերում, տիրապետեց զենքերի տարբեր տեսակներին: Նա մի ձեռքին սանիտարական պայուսակն էր պահում, մյուսում՝ ավտոմատը: 1992 թվականին, ինչպես բոլոր շրջաններում, Արարատի շրջանում ևս, ջոկատների հիմքի վրա զորամասեր էին կազմակերպվում[1375]:

Իրադարձությունների ամենաեռուն շրջանում՝ 1992 թվականին, Լ. Վարդանյանը, Վեդիի պայմանագրային գումարտակի կազմում մեկնելով Արցախ, մասնակից դարձավ Հորադիզի, Դրմբոնի, Մեծ Շենի, Հաթերքի, Սարսանգի ջրամբարի, Հակոբ Կամարիի մարտերին: 1994 թվականի դեկտեմբերի 28-ին գումարտակը հերթական առաջադրանքը ստացավ Մարտակերտում: Ադրբեջանցիները, կարծես հաշտվելով պարտության մտքի հետ, անընդհատ նահանջում էին: Թշնամին ամրացել էր Հակոբ Կամարի գյուղի տարածքում և համառ դիմադրություն էր ցույց տալիս: Ինչպես միշտ, ազերիները հրետակոծության էին ենթարկում հայկական դիրքերը: Լ. Վարդանյանը առաջին գծում էր: Առաջին վիրավորներին հանելով ու վիրակապելով՝ ուղղաթիռով տեղափոխեցին թիկունք: Սակայն համառ մարտերը դեռ շարունակվում էին. թշնամին լավ էր դիրքավորվել, կառչած դիմադրում էր: 1994 թվականի հունվարին հայկական զորամիավորումները, կոորդինացնելով իրենց գործողությունները, ձեռնամուխ եղան գյուղի ազատագրմանը, որի ընթացքում էլ Լ. Վարդանովան զոհվեց[1376]:

Յուրաքանչյուր գյուղ ու բնակավայր արդարացիորեն հպարտանում էր իր հերոս զավակներով և դուստրերով, որոնց թվում էր նաև **Լիանա Մկրտումյանը**: Նա, 1992 թվականին մտնելով Մարտակերտի պաշտպանական շրջան, անդամագրվեց Վլադիմիր Բալայանի ջոկատին:

Սկզբնական շրջանում մասնակցել է մարտական պատրաստության պարապմունքներին, իսկ արդեն հունիս-հուլիս ամիսներին կա-

---

[1375] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 193:
[1376] Տե՛ս նույն տեղում:

տարել առաջին մարտական առաջադրանքը՝ ջոկատի մշտական տեղակայման վայրից դուրս բերելով զենքն ու կապի միջոցները[1377]: Մարտակերտի անկումից հետո ջոկատը հանգրվանել էր «Զառին բաղ» կոչվող տեղամասում: Լավ սերտելով զրահատեխնիկայի «լեզուն»՝ Լ. Մկրտումյանը դարձավ մարտական մեքենայի հրամանատար և մասնակցեց Մարտակերտի, Աղաբեկալանջի, Մոխրաթաղի, Մեծ շենի, Սիխավենդի, Կիչանի, Դրմբոնի, Օմարի լեռնանցքի, Քարվաճառի ազատագրական մարտերին[1378]:

«Արցախ» թերթի 1992 թվականի դեկտեմբերի 26-ի համարում կարդում ենք. «Լիանան ութ ամիս է՝ զենքը ձեռքին... 20 տարեկան՝ 40-ամյա տղամարդու կամք ու արիություն ունի: Կրակում է բազում զենքերից... ԲՄՊ հրամանատար էր, երբ ողջ անձնակազմով Մոխրաթաղի ուղղությամբ գրոհելիս առաջ անցան, նա գյուղ մտավ մենակ, իսկ թուրքերը այնտեղ մեծ բազա ունեին: Երբ հարկավոր չափով անցել էին գյուղի մյուս կողմը, շրջեցին մեքենան և ուղիղ նշանառությամբ կրակ տեղացին աքցանի մեծ հայտնված թշնամու վրա, գերվեց թուրք կապիտան և բավականին զինտեխնիկա»[1379]: Ռազմի դաշտում երիտասարդ աղջկա նման համարձակ ու անձնվեր դրսևորումը ավելի էր մեծացնում նրա կողքին մարտնչող տղամարդ ազատամարտիկների պատասխանատվությունը:

1993 թվականի սկզբներին Լ. Մկրտումյանը, տեղափոխվելով Վարդենիս, անդամագրվել է տեղի ջոկատին, որի հրամանատարան էր Հովսեփ Հովսեփյանը: Հունիսին նշանակվել է գումարտակի ուսումնական դասակի հրամանատար: Զինադադարից հետո՝ որոշ ժամանակ անց, նորից վերադարձել է և շարունակել ծառայությունը ՊԲ-ում[1380]:

[1377] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 121:
[1378] Տե՛ս նույն տեղում:
[1379] «Արցախ», 26 դեկտեմբերի, Ստեփանակերտ, 1992:
[1380] «Ազատ Արցախ», 7 հուլիսի, Ստեփանակերտ, 2012:

Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանության միացած կանանց թվում էր նաև **Անժելա Հակոբյանը**: Նրա մարտական ուղին սկսվել է Սևանի կամավորական ջոկատի հետ: Ա. Հակոբյանը ծնվել է 1960 թվականին Բաքվում: 1975 թվականին ընդունվել է տեխնիկական ուսումնարան, մինչև 1990 թվականին աշխատել Բաքվի հրշեջ կայանում: 1990 թվականին բնակություն է հաստատել ԼՂՀ Մեհտիշեն գյուղում՝ պապի տանը[1381]: Սկզբնական շրջանում մասնակցելով Ասկերանի և Հադրութի ինքնապաշտպանական գործողություններին՝ մասնակից է դարձել Մարտակերտի շրջանում ընթացող ծանր մարտերին[1382]:

Ազգամիջյան հակամարտություններն արդեն վեր էին ածվել բացահայտ զինված ընդհարումների: Ադրբեջանցիները ամրացել էին Խոջալու ավանում: Հայաստանից կամավորական ջոկատներ էին գալիս՝ մասնակցելու Խոջալուի կրակակետերի վնասազերծմանը: Սևան քաղաքի կամավորական ջոկատը տեղակայվել էր Մեհտիշենում: Այդ ժամանակվանից էլ Ա. Հակոբյանը օգնել է ջոկատի մարտիկներին, իսկ 1992 թվականին վերջնականապես դարձել է ջոկատի անդամ: Նույն թվականի հունիսի 25-ին մեկնել է Հադրութի շրջան, մասնակցել Տող գյուղի ազատագրման և Սարիշենի պաշտանական մարտերին: Նա և՛ բուժքույր էր, և՛ մարտիկ, և՛ խոհարար[1383]:

1992 թվականին վիճակը ծանր էր հատկապես Մարտակերտի ուղղությամբ: Հուլիսի 20-ին ջոկատը մեկնել է Մարտակերտի շրջան, մասնակցել Սարսանգի ջրամբարի ազատագրման համար մղվող մարտերին: Զոհերն ու վիրավորները շատ էին, բուժքրոջ աշխատանքը՝ ծանր: Այստեղ էին նաև բուժքույրերից Աղավնի Սահակյանը և Աիդա Սերոբյանը, որոնց հետ Ա. Հակոբյանն արդեն ծանոթացել էր և միմյանց օգնելով՝ նրանք հսկայական աշխատանք էին անում: «Անժելան

[1381] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 182:
[1382] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 106:
[1383] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 182:

քաջ և հավատարիմ զինվոր էր: Մարտի դաշտում երբեք չէր լքի իր ընկերներին, եթե նույնիսկ դրա համար կյանքով հատուցեր»,– ասել է Սևանի ջոկատի հրամանատար Սամվել Գևորգյանը[1384]:

1992 թվականի օգոստոսին ջոկատը մասնակցել է «Մահապարտների» մարտական գործողություններին: Վաղուհաս մեկնելիս Ա. Հակոբյանին չեն տարել՝ իմանալով, որ կենաց ու մահու կռիվ է լինելու: Երկու օր հետո ջոկատը մեկ զոհ է տվել, իսկ հրամանատարը՝ Սամոն (Սամվել Գևորգյան), ծանր վիրավորվել է: Ա. Հակոբյանը առանց թույլտվության շտապել է տղաների մոտ: Առաջին օգնություն է ցույց տվել, մարտի դաշտից դուրս է բերել վիրավորներին[1385]:

1992 թվականի, երբ կազմավորվեց Արցախի կանոնավոր բանակը, Ա. Հակոբյանը ծառայության անցավ թիվ 5 մոտահրաձգային բրիգադում և մինչև հրադադար մասնակցեց բոլոր մարտերին: 1993 թվականին փետրվարին մարտեր էին ընթանում ազատագրված Սարսանգի ջրամբարի մոտակայքում: Գիշերը ազերիները, հանկարծակի գրոհելով, գրավում էին հայերի պաշտպանական դիրքերը: Հաջորդ օրն օգնության հասած ուժերը կարողացան ետ վերցնել կորցրած դիրքերը և գտնել պաշտպանների դիակները: Ա. Հակոբյանը օգնության հասած ստորաբաժանման կազմում էր: Նա ականատես եղավ դաժան տեսարանի, ինչը մինչև կյանքի վերջը չէր կարողանա մոռանալ. դիակների գլուխները կտրել տարել էին: Այդ զոհերի թվում էր նաև բուժքույր Նաիրա Սահակյանը[1386]:

Հրադադարից հետո Ա. Հակոբյանը բնակություն է հաստատել Սևան քաղաքում: Պարգևատրվել է ՀՀ «Արիության համար» մեդալով[1387]:

[1384] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 107:
[1385] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 182:
[1386] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 108:
[1387] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 182:

Հայրենիքում տիրող ծանր իրադրությամբ մտահոգված շատ հայորդիներ տարբեր տեղերից շտապում էին ծննդավայր, նրանց թվում էր նաև **Պալինա Գրիգորյանը**[1388]: Նա ծնվել է 1965 թվականի հուլիսին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում: 1988 թվականին սովորելու նպատակով տեղափոխվել է Հայաստանի Չարենցավան քաղաք:

Պ. Գրիգորյանն աշխատել է Չարենցավանի կենտրոնաձույլ գործարանում սկզբում որպես լաբորանտ, այնուհետև՝ դիսպետչեր, միաժամանակ ստացել է մեքենագրուհու, հաշվապահ-հաշվետարի, բուժակի մասնագիտություններ:

Արցախյան ազատագրական շարժման սկզբից մասնակցել է Չարենցավանում անցկացված նստացույցին, միտինգներին, օգնել է անհրաժեշտ հարցերի լուծման համար ստորագրություններ հավաքել[1389]: Նա 1993 թվականին վերադարձել է Արցախ և որպես կամավորական՝ ծառայության անցել Մարտակերտի գումարտակում ու նրա կազմում մասնակցել է Թալիշի, Մատաղիսի, Տոնաշենի, Հակոբ Կամարիի, Մաղավուզի, Մեծ Շենի, Կուսապատի, Հոռաթաղի ազատագրմանը, Քարվաճառի մարտական գործողություններին: Պատերազմի տարիներին ստանձնելով ՊԲ ՀԴՆ 3-րդ մարտկոցի սանիրահանգչի պարտականությունը՝ նա շարունակել է ծառայությունը հրետանայինի գնդում: Ապա անցնելով բուժծառայության պետի պարտականությանը՝ ստացել է ԼՂՀ բանակի ենթասպայի կոչում: Հրադադարից հետո Պ. Գրիգորյանը շատերի նման չհեռացավ ՊԲ-ի շարքերից. նա ծառայությունը շարունակեց թիվ 49971 զորամասում՝ որպես դեղատան պետ և բուժակ[1390]:

[1388] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 167:
[1389] «Մարտիկ», 8 փետրվարի, N 4, Ստեփանակերտ:
[1390] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 167:

Պ. Գրիգորյանը պարգևատրվել է «Մարտական ծառայություն համար», «Վազգեն Սարգսյան», «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներով, «Երկրապահ» ԿՄ հուշամեդալով, կառավարական այլ պարգևներով[1391]: Պ. Գրիգորյանն ապրում է ակտիվ հասարակական կյանքով. մի շարք հասարակական կազմակերպությունների անդամ է:

1993 թվականի մարտի վերջին իրավիճակը կտրուկ սրվեց հյուսիսարևմտյան ռազմաճակատում: Ադրբեջանական բանակի հրամանատարությունն այստեղ հայկական ուժերի ուշադրությունը շեղելու նպատակով Քարվաճառի ուղղությամբ կազմակերպեց հանկարծակի հարձակում: Սակայն ՊԲ-ն այն հատվածում ստեղծեց պաշտպանական ուժեղ պատնեշ, որը ոչ միայն կանխեց ադրբեջանական ուժերի խորանալու փորձը, այլ նաև մինչև ապրիլի 5-ը ազատագրեց շրջանը: Հայ մարտիկների ուժերի շարքերում մարտերին մասնակցեց նաև **Շուշանիկ Թահմիզյանը:**

Շ. Թահմիզյանը ծնվել է 1961 թվականի նոյեմբերին Հոկտեմբերյանի շրջանի Ձերժինսկու անվան սովխոզում: 1976 թվականին ավարտելով միջնակարգ դպրոցը՝ ամուսնացել է և տեղափոխվել Արարատ քաղաք: Աշխատել է Արմաշի ձկնային տնտեսությունում:

Շուշանիկի հայրը հաճախ է պատմել Ղարսից գաղթած պապի պատմությունները, սեր արթնացրել հայրենի հողի նկատմամբ[1392]: Նա շարժմանը միացել է դեռևս 1988 թվականի սկզբներին: Այնուհետև անդամագրվելով արարատցի Էդիկ Կարապետյանի կազմած ջոկատին՝ մեկնել է Շուշի, որտեղ էլ ջոկատը ընդգրկվել է Վաչագան Իշխանյանի գնդի կազմում: Կարճատև պատրաստությունից հետո Շուշանիկ Թահմիզյանը գործուղվել է Խրամանլար գյուղի պաշտպանական դիր-

[1391] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 167:
[1392] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 92:

քեր: Խիզախ հայուհուն մարտական ընկերները կնքել են «Գայլի սիրտ» անունով[1393]:

1993 թվականի գարնանը սկսվեցին Քարվաճառի ազատագրման գործողությունները, որին մասնակցում էր նաև Շ. Թահմիզյանը: Նա և՛ բուժքույր էր, և՛ մարտիկ: Ապրիլին վերադարձել էր Շուշի, այնուհետև մեկնել Մեծ Շենի դիրքերը: Մարտից հետո Շ. Թահմիզյանը տեղափոխվել է Մավր Օհանյանի գումարտակ[1394]:

Հերթական ռազմական առաջադրանքը ստացել է 1993 թվականի սկզբին Մեծ Շենի դիրքերում, որից հետո 1993 թվականի հուլիսին մասնակցել է Աղդամի ազատագրական մարտերին, փրկել բազմաթիվ զինվորների: Նա մասնակցել է նաև Ֆիզուլու խաչմերուկի գրավմանը:

Աղդամի ուղղությամբ ծանր մարտեր սկսվեցին: Թշնամին ուժեղ կերպով ճնշում էր գործադրում տղաների դիրքերի վրա: Պահակետից ահազանգեցին, որ երկար չեն կարող դիմադրել: Հարկավոր էր օգնություն ուղարկել: Հրամանատարը Շ. Թահմիզյանին ուղարկեց այնտեղ, որպեսզի տղաները նրա ներկայությունից ձգվեն: Նա հրետանու և ականանետների կրակի տակ հասավ տղաներին: Մարտիկները պատվով կատարեցին իրենց վրա դրված պարտականությունը, սակայն նրանցից ութը վիրավորվեց: Շ. Թահմիզյանն այս անգամ էլ, արհամարհելով կյանքին սպառնացող ստույգ վտանգը, վիրակապեց բոլորին և կրակի տակ նրանց տեղափոխեց ապահով տեղ:

Մովսես Հակոբյանի գնդի և իր սիրելի գումարտակի հետ Շ. Թահմիզյանը փառապանծ մարտական ուղի անցավ: Կարծես վախ չուներ, չէր գիտակցում վտանգը. այնքան մեծ էր հաղթելու և յուրայինին օգնելու, փրկելու, մահը վանելու ցանկությունը: Եղել են դեպքեր, երբ շտապօգնության մեքենայի վարորդները վախեցել են հրետակոծության տակ առաջ գնալ: Այդպիսի դեպքերում Շ. Թահմիզյանը, նրանց վրա աստրճանակ պահելով, ստիպել է առաջ շարժվել, որովհետև գիտեր,

---

[1393] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 91-92:
[1394] Տե՛ս նույն տեղում:

եթե ժամանակին օգնության չհասնի, տղաները կմեռնեն արյունահոսությունից:

1993 թվականի ամռանը՝ Ֆիզուլիի խաչմերուկը գրավելու ժամանակ, վիրավորվեց գնդի շտաբի պետը: Շ. Թահմիզյանը վիրակապեց: Գործը հազիվ ավարտած՝ առաջավոր գծից ռադիոկապով հայտնեցին, որ երեք ծանր վիրավոր կա: Հրետակոծության և գնդակոծության տակ այնտեղ հասնելը հավասարազոր էր մահվան: Հրամանատարը նայեց Շուշանիկին: Անհնար էր մտնել առաջին գիծ, բայց նա արեց անհնարինը. մարտիկներին վիրակապեց, տեղափոխեց մեքենայի մեջ և ուղարկելով դաշտային հոսպիտալ՝ ինքը մնաց կրակագծում, որպեսզի անհրաժեշտության դեպքում տղաների կողքին լինի[1395]: Անցնելով պատերազմի թոհուբոհով՝ Ֆիզուլի, Հորադիզ, Կուբաթլու, Զանգելան, Մինջևան՝ 1994 թվականին նորից վերադարձավ Քարվաճառ, իսկ հրադադարը դիմավորեց Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղի մոտակայքում:

1994 թվականին Շ. Թահմիզյանին շնորհեցին լեյտենանտի, իսկ 1996 թվականին՝ ավագ լեյտենանտի կոչում[1396]: Հրադադարից հետո որպես բժշկական ծառայության պետ աշխատանքի անցավ երրորդ պաշտպանական շրջանում՝ Նելսոն Սողոմոնյանի գնդում:

Ազատամարտում բազմաթիվ են կանանց սխրագործությունները, որոնք, իրենց կյանքը վտանգելով, կանգնեցին հայ տղամարդու կողքին: Այս տեսակետից հիշողության արժանի անվախ հայուհի, իսկական հերոսուհի **Հեղինե (Ջեմմա) Հովհաննիսյանը:**

Ազատամարտիկ-բուժքույր Հ. Հովհաննիսյանը ծնվել է 1947 թվականի մարտին Արարատի շրջանի Փոքր Վեդի գյուղում:

1964 թվականին ընդունվել է Երևանի ակումբագրադարանային տեխնիկումը, այնուհետև աշխատել է գյուղի կուլտուրայի տանը: Ամուսնացած է, ունի երեք երեխա: 1988 թվականից օգնություն է ցու-

---

[1395] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 92-93:

[1396] Տե՛ս նույն տեղում:

ցաբերել երկրաշարժից տուժածներին և փախստականներին: Երբ սկսվել է Արցախյան ազատամարտը, վաճառել է զարդերը, տան արժեքավոր իրերը, հավաքած գումարով ջոկատ է կազմավորել, զինել, դարձել է ջոկատի հրամանատարը: Արագաշարժության և ճարպկության համար նրան «Մաուգլի» են անվանել[1397]: Նրա մարտական ուղին սկսվել է Երասխավանից և Տիգրանաշենից: Մարտնչել է մինչև հրադադարը: Երեք անգամ վիրավորվել է, բայց նորից շարք է վերադարձել:

1988-1994 թվականներին Հ. Հովհաննիսյանի կյանքը նման է եղել արկածային, անհավատալի պատմության: 1992 թվականին օգոստոսին Գետավան գյուղի մոտ՝ Վաղուհասի ճանապարհին, իր ջոկատի հետ ընկել է շրջապատման մեջ: Ազերիները մեծ ուժերով հարձակման են անցել: Ազատամարտիկները երեք օր մնացել են մահվան օղակի մեջ, սակայն չեն հուսահատվել: Հակառակորդը մարտական տեխնիկա է օգտագործել: Երբ զրահամեքենան մոտեցել է, շատերը փախուստի են դիմել: Արիասիրտ հայուհին հակատանկային նռնակով պայթեցրել է մեքենան, ինքն էլ վիրավորվելով՝ գիտակցությունը կորցրել: Հրամանատարին համարել են զոհված: Երեք օր հետո գիտակցությունը տեղն է եկել: Իր ձեռքով ազդրից հանել է բեկորը, վիրակապել և մի քանի օրվա տաժանակիր թափառումներից հետո գտել ընկերներին[1398]: Նա զորամասի ոգին էր՝ միշտ կենսուրախ, չընկճվող, անվախ, թշնամու համար՝ անկանխատեսելի: …Ջեմման հմուտ զինվոր էր, հրամանատար էր, բուժքույր և հոգատար մայր:

1994 թվականի հունվարի 6-ին Մանվելի բրիգադը, որի կազմում էր Ջեմմայի վաշտը, հրաման է ստացել Մարտակերտի ճակատից տեղափոխվելու Հորադիզ: Սակայն թուրքերն անցել են լայնածավալ հարձակման: Հակոբ Կամարի գյուղի մոտակայքում հայերը ստիպված են եղել նորից վերադառնալ իրենց նախկին դիրքերը, բայց գյուղն արդեն

[1397] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, էջ 121:

[1398] Տե՛ս նույն տեղում, նաև՝ Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 189:

թշնամու ձեռքում էր: Ջեմմայի վաշտը տեղ հասնելուն պես անմիջապես մարտի է բռնվել: Համալրումն ուշանում էր, իսկ թշնամին 40-50 մետր հեռավորության վրա էր: Ջեմման դուրս է եկել խրամատից, քիչ առաջացել և մաքուր թուրքերենով երգել: Ազերիները, չհասկանալով, թե ինչ է կատարվում, դադարեցրել են կրակը, և իրենք էլ միացել են նրա երգին, գովերգել «հայ խանումին»: Այսպես շարունակվել է 30 րոպե, մինչև հասել է օգնությունը: Ազերիները շատ թանկ են վճարել իրենց անզգուշության համար[1399]: Նշված մարտերից մեկի ժամանակ, փրկելով վիրավոր տանկիստի կյանքը, Ջեմման ծանր վիրավորվել և ստիպված է եղել երկարատև բուժման անցնել: Սակայն ապաքինվելով՝ նորից վերադարձել է հարազատ զորամաս և նվիրվել ազգային սուրբ նպատակին: Հրամանատարությունը, գնահատելով Հեղինե Հովհաննիսյանի հերոսական սխրանքները, նրան նշանակել է անձնակազմի գծով գումարտակի հրամանատարի տեղակալ, շնորհել լեյտենանտի կոչում:

Բանաստեղծ-ազատամարտիկ Հ. Վարդումյանը Հեղինե Հովհաննիսյանի մասին գրել է. «1988-ին Ջեմման քուն ու դադար չուներ…, երբ զգաց, որ եկել է զենք վերցնելու ժամանակը, նրա «խենթությունը» հասավ գագաթնակետին…, հավաքված գումարով մի ջոկատ զինեց, ինքն էլ դարձավ ջոկատի հրամանատար: Ջոկատի տղաները սկզբից անհարմար էին զգում կին հրամանատար ունենալու համար, բայց տեսնելով ու համոզվելով, որ իրենց կին հրամանատարը շատ տղամարդկանցից առյուծ է, սկսեցին հպարտանալ նրանով»[1400]:

Արցախի համար ծանր օրերին նվիրյալների շարքերը համալրեց ազատամարտիկ-բուժքույր **Աղավնի Սահակյանը**: Նա ծնվել է 1948 թվականի հոկտեմբերին Երևանում:

[1399] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 189, **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 122-123:

[1400] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 121:

1971 թվականին ընդունվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ֆրանսերենի բաժինը, որն ավարտելուց անմիջապես հետո աշխատել է Գորիսի շրջանի Տաթև գյուղի, 1977-1979 թվականներին՝ Աշտարակի շրջանի Ավան գյուղի միջնակարգ դպրոցներում, իսկ 1980-1991 թվականներին՝ «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումում որպես գրադարանի վարիչ: 1991 թվականին աշխատել է ժողկրթության և լուսավորության նախարարության ծրագրամեթոդական բաժնում որպես առաջին կարգի մասնագետ:

1988 թվականի փետրվարից Ա. Սահակյանը մասնակցել է Արցախյան շարժմանը: Եղել է «Գոյապայքար», «Կանաչներ», «Մաշտոց» միավորումների, «Զորավար Անդրանիկ» ընկերության անդամ: Ակտիվորեն մասնակցել է «Նաիրիտի» փակման պայքարին[1401]: 1992 թվականի ապրիլի 3-ին մեկնելով մարտնչող Արցախ՝ մասնակցել է մարտական բազմաթիվ գործողությունների՝ Շուշիի, Աղդամի, Մարտակերտի, Քարվաճառի շրջանների, Ստեփանակերտի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերին, փրկել է բազմաթիվ ազատամարտիկների կյանքեր[1402]: Շուշիի ազատագրումից հետո, Աղավնի Սահակյանը տեղափոխվելով Մարտակերտ՝ Յուրա Հովհաննիսյանի ջոկատը, միացել է Մարտարկերտի համարյա բոլոր գյուղերի ինքնապաշտպանական մարտերին, որոնց ընթացքում՝ հունիսի 17-ին, Ալաղալիում (ներկայումս՝ Հովտաշեն) վիրավորվել է, սակայն չի լքել ռազմի դաշտը[1403]:

1992 թվականի սեպտեմբերին ստեղծվեց կանոնավոր բանակ, իսկ դեկտեմբերին Ա. Սահակյանը տեղափոխվեց Մարտակերտի շրջանի հրետանու դիվիզիա, որտեղ ծառայեց մինչև 1996 թվականի դեկտեմբերի վերջը: Իր ձեռքով կարած եռագույնը Աղավնու պաշտա-

---

[1401] Հայուհիներ, հանրագիտարան երու հատորով, հ. 1, էջ 205:
[1402] Տե՛ս նույն տեղում:
[1403] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 156-157:

մունք էր, որն էլ շարժման և պատերազմի ողջ ընթացքում եղել է իր հետ: Հրադադար հայտարարվելուց հետո Աղավնին եռագույնը ամրացրեց ազատագրված Շուշիի տներից մեկի տանիքին՝ որպես ազատության, անկախության և պետականության հավերժական խորհրդանիշ:

1994 թվականին պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» հուշամեդալով, «1992-1994 թվականներին մարտական գործողությունների մասնակից» կրծքանշանով, 2004 թվականին՝ «Անբասիր ծառայության համար 1-ին աստիճանի», 2005 թվականին՝ «Շուշիի ազատագրման համար» մեդալներով:

Ա. Սահակյանը հրետանիում ծառայել է մինչև 1996 թվականի դեկտեմբերի վերջը, որպես բուժքույր՝ հետագայում տեղափոխվել է 5-րդ պաշտպանական շրջանի չորրորդ գումարտակ[1404]:

Արցախյան գոյամարտի նորօրյա պատմության մեջ վեր է հառնում բազում հայուհիների սխրանքն ու անմահ անունը: Նրանք, նվիրվելով հայրենիքի փրկության գաղափարին, զենք վերցնելով, համալրել են հայոց բանակի շարքերը: Նման նվիրյալ հայուհիներից էր ազատամարտիկ-բուժքույր **Նաիրա Սահակյանը**: Նա ծնվել է 1970 թվականի մարտին Երևանում: 1985 թվականին ավարտել է Երևանի թիվ 74 դպրոցի ութերորդ դասարանը, ընդունվել է պրոֆտեխուսումնարան, ստացել է քիմիկոս-լաբորանտի մասնագիտություն[1405]:

1991 թվականին զինվորագրվելով «Աղբյուր Սերոբ» ջոկատին՝ Նաիրա Սահակյանը մեկնել է Արցախ՝ իր փոքրիկ աղջկան ու տղային թողնելով տատիկի խնամքին: Նա մասնակից է դարձել Ասկերանի, Լաչինի շրջաններում ընթացող թեժ մարտերին[1406]: Այդ մարտերում եղել է ոչ միայն գթության քույր, այլև զինվոր: Այնուհետև 1993 թվականի գարնանը ջոկատը, տեղափոխվելով Մարտակերտի շրջան,

---

[1404] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 205:
[1405] Տե՛ս նույն տեղում, էջ 206:
[1406] Տե՛ս նույն տեղում:

շարունակել է ծառայությունը՝ այնտեղ ազատագրելով գրավված տարածքները: Մարտերում նա լավագույն զինվորն էր. հեշտությամբ տիրապետելով զենքի տարբեր տեսակներին՝ դարձել էր անվրեպ նշանառու, գերազանց հրաձիգ, անվախ մարտիկ: Ն. Սահակյանը ի հայտ է բերել նաև հմուտ հետախույզի հատկանիշներ: Ջոկատի հետախույզների հետ մեկնել է թշնամու թիկունք, կատարել հրամանատարության առաջադրանքները, և պատահական չէր, որ իր ճարպկության, անվախության, թշնամուն հմտորեն մոլորեցնելու կարողության համար ստացել էր «Սպիտակ աղվես» մականունը[1407]:

1993 թվականի գարնանը հրամանատարությունն վճռականորեն որոշել էր Ն. Սահակյանին չվերցնել մարտական առաջադրանքի: Համոզել են, որ մնա, երեխաներին խնամի: Սակայն նա Արցախ մեկնելու այլ ճանապարհ է գտել: Ընդգրկվել էր փոխգնդապետ Մարդանյանի հրամանատարությամբ կազմավորված գնդում: Մարտի սկզբին գունդը մեկնել էր ճակատ[1408]:

Ոսկան Գյուլումյանի գումարտակը, որի կազմում մարտնչում էր Ն. Սահակյանը, տեղավորվել էր Կուսապատ գյուղում: Հակառակորդը հետ էր շպրտվել Սարսանգի ջրամբարից այն կողմ: Շտաբը և պահեստայինները մնացել էին Կուսապատում, մնացածը գիշերով առաջացել էին և դիրքավորվել ջրամբարից սկսվող բարձունքների վրա: Ազերիները, նկատելով գումարտակի տեղաշարժը, մարտի 9-ի լուսաբացին, վնասազերծելով ձախակողմյան պահակակետը, թափանցել էին թիկունք և շրջապատման մեջ գցել դիրքավորված զորամիավորումը: Ահեղ մարտ էր սկսվել, որտեղ և հերոսի մահով ընկել էր նաև Ն. Սահակյանը[1409]: Նրա աճյունն ամփոփված է ազատամարտիկների սրբատեղի Եռաբլուրի գերեզմանոցում:

[1407] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 206:
[1408] Տե՛ս նույն տեղում:
[1409] Տե՛ս նույն տեղում:

Ազատամարտիկ-բուժքույր **Թ. Աբրահամյանը** ծնվել է 1955 թվականի դեկտեմբերին Ապարանի շրջանի (այժմ՝ Արագածոտնի մարզ) Զովունի գյուղում: 1972 թվականին ընդունվել է Պետրոպավլովսկի բարձրագույն զինվորական բժշկական ուսումնարանը: Ավարտելուց հետո՝ մինչև 1988 թվականը, ենթասպայի կոչումով ծառայել է Հարավային Սախալինի ծովային զորամասում[1410]:

Հայրենիք վերադարձած Թամարա Աբրահամյանը 1988 թվականին միացավ ցուցարարներին, իսկ արդեն 1990 թվականին, կապեր հաստատելով, սկսեց զենք հայթայթել և հասցնել Ստեփանակերտ: 1992 թվականի այցելելով Արցախ՝ որպես զինվորական բուժքույր՝ սկզբում ծառայեց Մոնթե Մելքոնյանի հրամանատարությամբ պաշտպանական շրջանում՝ Մավոյի գումարտակում, իսկ հոկտեմբերից՝ Ի. Բաղրյանի երրորդ գումարտակում, որը գտնվում էր Մարտակերտում[1411]:

Առաջին մարտական մկրտությունը ստացավ Չլդրան գյուղի ճանապարհին: Կարճ ժամանակ պահանջվեց, որպեսզի նրա մեջ կազմավորվի ոչ միայն զինվորական բուժքույրը, այլև ազատամարտիկ զինվորը: 1992 թվականին, երբ դաշտային հոսպիտալն Առաջաձոր գյուղում էր, ազերական մի զորախումբ, ճեղքելով պաշտպանությունը, հանկարծակի հարձակում կատարեց բազայի վրա: Ստեղծված օրհասական վիճակը ստիպեց Թ. Աբրահամյանին փոքր զորախմբով պաշտպանություն կազմակերպել: Այդ ընթացքում օգնություն ստանալով՝ շրջապատման մեջ առան ու ոչնչացրին գրոհայիններին, որի ժամանակ էլ Թ. Աբրահամյանը վիրավորվեց, բայց և հրաժարվեց հոսպիտալում բուժվելուց[1412]:

Առաջաձորի իրավիճակը կրկնվեց 1993 թվականի դեկտեմբերին Մատաղիս գյուղում: Ազերիների գրոհն այնքան անսպասելի էր և ուժ-

---

[1410] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 206:
[1411] Տե՛ս նույն տեղում:
[1412] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 6:

գին, որ խուճապ առաջացրեց: Մասնակցելով խուճապի կանխման և կազմակերպված վիրավոր ազատամարտիկների դուրսբերմանը՝ փորձված բուժքույրը ևս մեկ անգամ ապացուցեց իր նվիրվածությունը մարտական ընկերներին[1413]:

Պատահական չէր, որ նա արդեն իր հաստատուն տեղն ուներ գումարտակում: 1993 թվականի ընթացքում Մարտակերտի գնդում արցախյան մյուս զորամիավորումների հետ մասնակցեց Մարտակերտի, Քարվաճառի, Կուբաթլուի, Ֆիզուլիի, Ջաբրայիլի շրջանների ազատագրական մարտերին[1414]: Մինչև 1994 թվականը երեք անգամ վիրավորվելով՝ ոչ միայն չլքեց մարտի դաշտը, այլև միշտ սանիտարական պայուսակով, իսկ հարկ եղած դեպքում՝ զենքով, մնաց մարտընկերների կողքին: Հունվարին Չլդրանի մոտակայքում նորից վիրավորվելով՝ տեղափոխվեց հոսպիտալ, որտեղ և դիմավորեց զինադադարը[1415]: Բուժումն ավարտելուց հետո Թ. Աբրահամյանը իր մարտական ընկերներից շատերին գտավ Լաչինում, և ինքն էլ բնակություն հաստատեց այնտեղ՝ շենացնելու ազատագրված բնաշխարհի մի մասնիկը:

1993 թվականի գարնանը «Կարս» ձոկատի շարքերում Մարտակերտի շրջան մեկնեց ազատամարտիկ բուժքույր **Նոնան (Նվարդ Դադուրյանը)**: Ծնվել է 1953 թվականին Երևանում: 1970 թվականին ավարտել է Երևանի թիվ 118 դպրոցի 10-րդ դասարանը, 1992 թվականին՝ բուժքույրական ուսումնարանը: 1984 թվականից աշխատել է Երևանի քաղաքապետարանում: Ամուսնացած էր, ուներ երկու երեխա[1416]: Երեխաների խնամքը թողնելով ծնողներին, Վահան գյուղի դիրքերում ցնցակաթվածի ենթարկվելով, դեռ չապաքինված՝ նա միացավ «Պուշկինյալ» բարձունքի համար մղվող մարտերին, որտեղ և նորից վիրա-

---

[1413] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 6:
[1414] Տե՛ս նույն տեղում, էջ 7:
[1415] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 137:
[1416] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 79:

վորվեց: Սակայն անկոտրում կամքի և վճռականության շնորհիվ շարունակեց պայքարը որպես ջոկատի ավագ մարտիկ[1417]:

«Կարս» ջոկատը տեղակայվել էր Մարտակերտի շրջանի նոր ազատագրված գյուղում: Խաղաղ առավոտ էր: Նոնան ազատ պահերին խոհարար էր դառնում, հիվանդներին խնամում: Սովորականի նման դույլը վերցրեց, գնաց ջրի: Անսպասելի դեմ առ դեմ հանդիպեց թուրքին: Թուրքը վախից թաքնվեց մոտիկ թփերի հետևում, ապա, ուշքի գալով, սկսեց կրակել: Նոնան էլ իրեն չկորցրեց. ուսից իջեցրեց անբաժան գնդացիրը, դիրքավորվեց… Այդ մենամարտից ինքը հաղթանակով դուրս եկավ, բայց այնքան մոտիկից «հանդիպեց» մահվանը հետ, որ գիշերը ջերմությունը բարձրացավ[1418]:

1994 թվականին 3-րդ պաշտպանական շրջանի 2-րդ գումարտակի շտաբի պետ Ա. Առստամյանը հետևյալ կերպ է բնութագրել Ն. Դադուրյանին. «Ծառայության ընթացքում իրեն դրսևորել է որպես քաջարի զինվոր ու մեծ հայրենասեր: Ունի մեծ պատասխանատվություն և պահանջկոտություն իրեն վստահված գործի նկատմամբ…»[1419]: Համալրելով ջոկատը՝ նրա շարքերում 1989-1994 թվականներին մասնակցեց ՀՀ Արարատի (Երասխ), Իջևանի, Եղեգնաձորի (Խաչիկ), Սիսիանի (Սոֆլու), Ճամբարակի (Վահան, Արծվաշեն), Գորիսի (Կոռնիձոր), Նոյեմբերյանի, ապա ԼՂՀ Մարտակերտի, Լաչինի, Քարավաճառի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին[1420]:

Նվիրյալ հայրենասերներից էր ազատամարտիկ-բուժքույր **Նունե Աթայանը:** Նա ծնվել է 1973 թվականի նոյեմբերին Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում: 1988 թվականին՝ սումգայիթյան ցեղասպանությունից հետո, տեղափոխվել է Ստեփանակերտ: 1992 թվականին ավարտել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը[1421]:

[1417] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 80:
[1418] Տե՛ս նույն տեղում:
[1419] Տե՛ս նույն տեղում, էջ 80-81:
[1420] Տե՛ս նույն տեղում, էջ 79:
[1421] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 141:

Պատերազմի առաջին օրերին մտնելով ՊԲ՝ Նունե Աթայանը 1992 թվականին զինվորագրվեց նորաստեղծ կենտրոնական պաշտպանական շրջան ու երբեք չլքեց ազգային բանակը: Ծառայության անցավ Ս. Հարությանի հրամանատարությամբ գործող 3-րդ գումարտակում[1422]: Մարտական մկրտությունն ստացել է Վաղուհասի դիրքերում, այնուհետև շուրջ երեք ամիս մասնակցել է Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանական մարտերին:

Ն. Աթայանը միշտ եղել է առաջին դիրքերում: Մարտական ընկերները, նրան տեսնելով, ձգվում էին, մոռանում մահվան ու երբեմն-երբեմն սրտները սողոսկող վախի մասին: Երեք ամսվա ընթացքում գումարտակը մասնակցել է Դրմբոն, Չլդրան, Հարությունագոմեր, Պողոսագոմեր, Մեծ Շեն, Մղոզ (Մաղավուզ) և մի շարք այլ գյուղերի համար մղվող մարտերին: Երիտասարդ բուժքույրը մասնակցել է բոլոր մարտերին՝ փրկելով բազմաթիվ վիրավոր ազատամարտիկների[1423]:

1992 թվականի ձմռանը գումարտակը տեղափոխվել է Շուշիի շրջան և տեղակայվել Փինգյայում, մասնակցել է Հախնազար գյուղի ազատագրմանը: 1993 թվականին ճնշելով հակառակորդի դիմադրությունը՝ գումարտակն անցել է լայնածավալ հարձակողական գործողությունների: Նույն թվականի գարնանը գումարտակը տեղափոխվել է Քարվաճառի շրջանի տարածք և մասնակցել Յանշակ գյուղի ազատագրման համար մղվող մարտերին: Գրոհող կողմի համար շատ անբարենպաստ պայմաններ էին: Գումարտակը շատ զոհեր ու վիրավորներ էր տվել, սակայն փորձառու բուժքույրը հոգատարության ու տոկունության հրաշքներ է ցույց տվել[1424]:

1994 թվականի հունվարի 1-ին Ն. Աթայանն ստացել է ենթասպայի կոչում և նշանակվել գումարտակի սանիտարական մասի պետ: Նա մասնակցել նաև վերջին մարտերին՝ Արծվաշեն (Սեյսուլան) և Գյու-

---

[1422] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 141:
[1423] Տե՛ս նույն տեղում:
[1424] Տե՛ս նույն տեղում:

լուջա գյուղերի ազատագրմանը, իսկ հրադադարը դիմավորել է Կարմիրավան գյուղի մատույցներում: Ն. Աթայանը երբեք չի լքել ազգային բանակի շարքերը: Այժմ էլ նա աշխատում է զինմասի թերապևտիկ բաժանմունքում որպես ավագ բուժքույր[1425]:

Այսպիսով՝ ինչպես վկայում են փաստերը մինչև ռազմական բժշկական ծառայության ստեղծումը Շահումյանի, Մարտակերտի շրջաններում հիվանդ ու վիրավոր ազատամարտիկների բժշկական սպասարկումը իրականացվել է սեփական միջոցներով և փոխօգնությամբ՝ բուժօգնության անհատական միջոցներով, կամավոր մեկնած բժիշկների, բուժքույրերի, տեղական հիվանդանոցների, բժշկական կետերի քաղաքացիական բուժանձնակազմի օգնությամբ: Մինչև զինադադարը ՀՀ-ից կամավոր և գործուղումով Արցախի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան շրջաններ մեկնած վնասվածքաբանները օրթոպեդները, վիրաբույժները, անեսթեզիոլոգներն ու համաճարակաբանները իրականացրել են բացառապես բարդ և լրացուցիչ խնդիրներ՝ անհրաժեշտ բուժօգնություն ցույց տալով ազատամարտիկներին, ապահովվելով նրանց վերադարձը մարտադաշտ, կանխելով համաճարակները և վարակիչ տարբեր հիվանդությունները: Նրանց շարքերում էին նաև **Արմենուհի Քաբաբյանը, Ալվարդ Գասպարյանը, Թամարա Հարությունյանը, Անահիտ Հովհաննիսյանը** և շատ ուրիշներ, հայուհիներ, որոնք, կամավոր մեկնելով Շահումյանի և Մարտակերտի շրջաններ, բժշկական օգնություն ցուցաբերեցին ոչ միայն վիրավոր ազատամարտիկներին, այլ նաև խաղաղ բնակչությանը[1426]:

Այսպիսով՝ հայ քաջարի հերոսուհիների մի մասը մարտական ուղին անցավ Արցախի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան շրջանների ինքնապաշտպանական մարտերում:

[1425] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 141:

[1426] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ., հանրագիտարան, էջ 120-149:

Հայ հերոսուհի կանայք Ստեփանակերտի, Շուշիի և Քաշաթաղի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերում

1992 թվականին ադրբեջանցիների կողմից շարունակվում էր ԼՂՀ մայրաքաղաքի և հայկական գյուղերի ինտենսիվ հրետանային ռմբակոծությունը: Ինչպես հայտնի է, հունվարին Ադրբեջանը հարձակում սկսեց ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետզհետե ծավալումը նորաստեղծ հանրապետությանը կանգնեցրեց սեփական պաշտպանության կազմակերպման ու կատարելագործման անհրաժեշտության առջև: Այդ նպատակով ուժերի կենտրոնացման և գործողությունների կոորդինացման համար ստեղծված ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբը խնդիր դրեց վերացնելու Ստեփանակերտը շրջապատող կրակակետերը: Հայ մարտիկները փոքրաթիվ ուժերով 1992 թվականի հունվարի 19-22-ը լիովին ազատագրեցին Ստեփանակերտի Քարքարաշեն թաղամասը: Այդ հաղթանակը քաղաքական և հոգեբանական նշանակություն ունեցավ: Այնուհետև փետրվարի 10-ին ոչնչացվեցին մայրաքաղաքին հարակից Մալիբեյլի և Ղուշչիլար գյուղերի կրակակետերը: Իրավիճակը շարունակվում էր մնալ շատ ծանր ու ծայրահեղ լարված: Խոջալուի՝ փետրվարի վերջին ադրբեջանական ռազմակայանի ոչնչացումից հետո Ստեփանակերտի հենակետային ռմբակոծությունները շարունակվեցին: Մինչև 1992 թվականի մարտի սկիզբը մարտական գործողությունները իրավիճակային էին: Հաճախ դրանք մանրակրկիտ պլանավորված և մշակված չէին: Շատ դեպքերում հայ կամավորականների և հրամանատարների հնարամտությամբ կամքի ու անձնազոհության շնորհիվ դրանք հաջողությամբ էին պսակվում, որից անմասն չէին նաև հայրենիքին նվիրյալ հայուհի կանայք:

Նման կանանցից էր Արցախյան պատերազմում իր հերոսական գործողությամբ աչքի ընկած, նվիրյալ ու հայրենասեր, խիզախ ու ան-

վեհեր մարտիկ **Ժաննա Գալստյանը**[1427]: Լինելով ազգային-ազատագրական շարժման կենտրոնում նա մասնակցեց գոյամարտի գրեթե բոլոր կարևոր ռազմագործողություններին:

Արցախի ազգային հերոս Ժաննա Գալստյանը ծնվել է 1948 թվականի ապրիլի 15-ին Ստեփանակերտում: 1956-1967 թվականներին սովորել և ավարտել է Ստեփանակերտի թիվ 8 դպրոցը: Ուսումը շարունակել է Բաքու քաղաքի Ախունդովի անվան լեզուների ինստիտուտում: 14 տարեկանից աշխատել է Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում[1428]: 1988 թվականին պայքարի հորձանուտում էր: Մասնակցել է մի շարք ռազմական գործողությունների և ստացել մայորի կոչում: 2000, 2005 և 2010 թվականներին ընտրվել է ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր: 2007 թվականին ընտրվել է ԼՂՀ ԱԺ պաշտպանության, անվտանգության և օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ: 2004 թվականին նրան շնորհվել է «ՀՀ ժողովրդական արտիստի» կոչում: Պարգևատրվել է ԼՂՀ մի շարք շքանշաններով[1429]:

Դեռևս 1988 թվականին Բերդաձորի ենթաշրջանը վերածվել էր պատերազմական թատերաբեմի: Շրջապատված լինելով ադրբեջանական գյուղերով՝ ենթաշրջանի բնակավայրերը մնացել էին առանց հաղորդակցության ուղիների, կապի միջոցների, չէին գործում վարչական ենթակառուցվածքները: Հակառակորդը տարբեր գյուղերում տեղակայել էր ռազմական հենակետեր և զորախմբեր ու պարբերաբար հարձակումներ էր գործում գյուղերի վրա, թալանում էր, հրկիզում և ահաբեկում տեղի հայերին: Թշնամու ոտնձգությունները կանխելու համար Բերդաձորի ինքնապաշտպանությանը միացած Ժ. Գալստյանը առաջին խնդիրը համարեց կազմակերպել տեղի ինքնապաշտպանու-

---

[1427] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, էջ 63-68:
[1428] Տե՛ս նույն տեղում, էջ 63:
[1429] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսություն, էջ 131:

թյունը և բարձրացնել ջոկատների մարտունակությունը[1430]: Միաժամանակ սկսեց զրույցներ անցկացնել բերդաձորցիների հետ և հուսադրել, ոգևորել, կոչ անել նրանց՝ շարունակելու պայքարը: Այդ ամենից հետո նա զինված անցնում էր դիրքից դիրք՝ մասնակցելով շրջանի ինքնապաշտպանությանը:

1988-1990 թվականներին ԼՂ կամավորական ջոկատների ընդհանուր շտաբի պետ Ռազմիկ Պետրոսյանը գրել է. «Բերդաձորը վտանգված էր... Նրա պաշտպանությունը կազմակերպելու համար այնտեղ էր գնացել նաև շարժման անձնվեր գործիչներից մեկը՝ Ժաննա Գալստյանը... Տարել էր զենք և զինամթերք... Միայն նրա ներկայությունը բավական էր մարդկանց ոգևորելու, արիությունը բարձրացնելու, հույս ու հավատ ներարկելու նրանց մեջ: Ժաննան մեծապես նպաստեց Բերդաձորի պաշտպանությունն ամրապնդելու գործին: Այդպես եղավ նաև պատերազմի ողջ տևողության ընթացքում: Եվ ի վերջո կատարվեց նրա իղձը. գրոհող զորքերի հետ նա հասավ Հորադիզ, եղեգնուտների միջով մոտեցավ Արաքսին և լվացվեց նրա սառնորակ ու պղտոր ջրերով»[1431]:

Պայքարը վերաճել էր ահեղ պատերազմի: Երկուստեք մեծաթիվ զոհեր էին տալիս, տարածքները ձեռքից ձեռք էին անցնում: Ժաննան կազմակերպչական աշխատանքներին զուգահեռ, զենքը ձեռքին, կըռվում էր որպես զինվոր՝ Բերձորում, Մարտակերտում, Հաթերքում, Կիչանում...Պայքարի ճակատում էին նաև նրա տղան ու աղջիկը, որոնց մեջ նույնպես պատվաստվել էր հայրենասիրական ոգին: Նրանք՝ որպես բուժաշխատողներ, փրկում էին վիրավոր ազատամարտիկների կյանքը և շարք վերադարձնում:

Վերջապես եկավ երկար սպասված պահը. հայ ժողովուրդը պետականորեն ստեղծեց իր կանոնավոր բանակը: 1992 թվականի սեպտեմբերից իրադրությունը պիտի կտրուկ փոխվեր: Ժ. Գալստյանը

[1430] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, էջ 63-68:

[1431] **Պետրոսյան Ռ.,** Արցախի պաշտպանության դիրքերում, Երևան, 1997, էջ 143:

նույնպես զինվորից դարձավ գնդի հրամանատարի տեղակալ՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով. ինքն արդեն վաղուց ուներ այդ փորձը: Շուտով, վերադասավորելով ուժերը, հայկական բանակն անցավ հարձակման և մեկը մյուսի հետևից ջախջախիչ հարվածներ հասցնելով թշնամուն՝ ետ շպրտեց Ղարաբաղի վարչական տարածքներից, ազատագրեց նախկինում բռնազավթած տարածքների զգալի մասը: Հայկական զենքի հաղթանակն անհերքելի էր: Եվ այդ հաղթանակի համար իր մեծ ավանդն ուներ Ժ. Գալստյանը: Նա, սկսած Ստեփանակերտի հրապարակից, Շուշիից, Ջաբրայիլից մինչև Հորադիզ ու Մարտակերտի հյուսիսային տարածքների ազատագրումը, քայլեց առաջին շարքերում: [1432]

«–Ես չեմ ափսոսում, որ ընտրել եմ այս ճանապարհը,– ասել է Ժ. Գալստյանը, – մեզ պիտի ճանաչեն: Մնացածն այս կյանքում սուտ է ու անցողիկ»[1433]:

Համակարգող խմբի մի քանի անդամներ հետ նա շրջում էր տարբեր վայրերում, հանդիպումներ ունենում կամավորական ջոկատների հրամանատարների հետ, աշխատում ուժերը միավորել մեկ բանակային կառույցի մեջ և զորակոչ կազմակերպում: Հաթերքից ազատամարտիկ Սիրանուշ Առուշանյանը հիշում է. «Դեռևս 1991-ի նոյեմբերի 21-ին գյուղ եկավ Ժաննա Գալուստյանը Ստեփանակերտից և հայտնեց, որ ստեղծվում է կանոնավոր բանակ, ցանկացողները կարող են զինվորագրվել: Սուրեն Հարությունյանի դլխավորությամբ՝ մեծ մասը մտավ բանակի կազմի մեջ... Մարտակերտի վերին ձորակում արդեն զորակոչվում էին զինապարտ երիտասարդներ: Ստեղծվում էր կանոնավոր բանակ...»[1434]:

Բաքվում նրան հեռակա կարգով մահվան էին դատապարտել և գլխի համար մեծ գումար նշանակել: Նա որոշ ժամանակ ստիպված է

[1432] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, էջ 66-67:
[1433] Տե՛ս նույն տեղում, էջ 67, նաև՝ «Մարտիկ» 12 ապրիլի, N 22, Ստեփանակերտ, 2009:
[1434] «Մարտիկ» 12 ապրիլի, N 22, Ստեփանակերտ, 2009:

եղել թաքնվել բարեկամների մոտ: Սակայն Ժ. Գալստյանին ոչինչ չէր կարող վախեցնել և ետ դարձնել սկսված պայքարի ճանապարհից: Դեռ այն վտանգավոր ու դաժան ժամանակներում, երբ շատերը վախենում էին բարձրաձայն խոսել, նա իր տան պատշգամբից կախել էր եռագույնը: Զինված պայքարի առաջին շրջանում, երբ դեռ չունեինք կանոնավոր բանակ, երբ կռվում էինք ջոկատներով, հազիվ հայթայթած զենքով, և երբ դիրքերում երեք զինվոր կար, Ժաննան այդ զինվորներից մեկն էր: Իսկ այն ժամանակ առաջին գիծը, թեժ կետերն էին Գետաշենը, Բերդաձորը: Այդտեղ գնացին միայն ամենախիզախները, ամենանվիրվածները, նրանք, ովքեր պատրաստ էին ինքնազոհաբերության: Նրանք ազգի աստեղային ժամի համար ծնվածներն էին, որոնք իրենց կյանքի գնով պիտի նվաճեին սուրբ ազատությունը[1435]:

ԼՂՀ ՊԲ կազմավորումից հետո Ժ. Գալստյանը նշանակվել է ՊԲ կենտրոնական պաշտպանության շրջանի հրամանատարի տեղակալ[1436]: Կազմակերպչական աշխատանքներին զուգահեռ՝ ամբողջ պատերազմի ընթացքում նա, զենքը ձեռքին, մարտնչել է որպես զինվոր:

Վերադասավորելով ուժերը՝ հայկական բանակն անցավ հարձակման և մեկը մյուսի հետևից ազատագրեց բռնազավթված տարածքների զգալի մասը: Այդ գործում մեծ ավանդ ունեցավ Ժ. Գալստյանը[1437]:

1991 թվականի օրհասական վիճակում էր գտնվում Արցախի միջնաբերդը՝ Ստեփանակերտը: Վերջինիս դրությունը ծանրանում էր նրանով, որ նրա հարևանությամբ էր գտնվում Շուշին՝ Արցախում ադրբեջանական ագրեսիայի գլխավոր պլացդարմը: Շուշին գտնվում էր Ստեփանակերտից ուղիղ գծով 5-6 կմ դեպի հարավ՝ բարձրադիր ժայռեղեն սարահարթի վրա, և գերիշխող դիրք էր գրավում նրա նկատմամբ. Շուշիից Ստեփանակերտը երևում է, ինչպես ձեռքի ափի մեջ: 1991 թվականի նոյեմբերից «Ալազան» տիպի հրթիռներով, իսկ

[1435] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 66:
[1436] Տե՛ս նույն տեղում, էջ 67:
[1437] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, էջ 50-52:

1992 թվականի փետրվարի կեսերից արդեն «Գրադ» ռեկատիվ կայանքներով հրետակոծություններից Ստեփանակերտը և մի շարք հայկական գյուղեր ենթարկվում էին ավերածությունների: Թիկունքում մնացած կանայք ստիպված էին երկիրը վտանգված վիճակում մնալ Ստեփանակերտում, ապրել նկուղներում, հոգալ երեխաների, ծերերի մասին՝ ունենալով բազմաթիվ զոհեր և վիրավորներ: Ստեփանակերտը ոչ միայն ավերվում էր, այլև տառապում սովի ճիրաններում: 1991 թվականի աշնանից մեկ շնչին տրվում էր ամսական մեկ կիլոգրամ ալյուր: 1992 թվականի փետրվարից, փաստորեն, դա էլ չէր տրվում: 1991 թվականի դեկտեմբերից քաղաքը զրկվեց կենտրոնական ջրամատակարարումից: Ընտանիքի մասին հոգացողները՝ կանայք, ստիպված էին ջրի համար հերթեր կանգնել: Քաղաքում չկար հեղուկ վառելիք, իսկ մայիսի 1-ից լրիվ անջատվել էր էլեկտրոէներգիան: Ստեփանակերտի և հարակից բնակավայրերի անվտանգության ապահովման համար Շուշին պետք է ազատագրվեր:

Ժողովուրդը հարգում և մեծարում էր իր հերոս զինվորին, սրբացնելու աստիճան պաշտում և հավատում էր նրան: Եվ Ղարաբաղի համար ամենածանր պահին, երբ թուրքերը Ստեփանակերտից ընդամենը 20 կմ հեռավորության վրա էին, ու շատերը կապել էին ճամպրուկները, Ժ. Գալստյանը գիշեր-ցերեկ իր ժողովրդի հետ էր: Եվ մարդիկ, միմյանց հուսադրելով, ասում էին՝ Ժաննան Ստեփանակերտում է, ուրեմն դեռ քաղաքը չեն հանձնի[1438]:

1992 թվականի մայիսի 8-ի գիշերը սկսվեց Շուշիի ազատագրման ռազմագործողությունը: Հայ ռազմարվեստի փայլուն դրսևորման և ազատամարտիկների անկոտրում կամքի շնորհիվ ազատագրվեց Շուշի բերդաքաղաքը, ու մայիսի 9-ը համահայկական վերածննդի նախերգանքը դարձավ: Երկու օրում թշնամու դիմադրությունը կոտրվեց:

[1438] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 66:

Շուշիի ազատագրումով և հակառակորդի մյուս կրակակետերի լռեցումով Ստեփանակերտը և հարևան բնակավայրերը շունչ առան:

Շուշիի ազատագրումից հետո ռազմական գործողություններն ընդունեցին ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանային պատերազմի բնույթ, իսկ ԼՂՀ անկախությունը դարձավ ամբողջական ու անշրջելի: Շուշիի ռազմական գործողությունները լուրջ մարտական մկրտություն էին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի համար և իրենց արժանի տեղը գտան հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության տարեգրությունում:

Արցախի հինավուրց մայրաքաղաքի ազատագրումն ամրապնդեց հայ ժողովրդի հավատը հաղթանակի հանդեպ, բարոյահոգեբանական հարված հասցրեց թշնամուն, որը հետագայում չկարողացավ ազատվել պարտվողի հոգեբանությունից: Խոսելով Շուշիի հաղթանակի կարևորության մասին՝ Ա. Տեր-Թադևոսյանը հպարտությամբ նշում է, որ դա հնարավոր եղավ մեր մարտիկների սխրանքների ու ոգու արիության շնորհիվ[1439]:

Այդ կարևոր իրադարձությունների բովում էին **Անուշ Ավագյանը, Հասմիկ Բաղդասարյանը, Մանուշակ Սարգսյանը, Ֆլորա Հակոբջաննանը, Զուխրա Հայրապետյանը, Սվետլանա Աբրահամյանը, Տանյա Առուստամյանը, Մելսիդա Հարությունյանը, Աղավնի Սահակյանը, Համեստ Օհանյանը, Մարինե Դուլյանը, Շուշանիկ Աբրահամյանը**[1440]: Նրանց մի մասը՝ որպես ազատամարտիկ, միացավ ինքնապաշտպանական ուժերին, իսկ մյուս մասը՝ որպես կամավոր, համալրեց բժշկական ջոկատը, որն ուներ մի նպատակ՝ վիրավորներին ցուցաբերել առաջին բժշկական օգնություն հենց մարտի դաշտում:

Ազատամարտիկ-բուժքույր **Անուշ Ավագյանը** ծնվել է 1968 թվականի ապրիլին Ստեփանակերտում: Ավարտելով միջնակարգ

[1439] **Մինասյան Է.,** Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, 2013, էջ 155:

[1440] «Մարտիկ» 10 մայիսի, N 12, Ստեփանակերտ, 2004:

դպրոցը՝ ընդունվել և ավարտել է Ստեփանակերտի բժշկական և առևտրի ուսումնարանները, որից հետո աշխատել է որպես վաճառող, ամուսնացած է, ունի երկու երեխա[1441]:

Ա. Ավագյանը 1991 թվականի ձմռանը միացել է Ստեփանակերտում Կարո Բաբայանի հրամանատարությամբ գործող ջոկատի կազմին և անմիջապես մասնակից դարձել Մարտունու շրջանի Ղարադաղլու (Վարանդա) գյուղի համար մղվող մարտերին: Հաղթահարելով առաջին փորձությունները՝ նա դարձել է իսկական զինվոր՝ կոփված, ամուր, միևնույն ժամանակ՝ գթասրտությամբ լեցուն: Շուշիի ազատագրմանը մասնակցելուց հետո վաշտի հետ նա փառավոր ուղի է անցել՝ Լաչինի միջանցքի, Բերդաձորի ենթաշրջանի, Մարտակերտի և Ասկերանի շրջանների, Նախիջևանիկ և Փիրջամալ գյուղերի ազատագրական մարտեր, որտեղ և ծանր վիրավորվել է[1442]: Չնայած դրան՝ ապաքինվելուց հետո նորից վերադարձել է մարտի դաշտ, և արդեն 1992 թվականին նշանակվել է ԲՄՊ-ի անձնակազմի հրամանատար: Մարտական մեքենայի անձնակազմը անմիջապես աչքի է ընկել իր հմուտ գործունեությամբ[1443]:

Մասնակցելով Բերդաձորի ենթաշրջանի Եղծահող, Մարտակերտի շրջանի Կիչան գյուղերի ինքնապաշտպանական մարտերին՝ նա 1993 թվականի հունվարի 15-ից համալրել է Շուշիի գումարտակի կազմը և միանալով հարձակողական գործողություններին[1444]՝ հակառակորդին մեծ կորուստներ պատճառել՝ վերջիններիս ստիպելով նահանջել դեպի հյուսիս-արևելք: Այնուհետև փետրվարին գումարտակը տեղափոխվել է Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտակայքը և գրավելով ճանապարհին տեղակայված ամրություններն ու բարձունքները՝ հասել է Վաղուհաս գյուղի մատույցներին: Նախքան Վաղուհասի վրա

[1441] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, էջ 41:
[1442] Տե՛ս նույն տեղում, էջ 42:
[1443] Տե՛ս նույն տեղում:
[1444] Տե՛ս նույն տեղում, էջ 41:

գրոհելը հանկարծակի հրետակոծություն է սկսվել հակառակորդի կողմից, որի ժամանակ էլ Ա. Ավագյանը զոհվել է[1445], անձնազոհությամբ հատուցելով պարտքը հայրենիքի հանդեպ:

Նույն ճակատագրին արժանացավ նաև Շուշիի ազատագրմանը մասնակից **Հասմիկ Բաղդասարյանը**: Նա ծնվել է 1970 թվականի հունիսին Շուշի քաղաքում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարան, որն ավարտել է 1989 թվականին: Երբ հայկական միացյալ ուժերը պատրաստվում էին Շուշիի ազատագրմանը, այդ ժամանակ նա գտնվում էր երեք հարյուր հոգուց կազմված միավորման մեջ, որը ապրիլի 28-ից տեղավորվել էր Սղնախ գյուղում: Հինգ բուժքույրերը՝ *Հասմիկը, Լիդան, Ալվարդը, Գյուլնարան, Նաիրան* միասին ապրում էին ծղոտից պատրաստված տնակի մեջ, և բոլորը սպասում էին վճռական գրոհին՝ նպատակ ունենալով ազատագրված տեսնել Շուշին[1446]:

Քաղաքի ազատագրումից հետո Հ. Բաղդասարյանը շարունակել է մարտական ուղին՝ մասնակցելով Ասկերանի, Մարտակերտի շրջանների ազատագրական պայքարին: Հ. Բաղդասարյանը՝ ընկերուհու՝ Լիդիայի հետ միասին Չլդրանում 10 օրում 170 վիրավոր է հանել առաջին դիրքերից[1447]: Բազում վտանգներից փրկելով և ողջ մնալով՝ նա զոհվել է Ստեփանակերտում հերթական ռմբակոծության ժամանակ՝ 1992 թվականի օգոստոսի 22-ին[1448]:

Հասմիկ Բաղդասարյանը ապրեց կարճ, բայց նվիրյալ կյանքով: Տեսավ հարազատ Շուշիի ազատագրումը, հայոց ուժերի արթնացումը, ապա հերոսացավ՝ բռնելով հավերժի ճամփան:

Շուշիի ազատագրմանը մասնակից **Մարինե Դուլյանը** մարտական ընկերների շարքում հայտնի էր «Ղարաբաղի կոբրա» մականու-

---

[1445] **Վարդումյան Հ.,** Կին ազատամարտիկները, էջ 3-4:
[1446] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, էջ 57-58:
[1447] Տե՛ս նույն տեղում, էջ 59:
[1448] Տե՛ս նույն տեղում, էջ 57-58:

նով: Տարբեր կամավորական ջոկատների շարքերում մասնակցել է Գետաշենի ենթաշրջանի, Շուշիի, Հադրութի, Մարտակերտի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին՝ հիմնականում կատարելով հետախուզական առաջադրանքներ[1449]:

Նշենք, որ **Սվետլանա Աբրահամյանի, Մելսիդա Հարությունյանի և Աղավնի Սահակյանի** մարտական ուղին անցել է հիմնականում Արցախի հյուսիսարևելյան շրջանում: Նրանք ներդրում են ունեցել նաև Շուշիի ազատագրմանը: Նույնը կարող ենք ասել **Տանյա Առուստամյանի** և **Շուշանիկ Աբրահամյանի** մասին, որոնք հիմնականում մասնակցել են Արցախի հարավարևելյան շրջանների ինքնապաշտպանությանը[1450]:

Շուշիի ազատագրմանը մասնակից **Զուխրա Հայրապետյանը** Ստեփանակերտում ճանաչված էր դեռևս 1988 թվականից: Զ. Հայրապետյանը ծնվել է 1949 թվականի հունվարին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մայրաքաղաք Ստեփանակերտում: 1967 թվականին ավարտել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը, իսկ 1970 թվականից՝ աշխատել Ստեփանակերտի շտապ բուժօգնության կայանում որպես բուժքույր[1451]:

Երբ ալեկոծվեց Արցախը, Վերածննդի հրապարակում նա բուժօգնություն էր ցույց տալիս հանրահավաքի մասնակիցներին: Իսկ երբ սկսվեց պատերազմը, առանց վարանելու նա իր տեղը զբաղեցրեց ազատության համար մարտնչող ազատամարտիկներ շարքերում, կանգնեց զենք վերցրած հայրենակիցների կողքին: Որտեղ պայքար ու կռիվ կար, այնտեղ էլ Զ. Հայրապետյանն էր: Առաջին մկրտությունը ստացել է 1991 թվականի նոյեմբերին՝ Կրկժանի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Այնուհետև մասնակցել է Շուշիի, Մալիբեյ-

---

[1449] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 134:
[1450] Տե՛ս նույն տեղում:
[1451] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 184:

լիի, Հացի գյուղի ինքնապաշտպանական մարտերին, ապա՝ Խոջալուի ազատագրման գործողություններին[1452]:

1992 թվականի սկզբին Ստեփանակերտում ստեղծվեց Ասլան Գրիգորյանի հրամանատարությամբ գործող փրկարար ծառայություն, որի պարտականությունների մեջ էին մտնում վիրավորներին վիրակապելը և հիվանդանոց հասցնելը, ապա զոհվածներին մարտի դաշտից դուրս հանելը, քաղաքում հրետակոծությունից տուժածներին օգնելը և այլն: Զ. Հայրապետյանը ընդգրկվեց փրկարար վաշտի առաջին դասակի կազմի մեջ: Այդ նույն ժամանակ՝ 1992-1993 թվականներին, նա առաջին դասակի կազմում մասնակցեց Մարտակերտի և Ասկերանի շրջանի գյուղերի, Շուշի քաղաքի աղատագրական մարտերին: Նրա ջանքերի գնով բազմաթիվ ազատամարտիկներ փրկվեցին: Իսկ արդեն 1993 թվականի հունվարին նշանակվելով Կենտրոնական պաշտպանական շրջանի գումարտակի բուժկետի պետ՝ նրա կազմում մասնակցեց Հադրութի, Ֆիզուլու, Աղդամի, Ջաբրայիլի, Կուբաթլուի, այնուհետև՝ Գյուլուջա և Արծվաշեն գյուղերի ազատագրմանը՝ փրկելով հարյուրավոր կյանքեր:

Գումարտակի անձնակազմը մեծ հարգանք էր տածում Զ. Հայրապետյանի հանդեպ և յուրաքանչյուր վիրավորված մարտիկ իրեն ապահովված էր զգում, եթե բուժօգնությունը Զուխրա Հայրապետյանի կողմից էր: Հրադադարից հետո նա վերադարձավ Ստեփանակերտ՝ իր նախկին աշխատանքին[1453]: Զուխրա Հայրապետյանը պարգևատրվել է ԼՂՀ «Շուշիի ազատագրման համար» և «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներով, «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով:

Այսօր էլ հայրենի Ստեփանակերտի փողոցներով մարդկանց օգնելու ու նրանց կյանքը փրկելու է շտապում ի վերուստ ավագ բուժքույր Զ. Հայրապետյանը: Նա, իր կյանքը չխնայելով, իր գլխին ավելացող

[1452] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 184:
[1453] Տե՛ս նույն տեղում:

սպիտակ մազերի, իր առողջության կորստի հաշվին, բազմաթիվ ազատամարտիկների է հանել մարտի դաշտից, հասցրել ապահով տեղ և կյանք պարգևել:

Նա ամենածանր օրերին վստահ էր Արցախի հաղթանակին, երբ Երևանում բուժվող իր եղբորորդուն գրում էր. «… Այո՛, ես պատերազմի հորձանուտի մեջ եմ: Եվ հուսով եմ, որ պատերազմը կավարտվի միայն մեր հաղթանակով, որովհետև ամեն օր ու ամեն րոպե համոզվում եմ իմ ժողովրդի՝ ազատության ուղին ընտրած արցախցիների ոգու հզորության մեջ»[1454]: Զ. Հայրապետյանն այդ հզոր ու անպարտելի ոգու կրողներից մեկն է:

Շուշիի ազատագրական մարտերին միացած **Մանուշակ Սարգսյանը, Ֆլորա Հակոբջանյանը** և **Համեստ Օհանյանը**, մասնակցելով տարբեր շրջանների ինքնապաշտպանական մարտերին, իրենց ներդրումն ունեցան հայրենի հողի ազատագրման գործում[1455]: Միանալով Աշոտ Ղուլյանի ջոկատին, մասնակցեցին Շուշիի ազատագրմանը և առաջիններից էին, որոնք ոտք դրեցին ազատագրված քաղաք:

Ազատամարտիկ բժիշկ **Մանուշակ Սարգսյանը** ծնվել է 1964 թվականի ապրիլի 16-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Շուշի քաղաքում:

1984 թվականին ավարտել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը, 1990 թվականին՝ Երևանի բժշկական ինստիտուտի գինեկոլոգիայի բաժինը: Նույն թվականից առ այսօր աշխատում է Ստեփանակերտի ծննդատանը որպես մանկաբարձ-գինեկոլոգ, միաժամանակ դասավանդում է Ստեփանակերտի բժշկական քոլեջում:

1992 թվականից Մանուշակ Սարգսյանը զինվորագրվել է Արցախյան ազատագրական պայքարին, մասնակցել Կարմիր շուկայի (1992, փետրվար-մարտ), Շուշիի (1992, մայիս) ազատագրման կռիվներին:

[1454] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 115:

[1455] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 135:

Մ. Սարգսյանը վիրավորվել է ողնաշարից, սակայն ապաքինվելուց հետո վերադարձել է մարտի դաշտ, ավելին՝ 1993 թվականին Հադրութի շրջանի Տող գյուղի, Մարտունու շրջանի Ֆիզուլի, Աղբուրունի, Ահմեդբեյլիի ռազմական գործողություններին մասնակցելու համար արժանացել է հրամանատարության շնորհակալությանը (հրամանատար՝ գնդապետ Հարոյան): Լինելով մարտական գործողությունների (Խոջալու, Շուշի, Հադրութ, Մարտունի) թեժ կետերում՝ պայքար շարունակել է մինչև հրադադար[1456]:

Արցախի ազատության ու անկախության համար մղված մարտերում ցուցաբերած արիության ու խիզախության համար Մ. Սարգսյանը պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» (1993), «Մարտական ծառայության համար» (2001) մեդալներով, ԼՂՀ պաշտպանության նախարարության պատվոգրով:

1994 թվականին Մ. Սարգսյանը ընտրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր: Նա ԼՂՀ «Մայրություն» հասարակական կազմակերպության վարչության անդամ է, ակտիվ կենսադիրքի տեր անհատականություն, ում համար ԼՂՀ անկախությունն ու նրա միջազգային ճանաչումը եղել և մնում են որպես գերխնդիր[1457]:

Շուշիի և նրան մերձակա ԼՂՀ այլ տարածքների կրակակետերի ոչնչացումից հետո ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի առջև խնդիր դրվեց բացել կենսականորեն կարևոր Շուշի-Լաչին-Զաբուխ ճանապարհը, որը հնարավորություն կստեղծեր վերացնելու հանրապետության շրջափակումը և ապահովելու բնականոն կենսագործունեությունը: Այդ իրադարձությունների հորձանուտում հայտնվեց նաև ազատամարտիկ **Մարինե Աղաջանյանը**:

Նա ծնվել է 1963 թվականի հունվարին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ստեփանակերտ քաղաքում: 1980-1981 թվական-

---

[1456] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 208:
[1457] Տե՛ս նույն տեղում:

ներին աշխատել է Ստեփանակերտի կոշիկի ֆաբրիկայում որպես բանվորուհի, 1981-1990 թվականներին՝ Էլեկտրատեխնիկական գործարանում որպես հավաքող-փականագործ, այնուհետև՝ տեխնիկական գրադարանի վարիչ: 1990 թվականին ավարտել է Էջմիածին քաղաքի ակումբագրադարանային տեխնիկումի գրադարանային գործ բաժինը: Դեռևս 1988 թվականին անդամագրվել է Ղարաբաղյան շարժմանը: 1989 թվականին Մ. Աղաջանյանն անդամագրվել է Բերդաձորի ինքնապաշտպանական ջոկատին, կատարել է ԲԻԽ-ի (Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդ) կողմից տրված մարտական առաջադրանքները[1458]: Բերդաձորի ենթաշրջանի ազգաբնակչությանը տեղում պահելու համար ԲԻԽ-ի առաջարկությամբ և ԼՂԻՄ ժողկրթության բաժնի համապատասխան հրամանագրով (05.09.1990) նշանակվել է Բերդաձորի նորաստեղծ մանկապարտեզի վարիչ: Իսկ 1991 թվականին՝ Բերդաձորի ենթաշրջանը ազերիների կողմից բռնի տեղահանվելուց հետո, Մ. Աղաջանյանը տեղափոխվել է Ստեփանակերտ[1459]:

1992 թվականին ծառայել է ԼՂՀ Պաշտպանության բանակի հրետանային դիվիզիոնում, սկզբում՝ որպես ռադիոհեռախոսավար, այնուհետև՝ սանիրահանգիչ: 1999 թվականին աշխատել է Ստեփանակերտի ՊՓԲԸ-ում որպես գործավար[1460]: 2000 թվականից մինչ օրս ծառայում է ՊԲ թիվ 37221 զորամասում: Եղել է գաղտնի գործավարության գործակալ, այնուհետև՝ համակարգչային կապի կենտրոնի պետ:

2005 թվականին Մ. Աղաջանյանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի հրամանագրով պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայության համար», «Մայրություն» հասարակական կազմակերպության կողմից՝ «Մայրական երախտագիտություն Արցախի

[1458] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ.1, էջ 146:
[1459] Տե՛ս նույն տեղում, էջ 208:
[1460] Տե՛ս նույն տեղում, էջ 146:

քաջորդիներին» մեդալներով, «Երկրապահ կամավորական միության» կողմից՝ «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով[1461]:

Մայիսի 18-ին հայ ինքնապաշտպանական ուժերը մտան Լաչին (Քաշաթաղ)՝ դրանով իսկ ճեղքելով եռամյա շրջափակման օղակը: Արդեն մայիսի 20-ին միջանցքի միջոցով Գորիս-Ստեփանակերտ ճանապարհով ԼՂՀ մայրաքաղաք հասցվեցին հարյուրավոր տոննա մարդասիրական բեռներ՝ սննդամթերք, դեղորայք և առաջին անհրաժեշտության այլ պարագաներ: Դրան հաջորդեցին հակառակորդի կրկին լայնածավալ ռազմագործողությունները, որոնց ընթացքում զոհվեցին **Աղավնի Տեր-Ստեփանյանը** և **Ալվարդ Վարդանյանը**[1462]:

Ա. Վարդանյանը ծնվել է 1948 թվականի հոկտեմբերին Մարտունու շրջանի Զոլաքար գյուղում: 1956 թվականին ընդունվել է Վանաձորի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի հեռակա բաժինը, որն ավարտել է 1974 թվականին: Ուսանելու ընթացքում հայոց լեզու և գրականություն է դասավանդել Մարտունու միջնակարգ դպրոցում: Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Մասիսի շրջանի Մասիս կայարանի միջնակարգ դպրոցում: 1984 - 1987 թվականներին աշխատել է Երևանի թիվ 32 երեկոյան, 1987 թվականից՝ Չեխովի անվան թիվ 55 դպրոցներում: Նշենք, որ վերջինս, միանալով Սյունիքի աշխարհազոր ստեղծելու և Գորիսի սահմանամերձ գոտում ռազմականացված բնակավայրեր հիմնելու ԱԻՄ-ի նախաձեռնությանը, ազատագրված բնակավայրերում մասնակցել է աիմավանների ստեղծմանը, ինչպես նաև զորավարժություններին: 1990 թվականին համալրելով ինքնապաշտպանական ուժերի շարքերը՝ մասնակից է դարձել Լաչինի ազատագրական մարտերին, որի ժամանակ մարտական ծառայությունների կատարման ընթացքում հուլիսի 29-ին Արմավան-6-ում՝ Լաչինի շրջանի Հոչազ գյուղում զոհվել է[1463]:

[1461] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ.1, էջ 146:
[1462] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, էջ 184:
[1463] Տե՛ս նույն տեղում:

Թշնամու լայնածավալ գործողություններին դիմակայելու և հետ շպրտելու համար հայկական ուժերը դիմեցին համակարգված ռազմագործողությունների, որին միացավ կանանց վաշտը: Ազատամարտի մարտիկներին իրենց նվիրվածությամբ չէին զիջում կանայք. նրանք՝ որպես կամավոր, իրենց ուսերի վրա վերցրին պատերազմի ծանր բեռի իրենց բաժինը: Կանանց վաշտի զինվորները աչքի էին ընկնում իրենց նպատակաուղղվածությամբ ու արիությամբ: Դեռևս 1992 թվականին Ժաննա Գալստյանի առաջարկով և Արկադի Տեր-Թադևոսյանի աջակցությամբ «Սպիտակ» փրկարարների խմբի բժիշկների ուժերով կազմակերպվել էին առաջին բուժօգնության դասընթացները, որոնց ավարտից հետո 24 հոգուց բաղկացած խումբն ուղարկվել էր Շուշիի ուսումնական կենտրոն՝ նախնական զինվորական պատրաստություն անցնելու համար: Սակայն կանանց գումարտակ չկազմավորվեց: 1992 թվականի դեկտեմբերին ինը հոգուց բաղկացած խումբը՝ **Մարգարիտա Սարգսյանի, Կարինե Դանիելյանի, Եվգենյա Առստամյանի, Գայանե Առուստամյանի, Անահիտ Պետրոսյանի, Անահիտ Թամրազյանի, Վարդուհի Գևորգյանի, Մարգարիտա Թառանյանի** *և* **Արեգա Սարգսյանի** մասնակցությամբ, մտավ 8-րդ վաշտի կազմի մեջ, որի հրամանատարն էր Մարտիկ Գասպարյանը[1464]: Մինչև պատերազմի վերջ նրանք գտվում էին ռազմաճակատի առաջնային գծում: Նրանց թվում էր նաև ազատամարտիկ **Կարինե Դանիելյանը**:

Կ. Դանիելյանը ծնվել է 1962 թվականի հուլիսին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Շուշի քաղաքում: 1980 թվականին ավարտել է Ստեփանակերտի հաշվապահական ուսումնարանը: Աշխատել է Ստեփանակերտի ՆԳՆ գաղտնի մասում որպես քարտուղարուհի և թարգմանչուհի: Կատարել է թարգմանություններ հայերենից և ադրբեջաներենից ռուսերեն: Այնուհետև աշխատել է Ստեփանակերտի «Ավտովազ տեխսպասարկման կենտրոնում» որպես գլխավոր հաշվա-

[1464] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 137:

պահ: 1884-1889 թվականներին բնակվել է Ռուսաստանում: 1989 թվականի մայիսին վերադարձել է հայրենիք և ակտիվորեն մասնակցել Արցախյան ազատագրական շարժմանը[1465]: 1991 թվականին ավարտել է Ստեփանակերտի ուսումնամարզական արագացված դասընթացները: 1992 թվականին որպես կամավոր անդամագրվել է Շուշիի 8-րդ վաշտին (հետագայում՝ գունդ), մասնակցել է Շուշիի (Շռլան), Աղդամի (Բոյահմեդլի և այլն), Մարտակերտի, Կուբաթլուի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

1993 թվականի օգոստոսի 17-ին Կուբաթլուի Բաշառատ գյուղի մոտակայքում համառ մարտեր էին մղվում: Գիշերը ազերիները անսպասելի հարձակման են անցել՝ կարևոր բարձունքը հետ գրավելու համար: Թշնամին կրակե հեղեղ է թափել բարձունքի վրա: Ազատամարտիկների մի խումբ, խորանալով թշնամու պաշտպանական դիրքերի մեջ, ընկել է խաչաձև կրակի տակ[1466]:

Կ. Դանիելյանը դիպուկահար էր, սանիրահանգիչ և բուժքույր: Նա ծանր վիրավորներին ցավազրկել է, վիրակապել և տեղափոխել: Կ. Դանիելյանը փրկել է մեկին, երկրորդին... Պայթել է արկը: Նա վիրավորվել է գլխից, ձեռքից, երկու ոտքից: Վերքերը ծանր էին: Նրան անգիտակից վիճակում տեղափոխել են Ստեփանակերտի հիվանդանոց, չորս օր անց՝ Երևան:

Պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» (1993), «Մարշալ Բաղրամյան» (1997), «Արիության համար» (2000) մեդալներով[1467]:

Կ. Դանիելյանն այժմ բնակվում է Շուշիում: Առաջին կարգի հաշմանդամ է: Նա պատմում է. «Երբ Շուշիի պաշտպանության համար ստեղծվեցին կամավորական ջոկատներ, որոշեցի կամավորագրվել: Եթե իմ մեջ կար այդ խիզախությունը, ինչու չպայքարեի, չկռվեի հայ-

---

[1465] Հայուհի, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 168:
[1466] Տե՛ս նույն տեղում:
[1467] Տե՛ս նույն տեղում:

ռենակիցներիս հետ մեկտեղ… Կռվի թեժ պահերին ջոկատի տղաները փորձում էին մեզ հետ պահել՝ իրենք առաջ ընկնելով: Բայց, միևնույն է, մենք մեր բաժին պատերազմը ունենիք…Ջոկատը մասնակցեց թշնամու բազմաթիվ կրակակետերի վերացման գործողություններին, ինչպես նաև Լաչինի շրջանի ազատագրման մարտերին»:[1468]

Շատերի վկայությամբ հայ կանայք մի քանի մարտերից հետո ռազմի դաշտում հմտացել էին և առաջին օգնությունը ցույց տալուց բացի, զենքը ձեռքներին, մասնակցում էին նաև հարձակողական գործողություններին: Նրանք դարձել էին հմուտ զինվորներ՝ իրենց մեջ դրսևորելով հայուհու առաքինի բնավորությունն ու վեհ գաղափարները:

Կանանց վաշտի համար առաջին լուրջ փորձությունը եղավ 80-րդ և 81-րդ պահակակետերի՝ Լաչինի (Բերձոր) լեռների պաշտպանության ժամանակ, երբ ցրտաշունչ ձմռանը այդ օրերին մեծ դժվարություններով կատարում էին իրենց պարտքը: Նրանց գնդի կազմում նրանք տեղափոխվեցին Կուբաթլուի շրջանի Բաշառատ գյուղը, որտեղ ծանր մարտեր էին ընթանում[1469]: Այս մարտերում աչքի է ընկել դիպուկահար ազատամարտիկ **Մարգարիտա Սարգսյանը:**

Մ. Սարգսյանը ծնվել է 1960 թվականին փետրվարին ԼՂՀ Մարտունու շրջանի Հացի գյուղում: 1967 թվականին ընդունվել է տեղի միջնակարգ դպրոցը: Բնատուր ընդունակությունների շնորհիվ 4-րդ դասարանից միանգամից տեղափոխվել է Ստեփանակերտի մաթեմատիկական թեքումով դպրոցի 6-րդ դասարան: 1967 թվականին՝ դպրոցն ավարտելուց հետո, ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի հեռակա բաժին: Որպես հերթափոխի պետ՝ աշխատել է «Ղարմետաքս» կոմբինատում:

[1468] «Մարտիկ», 4 փետրվարի, N 4, Ստեփանակերտ, 2011:
[1469] **Ավանեսյան Հ.,** նշվ. ատենախոսությունը, էջ 138:

Մ. Սարգսյանը եղել է հրաձգության գծով Ադրբեջանի Հանրապետության չեմպիոնուհի, շախմատի գծով՝ Ստեփանակերտի կանանց չեմպիոնուհի[1470]: 1992 թվականի սեպտեմբերի 1-ից աղջիկները ռազմական պատրաստականություն էին ձեռք բերում Շուշիի ուսումնամարզական գումարտակում: Մարգարիտը՝ որպես հրաձգության գծով չեմպիոնուհի, ստացավ օպտիկական նշանառության հրացաններից մեկը և մինչև վերջ անբաժան մնաց նրանից:

Եռամսյա ռազմական պատրաստականություն անցնելուց հետո առաջին խմբին (**Մարգարիտա Թառանյան, Մարգարիտա Սարգսյան, Անահիտ Թամրազյան**) ուղարկեցին մարտական գործողությունների շրջան՝ սկզբում Շուշիի շրջանի Շուլան գյուղ, ապա երկու օրից տեղափոխեցին Սարիբաբա բարձունքի մոտակայք: Ստեփանակերտի 8-րդ վաշտը պատրաստվում էր վճռական գրոհի՝ վերջնականորեն ազատագրելու Շուշիի շրջանի տարածքը: Դասակի հրամանատար Ալբերտ Մուսայելյանն անձամբ գնաց հետախուզության՝ իր հետ վերցնելով Մարգարիտին: Դժվար էր առաջանալը: Մ. Թառանյանը քայլում էր առանց տրտնջալու՝ աշխատելով ետ չմնալ հրամանատարից, որն իր կենսուրախ բնավորությամբ քաջալերում էր մարտիկներին:

Հետախուզությունը բարեհաջող անցավ: Սակայն ճանապարհին նկատվեցին հակառակորդի կողմից և կրակի տակ ընկան: Փորձառու հրամանատարը և Մ. Թառանյանը խուճապի չմատնվեցին: Մարգարիտի օպտիկական հրացանը գտնում էր ձյան մեջ քողարկված թշնամիներին և ստիպում լռել[1471]: Սակայն հերթական անգամ գնալով ճակատ՝ նա այլևս չվերադարձավ: 1993 թվականի ամռանն էր: Շուշիի գունդը, որի կազմի մեջ էր կանանց գումարտակը՝ Վլադիմիր Ավագյանի հրամանատարությամբ, բազավորված Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղում, մասնակցում էր Կուբաթլուի շրջանի ազատագրմանը: 1993

[1470] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 172:
[1471] Տե՛ս նույն տեղում:

թվականի օգոստոսի 18-ին Կուբաթլուի շրջանի Բաշառատ գյուղի համար մղվող մարտերում զոհվեց Մ. Սարգսյանը: Նա հայտնի էր իր անվեհեր քաջությամբ և հմտավարժ դիպուկահարի անուն ուներ: Նրա վերջին մարտը արյունալի էր և տևեց մեկ ժամ՝ 14 հայ մարտիկների հետ: Շրջափակման մեջ հայտնվելով՝ Մ. Սարգսյանը նռնակ պայթեցրեց և ոչնչացրեց հակառակորդի յոթ զինվորի: Այդ մարտում տասնհինգ ազատամարտիկներից փրկվեցին միայն երեքը[1472]:

Մ. Սարգսյանի զոհվելուց մեկ օր անց վիրավորվեց ազատամարտիկ, նշանառու **Եվգենյա Առուստամյանը**: Նա ծնվել է 1955 թվականի հունիսին, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգն ավարտելուց հետո՝ 1972-1992 թվականներին, որպես հավաքող-փականագործ աշխատել է Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանում: Աշխատանքին զուգահեռ նա սովորել և 1991 թվականին ավարտել է Երևանի կոոպերատիվ առևտրի տեխնիկումը: 1992 թվականի օգոստոսի 20-ից ընդգրկվել է հայրենի հողը պաշտպանող կանանց և աղջիկների ջոկատում որպես դիպուկահար-մարտիկ: Նրան են վստահել ջոկատի օպտիկական նշանառության երկու հրացաններից մեկը[1473]: 1992-1994 թվականներին Շուշիի Պաշտպանական շրջանի զորամիավորման կազմում մասնակցել է Շուշիի (Շռլան), Քելբաջարի (Իփյակ), Մարտակերտի («Պուշկինյալ» բարձունք), Կուբաթլուի (Բաշառատ), Աղդամի (Շահբուլախ) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

Եվգենյա Առուստամյանը մարտական առաջին իսկ գործողություններից իրեն գերազանց է դրսևորել: Բազմիցս արժանացել է հրամանատարության դրվատանքին:

1993 թվականի ապրիլից աղջիկների գումարտակը մտել է Վադոյի (Վլադիմիր Ավագյանի) գնդի կազմի մեջ: Նույն թվականի օգոստոսի 24-ին՝ Կուբաթլուի ազատագրման ժամանակ, Ե. Առուստամյանը

[1472] «Մարտիկ», 25 մարտի, N 31, Ստեփանակերտ, 2003:

[1473] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 152:

վիրավորվել է, տեղափոխվել Ստեփանակերտի զինվորական հիվանդանոց:

Վիրավորվելուց հետո, լինելով երկրորդ կարգի հաշմանդամ, քաջարի հայուհին չի լքել ռազմի դաշտը և մինչև 1996 թվականի ապրիլ ամիսը շարունակել է ծառայությունը Շուշիի գումարտակում:

Ե. Առուստամյանը պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» (2005), «Մարտական ծառայության համար» (2007), «Արիության համար» (2000) մարտական մեդալներով և «Հայաստանի երկրապահ» (2006) հուշամեդալով[1474]:

Չնայած ունեցած կորուստներին՝ կանանց վաշտը շարունակեց իր հայրենանվեր գործը: Հայ կանայք հմտացան նաև հետախուզական աշխատանքներում: Նրանց շարքում աչքի ընկավ **Անահիտ Թամրազյանը:**

Ա. Թամրազյանը ծնվել է 1964 թվականի փետրվարին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ստեփանակերտ քաղաքում: 1981 թվականին աշխատանքի է անցել Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանում որպես փաթաթող բանվոր: 1983 թվականին մեկնել է Աշխաբադ (Թուրքմենստան), 1984 թվականին վերադարձել է և նորից աշխատել կոնդենսատորների գործարանում: 1990 թվականին ավարտել է Ստեփանակերտի ռազմաուսումնական արագացված դասընթացները, իսկ 1992 թվականից՝ զինվորագրվել Շուշիի 8-րդ վաշտին որպես բուժքույր: Նույն թվականի նոյեմբեր-դեկտեմբերին մասնակցել է Շուշիի գրավմանը:

1993 թվականի հունվարին Ա. Թամրազյանը մասնակցել է Թազաքենդի, Եղծահողի մի շարք բարձունքների գրավմանը, մարտին՝ Քելբաջարի, հունիսին՝ Մարտակերտի, օգոստոսին՝ Կուբաթլուի, դեկտեմբերի վերջին և 1994 թվականի հունվարի սկզբին՝ Բոյախմեդալի, Սուֆլու գյուղերի մարտերին: 1994 թվականի ապրիլի 13-ից մասնակցել

[1474] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 172:

է Կարմրավանի, Սեյսուլան, Կարմբան և այլ գյուղերի ուղղությամբ ընթացող ընդհանուր հարձակմանը, մարտնչել մինչև զինադադարը: 1994-1995 թվականներին Ա. Թամրազյանը եղել է գումարտակի դեղատան վարիչ, այնուհետև՝ մինչև 1997 թվականը, ծառայել է հատուկ հետախուզական գնդում որպես բուժկետի վարիչ: Հետախուզական գործողություններին մասնակցելու համար ստացել է լեյտենանտի սպայական կոչում[1475]:

Ա. Թամրազյանը փրկել է բազմաթիվ ազատամարտիկների կյանքեր: Նա պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին», «Արիության համար» մարտական մեդալներով: Այժմ աշխատում է «Փեյս» հեռուստառադիոընկերությունում որպես փոխտնօրեն[1476]:

Արժի հիշատակել, որ վաշտի կանանց մի մասը իրենց պայքարը սկսել էին դեռևս 1988-1989 թվականներին, նրանց թվում՝ **Գայանե Առուստամյանը, Վարդուհի Գևորգյանը** և **Արեգա Սարգսյանը**, որոնք, շարժմանը միանալով հենց առաջին օրերից, իրենց անձնվեր գործը շարունակեցին ինքնապաշտպանական ջոկատներում, այնուհետև՝ Պաշտպանության բանակում:

Գ. Առուստամյանը ծնվել է 1963 թվականի հունվարին Ստեփանակերտում: 1970 թվականին ընդունվել և 1980 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը: 1980 թվականին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմական ֆակուլտետը, որն ավարտել է 1984 թվականին: Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատել է Շահումյանի շրջանում որպես մանկավարժ, ապա՝ մինչև 1989 թվականը՝ Ստեփանակերտի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում[1477]: Գ. Առուստամյանը մեկնել է Բերդաձոր, որպես հեռախոսավա-

---

[1475] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 172:
[1476] Տե՛ս նույն տեղում:
[1477] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 35:

ռուհի՝ 1991 թվականի սեպտեմբերից աշխատանքի անցել նոր կազմակերպվող գաղտնի բանակի կապի կենտրոնում:

1992 թվականին, երբ Արցախը գտնվում էր ճգնաժամային վիճակում, որոշվեց ստեղծել կանանց գումարտակ: Երևանցի Կարինե Գևորգյանը տեղական ռադիոյով կարդաց հայտարարությունը: Շատերն արձագանքեցին, նրանց թվում՝ նաև Գ. Առուստամյանը: Սկսվեցին ուսումնամարզական պարապմունքները[1478]: Վերջապես պարապմունքներն ավարտվեցին: Մարգարիտ Թառանյանը ռադիոկապով կապվեց Գ. Առուստամյանի հետ՝ հայտնելով, որ գնում են ճակատ: Գայանեի ուրախությանը չափ ու սահման չկար. անմիջապես շտապեց այնտեղ: Հետագայում Մարգարիտն իր օրագրում գրառել է. «Երբ մեզ տանում էին ճակատ, կապվեցի Գայանեի հետ և ասացի՝ այնտեղ, որ ուզում էիր, մեզ տանում են: Եկավ անմիջապես և մնաց մինչև վերջ, որպես բուժքույր: Հաստատակամ էր, անընկճելի: Շատ ժամանակ մենք լիցքավորվում էինք՝ իր նվիրվածությունն զգալով»:

Գ. Առուստամյանը եկավ ընկերուհու կանչով և մնաց մինչև վերջին օրը:

Մինչև 1993 թվականը Գ. Առուստամյանը զուգահեռաբար որպես կապավոր աշխատել է նաև շտաբում: Մայիսից թողել է կապավորի աշխատանքը և հիմնավորվել Շուշիի գնդի կազմի մեջ մտած Վադոյի գումարտակում՝ անցնելով բոլոր այն ճանապարհները, որով անցավ գումարտակը: Իսկ ուղին հերոսական էր՝ լի տառապանքներով, կորուստների ցավով, նաև՝ հաղթանակների ցնծությամբ: Այդ ճանապարհն անցնում էր Հադրութի շրջանի Խծաբերդից Մարտակերտի շրջան, Կուբաթլու, Հորադիզ, և հզոր երթն ավարտվեց Մարտակերտի շրջանի Կարմրավան գյուղի մոտ[1479]:

1993 թվականի օգոստոսի սկզբին Կուբաթլուի շրջանում էին: Աղջիկներից հինգը մասնակցում էին մարտերին: Զոհվեց Մարգարիտը,

---

[1478] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 36:
[1479] Տե՛ս նույն տեղում, էջ 35:

վիրավորվեց Կարինեն... Կորուստներ շատ ունեցան: Սակայն արցախյան գնդերի ընթացքն անհնար էր կասեցնել: Օգոստոսի 31-ին Կուբաթլուն շրջապատեցին: Թուրքերը թողեցին քաղաքը և սարսափահար փախան: Որպես սիրո ու հարգանքի արտահայտություն՝ գնդի ազատամարտիկները Գ. Առուստամյանին և Մ. Թառանյանին թույլ տվեցին զրահամեքենային նստած առաջինը մտնել ազատագրված քաղաք: Ազերիների համար այնքան անսպասելի էր եղել հարվածը, որ, խուճապի մատնվելով, ամեն ինչ թողել-փախել էին: Ինչքան մեծ էր աղջիկների հրճվանքը, ինչքան մեծ՝ երջանկությունը, իրենք այդ հզոր երթի մասնակիցներն էին[1480]:

Երկարատև և ծանր երթից հետո գունդը գնաց Հորադիզ՝ ծանր ու թեժ մարտերի: Նորից ցավալի կորուստներ ունեցան: Իսկ 1994 թվականի հունվարի 18-ին Անահիտ Պետրոսյանի հետ գնացին Մարտակերտի ուղղությամբ: Գունդն այնտեղ մեկը մյուսի ետևից ազատագրում էր Աղդամի շրջանի գյուղերը: Մասնակցեցին Բոյահմեդլի, Սոֆուլու գյուղերի ազատագրմանը[1481]:

Մայիսի հրադադարը վերջ դրեց պատերազմին: Գայանեն մինչև 1995 թվականի սեպտեմբեր մնաց գնդում և անցավ իր նախկին աշխատանքին: Այժմ նա աշխատում է Ստեփանակերտի կապի բաժանմունքում որպես հեռախոսավարուհի:

Ազատամարտիկ **Վարդուհի Գևորգյանը** ծնվել է 1936 թվականի հունիսի 4-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ստեփանակերտ քաղաքում:

1980 թվականին ավարտել է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցը, աշխատել է կոնդենսատորների գործարանում:

1987 թվականին ընտրվել է մարզխորհրդի պատգամավոր: 1990 թվականին ավարտել է Ստեփանակերտի բուժքույրական դասընթաց-

---

[1480] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 36:
[1481] Տե՛ս նույն տեղում, էջ 36-37:

ները[1482]: Արցախյան պատերազմի առաջին օրերից մասնակցել է շարժմանը: Արցախյան ազատագրման պայքարին մասնակցությունն սկսել է՝ ստորագրություններ հավաքելով ու թռուցիկներ տարածելով: 1988թ թվականից մասնակցել է մարզի պատմական նստաշրջաններին, եղել է Ազգային ճակատի անդամ: 1989 թվականին Վարդուհի Գևորգյանն առաջին անգամ տասը մարտիկներից կազմված ջոկատի կազմում ինքնաշեն զենքով մեկնել է Աղդամի հարևանությամբ գտնվող սահմանամերձ Փառուխ գյուղ և մինչև 1990 թվականը մնացել է դիրքերում:

1991-1992 թվականներին մասնակցել է Կիչանի, Խաչենի, Ղազանչիի, Սրխավենդի, Օրթափայի, Բաշգունափլոյի, Մարտակերտի հերթապահություններին ու մարտերին:

1992 թվականին Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) թույլտվությամբ հավաքել է ութ աղջիկներից կազմված խումբ և սեպտեմբերից 8-րդ վաշտի (ապա՝ Շուշիի գնդի) հետ մասնակցել է Ֆինգայի, Սարիբաբի, Բյուլուղդուզի, Պեչենիսի, Թազաքենդի, 80-81 բարձունքի, Քելբաջարի, Փափրավանդի, Մեծ Թաղլարի, Խծաբերդի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերին[1483]:

Վ. Գևորգյանը պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մարտական մեդալով (2002), «Մարտական խաչ 2-րդ աստիճանի» շքանշանով (2000), «Արաբո» (2005) և «Երկրապահ» (2005) հուշամեդալներով[1484]:

Ազատամարտիկ, կապավոր և բուժքույր **Արեգա Սարգսյանը** ծնվել է 1962 թվականի մարտին Ստեփանակերտում: 1969 թվականին ընդունվել և 1879-ին թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը: Աշխատել է Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանում[1485]: 1991

[1482] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 16:
[1483] Տե՛ս նույն տեղում:
[1484] Տե՛ս նույն տեղում:
[1485] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 165-166:

թվականի աշնանը՝ դեռևս ռուսական բանակի և ադրբեջանի ՕՄՕՆ-ականների տրապետության ժամանակաշրջանում, սկսվեցին արցախյան ազատագրման բանակի կազմավորման աշխատանքները: Նոր ստեղծվող բանակի կապի կենտրոնին կապավորներ էին հարկավոր: Ա. Սարգսյանը դիմեց կապի հրամանատար Մաքսիմ Բաղմանյանին և ընդունվեց աշխատանքի: Այնուհետև իր բնածին ընդունակությունների և աշխատասիրության շնորհիվ դարձավ հմուտ կապավոր:

Ա. Սարգսյանը 1994 թվականի սկզբից տեղափոխվել է Շուշիի գունդ, որտեղ հիմնականում կանայք էին, և որպես բուժքույր մասնակցել է բոլոր մարտերին[1486]:

Առաջին մարտական առաջադրանքն ստացել է Աղդամի շրջանի Բոյահմեդլի գյուղի ազատագրման ժամանակ:

1994 թվականի ապրիլի սկզբից Անահիտ Սարգսյանի և Մարգարիտ Թառանյանի հետ, Վադոյի գումարտակում մարտերի մեջ է եղել մինչև մայիսյան հրադադարը: Գրոհի հենց առաջին օրը կրակագծից ռադիոկապով հաղորդել են, որ ծանր վիրավորներ կան, որոնց հնարավոր չէ տեղափոխել առանց տեղում օգնություն ցույց տալու: Փորձառու Մ. Թառանյանի և Ա. Պետրոսյանի հետ շտապեց դեպի կրակագիծ: Թշնամին մոլեգնում էր: Երկնքից կարկտի նման թափվում էին արկերն ու ականները: Սուլացող գնդակներից հնարավոր չէր գլուխ բարձրացնել, բայց հարկավոր էր շտապել: Եվ անվախ բուժքույրերը, արհամարհելով կյանքներին սպառնացող վտանգը, վիրակապելով ու առաջին բուժօգնություն ցույց տալով բոլոր վիրավորներին, հանեցին կրակագծից, փրկեցին ստույգ մահվանից[1487]:

Մինչև հրադադարը շուրջ մեկ ամիս Ա. Սարգսյանը հարձակվող ազատամարտիկների հետ էր: Նա մյուս աղջիկների հետ գիշեր-ցերեկ չէր քնում: Գնդի դաշտային հոսպիտալը գտնվում էր բավականին մեծ

[1486] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 165-166:
[1487] Տե՛ս նույն տեղում, էջ 167:

հեռավորության վրա: Ստիպված էին լինում օրական մի քանի անգամ վիրավորներ հասցնել այնտեղ և ետ վերադառնալ:

Արցախյան գնդերի սրընթաց գրոհն ավարտվել է Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղի մատույցներում: Հրադադարը սանձեց պատերազմի ահարկու թափը: Ա. Սարգսյանը մինչև 1995 թվականի օգոստոսը մնաց և ծառայեց հարազատ գնդում: Ապա զորացրվելով՝ անցավ իր նախկին մասնագիտությանը[1488]:

Ազատամարտիկ-բուժքույր **Անահիտ Պետրոսյանը** ծնվել է 1962 թվականի օգոստոսին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ստեփանակերտ քաղաքում: 1979 թվականին ավարտել է Ստեփանակերտի թիվ 5 միջնակարգ դպրոցը և աշխատել «Ղարմետաքս» կոմբինատում: Աշխատանքին զուգընթաց սովորել և 1980 թվականին ավարտել է Ստեփանակերտի հաշվապահական ուսումնարանը, 1987 թվականին՝ Կիրովաբադի (Գանձակ) թեթև արդյունաբերության տեխնիկումի հեռակա բաժինը՝ ստանալով տեխնիկ-տեխնոլոգի որակավորում[1489]: 1989-1992 թվականներին աշխատել է մասնագիտությամբ: Եղել է արտադրության գծով վարպետ:

1992 թվականին Ա. Պետրոսյանն ավարտել է Շուշիի ռազմաուսումնական արագացված դասընթացները: Ուսումնամարզական պարապմունքների ընթացքում երկու անգամ կատարել է մարտական առաջադրանք, կամավոր զինվորագրվել է Շուշիի գնդի 8-րդ վաշտին:

1992-1994 թվականներին տարբեր ջոկատների կազմում մասնակցել է Լեռնային Ղարաբաղի Շուշիի (Շռլան), Լաչինի (Ֆինգա), Մարտակերտի (Կիչան, Ղազանչի, Սրխավենդ, Կարմրավան և այլն), Աղդամի (Ալիմադաթլի, Ալիօղլի և այլն), Հադրութի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Գրոհից գրոհ դարձել

[1488] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 167:

[1489] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 204:

է իսկական զինվոր-բուժքույր և միշտ եղել մարտնչողների շարքերում[1490]:

1994 թվականի գարնանը Վադոյի գումարտակում մասնակցել է Կարմրավանի ուղղությամբ ընթացող ծանր մարտերին: Եղել են շատ վիրավորներ ու զոհեր: Բուժքույրերի պակասի պատճառով ստիպված սպասարկել է մի քանի գումարտակների: Ա. Պետրոսյանն անդադարում աշխատել է՝ մոռանալով վտանգն ու մահվան սպառնալիքը:

Մարտերում ցուցաբերած հերոսության համար արժանացել է բազմաթիվ մեդալների և այլ պարգևների: 1994 թվականի զինադադարից հետո որոշել է մնալ նոր ու սիրված մասնագիտության ոլորտում:

Ա. Պետրոսյանն այժմ աշխատում է Ստեփանակերտի զինվորական հոսպիտալում որպես բուժքույր[1491]:

Ազատամարտիկ-բուժքույր **Մ. Թառանյանը** ծնվել 1964 թվականի սեպտեմբերին Լաչինի շրջանի Մինքենդ (այժմ՝ Հակ, ԼՂՀ Քաշաթաղի շրջան) գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո աշխատել է ԼՂԻՄ զինկոմիսարիատում, միաժամանակ հեռակա կարգով ավարտել է Ռուսաստանի Իվանովո քաղաքի տնտեսագիտական տեխնիկումը: 1990 թվականին ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը[1492]:

1988 թվականին բոլորի նման զինվորագրվել է Արցախի ազգային-ազատագրական շարժմանը, մասնակցել ցույցերին ու միտինգներին, օրեցօր ծանրացող պայմաններում որոշել է զենք վերցնել՝ հանուն հայրենիքի:

1992 թվականին Արցախի հինավուրց հոգևոր կենտրոն Շուշիի ազատագրումից հետո մի խումբ նվիրյալների հետ դեռևս ծխացող քաղաքում հիմնել է «Ալեք Մանուկյան» վարժարանը, մայրենի լեզու և գրականություն դասավանդել մանուկ սերնդին:

[1490] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 204:
[1491] Տե՛ս նույն տեղում:
[1492] Տե՛ս նույն տեղում:

Նույն թվականին Մ. Թառանյանը զինվորագրվել է նորաստեղծ «Արցախի կանանց ջոկատին», յուրացրել է քաղաքացիական պաշտպանության, առաջին բուժօգնության, ֆիզիկական պատրաստության, կապի և քարտեզագրության հիմունքները: Մարտական մկրտությունն ստացել է 1992 թվականի աշնանը՝ որպես Արշավիր Ղազարյանի հրամանատարությամբ գործող գումարտակի բուժքույր: Դեկտեմբերին մասնակցել է Շուշիի շրջանի վերջնական ազատագրության համար մղվող ծանր մարտերին:

1993 թվականին հայկական զինվորական ուժերն անցել են ընդհանուր հակագրոհի: Թշնամին ետ է շպրտվել հարազատ Ստեփանակերտից, իսկ մայիսի 17-ին հայերը գրավել են ազերիների որջը՝ Աղդամը սնուցող Բոյահմեդի գյուղը՝ դուրս գալով Մարտակերտ-Աղդամ մայրուղի: Աղդամի ճակատագիրը որոշված էր[1493]:

1994 թվականը Մ. Թառանյանի հիշողության մեջ մնացել է որպես մարդկային ծանր կորուստների, հաղթանակների ու ժամանակավոր հրադադարի տարի. Կուբաթլուի և Մարտակերտի համար մղված մարտերում զոհվեցին նրա ամենամտերիմ զինակիցները: Հրադադարը դիմավորեց Կարմիրավանի մատույցներում:

Այսօր էլ, ինչպես 1985 թվականից ի վեր, Մ. Թառանյանը աշխատում է ԼՂՀ զինկոմիսարիատում՝ ծառայության իր հենակետում:

Մ. Թառանյանը հայրենիքի պաշտպանությունը մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է «Մարտական խաչ 1-ին աստիճանի» շքանշանով, «Անբասիր ծառայության համար 1-ին և 2-րդ աստիճանի», «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մարտական մեդալներով[1494]:

Կանանց վաշտը Շուշիի գնդի կազմում շարունակել է պայքարը և անցել ողջ պատերազմը: Հետագայում այդ վաշտի հիման վրա ստեղծվեց 5-րդ գումարտակը: Նույնիսկ զինադադարի հաստատումից հետո

[1493] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 204:
[1494] Տե՛ս նույն տեղում:

նրանք մասնակցեցին Կարմիրավանի համար մղվող վերջին մարտերին[1495]:

Կանանց վաշտը, լինելով միշտ առաջնագծում, հայկական ուժերի հետ 1992-1994 թվականներին մասնակցել է Շուշիի, Լաչինի, ինչպես նաև Մարտակերտի շրջանների, Աղդամի, Կուբաթլուի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

Արցախյան ազատամարտը հերոսականության փայլուն օրինակներ շատ ունի: Դրանց մեջ, այնուամենայնիվ, առանձնանում է Քարինտակի հերոսամարտը: Այն մշտական գրանցմամբ մտավ ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ: Այդ հերոսամարտին մասնակցող կանանց շարքերում ևս եղան զոհեր: Նրանց թվում էին՝ **Ադելա Աբրահամյանը, Կամելա Պետրոսյանը** և **Նարինե Առաքելյանը**: Նրանք գյուղի ինքնապաշտպանական ուժերին միացել էին դեռևս այն ժամանակ, երբ գաղտնի գործում էր գյուղի կամավորական ջոկատը: Նրանց մարտական ուղին անցավ հայրենի գյուղում՝ Քարինտակի ինքնապաշտպանական ջոկատի հետ[1496]:

Նարինե Առաքելյանը ծնվել է 1976 թվականի օգոստոսի 3-ին Քարինտակ գյուղում: 1983 թվականին ընդունվել է գյուղի միջնակարգ դպրոց[1497]:

Դեռևս 1988-1889 թվականներից վատ լուրեր էին հասնում գյուղ: Պատմում էին Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի դեպքերի մասին: Իսկ 1991 թվականից ադրբեջանական հրոսակները հարձակվեցին նաև Շուշիի հարևանությամբ գտնվող Քարինտակ գյուղի վրա: Ադրբեջանցիների դիրքերը նպաստավոր էին. երբ կանգնում էին գյուղի վրա կախված քարափերին, գյուղը կարծես ոտքերի տակ լիներ: Շուտով ադրբեջանցիների կողմից իսկական կռիվ սկսվեց: Սակայն

[1495] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 թթ., հանրագիտարան, էջ 277-290:

[1496] Արցախապատում, գիրք 3, Քարինտակի հերոսամարտը, 2013, էջ 39:

[1497] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 30:

գյուղը պատրաստվել էր. կազմակերպվել էր ինքնապաշտպանության ջոկատ, որի հրամանատարն էր Վաղինակ Առուշանյանը: Այդ ջոկատի կազմում էին նաև Նարինեի երկու եղբայրները՝ Գրիշան և Գարիկը: Շուտով նրանց միացավ նաև Նարինեն (Նանոն):

Դեռ կռիվը սկսվելուց առաջ Նարինեենց տունը զորանոցի էր վերածվել: Ինքնապաշտպանության գործին միացել էին նաև հայրն ու մայրը: Օր էր լինում՝ նրանց տանը ազատամարտիկներ էին գիշերում: Ն. Առաքելյանը խնամում էր նրանց, մաքրում զենքերը: Շուտով նա ևս դարձավ ազատամարտիկ և միացավ ջոկատին[1498]:

1992 թվականին 16-ամյա Նարինե Առաքելյանը ջոկատի շարքերում կատարում էր կապավորի աշխատանք, միաժամանակ մարտական գործողությունների ընթացքում ազատամարտիկներին զենք, զինամթերք հասցնում: Մարտական ընկերների վկայությամբ, երբ անհնար էր դարձել դիրքերին մոտենալը, Նարինե Առաքելյանը իր շան վրա էր կապում, տեղափոխում զինամթերք, իսկ շան սպանվելուց հետո, արհամարհելով վտանգը, ինքն էր զենք տեղափոխում, որի ընթացքում էլ՝ 1992 թվականի հունվարի 26-ին, զոհվեց[1499]:

Քարինտակի հերոսամարտը ճակատագրական եղավ նաև **Ադելա Աբրահամյանի** և **Կամելա Պետրոսյանի** համար, որոնք հրետակոծությունից, գնդակոծությունից փրկվելուց հետո դարձան առճակատման գագաթը դարձած հունվարի 26-ի դեպերի մասնակիցը, որտեղ և զոհվեցին[1500]:

Հավելենք, որ այդ օրը Ադրբեջանի պատմության մեջ մտավ «Արյունոտ ձոր» անվանումը, իսկ հայ նորագույն պատմության մեջ այն ամրագրվեց որպես «Քարինտակի հերոսամարտ»: Քարինտակի ինքնապաշտպանությանը մասնակցեց նաև Շոշ գյուղի կամավորական

[1498] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 30-31:
[1499] Տե՛ս նույն տեղում, էջ 31:
[1500] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 140:

ջոկատը, որտեղ **Ալվինա Խաչատրյանը** ծառայում էր որպես կապավոր:

Ա. Խաչատրյանի մարտական ուղին սկսվել է գյուղի ինքնապաշտպանական մարտերից: Ջոկատի շարքերում նա մասնակցել է նաև Շուշիի, Լաչինի շրջանների ազատագրական մարտերին: Այնուհետև ծառայությունը շարունակել է Կենտրոնական պաշտպանության շրջանի հետևակային գումարտակում՝ մասնակցելով գումարտակի վարած մարտական մի շարք գործողություններին[1501]:

Պատերազմի տարիներին օր օրի ավելանում էր կանանց թիվը Կենտրոնական պաշտպանական շրջանի կազմում: Նրանց զինվորագրումը բանակ, իհարկե, տվեց իր արդյունքը. իրենց անսասան եռանդով ու նվիրածությամբ կանայք մասնակցեցին Արցախյան հերոսական պատմության կերտմանը: Նման նվիրյալ հայուհիներից է **Տանյա Առուստամյանը**:

Տ. Առուստամյանը ծնվել է 1967 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի Ավետարանոց գյուղում: 1986 թվականին ավարտել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը: 1987-1992 թվականներին աշխատել է ԼՂ հանրապետական հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում[1502]:

1991 թվականից ընդգրկվել է Արցախի ինքնապաշտպանության կամավորական ջոկատներում: 1993 թվականից ԼՂՀ պաշտպանության բանակի բժշկական ծառայության ենթասպա է: 1992-1997 թվականներին ծառայել է Ասկերանի գնդում, 1997-2000 թվականներին՝ Մարտակերտի հրաձգային դիվիզիայի վարչությունում: 2000-2003 թվականներին եղել է Ասկերանի գնդի առաջին հրաձգային գումարտակի, 2003 թվականից՝ ԿՊՇ-ի առաջին հրաձգային գումարտակի բուժկետի պետ:

[1501] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 140:
[1502] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 153:

Տ. Առուստամյանը մասնակցել է Շուշիի, Լաչինի, Աղդամի, Մարտակերտի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին, վիրավոր ազատամարտիների բուժսպասարկման ու տարհանման աշխատանքներին[1503]: Արժանացել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մարտական մեդալով (2000), «Շուշիի ազատագրման համար» (2003), «Արիության համար» (2004), «Անբասիր ծառայության համար» մեդալների, «Հայաստանի երկրապահ» հուշամեդալի, պատվոգրերի, ինչպես նաև հրամանատարության շնորհակալագրերի[1504]:

2005 թվականին ավարտել է Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի ժուռնալիստիկայի բաժինը: Տ. Առուստամյանն այժմ հանրապետական մամուլում հանդես է գալիս ռազմահայրենասիրական հոդվածներով, պատերազմի թեմաներով գրված նյութերով: Հեղինակել է «Սուրբ գործին նվիրված փրկիչները» գիրքը (Ստեփանակերտ, 2006):

Համալրելով Կենտրոնական պաշտպանական շրջանի տարբեր ստորաբաժանումներ՝ կանայք (**Անյա Հակոբյան, Փերի Ղազարյան, Վալյա Մեհրաբյան, Արինա Գրիգորյան, Ալվարդ Բաղդասարյան, Էլյա Աղաջանյան, Լյուդմիլա Սարինյան, Էլմիրա Աղայան, Սվետլանա Գրիգորյան, Էլմիրա Առաքելյան, Ժենյա Հարությունյան, Գայանե Ավետիսյան, Աիդա Բադալովա, Մանյա Պետրոսյան, Մարինա Մարտիրոսյան, Մարինե Պետրոսյան, Կարինե Պետրոսյան, Անժելա Գալստյան, Լյուդմիլա Օվչարենկո, Լիանա Աբրահամյան, Ռայա Գիրգորյան, Վերա Թևոսյան, Անահիդա Աբրահամյան, Ստելլա Բադասյան, Սոնյա Մարտիրոսյան, Գոհար Դոնոմալյան** և շատ ուրիշներ) ոչ միայն մասնակցեցին Ստեփանակերտի, Շուշիի, Լաչինի ռազմագործողություններին, այլև հյուսիսային ուղղությամբ կազմակերպված հակահարձակողական, Քելբաջարի հենակետի վնասազերծման,

[1503] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 153:
[1504] Տե՛ս նույն տեղում:

Մարտակերտի, Աղդամի, Հորադիզի, Զանգելանի, Օմարի լեռնանցքի ռազմական գործողություններին[1505]:

1992 թվականին Կենտրոնական պաշտպանական շրջանի 3-րդ գումարտակը համալրեց **Ստալինա Ասրյանը**, ով կարճ ժամանակ անց կարողացավ իրեն դրսևորել ու մասնակից դառնալ Գումարտակի մարտական գործողություններին:

Նա ծնվել է 1973 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում: 1980 թվականին ընդունվել է միջնակարգ դպրոց, 15 տարեկանում՝ հաշվիչ մեքենաների ուսումնարան: Հաշվիչ մեքենաների ուսումնարանի սովորող 16-ամյա Ստալինան 1989 թվականին ընդմիշտ լքել է Բաքուն և տեղափոխվել Լեռնային Ղարաբաղ՝ Ստեփանակերտ՝ քրոջ մոտ: Այնտեղ նա 1990-1992 թվականներին սովորել և ավարտել է առևտիր ուսումնարանը: Մինչ այդ հայկական կամավորական ջոկատներն արդեն պայքարի էին ելել: Երբ ուսումնարան է եկել Աշոտ Ղուլյանը (Ասկոլկան) և հայտնել, որ աղջիկներ են անհրաժեշտ՝ որպես բուժքույր ծառայելու համար, Ս. Ասրյանը առանց տատանվելու տվել է իր համաձայնությունը[1506]: Սկզբում գնացել է հիվանդանոց՝ օգնելու և փորձ ձեռք բերելու, ապա ծնողներից գաղտնի սկսել է հաճախել բուժքույրական կուրսերի: Կուրսերն ավարտելով՝ մեկնել է ճակատ, միևնույն ժամանակ ընդունվել է բժշկական ուսումնարան (1992): Կարճ ժամանակ անց նա կարողացել է իրեն լիարժեք դրսևորել և դարձել է Սամվել Հարությունյանի հրամանատարությամբ կազմավորված Կենտրոնական պաշտպանական շրջանի երրորդ գումարտակի բուժքույր:

1992 թվականի սեպտեմբերից գումարտակն անցել է մարտական հանձնարարությունների կատարմանը. Դրմբոն, Չլդրան, Գյուլաթաղ, Վաղուհաս, Մանիքլու, Սեյսուլան, Ումուդլու, Ջանյաթաղ, Մաղավուզ, Հարությունյանագոմեր, Սարսանգ, Չափար, Տոնաշեն, Կուսապատ,

---

[1505] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 140:

[1506] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 155:

Կիչան, Կոճաղուտ, Շուշիի շրջան, Լաչին... Եվ ամենուր Ստալինա Ասրյանն իր մարտական ընկերների կողքին էր[1507]:

1992 թվականի հոկտեմբերի 17-ին Մարտակերտի շրջանի Կոճողուտ գյուղի համար մղվող մարտերում վիրավորվել է: Բարեբախտաբար, վերքը թեթև էր, և նա մնացել է շարքում: Իսկ նույն ամսի 30-ին վիրավորվել է անրակից: Ապաքինվել է Դրմբոնի զինվորական հոսպիտալում, այնուհետև նորից շարք է վերադարձել: Շուտով նրա մարտական ուղին ընդհատվել է. 1993 թվականի մարտի 20-ին Ս. Ասրյանը զոհվել է Հակոբ Կամարի գյուղի մոտակայքում ականի պայթյունից[1508]:

Արցախյան ազատամարտում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև քաղաքացիական բժշկությունից միանգամից ռազմական բժշկություն անցած շատ բժիշկներ, բուժքույրեր, սանիտարներ, որոնք ծանր ու դժնդակ պայմաններում փրկեցին բազմաթիվ մարդկանց, շարք վերադարձրին հազարավոր ազատամարտիկների: Կին բուժաշխատողներն ու առհասարակ բուժանձնակազմը Ղարաբաղյան պատերազմի պատմության մեջ ունեցան իրենց յուրահատուկ դերակատարումը: Նրանցից շատերը կանգնած էին Արցախի ռազմաբժշկության ստեղծման ակունքներում:

Ժամանակի թելադրանքով 1992 թվականի հունվարին նախ ստեղծվեց կամավոր բուժաշխատողների խումբ (հիմնադիր՝ Վ. Մարության)[1509], այնուհետև կազմավորվեցին ռազմադաշտային շարժական հոսպիտալներ, որոնք հետևում էին ինքնապաշտպանական ուժերին, իրագործում բուժօգնություն դաշտային պայմաններում[1510]: Սկզբում կենտրոնական և շարժական հոսպիտալները համալրեցին **Անժելա Հարությունյանը, Լիդա Աղաբեկյանը, Արևիկ Անդրյանը, Արմիդա Ավանեսյանը, Ալվարդ Բաղդասարյանը, Անժելա Գրիգորյանը, Անյու-**

[1507] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 155:
[1508] Տե՛ս նույն տեղում:
[1509] Տե՛ս նույն տեղում:
[1510] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 141:

տա Թադևոսյանը, Ջուլիետա Խաչատրյանը, Գայանե Հայրապետյանը, Աիդա Ղուլյանը, Սուսաննա Մարգարյանը, Գայանե Տոնոյանը, Նաիրա Իսրայելյանը[1511]: Նրանք պատերազմի տարիներին անհնարինը դարձնում էին հնարավոր՝ փրկելով հարյուրավոր զինվորների կյանքեր:

Պատերազմի թեժ օրերին կենտրոնական և շարժական հոսպիտալների բուժաշխատողների շարքերը շարունակվում էր կանանց (**Ռոզա Դադայան, Օֆելյա Սարգսյան, Ֆլորա Հակոբջանյան, Ժենյա Առուստամյան, Թամարա Դանիելյան, Էմմա Աբրահամյան, Ջուլիետա Հայրիյան, Գայանե Տոնոյան, Ռայա Գրիգորյան, Ռայա Դանիելյան, Վեհանուշ Այվազյան**)[1512] հաշվին մեծանալ: Մարտական գործողությունների ամենավճռական ու թեժ պահերին նրանց մասնակցությամբ դաշտային հոսպիտալներում կատարվում էին բարդ վիրահատություններ: Նրանց անմիջական մասնակցությամբ ստեղծվեցին երեք բաժանմունքներ՝ վերակենդանացման, վիրահատման, վիրակապման: Ընդ որում՝ այդ բաժանմունքները կենտրոնական զինվորական հոսպիտալի կայացման գործում առանցքային նշանակություն ունեցան[1513]:

Վերակենդանացման բաժանմունքի ավագ քույր **Անժելա Հարությունյանը** վիրավորվեց 1992 թվականի օգոստոսին՝ Չլդրան գյուղում տեղակայված ռազմադաշտային հոսպիտալի հրթիռակոծման ժամանակ: Անգամ այս հանգամանքն նրան հետ չպահեց իր ընտրած ուղուց. շարունակեց մնալ շարքերում, սպեղանի դրեց շատ ազատամարտիկների վերքերին և անցնելով պատերազմի հորձանուտով՝ հաղթանակի բերկրանքը վայելեց ռազմադաշտային հոսպիտալում[1514]:

[1511] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 141-142:
[1512] «Մարտիկ», 20 մայիսի, N 10, Ստեփանակերտ, 2009:
[1513] Տե՛ս նույն տեղում:
[1514] **Ավանեսյան Ի.,** նշվ. աշխ., էջ 142:

Վերհիշելով այդ օրերի իրադարձությունները՝ Ա. Հարությունյանը վկայում է. «Օրեր էին լինում, որ վիրահատարանում դրված վիրահատական սեղանները չէին հերիքում, առավել ևս՝ խոշոր ռազմագործողությունների ժամանակ…Տասնյակ հազարավոր մարդիկ՝ տղամարդ թե կին, գալիս էին արյուն տալու հայրենիքի ազատագրության համար արյուն թափած մարտիկներին»[1515]:

1992-1994 թվականներին ռազմաճակատի առաջին գծում՝ Շուշի-Լաչին ուղղությամբ, ռազմադաշտային շարժական հոսպիտալներում աշխատող բազմաթիվ կին-բուժաշխատողները իրականացրին հարյուրավոր վիրավոր ազատամարտիկների առաջին բուժօգնության և վիրահատման աշխատանքները, որի շնորհիվ ապաքինված ազատամարտիկները կարողացան նորից վերադառնալ մարտի դաշտ:

Հայ կանայք ակտիվորեն մասնակցել են նաև Արցախի հարավարևելյան շրջանի ռազմական գործողություններին: 1992 թվականի հունիսից ակտիվացան ադրբեջանական ուժերի կողմից ռազմագործողությունները Արցախի Հանրապետության սահմանագծի ամբողջ երկայնքով, բնակավայրերի հրթիռակոծություններին զուգահեռ ուժեր և միջոցներ կենտրոնացվեցին արցախա-ադրբեջանական շփման գծում: Թշնամու ճնշումը ուժեղացել էր Ասկերանի, Մարտակերտի, Շահումյանի շրջանների ուղղությամբ: Ասկերանի ճակատում հակառակորդի հարձակումը ուղղված էր Ասկերանի, Խանաբադի և Նախիջևանիկի ուղղություններով: Հարձակումների շնորհիվ թշամին ընդհուպ մոտեցել էր Ճարտար և Մաճկալաշեն գյուղերին, ներխուժել Կարմիր շուկա՝ Հադրութի շրջանում գրավելով Հողեր և Տող գյուղերի պահակակետները, ներխուժել էր Տողի գինեգործարան և 4 կմ խորացել գյուղի տարածքում[1516]:

1992 թվականին ստեղծված Պաշտպանության պետական կոմիտեն առաջին իսկ օրվանից եռանդուն քայլեր սկսեց ձեռնարկել բանա-

---

[1515] **Ավանեսյան Ի.,** նշվ. աշխ., էջ 142:
[1516] **Մինասյան Է.,** նշվ. աշխ., էջ 156:

կը կազմակերպական տեսանկյունից մի կուռ համակարգի վերածելու ուղղությամբ: Կոմիտեի նախագահի՝ 1992 թվականի օգոստոսի 14-ի N2 հրամանագրով ԼՂՀ-ն բաժանվեց վեց պաշտպանական շրջանների[1517]: Ապա հոկտեմբերի 10-ի N57 հրամանով ձևավորվեցին Արցախի զինված համապատասխան բաժիններն ու ծառայությունները: Օրվա պահանջներին համապատասխանեցվեցին պաշտպանական շրջանների մարտական կազմն ու կառուցվածքը, որն ընդգրկեց նաև հարավարևելյան շրջանը: Օգոստոսի 14-ի հրամանով՝ սեպտեմբերին ինքնապաշտպանական ուժերի ստորաբաժանումների հիմքի վրա կազմավորվեց նաև 4-րդ պաշտպանականը կամ Ասկերանի պաշտպանական շրջանը՝ Վ. Բալասանյանի հրամանատարությամբ, 1-ին պաշտպանականը կամ Հադրութի պաշտպանական շրջանը՝ Ա. Աղաբեկյանի հրամանատարությամբ, 2-րդ պաշտպանականը կամ Մարտունու պաշտպանական շրջանը՝ Մ. Մելքոնյանի հրամանատարությամբ: Նշյալ պաշտպանական ուժերը ՀՀ-ից տարբեր կամավորական ուժերի հետ կարողացան ոչ միայն կասեցնել հակառակորդի առաջխաղացումը, այլև սրընթաց գրոհով ազատագրեցին հայկական բնակավայրերը[1518]:

Թշնամու առաջխաղացումը կանգնեցրին հայկական ինքնապաշտպանական ուժերը: Ասկերանի ինքնապաշտպանական ուժերը համալրած **Շուշանիկ Աբրահամյանը**, հենց առաջին օրվանից միանալով համազգային շարժմանը, նպաստեց «Միացում» կազմակերպության ձևավորմանը:

Ազատամարտիկ Շ. Աբրահամյանը ծնվել է 1958 թվականի փետրվարին Արագածի շրջանի Գեղարոտ գյուղում: 1979 թվականին ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը: Մեկ տարի որպես մանկավարժ աշխատել է ծննդավայրի դպրոցում, ապա մինչև 1988 թվականը՝ Արագածի շրջանային թերթում որպես խմբագրի տեղակալ:

[1517] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 144:
[1518] Տե՛ս նույն տեղում:

1988 թվականի փետրվարից ակտիվորեն մասնակցել է ազգային-ազատագրական շարժմանը: Իգոր Մուրադյանի հետ ստեղծել է «Միացում» կազմակերպությունը, տեղափոխվել է Արցախ՝ կարգավորելու կազմակերպության գործունեությունը: 1988 թվականի հունիսից Սլավիկ Հայրապետյանի հետ բնակություն են հաստատել Ասկերանի շրջանի Դահրավ գյուղում, ստեղծել են ինքնապաշտպանական ջոկատ, Երևանից զենք ու զինամթերք տեղափոխել Արցախ[1519]:

Շ. Աբրահամյանը միաժամանակ կապավոր էր, մարտիկ և բուժքույր: 1992 թվականի մայիսին սկսվել է Շուշիի ազատագրումը: Ջոկատը տեղակայված էր Կարյագյաֆ-Ջանհասան ուղղության վրա՝ պաշտպանելու գրոհողների թիկունքը: Այստեղ էլ կատարվել է նվիրյալ մարտիկի երազանքներից մեկը. Ղազանչեցոց եկեղեցում վառել է 1988 թվականից այդ օրվա համար պահած մոմերը:

Շուշիի ազատագրումից հետո Շ. Աբրահամյանը տեղափոխվել է Ստեփանակերտ և մինչև սեպտեմբեր մնացել Արկադի Կարապետյանի ջոկատում: 1993 թվականի սեպտեմբերին նա գտնվել է Մարտակերտում, որտեղ էլ սկսվել է մեծ նահանջը[1520]: Նահանջել են մինչև Դրմբոն: Ջոկատները զրկվել էին ընդհանուր հսկողությունից: Շ. Աբրահամյանը վերադարձել է Ստեփանակերտ, որտեղ ավելի ապահով ու հանգիստ չէր, քան ճակատում. մի կերպ պատսպարվում էին նկուղներում: Ջուր չկար, ապրում էին կիսաքաղց... Բայց մնաց... Ուխտել էր՝ քանի դեռ չեն ազատագրել հայկական գերյալ հողը, այլևս չի վերադառնա ծննդավայր:

Հրադադարից հետո Շ. Աբրահամյանն աշխատանքի է անցել մամուլի տեղեկատվության կենտրոնում և մինչև օրս աշխատում է այնտեղ[1521]:

[1519] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 139:
[1520] Տե՛ս նույն տեղում:
[1521] Տե՛ս նույն տեղում:

Ասկերանի գյուղերի ինքնապաշտպանական ջոկատներում ընդգրկված հայուհիները ոչ միայն օգնում, այլև տեղանքին լավ ծանոթ լինելով՝ մասնակցում էին կամավորական ուժերի նախաձեռնություններին, օգնում էին նրանց, ուղեկցում օգնության եկած ուժերին:

1991 թվականի հոկտեմբերին թշնամին հայտնվեց Ասկերանի շրջանի Արանզամին գյուղում, որի ինքնապաշտանական ջոկատում էր նաև **Թամարա Նազարյանը**[1522]: Այդ օրերին իսկական մարտեր տեղի ունեցան, որոնց ընթացքում Թ. Նազարյանը վիրավորվեց քունքից, սակայն, չնայած դրան, մարտի դաշտից չհեռացավ ու ազատամարտիկների հետ մասնակցեց գյուղի պաշտպանությանը: Սահմանամերձ գյուղերի մոտ՝ հարմար բարձունքներում, պահակակետեր և ամրություններ էին ստեղծվել: Ջոկատները հերթափոխում էին միմյանց, իսկ Թ. Նազարյանը չէր իջնում դիրքերից. ջոկատների հետ մնում էր այնտեղ:

1992 թվականի մայիսի 10-ին հակառակորդի կողմից հարձակում սկսվեց: Աղդամի կողմից թշնամին ցանկանում էր ճեղքել հայկական կամավորական ջոկատների պաշտպանությունը և մոտենալ Ստեփանակերտին: «Գորշ գայլերի» ստորաբաժանումները 18 տանկերի աջակցությամբ մասնակցում էին հարձակողական գործողություններին: Նման պայմաններում հայկական կողմին հաջողվեց մի քանի տանկ վնասազերծել, սակայն ուժերի անհավասարության պատճառով ջոկատն ընկավ շրջապատման մեջ[1523]: Օղակը ճեղքելու և դուրս գալու համար ստիպված էին մարտով նահանջել: Թ. Նազարյանը, լավ ծանոթ լինելով տեղանքին, գիտեր յուրաքանչյուր արահետ, և նրա շնորհիվ ջոկատը փրկվեց, սակայն այս մարտերում քաջ հայուհին ցնցակաթվածի ենթարկվեց:

Մինչև 1992 թվականը Թ. Նազարյանը տարբեր ջոկատների կազմում մասնակցել է Գյուլափլու, Կուրոպատկինո, Մուղանլու և այլ բնա-

---

[1522] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 145:
[1523] Տե՛ս նույն տեղում:

կավայրերի ազատագրական մարտերին և իր հայրենանվեր գործունեության շնորհիվ, ինչպես նրա մարտական ընկերներն են վկայում, արժանացել է Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար Մ. Մելքոնյանի գովեստին[1524]:

1992 թվականի սեպտեմբերից Թ. Նազարյանը մարտական ուղին շարունակել է Ասկերանի պաշտպանական շրջանի կազմում և մասնակցել Մուղանլուի, Ամիրանլարի, Նախիջևանիկի, Ավդալի, Շելլի, Գյուլափլուի և մի շարք այլ բնակավայրերի ազատագրական մարտերին: Հերթական անգամ վիրավորվել է 1994 թվականի հունվարին 13-ին Աթափլու գյուղի համար մղվող մարտերում, իսկ հրադադարը դիմավորել է ռազմի դաշտում[1525]:

Ասկերանի շրջանի Դահիրավ գյուղում 1948 թվականի օգոստոսին ծնված **Քանաքարա Ղարայանը** 1955 թվականին ընդունվել և 1965 թվականին ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարան, որն ավարտելուց հետո մեկնել է Ասկերանի շրջանի Կարմիր գյուղ՝ աշխատելու: Այնուհետև տեղափոխվել է Ստեփանակերտի մանկական հիվանդանոց, ապա՝ մարզային հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունք: Ամուսնացած է, ունի երկու աղջիկ[1526]:

Ք. Ղարայանը գործիմաց բուժքույր էր. ժամանակին օգնություն էր ցույց տալիս՝ փրկելով վիրավորների կյանքը: Նա իսկական գանձ էր ջոկատի համար. և՛ բուժքրոջ պարտականություն էր կատարում, և՛ խոհարար էր, և՛ տղաների հագուստն էր լվանում, և՛ միևնույն ժամանակ պահակետերում հերթապահում էր:

1992 թվականին միանալով Խնձորեստան գյուղի ինքնապաշտանական ջոկատին՝ կատարել էր բուժքրոջ պարտականություն՝ միաժամանակ պահակետերում հերթապահելով: Չնայած նրա մարտական ու-

---

[1524] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 145:
[1525] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 146:
[1526] Տե՛ս նույն տեղում:

ղին կարճ տևեց, սակայն կամավորական ջոկատի կազմում մասնակցել է Ասկերանի շրջանի՝ Քարագլուխ, Խոջալու, Քյաթուկ և այլ գյուղերի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Զոհվել է 1992 թվականի հունիսի 13-ին Քարագլուխ գյուղի պաշտպանության մարտերում հրետակոծության հետևանքով[1527]:

Ադրբեջանցիներով բնակեցված բնակավայրերի հարևան հայկական գյուղերը հաճախակի էին ենթարկվում ավազակային հարձակումների, ինչն էլ ստիպում էր գյուղի բնակիչներին դիմել ինքնապաշտանության: Նման իրավիճակում էր նաև Ասկերանի շրջանի Սառնաղբյուր (Աղբուլաղ) գյուղը, որը գտնվում էր Ավդալ և Գյուլափլու գյուղերի հարևանությամբ[1528]: Գյուղը հաճախակի էր ենթարկվում հարձակումների, իսկ օրեցօր ուժեղացող ընդհարումներին դիմակայելու համար ջոկատին անհրաժեշտ էր լինում զենք, զինամթերք: Ջոկատի կազմում ընդգրկված էին նաև կանայք **(Ժենյա Գաբրիելյան, Ծովիկ Սիմոնյան, Ռոզիկ Գաբրիելյան)**[1529]: Նրանք ջոկատին սննդամթերք, զինամթերք մատակարարելուց, վիրավորներին օգնություն ցուցաբերելուց, հեռախոսակապը շրջկենտրոնի՝ Ասկերանի և Ստեփանակարտի հետ ապահովելուց բացի, մասնակցում էին հերթապահությանը՝ կատարելով մարտական առաջադրանքները: Ընդգրկվելով ջոկատի շարքերը՝ նրանք մինչև վերջին պահը, մինչև վերջին տանկերի մուտքը չլքեցին գյուղը:

Նշված ջոկատի շարքում էր նաև **Զինաիդա Գրիգորյանը**՝ իր ամուսնու և չորս որդիների հետ[1530]: Նա մինչև ամուսնանալը զբաղվում էր սպորտով՝ թեթև ատլետիկայով, իսկ արդեն գոյապայքարի տարիներին դարձել էր դիպուկ նշանառու:

[1527] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 129-130:
[1528] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 146:
[1529] Տե՛ս նույն տեղում:
[1530] Տե՛ս նույն տեղում, էջ 147:

1992 թվականին թեժ մարտեր էին ընթանում, որի ընթացքում Զ. Գրիգորյանը վիրավորվեց, սակայն ապաքինվելուց հետո նորից միացավ գյուղի ինքնապաշտպաններին: Հերթական հարձակումը գյուղի վրա տեղի ունեցավ Շուշիի ազատագրման հաջորդ օրը: Ադրբեջանցիները ամբողջ կատաղությամբ հարձակվեցին Սառնաղբյուր գյուղի վրա: Գյուղը հայտնվեց կրակի օղակի մեջ: Չնայած ուժերի անհավասարությանը՝ գյուղը դիմադրեց 3-5 ժամ, այնուհետև գյուղ մտած զինտեխնիկան սկսեց հրդեհել տներ, ինչը ստիպեց գյուղացիներին հեռանալ: Այդ օրերին հարևան Արանզամին գյուղից 11 կին գերի էր տարվել: Նրանցից մեկին ազատել էին՝ գերիների փոխանակման հարցում բանակցություններ վարելու նպատակով, սակայն այն տեղի չունեցավ: Գերությունից ազատված կինը վկայում էր, որ ադրբեջանցիներից լսել է, թե կանանցից մեկը դիմադրել է իրենց, և նա զինված էր ու նույնիսկ ադրբեջանցի է սպանել[1531]:

Ազատամարտիկ **Թամարա Նազարյան** աչքի ընկավ խիզախությամբ և քաջարի սխրագործություններով: Նա ծնվել է 1939 թվականի մարտին Ասկերանի շրջանի Արանզամի գյուղում: Միջնակարգ ավարտելուց հետո ընդունվել է Երևանի մանկավարժական ինստիտուտը[1532]: Մինչև 1982 թվականը որպես մանկավարժ աշխատել է Աբովյանի շրջանի Գեղաշեն գյուղի դպրոցում: 1982 թվականին տեղափոխվել է Արցախ՝ բնակություն հաստատելով Խրամորթ գյուղում: Նա ներգրավվել է գյուղում ստեղծված գաղտնի ինքնապաշտոնական ջոկատում՝ գիշերները պահակետերում հերթապահելու նպատակով: Երբ թշնամին մտել է իր հայրենի գյուղ, Թ. Նազարյանն առաջինն է զենքով դուրս եկել նրա դեմ՝ օրինակել ծառայելով շատերին: Վիրավորվել է, բայց չի հեռացել մարտադաշտից:

Ինքնապաշտպանական ջոկատները միավորվեցին՝ Վիտալի Բալասանյանի ղեկավարությամբ: Ազերի թուրքերը գրոհում էին Ստեփա-

---

[1531] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 147:

[1532] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 146-147:

նակերտի ուղղությամբ, սակայն Թ. Նազարյանը, տեղանքին քաջածանոթ լինելով, շրջափակումից փրկեց հայ ազատամարտիկներին և շարունակեց մասնակցել մարտական գործողություններին: 1992 թվականին նա զինվորագրվեց Արցախի բանակին և մարտական փառահեղ ուղի անցավ՝ հաղթանակով ազատելով Շուշին: Նա թրծված զինվոր էր, տիրապետում էր զենքի բոլոր տեսակներին, կարողանում էր հաղթահարել բոլոր դժվարությունները[1533]:

Հայրենիքին նվիրված զինվոր էր **Լիդա Աղաբեկյանը**: Նա առաջիններից մեկն էր, որ զինվորագրվեց Արցախյան գոյամարտին՝ գիտակցելով, որ հենց իր սերնդին էր վիճակված գրելու հայ ժողովրդի ազատագրական պայքարի բախտորոշ էջը:

Լ. Աղաբեկյանը ծնվել է 1969 թվականի դեկտեմբերին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ստեփանակերտ քաղաքում: 1988 թվականին ավարտել է Հայաստանի Ղափան (Կապան) քաղաքի բժշկական ուսումնարանի բուժքույրական բաժինը[1534]: Պատերազմը նրան «գտավ» Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում, որտեղ 1989-1991 թվականներին նա աշխատել է սկզբում որպես սանիտար, այնուհետև՝ վիրահատական բաժանմունքի բուժքույր:

Ղարաբաղյան շարժման սկզբից Լ. Աղաբեկյանը մասնակցել է ԼՂՀ ռազմական բուժծառայության հիմնադիր Վալերի Մարությանի ստեղծած բժշկական բրիգադների աշխատանքներին: 1991-1994 թվականներին ռազմաճակատի առաջին գծում՝ Տող-Սարինշեն-Շուշի-Լաչին ուղղությամբ և Մարտակերտի, Քելբաջարի, Ջաբրայիլի, Ֆիզուլու, Աղդամի շրջաններում մասնակցել է մարտական գործողություններին, վիրավորների տարհանման աշխատանքներին, Շուշի քաղաքի և Հադրութի շրջանի գյուղերի ազատագրմանը[1535]: Զինադադարից հետո՝

[1533] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 145:
[1534] Տե՛ս նույն տեղում:
[1535] Տե՛ս նույն տեղում:

1994-2001 թվականներին մասնակցել է ԼՂՀ պաշպտանության բանակի բուժծառայության համակարգում զինծառայողների բուժսպասարկման աշխատանքներին: 1997 թվականից բժշկական ծառայության ենթասպա է:

2001 թվականից Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոցի վիրահատական բաժանմունքի ավագ բուժքույր Լ. Աղաբեկյանը պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին», «Անբասիր ծառայության համար 1-ին և 2-րդ աստիճանի», «Մարտական ծառայության» և «Շուշիի ազատագրման համար» մեդալներով, ինչպես նաև կառավարական այլ պարգևներով[1536]: Նա Ղարաբաղում անցկացված «Լավագույն բուժքույր» մրցույթի հաղթող է, իսկ Երևանում գրավել է երկրորդ տեղը:

Ազատամարտիկ-բուժքույր **Լյուդմիլա Մելքումյանը** Արցախի գոյապայքարին միացել էր 1991 թվականից: Նա ծնվել է 1950 թվականի նոյեմբերին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ստեփանակերտի շրջանի Վերին Ղլիճբաղ գյուղում: 1956 թվականին տեղափոխվել է Ասկերան: 1970 թվականին ավարտել է Ասկերանի բուժական կենտրոնը որպես բուժքույր: 1973 թվականին աշխատել է Ասկերանի հոգեներվային դիսպանսերում: 1991 թվականից մասնակցել է Արցախյան շարժման մարտական գործողություններին՝ աշխատելով շտապօգնության կայանում որպես ավագ բուժքույր[1537]: 1992 թվականի սեպտեմբերից Լ. Մելքումյանը զինվորագրվել է ԼՂՀ պաշտպանության բանակին: Ծառայել է 34153 զորամասի 4-րդ գումարտակի 3-րդ պաշտպանականի բուժկետում որպես սանիրահանգիչ:

Լ. Մելքումյանը մասնակցել է Ասկերանի շրջանի մարտական գործողություններին՝ 1993 թվականին՝ Ուղտի մեջք կրակակետի ոչնչացմանը, հունիս-հուլիս ամիսներին՝ Աղդամի (Շելլի, Գոռուտ, Ահմադավար, Աղդամ, Աթեմազլի) հատվածում, 1994 թվականին՝ Աղդամի հա-

---

[1536] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 145:
[1537] Տե՛ս նույն տեղում:

ռակից գյուղերի (Ծիրվանլու, Կարակաշլի), 1994 թվականի ապրիլին՝ Սումայի, Գյուլուջայի կրակակետերի ոչնչացմանը[1538]: Պաշտպանության բանակում ծառայել է մինչև 1995 թվականի ապրիլը:

Լ. Մելքումյանը 1995 թվականից առ այսօր աշխատել է Ասկերանի շրջանային բուժմիավորումում որպես շտապօգնության բաժանմունքի բուժքույր:

Պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» (1993), «Արիության համար» (2002) մեդալներով, «Արցախյան պատերազմի վետերան» (2003) պատվոգրով, «Հայաստանի երկրապահ» (2006) հուշամեդալով, 1994 թվականի մարտի 28-ին Կարագլը գյուղի մատույցներում տեղի ունեցած հաղթական ճակատամարտում ցուցաբերած արիության և խիզախության համար՝ պատվոգրով[1539]:

1944 թվականի նոյեմբերին ԼՂԻՄ Ասկերանի շրջանի Խանաբադ գյուղում է ծնվել **Սվետլանա Հովսեփյանը**: 1964 թվականին ավարտել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի բուժամանկաբարձական բաժինը: Նույն թվականին էլ աշխատանքի է անցել Ստեփանակերտի մանկական հիվանդանոցում որպես վիրահատարանի քույր: 1968 թվականին տեղափոխվել է Երևան և մինչև 1983 թվականը աշխատել Երևանի երկաթգծի հիվանդանոցում որպես վիրահատարանի քույր: 1983 թվականին Ս. Հովսեփյանը վերադարձել է հարազատ գյուղ՝ Խանաբադ, և մինչև 1988 թվականը աշխատել որպես բուժկետի վարիչ[1540]:

Արցախյան ազատագրական շարժման առաջին իսկ օրերից Ս. Հովսեփյանը եղել է դրա ակտիվ մասնակիցը: 1992 թվականին զինվորագրվել է և ծառայել որպես Չորրորդ պաշտպանական շրջանի դեղատան պետ (34153 զորամաս), միաժամանակ՝ դաշտային հոսպիտա-

---

[1538] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 145:
[1539] Տե՛ս նույն տեղում:
[1540] Տե՛ս նույն տեղում, էջ 190:

լի վիրահատման քույր: Մասնակցել է Ասկերանի շրջանի պաշտպանական բոլոր մարտերին՝ Քարագլուխ, Ալի-Աղալու, Ջինի, Խրամորթ (1992), Ուղտի մեջք, Շելլի, Խդռլու (1993), Աղդամ-Գյոռուտու ուղղությամբ կռիվներին (1993, հունիս-հուլիս), Աղդամի հարակից գյուղերի կրակակետերի ոչնչացմանը, Շիրվանլու (1994, մարտ), Կարակաշլու հատվածում՝ Սումա Գյուլուջա գյուղի կրակակետերի ոչնչացմանը (1994, ապրիլի), գնդի մարտիկների հետ եղել է Քարվաճառում (1994)[1541]:

1993 թվականին ստացել է ենթասպայի կոչում, պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» (1993), «Մարտական ծառայության համար» (2004) մեդալներով, «Հայաստանի երկրապահ» (2006) հուշամեդալով, ԼՂՀ պաշտպանության նախարարի կողմից՝ հուշամեդալով[1542]: 1999 թվականից Ս. Հովսեփյանը զինվորական թոշակառու է:

Արցախյան ազատամարտի շարքերում էր ազատամարտիկ **Էլմիրա Աղայանը:** Նա ծնվել է 1945 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ստեփանակերտ քաղաքում: 1982 թվականին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի տնտեսագիտական բաժինը, 1981 թվականին՝ Մոսկվայի սլավոնական ակադեմիայի իրավաբանական բաժինը: 1963-1988 թվականներին Է. Աղայանն աշխատել է Ստեփանակերտի մթերման գրասենյակում որպես ավագ ապրանքագետ, այնուհետև՝ 1976 թվականին՝ տնօրեն[1543]:

1988 թվականից ակտիվորեն մասնակցել է Արցախյան ազատագրական շարժմանը: 1988-1992 թվականներին մարտնչել է Սամվել և Կարեն Բաբայանների կազմավորած կամավորական ջոկատներում: 1991-1992 թվականներին նշանակվել է 71-րդ առանձին մոտոհրա-

---

[1541] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 145:
[1542] Տե՛ս նույն տեղում:
[1543] Տե՛ս նույն տեղում:

ձգային գումարտակի, 1992 -2001 թվականներին՝ թիվ 46492 (ԿՊՇ) զորամասի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալ: Այդ տարիներին մասնակցել է համարյա բոլոր ռազմական գործողություններին, Հադրութ, Մարտունի, Ջանհասան, Մալիբեյլու, Խոջալու, Շուշի, Լաչին, Նախիջևանիկ, Աղդամ, Մարտակերտ, Քելբաջար, Հորադիզ, Ֆիզուլի, Ջաբրայիլ[1544]:

Է. Աղայանի ծառայությունները բարձր են գնահատվել Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի կառավարությունների, ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարության կողմից: Նա պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, «Աշխատանքային արիության համար», «Գարեգին Նժդեհ», ՀՀ «Մարտական ծառայության համար» մեդալներով, «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով[1545]: 1993 թվականին Վազգեն Սարգսյանի, իսկ 1995 թվականին Սամվել Բաբայանի կողմից արժանացել է անվանական զենքի: 1996 թվականին նրան շնորհվել է ԼՂՀ պաշտպանության բանակի գնդապետի զինվորական կոչում:

Է. Աղայանը 2002 թվականից պահեստազորի սպա է:

1992 թվականին շարունակվում էր 4-րդ պաշտպանականի համալրումը կանանցով, որոնց թվում էին **Կարինե Գրիգորյանը, Ռիտա Հարությունյանը, Հասմիկ Հայրապետյանը, Զոյա Միրզոյանը, Գայանե Գաբրիելյանը, Ալլա Արզումանյանը, Սրբուհի Աղաջանյանը** և շատ ուրիշներ[1546]:

Ասկերանի շրջանի ինքնապաշտպանությանը միացել էին նաև Հայաստանի տարբեր կամավորական ուժերի շարքեր մտած կանայք, որոնց մեջ էր **Արևհատ Մարտիրոսյանը**: Նա ծնվել է 1937 թվականի փետրվարին Սևանի շրջանի Լճաշեն գյուղում: 1944 թվականին ընդունվել է տեղի միջնակարգ դպրոց: 1957-1978 թվականներին աշխա-

---

[1544] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 145:
[1545] Տե՛ս նույն տեղում:
[1546] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 148:

տել է որպես վաճառող, իսկ 1980 թվականից մինչև 1994 թվականը՝ թիվ 5 հացի գործարանում որպես հրուշակագործ: Ամուսնացած է, ունի 3 տղա[1547]:

Արևհատ Մարտիրոսյանը (Մորքուր), սկզբում մտնելով Հայոց ազգային բանակ (ՀԱԲ), ծառայությունը շարունակել է «Մխիթար սպարապետ», ապա՝ Արաբկիրի շրջանի կամավորական ջոկատների շարքերում: Ամենից դժվարը Մորքուրի գործն էր: Նրա ուսերին էր ջոկատին սննդով ու զինամթերքով ապահովելու, վիրավորներին խնամելու, թիկունք հասցնելու հոգսերը: Այդ ամենի հետ նա նաև դիրքերում հերթապահում էր: Համալրելով հայկական ուժերը՝ 1988-1994 թվականներին մասնակցել է ՀՀ Գորիսի, ապա ԼՂՀ Ասկերանի, Լաչինի, այնուհետև՝ ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին[1548]:

Հրադադարից հետո էլ Ա. Մարտիրոսյանը չի լքել հարազատ «Երկրապահների միությունը»: Նա աշխատում է «Երկրապահ կամավորականների միության» Արաբկիրի բաժանմունքում՝ որպես զոհված և վիրավորված ազատամարտիկների սոցիալական ապահովման հարցերով շտապի տեսուչ: Մորքուրին բոլորն են ճանաչում, սիրում և հարգում են բոլոր ազատամարտիկները: Խաղաղ ժամանակն էլ նա բոլոր ազատամարտիկների հոգատար ու հարազատ «Մորքուրն» էր:

4-րդ պաշտպանական շրջանի շարքերն են համալրել նաև Ասկերանի կամավորական ուժերի «Մայիս» (**Գալյա Գյուրջյան, Լորետա Գյուրջյան),** Բալուջա **(Վալյա Վանեսյան, Զոյա Դանիելյան**), Փրջամալ (**Նոյեմզար Սարաջյան**), Խրամորթ **(Լենա Շամիրյան)** ջոկատների կանայք, որոնք պատերազմի ողջ ընթացքում մասնակցել են Ասկերանի շրջանի ռազմագործողություններին[1549]:

Արցախյան ազատամարտը նորովի բացահայտեց հայ կնոջ էությունը, որն աննախադեպ հերոսականության վառ օրինակներ ցույց

[1547] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 134:
[1548] Տե՛ս նույն տեղում, էջ 135:
[1549] Տե՛ս նույն տեղում, էջ 134:

տվեց: Ինքնադրսևորման, ինքնաբացահայտման ու անձնազոհության բազմաթիվ վառ օրինակներ կան, որոնք պատմվում են մարտնչող կանանց շրջանում՝ բացահայտելով նրանց, հիրավի, բարոյական ու հայեցի նկարագիրն ու կերպը՝ հայ կնոջ տեսակը: Նրանք հերոսաբար կռվեցին նաև Մարտունու և Հադրութի ինքնապաշտպանության ժամանակ: Պատերազմի հենց առաջին օրերին՝ 1952 թվականի նոյեմբերին, ԼՂԻՄ Սոս գյուղում ծնված **Իրինա Գրիգորյանը** հայտնվեց առաջին գծում[1550]: Նա 1973 թվականին գերազանցությամբ ավարտել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը, այնուհետև՝ Երևանի պետական բժշկական ինստիտուտը և աշխատանքի նշանակվել Սոս գյուղի հիվանդանոցում որպես գլխավոր բժիշկ:

1988 թվականից՝ Արցախյան ազատագրական պայքարի սկզբից եղել է առաջին գծում: Արդեն 1992 թվականի ապրիլից Իրինա Գրիգորյանը Արմեն Մեջլումյանի գումարտակի կազմում մասնակցել է մարտական բոլոր գործողություններին:

Հունիսի 28-ին թշնամին մեծաքանակ տեխնիկայով (19 տանկ և զրահամեքենա) հարձակվել է Ամարասի ձորակի վրա՝ Կարմիր շուկա, Պուլուր խուտ, Դավալու խուտ, Ուրյան դաղ: Մի շարք գյուղեր՝ Ոսո, Մաճկալաշեն, Ճարտար, Կարմիր Շուկա, տարահանվել են: Սոս գյուղի հիվանդանոցը վերածվել է հոսպիտալի: Առավոտյան ուժեղ հրետակոծությունից տուժել են նաև Սոս և Մաճկալաշեն գյուղերի բնակիչները: Իրինան մեն-մենակ օգնություն է ցուցաբերել բնակչությանը և վիրավորներին: Կատաղի մարտերը շարունակվել են օգոստոսի 6-ին և 9-ին: Իրինան մնացել է դիրքերում և կատարել իր գործը[1551]:

1993 թվականի գարնանը մասնակցել է Մարտակերտի շրջանի մարտերին, մարտի 26-ին Զարեքթարի ուղղությամբ տարվող մարտական գործողություններին, հոկտեմբերին 23-ին նա Մովսես Հակոբյանի հրամանատարությամբ գործող զորախմբի հետ որպես փորձառու

[1550] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 166:
[1551] Տե՛ս նույն տեղում, էջ 165-166:

բժշկուհի մասնակցել է Հորադիզի ազատագրման համար մղվող մարտերին, որի ժամանակ փրկել է անգամ թուրք գերու կյանքը: Հոկտեմբերի 28-ին մասնակցել է Զանգելանի շրջանի գրավմանը, որի ժամանակ ականի վրա պայթել է հրամանատարական մեքենան: Բժշկուհին, անտեսելով սեփական անվտանգությունը, ականապատված դաշտով վազել է մեքենայի մոտ, անդամահատել վիրավոր վարորդի ոտքերը, իսկ հրամանատարներին առաջին օգնություն ցույց տվել: Զանգելանից հետո զորախումբը ազատագրել է Մինջևանը[1552]:

1993 թվականի ձմռանը մասնակցել է Մարտունու շրջանի Գևորգյանի տեղամասի մարտերին: 1994 թվականի հունվարին նրան նշանակել են Երրորդ պաշտպանական շրջանի թերապևտ: Նույն թվականի մայիսի 9-14-ը մասնակցել է Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղի համար մղվող մարտերին՝ կռվել ով մինչև հրադադար[1553]:

Ի. Գրիգորյանը ազատամարտին մասնակցած միակ բժշկուհին էր, որն առաջին գծում ստանձնել էր և՛ բժշկի, և բուժքրոջ, և զինվորի դժվարին պարտականությունը: Այսօր էլ նա չի լքել հարազատ գունդը, որի բուժծառայության պետն է:

Անվանի ազատամարտիկ-բուժքույր **Նաիրա Իսրայելյանը** աչքի ընկավ մարտական առաջադրանքների անթերի կատարմամբ: Նա ծնվել է 1956 թվականի հոկտեմբերին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ստեփանակերտ քաղաքում: 1973 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը և մինչև 1974 թվականը աշխատել Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանում որպես հավաքող-փականագործ: 1976 թվականին ավարտել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը: Նույն թվականից աշխատել է Ստեփանակերտի՝ Ասրյանի անվան հանրապետական հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում որպես բուժքույր: 1985 թվականին տեղափոխվել է վերակեն-

[1552] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 165-166:
[1553] Տե՛ս նույն տեղում:

դանացման բաժանմունք[1554]: Ղարաբաղյան շարժման սկզբից եղել է դրա ակտիվ մասնակիցը: 1991 թվականի հոկտեմբերի սկսել է մարտական ուղին բժիշկ Վալերի Մարությանի գլխավորությամբ գործող բժշկական խմբի կազմում Հադրութի շրջանի Տող, Սարիշեն, Ծամձոր գյուղերից: 1992 թվականի հունվարին մասնակցել է Մալիբեյլիի, փետրվարին՝ Խոջալուի, մայիսին՝ Շուշիի, Լաչինի միջանցքի մարտական գործողություններին: Հունիսի 13-ին՝ Աղդամի կողմից հրթիռակոծման ժամանակ, Ասկերանի բերդի մոտակայքում վիրավորվել է աջ թևից, ինչպես նաև ստացել թեթև վնասվածք դեմքին[1555]:

1992 թվականի օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Նաիրա Իսրայելյանը տեղափոխվել է Ցեխձորի դաշտային հոսպիտալ:

1993 թվականին մասնակցել է Ֆիզուլու, Խաշարատի, Կուբաթլուի և հարակից գյուղերի ազատագրական մարտերին:

1994 թվականից մինչև հրադադարը, Մարտակերտի և հարակից շրջանների ազատագրման համար մղված մարտական գործողությունների ժամանակ Ն. Իսրայելյանը ծառայել է Աղդամի դաշտային հոսպիտալում[1556]:

Ենթասպա Ն. Իսրայելյանն այժմ ծառայում է Կենտրոնական զինվորական հոսպիտալում որպես ավագ բուժքույր: Պարգևատրվել է «Մարտական ծառայության համար», «Շուշիի ազատագրման համար», «Անբասիր ծառայության համար 1-ին աստիճանի», «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներով[1557]:

Ազատամարտին իր մարտական ակտիվ մասնակցությամբ աչքի ընկավ **Ռիտա Բադալյանը**: Նա ծնվել է 1957 թվականի հունիսին ԼՂԻՄ Շուշի քաղաքում: 1975 թվականին ավարտել է Ստեփանակերտի պրոֆտեխնիկական ուսումնարանը 2-րդ կարգի գորգագործի որա-

---

[1554] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 165-166:
[1555] Տե՛ս նույն տեղում, էջ 166:
[1556] Տե՛ս նույն տեղում:
[1557] Տե՛ս նույն տեղում:

կավորումով[1558]: 1982 թվականին ավարտել է Ստեփանակերտի Ս. Շահումյանի անվան մանկավարժական ինստիտուտը:

1980 թվականին աշխատել է Ստեփանակերտի ԼԿԵՄ քաղկոմում որպես հաշվառքի բաժնի պետ: 1990 թվականին տեղափոխվել է աշխատանքի «Ղարմետաքս» կոմբինատ՝ աշխատելով որպես իրավախորհրդատու: Արցախյան ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից ակտիվորեն մասնակցել է շարժմանը: Եղել է «Ղարմետաքս» կոմբինատում գործող ընդհատակյա կազմակերպության անդամ: Հետագայում անդամագրվել է Կոմանդոսի (Արկադի Տեր-Թադևոսյան) հրամանատարությամբ գործող կանանց ջոկատին, մասնակցել է պատերազմական գործողությունների[1559]: Նա 1993 թվականի ապրիլին ԼՂՀ և ՀՀ կառավարությունների որոշմամբ գործուղվել է ՀՀ փորձքրեագիտական կենտրոն: 1994 թվականին ձեռք է բերել ձգաբանփորձագետի որակավորում և նշանակվել աշխատանքի որպես ՀՀ փորձաքրեագիտական կենտրոնի մասնաճյուղի պետի պաշտոնակատար ԼՂՀ-ում: 1995 թվականին աշխատանքի է նշանակվել ԼՂՀ ՆԳՆ-ում որպես փորձաքրեագիտական բաժանմունքի պետ: 2005 թվականին զորացրվել է պահեստազոր: 2006 թվականին կրկին վերադարձել է ծառայության:

Մայոր Ռ. Բադալյանն այսօր ծառայում է ԼՂՀ պաշտպանության նախարարությունում[1560]:

Արցախյան պատերազմում մարտական սխրագործությամբ հայտնի դարձավ ազատամարտիկ **Էլլադա Սայիյանը**: Նա ծնվել է 1958 թվականի նոյեմբերին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Ստեփանակերտ քաղաքում: 1978 թվականին ավարտել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանի բուժական բաժինը: 1978-1981 թվականներին աշխատել է Ստեփանակերտի բուժօգնության կայա-

---

[1558] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 166:
[1559] Տե՛ս նույն տեղում:
[1560] Տե՛ս նույն տեղում:

նում, 1981-1983 թվականներին՝ հանրապետական մանկական հիվանդանոցում, 1984-1987 թվականներին՝ Ստեփանակերտի քաղաքային թիվ 21 պրոֆտեխուսումնարանում որպես բուժքույր, 1987-2001 թվականներին՝ Ստեփանակերտի հանրապետական հոգեթմրաբանական դիսպանսերում որպես բուժակ-թմրաբան[1561]:

Արցախյան ազատագրական պայքարի առաջին օրերից ծառայության է անցել առաջին մոտոհրաձգային գումարտակում որպես բուժակ-ենթասպա: Է. Սայիյանը մասնակցել է Լաչինի շրջանի Խոզնավարի ուղղությամբ տարվող մարտական գործողություններին[1562]:

1993 թվականից ծառայում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի փրկարար ծառայությունում:

Է. Սայիյանը մինչև պատերազմի ավարտը մասնակցել է Աղդամի, Հորադիզի, Ֆիզուլու, Գյուլուջայի, Մեծ շենի, Կուբաթլուի և Օմարի ազատագրության և պաշտպանության համար մղված ռազմական գործողություններին: Պարգևատրվել է «Անբասիր ծառայության համար 1-ին աստիճանի» մեդալով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բարեխիղճ ծառայության համար՝ պատվոգրով:

2001 թվականից առ այսօր Է. Սայիյանը ծառայում է ԼՂՀ պաշտպանության բանակի հավաքակետում որպես բուժկետի պետ[1563]:

Մեծ թիվ էին կազմում թիկունքում գործող կանայք, որոնց մի մասը, անհրաժեշտության դեպքում, գնում էր մարտի [1564] : Այդ հերոսուհիներից էր Մարտունու շրջանի Մաճկալաշենի կամավորական ջոկատի անդամ **Սեդա Սողոմանյանը**: Ջոկատի շարքերում էր նաև նրա ամուսինը՝ Վ. Ծատուրյանը:

1991 թվականին Ս. Սողոմոնյանի մուտքը զինջոկատ ոգեշնչեց շատ երիտասարդ տղաների ու աղջիկների՝ աներեր ներգրավվելու

[1561] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 207:
[1562] Տե՛ս նույն տեղում:
[1563] Տե՛ս նույն տեղում:
[1564] **Գրիգորյան Ա.,** Հաղորտին գոյամարտի կռվում, Ստեփանակերտ, 2012:

ազատագրական պայքարին: 1992 թվականի սեպտեմբերի 2-ից նա նորից որպես խոհարար Մաճկալաշենի գումարտակում էր, որի շարքերում մասնակցեց Ամարասի ձորակի, Մաճկալաշենից մինչև Ալխանլի, Ներքին Դիվանլար, Դիլիղարդա, Ներքին Դիլիղարդա, Ներքին Վելսալու, իսկ 1993 թվականի հուլիսից՝ Մարտակերտի բնակավայրերի ազատագրմանը: Ամուսնուն կորցնելուց հետո նա շարունակեց ծառայությունը մինչև 1995 թվականի դեկտեմբերի վերջ[1565]:

Ս. Սողոմոնյանը օրագրային գրառումներում նշել է. «...Թուրքերը հարձակվել էին Կարմիր շուկայի վրա և հասել մինչև գինեգործարանի տարածք, ուզեցին շրջափակել գյուղը, բայց չկարողացան: Մեր տղաները մեծ քաջություն ցուցաբերելով՝ հետ շպրտեցին թուրքերին: Այդ օրը գրադից զոհվեցին 18-ամյա Նարինեն, Աստեգը, Բագրատը, Սոսի Կարենը, Վարուժանը, Անգինը, Հայկանուշը»[1566]:

Ս. Սողոմոնյանի վկայություններից պարզվում է, որ չնայած թիկունքի կանանց ունեցած զոհերին, այնուամենայնիվ, նրան շարունակում էին մեծ պատասխանատվությամբ կատարել իրենց աշխատանքը, հաց թխել, սնունդ մատակարարել զինված ուժերին, ինչպես նաև նրանց շարքերում տեղից տեղ գնալ: Թիկունքի աշխատանքների մասնակիցների թվում էր նաև Մաճկալաշենում ծնված Նարինե Ավանեսյանը: Նա 1991 թվականի դեկտեմբերից կատարում էր ջոկատի, ապա վաշտի հացաթխման աշխատանքները, ինչպես նաև սնունդ հասցնում մարտիկներին: Դժվարին օրերին, երբ վաշտի հրամանատարը հայտնում էր կանանց և երեխաներին գյուղից դուրս հանելու մասին, Ն. Ավանեսյանը մերժում էր՝ իրեն համարելով զինվոր[1567]:

1992 թվականի հունիսի 28-ին հայկական ուժերը ստիպված էին հետ քաշվել: Բնակիչներին գոյուղը թողնելու հրաման էր տրվել: Ահա

[1565] **Առստամյան Գ.,** Իմ սերը Ձեզ հետ է, ողջեր ու նահատակներ, Երևան, 1998, էջ 122:
[1566] Տե՛ս նույն տեղում, էջ 124:
[1567] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 157:

հենց այդ ժամանակ էլ ընդհատվեց 18-ամյա Ն. Ավանեսյանի կյանքը. Նա զոհվեց «Գրադի» պայթյունից[1568]:

Անվեհեր քաջամարտիկ էր բուժքույր **Կարինե Աղեկյանը**: Նա ծնվել է 1958 թվականի փետրվարին Երևանում: 1980 թվականին ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը: Թեթև ատլետիկայի գծով առաջին կարգային մարզիկ է: 1988 թվականին Արցախյան ազատագրական պայքարը դիմավորել է ցնծությամբ: Մշեցի պապերի «էրգրի» կորստի ցավը սերնդեսերունդ փոխանցվել էր աղջկան: Ակտիվորեն մասնակցել է միտինգներին: Այնուհետև որպես բուժքույր աշխատել է Երևանի թիվ 1 հիվանդանոցում, փորձ է ձեռք բերել, ու երբ կազմավորվել են առաջին ջոկատները, անմիջապես զինվորագրվել ու մեկնել է Իջևանի շրջան, որտեղ բախումներ էին սկսվել: Առաջին մարտական առաջադրանքը կատարելիս վիրավորվել է, սակայն մնացել է ընկերների կողքին: Գորիս-Կապան մայրուղու ապահովության և պաշտպանության համար ընտանիքով մեկնել և մշտական բնակություն է հաստատել ազատագրված Կուրտկալախ գյուղում[1569]:

1992 թվականի դեկտեմբերի 10-ին Սուրիկ Խաչատրյանի հրամանատարությամբ մասնակցել է Սեյթազի գրոհին: Թեժ մարտերի ընթացքում գլխից վիրավորվել է: Նույն թվականի մայիսի 2-ի լուսաբացին՝ ուժեղ հրետակոծությունից հետո, ազերիները հարձակվել են Կուրտկալախ գյուղի ուղղությամբ: Ռմբակոծության է ենթարկվել Կարինեի տունը: Հրամանատարի պնդմամբ նա վերցրել է աղջիկներին և վերադարձել Երևան: Կարճ ժամանակ անց, մեծ քանակությամբ զենք, զինամթերք ու սնունդ հայթայթելով, կրկին մեկնել է Արցախ[1570]:

1993 թվականի մարտին 20-ին մասնակցել է Շուռնուխի «Գազի պոստը» հետ գրավելու մարտական գործողությանը: Մարտի ընթաց-

---

[1568] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 157:
[1569] Տե՛ս նույն տեղում:
[1570] Տե՛ս նույն տեղում:

քում մեծացել է շրջապատման վտանգը, իսկ նահանջի ճանապարհ չի եղել: Վիրավորների օգնություն ցույց տալուց հետո անվեհեր բուժքույրը գնացել է օգնություն կանչելու: Առաջադրանքը կատարելիս վիրավորվել է:

Է. Աղեկյանը բոլոր մարտերում եղել է ամենադժվարին տեղերում, մինչև վերջ կատարել է զինվորական պարտքը: 1993 թվականի ամռանը նա իր երեք աղջիկների ու մոր հետ բնակություն է հաստատել նոր ազատագրված Քաշաթաղի (Լաչին) շրջանի Աղավնո (Զաբուխ) գյուղում, մասնակցել է Կուբաթլուի և Զանգելանի շրջանների համար մղվող ազատագրական մարտերին[1571]: 1994 թվականին մասնակցել է Հորադիզի մարտերին, նորից վիրավորվել է, հրաժարվել դաշտային հոսպիտալում բուժվելուց: 1996 թվականի օգոստոսի 31-ին զորացրվել է և վերադարձել է Աղավնո գյուղը:

Մոնթե Մելքոնյանի նախաձեռնությամբ Մարտունու շրջանում ստեղծվեց բուժկետ՝ սահմանապահ մարտնչող ջոկատներին օգնություն ցույց տալու նպատակով: Բուժկետի աշխատանքներին ներգրավվեց նաև ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ճարտար գյուղում 1948 թվականի հուլիսին ծնված ազատամարտիկ-բուժքույր **Էլեանորա Աղաբեկյանը**: 1966 թվականին նա ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը, ընդունվել է Կապանի բժշկական ուսումնարան: 1968 թվականին աշխատանքի է անցել Մարտունու շրջանի Ճարտար գյուղի հիվանդանոցում որպես տեղամասային բուժքույր: Հետագայում ամուսնացել է և տեղափոխվել Մարտունի քաղաք, մինչև 1990 թվականը աշխատել է քաղաքային հիվանդանոցում[1572]: Արցախյան ազատագրական շարժման տարիներին ամուսնու և երկու որդիների հետ մասնակցել է պատերազմին:

Է. Աղաբեկյանը, Արցախի ազատագրության ու անկախության հարցը համարելով իրենը, ակտիվորեն մասնակցել է բոլոր միտինգնե-

---

[1571] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությունը, էջ 157:
[1572] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 142:

ին, ցույցերին, հավաքել է ստորագրություններ, օգնել երկրաշարժից տուժածներին, արյուն է տվել՝ իր եղբայրներին ու քույրերին փրկելու նպատակով, հանգանակություն է կատարել փախստականների համար: Այնուհետև աշխատել է Մոնթե Մելքոնյանի և գնդապետ Հայրոյանի կարգադրությամբ Մարտունու շրջանում ստեղծված բուժկետում, օգնություն ցուցաբերել սահմանապահ մարտնչող ջոկատներին: Բուժկետի աշխատողները հերթապահում էին պաշտպանական դիրքերում՝ «109», Ղարաչուխ, Ավդալ, Գյուլափլու, Մուղանլու:

«Գրադ» կայանքների սաստիկ կրակի ու գնդակոծության տակ, արհամարհելով վտանգը, անվեհեր բուժքույրը փրկել է տասնյակ վիրավորների:

Երբ հոկտեմբերի 2-ի լույս առավոտյան սկսվել են Ամիրանլար, Կուրոպատկինո և Մուղանլու գյուղերի ազատագրական մարտերը, Է. Աղաբեկյանը նա նորից ցուցաբերել է արիություն և փրկել շատերի կյանքը: 1993 թվականի մարտի 17-ին և 18-ին՝ Գյուլաթաղ և Ջանյաթաղ գյուղերի ազատագրման օրերին, նա միայնակ օգնություն է ցույց տվել բազմաթիվ ծանր վիրավորների, և նրա ջանքերի շնորհիվ բոլորն էլ տեղափոխվել են ապահով վայր՝ ստանալով առաջին բուժօգնությունը[1573]:

1993 թվականին Է. Աղաբեկյանը որպես բուժքույր ծառայության է անցել հրետանային զորամիավորումում և մասնակցել է բոլոր մարտերին: Հրադադարից հետո՝ 1995 թվականին, նա տեղափոխվել է Մարտունու զինվորական հոսպիտալ, որտեղ ծառայում է մինչ օրս:

Արցախյան ազատամարտին արձագանքեցին նաև սփյուռքահայ կանայք: 1992 թվականին Մ. Մելքոնյանի հետ Մարտունու շրջան մեկնեց ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգում ծնված **Անուշ Տեր-Թալյանը**[1574]: Նա ծնվել է 1949 թվականի հուլիսին Կալիֆոռնիայի նահանգի Ֆուլեթըն քաղաքում: Ավարտել է Բերկլիի համալսարանի մուլտիմեդիայի

[1573] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 147:
[1574] **Վարդումյան Հ.,** Կին ազատամարտիկները, էջ 195-197:

բաժինը: Աշխատել է Կալիֆոռնիայի կանանց բանտում, զուգահեռ նա դպրոցում՝ դասավանդելով «Բազմամշակութային կրթություն» առարկան[1575]: 1991 թվականին Երևանում հանդիպել է Մոնթեին: Նրան գիտեր դեռ Բերկլիի համալսարանում ուսանելու տարիներից: Խնդրել է իր հետ տանել Արցախ[1576]: Որոշել է տեսաֆիլմ նկարահանել, լուսանկարել, աշխարհին ցույց տալ ադրբեջանցիների բարբարոսությունները:

1992 թվականի փետրվարին Ա. Տեր-Թալյանը մասնակցել է Մարտունու շրջանի Ղարադաղլու գյուղի մարտերին: Անմիջապես առաջին գծում նկարել է մարտական գործողությունները, որից հետո հանդիպել է ինքնապաշտպանական ուժերի մի քանի հրամանատարների հետ: Մի քանի ամիս մնացել է Ստեփանակերտում, բնակվել է նկուղում, ինչպես բոլոր ստեփանակերտցիները: Փետրվարի 26-ին՝ Խոջալուի մարտերի ժամանակ, նա 26-ի Յուրայի հետ էր, իսկ Շուշիի ազատագրման ժամանակ՝ Կամո Դանիելյանի ջոկատում:

Լաչինի ազատագրումից Ա. Տեր-Թալյանը շտապել է այնտեղ՝ տեսնելու և լուսանկարելու ազատագրված հողը: 1992 թվականի ընթացքում բազմաթիվ հոդվածներ է տպագրել համաշխարհային մամուլում, ուղարկել տարբեր կազմակերպությունների: Նրա տեսաֆիլմերը՝ «Արցախի երեխաները», «Արցախյան ազատամարտը», ցուցադրվել են աշխարհի բազմաթիվ երկրներում՝ տեղեկացնելով շրջափակման մասին, պարզաբանելով պատերազմի բուն պատճառը և իմաստը: Նրա գործունեությունը նպաստել է ազատամարտի և Արցախի խնդրի միջազգայնացմանը:

1993 թվականին նորից ժամանելով Արցախ՝ 26-ի Յուրայի զորամասում անցել է Մարտակերտի շրջանի Հոռաթաղ, Դրմբոն, Հարությունագոմեր գյուղերը, իսկ 26-ի Յուրայի զոհվելուց հետո՝ որպես կա-

---

[1575] **Վարդումյան Հ.,** Կին ազատամարտիկները, էջ 195-197:
[1576] Տե՛ս նույն տեղում:

պավոր միացել է Վիգեն Ասատրյանի ջոկատին և մնացել է մինչև դեկտեմբեր ու մասնակցել Սարսանգի ջրամբարի ազատագրմանը:

1993 թվականին հարուստ տեսանյութերով նորից ԱՄՆ-ում էր: Ֆիլմեր է ցուցադրել տարբեր քաղաքներում, քարոզչական աշխատանք ծավալել: 1994 թվականին վերադառնալով Արցախ՝ Ա. Տեր-Թալյանը որոշել է մշտական բնակություն հաստատել Մարտակերտում[1577]:

Մարտունու շրջանի տարբեր կամավորական ջոկատների շարքերում, ապա 1992 թվականի սեպտեմբերից Մարտունիի պաշտպանական շրջանի ստորաբաժանումներում **Մելանյա Օհանյանը, Սիլվա Բալայանը, Անժելա Ջամալյանը, Վերա Հարությունյանը, Մարգո Ազարյանը, Մելանյա Սարգսյանը, Հասմիկ Օհանջանյանը, Ռայա Ավագյանը** ևս մասնակցեցին շրջանի Ճարտար, Մաճկալաշեն, Մյուրիշեն, Ավդուռ, Հացի, Նորշեն, Բերդաշեն գյուղերի ինքնապաշտպանական, ինչպես նաև Շուշիի, Մարտակերտի, Աղդամի, Ֆիզուլու, Ջարբայիլի, Զանգելանի և այլ շրջանների ու ռազմավարական բարձունքների ազատագրական մարտերին[1578]:

Ռոզա Մուսայելյանը, Առլետա Ազիզյանը, Անժելա Արզումանյանը, Ռամելա Ղուկասյանը, Ռիտա Այդինյանը, Սեդա Բաբայանը, Թամարա Բալայանը, Արեգա Բաբայանը, Արզելա Բալայանը, Լաուրա Խալափյանը, միանալով Մարտունու հոսպիտալի աշխատողներին, մասնակցել են մի շարք ռազմագործողությունների՝ փրկելով հարյուրավոր զինվորների[1579]:

Ադրբեջանցի ոճրագործները ամեն ինչ անում էին, որպեսզի ԼՂԻՄ-ի սահմանամերձ գյուղերում բնակչությունը հիասթափվի, հուսալքվի ու հեռանա բնակատեղից: Յուրաքանչյուր հայկական գյուղում կամավորականների երևալն արդեն ինքնապաշտպանության կազմակերպման քայլ էր: Ջոկատներին մտահոգում էր մարզի բնակչության

[1577] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 196-197:
[1578] «Ամարաս», 9 մայիսի, Երևան, 2005:
[1579] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությանը, էջ 152:

ինքնապաշտպանության հարցը, և դրանում նրանք ստանում էին բնակչության բազմակողմանի աջակցությունը: Արցախի բոլոր հայկական բնակավայրերը, այդ թվում՝ Հադրութի շրջանն ուներ ինքնապաշտպանական ջոկատներ, որոնք հիմնականում օգնում էին այն բնակավայրերին, որտեղ վտանգն ավելի մեծ էր:

Մի շարք կամավորական ուժերում, այդ թվում՝ Ուխտաձորի (*Էլլա Խաչատրյան*), Թաղասեռի (*Նաիրա Գալստյան*) ջոկատների կազմում ընդգրկված կանայք ևս մի շարք աշխատանքներ էին տանում տեղի բնակավայրերի ինքնապաշապանությունը կազմակերպելու համար[1580]:

Քանի որ հանրապետության սահմանների երկարությամբ ապրող ադրբեջանցիների հակահայկական գործողություններն ավելի սուր բնույթ էին ստանում, Հայաստանում ձևավորված առաջին ջոկատների հիմնական մասը մեկնում էր այնտեղ:

Էջմիածնի կամավորականները Հադրութ մեկնեցին 1989 թվականի օգոստոսին և միանալով տեղացիներին՝ ազատագրական շարժման առաջին փուլում անցան ընդհատակյա պարտիզանական ինքնապաշտպանության կազմակերպմանը՝ գիտակցելով, որ այդ փուլի պայքարի ճիշտ ճանապարհը դա է: Համալրելով Էջմիածնի կամավորական ջոկատները և զորամիավորումը՝ **Նազիկ Ամիրյանը, Ռուզաննա Եսայանը, Հեղինե Բդոյանը, Անահիտ Վարդանյանը, Մարիետա Քալաշյանը** 1989-1994 թվականներին մասնակցեցին ԼՂՀ Հադրութի Մելիքաշեն, Հախլու, Խրմնջուղ, Դուդուկչի, Էդիլլու, Տող, Հողեր, այնուհետև Շուշիի, Քելբաջարի, Մարտակերտի, Ֆիզուլիի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին[1581]:

1992 թվականի հունիսին Հեղինե Բդոյանը, Արցախ մեկնելով, սկզբում ծառայության անցավ Հադրութի շրջանի ջոկատում, ապա՝ Էջմիածնի Մանվելի ջոկատում, և որպես կապավոր տեղափոխվեց առաջին գիծ: Ազատամարտիկ **Հեղինե Բդոյանը** աչքի ընկավ իր մարտա-

---

[1580] **Ավանեսյան Ի.,** նշվ. ատենախոսությանը, էջ 152:

[1581] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 161:

կան սխրագործությամբ: Նա ծնվել է 1973 թվականի մայիսին Երևանում: 1990 թվականին ավարտել է Երևանի թիվ 61 դպրոցը:

Արցախյան պատերազմի տարիներն էին: Տուն տանող ճանապարհին Հ. Բդոյանը անցնում էր Նորքի ոսկրաբուժական հիվանդանոցի մոտով, որտեղ բուժվում էին Արցախում և հանրապետության սահմաններում վիրավորված ազատամարտիկները: Հաճախ էր կանգ առնում, նայում հիվանդանոցի կողմը: Մի օր էլ մտնում է հիվանդանոց: Այդ պահից հետո՝ ազատ ժամերին, խնամում էր վիրավորներին[1582]: Նա լավ կապավոր էր: Ջոկատում նրան Հերմինե էին անվանում և հարգանքով վերաբերվում: Սակայն նա ցանկանում էր կռվել առաջին գծում: Շուտով նրան նշանակում են առաջին գծի կապավոր, որտեղ կյանքն այլ էր. անընդհատ գնդակոծություններ, հարձակումներ: Ժամանակ էլ չէր մնում լիարժեք հանգստանալու, սակայն նա դիմանում էր ամեն դժվարության:

1992 թվականի աշնանը կատաղի մարտեր էին ընթանում Հադրութի շրջանի Ուղտաձոր (Էդիլլու) գյուղի ազատագրման համար: Ազերիները, ամրանալով գյուղի մերձակա բարձունքներում, հարմար դիրքերից կրակով ճնշում էին հայկական ուժերին, խանգարում առաջխաղացմանը: Այդ հատվածում կապն ապահովվում էր դաշտային հեռախոսով: Երբ գրոհի ամենավճռական պահին կապն ընդհատվել է, հրետակոծությունից կտրվել է հեռախոսալարը, Հեղինեն, դուրս ցատկելով խրամատից, բռնել է լարը, առաջ վազել՝ գտնելու վնասված տեղը: Ազերիները, նկատելով վազող կապավորին, կրակել են: Ընդհանուր հրետակոծությանն ավելացել է նաև գնդակոծությունը: Հեղինեն, իր վրա ուղղված կրակը զգալով, ցատկել է մոտիկ ձագարի մեջ, մի քիչ սպասել, ապա դուրս սողացել և նորից վազել: Վերջապես գտել է կտրված մասը և երկու ծայրերը միացրել: Կապը վերականգնվել է,

[1582] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 161:

բայց Հեղինեն վիրավորվել է թշնամու գնդակից: Նրան տեղափոխել են Հադրութի հիվանդանոց, բայց վերքը մահացու էր...[1583]

Հ. Բդոյանը մահացել է 1992 թվականի նոյեմբերի 16-ին:

Մարտի դաշտում կռվող ազգակիցների կողքին լինելու ազատամարտիկ-բուժքույր և բանաստեղծ **Ռուզաննա Եսայանի** ձգտումներն իրականացան 1992 թվականի աշնանը:

Ռ. Եսայանը ծնվել է 1968 թվականի նոյեմբերի 17-ին Էջմիածին քաղաքում: 1987 թվականին ավարտել է Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) բժշկական ուսումնարանը: Նույն թվականից որպես բուժքույր աշխատել է հայրենի քաղաքի շրջանային կենտրոնական հիվանդանոցում: Գրել է բանաստեղծություններ[1584]:

Հայրենի հողի ազատագրության համար պայքարի ելած հայ ժողովրդի քաջարի զավակներից շատերի պես ալեկոծվել է նաև թուրք ենիչերիների յաթաղանից մազապուրծ գերդաստանի վրեժը լուծելու որոշումն ընդունած փխրուն աղջնակի հոգին, և Ռ. Եսայանը զինվորագրվել է մեծ պայքարին:

Մշտապես մարտի դաշտում, կռվող ազգակիցների կողքին լինելու ձգտումը իրականացրել է 1992 թվականին: Ռ. Եսայանն անդամագրվել է Մանվել Գրիգորյանի հրամանատարությամբ Արցախի Հադրութի շրջանում մարտնչող Էջմիածնի կամավորական ջոկատին[1585]: Շատ ազատամարտիկների վերքեր է վիրակապել, շատերի կյանքն է փրկել:

1992 թվականի դեկտեմբերի 12-ին ջոկատն արյունոտ մարտ է մղել Հադրութի շրջանի Ուղտաձոր գյուղի պաշտպանության համար: Վիրավորները շատ էին: Օգնություն էր պետք: Ռուզաննան որոշել է բեռնատարով նրանց տեղափոխել շրջկենտրոն: Երթուղին «Մահվան

[1583] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 161:
[1584] Տե՛ս նույն տեղում, էջ 169:
[1585] Տե՛ս նույն տեղում, էջ 161:

ճանապարհ» անունն էր ստացել[1586]: Արյունարբու թշնամու արկի պայթյունից զոհվել է բուժքույրը: Ընդհատվել է նրա կյանքի պոեմը:

Ռ. Եսայանը հետմահու պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության «Մարտական խաչ 2-րդ աստիճանի» շքանշանով: Նրա անունով է կոչվում Վաղարշապատի փողոցներից մեկը[1587]:

Ռ. Եսայանի աճյունն ամփոփված է ծննդավայրում:

Հայրենքի ազատագրության համար պայքարող ազատամարտիկ էր **Մարիետա Քալաշյանը**: Ծնվել է 1954 թվականի մարտին ԼՂՀ Հադրութի շրջանի Էդիլլու գյուղում: 1971 թվականին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1974 թվականին՝ բժշկական ուսումնարանը: 1974-1977 թվականներին աշխատել է Երևանի շտապօգնության հիվանդանոցում, 1977-1983 թվականներին՝ թիվ 91 մանկապարտեզում, 1983 թվականից՝ Էրեբունի բժշկական կենտրոնում որպես բուժքույր:

Ամուսնացած է, ունի երկու երեխա[1588]:

Շուտով անդամագրվել է Էջմիածնի կամավորական ջոկատին: Որոշել են ընտանիքով տեղափոխվել Հադրութ, մասնակցել ինքնապաշտպանությանը: Դժբախտաբար, 1990 թվականի մայիսի 27-ին՝ Նուբարաշենի դեպքերի ժամանակ, ամուսինը զոհվել է: Թվում է, թե այդպիսով վերջ պիտի դրվեր Մարիետայի հայրենանվեր գործունեությանը, բայց նա շուտ ընկճվողներից չէր: Ընդհակառակը, ժամանակն էր եկել՝ իրականացնելու նաև ամուսնու կիսատ մնացած նպատակները: Եվ 1990 թվականին, քրոջ խնամքին թողնելով երկու մանկահասակ աղջիկներին, վեց տարեկան տղային վերցնելով, Էջմիածնի կամավորական ջոկատի կազմում մեկնել է Հադրութի շրջան: Սկզբում գործի է անցել հիվանդանոցում: Անելիք շատ կար: Ընդհարումներն աստիճանաբար վեր էին ածվում դաժան ու կատաղի կռիվների: Հա-

---

[1586] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 25-26:

[1587] **Գրիգորյան Ս.,** Մուսաները չլռեցին քեզ համար, Արցախ, գիրք երրորդ, Երևան, 2010, էջ 19:

[1588] **Վարդումյան Հ.,** Աստվածների կանչը, էջ 202:

ճախ դիրքերից վիրավորներ էին բերում: Հետո Մանվելը կանչեց ջոկատ՝ փորձված բուժքրոջ կարիք շատ էր զգացվում: Իսկ Մարիետան երկար տարիների փորձ ուներ[1589]:

Առաջին գծում ազատամարտիկների կողքին կնոջ համար դժվար էր, բայց նա զգաց, որ իր տեղն այդտեղ է: Ոչ միայն բուժքույր էր, այլև շատ մասնակից կանանց նման դարձավ այդ նվիրյալ տղաների քույրը, մայրը: Եվ երբեք չզղջաց իր կրած չարչարանքների ու զոհաբերությունների համար:

Մարտական գործողությունների ժամանակ նրանց կողքին էր. վիրավորներին էր վիրակապում, հանում մարտի դաշտից, անհրաժեշտության դեպքում գործի դնում ավտոմատը: Իսկ դադարի պահերին կարում էր, գուլպաներ գործում տղաների համար, մայրություն անում: Եվ մի ուսից սանիտարական պայուսակը, մյուսից ավտոմատը կախած՝ մասնակցեց Հադրութի շրջանի Էդիլլոյի ձորակի, Հախուլլու, Էդիլլու, Ալբուլաղ, Խրմնջուղ, Բլութան գյուղերի ինքնապաշտպանությանը, Ֆիզուլիի ազատագրական մարտերին:

1992 թվականին ստանալով ենթասպայի կոչում՝ նշանակվեց կազմավորված 5-րդ կամավորական բրիգադի բուժծառայության պետ:

1992 թվականին դրությունը ծանրացավ Մարտակերտի շրջանում: Կամավորական զորամիավորման կազմում Մ. Քալաշյանը մեկնեց այնտեղ, ականատես եղավ արյունալի մարտերի: Աշխատում էր գիշերցերեկ տարրական պայմանների բացակայության պայմաններում: Երբեմն ստիպված էր լինում վիրահատել ուղղակի մարտի դաշտում, կրակոցների ու հրետակոծության տակ, բայց երբեք չէր հուսահատվում, չէր տրվում ծայրահեղ հոգնածությանը: Ամեն անգամ հիշում էր ամուսնուն, իր տված երդումը: Նա այստեղ մասնակցեց Հակոբ Կամարի, Մեծշեն, Մատաղիս, Տոնաշեն, Մաղավուզ գյուղերի համար մղվող մարտերին[1590]:

[1589] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 202-203:
[1590] Տե՛ս նույն տեղում:

Իրադրության կարգավորումից հետո զորամասը վերադարձավ Հադրութի շրջան: Ապա 1994 թվականի ազատագրական գործողությունների ժամանակ նորից Մարտակերտի շրջանում էր: 1994 թվականի ապրիլի 16-ին՝ մարտի ժամանակ, վիրավոր ազատամարտիկին օգնություն ցույց տալու պահին, Մարիետան վիրավորվեց գլխից և ցնցակաթվածի ենթարկվեց, բայց շարունակեց իր սուրբ գործը:

1994-ի մայիսին հրադադար հաստատվեց: Նա որոշեց շարունակել ծառայությունը: Էրեբունի բժշկական կենտրոնում աշխատելուն զուգահեռ ծառայում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում: Նա զինվորներին վերաբերվում էր, ինչպես իր երեխաներին ու հարազատներին: Այդպես ժամանակին նայում էր իր ազատամարտիկ ընկերներին:

2002 թվականին արժանացել է Հայաստանի Հանրապետության «Մայրական ծառայության համար» մեդալի: Բայց նրա համար ամենաբարձր պարգևը մարտական ընկերների հարգանքն ու հիշողություններն են[1591]:

1988 թվականից սկսած՝ Արցախի ազատագրության հետ հրապարակներում էր Անահիտ Վարդանյանը: Իսկ երբ եկավ զենք վերցնելու ժամանակը, նա արդեն հոգեբանորեն պատրաստ էր և առանց վարանելու միացավ կամավորական ուժերին: Նա ծնվել է 1959 թվականին Երևանում: 1978 թվականին ավարտել է Երևանի թիվ 30 դպրոցի 10-րդ դասարանը: Նույն թվականին ընդունվել է Երևանի առևտրի տեխնիկում, որն ավարտելուց հետո տարբեր հիմնարկություններում աշխատել է որպես գանձապահ: Ամուսանցած է, ունի երկու երեխա[1592]:

1992 թվականի հուլիսին «Աշոտ Երկաթ» ջոկատի կազմում (հրամանատար՝ Աշոտ Մինասյան) մեկնեց Մարտակերտի ճակատ և մասնակցեց շրջանի մի շարք գյուղերի (Գետավան, Խունկութալա, Վաղու-

---

[1591] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., 203-204:

[1592] Տե՛ս նույն տեղում, էջ 202-204:

հաս, Չլդրան, Կիչան և այլն) համար մղվող մարտերին[1593]: Հատկապես ծանր մարտեր ծավալվեցին Կուսապատի մոտակայքում: Առավել ծանր էր Անահիտի համար: Վիրավորներին ու զոհերին ստիպված էր մենակ մոտ 2 կմ տեղափոխել՝ ապահով տեղ հասցնելու համար, որովհետև բոլոր զինվորները կռվի մեջ էին, հնարավորություն չունեին նրան օգնելու: Զորամասն ավելի առաջանալով՝ հենակետը տեղափոխեց Ականա (Ումուդլու) գյուղ և մարտ ամսին մասնակցեց Ներքին Հոռաթաղ, Մոխրաթաղ, Մեծ շեն գյուղերի ազատագրմանը, հասավ «Պուշկինյալին»: Բուժանձնակազմի կարիք շատ էր զգացվում բոլոր զորամիավորումներում, և Անահիտը հասնում էր բոլորին[1594]:

1993 թվականին զինվորագրվելով Երևանի թիվ 2 կամավորական գումարտակ՝ փետրվարին նորից մեկնեց Արցախ և մասնակցեց Մարտակերտի շրջանի գյուղերի ազատագրական մարտերին: 1993 թվականի մայիսին գումարտակը ներառվեց Մ. Գրիգորյանի գնդի կազմ և մասնակցեց Կուբաթլուի, Ջաբրայիլի Ֆիզուլու շրջանների գյուղերի ազատագրմանը:

Ա. Վարդանյանը մասնակցում էր նաև հետախուզությանը, ինչպես նաև զինամթերք հասցնում մարտիկներին[1595]: 1994 թվականի ապրիլի 24-ին հակատանկային ականի պայթունից նա վիրավորվել է, սակայն չկորցնելով ինքնատիրապետումը՝ նախ վիրակապել է իր ոտքը, ապա՝ 17 վիրավորների տեղափոխել զինվորական հիվանդանոց: Նույնիսկ վիրավորվելուց հետո նա շարունակել է մնալ ռազմի դաշտում: 1994 թվականի հոկտեմբերից մինչև 1995 թվականի սեպտեմբերը ծառայել է Մատաղիսում՝ ստանձնելով սահմանապահի պարտականությունները, որից հետո տեղափոխվել է Հորադիզ[1596]:

[1593] **Վարդումյան Հ.,** նշվ. աշխ., էջ 202-204:
[1594] Տե՛ս նույն տեղում, էջ 190:
[1595] Տե՛ս նույն տեղում, էջ 190-191:
[1596] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 159:

1991 թվականին միանալով «Գարեգին Նժդեհ» կամավորական ջոկատին՝ ազատամարտիկ-բուժքույր **Զարուհի Բադալյանը** դեկտեմբերից մինչև 1992 թվականի հունվարը մասնակցեց Հադրութի շրջանի Բլութան (Պլեթանոց), Էդիլլու, Խրմանջուղ (Ծաղկավանք) գյուղերի պաշտպանական գործողություններին[1597]:

Զարուհի Բադալյանը ծնվել է 1950 թվականվ հունվարին Անիի շրջանի Լուսաղբյուր գյուղում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, այնուհետև սովորել Երևանի առևտրի տեխնիկումում և թիվ 20 տեխնիկական ուսումնարանում: Աշխատել է Երևանի էլեկտրալամպերի գործարանում, 1974 թվականից՝ Երևանի մետրոպոլիտենում: Աշխատանքին զուգընթաց ավարտել է բուժքույրական մեկամյա դասընթացը: Արցախյան ազատագրական շարժման առաջին իսկ օրերից ակտիվորեն մասնակցել է ցույցերին, միտինգներին[1598]:

Երբ ստեղծվել է «Գթություն» բարեգործական միությունը, Զ. Բադալյանն առաջինն է անդամագրվել դրան և օգնության ձեռք մեկնել փախստականներին ու բռնագաղթվածներին, երկրաշարժից տուժած անօթևան մարդկանց, հուսադրել կարիքավորներին, ապա իր խնամակալության տակ է վերցրել ծնողազուրկ երեք երեխաների, նրանց պահել երեք տարի:

Անդամագրվել է «Մետրոշինի» ջոկատին, մեկնել է սահման և բուժօգնություն ցուցաբերել Գորիսի շրջանի սահմանամերձ գյուղերի բնակչությանը:

1990 թվականի հունվարի 18-19-ը որպես բուժքույր մասնակցել է Երասխավանի կռիվներին: 1990 թվականի գարնանը անդամագրվել է 1989 թվականին կազմավորված «Գարեգին Նժդեհ» կամավորական ջոկատին և մեկնել Իջնանի շրջանի Կիրանց գյուղի դիրքերը[1599]:

[1597] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 159:
[1598] Տե՛ս նույն տեղում:
[1599] Տե՛ս նույն տեղում:

1992 թվականի հուլիսին ջոկատը մեկնել է Մարտակերտի շրջան, Արարատի ու Արմավիրի ջոկատների հետ մասնակցել է Նարեշտար և Չարեքար գյուղերի ազատագրական մարտերին: Իրավիճակը ծանր է եղել, և Զարուհի Բադալյանը օգնության է հասել նաև հարևան ջոկատներին: 1993 թվականին մասնակցել է Կուբաթլուի շրջանի ազատագրմանը, 1994 թվականին մինչև հրադադարը եղել Հորադիգում[1600]:

Հրադադարից հետո Զ. Բադալյանը շարունակել է բարեգործական գործունեությունը. «Արցախ» հայրենակցական միության նախագահությունը երաշխավորել է «Գարեգին Նժդեհ» ջոկատի բուժքույր Զ. Բադալյանին՝ զբաղվելու զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքների օգնության հարցերով:

Այժմ էլ նա շարունակում է նվիրված ծառայել հայրենիքին. «Երկրապահ կամավորականների միության» վարչության անդամ է, օգնության ձեռք է մեկնում ոչ միայն զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, այլև ծերունիներին ու մանկատներին:

Քաջասիրտ ազատամարտիկ է Նաիրա Իսրայելյանը: Նա մինչև վերջ մասնակցել է մարտական գործողություններին: Ծնվել է 1953 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում: 1977 թվականին ավարտել է Ադրբեջանի Զ. Իլդրիմի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինական ֆակուլտետը՝ ստանալով ինժեներ-մեխանիկի որակավորում: 1989 թվականին Բաքվում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների ժամանակ տեղափոխվել է Լեռնային Ղարաբաղ՝ Ստեփանակերտ:

Ն. Իսրայելյանը սկզբում աշխատել է Ստեփանակերտի «Դելֆին» կոոպերատիվում (մսամթերքների կոմբինատին կից) որպես հաշվապահ, իսկ 1991 թվականից՝ կադրերի բաժնում[1601]: 1991 թվականի հունվարին անդամագրվել է «Միսկոմբինատում» կազմավորված կամավորական հրետանային դիվիզիոնին: 1992 թվականի սեպտեմբերին հրե-

---

[1600] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 159:
[1601] Տե՛ս նույն տեղում, էջ 163:

տանային դիվիզիոնից առանձնացել և կազմավորվել է 120 մմ ականանետային դիվիզիոնը: Այստեղ Ն. Իսրայելյանը ծառայել է ենթասպայի կոչումով: Նա մասնակցել է դիվիզիոնի մարտական գործողություններին, կատարել է խոհարարի, բուժքրոջ, հեռախոսավարի պարտականություններ[1602]: 1993 թվականի սեպտեմբերից մինչև 1995 թվականի մարտը դիվիզիոնը եղել է բանակի բրիգադի կազմում:

Ն. Իսրայելյանը՝ որպես կադրերի գծով ավագ ենթասպա, ծառայել է 71-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակում, 1998-2000 թվականներին՝ Ռազմական ուսումնարանի ուսումնական մասում: Ուսումնարանը փակվելուց հետո զորացրվել է: 1999 թվականին նրան շնորհվել է լեյտենանտի զինվորական կոչում: 2007 թվականի մայիսից աշխատում է «Ֆլամինգո» ռեստորանում որպես տնօրեն:

Ն. Իսրայելյանը պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» (2005), «Արիության համար» (2007) մեդալներով, «Երկրապահ» հուշամեդալով (2005)[1603]:

1992 թվականի նոյեմբերին մտնելով Հադրութի պաշտպանական շրջանի կազմը՝ *քույրեր* **Սուսաննա և Վերա Բաղալյանները**, *ինչպես նաև* **Ժենյա Մովսիսյանը, Էլլա Գասպարյանը, Լյուդմիլա Մայիլյանը, Մանյա Գրիգորյանը, Մարինե Բաղդասարյանը, Ալվարդ Ալիբաբայանը, Մելանյա Սաֆարյանը, Էմմա Թունյանը** մասնակից դարձան մի շարք կարևոր ռազմագործողությունների ոչ միայն հարավային ռազմագոտում, այլ նաև Լաչինի մարդասիրական միջանցքի պաշտպանությանը և Քելբաջարի ռազմական հենակետի վնասազերծմանը:

1993 թվականի նոյեմբերի 29-ից սկսած՝ Օմարի լեռնանցքից մինչև Արաքսի ափերը ռազմաճակատի գրեթե բոլոր հատվածներում, ադրբեջանցիները վերսկսեցին մարտական գործողությունները և մինչև 1994 թվականի հունվարի կեսերը որոշակի հաջողություններ ունեցան: Սակայն 1994 թվականի փետրվարի 18-ին Քելբաջարի (Քարա-

---

[1602] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 159:
[1603] Տե՛ս նույն տեղում:

վաճառ) շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանեցքի ազատագրումով, երբ մարտական գործողություններն ընթանում էին 3000 մ և ավելի բարձրլեռնային շրջաններում՝ -30° սառնամանիքի պայմաններում, ապահովվեց Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող պաշտպանական ուժերի թիկունքը: Աղդամի շրջանի և Միրբաշիրի (Թարթառի) ուղղությամբ ձեռնարկված լայնածավալ գործողությունները լիակատար խուճապի մատնեցին ադրբեջանցիներին: Ազատագրվեցին Մարտակերտի և Ասկերանի շրջանների բնակավայրերը: Շուրջ երեքամսյա թեժ մարտերի ընթացքում թշնամին կորցրեց 5 հազարից ավելի զինվոր և սպա, 72 միավոր տեխնիկա[1604]:

Չկարողանալով ռազմական ուժի օգնությամբ իր օգտին լուծել Ղարաբաղյան հիմնահարցը և հետագա խայտառակությունից խուսափելու համար՝ ադրբեջանական իշխանությունները հարկադրված էին Ռուսաստանի միջնորդությամբ և Մինսկի խմբի օգնությամբ 1994 թվականի մայիսին հրադադար խնդրել:

Մայիսի 5-ին Բիշքեկում Ռուսաստանի, Ղրղզստանի և ԱՊՀ միջնորդական խորհրդաժողովի միջնորդությամբ Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի հանրապետության և Հայաստանի Հանրապետության խորհրդարանների ղեկավարները (*Յ. Մամեդով, Կ. Բաբուրյան և Բ. Արարքցյան*) ստորագրեցին արձանագրություն կրակի դադարեցման վերաբերյալ: Բիշքեկյան արձանագրությանը Ադրբեջանը միացել է ավելի ուշ՝ մայիսի 8-ին[1605]: ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ *Պավել Գրաչովի* միջնորդական ջանքերով ՀՀ, ԱՀ պաշտպանության նախարարները (*Ս. Սարգսյան, Մ. Մամեդով*) և ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարը (*Ս. Բաբայան*) մայիսի 11-ին համաձայնագիր ստորագրեցին կրակը դադարեցնելու վերաբերյալ[1606]: 1994 թվականի մայիսի 12-ին համաձայնագիրը ուժի մեջ մտավ: Հա-

---

[1604] **Բալայան Վ.,** նշվ. աշխ., էջ 403-404:
[1605] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, հանրագիտարան, էջ 28:
[1606] Տե՛ս նույն տեղում:

ջորդ օրը ադրբեջանական բանակն այն խախտեց: Վերջապես մայիսի 16-ին Պավել Գրաչովի նախաձեռնությամբ ու առաջարկությամբ ՀՀ պետնախարար Վ. *Սարգսյանը*, ՀՀ ԱՀ պաշտպանության նախարարները և ԼՂՀ ՊԲ հրամանատարը Մոսկվայում համաձայնության եկան մայիսի 17-ի 00 ժամից դադարեցնել կրակը, որին Ադրբեջանը մեկ ամիս անց տվեց իր համաձայնությունը[1607]:

Դադարեցվեցին ռազմական գործողությունները, և սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը, որը 2016 թվականի դրությամբ դեռ շարունակվում էր:

Պատերազմում զոհվեցին շուրջ 6500 ազատամարտիկ[1608], որոնց մի մասն կանայք էին:

Հայ ժողովուրդը խորին երախտագիտությամբ և ակնածանքով է հիշում Արցախյան ազատամարտի բոլոր զոհվածներին ու մասնակիցներին:

Շարժման սկզբնափուլում Հայաստանում և Արցախում տարերայնորեն կազմավորված առաջին կամավորական և աշխարհազորային ինքնապաշտպանական ջոկատների շարքերը մտած կանայք հետագա ամբողջ պատերազմի ընթացքում ցույց տվեցին, որ նրանց մասնակցությամբ կամավորական ջոկատները Արցախում և Հայաստանում փայլուն կերպով կատարեցին իրենց առջև իրենց իսկ կողմից դրված խնդիրները: Նրանք իրենց գործունեությամբ ապացուցեցին, որ հանուն հայրենիքի պաշտպանության պատրաստ են իրենց ուսերին տանել ողջ ծանրության բեռի մի մասը: Նրանցից ոմանք իրենց կյանքը զոհաբերեցին, ոմանք էլ մարտերի ընթացքում թեկուզ վիրավորվեցին, սակայն ապաքինվելուց հետո վերադարձան մարտի դաշտ և շարունակեցին պայքարը մինչ զինադադար: Կանանց մի մասն էլ, մնալով թիկունքում, ոչ պակաս կարևոր դեր ունեցավ. նրանց ուսերին էր դրված

[1607] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, հանրագիտարան, էջ 28:
[1608] Տե՛ս նույն տեղում:

ընտանիքի հոգսը, ինքնապաշտպանական ուժերին սնունդ մատակարարելը, մարտնչողներին հույս ու հավատ ներշնչելը:

Նվիրական գործ կատարեցին նաև թիկունքի կանայք, որոնք, վիրավոր ազատամարտիկներին խնամելուց բացի, բազմիցս հանդես էին գալիս որպես դոնորներ: Նրանց թվում էր Անյա Ավանեսյանը: Նա, Կենտրոնական հոսպիտալում աշխատելով որպես տնտեսվար, պատերազմի օրերին խնամում էր վիրավոր ազատամարտիկներին, հարկ եղած դեպքում նրանց կյանքը փրկում՝ արյուն տալով: Նա չհասցրեց վայելել հաղթանակի բերկրանքը, սակայն նրա շնորհիվ բազմաթիվ փրկված ազատամարտիկներ իրենց սուրբ գործը շարունակեցին մինչև հրադադար:

Այսպես, եթե մարտի դաշտում հայտնված կանայք հանդես էին գալիս որպես դիպուկահարներ, հետախույզներ, կապավորներ, գթության քույրեր՝ անտեսելով վտանգը, ապա թիկունքի կանայք, հաղթահարելով հանդիպող բոլոր դժվարությունները, զբաղվում էին հողագործությամբ, հացաթխմամբ, խոհարարությամբ, նկուղներում երեխաների դաստիարակությամբ:

Հայտնվելով ռազմական իրավիճակում՝ կին ազատամարտիկները, ինչպես նաև թիկունքում գործող հազարավոր կանայք, իրենց ուսերի վրա տարան պատերազմի ողջ ծանրությունը:

Գոյապայքարի տարիներին հարյուրավոր կանայք կատարում էին նաև հասարակական-քաղաքական լայն աշխատանքներ, որոնց գործունեությունը նվիրված էր երկրի պաշտպանությանը: Արցախի համար դժվարին օրերին ծնվեցին «Գթություն», «Հիշատակ», «Մայրություն» հիմնադրամներն ու մարդասիրական կազմակերպությունները, որոնց նախաձեռնողները հիմնականում կանայք էին: Այդ կազմակերպությունները օգնություն էին ցուցարերում հաշմանդամներին, որբ երեխաներին, կարիքավոր ընտանիքներին, փախստականներին: Կինխորհրդի նախաձեռնությամբ «Գթություն» բարեգործական միությունը և «Մայրություն» հիմնադրամը կազմակերպում էր կանանց, որոնք

գործում էին գուլպաներ և ուղարկում ազատամարտիկներին, ինչպես նաև կատարում մի շարք հասարակական աշխատանքներ:

Արցախյան շարժման ու պայքարի կիզակետում՝ 1988 թվականի մայիսի 25-ին, բանաստեղծուհի Մարո Մարգարյանի նախաձեռնությամբ Ստեփանակերտում ստեղծված «Մայրություն» կազմակերպությունը ձեռնամուխ եղավ բարեգործական աշխատանքների իրականացման և կանանց համախմբման գործին՝ ազատագրական պայքարին նվիրված քարոզչական աշխատանքներ կատարելու համար: Հիմնադրամի ստեղծումով Արցախում ձևավորվեց կանանց շարժում: Կազմակերպության նշանաբանն էր «Գթասրտություն՝ առանց սահմանի»[1609]:

Ազատագրական շարժման հենց առաջին օրվանից կազմակերպությունը դարձել էր քաղաքական շտաբ՝ ազգային ինքնորոշման իրավունքի, մարդու, մոր և մանկան համար մղվող պայքարում: Կազմակերպությունը ինքնապաշտպանական ջոկատներին օգնում էր ոչ միայն սննդով, դեղամիջոցներով, դոնորական գործով, այլև խնամք էր իրականացնում հոսպիտալներում: Հաշմանդամներին, որբ երեխաներին, անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելուց բացի՝ հիմնադրամը Արցախի կանանցից պատգամավորական խմբեր էր գործուղում տարբեր երկրներ՝ տեղերում հավաքներ կազմակերպելու նպատակով, ինչպես նաև ակտիվորեն մասնակցում էր Ադրբեջանից բռնագաղթվածների ընդունման աշխատանքներին:

«Մայրություն» հիմնադրամի պատվիրակները, 1992 թվականի հոկտեմբերին Երևանում տեղի ունեցած կանանց միջազգային հանձնաժողովի նիստին մանրազնին ներկայացնելով Արցախում տիրող ծանր վիճակը, աշխարհի կանանց միջազգային կազմակերպությունից պահանջեցին կոնկրետ գործարար մասնակցություն ցուցաբերել հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը: Ապա հարց դրվեց՝ կանանց բոլոր

[1609] «Հայաստանի Հանրապետություն», 15 մայիսի, Երևան, 1993:

լծակները օգտագործելու և ճնշում գործադրելու պետական համակարգերի վրա՝ գլխավոր նպատակ համարելով կանխել պատերազմը և հաստատել խաղաղություն: Հանձնաժողովը դատապարտեց Ադրբեջանի գործողությունները, արգելված զենքի օգտագործումը խաղաղ բնակչության դեմ և հռչակագիր ընդունեց, որով աշխարհի կանանց կոչ արեց համախմբել դեմոկրատական ուժերին՝ հանուն մարդու իրավունքների հաստատման և խաղաղության, ընդդեմ բռնության և պատերազմի[1610]:

Հետագայում «Մայրություն» բարեգործական կազմակերպությունը ստեղծեց «Մարտական երախտագիտության Արցախի քաջորդիներին» մեդալը, որի առաջին հանձնումը տեղի ունեցավ 1993 թվականի մայիսի 9-ին՝ Շուշիի ազատագրության տարեդարձի օրը[1611]:

1990-ականներին՝ դժվարին օրերին, շարունակվում էր «Արցախ» հայրենակցական միության ակտիվ գործունեությունը: Միության համաժողովներում հաճախ էին լսվում կին-անդամների ելույթները, որտեղ նրանք հանդես էին գալիս կոնկրետ առաջարկություններով՝ հօգուտ Արցախի սոցիալ-տնտեսական կյանքի բարելավմանը, ինչպես նաև իրենց մասնակցությունն էին ցուցաբերում ազգային-ազատագրական պայքարին: Հարկ է նկատել, որ միության քարտուղար Լարիսա Ալավերդյանը գործուն մասնակցություն է ունեցել փախստականների, տեղաբաշխման օրենսդրական, կազմակերպչական, տեխնիկական և մարդասիրական խնդիրների ապահովման, հակամարտության իրավական և քաղաքական մոտեցումների փաստաթղթերի պատրաստման ու տարածման, պատանդների, ռազմագերիների փոխանակման աշխատանքներին[1612]:

Միության կողմից 1991 թվականի հունիսի 18-ին Երևանի կամերային թատրոնում կազմակերպված ասուլիսում՝ «Մարդու իրավունք-

---

[1610] «Արցախ», 23 հոկտեմբերի, Ստեփանակերտ, 1992:
[1611] «Հայաստանի Հանրապետություն», 15 մայիսի, Երևան, 1993:
[1612] **Խաչատրյան Հ.,** նշվ. աշխ., էջ 26:

ների խախտումն Ադրբեջանում» թեմայով, քաղաքական գործիչները, լրատվության ներկայացուցիչները, Գետաշենի, Մարտունաշենի և ԼՂՀ արյունալի իրադարձությունների ականատեսները մերկացրին Ադրբեջանի բարբարոսական գործողություններն հայ ժողովրդի նկատմամբ և պահանջեցին նոր «նյուրնբերգ» կազմակերպել Ադրբեջանի իշխանությունների նկատմամբ[1613]: Ելույթ ունեցան նաև Մոսկվայում գործող զինվորական մայրերի խորհրդի անդամ Լյուբով Կուզնեցովան, Հայաստանի «Զինվորի մայր» հասարակական կազմակերպության կոմիտեի նախագահ **Գրետա Միրզոյանը**, Հայաստանի բարեկամների ընկերության համանախագահ **Գալինա Կոլիկովան**, որոնք համագործակցում էին «Արցախ» հայրենակցական միության հետ:

Կանայք հերթական քաղաքական նախաձեռնությամբ հանդես եկան 1991 թվականի օգոստոսի 14-18-ին Մոսկվայում կայացած «Եվրոպայի միջուկային զինաթափման միջազգային հասարակական շարժման» 10-րդ կոնվենցիայում: Մասնակից «Զինվորի մայր», «Հայ կանանց միություն», «Արցախ» ՀԲԿ կոնվենցիայի մասնակիցների շրջանում տարածեցին տեղեկատվական նյութերի ծրարներ՝ ռուսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով, որոնցում մերկացված էր «Օղակ» հանցագործ գործողությունը և հատկապես խորհրդային զինված ուժերի հանցագործությունները: Ցուցադրվեցին լուսանկարներ, որոնք ստույգ տեղեկություններ էին հաղորդում Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատագրական պայքարի մասին: Հենց այդ օրերին՝ Մոսկվայում կոնվենցիայի նիստերի ժամանակ, Հաթերք գյուղում տեղի էին ունենում «Փառանձեմ» ջոկատի գործողությունները:

«Արցախ» հայրենակցականի կին անդամները իրենց հրապարակախոսություններում, հոդվածներում, հարցազրույցներում հանգամանալից պարզաբանում էին հիմնախնդիրը, այն ներկայացնում միջազգային հանրությանը և նպաստում դրա միջազգայնացմանը: Միության

[1613] **Աբրահամյան Հ.,** Երբ հայրենիքը վտանգի մեջ է, էջ 62:

հետ համագործակցում էին **Ելենա Բոնները, Գալինա Ստարովոյտովան, Քերոլայն Քոքսը, Ցվետանա Պասկալևան**, ով հաճախ հայրենակցականի աջակցությամբ նկարահանումներ էր կատարում Արցախում: Ընդհանրապես քիչ թիվ չէին կազմում «Արցախ» հայրենակցականի կին անդամները: Պատերազմի տարիներին միության կանայք հատկապես շատ աշխատանքներ էին տանում վիրավոր ազատամարտիկներին, բռնագաղթածներին և փախստականներին օգնություն ցույց տալու գործում[1614]:,

Կանանց կողմից շնորհակալական խոսք էր հնչում նաև ԽՍՀՄ այն մտավորականների հասցեին, որոնք, աշխարհին ներկայացնելով հիմնախնդիրները, կատարվող բռնությունները, պահանջում էին արդարացի լուծում տալ դրան: 1991 թվականի հոկտեմբերի 24-ին Ստեփանակերտի կանանց կողմից (**Համեստ Դանիելյան, Նինա Դավիթյան, Արինա Հակոբյան**) շնորհակալական նամակ հղվեց «Իզվեստիա» թերթի խմբագրությանը՝ Անդրեյ Խայկինի հեղինակությամբ «Ղարաբաղյան օրագիր» վերնագրով հոդվածի տպագրության համար: Հոդվածում մասնակվորապես ներկայացված էր «Օղակ» ռազմագործողությունը և դրա հետևանքով Լեռնային Ղարաբաղի ունեցած կորուստները:

Անգնահատելի էր նաև միջազգային ասպարեզում հայկական կողմին սատարող կին գործիչների և մտավորականների գործողությունը, որոնց շնորհիվ հիմնահարցը բազմիցս ներկայացվեց աշխարհի տարբեր երկրների ամբիոններից, ինչպես նաև հաճախակի դարձան նրանց բարեգործական այցելությունները Արցախ:

Այսպես, ԽՍՀՄ և միջազգային իրավական նորմերի շրջանակներում հռչակված պետության՝ ԼՂՀ նկատմամբ 1991 թ. վերջերից Ադրբեջանի կողմից սանձազերծվեց լայնամասշտաբ զովթողական պատերազմ: Վտանգվեց ոչ միայն ԼՂՀ գոյությունը, այլ նաև դրվեց

[1614] «Зов Арцаха», март, N1, Ереван, 1993.

արցախահայության լինել-չլինելու հարցը: Արցախահայությունը, ի մի բերելով իր ներուժը, Հայաստանի Հանրապետության և սփյուռքահայության աջակցությամբ իրեն պարտադրված պատերազմում հասավ հաղթանակի: Այս ամենին մասնակից դարձած կանայք ևս գիտակցում էին, որ տեսականորեն անհնար էր դիմակայել հակառակորդի ահռելի ուժերին, որի համար էլ դեռևս նախապատերազմյան տարիներին կամավոր միացան հայ ինքնապաշտպանական ուժերին: Իրենց անկասելի ոգով մեկնեցին ռազմաճակատ և իրենց նվիրեցին երկրի պաշտպանությանը: Անցնելով ամբողջ ռազմաճակատի երկայնքով՝ նրանք ևս ունեցան զոհեր և վիրավորներ ու իրենց արիությամբ ցույց տվեցին, որ կինն էլ կարող է իր ուսերին զենք կրել և մարտադաշտում լավ զինվոր, հայրենիքի պաշտպան լինել: Առհասարակ Արցախյան ազատամարտում մեծ դեր ունեցան Հայաստանի և Արցախի կանայք: Արդարև, հերոսություն էր պարզապես այդպես անտրտունջ դիմակայել 1992-1994 թվականների զրկանքներին՝ ռմբակոծություններին, ճակատից եկող հաղորդակցություններին, նկուղներում ապրելուն, ցուրտ ու մութ գիշերներին, հացի սրտամաշուկ հերթերին: Որքան էլ պատմությանը քաջատեղյակ լինենք, առեղծված է մնում հայ կնոջ տոկունությունը, որ թերևս դեռ շատ կզբաղեցնի Ղարաբաղյան հակամարտության ուսումնասիրությանը լծված մասնագետներին:

Օրինաչափ է, անշուշտ, որ պատերազմի ընթացքում և զինադադարից հետո ժողովրդական դիվանագիտության ասպարեզում խաղաղասիրական առաջին ու գործնական ձեռնարկումները ևս վերապահվեցին կանանց: Արժի հիշակատակել, օրինակ, «Կանանց երկխոսություն» խումբը, որ Վրաստանի և Ադրբեջանի գործընկերների հետ 1992 թվականից ի վեր պարբերաբար նստում է բանակցությունների սեղանի շուրջը՝ փորձելով ուղիներ փնտրել Այսրկովկասի այս երեք ժողովուրդների խաղաղ գոյակցության համար[1615]:

[1615] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, էջ 21-22:

Միջազգային հանրության ուշադրությունից չվրիպեց ադրբեջանցի և հայ երկու կանանց՝ Արզու Աբդուլաևայի և Անահիտ Բայանդուրի սխրանքը՝ հաշտության ձեռք մեկնել միմյանց: Նրանք քաջություն ունեցան առաջին անգամ՝ 1992 թվականին, անցնել սահմանը և ոտք դնել հարևան երկիրը խաղաղասիրական նպատակներով: Նրանք արժանացան Ուլոֆ Պալմեի միջազգային հիմնադրամի մրցանակին համագործակցության և խաղաղասիրական գործունեության համար[1616]: Այդ ժամանակ Արզոյի այցը Հայաստան համեմատվեց Գագարինի թռիչքի հետ, այսօր արդեն փոխադարձ այցելությունները, բարեկամաբար նույն սեղանի շուրջը նստելը ադրբեջանցի և հայ կին գործիչների համար սովորական, ինքնին ենթադրվող երևույթ է դարձել: Ներկայում խաղաղության մշակույթի տասնամյակի համաշխարհային արշավի ամենագործուն մասնակիցները դարձյալ կանանց կազմակերպություններն են Հայաստանում, մանավանդ «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան», որ հետազոտական ու քարոզչական լայնածավալ ծրագիր է իրականացնում: Եվ պատահական չէ, անշուշտ, որ ինչպես շարժման արշալույսին, այնպես էլ կայուն խաղաղության հաստատման փուլում առաջին շարքերում կանայք են[1617]:

Եվս մի առանձահատկություն, որն ի հայտ է բերում կնոջ առաքինությունն ու նկարագրի վեհությունը: Ցավալի իրողություն է, որ այսօր երկրապահ ասվածը միանշանակ չի ընկալվում հասարակության կողմից: Զենքը վայր դրած շատ մարտիկներ խաղաղ կյանքի վերադարձան որոշակի հավակնություններով, ոչ թե երախտագիտություն ու մեծարանք հայցելով, այլ փոխհատուցման պահանջատիրությամբ: Թափահարելով «Մենք ենք արյուն թափել, մենք ենք այս երկրի տերը» կարգախոսը՝ ոմանք նախահարձակ կեցվածքով նետվեցին քաղաքա-

[1616] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, էջ 21-22:
[1617] Տե՛ս նույն տեղում:

կան ու տնտեսական ասպարեզ՝ ձգտելով շուտափույթ որոշակի ազդեցության ոլորտներ ու լծակներ նվաճել[1618]:

Հասարակության մեջ հետզհետե ամրացավ այն համոզումը, թե սրանք չեն ճշմարիտ կռվողները, իրականում այն ինքնազոհ, հասուն հայրենիքի արյուն հեղած մարտիկները մնացել են ստվերի մեջ, լքված, հանիրավի անտարբերության մատնված, ծայր կարիքի մեջ ու համեստորեն հանդուրժող: Նախկին երկրապահներն սկսեցին զանազան վերապահություններ հարուցել, և մինչև իսկ առաջացավ «ասֆալտի կռվող» հասկացությունը: Մի բան, որ բնավ չդիտվեց ազատամարտիկ կանանց շրջանում: Նրանցից որևէ մեկը երբևէ ինչ-ինչ հավակնություններով չներկայացավ: Ավելին, շատերը հայտնվեցին տնտեսական նեղ վիճակում և մյուս քաղաքացիների հետ համաքայլ ստիպված էին այժմ էլ գոյության կռիվ տալ: Եվ եթե փորձում էլ են միավորվել, ապա զուտ բարեգործական գործունեության ծավալելու նպատակով, իրենց իսկ ուժերով իրենց սոցիալական վիճակը շտկելու մղումով[1619]:

Կանայք առաջին գծում էին Ղարաբաղյան շարժման արշալույսին և հակամարտության ողջ ընթացքում, հակամարտության կարգավորման առաջին իսկ ձեռնարկումներում, ինչպես նաև քաղաքական ու դիվանագիտական բանակցությունների գործընթացում:

[1618] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, էջ 21-22:
[1619] Տե՛ս նույն տեղում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Իր հազարամյակների պատմության մեջ Հայաստանը՝ որպես քաղաքակրթության բնօրրան, իր կազմավորման առաջին իսկ օրվանից մշտապես գտնվել է հարևան պետությունների, վաչկատուն ցեղերի անընդհատ կրկնվող ասպատակությունների, պատերազմական թատերաբեմում, որի արդյունքում շատ հաճախ մասնակցել ու բաժանվել է նվաճողների միջև, իսկ հայ ստեղծարար ժողովրդի մի հատվածը սփռվել է աշխարհով մեկ, բնակվել օտար ափերում՝ նպաստելով այդ երկրների զարգացմանն ու բարգավաճմանը: Հայրենի երկիրը օտար նվաճողից պաշտպանելու գործում գրեթե մշտապես կռվող տղամարդկանց կողքին են կանգել հայրենասեր, նվիրյալ, հերոսուհի կանայք, որոնք շատ հաճախ իրենց անձնական կյանքը զոհաբերել են հանուն հայրենիքի բաղձալի ազատության, իրենց երեխաների ազատ ապրելու ապագային:

«Հրաշք արարած է հայուհին՝ հայ տղամարդու մշտամնա գոյակիցը, հայ ժողովրդի հանճարեղ արարչուհին: Նա հեռավոր անցյալի ծործորներից բերել և քրիստոնեական թվականության երրորդ հազարամյակին է հասցրել ոչ միայն Նոյի կնոջ՝ Նոյեմզարի ապարոշը՝ կանացիական հմայքը, քնքշությունն ու գթասրտությունը, այլև հային հայ պահող հայերեն խոսքը, աշխատասիրությունը, արդարամտությունը, ազնվությունը, խիզախությունը, նաև՝ խենթությունը:

Ինչե՞ր ասես, որ չի արել հայուհին, ի՞նչ տառապանքներ ասես, որ չի քաշել նա իր տատասկոտ ճամփաներին: Հայ կինն ու տղամարդը միշտ միասին, ուս ուսի տված են քայլել: Զորավիգ են եղել միմյանց, ինչպես նույն մարմնի երկու հարազատ կես: Եվ միշտ չէ, որ ծանրությունն ընկած է եղել տղամարդու ուսերին: Պատահել է այնպես, որ հայ կինը մի դարից մյուսն է ոստնել՝ տղամարդուն շալակն առած: Անցել է ամեն տեսակ անդունդի եզրով և չի թողել, որ այրը սայթաքի: Իր մարմնում, հայացքում պահել է հայաստեղծ ավիշը, սնել ու սնուցել

զարմը հայկյան, հույս ու հավատ ներարկել ընկըճվողներին»,– այսպես է բնութագրել հայ կնոջը նշանավոր վիպասան Հայկ Խաչատրյանը[1620] իր աշխատություններում:

«Հանուն մայրերի ու զավակների, հանուն սուրբ հայրենիքի ազատագրության՝ հազարամյակների ընթացքում հայորդին, ապավինելով սեփական բազկի ուժին ու ռազմի տաղանդին, աղեղնավոր նահապետ Հայկից մինչև քաջ Կարմիր Վարդան, մինչև Դավիթ Բեկ ու Զորավար Անդրանիկ, մինչև Բաղրամյան, այնուհետև՝ Ավո ու վերջին ազատամարտի անմահ նահատակներ, «…մահ իմացյալ անմահություն է» աստվածապարգև գաղափարը որդեգրած, Ավարայրից մինչև Սարդարապատ ու մինչև Շուշի առնականացել է ընդդեմ ոսոխի՝ հանուն սուրբ հայրենյաց, հանուն մայրերի ու զավակների, հանուն մեր հողի գալիք սերմնացանների խաղաղ հերկերի»,– նշել է ՀՀ բանակի գեներալ-մայոր, Արցախի ազգային հերոս Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս)[1621]:

Շարունակելով իր միտքը՝ նա ընդգծել է. «Հանուն կյանքի և ո՛չ մահվան պայքարի քառուղիներում, հայոց այրերի զորական տաղանդին նեցուկ, ուսն ի ուս կանգնել, իրենց զորակցությունն ու իրենց կյանքն են դրել գոյության նժարին «տիկնայք փափկասունք Հայոց աշխարհի», դշխոյից մինչև հասարակ ռամկուհին, Աշխեններն ու Փառանձեմները, Խոսրովիդուխտերն ու Այծեմնիկները, Սասնա ծռերի Ծովինարն ու Նանը, Կիլիկիո վերջին՝ Հեթում սպարապետի քույր, զորահրամանատար Զարմանուհին ու Սոսե Մայրիկը… Մեծ Հայրենականում «սուրը փառքով պատյան դրած» մեր մամիկներն ու մեր մայրերը՝ *Արմիկ Արամյանը, Սոֆյա և Ռուզաննա Լալայանները, Ֆրանսիայի ազգային հերոս Մելինե Մանուշյանը, Բուլղարիայի ազգային հերոս Հերմինե Ռազգրատյանը, Ասպղիկ Մխիթարյանը, Սոնիկ Սինոյանը* և, վերջապես, նորօրյա Ավարայրի՝ Արցախի ազգային-ազատագրական

[1620] **Խաչատրյան Հ.**, Հայուհիներ, էջ 7:

[1621] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 136:

պայքարի դրոշ պարզած մահապարտ պարմանուհիները՝ *Նազիկ Ամիրյանը, Սպալինա Ասրյանը, Ժաննա Գալստյանը, Կարինե Դանիելյանը, Ռուզաննա Եսայանը, Նաիրա Սահակյանը* և ուրիշներ...

Նրանք հարյուրներ են, բյուր են: Նրանք կրողն են մեր աստվածուհիների՝ Անահիտի մայրական հոգատարության, Աստղիկի գեղեցկության ու սիրո շռայլության, Նանեի իմաստության:

Խոնարհվենք նրանց, ովքեր արյան գնով կռեցին նոր Հայաստանի ազատ ու անկախ ապագան, նրանց, ովքեր շարունակում են ապրել, սիրել ու արարել, կրթել ու դաստիարակել, դարմանել..., անառիկ պահել մեր սահմանները:

Նրանք բոլորին անուն առ անուն»,– ավարտում է իր խոսքը լեգենդար Կոմանդոսը[1622]:

Հայոց բազմադարյան պատմության մեջ հայ կինը ազգի համար դժվարին ու ճակատագրական պահերին անմասն չի մնացել գոյապայքարից: Հայ կինը՝ որպես ընտանիքի սրբություն, որպես առաքինի և ազնիվ դերակատար, որպես պաշտամունքի արժանի էակ՝ հայոց պատմության մեջ միշտ էլ իր ուրուն տեղն է ունեցել[1623]:

Հայ կինը հերոսացման մեծաքանակ դրվագներ ցուցաբերեց հայ-դուկային (ֆիդայական) շարժման և հայ ազատամարտի 19-րդ դարավերջի և 20-րդ դարսկզբի ինքնապաշտպանական մարտերում: Հերոսական կռիվներում հայ կանայք տղամարդկանց հավասար, զենքը ձեռքներին, կռվում էին արնախում թուրքերի դեմ: Այդ հերոսամարտերի անզուգական մարտիկներից էին ոսոխի դեմ կռիվներում իրենց սխրագործություններով աչքի ընկած, անմահացած Սոսե մայրիկը, մակոյեցի Աննա Մայրիկը, Սասունի ինքնապաշտպանական կռիվներում հերոսաբար կռվող *շենիկցի Շաքեն*, նրա քույրերը, հատկապես *Ռպեն (Հռիփսիմեն)* և մյուսները, *ցրոնքցի Շուշանը*, Ուրֆայի, Շապին

[1622] Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով, հ. 1, էջ 136:

[1623] **Համբարյան Ս.,** Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում 1898-1908 թթ., Երևան, 1999, էջ 288-289:

Գարահիսարի հերոսամարտերի մասնակիցներ *Եղիսաբեթ Սաջարյանը, Մարիամ Չիլինգարյանը, Վերոնիկա Թանջուտյանը, Սրբուհին, Իսկուն (Մնո Համբարձումյանը)*, Հաճընի, Մուսա լեռան և այլ վայրերի հերոսուհի պաշտպաններ, անձնապահ հայուհիներ *Նվարդ Թելյանը, Եսթեր Մայյանը, Ազնիվ Խանջյանը* և շատ ուրիշներ, որոնք հերոսաբար զոհվեցին և փառքով պսակվեցին թուրքերի դեմ կռիվներում:

Անցած հարյուրամյակը հայ ժողովրդի համար դարձավ ոչ միայն լինել-չլինելու, այլև ազգային-ազատագրական պայքարի ժամանակաշրջան: Հայ կնոջ հերոսացումները շարունակվեցին ոչ միայն 1915-1923 թվականների ինքնապաշտպանական հերոսամարտերում, այլև հետագայում Երկրորդ համաշխարհային պատերազմի, ինչպես նաև 20-րդ դարավերջին Արցախյան ազատամարտի տարիներին: Հայ կինը, ոգևորված հայդուկ կանանց օրինակով, դարձյալ իր դերի մեջ էր և հերոսաբար պայքարում էր՝ իր տունը ներխուժած թշնամուն դուրս վռնդելու և հայրենի տանն ու հողին տեր կանգնելու համար:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում հայուհի դուստրերը, կանայքն ու աղջիկները թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում ակտիվորեն մասնակցեցին ֆաշիզմի դեմ կռվին: Նրանցից շատերը, թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում ակտիվորեն մասնակցելով հայրենիքի պաշտպանությանը, անթառամ փառքով պսակեցին հայ կնոջ պատիվն ու բարձր կոչումը, բազմապատկեցին նրա սխրանքը:

Անցյալ դարավերջին Արցախյան հերոսամարտը ցույց տվեց, որ հայուհիները փայլուն կերպով կատարեցին իրենց առջև դրված խնդիրները: Նրանք, մտնելով Հայաստանում ու Արցախում տարերայնորեն կազմավորված առաջին կամավորական և աշխարհազորային ինքնապաշտպանական ջոկատների շարքերը, ամբողջ պատերազմի ընթացքում ցույց տվեցին, որ հայ կինն էլ կարող է իր ուսերին զենք կրել և մարտադաշտում լավ զինվոր ու հայրենիքի պաշտպան լինել: «Երբ կինը տղամարդու կողքին է, տղամարդն իրեն ավելի հզոր ու

վստահ է զգում: Ըստ իս՝ կնոջ ներկայությունն ամենավախկոտ տղամարդուն անգամ արծիվ կդարձնի»,– գրում է Արցախյան ազատամարտին մասնակից հերոսուհի կանանցից մեկը[1624]:

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայոց ազատագրական, ինքնապաշտպանական հերոսամարտի մասնակից հերոս հայուհիների, մայրերի թափած արյունն իզուր չանցավ: Նրանց հերոսական սխրագործություններով ոգևորվեց և դաստիարակվեց հայոց քաջերի մի ամբողջ սերունդ, որն էլ կարողացավ ազատագրել հայրենիքի անբաժան մասը կազմող Լեռնային Ղարաբաղը, որը բռնազավթվել էր ազերի թուրքերի կողմից, բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարության թեթև ձեռքով տրվել էր Ադրբեջան հորջորջվող թուրքերին:

Պատահական չէ, որ հայոց ազատամարտի այդ հերոսներից շատերի անունով երգեր հյուսվեցին նաև 20-րդ դարավերջի Արցախյան ազատամարտի տարիներին և դրանից հետո: Այդ երգերը ոգևորեցին և նոր ուժ ու ոգի հաղորդեցին հայոց քաջերին, տղամարդկանց, մեր ժամանակների հերոս հայուհիներին, որոնք ազատագրեցին հայոց հինավուրց հողը՝ ստեղծելով ազատ և անկախ Արցախի Հանրապետությունը՝ հայոց երկրորդ անկախ պետությունը: Դրա լավագույն ապացույցներից մեկը Արցախյան ազատամարտի քաջ մասնակից, «Մարտական խաչի 2-րդ աստիճանի» շքանշանակիր, Ոսկեթասի նշանավոր հայդուկ Խանե Սարգսի թոռ, գնդապետ Ռոմիկ Մարգարյանի երգն է՝ նվիրված հերոսուհի Շաքեին:

Շենիկ գյուղում Շաքե մը գար, ամրաղ - շարմաղ, նազանի
Ջերմագ գապար գը նմաներ, գը նմաներ լուսնյակի,
Օր գը քելեր գաքավու քելքով, քըց ոտ գեդին չդիպներ,
Օր պար գելներ՝ Կուրտիկ սարի զեփյուռի պես գը շնգեր:

[1624] Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում, էջ 145:

Կրկներգ
Թե ման իկեր Սասուն բոլոր
Շաքե չկար, մի հատ էր,
Թե գը հարցուս, համ ու հոդով
Շաքեն՝ շաքրուց անուշ էր:

Քանի մը քաջ ազաբ դղեք իրար պայման դրեցին,
Օր չթողեն հանկարծ Շաքեն իրենց գեղեն դուրս տանին,
Տղեք իրար երդում կիդան, թե հարս չառնինք գեղի մեջ
Հարամ էղնի մըր կերուգ կաթ, գեդին բադռի մդնինք մեջ:

Օր մը մոդիկ Սեմալ գեղեն էգան Շաքեն ուզելու,
Էլան գեղով ջարդին զագռեք, քըց հարկ ուզող Կոզբադու,
Քելեք, ըսին խեղճ սեմալցիք, Շենիկ Շաքեն տվող չէ,
Շենիկցուց զենք, մեկ ալ աղջիկ, առնել ըդմալ հեշտ բան չէ:

Շաքեն մնաց Շենիկի մեջ, դառավ հարսը Գրգոյի
Գևորգ քաջ լը՝ Շաքեն կոչեց անպարտ Ասլան սարերի
Գենաց մահու կռվին Շաքեն առավ մոսի հրացան
Գեղի կուսանց գլուխն անցավ, գռիվ մղեց սրբազան:

Կրկներգ
Թե ման իկեր Սասուն բոլոր
Շաքե չկար, մի հատ էր
Թե գը հարցուս, համ ու հոդով
Շաքեն՝ շաքրուց անուշ էր:

Այսպիսով՝ հայ կանայք եղել են երկրի, ազգի գոյատևման պայքարի առաջամարտիկների շարքերում: Այսօր նրանք ընդունակ են ավելին կատարել այդ բնագավառում, քանի որ նրանք կարող և հզոր ուժ են երկրի հզորացման ու հայրենիքի պաշտպանության գործում:

Փառք տանք անցյալի, ներկայի և ապագայի հայուհիներին, պահպանենք նրանց ազգային ոգու հզորությունը հայրենանվեր գործերի և սխրանքների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Տպագիր սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ

ա) Հայերեն

Արխիվային սկզբնաղբյուրներ

1. *Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)*
   ֆ. 1, g. 127, գգ. 678, 735, g. 87, գգ. 11, 39, 19:
   ֆ. 207, g. 44, գգ. 3, 8, 41, 46, 48, 118:
   ֆ. 1678, g. 1, գգ. 1, 9:
2. *Սիմոն Հակոբյանի հուշերի անձնական արխիվ*

3. Աբրահամյան Հ., Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, 1997:
4. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ, գիրք Գ (1985-2000), Ստեփանակերտ, 2007:
5. Աբրահամյան Հ., Մարտ կրակագծի մատույցներում, Երևան, 2008:
6. Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Իմ հիշողությունները, Երևան, 2015:
7. Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ., Հայաստանը 1945-1990-ական թթ., Երևան, 1994:
8. Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992:
9. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ, 1937:
10. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952:
11. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ, 1961:
12. Աղաջանյան Մ., Հաթերք, Ստեփանակերտ, 2012:
13. Ամիրյան Ս. (խմբագիր), Վարք սուրբ կանանց, Երևան, 1995:
14. Այվազյան Ա., Նախիջևան, Երևան, 1995:

15. Ատանայի Հայոց պատմութիւն, մատենաշար, N1, Անթիլիաս, 2012, Պատմութիւն Տարօնի աշխարհի, N 2, Անթիլիաս, 2013, Պատմութիւն Անթէպի Հայոց, N 3, հ. Ա, Անթիլիաս, 2013, Պատմութիւն Անթէպի Հայոց, N 4, հ. Բ, Անթիլիաս, 2013, Հաճընի ընդհանուր պատմութիւն, N 5, Անթիլիաս, 2014, Դիւցազնական Ուրֆան եւ հայորդիներ, N 6, Անթիլիաս, 2014:
16. Առստամյան Գ., Իմ պատիվ, իմ ցավ, Ղարմետաքսկոմբինատ, Ստեփանակերտ, 2010:
17. Առստամյան Գ., Իմ սերը ձեզ հետ է, ողջեր և նահատակներ, Երևան, 1998:
18. Առստամյան Գ., Սպասում, Ստեփանակերտ, 1996:
19. Ավագյան Ա., Գյուղատնտեսության հայ նշանավորները (երկհատորյակ), Երևան, 2003-2004:
20. Ավագյան Ս., Հայ իրավաբաններ, Երևան, 2005:
21. Ավագյան Ս., Նշանավոր հայուհիներ, Երևան, 2006:
22. Ավագյան Ս., Շարուր, Երևան, 1998:
23. Ավագյան Ս., Սուրմալու, Երևան, 2000:
24. Ավանեսյան Ի., Կանանց մասնակցությունը Արցախյան գոյապայքարում 1988-1994 թթ., ատենախոսություն սեղմագիր, Երևան, 2016:
25. Աւօ, Սօսէ Մայրիկ, Յեղափոխական ալպում, Պէյրութ, 1965:
26. Արշակ, Հայ յեղափոխութեան արշալոյսի հսկաներէն: Պիթլիսցի Մուշեղ, Կ. Պոլիս, 1919:
27. Արշակյան Ա., Արցախյան գոյապայքարը 1985-1992 թթ., Երևան, 2004:
28. Արցախապատում, գիրք 3, Քարինտակի հերոսամարտը (խմբագիրներ՝ Հովհաննիսյան Մ., Բաղրյան Վ.), Ստեփանակերտ, 2013:
29. Բաբայան Բելա, Արցախցի կինը պատմության մեջ, Ստեփանակերտ, 1998:
30. Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Երևան, 1995:

31. Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012:
32. Բախչինյան Ա., Ծագումով հայ են, Երևան, 1993:
33. Բախչինյան Ա., Հայազգի գործիչներ, Երևան, 2002:
34. Բաղրամյան Վ., Ֆենոմեն, Ստեփանակերտ, 1998:
35. Բաղրյան Վ., Տեսադաշտ 1988-1994, Ստեփանակերտ, 2013:
36. Բաղրյան Վ., Ֆենոմեն, Ստեփանակերտ, 1998:
37. Բարսեղյան Ի., Ինքնապաշտպանական մարտեր Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանում (1988-1991 թթ. մայիս), ատենախոսության սեղմագիր, Երևան, 2015:
38. Բդէեան Ս., Բդէեան Մ., Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962:
39. Բեգլարյան Ի., Հայդուկներ, Երևան, 2001:
40. Բեգլարյան Ի., Մահկանաբերդի արծիվը, Սևքարեցի Սաքո, Երևան, 2010:
41. Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ղարաբաղյան շարժում, գիրք Գ., Ստեփանակերտ, 2006:
42. Բուրանյան Ե., Իմ անցյալի հուշերից, Վասպուրականի ողբերգությունը, Երևան, 2013:
43. Բրուտյան Տ., Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփյուռ ընձիւղները, Երևան, 1996:
44. Բրուտյան Ց., Արցախյան ոգին երաժշտության ծիրին մեջ, Երևան, 2000:
45. Գալուստեան Գ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934:
46. Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, Երևան, 2005:
47. Գեւոնեան Ա. (Տէր-Կարապետեան), Գիւլիզար, Երևան, 1992:
48. Գևորգյան Ռ., Հավաքական ուժ, Երևան, 2005:

49. Գիլխանդանեան Ա., Հեղափոխական հայուհիներ, առաջին մաս, Փարիզ, 1939:
50. Գիվոև Ա., Արյուն դարձած վրեժ, Երևան, 2001:
51. Գրիգորյան Ա., Հաղորտին գոյամարտի բովում, Ստեփանակերտ, 2012:
52. Գրիգորյան Ա., Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, Երևան, 1960:
53. Գրիգորյան Ա., Մելքումյան Բ., Հայաստանի բժիշկները Մեծ հայրենականում, Երևան, 1987:
54. Գրքաշարյան Հ., Հաճըն, եթե քեզ մոռանանք..., հուշագրություն, Երևան, 2012:
55. Դանիելյան Կ., Արցախը սանձված նժույգ, Երևան, 2001:
56. Դերվիշյան Ե., Ուրֆայի ինքնապաշտպանությունը կամ դյուցազնաշունչ հայության վկան, Բեյրութ, 1978:
57. Դիլանյան Ս., Մոռացված գանձերի արձագանքը, Երևան, 2001:
58. Դրախտի խնձորներ: Արդի հայ կին գրողներ, Երևան, 2006:
59. Դերվիշյան Ե., Ուրֆայի ինքնապաշտպանությունը կամ դյուցազնաշունչ հայության վկան, Բեյրութ, 1978:
60. Դևրիկյան Տ., Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915-1923 թթ., Երևան, 2005:
61. Ելք դեպի ներս: Արդի հայ կին գրողներ, Երևան, 2006:
62. Եղյան Վ., Հայաստանի առաջավոր կանայք, Երևան, 1971:
63. Զէյթլեան Ս., Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լոս Անճըլըս, Քալիֆորնիա, 1992:
64. Զորավարը (խմբագիր՝ Հակոբյան Հ.), Երևան, 2006:
65. Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից. XIX-XX դարեր, Երևան, 2012:
66. Թէրզեան Ս., Հաճընի ութամսեայ դիւցազնամարտը, Պուենոս-Այրէս, 1956:
67. Թոռլաքեան Մ., Օրերուս հետ, Լոս Անջելես, 1953:

68. Թորանեան Թ., Թող Հայաստանը խօսի, Հալէպ, 1998:
69. Իսպիրյան Մ., Առաքելյան Վ., Մարզական հանրագիտարան, Երևան, 2003:
70. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս-1992 թ. հունվար), փաստաթղթեր (կազմող՝ Աբրահամյան Հ.), Երևան, 2011:
71. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Պետականության կայացումը դարերի սահմանագծում (կազմողներ՝ Ավետիսյան Հ., Աղաջանյան Մ., Անդրիասյան Լ., Արշակյան Ա., Ասրյան Հ., Բոյախչյան Գ., Եղիազարյան Ա., Սարգսյան Վ., Իսագուլյան Գ., Մելքոնյան Ա., Մինասյան Ս., Փանոսյան Ն., Սաֆրաստյան Ռ.), Երևան, 2009:
72. Խանզադյան Ս., Աղբյուր Սերոբ, Երևան, 1998:
73. Խաչատրյան Հ., Գրական տեղեկատու, Երևան, 2001:
74. Խաչատրյան Հ., Հայոց թագուհիներ, Երևան, 1998:
75. Խաչատրյան Հ., Հայուհիներ, Երևան, 2001:
76. Խառատյան Հ., Նշանավոր դիլիջանցիներ, Երևան, 2008:
77. Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:
78. Խրիմյան Մ., Երկերի ժողովածու, Երևան, 1991:
79. Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թթ., ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2003:
80. Կապուտիկյան Ս., Էջեր փակ գզրոցներից, Երևան, 1995:
81. Կարապետյան Փ., Ամիրխանյան Ա., Արմավիրի մարզի անվանի մարդիկ, Երևան, 2013:
82. Կինը և զինված հակամարտությունը. Պատերազմը Ղարաբաղում (խմբագիրներ՝ Ա. Մխիթարյան, Մ. Օհանյան և ուրիշներ), Երևան, 2000:
83. Կյանքի էջեր (կազմողներ՝ Գրիգորյան Պ., Գրիգորյան Գ., խմբագիր՝ Աբրահամյան Հ.), Երևան, 2011:

84. Կոմս, Խոնարհ հերոսներ, գիրք Ա, Պէյրութ, 1950, գիրք Բ, Պէյրութ, 1956, գիրք Գ, Պէյրութ, 1956:
85. Կոսոյան Հ., Վան բերդաքաղաքի ժողովրդային հերոսամարտը, Թեհրան, 1966:
86. Կոսոյան Հ., Վաղ-Քաղաքամեջի ապրիլյան կռիվները, Երևան, 1992:
87. Կուրտիկյան Ս., Հերոսուհիները, Երևան, 1943:
88. Կուրտիկյան Ս., Լեռնաշխարհի դուստրը, Երևան, 1948:
89. Հայկազ Ա., Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, Նյու Յորք, 1957:
90. Հայազն Տ., Տիկնայք փափկասուն հայոց աշխարհի, Երևան, 2005:
91. Հակոբյան Թ., Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008:
92. Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում 1898-1908 թթ., Երևան, 1999:
93. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, ՀՀ ՊՆ քարոզչության վարչություն, Երևան, 2005:
94. «Հայկական հարց» հանրագիտարան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1996:
95. Հայկական համառոտ հանրագիտարան չորս հատորով, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1990, 1995, 1999, 2003:
96. Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, Վանի նահանգ, հ. 1, Բիթլիսի նահանգ, հ. 2, Էզրումի, Խարբերդի, Դիաբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, հ. 3, Երևան, 2012:
97. Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, խմբ.՝ պրոֆ. Հ. Սիմոնյան, Երևան, 2012:

98. Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու համար (1988-1989), փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Աբրահամյան Հ., Խաչատրյան Կ.), Երևան, 2014:
99. Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ.), Երևան, 2011:
100. Հայուհիներ, հանրագիտարան երկու հատորով (գլխավոր խմբագիր՝ Բալայան Զ.), հ. 1, Երևան, 2011:
101. Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2008:
102. Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001:
103. Հավերժական ջրբաժան (խմբագիր և կազմող Պետրոսյան Մ.), Երևան, 2003:
104. Հարությունյան Ա., Երևանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1958:
105. Հարությունյան Ա., Երևելի տիկնանց դարը, Երևան, 2005:
106. Հարությունյան Գ., Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ XIV համագումարում ՀԿ(բ)Պ կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին, Երևան, 1948:
107. Հարությունյան Կ., Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.), Երևան, 2002:
108. Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Երևան, 2002:
109. Հարությունյան Կ., Պողոսյան Հ., Հայ ժողովրդի ավանդը Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941-1945), Երևան, 2010:
110. Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի ուղին. 1991-1994 թթ., ատենախոսություն, Երևան, 2001:

111. Հացունի Վ., Հայուհին պատմության առջև, Վենետիկ, 1936:
112. Հեբոյան Ա., Մորուք Կարո, հայ ընտանիքի իրապատում, Երևան, 1998:
113. Հովհաննիսյան Ղ., Սասունը բոցերի մեջ, Երևան, 1987:
114. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գոյության պայքար, գիրք Բ, «Երևան, 1993:
115. Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. Հողը կանչում է, գիրք Բ, Երևան, 2005:
116. «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ» հանրագիտարան, 1988-1994 թթ. (գլխավոր խմբագիր՝ Այվազյան Հ.), Երևան, 2004:
117. Մամյան Ի., Մեթերհեմ բանտի կալանավորը, Երևան, 1989:
118. Մարաշի Տէր Ղեւոնդ քահանայի յուշերը, Երևան, 2013:
119. Մարտիկյան Ե., Այծեմիկ-Ուրարտու, Երևան, 1962:
120. Մարտիրոսյան Լ., Հայ կանանց սխրագործությունները Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում (1941-1945), Երևան, 1961:
121. Մարտիրոսյան Լ., Սովետական Հայաստանի կանայք Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1968:
122. Մեծ եղեռնի հերոսապատում. 1915 թ. ինքնապաշտպանական հերոսամարտերը, Թեհրան, 1982:
123. Մեհրաբյան Ս., Խանասորա Վարդանի (Մեհրաբյան Սարգիս) յիշատակարանը (Խանասորա Վարդան, Շատախի Առյուծ), Երևան, 1992:
124. Մինասյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2013:
125. Մինասյան Հ., 100 հայ հոգեբույժներ, Երևան, 2002:
126. Միքայելյան Վ., Գերմանացի դիվանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին (1915), Երևան, 1997:
127. Մխիթարյան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930:

128. Մկրտչյան Ա., Մաճկալաշենի քառուղիներով: Հուշապատում, Ստեփանակերտ, 2002:
129. Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, 1992:
130. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981:
131. Յան Վան Դեր Դյուսեն, Հայկական օրագիր, Երևան, 2008:
132. Յեղափոխական ալպոմ, Տուրբախ (Յարութիւն Այվազեան), Պէյրութ, 1965:
133. Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հարիւրամեակ, ալպոմ-ատլաս, Ա հատոր, «Դիւցազնամարտ 1890-1914», Լոս Անջելես, 1992, Բ հատոր, Լոս Անջելես, 2001:
134. Յուշամատեան Մուսա լերան, խմբագրեցին Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուռեան, Պէյրութ, 1970:
135. Նանագուլյան Ս., Արծիվները բարձունքներ են տենչում, գիրք Գ, Երևան, 1993, 146 էջ:
136. Նժդեհ Գ., Ընտիր երկեր, Երևան, 2007:
137. Նիւթեր Եգիպտոսի Հայոց պատմութեան համար, հ. Գ, գրեց Արտաշես Գարտաշեան Հ., Վենետիկ - Ս. Ղազար, 1987:
138. Շերպեթճեան Ս., Պատմութիւն Սուետահայերու, Այնճար, 2010:
139. Չիլինկիրեան Ե., Յիշատակներ Բաղէշի առաջնորդութենէս, Երուսաղէմ, 1925:
140. Պալաքեան Գ., Հայ գողգոթան, Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն, հ. Բ, Անթիլիաս, 2003:
141. Պատմական նստաշրջան, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանի 1988 թ. փետրվարի 20-ի նիստի արձանագրություն, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Բալայան Վ., Հակոբյան Տ.), Ստեփանակերտ, 2008, 10 էջ:
142. Պատմագիրք Եոզկատի եւ շրջակայից (Գամիրք) Հայոց, խմբագրութիւն Արմէն Դարեան եւ Անդրանիկ Երկանեան, Պէյրութ, 1988:

143. Պատմութիւն Հայոց Արաբկիրի, կազմեց եւ երկասիրեց Անդրանիկ Լ. Փոլատեան, Նիւ Եօրք, 1969:
144. Պետոյան Վ., Սասուն, Երևան, 2016:
145. Պետրոսյան Ռ., Արցախ, պատերազմ, զինադադար, Երևան, 2001:
146. Պետրոսյան Ռ., Արցախի պաշտպանության դիրքերում, Երևան, 1997:
147. Պօղոսեան Յ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան-տաղի հայ գիւղերը, Անթիլիաս, 2014:
148. Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, պատմագիտական ուսումնասիրություններ, հ. 1, Երևան, 2008, հ. 2, Երևան, 2008, հ. 3, Երևան, 2011:
149. Պուրսալեան Յ., Մուսա լերան հերոսամարտը, Այնճար, 2004:
150. Ջանիկյան Գ., Մահապարտները, Երևան, 2002, 344 էջ:
151. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հհ. Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Թեհրան, 1982:
152. Սահակեան Ա., Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Անթիլիաս, 2014:
153. Սասունի Կ., Յուշեր եւ վկայութիւններ, Պէյրութ, 1972:
154. Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մէջ, Պէյրութ, 1964:
155. Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Անթիլիաս, 2013:
156. Սասունի Կ., Սարերու Ասլանը (Գէորգ Չաուշի կենսագրավէպը), Պէյրութ, 1966:
157. Սահակյան Ռ., Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը 1914 թ. հուլիս - 1917 թ. փետրվար, Երևան, 2015:
158. Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005:

159. Սահակյան Վ., Հայ և համաշխարհային նշանավոր դեմքեր, Երևան, 2006:
160. Սահակյան Վ., Գևորգյան Վ., Հայաստանի սոցիալիստական աշխատանքի հերոսները, Երևան, 1960:
161. Սապահ-Գիլեան Ս., Փոքր-Հայքի յիշատակներ, մասն առաջին, Չիկագո, 1917:
162. Սաքայան Դ., Զմյուռնիա - 1922, բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը, Երևան, 2011:
163. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, 1996:
164. Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009:
165. Սիսյան Բ., Չիլինգարյան Ռ., Գետաշեն, Երևան, 2007:
166. Սիրվարդ, Արամ Աչըգպաշեան (Հերոս Փոքր Հայքի), Փրովիտէնս, 1957:
167. «Սովետական Հայաստան» հանրագիտարան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Երևան, 1974-1987:
168. Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հատոր Ա-Գ, Երևան, 1990:
169. Վան-Վասպուրականի հերոսամարտը - 75 (ժողովածու), Երևան, 1990:
170. Վարդան Հ., Հացունի Վ., Հայուհին պատմութեան առջև, Թեհրան, 2009:
171. Վարդումյան Հ., Աստվածների կանչը, Երևան, 2004:
172. Վարդումյան Հ., Ճանապարհ անմահության, Երևան, 2002:
173. Վարդումյան Հ., Կին ազատամարտիկները, Երևան, 2003:
174. Վերֆել Ֆ., Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964:
175. Վկայարան Հայկական ցեղասպանութեան, գիրք Ա, պատրաստեց Արութիւն Իսկահատեան, Պէյրութ, 2010, գիրք Բ, Պէյրութ, 2011, գիրք Գ, Պէյրութ, 2011, գիրք Դ, Պէյրութ, 2012, գիրք Ե, Պէյրութ, 2013:

176. Վոլֆգանգ Գ., Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Երևան, 2002:
177. Տէր-Վարդանեան Յ., Մարաշի ջարդը 1920-ին եւ պատմական համառօտ ակնարկ մը իր անցեալին վրայ, Երուսաղէմ, 1927:
178. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, Երևան, 1997:
179. Փաշայան Ա., Հայ մշակույթի վաղամեռիկ գործիչներ, Երևան, 2003:
180. Փարսադանյան Ա., Հայը, Երևան, 2003:
181. Քալոյան Ա., Կինը դարավերջին հայ գրականության մեջ, Երևան, 2005:
182. Քալոյան Ա., Կինը Ռաֆֆու և Աղայանի ստեղծագործություններում, Երևան, 2006:
183. Քաջասիրտ հայուհիները, Երևան, 1943:

բ) Ռուսերեն և անգլերեն

184. Абрамов А., У кремлевской стены, 4-е изд., доп., Москва, 1981, Издательство политической литературы.
185. Агаджанян М., Нагорно-Карабахский конфликт в свете заищты прав человек политические и правовые аспекты, Ереван, 2009.
186. Айвазян С., История России. Армянский след, Москва, 2000.
187. Арутюнян К., Погосян Г., Вклад армянского народа в победу в Великой отечественной войне, Москва, 2010.
188. Арутюнян К., Саакян М., Участие сотрудников Национальной академии наук Республики Армения в Великой отечественной войне (1941-1945), Ереван, 2001.
189. Арцах-Карабах, Энциклопедия, А-Е, Санкт-Петербург, 2007.
190. Базиянц А., «По портретной галерее Лазаревых и Абамелек-Лазаревых», Ереван, 1996.

191. Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и коментарии, том 1, Москва, 2008.
192. Буркова И., Геноцид карабахских армян, Рязань, 1995.
193. Григорян В., Наедине с пространством, Москва, 2005.
194. Де Ваал Томас, Черный сад. Армения и Азербайджан между миром и войной, Москва, 2014.
195. Итоги всесоюзной переписи населения 1989 г. численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономне области, таблица, 2, Москва, 1989.
196. Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах (сост. Товмасян Е., Атаджанян В., Нерсесян Ю., Балаян В.), Степанакерт, 1991.
197. Керолайн К., Айбнер Д., Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998.
198. Кокс К., Айбнер Д., Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998.
199. Кривопусков В., Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССП. Москва, 2007.
200. Мелик-Щахназаров А., Нагорный Карабах факты против лжи, Москва, 2009.
201. Нагорный Карабах: Историческая справка, Ереван, 1988.
202. О некоторых пиолитико-прововых аспектах проблемы Нагорного-Карабаха, Ереван, 1991.
203. Очерки истории Российкой внешней разведки, т. 4, 1941-1945, Москва, 2003.
204. Сахаров А., О Нагорном Карабахе, Ереван, 1996.
205. Советская Армения в годы Великой отечественной войны (1941-19465), сборник документов и материалов, Ереван, 1975.

206. Улубабян Г., Золян С., Аршакян А., Сумгаит... Геноцид... Гластность?, Ереван, 1989.
207. Чуйков В., Начало пути, Москва, 1962.
208. Шахмурадян С., Сумгактская трагедия в свидетельствах очевидцев, Кн. 1, Ереван, 1989.
209. Штеменко С., Генеральный штаб в годы войны, Москва, 1968.
210. Bryce, The Treatment of Armenians In Ottoman Empire, 1915-1916, London, 1916.
211. Nogales R. de, Four Years Beneath the Crescent., Transl. From the Spanish by M. Lee. With an introd. by Lieut.-Colonel E. Davis, N. Y., London, 1926.
212. Ussher C. D., Knapp G. H., An American Physician in Turkey. A Narrative of Adventures in Peace And War, Boston and N. Y., 1917.

Պարբերական մամուլ

ա) Հայերեն

213. «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 2002, 2003, 2007, 2010, 2012, 2013:
214. «Ազգ», Երևան, 1999:
215. «Ազդակ» օրաթերթ, Լիբանան, 7 հոկտեմբերի, 1969, 14 սեպտեմբերի, 1985:
216. «Աղբյուր», N 11, Թիֆլիս, 1885:
217. «Ամարաս», Մարտունի, 2000, 2005, 2006, 2008:
218. «Ասպար», փետրուար, N 2, Պէյրութ, 1993:
219. «Արցախ», Ստեփանակերտ, 1992-1994:
220. «Արցախի համալսարան», N 2, Ստեփանակերտ, 2008:
221. «Արեւելեան մամուլ», N 10, Կ. Պոլիս, 1988:
222. «Բերդ», Ասկերան, 2008, 2010:
223. «Գաղափար», N 2, Ա տարի, սեպտեմբեր, Աթէնք, 1894:

224. «Դիզակ», Հադրութ, 2003, 2005:
225. «Երկիր», Երևան, 2001, 2005:
226. «ԼՂ Հանրապետություն», Ստեփանակերտ, 1994, 1996, 1998:
227. «Լրաբեր հասարակական գիտությունների», N1, Երևան, 2016:
228. «Լուսարար», Ստեփանակերտ, 2013:
229. «Խորհրդային Հայաստան», Երևան, 1988-1990:
230. «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988-1991:
231. «Հայ զինվոր», Երևան, 2010, 2012:
232. «Հայաստան», Երևան, 1991:
233. «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1991, 1993, 1998:
234. «Հայոց աշխարհ», Երևան, 1998:
235. «Հայրենիք», N 11, Պոստոն, 1932, 1938, 1953, N 6, 1946:
236. «Հայրենյաց պաշտպան», Ստեփանակերտ, 2003, 2008:
237. «Մարտիկ», Ստեփանակերտ, 1995, 1997, 1998, 2001, 2003-2006, 2009, 2012:
238. «Մշակ», N 34-39, 124-125, Թիֆլիս, 1888:
239. «Մռովի ղողանջներ», Երևան, 1992-1994:
240. «Շարժում 88», Ստեփանակերտ, 2008:
241. «Ուրբաթ», Երևան, 1990:

բ) ռուսերեն

242. "Бакинский рабочий", Баку, 1990.
243. "Голос Армении", Ереван, 1991, 1998.
244. "Зов Арцаха", Ереван, 1993.
245. "Известия", Москва, 1988, 1989, 2005.
246. "Информкуранты", Москва, 1991.
247. "Коммунист", Ереван, 1990.
248. "Красная звезда", Москва, 1991.
249. "Коммерсант", Москва, 1991.
250. "Комсомольская правда", Москва, 1991.

251. "Правда", Ереван, 1988-1991.
252. "Республика Армения", Ереван, 1991.
253. "Сельская жизнь", Москва, 1987.

Հոդվածներ

254. Աբրահամյան Հ., Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի ստեղծումը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2, Երևան, 2006, էջ 117-129:
255. Ազիզբեկյան Ռ., Հայաստանի անկախության գործընթացի սկիզբը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, Երևան, 2005, էջ 16-28:
256. Առաքելյան Կ., Հայ կնոջ դերը հայդուկային պայքարում, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, Երևան, 2016, էջ 144-150:
257. Ավագյան Վ., Հայկական ՍՍՌ «Կարմիր խաչի» ընկերության գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, «Աշխատություններ հայ բժշկության և բիոլոգիայի պատմության սեկտորի», № 2, Երևան, 1949:
258. Բալայան Ռ., Կանայք Արցախյան պատերազմի հերոսամարտում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, N 1, 2001, էջ 101-105:
259. Գասպարյան Ռ., Հայկական լեգեոն (1916-1920 թթ.), «Հայոց բանակ», N 1, Երևան, 1996:
260. Գարամանուկեան Ա., Հայկական լեգեոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսի տակ, «Հայոց բանակ», N 2, Երևան, 1996:
261. Գիլխանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները Բագուի մէջը, «Հայրենիք» ամսագիր, N 11, Պոստոն, 1932:
262. Բարսեղյան Ի., «Օղակ» ռազմական գործողության պետական-ահաբեկչական բնույթը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», N 13, Երևան, 2013:

263. Դարբինեան Վ., Կին ազատամարտիկներ, «Ասպար», փետրուար, N 2, Պէյրութ, 1993:
264. Զաքարյան Լ., Սրբուհի Տեր-Ներսիսյան, «Պատմաբանասիրական հանդես», N 4, Երևան, 1976:
265. Զեյթլյան Ս., Արցունքով և երախտագիտությամբ, «Ազդակ» օրաթերթի խմբագրական, հոկտեմբերի 7, Լիբանան, 1969:
266. Թադեւոսեան Հ., Թափառումներ անցյալի յուշերի մեջ, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր-դեկտեմբեր, N6, Պոստոն, 1946:
267. Հապէշեան Թ., Մուսա լերան հերոսամարտը, «Ազդակ» օրաթերթ, 14 սեպտեմբեր, Լիբանան, 1985:
268. Մինասյան Է., Հայերի ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թվականին, «Հայկական բանակ», N 1-2 (83-84), Երևան, 2015:
269. Մինասյան Է., Հայ կանայք 1915 թ. ինքնապաշտպանական մարտերում, «Քրիստոնյա Հայաստան», մայիս Ա, N 9, Երևան, 2015:
270. Մինասյան Է., Հայ կանայք 1915 թ. ինքնապաշտպանական մարտերում, «Քրիստոնյա Հայաստան», մայիս Բ, N 10, Երևան, 2015:
271. Մինասյան Է., Հայ կանայք 1915 թ. ինքնապաշտպանական մարտերում, «Քրիստոնյա Հայաստան», հունիս Ա, N 11, Երևան, 2015:
272. Մինասյան Է., Հայ կանայք 1915 թ. ինքնապաշտպանական մարտերում, «Քրիստոնյա Հայաստան», հունիս Բ, N 12, Երևան, 2015:
273. Սասունի Կ., Աննա Մայրիկը, «Հայրենիք», Պոստոն, N 11, 1953:

ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ

ЭДИК ГАРЕГИНОВИЧ МИНАСЯН

АРМЯНСКИЕ ГЕРОИЧЕСКИЕ ЖЕНЩИНЫ

Директор издания К. Григорян
Компьютерная верстка К. Чалабян
Оформление обложки А. Патваканяна
Изд. корректор М. Оганнисян

Հրատարակության տնօրեն՝ Կ. Գրիգորյան
Համակարգչային էջադրումը՝ Կ. Չալաբյանի
Շապիկի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպ. մամուլ 48.875 + 1 տպ. մամուլ ներդիր: Տպաքանակը՝ 300:

Формат 60x84 1/16. Бумага офсетная.
Тип. печ. 48.875 + 1 тип. печ. вкладыш. Тираж 300.

ԵՊՀ հրատարակչություն/ Издательство ЕГУ
Երևան, Ալեք Մանուկյան 1/ Ереван, Ал. Манукяна 1
Հեռ./Тел.: (+374-10) 55-55-70, e-mail: publishing@ysu.am
www.publishing.ysu.am

ՄԻՆԱՍՅԱՆ ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան

Ծնվել է 1956 թ. ՀՀ Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում: 1979 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և անմիջապես աշխատանքի անցել նույն ֆակուլտետում նախ որպես դեկանի օգնական, այնուհետև՝ դասախոս, ապա՝ դոցենտ, 1986-1994 թթ.՝ ԵՊՀ արտասահմանյան քաղաքացիների հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ, 1994 թ.-ից՝ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, իսկ 2005 թ.-ից՝ պրոֆեսոր: 1985 թ. պաշտպանել է թեկնածուական, 2003 թ.՝ դոկտորական ատենախոսություններ: Նույն ֆակուլտետում շուրջ 10 տարի աշխատել է դեկանի տեղակալ, իսկ 2009 թ.-ին ընտրվել է դեկան:

Պրոֆեսոր Մինասյանը ՀՀ հանրային խորհրդի և ԵԿՄ վարչության անդամ է:

Նա դպրոցական և բուհական մի շարք դասագրքերի, 30 ուսումնական ձեռնարկների, ինչպես նաև 7 մենագրությունների և շուրջ 200 գիտական հոդվածների հեղինակ է, որոնց մեծ մասը նվիրված են Հայոց ազգային-ազատագրական պայքարին, Հայկական հարցին և Հայոց ցեղասպանության պատմությանը, ինչպես նաև Հայաստանի նորագույն պատմության հիմնախնդիրների լուսաբանմանը, հատկապես Հայաստանի երրորդ Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության բարդ ու վիճահարույց հիմնահարցերին:

Է. Մինասյանն ունի երկու դուստր, մեկ որդի և չորս թոռ:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016